ՎԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ՊՈՂՈՍՅԱՆ
ԱՐՄԻՆԵ ԵՓՐԻԿՅԱՆ



ՀԱՅԿԱԿԱՆ ՉԻՆՈՒԺԸ 1914–1920 ԹԹ.

ՎԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ՊՈՂՈՍՅԱՆ
ԱՐՄԻՆԵ ԵՓՐԻԿՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՋԻՆՈՒԺԸ 1914–1920 ԹԹ.

«Լուսակն» հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ 2020

VANIK VIRABYAN
SAMVEL POGHOSYAN
ARMINE EPRIKYAN

THE ARMENIAN ARMED FORCES DURING 1914-1920

Lusakn Press
YEREVAN 2020

ВАНИК ВИРАБЯН
САМВЕЛ ПОГОСЯН
АРМИНЕ ЕПРИКЯН

АРМЯНСКИЕ ВОРУЖЕННЫЕ СИЛЫ В 1914-1920 ГГ.

Издательство «Лусакн»
ЕРЕВАН 2020

ՀՏԴ 94(479.25):355
ԳՄԴ 63.3(5Հ)+68.4
Վ 680

Հետազոտությունը տպագրվում է ՀՀ ԿԳՄՍ Նախարարության ԳՊԿ թեմատիկ հայտի (18T-6A068 «Հայկական զինուժը 1914-1920 թթ.» թեմայի շրջանակներում):
The study is published through the sponsorship of the grant provided by Committee of Science, *Ministry of Education and* Science *of the Republic of Armenia (18T-6A068 – «The Armenian Armed Forces in 1914-1920»).*

Հրատարակության են երաշխավորել Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Հայոց պատմության ամբիոնը և Պատմության ու Հասարակագիտության ֆակուլտետի Գիտական խորհուրդը

Գլխավոր պատ. խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆեսոր Վ. Հ. Վիրաբյան
Գրախոսներ՝ պ.գ.դ., պրոֆեսոր Խ. Ռ. Ստեփանյան
պ.գ.թ., դոցենտ Ա. Ա. Հարությունյան

Վիրաբյան Վ. Հ.
Վ 680 Հայկական զինուժը 1914-1920թթ.: Կոլեկտիվ մենագրություն/ Վ. Հ. Վիրաբյան, Ս. Ա. Պողոսյան, Ա. Մ. Եփրիկյան.- Եր.: «Լուսակն» հրատ., 2020. - 716 էջ:

Կոլեկտիվ մենագրությունում նորովի վերհանված է հայկական զինուժի տարեգրությունը, նրա ձևավորման բազմաբնույթ գործընթացները 1914-1920 թվականներին: Համալիր հետազոտվել են հայ կամավորական զինուժի, հայկական լեգիոնի և Առաջին հանրապետության բանակաստեղծ գործընթացները, արժևորվել է հայկական զինուժի դերը հայկական պետականության ձևավորման և կայացման գործառույթներում:

Կոլեկտիվ մենագրությունը նախատեսվում է պատմաբանների, ռազմական ոլորտի տարեգիրների, միջազգայնագետների և ընթերցող գիտական հասարակության համար:

ՀՏԴ 94(479.25):355
ԳՄԴ 63.3(5Հ)+68.4

ISBN 978-9939-882-79-6

© Վիրաբյան Վ. Հ., 2020
© Պողոսյան Ս. Ա., 2020
© Եփրիկյան Ա. Մ., 2020
© «Լուսակն» հրատարակչություն, 2020

ԱՌԱՋԱԲԱՆ

պ.գ.դ., պրոֆեսոր Վ. Հ. Վիրաբյան

Հայոց պատմությունը, նրա դասերն ու հայ ժողովրդի անցած ողջ ուղու ժամանակաընթացքում տեղի ունեցած կարևորագույն ռազմաքաղաքական իրադարձությունների իմաստավորումն անանց նշանակություն ունեն թե՛ առհասարակ երիտասարդ սերնդի, և թե՛ առավել ևս Հայկական բանակի, նրա շարքային զինվորական կազմի ու սպայության ռազմահայրենասիրական, քաղաքական-դաստիարակչական, աշխարհայացքային ձևավորման հիմնախնդիրների լուծման տեսանկյունից: Հայոց պատմության յուրաքանչյուր փուլի մեջ կարելի է անվրեպ առանձնացնել բազմաթիվ հերոսական էջեր, որոնք իրապես կզարդարեն ամեն մի ժողովրդի պատմությունը՝ ներկայացնելով նրա ռազմական խիզախման կորովը, օտար ոտնձգություններից պատնեշվելու ու պաշտպանվելու հայ ժողովրդի աներեր ձգտումը և ներդրած ջանքերը, ստացված բարոյահոգեբանական և ռազմաքաղաքական արդյունքները:

Հայոց պատմությունը հարուստ նյութ է տալիս հայ զինուժի, զինվորականության և Հայոց բանակի մարտավարության, ռազմական պատմությունը ուսումնասիրելու տեսանկյունից, որն անանց արժեք ունի արդի ազգային-քաղաքական և հասարակական-պետական գործընթացների առումով. օրինակ՝ Կորյունի, Ագաթանգեղոսի, Փ. Բուզանդի, Եղիշեի, Ղ. Փարպեցու, Մ. Խորենացու, Սեբեոսի, Մ. Կաղանկատվեցու, Հոհ. Դրասխանակերտցու, Թ. Արծրունու, Ս. Ասողիկի, Ա. Լաստիվերտցու, Մ. Ուռհայեցու, Կ. Գանձակեցու, Ստ. Օրբելյանի, Թ. Մեծոփեցու, Առ. Դավրիժեցու և շատ այլ հայ պատմիչների «Հայոց պատմություն», «Ժամանակագրություն»-ների ողջ շարադրանքի մեջ կա-

րևորվում է սեփական անձը հանուն հայրենիքի, հայկական պետականության պահպանման համար զոհելու պատրաստակամության գաղափարը, որի կրողը բոլոր ժամանակներում եղել է հայ զինվորը և Հայոց զինուժը: Հենց դա էլ պայմանավորում է այն մեծ հետաքրքրությունը Մ. Խորենացու «Հայոց պատմության» «Ողբ»-ի նկատմամբ, որը աշխարհայացքային-հայրենասիրական և դաստիարակչական մեծ խորհուրդ ունի իր մեջ, պետականության կորստյան կապակցությամբ պետաքաղաքական մոտեցման արժեքավորման կարևոր գնահատման անանց ու եզակի փորձ, որը հաղորդվել է ներկայիս և հաջորդ սերունդներին: Դրանում իմաստավորվել է նաև Հայոց զինուժի անցած ողջ ուղին՝ իր հզոր վերելքներով և ցավալի սայթաքումներով:

Հայ պատմիչների և այսօրվա պատմագիրների թողած գրքերում և աշխատություններում սերմանվում են արժեքներ, որոնք այսօր կոչված են դաստիարակչական-քաղաքական հսկայական դեր խաղալու հատկապես Հայկական բանակի սպայակույտի և նրա շարքերը համալրող երիտասարդության համար, որոնք կյանք են մտնում՝ ելակետ ընտրելով և ունենալով հայ զինվորի ավանդական վարքուբարքը, որի համար առաջնայինը եղել է ազգային-պետական շահերի խորքային գիտակցումը և հավատարմությունը սեփական հայրենիքի վեհության գաղափարին, Հայկյան վեհաշունչ Սկզբին:

Անշուշտ, հայկական բանակի զինվորականության, կրտսեր սպայական ու բարձր հրամանատարական կազմի ռազմահայրենասիրական և քաղաքական դաստիարակության խնդիրների լուծման առումով կարևորվում է Հայոց պատմության ամենավաղագույն փուլի՝ Հայկի և Բելի հերոսապատման առանձնացումը որպես դասական օրինակի: Հարկ է նշել, որ Հայոց պատմության այս դրվագում, երբ որ Հայկը սպանում է նվաճող Տիտանյան Բելին (մ.թ.ա. 2492 թ.), հստակ երևում է հայ ժողովրդի ռազմական ուժն ու կորովը, նաև ապացուցվում է հայրենի տարածքում ապրելու հայ ժողովրդի աներեր կամքը և հաստատակամությունը, հավաքական ռազմուժը և զինվորական լավագույն հատկությունները: Այն իր մեջ մարմնավորում է հայ ցեղին հատուկ մարտական ոգին, ռազմական կորովի ու հատկանիշների լավագույն ընտրանին, հայոց զինվորի վարքուկանոնի խտացված բովանդակությունը: Հայկը, ներկայացնելով մեր ժողովրդի մարտական բարձր որակ-

ները, նրա ռազմական ոգին, նաև առաջին հերթին ապացուցում է, որ Հայ զինվորը, իսկ Հայկը հավաքական հայ զինվորի ընդօրինակելի կերպարն է, աշխարհում դրա լավագույն տեսակներից մեկն է: Միանգամայն բնական է, որ Հայկի բանակը չէր կարող հանդուրժել բռնակալ Տիտանյան Բելի և հայ ժողովրդի մյուս թշնամիների ոտնձգությունները սեփական հայրենիքի դեմ, և ըստ այդմ էլ անհողդողդ վճռականությամբ վեր կացավ թշնամու դեմ, ցույց տալով հայ ժողովրդի լավագույն մարդկային և մարտական հատկություններն ու որակները: Անշուշտ, հենց այս հանգամանքն էլ կարող է ահռելի ռազմահայրենասիրական, քաղաքական դաստիարակչական դեր խաղալ Հայկական բանակի կայացման ու առաջընթացի գործում, բարձր ու անաղարտ պահելով նրա ոգին ու ամուր նվիրվածությունը հայրենիքին: Այդ տեսանկյունից էլ յուրաքանչյուր ոք Հայ ժողովրդի պատմության այդ հիշարժան դասերով կարող է համոզվել, որ ***Բարձրագույն Իդեալը Հայրենիքն է,*** անհողդողդ վճռականությունը պահպանելու հայրենի երկրի վեհաշուք կեցվածքը, որի համար արժե կռվել, պաշտպանել նրա անկախությունը, ազգային պետականությունը և մյուս նվիրական ձգտումները, իսկ դրա լավագույն միջոցներից մեկը հենց Հայկ նահապետի ռազմահայրենասիրական ավանդների սրբորեն պաշտպանումն է և շարունակումը, Հայոց պատմության դասերի ուշիմ սերտումը:

Հայոց պատմության Հայկ նահապետին հաջորդող ժամանակահատվածում ևս կարելի է հանդիպել բազում օրինակների, երբ Հայոց զինական ուժը դրսևորել է իր հրաշալի հատկությունները, որոնք հսկայական ռազմահայրենասիրական, դաստիարակչական և աշխարհայացքային ձևավորման դեր խաղացել և խաղում են հայ ժողովրդի հոգեկան կերտվածքի բազմաբնույթ հատկանիշների ամբողջականացման, ռազմիկների ու զորավարների նոր սերունդ համաշխարհային պատմության ռազմաքաղաքական թատերաբեմ դուրս բերելու և կոփելու բնագավառում: Հենց այդ առումով էլ ահռելի է Հայոց պատմության Վանի-Արարատյան թագավորության ժամանակաշրջանի (մ. թ.ա. IX-VI դարեր) իրադարձությունների տեղն ու դերը հայ ժողովրդի հասարակական-քաղաքական պատմակենսագրությունում, երբ արդեն որպես ժողովուրդ ձևավորված հայերը Առաջավոր Ասիայում իրենց դրսևորեցին իբրև լավագույն ռազմիկներ, Արամի, Արգիշտի I-ի և

նրանց հաջորդների զորքերը տարան բազում հաղթանակներ, որոնցում հրաշալի ռազմիկների մի ամբողջ սերունդ ռազմահայրենասիրական դաստիարակություն և կոփվածք ստացավ: Բնականաբար, այդ տեսանկյունից էլ Հայոց պատմության այս շրջանի դասերը չափազանց ուսանելի են Հայկական բանակի ներկայիս սերնդի հոգեբանական-քաղաքական կերտվածքի ամրակայման հիմնահարցերի առումով, ռազմահայրենասիրական դաստիարակության դարամակարդակ պահանջների ապահովման ռազմավարության նկատառումներով:

Պարույր Սկայորդու և Երվանդունի Հայկյանների սերունդը շարունակեց այդ ավանդույթները, և սովորելով իրենց փառապանծ պապերից, ինչպես նաև ընդօրինակելով այլազգիների լավագույն փորձը, ռազմահայրենասիրական կոփվածքի ահռելի ու հրաշալի լիցք կուտակեց: Հայ զինվորը և զինվորականությունը շարունակեցին բարձր պահել իրենց վարկանիշը, որ հետագա դարերի անձուկ ու դժվարին օրերին շատ ռազմիկների սերնդի էր փրկելու անկիրթ և անվարժ մնալու վտանգից, սերունդների ազգային կերտվածքում ու կերպարում ամուր պահպանելով այն հրաշալի լիցքը, որ հայ զինվորների, երիտասարդության մի ամբողջ նոր սերունդ էր դաստիարակելու: Եվ վերը նշված գործոնները հիմք հանդիսացան Երրորդ Հանրապետության համար՝ Հայկական բանակի ռազմահայրենասիրական դաստիարակչական հիմնահարցերը լուծելու առումով:

Արշակունի Արշակ II-ի և Պապի թագակալության, ինչպես նաև Զաքարյանների իշխանապետության ժամանակ վճռական փորձ արվեց վերականգնելու կորսված դիրքերը, ռազմիկների նոր սերնդին ոգեկոչելով ու դաստիարակելով նախնիների՝ Հայկի, Պարույր Սկայորդու, Արտաշես Առաջին Բարիի, Տիգրան Մեծի և այլոց օրինակներով, Մամիկոնյան, Բագրատունի, Պահլավունի, Զաքարյան և մյուս իշխանները ռազմի դաշտ դուրս բերելով իրենց զինվորներին, անշուշտ, նրանց ռազմահայրենասիրական կոփվածքի մեջ առաջնակարգ տեղ էին հատկացնում նրանց հիշեցնելու իրենց ժողովրդի պատմաքաղաքական հերոսական ավանդույթները: Ինչպե՞ս կարելի է չանդրադառնալ Հայոց պատմության IV դարի 50-70-ական թվականների իրադարձություններին, եթե այդ ժամանակաշրջանում Հայոց քաջարի ու արիասիրտ արքաներ Արշակ II-ը և Պապը պետականության պահպան-

մանը և հզորացմանը նպատակամիտված դժվարին ու արյունոտ մաքառումներում էապես կարևորում էին հայ զինվորին ու զորապետին, որոնք պետք է աներեր կանգնեին հայոց սրբազան հողի վրա և վեհության հրաշալի զգացումով լի անզիջում ու հաստատակամ պայքար մղեին օտար նվաճողների դեմ, որոնք ձգտում էին ջլատել հայկական պետականությունը և Հայաստանը դարձնել երկրորդական-երրորդական մի երկիր, որը նրանց և հետագա սերունդների համար կդառնար կենսական արժեքների ձեռք բերման կենտրոնատեղի ու աշխարհաքաղաքական հայտնի տարածքի վրա իշխելու նպատակահարմար պլացդարմի՝ ռազմահենադաշտի: Հայկական բանակի ռազմահայրենասիրական, քաղաքական-աշխարհայացքային և պարզապես հայեցի դաստիարակության զինանոցում ուղղակի անգնահատելի են 1720-ական թվականներին բռնկված Դավիթբեկյան հերոսական դյուցազնամարտի հոյակերտ դասերը, քանզի այդ ժամանակահատվածում Դավիթ Բեկն իր քաջարի ու հավատարիմ զինակիցների հետ համատեղ համառ ու հիրավի հերոսական դյուցազնամարտով դարավոր թմբիրից արթնացրեց հրաշալի զինվորների մի ամբողջ համաստեղություն, որոնք կռվելով սեփական երկրի թշնամիների դեմ, արժեքավոր մարտական փորձ ձեռք բերեցին, միաժամանակ որոշակի ավանդույթների հիմք դառնալով, որոնք հետագայում ռազմաքաղաքական պատմության ասպարեզ դուրս բերեցին զինվորական տոհմերի մի ամբողջ փաղանգ, որոնք կռվելով այլ երկրների, և մասնավորապես հզոր Ռուսաստանի բանակների կազմում, փառք ու պատիվ էին բերելու հայ ժողովրդին:

900-ամյա ընդմիջումից հետո, որը պայմանավորված էր հայկական պետականության անկումով, Սարդարապատի հերոսական սերունդը ձևավորման գործընթացներ ապրող Առաջին հանրապետության Հայկական կանոնավոր բանակի զորամասերում, վերհիշելով պատմական Հայկ Նահապետի, Արարատյան մեծ արքաների, Տիգրան Մեծի, Դավիթ Բեկի և այլ ազգային-ազատագրական ու ռազմական գործիչների, զորապետների ու սպարապետների հերոսական ժամանակները, հրաշալի ռազմահայրենասիրական կոփվածք ստացավ, հայ ռազմիկների և սպաների մի ամբողջ սերունդ պատմական գործունեության ասպարեզ դուրս եկավ: Սարդարապատյան պատմական

այդ ճակատամարտաշարքում հայերը ցույց տվեցին, որ իրենք աշխարհի լավագույն զինվորներից են, ինչի մասին անգամ խոստովանել է թշնամին: Հայոց պատմության այս փառապանծ էջերի բացահայտումով նոր սերնդի համար լիովին ակնհայտ է դառնում, թե ինչպիսի բարոյական կերպար ուներ հայ զինվորը Սարդարապատյան ոգեկոչման այդ օրերին, երբ նրա հետ ուս-ուսի տված, ինչպես հարազատ հողի համար անձնուրաց պայքար էին մղում հայ, եզդի, ռուս մարտիկները: Հենց այս օրինակների վրա էլ պետք է դաստիարակվի երիտասարդ սերունդը, ուսանելով և խորամուխ լինելով Հայոց պատմության այդ հերոսական պատմամատյանում: Հայկական բանակը իրեն հրաշալի դրսևորեց 1918թ. դեկտեմբերին բռնկված վրաց-հայկական պատերազմում՝ փառավոր դաս տալով սեփական հայրենիքի մի հողակտորի՝ Ախալքալաք-Լոռիի նկատմամբ անօրինական ոտնձգություն կատարած Վրաստանի Հանրապետության մեծաքանակ, սանձարձակ բանակի զինվորներին: Այդ օրերի դասերն անանց արժեք ու նշանակություն ունեն: Անանց են, քանզի Հայոց պատմության այդ հերոսական էջերով դաստիարակվել և դաստիարակվում են սերունդներ, որոնք շատ լավ են հիշում ռազմի դաշտում իրենց քաջարի պապերի սխրագործությունների մասին: Եվ այսօր էլ, Երրորդ Հանրապետության բանակի ռազմահայրենասիրական-քաղաքական դաստիարակության առումով, սկզբունքային, հիմնարար միջոցների զինանոցում կարևոր տեղ է հատկացվում և դա խիստ տրամաբանական է՝ հենց Հայոց պատմության այդ անանց էջերի լուսաբանմանը, դրանց արդիականացմանը և նորովի ընկալմանը: Այն ահռելի նշանակություն ունի Հայ ժողովրդի հերոսական պատմությունը հայ զինվորների կոփման հիմնախնդրում կարևորագույն կռվան դարձնելու գործում, որն էլ հենց Նժդեհյան դրոշմվածք ունեցող, իրապես Հայրենիքի շահերը խորապես գիտակցող և նրա շահերը ամեն ինչից վեր դասող սերնդի պատմական ասպարեզ դուրս գալու կարևորագույն նախապայմանն է, որում կարևորվում է Հայոց պատմության տեղն ու դերը, որն էլ ազգային Հայկական բանակի, զինուժի դաստիարակության լավագույն զինամիջոցն է:

Հայկից ու Բելից մինչև նորագույն ժամանակաշրջանն ընդգրկող Հայոց պատմության այդ հիմնահարցերի լիարժեք և հիմնարար ու-

սումնասիրությունն անանց, մեծ նշանակություն ունի նոր սերնդի հայ զինվորի, Հայկական բանակի սպաների ու զորապետների վրա ունեցած ռազմահայրենասիրական, քաղաքական, աշխարհայացքային ազդեցության դաստիարակության դարամակարդակ պահանջների տեսանկյունից:

Հայոց պատմության ազատագրական դրվագները (օրինակ՝ Ք. Ա. 66 թ. Արածանիի մոտ տեղի ունեցած ճակատամարտը, 371 թ. Ձիրավի և 481 թ. Ակոռի գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտերը, 703 թ. Վարդանակերտի ճակատամարտը, 775 թ. ապրիլիի 25-ի Արծնի գյուղի մոտ արաբական ուժերի դեմ անհավասար ճակատամարտը, 921 թ. Սևանի ճակատամարտը, 1727 թ. Հալիձորի ճակատամարտը, և այլն) անմոռաց գաղափարաքաղաքական-բարոյահոգեբանական և աշխարհայացքային արժեքներ են, հայ ժողովրդի հերոսականացման և խիզախման հրաշալի ռազմադրվագներ, որոնք իրենց խորքային նպատակադրումներով հառված են դեպի ազգային-քաղաքական կյանքի ապագա ձգտումների և երազանքների հեռուները:

Հայոց պատմության, Հայկական պետականության ու զորքի, Հայոց բանակի բարձրակետը հանդիսացող Արտաշեսյան հարստության ժամանակաշրջանում Արտաշես I Բարիի, և մասնավորապես Տիգրան II Մեծի, Արշակունի Արշակ II-ի, Պապի, Բագրատունի Աշոտ II Երկաթի, Աշոտ III, Գագիկ I-ի և այլոց օրոք Հայկական բանակը դրսևորեց իր լավագույն մարտական կարողությունները, տալով գերազանց զինվորների ու բարձրակարգ զինվորականության մի ամբողջ համաստեղություն, որոնց օրինակներով դաստիարակում, ոգեշնչում և ոգեկոչում էին հայ մարտիկներին Առաջին և Երկրորդ աշխարհամարտերի տարիներին՝ կռվելով Սիրիայի և արաբական երկրների, Պաղեստին ավազուտներում՝ Անտանտի Դաշնակից երկրների զինուժի կազմում փառավորելով Հայկական արևելյան Լեգիոնի, Հայ զինորի անունը և պատիվը Արարայի և Մոգիդոյի ճակատամարտերում, և վերջապես իրենց փառքով պսակում ինչպես Երկրորդ աշխարհամարտի կարևորագույն և բեկումնային նշանակություն ունեցող ռազմաճակատներում՝ Ստալինգրադի, Կուրսկի տակ և Բեռլինի մատույցներում, այնպես էլ ազերիների դեմ գոտեմարտում հերոսական Արցախյան 1980-90-ական թվականների իրադարձությունների՝ Շուշիի գրավման ու ազատագրման

ժամանակ, վճռական մի քայլ կատարելով դեպի Արցախը մայր հայրենիքին միացնելու հիմնախնդրում, որի բոցերում ծնվեցին բազմաթիվ հերոսացած Արտաշեսներ և Տիգրաններ, Դավիթ Բեկեր և Մխիթար, Վազգեն Սպարապետներ, որոնք ոգեկոչվելով իրենց պատմական փառահեղ նախնիների մարտաշունչ օրինակներով, հիմք դրեցին Հայկական բանակի նորօրյա վերածննդին:

Ինչ վերաբերում է Հայոց պատմության և Հայոց Զինուժի տարեգրության տեղին ու դերին Հայկական բանակի զինվորականության, սպայության և առհասարակ՝ նաև երիտասարդ սերնդի ռազմահայրենասիրական, քաղաքական-աշխարհայացքային դաստիարակության համակարգում, ապա անհրաժեշտ է մասնավորապես ընդգծել հետևյալը.

1. Ըստ էության տվյալ խնդիրը կարևորվում է երկու հիմնական ուղղություններով: Ներկա ազգային-քաղաքական զարթոնքի պայմաններում, երբ խորհրդային թմբիրից արթնանում է հայ ժողովրդի ազգային ոգին, առավել քան առաջնային է Հայկական բանակի զինվորների և բարձրագույն սպայակույտի մոտ ազգային հոգեբանության, հայրենասիրական ոգեկերտվածքի ձևավորումը և արմատավորումը: Մյուս կողմից՝ հույժ կարևոր է դառնում նրա քաղաքական-աշխարհայացքային ինքնագիտակցության զարգացումը, առանց որի անհնարին է կողմնորոշվել փոխակերպվող աշխարհի սոցիալ-քաղաքական, ռազմական և տնտեսական բարդ իրադրության պայմաններում: Այսպիսով, Հայոց պատմության և Հայոց Զինուժի պատմաքննական հետազոտության և դրանից անժան, մեկ միասնության մեջ գտնվող ուսումնառության դասընթացը որպես Հայկական բանակում ազգային-հայրենասիրական արժեքների արմատավորման գլխավոր ուղղություններից մեկը, կարող է նպաստել առաջադրված հիմնահարցերի հիմնարար լուծմանը, խորապես նպաստելով Հայկական Զինուժի զորեղացմանն ու հայկական և ժամանակակից հասարակության մեջ իր արժանի տեղը գրավելու անկյունաքարային, ռազմավարական մեծ նշանակություն ու արժեք ունեցող գործընթացներին, ազգային-ռազմական փառավոր և անանց ավանդույթների պահպանմանն ու արմատավորմանը ազգային-քաղաքական գործառույթներում:

Վերջաբանելով, կարելի է գալ եզրահանգման, որ Հայոց պատմության և Հայոց Զինուժի գիտական հետազոտման ու արժևորման դերը խիստ կարևորվում է նրանով, որ նրանում բովանդակված ողջ արժեքահամակարգի միջոցով հայրենասիրական-քաղաքացիական դաստիարակությունը միտված է համախմբելու ողջ հայ հասարակությունը Մայր հայրենիքում և Սփյուռքում, ինչը Հայաստանի Հանրապետության ազգային-պետական անվտանգության ապահովման գլխավոր միջոցներից և գլխավոր գրավականներից մեկն է, ազգային-քաղաքական առաջնահերթություններից: Այսինքն՝ Հայոց պատմությունը, հայոց Զինուժի պատմատարեգրությունը ***ՀԱՅՐԵՆԻՔԻՆ*** նվիրված սերունդների, այդ թվում և Հայկական բանակի դաստիարակության հիմնական միջոցներից և ոգեշունչ, անփոխարինելի և հզորագույն կռվաններից է:

ԳԼՈՒԽ 1.

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԵՈՆԸ

պ.գ.դ., պրոֆեսոր Ս. Ա. Պողոսյան

Առաջին աշխարհամարտի տարիներին կազմավորված հայկական զորամիավորումներից է Կիպրոսում Ֆրանսիայի կողմից կազմավորված, սակայն ֆրանսիական բանակի մաս չկազմող Հայկական (Արևելյան) լեգեոնը: Այդ կամավորական բանակը ձևավորվեց, որպեսզի ազատագրեր Կիլիկիան: Այն մասնակցեց Պաղեստինում թուրքական բանակի ջախջախմանը, Լիբանանի, Սիրիայի և Կիլիկիայի ազատագրմանը: 1919-1920 թթ. Հայկական լեգեոնը մասնակցեց Կիլիկիայի հայ բնակչության ինքնապաշտպանական մարտերին: Հայկական այդ զորամիավորումը Ֆրանսիայի կողմից կազմավորվեց, երբ վերջինս Արևելքում բավարար ուժեր չուներ և ստիպված էր դիմել հայերի աջակցությանը: Սակայն պատերազմի ավարտից հետո Ֆրանսիան ոչ միայն Կիլիկիային չտվեց ինքնավարություն ինչպես խոստացել էր, այլև այն 1921-1922թթ. կրկին հանձնեց թուրքերին՝ պատճառ դառնալով տեղի հայության արտագաղթին:

Այնուամենանիվ, Հայկական լեգեոնի կազմավորումը և նրա գործունեությունը մեր պատմության վառ էջերից են: Այն կարևոր դերակատարություն է ունեցել հայերին պատերազմում կռվող կողմ ճանաչելու, հայ գաղթականության հայրենի Կիլիկիա վերադառնալուն օժանդակելու, ապա պաշտպանելու գործում: Հայկական լեգեոնը կազմավորվել է 1916 թ., սակայն նրա կազմավորման շուրջ բանակցությունները սկսվել էին 1914 թ.-ից: Դա երկարատև գործընթաց էր, որը ի վերջո հանգեցրեց հայկական զորամասի ձևավորմանը:

Կիլիկիայի ուղղությամբ գործող հայկական զորամաս կազմավորելու հարցը 1914-1916 թթ.:

Առաջին համաշխարհային պատերազմի առաջին իսկ օրերից երևում էին հայերի զանգվածային կոտորածի նախանշաններն ու նա-

խապատրաստությունները: Հետևաբար՝ հայ գործիչները ելքեր էին փնտրում՝ զանգվածային կոտորածներից հայ բնակչությանը փրկելու համար: Միակ հնարավորությունը ժողովրդին ինքնապաշտպանության նախապատրաստելը և հնարավորության դեպքում Անտանտի երկրների զորքերի մուտքն էր հայկական տարածքներ: Ավելի հավանական էր համարվում այդ երկուսի համատեղումը՝ հայերի ինքնապաշտպանություն և Անտանտից օգնություն ստանալը:

Կիլիկիայում հայկական ապստամբությունը և դաշնակիցների օգնությամբ ազատագրումը հնարավորություն կտար երկրամասը փրկել հայազրկումից, ինչպես նաև՝ պայմաններ կստեղծեր պատերազմից հետո ինքնավարություն ձեռք բերելու համար: Կիլիկիայի ազատագրումով հնարավոր կդառնար կանխել հայերի տեղահանությունն ու կոտորածը նաև մյուս վայրերում, որի հետևանքով թուրքերն ի վիճակի չէին լինի ամբողջ ահավորությամբ իրականացնել Հայոց մեծ եղեռնը:

Կիլիկիայում ափհանում կատարելու նպատակով հայ գործիչները, սկսած 1914 թ. վերջերից, բազմիցս դիմել էին Ռուսաստանի, Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի ռազմական, քաղաքական և դիվանագիտական շրջանակներին[1]: Կիլիկիան ազատագրելու հարցով զբաղվող առաջին գործիչներից էր նաև Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը: Նա ողջունել էր կովկասահայերի կամավորական շարժումը. «Կամավորները, Դաշնակիցների հետ կողք կողքի կռվելով, ուժ կտան մեր դատին և կստեղծեն նոր իրավունքներ մեզ համար: Այսպիսով՝ մեր ձայնն ավելի ուժեղ կլինի, երբ ժամանակը գա ձևակերպելու մեր արդարացի և համեստ պահանջները»[2], - գրում էր նա դաշնակցական նշանավոր գործիչ Միքայել Վարանդյանին: Ազգային գործիչը գիտակցում էր, որ աշխարհը հարգում է նրանց, ովքեր կարող են պայքարել սեփական իրավունքների համար և հույս ուներ,

[1] Տե՛ս **ԳԱԹ,** Ա. Չոպանյանի ֆոնդ, բ. 1, ց. 1, գ. 702: **Դալլաքյան Կ.,** Արշակ Չոպանյան, Եր., 1987, էջ 327-328: **Չոպանյան Ա.,** Նամականի, Երևան, 1980, էջ 120-121: **Ճիզմեճեան Մ.,** Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց 1890-1925, Ֆրէզնօ, 1930, էջ 208: **Ռուստոմ:** Նամականի (Մահուան ութսունամեակին առթիւ), Պէյրութ, 1999, էջ 623-625:

[2] **Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915-1918.** Documents, Edited and translated by Vatche Ghazarian, Waltham, 1996, p. 9:

որ պատերազմից հետո Անտանտի երկրները հաշվի կառնեին ռազմի դաշտում հայերի թափած արյունն ու մատուցած ծառայությունները:

Պ. Նուբարին անհանգստացնում էր հատկապես Կիլիկիայի հայ բնակչության ճակատագիրը, որին սպառնում էր ջարդերի վտանգը: Կիլիկիահայությանը փրկելու մտահոգությամբ՝ նա 1914 թ. նոյեմբերի սկզբին դիմում է Եգիպտոսի բրիտանական հրամանատարությանը, որպեսզի զորք ուղարկեն գրավելու Կիլիկիայի ծովեզերքը՝ Մերսինի ու Ալեքսանդրետի նավահանգիստները, Ադանայի դաշտը: Խոստանում էր, որ լեռնագավառների հայերը ոտքի կկանգնեն և կօժանդակեն դաշնակիցներին, եթե նրանց զենք ու զինամթերք տրամադրվի: Բրիտանական ուժերի ափիանումը կապահովեր տեղի հայության անվտանգությունը, իսկ հայկական ապստամբական շարժումը «աւելի կշիռ կը բերէր Կիլիկիոյ մասին մեր ունեցած ազգային բաղձանքներուն»[1],- գրում էր նա կաթողիկոս Գևորգ Ե-ին: Այդ առաջարկը բավական գործնական էր ու արդյունավետ հետևանքներ կարող էր ունենալ, որի շնորհիվ հավանության էր արժանացել բրիտանացի որոշ ռազմական գործիչների կողմից: Եգիպտոսում բրիտանական ուժերի գլխավոր հրամանատար գեներալ-լեյտենանտ Ջոն Մաքսվելը Պ. Նուբարի հետ քննարկում է զորքերի ափիանման և հայերի աջակցության հետ կապված հարցերը: Հայ գործիչը վստահեցնում էր, որ հայերը բրիտանացիներին կընդունեն որպես ազատարարների և ցույց կտան հնարավոր ամեն օգնություն:

1915 թ. փետրվարի 3-ին Պ. Նուբարը «Պատերազմը և Կիլիկիայի հայերը» վերնագրով հուշագիր ներկայացրեց Եգիպտոսի բրիտանական իշխանություններին: Դրանում ավելի մանրամասն էին ներկայացված Կիլիկիայում տեղի ունենալիք ռազմական գործողությունների հետ կապված հարցերը: Նշվում էր, որ Հայաստանի հետ պետք է ինքնավարություն ստանա նաև Կիլիկիան, կամ այն պետք է անցնի դաշնակից երկրներից որևէ մեկի հովանավորության տակ: Միաժամանակ վստահեցնում էր, որ եթե պատերազմից հետո Կիլիկիան նորից Թուրքիային թողնեն, ապա տեղի հայերը ստիպված կլինեն ապստամբության միջոցով ազատվել այդ դաժան լծից: Ցույց էր տալիս այն տնտե-

[1] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 68:

սական ու քաղաքական խոշոր շահերը, որ կունենային տերությունները, եթե Կիլիկիան դառնար ինքնավար Հայաստանի մաս կամ անցներ Անտանտի երկրներից որևէ մեկին: Հավանություն էր տրվում Ալեքսանդրետի ուղղությամբ բրիտանական ռազմարշավային կորպուս ուղարկելու գեներալ Ջ. Մաքսվելի ծրագրին և խոստանում էր, որ կիլիկիահայերը կաջակցեն նրանց և նույնիսկ ապստամբություն կբարձրացնեն լեռնագավառներում, եթե զենք ստանան: Նկարագրված էր 1895-1896 թթ. Զեյթունի ապստամբությունը, երբ մի քանի ամիս շարունակ հայերը հաջողությամբ դիմագրավել էին թուրքական 30.000-ոց բանակին և աչքի էին ընկել բարձր մարտունակությամբ: Սակայն հայերի անվերապահ աջակցության դիմաց Պ. Նուբարը բրիտանական կառավարությունից պահանջում էր երաշխիքներ, որ Կիլիկիայի գրավումը ժամանակավոր բնույթ չի կրի և հետագայում այն չեն հանձնի թուրքերին, որոնք վրեժ կլուծեին տեղի հայ բնակչությունից[1]: Փաստորեն՝ Ազգային պատվիրակության նախագահը խնդրում էր բրիտանական աջակցություն՝ ընդհանուր թշնամու դեմ կռվելու համար, խոստանում էր հայերի մասնակցությունը ռազմական գործողություններին, միաժամանակ բարձրացնում էր թուրքական լծից Կիլիկիայի վերջնական ազատագրման խնդիրը:

Ռուսական իշխանությունները բազմիցս դիմել են Բրիտանիային և Ֆրանսիային, որպեսզի Կիլիկիայում դաշնակից ուժերի ափհանում իրականացնեին և թեթևացնեին Կովկասի ուղղությամբ թուրքականն բանակների ճնշումը: Միաժամանակ դաշնակիցների ռազմական գործողությունները Կիլիկիայում նրանց կշեղեին Կ. Պոլիսը գրավելու մտքից, որին կտրականապես դեմ էր Ռուսաստանը: Հետևաբար, ռուսական իշխանությունները բավական դրական էին տրամադրված Կիլիկիայի ուղղությամբ հայ գործիչների առաջարկած նախագծերին և մի քանի անգամ դիմեցին դաշնակիցներին, որպեսզի աջակցեն հայկական զորամաս կազմավորելուն[2]:

---

[1] **Boghos Nubar's Papers**, p. 3-5.

[2] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 450, ց. 1, գ. 42, թ. 1, ֆ. 1457, ց. 1, գ. 91, թ. 9: **Գասպարյան Ե.,** Ֆրանսիան և Մեծ եղեռնը (1915-1918 թթ.), Եր., 2000, էջ 39-41: **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), Աշխատասիրությամբ

1915 թ. ապրիլին ԱՄՆ-ում բրիտանական արտակարգ և լիազոր դեսպան Սեսիլ Սփրինգ-Ռայսին տեղի ռուսական դեսպան Գեորգի Բախմետևը տեղեկացնում է, որ ամերիկահայերը պատրաստ են Կանադայի վրայով 1.000 կամավորներ ուղարկել Կիլիկիայում կռվելու համար: Հայերը նույնիսկ պատրաստակամություն էին հայտնել վճարել իրենց ռազմական հանդերձանքի և մինչև Կանադա տեղափոխության ծախսերը՝ հուսալով, որ Մեծ Բրիտանիան իր վրա կվերցներ նրանց տեղափոխությունը մինչև Կիլիկիա: Ապրիլի 25-ին այս առաջարկն ուղարկվում է Մեծ Բրիտանիայի ԱԳՆ, սակայն հաջորդ օրը Բանակային խորհրդում մերժվում է[1]: Այդ օրերին սկսվել էր Դարդանելի վրա երկրորդ հարձակումը: Բրիտանացիներն ամբողջ ուշադրությունն ու ջանքերը կենտրոնացրել էին այդ գործողությունը հաջողությամբ ավարտելու վրա, և Կիլիկիայում նոր ճակատ բացելու մասին չէին կարող մտածել: Սակայն օրեցօր ավելի սարսափելի լուրեր էին հասնում հայության տեղահանությունների ու կոտորածների մասին, որը չէր կարող անտարբեր թողնել արտասահմանի հայությանը:

Երիտթուրքերը տարագրությունն ու կոտորածը Կիլիկիայում սկսել են ավելի վաղ, քան՝ Արևմտյան Հայաստանում: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ ցանկացած պահի Անտանտի երկրները կարող էին զորք ափհանել Կիլիկիայում, իսկ թուրքերը բավարար ուժեր չունեին այն պաշտպանելու: Հետևաբար՝ իրենց թիկունքն ավելի ապահով դարձնելու համար թուրքերը շտապում էին տեղահանել տեղի հայ բնակչությանը: Հայկական կոտորածների մասին լուրերի ահագնանալու հետ հայ գործիչներն ավելի էին հակվում Կիլիկիայում անհապաղ զինված գործողություններ ծավալելու մտքին:

1915 թ. մայիսի սկզբին եգիպտահայ գործիչները սկսեցին տեղեկություններ ստանալ Կիլիկիայում սկսված ջարդերի ու տարագրության մասին: Այդ լուրերը բերում էին բրիտանական նավերով փրկված կիլիկեցի փախստականները: Դրանց ճշմարտացիությունը ստուգելուց հետո Լևոն Մկրտիչյանը այդ մասին հեռագրում է Պ. Նուբարին՝ խնդ-

---

Արթուր Պեյլերյանի, առաջաբանը՝ Ժան-Բատիստ Դյուրոզելի, ֆրանսերենից թարգմ. Վարուժան Պողոսյանը, հ. I, Եր., 2005, էջ 33-34, 72, 78-80:

[1] **Սարուխանյան Տ.,** Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում և Մեծ Բրիտանիան (1915-1918 թթ.), Երևան, 2005, էջ 59:

րելով դիմել տերությունների աջակցությանը[1]: Սակայն Լ. Մկրտիչյանը վստահ էր, որ Անտանտից որևէ օգնություն այդ պահին սպասել չէին կարող, քանի որ նրանք Դարդանելի ռազմագործողության վրա էին կենտրոնացել: Մայիսի 22-ին Ապահին ուղարկած նամակում եգիպտահայ գործիչն այն համոզմունքն էր հայտնում, որ «Տարտանէլը մինչեւ որ չիյնայ, Դաշնակիցք զօրք չէն հաներ Կիլիկիա, թէկուզ ամբողջ Քրիստոնեայ ազգաբնակութիւնը բնաջինջ ըլլայ»[2]:

Նման զարգացումներից խիստ անհանգստացած Ազգային պատվիրակության նախագահը դիմել է Ֆրանսիայի ու Մեծ Բրիտանիայի կառավարող շրջաններին, սակայն այս անգամ ևս դրանք արդյունք չեն տվել: Հուլիսի 6-ին Լոնդոնում նա հանդիպում է ունեցել Մեծ Բրիտանիայի արտգործնախարարի օգնական Արթուր Նիկոլսոնի հետ և ներկայացրել է Կիլիկիայում ստեղծված ծանր վիճակը և նշել, որ «եթե Դաշնակիցները, հայ կամավորների հետ օգնության չհասնեն հայ բնակչությանը՝ զորքեր ափհանելով Ալեքսանդրետում, կոտորածները կընդունեն լայն ծավալներ»[3]: Սակայն բրիտանացի դիվանագետը պատասխանում է, որ Դարդանելի օպերացիան կլանել է դաշնակիցների բոլոր ուժերը, և նրանք ի վիճակի չեն ռազմական գործողություններ ծավալելու Կիլիկիայում:

Հուլիսի 13-ին Ժան Մութաֆովը Ալեքսանդրիայից չափազանց մռայլ և հուսահատեցնող լուրերով նամակ ուղարկեց Պ. Նուբարին[4]: Նկարագրում էր Կիլիկիայում սկսված զանգվածային տեղահանությունները ու ջարդերը, խնդրում էր անհապաղ ու կտրուկ միջոցներ ձեռնարկել կիլիկիահայերին փրկելու համար: Նշվում էր, որ եթե անհապաղ ռազմական միջամտություն չկատարվի, ապա Կիլիկիայում այլևս հայեր չեն մնա: «Ինչպե՞ս կարող են դաշնակիցները,- գրում էր Ժ. Մութաֆովը,- իրենց բոլոր մարդասիրական սկզբունքներով, մնալ անտարբեր և թույլ տալ մարդկության դեմ ուղղված նման վիթխարի ոճիր իրականացվի մեր դահիճների կողմից հենց իրենց աչքերի առաջ: Նրանք ովքեր պատասխանատու են, փաստորեն, իրենց թշնամիներն

[1] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 453, ց. 1, գ. 70, թ. 87-88:

[2] Նույն տեղում, թ. 88:

[3] **Boghos Nubar's Papers**, p. 142:

[4] Նույն տեղում, էջ 161-162:

են և այս հրեշավոր չարչարանքին վերջ դնելու խնդիրը բավական անշան ջանք կպահանջի համեմատած նրանց վերջին հսկայական ջանքերին ներդրված թշնամի երկրի այլ տարածքներում: Ճիշտն ասած, Դաշնակիցների այս անտարբեր վերաբերմունքը հենց այս պահին, երբ մեր ազգային գոյությունը Կիլիկիայում վտանգի տակ է, միշտ կմնա անհասկանալի, կարևոր չէ, թե ինչ ռազմական, քաղաքական կամ ստրատեգիական պատճառներ կարող էին լինել: Եվ այսպիսով, Ձերդ գերազանցություն, մենք չգիտենք էլ ինչպես խնդրենք ձեզնից Կիլիկիայի մեր եղբայրների անունից, որ Ձեր բոլոր ջանքերն ու եռանդն ուղղեք Դաշնակիցների անհապաղ զինված ներխուժման ուղղությամբ՝ ներխուժում, որն անհրաժեշտ է դադարեցնելու բնաջնջումը մի ամբողջ ժողովրդի, որի մեղքը քրիստոնյա լինելն է, քաղաքակրթություն գուրգուրելը և իրական համակրանք սնուցելը Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի հանդեպ»[1]:

Ցավոք, աշխարհի հզորներին այնքան էլ չէր հուզում իրենց համակրող մի ամբողջ ժողովրդի ոչնչացումը, և նրանց միակ մտահոգությունը սեփական շահախնդրական ձգտումների ապահովումն էր: Եվրոպայի «մարդասեր» ու «հայասեր» ղեկավարները, ինչպես հայտնի է, ոչ միայն օգնության ձեռք չէին մեկնելու ցեղասպանության ենթարկվող փոքր դաշնակից հայերին, այլև հետագայում հաճույքով սեղմելու էին թուրքերի արյունոտ ձեռքը՝ նորից անպաշտպան թողնելով՝ հույսը եվրոպական «քաղաքակիրթ» հորջորջվող աշխարհի վրա դրած, հայ ժողովրդին: Այսպիսով, Կիլիկիայից եկող լուրերն օրեցօր ավելի գորշ գույներ էին ընդունում, իսկ Անտանտի երկրները որևէ մտադրություն չունեին օգնելու հայերին: Նման պայմաններում նորից հրատապ էր դառնում հայկական կամավորական զորամասի ստեղծման և սեփական ուժերով Կիլիկիան ազատագրելու գաղափարը:

Փրկության միակ հույսը Պ. Նուբարը համարում էր Կիլիկիայում դաշնակից ուժերի ափհանում կազմակերպելը, կամ հայ կամավորական շարժմանը ուժ տալը և նրանց միջոցով հայ բնակչությանը ազատագրելը, զանգվածային տեղահանությունն ու կոտորածը կանխելը: Նա կաթողիկոսին գրում էր. «…մեզ ուրիշ բան չի մնար ընել բայց եթէ

[1] Նույն տեղում, էջ 162:

մեր սեպհական ոյժերուն կրթնիլ: ...Եւ այս մասին միակ դարման մը կը խորհիմ, այսինքն Վանի շրջակայքին հայ կամաւորական գունդերը ի վիճակի դնել ըստ կարելւոյն շուտով յառաջ խաղալու, մեր բոլոր ոյժերով աշխատելով անոնց թիւը բազմապատկել, այս մասին Կովկասի սպայակոյտին արտօնութիւնը ձեռք բերել եւ յիշեալին աջակցութեամբ պէտք եղած զէնքն ու ռազմամթերքը հայթայթել: ....Բաւական վստահելի աղբիւրներէ տեղեկացած եմ որ Թուրքերը այս րոպէիս շատ քիչ զօրք ունին Կիլիկիոյ մէջ, հետեւաբար Կովկասեան ճակատին վրայ իրենց արութեան ապացոյցը արդէն տուած քանի մը հազար քաջամարտիկ հայ կամաւորներ կարող են յիշեալ զօրքերուն հետ ճակատիլ: Եթէ մեր կտրիճները յաջողին Զէյթունը եւ երկրին ուրիշ ռազմական դիրքերը գրաւել՝ կարող կը հանդիսանան այս կերպով խմբական աքսորանքներու եւ կոտորածներու սպառնալիքին առաջքն առնուլ»[1]:

Ինչպես տեսնում ենք, Ազգային պատվիրակության նախագահը ամբողջությամբ հույսը կտրել էր, որ Անտանտի պետությունները կօժանդակեին Կիլիկիայի ազատագրմանը և կոտորածների կանխմանը: Նա հարցի լուծում էր համարում Կովկասյան ճակատի հայ կամավորների թիվն ավելացնելը և սեփական ուժերով Կիլիկիա հասնելը: Սակայն դա իրատեսական չէր, քանի որ հայ կամավորները Վանից Կիլիկիա հասնել անկարող էին, նույնիսկ Կովկասյան ճակատի ռուսական բանակն այդ պահին ի վիճակի չէր նման ռազմական խնդիր լուծել: Այս շրջանում ռուսական զորքը նույնիսկ կարճ ժամանակով նահանջել էր Վանից՝ տեղի հայ բնակչությանը կանգնեցնելով գաղթելու պարտադրանքի առաջ:

Հուլիսի 20-ին Եգիպտոսի Հայ ազգային պաշտպանության կոմիտեն Կիլիկիայում ռազմական գործողություններ ծավալելու առաջարկով հուշագիր ներկայացրեց Եգիպտոսում բրիտանական զինված ուժերի գլխավոր հրամանատար, գեներալ Ջ. Մաքսվելին: Հուշագրի հեղինակները տեղեկացնում էին, որ ամեն օր ավելի ու ավելի անհանգստացնող լուրեր են հասնում հայերի կոտորածների ու ճնշումների մասին, զանգվածային տեղահանությունները կարող են Կիլիկիայի հայ բնակչության ոչնչացման պատճառ դառնալ, եթե նրանց շուտափույթ

[1] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 68-69:

գործնական աջակցություն ցույց չտրվեր: Միաժամանակ վստահ էին, որ Դարդանելի ռազմագործողության պատճառով Կիլիկիայի առափնյա շրջանում էքսպեդիցիոն զորքեր ափհանելու խնդրանքը հավանության չէր արժանանա: Հետևաբար՝ կոմիտեն խնդրում էր բրիտանական իշխանությունների թույլտվությունը, որպեսզի իրենք ընթացք տային և գլխավորեին Ամերիկայում, Բուլղարիայում, Ռումինիայում ու այլ հայկական համայնքներում սկսված կամավորական շարժմանը: Խնդրում էին թույլ տալ կամավորներին հավաքելու Կիպրոսում, տրամադրելու ռազմամթերք և տրանսպորտային միջոցներ ափհանման համար: Հույս ունեին, Կիլիկիայի քրիստոնյա բնակչության աջակցությամբ, գրավել ստրատեգիական նշանակության ռազմական դիրքեր: Պատրաստ էին բոլոր գործողություններն իրականացնել բրիտանական իշխանությունների ղեկավարության ու վերահսկողության ներքո[1]: Այդ առաջարկությունը հետաքրքրել էր բրիտանացիներին, քանի որ արդեն պարզ էր Դարդանելի օպերացիայի ձախողումը, և իրենց հեղինակությունն Արևելքում պահպանելու համար նրանք նոր ուղիներ էին փնտրում:

Ջ. Մաքսվելի պահանջով՝ Հայ ազգային պաշտպանության կոմիտեն հուլիսի 24-ին ավելի մանրամասն ծրագիր է ներկայացրել: Ըստ դրա՝ Կիպրոսում կազմավորվելու էր 10.000-ոց հայկական կամավորական զորամաս, որի ծախսերը հոգալու էին հայերը, իսկ բրիտանացիներն ապահովելու էին սպաներով, ռազմամթերքով, օժանդակելու էին փոքրաթիվ ցամաքային ու ծովային ուժերով: Հայերը, ապստամբություն կազմակերպելու նպատակով, նախապես զենք ու դրամ էին տեղափոխելու Կիլիկիայի ծովափնյա շրջանները: Հայկական կամավորական բանակը գրավելու էր Ալեքսանդրետը, Ադանան, Մերսինը: Նախատեսվում էր, որ այնտեղ նրանց կմիանան 25.000 հայ ապստամբներ Կիլիկիայից և 15.000 էլ շրջակայքից: Այդ 50.000-ոց բանակը բավարար էր համարվում ոչ միայն Կիլիկիան ազատագրելու, այլև՝ շարժվելու նրա սահմաններից դուրս: Անհրաժեշտ էին համարում գոր-

[1] **Boghos Nubar's Papers**, p. 194-195, Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 188-190:

ծողությունն իրականացնել արագորեն՝ կիլիկիահայությանը կոտորածներից ու տեղահանությունից փրկելու համար:

Եթե բրիտանացիներն անհրաժեշտ համարեին ավելի փոքրամասշտաբ գործողություն, ապա առաջարկվում էր հավաքագրել միայն 5.000 կամավորների: Այդ զորքը կարող էր մի կողմից գրավել Սուետիան և Քեսաբը, մյուս կողմից՝ Դյորթ Յոլը Ալեքսանդրետի ծոցում, ուր կհավաքվեին և արդյունավետ դիմադրություն կկազմակերպեին շրջակայքի հայերը: Այդ երկու գործողությունների հաջողության դեպքում կարող էին գրավվել Ալեքսանդրետն ու Բեյլանի կիրճը: Անհաջողության դեպքում այդ ուժերը կարող էին կենտրոնացվել լեռներում և պարտիզանական պայքար մղել: Նրանք կխախտեին թշնամու հաղորդակցությունը՝ կտրելով հեռագրալարերը, քանդելով երկաթգծերը, այրելով կամուրջները և այլն[1]: Մուսա լեռան ուղղությամբ փոքրաթիվ, բայց պարենի ու ռազմամթերքի բավարար պաշարով ուժեր ուղարկելու և Սուետիայի 6.000-7.000 հայերի հետ միասին թուրքերի թիկունքում ռազմական գործողություններ ծավալելու առաջարկով ռամկավար գործիչ Միհրան Տամատյանը 1915 թ. օգոստոսի 2-ին Կահիրեում դիմում է բրիտանացի նշանավոր դիվանագետ, գնդապետ Մարկ Սայքսին: Վերջինս Եգիպտոսի բրիտանական բարձրագույն կոմիսար Հ. Մակմահոնից հանձնարարություն էր ստացել հանդիպելու եգիպտահայ գործիչներ Մ. Տամատյանի և Վահան Մալեզյանի հետ[2]:

Օգոստոսի 3-ին Մ. Սայքսը Ջ. Մաքսվելին տեղեկացնում էր հայկական պարտիզանական ուժերի կողմից Կիլիկիայում գործողություններ ծավալելու դեպքում սպասվելիք դրական հետևանքները, ինչպես նաև առաջարկում էր Ադանայի նահանգը գրավելու համար օգտագործել Դարդանելի ֆրանսիական զորախումբը[3]: Վերջինիս կազմում կար

[1] **Boghos Nubar's Papers**, p. 203-204: **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, h. I, էջ 190-192:

[2] Տե՛ս **Տամատեան Մ.,** Իմ յուշերէս, Պէյրութ, 1985, էջ 103-104: **Varnava A.,** French and British Post-War imperial agendas and forging an Armenian Homeland after the Genocide: The formation of the Legion D'Orient in October 1916, December 2014, **The Historical Journal**, vol. 57, p. 1005:

[3] Տե՛ս **Varnava A.,** French and British Post-War imperial agendas, p. 1006:

40.000 զինվոր[1] և լիովին բավարար կլիներ Կիլիկիան ազատագրելու համար: Սակայն ինչպես կտեսնենք, Ֆրանսիայի իշխանությունները չօգտագործեցին այդ հնարավորությունը, չնայած ֆրանսիացի ռազմական որոշ գործիչների առաջարկին: 1915 թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին մուսալեռցիների կազմակերպած փառավոր հերոսամարտը ցույց տվեց, որ Մ. Տամատյանի առաջարկներն իրատեսական էին:

Մուսալեռցիների Պորտ Սայիդ տեղափոխվելուց հետո, սեպտեմբերի 29-ին Կահիրեի ֆրանսիական դեսպան Ժյուլ-Ալբերտ Դեֆրանսը, Թ. Դելկասեին ուղարկած զեկուցագրում, անդրադառնալով Եգիպտոսի Հայ ազգային պաշտպանության կոմիտեի նախագծերին, նշում էր, որ դրանք շատ արդյունավետ կլինեին, եթե գործադրվեին: Դրա ապացույցն էր համարում այն, որ մուսալեռցիները փոքրաթիվ ուժերով և սակավաթիվ հրացաններով ու զինամթերքով կարողացել էին մոտ 40 օր հաջողությամբ դիմադրել թուրքերին: «Հայկական պաշտպանության կոմիտեի ծրագիրը լավ էր մտահղացված և որ Կիլիկիայում ու Սիրիայի հյուսիսում թուրքերի համար ահռելի դժվարությունների հարուցումը դաշնակիցների համար կարող էր դյուրին լինել, եթե նրանք այդ նպատակահարմար գտնեին»[2],- գրում էր դեսպանը:

Սակայն այդ ծրագրերն ուշացած էին և կիլիկիահայության տեղահանությունից հետո դրանք անիրագործելի դարձան: Չնայած բրիտանական կողմը հիմնականում հավանություն էր տվել վերոնշյալ ծրագրերին, սակայն դա հանդիպել էր Ֆրանսիայի ընդդիմությանը: Վերջինս այլ ծրագրեր ուներ տարածաշրջանում, և հենց նրա ցույց տված դիմադրությունն էր պատճառը, որ Կիլիկիայում ափհանում չկատարվեց և երկրամասը չազատագրվեց թուրքերից՝ չնայած թե՛ բրիտանացիները, թե՛ ռուսները դա համարում էին հնարավոր և անհրաժեշտ քայլ: Հավանաբար Ֆրանսիայի ընդդիմությունը հաշվի առնելով էր, որ օգոստոսի 24-ին Է. Գրեյը Եգիպտոսի բրիտանական իշխանություններին խստորեն հրահանգեց որևէ ընթացք չտալ հայերի կամավորական շարժմանը[3]: Հայկական կամավորական զորամաս կազմավորելու

[1] **Fulton L.Bruce,** France and the End of the Ottoman Empire, The Great Powers and the end of the Ottoman Empire, edited by Marian Kent, London, 2005, p. 156:

[2] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, h. I, էջ 188:

[3] **Սարուխանյան Տ.,** նշվ. աշխ., էջ 60:

առաջարկով օգոստոսի վերջերին Պետրոգրադում բրիտանական դեսպան Ջ. Բյուքենենին էր դիմել գնդապետ Ա. Հ. Թորգոմը, ով բուլղարական բանակի սպա էր, իսկ 1914 թ.-ից՝ միացել էր ռուսական բանակին: Նա առաջարկել էր Ալեքսանդրիայում, Մարսելում, Լիվերպուլում և Նյու Յորքում ստեղծել կամավորագրության գրասենյակներ, հավաքագրել 8.000 հայերի և Եգիպտոսում ձևավորել 10 գումարտակներից կազմված Հայկական կորպուս, որը կռվելու էր թուրքերի դեմ: Առավել մեծաթիվ կամավորների դեպքում կարող էին 24.000-ոց բանակ ստեղծել: Այն դրվելու էր բրիտանացի կամ ֆրանսիացի սպաների ղեկավարության տակ: Սակայն Ջ. Բյուքենենը վստահ չէր, որ կարող էին այդքան հայ կամավորներ հավաքագրել, իսկ Բանակային խորհրդի հաշվետվության մեջ Թորգոմի նախագիծը նախորդների համեմատ լավագույնն էր համարվում, բայց մտահոգված էին այն ֆինանսական ծախսերի արդյունավետությամբ, որոնք պետք է կատարվեին հայկական կորպուսի համար[1]:

Այսպիսով՝ ամենատարբեր պատճառաբանություններով բրիտանական կողմը մերժում էր հայերին զինելու և թշնամու դեմ ուղարկելու բազմաթիվ նախագծերը: Դրանցից շատերը մեկնաբանվում էին, իբր հայկական ջարդերի առիթ չտալու կեղծ հումանիստական մոտեցմամբ: Սակայն հայկական կոտորածները առանց այդ էլ սկսվել էին և հայկական կողմի առաջարկների նպատակը հենց բնաջնջվող ազգին փրկելուն էին միտված: Բրիտանացիներին անգործության մղող ամենամեծ խոչընդոտը կարծում ենք Ֆրանսիան էր: Կիլիկիայի ուղղությամբ ռազմական որևէ նախաձեռնության նկատմամբ Ֆրանսիայի անզիջում դիրքորոշումը այն կարևոր գործոններից մեկն է հանդիսացել, որն ի վերջո հանգեցրել է Դարդանելի արկածախնդիր օպերացիան գործողության մեջ դնելուն: Փաստորեն, Դարդանելում ափիհանում կատարելու բրիտանական իշխանությունները որոշումից հետո Կիլիկիան անուշադրության է մատնվում: Ինչպես ցույց տվեց ժամանակը, դա ռազմավարական լուրջ սխալ էր, որի հետևանքով բրիտանացիները ծանր պարտություն կրեցին, մեծ զոհեր տվեցին, վերացավ բրիտանական նավատորմի անպարտելիության մասին հավատքը, վարկաբեկ-

[1] **Varnava A.,** French and British Post-War imperial agendas, p. 1006-1007:

վեց նրանց հեղինակությունն Արևելքում, իսկ Կիլիկիան դատապարտվեց հայաթափման:

1915 թ. փետրվարի 19-ից մինչև 1916 թ. հունվարի 9-ը բրիտանացիները երկրորդ արկածախնդիր գործողությունը կազմակերպեցին: Նրանք ափհանում կատարեցին Գալիպոլի թերակղզում: Մի քանի ամիս տևած Դարդանելի օպերացիայի ժամանակ բրիտանացիները կենտրոնացրին ավելի քան 400.000 զինվոր, կորցրին՝ 130.000-ը: Թուրքիան կորցրեց 218.000 զինվոր[1]: Ֆրանսիացիները Գալիպոլի ուղարկեցին 120.000 զինվոր, կորցրեցին՝ 26.500[2]: Դարդանելի ռազմագործողության ընթացքում ավելի քան կես միլիոնանոց բրիտանա-ֆրանսիական ուժերն անհաջողության մատնվեցին և կորցրին մի քանի հարյուր հազար զինվոր: Իսկ Կիլիկիայում կարող էին հաջողության հասնել մի քանի անգամ ավելի փոքրաթիվ ուժեր ուղարկելով և, բնականաբար, աննշան կորուստներով: Ինչպես տեսնում ենք, երկար քննարկումներից հետո, բրիտանական իշխանությունները որոշում են ափհանում կատարել Դարդանելում և Կիլիկիան անուշադրության է մատնվում: Սակայն, ինչպես ցույց տվեց ժամանակը, դա ռազմավարական լուրջ սխալ էր, որի ծանր հետևանքներ ունեցավ և՛ բրիտանացիների և՛ արևմտահայերի համար:

Մուսալեռցիներին զինվորագրելու ֆրանս-բրիտանական ծրագրերը:

1915թ. հուլիսի վերջին Մուսա լեռ բարձրացան 4.331 հայեր, գաղթի հրամանին ենթարկվեցին՝ 2080-ը[3]: Նրանցից զենք վերցնելու ընդունակ էին 700-800-ը, բայց ռազմական գործողություններին մասնակցել են 400-500-ը, քանի որ բավարար քանակությամբ զենք չունեին: Նրանց տրամադրության տակ էր 130 հունական «Կրա» տիպի մարտական հրացաններ, 6 մաուզեր, 250-300 որսորդական կայծքարե հրացաններ: Յուրաքանչյուր Կրային 60-70 փամփուշտ էր հասնում, իսկ կայծքարե հրացանները մշտական անձրևների ու մառախուղի հե-

[1] **Готлиб В.,** Тайная дипломатия во время Первой войны, Москва, 1960, с. 182:

[2] **Fulton L.Bruce,** France and the End of the Ottoman Empire, The Great Powers and the end of the Ottoman Empire, edited by Marian Kent, London, 2005, p. 156:

[3] **Գուշագհեան Ս.**, Մուսա լերան հայկական գաղթօճախը 1875-1939, Պէյրութ, 1988, էջ 109:

տևանքով գրեթե անգործածելի էին[1]: Թուրքերը սուետիահայերի դիմադրությունը ճնշելու համար ուղարկել էին մոտ 4.000-ոց բանակ[2]: Չնայած թշնամու թվական գերակշռությանը՝ մուսալեռցիները հաջողությամբ հետ մղեցին բոլոր գրոհները:

1915 թ. սեպտեմբերի 5-ին ֆրանսիական «Գիշեն» հածանավը մոտեցավ Մուսա լեռանը և մուսալեռցիները օգնություն խնդրեցին նավապետից: Մուսալեռցիների հերոսական ինքնապաշտպանությունը նավից դիտող ֆրանսիացի նավապետ Բրիսոնը հիացմունքով նշել է. «Ես առանց տատանվելու կարող եմ ասել, որ այս շրջանի կռվի տեսակետից՝ մեկ սուետացին հինգ ֆրանսիական զինվոր արժե»[3]: Եվ այս խոսքերի հեղինակը ֆրանսիական գաղութային կայսրության ներկայացուցիչն է: Հազվադեպ է պատահում, երբ հզոր ազգերի զինվորականները փոքր ազգի ռազմական կարողություններն ավելի բարձր գնահատեն, քան իրենցը: Դա վկայում է մուսալեռցիների չափազանց բարձր մարտական որակների մասին: Սեպտեմբերի 8-ին Մուսա լեռանը մոտեցան «Գիշեն», «Դեսեքս» և «Ժաննա դ՛Արկ» հածանավերը: Վերջինը ֆրանսիական առաջին ռազմածովային բանակի հրամանատար, փոխծովակալ Լ. Դարտիժ դյու Ֆուրնեի հրամանատարական նավն էր: Մուսալեռցիների հետ բանակցություններում թարգմանչի դերը ստանձնել էր «Դեսեքս» նավի ծովային սպաներից Տիրան (Շառլ) Թեքեյանը: Ինքնապաշտպանության ղեկավարները ֆրանսիական հրամանատարությունից խնդրում են հեռացնել կանանց ու երեխաներին, իսկ իրենց զենք ու զինամթերք հատկացնել՝ պայքարը Մուսա լեռան վրա շարունակելու համար: Լ. Դարտրիժ դյու Ֆուրնեն մինչև կառավարությունից ցուցումներ ստանալը «Դեսեքսի» հրամանատար Վերգոսին հանձնարարում է պարեկել այնտեղ և անհրաժեշտության դեպքում իրականացնել տարհանում[4]: Ի վերջո ֆրանսիացիները որոշեցին մուսալեռցիներին տեղափոխել ապահով վայր: Սեպտեմբերի 12-ից հայերին սկսեցին նավ բարձրացնել: Մուսալեռցի մարտիկները,

[1] **Իսկիէտէրեան Ց.,** Սուէտիոյ ապստամբութիւնը, Գահիրէ, 1915, էջ 48:

[2] **Մելեւկիոյ հայ հերոսապետը**. Պետրոս Տէօվլէթեան, «Արմէնիա», Մարսել, 1915, հոկտեմբեր 6, թիւ 10:

[3] Տե՛ս **«Երիտասարդ Հայաստան»**, Չիկագո, 1918, 26 հոկտեմբերի:

[4] **Թեքեյան Տ.,** նշվ. աշխ., էջ 17-22:

կանանց, երեխաների, ծերունիների ու վիրավորների նավ բարձրանալուց հետո, առաջարկում են իրենց զենքով ու զինամթերքով ապահովել, որպեսզի շարունակեն պայքարը, սակայն նրանց զենք չեն տրամադրում և սեպտեմբերի 13-ին բոլորին նավերով տեղափոխում են Եգիպտոս[1]: Դյու Ֆուրնեն նույնպես իր հուշերում վկայում է, որ մուսալեռցի տղամարդիկ իրեն խնդրել են կանանց, երեխաներին, ծերերին տեղափոխել, իսկ իրենց ալյուր, աղ, վառոդ և կապար տրամադրել, որպեսզի պայքարը շարունակեին[2]: Նավ բարձրանալուց առաջ ինքնապաշտպանության ղեկավարներից Եսայի Յաղուբյանը Տ. Թեքեյանին դառնությամբ ասում է. «Մենք չենք կարող ուրախ սրտով լքել մեր սիրելի հայրենիքը: Այս վայրերը դարերով մերն են եղել, այստեղ մենք մինչև այժմ, հիսուն օր շարունակ հաղթական մարտեր ենք մղել մեզ գերազանցող թշնամական ուժերի դեմ: Ախ, եթե թույլ տայիք շարունակել պայքարը…»[3]: Ֆրանսիական նավերը մուսալեռցիներին տեղափոխեցին Եգիպտոսի Պորտ Սայիդ քաղաք, ուր Սուեզի ջրանցքի ափին ստեղծվեց վրանաքաղաք: Հայերից կազմվեց ոստիկանություն, որը հսկում էր ճամբարի կարգ ու կանոնին: Ոստիկանապետ նշանակվեց Ավետիս Մարտիրյանը[4]:

Քաջարի մուսալեռցիները չէին կարող հանգիստ նստել Պորտ Սայիդի ավազուտներում, նրանք ձգտում էին հնարավորինս շուտ վերադառնալ հայրենի լեռները և պայքարել թշնամու դեմ: Մուսալեռցիները բրիտանական և ֆրանսիական իշխանություններից շարունակեցին պահանջել, որ իրենց զենք տան և ուղարկեն կռվելու թուրքերի դեմ[5]: Գեներալ Ջ. Մաքսվելը մուսալեռցիների առաջնորդներից տեղեկանալով, որ նրանք կարող են տրամադրել 500 զինվոր, նախատեսում էր նույնքան հայ կամավորներ հավաքել նաև Եգիպտոսում, կազմավորել հայկական լեգեոն և այն օգտագործել Ալեքսանդրետի շրջանում

[1] Նույն տեղում, էջ 28:

[2] **Գուշագհեան Մ.,** նշվ. աշխ., էջ 129:

[3] **Թեքեյան Տ.,** նշվ. աշխ., էջ 31:

[4] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 453, ց. 1, գ. 199, թ. 1-2:

[5] **Պարթեւեան Ս.,** Արարա: Հայկական լէգէոնը, Իզմիր, 1919, էջ 59-60: **Սալբի Մ.**, Ալեակներ եւ խլեակներ: Հայ վրանաքաղաքի տարեգիրքը, Աղեքսանդրիա, 1919, էջ 67-68:

հարձակումներ գործելու համար[1]: Նախատեսվում էր հայկական ուժերին ափ հանել Թոփրակ Կալեի և Օրոնտեսի գետաբերանի միջև, քանդել Հալեպի և Ադանայի նահանգներն իրար միացնող Բաղչեի թունելը, գրավել Բեյլանի կիրճը, կատարել մի շարք այլ գործողություններ[2]: Սակայն ֆրանսիացիները խանդով էին վերաբերվում մուսալեռցիներին զինվորագրելու բրիտանական այդ նախագծին: Կիլիկիան և Սիրիան պատերազմից հետո ֆրանսիական ազդեցության գոտու մեջ էին մտնելու, և ֆրանսիացիները չէին ցանկանում թույլ տալ, որ հայերը որևէ կերպ ենթարկվեն բրիտանական ազդեցությանը: Արդեն սեպտեմբերի 17-ին Ֆրանսիայի արտգործնախարար Թ. Դելկասեն Կահիրեում դեսպան Ժ. Դեֆրանսին հարցում արեց, թե արդյո՞ք կարող են մուսալեռցիներին զինվորագրել Արևելքի Արտասահմանյան գումարտակի համար[3]: Այդ ժամանակ քննարկվում էր Կիլիկիայում ափհանում կատարելու Արևելքի ֆրանսիական բանակի հրամանատար գեներալ Մորիս Սարրայի ծրագիրը: Սեպտեմբերի 19-ին ֆրանսիական դեսպանը հեռագրով պատասխանեց, որ կարող են մուսալեռցիներից հավաքագրել 500 լավ զինվոր: Նա տեղեկացրեց նաև, որ գեներալ Ջ. Մաքսվելը նախատեսում էր հայկական լեգեոն կազմել, այն համալրել ամերիկահայ կամավորներով և հարձակումներ կատարել Ալեքսանդրետի շրջանում[4]:

Սեպտեմբերի 22-ին Միջերկրականի ֆրանսիական 3-րդ նավատորմի հրամանատարի պաշտոնակատար, փոխծովակալ Պիեռ Դարրիոն ռազմածովային նախարար Վիկտոր Օգանյորին ուղարկած ընդարձակ զեկուցագրում նկարագրում էր Միջերկրականի արևելյան ափին իրենց համար ստեղծված չափազանց բարենպաստ իրավիճակը և առաջարկում էր դիմել վճռական գործողությունների[5]: Նա արդյունավետ էր համարում Ալեքսանդրետի ծոցի խորքում՝ Իսոսի դաշտում,

---

[1] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 157-158:

[2] Նույն տեղում, էջ 160, 182-183:

[3] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 151:

[4] **Գարամանուկեան Ա.,** Հայկական Լեգէոնը պատմական, իրաւական ու քաղաքական հարցերու լոյսին տակ եւ վաւերագրեր, Հայկազեան հայագիտական հանդէս, հ. Ե, Պէյրութ, 1974, էջ 63:

[5] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 170-176:

ափհանում կատարելը, ուր կարող էին գրավել Թոփրակ Կալեի երկաթուղային հանգույցը և Տավրոսից Պոզանտ տանող ելքերը: Դրանից հետո ծովային ու ցամաքային զորքերը համատեղ գործողություններով կարող էին հեշտությամբ շարժվել դեպի հարավ և ազատագրել Սիրիան: Այդ պահին Սիրիայում թուրքական բանակն ուներ ընդամենը 20.000 զինվոր և հաջողության հասնելու համար իրենց բավարար կլիներ ընդամենը մեկ բանակային կորպուս: Ծովակալի կարծիքով, այդ գործողությունը կլիներ չափազանց արդյունավետ, իսկ թուրքերը ստիպված կլինեին Դարդանելի ճակատից որոշ ուժեր տեղափոխել դեպի Սիրիա, միաժամանակ այդ գործողության ազդեցությամբ կմեծանար դասալքությունը թուրքական բանակում: Պ. Դարիոն գտնում էր, որ, եթե Ֆրանսիան ի վիճակի չլինի պահանջվող քանակի զորք ուղարկել, ապա կարող են զինել թուրքերի նկատմամբ ատելությամբ լցված տեղական բնակչությանը: Նա՝ որպես առաջին քայլ, խնդրում էր իրեն տրամադրել 800 հրացան և զինամթերք՝ մուսալեռցիներին զինելու համար: «Այս ձևով զինված ու լավ մարզված մարտունակ հայերը կարճ ժամանակում վեր կածվեն ահարկու ուժի, որը խիստ կարգապահության վարժվելուն պես, հնարավոր կլինի մոտ ապագայում կրկին վերադարձնել ցամաք, լավագույն ձևով օգտագործելով ի նպաստ մեր ռազմական գործողության»[1],- մատնանշում էր փոխծովակալը: Նա նախատեսում էր զինել ինչպես Անտիոքի շրջանի հայերին, այնպես էլ լիբանանցիներին: Պ. Դարիոն պահանջում էր տրամադրել 20.000 հրացան ու ռազմամթերք՝ համընդհանուր ապստամբություն սկսելու և հաղթական ավարտի հասցնելու համար:

1915 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին մուսալեռցիների հաջողված հերոսամարտի անմիջական տպավորության տակ ֆրանսիացիները բավական ոգևորված էին: Նրանք գիտակցում էին, որ հայերը կարող են զգալի ռազմական աջակցություն ցուցաբերել Ֆրանսիային տարածաշրջանում: Սակայն որոշ ֆրանսիացի գործիչների այնքան էլ չէր ոգևորում հայերի կամ լիբանանցիների օգնությամբ Կիլիկիայում, Սիրիայում, Լիբանանում թուրքերին պարտության մատնելու հեռանկարը: Սեպտեմբերի 22-ին Ժ. Դեֆրանսը արտգործնախարարին տե-

[1] Նույն տեղում, էջ 176:

ղեկացրեց, որ հայերը զենք ու զինամթերք են պահանջել թուրքերի դեմ կռվելու համար: Հայերը հայտնել էին, որ գերադասում են գործակցել Ֆրանսիայի հետ, սակայն եթե Մեծ Բրիտանիան պահանջի իրենց համագործակցությունը՝ չեն մերժի: Դեսպանը կարծում էր, որ հայերը լավ պարտիզաններ կլինեն, սակայն կասկածում էր հայերից կանոնավոր զորք կազմելու հնարավորությանը[1]: Հաջորդ օրը Ժ. Դեֆրանսը նոր զեկուցագիր ուղարկեց Թ. Դելկասեին, ուր նշում էր մուսալեռցիների կռվելու վճռականության մասին: Հայերը պատրաստակամություն էին հայտնել Ֆրանսիայից օժանդակություն ստանալու դեպքում մոտ մեկ ամսվա ընթացքում կազմավորել 4.000-ոց կամավորական բանակ, ափիհանում կատարել Ալեքսանդրետի ծոցում, գրավել Բեյլանի ու Բաղչեի կիրճերը: Դրանք Ամանոսի լեռներով անցնող միակ ճանապարհներն էին, որոնցով կապվում էին Ադանայի ու Հալեպի նահանգները[2]:

Շուտով Ջ. Մաքսվելը ևս ֆրանսիացիներին առաջարկեց հայերին զենք տալ և ուղարկել իրենց լեռները, որպեսզի ապստամբություն բարձրացնեն: Նա ցանկություն հայտնեց, որ Ֆրանսիան հայերի հարցը իր վրա վերցնի[3]: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ Կիլիկիան գտնվում էր ֆրանսիական շահերի գոտում, իսկ ֆրանսիացիները չէին ցանկանում, որ հայերն ընկնեին բրիտանական ազդեցության տակ: Սակայն հայկական զորամասի միջոցով Կիլիկիայում ռազմական գործողություններ ծավալելը ոչ արդյունավետ էր համարում Ֆրանսիայի ռազմական նախարար Ալեքսանդր Միլերանը: Վերջինս Եգիպտոսի բրիտանական հրամանատարություն գործուղված ֆրանսիական լեյտենանտ Դոյնել դը Սեն-Քուենտինին սեպտեմբերի 22-ին ուղարկած հեռագրում հիշեցնում էր Դարդանելում հունական անկանոն բանակի ձախողման մասին և թերահավատությամբ էր վերաբերվում հայկական նմանատիպ զորամասով թուրքական ափերի մոտ հաջող գործողություններ ծավալելու գաղափարին: Նա առաջարկում էր

[1] Նույն տեղում, էջ 161:

[2] Նույն տեղում, էջ 179:

[3] **Գարամանուկեան Ա.,** նշվ. աշխ., էջ 64:

հայերին ամբողջ պատերազմի ընթացքի համար զինվորագրել Արտասահմանյան լեգեոնում և ուղարկել Դարդանել[1]:

Մուսալեռցիներին կամավորագրելու և Կիլիկիան ազատագրելու գործողության ժամանակ օգտագործելու առաջարկով՝ սեպտեմբերի 29-ին Ֆրանսիայի ԱԳՆ Ասիա-Օվկանիայի բաժնի տնօրեն Ժ. Գուին դիմեց նաև Ա. Չոպանյանը[2]: Հոկտեմբերի 1-ին Կահիրեում ֆրանսիական դեսպան Ժյուլ Ալբերտ Դեֆրանսը Թ. Դելկասեին ուղարկած զեկուցագրում լիովին հավանություն էր տալիս Պ. Դարիոյի վերոնշյալ ծրագրին, հաստատում էր, որ Սիրիայում թուրքերը շատ փոքրաթիվ ուժեր ունեն, որոնք բարոյալքված վիճակում են: Սակայն նա դեմ էր տեղական ժողովուրդների ուժերով Սիրիան ազատագրելու ծրագրին՝ չնայած դա համարում էր իրագործելի: Նա գտնում էր, որ եթե առանց Ֆրանսիայի ղեկավարության ու գործուն մասնակցության թուրքերը վտարվեն Սիրիայից, ապա իրենք հետագայում ստիպված կլինեն այդ երկրամասը կրկին գրավել, իբր այնտեղ անիշխանությունը վերացնելու և թուրքերի վերադարձը կանխելու պատրվակով: Իսկ մուսալեռցիներից կազմված զորամասը գտնում էր, որ պետք է օգտագործել միայն թուրքական ափերում դիվերսիաներ կազմակերպելու համար, որից հետո պետք է հետ վերադառնար: Նա լավագույն տարբերակ էր համարում ֆրանսիական ռազմարշավի կազմակերպումը և Սիրիայի գրավումը[3]: Ինչպես տեսնում ենք, ֆրանսիացի դիվանագետը դեմ էր առանց ֆրանսիական բանակի միջամտության Սիրիայի և Կիլիկիայի գրավմանը, քանի որ հետագայում կարող էին բարդություններ ծագել, երբ այդ տարածքները փորձեին ֆրանսիական գաղութի վերածել: Նա նույնիսկ դեմ էր փոքրաթիվ հայկական ուժերին այդ տարածքներում մշտական ռազմական գործողությունների ուղարկելու մտքին՝ վախենալով, որ հայկական ապստամբական հաջող շարժումը հիմքեր կստեղծեր հայկական ինքնավարության համար:

Հոկտեմբերի 2-ին Պ. Դարիոն Վ. Օգանյորին ուղարկած նոր զեկուցագրում կրկին պնդում էր մուսալեռցիներից ու եգիպտահայերից

[1] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, h. I, էջ 163:

[2] **Գարամանուկեան Ա.,** նշվ. աշխ., էջ 64: Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, h. I, էջ 186-187:

[3] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, h. I, էջ 194-196:

զորամաս կազմավորելու առաջարկը: Նա գտնում էր, որ Սուեզի ջրանցքի գրոհի ժամանակ թուրքերից բռնագրավված մաուզեր հրացաններով և զինամթերքով կարող էին զինել ավելի քան 1.000 հայերի: Այդ զորամասը դրվելու էր ֆրանսիացի 15 սպաների և 40 ենթասպաների հրամանատարության տակ, հնարավորության դեպքում տրամադրելու էին 4 լեռնային թնդանոթ: Այն պարտիզանական գործողություններ էր կատարելու Ալեքսանդրետի ու Անտիոքի շրջանում: Փոխծովակալը միաժամանակ մտավախություն էր հայտնում, որ բրիտանացիներն աչք ունեն Ալեքսանդրետի և Սիրիայի վրա և անհրաժեշտ էր համարում, որ Փարիզն ու Լոնդոնը վերջնական համաձայնություն կայացնեին Սիրիան ֆրանսիական ազդեցության գոտի ճանաչելու հարցում, և այնտեղ ծավալվելիք ռազմական գործողությունների հրամանատարությունն իրականացնեին ֆրանսիացիները: Նաև առաջարկում էր այնպես անել, որ հայերը չընկնեն բրիտանացիների ազդեցության տակ[1]:

Հոկտեմբերի 3-ին Ժ. Դեֆրանսը, Պ. Դարիոյին ուղարկած նամակում, հավանություն էր տալիս դեպի Սիրիա ռազմարշավ կազմակերպելու նախագծին, սակայն դա իրատեսական չէր համարում ֆրանսիական զորքերի պակասի պատճառով: Միաժամանակ դեմ էր արտահայտվում հայ և սիրիացի բնակչությանը զինելուն և ապստամբության մղելուն: Դա բացատրում էր նրանով, որ իրենք չեն կարող ապստամբներին արդյունավետ օգնություն տրամադրել, կանոնավոր զորքերով աջակցել, իսկ անհաջողության դեպքում նրանց պաշտպանել սպասվող սարսափելի բռնություններից ու ճնշումներից[2]: Կարծում ենք, այս թվացյալ մարդասիրական կեցվածքը բխում է ոչ թե հայերի ու սիրիացիների նկատմամբ դեսպանի ունեցած դրական վերաբերմունքից, այլ՝ ապստամբության հաջողության դեպքում այդ տարածաշրջանում Ֆրանսիայի ունեցած հավակնությունները կորցնելու մտավախությունից: Ինչպես տեսանք, ռազմական նախարար Ա. Միլերանը, հենվելով հույների ունեցած անհաջողության վրա, թերահավատությամբ էր վերաբերում հայկական զորամասի արդյունավետությանը: Այդ պատճա-

[1] Նույն տեղում, էջ 199-203:

[2] Նույն տեղում, էջ 203-204:

ռով նա առաջարկեց մուսալեռցիներին՝ որպես բանվորներ, Մուդրոսում օգտագործելու գաղափարը: Սակայն հոկտեմբերի 15-ին ուղարկած զեկուցագրով Պ. Դարիոն ռազմածովային նախարարին նախազգուշացնում էր, որ չի կարելի ընթացք տալ մուսալեռցիներին Մուդրոսում որպես բանվորներ օգտագործելու ռազմական նախարարի առաջարկին: Դա բացատրում էր նրանով, որ մուսալեռցիները մարտունակ և հպարտ մարդիկ են, դա կարող էր վիրավորել նրանց արժանապատվությունը և հետզհետե անբարյացակամ վերաբերմունք սերմանել Ֆրանսիայի հանդեպ: Նա կրկին առաջարկում էր զինել հայերին և պարտիզանական պայքարի ուղարկել իրենց լեռներում կամ ծայրահեղ դեպքում ընդգրկել Արտասահմանյան լեգեոնի մեջ[1]:

Հոկտեմբերի 28-ին հայկական ուժերն օգտագործելու հարցի շուրջ Պ. Դարիոն կրկին զեկուցագիր ուղարկեց ռազմածովային նախարար Վ. Օգանյորին, իսկ պատճենը՝ I ռազմածովային բանակի գլխավոր հրամանատար, փոխծովակալ Լ. Դարտիժ դյու Ֆուրնեին: Նա տեղեկացնում էր, որ գերմանո-թուրքական կողմը նոր հարձակում է նախապատրաստում Սուեզի ուղղությամբ, և այն կանխելու համար անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել Սիրիայում: Նշում էր, որ Ֆրանսիան ներկա դրությամբ ռազմարշավի համար մարդկային ու նյութական միջոցներ չունի, հետևաբար՝ լավագույն միջոցը պարտիզանական պատերազմն է: Պարզաբանում էր, որ մուսալեռցիներից ու եգիպտահայերից բացի, կարող էին զինել մեծ թվով կամավորների Ամերիկայից, որոնք, լսելով հայկական զանգվածային ջարդերի մասին, ցանկանում էին վրեժ լուծել թուրքերից: Նրանց կարող են ուղարկել Ալեքսանդրետի շրջանը, ուր թուրքական զորքերի դեմ արդյունավետ պայքար կարող են ծավալել: Նա վստահ էր, որ հայերի զինումը բարդություններ չի առաջացնի իրենց համար: Փոխծովակալը հավաստիացնում էր հայերի ֆրանսամետությունը, միաժամանակ նշում էր, որ Պորտ Սայիդում են գտնվում այդ հայերի ընտանիքները, որոնք նրանց նվիրվածության ամենաանառարկելի երաշխիքներն են: Հայերն առաջին հերթին պետք է ավերեին Բաղչեի թունելը և Ռաջուի կամուրջը: Դրանով կխզվեր Թուրքիայի և Սիրիայի միջև եղած արագ հաղորդակցության ճանա-

[1] Նույն տեղում, էջ 211-212:

պարհը, որով կխոչընդոտվեր Սուեզի դեմ հարձակվելու ծրագիրը: Հայերին մարզելու գործը Պ. Դարիոն պատրաստ էր իրականացնել իր ղեկավարած 3-րդ նավատորմի անձնակազմի միջոցով: Վերջում նա ավելացնում էր, որ բրիտանացիներն արդեն նախապատրաստական աշխատանքներ են ձեռնարկել հայերին մարզելու և հնարավորինս շուտ մարտական գործողությունների ուղարկելու նպատակով[1]:

Նոյեմբերի 2-ին Միջերկրականի ֆրանսիական 3-րդ նավատորմի նոր հրամանատար, փոխծովակալ Ֆրեդերիկ Մորոն նույնպես ռազմածովային նախարարին ուղարկած տեղեկագրում հավաստիացնում էր, որ մուսալեռցիները քաջ ու կռվող ժողովուրդ են, առաջարկում էր նրանց զինել և ուղարկել փոքր դիվերսիոն արշավանքների թուրքական երկաթուղիների ուղղությամբ[2]: Հայերի ռազմական ուժն օգտագործելու գաղափարն ավելի գործնական հողի վրա դնելու նպատակով՝ ֆրանսիացի նավաստիները սկսեցին մարզել 250 մուսալեռցի կամավորների: Այդ գործը ստանձնեց ռազմածովային կապիտան, «Ժորեգիբերի» նավի հրամանատար Բենուա դ'Ազին, որի տեղակալն էր Տ. Թեքեյանը[3]:

Տ. Թեքեյանը մուսալեռցիների մասին վկայում է հետևյալը. «Մուսա Լեռան հայերը, որոնց մենք փրկեցինք, չկարողացան համակերպվել իրենց լեռները ինքնակամ թողնելու, անիծյալ թուրքերի դեմ պայքարը դադարեցնելու իրողության հետ: Բոլորն էլ համակված էին ատելությամբ ու վրիժառությամբ: Ամեն օր ես ընդունում էի նրանց պատվիրակներին, որոնք ինձ էին ներկայացնում ռազմավարական այս կամ այն ծրագիրը: Իմ հրամանատարները շատ շուտ հասկացան՝ նման հանդուգն երիտասարդությանը չէր կարելի թույլ տալ, որ Պորտ Սաիդի ավազների վրա երկար տեղում դոփի: Ծովային սպայակազմը ավելի մոտիկից հետաքրքրվեց հայերով, ու քիչ անց նրանք, ովքեր ցանկանում էին, հենց վրանավանում սկսեցին զինվորական հատուկ կրթություն ստանալ»[4]: «Ժորեգիբերի» մարտանավը Դարդանելի ճակատամարտում վնասվել էր և վերանորոգման ենթարկվելու համար ստիպ-

[1] Նույն տեղում, էջ 223-225:

[2] **Գարամանուկեան Ա.**, նշվ. աշխ., էջ 65-66:

[3] **Թեքեյան Տ.,** նշվ. աշխ., էջ 51:

[4] Նույն տեղում:

ված էր բավական երկար ժամանակ մնալ Պորտ Սայիդում: Դա էր պատճառը, որ ծովակալ Ֆ. Մորոն Բենուա դ'Ազիին հանձնարարեց մարզել հայ մարտիկներին: Եգիպտոսում բրիտանական գաղտնի ծառայության ղեկավար և Պորտ Սայիդի զորքերի հրամանատար, գնդապետ Էլգուդը սկզբնական շրջանում 25 մաուզեր տիպի հրացան տրամադրեց ուսուցանելու համար: Հայերին սովորեցնում էին հրաձգություն, տեղանքը ճիշտ օգտագործել, նախատեսվում էր նրանցից ոչ թե կանոնավոր բանակի միավոր կազմավորել, այլ՝ պարտիզանական ջոկատ[1]: Կարճ ժամանակում այդ վաշտը պատրաստ էր ռազմական գործողությունների:

Սակայն իրավիճակը փոխվեց, երբ 1915 թ. հոկտեմբերի 29-ին Ֆրանսիայում վարչապետի և ԱԳ նախարարի պաշտոնը ստանձնեց Արիստիդ Բրիանը: Նոր կառավարությունը փոխեց իր վերաբերմունքը Կիլիկիայում կամ Սիրիայում ափհանում կատարելու, ինչպես նաև հայկական զինուժ օգտագործելու հարցերի շուրջ: Նոյեմբերի 9-ին Լոնդոնում ֆրանսիական դեսպան Պ. Կամբոնին ուղարկած Ա. Բրիանի նամակից տեղեկանում ենք, որ նա համամիտ էր Ժ. Դեֆրանսի զգուշավոր գործունեությանը Եգիպտոսում և դեմ էր Կիլիկիայում հայերի ապստամբություն սկսելուն: Նա կողմ էր մուսալեռցի մարտունակ տղամարդկանց՝ որպես բանվորներ Մուդրոս ուղարկելուն՝ առաջարկելով նրանց մի փոքր ավելի բարձր աշխատավարձ տալ, քան այնտեղ աշխատող սոմալները կամ թուրք գերիներն էին ստանում: Դրանով հույս ուներ աշխատանքով ապահովել մուսալեռցիներին և նրանց հեռացնել Եգիպտոսից, ուր կարող էին «ոգևորել արկածախնդիրներին»[2]:

Նոյեմբերի 10-ին Ա. Բրիանը ռազմածովային նախարար, դերծովակալ Լուսիեն Լակազին ուղարկած հեռագրում հավանություն չէր տալիս Կիլիկիայում հայկական ապստամբության և Սիրիայում գործողություններ ծավալելու Հայկական պաշտպանության կոմիտեի և Պ. Դարիոյի առաջարկներին: Նա նշում էր, որ դրանք միայն կհանգեցնեն համընդհանուր կոտորածների, որի պատասխանատվությունը կբարդ-

[1] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 234-236:

[2] Նույն տեղում, էջ 226-227:

վի դաշնակից տերությունների վրա[1]: Նոյեմբերի 13-ին Ֆրանսիայի ռազմական նախարար Ժոզեֆ Գալիենին Ա. Բրիանին տեղեկացնում է, որ հրաժարվել է մուսալեռցիներին որպես բանվորներ օգտագործելու ծրագրից՝ հաշվի առնելով այդ աշխատանքին նրանց նվազ պիտանելիությունը և իբրև մարտիկներ ծառայելու նրանց ցանկությունը: Միաժամանակ տեղեկացնում էր, որ ռազմածովային նախարարը չի պատրաստվում հայերից անկանոն զորքերի կորպուս կազմավորել[2]: Այսպիսով, Ա. Բրիանի կառավարության իշխանության գալով, մուսալեռցիների կարողությունները ռազմական նպատակներով օգտագործելու, Կիլիկիայի ուղղությամբ կռվող հայկական զորամաս ստեղծելու կամ այնտեղ ֆրանսիական զորքերի միջոցով ափհանում կատարելու նախագծերը որոշ ժամանակով կողքի դրվեցին:

Փաստորեն, 1915 թ. աշնանը մուսալեռցի քաջամարտիկների ռազմական ունակությունները հայրենի եզերքում կամ Կիլիկիայի որևէ այլ վայրում օգտագործելու գաղափարը լուրջ քննարկումների առիթ էր դարձել ֆրանս-բրիտանական իշխանությունների համար: Այս համատեքստում առաջադրվեցին մուսալեռցիների հիմքի վրա հայկական ավելի մեծ զորամաս կազմավորելու մասին մի քանի նախագծեր: Սակայն, 1915 թ. հոկտեմբերի վերջին իշխանության եկած ֆրանսիական նոր կառավարությունը հրաժարվեց հայերի ռազմական ունակություններն օգտագործելու, Կիլիկիան ազատագրելու նախկինում առաջ քաշված ծրագրերից: Այսպիսով՝ 1915 թ. ամռանը և աշնանը քննարկման առարկա դարձած մի շարք ռազմական նախագծեր, որոնք առնչվում էին Մուսա լեռան մոտ դաշնակիցների կամ հայ կամավորների ափհանում կատարելուն, ժամանակավորապես սառեցվեցին: Հայերի հարցում ֆրանսիական կողմի տատանումներից ու ձգձգումներից փորձում էր օգտվել բրիտանական կողմը, որն իր վրա էր վերցրել Պորտ Սայիդի գաղթականական ճամբարը պահելու գործը: Սակայն դա չէր բխում Ֆրանսիայի շահերից: 1916 թ. հունվարից ֆրանսիական ռազմածովային ուժերի հրամանատարությունը կրկին որոշում է իր վրա վերցնել մուսալեռցիներին զինվորական ծառայության վերցնելու նախաձեռնու-

[1] Նույն տեղում, էջ 228:

[2] Նույն տեղում, էջ 229:

թյունը, սակայն այս անգամ բազմիցս բախվում է բրիտանացիների դժգոհությանն ու հարուցած խոչընդոտներին:

1916 թ. հունվարի 11-ին Միջերկրականի ֆրանսիական երրորդ էսկադրայի հրամանատար, փոխծովակալ Ֆ. Մորոյի՝ Պորտ Սայիդի բրիտանական զորքերի հրամանատար, փոխգնդապետ Էլգուդին ուղարկած գրությունից տեղեկանում ենք, որ մուսալեռցիների մոտ կատարված զինվորագրումները գնահատելի արդյունքներ էին ունեցել, սպասվում էր մոտ 500 կամավորների ժամանում նաև Ալեքսանդրիայից: Նման պայմաններում Ֆ. Մորոն անհրաժեշտ էր համարում այդ ուժերին անհապաղ զենք տալ և իր տրամադրության տակ դնել[1]: Հունվարի 20-ին հայ կամավորների առավել արդյունավետ օգտագործելու հնարավորության մասին Ֆ. Մորոն նամակով հարցում արեց նաև Ջ. Մաքսվելին, սակայն այդպես էլ պատասխան չստացավ[2]:

Փետրվարի սկզբին Դոդեկանեզյան կղզիախմբի մեջ մտնող Կաստելորիզո կղզում տեղակայված ֆրանսիական ծովային ուժերը և տեղացի մոտ 50 հույն կամավորներ գրավեցին մոտ 2 կմ հեռավորության վրա գտնվող Անտիպիլոս (թուրք.՝ Կաշ – Ս. Պ.) փոքր նավահանգիստը: Դրա նպատակն էր ավերել այնտեղ գտնվող հեռագրակայանը, որի միջոցով թուրքերը հետևում էին ֆրանսիացիների տեղաշարժերին Կաստելորիզոյում: Թուրքական կայազորի մեծ մասը գերի ընկավ (35 զինվոր և 1 կապիտան), սպանվեց 3, վիրավորվեց ևս 3 թուրք զինվոր: Ֆրանսիացիները որևէ կորուստ չունեցան: Դա ֆրանսիացի ծովայինների առաջին ցամաքային գործողությունն էր թուրքական ափին: Նույն երեկոյան ֆրանսիացիները հեռացան Անտիպիլոսից՝ իրենց հետ տանելով հեռանալ ցանկացող մի քանի հույների և տեղափոխելով այդ նավահանգստի տների հիմնական սեփականատերեր հանդիսացող կաստելորիզոցիներին պատկանող շարժական գույքը[3]:

Հաշվի առնելով, որ այդ գործողության ընթացքում հույն կամավորներն արդարացրել էին իրենց, փոխծովակալ Ֆ. Մորոն գտնում էր, որ ժամանակն է օգտագործել իրենց կողմից մարզված, արդեն զենքով

[1] Նույն տեղում, էջ 249:
[2] Նույն տեղում, էջ 257:
[3] Նույն տեղում, էջ 252:

ու զինամթերքով ապահովված հայ կամավորներին: Սակայն նրան անհանգստացնում էր այն, որ հայկական զինուժի օգտագործման դեմ հանդես էր եկել Ազգային պատվիրակության նախագահ Պ. Նուբարը, երբ Ֆ. Մորոն դեռևս Փարիզում էր եղել: Միաժամանակ նույնանման տեսակետ արտահայտող նամակ էր փոխծովակալին ուղարկել լորդ Ջեյմս Բրայսը: Պ. Նուբարի որդին՝ Առաքել բեյը, նույն կարծիքն էր հայտնել Ժ. Դեֆրանսին: Դրան դեմ էր արտահայտվել նաև փետրվարի սկզբին Կահիրե ժամանած «Նյու Յորք Հերալդի» խմբագիր դոկտոր Ադամ Գիբոնսը: Նրանց կարծիքով դա կարող էր թուրքերին առիթ տալ կոտորելու դեռևս կենդանի մնացած արևմտահայերի մնացորդներին: Մյուս կողմից Ֆ. Մորոյին էին դիմել հնչակյան գործիչներ Ստեփան Սապահ-Գյուլյանը և Ապահը, որոնք նշում էին, որ հայերի բնաջնջումն արդեն հասել է իր վերջնակետին և առաջարկում էին կազմավորել հայ կամավորական կորպուս: Նրանք նախ ներկայացել էին բրիտանական հատուկ ծառայություններին և տեղեկացրել էին, որ իբր հանդես են գալիս Եգիպտոսի հայերի շահերի պաշտպանության կոմիտեի անունից, իսկ Պ. Նուբարը համամիտ է իրենց հետ: Նրանք առաջարկել էին հոգալ ծախսերի մի մասը, եթե ֆրանսիացիների կողմից մարզվող հայերից կազմավորվի կորպուս և օգտագործվի թուրքերի դեմ: Փետրվարի 2-ին այդ գործիչները փորձել էին Պորտ Սայիդում հանդիպել Ֆ. Մորոյի հետ: Վերջինիս հրամանով նրանց ընդունել էր երրորդ նավատորմի շտաբի պետ, նավի կապիտան Շամոնարը: Հնչակյանների առաջարկները Ֆ. Մորոյին թվացել էին տարօրինակ, քանի որ ծանոթ էր այդ առթիվ Պ. Նուբարի բացասական տեսակետին: Նման խճճված իրավիճակում Ֆ. Մորոն որոշում է սպասել այդ հարցի շուրջ Ջ. Մաքսվելի տեսակետին, անձամբ հանդիպել հայկական քաղաքական ուժերին և Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանին[1]:

Պ. Նուբարը, ինչպես տեսանք, դեռևս 1914-1915 թթ. էր առաջարկում հայ կամավորների մասնակցությունը պատերազմին Անտանտի զորքերի կազմում, սակայն դեմ էր հայկական կամավորական առանձին զորամիավորման ստեղծմանը, որը, նրա կարծիքով, թուրքերին

[1] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 252-253, 256-261:

վրեժխնդրության նոր առիթ կընձեռեր: Արդեն 1915 թ. վերջերին Պ. Նուբարը գտնում էր, որ հայ կամավորները պատերազմում որևէ էական դերակատարություն ունենալ չէին կարող և միայն ավելի կվատթարացնեին Թուրքիայում մնացած հայերի վիճակը[1]: Այսպիսով, նրա անունն օգտագործելով, Եգիպտոսի հնչակյանները փորձում էին Ֆ. Մորոյին կեղծ տեղեկություններով կողմնորոշել դեպի Պ. Նուբարի որդեգրած ուղուն հակառակ գործելակերպի:

Փետրվարի 5-ին Ջ. Մաքսվելը Ֆ. Մորոյին տեղեկացնում էր, որ եգիպտահայերը դեմ են հայկական կորպուսի ստեղծմանը՝ մտահոգվելով, որ դա Թուրքիայում մնացած հայրենակիցների նկատմամբ նոր բռնությունների առիթ կդառնա: Գեներալը ևս համամիտ էր այդ կարծիքին և նշում էր, որ ինքը երբեք նպատակ չի ունեցել հայերից ստեղծելու ցուցադրական կորպուս կամ նրանց օգտագործել որպես «հայերի»: Գեներալ Ջ. Մաքսվելը նշում էր հայերին զինելու, մարզելու անհրաժեշտությունը, քանի որ նրանք կարող էին դառնալ արժեքավոր օժանդակ ուժեր, որոնց կարելի էր օգտագործել Թուրքիայի տարածքում գաղտնի դիվերսիաներ կատարելու համար: Ջ. Մաքսվելը պատրաստակամություն հայտնեց շարունակելու հայերի ռազմական ուսուցումը, իսկ Եգիպտոսի հայկական կոմիտեին պետք է տեղեկացնեին, որ հայկական կորպուս կազմավորելու գաղափարից հրաժարվում են[2]:

1916 թ. փետրվարի սկզբին բրիտանացիները մուսալեռցիներից ու եգիպտահայերից հավաքագրում են նռնակի և պայթուցիկների հետ աշխատելու փորձ ունեցող կամավորների, որպեսզի օգտագործեին թուրքական երկաթուղիների ու կամուրջների պայթեցման համար[3]: Մեծ թվով մուսալեռցիներ արձագանքեցին բրիտանացիների կամավորագրվելու կոչին: Մլեհը փետրվարի 7-ի նամակով Ապահին տեղեկացնում էր, որ եթե մի փոքր ջանք գործադրվի Պորտ Սայիդի ճամբարի նույնիսկ «բոլոր ժողովուրդ պիտի զինուորագրուի»[4]: Հայ կամավորների հարցը խիստ գաղտնիության մեջ պահելու նպատակով Եգիպտոսի բրիտանական ռազմական իշխանությունների հրահանգով տեղի թեր-

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 107:

[2] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 254:

[3] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 453, ց. 1, գ. 70, թ. 91:

[4] Տե՛ս նույն տեղում, գ. 51, թ. 4:

թերում նույնիսկ արգելվեց որևէ հղում կատարել կամավորների մասին[1]: Հնչակյանների կեղծիքը բացահայտելուց հետո Ֆ. Մորոն չափազանց բարկացել էր և նույնիսկ մտածում էր Ջ. Մաքսվելին առաջարկել, որպեսզի ընդհանրապես հրաժարվեն հայերին ռազմական գործ սովորեցնելուց, քանի որ դա միայն անախորժություններ էր ստեղծում իրենց համար[2]: Փոխծովակալ Լուի Դարտրիժ դյու Ֆուրնեն նույնպես ռազմածովային նախարար, դերծովակալ Լ. Լակազին ուղարկած զեկուցագրում արդարացված էր համարում այն մտավախությունը, որ հայ կամավորների օգտագործումը նոր ջարդերի տեղիք կտար Թուրքիայում, միաժամանակ անօգուտ էր համարում հայերի օգտագործումը այլ երկրների դեմ, քանի որ հայերը կարող էին մերժել, իսկ նրանց լեզվի ու տեղանքի իմացության առավելությունը, որ կարող էր լինել Թուրքիայում, այլ վայրերում չէր լինի: «Հարցն ակնհայտորեն բավական բարդ է և պահանջում է մանրազնին քննություն, որպեսզի տուրք չտանք մի արկածախնդրության, որը կարող է թանկ նստել մեր կողմնակիցների վրա և շրջվել նրանց դեմ,- նշում էր Ֆուրնեն և ավելացնում,- Բայց օրերից մի օր հայերը մեզ կցուցաբերեն մեծ աջակցություն»[3]:

1916 թ. մարտի 15-ին Ֆրանսիայի վարչապետ Ա. Բրիանը ևս Լ. Լակազին խորհուրդ էր տալիս լավագույնս օգտագործել Պորտ Սայիդում գտնվող մարտունակ հայերի արիությունն ու ընդունակությունները[4]: Մարտի 8-ին հայ կամավորների խնդրի շուրջ Պ. Նուբարը նամակ է ուղարկում Ֆ. Մորոյին, որը մարտի 17-ին փոխծովակալին է փոխանցում Եգիպտոսի թեմի առաջնորդ Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանը: Սրբազանը մինչ այդ կամավորների խնդիրը քննարկել էր Ֆ. Մորոյի հետ և վերջինս ցանկություն էր հայտնել իմանալ Պ. Նուբարի կարծիքը: Ազգային պատվիրակության նախագահը գտնում էր, որ ցանկալի չէ հայերից առանձին զորամաս կազմելը, քանի որ Թուրքիայում մնացած հայ տարագիրների մնացորդները պատանդի կարգավիճակում էին և կարող էին ենթարկվել թուրքական վայրագություննե-

[1] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 255:
[2] Նույն տեղում, էջ 257:
[3] Նույն տեղում, էջ 264-265:
[4] Նույն տեղում, էջ 273:

րին: Նա առաջարկում էր հայերին ընդգրկել դաշնակիցների ռազմարշավային զորքերի կազմում, քանի որ, երբ որոշվի ափհանում կատարել Փոքր Ասիայում, նրանք կարող են չափազանց օգտակար լինել երկրի և լեզվի իմացության շնորհիվ[1]: Ֆ. Մորոն այն փոխանցեց Միջերկրականի ֆրանսիական երրորդ նավատորմի հրամանատարի պաշտոնում իրեն փոխարինած դերծովակալ Հենրի դը Սպիտզին: Նույն գաղափարները Պ. Նուբարը զարգացրեց մարտի 22-ին ծովակալ Ֆ. Մորոյին ուղարկած հաջորդ նամակում[2]: Այն ապրիլի 9-ին Ա. Նուբարը հանձնեց Ժ. Դեֆրանսին, որն էլ փոխանցեց Հ. դը Սպիտզին[3]: Մարտի 14-ին Պ. Նուբարը Փարիզում կամավորների թեման քննարկեց հայ դիվանագետ, նախկինում Նեապոլում թուրքական հյուպատոս Միհրան Երամ բեյի հետ: Վերջինս երկիցս հանդիպել էր Ֆրանսիայի վարչապետ Ա. Բրիանին և երկու օրից նորից պետք է նրա հետ քննարկեր հայ կամավորական զորամաս ստեղծելու հարցը: Մ. Երամը տեղեկացրեց, որ ֆրանսիացիները հավանական են համարում հարձակումը Փոքր Ասիայի վրա, որտեղ նախատեսում էին նաև հայ կամավորների մասնակցությունը: Պ. Նուբարը կտրականապես ընդդիմացավ հայկական կամավորական առանձին զորամաս կազմելու գաղափարին և նշեց, որ դրա փոխարեն հայերը պետք է մտնեն դաշնակից զորքերի կազմի մեջ, որպեսզի թուրքերին նոր կոտորածների առիթ չտան: Մ. Երամը խոստացավ իր ջանքերն ուղղել հենց այդ ուղղությամբ[4]:

Դեռևս փետրվարի 23-ին Եգիպտոսում բրիտանական ռազմարշավային ուժերի գլխավոր հրամանատար, գեներալ Արչիբալդ Մուրրեյը Ֆ. Մորոյին հարցում էր արել մուսալեռցիների մարտական պատրաստվածության մասին և խնդրում էր թույլ տալ նրանց օգտագործելու հակառակորդի սուզանավերի կայանները հետախուզելու, ինչպես նաև Ռաջուի ուղեկամուրջը ավերելու և այլ վայրերում թուրքերի երկաթուղային հաղորդակցությունը խափանելու նպատակով[5]: 1916 թ. մարտի

[1] Նույն տեղում, էջ 276-277:

[2] **Գարամանուկեան Ա.,** նշվ. աշխ., էջ 67: **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 285-286:

[3] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 284:

[4] **Boghos Nubar's Papers**, p. 318.

[5] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 264:

22-ին Ա. Մուրրեյի Հ. դը Սպիտզին ուղարկած գաղտնի հեռագրից տեղեկանում ենք, որ բրիտանացի և ֆրանսիացի սպաները ծրագիր են մշակել Սիրիայում հայերից կազմված մի ջոկատ ափ հանելու համար, սակայն դեռևս չէին համաձայնեցրել հայ կամավորների ղեկավարների հետ[1]: Այս հեռագիրը ցույց է տալիս, որ օրակարգում էր հայերից կազմված դիվերսիոն ջոկատը Ալեքսանդրետի շրջան ուղարկելու հարցը:

Մարտին Եգիպտոսի բրիտանական զինվորական իշխանությունները զինում ու մարզում են մոտ 100 մուսալեռցիների, նրանց սովորեցնում օգտագործել պայթուցիկ նյութեր: Նախատեսվում էր, որ նրանք ափ են դուրս գալու Ալեքսանդրետի շրջանում և պայթեցնելու էին Բեռլին-Բաղդադ երկաթուղու մի շարք կամուրջներ[2]: Տեղեկանալով այդ նախապատրաստության մասին՝ Թորգոմ սրբազանը մարտի 25-ին դերծովակալ դը Սպիտզին ուղարկած նամակում հույս հայտնեց, որ հայ կամավորները «կօգտագործվեն միայն այնպես, ինչպես այդ ներկայացվել է Ազգային պատվիրակության նախագահի նամակում, այն է՝ կընդգրկվեն դաշնակիցների զորքերում և ոչ թե կամավորական առանձին ջոկատներում, մի բան, որը կհանգեցնի ծանր և սարսափելի հետևանքների՝ դեռևս Թուրքիայում գտնվող կենդանի մնացած դժբախտ հայերի համար, որոնք թուրքերի ձեռքում իսկական պատանդներ են»[3]: Այդ նամակից և բրիտանացի ու ֆրանսիացի գործիչների հետ Թորգոմ սրբազանի անձնական մի շարք հանդիպումներից հետո հայերին թուրքական երկաթգծի ուղղությամբ օգտագործելու նախագիծը կողքի դրվեց: Փոխգնդապետ Էլգուդը բավական դժգոհ մնաց, որ իրենց կողմից մարզված ու զինված հայերին չէին կարող մարտական առաջադրանքների ուղարկել: Ապրիլի 10-ին նա իր դժգոհությունը հայտնեց ֆրանսիական երրորդ նավատորմի շտաբի պետ Շամոնարին և նույնիսկ հարց բարձրացրեց հայերի ծախսերը փոխհատուցելու կամ դրա դիմաց նրանց ռազմական գործողությունների ուղարկելու խնդրով[4]:

---

[1] Նույն տեղում, էջ 277-278:
[2] Նույն տեղում, էջ 284-285:
[3] Նույն տեղում, էջ 279:
[4] Նույն տեղում, էջ 286:

1916 թ. ապրիլի 8-ին Ֆրանսիայի ռազմական նախարար գեներալ Պիեռ Ռոքին Եգիպտոսից ուղարկված տեղեկագրում առաջարկվում էր նավաստիների կողմից մարզվող 250 մուսալեռցիներին ընդունել Արտասահմանյան լեգեոնի մեջ[1]: Նույն հարցի շուրջ մայիսին գեներալ Պ. Ռոքի կարծիքն է հարցնում նաև Ա. Բրիանը և միաժամանակ ուղարկում է Պ. Նուբարի նամակի պատճենը, ուր վերջինս առաջարկում էր զերծ մնալ մուսալեռցիներից առանձին զորամաս կազմելու և Կիլիկիայում ափիանում կատարելու մտքից, իսկ դաշնակիցների դրոշի ներքո կռվել ցանկացող հայերին ընդգրկել կանոնավոր բանակի կազմի մեջ[2]: Սակայն օսմանահպատակ հայերին ֆրանսիական բանակ չէին կարող ընդունել, քանի որ 1915 թ. օգոստոսի 16-ի օրենքն արգելում էր Ֆրանսիայի կամ նրա դաշնակիցների դեմ պատերազմի մեջ գտնվող պետությունների հպատակներին ընդունել Արտասահմանյան լեգեոնի մեջ[3]: 1916 թ. մայիսի 21-ին վարչապետ Ա. Բրիանին ուղարկած պատասխանում Պ. Ռոքը տեղեկացնում էր, որ իրենք հրաժարվել են Պորտ Սայիդի հայերին ռազմական նկատառումներով օգտագործելու ծրագրերից, իսկ հայերին ֆրանսիական բանակի շարքերն ընդգրկել թույլ չի տալիս 1915 թ. օգոստոսի 16-ի օրենքը[4]: Սակայն Ֆրանսիան չէր կարող վերջնականապես հրաժարվել հայկական զինուժն օգտագործելու հնարավորությունից, քանի որ այդ ժամանակաշրջանում արևելքում միայն աննշան ուժեր ուներ, իսկ հայ կամավորները կարող էին լրացնել այդ բացը:

1916 թ. հուլիսին Տ. Թեքեյանը երկու տասնյակ մուսալեռցիների հետ, որոնց ընտրել էր հերոսամարտի ղեկավարներից Եսայի Յաղուբյանը, Կիլիկիայի ափամերձ շրջանում հաստատվեցին Սելևկիայի դիմաց գտնվող Դանա Ադասի անմարդաբնակ կղզում: Այն գտնվում էր ափից 2,5 կմ հեռավորության վրա: Այդտեղ պահպանվել էին Լևոն Բ թագավորի կողմից ֆրանսիացի խաչակիրներին նվիրված ամրոցի ավերակները: Կղզին ֆրանսիական հրամանատարությունը անվանակոչել էր Լիլ Պրովանսալ: Այստեղ նրանք առանձին էին, ռազմակայա-

[1] **Գարամանուկեան Ա.**, նշվ. աշխ., էջ 67:

[2] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 303:

[3] **Գարամանուկեան Ա.**, նշվ. աշխ., էջ 45:

[4] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 303:

նի հետ հաղորդակցություն չունեին և պետք է թշնամու հարձակման դեպքում ինքնուրույն պաշտպանվեին: Նրանց սնունդ էր բերում հունական «Ազիատիկ» առագաստանավը, որը գալիս էր 15 օրը մեկ, երբեմն էլ ավելի ուշ: Ջրի պակասը լրացնելու համար հայ մարտիկները ստիպված էին, իրենց կյանքը վտանգելով, գիշերով նավել հանդիպակաց ափը և այնտեղ գտնվող ձորակի աղբյուրից ջուր վերցնել: Նրանք ապրում էին կղզու քարայրներում, իսկ գիշերները դիոլի նվագակցությամբ կատարում էին ազգային երգեր, որը միշտ բարձր էր պահում նրանց մարտական ոգին ու եռանդը: Հայ մարտիկները կղզուց հետևում էին թշնամու քայլերին, նրանց նավերի ու սուզանավերի տեղաշարժերին, գաղտնի անցնում էին թուրքական ափը և թարմ տեղեկություններ հավաքում հակառակորդի մասին, կատարում դիվերսիոն գործողություններ թշնամու թիկունքում: Օգոստոսին կղզուն է մոտենում բրիտանական մի ռազմանավ: Տ. Թեքեյանը բրիտանացի ծովային սպաների հետ կազմակերպեց դիվերսիոն գործողություն: Նրանք ոչնչացրին մի քանի ժամվա հեռավորության վրա գտնվող Մերսինի նավահանգստի թուրքական նավթամբարը, որտեղ գերմանական սուզանավերն էին լիցքավորվում: Իսկ մուսալեռցի Ղազարոս Ուրֆալյանն այնտեղից բրտանական նավով ափ է դուրս գալիս Մուսա լեռան վրա և մի քանի ամիս տևած հետախուզական-դիվերսիոն գործունեությունից հետո հաջողությամբ վերադառնում է: Ի վերջո, հունական առագաստանավով հայ մարտիկները հեռանում են Լիլ Պրովանսալից[1]:

Այսպիսով՝ մուսալեռցիներին զինվորագրելու, նրանց մարտական ունակություններն ու տարածաշրջանին ծանոթ լինելու հանգամանքը ի շահ իրենց օգտագործելու հարցը 1915 թ. սեպտեմբերից մի քանի ամիս շարունակ քննարկում էին ֆրանսիական և բրիտանական իշխանությունները: Մուսալեռցիները ոչ միայն պատրաստակամ էին կռվելու ատելի թուրքերի դեմ, այլ նույնիսկ իրենք էին բազմաթիվ դիմումներ կատարում հնարավորինս շուտ մարտական գործողությունների մասնակցելու համար: Եգիպտոսի ֆրանսիական և բրիտանական ռազմական իշխանությունները նույնիսկ սկսեցին ռազմական մարզումներ

[1] **Թեքեյան Տ.,** նշվ. աշխ., էջ 43-49: **Յուշամատեան Մուսա լերան**, Խմբագրեցին Մարտիրոս Գուշագճեան եւ Պօղոս Մատուռեան, Պէյրութ, 1970, էջ 130-131:

մուսալեռցիների հետ: Սակայն հայկական զորամաս կազմավորելուն դեմ արտահայտվեցին հայ ազգային գործիչների զգալի մասը, հատկապես՝ Ազգային պատվիրակության նախագահ Պ. Նուբարը: Դա պայմանավորված էր այն մտավախությամբ, որ թուրքերը հայ կամավորական բանակի գոյությունը կարող էին օգտագործել եղեռնից մազապուրծ մի քանի հարյուր հազար արևմտահայերին կոտորելու համար: Ի վերջո, որոշ ժամանակով հետաձգվեց հայկական կամավորական զորամաս կազմավորելու խնդիրը: Չնայած դրան՝ մուսալեռցի մի քանի տասնյակ մարտիկներ, որոնք մարզվել էին ֆրանսիացի ծովայինների կողմից, պարեկային ծառայություն էին կատարում Կիլիկիայի ափամերձ կղզիներում, իրականացնում դիվերսիոն-հետախուզական մի շարք գործողություններ:

Հայկական (Արևելյան) լեգեոնի կազմավորումը:

1916 թ. մայիսի 16-ին ստորագրված Սայքս-Պիկոյի գաղտնի համաձայնագրով նախատեսվում էր օսմանյան տիրույթները բաժանել Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև: Արևմտյան Հայաստանի մի մասը՝ Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի նահանգներն անցնելու էին Ռուսաստանին, իսկ Խարբերդը, Դիարբեքիրը, Սեբաստիան և Կիլիկիան՝ Ֆրանսիային[1]: Փաստորեն, պատերազմում դաշնակիցների հաղթանակից հետո Կիլիկիան, Արևմտյան Հայաստանի հարավային և արևմտյան նահանգներն անցնելու էին Ֆրանսիային: Վերջինիս էին անցնելու նաև Սիրիան և Լիբանանը: Հետևաբար, ֆրանսիական իշխանություններին անհրաժեշտ էր Միջերկրականի արևելքում զգալի ուժեր կենտրոնացնել, ավելի ակտիվ քաղաքականություն վարել, սեփական ազդեցությունը տարածել տեղի ժողովուրդների վրա: Այդ հանգամանքով էր պայմանավորված, որ 1916 թ. հունիս-սեպտեմբեր ամիսներին Ֆրանսիայի արտաքին գործերի և ռազմական նախարարությունները սկսեցին ամենայն լրջությամբ քննարկել Կիպրոսում 5.000-ոց հայկական զորամաս կազմավորելու հարցը:

Բրիտանացիները Միջագետքում ու Պաղեստինում թուրքերի դեմ մղած կռիվների ընթացքում գերել էին թուրքական բանակում ծառայող 179 հայերի, որոնց արգելափակել էին Հնդկաստանի Սումերպուր քա-

[1] Տե՛ս http://en.wikipedia.org/wiki/Sykes%E2%80%93Picot_Agreement:

ղաքում: Հայ ռազմագերիները խնդրել էին, որպեսզի իրենց ընդգրկեն Միջագետքի բրիտանական բանակի մեջ, կամ թույլ տան միանալու Կովկասի հայ կամավորական գնդերին: Ամերիկահայերը ևս 1916 թ. հունիսի 8-ին դիմել էին բրիտանական իշխանություններին, որ հայ ռազմագերիները միացվեն դաշնակիցների ուժերին: Սակայն բրիտանական ռազմական իշխանությունները դա համարել էին անցանկալի քայլ[1]: Հունիսի 28-ին Լոնդոնի ֆրանսիական դեսպան Պ. Կամբոնը վարչապետ Ա. Բրիանին հեռագրեց, որ Մեծ Բրիտանիայի ԱԳՆ-ում իրեն տեղեկացրել են Միջագետքում գերված և Հնդկաստան տեղափոխված հայ ռազմագերիներին դաշնակիցների բանակների մեջ ընդգրկելու ամերիկահայերի խնդրանքի մասին: Քանի որ Սայքս-Պիկոյի համաձայնագրով Հայաստանի մի մասը և Կիլիկիան անցնելու էին Ֆրանսիային, այդ պատճառով բրիտանական կառավարությունը ցանկացել էր իմանալ, թե արդյոք Ֆրանսիան կցանկանար օգտվել այդ հայերի ծառայություններից[2]: Դեսպանի հեռագիրը վարչապետն ուղարկում է ֆրանսիական բանակի գլխավոր հրամանատար գեներալ Ժոզեֆ Ժոֆրին: Սակայն գեներալը հուլիսի 3-ին պատասխանում է, որ այդ պահին թուրքերի դեմ ռազմական գործողություններ չեն նախատեսվում, ինչպես նաև հայ ռազմագերիներին ֆրանսիական բանակ չեն կարող վերցնել օրենսդրական արգելքի պատճառով: Ժ. Ժոֆրը կարծում էր, որ հայերին Ֆրանսիայում կարող են օգտագործել որպես բանվորական ուժ[3]: Ֆրանսիական ռազմական շրջանակները դեռևս անհնար էին համարում հայկական զորամասի կազմավորումը:

Հուլիսի 4-ին Պ. Կամբոնը հայ կամավորների հարցի շուրջ Ա. Բրիանին ուղարկում է նոր հեռագիր: Նա տեղեկացնում էր, որ հայերի խնդրի շուրջ զրուցել էր նաև Կահիրեի բրիտանական գաղտնի ծառայության պետ գեներալ Գիլբերթ Քլեյթոնի հետ: Նրանք հանգել էին այն եզրակացությանը, որ շահավետ կլիներ Կիպրոսում համախմբել զինվորագրվելու պիտանի հայերին: Այդ զորաբանակի սոսկ ներկայությունն անհանգստություն կպատճառեր թուրքերին: Դեսպանը նշում էր,

[1] **Սարուխանյան Տ.**, նշվ. աշխ., էջ 65-66:
[2] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 308:
[3] Նույն տեղում, էջ 309:

որ անհրաժեշտ էր հրահանգիչներ նշանակել ֆրանսիացի սպաների, իսկ ծախսերը հոգալու էր Ֆրանսիան, քանի որ համաձայնագրով Հայաստանի մեծ մասը պատերազմից հետո անցնելու էր նրանց[1]: Պետք է նշել, որ բրիտանացի գեներալի կողմից բարձրաձայնված առաջարկը որոշակի դեր ունեցել էր ֆրանսիացի և բրիտանացի շատ գործիչների տեսակետները փոխելու գործում:

Հուլիսի 17-ին Հնդկաստանի կառավարությունն իր հերթին պատրաստակամություն հայտնեց ազատել հայ ռազմագերիներին, որպեսզի նրանք միանային Կիպրոսում կազմավորվող հայկական զորախմբին[2]: Չնայած դեռևս որոշում չէր կայացվել, սակայն արդեն շրջանառության մեջ էր դրվել այն գաղափարը, որ Կիպրոսում կազմավորվելու էր հայկական զորաբանակ: Հուլիս-օգոստոս ամիսներին Ֆրանսիայի բարձրագույն քաղաքական ու ռազմական ղեկավարությունը մանրամասն քննարկեց Կիպրոսում 5.000-ոց հայկական կորպուս կազմավորելու հարցը: Այն օգտակար կլիներ Ֆրանսիային Կիլիկիայում կամ Սիրիայում ափհանման ժամանակ: Մեքքայի շերիֆի հակաթուրքական ապստամբությունը Սիրիայում տարածվելու դեպքում անհրաժեշտ կլիներ արագ արձագանքել և օգնական զորքեր ուղարկել: Ֆրանսիայի համար չափազանց արդյունավետ կլիներ իր դրոշի ներքո կռվող զորամաս ունենալը այն տարածաշրջանում, որի նկատմամբ պատերազմից հետո հավակնություններ ուներ: Հետևաբար ֆրանսիացի բոլոր պետական ու ռազմական գործիչները, որոնք մասնակցում էին խնդրի քննարկմանը, միանշանակ կողմ արտահայտվեցին Հայկական լեգեոնի կազմավորման գաղափարին[3]:

Սակայն անհրաժեշտ էր ստանալ նաև Մեծ Բրիտանիայի հավանությունը, քանի որ ոչ միայն Կիպրոսն էր գտնվում նրանց տիրապետության տակ, այլ նաև հայ ռազմագերիները և մուսալեռցիները բրիտանական վերահսկողության գոտում էին: Ֆրանսիական իշխանությունները բավական ջանքեր գործադրեցին, որպեսզի բրիտանացիներից թույլտվություն ստանան Կիպրոսում հայկական զորաբանակ կազ-

[1] **Գարամանուկեան Ա.**, նշվ. աշխ., էջ 67: Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 309:

[2] **Սարուխանյան Տ.,** նշվ. աշխ., էջ 66:

[3] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 313-324:

մավորելու հարցում: Ֆրանսիան բավական վճռական էր տրամադրված և ամեն կերպ փորձում էր հաղթահարել բրիտանական կողմից ենթադրվող խոչընդոտները: Բրիտանացիներն ակնարկում էին, որ նյութական միջոցներ են ծախսել մուսալեռցի հայերի վրա և հասկացնում էին ֆրանսիացիներին, որ եթե նրանք ցանկանում են օգտագործել հայ մարտիկների ռազմական կարողությունները, ապա պետք է փոխհատուցեն իրենց ծախսերը: Միաժամանակ նրանք գիտակցաբար ֆրանսիական կողմի առաջ խոչընդոտներ էին ստեղծում՝ իմանալով, որ հայկական կորպուսը ձևավորվելու էր առաջին հերթին մուսալեռցիների հիմքի վրա[1]: Մինչ երկու կառավարությունների միջև վերջնական համաձայնություն կայացնելը՝ ֆրանսիական կողմը բավական գործնական քայլեր էր կատարում հայկական լեգեոնի ձևավորման շուրջ եղած խնդիրները արագորեն լուծելու համար: Արդեն 1916 թ. օգոստոսի 16-ին փոխգնդապետ Լուի Ռոմիոն նշանակվել էր կազմավորվելիք զորամասի հրամանատար[2]: Մեքքա մեկնող ֆրանսիական առաքելությունը, որը ղեկավարում էր փոխգնդապետ Էդուարդ Բրեմոնը, որոշ ժամանակ կանգ առավ Եգիպտոսում: Նա սեպտեմբերի 1-ին հանդիպում է Միհրան Տամատյանի, Լևոն Մկրտիչյանի և եգիպտահայ այլ գործիչների հետ, որոնց տեղեկացրեց հայկական զորամաս կազմավորելու Ֆրանսիայի մտադրության մասին, ակնարկելով, որ այն կարող էր լինել ապագա հայկական բանակի կորիզը, և խնդրեց նրանց աջակցությունը: Հայ գործիչները մի քանի օրից պատասխանեցին, որ նման խնդրին լուծում տալու իրավասություն ունի միայն Ազգային պատվիրակությունը[3]: Է. Բրեմոնը մանրամասն ուսումնասիրում է Պորտ Սայիդում գտնվող մուսալեռցիներին: Նրա կարծիքով հայերը «խելացի են, հրաշալի հրաձիգներ են, ուշիմ են, նրանց խորթ է դյուրաբորբոքությունը: Բայց, բնականաբար, շատ են հեռու մեր մտածելակերպից»[4]: Է. Բրեմոնը, տեղեկանալով, որ Եգիպտոսի գերագույն կոմի-

[1] Նույն տեղում, էջ 324, 327-329:

[2] **Պօյաճեան Տ.,** Հայկական լէգէոնը: Պատմական Յուշագրութիւն, Ուօթրթաուն, 1965, էջ 24:

[3] **Եափուճեան Ա.,** Հայ ժողովուրդին անկախութեան պայքարը Կիլիկիոյ մէջ 1919-1921 թթ., Գահիրէ, 1977, էջ 114-117:

[4] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 331:

սար Հենրի Մակմահոնը հավանություն էր տվել հայ կամավորներին որպես ջորեպաններ Սալոնիկ ուղարկելուն, քայլեր ձեռնարկեց դա կանխելու ուղղությամբ[1]:

Բրիտանացի որոշ գործիչներ դեմ էին Կիպրոսում հայկական զորամասի տեղակայմանը: «Այս պայմաններում, հարկ կլինի հրաժարվել հայերին օգտագործելու նախագծից, որոնք արժանի չեն այն 360.000 ֆրանկին, որը պետք է վճարել անգլիացիներին»,- սեպտեմբերին նշում է Ֆրանսիայի ԱԳՆ Արևելյան բաժնի պետ Ժ. Գուն[2]: Վերոնշյալ պաշտոնյայի համար հայերին աջակցելը միայն ֆինանսական մանր հաշվարկներ էին, նա մոռանում էր, որ պատերազմից հետո Ֆրանսիան նպատակ ուներ տիրելու հայկական տարածքներին, և տվյալ պահին ցուցաբերած ժլատությունը իրենց համար քաղաքական ու տնտեսական բացասական լուրջ հետևանքներ կարող էր ունենալ: Բրիտանացիների նպատակը, մերկարծիքով, Մերձավոր արևելքում սեփական հեղինակությունը բարձրացնելը և ֆրանսիացիներին հեղինակազրկելն էր, միաժամանակ ֆրանսիական դրոշի ներքո հայկական զորամասի կազմավորմանը խոչընդոտելը, որպեսզի հայերը չընկնեին ֆրանսիական ազդեցության տակ:

Սեպտեմբերի 11-ին Եգիպտոսի բրիտանական ռազմական իշխանությունները Պորտ Սայիդի հայերին ներկայացրին կամավորագրության պայմանագրերը, որոնք ստորագրելուց հետո նրանց ուղարկելու էին Սալոնիկ[3]: Այն պարտավորեցնում էր բրիտանական բանակում ծառայել մինչև պատերազմի ավարտը, կրել զինվորական կարգապահությունից բխող բոլոր զրկանքները, իսկ անհնազանդության պարագայում ենթարկվել ռազմական ատյանի դատին: Սակայն հայերը հրաժարվեցին այդ պայմանագրերը ստորագրելուց ու Սալոնիկ մեկնելուց: Մուսալեռցիները, որոնք մի քանի ամիս բրիտանացիների կողմից օգտագործվում էին որպես բանակային բանվորներ, կտրականապես դեմ էին ջորեպանի կարգավիճակով Սալոնիկ մեկնելուն: Նրանք պատրաստ էին զինվորական ծառայություն կատարել միայն Կիլիկիան

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 329-330, 345:

[2] Նույն տեղում, էջ 330:

[3] Նույն տեղում, էջ 332-333:

ազատագրելու համար: Հակառակ այն բանի, որ Պորտ Սայիդի պարետ գնդապետ Էլգուդը սպառնացել էր, որ պայմանագրերը չստորագրելու դեպքում կուղարկեն Եգիպտոսի խորքերը՝ ճանապարհներ կառուցելու, հայերը մնացին անդրդվելի: Մուսալեռցիները դիմեցին Եգիպտոսի ֆրանսիական իշխանություններին, որպեսզի վերսկսեն իրենց ռազմական մարզումները և հարմար պահին պատրաստ լինեն ֆրանսիական հովանավորության ներքո ազատագրելու հայրենի Կիլիկիան[1]: Դրանով վերջնականապես ձախողվեց մուսալեռցիներին Սալոնիկ ուղարկելու նախագիծը: Վերջիններս չէին ցանկանում հեռանալ ընտանիքներից, աշխատանք Եգիպտոսում էլ ունեին, և պատրաստ էին զինվորագրվել միայն այն պարագայում, եթե կռվելու էին Կիլիկիայի ազատագրման համար:

Սեպտեմբերի 13-ին Մեծ Բրիտանիայի ռազմական նախարարությունն իր հավանությունը տվեց Կիպրոսում հայկական կորպուս կազմավորելու նախագծին և պատրաստ էր այդ նպատակով տրամադրել կղզու հյուսիսային կամ արևելյան մասում գտնվող որևէ վայր[2]: Սեպտեմբերի 14-ին Ժ. Գուն նոր տեղեկագիր պատրաստեց, ուր վերանայել էր 4 օր առաջ իր ներկայացրած տեսակետները: Նա համոզված էր, որ պատերազմի ավարտից հետո իրենք միևնույնն է պետք է վճարեն բրիտանացիներին Պորտ Սայիդի ճամբարի համար ծախսած ամսական 30.000 ֆրանկը: Նշում էր, որ դա նշանակում էր թույլատրել հայերին Ֆրանսիայի ծախսերով տրվելու անգլիամոլության, ամերիկամոլության, հայամոլության: Գտնում էր, որ այդ ուղուց պետք էր հետ կանգնել և հայերին պահել Փարիզից անմիջական կախման մեջ: Նշում էր, որ պետք է կամ ամբողջությամբ հրաժարվել հայերից կամ ամբողջությամբ նրանց հոգածությունը վերցնել: Սակայն կարծում էր, որ առաջին լուծումը ցավալի կլինի Ֆրանսիայի համար, որովհետև «այս մարդիկ խաղաղ կյանքի կվերադառնան իրենց տարածքում, որը մերը կլինի,- մատնանշում էր Ժ. Գուն և պարզաբանում:- Նրանք այնտեղ կվերադառնան մեր կողմից լքված լինելու հետևանքով խոցված, անգլերեն սովորած, հայկական կենտրոնական կոմիտեների հետ սերտորեն

[1] Նույն տեղում, էջ 362-363:

[2] Նույն տեղում, էջ 337:

դաշնակցած, յուրաքանչյուր բնույթի դիմադրության պատրաստ: Իսկ եթե այժմվանից մենք նրանց ղեկավարենք, նրանք կդառնան մեր հրաշալի գործիքը: Ամենահետաքրքրականն այն է, որ մենք այնուամենայնիվ ստիպված կլինենք հատուցել անգլիացիներին: Եվ դա արդեն կազմում է 360.000 ֆրանկ»[1]: Ինչպես տեսնում ենք, այդ գործչին հետաքրքրում էին միայն հետագա ճղճիմ շահերն ու հաշվարկները, որոնք վերջին հաշվով հանգում էին այն գումարների հաշվառմանը, որոնք Ֆրանսիան ծախսելու և ստանալու էր հայերին զինական կարողություններն օգտագործելու արդյունքում:

Սեպտեմբերի 22-ին Ժ. Դեֆրանսը հեռագրեց Ա. Բրիանին, որ Պորտ Սայիդի հայերին օգտագործելու հարցը ֆրանսիական ռազմածովային և Եգիպտոսի բրիտանական ռազմական իշխանությունների միջև տարաձայնությունների պատճառ է դարձել: Դեսպանը անհրաժեշտ էր համարում հարցի շուրջ արագ, հստակ և վերջնական որոշում կայացնելը[2]: Նույնիսկ դաշնակից կառավարությունների միջև համաձայնության կայացումից և հայերի կողմից մերժում ստանալուց հետո, Եգիպտոսի բրիտանական իշխանությունները փորձում էին խանգարել մուսալեռցիներին զինվորագրելու ֆրանսիացիների հեռագնա ծրագրերին:

Սեպտեմբերի 23-ին Ֆրանսիայի ռազմական նախարար Պ. Ռոքը ռազմածովային նախարար դերծովակալ Լ. Լակազին տեղեկացրեց, որ բրիտանական կառավարությունը համաձայնություն էր տվել Կիպրոսի հյուսիսում կամ արևելքում կազմավորել հայկական կորպուս: Ռազմական նախարարը հայտնում էր, որ Պորտ Սայիդում հավաքագրել են միայն 200 հայերի, որոնք արդեն մարզվել են Սիրիայի ռազմածովային դիվիզիայի միջոցով: Պ. Ռոքը տեղեկացնում էր, որ Եգիպտոս ու Կիպրոս է գործուղել հետևակային գումարտակի հրամանատար Լ. Ռոմիոյին, որը տեղում պարզելու էր հայկական զորամասի ստեղծման նպատակահարմարությունն ու պայմանները, համաձայնության էր գալու բրիտանացիների հետ: Լ. Ռոմիոն ուսումնասիրելու էր զինվորագրման ենթակա հայերի թիվը, տեղեկանալու էր Սիրիայում

[1] Նույն տեղում, էջ 337-338:

[2] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 341:

գործող ֆրանսիական ռազմածովային դիվիզիայի հրամանատար Հ. դը Սպիտզի տեսակետին, Կիպրոսում հարմար վայր էր գտնելու զորամասի տեղակայման համար, ապա իր վերջնական առաջարկներն էր ներկայացնելու ռազմական նախարարին: Պ. Ռոքը նաև հարցնում էր, թե արդյո՞ք Սիրիայի ռազմածովային դիվիզիան ի վիճակի էր ռազմական նախարարության միջոցների հաշվին դրամով ու մթերքով ապահովել Կիպրոս մեկնող առաքելությունը և հաջողության դեպքում նաև հայկական կորպուսին[1]:

Սեպտեմբերի 24-ին Ա. Բրիանը հեռագրով Ժ. Դեֆրանսին տեղեկացրեց, որ Լ. Ռոմիոն մեկնում է Կիպրոս՝ հայերին այնտեղ համախմբելու հարցը ուսումնասիրելու համար: Վարչապետը միաժամանակ հետաքրքրվում էր սիրիացի և լիբանանցի կամավորների հավաքագրելու հնարավորության մասին[2]: Սեպտեմբերի 25-ին Ժ. Դեֆրանսը Իսմայիլիայում հանդիպեց գեներալ Ա. Մուրրեյի հետ: Վերջինս հավաստիացրեց, որ այլևս չի քննարկվում Պորտ Սայիդի հայերին՝ որպես ջորեպաններ Սալոնիկ ուղարկելու հարցը, քանի որ հայերը մերժել են: Բրիտանացիները փորձել են հայերին որպես մշակներ օգտագործել Եգիպտոսում, սակայն հպարտ մուսալեռցիները դժգոհել են նաև այդ առաջարկից: Ժ. Դեֆրանսը գեներալին տեղյակ պահեց Լ. Ռոմիոյի առաքելության մասին, որին Ա. Մուրրեյը դրական վերաբերվեց, սակայն հույս հայտնեց, որ տղամարդկանցից բացի ֆրանսիացիները կվերցնեն նաև կանանց ու երեխաների հոգսը[3]:

Այսպիսով, 1916 թ. սեպտեմբերին, երկարատև բանակցություններից հետո, Ֆրանսիան ձեռք բերեց Մեծ Բրիտանիայի համաձայնությունը Կիպրոսում հայ կամավորական զորամաս կազմավորելու վերաբերյալ: Մի քանի հարյուր մուսալեռցիներ արդեն ռազմական մարզումների էին մասնակցել ֆրանսիացի ծովայինների ու բրիտանացիների մոտ և պատրաստ էին լուրջ մարտական գործողությունների: Ի զուր չէ, որ հայկական զորամասի առաջին գումարտակը նախատեսվում էր կազմել մուսալեռցիներից ու եգիպտահայերից:

[1] Նույն տեղում, էջ 342-343:
[2] Նույն տեղում, էջ 345-346:
[3] Նույն տեղում, էջ 347:

Լեգեոնի կազմավորման վերաբերյալ համաձայնագրի ստորագրումը:

Բրիտանացիների հետ համաձայնության գալուց բացի, ֆրանսիական կողմը պետք է ապահովեր նաև հայկական ղեկավար շրջանակների աջակցությունը: Մանավանդ, որ անցյալում վերջինների դիմադրության պատճառով չէին կարողացել ըստ արժանվույն օգտագործել մուսալեռցիների մարտական կարողությունները: Սակայն այս անգամ խոսքը ոչ թե միայն սուետիահայերի մասին էր, որոնցից կարող էին ձևավորել մեկ վաշտ, այլ՝ կորպուսի կազմավորման խնդիր էր դրված: Հետևաբար, անհրաժեշտ էր արևմտահայ ազգային ղեկավարության համաձայնությունն ու սերտ համագործակցությունը: Հակառակ դեպքում՝ նախագիծը կարող էր ձախողվել:

Զորամասի հարցը տեղում պարզելու և գործնական հողի վրա դնելու նպատակով Է. Բրեմոնը 1916 թ. սեպտեմբերին Ալեքսանդրիայում բանակցությունների մեջ մտավ եգիպտահայ ազգային գործիչներ Միհրան Տամատյանի և Լևոն Մկրտիչյանի հետ: Նա տեղեկացրեց, որ Ֆրանսիան որոշել էր հայկական զորամաս ստեղծել, որպեսզի ազատագրի Կիլիկիան: Հայ գործիչները պատասխանեցին, որ հայերն ուրախությամբ կարձագանքեն կամավորագրությանը, եթե նրանց դիմի Պ. Նուբարը և խորհուրդ տվեցին, որ ֆրանսիական կառավարությունը բանակցի անմիջականորեն նրա հետ[1]: Լ. Մկրտիչյանն այդ մասին նամակով տեղեկացրեց Ազգային պատվիրակության նախագահին, ինչպես նաև հայտնեց իրենց մտավախությունը Սիրիայի և Միջագետքի անապատներում մնացած հայ գաղթականների ճակատագրի մասին, ովքեր կարող էին թուրքական վրեժխնդրության զոհ դառնալ:

Արդեն սեպտեմբերի 30-ին մայոր Լուի Ռոմիոն Փարիզից ուղևորվեց Եգիպտոս՝ առաջադրանք ունենալով կազմավորել հայկական զորամաս: Նրա խորհրդական նշանակվեց հայազգի սպա Տ. Թեքեյանը[2]: Լ. Ռոմիոն հոկտեմբերի 4-ին Մարսելից փոստային նավով մեկնեց Ալեքսանդրիա[3]: Այս շրջանում Պորտ Սայիդում կային ֆրանսիացի ծո-

[1] **Տամատեան Մ.,** նշվ. աշխ., էջ 105-106:

[2] **Թեքեյան Տ.,** նշվ. աշխ., էջ 52:

[3] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 358:

վայինների կողմից ռազմական ուսուցում ստացած 208 մուսալեռցիներ, որոնցից 172-ը պատրաստ էին ցանկացած տեսակի առաջադրանք կատարելուն: Նրանց թիվը կարող էր հասնել շուրջ 350-400: Սակայն շատերը խուսափում էին կամավորագրվելուց, քանի որ ընտանիքները պահելու համար աշխատում էին ճամբարից դուրս: Է. Բրեմոնը հարցի լուծում էր համարում կամավորներին աշխատավարձ տալը: Պ. Ռոքը նույնպես համամիտ էր այդ մտքին, բացի այդ, համոզված էր, որ տղամարդկանց զինվորագրելուց հետո իրենք պետք է բրիտանացիներին վճարեն Պորտ Սայիդի ճամբարում կատարած ծախսերը և իրենց վրա վերցնեն մոտ 4.000 կանանց, ծերերին ու երեխաներին պահելու հոգսը: Գեներալ Ա. Մուրրեյը վերջնականապես հրաժարվել էր զենք կրելու ընդունակ հայերից, սակայն ցանկություն էր հայտնել ձերբազատվել նաև ճամբարը պահելու հոգսից: Պ. Ռոքն արդարացի էր համարում վերցնել ողջ գաղթականական ճամբարի ծախսը, քանի որ հայ զինվորները ծառայելու էին իրենց համար, և խնդրեց Ա. Բրիանի համաձայնությունն այդ հարցում[1]: Ֆրանսիական գործիչները հետզհետե հակվում էին Պորտ Սայիդի ճամբարի հոգսն իրենց վրա վերցնելու գաղափարին, քանի որ բավական անբնական վիճակ էր ստեղծվել: Մուսալեռցիներին փրկել էին ֆրանսիական նավերը, պատերազմից հետո Կիլիկիան անցնելու էր Ֆրանսիային, հայ մարտիկները պարտավորվել էին կռվել ֆրանսիական դրոշի ներքո, սակայն նրանց ընտանիքները պահելու հոգսը մնացել էր բրիտանացիների ուսերին: Նման պայմաններում շատ բնական էր վերջիններիս դժգոհությունը:

Հոկտեմբերի 2-ին Ֆրանսիայի ԱԳՆ-ում Պ. Նուբարին ընդունեց Ժ. Գուն: Վերջինս տեղեկացրեց, որ որոշվել էր կազմավորել հայկական լեգեոն, և այն լինելու էր ֆրանսիական ռազմարշավային զորքերի կորիզը, երբ որոշվեր ներխուժել Փոքր Ասիա: Ժ. Գուն հայտնեց, որ կամավորները մարզվելու են Կիպրոսում, ղեկավարվելու են ֆրանսիացի սպաների կողմից և կղզում մնալու են մինչև ռազմական գործողության պատեհ ժամանակը գար: Նա բացատրեց, որ ռազմական գործողությունները կարող էին տեղի ունենալ երկու դեպքում. եթե Մեքքա-

[1] Նույն տեղում, էջ 358-359:

յի շերիֆի ապստամբությունը տարածվեր դեպի հյուսիս և ընդգրկեր ամբողջ Սիրիան, կամ՝ եթե դաշնակիցները հաղթեին Բալկաններում, որով կկտրվեին Գերմանիային ու Թուրքիային միացնող հաղորդակցության ուղիները: Դա կհանգեցներ վերջինի մեկուսացմանը և հետևաբար նրա բանակի պարտությանը, որը կտեղափոխվեր Փոքր Ասիա: Նման զարգացումների դեպքում նախատեսվում էր զորքեր ափհանել Կիլիկիայում կամ Սիրիայում: Այդ պայմաններում դաշնակիցները տեղանքին ու լեզվին ծանոթ կամավորների կարիքը կունենային: Ժ. Գուն խոստանում էր, որ Կիլիկիան գրավելուց հետո տեղի ոստիկանական և վարչական պաշտոնները տրվելու են այդ կամավորներին: Նա Պ. Նուբարի աջակցությունը խնդրեց Եգիպտոսում մոտ 1.000 կամավորներ հավաքագրելու համար, քանի որ կամավորագրվելու պատրաստակամություն հայտնած Պորտ Սայիդի մի քանի հարյուր մուսալեռցիները բավարար չէին:

Պ. Նուբարը տեղեկացրեց, որ իրեն հայտնի են Է. Բրեմոնի բանակցությունները եգիպտահայերի հետ և խոստացավ, որ հայերը կաջակցեն Ֆրանսիային Փոքր Ասիա կատարվելիք արշավանքի ընթացքում: Նա տեղեկացրեց, որ ինքը դեռ 1914 թ. ձմռանն էր դիմել Կահիրեում Անտանտի երկրների երեք դեսպաններին Կիլիկիայում ափհանում կատարելու առաջարկությամբ և խոստացել հայերի օգնությունը: Սակայն Պ. Նուբարը մտավախություն հայտնեց, որ հայկական առանձին կամավորական զորամասի ստեղծումը թուրքերին նոր ջարդերի առիթ կտար, և առաջարկեց հայ կամավորներին չհամախմբել Եգիպտոսում, այլ փոքր խմբերով ուղարկել Կիպրոս և մտցնել ֆրանսիական ռազմարշավային զորքերի կազմի մեջ: Նա միաժամանակ պահանջեց Արևմտյան ճակատում կռվող Արտասահմանյան լեգեոնի հայ կամավորներին նույնպես տեղափոխել Կիպրոս: Ժ. Գուն համաձայնեց, որ ջարդերի վտանգ կար և հավանություն տվեց այդ առաջարկներին: Վերջում Պ. Նուբարը նշեց, որ կամավորագրությունը խրախուսելու համար կարևոր պայման էր, որ Ֆրանսիան խոստանար ինքնավարություն շնորհել Կիլիկիային: Նա տեղեկացրեց, որ հայերը խոր հիասթափության մեջ էին՝ կապված Ռուսաստանի վարած Արևմտյան Հայաստանը բռնակցելու ու ռուսոֆիկացման քաղաքականության հետ: Նա հույս հայտնեց, որ Ֆրանսիան հնարավորինս ընդարձակ տարածքներ

կվերցնի իր հովանու տակ և, հավատարիմ մնալով իր ժողովրդավարական ավանդույթներին, Կիլիկիայում կստեղծի այնպիսի վարչաձև, որը կհամապատասխանի հայերի ազգային ձգտումներին: Սակայն, երբ Պ. Նուբարը հույս հայտնեց, որ Կիլիկիան չի միացվի Սիրիային և կլինի առանձին վարչական միավոր, Ժ. Գուն խուսափողաբար պատասխանեց, որ դեռևս վաղ էր որոշել ապագա վարչական բաժանումների սահմանները և վստահեցրեց, որ Ֆրանսիան լիբերալ (ազատական) վարչաձև կպարգևի Կիլիկիային[1]:

Այդ հանդիպման մասին Ժ. Գուն հանգամանալից զեկուցագիր ներկայացրեց Ա. Բրիանին: Նա արդեն հակված էր հնարավորինս արագ հայկական զորամաս կազմավորելուն. «Թվում է, հարկ է ներկա պահին առանց տատանումների ստանձնել Մուսա լեռան հայերի հոգածությունը և նրանց նախապատրաստել մեր ազդեցության ռահվիրաները լինելու համար,- նշում էր Ժ. Գուն և շարունակում,- Հայերն աշխատասեր են, վաստակին հետամուտ, խելացի: Եթե մենք կարողանանք նրանց մեր կողմը գրավել, լավ մտածված հրահանգով և կայուն ղեկավարությամբ ձերբազատել ճորտության օրոք ձեռք բերած արատներից, նրանք Փոքր Ասիայում կստեղծեն մեր տիրապետության համար լավագույն միջավայր: Այն քայլը, որը մենք կանենք այս պահին, հաջողությամբ կնախապատրաստի մեր ապագա գործունեությունը նրանց շրջանում»[2]: Հոկտեմբերի 2-ին Պ. Նուբարի հետ հանդիպեց նաև Ռենե Պինոն: Նա ևս տեղեկացրեց, որ Ֆրանսիան պատրաստվում էր զորքեր կենտրոնացնել Կիպրոսում, և Լ. Ռոմիոյի գլխավորությամբ նախատեսվում էր ստեղծել հայկական լեգեոն: Սակայն, ի տարբերություն Ժ. Գուի, Ռ. Պինոն քիչ հավանական էր համարում մոտ ժամանակներում Կիլիկիայում ափհանում կատարելը[3]:

Ինչպես տեսնում ենք, ֆրանսիացի գործիչները սկսեցին Պ. Նուբարին համոզել, որպեսզի աջակցի հայկական լեգեոնի ստեղծման աշխատանքներին: Սակայն առանց սպասելու հայ գործչի պատասխանին, կամ նրան կանխապես դրական պատասխանի տրամադրելու

[1] **Boghos Nubar's Papers**, p. 368-370. **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 357-358:

[2] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 358:

[3] **Boghos Nubar's Papers**, p. 371.

նպատակով, արդեն Լ. Ռոմիոյին ուղարկել էին Եգիպտոս: Դրանով ֆրանսիացիները փորձում էին հասկացնել, որ իրենք հայկական կամավորական զորամաս ստեղծելու են առանց հաշվի առնելու Ազգային պատվիրակության կամ այլ հայկական քաղաքական ու հասարակական կառույցների կարծիքը: Այսպիսով՝ հայ գործիչներին մնում էր համակերպվել և հայկական զորամաս կազմավորելու դիմաց առավելագույն պահանջներ առաջ քաշել:

Պ. Նուբարը հայ կամավորների հարցով հանդիպեց ֆրանսիացի քաղաքական–պետական բազմաթիվ գործիչների հետ և փորձում էր նրանց համոզել ապագա ինքնավար Կիլիկիային Ալեքսանդրետի նավահանգիստը միացնելու անհրաժեշտությունը[1]: Հոկտեմբերի 6-ին Պ. Նուբարը կամավորների խնդրի վերաբերյալ նամակ ուղարկեց Կահիրեի իր մերձավորներից Լ. Մկրտիչյանին, իսկ պատճենը՝ որդուն՝ Առաքել բեյ Նուբարին: Նա հայտնում էր, որ զգույշ լինեն կամավորագրության մեջ, որպեսզի թուրքերին չգրգռեն, ցանկություն էր հայտնում, որ հնարավորության դեպքում հայ կամավորներից առանձին զորամաս չկազմավորվի, այլ՝ նրանք ներառվեն դաշնակից զորքերի կազմի մեջ, ինչպես նաև զգուշացնում էր, որ կամավորների հավաքագրումը Եգիպտոսում չկատարվի, այլ՝ Կիպրոսում: Պահանջում էր, որ Եգիպտոսի թերթերը գաղտնի պահեն այդ հարցը և որևէ լուր չտպագրեն: Վերջում Պ. Նուբարը հույս էր հայտնում, որ Ֆրանսիան, ի տարբերություն Ռուսաստանի, որը փոխել էր իր քաղաքականությունը հայերի հանդեպ[2], պատերազմից հետո իրեն անցած հայկական տարածքներին կշնորհի լիբերալ վարչաձև, որը հնարավորություն կտար իրագործելու հայերի ազգային իղձերը[3]:

Հոկտեմբերի 6-ին Ա. Բրիանը հայերի մասին իր տեսակետները ներկայացրեց Պ. Ռոքին: Նա համաձայն էր մուսալեռցի գաղթականների հոգսը Ֆրանսիայի վրա վերցնելուն և կարծում էր, որ տղամարդ-

---

[1] Նույն տեղում, էջ 376-377:

[2] Ինչպես հայտնի է, այդ շրջանում ցարական իշխանությունները որոշել էին Արևմտյան Հայաստանը բնակեցնել ռուս և կոզակ վերաբնակիչներով, չէին թույլատրում հայ գաղթականներին վերադառնալ իրենց բնակավայրերը: Դա խոր հիասթափություն էր առաջացրել հայերի մոտ, քանի որ մինչ այդ մեծ հույսեր էին կապել Ռուսաստանի հետ:

[3] **Boghos Nubar's Papers**, p. 372-374:

կանց հետ պետք է Կիպրոս տեղափոխեին նաև նրանց ընտանիքները: Տեղեկացնում էր, որ հայերի գիտակցության մեջ զգալի փոփոխություններ էին տեղի ունեցել, քանի որ դեռ մի քանի ամիս առաջ հայերը ձգտում էին Ռուսաստանի հովանու ներքո ինքնավար Հայաստան ստեղծել, որը ձգվելու էր Արարատից մինչև Ալեքսանդրետի ծոց, սակայն հայկական տարածքների նվաճելուց հետո ռուսներն անուշադրության են մատնել հայերին և ավելի մեծ ուշադրություն են դարձնում այդ տարածքներում բնակվող մյուս էթնիկ խմբերին, և դա հողմացրիվ է արել հայ ղեկավար գործիչների երազանքները: Վստահեցնում էր, որ հայ գործիչներն արդեն գիտակցել են, որ ինչքան մեծ թվով հայեր գտնվեն Ֆրանսիայի հովանու տակ, այնքան ավելի լավ վիճակում հայտնվելու հույս կարող են ունենալ: Նա գտնում էր, որ քաղաքական անհեռատեսություն կլինի, եթե ձեռնպահ մնան հովանավորելուց և իրենց կողմը չգրավեն Արևելքում միակ աշխատասեր ժողովրդին, որից ապագայում միայն օգուտ կքաղեն: Նշում էր, որ Պ. Նուբարի և նրա բարեկամների ջանքերով Լ. Ռոմիոն կկարողանար մուսալեռցիներից, եգիպտահայերից ու Հնդկաստանի գերիներից կազմավորել բավական մեծաքանակ առաջին խմբավորումը: Թուրքերի կողմից նոր հակահայկական քայլերից խուսափելու համար, Ա. Բրիանը զգուշացնում էր, որ Եգիպտոսում խմբակային զինվորագրումներ չկատարվեն և ցույց տրվի, որ Կիպրոսում կազմավորվում էր ոչ թե հայկական, այլ՝ ֆրանսիական կորպուս: Վարչապետը համոզված էր, որ այդ միջուկի ձևավորումից հետո հնարավոր կլինի հայկական տարբեր գաղութներում կամավորագրություն կազմակերպել, քանի որ Արևելքի ժողովուրդները սովոր են ներփակված էթնիկ խմբերում համախմբվել և հաճույքով կմիանային միատարր խմբավորմանը: Նա գտնում էր, որ Արևելքի ժողովուրդներից կամավորական կորպուսներ կազմավորելու նախաձեռնությունը հաջողություն կունենա, եթե դրանք կազմվեն ըստ ազգությունների[1]:

Կարծես թե բոլոր հարցերում ֆրանսիական իշխանությունների ներսում համաձայնություն էր կայացվել, նրանք ձեռք էին բերել նաև բրիտանացիների ու հայերի համաձայնությունը, և լեգեոնի կազմավոր-

[1] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 360:

ման համար ստեղծվել էին լավագույն պայմաններ: Ֆրանսիան շտապում էր հնարավորինս արագ ձևավորել այդ զորամասը, որպեսզի առաջին իսկ հնարավորության դեպքում ուժեր ունենար Կիլիկիայում ափիհանում կատարելու համար:

Հոկտեմբերի 18-ին Լ. Ռոմիոն հեռագրեց ռազմական նախարարին, որ Եգիպտոսի բրիտանական իշխանությունների հետ համաձայնության են եկել 500 մուսալեռցի հայերին զինվորագրելու և Կիպրոսում կենտրոնացնելու, իսկ կանանց ու երեխաներին Պորտ Սայիդում թողնելու շուրջ: Բրիտանացիները միայն սպասում էին այդ հարցի շուրջ կառավարության հրահանգներին[1]: Հոկտեմբերի 19-ին Լոնդոնում ֆրանսիական դեսպան Պ. Կամբոնը տեղեկացրեց Ա. Բրիանին, որ բրիտանական կառավարությունն արդեն նշված խնդրի շուրջ հրահանգներ էր ուղարկել Եգիպտոս[2]: Հոկտեմբերի վերջին Պ. Նուբարը մեկնեց Լոնդոն, որտեղ պետք է վերջնական համաձայնություն կայացվեր Հայկական լեգեոնի կազմավորման պայմանների շուրջ: Ֆրանսիական կառավարության կողմից պետք է բանակցեր Ժորժ Պիկոն, որի առաջարկությամբ էլ բանակցություններն ընթանալու էին Մեծ Բրիտանիայի մայրաքաղաքում: Դրանով Ժ. Պիկոն նաև նպատակ ուներ բանակցությունների ընթացքում հեռու մնալ Ֆրանսիայի արտգործնախարարության միջամտությունից:

Մինչ Պ. Նուբարի ժամանումը Ժ. Պիկոն հանդիպեց լոնդոնաբնակ հայ հասարակական գործիչ Ջեյմս Մալքոլմի հետ: Վերջինս ընդարձակ կապեր ուներ Մեծ Բրիտանիայի կառավարող շրջանակներում, Մարկ Սայքսի մերձավորներից էր, աջակցում էր Պ. Նուբարին Լոնդոնում, իսկ 1917 թ. հունվարից դարձավ Ազգային պատվիրակության անդամ[3]: Ժ. Պիկոն փորձեց Ջ. Մալքոլմից ճշտել թե, որքան կամավորներ կարող են տրամադրել հայերը և հասկացրեց, որ անհրաժեշտ են մեծ թվով հայ զինվորներ: Ֆրանսիացի դիվանագետը տեղեկացրեց, որ ափիհանման նախագիծ կար, սակայն այն հետաձգվում էր զորքերի պակասի պատճառով: Դաշնակիցները հնարավորություն չու-

[1] Նույն տեղում, էջ 366-367:

[2] Նույն տեղում, էջ 367:

[3] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 57, ց. 5, գ. 144:

նեին այլ վայրերից զորք տեղափոխել, և այդ պատճառով էլ անհրաժեշտություն էր առաջացել կամավորներ հավաքել: Որոշվեց հարցն ավելի մանրամասնորեն քննարկել անձամբ Պ. Նուբարի հետ, երբ նա ժամաներ Լոնդոն[1]:

Նախքան Ժ. Պիկոյի հետ հանդիպելը Պ. Նուբարը որոշեց Լոնդոնում տեսակցել բրիտանական կառավարության ներկայացուցիչ Մ. Սայքսի հետ և ճշտել որոշ հարցեր: Հանդիպումը տեղի ունեցավ հոկտեմբերի 24-ին: Ներկա էր նաև Ազգային պատվիրակության անդամ, լոնդոնաբնակ Հարություն Մոստիչյանը: Մ. Սայքսը տեղեկացրեց, որ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև համաձայնագիր էր կնքվել, որով Թուրքիայի ասիական տիրույթները բաժանվելու էին նրանց միջև: Նշեց, որ Վանը, Բիթլիսը, Էրզրումը և Տրապիզոնը համաձայնագրով անցնելու են Ռուսաստանին, իսկ Սիրիան, Կիլիկիան, Սեբաստիան, Դիարբեքիրը, Խարբերդը՝ Ֆրանսիային: Վերջինի հովանու ներքո կարող էր ստեղծվել ինքնավար Հայաստան, որը կներառեր նաև Ալեքսանդրետն ու Այնթապը և կղեկավարվեր որևէ իշխանի կողմից: Մ. Սայքսը նշում էր, որ հայերը պետք է կազմավորեն բանակ, որպեսզի ավելի մեծ իրավունքներ ապահովեն: Նա բացատրեց, որ կարիք չկա Կիպրոսում մեծ թվով կամավորներ կենտրոնացնել, այլ միայն՝ մեկ գումարտակ, իսկ Ֆրանսիայից և Ամերիկայից եկող կամավորները կարող են մարզվել Ֆրանսիայում, քանի որ մեկ տարուց շուտ ափիանում չի կատարվելու: Եթե նույնիսկ Կիլիկիայում ափիանում չկատարվեր, ապա նրա կարծիքով պատերազմից հետո, երբ բանակները զորացրվեին, հայ կամավորները կփոխարինեին օկուպացիոն ուժերին, և հայկական զինուժի ներկայությունը թուրքերին կստիպեր դառնալ ավելի հնազանդ: Նա նշեց, որ Ռուսաստանը ևս կողմ կլինի հայերի համախմբմանը Կիլիկիայում, քանի որ «այնտեղի հայերը պահպանողական են՝ ի տարբերություն հեղափոխականորեն տրամադրված կովկասահայերի»[2]:

Բրիտանացի գործիչը թափանցիկ ակնարկում էր, որ Ֆրանսիայի կողմից ստեղծվող զորամասը պատերազմից հետո կարող էր դառնալ

[1] **Boghos Nubar's Papers**, p. 380:

[2] Նույն տեղում, էջ 382-383:

Կիլիկիայի հայկական ինքնավարության բանակի հիմքը: Ցանկացած ազգ, որ ձգտում էր ինքնավարության կամ անկախության, պետք է պատրաստ լիներ ձևավորելու բանակ և արյուն թափելու ազատության համար: Այսպիսով, ֆրանսիացի և բրիտանացի գործիչները պահանջում էին ստեղծել հայկական զորամաս, որի դիմաց խոստանում էին Ֆրանսիայի հովանու ներքո տրամադրել ինքնավարություն Կիլիկիային և շրջակա հայկական նահանգներին: Նման պայմաններում հայ ազգային գործիչներին չէր մնում այլ ելք, քան ընդառաջել և սերտորեն համագործակցել Ֆրանսիայի հետ:

Հոկտեմբերի 24-ին Պ. Նուբարը հանդիպեց նաև Ժ. Պիկոյի հետ: Վերջինս հայտարարեց, որ պատերազմի գլխավոր նպատակը ճնշված ժողովուրդների ազատագրումն է, որոնց թվին են պատկանում նաև հայերը: Պ. Նուբարը նշեց, որ այդ մտայնության արդյունքում էր, որ նախապես ինքը ձգտում էր միացյալ Հայաստանի ստեղծմանը, սակայն հայերի նկատմամբ Ռուսաստանի քաղաքականության փոփոխության հետևանքով այժմ ձգտում է ինքնավարություն ձեռք բերել Կիլիկիայի համար: Նա հույս հայտնեց, որ Ֆրանսիան պայմաններ կստեղծի հայերի իղձերն իրականություն դարձնելու հայկական վերջին թագավորության տարածքում, և վերջնականապես կլուծի Հայկական հարցը: Ժ. Պիկոն տեղեկացնում էր, որ Կիլիկիային կմիացվեն Սեբաստիան, Դիարբեքիրը և այլ տարածքներ: Պ. Նուբարը հետաքրքրվեց Ալեքսանդրետի ճակատագրով՝ նշելով, որ այն մեծ նշանակություն ունի Հայաստանի համար, քանի որ վերջինս դառնալու էր պատնեշ Օսմանյան կայսրության դեմ և կարիք ունի նման կարևոր նավահանգստի: Ժ. Պիկոն պատասխանեց, որ ինքը կողմ էր Ալեքսանդրետի միացմանը Կիլիկիային և կպաշտպանի այդ տեսակետը: Նաև խոստանում էր, որ Հայաստանում քաղաքացիական պաշտոնները Ֆրանսիան կհանձնի միայն հայերին, բացի նահանգապետից, որը կլինի եվրոպացի: Ապա Ժ. Պիկոն հարցրեց, թե հայերն ինչ զոհողությունների են պատրաստ ինքնավար Հայաստան ստեղծելու համար և ավելացրեց, որ մի քանի հազար կամավորները դրական հասարակական կարծիք կստեղծեն Ֆրանսիայում:

Պ. Նուբարը պարզաբանում է, որ ինքը միշտ կողմ է եղել հայ կամավորների մասնակցությանը պատերազմին, սակայն դա պետք է կա-

տարել որոշ զգուշավորություն պահպանելով, որպեսզի թուրքերը նոր ջարդեր չկազմակերպեն: Ժ. Պիկոն համաձայնեց, որ ջարդերի վտանգն իրական էր և զգուշություններն անհրաժեշտ են: Նշեց, որ սկզբի համար բավարար էր Կիպրոսում կազմավորել մեկ գումարտակ, որի մեջ կընդգրկվեն Պորտ Սայիդի 400 կամավորները և բրիտանացիների կողմից Հնդկաստան տեղափոխված թուրքական բանակի 200 հայ ռազմագերիները: Ժ. Պիկոն հետաքրքրվեց, թե որքան հայ կամավորներ կարող են հավաքագրել Ֆրանսիայում ու Ամերիկայում: Պ. Նուբարն ընդգծեց, որ Ֆրանսիայում հայ կամավորներ կռվում են արդեն երեք տարի, մասնակցել են Մառնի, Վերդենի, Սոմի ճակատամարտերին և արժանացել են բազմաթիվ մեդալների: Այդ մոտ հազար հայերը կամավորագրվել են առանց որևէ կոչի և նրանցից ողջ էին մնացել շուրջ 100-ը: Պ. Նուբարն առաջարկեց, որ ֆրանսիական կառավարությունը հայտարարի Արտասահմանյան լեգեոնում հայ կամավորների գերազանց մասնակցության մասին և սկսի նոր կամավորագրություն: Նա խոստացավ դրանից հետո քայլեր ձեռնարկել կամավորագրությունը խրախուսելու համար, հատկապես, եթե կառավարությունը պատրաստակամություն հայտնի Ֆրանսիայի քաղաքացիություն տալ այդ նոր կամավորներին: Ժ. Պիկոն խոստացավ պաշտպանել վերոնշյալ առաջարկները: Պ. Նուբարը խնդրեց, որպեսզի կամավորագրվեն նաև այն արևմտահայերը, ովքեր գաղթել են Կովկաս, ինչպես նաև այն 4.000-5.000 արևմտահայ ռազմագերիները, որոնք ռուսների կողմից գերվել և ուղարկվել են Սիբիր: Ժ. Պիկոն խոստացավ ուսումնասիրել այդ հարցը և պատասխանել հաջորդ հանդիպման ժամանակ՝ խնդրելով իրեն տրամադրել Ֆրանսիայում կռվող հայ զինվորների ցուցակը[1]: Հոկտեմբերի 26-ին Պ. Նուբարը հանդիպեց լորդ Ջեյմս Բրայսին և խնդրեց աջակցել, որպեսզի Ալեքսանդրետը միացվի Կիլիկիային, այլ ոչ թե Սիրիային: Լորդը խոստացավ իր աջակցությունն այդ հարցում և նշեց, որ ինքնավար Հայաստանի ստեղծումը Ֆրանսիայի հովանու ներքո կբավարարի բոլոր կողմերին: Ջ. Բրայսը պարզաբանեց, որ եթե Ֆրանսիան պահանջում էր կամավորներ հավաքագրել,

[1] **Boghos Nubar's Papers**, p. 384-386.

ապա հայերը չեն կարող մերժել և հնարավոր ամեն ինչ պետք է անեն խնդրին դրական լուծում տալու համար[1]:

Սայքս-Պիկոյի համաձայնագրով Հայաստանի զգալի մասն անցնելու էր Ֆրանսիային, և հայ գործիչները ստիպված էին ընդառաջել հայկական կամավորական բանակ ստեղծելու ֆրանսիական իշխանությունների առաջարկին՝ հուսալով, որ պատերազմից հետո հայերին կտրվի ինքնավարություն: Օգտվելով առիթից՝ Պ. Նուբարը փորձեց ռուսական և բրիտանական համակենտրոնացման ճամբարներից ազատել թուրքական բանակի հայ ռազմագերիներին: Հոկտեմբերի 26-ին Պ. Նուբարը Մ. Սայքսի ուղեկցությամբ հանդիպեց նաև Մեծ Բրիտանիայի արտգործնախարար, դերկոմս Է. Գրեյի հետ: Ազգային պատվիրակության նախագահը նրան ներկայացրեց Ամենայն հայոց կաթողիկոսի կոնդակը, որով ինքը համարվում է Գևորգ Ե-ի միակ ներկայացուցիչը Մեծ Բրիտանիայի կառավարության մոտ: Պ. Նուբարը հույս հայտնեց, որ Մեծ Բրիտանիան և նրա դաշնակիցները կազատագրեն հայերին թուրքական լծից և ինքնավարություն կշնորհեն Կիլիկիայում: Է.Գրեյը խուսափողաբար պատասխանեց, որ մինչև պատերազմի ավարտը որևէ որոշում ընդունելը վաղ էր, սակայն ավելացրեց, որ հայերը կարող են հուսալ, որ իր կառավարությունն ամեն ինչ կանի լուծելու Հայկական հարցը[2]: Ինչպես տեսնում ենք, Պ. Նուբարը բավական մեծ ջանքեր էր գործադրում համոզելու եվրոպական տերությունների կառավարողներին, որպեսզի հայտարարեն կամ խոստանան պատերազմից հետո ինքնավարություն տալ հայերին, բայց, ցավոք, այդ հարցում դրական տեղաշարժեր չկատարվեցին, քանի որ Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան իրենց հետագա ծրագրերում հայ ժողովրդի համար պատրաստում էին միայն նոր հուսախաբություններ: Հոկտեմբերի 27-ին Պ. Նուբարը և Ժ. Պիկոն պետք է վերջնականապես հստակեցնեին լեգեոնի կազմավորման պայմանները: Մինչև նրա մոտ գնալը Պ. Նուբարը Հ. Մոստիչյանի և Ջ. Մալքոլմի ուղեկցությամբ կեսօրին հանդիպեց Մ. Սայքսին՝ վերջինիս առաջարկությամբ:

[1] Նույն տեղում, էջ 387-388:

[2] Նույն տեղում, էջ 389-390:

Բրիտանացի դիվանագետն առաջարկեց Ֆրանսիայից պահանջել հետևյալը. ա) կամավորներին վճարել, բ) երաշխիքներ ստանալ, որ հայ կամավորները չեն կռվի Ֆրանսիայում, այլ կուղարկվեն իրենց նախընտրած ճակատը, գ) պահանջել, որ հայ կամավորները բուժվեն Ամերիկյան Կարմիր խաչի կենտրոններում, քանի որ ֆրանսիացիները լավ չեն բուժում: Մ. Սայքսը նշեց, որ եթե Ֆրանսիան կարողանա ապահովել հայ քաղաքական ուժերի համագործակցությունն, ապա հնարավոր կլինի մինչև 1917 թ. հունիս-հուլիս ամիսները հավաքագրել 30.000 հայ կամավորներ: Մ. Սայքսը պարզաբանեց, որ Ժ. Պիկոն չի մերժի այդ պայմանները, քանի որ Ֆրանսիան մարդուժի կարիք ունի: Մ. Սայքսը պարզաբանեց, որ այդ պայմանները պետք է հաստատել տալ, քանի որ Ֆրանսիան շատ ծանր վիճակում էր և կարող էր հայ կամավորներին ուղարկել ֆրանսիական ռազմաճակատ: Նա ներկայացրեց մի շարք օրինակներ, երբ ֆրանսիացիները խախտել էին դաշնակիցներին տված խոստումները: Պ. Նուբարը տեղեկացրեց, որ Ժ. Պիկոյից պահանջել էր, որպեսզի կառավարության պաշտոնաթերթում հայտարարվի Ֆրանսիայի Արտասահմանյան լեգեոնում հայ կամավորների դրական մասնակցության և նոր կամավորագրության մասին: Մ. Սայքսն առաջարկեց դրա փոխարեն պահանջել, որպեսզի Ազգային ժողովում վարչապետ Ա. Բրիանը հայտարարի, որ պատերազմից հետո Ֆրանսիան բավարարելու էր հայկական պահանջները և դրականորեն արտահայտվի ֆրանսիական բանակի հայ կամավորների մասին[1]:

Պ. Նուբարը, Հ. Մոստիչյանը, Ջ. Մալքոլմը և Մ. Սայքսը միասին մեկնեցին Ժ. Պիկոյի մոտ: Պ. Նուբարը տեղեկացրեց, որ Եգիպտոսում կարող են հավաքագրել ավելի քան 1.000 կամավորների և Կիպրոսում կազմավորել մեկ գումարտակ: Այդ լուրը Ժ. Պիկոյին ուրախացրեց: Քննարկվեց նաև Ամերիկայից ու Ռուսաստանից կամավորներ հավաքագրելու հարցը: Ժ. Պիկոն և Մ. Սայքսը հույս ունեին, որ ռուսական կառավարությունը դրական կվերաբերվի Սիբիր աքսորված թուրքա-

[1] **Boghos Nubar's Papers**, p. 391-392. Նաև՝ **Պեյլերյան Ա.**, Ֆրանսա և Հայկական հարցը Առաջին համաշխարհայինի տարիներուն (1914-1918), «Պատմա-Բանասիրական հանդես», 1990, թիվ 2, էջ 38:

կան բանակի հայ ռազմագերիներին և Կովկասի արևմտահայ գաղթականներին կամավորագրելուն: Նրանց Վլադիվոստոկի և Կանադայի վրայով պետք է տեղափոխեին Ֆրանսիայի հարավ՝ մարզելու համար: ԱՄՆ-ից եկող կամավորներին մարզելու էին Կանադայում, ուր տեղափոխելու էին ֆրանսիական կառավարության միջոցներով:

Պ. Նուբարը հարցրեց Ժ. Պիկոյին, թե արդյո՞ք կամավորագրությունը խրախուսելու համար կարող են հայտարարել, որ կամավորները վճարվելու են, որպեսզի կարողանան հոգալ իրենց ընտանիքների կարիքները: Ժ. Պիկոն փորձեց հարցից խուսափել և նշեց, որ ֆրանսիացի զինվորներն օրական միայն 5 սու են ստանում և կռվում են ոչ փողի համար: Մ. Սայքսը պարզաբանեց, որ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ ամերիկահայերն օրական վաստակում են 2 դոլարից ավելի, և գումարներն անհրաժեշտ են ոչ թե կամավորների անձնական կարիքների, այլ նրանց ընտանիքների ապրուստի համար: Նա մատնանշեց, որ հայերը ֆրանսիացիների նման խնայող են և փողերը կուղարկեն ընտանիքներին: Բացի այդ, գումարները ուղղակիորեն կարող են տրվել նրանց կանանց կամ ընտանիքներին: Ժ. Պիկոն համաձայնեց, որ եթե հարցը դիտեն այդ տեսանկյունից, ապա այն բավական հիմնավոր էր, և խոստացավ ուսումնասիրել ու աջակցել այդ խնդրի լուծմանը, չնայած մտավախություն ուներ, որ լուրջ դժվարությունների կհանդիպի Ֆրանսիայում:

Պ. Նուբարը բարձրացրեց կամավորագրության մասին ֆրանսիական կառավարության հայտարարության հարցը, որը նախորդ հանդիպման ժամանակ խոստացել էր պաշտպանել նաև Ժ. Պիկոն: Պ. Նուբարը նշեց, որ անհրաժեշտ էր կառավարության հայտարարությունը ֆրանսիական բանակում նոր հայ կամավորներ ներգրավելու մասին, այն պատճառաբանությամբ, որ ամբողջովին բավարարված էր հայ կամավորների գործունեությամբ Մառնում, Վերդենում և Սոմում:

Ջ. Մալքոլմը հարցրեց վարչապետ Ա. Բրիանի կողմից Ազգային ժողովում Հայաստանի ապագայի մասին հայտարարություն անելու հնարավորության մասին: Մ. Սայքսը երկրորդեց ու պաշտպանեց այդ խնդիրը և առաջարկեց, որ Ա. Բրիանը հայտարարի, որ պատերազմի հաղթական ավարտից հետո արդարություն կհաստատվի հայերի համար: Սակայն Ժ. Պիկոն հայտնեց, որ նման հայտարարությունը ան-

օգուտ քննարկումների առիթ կդառնա Ազգային Ժողովում և ավելի ճիշտ համարեց, որ վարչապետը հայտարարություն անի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովներից մեկում և մամուլում: Մ. Սայքսը տեղեկացրեց, որ շուտով ինքը նմանատիպ հայտարարությամբ հանդես էր գալու բրիտանական խորհրդարանում: Անդրադառնալով ափիհանման հնարավորությանը՝ Ժ. Պիկոն նշեց, որ ինքը դրան սպասում էր պատերազմի սկզբից ի վեր, և իր կառավարության կողմից հավաստիացում էր ստացել, որ ասիական Թուրքիայում ափիհանման դեպքում ինքն էր գլխավորելու էքսպեդիցիան:

Մ. Սայքսը հայերի ռազմական կարողությունների վերաբերյալ նշեց, որ նրանք աշխարհի լավագույն զինվորներն են, բայց ինչ վերաբերում էր ներքին կազմակերպվածությանը, նրանք դեռ երկար ճանապարհ ունեն անցնելու: Այդ կարծիքը մեղմելու համար Պ. Նուբարը նրանց ուշադրությունը հրավիրեց Ֆրանսիայի հայ կամավորների քաջության վրա, իսկ Հ. Մոստիչյանը ներկայացրեց թուրք գեներալների և անձամբ Էնվերի տեսակետները Բալկանյան պատերազմի ժամանակ հայ զինվորների քաջության մասին, ինչպես նաև նկարագրեց 1909 թ. Ադանայի կոտորածի ժամանակ հայերի ցույց տված համառ ու հաջող դիմադրությունը թուրք ջարդարարներին, երբ վերջիններս ստիպված եղան բրիտանական հյուպատոսի միջնորդությամբ համոզել հայերին զինաթափվել՝ խոստանալով ապահովել նրանց անվտանգությունը և միայն դրանից հետո, դրժելով խոստումը, կարողացան իրականացնել իրենց ոճրագործությունը:

Պ. Նուբարը Ժ. Պիկոյի ուշադրությունը հրավիրեց այն խնդրի վրա, թե որ ճակատում են կռվելու հայ կամավորները: Նշեց, որ փոքր թվով հայեր կկամավորագրվեն, եթե նրանք վստահ չլինեն, որ կռվելու են իրենց դարավոր թշնամու դեմ՝ հայրենի հողն ազատագրելու համար: Ժ. Պիկոն դա բնական համարեց և համաձայնեց, բայց հետագա անճշտություններից խուսափելու համար հարցրեց, թե արդյո՞ք այդ պայմաններին կհակասի, եթե թուրքերին հարվածեն Սիրիայում, Զմյուռնիայում կամ Բալկաններում: Պ. Նուբարը նշեց, որ իրենց նպատակը Հայաստանի ազատագրումն էր, բայց ռազմավարական տեսանկյունից Սիրիայում կամ Փոքր Ասիայում ռազմական գործողություններին մասնակցելուն կողմ արտահայտվեց, իսկ հայ կամավորնե-

րին Բալկաններ ուղարկելու գաղափարը կտրականապես մերժեց: Ժ. Պիկոն ընդունելի համարեց Պ. Նուբարի տեսակետները: Ապա Պ. Նուբարն անդրադարձավ ինքնավարության հարցին: Նշեց, որ կամավորագրությունը խրախուսելու լավագույն միջոցն այն էր, որ իրենք վստահ լինեն, որ պատերազմից հետո Ֆրանսիան իրեն անցած հայկական տարածքներին ինքնավարություն կտա և հայ ժողովրդի համար զարգացման բավարար պայմաններ կստեղծի:

Ժ. Պիկոն ամբողջությամբ իր համաձայնությունը հայտնեց Պ. Նուբարի բարձրացրած խնդրին և թույլ տվեց իր անունից վստահեցնել կամավորներին, որ Կիլիկիային տրվելու էր ինքնավարություն: Պ. Նուբարն իր և հայության անունից շնորհակալություն հայտնեց, քանի որ ի վերջո կարողանալու էին տեսնել ազգային նպատակների իրականացումը՝ շնորհիվ Ֆրանսիայի և նրա դաշնակից Մեծ Բրիտանիայի, նշելով, որ նրանք իսկապես կռվում էին ճնշված ժողովուրդների ազատության համար: Որոշվեց, որ Պ. Նուբարը հեռագիր կուղարկի Եգիպտոսում գտնվող որդուն՝ Ա. Նուբարին՝ շտապեցնելով անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել խրախուսելու կամավորագրությունը: Նա պետք է տեղեկացներ այն հավաստիացման մասին, որ վերջնական հաղթանակից հետո դաշնակիցներն ամբողջությամբ բավարարելու էին հայկական ձգտումները: Հաջորդ օրը Պ. Նուբարը հեռագիրը տրամադրելու էր Ժ. Պիկոյին, որպեսզի ուղարկեր Կահիրեի ֆրանսիական դեսպան Ժ. Դեֆրանսի շիֆրով, իսկ պատճենը Մ. Սայքսին էր տրվելու, որպեսզի ուղարկեր Կահիրեի բրիտանական ներկայացուցչին:

Այսպիսով, երկար քննարկումից հետո նրանք համաձայնության եկան հետևյալ պայմանների շուրջ. 1. Կամավորագրության կոչը պետք է հրապարակեր Ֆրանսիայի կառավարությունը, իսկ Ժ. Պիկոն ապահովելու էր հայտարարություն Ա. Բրիանի կողմից: 2. Ժ. Պիկոն և Մ. Սայքսը անհրաժեշտ քայլեր էին ձեռնարկելու Ռուսաստանի կառավարության մոտ, որպեսզի ապահովեին Սիբիր աքսորված արևմտահայ ռազմագերիների և Կովկասի արևմտահայ գաղթականների կամավորագրությունն ու մեկնումը: 3. Ամերիկայում կամավորների հավաքագրումը կատարվելու էր Կանադայում և Ֆրանսիայի կառավարությունն ապահովելու էր նրանց տեղափոխության ծախսերը: 4. Ժ. Պիկոն պետք է փորձեր ապահովել, որպեսզի հայ կամավորները ստանային

օրական մեկ դոլար իրենց ընտանիքների համար: 5. Կամավորները չէին կռվելու Ֆրանսիայում կամ եվրոպական որևէ ճակատում, այլ միայն ասիական Թուրքիայում՝ կռվելու իրենց դարավոր թշնամու դեմ և ազատագրելու իրենց հայրենիքը: 6. Ֆրանսիան երաշխավորելու էր, որ հաղթանակից հետո ինքնավարություն կշնորհի Կիլիկիային և երեք վիլայեթներին (Սեբաստիա, Խարբերդ, Դիարբեքիր) իր հովանու ներքո: 7. Պ. Նուբարը հեռագիր էր ուղարկելու Եգիպտոս՝ խրախուսելու կամավորագրությունն ըստ որոշված պայմանների: Ժ. Պիկոն և Մ. Սայքսը հաստատեցին իրենց համաձայնությունը բոլոր այդ կետերի վերաբերյալ: Ժ. Պիկոն Պ. Նուբարին զգուշացրեց, որ մինչ իր վերադառնալը Փարիզ, համաձայնությունը գաղտնի մնա՝ նույնիսկ Ֆրանսիայի ԱԳՆ-ից[1]:

Հաջորդ օրը Պ. Նուբարը հետևյալ հեռագիրն ուղարկեց Կահիրե՝ Ա. Նուբարին. «Կը հաստատեմ կամաւորներու հարցին առնչութեամբ հոկտեմբեր 6 թուակիր նամակս, որմէ յետոյ ստացած եմ պաշտոնական երաշխաւորութիւն թէ Դաշնակիցներու յաղթանակէն յետոյ մեր ազգային բաղձանքները գոհացում պիտի գտնեն, պարտականութիւն կը դնեմ վրադ ձեռք առնելու միջոցներ, քաջալերելու եւ դիւրացնելու համար արձանագրութիւնը առաւելագոյն թիւով կամաւորներու, վերոյիշեալ նամակիս մէջ թելադրուած զգուշաւոր կերպերով եւ անհրաժեշտ նկատուած ուրիշ նախազգուշութիւններով: Նուպար»[2]:

Այդ հեռագրից հետո Եգիպտոսում մեծ խանդավառությամբ սկսվեց կամավորագրությունը: Իսկ մայոր Լ. Ռոմիոն[3] իր հերթին նոյեմբերին եգիպտահայերին տեղեկացրեց Լոնդոնի համաձայնության մասին և կարդաց Ա. Բրիանի նամակը: Վարչապետը հայտնում էր, թե ամբողջովին համաձայն էր Պ. Նուբարի պայմաններին: Միաժամանակ Լ. Ռոմիոն հավաստիացրեց, որ լեգեոնի նպատակը Կիլիկիայի ազատագրումը և հայերի համար ազգային իրավունքներ ապահովելն էր,

[1] **Boghos Nubar's Papers**, p. 393-397:

[2] Հայկական լեգեոնը պատմական, իրավական ու քաղաքական հարցերու լոյսին տակ և վավերագրեր, Հայկազեան հայագիտական հանդես, Բեյրութ, 1974, էջ 71: **Պօյաճեան S.,** նշվ. աշխ., էջ 8-9:

[3] Լ. Ռոմիոն Հայկական լեգեոնի հրամանատարն էր կազմավորումից մինչև 1919 թ. մայիսը: Նրան փոխարինել է գնդապետ Ֆլի-Սեյնթ Մարին:

իսկ հայ կամավորները կռվելու են միայն Կիլիկիայում և դառնալու են հայկական բանակի հիմքը[1]: Դա առավել ոգևորեց հայերին:

Հոկտեմբերի 14-ին սենատոր Լուի Մարտենին ուղարկած նամակում Ֆրանսիայի վարչապետ Ա. Բրիանն ամենախիստ կերպով խարազանում էր երիտթուրքերի իրականացրած հայկական ջարդերը, իսկ վերջում նշում էր. «Երբ հնչի օրինական հատուցումների ժամը, նա (Ֆրանսիան-Ս.Պ.) մոռացության չի տա հայ ժողովրդի վշտալից փորձությունները և իր դաշնակիցների համաձայնությամբ անհրաժեշտ միջոցներ կձեռնարկի հանուն այն բանի, որ նրա համար երաշխավորի առաջադիմություն ապահովող խաղաղ կյանք»[2]: Այդ նամակը նոյեմբերի 8-ին տպագրվել է Փարիզի «Թան» պարբերականում և մեծ խանդավառություն առաջ բերել հայերի շրջանում: Հետագայում՝ 1920 թ. սեպտեմբերին, Ֆրանսիայի վարչապետ Ժորժ Լեյգը հայտարարեց, որ իր երկիրը ոչ մի պարտավորություն չի ստանձնել հայերի հանդեպ և որևէ համաձայնագիր գոյություն չունի[3]: Երբ Պ. Նուբարը ներկայացրել էր Ժ. Պիկոյի հետ համաձայնությունը, Ֆրանսիայի ԱԳՆ-ը պատասխանել էր, որ վերջինս դուրս էր եկել իր իրավասությունների շրջանակից[4]: Այսպիսով, միայն նամակներում կատարված հավաստիացումներն իրականում բավարար չէին:

1916 թ. հոկտեմբերի 31-ին Լոնդոնում Պ. Նուբարը ճաշի էր հրավիրվել Մ. Սայքսի տանը: Ներկա էր Կ. Պոլսի բրիտանական դեսպանատան նախկին առաջին թարգման Ջերալդ Ֆիցմորիսը: Զրույցի ժամանակ Մ. Սայքսը սխալ համարեց ռազմական գործողությունները Դարդանելում և Սալոնիկում: «Որպեսզի պարտության մատնեն թուրքերին և ծանր հարված հասցնեն գերմանացիներին, անհրաժեշտ է զորքեր ափհանել Ալեքսանդրետում: Դա կկտրի նրանց երկաթուղային հաղորդակցության համակարգը, և նրանք շուտով պարտության կմատնվեն ռուսների օգնությամբ, որոնք գալիս են արևելքից»[5],-

[1] **Յուշամատեան Մեծ Եղեռնի 1915-1965**, Պէյրութ, 1965, էջ 964-965:

[2] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, h. I, էջ 364:

[3] **Նուբարյան մատենադարան**, ֆոնդ Legion d'Orient-volontairs armenienne, թղթապանակ Legion d'Orient (Legion armenienne), թերթ 0058:

[4] **Եափուճեան Ա.,** նշվ. աշխ., էջ 144-145:

[5] **Boghos Nubar's Papers**, p. 403:

գտնում էր Մ. Սայքսը: Ցավոք, Անտանտի երկրները պատերազմի ընթացքում, ինչպես տեսանք, բազմիցս քննարկել են Ալեքսանդրետում կամ Կիլիկիայի այլ շրջանում ափհանում կատարելու խնդիրը, սակայն դա այդպես էլ մնացել է միայն թղթե նախագիծ:

1916 թ. նոյեմբերի 15-ին Ֆրանսիայի ռազմական նախարարի թիվ 7549-9/11 հրամանագրով Կիպրոսում կազմավորվելու էր Արևելյան լեգեոնը[1]: Այն համալրվելու էր օսմանյան հպատակություն ունեցող կամավորներով: Վերջիններս պատերազմի ամբողջ ընթացքում ֆրանսիական դրոշների ներքո՝ իբրև օժանդակ ուժեր, ծառայելու էին ասիական Թուրքիայում: Լ.Ռոմիոն նշանակվում էր լեգեոնի առաջին հրամանատար: Հայկական և սիրիական կոմիտեների միջոցով Ամերիկայում զինվորագրվածները գրանցվելու էին Բորդոյում և Մարսելում: Զինվորագրման կոմիտեներին վճարելու էին Ամերիկայից Ֆրանսիա եկած այն անձանց ճանապարհածախսերը, որոնց զինվորագրմանը հավանություն կտրվեր:

Արևելյան լեգեոնի կանոնադրությունը նախարար Պ. Ռոքը հաստատեց նոյեմբերի 26-ի թիվ 7966-9/11 հրամանագրով[2]: Ըստ դրա՝ լեգեոնը գտնվելու է ֆրանսիական կառավարության դրամական հոգածության ներքո: Այդուհանդերձ, քանի որ լեգեոնականները լինելու էին օժանդակ զինվորականներ՝ չէին ընդգրկվելու ֆրանսիական բանակում, իրավունք չէին ունենալու վերքերի, հիվանդության կամ պատահարի հետևանքով ծառայությանը ոչ պիտանի դառնալու դեպքում հավակնելու ծերության կամ որևէ այլ թոշակի, կամ ծառայությունից ազատ արձակման հետ կապված պարգևատրման: Արևելյան լեգեոնի հրամանատարական կազմը համալրվելու էր ֆրանսիական սպաներով և ենթասպաներով կամ արտասահմանցու կարգավիճակ ունեցող ծառայողներով, որոնց տեղակալներ կարող էին նշանակվել լեգեոնականներից ներգրավված օժանդակ հրամանատարական կադրերը: Այն նախատեսված էր ասիական Թուրքիայում հնարավոր գործողությունների համար և դրվելու էր Սիրիայի ռազմածովային դիվիզիայի հրա-

[1] **Գարամանուկեան Ա.,** նշվ. աշխ., էջ 42: Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 381-382:

[2] **Գարամանուկեան Ա.,** նշվ. աշխ., էջ 46: Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 383-389:

մանատարի ենթակայության տակ: Հայ, սիրիացի կամ արաբ ենթասպաները, որոնք ծառայում էին Արտասահմանյան լեգեոնում, կարող էին իբրև իրենց կորպուսից գործուղվածներ ընդունվել Արևելյան լեգեոն:

Լեգեոնի կազմավորման և կամավորագրության պայմանները Ֆրանսիայի արտգործնախարարության կողմից հրապարակվեցին դեկտեմբերի 5-ին[1]: Կամավորների արձանագրությունը կատարվելու էր հետևյալ պայմաններով.

1. Արևելյան լեգեոնին կամավորագրվելու էին օսմանահպատակ հայերն ու սիրիացիները, որոնք առանձին խմբերի մեջ էին դասավորվելու ըստ ցեղի և կրոնի:

2. Լեգեոնի ծախսերը հոգալու էր Ֆրանսիան, սակայն լեգեոնականներն օժանդակ զինվորներ էին լինելու և մաս չէին կազմելու ֆրանսիական բանակին, իսկ վիրավորվելու դեպքում հատուցում կամ թոշակ չէին ստանալու:

3. Լեգեոնը հաստատվելու էր Կիպրոսում և ղեկավարվելու էր ֆրանսիացի սպաների կողմից:

4. Լեգեոնը նախատեսված էր օգտագործել Ասիական Թուրքիայում և դրվում էր Սիրիայի Նավային զորաբաժնի ծովակալի հրամանատարության տակ:

5. Արձանագրության համար կամավորները պետք է ներկայանային Մարսելի կամ Բորդոյի գրասենյակները, իսկ Ֆրանսիայում բնակվողները՝ Փարիզի կենտրոնական գրասենյակ: Արևելքից եկողները պետք է արձանագրվեին Պորտ Սայիդի ֆրանսիական հյուպատոսարանում կամ Կիպրոսում՝ լեգեոնի հրամանատարի գրասենյակում:

6. Հայկական և սիրիական կոմիտեները ստանձնելու էին կամավորներ հավաքելու գործը՝ առանց ֆրանսիական դիվանագետների միջամտության: Անհրաժեշտ էր քարոզչությունը կատարել ամենածայրահեղ զգուշությամբ և առանց հրապարակային որևէ արտահայտության, որպեսզի խուսափեին թուրքերի ուշադրությունից և վրեժխնդրական արարքներից՝ ընդդեմ հայերի ու սիրիացիների:

[1] **Պոյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 9-15:

7. Կամավորների ճանապարհածախսը հոգալու էին հայկական ու սիրիական կոմիտեները, իսկ Ֆրանսիան պարտավորվում էր, եթե կոմիտեները պահանջեին, վերադարձնել կամավորների երրորդ և չորրորդ կարգի ճանապարհածախսերը:

8. Արձանագրության օրից կամավորի բոլոր ծախսերը հոգալու էր պետությունը:

9. Կամավորները ընդունվելու էին պատերազմի ողջ տևողության համար:

Պետք է նշել, որ լեգեոնի կազմավորման պայմաններից Լ. Ռոմիոն և Ժ. Դեֆրանսը դժգոհ մնացին: Առաջինը դիմեց ռազմական նախարարին, իսկ դեսպանը՝ Ա. Բրիանին, որպեսզի լեգեոնականների աշխատավարձերը բարձրացվեին, քանի որ 2 ֆրանկը հաշվարկված էր խաղաղ ժամանակների համար, իսկ դրամի կուրսի անկումից հետո դա անբավարար էր: Սխալ էին համարում, որ լեգեոնականներն «իրավունք չեն ունենալու վերքերի, հիվանդության կամ պատահարի հետևանքով ծառայությանը ոչ պիտանի դառնալու դեպքում հավակնելու ծերության կամ որևէ այլ թոշակի կամ ծառայությունից ազատ արձակման հետ կապված պարգևատրման», իսկ նրանց կարիքավոր ընտանիքները չեն ունենա նպաստ ստանալու իրավունք: Նշում էին, որ բրիտանացիները կամավորներ կամ նույնիսկ բանվորներ հավաքագրելիս ավելի լավ պայմաններ էին առաջարկում[1]: Սակայն այդ առաջարկները հաշվի չառնվեցին:

Դեկտեմբերի 5-ին Ժ. Գուն այդ պայմանները ներկայացրեց Պ. Նուբարին, որոնք լուրջ անակնկալ էին Ազգային պատվիրակության նախագահի համար: Այդ պայմանների դեմ Պ. Նուբարը բողոքեց, քանի որ դրանով ոտնահարվում էին այն հիմնական սկզբունքները, որոնք ձեռք էին բերվել Ժ. Պիկոյի հետ բանակցությունների ժամանակ: Ըստ Լոնդոնի պայմանավորվածության՝ կամավորագրության կոչը լինելու էր Ֆրանսիայի կողմից, իսկ հայկական կոմիտեները աջակցելու էին ոչ բացահայտ: Սակայն արտգործնախարարության պայմաններով կամավորագրությունը իրականացնելու էին հայկական կոմիտեները՝ առանց ֆրանսիական դիվանագետների աջակցության: Պ. Նու-

[1] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 401:

բարը նշեց, որ հայերի կողմից կամավորների հավաքագրումը վտանգի տակ կդնի Միջագետքի հայ գաղթականների կյանքը:

Ժ. Գուն պատճառաբանեց, որ 1915 թ. օգոստոսի 16-ի օրենքով ֆրանսիական կառավարությունը չի կարող ֆրանսիական բանակ զինվորագրել Ֆրանսիայի դեմ կռվող կամ նրանց դաշնակից երկրների քաղաքացիների, և դա էր միակ պատճառը, որ կամավորագրությունը խրախուսելու էին հայկական կոմիտեները: Պ. Նուբարը նշեց, որ դրանով փոխվում էր Լոնդոնում ձեռք բերված պայմանների հիմքը: Նա մտավախություն հայտնեց Թուրքիայում մնացած հայերի ճակատագրի վերաբերյալ և առաջարկեց այլ լուծում գտնել:

Պ. Նուբարը հիշեցրեց, որ ինքը պահանջել էր, որ ֆրանսիական կառավարությունը հայտարարի պատերազմից հետո հայերին ինքնավարություն տալու մասին: Ֆրանսիացի պաշտոնյան պատասխանեց, որ հայերը կարող են հուսալ հանրապետական կառավարության բացարձակ բարի կամքի վրա և ամենաքիչը, որ կարող են հուսալ՝ Ֆրանսիայի քաղաքացիներ դառնալն էր: Պ. Նուբարը պատասխանեց, որ դա այլ բան էր, քան իրեն խոստացել են Լոնդոնում: Այդ պահին Ժ. Գուին կանչեցին Ա. Բրիանի մոտ և խոսակցությունը կիսատ մնաց: Ժ. Գուն նշեց, որ այդ հարցերը կքննարկեն հաջորդ հանդիպման ընթացքում և սպառնաց, որ համաձայնության չգալու դեպքում Ֆրանսիան կգործի առանց հայերի կարծիքը հարցնելու[1]: Այսպիսով, Ֆրանսիան, դեռ լեգեոնը չկազմավորած, սկսել էր խախտել իր պայմանավորվածությունները, ինչպես նաև փորձում էր սպառնալիքների միջոցով առաջ տանել իր քաղաքականությունը՝ լավ հասկանալով, որ հայ գործիչներն այլընտրանք չունեն: Դեկտեմբերի 12-ին Պ. Նուբարը Հովհաննես խան Մասեհյանի ընկերակցությամբ կրկին հանդիպեց Ժ. Գուին: Պ. Նուբարը տեղեկացրեց հայ կամավորների վերաբերյալ եղած բանակցությունների ընթացքի մասին, հայտնեց, որ Ժ. Պիկոն և Մ. Սայքսը իրեն երաշխավորել են, որ հաղթանակից հետո հայերը Ֆրանսիայի հովանու ներքո ինքնավարություն կստանան: Ժ. Գուն վստահեցրեց, որ Հայաստանի այն հատվածը, որն անցնելու էր Ֆրանսիային, կստանա ինքնավարություն: Նաև որոշվեց Պ. Նուբարի կողմից նամակ ուղար-

[1] **Boghos Nubar's Papers**, p. 411-414:

կել ռուսական Դումայի հայ պատգամավոր Միքայել Պապաջանյանին, որպեսզի քայլեր ձեռնարկեն Կովկասի հայ կամավորներին Ֆրանսիա ուղարկելու համար[1]:

Ֆրանսիացի պաշտոնյաներն անձնական հանդիպումներում ինքնավարության մասին խոստումներ էին շռայլում, և դրանով սիրաշահում էին հայ ազգային գործիչներին, որոնք ստիպված էին բավարարվել եղածով: Հայ գործիչները միամիտ հույսեր էին տածում, որ մեծ տերությունները պատրաստ են հետևել այն խոստումներին, որոնք տրվել են բանավոր: Այդ տերությունները, նույնիսկ պատերազմի ամենաթեժ տարիներին, միմյանց միջև ստորագրած գաղտնի պայմանագրերը հաճախ փորձում էին ի չիք դարձնել: Բնականաբար, փոքր ազգերին տրված խոստումներից, որոնք կարող էին նույնիսկ ստորագրված համաձայնագրի տեսք ունենալ, հեշտությամբ կարող էին հրաժարվել:

Դեկտեմբերի 14-ին Պ. Նուբարը Ժ. Գուին ցույց տվեց Մ. Պապաջանյանին ուղարկվելիք նամակը: Ֆրանսիացին սկզբից մինչև վերջ ընթերցեց այն և իր համաձայնությունը հայտնեց բոլոր կետերի վերաբերյալ[2]: Մ. Պապաջանյանին ուղարկած նամակում Պ. Նուբարը տեղեկացնում էր, որ Ֆրանսիան որոշել էր կազմել Արևելյան լեգեոն հայ և սիրիացի կամավորներից, իսկ ինքը որոշել էր խրախուսել այդ քայլերը, առանց մոռացության մատնելու զգուշությունները, որպեսզի չվտանգվի Թուրքիայում մնացած հայերի ճակատագիրը: Նա խնդրում էր Մ. Պապաջանյանի և Հայոց ազգային բյուրոյի աջակցությունը, որպեսզի ռուսական կառավարության կողմից լուծարված հայ կամավորական գնդերի զինվորները մեկնեն Ֆրանսիա և անդամակցեն Արևելյան լեգեոնին: Նա զգուշացնում էր, որ դա խիստ գաղտնի պահվի և լուրը մամուլում չհայտնվի: Պ. Նուբարը գրում էր, որ Ֆրանսիայի կառավարությունից պաշտոնական հավաստիացումներ էր ստացել, որ հաղթանակից հետո հայերի ազգային ձգտումները լիակատար բավարարություն կստանան Ֆրանսիային անցնելիք հայկական տարածքներում[3]: «Մենք կարող ենք հուսալ,- գրում էր Պ. Նուբարը,- որ Ֆրան-

[1] Նույն տեղում, էջ 415-418:

[2] Նույն տեղում, էջ 419:

[3] **Լևո,** Անցյալից (Հուշեր, թղթեր, դատումներ), Թիֆլիս, 1925, էջ 347-350:

սիայի հովանավորության տակ տրված տեղական լայն ինքնավարության շնորհումով այնտեղ կիրագործվեն մեր բաղձանքները: Որոշված է, որ Ֆրանսիան, մնալով հավատարիմ ազատության սկզբունքներին և մեծահոգի ավանդություններին, ճնշված հայերին ազատելուց հետո հնարավորություն կը տա նրանց վերականգնելու իրանց ազգային դեմքը և գրավելու այն դիրքը, որ պատկանում է նրանց քաղաքակիրթ աշխարհում շնորհիվ իրանց անցյալի և ունակությունների»[1]:

Դեկտեմբերի 17-ին Ա. Բրիանը Պետրոգրադում ֆրանսիական դեսպան Մ. Պալեոլոգին ուղարկած գաղտնի նամակով, որին կից ուղարկել էր նաև Պ. Նուբարի նամակը, որպեսզի փոխանցվեր Մ. Պապաջանյանին, տեղեկացնում էր Արևելյան լեգեոնի կազմավորման մասին: Դեսպանից պահանջվում էր այդ մասին տեղյակ պահել ռուսական կառավարությանը և ստանալ թույլտվություն Ռուսաստանի տարածքում նույնպես կամավորագրություն անցկացնելու, ինչպես նաև ռուսների կողմից գերված թուրքական բանակի հայ ռազմագերիներին լեգեոնում ընդգրկելու հնարավորություն տալու մասին[2]:

Արևմտահայ փախստականների հանձնաժողովի հաշվարկներով 1916 թ. դեկտեմբերին Սիբիրում կային 2.000 հայ ռազմագերիներ[3]: Չնայած դեռևս 1914 թ. նոյեմբերից կաթողիկոսը, Մ. Պապաջանյանը և այլ գործիչներ բազմիցս դիմել էին կայսերը ու ռուսական իշխանություններին՝ հայ ռազմագերիներին ազատ արձակելու կամ բարելավելու նրանց վիճակը, սակայն դրանք արդյունք չէին տվել: Նրանց մեծագույն մասը գտնվում էր ծայրահեղ ծանր վիճակում[4]: Մ. Պապաջանյանին ուղարկած Պ. Նուբարի նամակը 1917 թ. սկզբներին քննարկվել է Ազգային բյուրոյում և գրեթե միաձայն մերժվել՝ հաշվի առնելով Կովկասի հայ կամավորական գնդերի դառը փորձը, որոնք նոր էին ցրվել[5]:

Պատերազմի սկզբում, երբ ռուսների համար բավական ծանր վիճակ էր ստեղծվել Կովկասում, փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովի նախաձեռնությամբ կազմավորվել էին այդ գնդերը: Հայերը հույս ունեին,

[1] Նույն տեղում, էջ 350:

[2] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 406-407:

[3] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 57, ց. 5, գ. 90, թ. 47:

[4] Նույն տեղում, թ. 1-53:

[5] **Լևո,** նշվ. աշխ., էջ 351:

որ թափած արյան դիմաց ձեռք էին բերելու ինքնավարություն: Սակայն 1915 թ. առաջին կեսին թուրքերի դեմ տարած հաղթանակներից ու Արևմտյան Հայաստանի մի մասին գրավումից հետո Ռուսաստանն ինքնավարության հովերով տարված հայ կամավորների կարիքն այլևս չուներ: Ի վերջո, 1915 թ. դեկտեմբերին ռուսական հրամանատարությունը որոշում էր ընդունել ցրել հայ կամավորական գնդերը[1]:

Այսպիսով, հաշվի առնելով դառը փորձը՝ արևելահայ գործիչները դեմ էին Ֆրանսիայի խոստումներին հավատալու և նրա դրոշի ներքո կռվող հայկական նոր կամավորական բանակ կազմավորելու գաղափարին: Սակայն պետք է արձանագրել, որ հայկական լեգեոնի ստեղծումը արդարացված և ճիշտ քայլ էր: Դա հնարավորություն էր տալու պատերազմից հետո ճանաչվել Անտանտին դաշնակից պատերազմող կողմ, ինքնավարություն պահանջել Կիլիկիայում: Լեգեոնն անուրանալի դերակատարություն ունեցավ Լիբանանում, Սիրիայում ծանր պայմաններում հայտնված հայ տարագիրներին աջակցելու հարցում, իսկ ավելի ուշ՝ Կիլիկիայում քեմալականների դեմ ինքնապաշտպանություններում: Հետագայում հայության ձգտումների իրականություն չդառնալը պայմանավորված էր տարբեր հանգամանքներով: 1916 թ. դեկտեմբերի 28-ին Պ. Նուբարը Փարիզում հանդիպեց Ժ. Պիկոյին: Վերջինս նշեց, որ տվյալ պահին Հայկական հարցի համար ավելին անել հնարավոր չէ, իսկ հայ կամավորների կարիքն ավելի էր զգացվում, քան Լոնդոնի բանակցությունների ընթացքում: Ժ. Պիկոն նշեց, որ Եգիպտոսում կամավորագրությունը մեծ արդյունքներ չէր տվել և միայն 300 կամավորներ կային: Պ. Նուբարը տեղեկացրեց, որ այդ թվի մեջ չեն հաշվել Պորտ Սայիդի 600 մուսալեռցի կամավորներին: Ժ. Պիկոն խնդրեց, որ Պ. Նուբարը տրամադրի Արտասահմանյան լեգեոնի այն հայ զինվորների անունները, ում մտադիր էին ուղարկել Կիպրոս՝ միանալու Արևելյան լեգեոնին: Պ. Նուբարն իր դժգոհությունը հայտնեց, որ Ժ. Գուն հանդիպումների ընթացքում միայն հայերի հանդեպ Ֆրանսիայի դրական տրամադրվածությունն էր հայտնում և խուսափում ինքնավարության հարցից: Պ. Նուբարը շեշտեց, որ հայերն անկայուն

[1] **Անանուն Դ.,** Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. 3 (1901-1918), Վենետիկ, 1926, էջ 552-554:

խոստումներով չեն բավարարվի, և կամավորագրությունը խրախուսելու համար անհրաժեշտ էր ինքնավարություն խոստանալ: Պ. Նուբարը հիշեցրեց նաև, որ Ժ. Պիկոն խոստացել էր պաշտպանել Ալեքսանդրետի միացումը Հայաստանին և ոչ թե Սիրիային: Ինչպես նաև տեղեկացրեց, որ այդ հարցով զրուցել էր որոշ սենատորների հետ և ստացել դրական պատասխան: Ֆրանսիացի դիվանագետը վստահեցրեց, որ Ալեքսանդրետն անպատճառ կմիացվի Հայաստանին և առաջարկեց, որ Պ. Նուբարը հնարավորության սահմաններում պահանջի միասնական Հայաստանի ստեղծում Ֆրանսիայի հովանու ներքո, այդ թվում՝ Ռուսաստանին անցնելիք վիլայեթների միացումով[1]:

Այսպիսով՝ դերերը փոխվել էին, և այժմ Ֆրանսիան էր հայերին դրդում պահանջելու միացյալ Հայաստան, անշուշտ, իր հովանու ներքո: Իսկ Ազգային պատվիրակության նախագահը ստիպված էր համակերպվել և բավարարվել միայն խոստումներով, քանի որ ավելին պահանջելու համար ազդեցիկ լծակներ չկային: Մեծ տերությունները, եթե պատերազմի թեժ պահին փորձում էին միմյանց ձեռքից խլել հայկական տարածքները՝ չհարգելով իրենց իսկ ստորագրություններով վավերացված գաղտնի ու հայտնի համաձայնագրերը, ապա բնական էր, որ պատերազմից հետո խաբելու էին նաև հույսն ամբողջությամբ Անտանտի վրա դրած հայ ժողովրդին:

Արևելյան լեգեոնի հայկական գումարտակների կազմավորումը:

Մեծ Բրիտանիայի և Պ. Նուբարի հետ քաղաքական բանավոր համաձայնություն կայացնելուց անմիջապես հետո Ֆրանսիան ակտիվորեն ձեռնամուխ եղավ լեգեոնի կազմավորման աշխատանքներին:

Գումարտակի հրամանատար Լ. Ռոմիոյի խորհրդական նշանակվեց հայազգի ծովային սպա Տ. Թեքեյանը[2]: Վերջինս մասնակցել էր մուսալեռցիների տարհանմանը, ռազմական մարզումներին և Միջերկրականի կղզիներում կամավորների պարեկային ու դիվերսիոն գործողություններին: Լ. Ռոմիոն բավական կշռադատված ու ակտիվ գործու-

[1] **Boghos Nubar's Papers**, p. 422-424:

[2] **Թեքեյան Շառլ-Տիրան**, Մուսա լեռան հայերի փրկությունը: Հիշողության էջեր, Երևան, 2002, էջ 52:

նեություն ծավալեց: Նա կարողացավ ոչ միայն հայերին համախմբել իր շուրջը, այլ նաև բրիտանացիների հետ սերտ համագործակցություն հաստատել, համաձայնություն կայացնել Կիպրոսում հայկական զորամասի տեղակայման վայրի ու պայմանների շուրջ:

1916 թ. նոյեմբերի 7-ին Կիպրոսի բրիտանական գերագույն կոմիսար Ջոն Քլոսոնը տեղեկացրեց Սիրիայի ռազմածովային դիվիզիոնի հրամանատար Հենրի դը Սպիտզին, որ Լ. Ռոմիոյի հետ Ֆամագուստայի ծոցից հյուսիս, Մոնարկա նավահանգստի մոտ ընտրել են հայկական կորպուսի տեղակայման վայրը[1]: Այսպիսով, Հայկական լեգեոնը տեղակայվելու էր Կիպրոսի արևելյան հատվածում, Ֆամագուստայից 24 կմ հյուսիս: Այդ վայրը բավական մոտ էր Կիլիկիայի ծովեզերքին, և անհրաժեշտության դեպքում հնարավոր կլիներ արագորեն զորամասը տեղափոխել այդ հայկական երկրամաս:

Կիպրոսից Լ. Ռոմիոն վերադարձավ Եգիպտոս, ուր մեծ աջակցության հանդիպեց հայկական հասարակական-քաղաքական բոլոր հոսանքների կողմից: Ի տարբերություն հայերի՝ կամավորագրվել ցանկացող սիրիացիների թիվը փոքր էր[2]: Լ. Ռոմիոն Եգիպտոսում հանդիպում է Առաքել Նուբարին և Լևոն Մկրտիչյանին, որոնք ներկայացնում էին Հայկական բարեգործական ընդհանուր միության և ռամկավարների տեսակետները: Նրանք խոստանում են ամեն կերպ աջակցել կամավորագրությանը, սակայն առաջարկում են, որ ամեն ինչ կատարվի զգուշորեն և խիստ գաղտնի: Նույն կարծիքին էր նաև Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանը: Լ. Ռոմիոն ավելի շատ հավանել էր դաշնակցականների տեսակետը: ՀՅԴ Եգիպտոսի կոմիտեի ղեկավար Հակոբ Նևրուզը, առանց տեղյակ լինելու Լ. Ռոմիոյի առաքելության մասին, գնացել էր Ժ. Դեֆրանսի մոտ և առաջարկել հայ կամավորներ հավաքագրել, որոնք պետք է կռվեին ֆրանսիացիների հետ կողք կողքի: Դեսպանը նրան ուղարկել էր Լ. Ռոմիոյի մոտ: Հ. Նևրուզը կանխատեսում էր, որ միայն Ամերիկայում կարող են կամավորագրել 10.000 հայերի, իսկ Եգիպտոսում՝ 1.000: Նա վստահ էր, որ թուրքերը, պատերազմում հաղթանակի հասնելով,

[1] **Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը**, հ. I, էջ 369:

[2] Նույն տեղում:

կկոտորեին հայ տարագիրների մնացորդներին և իրենց ոճիրն ավարտին չէին հասցնում միայն վախենալով, որ կարող են պարտվել պատերազմում և պատասխանատվության ենթարկվել: Լ. Ռոմիոն հավատում էր, որ Ամերիկայում ընդամենը երկու ամսում ամենաքիչը 1.500 հայեր կարող են կամավորագրել: Ֆրանսիացի սպային զարմացրել ու ոգևորել էր բոլոր հոսանքներին պատկանող հայերի՝ վճռականությամբ, համախմբվածությամբ ու միասնաբար գործելու ցանկությունը[1]:

Պետք է նշել, որ լեգեոնի հրամանատարը բավական մեծ եռանդով լծվեց հայերից ու սիրիացիներից զորամաս կազմավորելու բարդ և պատասխանատու գործին: Նոյեմբերի 30-ին, ժամը 16-ին «Մարոկկո» նավով Ժերպհանիոնի գլխավորությամբ լեգեոնի առաջին ստորաբաժանումը՝ 54 մուսալեռցիներ մեկնեցին Կիպրոս: Այս խմբում ընդգրկված էին որմնադիրներ, ատաղձագործներ, հյուսներ, որպեսզի կառուցեին ճամբարը: Մեկ ամսվա համար անհրաժեշտ սնունդ, գույք և գործիքներ տրամադրեցին Պորտ Սայիդի և Իսմայիլիայի բրիտանական ապրանքային պահեստները: Լ. Ռոմիոյի սերտ համագործակցությունը բրիտանական իշխանությունների հետ օգտակար եղավ լեգե-ոնի և Պորտ Սայիդի ճամբարի հետ կապված բազմաթիվ հարցեր լուծելու համար: Նրա ջանքերով բրիտանական ռազմական իշխանություններն ուշադրություն դարձրին Պորտ Սայիդի ճամբարի կառավարման մեջ թերացումներ ու հայերի նկատմամբ ոչ բարեհաճ վերաբերմունք ցույց տված բրիտանական պաշտոնյաներին, որոնք գլխավորապես Սիրիայի հրեաներ էին[2]:

Մինչև զորանոցների կառուցումը, կամավորների առաջին խումբը տեղավորվեց բրիտանացիների տրամադրած 6 կոնաձև վրաններում: Մոնարկայում գտնվող միակ կացարանը այգեպանի տնակ էր, որը Կիպրոսի անտառների վարչությունը հատկացրեց լեգեոնի հրամանատարական կազմին: Առաջին խմբի ղեկավարությունն իրականացնում էր երրորդ կարգի թարգմանիչ սպա Ժերպհանիոնը: Առաջին խումբը Կիպրոս ժամանելու պահին իր տրամադրության տակ ուներ միայն 3

[1] Նույն տեղում, էջ 372-376:

[2] Նույն տեղում, էջ 408, 412:

հրացան, որը նրանց էր հատկացրել «Ժյուլ Ֆերրի» նավը: Դեկտեմբերի 3-ին Լ. Ռոմիոն Պորտ Սայիդից ուղարկեց 600 հրացան[1]:

Փաստորեն, երկու վաշտ կազմավորելու համար անհրաժեշտ զենք ու զինամթերք Կիպրոս տեղափոխվեց կամավորների առաջին խմբի մեկնելուց արդեն երեք օր անց: Բրիտանացիների կողմից այլևս ոչ միայն խոչընդոտներ չէին հարուցվում, այլ նույնիսկ բավական լուրջ աջակցություն էր տրամադրվում: Դա պայմանավորված էր և՛ Լ. Ռոմիոյի համագործակցություն հաստատելու կարողության, և՛ այն հանգամանքի հետ, որ նրանք արդեն վերջնականապես հրաժարվել էին հայերին ծառայության վերցնելու մտքից: Լ. Ռոմիոն հիացած էր հայերի կարգապահությունից ու վստահելիությունից: Չնայած միայն մեկ սպա էր գտնվում մուսալեռցիների առաջին խմբի մոտ, սակայն նա մեծ հեղինակություն էր վայելում և տիրում էր կատարյալ կարգապահություն: Լ. Ռոմիոն համոզված էր, որ իրեն անհրաժեշտ են Ժերպհանիոնի նման ջանասեր ու հաստատակամ սպաներ, իսկ կոպիտ և գրգռված պահվածքով սպաները չէին կարող հաջողության հասնել հայերի մոտ[2]: Տ. Թեքեյանը գրում էր. «Հայ կամավորականներին մարզելը, ինչ խոսք, չափազանց դժվար էր, մեր սպաներն ու ենթասպաները հաճախ մեծ զգուշավորություն, նրբանկատություն ի հայտ բերեցին, որպեսզի հաղթահարեն անխուսափելի թյուրիմացությունները, կարգ ու կանոն ապահովեն: Հարկ եմ համարում ավելացնել, որ այդ առումով նրանց օգնում էին նաև ազգային հանձնախմբերն ու հայ կամավորականների ընտրախավը, որոնք ոչ մի ջանք չխնայեցին, որպեսզի Հայկական Լեգեոնը միասնական ու կարգապահ միավորում դառնա: Թե՛ առաջինները, թե՛ վերջինները համապատասխանաբար արժանի են իրենց հայրենիքի երախտագիտությանը, նրանց սկսած գործը Պատմությունն անպայման ավարտին կհասցնի»[3]: Լ. Ռոմիոն, տեսնելով, որ մուսալեռցիները փայլուն հրաձիգներ են, որոշեց նրանցից կազմել գնդացրորդների ջոկատներ: Նա դիմեց գեներալ Պ. Ռոքին, որպեսզի Սուեզի գնդացիրների մի մասը տրամադրեն լեգեոնին[4]:

---

[1] Նույն տեղում, էջ 409:

[2] Նույն տեղում:

[3] **Թեքեյան Շ.,** նշվ. աշխ., էջ 56:

[4] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 412:

Մուսալեռցիների կամավորագրությունը:

Լ. Ռոմիոյի պահանջով ֆրանսիական սպա Ժերպհանիոնը մանրամասն վիճակագրություն անցկացրեց Պորտ Սայիդում և առաձնազրույց ունեցավ բոլոր մուսալեռցի տղամարդկանց հետ: Ըստ այդմ՝ զինծառայության պիտանի ճանաչվեցին 450 մարդ: Այդ ցուցակագրվածներին կարող էին միանալ նաև այն մուսալեռցիները, որոնք աշխատելու համար ճամբարից հեռացել էին Եգիպտոսի այլ քաղաքներ: Հայրենի հողի համար կռվելու գաղափարը չափազանց բարձր բարոյական մթնոլորտ էր առաջացրել հայերի մոտ: Լ. Ռոմիոն վստահ էր, որ չպետք է հայերին երկար ժամանակ անգործության մատնեն, որպեսզի նրանք չվհատվեն: Նա գտնում էր, որ միայն մուսալեռցիները բավարար կլինեն, եթե իրենք ցանկանան անկանոն զորամաս ստեղծել Ալեքսանդրետում դիվերսիոն գործողություններ իրականացնելու համար: Իսկ եթե Ֆրանսիան ավելի մեծ ու հեռահար նպատակ ունի՝ համագործակցության հաստատում հայ և սիրիացի ղեկավարների հետ, ազդեցության տարածում այդ ժողովուրդների վրա, ապա՝ նա գտնում էր, որ պետք է հայերից ու սիրիացիներից ստեղծեն լուրջ ռազմական կառույց, որի համար անհրաժեշտ էր երկարատև և շարունակական աշխատանք[1]: Ինչպես տեսնում ենք, մայոր Լ. Ռոմիոն վճռական էր տրամադրված և իրեն վստահված գործին վերաբերվում էր ամենայն պատասխանատվությամբ: Փաստորեն՝ միայն մուսալեռցիները պատրաստ էին տրամադրելու շուրջ 600 կամավոր՝ առանց խտրականության մուսալեռցի բոլոր այրերը ցանկություն հայտնեցին կռվելու ընդդեմ ատելի թուրքերի:

1917 թ. մայիսի 20-ին Ֆրանսիայի նոր վարչապետ և ԱԳ նախարար Ալեքսանդր Ռիբոյին ուղարկած զեկուցագրում Ժ. Դեֆրանսը ներկայացրեց իր և Լ. Ռոմիոյի տեսակետները Պորտ Սայիդի հայկական ճամբարի վերաբերյալ: Նշում էր, որ մուսալեռցիները լեգեոնի ամենակարգապահ և մարտունակ տարրն են: Հետևաբար իրենց խնդիրն է անուշադրության չմատնել նրանց ընտանիքները: Իր գոհունակությունն էր հայտնում, որ, ի տարբերություն սիրիացիների, հայերի կամավորագրությունը Եգիպտոսում, Հնդկաստանում, Ամերիկայում հա-

[1] Նույն տեղում, էջ 377:

ջողությամբ էր ընթանում, որ բոլոր հայ առաջնորդները խրախուսում են կամավորագրությունը, հանգանակություններ են անում կամավորների ու նրանց ընտանիքների համար, հայկական բոլոր հոսանքները միասնաբար էին հանդես գալիս: Ճիշտ չէր համարում, որ հայ գաղթականների հոգածությունը մնար բրիտանացիների ձեռքում, մանավանդ որ պատերազմից հետո իրենք պարտավոր կլինեին փոխհատուցել այդ ծախսերը: Անհրաժեշտ էր համարում այդ գործը վերցնել իրենց ձեռքը, հայ երեխաներին ապահովել ֆրանսիացի ուսուցիչներով, հայերի մեջ դաստիարակել ֆրանսիական ոգի: Տղամարդկանց զինվորագրումից հետո ճամբարում մնացել էին մոտ 3.400 հոգի, որից մոտ 1.000-ը՝ երեխաներ: Ժ. Դեֆրանսը և Լ. Ռոմիոն իրենց հիացմունքն էին հայտնում, որ հայերը կազմակերպել էին գերազանց գործող արհեստանոցներ, որոնցում ընդգրկված էին բոլորը՝ բացի երեխաներից: Ճամբարի ծախսերը, եթե հոկտեմբերին օրական 1.000 ֆրանկ էր, արդեն տղամարդկանց հեռանալուց ու արհեստանոցների բացվելուց հետո զգալիորեն նվազել էին: Ժ. Դեֆրանսը և Լ. Ռոմիոն խնդրում էին անհրաժեշտ քայլեր ձեռնարկել հայ գաղթականներին հնարավորինս արագ ֆրանսիական խնամատարության տակ վերցնելու համար[1]:

Եգիպտահայերի կամավորագրությունը:

Եգիպտոսում կամավորագրությանն աջակցելու նպատակով տեղի հայկական բոլոր կուսակցությունները, հասարակական ու կրոնական կազմակերպությունները միավորվեցին Եգիպտոսի հայ ազգային միության մեջ՝ ցուցաբերելով միասնության և համերաշխության գեղեցիկ օրինակ: Այդ մարմնի մեջ մտան դաշնակցականները, հնչակյանները, ռամկավարները, ինչպես նաև Հայ առաքելական, կաթոլիկ, բողոքական եկեղեցիների և ՀԲԸՄ ներկայացուցիչները:

Լ. Ռոմիոն գեներալ Պ. Ռոքին ուղարկած զեկուցագրում իր զարմանքն էր հայտնում եգիպտահայերի արագ համախմբման ու միասնականության մասին: Մատնանշում էր, որ ռամկավարների ղեկավարներից Վահան Թեքեյանը և հնչակյան Ստեփան Սապահ-Գյուլյանը նախկինում ոխերիմ թշնամիներ էին, քանի որ մի ընդհարման ժամանակ հնչակյանները հանել էին Վ. Թեքեյանի աչքը, սակայն համազգային

[1] Նույն տեղում, էջ 472-474:

գործը գլուխ բերելու համար նրանք հաշտվել էին և պատրաստվում էին միասին մեկնել Ամերիկա: Իսկ իրար ընդդիմադիր «Արև» ու «Հուսաբեր» թերթերը պարտավորվել էին կամավորագրության մասին նույնաբնույթ հոդվածներ գրել[1]:

Լեգեոնը կազմավորելու համար հայկական կազմակերպությունները հնարավորինս գաղտնի և արագ պետք է խրախուսեին կամավորագրությունը: Եգիպտահայերի կամավորագրության համար անհրաժեշտ էր համայնքում գործող հասարակական-քաղաքական կառույցների միջև եղած հակասությունները հաղթահարել, բոլոր ուժերին համախմբել: Ֆրանսիացիները բավական լուրջ կասկածով էին վերաբերում եգիպտահայերին համախմբելու հնարավորությանը: Սակայն հայրենիքը ազատագրված տեսնելու գաղափարը կարողացավ համախմբել Եգիպտոսի հայկական կազմակերպություններին:

Որոշ հայ գործիչներ դիմեցին Տ. Թեքեյանին, որպեսզի նա ստանձնի հայկական կուսակցությունների համախմբման գործը: Հայազգի սպան Լ. Ռոմիոյին առաջարկեց անձամբ դիմել հայկական կազմակերպություններին: Դա պայմանավորված էր լեգեոնի հրամանատարի օրեցօր աճող հեղինակությունն ու ազդեցությունն ամրապնդելու ձգտումով: Մինչ այդ Տ. Թեքեյանը և Լ. Ռոմիոն լայն կապեր էին հաստատել բոլոր կազմակերպությունների հետ: Լ. Ռոմիոն նամակով դիմեց հայկական կառույցներին, որպեսզի միավորվեին և նպաստեին կամավորական շարժմանը: Մի քանի օր անց բոլոր կազմակերպությունները միավորվեցին, Կահիրեում և Ալեքսանդրիայում ստեղծեցին հանձնախմբեր և աջակցեցին կամավորագրությանը: Այդ արագ համախմբումն ու սերտ համագործակցությունը զարմացրեց ֆրանսիացիներին[2]: Տիգրան Պոյաճյանը գրում է. «Ներքին երկպառակութիւնները Եգիպտոսի մէջ նուազ չարիք չէին: Հնչակ-Դաշնակ-Ռամկավար պայքարները դրական ծրագիրներու որդեգրումը անկարելի կը դարձնէին: Արտաքին ազդեցութիւններ ի գործ դրուեցան: Զինուորական հրամանատարութիւնը կուսակցական պետերը ժողովի մը հրաւիրեց եւ յաջողեցաւ զուտ ազգային ծրագրի մը շուրջ համաձայնութիւն գոյացնել

[1] Նույն տեղում, էջ 410-411:

[2] **Թեքեյան Շ.,** նշվ. աշխ., էջ 53-54:

անոնց միջեւ ու կազմուեցաւ «Ազգային Միութիւն» անունով մարմին մը: Հրաշքը կատարուած էր: Ազգային համերաշխ գործակցութեան մը երազը մարմին ստացած էր եւ կը յուսադրէր յուսակտուր սրտերը»[1]:

Շուտով քաղաքական կուսակցություններին միացան Եգիպտոսի հայ համայնքի ղեկավար մարմինները, Նպաստամատույցը, Զինվորական ֆոնդի մարմինը, Կարմիր խաչը, ՀԲԸՄ-ը: Արդյունքում ստեղծվեց Եգիպտոսի հայ ազգային միությունը, որը պատրաստակամություն հայտնեց համագործակցել և համերաշխ գործել Հայ ազգային պատվիրակության հետ[2]: Փաստորեն, Լ. Ռոմիոյի պահանջը՝ ստեղծելու միասնական մարմին, որի հետ ֆրանսիական իշխանությունները կկարողանային համագործակցել հայերի կամավորագրության հարցով, ունեցավ վճռորոշ նշանակություն: Չորս կուսակցությունների ներկայացուցիչները քննարկեցին հարցը և որոշեցին մի կողմ դնել տարաձայնությունները, համագործակցել ազգի համար կարևոր նշանակություն ունեցող հարցերում: Կարճ ժամանակամիջոցում Արևելյան լեգեոնին կամավորագրվեցին 300 եգիպտահայեր:

Ամերիկահայերի կամավորագրությունը:

Ամենամեծ թվով կամավորներ սպասվում էին ԱՄՆ-ից, քանի որ Եվրոպան ամբողջությամբ ընդգրկված էր Համաշխարհային պատերազմի մեջ, և տեղի համայնքները կամավորներ չէին կարող տրամադրել: Առաջին աշխարհամարտի տարիներին ԱՄՆ-ում ապրում էր 78.000 հայ[3]: Գործում էին համահայկական մի շարք կառույցների մասնաճյուղերը՝ ՀՅԴ, Ս.Դ.Հնչակյան, Վերակազմյալ հնչակյան, Սահմանադիր ռամկավար կուսակցությունները, Հայ առաքելական ու ավետարանական եկեղեցիները, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը:

Դեռևս 1914-1915 թթ. ամերիկահայերը փորձել էին միասնական մարմին ստեղծել, սակայն կուսակցությունների միջև եղած տարաձայնությունների հետևանքով այդ փորձը շուտով տապալվել էր: ԱՄՆ-ում լեգեոնի համար կամավորագրությունը խրախուսելու, տեղի համայնքի

[1] **Պոյաճեան Տ.**, նշվ. աշխ., էջ 21:

[2] Նույն տեղում, էջ 34:

[3] **Ավագյան Ք.,** Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (Սկզբնավորումից մինչև 1924 թ.), Եր., 2000, էջ 35:

և կառույցների միջև համագործակցություն հաստատելու նպատակով՝ Եգիպտոսի ազգային միությունը որոշում է ԱՄՆ ուղարկել պատվիրակություն: Պ. Նուբարի անունից Եգիպտոսից ԱՄՆ մեկնեցին հնչակյան Ստեփան Սապահ-Գյուլյանը, դաշնակցական Արտաշես Հանմյանը և ռամկավար Միհրան Տամատյանը:

1916 թ. դեկտեմբերի 13-ին Ա. Բրիանը Վաշինգտոնի, Ռիո դե Ժանեյրոյի, Մոնտեվիդեոյի, Բուենոս Այրեսի, Կարակասի ֆրանսիական դիվանագիտական ներկայացուցիչներին տեղեկացրեց Արևելյան լեգեոնի կազմավորման պայմանների մասին և առաջարկեց Ամերիկայում կամավորագրությունն անցկացնել խիստ գաղտնիության պայմաններում, որպեսզի այն չեզոք երկրների դժգոհությունը չառաջացնեին, ինչպես նաև Թուրքիայում հայերի ու սիրիացիների նոր ջարդերի տեղիք չտային: Նաև տեղյակ պահեց, որ կամավորագրությունը խրախուսելու նպատակով Եգիպտոսից հայկական պատվիրակություն էր մեկնելու Ամերիկա[1]: 1917 թ. հունվարին Մ. Տամատյանը, Ա. Հանմյանը և Ս. Սապահ-Գյուլյանը հասան Փարիզ: Պ. Նուբարը նրանց ներկայացրեց Ֆրանսիայի ԱԳՆ Արևելյան գործերի գրասենյակի պետ Ժ. Գուին, որը խոստացավ հանձնարարագրեր ուղարկել ԱՄՆ-ի ֆրան-սիական դեսպանին ու հյուպատոսներին՝ աջակցելու հայ պատվիրակներին[2]:

1917 թ. հունվարի 15-ին պատվիրակները Փարիզից մեկնեցին դեպի իսպանական Վիկո նավահանգիստը, որտեղից «Ալֆոնս XII» շոգենավով մեկնեցին Նյու Յորք: Ուղևորությունը տևեց մոտ մեկ ամիս: Այնտեղ նրանց դիմավորեցին հայկական չորս կուսակցությունների ներկայացուցիչները: Նրանք անմիջապես հանդիպման գնացին Նյու Յորքի ֆրանսիական գլխավոր հյուպատոս Գաստոն Լիեբերի մոտ: Վերջինս տեղեկացրեց, որ պատգամավորներին ցանկանում էր տեսնել Վաշինգտոնում ֆրանսիական դեսպան Ժյուլ Ժյուսերանը: Նույն օրը նրանք մեկնեցին Վաշինգտոն, ուր հաջորդ օրը հանդիպեցին ֆրանսիական դեսպանին: Վերջինս պատգամավորներին հայտնեց, որ տեղյակ էր Ֆրանսիայի ԱԳՆ-ի հետ հայերի պայմանավորվածությանը, ըստ որի՝ պետք է ԱՄՆ-ում կամավորներ հավաքագրեին: Բայց

[1] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 405:

[2] **Տամատեան Մ.,** նշվ. աշխ., էջ 107-108:

դեսպանը նշեց, որ ֆրանսիական բանակի համար կամավորներ հավաքագրելը տվյալ պահին սխալ քայլ էր, քանի որ կարող էր գրգռել ամերիկացիներին: Նա խորհուրդ տվեց դա անել խիստ գաղտնիության պայմաններում, մինչև որ ԱՄՆ-ը պատերազմ կհայտարարեր Գերմանիային, որից հետո ազատորեն կկարողանային կամավորներ հավաքել: Դեսպանը խորհուրդ տվեց որոշ ժամանակ սպասել և այդ ընթացքում մեկ մարմնի շուրջ համախմբել բոլոր հայերին: Հայ պատվիրակները թեև բավական հիասթափվեցին այդ հրահանգներից, բայց խոստացան հետևել դրանց[1]:

Եգիպտահայ պատվիրակները մեկնեցին Բոստոն, ուր հանդիպեցին ՀՅԴ, Ս.Դ. Հնչակյան, Վերակազմյալ Հնչակյան, Սահմանադիր ռամկավար կուսակցությունների ԱՄՆ-ի կենտրոնական մարմինների, Հայ առաքելական ու ավետարանական հոգևոր իշխանությունների, ՀԲԸՄ-ի ներկայացուցիչների հետ և առաջարկեցին եգիպտահայերի օրինակով ստեղծել Ազգային միություն[2]: Այս անգամ ամերիկահայ բոլոր կազմակերպությունները խանդավառությամբ ընդունեցին Ազգային միություն կազմելու և Հայկական լեգեոնի կազմավորմանն օժանդակելու առաջարկը: 1917 թ. մարտի 16-26-ը Բոստոնում տեղի ունեցավ խորհրդաժողով, ուր որոշվեցին այն սկզբունքները, որոնց շուրջ համագործակցելու էին հայկական կազմակերպությունները: Այսպիսով, ստեղծվեց Ամերիկայի հայ ազգային միությունը: Մարտի 26-ին կազմակերպությունները ստորագրեցին համաձայնագիր, ուր նշված էր. «Ամերիկայի Հայ Ազգ. Միութիւնը յարաբերութիւն պիտի պահէ Եգիպտոսի Հայ Ազգ. Միութեան հետ եւ իր գործունէութիւնը պիտի համաձայնեցնէ Ազգ.Պատուիրակութեան ընդհանուր ուղղութեան, կանոնաւոր յարաբերութիւն պահելով անոր հետ. միւս կողմէ՝ Միութիւնը պիտի նկատուի Ազգ. Պատուիրակութեան ներկայացուցիչ մարմինը Ամերիկայի մէջ»[3]: Ազգային միության գործադիր մարմնի ատենապետ դարձավ Միհրան Սվազլյանը[4]:

---

[1] **Տամատեան Մ.**, նշվ. աշխ., էջ 108-110:

[2] Նույն տեղում, էջ 110:

[3] Նույն տեղում, էջ 113:

[4] **Պոյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 29:

ԱՄՆ-ում ստեղծվեցին Ազգային միության 187 մասնաճյուղեր: Ազգային միության գլխավոր նպատակներ հռչակվեցին. «ա. Հայկական ազատագրութիւն, կիլիկեան կամաւորական ձեռնարկ, բ. Հայաստանի վերաշինութիւն եւ երկրի կարօտելոց անմիջական օգնութիւն, գ. Դիւանագիտական ձեռնարկ եւ հայանպաստ պրոպականդ»[1]: Այդ իրադարձությունների մասնակից Մանուկ Ճիզմեճյանը գրում է. «Արդարեւ Ամերիկահայ գաղութին մէջ առաջին անգամն էր որ անկեղծ ու ընդհանուր միութեան մը հիմը կը դրուէր, բոլոր կուսակցականները, չէզոք ազգայինները եւ Բողոքականները առաջի օրէն միահամուռ կերպով կը լծուին գործի»[2]: Ամերիկահայերը մեծ խանդավառությամբ լծվեցին Հայկական լեգեոնի կամավորագրությանը, քանի որ հայոց ցեղասպանության լուրերը վրեժի զգացումով էին լցրել տեղի երիտասարդությանը: Միավորման գործում վճռորոշ դեր ուներ Պ. Նուբարի գործոնը, որի նկատմամբ մեծ վստահություն կար բոլոր հոսանքների մոտ, որոնք հավանություն էին տվել նրա որդեգրած քաղաքական ուղեգծին: Փաստորեն, Ազգային պատվիրակության և նրա նախագահի շուրջ էին միավորվում սփյուռքի կառույցները: Նրանց ոգևորում էր Կիլիկիայի ինքնավարության գաղափարը, քանի որ հույսը կորցրել էին Արևմտյան Հայաստանի ինքնորոշման մտքից՝ Ռուսաստանի վարած քաղաքականության հետևանքով:

Ազգային միությունը սկսեց հանգանակություն, իսկ 1917 թ. ապրիլին ԱՄՆ-ի պատերազմի մեջ մտնելուց հետո կամավորագրության կոչով դիմեց ամերիկահայությանը: Կամավորագրությունը դարձավ համազգային գործ և կռվելու մեկնել ցանկացողների թիվը սպասվածից ավելին էր: Պետք է նշել, որ ԱՄՆ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածն արգելում էր արտասահմանյան զինծառայության համար ԱՄՆ-ում զինվորագրում անցկացնել: 1917 թ. մայիսի 7-ին օրենքի մեջ լրացում կատարվեց, որը բացառություն էր անում այն արտասահմանցիների համար, ովքեր չէին դիմել ԱՄՆ քաղաքացի դառնալու համար[3]:

---

[1] **Տամատեան Մ.**, նշվ. աշխ., էջ 114:

[2] **Ճիզմէճեան Մ.,** Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց 1890-1925, Ֆրէզնօ, 1930, էջ 353:

[3] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 350:

Կամավորներ հավաքագրելու և հանգանակություն կազմակերպելու նպատակով՝ եգիպտահայ պատվիրակները մինչև հուլիս շրջեցին ԱՄՆ-ի քաղաքներում և մեծ արդյունքներ արձանագրեցին: Մի քանի օրում ցուցակագրվեցին 5.000 երիտասարդներ[1]: 1917 թ. մայիսի 14-ին Մ. Տամատյանը Պ. Նուբարին ուղղված իր հեռագրում տեղեկացնում էր, որ կամավորագրվել ցանկացողների թիվը արդեն 5.000 է, որոնցից 1.000-ը արդեն իսկ պատրաստ են մեկնելու, նշում էր, որ ֆրանսիական ներկայացուցիչների կողմից աջակցությունը քիչ էր և խնդրում էր միջոցներ ձեռնարկել, որպեսզի հայ կամավորներին 500 կամ 1.000 հոգանոց խմբերով անվտանգ ուղարկեին[2]: Այդ հեռագիրը Պ. Նուբարը նույն օրը տարավ Ֆրանսիայի ԱԳՆ: Այստեղ նրան համոզեցին, որ փոքր խմբերով կամավորներին ուղարկելն ավելի ապահով էր, քանի որ ռազմական նավերը կարող էին ենթարկվել գերմանական սուզանավերի հարձակումներին[3]:

Ազգային միությունը փաստաթղթերը պատրաստելուց, Նյու Յորքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ներքնասրահում կամավորներին անհրաժեշտ ծանոթություններ ու խրատներ տալուց հետո ճանապարհում էր նավարկության: Կազմակերպական հարցերում կարևոր դերակատարություն ունեցավ հատկապես Ռուբեն Հերյանը: Կամավորները Նյու Յորքից փոխադրվում էին ապրանքատար նավերով, յուրաքանչյուրում՝ մոտ 70 մարդ: Ուղարկվեցին նման 17 նավերով, որոնցով ճամբորդելը հոգնեցուցիչ էր և վտանգավոր առողջության համար[4]: Ֆրանսիայի Բորդո նավահանգստից կամավորներին գնացքով տեղափոխում էին Մարսել, այնտեղից էլ՝ նավերով Պորտ Սայիդ, ապա՝ Կիպրոս: Այդ նավարկությունը վտանգներով լեցուն էր, քանի որ գերմանական սուզանավերը Ատլանտյան օվկիանոսում ու Միջերկրական ծովում հարվածում ու խորտակում էին հակառակորդ երկրների նավերը: Հայ կամավորներին տեղափոխող նավերից «Ադմիրալ Օրլին» 1917 թ. օգոստոսի 29-ին հունական Միլա կղզու մոտ ենթարկվեց գերմանական սուզանավի հարձակմանը և խորտակվեց: Բարեբախտաբար

[1] **Գարամանուկեան Ա.,** Հայկական Լեգէոնը, էջ 74:

[2] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 469:

[3] Նույն տեղում, էջ 470-471:

[4] **Պոյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 38:

օգնության հասած բրիտանական նավին հաջողվեց կամավորներին անկորուստ հասցնել Միլա կղզի: Այնտեղից ամերիկահայերը մեծ զրկանքներով, տասնօրյա նավարկությունից հետո հասան Պորտ Սաիդ: Նրանց տեղափոխեց ֆրանսիական «Դեսեքս» ռազմանավը, որը մասնակցել էր մուսալեռցիների փրկությանը[1]:

Պ. Նուբարը 1917թ. ամռանն արդեն այնքան էլ խադավառված չէր մեծաթիվ կամավորների հավաքագրմամբ: Դա ուներ մի շարք պատճառներ. վախենում էր, որ դա թուրքերի ուշադրությունը կգրավի ու նոր կոտորածների առիթ կդառնա, Ֆրանսիան այդպես էլ պաշտոնապես չէր հայտարարել Կիլիկիային ինքնավարություն տալու պատրաստակամության մասին՝ չնայած նախապես արված խոստումներին, բացի այդ՝ 1917 թ. առաջ եկած միջազգային նոր իրողությունները հույսեր էին առաջացրել, որ հնարավոր կլինի միացյալ հայկական պետություն կազմավորել, որի հովանավորությունը կարող էին ստանձնել Ռուսաստանը կամ ԱՄՆ-ը: Վերոնշյալ հանգամանքները հաշվի առնելով՝ Ազգային պատվիրակության նախագահը ոչ բացահայտորեն փորձում էր կանխել մեծաթիվ հայ կամավորների համախմբումը ֆրանսիական դրոշի տակ[2]:

Փոխադրամիջոցների պակասի պատճառով 1917 թ. հունիս 9-ից մինչև նոյեմբերի 3-ը Ամերիկայից կարողացան փոխադրել միայն 1.172 կամավորների[3]: Ամերիկահայ կամավորները մեկնում էին եռագույն դրոշներով՝ կարմիր, կապույտ և սպիտակ[4]: Ֆրանսիական կառավարությունը որոշեց նոյեմբերի վերջին շոգենավ տրամադրել, եթե մինչ այդ տեղափոխման պատրաստ լինեին նվազագույնը 1.200 կամավորներ: Սակայն Մ. Սվազլյանը Պ. Նուբարին տեղյակ պահեց, որ որոշ հանգամանքներից ելնելով դա անհնար էր: Պ. Նուբարը ֆրանսիական իշխանություններին տեղյակ պահեց, որ շոգենավի անհրաժեշտությունը չկա, իսկ ամերիկահայերին հրահանգեց կամավորներին ուղարկել նախկինի պես[5]: Ինչպես տեսնում ենք, իրականում հայ ղեկավար գոր-

[1] **Թաթարեան Մ.,** Կամաւորի մը յուշերը, Անթիլիաս, 1960, էջ 10-12:

[2] **Եափուճեան Ա.,** նշվ. աշխ., էջ 134-136:

[3] **Ճիզմէճեան Մ.,** նշվ. աշխ., էջ 353:

[4] **Ամէմեան Խ.,** Էջեր կամաւորի օրագրէս, Պէյրութ, 1967, էջ 23:

[5] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 56:

ծիչներն արդեն ոգևորություն չէին ցուցաբերում մեծ թվով կամավորների ֆրանսիական դրոշի ներքո համախմբելու գործում, որը պայմանավորված էր մի կողմից միջազգային նոր իրադրությամբ, մյուս կողմից՝ ինքնավարություն տալու մասին հայտարարությունից Ֆրանսիայի խուսափելու պատճառով:

Կամավորների հետ կապված խնդիրներ էին առաջանում նաև Մարսելում: Այդտեղից Պորտ Սայիդ մեկնող շոգենավերում տեղերի սղության պատճառով Ամերիկայից ժամանող կամավորները երկար ժամանակ անմխիթար պայմաններում ստիպված էին լինում սպասել հավաքակայանում: Հոկտեմբերի 19-ին Պ. Նուբարը դիմեց ֆրանսիական իշխանություններին, որպեսզի կարգավորեն հարցը: Նա առաջարկեց կամավորներին Եգիպտոս կամ Կիպրոս տեղափոխել ռազմամթերք փոխադրող նավերով[1]: Այսպիսով, կամավորների տեղափոխության հարցը դժվարությունների էր հանդիպում ոչ միայն ԱՄՆ-ում, այլ նաև Ֆրանսիայում: Իհարկե, դա պայմանավորված էր ոչ միայն պաշտոնյաների անփութությամբ, այլև՝ պատերազմի առաջ բերած դժվարություններով ու խառնաշփոթով:

1917 թ. հոկտեմբերի վերջին ռազմական նախարարին ներկայացրած զեկուցագրում գեներալ Մորիս Բայուն ուշադրություն էր հրավիրում այն հանգամանքի վրա, որ ամերիկահայերը հակված էին նախապատվություն տալ ոչ թե Ֆրանսիայի, այլ՝ ԱՄՆ-ի հովանավորությանը: Նա մտավախություն ուներ, որ մուսալեռցիները կարող են ընկնել նրանց գաղափարների ազդեցության տակ: Նա խորհուրդ էր տվել Լ. Ռոմիոյին, որպեսզի զինվի համբերությամբ և հմուտ աշխատանքով չեզոքացնի այդ վտանգը: Իր հերթին վարչապետ և ռազմական նախարար Պոլ Պենլևեն հոկտեմբերի 31-ին գաղտնի ճեպագրով ամերիկահայերի անջատողական ձգտումների վրա հրավիրեց ԱԳ նախարար Լուի Բարտուի ուշադրությունը[2]: Փաստորեն, ֆրանսիացի պաշտոնյաները այնքան էլ ոգևորված չէին լեգեոնում մեծաթիվ ամերիկահայերի ներգրավմամբ՝ վախենալով նրանց կողմնորոշումից և հետպատերազմյան ձգտումներից:

[1] Նույն տեղում, էջ 47:

[2] Նույն տեղում, էջ 56-57:

Լեգեոնական Խորեն քահանա Աճեմյանը վկայում է, որ Ազգային միությունում գրանցվեցին 6.000 կամավորներ, սակայն միայն 1.172-ը հնարավորություն ունեցան ԱՄՆ-ից մեկնելու: Նա դա բացատրում է ֆրանսիական հրամանատարության չկամությամբ, քանի որ իբր զգուշանում էին ամերիկյան ազդեցության մեծացումից[1]: Սակայն, ինչպես նշեցինք, դա պայմանավորված էր նաև հայ ղեկավար գործիչների զգուշավորությամբ և Ֆրանսիայի նկատմամբ եղած անվստահությամբ, որը լիովին արդարացված էր: Անշուշտ, կային նաև ֆրանսիացի պաշտոնյաներ, որոնք զգուշանում էին ամերիկահայերի կողմնորոշումից, սակայն մեր կարծիքով, այս դեպքում նրանք այնքան էլ մեծ ազդեցություն չեն ունեցել:

Հոկտեմբերի 9-ին Պ. Նուբարը Ժ. Գուին ուղարկած նամակով տեղեկացրեց, որ մի քանի ամիս առաջ Ամերիկայի հայկական ազգային կոմիտեն ռազմական նախարարությանն է ներկայացրել ուղարկած կամավորների ճանապարհածախսի հաշիվը՝ 20.798,50 դոլար, որը պետք է մարվեր ըստ կայացած համաձայնության: Սակայն երկար ժամանակ է որևէ պատասխան չէին ստացել: Նա խնդրում էր Ժ. Գուի միջնորդությունը՝ գումարը հնարավորիս արագ փոխանցելու, քանի որ հայկական կոմիտեի միջոցները սահմանափակ էին և նոր կամավորներ նավ բարձրացնելու համար գումարների պակաս կար[2]: 1918 թ. փետրվարի 12-ին Պ. Նուբարը նամակով Ժ. Գուին հիշեցրեց, որ ռազմական նախարարությունը դեռևս չի փոխհատուցել կամավորներին ուղարկելու համար Ամերիկայի ազգային միության ներդրած 118.000 ֆրանկը, չնայած խոստումներին[3]: Փետրվարի 25-ին ԱԳՆ Ս. Պիշոնը Պ. Նուբարին տեղեկացրեց, որ ռազմական նախարարությունը նույն օրը ուղարկել է 118.106,85 ֆրանկի վճարման հանձնարարագիր, որպեսզի փոխանցի նրան[4]: Փաստորեն, Ֆրանսիան դժվարությամբ կամ դժկամությամբ էր կատարում նաև իր վերցրած ֆինանսական պարտավորությունները: Ի վերջո ֆրանսիական կողմը չկարողացավ լեգեո-

[1] **Ատանայի Հայոց պատմութիւն**, Խմբագրեց՝ Բիւզանդ Եղիայեան, Անթիլիաս, 1970, էջ 424:

[2] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 39:

[3] Նույն տեղում, էջ 167:

[4] Նույն տեղում, էջ 185:

նին կամավորագրվել ցանկացող ամերիկահայերի մեծամասնությանը տեղափոխել Կիպրոս: Նրանց զգալի մասը միացավ ԱՄՆ բանակին:

1918 թ. մարտի 9-ին Կահիրեից ուղարկած հեռագրով Պաղեստինում և Սիրիայում Ֆրանսիայի գերագույն կոմիսար Ժ. Պիկոն արտգործնախարար Ս. Պիշոնին տեղեկացրեց, որ հոգնելով սպասելուց, մոտ 4.000 ամերիկահայեր զինվորագրվել են ԱՄՆ բանակին և խնդրում էր քայլեր ձեռնարկել հնարավորության դեպքում համաձայնության գալ ԱՄՆ կառավարության հետ՝ նրանց Արևելյան լեգեոնին միացնելու համար[1]: Մարտի 14-ին Լ. Ռոմիոն ռազմական նախարարին տեղեկացրեց, որ կամավորների հավաքագրումները խիստ դանդաղել էր: Փետրվարին զինվորագրվել էին 80 սիրիացիներ՝ հիմնականում Հարավային Ամերիկայից, 20 հայ Պաղեստինից և 6 հայ Եգիպտոսից: Նշում էր, որ ԱՄՆ-ից կամավորների ժամանումը գրեթե 3 ամիս է դադարել էր: Որպես կամավոր ժամանած Ռ. Հերյանը, ով ԱՄՆ-ում կամավորագրության պատասխանատուներից էր, Լ. Ռոմիոյին պարզաբանել էր, որ վերջին ամիսներին Անդրատլանտյան ընկերության նավերի ազատ տեղերը տրամադրվում էին լեհ և հրեա կամավորներին: ԱՄՆ-ում դեռևս կային զինվորագրվել ցանկացող 3.000 հայեր: Կամավորները եկել էին հիմնականում արևելյան նահանգներից, իսկ կենտրոնի և արևմուտքի, հատկապես՝ Կալիֆորնիայի հայերը դեռևս մեկնելու հնարավորություն չէին ստացել: Հայերից շատերը, սպասեուց հոգնելով, միանում էին ԱՄՆ բանակին: Լ. Ռոմիոն մտավախություն էր հայտնում, որ նման պայմաններում կարող էր ստեղծվել ամերիկյան Արևելյան լեգեոն: Հայերի համախմբումը ամերիկյան դրոշի ներքո նա համարում էր Ֆրանսիայի հեղինակությանը և շահերին հարվածող քայլ: Բացի դրանից, նա մտահոգված էր, որ փետրվարի 25-ին նախարարի կողմից առաջարկված 3-րդ գումարտակի կազմավորումը կապված կլինի դժվարությունների հետ, քանի որ պահեստային ուժեր չեն մնա: Նա խնդրում էր ամեն հնարավոր միջոց գործադրել ամերիկահայերին Արևելյան լեգեոնին միացնելու համար[2]:

---

[1] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 198: Գարամանուկեան Ա., նշվ. աշխ., էջ 77:

[2] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 226-228:

Մարտի 14-ին Ս. Պիշոնը հեռագրեց Ժ. Ժյուսերանին, որպեսզի ԱՄՆ կառավարությանը համոզի հայ զինվորներին փոխադրել Արևելյան լեգեոն, քանի որ Սիրիայում գործելու համար իրենք ավելի մեծաքանակ ուժերի կարիք ունեին[1]: Մարտի 15-ին Պ. Նուբարը նույնպես նամակով խնդրեց Ֆրանսիայի արտգործնախարարի միջնորդությունը, որպեսզի ԱՄՆ բանակի հայ կամավորները միացվեն Արևելյան լեգեոնին[2]: Այդ հարցով մարտի 17-ին և ապրիլի 8-ին Ս. Պիշոնին դիմեց նաև ռազմական նախարար և վարչապետ Ժորժ Կլեմանսոն: Նա շատ կարևոր էր համարում ամերիկահայերին Արևելյան լեգեոնին միացնելը, պահանջում էր ամեն ջանք գործադրել ԱՄՆ կառավարությանը համոզելու համար և առաջարկում էր հայերին ԱՄՆ-ից տեղափոխել հնարավոր բոլոր տրանսպորտային միջոցներով[3]: Ապրիլի 22-ին Ժ. Պիկոն կրկին Ս. Պիշոնին հիշեցրեց ամերիկահայերի հարցը, նշելով, որ եվրոպական ճակատից նոր ուժեր Պաղեստին տեղափոխել չեն կարող և միակ հույսը հայերն են[4]: Ապրիլի 26-ին Ս. Պիշոնը պատասխանեց, որ ԱՄՆ պետդեպարտամենտը պատրաստ էր ընդառաջել, սակայն ԱՄՆ ռազմական նախարարությունը դեմ էր, և Ժ. Ժյուսերանը ջանքեր էր գործադրում վերջինին համոզելու ուղղությամբ[5]:

1918 թ. հունիսի 6-ին Ժ. Կլեմանսոն կրկին Ս. Պիշոնին հրահանգեց արագացնելու ամերիկահայերի հարցի լուծումը: Նշում էր, որ իրենց հույսը ամերիկահայերն են, քանի որ բրիտանական հարձակումը Պաղեստինում բավարար արագ չէր ընթանում, որպեսզի ազատագրված տարածքների հայ գաղթականները և ռազմագերիները միանային լեգեոնին: Նաև պարզաբանում էր, որ նախատեսվում էր կազմավորել 3 գումարտակ և պահեստային 3 վաշտ, սակայն կամավորագրության այդ տեմպերի դեպքում պահեստային ուժերը ստիպված կլինեին փոքրացնել, իսկ հետո՝ կրճատել նաև գումարտակների թիվը: Բացի ռազմականից, կար նաև քաղաքական խնդիր: Հայերի մոտ կա-

[1] Նույն տեղում, էջ 200:

[2] **Գարամանուկեան Ա.,** նշվ. աշխ., էջ 77: Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 202:

[3] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 204, 226:

[4] Նույն տեղում, էջ 242:

[5] Նույն տեղում, էջ 245-246:

րող էր կարծիք ձևավորվել, որ ԱՄՆ-ը ևս հանդես է գալիս իրենց պաշտպանությամբ և գուցե ավելի շատ քան Ֆրանսիան: Վարչապետի կարծիքով, դա կարող էր հեղինակազրկել Ֆրանսիային արևելքում: Ժ. Կլեմանսոն պնդում էր, որ ամեն ինչ արվի ԱՄՆ կառավարության մոտ, որպեսզի հայ կամավորներին և ԱՄՆ հայ զինվորներին Արևելյան լեգեոն ուղարկելու համաձայնություն տան և փոխադրամիջոցներ տրամադրեն[1]:

1918 թ. օգոստոսի 8-ին Ժ. Ժյուսերանը հեռագրեց Ս. Պիշոնին, որ ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ֆրանկ Լ. Փոլքը տեղեկացրել էր, որ չեն կարող բավարարել Արևելյան լեգեոնի համար հայ կամավորներ տրամադրելու ֆրանսիական կառավարության խնդրանքը, քանի որ ԱՄՆ-ը Թուրքիային պատերազմ չէր հայտարարել և անհնար էր համարում ամերիկյան բանակի հայ զինվորներին ուղարկել կռվելու թուրքերի դեմ, չէր կարող նաև պաշտոնապես խրախուսել կամավորագրությունը, սակայն դեմ չէր, եթե ԱՄՆ-ում բնակվող հայերը կամավորագրվեին[2]: Օգոստոսի 10-ին Պ. Նուբարը Ժ. Գուին հայտնեց, որ Մ. Սվազլյանը տեղեկացրել է, որ ԱՄՆ բանակում կան 4.000-5.000 հայեր, որոնց ռազմական նախարարությունն արգելել էր տեղափոխվել Արևելյան լեգեոն, իսկ քաղաքացիություն չունեցող և դրա համար չդիմած հայերի թիվը խիստ սակավաթիվ էր[3]: Օգոստոսի 29-ին Ս. Պիշոնը տեղեկացրեց Ժ. Կլեմանսոյին, որ հաշվի առնելով Ժ. Ժյուսերանի և Պ. Նուբարի հետ փոխանակված նամակագրությունը, պարզ է դարձել, որ ԱՄՆ կառավարությունը հակված չէ դաշնային բանակի հայ զինվորներին թույլատրել ծառայելու Արևելյան լեգեոնում[4]:

Այսպիսով, պարզ էր դառնում, որ ԱՄՆ ռազմական իշխանություններն այնքան էլ հակված չէին հայ զինվորներին տրամադրել Ֆրանսիային: Դրան խանգարում էին մի կողմից օրենսդրությունը, մյուս կողմից՝ ԱՄՆ-ի ձգտումը՝ օգտագործելու հայ մարտիկների կարողությունները սեփական շահերի համար: Չի բացառվում նաև, որ ԱՄՆ իշխանությունները ավելի հեռահար նպատակներ կարող էին ունենալ:

[1] Նույն տեղում, էջ 311-312:
[2] Նույն տեղում, էջ 350:
[3] Նույն տեղում, էջ 351-352:
[4] Նույն տեղում, էջ 358:

Ինչպես հայտնի է, պատերազմից հետո ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը ցանկություն ուներ վերցնելու Հայաստանի (Կիլիկիայով) մանդատը: Հետևաբար՝ բնական էր, որ ամերիկյան կողմը դեմ էր ֆրանսիական բանակի հայկական զինուժի մեծացմանը, որը միտված էր Կիլիկիայի ազատագրմանը և այնտեղ Ֆրանսիայի ազդեցության հաստատմանը: Ամերիկահայ կամավորներից Կիպրոսում կազմավորվեց երկրորդ գումարտակը: Ինչպես տեսանք, ամերիկահայ երիտասարդները մեծ խանդավառությամբ ընդունեցին հայրենիքն ազատագրելու և ցեղասպան թուրքերից վրեժ լուծելու նպատակով մարտի դաշտ մեկնելու գաղափարը: Ցավոք, ֆրանսիական իշխանությունները չկարողացան բոլոր ցանկացողներին տեղափոխել Կիպրոս և նրանց միայն փոքր մասը համալրեց Հայկական լեգեոնի շարքերը:

Արգենտինահայերի կամավորագրությունը:

1918 թ. մարտին Ազգային միություն կազմավորվեց նաև Բուենոս Այրեսում: Կամավորագրության կոչին արձագանքեցին նաև արգենտինահայերը, որոնք մոտ 150 կամավորներ ուղարկեցին Ֆրանսիա՝ լեգեոնին միանալու համար: Արգենտինահայերի առաջին խմբերը, Խոսրով Ռշտունու (28 կամավոր) և Երվանդ Մալխասյանի (23 կամավոր) գլխավորությամբ, ՀՅԴ կողմից հավաքագրվեցին և ուղարկվեցին արդեն 1916 թ. վերջին[1]:

1918 թ. ապրիլի 13-ին Ֆրանսիայի ԱԳ նախարարը հեռագրով տեղեկացրեց Բուենոս Այրեսում ֆրանսիական դեսպան Գոսսենին, որ տեղի Հայկական կոմիտեն պատրաստակամություն է հայտնել կամավորներ ուղարկել Արևելյան լեգեոնի համար: Նախարարը հրահանգեց հնարավորության սահմաններում դյուրին դարձնել զինծառայության համար պիտանի կամավորների մեկնումը[2]: 1918 թ. մայիսին «Ցեյլոն» շոգենավով Բուենոս Այրեսից 13 կամավորներ ժամանեցին Հավր, ապա՝ Մարսելի վրայով մեկնեցին Կիպրոս[3]: Նույն ամսում ևս մեկ 25 հոգանոց խումբ ուղարկվեց Ֆրանսիա[4]: Ժ. Կլեմանսոյի առաջարկի

---

[1] **Մատթէոսեան Վ.,** Պուենոս Այրէսի Հայ ազգային միութիւնը (1918-1920), «Հայկազեան հայագիտական հանդէս», Պէյրութ, 1998, հ. 18, էջ 132:

[2] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 229:

[3] Նույն տեղում, էջ 323:

[4] **Մատթէոսեան Վ**., նշվ. աշխ., էջ 133:

մասին հուլիսի 21-ին Ժ. Գուն տեղեկացրեց Պ. Նուբարին: Հայ գործիչը հուլիսի 25-ին նամակով այդ նախաձեռնության մասին տեղեկացրեց Բուենոս Այրեսի թեմի առաջնորդ Բաղդասար քահանա Պարասաթյանին[1] և համայնքի ազդեցիկ գործիչներին՝ Հմայակ Հակոբյանին, Մեծատուր Մեծատուրյանին, Զեյթունյանին: Նա առաջարկեց հնարավորինս մեծ թվով կամավորներ ուղարկել: Ս. Պիշոնը հուլիսի 31-ին Գոսսենին տեղեկացրեց Պ. Նուբարի նամակի մասին և հրահանգեց կապեր հաստատել վերոնշյալ գործիչների հետ և ստեղծել զինվորագրման հայկական կոմիտե[2]:

1918 թ. հուլիսին մեկնեց հերթական խումբը, որոնց մեջ մեծ թիվ էին կազմում Հայկական բարեգործական ընդհանուր միության Արգենտինայի մասնաճյուղի անդամները: Այդ առթիվ ՀԲԸՄ-ը «կազմակերպած է ողջերթի հանդէս մը ի պատիւ Բարեգործականի գօրծոն անդամներեն՝ օդաչու Միհրան Խայեյանի, որ իր ընկերներով որպէս կամաւոր Ֆրանսա մեկնած է»[3]: Մ. Խայեյանը 1919 թ. Կարսի մոտ ավիավթարի զոհ դարձավ[4]: 1918 թ. նոյեմբերի 7-ին Գոսսենը, Բուենոս Այրեսի հայ ազգային միության խնդրանքով, հարցում արեց Ս. Պիշոնին, թե արդյո՞ք Արևելյան լեգեոնի համար կամավորագրությունը դեռ շարունակվում է: Նոյեմբերի 10-ին նախարարը պատասխանեց, որ ռազմակալման համար անհրաժեշտ են զորքեր, իսկ հայերի շահերից բխում է, որ նրանց թվաքանակը մեծ լինի ֆրանսիական զորախմբում: Միաժամանակ առաջարկեց կամավորագրել ոչ թե պատերազմի ընթացքի համար, ինչպես նախկինում էր, այլ՝ երկու տարով[5]: 1918 թ. դեկտեմբերից մինչև 1919 թ. ապրիլը Հայկական լեգեոնին միանալու համար Արգենտինայից մեկնեցին ևս մոտ 120-150 կամավորներ[6]:

Ռազմագերիների կամավորագրությունը:

---

[1] Ա. Պեյլերյանի ժողովածուի մեջ առաջնորդի ազգանունը գրված է Բաղդասարյան, որն ուղղել ենք:

[2] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 344-345, 346-347:

[3] **Մելքոնյան Է.**, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության պատմություն, Երևան, 2005, էջ 506:

[4] **Մատթէոսեան Վ.,** նշվ. աշխ., էջ 135:

[5] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 435:

[6] **Մատթէոսեան Վ**., նշվ. աշխ., էջ 140:

Լեգեոնի մեջ նախատեսվում էր ընդգրկել Անտանտի երկրների ռազմագերիների ճամբարներում հայտնված հայ զինվորներին: Բազմաթիվ հայեր, որոնք կռվել էին թուրքական, բուլղարական բանակներում, հայտնվել էին ռազմագերիների մեջ: Նրանց պահում էին Հնդկաստանում, Եգիպտոսում, Ռուսաստանում, Սերբիայում, Ալժիրում և այլ վայրերում գտնվող ճամբարներում: Նրանց վիճակը բավական ծանր էր, քանի որ թշնամի էին դիտվում և՛ Անտանտի երկրների կողմից, և՛ Քառյակ դաշինքի ռազմագերիների: Մեծ Բրիտանիայի Հնդկաստանի գործերով նախարարությունը 1916 թ. հոկտեմբերի 24-ին տվել էր իր համաձայնությունը, որպեսզի Հնդկաստանում ներկալված հայ ռազմագերիները միանային Արևելյան լեգեոնին[1]: Թորգոմ արք. Գուշակյանը մեկնեց Բոմբեյ, որպեսզի տեսակցի Հնդկաստանում բանտարկված թուրքական բանակի հայ ռազմագերիների հետ, որոնք հիմնականում կիլիկեցիներ էին, և նրանց համոզի անդամագրվելու լեգեոնին[2]: Հնդկաստանի հյուսիսարևմտյան մասում գտնվող Սումերպուրի ճամբարում արգելափակված էին 165 հայ ռազմագերիներ: 1916 թ. դեկտեմբերի 26-ին Թորգոմ արք. Գուշակյանը հանդիպեց նրանց հետ: Բոլորը ցանկություն հայտնեցին միանալու լեգեոնին [3]: 1917 թ. հունվարի 20-ին Եգիպտոսում բրիտանական գերագույն կոմիսար գեներալ Ռեգինալդ Վինգեյթը Ժ. Դեֆրանսին տեղյակ պահեց, որ Մեծ Բրիտանիայի ԱԳՆ-ը համաձայն էր՝ Հնդկաստանում գտնվող հայ ռազմագերիների լեգեոնին միանալուն, իսկ ինքն արդեն հեռագրել էր Հնդկաստանի փոխարքա Ֆրեդերիկ Շելմսֆորդին, որպեսզի տեղեկացնի հայերի ուղարկման ամսաթիվը[4]:

Միջագետքի և Պաղեստինի ռազմաճակատներում բրիտանացիների կողմից գերված թուրքական բանակի բոլոր հայ զինվորները, որոնք պիտանի էին ծառայության համար, զինվորագրվեցին Հայկական լեգեոնին: Լ. Ռոմիոն և գեներալ Մ. Բայուն միայն գովասանքով էին խոսում նրանց կարգապահության և մարտական որակների մա-

[1] **Սարուխանյան Տ.,** նշվ. աշխ., էջ 67:

[2] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 411:

[3] **Գուշակեան Թորգոմ պատրիարք**, Ամբողջ երկեր, հ. Զ, Հնդկահայք: Տպաւորութիւններ եւ տեղեկութիւններ, Երուսաղեմ, 1941, էջ 31:

[4] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 429:

սին[1]: Արևմտահայ փախստականների հանձնաժողովի հաշվարկներով 1916 թ. դեկտեմբերին Սիբիրում կային 2.000 հայ ռազմագերիներ: Չնայած դեռևս 1914 թ. նոյեմբերից կաթողիկոսը, Դումայի պատգամավոր Միքայել Պապաջանյանը և այլ գործիչներ բազմիցս դիմել էին կայսրին ու ռուսական իշխանություններին, որպեսզի հայ ռազմագերիներն ազատ արձակվեին, կամ բարելավվեր նրանց վիճակը, սակայն դրանք արդյունք չէին տվել: Նրանք գտնվում էին ծայրահեղ ծանր վիճակում[2]: 1917 թ. մարտի 23-ին Գևորգ Ե կաթողիկոսը դիմեց Ռուսաստանի Ժամանակավոր կառավարությանը, խնդրելով՝ «Կարգադրել անմիջապէս ազատել այն բոլոր հայ գերիներին, որոնք տանջւում են Սիբիրում և Ռուսական պետութեան զանազան վայրերում, իբրև այնպիսի անձանց, որոնք կամաւոր կերպով իրենք իրենց յանձնել են ռուս քրիստոսասէր զօրքին»[3]: Սակայն Ռուսաստանից հայ ռազմագերիներին այդպես էլ հնարավոր չեղավ միացնել լեգեոնին:

Դաշնակիցները դեռևս 1916 թ. վերջերին բուլղարական բանակի հարյուրավոր հայ զինվորների կոչ էին արել հանձնվել՝ խոստանալով առանձնահատուկ վերաբերմունք ցույց տալ և չդիտել որպես ռազմագերի: Հայերից շատերն անձնատուր էին եղել սերբերին, փոքր մասը՝ ֆրանսիացիներին: Չնայած տրված խոստումներին՝ նրանց՝ որպես ռազմագերիներ, ընդգրկել էին ծանր աշխատանքների մեջ: Պ. Նուբարը 1917 թ. հոկտեմբերին և 1918 թ. հունվարին խնդրեց ֆրանսիական իշխանություններին՝ թեթևացնել նրանց վիճակը և հնարավորության դեպքում միացնել Արևելյան լեգեոնին[4]: Փետրվարի 5-ին Ս. Պիշոնը ռազմական նախարարությանը հարցում արեց սերբերի մոտ գտնվող հայ ռազմագերիների ճակատագրի մասին[5]: 1918 թ. մայիսի 4-ին ռազմական նախարարի հրամանագրով Մարսելի հայ ազգային միության նախագահ Հովհաննես Սահատճյանին հանձնարարվեց զբաղվել հայ

[1] Տե՛ս **Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը**, հ. II, էջ 47:
[2] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 57, ց. 5, գ. 90, թ. 1-53:
[3] Տե՛ս նույն տեղում, գ. 151, թ. 16:
[4] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 40, 156:
[5] Նույն տեղում, էջ 290:

ռազմագերիներին հայտնաբերելու և Արևելյան լեգեոնին կամավորագրելու հարցերով[1]:

1918 թ. մայիսի 25-ին Ժ. Կլեմանսոն տեղեկացրեց Ս. Պիշոնին, որ Մակեդոնիայում դաշնակցային բանակների գլխավոր հրամանատար գեներալ Ա. Գիյոման հայտնել էր, որ սերբերը բոլոր դասալիքներին հանձնել են ֆրանսիացիներին: Սերբերի մոտ ռազմագերու կարգավիճակով հայտնվել էին 39 հայեր, որոնցից 4-ը դեռևս 1916 թ. օգոստոսին իրենց իսկ խնդրանքով ընդգրկվել էին սերբական բանակի մեջ: Մյուս հայ ռազմագերիներին ուղարկել էին տարբեր ճամբարներ, ուր ներգրավվել էին տարբեր ոչ շատ ծանր աշխատանքների մեջ: Գեներալը տեղեկացրել էր, որ այդ հայերից ոչ մեկը Արևելյան լեգեոնում ընդգրկվելու համար չէր դիմել, միևնույն ժամանակ սերբական իշխանությունները հակված էին նրանց պահել բանակում՝ աշխատուժի պակասի պատճառով[2]: Մարսելի հայ ազգային միության ներկայացուցիչները, որոնք բուլղարական ու թուրքական բանակներից գերված հայերին կամավորագրելու նպատակով մեկնել էին Կորսիկայի, Ալժիրի և Ֆրանսիայի ռազմագերիների ճամբարներ, լուրջ արդյունքներ չարձանագրեցին: Սակայն այդ ուղևորությունների արդյունքում պարզ դարձավ, որ սերբական և չեխոսլովակյան ծագման գերիները օգտվում էին աշխատանքային բարվոք պայմաններից, իսկ հայերը ներգրավված էին ծանր աշխատանքներում: Ազգային պատվիրակության նախագահը 1918 թ. սեպտեմբերի 23-ին Ժ. Գուից պահանջեց հայ ռազմագերիների համար ևս ապահովել բարենպաստ պայմաններ[3]:

Կամավորագրության անհատական դիմումներ:

Լեգեոնում ծառայելու ցանկություն հայտնեցին նաև բրիտանական և ռուսական ծառայության մեջ գտնվող որոշ հայ սպաներ: Սակայն ֆրանսիական իշխանությունները մերժեցին նրանց, պատճառաբանելով, որ լեգեոնում կարող էին ընդգրկվել միայն ֆրանսիացի սպաներ և օսմանահպատակներ[4]:

---

[1] Նույն տեղում, էջ 285:

[2] Նույն տեղում, էջ 290-291:

[3] Նույն տեղում, էջ 371:

[4] Նույն տեղում, հ. I, էջ 461, 466, 468:

1917 թ. փետրվարի 26-ին և ապրիլի 7-ին Պ. Նուբարը Ֆրանսիայի ԱԳՆ պաշտոնյա Վիետի հետ հանդիպումներում պահանջեց Արտասահմանյան լեգեոնի բոլոր հայ զինվորներին տեղափոխել Արևելյան լեգեոն: Սակայն Ֆրանսիայի ԱԳՆ-ում համոզված էին, որ պետք է Արտասահմանյան լեգոնի հայ զինվորները անհատական դիմումներով տեղափոխվեին[1]: Այնուամենայնիվ, մայիսի 27-ի հրամանագրով Ֆրանսիայի ռազմական նախարարը Արտասահմանյան լեգեոնի բոլոր հայ և սիրիացի զինվորներին թույլատրեց տեղափոխվել Արևելյան լեգեոն[2]: 1917 թ. սեպտեմբերի 17-ին ԱԳ նախարար Ա. Ռիբոյին ուղարկած նամակով Ս. Սվաճյանը խնդրում էր միջնորդել ռազմական նախարարությանը, որպեսզի ԱՄՆ-ից նոր ժամանած կամավորական, Զեյթունի նախկին քահանա Վաղարշակ վարդապետ Արշակունուն նշանակեն հայկական լեգեոնի խոստովանահայր[3]:

1918 թ. հունվարին Երուսաղեմի նախկին պատրիարքական տեղապահ (1909-1913 թթ.) Դանիել արքեպիսկոպոս Հակոբյանը, ով պատերազմի տարիներին աքսորված էր Երուսաղեմ, ընդգրկվց Արևելյան լեգեոնում որպես քահանա[4]: 1918 թ. փետրվարի 9-ին Ժ. Կլեմանսոն գաղտնի հրահանգ ուղարկեց Լ. Ռոմիոյին, որպեսզի առանց իր թույլտվության լեգեոն չընդունի որևէ հայի կամ սիրիացու, որը քաղաքացիական կյանքում զբաղեցրել էր բարձր դիրք[5]: Փաստորեն, ֆրանսիական կողմը փորձում էր լեգեոնից հեռու պահել հեղինակություն ունեցող հայերին, որպեսզի հետագայում, ոչ հայանպաստ քաղաքականություն վարելու դեպքում, հայերը չունենային ղեկավար գործիչներ, ովքեր լեգեոնականներին դուրս կբերեին Ֆրանսիայի դեմ:

Միջագետքում, Պաղեստինում և Սիրիայում միացած կամավորներ:

Միջագետքում Ֆրանսիայի հյուպատոս Ռուին ցանկանում էր զինվորագրման կոմիտե ստեղծել նաև Բաղդադում: Սակայն տեղի բրիտանական իշխանությունները բավական կոշտ պատասխանեցին, որ

[1] Նույն տեղում, էջ 463-464:

[2] **Գարամանուկեան Ա.,** նշվ. աշխ., էջ 81:

[3] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 32:

[4] Նույն տեղում, էջ 150, 152:

[5] Նույն տեղում, էջ 164-165:

այնտեղ Արևելյան լեգեոնին զինվորագրման ենթակա հայեր այլևս չկան, քանի որ ռազմագերիներին արդեն ուղարկել են, իսկ տեղաբնիկ հայերը ծառայության էին անցել իրենց մոտ[1]:

1917թ. նոյեմբերի 17-ին Ռուն ԱԳ նախարար Լ. Բարտուին տեղեկացրեց, որ Բաղդադի հայկական կոմիտեն դժգոհ է զինվորագրման ընթացքից, քանի որ բրիտանացիների դրդմամբ կամ նրանց առաջացրած խոչընդոտների պատճառով հայերից շատերը հարժարվել են կամավորագրվելուց: Նաև տեղեկացնում էր, որ Սինջար լեռան վրա (այժմյան Իրաքի հյուսիս-արևմուտքում, բնակեցված է հիմնականում եզդիներով) կան ավելի քան 350 մարտունակ հայ տղամարդիկ: Հայկական կոմիտեն առաջարկել էր, որևէ բանագնաց ուղարկել նրանց մոտ, որը կկարողանար նրանց համոզել մեկնելու և ապահով անցկացներ արաբական ցեղերի միջով: Մոսուլի շրջանում ևս կային նման հայեր: Նշում էր, որ բրիտանական իշխանություններն ամենուրեք խոչընդոտում են կամավորագրության աշխատանքներին[2]:

Արդեն 1917 թ. հոկտեմբերի կեսերից բրիտանացիները փորձում էին դասալքող ռուսական բանակի փոխարեն Հայաստան և Իրան տեղափոխել Ռուսաստանի այլ ռազմաճակատներում գտնվող 100.000-ից ավելի հայ զինվորներին, նաև ԱՄՆ-ում և այլ վայրերում հայերի կամավորագրություն իրականացնել: Բրիտանացիների նպատակն էր թույլ չտալ, որ թուրքերը մեծ ուժեր կենտրոնացնեն Միջագետքի և Պաղեստինի ճակատներում[3]: Նման պայմաններում բրիտանացիներն իրենք էին ուզում կամավորագրել Միջագետքում գտնվող, կռվելու ընդունակ հայ երիտասարդներին: Հետևաբար՝ նրանք ամեն կերպ խոչընդոտում էին Արևելյան լեգեոնին միանալու նպատակով արվող կամավորագրությանը:

1918 թ. հունիսի 29-ին Ռուն հեռագրեց Ս. Պիշոնին, որ հայերը դժգոհ են, որ բրիտանացիները խոչընդոտում են կամավորագրությանը, առաջարկում էր հրամանատար Սկիարդի իրավասությունների մեջ մտցնել նաև կամավորագրության հարցը, նա հույս ուներ, որ Բաղդա-

[1] Նույն տեղում, էջ 49-51:

[2] Նույն տեղում, էջ 63:

[3] **Նասիպեան Ա.**, Բրիտանիա եւ Հայկական հարցը 1915-1923, Պէյրութ, 1994, էջ 99-101:

դի թեմի առաջնորդ Մուշեղ արք. Սերոբյանի ժամանումից հետո կամավորների հարցը կարող է ավելի շահեկան վիճակում հայտնվել[1]: Սակայն հարցը այդպես էլ չլուծվեց: Հոկտեմբերի 3-ին Ռուն գաղտնի հեռագրով տեղեկացրեց Ս. Պիշոնին, որ մի քանի հարյուր գաղթական հայեր խնդրում են իրենց զինվորագրել Արևելյան լեգեոնին, սակայն բրիտանացիները ամեն կերպ խոչընդոտում են[2]:

1918 թ. հոկտեմբերին Միջագետքում 807 կամավորներ պատրաստ էին միանալու Արևելյան լեգեոնին: Մուշեղ եպ. Սերոբյանը դեկտեմբերի սկզբին կրկին խնդրեց բրիտանական իշխանությունների թույլտվությունը, որպեսզի նրանք միանային լեգեոնին[3]: Սակայն նոյեմբերի 6-ին Ժ. Կլեմանսոն տեղեկացնում է Սկիարդին, որ բրիտանական հրամանատարությունը պետք է Կովկասի հայկական բանակն ուժեղացնի: Հետևաբար, Պարսկաստանում և Միջագետքում կամավորագրված հայերին անհրաժեշտ էր միացնել այդ բանակին և չուղարկել Արևելյան լեգեոն[4]: Այսպիսով, ժամանակակից Իրաքի տարածքում կամավորագրված գրեթե 1.000 հայ կամավորներին բրիտանացիները չթույլատրեցին միանալ լեգեոնին:

1918 թ. մարտի 22-ին Երուսաղեմից 36 հայ կամավորներ, որոնց թվում նաև Ս. Հակոբ վանքի բազմաթիվ միաբաններ, մեկնում են Կիպրոս: Դա մեծ խանդավառություն էր առաջացրել Երուսաղեմի հայկական գաղութում: Ժ. Պիկոն հիացած էր այդտեղի ու Եգիպտոսի հայերի ոգևորությամբ, եռանդով, համերաշխությամբ ու մարտնչելու ձգտումով: Ժ. Պիկոն պատրաստվում էր մեկնել բրիտանացիների կողմից նոր ազատագրված Անդրհորդանան և այլ տարածքներ, որպեսզի տեղի հայ գաղթականներից Արևելյան լեգեոնի համար կամավորներ հավաքագրի[5]: Ապրիլին Երուսաղեմի հայ գաղթականներից ևս 100 կամավորներ միացան լեգեոնին[6]:

---

[1] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 327-328:
[2] Նույն տեղում, էջ 378:
[3] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 430, ց. 1, գ. 1044, թ. 2:
[4] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 429:
[5] Նույն տեղում, էջ 213:
[6] Նույն տեղում, էջ 242:

Դամասկոս տարագրված շուրջ 60 հայ երիտասարդներ, մեծամասամբ ուրֆացիներ, 1918 թ. սկզբին որոշում են գաղտնի հեռանալ և միանալ Հայկական լեգեոնին կամ Կովկասի հայկական ուժերին: Նրանք զենք են հայթայթում և 1918 թ. մարտին գաղտնի հեռանում են Լիբանանի ուղղությամբ: Հաղթահարելով անապատի դժվարությունները՝ նրանք միանում են էմիր Ֆեյսալին: Ապա՝ շուրջ մեկ ամսվա դժվարին ճամփորդությունից հետո նրանք հասնում են Ագապա, որտեղից Պորտ Սայիդի վրայով հուլիսին մեկնում են Կիպրոս և կամավորագրվում Հայկական լեգեոնին[1]: 1918 թ. նոյեմբերի 25-ին Զահլեից Դամասկոս են հասնում թուրքական բանակի մոտ հարյուր հայ նախկին զինվորներ, որոնք ցանկություն են հայտնում կամավորագրվել Հայկական լեգեոնին: Նրանց ուղարկում են Ադանա և ընդգրկում ոստիկանական ուժերի մեջ[2]:

Գումարտակների կազմավորումը և մարգումը:

Եգիպտոսում ֆրանսիական ռազմական առաքելության ղեկավար Է. Բրեմոնը 1917 թ. փետրվարի 12-ին Ա. Բրիանին ուղարկած գաղտնի նամակում իր հիացմունքն էր հայտնում Հայկական լեգեոնի կազմավորման գործում Լ. Ռոմիոյի կատարած աշխատանքի մասին: Նշում էր, որ իր բոլոր սպասելիքները գերազանցված են[3]: Մարտի 1-ին Լ. Ռոմիոն կրկին ռազմական նախարարին առաջարկեց բարձրացնել լեգեոնականների աշխատավարձը՝ ամենօրյա 2 ֆրանկի փոխարեն 2,5 ֆրանկ: Ժ. Դեֆրանսը մարտի 14-ին խնդրեց Ա. Բրիանին, որպեսզի նա միջնորդի ռազմական նախարարի մոտ՝ ընդունելու Լ. Ռոմիոյի առաջարկը[4]: 1917 թ. հոկտեմբերի 11-ին ռազմական նախարար Պ. Պենլևեն հրամանագիր ստորագրեց, որով սահմանվեցին Արևելյան լեգեոնի հայ և սիրիացի զինվորների, նրանց ընտանիքների նպաստները[5]: Դրանով աշխատավարձի չափը բարձրացվեց 2,5 ֆրանկի: Սա-

---

[1] **Դիւցազնական Ուրֆան եւ իր հայորդիները**, Աշխատասիրեց՝ Արամ Սահակեան, Անթիլիաս, 2014, էջ 931-939:

[2] **Պօղոսեան Յ.,** Հաճընի ընդհանուր պատմութիւնը եւ շրջակայ Գօզան-տաղի հայ գիւղերը, Լօս Անճէլըս, 1942, էջ 599:

[3] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 439:

[4] Նույն տեղում, էջ 456:

[5] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 48:

կայն դա նույնպես բավական ցածր էր Ֆրանսիայում ընդունվածից: Նույնիսկ ալժիրցիները ստանում էին ավելի բարձր՝ 4 ֆրանկ[1]:

Պետք է նշել, որ մեծապետական հովերով տարված ֆրանսիացի հրամանատարներից շատերը վերևից էին նայում հայ լեգեոնականներին, վատ էին վերաբերվում նրանց, փորձում էին ազգային արժեքները մեռցնել կամավորների մոտ: Հայերի արժանապատվությունը վիրավորող ֆրանսիացիներին պատժելու փոխարեն պատժում էին բողոքողներին: Զինվորական կերակուրը նույնպես բավական վատ էր, քանի որ պաշտոնյաները գրպանում էին գումարները, իսկ ուտելիքի որակից բողոքողներին պատժում էին: Լեգեոնականների աշխատավարձերը, չնայած որոշ չափով բարձրացվեց, սակայն դա բավական ցածր էր ֆրանսիացիների աշխատավարձից: Սակայն լեգեոնականները դիմանում էին այդ փորձություններին, համբերում ու մարզվում էին, քանի որ ինչպես նշում է կամավորներից Ռուբեն Հերյանը նրանք «միակ մէկ նպատակ կը հետապնդեն, այն է. հայու ազատագրութիւնը»[2]: Հայկական լեգեոնին անդամագրվելու հարցում եղած ոգևորության մասին պատմաբան Շ. Թորոսյանը գրում է. «Հայ ազգային պատվիրակության կոչով լեգեոնի դրոշի տակ էին համախմբվել հասարակական-քաղաքական տարբեր ուղղությունների և սոցիալական տարբեր խավերի պատկանող, բայց միևնույն ցանկությամբ ու նպատակով համակված հազարավոր երիտասարդներ: Աշխարհի զանազան կողմերից եկած ու հազարավոր կիլոմետրեր ճամփա կտրած հայ երիտասարդությանը միավորել էր թուրքական բռնակալության տակ հեծող հայրենիքի ու բազմատանջ ժողովրդի ազատագրության նվիրական նպատակը»[3]: Մուսալեռցիներից, եգիպտահայերից և ռազմագերիների առաջին խմբից 1916 թ. վերջին և 1917 թ. սկզբին կազմավորվեց առաջին գումարտակը: Ամերիկահայ կամավորներից 1917 թ. երկրորդ կեսին ձևավորվեց երկրորդ գումարտակը: Երրորդ գումարտակը ևս կազմավորվեց Կիպրոսում 1917 թ. վերջերին և 1918 թ. սկզբին՝ ամերիկահայերից,

[1] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 430, ց. 1, գ. 784, թ. 2-4:

[2] Նույն տեղում, թ. 5:

[3] **Թորոսյան Շ.,** Կիլիկիայի հայերի ազգային-ազատագրական շարժումները 1919-1920, Եր., 1987, էջ 60:

Պաղեստինում բրիտանացիներին անձնատուր եղած հայ ռազմագերիներից և տարագիրներից:

Ամերիկայի բարեկեցիկ կյանքին սովոր կամավորների համար բավական դժվար էր անմիջապես վարժվել զինվորական կյանքի դժվարություններին: Սակայն նրանք երկար ու դժվարին ճանապարհ էին կտրել հայրենակիցների վրեժը լուծելու և հայրենիքը թուրքական դժնդակ լծից ազատագրված տեսնելու նպատակով: Այդ վեհ գաղափարը նրանց ուժ էր տալիս համակերպվելու բոլոր զրկանքներին:

Զինվորական կյանքին ու կարգապահությանը ծանոթ էին Կովկասի կամավորական ջոկատներում, ֆրանսիական Արտասահմանյան լեգեոնում և թուրքական բանակում ծառայած կամավորները: Սակայն մեծամասնությանը անծանոթ էր դա, և սկզբնական շրջանում բավական դժգոհություններ եղան: Հետզհետե կամավորները սովորեցին զինվորական կարգապահությանն ու դժվարություններին, իսկ շինարարական աշխատանքներն ավարտելուց ու ռազմական ուսուցումը սկսելուց հետո նրանց մոտ դժգոհությունները գրեթե վերացան: Տողանցքի ու շարայինի ընթացքում հայ զինվորները երգում էին հայկական հայրենասիրական երգեր՝ «Դարձյալ փայլեց», «Հեռավոր երկիր», «Ձայն մը հնչեց Էրզրումի հայոց լեռներեն», «Տալվորիկի զավակ եմ քաջ», «Իզեն հայեր» և այլն[1]: Միակ բանը, որից դժգոհ էին, այն էր, որ ամիսներ տևող մարզումներից հետո հետաձգվում էր նրանց մարտադաշտ մեկնելը, և անհայտ էր այդ բաղձալի օրը:

Կիպրոսի հայ համայնքի ներկայացուցիչները տոներին այցելում էին լեգեոնականներին, նրանց նվերներ էին բաժանում, որը ոգևորում էր կամավորներին, քանի որ տեսնում էին, որ իրենց հիշում և հարգում են[2]: Լեգեոնականների առօրյան ավելի տանելի դարձնելուն ամեն կերպ աջակցում էին նաև եգիպտահայ կանայք և աղջիկները: Նրանք նամակագրական կապ էին հաստատել կամավորներից շատերի հետ, ժամանակ առ ժամանակ ուղարկում էին փոքրիկ նվերներ: Դա բարձրացնում էր ընտանիքներից հեռու գտնվող երիտասարդների տրամադրությունն ու ոգին: Լեգեոնականները նրանց կոչում էին «Մարե»: Այդ

[1] **Պոյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 71:

[2] **Ամէմեան Խ.**, նշվ. աշխ., էջ 64:

կանանց մեջ մարտիկները տեսնում էին իրենց մայրերին ու քույրերին[1]: Կուսակցականությունը լեգեոնում գրեթե դեր չէր խաղում: Զինվորների մեծամասնությունը որևէ կուսակցության անդամ էր, սակայն ծառայության ընթացքում բոլորը գիտակցում էին իրենց վեհ նպատակը և կուսակցական բանավեճեր գրեթե տեղի չէին ունենում: Ապակուսակցական մթնոլորտի ստեղծման գործում կարևոր դերակատարություն ունեցան քաղաքական ուժերի ղեկավարների և հայ հրամանատարների ճիշտ գործունեությունը:

Կիլիկիայում կամ Սիրիայի հյուսիսում նոր ռազմաճակատ բացել դաշնակիցներն այդպես էլ չհամարձակվեցին: Հետևաբար, Արևելյան լեգեոնը մարզումների համար բավական երկար ժամանակ ունեցավ: Թուրքերից հնարավորինս արագ վրեժխնդիր լինելու կամավորների ձգտումը իրականություն չէր դառնում: Ամիսներն անցնում էին, սակայն լեգեոնը ռազմաճակատ մեկնելու հրաման չէր ստանում: Անհասկանալի սպասումը, միօրինակ ու տաղտկալի կյանքն արդեն հոգնեցրել էր լեգեոնականներին: Սկզբնական շրջանի խանդավառությունը հետագա ամիսներին բավական պակասել էր: Դժգոհությունների տեղիք էին տալիս նաև ֆրանսիացի սպաների պահվածքը՝ կոպիտ վերաբերմունքը, տարբեր տոների առթիվ կամավորներին համայնքներից ուղարկված նվերների զգալի մասի գրպանումը:

1918 թ. փետրվարի 24-ին Մոնարկայում մեծ հանդիսավորությամբ նշվեց Վարդանանց տոնը: Ներկա էին երեք գումարտակները, ամբողջ հրամանատարական կազմը, կղզու բրիտանական հրամանատարությունը և հայ համայնքի ներկայացուցիչները: Պատարագիչն էր Վաղարշակ վարդապետ Արշակունին[2]: Շքեղ տոնակատարությունը բավական բարձրացրեց հայ մարտիկների ոգին և տրամադրությունը:

Լեգեոնի կայացման գործում անուրանալի դերակատարություն ունեցան հայազգի սպաները: Նրանցից շատերն ավարտել էին ամերիկյան, ֆրանսիական և թուրքական ռազմական հաստատություններ: Ֆրանսիացիները հիմնականում խուսափում էին նրանց տալ բարձր սպայական կոչումներ, նույնիսկ ԱՄՆ-ի և թուրքական բանակի նախ-

[1] **Պօյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 82:

[2] **Ամէմեան Խ.**, Էջեր կամաւորի օրագրէս, էջ 70:

կին սպաներին ավելի ցածր կոչումներ էին տալիս: Չնայած դրան, հայ սպաները պատրաստակամ էին ծառայելու Հայկական լեգեոնում, որպեսզի կայանար ապագա ինքնավար Կիլիկիայի բանակի միջուկը համարվող այդ զորամասը:

Լեգեոնի հայ սպաները և հոգևորականներ

Լեգեոնի հիմնական սպայակազմը ֆրանսիացիներ էին: Դրանով Ֆրանսիան ցանկանում էր վերահսկողության տակ պահել հայերին ու սիրիացիներին, վախենալով ապագայում նրանց ինքնավարության ձգտումներից: Սակայն, հետզհետե, լեգեոնում ծառայության վերցվեցին հայ սպաներ, քանի որ նրանք ավելի լավ էին հասկանում հայ զինվորին, կարողանում էին ամրապնդել կարգապահությունը: Լեգեոնին կամավորագրվեցին նաև հայ հոգևորականներ, որոնք ծառայության վերցվեցին զինվորների հոգևոր պահանջմունքները բավարարելու համար: Հայ սպաները լեգեոն մտան տարբեր ճանապարհներով: Ֆրանսիական բանակում ծառայող հայ զինվորների ու սպաների զգալի մասը ցանկություն հայտնեց միանալ հայկական զորամասին, և նրանց մի մասին ֆրանսիական իշխանությունները տեղափոխեցին լեգեոն: Ֆրանսիական բանակից եկած հայ սպաներն ունեին այն բոլոր իրավունքները, ինչ՝ ֆրանսիացիները: Միջագետքում, Պաղեստինում և այլ վայրերում անգլիացիների կողմից գերված թուրքական բանակի հայ սպաների ու զինվորների մեծամասնությունը նույնպես ուրախությամբ զինվորագրվեցին լեգեոնին: Բավական մեծ թվով ամերիկահայ սպաներ ցանկություն հայտնեցին կամավորագրվել Արևելյան լեգեոնին: Սակայն ԱՄՆ բանակի նախկին հայ սպաներին ֆրանսիական իշխանությունները տալիս էին ավելի ցածր զինվորական կոչումներ, չէին խրախուսում նրանց կամավորագրությունը, փորձում էին սահմանափակել նրանց թիվը: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ ֆրանսիացիները վախենում էին ԱՄՆ ազդեցության մեծացումից լեգեոնում, քանի որ մտավախություն ունեին, որ ԱՄՆ-ը նույնպես ցանկանում է տիրել Կիլիկիային:

Նաև բազմաթիվ հայ հոգևորականներ ցանկություն հայտնեցին զենք վերցնելու ցեղասպան թուրքական պետության դեմ: Ֆրանսիական իշխանությունները ամեն կերպ խոչընդոտում էին բարձրաստիճան հայ հոգևորականների կամավորագրությանը, քանի որ նրանց

ներկայությունը, հեղինակությունը կարող էին կամավորների մոտ ամրապնդել ազգային ձգտումները: Դրանով էր պայմանավորված, որ լեգեոնում ծառայության վերցվեցին հատուկենտ հոգևորականներ:

Հայ սպաներին ու հոգևորականներին մասնակցեցին Արևելյան լեգեոնի կազմավորմանն ու կայացմանը, իրենց նպաստը բերեցին Կիլիկիայի ազատագրմանը, ինչպես նաև հետագայում զգալի ներդրում ունեցան քեմալականների դեմ կազմակերպված ինքնապաշտպանական կռիվներում: **Վաղարշակ վրդ. Արշակունին** ծնունդով զեյթունցի էր: 1909 թ. Զեյթունի հոգևոր առաջնորդն էր, և նրա ջանքերով էր, որ Մարաշը խուսափեց ջարդերից: Նույն թվականին մեկնել է ԱՄՆ, իսկ 1917 թ. տեղեկանալով, որ ֆրանսիացիները Կիպրոսում հայկական կամավորական բանակ են ստեղծում, կամավորագրվել էր Արևելյան լեգեոնին: Նա նշանակվեց լեգեոնի հոգևոր առաջնորդ, ստացավ լեյտենանտի աստիճան[1]: **Աբրահամ Տեր-Գալուստյանը** Մուսա լեռան ինքնապաշտպանության գործուն կազմակերպիչներից էր, նրա տանն էր հրավիրվել խորհրդակցություն, ուր որոշվեց դիմել ինքնապաշտպանության[2]: Ամրակազմ, եռանդուն մարդ էր, սիրված մուսալեռցիների կողմից: Արևելյան լեգեոնի հրամանատար Լուի Ռոմիոյի առաջարկով նշանակվել է լեգեոնի քահանա, ստացել է լեյտենանտի աստիճանի[3]: **Խորեն (Գրիգոր) ավագ քահանա Աճեմյանը** ճանաչված հոգևորական, հրապարակախոս, մանկավարժ, հասարակական գործիչ էր: 1912 թ. մեկնել էր ԱՄՆ: 1917 թ. հոկտեմբերին կամավորագրվել է Հայկական լեգեոնին, մասնակցել Արարայի ճակատամարտին, Կիլիկիայի ազատագրմանը: Ծառայել է մինչև լեգեոնի կազմալուծումը՝ 1920 թ.: Աշխատակցել է «Հայրենիք» և «Ասպարէզ» պարբերականներին: Հետագայում գրել է հուշագրություն[4], որը հանդիսանում է Հայկական լեգեոնի մասին կարևոր սկզբնաղբյուրներից մեկը:

Հակոբ վարդապետ Թաշճյանը (Կ. Պոլիս, 1877-13.02.1935, Երուսաղեմ) հոգևոր գործիչ էր, վարդապետ, մանկավարժ: Սովորել է Կ. Պոլսի Կետիկ փաշայի ազգային վարժարանում: Որոշ ժամանակ

[1] **Պարթեւեան Ս.,** նշվ. աշխ., էջ 9:

[2] Տե՛ս http://www.mousaleranjar.com/arm/default.asp?menuID=73&parentID=45:

[3] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 411-412:

[4] **Աճեմեան Խ.**, Էջեր կամաւորի օրագրէս, Պէյրութ, 1967:

եղել է Գալաթիայի Կարմիր վանքի առաջնորդ Եղիշե վրդ. Գալֆայանի փոքրավորը: 1906 թ. դարձել է Երուսաղեմի միաբան, Հարություն պատրիարք Վեհապետյանի կողմից ձեռնադրվել սարկավագ, դաստիարակ է աշխատել քաղաքի աշխարհիկ դպրոցում: 1913 թ. Եղիշե եպ. Չիլինկիրյանի կողմից ստացել է քահանայության կարգ և աբեղայության վեղար: Վարդապետական գավազան ստացել է պատրիարք Եղիշե Դուրյանից: Երուսաղեմում վարել է տեսչական և ժամարարական պաշտոններ: 1918 թ. կամավորագրվել է Հայկական լեգեոնին, դարձել տասնապետ, մասնակցել է Կիլիկիայի ազատագրմանը, 1920 թ. Մարաշի ինքնապաշտպանությանը: Թաղված է Երուսաղեմի Ս. Փրկիչ գերեզմանատանը[1]:

Տիրան (Շառլ) Թեքեյանը (Մարսել, 1887-1967, Մարսել) ծնվել է կեսարացի բարեկեցիկ վաճառականի ընտանիքում: Ճանաչված գրող Վահան Թեքեյանի զարմիկն էր: Վենետիկում հ. Արսեն Ղազիկյանի մոտ հայերեն է սովորել, ավարտել Մարսելի համալսարանը, ստացել գրականության և իրավաբանության դիպլոմներ: Բանակ զորակոչվելուց հետո դարձել է ծովային սպա: Առաջին աշխարհամարտի տարիներին ծառայել է Միջերկրականի արևելքում՝ «Դեսեքս» ռազմանավի վրա: Մասնակցել է մուսալեռցիների տեղափոխմանը Պորտ Սայիդ, մուսալեռցի երիտասարդների ռազմական մարզումներին, հայ կամավորների հետ դիվերսիոն գործողություններ է իրականացնել Կիլիկիայի ծովափնյա շրջաններում: Հայկական լեգեոնի կազմավորման շրջանում աջակցել է հրամանատար Լ. Ռոմիոյին: Արժանացել է ֆրանսիական Պատվո լեգեոնի ասպետի աստիճանի և Պատվո լեգեոնի սպայի տիտղոսի: 1919 թ. Մարսելում ֆրանսերենով հրատարակել է «Մուսա լեռան հայերի փրկությունը: Հիշողության էջեր» հուշագրությունը (հայերեն թարգմանությամբ՝ Երևան, 2002), որը կարևոր և հավաստի սկզբնաղբյուր է մուսալեռցիների պայքարի, Պորտ Սայիդում նրանց ռազմական մարզումների, Արևելյան լեգեոնի կազմավորման մասին: Առաջին աշխարհամարտից հետո դարձել է Մարսելի Հայ լեգեոնական միության նախագահ, Ֆրանսիական բանակի հայ կամավորական-

[1] **«Միութն»,** Մարտ, 1935, թիւ 3, էջ 100:

ների միության պատվավոր նախագահ: Մարսելում նրա անունով անվանակոչվել է հրապարակ[1]:

Քիմիական ճարտարագետ, ֆրանսիական պետական գործիչ **Վահե Սահաթճյանը** (Ալբերտ Արթուր) նույնպես Արևելյան լեգեոնի սպաներից էր: Ծնվել է 1897 թ. Մարսելում, հայրը Մարսելի Հայ ազգային միության նախագահն էր[2]: Աշխարհամարտի սկսվելուց հետո կռվել է Ֆրանսիայում, ապա ենթասպայի կոչումով տեղափոխվել Արևելյան լեգեոն: Մասնակցել է Արարայի ճակատամարտին, վիրավորվել, բայց մարտադաշտից դուրս չի եկել, որի համար արժանացել է պատերազմական խաչի: Կիլիկիայի ազատագրումից հետո շարունակել է ծառայությունը Հայկական լեգեոնում, 1919 թ. ստացել է լեյտենանտի կոչում[3]: Արժանացել է նաև իտալական մեդալների: 1919 թ. ընդունվել է Լիոնի ճարտարարվեստի դպրոցը: Աշխատել է որպես քիմիական ճարտարագետ: Պաշտոնավարել է Եթովպիայում, Ջիբութիում (Արևելյան Աֆրիկա), որտեղ հիմնել է ասֆալտի և քիմիական գործարաններ, մեծ դեր խաղացել Սոմալիի պատերազմի կարգավորման գործում: Արժանացել է «Պատվո լեգեոնի» շքանշանի[4]: Վահեի եղբայրը՝ **Վահագն Սահաթճյանը** նույնպես կամավորագրվել է Արևելյան լեգեոնին և կապրալի աստիճանով մասնակցել մարտական գործողություններին: Լեյտենանտ **Փափազյանը** Արևելյան լեգեոն էր տեղափոխվել Ֆրանսիայի Արտասահմանյան լեգեոնից:

Վահան Փորթուգալյանը նշանավոր հասարակական-քաղաքական, մշակութային գործիչ Մկրտիչ Փորթուգալյանի որդին էր: Ծնվել է Մարսելում, նախնական կրթությունը ստացել տեղում, ապա սովորել Էջմիածնի Գևորգյան ճեմարանում[5], Սորբոնի համալսարանում ստացել իրավաբանի դիպլոմ: Աշխարհամարտի ժամանակ միացել է ֆրանսիական բանակին, ապա՝ Արևելյան լեգեոնին: Լեյտենանտ էր, երկար ժամանակ վարել է լեգեոնի սպայակույտի քարտուղարությունը: Մաս-

[1] Տե՛ս http://www.aztagdaily.com/archives/195253:

[2] **Պարթեւեան Ս.**, նշվ. աշխ., էջ 77:

[3] **Արարա:** Նուիրուած Արարայի հինգերորդ տարեդարձին: Հրատարակութիւն Հայ լէգէոնական միութեան, 1923, Պոսթոն, էջ 11:

[4] **Բախչինյան Ա.,** Հայազգի գործիչներ, Եր., 2002, էջ 393:

[5] **Պարթեւեան Ս.**, նշվ. աշխ., էջ 41-42:

նակցել է Արարայի ճակատամարտին, արժանացել շքանշանի[1]: Կիլիկիայում եղել է Զինվորական ատյանի փաստաբան, որոշ ժամանակ Սիրիայում վարել է անգլիական զորամասերի տնտեսական բաժնի ընդհանուր կառավարչությունը: 1930-ական թվականներին նշանակվել է Հալեպի Դատական բարձրագույն ատյանի նախագահ: 1947 թ. վերջնականապես վերադարձել է Ֆրանսիա: Զբաղվել է փաստաբանությամբ: Նշանավոր է դարձել հնդիկ «իշխանի» գողացած գոհարեղենի դատի ընթացքում[2]: Նշանակվել է Բուշ դը Ռոնի բարձրագույն ատյանի դատախազ, ապա՝ Էքս-Ան-Պրովանսի վճռաբեկ ատյանի նախագահ: Մահացել է 1974 թ.[3]: Վահանի եղբայրը՝ **Լևոն Փորթուգալյանը**, նույնպես կամավորագրվել էր Արևելյան լեգեոնին, ենթասպայի կոչումով ծառայել է երրորդ գումարտակում:

Լեգեոնի լեյտենանտ **Հայկ Հրանտի Ազատյանը** միակ եգիպտահայ մտավորականն էր, որ միացավ լեգեոնին: Ուներ իրավաբանական կրթություն: Եգիպտոսի Խառը դատարաններում առևտրական գործերով փաստաբան էր աշխատել: Դարձավ լեգեոնում կարգապահական հարցերով պատերազմական ատյանի առաջ հայտնված հայ կամավորների շահերի գլխավոր պաշտպանը[4]: 1918 թ. վերջին սիրիական երկաթուղու բարձր կոմիսար է նշանակվել, որի շնորհիվ աջակցել է հայ գաղթականության վերադարձին Կիլիկիա[5]:

Ազգային-ազատագրական շարժման գործիչ, Մուսա լեռան հերոսամարտի ղեկավարներից **Պետրոս Տմլաքյանը** (գ. Խըդըրբեկ, Մուսա լեռ, 1887-27.02.1920, Մարաշ): Հնչակյան, ապա Ռամկավար ազատական կուսակցության անդամ էր: Կրթությունը ստացել էր ծննդավայրի Լատինաց վարժարանում: 1909 թ. աշխատելու էր մեկնել ԱՄՆ, անդամակցել Հնչակյան կուսակցությանը: Տիրապետում էր անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն լեզուներին: 1912 թ. վերադարձել է հայրե-

---

[1] **Ատանայի Հայոց պատմութիւն**, Խմբագրեց՝ Բիւզանդ Եղիայեան, Անթիլիաս, Տպարան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1970, էջ 430:

[2] **Աւետեան Մ.,** Հայ ազատագրական ազգային յիսնամեայ (1870-1920) յուշամատեան եւ Ջօր. Անդրանիկ: Վերլուծական հայեցողութեամբ եւ վաւերական տուեալներով, Փարիզ, 1954, էջ 502-503:

[3] Տե՛ս http://www.aztagdaily.com/archives/195253:

[4] **Պարթեւեան Ս.,** նշվ. աշխ., էջ 53-55:

[5] **Աւետեան Մ**., նշվ. աշխ., էջ 501:

նիք, ձեռնամուխ եղել բնակչության զինման աշխատանքներին՝ ներդնելով նաև սեփական գումարները: Մուսա լեռան հերոսամարտի կազմակերպիչներից ու խմբապետերից էր: Որպես թարգմանիչ ուղեկցել է ֆրանսիական զրահանավի հրամանատարության հետ բանակցող Խաչեր Տումանյանին: Պորտ Սայիդում մասնակցել է ֆրանսիական սպաների կողմից կազմակերպված ռազմական մարզումներին: 1916 թ. զինվորագրվել է Արևելյան լեգեոնին: Ստացել է լեյտենանտի աստիճան, նշանակվել 3-րդ գումարտակի 7-րդ վաշտի հրամանատարի տեղակալ: Մասնակցել է Արարայի ճակատամարտին, Կիլիկիայի ազատագրմանը: 1920 թ. փետրվարի վերջին 150 կամավորներով կազմակերպել է Մարաշի Ս. Աստվածածին եկեղեցում ապաստանած հայերի պաշտպանությունը, ուր և 27 կամավորների հետ զոհվել է[1]:

Մովսես Աբրահամի Տեր-Գալուստյանը (գ. Յողուն Օլուք, Մուսա լեռ, 14.10.1895-14.11.1984, Բեյրութ) գրող, մանկավարժ, ազգային-հասարակական գործիչ էր, ՀՅԴ անդամ: Կրթություն ստացել է ծննդավայրի Խրիմյան վարժարանում, ապա՝ Հալեպում: Վերադառնալով գյուղ՝ զբաղվել է ուսուցչությամբ: Անանիա Վիրավորյանի հետ հիմնել է Մուսա լեռան ՀՅԴ կառույցը: 1915 թ. Մուսա լեռան հերոսամարտի կազմակերպիչներից էր, ընտրվել է զինվորական մարմնի ղեկավար: Ֆ. Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպի հերոս Բագրատյանի նախատիպն է: Պորտ Սայիդում 1916 թ. վերջին կամավորագրվել է Արևելյան լեգեոնին, ստացել լեյտենանտի կոչում: Մասնակցել է Արարայի ճակատամարտին, Կիլիկիայի ազատագրմանը: Եգիպտոսում աշխատակցել է «Հուսաբեր» թերթին՝ Ա. Էյլանի ծածկանունով: 1928 թ. հրատարակել է առաջին գրքույկը, որը մեծ հետաքրքրություն է ստեղծել իր անձի շուրջը: Ֆրանսիական իշխանությունների կողմից նշանակվել է Մուսա լեռան շրջանի կառավարիչ՝ երկար տարիներ մեծապես օգտակար հանդիսանալով տեղի հայությանը: Ալեքսանդրետի գավառի հայության կողմից ընտրվել է Սիրիայի խորհրդարանի պատգամավոր: 1939 թ. Ալեքսանդրետի գավառը Թուրքիային բռնակցվելուց հետո մուսալեռցիները հարկադրաբար լքեցին իրենց հայրենի գյուղերը: Նա մեծ աշխատանք տարավ մուսալեռցիներին նոր ապաստան ապահովելու

[1] Տե՛ս **Հայկական համառոտ հանրագիտարան**, հ. 4, Եր., 2003, էջ 756:

համար և դարձավ Լիբանանում Այնճար բնակավայրի հիմնադիրը: 1939 թ.-ից նրա գործունեության դաշտը հիմնականում Լիբանանն էր, ուր երկար տարիներ ընտրվել է խորհրդարանի պատգամավոր (1943-1972): Այդ տարիներին անդամակցել է ՀՅԴ գերագույն մարմիններին, Համազգայինի կենտրոնական վարչությանը: Մեծ դերակատարություն է ունեցել լիբանանահայ գաղութի կազմավորման և զարգացման մեջ: Մահացել է 1984 թ., Բեյրութում, թաղվել Բուրջ Համուդի ազգային գերեզմանատանը: 1998 թ. աճյունը տեղափոխվել է Այնճար և հողին հանձնվել Մուսա լեռան հերոսներին նվիրված հուշարձան-համալիրի կողքին՝ Արթո Չաքմաքճյանի կերտած կիսանդրու տակ[1]:

Ռուբեն Հերյանը (Թոքատ, 1869-07.07.1921, Կահիրե) ճանաչված հասարակական-քաղաքական գործիչ էր, հրապարակախոս, Հնչակյան, ապա՝ Ռամկավար կուսակցության անդամ: 1883 թ. ավարտել է Թոքատի ազգային վարժարանը: 1897 թ. մարտի 7-ին, երբ թուրքերը փորձել են ջարդ կազմակերպել Թոքատում, հանդիսացել է ինքնապաշտպանության գլխավոր կազմակերպիչներից: Իշխանությունների հետապնդումների պատճառով ստիպված է եղել հեռանալ Կ. Պոլիս, ապա՝ ԱՄՆ: Նյու Յորքում զբաղվել է ծխախոտի առևտրով: 1913 թ. դեկտեմբերի 7-ին Նյու Յորքում հիմնված «Կրթասիրաց միություն Թոքատի» կազմակերպության հիմնադիրներից էր և վարչական խորհրդի անդամ: Կարևոր դերակատարություն է ունեցել Հայկական լեգեոնի համար ամերիկահայերի կամավորագրության կազմակերպման գործում: 1917 թ. մեկնել է Եգիպտոս՝ նպատակ ունենալով գնալ Միջագետք անապատները՝ հայ որբերին հավաքելու համար, սակայն հաջողություն չունեցավ և միացավ Հայկական լեգեոնին: Ստացել է կապրալի աստիճան: Եղել է լեգեոնի «Զեյթուն» ռազմադաշտային հիվանդանոցի տնօրենը[2]: 1918 թ. վերջին Եգիպտոսից մեկնել է Սիրիա՝ որպես ՀԲԸՄ-ի, Նպաստամատույցի և Միացյալ Որբախնամի ներկայացուցիչ: 1918-1919 թթ. Միջագետքի և Սիրիայի անապատներում բազմաթիվ վտանգներ հաղթահարելով՝ փրկել է բազմաթիվ հայ որբերի ու տարագիրների՝ ստանալով «Որբախույզ» տիտղոսը: 1920 թ. հաստատվել է

[1] Տե՛ս **Հովակիմյան Բ.,** Հայոց ծածկանունների բառարան, Եր., 2005, էջ 733:

[2] **Պարթեւեան Ս.,** նշվ. աշխ., էջ 73:

Ադանայում: Զբաղվել է Իզմիրից և Կ. Պոլսից Կիլիկիա զենք տեղափոխելու և քեմալականների դեմ ինքնապաշտպանությունները կազմակերպելու գործով: Դյորթ Յոլի ինքնապաշտպանության ընթացքում ստանձնել է պարենավորման գործը: 1921 թ. ուղևորվել է Եգիպտոս, Փարիզ, ԱՄՆ՝ որբերի ազատագրման համար հանգանակություն կազմակերպելու նպատակով: Մերսին վերադառնալու ճանապարհին, Կահիրեում մահացել է սրտի հիվանդությունից: Օգտագործել է Ռա-Հո ծածկանունը[1]:

Ամերիկահայ կամավորներից **Գևորգ Թագագչյանը** ծնունդով Բալուից էր: Նա մարտական փորձ էր ձեռք բերել ԱՄՆ-ում, հասել ամերիկյան բանակի կապիտանի կոչման: 1917 թ. կամավորագրվեց Արևելյան լեգեոնին, սակայն ֆրանսիական իշխանությունները նրան տվեցին կապրալի կոչում: Հաշվի առնելով մարտական անցյալը՝ նշանակվել է լեգեոնի ռազմական ոստիկանության ղեկավար[2]: ԱՄՆ բանակի կապիտան **Գարագյոզյանը** նույնպես կամավորագրվել էր Արևելյան լեգեոնին, ստացել կապրալի աստիճան[3]:

Ջոն Շիշմանյանը ծնվել է Կալիֆորնիայում: ԱՄՆ-ում ստացել է իրավաբանական կրթություն, դարձել փաստաբան: Որպես ամերիկյան կամավոր պատերազմի սկզբին մեկնել է ֆրանսիական ճակատ, ապա՝ լեգեոն: Ստացել է լեյտենանտի կոչում: Մեծ հեղինակություն ունեցող առաջնորդ էր կամավորների համար: Արարայի ճակատամարտում աչքի է ընկել, արժանացել շքանշանի[4]: Կիլիկիայի ազատագրումից հետո նշանակվել է Ադանայի հայկական միլիցիայի հրամանատար[5]: **Ջիմ (Պետրոս) Չանգալյանը** (Տիգրանակերտ, 26.05.1879-10.05.1947, Նյու Յորք) փոքր տարիքում ընտանիքով տեղափոխվել է ԱՄՆ, ստացել ամերիկյան կրթություն, ընդունվել է ռազմական ակադեմիա, դարձել սպա: Մասնակցել է 1897 թ. Կուբայի պատերազմին, ԱՄՆ բանակի կապիտանի աստիճան է ստացել 1898 թ.՝ ամերիկա-իս-

---

[1] **Ալպօյաճեան Ա.,** Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց, Գահիրէ, 1952, էջ 1692, 1720, 1731-1735: **Հովակիմյան Բ.,** նշվ. աշխ., էջ 644::

[2] **Պարթեւեան Ս.,** նշվ. աշխ., էջ 80:

[3] Նույն տեղում, էջ 78:

[4] **Ատանայի Հայոց պատմութիւն**, էջ 430: **Պարթեւեան Ս**., նշվ. աշխ., էջ 91-92:

[5] **Աւետեան Մ.,** նշվ. աշխ., էջ 501:

պանական պատերազմում: Ռազմական ծառայությունից հեռանալուց հետո Նյու Յորքում բարձր պաշտոն է զբաղեցրել ամերիկյան մի խոշոր ֆիրմայում, ապրել է բարեկեցիկ կյանքով: Համաշխարհային պատերազմի սկսվելուց հետո չի կարողացել անտարբեր մնալ սեփական ժողովրդի տառապանքներին: 1915 թ., ինչակյանների և ռամկավարների հանձնարարությամբ, հատուկ առաքելությամբ մեկնել է Անդրկովկաս ու Վան: Կամավորների ջոկատով հասել է Վան, Արմենակ Եկարյանի հետ կազմակերպել Երկրապահ ջոկատ՝ ներդնելով իր ռազմական փորձը, որոշ ժամանակ եղել է Վանի ընդհանուր ոստիկանապետը[1]: 1917 թ. վերադարձել է ԱՄՆ: Տեղեկանալով Հայկական լեգեոնի կազմության մասին, 1917 թ. հուլիսի 9-ին առաջնորդել է նավով Մարսել մեկնող ամերիկահայ կամավորների խումբը: Լեգեոնում ստացել է լեյտենանտի աստիճան: Կիլիկիայի ազատագրումից հետո փորձել է քեմալականների հարձակումների հայերին պաշտպանելու համար ինքնապաշտպանություն կազմակերպել: Հաճնին օգնելու փորձի համար Կիլիկիայի ֆրանսիական կառավարիչ, գնդապետ Էդուարդ Բրեմոնը նրան հեռացրել է երկրամասից: Փարիզում Անդրանիկի հետ հանդիպելուց հետո գաղտնի վերադարձել է Կիլիկիա, զգալի ներդրում ունեցել Սսի հայ բնակչությանը անվտանգ կերպով Ադանա տեղափոխելու գործում: Կիլիկիայի պարպումից հետո վերադարձել է ԱՄՆ, մասնակցել Հայաստանի Հանրապետության համար կատարվող հանգանակությանը: ԱՄՆ-ի ՀԲԸՄ կենտրոնական վարչության նախագահն էր: Ամերիկահայ կամավորներից **Տիգրան Պոյաճյանը** (գ. Արմուճան, Բալու, 1895 – 02.05.1975, Ուոթրթաուն, ԱՄՆ) բանասեր, հասարակական գործիչ էր: Նախնական կրթություն ստացել էր ծննդավայրում, ապա տեղափոխվել էր ԱՄՆ: Եղել է ՀԲԸՄ-ի գործոն և ղեկավար անդամներից: Աշխատակցել է ամերիկահայ պարբերականներին, հատկապես՝ «Պայքար»-ին: Հայերենից անգլերեն է թարգմանել Եղիշեի «Վարդանանց պատերազմը», անգլերենից հայերեն՝ Մորիս լա Կլակի «Ոսկի եռանկյունը», գնդապետ Բրեմոնի «Կիլիկիան 1919-1920 թթ.», Արթուր Թրեյնի «Կույր արդարությունը» և այլ երկեր, որոնք

[1] Նույն տեղում:

տպագրվել են ամերիկահայ մամուլում: Հրատարակել է հուշեր[1], որոնք կարևոր սկզբնաղբյուր են լեգեոնի պատմության ուսումնասիրման համար, ինչպես նաև ցեղասպանությանը նվիրված աշխատություն ("Armenia the case for a forgotten genocide", 1972)[2]: Լեգեոնի ամերիկահայ սպաներից էր **Վահան Չուրկենցը**:

Մանուկ Տեր-Հակոբյանը (Ալբիստան, 1894-19.09.1918, Արարա) ծնվել էր հոգևորականի՝ քահանա Տեր Մարտիրոսի ընտանիքում, սովորել Կ. Պոլսի Սկյուտարի, Կարապետյան, ապա՝ պետական «Իհթիյաթ Զապիթան» վարժարաններում: Թուրքական բանակ էր մտել որպես «միլազըմ սանի»: Դարդանելի կռիվների ժամանակ գերվել էր: Եգիպտոսի ազգային առաջնորդարանի միջոցով ազատվել էր գերությունից և Թանթայում աշխատանքի անցել Մաթոսյան ծխախոտի ընկերությունում: Լեգեոնի կազմավորման մասին լսելով, Թանթայում հավաքել է 16 հայերի և մեկնել Պորտ Սայիդ: Ստացել է սերժանտի կոչում: Որպես մարտական փորձ ունեցող զինվորականի, նրան հանձնարարվել է մարզել նորեկներին՝ սկզբում Պորտ Սայիդում, ապա՝ Կիպրոսում[3]:

Ամասիացի **Հարություն Բալանճյանը (Փալանճյան)** լեգեոնի Ա գումարտակի բժիշկն էր, լեյտենանտ: Ավարտել էր Բեյրութի բժշկական համալսարանը: Պատերազմի ժամանակ որպես բժշկական ծառայության սպա զորակոչվել էր թուրքական բանակ, Սուեզի մոտ գերվել անգլիացիների կողմից: 1916 թ. դեկտեմբերից կամավորագրվեց լեգեոնին, մասնակցեց Արարայի ճակատամարտին, որի ընթացքում ակտիվորեն զբաղված էր վիրավորներին բուժօգնություն տրամադրելով: Զգալի ներդրում ունեցավ, Սիրիայում և Լիբանանում ռազմարշավի ժամանակ, լեգեոնում տարածված իսպանական գրիպի համաճարակի դեմ պայքարելով, և բազմաթիվ կյանքեր փրկեց: Պատերազմից հետո նշանակվել է Դյորթ Յոլի բժիշկ[4]:

---

[1] **Պոյաճեան Տ.,** նշվ. աշխ., 415 էջ:

[2] **Ստեփանյան Գ.,** Կենսագրական բառարան, հ. Գ, Եր., 1990, էջ 296: **Հովակիմյան Բ.,** նշվ. աշխ., էջ 708:

[3] **Արարա**, էջ 30-31:

[4] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 450, ց. 2, գ. 80, թ. 30: **Պարթեւեան Ս.,** նշվ. աշխ., էջ 78-80:

Հակոբ Արևյանը սեբաստացի էր, ավարտել էր թուրքական զինվորական վարժարան[1]: Պատերազմի ժամանակ զորակոչվել էր թուրքական բանակ, գերվել անգլիացիների կողմից, ապա կամավորագրվել լեգեոնին: Սկզբում ենթասպայի, ապա լեյտենանտի կոչում ստացավ: Արարայում խիզախության համար պարգևատրվել է պատերազմական խաչով[2]:

Լեգեոնի կապրալներից էր **Հովհաննես Գույումճյանը** (Պանտրմա, 1893-19.09.1918, Արարա): Սովորել է Պանտրմայի ազգային վարժարանում: 1912 թ. մեկնել էր Կահիրե, աշխատանքի անցել Մաթոսյան ծխախոտի ընկերությունում: 1913 թ.-ից «Արարատ» մարզական ակումբի անդամ էր, հաջողակ մարզիկ: Առաջին կամավորներից էր, ով 1916 թ. դեկտեմբերին մեկնեցին Կիպրոս: Արարայի ճակատամարտում երկու անգամ վիրավորվելուց հետո հրաժարվել է թողնել մարտադաշտը, սակայն երրորդ գնդակը մահացու է եղել[3]: Հայ սպաներից **Հակոբ Գարասեֆերյանը, Հարություն Եսայանը** Արարայի ճակատամարտում աչքի ընկնելու համար արժանացել են շքանշանի[4]: Լեգեոնի սպաներից էին լեյտենանտ **Անհագունին**[5], տևրիկցի մայոր **Նազարեթ Գլըճյանը, Արտաշես Բամբուկչյանը**, **Կ. Գարունին, Ալեք Միհրանյանը,** ակնցի **Մանուկ Ռեհյանը,** դեղագործ **Հրանդ Հացունին:** Պոլսեցի **Մ. Երեցյանը** թուրքական զինվորական համալսարան էր ավարտել, պատերազմի ժամանակ գերվել էր, ապա՝ կամավորագրվել լեգեոնին, ստացել սերժանտի կոչում, հետագայում կարևոր ծառայություններ մատուցել Կիլիկիայում[6]: Լեգեոնի բժիշկներից էին սպաներ **Գյուլպենկյանը, Հակոբյանը**, **Յ. Քյուրյուկյանը**, **Հովհաննես Դևլեթյանը**[7]**:**

Այսպիսով, բազմաթիվ հայեր, սպայական տարբեր կոչումներով, մասնակցեցին Արևելյան լեգեոնի կազմավորմանը, իսկ Կիլիկիայի ազատագրումից հետո կարևոր դերակատարություն ստանձնեցին քե-

---

[1] **Աւետեան Մ.,** նշվ. աշխ., էջ 502:

[2] **Արարա**, էջ 11:

[3] **Պարթեւեան Ս.,** նշվ. աշխ., էջ 94-95:

[4] **Ատանայի Հայոց պատմութիւն**, էջ 430:

[5] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 450, ց. 2, գ. 80, թ. 31:

[6] **Աւետեան Մ.,** նշվ. աշխ., էջ 503:

[7] **Մեծ տերությունները,** Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 411-412:

մալականների հարձակումների դեմ հայ բնակչության կազմակերպած ինքնապաշտպանական մարտերում: Հետագայում հայ սպաներից շատերը տարբեր պետական պաշտոններ զբաղեցրին Ֆրանսիայում, Սիրիայում, Լիբանանում և այլ երկրներում:

Լեգեոնի մասնակցությունը ռազմական գործողություններին:

Հայկական լեգեոնը բավական երկար ժամանակ ունեցավ մարզումների համար, քանի որ թուրքերի դեմ ռազմական գործողություններ Կիլիկիայում կամ Սիրիայում տեղի չէին ունենում:

1917 թ. հուլիսին ֆրանսիական գեներալ Մորիս Բայուն (Եգիպտոսում, Պաղեստինում և Կիպրոսում ֆրանսիական զորքերի գլխավոր տեսուչ՝ 1917 թ. ապրիլի 17-ից հոկտեմբերի 20-ը) տեսչական այց կատարեց Արևելյան լեգեոն, որն այդ պահին ուներ 6 հայկական վաշտ, յուրաքանչյուրը՝ 200 զինվորով և 1 սիրիական վաշտ՝ 160 զինվորով: Գեներալը ստուգեց լեգեոնի մարտունակությունն ու կարգապահությունը և գոհ մնաց հայ զինվորներից: Առաջին չորս վաշտերից, որոնք արդեն լավ մարզված ու զինված էին, կազմավորվել էր մեկ գումարտակ: Սպասում էին ամերիկահայերի ժամանմանը, որպեսզի կազմավորվեր նաև երկրորդ գումարտակը: Կազմավորման փուլում էր նաև գնդացրորդների մեկ վաշտ: Մ. Բայուի կարծիքով, այդ պահին լավագույնները թուրքական բանակի նախկին զինվորներն էին, որոնք գերվել էին Միջագետքում կամ դասալքել էին, ապա՝ մուսալեռցիները, հետո՝ ամերիկահայերը, իսկ ամենավերջում սիրիացիներն էին: Գեներալն առաջարկեց կապրալներ նշանակել միայն հայերին ու սիրիացիներին, իսկ ենթասպաներ դարձնել յուրաքանչյուր վաշտում 2 հայի կամ սիրիացու և 6 ֆրանսիացու: Ապագայում նախատեսում էր սպայական կոչումներ տալ նաև հայերին ու սիրիացիներին, որպեսզի լեգեոնն ավելի ամուր կառուցվածք ունենա, իսկ այդ սպաները հետագայում կծառայեին Հայաստանի ու Սիրիայի ապագա զինված ուժերում: Մ. Բայուն շատ բարձր էր դասում հայերի մարտական որակները, սակայն նշում էր, որ եթե նրանց Ալեքսանդրետի փոխարեն օգտագործեն Պաղեստինյան ճակատում, ապա հայերի եռանդը կթուլանա: Մ. Բայուն նաև բարձր գնահատեց Լ. Ռոմիոյի ներդրած ջանքերը նման մարտունակ միավոր ստեղծելու համար: Գեներալը համոզված էր, որ մոտ ապագայում՝ ամերիկահայերի ժամանելուց հետո, կստեղծվեն 4 գու-

մարտակներ, որոնք կընդգրկվեն մեկ գնդի մեջ: Առաջարկում էր գումարտակի հրամանատարի աստիճան ունեցող Լ. Ռոմիոյին տալ փոխգնդապետի կոչում: Եթե հաջողվեր նաև երկրորդ գունդը ստեղծել, ապա առաջարկում էր կազմավորել բրիգադ և հրամանատար նշանակել գնդապետ Է. Բրեմոնին, որի վրա պետք է դրվեր նաև ազատագրված երկրամասերի ռազմական վարչության կազմակերպման խնդիրները և ժամանակավոր վարչությունը: Արևելքին վերաբերող Է. Բրեմոնի գիտելիքները, գեներալի կարծիքով, հնարավորություն կտային ճիշտ կողմնորոշվել շատ նուրբ հարցերում և դա օգտակար կլիներ և՛ տեղացիների, և՛ ֆրանսիացիների համար[1]:

Մ. Բայուն ոչ արդյունավետ էր համարում միայն մուսալեռցիների ուժերով Ալեքսանդրետի մոտ պարտիզանական գործողություններ ծավալելու նախագիծը, քանի որ դա լուրջ վնաս չէր հասցնի թշնամուն և տեղական բնակչության նկատմամբ ջարդերի տեղիք կտար: Այդ ծրագիրն առաջարկել էր Ժ. Պիկոն: Մ. Բայուի կարծիքով, լեգեոնականները դեռևս քիչ էին և բավարար պատրաստվածություն չունեին, որպեսզի հասնեին Բեյլանի կիրճին: Նրանք արագորեն կշրջապատվեին ու կոչնչացվեին: Դրան դեմ էր արտահայտվել նաև Սիրիայի ռազմածովային դիվիզիայի հրամանատար, դերծովակալ Ժորժ Վարնեյը:

Մ. Բայուն անհրաժեշտ էր համարում լայնամասշտաբ գործողություն իրականացնել ամբողջ լեգեոնի ուժերով, երբ Թուրքիայի համար կստեղծվեր դժվարին իրավիճակ: Նման հնարավորություն կարող էր ստեղծել ապստամբությունը Լիբանանում: Գեներալը համոզված էր, որ ափհանում կարող էին կատարել Ալեքսանդրետում, Տրիպոլիում կամ Հայֆայում: Ալեքսանդրետում ափհանումը նա համարում էր ամենադժվարը, քանի որ թուրքերն այն աչալրջորեն հսկում էին, ունեին մեծաքանակ ուժեր և լավ ամրացված էր: Այդտեղ ափհանում կատարելու և ռազմական գործողությունները զարգացնելու համար անհրաժեշտ էին մեծ ուժեր: Հայֆայում ռազմական գործողությունները կարող էին դժվարություններ ստեղծել թուրքերի համար Գազայի ռազմաճակատի թիկունքում: Այդ գործողությանը կարող էին աջակցել նաև Պաղեստինի ֆրանսիական զորախմբի ուժերը: Սակայն այդ տարածքը հեռու էր

[1] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 20-21:

Ֆրանսիային համակրող լիբանանցի և սիրիացի ուժերի գործունեության դաշտից: Այդ գործողությունը կարող էր մեծ օժանդակություն լինել բրիտանացիների համար, որոնք էլ առաջարկել էին այդ ծրագիրը: Նրա կարծիքով, մի քանի ամիս առաջ այդ գործողությունը հաջողություն կունենար, սակայն թուրքերն այնտեղ արդեն կառուցել էին պաշտպանական հզոր ամրություններ, որոնք տվյալ պահին հաղթահարելը շատ դժվար կլիներ: Արևելքում դաշնակից զորքերի նոր հրամանատար Էդմունդ Ալենբին նույնպես դեմ էր Հայֆայում ափիհանմանը, քանի որ ծովակալությունը Հայֆայի նավահանգստում գրեթե անհնար էր համարում դեսանտային զորքերի ափիհանումը և մատակարարումը՝ գերմանական սուզանավերի պատճառով: Մ. Բայուի կարծիքով ափիհանման լավագույն վայրը Տրիպոլին էր, ուր հույս ուներ, որ թուրքական կայազորի մի մասն իրենց կողմը կանցներ, կարող էին ստանալ լիբանանցի ապստամբների աջակցությունը, արագորեն օժանդակ զորքեր կգային Պաղեստինի ֆրանսիական զորախմբից: Դրանով կկտրեին Արաբիան և Պաղեստինը սնուցող երկաթգիծը: Այդ գործողության համար անհրաժեշտ էր ուժեր ներգրավել Սալոնիկից, Ալժիրից կամ Ֆրանսիայից: Տրիպոլիի հիմնական բազան թիկունքում կունենար Ռուադ կղզու հենակետը: Մ. Բայուն դերծովակալ Ժ. Վարնեյին առաջարկեց մեծացնել լեգեոնը սպասարկող նավերի թիվը, քանի որ եղածներն արդեն իսկ դժվարությամբ էին ապահովում մատակարարումը, իսկ ամերիկահայերի ժամանելուց հետո անբավարար կլինեին[1]:

Այսպիսով, գեներալ Մ. Բայուի կարծիքով անհրաժեշտ էր լեգեոնը վերածել բրիգադի և օգտագործել ֆրանսիական զորքերի հետ լայնամասշտաբ ափիհանում կատարելու համար՝ հաշվի առնելով փոքրաթիվ կամավորների օգտագործման անհնարինությունը լավ պաշտպանված Կիլիկիայի ու Սիրիայի ուղղությամբ: Լավագույն տարբերակ էր համարում օգտագործել Պաղեստինի ուղղությամբ հարձակման ընթացքում: Ռազմական նախարար Պ. Պենլևեին 1917 թ. հուլիսի 26-ին ուղարկած գաղտնի հեռագրում Մ. Բայուն տեղեկացնում էր, որ արդեն սպասում են 5.000 կամավորների ժամանելուն, որոնց թիվը հետագայում կհաս-

[1] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 21-24:

նի 10.000-ի[1]: Ինչպես տեսնում ենք, գեներալը հույս ուներ երկու գունդ ձևավորել և դրանք միավորել մեկ բրիգադի մեջ:

Կիպրոսում մարզվելու ընթացքում հայ լեգեոներները 1917 թ. մարտից պարեկում էին Կաստելորիզո (հուն. Մեգիստի – Ս.Պ.) կղզում: Այն Դոդեկանեզյան կղզիախմբի մեջ մտնող 9 կմ[2] տարածությամբ կղզի էր, գտնվում էր թուրքական ափից մոտ 2 կմ, իսկ թուրքական Կաշ (հուն. Անտիպիլոս –Ս. Պ.) նավահանգստից՝ 7 կմ հեռավորության վրա: Այդտեղի ամրությունները պաշտպանում էին Հայկական լեգեոնի և ֆրանսիացի ծովայինների մեկական վաշտ: Սկզբում թուրքերը փոքր ու միջին տրամաչափի հրանոթներով անընդհատ ռմբակոծում էին կղզին, սակայն, երբ այնտեղ տեղադրվեցին 120 միլիմետրանոց հրանոթներ, թուրքական կրակակետերը լռեցին: Տեղի հույները, հայերն ու ֆրանսիացիները պահպանում էին համակեցության կանոնները և կատարյալ համերաշխության մեջ էին գտնվում[2]:

Պատերազմի ժամանակ Կաստելորիզոյի նախկին 20-25.000 բնակչությունից միայն 2.000 մարդ էր մնացել կղզում, մյուսները հեռացել էին: Ամիսը մեկ անգամ կղզու հարավային կողմից մի շոգենավ էր մոտենում և սնունդ բերում հայկական վաշտի համար: Այն գալիս էր գիշերով, որպեսզի չնկատվի թուրքական կողմից, որոնք թնդանոթային կրակոցով նախկինում ընկղմել էին մի շոգենավ: Երբեմն նավը ուշանում էր և լեգեոնականները զրկվում էին խմելու ջրից, սնունդից ու նամակներից: Նրանք ստիպված էին լինում ծովի ջրով եփել բրինձը: Լեգեոնական Օննիկ Մալխազունին (Սինանյան) խոստովանում է, որ նման օրերին ստիպված էին լինում գողանալ հույն խաշնարածների այծերից: Հույները բողոքում էին Կաստելորիզոյի զինվորական հրամանատարին, իսկ վերջինս խոստանում էր խստորեն պատժել կարգազանցներին, սակայն այծերի անհետացումները շարունակվում էին[3]: Հայ մարտիկները կենտրոնացված էին կղզու տարբեր մասերում գտնվող վեց հենակետերում[4]: Թուրքերը 1917 թ. փորձել են գրավել կղզին: Մի քանի տասնյակ նավակներով մոտեցել և ափ են դուրս եկել

[1] Նույն տեղում, էջ 19:

[2] **Թեքեյան Տ.,** նշվ. աշխ., էջ 65:

[3] **Պոյաճեան Տ.**, նշվ. աշխ., էջ 96:

[4] **Ամէմեան Խ.,** Էջեր կամաւորի օրագրէս, էջ 80:

Կաստելորիզոյում: Սակայն հայ մարտիկները ամբողջությամբ ոչնչացրել են թուրք զինվորներին և նրանց նավերը: Թուրքական դեսանտից ոչ ոք չէր կարողացել փրկվել[1]: Հայ զինվորները պարեկություն էին անում նաև Կաստելորիզոյից ոչ հեռու գտնվող մի ամայի ժայռոտ կղզում: Այնտեղ ստիպված էին գիշերել բաց երկնքի տակ, արգելված էր ծխելը և բարձր խոսելը[2]:

1918 թ. հունվարի 7-ին Ռուադ (այժմ՝ Արվադ) կղզում տեղակայված Արևելյան լեգեոնի սիրիական վաշտին փոխարինեց հայկականը: Մոտ 2 կմ[2] տարածությամբ այդ փոքր կղզին գտնվում էր սիրիական Տարտուս նավահանգստից 3 կմ հեռավորության վրա: Այդտեղ խմելու ջուր չկար: Ռուադ ուղարկված հայ լեգեոնականները հիմնականում մոտ 1 ամսվա նորակոչիկներ էին: Նրանց վարժեցնելու գործը հանձնարարված էր «Ժաննա դ'Արկ» հածանավի հրամանատար, ֆրեգատի կապիտան Տրաբոնին և լեյտենանտ Պապիին: Նրանք լուրջ դժվարությունների հանդիպեցին կամավորներին մարզելու և կարգապահության սովորեցնելու հարցերում: Մարտին լուրեր ստացվեցին Կովկասյան ճակատից ռուսների հեռանալու, թուրքական արշավանքի և նոր կոտորածների մասին: Դա բավական գրգռեց լեգեոնականներին, որոնք թեթև ընդհարումներ ունեցան կղզու մահմեդական բնակչության հետ՝ նրանց դիտելով որպես թուրքեր: Դա անհանգստացրեց Տրաբոնին, որը դերծովակալ Ժ. Վարնեյին մարտի 15-ին խնդրեց հայերին կրկին փոխարինել սիրիացիներով[3]:

Լեգեոնի տեղափոխումը Պաղեստինյան ռազմաճակատ:

Հայկական զինուժը Պաղեստինում օգտագործելու Մ. Բայուի նախագիծը բավական անհանգստացրեց հայ գործիչներին: 1917 թ. հուլիսի 29-ի Մ. Բայուն հեռագրեց ռազմական նախարար Պ. Պենլևեին, թե Եգիպտոսի հայերը իրեն զգուշացրել են, որ ամերիկահայերը գալիս են, որպեսզի մարտնչեն միայն Հայաստանում կամ Կիլիկիայում: Փաստորեն՝ հայերը դեմ էին գեներալի առաջարկած Պաղեստինյան ճակատում կռվելու նախագծին: Գեներալը նախարարին խնդրում էր՝ հայերի

[1] Նույն տեղում, էջ 79-80:

[2] Նույն տեղում, էջ 103-104:

[3] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 202-204:

մոտ բացատրական աշխատանքներ տանել, որպեսզի անհրաժեշտության դեպքում կռվեն Փոքր Ասիայի կամ Սիրիայի որևէ վայրում, խոստանալով, որ չեն ուղարկի Սալոնիկ[1]:

Օգոստոսին բրիտանացիները հարցում կատարեցին Լ. Ռոմիոյին, թե արդյո՞ք լեգեոնականները կարող էին Պաղեստինում թուրքական բանակի հաղորդակցությունների դեմ սրընթաց և կարճատև գործողություն իրականացնել: Լ. Ռոմիոն բացասական պատասխան տվեց, պատճառաբանելով, որ հայկական կոմիտեները, որոնք նյութապես ու բարոյապես աջակցում էին լեգեոնի կազմավորմանը, դեմ էին այդ տարածաշրջանում ռազմական գործողությունների մասնակցելուն[2]:

Հոկտեմբերի 18-ին Եգիպտոսից Լ. Մկրտիչյանը նամակով Պ. Նուբարին տեղեկացրեց, որ Մ. Բայուն մտադիր էր Հայկական լեգեոնն ուղարկել Պաղեստինյան ճակատ: Նշում էր, որ դա կարող էր լուրջ դժգոհությունների պատճառ դառնալ, քանի որ կամավորագրությունն իրականացնելիս իրենք քարոզել են, որ լեգեոնը կռվելու էր միայն հայկական տարածքներում, իսկ պայմանագրում նշված «Ասիական Թուրքիա» հասկացությունը կանխամտածված էր թուրքերի ուշադրությունը շեղելու համար: Եգիպտոսի հայկական միության նախագահ Հ. Նևրուզը Մ. Բայուին տեղեկացրել էր, որ հարցի շուրջ պետք է համաձայնություն կայացվեր Պ. Նուբարի և Ամերիկայի կամավորագրող կոմիտեների հետ: Լ. Մկրտիչյանը կարծում էր, որ եթե ֆրանսիացիները, ի վերջո, որոշեն լեգեոնն օգտագործել ոչ Կիլիկիայում, ապա իրենք պետք է համակերպվեն, քանի որ լեգեոնի լուծարումը կլիներ սխալ քայլ: Մտավախություն էր հայտնում, որ Պաղեստինում և Սիրիայում ռազմական երկարատև գործողությունների արդյունքում լեգեոնը կարող էր մեծ կորուստներ ունենալ և հայկական հողերը ազատագրելու ժամանակ բավարար զինվորներ չունենալ: Պատերազմը կարող էր ավարտվել մինչև հայկական տարածքների ազատագրումը: Այդ պատճառով եգիպտահայ գործիչներն առաջարկում էին աշխատել, որ դաշնակիցները հայտարարեն՝ պատերազմից հետո Հայաստանին և Կիլիկիային ինքնավարություն տալու մասին, իսկ Ազգային պատվիրակու-

[1] Նույն տեղում, էջ 24:

[2] Նույն տեղում, էջ 30:

թյանը ճանաչեն հայկական ժամանակավոր կառավարություն՝ ինչպես Էլեֆթերիոս Վենիզելոսի հունական կառավարությունը Սալոնիկում: Դա կարող էր նոր ոգևորություն առաջացնել, և հայ կամավորները պատրաստ կլինեին կռվել նաև այլ ճակատներում[1]: Հայ գործիչների մտահոգությունը տեղին էր: Պաղեստինյան ճակատում հայկական զինուժը կարող էր զգալի կորուստներ ունենալ, և Կիլիկիան, եթե պատերազմի ավարտական փուլում դաշնակիցները գրաված չլինեին, ապա անհրաժեշտություն կարող էր առաջանալ, որ հայերը սեփական ուժերով ազատագրեն այն: Միաժամանակ Ֆրանսիան, չնայած բանավոր տրված խոստումներին, ամեն կերպ խուսափում ու ձգձգում էր Կիլիկիային ինքնավարություն տալու մասին հայտարարություն անելուց:

Միևնույն ժամանակ Առաքել բեյ Նուբարը և Հ. Նևրուզը Կահիրեում հանդիպեցին դեսպան Ժ. Դեֆրանսին և հայտնեցին իրենց մտահոգությունը լեգեոնը Պաղեստին տեղափոխելու վերաբերյալ: Նրանք պահանջեցին դիմել Ֆրանսիայի ԱԳՆ, որպեսզի լեգեոնը այդ ուղղությամբ չօգտագործվի: Սակայն դեսպանը նշեց, որ տեղյակ չէ այդ ծրագրին[2]: 1917 թ. նոյեմբերի 22-ին Պ. Նուբարը և Վ. Թեքեյանին Ֆրանսիայի ԱԳՆ Ասիա-Օվկիանիայի վարչության պետ Ժ. Գուին դժգոհություն հայտնեցին լեգեոնը Պաղեստինյան ճակատ ուղարկելու գեներալ Մ. Բայուի առաջարկի կապակցությամբ և պահանջեցին լեգեոնն օգտագործել միայն Կիլիկիայում կամ Սիրիայի հյուսիսում: Ժ. Գուն պատասխանեց, որ դա գեներալի անձնական կարծիքն էր, և չի համապատասխանում ռազմական և ԱԳ նախարարությունների տեսակետներին, որոնք հակված են լեգեոնն օգտագործել Սիրիայում[3]:

1917 թ. նոյեմբերի 30-ին վարչապետ և ռազմական նախարար Ժ. Կլեմանսոն հեռագրեց փոխգնդապետ Լ. Ռոմիոյին Մ. Բայուի նախագծի և հայերի անհանգստության մասին, նշելով, որ կառավարությունը երբևէ չի քննարկել լեգեոնը Պաղեստին ուղարկելու հարցը: Առաջարկում էր հայերին հանգստացնել, քանի որ լեգեոնը նախատեսում են

[1] Նույն տեղում, էջ 43-46:
[2] Նույն տեղում, էջ 52:
[3] Նույն տեղում, էջ 64-65:

օգտագործել միայն իրենց հայրենակիցներով բնակեցված տարածքների ազատագրման համար, իսկ Պաղեստինը բացառվում էր[1]:

Ինչպես տեսնում ենք, 1917 թ. երկրորդ կեսին Ֆրանսիայի ռազմական և քաղաքական իշխանությունները դեռևս չէին մտածում Արևելյան լեգեոնը Պաղեստին ուղարկելու մասին: Հետևաբար, Մ. Բայուի նախագիծը, թվում է՝ անգործադրելի էր մնալու: Սակայն 1918 թ. գարնանը իրադրությունը փոխվեց: Չնայած Ֆրանսիայի քաղաքական իշխանությունների նախկին հավաստիացումներին, որ լեգեոնը Պաղեստին չի տեղափոխվի՝ այնուամենայնիվ 1918 թ. մարտին բրիտանական և ֆրանսիական գլխավոր շտաբները, ստեղծված նոր հանգամանքների պարտադրմամբ, համաձայնություն կայացրին Արևելյան լեգեոնի երկու գումարտակները Պորտ Սայիդում տեղակայելու, ապա՝ երկաթուղով Պաղեստինյան ռազմաճակատ ուղարկելու վերաբերյալ: Ժ. Պիկոն համոզված էր, որ քանի դեռ բրիտանական ուժերը Եվրոպայում ծանր վիճակում են, իրենք պետք է պաշտպանեն սեփական շահերն ու իրավունքները Սիրիայում[2]: Լեգեոնի տեղափոխումը Պաղեստինյան ռազմաճակատ պայմանավորված էր ստեղծված նոր իրավիճակով:

1918 թ. հունվարի 30-ին Վերսալում տեղի ունեցավ Անտանտի բարձրագույն ռազմական խորհրդի նիստը: Լ. Ջորջն առաջարկեց համալրումներ ուղարկել Միջագետք և Պաղեստին, գլխովին ջախջախել թուրքերին, և նրանց ստիպել դուրս գալ պատերազմից: Խորհրդի գրեթե բոլոր անդամները դեմ արտահայտվեցին այդ ծրագրին, քանի որ պատերազմի բախտը որոշվելու էր եվրոպական ճակատներում: Սակայն համաձայնեցին, որ բրիտանացիները հարձակում սկսեն Պաղեստինում՝ առանց Ֆրանսիայից զորքեր տեղափոխելու[3]:

Եգիպտական ռազմարշավային զորքերի գլխավոր հրամանատար (1917 թ. հունիս-1919 թ.), գեներալ Էդմունդ Ալենբին 1918 թ. գարնան սկզբին Պաղեստինյան ճակատում բավական խոշոր, մարտունակ ուժեր էր կենտրոնացրել, և սկզբնական շրջանում կարիք չկար այնտեղ ուղարկելու Արևելյան լեգեոնը: Է. Ալենբիի տրամադրության տակ էին

[1] Նույն տեղում, էջ 72:

[2] Նույն տեղում, էջ 211:

[3] **Հարությունյան Ա.,** Առաջին համաշխարհային պատերազմի ռազմադիվանագիտական պատմությունից (1914-1918), Երևան, 1983, էջ 336:

տարբեր ճակատներում մարտական փորձ ձեռք բերած 34 բրիտանական, 49 հնդկական և արևմտահնդկական գնդի 2 գումարտակ[1]: 1918 թ. մարտի երկրորդ կեսին Է. Ալենբին նախատեսում էր Պաղեստինյան ռազմաճակատի արևելքում խոշոր հարձակում իրականացնել՝ Ամմանի ուղղությամբ: Նպատակ ուներ անցնել Հորդանանի ձախ ափը, առաջանալ դեպի հյուսիս-արևելք, գրավել Էս Սալթը և Ամմանը: Դրանով բրիտանական զորքերը դուրս կգային Հեջազ տանող երկաթուղագիծ, որով կապ կհաստատվեր թուրքերի դեմ ապստամբած Մեքքայի շերիֆ Հուսեինի արաբական բանակի հետ:

Մարտի 8-12-ը բավական թեժ մարտեր ծավալվեցին Պաղեստինյան ռազմաճակատի հյուսիսարևելյան հատվածում՝ Ռամալլահից Նաբլուս գնացող ճանապարհի ուղղությամբ: Սակայն թուրքերը, ամրանալով բնականից անառիկ դիրքերում, համառ դիմադրություն ցույց տվեցին[2]: Այդ գործողությամբ Է. Ալենբին ստուգում էր թուրքերի դիմադրողական կարողությունները և փորձում էր շեղել նրանց ուշադրությունը գլխավոր հարձակման ուղղությունից:

Գլխավոր հարձակումը սկսվեց մարտի 21-ին: Բրիտանական զորքերը հաջողությամբ գետանցեցին Հորդանանը և մարտերով շարժվեցին հյուսիս-արևելք: Մարտի 30-ին Ամմանի մատույցներում տեղի ունեցավ խոշոր և վճռորոշ ճակատամարտ: Թուրքական 4-րդ բանակի ուժերին հաջողվեց հետ մղել բրիտանացիների գրոհները: Բրիտանացիները ստիպված դադարեցրին հարձակումը, և ապրիլի 2-ին վերադարձան նախկին դիրքերը[3]: Փաստորեն, Ամմանի ուղղությամբ 12-օրյա հարձակումն ավարտվեց անարդյունք: Այս անհաջող հարձակումը բացասաբար անդրադարձավ այդ տարածքներում ապաստանած հայ տարագիրների համար: Ապրիլի 5-ին Էս Սալթի մոտ գտնվող Այնի Սուվեյլան գյուղում գազազած չերքեզները՝ որպես վրեժ, սպանեցին 160 հայ տարագիրների: Նման ճակատագրի արժանացան նաև Ամմանի շրջակայքի բազմաթիվ հայեր[4]: Բրիտանացիներին պարզ դարձավ, որ հաջողության համար անհրաժեշտ էր հարձակման անցնել նաև Պա-

[1] **Massey W.,** Allenby's final triumph, London, 1920, p. 23-24.

[2] Նույն տեղում, էջ 81-85:

[3] Նույն տեղում, էջ 34-56:

[4] **Պարթեւեան Ս.,** նշվ. աշխ., էջ 58:

ղեստինյան ռազմաճակատի մյուս հատվածներում, որպեսզի հակառակորդին թույլ չտրվի ուժերը կենտրոնացնել Ամմանի ուղղությամբ: Չնայած Է. Ալենբիի տրամադրության տակ կային բավարար ուժեր ամբողջ ճակատով հարձակվելու համար, սակայն նրա գործողությունները կասեցվեցին Եվրոպայից եկող անհանգստացնող լուրերով:

Ամմանի ուղղությամբ հարձակում սկսելու նույն օրը՝ մարտի 21-ին, գերմանական հրամանատարությունը ֆրանսիական ճակատում սկսեց լայնամասշտաբ հարձակում Սոմի ուղղությամբ: Մարտի 3-ին Խորհրդային Ռուսաստանի հետ կնքած Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրից հետո գերմանացիները հնարավորություն ստացան ռուսական ճակատից մեծաքանակ զորքեր տեղափոխել արևմուտք: Նրանք հույս ունեին հզոր հարվածով ջախջախել բրիտանական և ֆրանսիական ուժերին, բեկում մտցնել պատերազմում: Գերմանական հրամանատարությունն այն կոչեց Կայզերսշլախտ՝ Կայզերի ճակատամարտ: Չնայած սկզբնական հաջողություններին՝ մարտի 21-ից հուլիսի 4-ը տեղի ունեցած Սոմի ճակատամարտում գերմանացիները հաղթանակի հասնել չկարողացան: Գերմանացիները կորցրին 240.000 զինվոր, հակառակորդը՝ 212.000[1]: Սոմի ճակատամարտը ստիպեց բրիտանացիներին Պաղեստինյան ամենամարտունակ զորամասերի զգալի մասն ուղարկել Ֆրանսիա, որով Է. Ալենբիի հարձակումը հետաձգվեց: Դրանց փոխարեն Է. Ալենբին ստացավ դեռևս ամբողջությամբ չմարզված հնդկական նորակազմ զորամասեր[2]: Հետևաբար՝ Պաղեստինում լայնամասշտաբ հարձակումը հետաձգվեց մի քանի ամսով: Դրանից հետո Պաղեստինյան ռազմաճակատում հարաբերական անդորր հաստատվեց: Բրիտանացիներն ու թուրքերը միայն տեղային նշանակություն ունեցող մի քանի փոքր հարձակումներ կազմակերպեցին ամբողջ ամառվա ընթացքում՝ փորձելով բարելավել իրենց դիրքերը: Հետզհետե թուրքերը Հորդանանի հովտի ուղղությամբ մեծացրին իրենց ուժերը, ավելացրին պաշտպանական ամրությունները՝ վստահ լինելով, որ հետագայում ևս հակառակորդի հարձակման գլխավոր ուղղությունը այդտեղ է լինելու: Ինչպես տեսանք, Պաղեստինյան բանակի մարտու-

[1] **Հարությունյան Ա.,** նշվ. աշխ., էջ 339:

[2] **Massey W.**, Allenby's final triumph, p. 60:

նակ զորամասերի զգալի մասը մեկնել էին Եվրոպա և անհրաժեշտ էր նրանց փոխարեն նոր զորքեր ուղարկել՝ ռազմաճակատը չթուլացնելու նպատակով: Դրանով էր պայմանավորված, որ ֆրանսիական իշխանությունները, չնայած նախապես արած հավաստիացումներին, ստիպված էին փոխել իրենց որոշումը և Արևելյան լեգեոնը տեղափոխել Պաղեստին: Ֆրանսիայի ռազմական նախարարի 1918 թ. մարտի 23-ի հրամանով Արևելյան լեգեոնը դուրս բերվեց ծովային ուժերի կազմից և դրվեց Պաղեստինի և Սիրիայի ֆրանսիական զորախմբի տրամադրության տակ[1]: 1918 թ. մարտի 23-ին՝ Ս. Զատիկի առավոտը, լեգեոնականները պաշտոնապես տեղեկացվեցին, որ մեկնելու են ռազմաճակատ: Երկար ամիսներ սպասված այդ լուրը մեծ ոգևորություն առաջացրեց[2]: Ապրիլի վերջին լեգեոնի առաջին, իսկ մայիսի 9-ին երկրորդ գումարտակները Կիպրոսից տեղափոխվեցին Պորտ Սայիդ[3]: Կիպրոսում մնաց երրորդ գումարտակը՝ մայոր Շենոյի հրամանատարությամբ[4]:

1918 թ. ապրիլ-մայիս ամիսներին, երբ լեգեոնի երկու գումարտակները բանակեցին Պորտ Սայիդում՝ որոշ խնդիրներ առաջացան: Մուսալեռցիների գաղթականական ճամբարը գտնվում էր Սուեզի ջրանցքի մյուս ափին: Մուսալեռցի լեգեոնականները, որոնցից շատերը մեկ տարուց ավելի էր հարազատներին չէին տեսել, բնական էր, որ ձգտում էին անցնել ջրանցքի մյուս ափը: Ի հեճուկս բազմաթիվ դիմումներին՝ հրամանատարության կողմից այդպես էլ օրինական թույլտվություն չտրվեց՝ հանդիպելու հարազատներին: Դրա հետևանքով գիշերները տասնյակ մուսալեռցի լեգեոնականներ լողալով անցնում էին ջրանցքը և հանդիպում հարազատների հետ: Որոշ լեգեոնականներ նույնիսկ որոշեցին այլևս չվերադառնալ ծառայության: Լ. Ռոմիոն փորձեց հարցը կարգավորել Հայ ազգային միության և համայնքի պատասխանատուների միջոցով, բայց նրանք հաջողության չհասան: Ստիպված էին որոշ դասալիքների ձերբակալել և ռազմական ատյանի

[1] **Գաբրամանուկեան Ա.,** նշվ. աշխ., էջ 77:

[2] **Պօյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 93:

[3] **Գասպարյան Ռ.,** Հայկական լեգեոնը (1916-1920 թթ.), «Հայկական բանակ», 1996, թիվ 1, էջ 8:

[4] **Պօյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 94:

առաջ կանգնեցնել: Լ. Ռոմիոյի ջանքերով նրանց չպատժեցին և թույլատրեցին կրկին միանալ լեգեոնին[1]: Սակայն այդ միջադեպի արդյունքում Եգիպտոսի հայ գործիչների և լեգեոնի ֆրանսիական հրամանատարության միջև հարաբերությունները որոշ ժամանակով խզվեցին:

Մայիսի կեսերին լեգեոնը Պորտ Սայիդից գնացքով, ապա՝ հետիոտն հասավ Քանթարա, որի մի կողմում Սուեզի ջրանցքն էր, մյուս կողմում՝ անապատը: Այդտեղից 30 կմ հարավ գտնվող Իսմայիլիայի մոտ՝ Էլ Թիհի անապատում, հաստատվեց լեգեոնի բանակատեղին: Անապատում կարիճները բազմաթիվ լեգեոնականների խայթեցին: Բարեբախտաբար զոհեր չեղան: Անապատի կիզիչ արևի տակ մարզումների ծանրությանը, վատ սննդին գումարվում էր ֆրանսիացի սպաների կոշտ ու կոպիտ, որոշ դեպքերում վիրավորական վերաբերմունքը, սակայն լեգեոնականները համբերում և սպասում էին թուրքերից վրեժ լուծելու հնարավորությանը: Իսմայիլիայում մարզումները շարունակվեցին մայիսի 20-ից հուլիսի 12-ը[2]:

Լ. Ռոմիոն հայ համայնքի հետ կապերի խզումը վնասակար էր համարում և, ցանկանալով բարելավել հարաբերությունները եգիպտահայերի հետ, լեգեոնի հայ սպաներից լեյտենանտ Վահան Փորթուգալյանին ուղարկեց Ազգային միության հետ բանակցությունների: Ազգային միության նախագահ Հակոբ Նևրուզը և մյուս անդամները համաձայնեցին վերականգնել համագործակցությունը: Համայնքի ներկայացուցիչները ժամանեցին Իսմայիլիա և հանդիպեցին լեգեոնականներին, նրանց բարի երթ մաղթեցին: Դա բավական բարձրացրեց հայ զինվորների տրամադրությունը: Դրան գումարվեց նաև Ֆրանսիայի նախագահ Ռայմոն Պուանկարեի ուղարկած հեռագիրը, որով շնորհավորում էր լեգեոնին՝ ճակատ մեկնելու առթիվ[3]:

Հուլիսի 14-ին լեգեոնը մասնակցեց Ֆրանսիայի ազգային տոնին նվիրված շքերթին: Նրանց երթը մեծ տպավորություն թողեց Պաղեստինում Ֆրանսիայի գերագույն կոմիսարի պաշտոնակատար, կապիտան Կուլոնդրի վրա, որն իր հիացմունքն ու բավարարվածությունը Ժ.

[1] Նույն տեղում, էջ 96-98:
[2] Նույն տեղում, էջ 100-103:
[3] Նույն տեղում, էջ 104-105:

Գուի միջոցով փոխանցեց Պ. Նուբարին[1]: Կուլոնդրը շնորհավորական ուղերձ հղեց նաև Եգիպտոսի հայ ազգային միությանը[2]: Հուլիսի 14-ի տոնը լեգեոնականները նշեցին նաև Կաստելորիզոյում: Տոնակատարությանը ներկա էին կղզու կառավարիչն ու քաղաքապետը, սպաները, հույն երևելիները: Եկեղեցու բակում պատրաստված բեմահարթակի վրա ֆրանսիացի ծովայինները ներկայացրին ֆրանսիական շանսոններ և հայրենասիրական երգեր: Հայ լեգեոնականները զուռնայի նվագակցությամբ ներկայացրին հայկական երգն ու պարը[3]: Մեճտելում Արևելյան լեգեոնի զորավարժությունները դիտեց Պաղեստինյան ռազմաճակատի հրամանատար Է. Ալենբին և գոհ մնաց: Հայկական գումարտակներին այստեղ միացավ 250 սիրիացի լեգեոնականներից կազմված վաշտը: Լեգեոնի տրամադրության տակ դրվեցին 37 մմ-ոց թնդանոթներ[4]: Այդտեղից Արևելյան լեգեոնը գնացքով մեկնեց Լյուդ՝ Պաղեստինյան ռազմաճակատի առաջավոր գիծը:

Թուրքական բանակի ջախջախումը Մեգիդոյի (Արմագեդոնի) ճակատամարտում:

Կիլիկիայի ազատագրման ճանապարհը կարող էր բացվել, եթե Պաղեստինում և Սիրիայում կենտրոնացված թուրքական բանակները ջախջախվեին: Հայկական լեգեոնն իր ներդրումն ունեցավ դեպի Կիլիկիա դաշնակից ուժերի առաջխաղացման գործում՝ մասնակցելով Պաղեստինյան ռազմաճակատի խոշորագույն և վճռորոշ ճակատամարտին: Այն հայտնի է Մեգիդոյի կամ Արմագեդոնի ճակատամարտ անունով: Է. Ալենբին վճռորոշ ռազմագործողությունը կոչեց Մեգիդո, քանի որ գլխավոր նպատակն էր դուրս գալ Նաբլուսի և Տիբերիական կամ Գալիլիա լճի միջև գտնվող Թիլ Մեգիդոյի դաշտը, որը աստվածաշնչյան Արմագեդոնն էր: Այդ շրջանում այն կոչվում էր Էսդրաելոնի դաշտ: Այդտեղով էր անցնում դեպի Նազարեթ գնացող ռազմավարական ճանապարհը, այդտեղ էր Աֆուլայի երկաթուղային հանգույցը:

Հայ պատմագիտության մեջ շրջանառության մեջ է դրվել Արարայի ճակատամարտ անվանումը: Իրականում 100 կմ ձգվող ռազմա-

[1] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 341:
[2] Նույն տեղում, էջ 355:
[3] **Թեքեյան Տ.,** նշվ. աշխ., էջ 65-68:
[4] **Պոյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 107:

ճակատի մոտ 5,3 կմ երկարությամբ տարածքում՝ Զավիյա բնակավայրից մինչև Ռաֆաթ-Արարայի բարձունքները կանգնած էր ֆրանսիական զորախումբը, որի կազմում էին հայկական երկու գումարտակները: Ինչպես կտեսնենք, իրականում հայկական զորամասը գրոհեց Ռաֆաթի բարձունքները՝ Արարայի հարևանությամբ: Սակայն Ս. Պարթևյանը իր «Արարա» հուշագրքույկով[1] շրջանառության մեջ դրեց Արարայի ճակատամարտ հասկացությունը, որը մտավ հայ պատմագիտության մեջ: Տ. Պոյաճյանն իր հուշագրության մեջ առաջին անգամ փաստագրական նյութի հիման վրա ցույց է տվել, որ հայկական զորախումբը կռվել էր ոչ թե Արարայում, այլ՝ հարևանությամբ՝ Ռաֆաթում, իսկ Արարայում բրիտանական 10-րդ դիվիզիայի հնդկական զորամասերն էին[2]: Քանի որ Պաղեստինյան ռազմաճակատի գործողությունները և Հայկական լեգեոնի պատմությունը գիտական ուսումնասիրության գրեթե չեն ենթարկվել հայկական պատմագրության կողմից, դա է պատճառ դարձել, որ այդ իրադարձություններից մեկ դար անց, հայ իրականության մեջ դեռևս Մեգիդոյի ճակատամարտը և դրանում Հայկական լեգեոնի իրական դերը չի լուսաբանվել: Ինչպես տեսանք, Հայկական լեգեոնը Պորտ Սայիդ-Քանթարա-Ռամլե-Լյուդ գծով Եգիպտոսից տեղափոխվեց Պաղեստինյան ռազմաճակատ:

Համադրելով տարբեր աղբյուրներ, ներկայացնում ենք լեգեոնի գումարտակների առաջավոր գիծ տեղափոխելու ժամանակացույցը: Օգոստոսի 25-ին Լյուդից շարունակելով ռազմերթը, ամսի 30-ին լեգեոնը ճամբար է խփել ռազմաճակատի առաջավոր գծից մոտ 7 կմ հեռավորության վրա: Հաջորդ օրը Ա գումարտակը տեղափոխվել է առաջին գիծ, Բ գումարտակը սեպտեմբերի 1-ին կանգնել է երկրորդ գծում: Սեպտեմբերի 15-ին Բ գումարտակը գիշերով երեքժամյա անցումով տեղափոխվել է առաջին գիծ, իսկ Ա գումարտակը, որը երկու շաբաթ առաջավոր գծում էր, տեղափոխվել է երկրորդ գիծ[3]: Սեպտեմբերի առաջին երկու շաբաթներին հայ մարտիկներն իրենց լավ են դրսևո-

[1] **Պարթեւեան Ս.,** նշվ. աշխ., 1919:

[2] **Պոյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 142:

[3] **Ատանայի Հայոց պատմութիւն**, էջ 426: Գասպարյան Ռ., Հայկական լեգեոնը, էջ 8: Լազեան Գ., Հայաստան եւ Հայ Դատը (Վաւերագրեր), Գահիրէ, 1946, էջ 192: **Արարա:** Նուիրուած Արարայի հինգերորդ տարեդարձին, Պոսթոն, 1923, էջ 8:

րում դիրքային մարտերում ու հետախուզական գործողություններում[1]: Ս. Գինոսյանը վկայում է, որ սեպտեմբերի 10-ին գերված թուրք մոլլան և զինվորը խոստովանել են, որ թուրքերի ու գերմանացիների միջև օրեցօր ատելությունն ու հակասությունները մեծանում էին[2]: Իսկապես՝ պատերազմի ավարտական փուլում երկու դաշնակիցների հարաբերությունները սրվել էին: Գերմանացիները հասկացել էին, որ թուրքերը սեփական խաղն են խաղում և չեն պատրաստվում ամբողջությամբ հետևել իրենց քաղաքական ծրագրերին: Դա բավական ակնհայտ երևաց Բրեստ-Լիտովսկի համաձայնագրից հետո Անդրկովկասում թուրքերի գործողություններից: Մյուս կողմից թուրքերը հասկանում էին, որ պատերազմը տանուլ էր տրված, և մեղադրում էին գերմանացիներին իրենց պատերազմի մեջ ներքաշելու համար:

Այս շրջանում Պաղեստինյան ռազմաճակատի բրիտանա-ֆրանսիական և թուրք-գերմանական բանակների շփման գիծն անցնում էր Երուսաղեմ ու Նաբլուս քաղաքների միջև ընկած շրջանով և ձգվում էր Հորդանան գետից մինչև Միջերկրական ծով: Դեռևս 1918 թ. գարնանը բրիտանական զորքերն երկու անգամ փորձել էին ճեղքել հակառակորդի պաշտպանությունը, բայց անհաջողություն էին կրել: Դրանից հետո կողմերի միջև հարաբերական անդորր էր հաստատվել, և նրանք զբաղված էին ուժերը վերադասավորելով: Թուրքերը հույս ունեին, որ կարող են հետ մղել հակառակորդին՝ կառչելով Սամարիայի լեռնային, բնականից անառիկ դիրքերին, որոնք էլ ավելի էին ամրացվել գերմանական մասնագետների կողմից: Թուրքիայի ռազմական նախարար Էնվերը պաշտպանական այդ հզոր գծի հետ մեծ հույսեր էր կապում և այն անվանում էր «երկրորդ Դարդանել»[3]: Նա հույս ուներ, որ այդտեղ ևս կկարողանան կասեցնել հակառակորդի մեծաթիվ ուժերին, ինչպես՝ Դարդանելի օպերացիայի ժամանակ:

Գեներալ Է. Ալենբին որոշեց թշնամուն վճռորոշ հարված հասցնել սեպտեմբերին: Տեղանքը հիմնականում լեռնային էր, և հակառակորդի դիրքերը գրավելը մեծ դժվարությունների ու զոհերի հետ էր կապված:

---

[1] **Ներսիսեան Ա.**, Մովսէս Տէր Գալուստեան, Եր., 2015, էջ 108:

[2] **Արարա,** էջ 8:

[3] **Կամաւորը** (Արարայի յաղթանակի 10-րդ տարեդարձի առթիւ), հրատարակութիւն Գահիրէի Հայ Լէգէոնական Միութեան, Գահիրէ, 1928, էջ 34:

Սակայն նույնիսկ հաջողության դեպքում, թշնամին նահանջից հետո կզբաղեցներ նոր պաշտպանական գիծ: Է. Ալենբին որոշեց այնպիսի հարված հասցնել, որով ամբողջությամբ կջախջախեր թշնամուն և թույլ չէր տա պաշտպանության նոր գիծ ստեղծել: Վճռական հարձակման հաջողությունը հիմնականում կախված էր թշնամու համար հարվածի ուղղության անսպասելիությունից, հանկարծակիությունից և ուժգնությունից: Պաղեստինի թուրք-գերմանական բանակների գլխավոր հրամանատար, գերմանացի գեներալ Լիման ֆոն Սանդերսը գլխավոր հարձակումը սպասում էր ռազմաճակատի արևելքից՝ Ամմանի ուղղությամբ: Նախկինում հենց այս թևից էին բրիտանական ուժերը հուժկու գրոհներ կազմակերպել: Սակայն այս անգամ Է. Ալենբին որոշեց հարվածն ուղղել արևմտյան հատվածից: Նա որոշեց Միջերկրականի առափնյա շրջանով՝ Սարոնի դաշտով, հեծելազորի սրընթաց գրոհով ճեղքել հակառակորդի պաշտպանական գիծը, դուրս գալ թշնամու թիկունք և գրավել Հայֆան ու Նաբլուսը, որով կկտրվեր Պաղեստինի թուրքական ուժերի նահանջի ճանապարհը: Իսկ Ամմանից Դամասկոս երկաթուղային ճանապարհով թուրքերի նահանջի ուղին փակելու էր Մեքքայի շերիֆ Հուսեինի որդի Էմիր Ֆեյսալի արաբական բանակը: Փաստորեն՝ Է. Ալենբին որոշեց թուրքական պաղեստինյան բանակախումբը վերցնել շրջապատման մեջ և ամբողջությամբ ոչնչացնել, որի արդյունքում հակառակորդն այլևս որևէ լուրջ դիմադրություն չէր կարողանա ցույց տալ դեպի Լիբանան ու Սիրիա շարժվող բրիտանական բանակին: Պաղեստինյան ռազմաճակատում սեպտեմբերյան խոշոր հաղթանակի գործում անուրանալի դեր էր ունեցել այն հանգամանքը, որ բրիտանական հրամանատարությունը կարողացել էր գաղտնի պահել հարվածի գլխավոր ուղղությունը և զորքերի բոլոր տեղաշարժերը: Եգիպտական ռազմարշավային կորպուսում լոնդոնյան լրատվամիջոցների պաշտոնական թղթակից Վիլյամ Մեսին խոստովանում էր, որ զորքերի քողարկումն այնքան լավ էր կազմակերպված և հրամանատարությունն այնքան գաղտնի էր հարձակողական պլանները մշակել, որ ինքը գրեթե մշտապես գտնվելով գլխավոր շտաբում և բազմիցս այցելելով տարբեր զորամասեր, միայն հարձակումից մեկ օր

առաջ էր տեղեկացել զորքերի տեղաշարժի և վճռական հարձակման մասին, այն էլ՝ հրամանատարությունից[1]:

Ռազմաճակատի արևելքից զորքերի հիմնական մասը՝ Անապատային հեծյալ կորպուսի 4 դիվիզիաներից 3-ը, քողարկված և չափազանց գաղտնիության պայմաններում, Է. Ալենբին նետեց արևմուտք: Հորդանանի հովտում թողնվեցին նրանց դատարկ վրանները, տեղադրվեցին կտորից պատրաստված ձիերի խրտվիլակներ: Քողարկումը այնքան հմտորեն էր արված, որ սեպտեմբերի 17-ին տարածքը վերևից հետախուզած գերմանական օդաչուն իր հրամանատարությանը տեղեկացնում էր, որ Հորդանանի հովտում կենտրոնացված են ավելի քան 23 հեծյալ էսկադրոններ[2]:

Անապատային հեծյալ կորպուսի հիմնական ուժերը խիստ գաղտնիության պայմաններում տեղափոխվեցին գրեթե 100 կմ ձգվող ռազմաճակատի մի ծայրից մյուսը և տեղակայվեցին 21-րդ կորպուսի թիկունքում: Ռազմաճակատի արևմտյան հատվածում ամեն ինչ արտաքնապես թողնվեց այնպես, ինչպես կար: Այնտեղ տեղափոխված զորքերին արգելված էր ցերեկով տեղաշարժվելը կամ գիշերով խարույկ վառելը: Բանակային վառարանները ճաշը պատրաստում էին չոր սպիրտով, որպեսզի ծուխը չնկատվեր: Ստեղծվեց հատուկ հեծյալ ոստիկանություն, որը հսկում էր, որպեսզի զինվորները խստորեն պահպանեին անվտանգության կանոնները և չնկատվեին թշնամու դիրքերից կամ օդանավերից: Ձիերին ջուր տալու և մարզելու համար թաքստոցներից հանում էին կեսօրից մինչև ժամը 2-ը: Այդ ժամերին բրիտանական օդանավերը մարտական հերթապահություն էին իրականացնում և թշնամու օդանավերը չէր կարող տեսնել ձիերին[3]: Հեռախոսով կամ հեռագրով զորքերի տեղաշարժի մասին ցանկացած տեղեկության փոխանցումը խստորեն արգելվեց[4]:

Թշնամուն մոլորեցնելու համար 3-րդ և 7-րդ դիվիզիաները սեպտեմբերի սկզբներին ցուցադրաբար արևմտյան ռազմաճակատից շարժվեցին դեպի արևելք: Այդ դիվիզիաների զորամասերը ցերեկով

[1] **Massey W.,** Allenby's final triumph, p. 96:
[2] Նույն տեղում, էջ 97:
[3] Նույն տեղում, էջ 98:
[4] Նույն տեղում, էջ 99:

մեկնում էին Լյուդի երկաթուղային կայարան, իսկ գիշերվա քողի տակ վերադառնում էին հետ[1]: Է. Ալենբիին հաջողվեց զորքերի տեղաշարժերն աննկատ իրականացնել և հարձակման հիմնական ուղղությունը գաղտնի պահել թշնամուց: Գերմանական ինքնաթիռը սեպտեմբերի 18-ին հետախուզական թռիչք իրականացրեց, սակայն օդաչուն որևէ տեղաշարժ և զորքերի նոր կենտրոնացում չկարողացավ հայտնաբերել: Միայն ֆրանսիական զորախմբի կազմում նկատել էր Հայկական լեգեոնի համալրումը, որը համարել էր իտալական զորամաս[2]:

1918 թ. սեպտեմբերի 19-ին սկսված Մեգիդոյի ճակատամարտի նախօրյակին Պաղեստինյան ռազմաճակատի գիծը Միջերկրականի ափից ձգվում էր մինչև Մեռյալ ծով՝ մոտ 95 կմ: Աղբյուրների համադրմամբ հստակեցրել ենք ռազմաճակատի գծում բրիտանական և թուրքական զորքերի, ինչպես նաև հայկական զորամասի, տեղաբաշխումը, նրանց առջև դրված խնդիրները[3]: Բացի Միջերկրական ծովին հարող նեղ հատվածից՝ Սարոնի դաշտից, որը Բիր Զեյթ բնակավայրից ձգվում էր մինչև Ռոշ Հաային, մնացած տարածքները լեռնային կտրատված տեղանք էին, ուր թուրք-գերմանական ուժերը հաջողությամբ կարող էին կասեցնել հակառակորդին: Եգիպտական ռազմարշավային զորքերը կազմված էին երեք՝ Անապատային հեծյալ, 20-րդ, 21-րդ կորպուսներից և գեներալ Է. Չայթորսի զորախմբից:

Գերմանացի գեներալ Լիման ֆոն Սանդերսի ղեկավարած թուրքական «Յըլդըրըմ» (Կայծակնային) զորամիավորումը կազմված էր 4-րդ, 7-րդ, 8-րդ բանակներից: 8-րդ բանակի կազմի մեջ էր գերմանական Ասիա կորպուսը (հրամ.՝ Գուստավ ֆոն Օպեն), որը աչքի էր ընկնում բարձր մարտունակությամբ: Այդ գերմանական զորախումբը ուներ 5 գումարտակներ՝ 48 գնդացիրներով, 3 հրետանային մարտկոց՝ յուրաքանչյուրը 4 հրանոթով, հեծյալ էսկադրոն, գնդացրային ջոկատ, հետախուզական ստորաբաժանում, ինքնաթիռներ և այլ ստորաբաժա-

[1] Նույն տեղում, էջ 102:

[2] **Պօյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 146:

[3] **Պօյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 144-145: **Massey W.,** Allenby's final triumph, 111-112, 126-129, 147:

նումներ[1]: Բրիտանական 21-րդ կորպուսի հարձակման գիծը ձգվում էր 34 կմ՝ Բիր Զեյթից մինչև Ռաֆաթ: Միջերկրականին հարող 3 կմ-ոց հատվածում, որը սկսվում էր Յաֆայից (այժմ՝ Թել Ավիվ) հյուսիս ընկած Բիր Զեյթ բնակավայրից և ձգվում էր արևելքում մինչև Ռոշ Հաային տեղակայված էր 60-րդ Լոնդոնյան դիվիզան, որի մեջ էր նաև 5-րդ Ավստրալիական թեթև հեծելազորային բրիգադը: Սա փաստորեն գլխավոր ուղղությունն էր: Այդ զորախմբի առջև խնդիր էր դրված ծովափի երկայնքով գրավել հակառակորդի երեք շարք խորությամբ պաշտպանության գիծը, որպեսզի հեծելազորային դիվիզիաները Սարոնի դաշտավայրով սրընթաց ներխուժեին թշնամու թիկունք:

7-րդ Միրության դիվիզիան զբաղեցնում էր 5 կմ-ոց հատված: Այս դիվիզիայի առջև ընկած էր արևելքից արևմուտք ձգվող ձորակներով կտրատված տեղանք, որը հակառակորդը բավական լավ ամրացրել էր խրամատներով ու գնդացիրներով: Միայն մի ձորակ կար, որը ձգվում էր հյուսիսից հարավ: Որոշվեց դրա երկայնքով հարձակվել 7.5 կմ հեռավորության վրա գտնվող Էթ Թիրեհի ուղղությամբ, ուր գտնվում էր թուրքական 22-րդ կորպուսի կենտրոնը: Հետևազորի միջոցով ճանապարհը բացելուց հետո պետք է 5-րդ Ավստրալիական հեծյալ բրիգադը հարձակման գնար դեպի Թուլկարմ, ուր տեղակայված էր թուրքական 8-րդ բանակի շտաբը: 75-րդ դիվիզիայի առջև 1.7 կմ լայնությամբ բավական նեղ, սակայն խրամատներով ու փշալարերով չափազանց լավ ամրացված տարածք էր: Նա նույնպես պետք է ճանապարհ բացեր դեպի Էթ Թիրեհ և փակեր թշնամու նահանջի ուղին: Իր խնդիրը կատարելուց հետո 75-րդ դիվիզիան մնալու էր պահեստազորում: 3-րդ Լահորյան դիվիզիային բաժին էր հասել 10.3 կմ լայնությամբ գիծ: Այն առաջ էր շարժվելու Հադրահ-Էթ Թիրեհ ճանապարհի երկայնքով: Նրա ուղին փակում էին երկու չափազանց լավ ամրացված կետեր: Ռազմաճակատի մյուս տեղամասերը լեռնային շրջաններ էին: Քաֆր Քասիմից սկսվում էին այդ դժվարամատչելի շրջանները: Սակայն Է. Ալենբին թշնամուն թյուրիմացության մեջ գցելու համար առաջին հարվածը հասցնելու էր այդ լեռնային տարածքներում: 54-րդ դիվի-

[1] Տե՛ս http://web.archive.org/web/20110605134841/http://www.sacktrick.com/igu/ germancol onialuniforms/hist%20ottoman.htm:

զիան զբաղեցնում էր Քաֆր Քասիմից մինչև Զավիա ընկած 8.7 կմ տարածքը:

Միջերկրականի և Զավիայի միջև կանգնած էին թուրքական 22-րդ կորպուսի 7-րդ և 20-րդ դիվիզիաները: Նրանց թիկունքում՝ որպես պահեստային ուժ, կանգնած էր 46-րդ դիվիզիան: Փաստորեն՝ թուրքական ընդամենը 3 դիվիզիաներ էին գտնվում 21-րդ կորպուսի 5 դիվիզիաների և նրանց թիկունքից հարձակման գնացող Անապատային հեծյալ կորպուսի 3 դիվիզիաների դիմաց: 54-րդ դիվիզիայի կազմում էր նաև Զավիայից մինչև Ռաֆաթ-Արարա բարձունքները 5.3 կմ լայնությամբ տարածքը զբաղեցրած Պաղեստինի և Սիրիայի ֆրանսիական զորախումբը (հրամ.՝ գնդապետ Ֆիլիպ դը Պիեպապ): Այն կազմված էր Արևելյան լեգեոնի հայկական 1-ին և 2-րդ գումարտակներից, սիրիացիների մեկ վաշտից, Ալժիրյան հրացանակիրների 1-ին գնդի 7-րդ և 2-րդ գնդի 9-րդ գումարտակներից, հեծյալ էսկադրոնից:

Անապատային հեծյալ կորպուսը, որի մեջ էին 4-րդ, 5-րդ հեծելազորային և Ավստրալիական հեծյալ դիվիզիաները, կանգնած էր 21-րդ կորպուսի թիկունքում: Վերջինի խնդիրն էր ջախջախել թշնամու աջ թևը և հասնել Դեյր Շարաֆ-Սամարիա-Թուլկարմ գծին: Հետևակի ուժերով հակառակորդի պաշտպանությունը ճեղքելուց հետո, Անապատային հեծյալ կորպուսը պետք է ձախից շրջանցեր 21-րդ կորպուսին և սրընթաց գրոհեր Աֆուլայի և Բեյսանի վրա՝ կտրելով հակառակորդի երկաթուղային ուղին և փակելով նրա նահանջի ճանապարհը:

20-րդ կորպուսը պետք է գրոհեր Ռաֆաթից-Բեյթ Լաբան գծի վրա: Նրա գլխավոր խնդիրն էր Նաբլուսի ճանապարհով առաջանալ և այդ քաղաքից հարավ միանալ 21-րդ կորպուսի զորքերին: 20-րդ կորպուսի երկու դիվիզիաների առջև ընկած էր հիմնականում լեռնային, բավական երկար՝ մոտ 40 կմ ձգվող գիծ: Արարայից Քաֆր ալ Դիք հատվածը զբաղեցրեց 10-րդ դիվիզիան: Բերուքինից մինչև Բեյթ Լաբան կանգնած էր 53-րդ դիվիզիան: Զավիայից մինչև Բերուքին ձգվող լեռնային հատվածում ֆրանսիական զորախմբի և բրիտանական 10-րդ դիվիզիայի դիմաց կանգնած էին թուրքական Ձախակողմյան կորպուսի 19-րդ, 16-րդ հետևակային, 2-րդ հեծելազորային դիվիզիաները, Բերուքինից Բեյթ Լաբան՝ 3-րդ կորպուսի 1-ին, 11-րդ և 20-րդ կորպուսի 26-րդ դիվիզիաները: Այսպիսով, Ֆրանսիական զորախմբի և բրի-

տանական 2 դիվիզիաների դիմաց կանգնած էին թուրք-գերմանական 6 դիվիզիաներ:

Ռազմաճակատի արևելյան՝ մոտ 21 կմ հատվածը հանձնված էր գեներալ-մայոր Էդուարդ Չայթորսի 11.000-ոց զորախմբին, որի մեջ էին Ավստրալիական և նորզելանդական հեծյալ դիվիզիան և երկու հետևակային բրիգադներ: Չայթորսի զորախումբը պետք է Հորդանանի հովտում՝ Մեռյալ ծովից մինչև Էլ Մուղեյր ընկած տարածքում, լարվածության մեջ պահեր թուրքերին՝ նրանց ապակողմնորոշելով, թե իբր հարվածի գլխավոր ուղղությունը այդտեղից էր լինելու: Ռազմաճակատի արևելքում՝ Չայթորսի զորախմբի դիմաց, որտեղից Լիման ֆոն Սանդերսը թյուրիմացաբար սպասում էր գլխավոր հարվածը, կանգնած էին թուրքական 7 դիվիզիաներ. 4-րդ բանակի 2-րդ, 8-րդ կորպուսները, Հորդանանյան զորախումբը՝ յուրաքանչյուրը 2 դիվիզիաներով, 7-րդ բանակի 20-րդ կորպուսի 53-րդ դիվիզիան:

Ըստ թուրքական բանակի կապիտան Սարգիս Թորոսյանի՝ Պաղեստինյան ռազմաճակատում, թուրքերն ունեին 120.000 զինվոր, բրիտանացիները՝ 150.000[1]: Դա վերաբերում է նաև Սիրիայում ու Լիբանանում գտնվող ուժերին: Առաջնագծում Լիման ֆոն Սանդերսի 50.000 զինվորների ու 300 թնդանոթների դեմ կանգնած էին բրիտանական 76.000 զինվոր՝ 540 թնդանոթներով, այդ թվում՝ Պաղեստինի և Սիրիայի ֆրանսիական 7.000-ոց զորախումբը, ինչպես նաև ինքնաթիռներ: Թուրք-գերմանական հրամանատարությունը հույս ուներ կառչել տեղի լեռնային բնական ու արհեստական ամրություններից և կասեցնել հակառակորդին[2]:

1918 թ. սեպտեմբերի 18-ի լույս 19-ի գիշերը սկսվեց Արմագեդոնի կամ Մեգիդոյի ճակատամարտը, որը վճռելու էր Պաղեստինյան ռազմաճակատի ճակատագիրը: Հիմնական հարձակման համար ընտրված էր 4.30 րոպեն, երբ լուսինը այլևս չէր լուսավորի և հնարավոր կլիներ հետևակը հնարավորինս մոտեցնել թշնամու դիրքերին՝ անսպասելի և սրընթաց գրոհի համար, որը թույլ կտար նվազեցնել զոհերի

[1] **Թորոսյան Ս.,** Դարդանելից մինչև Պաղեստին, Թարգմանեց անգլերեն բնագրից Լիլիթ Թութխալյանը, Եր., 2012, էջ 154:

[2] **Պոյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 114: **Թորոսյան Շ.**, նշվ. աշխ., էջ 66-67:

քանակը: Առաջինը պետք է գրոհեր 54-րդ դիվիզիան, որի մեջ էր նաև ֆրանսիական զորախումբը: Նրանք հարձակման էին գնալու 10 րոպե շուտ՝ 4.20: Նրանց դիմաց լեռնային լավ ամրացված դիրքեր էին և նրանք լեռների ստորոտներից պետք է առաջինը գնային հարձակման[1]:Հարձակումից առաջ՝ մեկն անց տասնհինգին, ավստրալիացի օդաչու, կապիտան Ռոս Սմիթին հաջողվեց ռմբակոծել և ամբողջութ-յամբ ավերել Աֆուլայում գտնվող հեռագրական կայանը: Քաղաքի ռազմավարական կետերի վրա նետվեցին 16 հատ 50 կգ-ոց ռումբեր: Դրա շնորհիվ թուրքական գլխավոր շտաբի հեռագրական և հեռախոսային կապը ռազմաճակատի հետ կտրվեց: Նաբլուսի շտաբը և կապի կետերը նույնպես ռմբակոծվեցին: Արդյունքում, թուրքական գլխավոր հրամանատարությունը երկու օր տեղյակ չէր թե ինչ էր կատարվում առաջին գծում[2]: Համընդհանուր հարձակման ազդանշան հանդիսացավ հրետանային կրակը, որը հիմնականում ուղղված էր թուրքերի գլխավոր կրակակետերին: Լավ հաշվարկված հրետանային համազարկերը ոչնչացրին թշնամու հրետանու զգալի մասը, որի արդյունքում թուրքական հրետանին չկարողացավ մեծ վնասներ հասցնել հարձակվող հետևազորին: Բրիտանական հրետանու անմիջական հարվածի տակ հայտնվեցին նաև թշնամու շտաբները և հեռախոսային կայանները[3]: Հարվածի անսպասելիությունն ու ուժգնությունն այնքան մեծ էր, որ հարձակման բոլոր ուղղություններում առաջին տասը րոպեների ընթացքում գրավվեցին հակառակորդի առաջին շարքի խրամատները[4]:

60-րդ դիվիզիան կարողացավ գրավել թուրքական երեք պաշտպանական գծերը, և 7.30-ին արդեն բաց էր հեծելազորի ճանապարհը դեպի թշնամու թիկունք: 7-րդ դիվիզիան ժամը 7-ին գրավեց Էթ Թիրեհը, և 4-րդ հեծյալ դիվիզիան ու 5-րդ Ավստրալիական թեթև հեծյալ բրիգադը արշավեցին դեպի Թուլկարմ: Միևնույն ժամանակ 75-րդ դիվիզիան գրավեց՝ Միսկեհը, 3-րդը՝ Հադրահի ճանապարհի բարձունք-

[1] **Massey W.,** Allenby's final triumph, p. 122:

[2] **Cutlack F.,** The Australian Flying Corps in the western and eastern theatres of war 1914-1918, Sydney, 1941, p. 152:

[3] **Massey W.,** Allenby's final triumph, p. 123:

[4] Նույն տեղում, էջ 125:

ները, 54-րդը՝ Քաֆր Քասիմը և Ջևիս Թեփեն[1]: Ֆրանսիական զորախումբը հաջողությամբ գրավեց Ռաֆաթից արևմուտք ընկած լեռնաշղթան, ապա՝ համառորեն պաշտպանեց դեպի արևմուտք ընկած Երեք թփուտներ բարձունքը[2]: Շուտով հակառակորդը որոշ չափով ուշքի եկավ և փորձեց հակագրոհ կազմակերպել: Մի քանի դիրքերից բրիտանացիները ստիպված էին նահանջել, սակայն ժամը 11-ի մոտ բոլոր ուղղություններում թշնամու հակագրոհները կասեցվեցին, և զորքերի առաջխաղացումը շարունակվեց: Թուրքական 8-րդ բանակի կենտրոն Թուլկարմում բրիտանացիների ձեռքն անցան գնացքներ, մեծ քանակությամբ տեխնիկա, զենք, զինամթերք, գերիներ: Մեկ օրում 21-րդ կորպուսի ձեռքն անցավ 7.000 գերի, 100 հրանոթ, 170 գնդացիր և հսկայական քանակությամբ այլ ռազմավար[3]:

Բրիտանական հեծելազորն անցավ Մեգիդոյի կիրճը, մտավ Արմագեդոնի դաշտ և սեպտեմբերի 20-ի գրավեց Աֆուլան, Նազարեթը, Ջենինը, Բեյսանը: Դրանով թուրքական բանակի թիկունքում գտնվող բոլոր երկաթուղային և ճանապարհային հանգույցները հայտնվեցին բրիտանացիների վերահսկողության տակ: Այդպիսով, Պաղեստինյան ռազմաճակատի թուրքական բանակախումբը հայտնվեց շրջապատման մեջ: Բրիտանական հեծելազորը, օդուժի աջակցությամբ և ուղեկցությամբ, 22 ժամում առաջացավ 80 կմ: Նրանց մուտքը Նազարեթ լուսաբացին անսպասելի էր թշնամու համար: Թուրքական շտաբի բազմաթիվ սպաներ գերվեցին գիշերազգեստներով, իսկ շտաբի փաստաթղթերն անվնաս վիճակում ընկան բրիտանացիների ձեռքը: Թուրքական Պաղեստինյան բանակի հրամանատար Լիման ֆոն Սանդերսը հապճեպ հեռացավ քաղաքից: Սակայն Նազարեթն ամբողջությամբ գրավելու համար ծավալվեցին համառ մարտեր[4]:

Սեպտեմբերի 21-ին բրիտանական հեծելազորը հաղթական երթով անցավ Նազարեթով: Փաստորեն՝ գրեթե առանց լուրջ դժվարության բրիտանացիներին անցավ Տիբերիայից Հայֆա և Աքրա տանող ճանապարհը: Գեներալ Չեթվուդի 20-րդ կորպուսը նույնպես հաջողու-

[1] Նույն տեղում, էջ 132-134:
[2] Նույն տեղում, էջ 133:
[3] Նույն տեղում, էջ 138:
[4] Նույն տեղում, էջ 151-152:

թյամբ կատարեց իր վրա դրված առաջադրանքը և լուրջ հարված հասցրեց թշնամուն: Սեպտեմբերի 20-ի առավոտյան ժամը 5-ին 21-րդ կորպուսի զորքերը հարձակումը շարունակելու հրաման ստացան: Ֆրանսիական զորախումբը, որը գրավել էր Արարան և Ջավիան, 54-րդ դիվիզիայի 163-րդ բրիգադի աջ թևով առաջացավ: 54-րդ դիվիզիան 7-ժամյա մարտերից հետո մոտեցավ Ազունին, ուր թուրքական Ասիա կորպուսի շտաբն էր տեղակայված: Սեպտեմբերի 21-ի լուսաբացին 28-րդ բրիգադը աննշան կորուստներով գրավեց Սամարիան[1]: Իսկ կեսօրին 5-րդ թեթև հեծյալ բրիգադը մոտեցավ Նաբլուսին, որը թուրքական 7-րդ բանակի կենտրոնն էր: Այդտեղ հեծյալ բրիգադը հանդիպեց 20-րդ կորպուսի ուժերին, որը առավոտից մարտեր էր մղում քաղաքը համառորեն պաշտպանող թշնամու դեմ: Ի վերջո, Նաբլուսը գրավվեց: Նահանջող թուրքական ուժերը ենթարկվեցին հրետանային և օդային ջախջախիչ ռմբակոծության: Թուրքական 7-րդ և 8-րդ բանակներն ամբողջովին ոչնչացվեցին:

Թուրքերի ջախջախման ու հետապնդման գործում որոշակի ներդրում ունեցավ թուրքական բանակի կապիտան Սարգիս Թորոսյանը: Նա աչքի էր ընկել Դարդանելի ճակատամարտում, սակայն նրա ծնողները և քույրը դարձել էին Մեծ եղեռնի զոհ: Մեգիդոյի ճակատամարտի առաջին օրը Ս. Թորոսյանը նշանակվել էր 7-րդ և 8-րդ բանակների կապի համակարգող, սակայն կտրել էր հեռախոսի ու հեռագրի լարերը, նախապես ունեցած պայմանավորվածությամբ միացել արաբ ապստամբներին և 1.000 հոգանոց ջոկատով հարվածել թուրքերին թիկունքից, փակել փախուստի ճանապարհները: Մինչև Դամասկոս նա հետապնդել է թուրքերին, որի ընթացքում նրա ղեկավարած արաբական զորախմբի թիվը հասել է 6.000-ի[2]: Սեպտեմբերի 23-ին գրավվեցին Աքրան և Հայֆան, սեպտեմբերի 25-ին՝ համառ մարտերից հետո Տիբերիա լճի հարավային ափին գտնվող Սամախ քաղաքը, որտեղով անցնում էր Աֆուլա-Դերա երկաթուղին և Տիբերիա քաղաքը[3]:

[1] Նույն տեղում, էջ 170, 173:

[2] **Թորոսյան Ս.,** նշվ. աշխ.,, էջ 176-181:

[3] **Massey W.,** Allenby's final triumph, p. 190, 193, 198-200:

Ռազմաճակատի արևելքում գեներալ Է. Չայթորսի զորքերը սեպտեմբերի 17-ից մեծ ակտիվություն սկսեցին ցուցաբերել իրենց հանձնված գծի արևելյան և հյուսիսային հատվածներում, որպեսզի այդ հատվածից գլխավոր հարձակման թյուր պատկերացում առաջացնեն հակառակորդի մոտ և ստիպեն այստեղ կենտրոնացնել ուժերը: Է. Չայթորսի խնդիրն էր պաշտպանել Հորդանանի հովիտը և հարձակման գնացող 20-րդ կորպուսի աջ թևը: Թշնամու մոտ նահանջի առաջին նախանշանների դեպքում նա պետք է անմիջապես հարձակման գնար դեպի Էս Սալթ և Ամման, ուր օգնության էին գալու նաև Մեքքայի շերիֆի արաբական զորքերը: Սեպտեմբերի 19-21-ին թշնամին լուրջ ճնշում էր գործադրում Չայթորսի զորախմբի վրա: Սակայն շուտով թուրքերը տեղեկացան 7-րդ և 8-րդ բանակների ջախջախման, արաբների կողմից Դերայի գրավման մասին, որով փակվել էր նրանց նահանջի ճանապարհը: Դա խուճապ առաջացրեց 4-րդ բանակում և բարձրացրեց բրիտանական զորքերի մարտական ոգին[1]:

Սեպտեմբերի 22-ին Է. Չայթորսին հաջողվեց հյուսիսային ուղղության վրա գրավել Դամիեի կամուրջը Հորդանանի վրա, որով ճանապարհը Նաբլուսից ու Բեյսանից գնում էր Էս Սալթ: Հաջորդ օրը վերջնականապես գրավվեց Էս Սալթը, ուր տեղակայված էր թուրքական 4-րդ բանակի շտաբը[2]: Բրիտանական ուժերը շարունակեցին հարձակումը և սեպտեմբերի 24-ին գրավեցին Ամմանի հյուսիսում գտնվող Այնի Սուվեյլան և արևմուտքում գտնվող Նիմրին բնակավայրերը: Սեպտեմբերի 25-ի արշալույսին սկսվեց Ամմանի գրոհը: Համառ մարտերից հետո այն վերջապես գրավվեց, և բրիտանացիների վերահսկողության տակ անցավ Հեջազի երկաթուղին[3]: Հարձակման հաջողությանը նպաստեց նաև այն, որ էմիր Ֆեյսալի արաբական բանակը սեպտեմբերի 16-ից մոտեցավ Դերային, ուր բաժանվում էր Դամասկոսից դեպի Բեյսան և Ամման գնացող երկաթուղին: Սեպտեմբերի 17-ին արաբները գրավեցին Դերայից հյուսիս գտնվող Թել Արար կայարանը, պայթեցրին երկաթուղու մոտ 15 կմ-ոց հատված, փակեցին ճանապարհը:

[1] **Gullett H. S**., The Australian Imperial Force in Sinai and Palestine, 1914-1918 (10th edition), Sydney, 1941, p. 714-717:

[2] **Massey W. T.,** Allenby's final triumph, p. 208:

[3] Նույն տեղում, էջ 211:

Սեպտեմբերի 23-ին արաբները գրավեցին Դերան[1]: Արդյունքում թուրքական 4-րդ, 7-րդ և 8-րդ բանակները չկարողացան երկաթուղով օգնական ուժեր ստանալ Դամասկոսից, իսկ պարտությունից հետո չկարողացան զորքերն ու տեխնիկան տեղափոխել թիկունք: Հետագա օրերին բրիտանացիները շարունակեցին շրջապատման մեջ մնացած թուրքական բանակի մնացորդների վնասազերծումը: Թուրքական Պաղեստինյան բանակախումբն ամբողջությամբ ոչնչացվեց: Սպանվեցին ու գերվեցին տասնյակ հազարավոր զինվորներ: Միայն 5-6.000 զինվորների հաջողվեց փախուստի դիմել:

Մեգիդոյի ճակատամարտում պատմության մեջ առաջին անգամ հեծելազորը և օդուժը համատեղ, արդյունավետ համագործակցությամբ վարեցին գրեթե ամբողջ հարձակումը: Օդուժը շարքից հանեց թշնամու կապի միջոցները, մեծ արդյունավետությամբ ոչնչացրեց թշնամու տեխնիկան և մարդուժը, հետախուզական անուրանալի ծառայություն մատուցեց հարձակվող բանակին: 1918 թ. սեպտեմբերի 19-25-ը տեղի ունեցած Մեգիդոյի հաղթական ճակատամարտի արդյունքում Միջերկրականից մինչև Մեռյալ ծով ձգվող թուրքական ամբողջ ճակատը քայքայվեց, իսկ «Յըլդըրըմ» բանակը դադարեց գոյություն ունենալ[2]: Մեգիդոյի ճակատամարտը Առաջին աշխարհամարտի ամենափայլուն կազմակերպված ռազմագործողություններից էր, ուր փայլեց Է. Ալենբիի ռազմագիտական տաղանդը: Այն անուրանալի դեր ունեցավ Օսմանյան կայսրությանը ջախջախելու և անձնատվության պարտադրելու գործում: Ճակատամարտի արդյունքում ֆրանս-բրիտանական ուժերի առջև բացվեց դեպի Լիբանան, Սիրիա և Կիլիկիա տանող ճանապարհ:

Հայկական լեգեոնի մասնակցությունը ճակատամարտին:

Մեգիդոյի ճակատամարտում Հայկական լեգեոնի առաջ խնդիր էր դրված գրավել Արարայի ձախակողմյան բավական լավ ամրացված երկու դիրքերը[3], որոնք ընկած էին Ռաֆաթ գյուղից արևմուտք: Ռաֆաթ-Արարան 350 մետր բարձրությամբ և 3 կմ ձգվող լեռ էր: Հայկա-

[1] **Cutlack F.,** The Australian Flying Corps, p. 162-163:

[2] **Պօյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 153:

[3] **Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան 1887-1963**, խմբ. Ա. Կիտուր, հ. Բ, Պէյրութ, 1963, էջ 342:

կան զորախումբը կանգնած էր Ռաֆաթի դիմաց, իսկ Արարայի ուղղությամբ՝ բրիտանական 10-րդ դիվիզիայի հնդկական զորամասերն էին[1]: Ռաֆաթի բարձունքը ռազմաճակատի ամենադժվար ու գրեթե անառիկ հատվածներից էր համարվում: Մինչ այդ դաշնակիցների զորքերը երեք անգամ փորձել էին գրավել այդ դիրքերը, բայց թշնամին հետ էր շպրտել նրանց[2]: Արարայից ձախ Ռաֆաթ գյուղն էր, որի դիմաց սիրիական զորախումբը կանգնեց, իսկ այդտեղից ավելի ձախ հայկական դիրքերն էին, որոնք ձգվում էին ավելի քան 3 կմ: Դրանք երեք բլուրներ էին, որոնց վրա հակառակորդը իրար հաջորդող երեք պաշտպանական գիծ էր կառուցել: Հայկական զորախմբի 600 զինվորների դիմաց կանգնած էին 1000 թուրք և 600 գերմանացի զինվոր[3]: Ինչպես տեսանք, այս լեռնային, լավ ամրացված դժվարամատչելի հատվածում Է. Ալենբին թշնամուց երեք անգամ ավելի փոքր ուժեր էր թողել, որոնց խնդիրն էր լինելու առաջինը գնալ հարձակման և շեղել թշնամու ուշադրությունը գլխավոր ուղղությունից: Փաստորեն, հայկական զորախմբից պահանջվում էր շեղել թշնամու զորամասերի ուշադրությունը և պահպանել սեփական դիրքերը: Բրիտանացիները չէին հավատում, որ հայկական լեգեոնն ի վիճակի կլինի ջախջախել թուրքերի պաշտպանությունը՝ ունենալով երեք անգամ քիչ զինվոր, մանավանդ որ նախկինում բրիտանացիները երեք անգամ փորձել էին այդ հատվածում առաջ շարժվել ավելի մեծ ուժերով և պարտություն էին կրել: Լեգեոնի աջ թևում կանգնած էին ալժիրյան, իսկ ձախ թևում՝ 54-րդ դիվիզիայի զորամասերը: 1918 թ. սեպտեմբերի 18-ի երեկոյան լեգեոնի 2-րդ գումարտակը հրաման ստացավ նախապատրաստվել հաջորդ օրվա գրոհին, որը առաջին լուրջ մարտական մկրտությունն էր լինելու հայ կամավորների համար: Իսկ լեգեոնի 1-ին գումարտակը ճակատամարտի ժամանակ պահեստային ուժերի մեջ էր մնալու[4]: Հետաքրքիր է նշել, որ թուրքերի վրա հոգեբանական ճնշում գործադրելու նպատակով հարձակման նախօրեին բրիտանական ինքնաթիռը թշնամու

[1] **Պօյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 142-143:

[2] **Ամեմեան Խ.,** Հայկական լէգէոնը, «Համազգային»-ի տարեգիրք, Պէյրութ, 1953, էջ 73:

[3] **Արարա**, էջ 6:

[4] **Լազեան Գ.,** Հայաստան եւ Հայ Դատը (Վաւերագրեր), էջ 192:

թիկունքում թռուցիկներ էր տարածել, ուր գրված էր, որ նրանց դեմ իբրև կանգնած էր 60.000-ոց հայկական բանակ[1]: Փաստորեն՝ աշխարհի հզորագույն կայսրության ներկայացուցիչները թուրքերին վախեցնում էին ոչ թե իրենց բանակով, այլ՝ հայկականով:

1918 թ. սեպտեմբերի 18-ին, երեկոյան ժամը 9-ից բրիտանա-ֆրանսիական ուժերը մոտ երկու ժամ հրետակոծեցին հակառակորդի դիրքերը[2]: Սեպտեմբերի 19-ի արշալույսին սկսվեց ընդհանուր հարձակումը: Հայկական լեգեոնը մի քանի ժամ տևած համառ մարտերից հետո կարողացավ սվինամարտով թուրքերին դուրս շպրտել առաջապահ դիրքերից: «Թուրքը որ անպաշտպան և անզէն հայերը մորթելու մէջ այնքան ճարպիկութիւն և քաջութիւն ցոյց տուած էր,- հիշում է ճակատամարտի մասնակից Մ. Թաթարյանը,- հայ կամաւորին զէնքին դէմ ընկրկեցաւ և իր ամրակուռ դիրքերուն առաջին գիծը լքելով անցաւ երկրորդ դիրքերուն»[3]: Ժամը 15-ին բրիտանական հրամանատարությունը հրահանգեց շարունակել առաջխաղացումը[4]: Շարունակելով հաջող հարձակումը՝ հայ զինվորները գրավեցին նաև պաշտպանական երկրորդ և երրորդ բնագծերը: Թուրքերը փորձեցին հակագրոհ կազմակերպել, բայց հայ զինվորները կասեցրին թշնամու համառ գրոհները: Հայ մարտիկների կողմից Ռաֆաթի բարձունքների գրավումը նպաստեց Արարայի, Մեսհայի և Պետհեյի դիրքերի անձնատուր լինելուն[5]: Սեպտեմբերի 19-ի երեկոյան մարտը դադարելուց հետո, հայկական Բ գումարտակն աննկատ տեղափոխվեց թիկունք, իսկ Ա գումարտակը զբաղեցրեց նրա դիրքերը: Սեպտեմբերի 20-ի արևաճագին լեգեոնը գրոհելու հրաման ստացավ: Սակայն պարզվեց, որ նրանց առաջ գտնվող դիրքերը դատարկ էին, քանի որ գիշերը թշնամին ճողոպրել էր[6]: Լեգեոնականները գերեցին թշնամու 147 զինվոր, 1 մայոր և 3 կապիտան, որոնցից մեկը հույն էր[7]: Թուրք մայորը զարմացավ

[1] **Թաթարեան Մ.,** նշվ. աշխ., էջ 15:

[2] **Կամաւորը,** էջ 42:

[3] **Թաթարեան Մ.,** նշվ. աշխ., էջ 15:

[4] **Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան 1887-1962,** Խմբագիր՝ Ա. Կիտուր, հ. Ա, Պէյրութ, 1962, էջ 531:

[5] **Պօյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 142:

[6] Նույն տեղում, էջ 123:

[7] **Աւետեան Մ.,** նշվ. աշխ., էջ 477:

լեգեոնականների թվաքանակը տեսնելով. «Մեր զօրքը բարոյալքուեցաւ այն օրէն, երբ անգլիական օդանաւերը թռուցիկներ թափեցին մեր վրայ, որոնցմէ ըմբռնեցինք թէ՝ այս անգամ իրենց վրայ յարձակողները ո՛չ հնդիկներ, ո՛չ ալ ալճերիացիներ և ո՛չ ալ եւրոպացիներ էին, այլ՝ վրիժառու հայ գունդեր, բայց չէինք կարծեր որ այդքան սակաւաթիւ էք»[1]: Հայ լեգեոնականները ճակատամարտում տվեցին 23 սպանված և 76 վիրավոր: Զոհվածների աճյունները սեպտեմբերի 20-ին թաղվեցին թիվ 26 դիրքում՝ Ռաֆաթի բարձունքի հարավ-արևմտյան լանջին, գյուղից 300 մետր հեռավորության վրա՝ եղբայրական գերեզմանում[2]: 1925 թ. հոկտեմբերի 19-ին Արարայում զոհված հերոսների աճյունները տեղափոխվել են Երուսաղեմ, ուր հոկտեմբերի 25-ին Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանի ջանքերով վերաթաղվել են Սիոն լեռան վրա՝ Ս. Փրկիչ եկեղեցու գերեզմանոցում[3]: Այնտեղ 1927 թ. ապրիլի 24-ին ՌԱԿ-ի Կահիրեի շրջանային վարչության նախաձեռնությամբ հուշարձան կանգնեցվեց հայ լեգեոնականների պատվին[4]: Ճակատամարտում աչքի ընկնելու համար «Մարտական խաչ» շքանշանով պարգևատրվեցին 25 լեգեոնականներ[5]: Ցուցաբերած խիզախության համար շքանշաններ ստացան հայ սպաներ Վ. Փորթուգալյանը, Ջ. Շիշմանյանը, Հ. Եսայանը, Հ. Արևյանը, Հ. Գարասեֆերյանը[6]: Հայկական լեգեոնի հաջողությունը նպաստեց դաշնակից ուժերի հաղթանակին: Գնդապետ Ֆիլիպ դը Պիեպապը սեպտեմբերի 21-ին Կահիրեում ֆրանսիական դեսպան Պիեր Լեֆևր-Պոնտալիսին ուղարկած նամակում գրում էր. «Արևելյան լեգեոնն ի հայտ է բերել ամենամեծ խիզախության վկայություն, պահպանելով իր գրաված դիրքերը, չնայած Արարայից տեղացող սարսափելի կրակին. այն այդտեղ կրել է զգալի կորուստներ»[7]:

Իր հերթին Պ. Լեֆևր-Պոնտալիսը սեպտեմբերի 26-ին Ս. Պիշոնին ուղարկած նամակում մեծ գովեստով էր խոսում Հայկական լեգե-

---

[1] **Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան 1887-1963,** հ. Բ, էջ 343:

[2] **Պօյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 147:

[3] Նույն տեղում, էջ 148, 151:

[4] **Կամաւորը**, էջ 29-30:

[5] **Հարությունյան Կ.,** Ֆրանսիական բանակի Հայկական լեգեոնը, էջ 107:

[6] **Ատանայի Հայոց պատմութիւն**, էջ 430:

[7] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 374:

ոնի մասին: Նշում էր, որ լեգեոնն իր արդյունավետությամբ գերազանցել էր այն ջանքերը, որոնք գործադրվել էին այն կազմակերպելու համար: Դեսպանը հայտնում էր, որ բրիտանացիները մինչև ճակատամարտը անվստահությամբ են վերաբերվել այդ զորամիավորմանը: Դեսպանը գտնում էր, որ չնայած բրիտանացիների համեմատությամբ իրենք երկրորդական դեր ունեն Պաղեստինյան ճակատում, սակայն պետք էր մամուլով տեղեկացնել լեգեոնի և ֆրանսիական մյուս զորամասերի սխրանքների մասին, քանի որ դա քաղաքական առումով կնպաստեր Ֆրանսիայի հեղինակության բարձրացմանը: Տեղեկացնում էր, որ Է. Ալենբին իրեն ուղարկած հեռագրով ընդունել էր ֆրանսիական զորքերի ցուցաբերած քաջությունն ու անվեհերությունը[1]:

Սեպտեմբերի 29-ին Եգիպտոսի ֆրանսիական դիվանագիտական գործակալությունը հետևյալ պաշտոնական հաղորդագրությունը տարածեց. «Գեներալ Ալլենբիի գերագույն հրամանատարության ներքո դրված ֆրանսիական զորքերը Պաղեստինի հարձակման ժամանակ ցուցաբերել են ցանկացած գովեստից վեր կանգնած մեծ տոկունություն և խիզախություն, որոնց գլխավոր հրամանատարը բարեհաճել է մատուցել հարգանքի առանձնահատուկ տուրք:

Հրաձիգների գունդը գրավելով Երեք մացառուտների և Սուրի բլուրի դիրքերը, մեկ ժամից էլ պակաս ժամանակամիջոցում գերեվարել է 13 թուրք սպաների, այդ թվում՝ մեկ հրամանատարի, 200 գերու և գրավել է մեծ քանակությամբ գնդացիրներ: Մյուս կողմից, Արևելյան լեգեոնն ի հայտ է բերել ամենամեծ խիզախություն՝ պահպանելով իր դիրքերը, չնայած Արարայում տեղակայված թուրքական մարտկոցներից տեղացող ահարկու կրակին: Սիրիական վաշտն ի հայտ է բերել մեծ արժանիքներ՝ դիմանալով Ռաֆաթում մահ սփռող ռմբակոծությանը: Եգիպտոսում Ֆրանսիայի դիվանագիտական գործակալությունը հպարտ է, քանի որ կարող է հիացմունքի տուրք մատուցել հայերին ու սիրիացիներին, որոնք ֆրանսիական բանակի շարքերում հենց նոր դրսևորել են իրենց հայրենասիրությունն ու ռազմական անվեհերությունը»[2]:

[1] Նույն տեղում, էջ 374-375:

[2] Նույն տեղում, էջ 375:

Պաղեստինում Ֆրանսիայի գերագույն կոմիսարի ժամանակավոր պաշտոնակատար Կուլոնդրի և իր անունից Պ. Լեֆևր-Պոնտալիսը սեպտեմբերի 26-ին շնորհավորական ուղերձ է ուղարկել նաև Եգիպտոսի հայ ազգային միության նախագահ Լ. Մկրտիչյանին, ուր գովաբանում էր Հայկական լեգեոնի սխրանքը: Հոկտեմբերի 1-ին ուղարկած պատասխանում Լ. Մկրտիչյանը հայտնում էր, որ հայերը հպարտ և ուրախ են լեգեոնի ձեռքբերումների համար: Նշում էր, որ հաջողության համար պարտական են առաջին հերթին գնդապետ Լ. Ռոմիոյի ջանքերին, որը զորամասը հեռու պահեց կուսակցությունների միջամտություններից և դարձրեց կուռ կառույց: Նա շնորհակալություն էր հայտնում Ֆրանսիային, որ կազմավորեց ու մարզեց այդ զորամասը: Այդտեղ Լ. Մկրտիչյանը նաև ակնարկեց, որ Արևելյան լեգեոնը հիմնականում միայն հայերից էր կազմված և միայն բռնություններից խուսափելու համար էր, որ ժամանակին չեն կոչել Հայկական լեգեոն[1]:

Հոկտեմբերի 4-ին «Թայմսը» հրատարակեց լորդ Ռոբերտ Սեսիլի հետևյալ խոսքերը. «Հայկական զորքերը ծառայելով բրիտանական, ֆրանսիական բանակներում, ինչպես նաև ամերիկյան բանակում, իրենց պատվավոր բաժինն ունեն գեներալ Ալենբիի մեծ հաղթանակում, Պաղեստինում: Հայաստանի վերաբերյալ դաշնակիցների քաղաքականությունը չի փոխվել»[2]: Հոկտեմբերի 9-10-ին ֆրանսիական մամուլը հրատարակեց հետևյալ հաղորդագրությունը. «Ֆրանսական հրամանատարության տակ կռվող զորքերի մեջ է Հայկական լեգեոնը, որը ակտիվորեն մասնակցում է Սիրիայի ազատագրմանը: Այդ զորամասը միացված է ֆրանսիականին և կռվում է ֆրանսիացի սպաների հրամանատարության տակ: Այս վերջին շաբաթների բոլոր գործողություններում հայկական զորքերը ցույց տվեցին իրենց զինվորական լավագույն հատկությունները և ամենամեծ արժանիքը: Սիրիայում դաշնակցային զորքերի գլխավոր հրամանատար գեներալ Ալենբին հաստատեց այդ արժանիքը Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարին ուղարկած հետևյալ հեռագրով. «Հպարտ եմ, որ Ձեր հայրենակիցները ակտիվ դեր խաղացին կռվում և մասնակցեցին մեր

[1] Նույն տեղում, էջ 376-377:
[2] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 200, ց. 1, գ. 131, թ. 19-20:

մեծ հաղթանակին»: Իր կողմից ֆրանսիական զորքերի հրամանատարը, որի հրամանատարության տակ կռվում են նրանք, լույս սփռեց այդ քաջարի զորքերի արժանիքների, տոկունության և եռանդի վրա, որոնց հավատարմությունը դաշնակիցներին անխախտ է մնացել և պատիվ է բերում ֆրանսիական դրոշին, որի տակ են գտնվում նրանք»[1]:

Արևելքում դաշնակից զորքերի գլխավոր հրամանատար Է. Ալենբին բարձր գնահատեց հայ կամավորների սխրանքը: Հոկտեմբերի 12-ին Պ. Նուբարին ուղարկած հեռագրում ֆելդմարշալը նշում էր. «Անկեղծ շնորհակալություններ Ձեզ և հայերին Ձեր շնորհավորական հաճելի հեռագրի համար: Հպարտ եմ, որ իմ հրամանատարության տակ ունեմ հայկական գունդ: Հայերը փայլուն կերպով կռվեցին և մեծ մասնակցություն ունեցան իմ հաղթանակում»[2]: Իսկ Եգիպտոսի հայ ազգային միության ուղարկած շնորհավորանքներին Է. Ալենբին պատասխանեց. «Ջերմապէս շնորհակալ եմ ձեր շնորհաւորութիւններուն համար, եւ հպարտ եմ այն իրողութեամբ, որ Արեւելեան Լեգէոնի ձեր հայրենակիցները գործօն բաժին մը վերցուցին կռուին մէջ, եւ մասնակից եղան մեր յաղթանակին»[3]:

Պետք է նշել, որ այդ նույն ժամանակ Սիրիայի և Եգիպտոսի ոչ հայկական մամուլում որևէ հիշատակություն չարվեց հայ կամավորների մասին, իսկ Սիրիայում հրատարակվող մի ֆրանսալեզու պարբերական, Արևելյան լեգեոնի մասին գրեց, որ այն սիրիացի և լիբանանցի կամավորներից էր կազմված և կռվում էր Սիրիայի պատվի համար[4]: Դա բավական վիրավորական էր հայերի համար:

Այսպիսով, Արևելյան լեգեոնը, որը հիմնականում կազմված էր հայ կամավորներից, բավական երկար ռազմական մարզումներ ունեցավ Կիպրոսում: Առաջին մարտական մկրտությունը նրանք ստացան Միջերկրականի կղզիներում կատարած պարեկային ծառայության և թուրքական ափերում իրականացրած դիվերսիաների միջոցով: 1918 թ. գարնանը լեգեոնի երկու գումարտակները տեղափոխվեցին Եգիպ-

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 23:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 430, ց. 1, գ. 1320, թ. 11, ֆ. 200, ց. 1, գ. 131, թ. 25:

[3] **Տամատեան Մ.,** նշվ. աշխ., էջ 123:

[4] **Պարթեւեան Ս.,** նշվ. աշխ., էջ 20:

տոս, իսկ օգոստոսի վերջին դիրքեր զբաղեցրին Պաղեստինյան ռազմաճակատի առաջնագծում: Թուրքական բանակը ջախջախիչ հարված ստացավ Մեգիդոյի ճակատամարտում, որից հետո այլևս ուշքի չեկավ: Այդ ճակատամարտին և հաղթանակի կերտման գործին մասնակցեց նաև լեգեոնը, և հայ մարտիկները ցույց տվեցին փայլուն մարտական ունակություններ: Ֆրանսիական կողմը, որպեսզի Արևելքում բրիտանացիների կողքին ցույց տար իր ներկայությունը, ստիպված էր մամուլով փառաբանել Արևելյան լեգեոնի փայլուն հաղթանակը: Սակայն հաճախ մամուլում «մոռանում» էին մատնանշել, որ այն կազմված էր գլխավորապես հայերից:

Լեգեոնը Լիբանանում և Սիրիայում:

1918 թ. սեպտեմբերի 26-ին Է. Ալենբին վերադասավորեց ուժերը և շարժվեց դեպի հյուսիս: Թուրքերը Մեգիդոյի ճակատամարտից հետո ամբողջովին բարոյալքվել էին, անընդունակ էին որևէ լուրջ դիմադրության: Բրիտանացիների գլխավոր խնդիրն էր գրավել Հալեպը: Մեծ Բրիտանիայի ռազմական խորհուրդը համոզված էր, որ Հալեպի գրավումից հետո թուրքերը կդադարեցնեն պատերազմը: Դա էր պատճառը, որ ռազմական խորհուրդը Է. Ալենբիին առաջարկեց հեծելազորի ուժերով հնարավորինս արագ հասնել 480 կմ հեռավորության վրա գտնվող Հալեպին: Սակայն գեներալը հրաժարվեց միայն հեծելազորի ուժերով այդքան հեռավոր ռազմարշավ իրականացնել, որի արդյունքում երկար ճանապարհից հոգնած հեծելազորը ստիպված կլիներ բախվել Հալեպի թուրքական 25.000-ոց բանակին, որն այդ ընթացքում Անատոլիայից կարող էր թարմ ուժեր ստանալ: Ռազմական խորհրդում քննարկվեց նաև Ալեքսանդրետում ափիհանում կատարելու և այնտեղից դեպի Հալեպ շարժվելու նախագիծ, սակայն հաշվի առնելով ի ափիհանման ձախողված փորձը, այն մերժվեց: Նման պայմաններում Է. Ալենբին որոշեց ամբողջ զորքով առաջանալ, որն ավելի դանդաղ, բայց ապահով կլիներ[1]: Նա՝ որպես հեծելազորի թիրախ ընտրեց Դամասկոսը, իսկ հետևակի հիմնական ուժերը որոշեց ծովափով շարժել դեպի Բեյրութ և Տրիպոլի: Կատաղի մարտերից հետո սեպտեմբերի 30-ին էմիր Ֆեյսալի արաբական, իսկ հոկտեմբերի 1-ին բրիտանական

[1] **Massey W.,** Allenby's final triumph, p. 222:

զորքերը մուտք գործեցին Դամասկոս[1]: Այնտեղ գերի հանձնվեց ավելի քան 20.000 թուրք զինվոր[2]:

Դամասկոսում կենտրոնացած շուրջ 30.000 հայ տարագիրներն ուրախությամբ ընդունեցին ազատարար բանակին[3]: Արդեն հոկտեմբերի 3-ին Անդրանիկ Կենճյանի ատենապետությամբ կազմվեց Ժամանակավոր ազգային վարչություն[4]: Այնտեղ կենտրոնացած էին հիմնականում կիլիկիահայեր[5]: Բեյրութը գրավվեց առանց մարտերի: Դեռևս սեպտեմբերի 30-ին թուրքերն ու գերմանացիները հեռացան քաղաքից՝ նախապես ոչնչացնելով սննդի պաշարները: Քաղաքում առանց այդ էլ սով էր տիրում, և պատերազմի տարիներին տեղի բնակչության գրեթե կեսը սովամահ էր եղել: Փաստորեն՝ Բեյրութի բնակչությունը կանգնեց ամբողջական ոչնչացման եզրին[6]:

Արևելյան լեգեոնի երրորդ գումարտակը սեպտեմբերի 29-ին Ֆամագուստայից բրիտանական «Պըրկըն» նավով շարժվեց ռազմաճակատ: Հաջորդ օրը նրանց տեղափոխող նավը կանգ առավ Հայֆայի նավահանգստի մոտ: Իսկ հոկտեմբերի 1-ին հայ և սիրիացի զինվորները ափ դուրս եկան Բեյրութի նավահանգստում: Տեղի բնակչությունը խանդավառությամբ ընդունեց ազատարար զինվորներին՝ նրանց ճանապարհը պատելով ծաղիկներով: Հայ զինվորները հաստատվեցին զորանոցի վերածված Ֆրանսիական համալսարանի տարածքում: Սպայակույտը տեղավորվեց շենքում, իսկ զինվորների համար վրաններ խփվեցին բակում: Նավի բեռնաթափումը ավարտվեց միայն հոկտեմբերի 3-ին[7]: Որոշ աղբյուրներում Գ գումարտակի Բեյրութ հասնելու օր է նշվում հոկտեմբերի 6-ը[8]: Հոկտեմբերի 7-ին, երբ բրիտանական հետախուզական ուժերը հասան Բեյրութ, պարզեցին, որ այն արդեն ազատագրված է[9]: Ինչպես տեսնում ենք, Կիպրոսից ժամանած հայկա-

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 422, ց. 1, գ. 680, թ. 1:
[2] **Massey W.**, Allenby's final triumph, p. 223:
[3] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 422, ց. 1, գ. 675, թ. 13-14:
[4] **Կէնճեան Ա.,** Հալածականի յուշեր 1914-1918, Պէյրութ, 1964, էջ 146:
[5] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 422, ց. 1, գ. 680, թ. 3:
[6] **Massey W.,** Allenby's final triumph, p. 283:
[7] **Ամէմեան Խ.**, Էջեր կամաւորի օրագրէս, էջ 132-138:
[8] **Լազեան Գ.,** Հայաստան եւ Հայ Դատը (Վաւերագրեր), էջ 192:
[9] **Gullett H.,** The Australian Imperial Force, p. 776-777:

կան լեգեոնի երրորդ գումարտակը դաշնակցային առաջին զորախումբն էր, որը ոտք դրեց Բեյրութ: Դրանով ֆրանսիացիները փորձում էին ցույց տալ, որ իրենք են հանդիսանում Լիբանանի մայրաքաղաքի ազատարարները: Հոկտեմբերի 10-ին Բեյրութ հասան նաև առաջին և երկրորդ գումարտակները: Նրանք չափազանց հոգնած էին երկարատև ճանապարհից, զգալի մասը հիվանդ էր: Դա բավական տխուր տպավորություն թողեց նրանց՝ որպես հաղթողների, ոգևորությամբ դիմավորելու դուրս եկած երրորդ գումարտակի զինվորների վրա: Բեյրութի բոլոր գլխավոր կետերի վերահսկողությունն անցավ հայ զինվորներին[1]: Ըստ Ս. Պողոսյանի և Վ. Մեսիի՝ լեգեոնի Ա և Բ գումարտակները Բեյրութ են հասել հոկտեմբերի 20-ին[2]:

Ծովափի երկայնքով շարժվող բրիտանական 7-րդ հետևակային դիվիզիան հոկտեմբերի 18-ին գրավեց Տրիպոլին[3]: Է. Ալենբին որոշեց Հալեպին մոտենալ երեք փուլերով. գրավել լիբանանյան Ռայակ քաղաքը, հետո՝ Հոմսը, ապա՝ գրոհել Հալեպը[4]: Ռայակը գտնվում էր Դամասկոսից մոտ 65 կմ հեռավորության վրա: Այն տրանսպորտային կարևոր հանգույց էր, ուներ խոշոր օդանավակայան, այդտեղ էին թուրքական հիմնական պահեստները, գերմանական ու թուրքական բավական մեծ ուժեր էին կենտրոնացված: Հոկտեմբերի 6-ին բրիտանական զորքերը մտան Ռայակ: Թուրքերն առանց դիմադրության նախորդ օրը հեռացել էին քաղաքից՝ այրելով իրենց 32 ինքնաթիռները[5]: Հոկտեմբերի 15-ին բրիտանական զորքերը մտան Հոմս: Այդտեղ ևս թուրքերն առանց որևէ դիմադրության նահանջել էին[6]: Հոկտեմբերի 19-ին բրիտանական զորքերը շարունակեցին հաղթարշավը Հոմսից հյուսիս: Հոկտեմբերի 21-ին բրիտանական օդուժը ռմբակոծեց Համա քաղաքը: Հաջորդ օրը թուրքերը նահանջեցին Համայից[7]: Է. Ալենբին որոշեց Հալեպը գրավել հոկտեմբերի 26-ին: Նույն օրը սպասվում էր, որ

---

[1] **Ամիմեան Խ.,** Էջեր կամաւորի օրագրէս, էջ 140-141:

[2] **Պօղոսեան Ս.,** Թրքահայ սպայի մը օրագիրը, 1916-1919, հ. Բ, Փարիզ, 1947, էջ 134: **Massey W.,** Allenby's final triumph, p. 320:

[3] **Massey W.,** Allenby's final triumph, p. 320:

[4] Նույն տեղում, էջ 289:

[5] **Cutlack F.,** The Australian Flying Corps, p. 169:

[6] **Massey W.,** Allenby's final triumph, p. 299:

[7] Նույն տեղում, էջ 302:

ֆրանսիական նավատորմը ափիհանում կկատարեր Ալեքսանդրետում: Ֆրանսիացիները ցանկանում էին գրավել Ալեքսանդրետը, և Փարիզից հրահանգեցին Սիրիայի ֆրանսիական նավատորմի հրամանատար ծովակալ Ժ. Վարնեյին գրավելու այդ նավահանգիստը: Հոկտեմբերի 15-ին Բեյրութում Ժ. Վարնեյն այդ մասին տեղեկացրեց Է. Ալենբիին: Վերջինս համաձայնեց, որ Ալեքսանդրետը գրավվի ֆրանսիական և հայկական զորքերի միջոցով: Սակայն թուրքերը նոր համալրումներ ստացան, ականապատեցին Ալեքսանդրետի ծովածոցը և հրետանային կրակով հետ մղեցին ֆրանսիական նավատորմին[1]:

Հոկտեմբերի 23-ին բրիտանական առաջապահ զորքերը մոտեցան Հալեպին: 5-րդ հեծելազորային դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Հ. Մականդրյուն առավոտյան ժամը 10-ին պատվիրակ ուղարկեց քաղաք՝ պահանջելով հանձնվել առանց դիմադրության: Թուրքերը միայն ժամը 17-ին պատասխանեցին մերժումով: Հ. Մականդրյուն որոշեց դիրքավորվել և սպասել հիմնական ուժերի ժամանմանը, որոնք տեղ կհասնեին հոկտեմբերի 25-ին, որպեսզի դրա հաջորդ օրը սկսեն գրոհը: Արաբական զորքերը էմիր Նասիրի գլխավորությամբ հոկտեմբերի 25-ին մոտեցան քաղաքին, և նրանց մի մասը գիշերով մտավ Հալեպ, ուր ապստամբության պատրաստ մեծ թվով արաբներ կային: Հոկտեմբերի 26-ի առավոտյան ժամը 6-ին սկսվեց բրիտանական և արաբական զորքերի գրոհը: Թուրքերը որոշ դիմադրությունից հետո ստիպված էին հանձնել Հալեպը[2]: Տեղի հայերը մեծ խանդավառությամբ ընդունեցին ազատարար բրիտանական և արաբական բանակների մուտքը քաղաք[3]:

Ինչպես և սպասվում էր, Հալեպի անկումից հետո թուրքերը ստիպված էին հաշտություն խնդրել: Մինչ այդ բրիտանական ուժերին հաջողվեց գրեթե ամբողջությամբ ոչնչացնել Պաղեստինում, Լիբանանում և Սիրիայում կենտրոնացված թուրքական բանակները: Թուրքերը տվեցին հսկայական թվով զոհեր ու գերիներ: Ըստ Վ. Մեսիի՝ գլխավոր հարձակումը սկսելուց հետո մինչև հոկտեմբերի կեսը գերվեցին

[1] Նույն տեղում, էջ 302-303:

[2] Նույն տեղում, էջ 307-309:

[3] **Կէօքճեան Վ.,** Հայկական Կիլիկիոյ ազատագրական պայքարը (Յուշեր եւ նօթեր), Պոսթըն, 1979, էջ 101-102:

2417 սպա և 46409 զինվոր, որից գերմանացի էին 158 սպա և 1703 զինվոր[1]: Իսկ Հ. Գուլետը նշում է, որ սեպտեմբերի 19-ից մինչև զինադադարի կնքումը բրիտանացիների ձեռքն ընկավ 75.000 գերի, այդ թվում՝ 3.700 գերմանացի ու ավստրիացի, 360 հրանոթ, 800 գնդացիր, 210 բեռնատար և 50 մարդատար մեքենա, 90 շոգեքարշ, 470 վագոն, 3.700 բեռնակիր անասուն և այլ ռազմավար[2]:

Գերի ընկան նաև գերմանական ու թուրքական բանակներում ծառայող բազմաթիվ հայ զինվորներ: Ալեքսանդր Այնթապլյանի վկայությամբ հայ գերիները հայտնվել էին ծանր վիճակում: Նա 1917 թ. հունիսին Մարաշի գերմանական միսիոներական դպրոցն ավարտելուց հետո 10 հայ այլ տղաների հետ զորակոչվել էր գերմանական բանակ, պարեկային ծառայություն էր կատարել Կիլիկիայով անցնող Բեռլին-Բաղդադ երկաթուղագծի մոտ, իսկ 1918 թ. օգոստոսին ուղարկվել էր Պաղեստինյան ճակատ: Սեպտեմբերի 21-ին նա գերվել էր Աֆուլայում: Նա վկայում է, որ հայերին, հույներին, հրեաներին բրիտանացիները միացնում էին թուրք ռազմագերիներին, իսկ եվրոպացիներին առանձին և ավելի լավ պայմաններում էին պահում: Նրան դժվարությամբ էր հաջողվել մնալ գերմանացիների մեջ, այն էլ մորեղբոր՝ բրիտանական գաղտնի ծառայության սպա, պրոֆեսոր Հարություն Մուրադյանի անունը տալուց հետո[3]: Այսպիսով, Մեգիդոյի փայլուն հաղթանակից հետո, մեկ ամսվա ընթացքում դաշնակցային ուժերը թուրքերին վտարեցին Պաղեստինից, Հորդանանից, Լիբանանից և Սիրիայից: Այդ հսկայական տարածքի գրավումը կարճ ժամանակում աննախադեպ և անսպասելի էր: Թուրքական կողմին այլ բան չէր մնում, քան հաշտություն խնդրելը և անձնատվության ենթարկվելը: 1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքված Մուդրոսի զինադադարով ռազմական գործողությունները դադարեցին:

Ռաֆաթ-Արարայի մարտերից հետո Արևելյան լեգեոնի երկու գումարտակները 5 օր հանգստացան, ապա սիրիական անապատներով շարժվեցին հյուսիս: Չնայած ճանապարհին թշնամու այդպես էլ չհան-

[1] **Massey W.,** Allenby's final triumph, p. 269:

[2] **Gullett H.,** The Australian Imperial Force, p. 783:

[3] **Kazanjian P.,** The Cilician Armenian ordeal, Boston, 1989, p. 49-53:

դիպեցին, սակայն կիզիչ արևի տակ իրականացվող այդ երթը բավական ծանր էր կամավորների համար: Ըստ Մ. Թաթարյանի՝ նրանց նավերով կարող էին մեկ օրում Բեյրութ հասցնել, սակայն գնդապետ Լ. Ռոմիոն այդ դժվարին ռազմերթն իրականացրեց տեղացիներին ֆրանսիական ուժը ցուցադրելու համար[1]: Ֆրանսիան միայն փոքրաթիվ զորախումբ ուներ տարածաշրջանում, այն էլ կազմված էր հիմնականում հայերից ու ալժիրցիներից: Ֆրանսիական զորախմբի կազմում ընդգրկված էին 800 ֆրանսիացի, 3.000 հայ, 3.000 ալժիրցի ու սենեգալցի[2]: Պատերազմից հետո Սիրիան ու Լիբանանը անցնելու էին Ֆրանսիային: Հետևաբար՝ այդ գաղութային կայսրությանն անհրաժեշտ էր որևէ կերպ ցույց տալ իր ներկայությունը բրիտանական զորքերի կողքին: Սեփական ներկայությունը ֆրանսիացիները կարող էին ցուցադրել միայն Արևելյան լեգեոնի ռազմերթի միջոցով, ինչպես նաև մամուլի միջոցով այդ գրեթե ամբողջությամբ հայկական զորամիավորման գործունեությունը գովաբանելով, իհարկե, հաճախ «մոռանալով» այդ կամավորական բանակի հայերից կազմված լինելը:

Արարայից մինչև Բեյրութ 250 կմ էր, որը լեգեոնն անցավ մեծ զրկանքների գնով: Երկար ճանապարհը, անապատի կիզիչ արևը, ջրի պակասը, թերի սնունդը, իսպանիական գրիպը և այլ զրկանքներ հյուծեցին լեգեոնականներին: Սակայն նրանց ուժ էր տալիս այն միտքը, որ ամեն մի քայլով մոտենում էին բաղձալի նպատակին՝ Կիլիկիային: Լեգեոնականներից Կարապետ Թորոսյանը Արարայից մեկնելու առաջին օրվա մասին գրում է. «Մեր խանդավառութիւնը հասած էր իր գագաթնակէտին: Մենք զմեզ կը նկատէինք այն հաւատաւոր Հայերը որոնք ատենին ոչ միայն ոտքով, այլ բոպիկ ուխտի կ'երթային մեր սրբավայրերը իրենց փափաքին իրագործումը խնդրելու Հայոց սուրբերէն»[3]: Առաջին օրը լեգեոնը հասավ Հայֆա և բանակեց ծովափին: Ծարավը հագեցնելու համար զինվորները ստիպված էրն ծովեզերքի մոտ ավազը փորել և այդ անորակ ջուրը խմել: Հաջորդ օրը լեգեոնը մտավ Աքրա: Հաջորդող օրերին հետզհետե հոգնածությունն ավելի էր

[1] **Թաթարեան Մ.,** նշվ. աշխ., էջ 20:

[2] **Fulton L.Bruce,** France and the End of the Ottoman Empire, The Great Powers and the end of the Ottoman Empire, edited by Marian Kent, London, 2005, p. 157:

[3] **Պօյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 161:

մեծանում: Օրերով ստիպված էին սնվել բրիտանական պաքսիմատով, որը այնքան էր չորացել, որ ուտելու համար պետք է թրջեին ջրով: Սակայն այդ դժվարությունները չէին կարող կոտրել հայ մարտիկների կամքը, որոնք, երկար սպասումից հետո, մոտենում էին հայրենիքին: Երգը, պարը, կատակները բարձրացնում էին մարտիկների ոգին: Չնքուշցի երիտասարդները, որքան էլ հոգնած լինեին, երեկոյան պարտադիր իրենց խմբապարով ոգևորություն էին մտցնում[1]: Լեգեոնականները Եգիպտոսից դուրս գալուց հետո առաջին անգամ Լիբանանում հանդիպեցին առատահոս սառը ջուր:

Առաջխաղացման ընթացքում բրիտանական զորամասերի զինվորների 40-60%-ը վարակվեցին մալարիայով և իսպանական գրիպով: Այդ համաճարակները նրանց փոխանցվեցին թուրքական բանակից: Արդեն Հայֆայում պարզ դարձավ, որ իսպանական գրիպի համաճարակը հասել էր նաև Հայկական լեգեոնին: Լեյտենանտ Վահան Փորթուգալյանը գրում է. «Այդ յառաջխաղացման ընթացքին անտեսանելի թշնամի մը բանակը կազմալուծման վտանգի ենթարկեց: Խորհրդաւոր համաճարակ մը: Ամէն օր զինուորներ, տասնեակներով, ջերմէ կը բռնուէին, բայց այլ ախտանիշներով, ու կ'իյնային՝ քալելու անկարող: Երբեմն մահով կը կնքուէր հիւանդութիւնը, որուն դարման չէին գտներ բժիշկներ: Շատ ուշ, խաղաղութենէն ետքը, հասկցուեցաւ թէ կռիւի էսպանելի համաճարակն էր, որ ըստ վիճակագրութեանց, աւելի զոհեր տարաւ աշխարհի մէջ քան չորս տարուան պատերազմը»[2]: Լեգեոնի բժիշկը հուսադրեց մարտիկներին նրանով, որ հայերը լայնակուրծք էին և կարող էին հաղթահարել այդ հիվանդությունը: Մոտ 800 հայ զինվորներ հիվանդացան իսպանական գրիպով, որոնցից 6-ը մահացան[3]: Փաստորեն՝ երկու գումարտակների հայ զինվորների գրեթե կեսը վարակվել էր այդ չարաբաստիկ հիվանդությամբ:

Համաճարակի դեմ պայքարելու համար չկային դեղորայք, պայմաններ, բժիշկներ: Հիվանդներին՝ որպես բուժում, կերակրում էին սոխի ու լոլիկի աղցանով, որը որոշ չափով նպաստում էր ապաքինմանը:

[1] Նույն տեղում, էջ 161-162:
[2] Նույն տեղում, էջ 165:
[3] Նույն տեղում, էջ 163:

Քայլելու անընդունակ հիվանդ զինվորները երկար ժամանակ անխնամ մնում էին ճանապարհներին, քանի որ բավարար փոխադրամիջոցներ չկային: Դրան գումարվում էր ֆրանսիացի որոշ բժիշկների ցուցաբերած անտարբերությունը: Հայֆայում մնացած հիվանդ լեգեոնականները հոկտեմբերի վերջին մեկնեցին Բեյրութ, քայլելու անընդունակները՝ նավով, իսկ մոտ 150-ը՝ ոտքով[1]:

Հայկական լեգեոնը հաստատվեց Բեյրութի հարավային մասում գտնվող մի կաթոլիկ վանքի տարածքում: Սկզբում լեգեոնականները ճաշում էին բացօթյա: Բեյրութում այդ ժամանակ սով էր, և բնակչությունը հաց էր մուրում զինվորներից: Հայ կամավորներն իրենց հացը բաժանում էին սովյալ երեխաներին: Այդ մասին տեղեկանալով՝ հրամանատարությունն արգելեց բացօթյա ճաշելը: Բրիտանական նավերը մեկ շաբաթ անց քաղաք հասցրին սնունդ, հագուստ, դեղորայք և այլ անհրաժեշտ ապրանքներ, որով զինվորների և բնակչության վիճակը բարելավվեց[2]:

1918 թ. հոկտեմբերից լեգեոնը մտավ Արևելքի ֆրանսիական զորախմբի կազմի մեջ, որի հրամանատարն էր Համելինը[3]: Բեյրութի ռազմավարական բոլոր կետերի վերահսկողությունը բրիտանացիները հետզհետե վերցնում են իրենց ձեռքը: Հայկական լեգեոնը իրականացնում էր պահակային և պարեկային ծառայություն[4]: Նոյեմբերի 18-ին Բեյրութում ցավալի միջադեպ տեղի ունեցավ: Քաղաքում զբոսնող հայ լեգեոնականների հետ ընդհարվեցին տեղի ոստիկաններն ու էմիր Ֆեյսալի զինվորները[5]: Դա Ֆեյսալի կողմից ֆրանսիացիների դեմ կազմակերպված սադրանք էր, քանի որ էմիրը ցանկանում էր Սիրիան ու Լիբանանը դարձնել արաբական անկախ պետության մաս:

Դեպքից մի քանի օր առաջ ֆրանսիական հրամանատարությունը տեղեկություն էր ստացել արաբների կողմից նախապատրաստվող զինված գործողության մասին: Դրանով պայմանավորված՝ քաղաքի պահակակետերում զինվորների քանակը մեծացվել էր, նրանց տրվել

[1] Նույն տեղում, էջ 165-167:

[2] Նույն տեղում, էջ 164:

[3] **Լազեան Գ.,** Հայաստան եւ Հայ Դատը (Վաւերագրեր), էջ 192:

[4] **Պոյաճեան Տ.**, նշվ. աշխ., էջ 168:

[5] **Լազեան Գ.,** Հայաստան եւ Հայ Դատը (Վաւերագրեր), էջ 192:

էր բավարար զինամթերք: Դեպքը տեղի ունեցավ հետևյալ պայմաններում: Լեգեոնականները գնումներ կատարելուց վճարեցին ֆրանսիական ֆրանկով, քանի որ աշխատավարձը դրանով էին ստանում, սակայն շրջիկ առևտրականը պահանջեց թուրքական լիրա և զինվորների տված թղթադրամը արհամարհանքով ցուցադրաբար գետին նետեց: Դրանից վիճաբանություն ծագեց: Մոտակայքում գտնվող տեղացի ոստիկանը, մոտենալու և վիճաբանությունը դադարեցնել փորձելու փոխարեն, ատրճանակով մի քանի անգամ օդ կրակեց, որն ազդանշան հանդիսացավ, որպեսզի անմիջապես զանազան կողմերից մի քանի տասնյակ զինված արաբներ դուրս գան և հարձակվեն անզեն լեգեոնականների վրա: Հայ զինվորներից մալաթիացի Աբրահամ Աբրահամյանը սպանվեց, իսկ պանտրմացի Հակոբը վիրավորվեց: Մոտակա պահակակետի հայ լեգեոնականներն անմիջապես օգնության հասան և կրակ բացեցին զինյալների ուղղությամբ: Խռովարարները փախուստի դիմեցին՝ իրենց հետ տանելով մոտ երկու տասնյակ սպանվածներին և վիրավորներին: Ֆրանսիացի սպաները հայ լեգեոնականներին հորդորեցին նոր քայլեր չձեռնարկել վրեժ լուծելու համար: Սակայն հայ մարտիկները, տված փայլուն հակահարվածով, արդեն բավարարվել էին և նոր գործողության չէին ձգտում[1]: Հաջորդ օրը արաբներն իրենց սպանվածների դիակները սայլերով բերեցին Բեյրութի կառավարչատուն և փորձեցին ներս մտնել, սակայն փոքրաթիվ հայ պահակները կարողացան այդ սադրիչներին ցրել[2]:

Ռ. Հերյանը դեպքից 20 օր անց Պ. Նուբարին ուղարկած նամակում հետևյալ կերպ է ներկայացնում իրողությունը. երբ առևտրականը ֆրանկը չի ընդունել, մոտեցել էր ոստիկանը, որին լեգեոնականը բացատրել էր խնդրի էությունը, սակայն արաբ ոստիկանը պատասխանել էր, որ դա վատ փող է և դրանով կարող ես հետևդ մաքրել: Զինվորը այդ վիրավորանքին պատասխանել էր բռունցքի հարվածով, որից հետո սկսվել էր հրաձգություն: Սպանվել էր մեկ լեգեոնական, վիրավորվել՝ երեքը: Արաբներից սպանվել են երեքը, վիրավորվել ութը[3]: Գեր-

[1] **Պօյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 170-173: Ամէմեան Խ., Էջեր կամաւորի օրագրէս, էջ 151-154:

[2] **Ամէմեան Խ.,** Էջեր կամաւորի օրագրէս, էջ 154:

[3] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 430, ց. 1, գ. 784, թ. 4:

մանական բանակի գեներալ, Պրուսիայի ռազմական նախարար (1916-1918 թթ.) Հերման ֆոն Ստեյնը վկայում է, որ դեռևս պատերազմի ժամանակ արաբները շատ դեպքերում մերժում էին ընդունել թղթադրամ[1]: Սակայն թղթադրամն ընդունել-չընդունելու խնդիրը միայն առիթ էր, իրականում դա կազմակերպված պրովակացիա էր ընդդեմ ֆրանսիական կայսրապաշտական նկրտումների, որի արդյունքում տուժեցին հայ զինվորներ: Այդ դեպքից հետո մոտ քսան օրով երրորդ գումարտակի հայ զինվորներին ուղարկեցին Լեռնային Լիբանան, որպեսզի կրքերը հանդարտվեն և նոր ընդհարումներ չլինեն[2]: Լեգեոնի Գ գումարտակը, մինչև Կիլիկիա տեղափոխվելը, հաստատվեց Բեյրութից մոտ 20 կմ հեռավորության վրա գտնվող Ջունիե (Ղազիր) ծովեզրյա ավանում՝ վարժարանի տարածքում[3]: Լեգեոնականները Ջունիեից այցելության գնացին Զմմառի հայ կաթոլիկական վանքը: Վանականները նվագախմբով և հյուրասիրությամբ դիմավորեցին հայ զինվորներին[4]: Լեգեոնական Արամ Հովսեփյանը նկատում է, որ դա միակ կարճ ժամանակաշրջանն էր, որ իրենք հանգստացել են: Ա գումարտակը այնտեղ մնացել էր մոտ երկու շաբաթ, ապա վերադարձել էր Բեյրութ, սակայն զորանոցից դուրս գալ հայ զինվորներին արգելվել էր մինչև Կիլիկիա մեկնելը[5]:

Լեգեոնը և հայ տարագիրները:

Հայկական զորամասը մեծ ոգևորություն էր առաջացնում ցեղասպանությունը վերապրած տարագիրների մոտ, բարձրացնում նրանց ոգին, հույս ներշնչում ապագայի նկատմամբ: Միաժամանակ լեգեոնականները բազմաթիվ հայ կանանց ու աղջիկների ազատեցին մահմեդականների ձեռքից, ուղեկցեցին հայ գաղթականների քարավանները դեպի Կիլիկիա: Լեգեոնական Կ. Թորոսյանը գրում է. «Մօտ 10 օր ճամբորդած էինք: Իրիկուն մը կանգ առինք բլուրի մը ստորոտը գիշերելու համար. զբաղած էինք կարգադրութիւններով, երբ տեսանք որ

[1] **Stein H.,** A War Minister and his work. Reminiscences of 1914-1918, London, 1980, p. 241:

[2] **Թաթարեան Մ.**, նշվ. աշխ., էջ 21:

[3] **Պոյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 170: **Ամէմեան Խ.**, Էջեր կամաւորի օրագրէն, էջ 156-158:

[4] **Ամէմեան Խ.**, Էջեր կամաւորի օրագրէն, էջ 159:

[5] **Արարա,** էջ 29:

բլուրին գագաթը մարդ մը կանգնած՝ մեզ կը դիտէր: Խմբապետ Արեւեան, որ մեր ամենաշատ սիրուած պաշտօնեան էր, հայերէն հրամաններ կ'արձակէր վրանիս պոռալով: Յանկարծ տեսանք որ բլուրի վրայի մարդը աղաղակ մը փրցնելով սկսաւ վազել դէպի մեզ: Մենք գործերնիս թողուցինք տեսնելու համար թէ ինչ կը պատահի: Երբ ան մօտեցաւ մեզի, կանգ առաւ, դիտեց մեզ ու հայերէն ըսաւ. «Ձեր դէմքէն կը հասկնամ որ դուք Հայ էք»: «Շիտակ ես, ըսինք, բոլորս ալ հայ ենք»: Այս խօսքին վրայ ան գրկեց զինուոր մը ու համբուրեց, յետոյ ուրիշ մը եւ ուրիշ մը: Մարդը ուրախութենէն բարձրաձայն կը խնդար ու միեւնոյն ատեն առատ արցունքի կաթիլներ կը գլորուէին անոր խորշոմած այտերէն վար: Մեր հարցումներուն պատասխանելով ըսաւ որ մօտակայ արաբ գիւղ մը կը բնակէր. այնտեղ ոչինչ ունէր բայց միայն մէկ արոտավար կորեկ եւ ըսաւ. «Գետինն անցնի իրենց կորեկը. ես այլեւս ձեզմէ չեմ բաժնուիր»: Ասոր նման 15-20 Հայեր, մեծաւ մասամբ կիներ ու անչափահասներ գտնուեցան ու հետեւեցան բանակին»[1]:

Այս բնոյթի բազմաթիվ վկայություններ կան բոլոր լեգեոնականների հուշերում: Վ. Փորթուգալյանը գրում է. «Կը պատահէինք երբեմն հայ տարագիր բեկորներու, բոլորը ցնցոտիներու մէջ, լուռ, արցունքը իրենց աչքերուն մէջ՝ թերահաւատութեամբ կը դիտէին ազատարար դաշնակից բանակին անցքը: Օր մը, կ'անցնէինք գիւղէ մը, ուր կանգ առինք հանգիստի համար: Էգէոնականները շարժեցան ըստ զինուորական հրամաններուն, որոնք կը տրուէին ֆրանսերէն: Մէկը կանչեցի եւ հրահանգ մը տուի, հայերէն, բարձրաձայն, ձի նստած ըլլալով: Իրարանցում մը տիրեց հանդիսատեսներուն մէջ: «Հա՛յ են... Հա՛յ են» կը բացականչէին, կարծես հրաշքի մը առջեւ: Ուրիշ օր մը, գնդապետ Ռոմիէոյի հրամանով, քանի մը ծիաւոր լէգէոնականներ հետս առնելով, գացինք Արաբի մը տունէն փրկել հայ աղջնակ մը, ինչ որ կատարուեցաւ, երկար բանակցութիւններէ ետքը, փափկանկատութեամբ, որովհետեւ Արաբը բարի մարդ մըն էր»[2]: Լեյտենանտ Հ. Արևյանի գլխավո-

[1] **Պօյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 162-163:

[2] Նույն տեղում, էջ 164-165:

րությամբ լեգեոնականները Աքրայում արաբներից ազատեցին դյորթյոլցի մի աղջկա, իսկ Սամարայում հետ գնեցին սսեցի մի աղջկա[1]:

Սերժանտ Վահան Արամյանն իր հուշերում գրում է, որ Հայֆայից հետո մտել են Կազա[2] քաղաքը, ուր լեգեոնականները հայ գաղթականներ են փնտրել: Տեղի կաթոլիկ եկեղեցում պատսպարված բազմաթիվ տարագիրների են հանդիպել: Այդտեղ տեղեկացել են, որ մոտակա տներից մեկում Մարիամ անունով մի հայ աղջիկ կար, որին արաբ տանտերը ցանկանում էր ամուսնացնել իր որդու հետ: Ֆրանսիացի գնդապետի և Վաղարշակ վարդապետ Արշակունու հետ լեգեոնականներն ազատում են աղջկան և ուղարկում Հայֆա, ապա՝ Պորտ Սայիդ[3]: Վ. Արամյանը Բաղչեում 8 տարեկան սսեցի մի աղջկա ազատեց թուրքերից և Այրանում ժամանակավոր խնամքի հանձնեց մի հունգարացի ծեր զույգի[4]:

Բեյրութում հայ զինվորները հանդիպեցին հազարավոր գաղթական հայերի, որոնք չափազանց թշվառ վիճակում էին: Տարագիրները, մոռանալով իրենց ծանր վիճակը, մեծ ցնծություն ապրեցին հաղթող բանակի շարքում տեսնելով հայ կամավորներին[5]: Բեյրութի հայերը մեծ ուրախությամբ դիմավորեցին հայ զինվորներին, ամեն կերպ փորձում էին պատվել, հյուրասիրել, օժանդակել նրանց[6]: Բեյրութում մեծ թվով դիմումներ եղան կամավորագրվելու Արևելյան լեգեոնին, և այնտեղ 800 հայ կամավորներից կազմավորվեց Դ գումարտակը[7]: Նրանց մեջ մեծ թիվ էին կազմում թուրքական բանակի գերված հայ զինվորները[8]: Սիրիայում, Լիբանանում, Միջագետքում գտնվող հայ գաղթականության մեջ մեծ էր Հայկական լեգեոնին միանալու ձգտումը: Ժ. Պիկոն Ռուբեն Հերյանին Բեյրութում տեղեկացրել էր, որ նախատես-

---

[1] **Աւետեան Մ.,** նշվ. աշխ., էջ 484-485:

[2] Հավանաբար խոսքը Սիդոնից հարավ գտնվող Ղազիե քաղաքի մասին է:

[3] **Վկայարան հայկական ցեղասպանութեան**, Պատրաստեց Յ. Իսկահատեան, հ. Ե, Պէյրութ, 2013, էջ 68:

[4] Նույն տեղում, էջ 69:

[5] **Թաթարեան Մ**., նշվ. աշխ., էջ 20-21:

[6] **Ամէմեան Խ.,** Էջեր կամաւորի օրագրէս, էջ 142:

[7] **Ամուրեան Ա.,** Հայ Դատը: Հայ ժողովրդի ազատագրական ճիգերը, Թեհրան, 1977, էջ 157:

[8] **Ամէմեան Խ.,** Էջեր կամաւորի օրագրէս, էջ 142:

վում էր հայկական զորքի թիվը հասցնել 20.000-ի: Դա բավական ոգևորեց հայերին: Հալեպից մոտ 800 երիտասարդներ Ռ. Հերյանի գլխավորությամբ ոտքով հասան Ադանա, որպեսզի զինվորագրվեն Հայկական լեգեոնին, սակայն ֆրանսիական հրամանատարությունը մերժեց: Գնդապետ Լ. Ռոմիոն Կիլիկիան գրավելուց հետո ամեն կերպ խոչընդոտում էր հայկական զորամասի մեծացմանը և լավ հարաբերություններ էր հաստատել թուրքերի հետ[1]:

Դամասկոսն ազատագրելուց անմիջապես հետո Արևելյան լեգեոնին միանալու համար կամավորագրվեցին 1.000 հայեր: Զինվորագրվել ցանկացողների թիվը շատ ավելի մեծ էր, սակայն ֆրանսիական հրամանատարությունը դադարեցրեց կամավորագրությունը[2]: Հոկտեմբերի 26-ին հայկական զորագունդը զորահանդես կատարեց Դամասկոսում, ապա Բաբ Շարգի Ս. Սարգիս հայկական եկեղեցում նրանց օրհնեց Կիլիկիայի Սահակ Բ կաթողիկոսը: Հոկտեմբերի 27-ին կամավորները հայ գաղթականների խանդավառ բացականչությունների ներքո Դամասկոսից մեկնեցին Բեյրութ, որպեսզի մասնակցեն հայրենիքի ազատագրմանը[3]: Դամասկոսից Բեյրութ 800 հայ կամավորներին առաջնորդել էր, թուրքական բանակի կապիտան Ս. Թորոսյանը: Բեյրութում նա հանդիպեց եղբայրներին՝ Հայկական լեգեոնին սերժանտ Բարսեղ և կապրալ Արամ Թորոսյաններին, որոնք Ամերիկայից էին կամավորագրվել: Ս. Թորոսյանը իր մարտական փորձը հայրենիքին ծառայեցրեց լեգեոնում: Նշանակում է ստացել Ալեքսանդրետում, ապա Փայասում, իսկ 1919-ի մարտի 28-ին Լ. Ռոմիոյի հրամանով մեկնել է Ադանա[4]: Կ. Պոլսից Կիլիկիա եկան 600 կամավորներ, սակայն նրանց ևս չընդգրկեցին լեգեոնի մեջ: Բազմաթիվ էին նաև այլ վայրերից զինվորագրվել ցանկացող հայերի մերժված դիմումները[5]:

Բեյրութից լեգեոնի մի մասը երկօրյա արշավի մեկնեց Լիբանանի Քասրվանի շրջան: Այնտեղ՝ Անթուրայի վանքում, լեգեոնականները հանդիպեցին 500 հայ որբերի: Թուրքերը փորձել էին հավատափոխ ու

[1] **Պօյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 221-223:
[2] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 422, ց. 1, գ. 680, թ. 4:
[3] Տե՛ս նույն տեղում, գ. 675, թ. 8-9:
[4] **Թորոսյան Ս.,** նշվ. աշխ., էջ 185-188:
[5] **Պօյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 226:

ազգափոխ անել նրանց՝ թուրքացնել: Հարյուրավոր երեխաներ սպանվել էին, իսկ մյուսները սովի ու մշտական վախի մեջ էին ապրել: Հայերեն խոսելը, իրենց հայկական անունները հիշելը արգելվել էր: Մանուկները խանդավառված ընդառաջ վազեցին հայ զինվորներին և հանդիպումը շատ հուզումնալից էր: Պարտիզակցի մի մանչուկ լեգեոնականներին ասաց. «Դուք գացէք, թուրքերը բոլորն ալ սատկեցուցէք, որ մենք ազատինք: Մենք պիտի մեծնանք, ու ձեր սա աղուորիկ լաթերը պիտի հագնինք, զինուոր ըլլանք. այն ատեն դուք հանգիստ կ'ընէք ու մենք կ'երթանք թշնամիին դէմ...»[1]: Այստեղ խոսում է ցեղասպանության ականատես, մանկությունից ու ծնողներից զրկված երեխայի վրեժի ցասումը:

1918 թ. դեկտեմբերի 4-ին Հալեպում հայ տարագիրները հավաք կազմակերպեցին և հեռագրով տեղի 50.000 գաղթականների անունից պահանջներն ուղարկեցին Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարին. «1. Անմիջական պարպումը Հայաստանի եւ Կիլիկիոյ՝ թուրք բռնակալներուն կողմէ եւ այդ հողամասերուն գրաւումը՝ համաձայնական եւ հայկական ուժերուն միջոցաւ: 2. Յայտարարութիւն հայոց անկախութեան եւ անմիջական հաստատութիւնը հայկական առժամեայ կառավարութեան մը եւ կարճ միջոցի մը մէջ եւս բռնագաղթի ենթարկուած մերայնոց իրենց բնակավայրերուն մէջ զետեղումը: 3. Համաձայնական պետութեանց կողմէ պաշտպանութիւն այն հայերուն, որոնք ներկայիս կը գտնուին դեռ թուրք լուծին տակ: 4. Վերադարձուիլը եւ հայ կառավարութեան կողմէ իւրացուիլը ամէն շարժուն եւ անշարժ ինչքերուն, որոնք կը պատկանին մեռցուած հայերուն եւ կամ որոնք մեռած են բռնագաղթի ընթացքին ու օրինաւոր ժառանգորդներ ձգած չեն: 5. Վերաշինութիւն եւ վնասուց հատուցում բոլոր վնասուց եւ համայնքային եւ անհատական ամէն կորուստից: 6. Ազատագրումը բոլոր կանանց եւ բոլոր առեւանգուած ու բռնաբարուած մանուկներուն, բռնի ամուսնացեալներուն կամ ծախուածներուն, առաջ թէ ետք բռնագաղթէն, ինչ պատրուակով ալ որ եղած ըլլան: 7. Ամենա-

[1] **Պարթեւեան Ս.,** Արարա, էջ 106:

խիստ կերպով պատժուիլը ջարդարարներուն եւ հայ դժբախտութեանց պատճառ եղողներուն, որոնք ալ եղած ըլլան»[1]:

Կիլիկիան ազատագրելուց հետո այնտեղի երկաթուղային կայարանները գտնվում էին հայ լեգեոնականների վերահսկողության տակ: Նրանք կարողացան բազմաթիվ հայ կանանց ազատել թուրքերի ձեռքից Հալեպից Կ. Պոլիս գնացող գնացքների միջից[2]: Ենիճե կայարանի հեռագրատան տնօրենը թուրք էր, որի տանն էր գտնվում 8-10 տարեկան մի գեղեցիկ հայ աղջնակ: Լեգեո-նականներից Երվանդ Թյուրպյանը և Ենովք Աշտարակենցը հաճախ էին հյուրընկալվում այդ թուրքի տանը: Շուտով նրանք տեղեկացան, որ աղջիկը հայ էր, և այդ մասին հարցրին թուրքին: Վերջինս ոչ միայն պատրաստակամություն հայտնեց աղջկան վերադարձնել, այլ նաև՝ նրա հետ դրեց 3 ոսկի, 6 ձեռք հագուստ և այլ պարագաներ: Հայ զինվորները աղջկան ուղարկեցին Ադանայի որբանոց[3]:

Ինչպես տեսնում ենք, լեգեոնը զգալի ներդրում ունեցավ թուրքերի ձեռքում հայտնված հայ կանանց ու աղջիկների ազատման հարցում: Միաժամանակ հայկական կանոնավոր զորամասի ներկայությունը հաղթող դաշնակիցների շարքում մեծ ոգևորություն էր առաջացնում Մեծ եղեռը վերապրածների մեջ: Գրեթե բոլոր երիտասարդները ցանկանում էին միանալ լեգեոնին և ազատագրել Կիլիկիան և Հայաստանը: Սակայն ֆրանսիական ռազմական իշխանությունները հետզհետե փոխում են իրենց քաղաքականությունը Հայկական լեգեոնի նկատմամբ: Կիլիկիային ինքնավարություն տալու մտադրություն չունենալով՝ վտանգավոր էին համարում հայկական զորամասի մեծացումը: Հետևաբար՝ հրաժարվեցին լեգեոնի մեջ ընդգրկել Բաղդադի ավելի քան 800, Պոլսի 600, Դամասկոսի 1.000, Հալեպի 800 հայ կամավորներին: Նրանց զինվորագրելու դեպքում լեգեոնի գումարտակների թիվը կհասներ 8-ի: Միայն Բեյրութում կամավորագրված 800 հայերին վերցրին ծառայության, որոնցից կազմավորվեց լեգեոնի 4-րդ գումարտակը:

---

[1] **Պօյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 207:

[2] Նույն տեղում, էջ 202:

[3] Նույն տեղում, էջ 201:

Մուդրոսի զինադադարը և Կիլիկիան:

1918 թ. հոկտեմբերին արդեն ակնհայտ էր Թուրքիայի պարտությունը պատերազմում, և հայ գործիչները նման պայմաններում անհրաժեշտ էին համարում քայլեր ձեռնարկել պաշտպանելու հայության շահերը հաշտության բանակցություններում: Հոկտեմբերի 8-ին Պ. Նուբարը դաշնակիցներին հուշագիր ներկայացրեց, ուր պահանջում էր, որպեսզի զինադադարի պայմանների մեջ մտցվեն հետևյալ հոդվածները. 1. Տեղահանված և գաղթական հայերի վերադարձը հայրենիք դաշնակից զորքերի պաշտպանության տակ և հայկական վեց նահանգների ու Կիլիկիայի բոլոր ռազմական կետերի գրավում: 2. Արգելել Օսմանյան կառավարությանը կազմակերպել թուրքերի ներգաղթ այդ նահանգների մեջ: 3. Դաշնակից բանակների կողմից անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել սովահար հայ բնակչության գոյությունը ապահովելու և երկիրը վարչականորեն կազմակերպելու համար[1]: Պ. Նուբարը բարձրաստիճան պետական գործիչների հետ հանդիպումներում բարձրացնում էր հայերին պատերազմող կողմ ճանաչելու խնդիրը, իսկ հոկտեմբերի 18-ին այդ հարցով պաշտոնապես դիմեց Անտանտի երկրներին[2]: Դա միջազգային իրավունքի տեսանկյունից կատարված ճիշտ և խորապես մտածված քայլ էր: Նա լավ էր պատկերացնում միջազգային այն չափանիշները, ըստ որի՝ միջազգային իրավունքի սուբյեկտ են ճանաչվում ոչ միայն ինքնիշխան (սուվերեն) պետությունները, այլև՝ ազգային-ազատագրական շարժումները՝ հանձին իրենց ղեկավար մարմինների: Այդպիսին կարող էր ճանաչվել Ազգային պատվիրակությունը կամ փաստացի գոյություն ունեցող Հայաստանի Հանրապետությունը, որը դեռևս միջազգայնորեն ճանաչված պետություն չէր: Այսպիսով, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ հանդես գալու համար անհրաժեշտ էր, որ հայերը ճանաչվեին պատերազմող կողմ: Նաև այդ հեռանկարի համար էր, որ Պ. Նուբարն աջակցեց կամավորական շարժմանը և Հայկական լեգեոնի կազմավորմանը:

Հոկտեմբերի 25-ին Ս. Պիշոնին ուղարկած ծանուցագրում Ժ. Գուն տեղեկացնում էր, որ Հայ ազգային պատվիրակության նախագահը

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 430, ց. 1, գ. 26, թ. 15:

[2] **Ամիմեան Լ.,** Եգիպտահայ տարեցոյց 1925, Աղեքսանդրիա, 1924, էջ 87:

պահանջել էր հայերին ճանաչել պատերազմող կողմ: Նշում էր, որ նույնանման դիմումներ ուղարկվել են նաև Մեծ Բրիտանիայի և Իտալիայի կառավարություններին: Ժ. Գուն Արևելյան լեգեոնը և Կովկասից Պարսկաստան տեղափոխված և բրիտանացիների հետ համագործակցող հայկական ուժերին համարում էր պատերազմող կողմ: Նա առաջարկում էր Պ. Նուբարին պատասխանել, որ Ֆրանսիան պատրաստ էր հայերին ճանաչել պատերազմող կողմ, եթե դա անեն նաև մյուս դաշնակիցները: Միաժամանակ, առաջարկում էր Սիրիայում ֆրանսիական զորքերի հրամանատարին հրահանգել, որպեսզի Արևելյան լեգեոնին տրամադրեն հայկական դրոշներ, որը ցույց կտար հայերի ինքնավար գոյության իրավունքի ճանաչումը[1]:

Ինչպես տեսնում ենք, Պ. Նուբարի ջանքերը որոշակի արդյունք էին տալիս: Ֆրանսիացի բարձրաստիճան գործիչներն արդեն քննարկում էին հայերին պատերազմող կողմ ճանաչելու հարցը և ֆրանսիական դրոշի ներքո մարտնչող Արևելյան լեգեոնը դիտում էին որպես հայկական զորախումբ, որի խնդիրն էր հայկական տարածքների ազատագրումը: Ֆրանս-բրիտանական գաղտնի համաձայնագրերով (Լոնդոնի, Սայքս-Պիկոյի, Սեն Ժան Մորիենի) Կիլիկիան և Արևմտյան Հայաստանի հարավային ու արևմտյան նահանգները պատերազմից հետո մտնելու էին ֆրանսիական ազդեցության գոտու մեջ: Հետևաբար, Ֆրանսիայի արտաքին գերատեսչության վերաբերմունքը կարող էր որոշակիորեն պայմանավորել Հայաստանի ապագան: Ֆրանսիայի ԱԳ նախարար Ս. Պիշոնը հայտարարեց, որ «Հայկական լեգեոնն ու նրա քաջագործությունները ցայտուն կերպով հաստատում են, որ «Ֆրանսիան հայերը կսեպե թուրք-գերմանական զինվորապաշտության լուծը թոթափելու համար պայքարող դաշնակիցներ»[2]: Սակայն թուրքերի հետ Մուդրոսում բրիտանական ռազմական իշխանությունների կնքած զինադադարի պայմանագիրը, որը ստորագրվել էր առանց դաշնակիցների շահերը հաշվի առնելու, հիմնականում հակասում էր հայության ձգտումներին: Պատերազմի ավարտական փուլում արդեն իսկ սրվել էին ֆրանս-բրիտանական հակասությունները Մեր-

[1] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, h. II, էջ 399:
[2] **Արզումանյան Մ.,** Արհավիրքից վերածունդ, Եր., 1973, էջ 409:

ձավոր Արևելքում: Չնայած նախկինում ստորագրած գաղտնի համաձայնագրերին ու պայմանավորվածություններին, բրիտանացիները փորձում էին Ֆրանսիային թույլ չտալ ամրապնդվելու Մերձավոր Արևելքում, մանավանդ՝ ֆրանսիական ուժեր այնտեղ գրեթե չկային, եթե չհաշվենք Արևելյան լեգեոնը:

1918 թ. հոկտեմբերի 15-ին թուրքական կողմը բրիտանացիներին խնդրեց առաջարկել զինադադարի պայմաններ: Հոկտեմբերի 27-ին սկսվեցին ռազմական գործողությունները դադարեցնելու շուրջ բանակցություններ Լեմնոս կղզու Մուդրոսի նավահանգստում՝ բրիտանական «Ագամեմնոն» հածանավի վրա: Բրիտանական կողմից այն վարում էր ծովակալ Արթուր Քալթորփը, թուրքականից՝ ծովային նախարար Հուսեին Ռաուֆ բեյը: Ֆրանսիական փոխծովակալ Շառլ Օմետը ցանկություն հայտնեց մասնակցելու բանակցություններին, սակայն և՛ բրիտանական, և՛ թուրքական կողմերը մերժեցին[1]: 1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուդրոսում ստորագրված զինադադարով թուրքերն անձնատվության (կապիտուլիացիայի) ենթարկվեցին: Մի քանի հոդվածներ անմիջականորեն առնչվում էին հայկական շահերի հետ.

«Հոդված 4. Բոլոր դաշնակցային ռազմագերիները, բոլոր հայ ռազմագերիները և ներկալվածները պետք է ժողովվեն Կ. Պոլսում, որպեսզի առանց որևէ պայմանների հանձնվեն դաշնակիցներին:

Հոդված 10. Տավրոսի թունելների համակարգի գրավում դաշնակիցների կողմից:

Հոդված 11. Թուրքական զորքերը անմիջապես հետ են քաշվելու հյուսիսարևմտյան Պարսկաստանից մինչև նախապատերազմյան սահմանը: Թուրքական զորքերն արդեն ստացել են Անդրկովկասի մի մասը էվակուացնելու հրաման, ընդ որում՝ մնացած զորքերը կհեռացվեն, եթե տեղերում իրադրությունն ուսումնասիրելուց հետո դաշնակիցները ներկայացնեն այդպիսի պահանջ:

Հոդված 16. Հեջազում, Ասիրում, Եմենում, Սիրիայում և Միջագետքում գտնվող բոլոր թուրքական կայազորներ պետք է հանձնվեն մոտակա դաշնակցային հրամանատարությանը, բոլոր զորքերը դուրս

[1] **Fromkin D.,** A Peace to End All Peace: The Fall of the Ottoman Empire and the Creation of the Modern Middle East, New York, 2009, pp. 360–373:

են բերվելու Կիլիկիայից, բացառությամբ նրանցից, որոնք անհրաժեշտ են կարգը պահպանելու համար, ինչը կարող էր որոշվել համաձայնագրի 5-րդ հոդվածով:

Հոդված 24. Հայկական վեց վիլայեթներում անկարգություններ ծագելու դեպքում, դաշնակիցները իրենց վերապահում են նրա մի մասը գրավելու իրավունք»[1]:

Փաստորեն, Մուդրոսի զինադադարով Հայաստանի մեծ մասը թողնվում էր թուրքական զորքերի վերահսկողության տակ, որը հետագայում հանգեցրեց Հայկական հարցի ձախողմանը: Զինադադարի պայմաններից դրական էր Կիլիկիայից թուրքական զորքերի հեռացման պահանջը, չնայած այստեղից նույնպես ամբողջապես չէին հեռանալու, ինչպես նաև Տավրոսի լեռնահամակարգի թունելների գրավումը: Ինչպես տեսնում ենք, ոչ միայն Պ. Նուբարի պահանջները չէին ներառված և հայկական վեց վիլայեթների հսկողությունը թողնված էր թուրքերին, այլ նույնիսկ Անդրկովկասի մի մասում կարգուկանոնի պահպանությունը իրականացնելու պատրվակով թուրքական զորքերը չէին հեռանալու մինչև «տեղերում իրադրությունն ուսումնասիրելուց հետո դաշնակիցները ներկայացնեն այդպիսի պահանջ»:

Այդ պայմանագրից երևացին հայերին խաբելու «դաշնակիցների» քաղաքականության առաջին քայլերը, որն ավարտվեց Լոզանով: Սակայն այս շրջանում հայ քաղաքական գործիչները դեռևս չափազանց ոգևորված էին, և նրանց թվում էր, որ մի քանի դար տևած անկախության կորստից հետո արդեն մոտ էր ազատ, անկախ, միացյալ հայրենիք ունենալու հնարավորությունը: Ցավոք, այդ գեղեցիկ հեռանկարը հետագա ամիսներին մոտենալու փոխարեն հետզհետե հեռացավ:

Հոկտեմբերի 31-ին Բեռլինում Հ. Օհանջանյանի ղեկավարած ՀՀ պատվիրակությունը խորհրդակցություն գումարեց, որին ներկա էին Մ. Աճեմյանը, դոկտոր Գրինֆելդը, Ավետիսյանը, Ուկրաինայում ՀՀ ներկայացուցիչ Գ. Զամոյանը: Քննարկելով միջազգային իրավիճակը, նրանք եկան այն եզրահանգմանը, որ անհրաժեշտ էր միավորել Ռու-

[1] **Frederick Maurice,** The Armistices of 1918, Oxford University Press, 1943, pp. 85-87. **Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում**, խմբագիր Ջ. Կիրակոսյան, Եր., 1972, էջ 537-539:

սահայաստանը և Թուրքահայաստանը միասնական անկախ պետության մեջ, որը հայտարարելու էր հավերժական չեզոքություն: Եթե միավորումը անհնար լիներ, ապա պետք է ստեղծվեր անկախ Հայաստան՝ արևմտահայկական նահանգների ու Կիլիկիայի հենքի վրա՝ ծովային ելքերով Միջերկրական և Սև ծով՝ Տրապիզոնով[1]: Ֆրանսիական պետական գործիչ Դենի Կոշենը, «Ֆիգարո» պարբերականում անդրադառնալով Հայաստանի ապագային, արդարացի էր համարում Կովկասից մինչև Կիլիկիա ձգվող հայկական անկախ պետության կազմավորումը[2]: Պ. Նուբարը նոյեմբերի 7-ին և 12-ին դաշնակից տերություններին բողոքի նոտաներ հղեց Մուդրոսի զինադադարի համաձայնագրով հայկական տարածքներում կարգի պահպանությունը թուրքերին թողնելու առթիվ, նշելով, որ այդպիսով հայ գաղթականները չեն կարողանա վերադառնալ իրենց օջախները, իսկ թուրքերը կվայելեն երիտթուրքերի «արիւնռուշտ քաղաքականութեան պտուղը»[3]: Նա պահանջեց հայկական տարածքներն անմիջապես գրավել դաշնակից զորքերի և Արևելյան լեգեոնի ուժերով:

Պետք է նշել, որ Մուդրոսի զինադադարի ոչ հայանպաստ հոդվածները քննադատեց նաև Ֆրանսիայի Ազգային ժողովի նախագահ Պոլ Դեշանելը[4]: Սակայն այդ բողոքները հիմնականում անպատասխան մնացին «դաշնակիցների» կողմից, որոնք արդեն մոռացել էին պատերազմի տարիներին ոչ միայն հայերին շռայլած խոստումների, այլև միմյանց հետ կնքած համաձայնագրերի մասին և մրցապայքար էին սկսել աշխարհի նոր վերաբաժանման, ավելի ընդարձակ գաղութներ ձեռք բերելու համար և ժամանակ չունեին մտածելու այնպիսի փոքր դաշնակցի մասին, ինչպիսին էր Հայաստանը:

1918 թ. նոյեմբերի 19-ին լորդ Ջեյմս Բրայսը և Քենտրբերիի արքեպիսկոպոսը խորհրդարանում բրիտանական կառավարությունից պահանջեցին դաշնակցային զորքերով Կիլիկիան գրավել և հայերին չմոռանալ: Գլխավոր կնքապահ Կրեֆորդի դուքս Էդուարդ Լինսին պատասխանեց, որ դաշնակիցները քննարկում են Կիլիկիան գրավելու

[1] **Ավետիսյան Հ.,** Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, էջ 328:

[2] Տե՛ս **«Վերածնունդ»,** Փարիզ, 1918, թիւ 23, էջ 447:

[3] **Աճէմեան Լ.,** Եգիպտահայ տարեցոյց 1926, Բ տարի, Աղեքսանդրիա, 1925, էջ 101:

[4] Տե՛ս «**Վերածնունդ»,** Փարիզ, 1918, թիւ 23, էջ 448:

հարցը, իսկ «կառավարությունը լրիվ գիտակցում է իր պարտականությունները այդ ժողովրդի ազգային ու մարդկային շահերի նկատմամբ, և վճռել է ոչ մի ջանք չխնայել հայ ազգի պահանջները և իրավունքները պաշտպանելու համար»[1]: Նոյեմբերի վերջից մինչև դեկտեմբերի երկրորդ կեսը Հայկական լեգեոնի ուժերով Կիլիկիան ազատագրվեց թուրքերից: Զինադադարի 10-րդ և 16-րդ հոդվածները հնարավորություն տվեցին արագորեն և առանց արյուն թափելու ազատագրել հայկական այդ երկրամասը, ուր վերադարձան և նոր կյանք փորձեցին սկսել շուրջ 150-200.000 հայեր: Դա ապացուցում է այն ճշմարտությունը, որ այդ ժամանակաշրջանում, երբ թուրքը ջախջախված և հուսահատ էր, ցանկության դեպքում դաշնակիցները կարող էին թուրքերին ստիպել հեռանալու հայկական բոլոր տարածքներից: Սակայն դա ժամանակին չարվեց, որն էլ հետագայում հանգեցրեց Հայկական հարցի տապալմանը:

1918 թ. նոյեմբերին Պ. Նուբարը ֆրանսիական մամուլին տված հարցազրույցում ներկայացրեց այն սկզբունքները, որոնց հիման վրա պետք է լուծվեր Հայկական հարցը՝

1. Այլևս ոչ մի կապ թուրքական պետության հետ,

2. Հայկական պետությունն ունենալու էր հանրապետական վարչաձև և դրվելու էր ազատարար ազգերի պաշտպանության տակ, որոնցից մեկը ստանձնելու էր Հայաստանի խնամակալությունը մինչև այն կազմակերպվի և կարողանա ինքնուրույն գոյատևել,

3. Հայաստանի մեջ են մտնելու վեց վիլայեթները և Կիլիկիան: Պ. Նուբարը նշեց «ռուսական» Հայաստանի նկատմամբ որևէ պահանջ չունենալու մասին, սակայն հույս հայտնեց, որ նոր սկզբունքներ որդեգրած Ռուսաստանը, որը հայտարարել էր լեհական ու ֆինլանդական խնդիրները լուծելու մասին, այս հարցում ևս արդարացի մոտեցում կցուցաբերի[2]: Այդ սկզբունքները Պ. Նուբարը զարգացրեց 1918 թ. դեկտեմբերին հրապարակած «Հուշագիր Հայկական հարցի մասին» գրքույկում[3]: Նա անհրաժեշտ էր համարում վեց վիլայեթներից, Կիլի-

[1] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 200, ց. 1, գ. 131, թ. 35:

[2] **«Վերածնունդ»,** 1918, թիւ 21-22: **«Ճակատամարտ»,** 1919, թիւ 43:

[3] **Memorandum on The Armenian Question**. Presented by the Armenian National Delegation. Paris. 1918:

կիայից ու Մարաշի սանջակից կազմել հայկական պետություն, որը մինչև վերջնական կազմակերպվելը կդրվեր որևէ պետության խնամակալության տակ: Պ. Նուբարը նշում էր, որ այդ պետությանը կմիանար նաև Արարատյան Հանրապետությունը, և Հայաստանը պատնեշ կհանդիսանա պանթուրքիզմի ճանապարհին:

1918 թ. նոյեմբերի 30-ին Պ. Նուբարն ի լուր աշխարհի հայտարարեց «Ամբողջական Հայաստանի» անկախությունը[1]: Հայտարարության մեջ նշված էր, որ հայ ազգի միակամ փափագի համաձայն Ազգային պատվիրակությունը հայտարարում է Ամբողջական Հայաստանի (ներառյալ Կիլիկիայի–Ս.Պ.) անկախությունը: Իսկ "La Voix de l' Armenie" թերթում տպագրած հոդվածում Պ. Նուբարը շեշտեց «Թուրքա» և «Ռուսա» Հայաստանների միավորմամբ Միացյալ Հայաստանի ստեղծման կենսական անհրաժեշտությունը: «Հայաստանը պետք է ըլլայ մէկ, ամբողջ, ազատ, անկախ,- գրում էր նա,- այս է ահա Հայ արիւնոտ դատի միակ արդար լուծման միակ հաստատուն գրավականը»[2]: Նա շատ դժգոհ էր Անտանտի երկրների գործողություններից, որոնք արդեն հակասում էին նախկինում տրված խոստումներին[3]: Այսպիսով՝ Ազգային պատվիրակության նախագահը հետզհետե դնում էր միացյալ հայկական պետականության ստեղծման գործընթացի սկիզբը, սակայն հետագա իրադարձությունները թույլ չտվեցին իրականացնել հայ ժողովրդի դարավոր իղձը և կազմավորել ընդարձակ ու կենսունակ անկախ պետություն: Հայերին անհանգստացնում էր այն հանգամանքը, որ Ֆրանսիան ցանկանում էր Կիլիկիան միացնել Սիրիային: Փարիզաբնակ պատմաբան, բանասեր Կարապետ Բասմաջյանը Ֆրանսիայի վարչապետ Ժ. Կլեմանսոյին հուշագիր ներկայացրեց, ուր պատմական, ազգագրական ու լեզվանբանական փաստերով ցույց էր տալիս, որ Կիլիկիան չի կարող լինել Սիրիայի մաս և պետք է միավորվի Հայաստանի հետ, դառնա վերջինիս ելքը Միջերկրական[4]:

---

[1] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 282, ց. 1, գ. 46, թ. 1, ֆ. 200, ց. 1, գ. 131, թ. 58:

[2] Տե՛ս **«Ճակատամարտ»,** Կ. Պոլիս, 1919, թիւ 40:

[3] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 282, ց. 1, գ. 46, թ. 1:

[4] **Բասմաջեան Կ.,** Ինչու համար Կիլիկիան կ'ուզենք, «Վերածնունդ», Փարիզ, 1919, թիւ 6-7, էջ 91-92:

1918 թ. դեկտեմբերի 10-ին ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Հենրի Լոջը ԱՄՆ կոնգրեսի քննարկմանը ներկայացրեց բանաձև Անկախ Հայաստանի ստեղծման մասին: Հայաստանի կազմի մեջ էին մտնելու Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի բոլոր հայկական տարածքները՝ Կիլիկիայով հանդերձ: Նորանկախ պետության հովանավորությունը սենատորն առաջարկում էր, որ ստանձնի ԱՄՆ-ը[1]: ԱՄՆ գործիչներից շատերն էին հետաքրքրված վերցնելու մեծ Հայաստանի հովանավորությունը: Այսպիսով, պատերազմի ավարտից հետո բավական իրատեսական էր թվում հայկական բոլոր տարածքների միավորմամբ պետականության ստեղծումը:

Հայ լեգեոնականների մուտքը Կիլիկիա:

1918 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին թուրքական զորքերը հեռացան Կիլիկիայից, և ազատագրված երկրամասը զբաղեցրեց Հայկական լեգեոնը: Հայկական զորամասի պաշտպանության ներքո Կիլիկիա վերադարձան ցեղասպանությունից մազապուրծ տասնյակ հազարավոր հայ տարագիրներ:

Հոկտեմբերի 24-ին Ժ. Կլեմանսոն պահանջել էր բրիտանական իշխանություններից, որպեսզի Ալեքսանդրետի գրավումը կատարվի միայն ֆրանսիական և հայկական ստորաբաժանումների միջոցով, քանի որ այդ նավահանգիստն առանձնահատուկ կարևորություն ուներ Ֆրանսիայի համար[2]: Նոյեմբերի 10-ին ֆրանսիական նավատորմը գրավեց Ալեքսանդրետը[3]: Նոյեմբերի 5-ին Ժ. Կլեմանսոն գաղտնի հրահանգ ուղարկեց Ֆիլիպ դը Պիեպապին, որպեսզի Տավրոսը ռազմակալվի Արևելյան լեգեոնի ուժերով, և առաջարկեց այդ ուղղությամբ քայլեր կատարել գեներալ Է. Ալենբիի համաձայնությունը ստանալու համար: Վարչապետը չէր ցանկանում կառավարական մակարդակով միջամտել, քանի որ ռազմական գործողությունների պատասխանատվությունն Է. Ալենբիի վրա էր դրված և դա կարող էր նրա արժանապատվությունը վիրավորել և հակառակ ազդեցությունն ունենալ[4]: Ֆրանսիական գործիչների ջանքերն արդյունքի հասան: Նոյեմբերի 15-

[1] **Գալոյան Գ.**, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Եր., 1999, էջ 58:

[2] **Մեծ տերությունները**, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 402:

[3] **Քիւրքճեան Վ.,** Հայկական Կիլիկիա, Նիւ Եորք, 1919, էջ 5:

[4] **Մեծ տերությունները,** Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 422-423:

ին գեներալ Ժ. Համելինը ռազմական նախարարությանը տեղեկացրեց, որ պատրաստվում է Հայկական լեգեոնը տեղափոխել Կիլիկիա՝ Ալեքսանդրետի վրայով Թոփրակ Կալե, Ադանա և Տավրոսի լեռներ[1]: Այսպիսով՝ ֆրանսիացիները հասել էին իրենց նպատակին՝ համոզել էին բրիտանացիներին, որպեսզի Կիլիկիայի գրավումը կատարվի ֆրանսիական դրոշի ներքո հանդես եկող զորամասերի միջոցով:

Ֆրանսիացիները միշտ կասկածանքով էին վերաբերում բրիտանացիների տարածաշրջանային նկրտումներին, ինչպես նաև հայերի ազգային զգացումներին: Լեգեոնական Արամ Հովսեփյանը գրում է. «Ամէն անգամ որ մեզմէ ոմանք անգլիերէն կը խօսէին եւ կամ Անգլիացիներու հետ կը յարաբերէին, անոնք իրենց հոգիին մաղձը անմիջապէս կը թափէին մեր վրայ: Դաշնակից էին, սակայն մէկզմէկու թշնամի բարեկամներ ալ էին»[2]: Նաև նկարագրում է, որ Ալեքսանդրետում ափ դուրս գալուց հետո ծնկի էր եկել, համբուրել հայկական հողը: Դա դուր չի եկել ֆրանսիացի հրամանատարներին, որի համար 15 օր բանտարկել են կամավորին[3]: Հետագայում, 1919 թ. հուլիսի 18-ին, Փարիզի խորհրդաժողովի նիստում Ժ. Կլեմանսոն, խեղաթյուրելով փաստերը, մեղադրելու էր Է. Ալենբիին, որ նա ֆրանսիական զորքերին ուղարկել է Կիլիկիա՝ իմանալով, որ այդ տարածքը հանձնվելու է ԱՄՆ մանդատին, իսկ Սիրիայում թույլ չի տալիս կենտրոնացնել ֆրանսիական ուժեր[4]: Այսպիսով՝ ֆրանսիական կողմը ցանկանում էր հնարավորինս շուտ և առանց բրիտանական մասնակցության գրավել Կիլիկիան, որը և հիմնականում իրականացվեց Հայկական լեգեոնի օգնությամբ: Սակայն Մերձավոր Արևելքում ֆրանսիական զորքերի փոքր քանակը հնարավորություն չէր տալիս Սիրիայում ունենալ բավարար ուժեր և նույնիսկ ամբողջ Կիլիկիան հայ-ֆրանսիական զորքերի հսկողության տակ պահել: Դրանից առաջին հերթին օգտվում էին բրիտանացիները՝ ձգտելով հնարավորինս թուլացնել Ֆրանսիայի դիրքերը տարածաշրջանում, հարված հասցնել այդ տերության հեղինակությանը:

---

[1] **Պօյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 178:

[2] **Արարա**, էջ 30:

[3] Նույն տեղում:

[4] **Papers Relating to the Foreign Relations of the United States**. The Paris Peace Conference 1919, Volume VII, United States Government Printing Office, Washington, 1946, p. 196;

Նոյեմբերի 28-ին դաշնակցային ուժերի գլխավոր շտաբը թուրքական կողմից պահանջեց իրենց հանձնել Կիլիկիայի (Ադանայի նահանգի) այն բոլոր տարածքները, որոնք իրենց համար ռազմական արժեք ունեին և իրենց անվտանգությունն էին երաշխավորում: Դաշնակիցները պետք է գրավեին Ադանայի նահանգն ըստ հետևյալ ժամանակացույցի՝ 1. դեկտեմբերի 13-ին Ջիհան գետից արևելք գտնվող տարածքները, 2. դեկտեմբերի 17-ին Սիհուն գետից արևելք և Ադանա-Տարսոն գծից հարավ ընկած հողամասերը, 3. դեկտեմբերի 21-ին արևմուտքում մինչև Պոզանտ ընկած տարածքները: Դեկտեմբերի 21-ից հետո վերոնշյալ սահմաններից ներս գտնվող բոլոր թուրք զինվորները և սպաները գերվելու էին, իսկ զենքը և զինամթերքը բռնագրավվելու էր[1]: Ադանայի նահանգի ազատագրումն ամբողջությամբ իրականացվեց միայն Հայկական լեգեոնի ուժերով: Հայ զինվորն էր, որ ազատագրում էր հայրենի հողը: Ալեքսանդրետի շրջանը ևս ազատագրվեց հիմնականում Հայկական լեգեոնի կողմից, իսկ Հալեպի նահանգի մյուս հայկական տարածքները՝ բրիտանացիների:

1918թ. նոյեմբերի 21-ին Հայկական լեգեոնի Ա գումարտակի երկու վաշտերը «Սեն Պրիեռ» նավով Բեյրութից ուղարկվեցին Ալեքսանդրետ: Հաջորդ օրը կեսօրին նրանք մտան քաղաք: Ա գումարտակի մնացած լեգեոնականները «Լավուազիե» ռազմանավով Ալեքսանդրետ ժամանեցին հաջորդ շաբաթ: Հայ զինվորների մուտքը քաղաք մեծ տպավորություն թողեց թուրքերի վրա: Քաղաքի բոլոր ռազմավարական կետերի պահպանությունը, որը գտնվում էր նոյեմբերի 14-ին Ալեքսանդրետ ժամանած ալժիրյան զորախմբի հսկողության տակ, հանձնվեց Հայկական լեգեոնին: Քաղաքում կարգը հաստատելուց հետո լեգեոնի Ա գումարտակը հրաման ստացավ շարժվելու հյուսիս՝ դեպի Դյորթ Յոլ (Չոք Մարզվան): Դեկտեմբերի 10-ին լեգեոնականները մեկնեցին Պայաս, իսկ հաջորդ երեկո հասան Դյորթ Յոլ: Գյուղաքաղաքում մնացել էին միայն թուրք գավառապետը և ոստիկանապետը՝ մի քանի ոստիկաններով: Նրանք ավանը Հայկական լեգեոնին հանձնե-

[1] **Bremond E.,** La Cilicie en 1919-1920 (Extrait de la Revues des Etudes armeniennes-1921), Paris, 1921, p. 6. **Պրեմօն Է.,** Կիլիկիա 1919-1921 Շրջանին, թրգ.՝ Տիգրան Պօյաճեան, Պոստոն, 1921, էջ 10-11:

ցին և գիշերով հեռացան Ադանա: Հայ զինվորների ներկայությունից քաջալերված՝ հայ գաղթականները սկսեցին վերադառնալ Դյորթ Յոլ, որը կարճ ժամանակում կրկին վերածվեց հայկական կենտրոնի: Հայկական լեգեոնի Ա գումարտակը մի քանի օրից հրաման ստացավ զբաղեցնելու Իսլահիե կայարանը[1]:

Լեգեոնականների հետ միասին Դյորթ Յոլ էին մտել նաև հայրենիք վերադարձող բազմաթիվ կիլիկիահայեր: Նրանք զարմացել էին քաղաքի ամայությունից, քանի որ հայեր արդեն չկային, իսկ թուրքերը հեռացել էին: Քաղաքում մնացած սակավաթիվ թուրքերից էր մուֆթին: Նա իր տանը գիշերելու հրավիրեց մի խումբ նշանավոր ադանացի հայերի, հյուրասիրեց, իսկ առավոտյան խնդրեց գրություն տալ, որ հյուրասիրել էր հայերին և նրանք շնորհակալ են: Ականատես Տիրան Պապիկյանը գրում է. «Միւֆթին այս գրութիւնը համբուրեց՝ իբրեւ Սուրբ եւ նուիրական բան մը, գլուխը տարաւ եւ ծալլելով գրպանը դրաւ, աւելցնելով, թէ շնորհիւ այս գրութեան ինք հանգիստ պիտի կրնայ քնանալ, զայն ցուցնելով ի հարկին հայերուն: Միւֆթին վերջին ծայր վախցած, տպաւորուած էր պատահած եղելութիւններէն, մանաւանդ հայ լէգէոնականներու ներկայութենէն»[2]: Դեկտեմբերի 7-ին Հայկական լեգեոնի զինվորների վերահսկողության տակ անցավ Անտիոքը[3], դեկտեմբերի 18-ին՝ Թոփրակ Կալեն[4]: Դեկտեմբերի 16-ին հայկական Բ և Գ գումարտակները Բեյրութից բրիտանական «Կամպետտա» և «Եկատերինոսլավ» նավերով մեկնեցին Մերսին: Առաջինը անմիջապես Մերսին էր գնալու, իսկ երկրորդը՝ Ալեքսանդրետ, ապա նոր՝ Մերսին[5]: Դեկտեմբերի 17-ի երեկոյան «Կամպետտա» նավը մոտեցավ Մերսինին, սակայն փոթորկի պատճառով լեգեոնականները ափ դուրս գալ չկարողացան: Միայն մի նավակ կարողացավ հասնել ափ: Դեկտեմբերի 18-ի առավոտյան հայ զինվորները ոտք դրեցին կիլիկյան հողի վրա: Լեգեոնական Խանը (Մանուկ Բաղդասարյան) հետևյալ կերպ է բնու-

[1] **Մուրատեան Գ.,** Հայրենիքին ուխտաւորները վրեժին ճամբուն վրայ, Կ.Պոլիս, 1920, էջ 80-82:

[2] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 450, ց. 3, գ. 71, թ. 37:

[3] **Գուշագճեան Մ.,** նշվ. աշխ., էջ 147:

[4] **Մուրատեան Գ.,** նշվ. աշխ., էջ 82:

[5] **Պոյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 178:

թագրում այդ իրադարձությունը. «Հայ Կամաւորները ծնրադիր հայրենի կոյս եւ միանգամայն սրբազան հողը կը համբուրէին կարօտակէզ արցունքի կայլակներ հոսեցնելով իրենց աչքերէն: Հայրենի հողին անդիմադրելի սիրոյն եւ կարօտին ազդեցութեան տակ հայ կամաւորներս գրեթէ զգայազիրկ գինովութեան նոպաներ անցուցինք: Այդ վայրկեանէն արմատապէս համոզուեցանք որ իսկապէս հարազատ հայրենի հողին մագնիսական ոյժը այնպիսի վիթխարի զօրութիւն մըն է զոր այդ հողին վրայ կանգնող հաւատաւոր հայրենսէրը միայն կը զգայ»[1]: Մ. Գուշագճեանը գրում է. «Հայ լեգէոնականները Կիլիկիա կու գան այն յոյսով ու հաւատքով, որ հայկական Կիլիկիոյ անկախութիւնը կերտելու ու պահպանելու կու գան»[2]: Հայ զինվորները, հայրենի հողի վրա կանգնելու ուրախության հետ միասին, ականատես եղան եղեռնի հետևանքով հայաթափված հայրենիքի տխուր պատկերին, ցեղասպանությունից փրկված ցնցոտիավոր կանանց ու մանուկների ողբալի վիճակին: Սկզբնական երջանկության զգացումին հետզհետե սկսեց փոխարինել դառնությունը:

Մերսինի նավահանգստում հայ զինորներին դիմավորելու համար հավաքվել էին եղեռնից փրկված հայ կանայք ու երեխաներ: Տ. Պոյաճյանը նկարագրում է, թե ինչպես էր ցնցոտիավոր մի հայ ծեր կին՝ երեխայի հետ, մոտեցել իրեն, համբուրել ձեռքը և դողդոջուն ու հազիվ լսելի ձայնով ասել. «Բարի եկաք, զաւակներս, ձեր հոգիին մատաղ: Բայց, ուշ եկաք: Ամայութիւն տեսնելու եկաք: Մեր ժողովուրդին խաչելութեան ապացոյցները փնտռելու եկաք: Սակայն բարի եկաք: Ողջ մնացածներս մեր մաշած բազուկներուն եւ թօշնած սրտերուն մէջ տեղ կուտանք ձեզի, ձեզմով վերակենդանանալու եւ յուսադրուելու»[3]: Մերսինի զինվորական կառավարիչ նշանակվեց մայոր Մյուլերը[4]: Շուտով Դ գումարտակն ուղարկվեց Ալեքսանդրետ, իսկ Ա գումարտակը շարժվեց ավելի հյուսիս[5]: Դ գումարտակը Բեյրութից Ալեքսանդրետ տեղա-

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 181:

[2] **Գուշագճեան Մ.,** նշվ. աշխ., էջ 145:

[3] **Պոյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 182:

[4] **Ամէմեան Խ.,** Էջեր կամաւորի օրագրէս, էջ 166:

[5] **Լազեան Գ.,** Հայաստան եւ Հայ Դատը (Վաւերագրեր), էջ 192:

փոխվեց բրիտանական «Թակուս» նավով[1]: Գ գումարտակի 7-րդ վաշտը և գնդացրորդների վաշտը մնացին Մերսինում, իսկ մյուս մասը գնացքով դեկտեմբերի 20-ին մեկնեց Տարսոն և Ադանա[2]: Նույն օրը Կիլիկիայի այդ երկու գլխավոր կենտրոններն անցան հայկական զինուժի հսկողության տակ: Դեկտեմբերի 25-ին Ադանա ժամանեց Լ. Ռոմիոն[3]: Տարսոնի հայերը մեծ խանդավառությամբ դիմավորեցին ժամանող հայ զինվորներին: Գնացքը դեռ չկանգնած՝ տեղի հայերը նետվում էին ողջագուրվելու լեգեոնականների հետ: Կայարանում անընդհատ հնչում էին հայկական երգեր: Տարսոնում թողնելով 2 վաշտ՝ լեգեոնը շարունակեց ճանապարհը դեպի Ադանա[4]: Տարսոն մտնելուց հետո ֆրանսիական հրամանատարությունը հայտարարեց, որ Հայկական լեգեոնի զինվորների թիվը 12.000-ի է հասցվելու և հնարավոր է, որ ազատագրվի նաև Սեբաստիան[5]: Դա մեծ խանդավառություն առաջացրեց հայ զինվորների մոտ:

Ադանայում ևս հայ բնակչությունը ցնծությամբ դիմավորեց լեգեոնականների մուտքը քաղաք: Ադանայի երկաթուղային կայարանում լեգեոնականներին դիմավորեցին սպիտակ շորերով, եռագույններով զարդարված հայ աղջիկներ, որը չափազանց ոգևորիչ էր հայ զինվորների համար: Հայ համայնքի ներկայացուցիչները ողջույնի խոսքերով դիմավորեցին ֆրանսիական իշխանություններին և հայ լեգեոնականներին[6]: «Ամէն կողմէ ծաղիկներ կը տեղային, հուռա՛ները իրար կը յաջորդէին, լաց կար ու խինդ, գիրկընդխառնում և ողջագուրում,- վկայում է ականատես լեգեոնական Մ. Թաթարյանը,- Չէին հաւատար կատարուած հրաշքը. հայ զինուոր, կատարեալ զինուոր, զէնք ու զրահով, անվախ ու քաջ, Ռուբէններու և Լեւոններու երկրին վրայ ոտք կը դնէր, դարերու գերութեան շղթան կը փշրէր...»[7]: Երեկոյան հայ լեգեոնականները հյուրընկալվեցին Սարգիս Ճանճիկյանի ռեստորանում, ուր

[1] **Պօյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 178:

[2] **Պարթեւեան Ս**., նշվ. աշխ.,, էջ 110:

[3] **Աթանասեան Ա.,** Կիլիկիոյ մօտաւոր անցեալէն (Պատմական ակնարկ), Առաջաբան եւ նօթեր Մ. Ս. Դաւիթ-Բէկի, Փարիզ, 1937, էջ 10:

[4] **Պարթեւեան Ս.,** նշվ. աշխ.,, էջ 110:

[5] **Պօյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 204:

[6] Տե՛ս նույն տեղում, էջ 182:

[7] **Թաթարեան Մ.,** նշվ. աշխ., էջ 21:

հավաքվել էին եղեռնից փրկված հայերը: Ճոխ խնջույք կազմակերպվեց: Մի ծերունի հետևյալ խոսքով դիմեց զինվորներին. «Զաւակներս, դուք էք մեր կոտորակուած եւ յուսակտուր եղած ժողովուրդին միակ յոյսն ու ապաւէնը: Գիտէք թէ ինչ ահաւոր տանջանքներ կրեց ան: Այս փոքրիկ ճաշասրահին անգամ անխօս վկան է զարհուրելի խժդժութեանց: Մեր ցեղին նահատակները, որոնց թիւը միլիոնը անցած է, ձեզի կը նային իրենց անծանօթ հողաթումբերէն: Դուք էք որ ձեր գործքով հանգստութիւն եւ խաղաղութիւն պիտի պարգեւէք անոնց տառապած հոգիներուն: Վերածնող հայրենիքի պաշտպանն ու պահապանն էք դուք: Հաւատարիմ եղէք ձեր կոչումին եւ հայ ժողովուրդի իտէալին՝ որ ձեր իտէալն է: Թող Հայուն Աստուածը ձեզի պարգեւէ անսահման ուժ, քաջութիւն, կորով ու տոկունութիւն: Կրկնեմ, խմենք Վերածնող Հայրենիքին կենացը»[1]: Հայկական լեգեոնը դեկտեմբերի 23-ին ազատագրեց Օսմանիեն և Իսլահիեն, դեկտեմբերի 27-ին՝ Պոզանտը՝ Կիլիկյան դարպասների մոտ, որով ավարտվեց Ադանայի նահանգի ազատագրումը[2]:

Կիլիկիայի ազատագրումը կատարվեց հիմնականում Հայկական լեգեոնի ուժերով: Ա գումարտակի վերահսկողության տակ հայտնվեց Կիլիկիայի արևելքը՝ Բեյլանը, Պայասը, Դյորթ Յոլը, Անտիոքը, Թոփրակ Կալեն, Օսմանիեն, Բաղչեն, Իսլահիեն: Բ գումարտակն ազատագրեց կենտրոնական շրջանները՝ 4-րդ վաշտը մնաց Ադանայում, իսկ 5-րդ և 6-րդ վաշտերը զբաղեցրին Սիհուն և Ջիհան գետերի միջագետքում գտնվող կարևոր ռազմավարական կետերը: Գ գումարտակը զբաղեցրեց Կիլիկիայի արևմտյան մասը՝ Մերսինը, Տարսոնը, Ենիճեն, Պոզանտը[3]: Դ գումարտակը հաստատվեց Ալեքսանդրետում և շրջակայքում[4]: Մարաշը, Այնթապը, Քիլիսը, Բիրեջիկը, Ուրֆան գրավվեցին բրիտանական զորքերի կողմից: 1918 թ. դեկտեմբերի 6-ին բրիտանական զորքերը Սիրիայից մտան Քիլիս: Դեկտեմբերի 18-ին մի քանի սպաների ու զինվորների հետ Այնթապ մտավ Մայք Սայքսը, իսկ մեկ

[1] **Պօյաճեան Տ.**, նշվ. աշխ., էջ 185:
[2] Տե՛ս http://en.wikipedia.org/wiki/Chronology_of_the_Turkish_War_of_Independence:
[3] **Պօյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 199-200:
[4] Նույն տեղում, էջ 193:

շաբաթից քաղաք մտան հնդկական զորամասեր[1]: 1919 թ. փետրվարի 2-ին բրիտանական զորքերն ազատագրեցին Մարաշը, փետրվարի 27-ին՝ Բիրեջիկը, մարտի 24-ին՝ Ուրֆան: Ֆրանսիական զորքերը բրիտանականին փոխարինեցին 1919 թ. հոկտեմբերի 29-ին Մարաշում, իսկ 30-ին՝ Ուրֆայում[2]:

Միայն Հայկական լեգեոնի ուժերը բավարար չէին ամբողջ Ադանայի նահանգը վերահսկելու համար: Անհրաժեշտ էր կամ նրա թվաքանակը մեծացնել կամ դիմել բրիտանացիների օգնությանը: Ինչպես տեսանք, հազարավոր հայեր էին դիմել կամավորագրվելու Հայկական լեգեոնին: Ֆրանսիան հնարավորություն ուներ առանց որևէ դժվարության այդ 5.000-ոց զորագնդի թվաքանակը եռապատկելու: 15.000-ոց զորաբանակը լիովին բավարար կլիներ Կիլիկիան պաշտպանելու համար: Սակայն վախենալով հայերի ազգային ձգտումներից, ինչպես նաև տուրք տալով թուրքերի ու բրիտանացիների խարդավանքներին, Ֆրանսիան հրաժարվեց ոչ միայն լեգեոնի թվաքանակը մեծացնելու գաղափարից, այլ նույնիսկ ցրեց նորակազմ Դ գումարտակը: Նման պայմաններում ֆրանսիացիները ստիպված էին դիմելու բրիտանացիների աջակցությանը:

1919 թ. փետրվարին Կիլիկիա մտավ գեներալ Լեսլիի բրիտանական 30.000-ոց կորպուսը[3]: 1919 թ. մայիսի 28-ին Մերսինում ափ դուրս եկած 250 ալժիրցիներն առաջին ֆրանսիական զինվորներն էին Ադանայի նահանգի տարածքում[4]: Հայկական լեգեոնը պաշտոնապես ֆրանսիական բանակի մաս չէր կազմում: Միայն 1919 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին բրիտանական զորքերին փոխարինեցին ֆրանսիական փոքրաքանակ ուժերը, որոնք այդպես էլ ի վիճակի չեղան ապահովելու Կիլիկիայի քրիստոնյա բնակչության լիարժեք անվտանգությունը: Լեգեոնականները կարևոր դեր ունեցան հայ բնակչության պաշտպանության և զինման գործում: Զենք հայթայթելու դրվագներից մեկը ներկայացնում է լեգեոնական Ենովք Աշտարակենցը: Գ գումար-

[1] **Սարաֆեան Գ.,** Պատմութիւն Անթէպի Հայոց, հ. Ա, Լոս Անճէլըս, 1953, էջ 1071-1072:

[2] Տե՛ս http://en.wikipedia.org/wiki/Chronology_of_the_Turkish_War_of_Independence:

[3] **Թորոսյան Շ.,** նշվ. աշխ., էջ 127:

[4] **Լազեան Գ.,** Հայաստան եւ Հայ Դատը (Վաւերագրեր), էջ 193:

տակի 25 լեգեոնականների՝ ֆրանսիացի կապիտան Դը Ֆալուայի գլխավորությամբ հանձնարարված էր հսկել Ենիճե կայարանը: Այն երկաթուղային ռազմավարական հանգույց էր, ուր միանում էին Մերսինից ու Ադանայից եկող և դեպի Կ. Պոլիս գնացող երկաթուղային ճանապարհները: Պատերազմի տարիներին այնտեղ գերմանական ռազմաբազա էր եղել: Կայարանի օժանդակ գծերի վրա կանգնած էին 20-ից ավելի փակ վագոններ, որոնք կնքված չէին: Լեգեոնականներից Ենովք Աշտարակենցը և Երվանդ Թյուրապյանը (նախկինում թուրքական բանակի սպա՝ գերված բրիտանացիների կողմից) պատահաբար տեղեկացան, որ վագոնները բեռնված են գերմանական հրացաններով: Նրանք այդ մասին տեղեկացրեցին տասնապետ Օննիկ Սինանյանին և այլ գործիչների: Այդ զենքերը, լեգեոնականների ջանքերով, մաս առ մաս գիշերները դուրս բերվեցին և ուղարկվեցին Սիս, Հաճն, Դյորթ Յոլ և այլ վայրեր՝ ինքնապաշտպանության համար: Երբ բրիտանացիները եկան վագոնների պարունակությունը ստուգելու և կնքելու, բարեբախտաբար այնտեղ արդեն զենք չէր մնացել: Շուտով ամբողջ կառաշարը հանձնվեց թուրքերին[1]:

Գաղթականների անվտանգ Կիլիկիա տեղափոխության հարցերը նույնպես ընկավ լեգեոնականների վրա: Լեյտենանտ Հայկ Ազատյանը պատասխանատու էր ցամաքային, իսկ Տ. Թեքեյանը՝ ծովային փոխադրումների համար: Այդ փոխադրությունների ընթացքում լեգեոնականները նաև զենք ու զինամթերք էին տեղափոխում Կիլիկիա՝ բնակչության անվտանգությունն ապահովելու համար[2]: Հայ գաղթականությունը մեծ խմբերով սկսեց վերադառնալ հայրենիք: Նրանց վիճակը չափազանց ծանր էր: Ականատեսը հետևյալ կերպ է բնութագրում նրանց. «Տարագիրներ կը հասնին հոս շարան շարան ամէն օր չափազանց խեղճ վիճակի մէջ: Անոնց երեւոյթը շատ սրտակեղէք է: Ոտքերնին բոպիկ, հագուստները կտոր կտոր եղած, գլուխնին մերկ կը հասնին հոս շարունակ: Չորս տարուան տառապանքը զանոնք կմախքի վերա-

[1] **Պօյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 200-201, 206:
[2] **Աւետեան Մ.,** նշվ. աշխ., էջ 486:

ծած է: Անոնց աչքերը փոսացած, ծունկերը դողդողուն, ու կուրծքը անկարող վեր պահելու համար անոնց մեռելացած մարմինը»[1]:

Պատերազմից հետո, ըստ տեղի ֆրանսիական վարչության հաշվարկների, Ադանայի նահանգ վերադարձան 120.000 հայեր: Նրանց կողքին կային 100.000 անսարի արաբներ, 30.000 քրդեր ու ղզլբաշներ, 28.000 հույներ, 20.000 թուրքեր, 15.000 չերքեզներ, 5.000 ասորիներ: Մարաշի գավառ վերադարձան 23.000 հայեր, իսկ մահմեդականների թիվը 136.000 էր[2]: Դաշնակիցներն անփույթ գտնվեցին թուրքերին զինաթափելու և երկրամասի կառավարումը նրանց ձեռքից վերցնելու հարցում, որը հետագայում լուրջ խնդիրներ առաջացրեց: Զինադադարի պայմանների համաձայն մինչև 1919 թ. փետրվարի 1-ը Կիլիկիան շարունակելու էին կառավարել օսմանցի պաշտոնյաները: Հայկական լեգեոնի հրամանատար գնդապետ Լ. Ռոմիոն ստանձնեց թուրքական վարչության վերահսկողությունը[3]: Կիլիկիայում էր գտնվում Հաշիմ բեյի երեք հազարանոց ժանդարմական գունդը, իսկ մի ամբողջ բանակ զենք ու զինամթերքով մնացել էր Կիլիկիայից արևելք ընկած երկրամասում՝ Եփրատ և Տիգրիս գետերի միջև[4]: Թուրքական բանակը հեռանալուց առաջ հսկայական քանակությամբ զենք ու զինամթերք էր բաժանել մահմեդական բնակչությանը, որը, որոշ դեպքերում, փորձում էր զինված դիմադրություն ցույց տալ ֆրանս-բրիտանական ուժերին: 1918 թ. նոյեմբերի 30-ին Ալեքսանդրետում, իսկ դեկտեմբերի 12-ին Բեյլանում Ա գումարտակի հայ զինվորները բախում ունեցան թուրքերի հետ, սակայն արագորեն ճնշեցին նրանց զինված ընդվզումները[5]: 1918 թ. դեկտեմբերի 21-ին՝ Ադանայի ազատագրման հաջորդ օրը, թուրքերը ստեղծեցին Ազգային իրավունքների պաշտպանության Ադանայի միությունը[6]: Այդ մարմինը պետք է զբաղվեր Կիլիկիայում ֆրանս-բրիտանական ուժերի դեմ ապստամբությունների կազմակերպմամբ և հակահայկական գործողություններով: 1919 թ.

---

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 430, ց. 1, գ. 807, թ. 2-3:

[2] **Саакян Р.,** Франко-турецкие отнишения и Киликия в 1918-1923 гг., Ер., 1986, с. 82:

[3] **Bremond E.,** La Cilicie en 1919-1920, p. 13:

[4] Նույն տեղում, էջ 7-8:

[5] **Պոյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 191:

[6] Տե՛ս http://en.wikipedia.org/wiki/Chronology_of_the_Turkish_War_of_Independence:

հունվարի սկզբին թուրքերը հարձակվում են Դյորթ Յոլի ու Պայասի վրա, սակայն Հայկական լեգեոնը նրանց պարտության է մատնում[1]: Դա ցույց տվեց, որ հայ զինվորներն ի վիճակի են վերահսկել իրավիճակը և կանխել թուրքերի զինված ելույթները:

1919 թ. մարտի 3-ին Ադանայում ֆրանսիացիների կողմից ձերբակալվեց թուրքական ժանդարմերիայի հրամանատար Հաշիմ բեյը, ով Ադանայի թուրք նահանգապետի հետ խոշոր ապստամբություն էր ծրագրել[2]: Դրանով ձախողվեց թուրքերի խոշոր ելույթը: Սակայն թուրքական ժանդարմերիան պահպանվեց, որը հետագայում մեծ աջակցություն ցույց տվեց քեմալականներին: Սակայն պետք է նշել, որ սկզբնական շրջանում թուրքերի զինված ելույթները հազվադեպ էին և միայն հետագայում դրանք ստացան մեծ ծավալներ: Տ. Պոյաճյանը հետևյալ կերպ է նկարագրում իրավիճակը. «Հայ Լէգէոնականներու կողմէ Կիլիկիոյ գրաւման առաջին օրերուն թուրքերը բոլորովին յուսալքուած էին: Քաշուած իրենց տուներուն մէջ անոնք օրէ օր կը սպասէին իրենց գործած ահաւոր ոճիրներու փոխհատուցման: Կարծես տրամադիր էին ենթարկուելու որեւէ պատժի, եւ պատրաստ էին իրենց զէնքերը կամաւոր կերպով յանձնել առանց ամենափոքր գանգատի, եթէ զինուորական իշխանութիւնները այդպէս կամենային: Դժբախտաբար իրաց այս նպաստաւոր վիճակը երկար չի տեւեց, դիւանագիտական շահախնդրութեանց շնորհիւ: Տակաւ առ տակաւ ֆրանսացի բարձրաստիճան զինուորականները թուրքերու հանդէպ բարեացակամութեան տրամադրութիւններ ցոյց տուին, ի մեծ զարմանս եւ ի վնաս տառապակոծ հայ ժողովուրդին: Ծանօթ ջարդարարներ այլեւս չէին հետապնդուիր: Քաջալերուած այս նպաստաւոր կացութենէն թուրքերը սկսան աւելի համարձակ ու ամբարտաւան դառնալ: Այլեւս յստակ էր իրենց համար որ երէկուան իրենց թշնամին հաշտ աչքով սկսած էր նայիլ իրենց վրայ: Ուստի, անոնք ամէն միջոցի դիմեցին զարգացնելու իրենց ի նպաստ եղած դիմափոխութիւնը: Սարքեցին պարահանդէս-

[1] **Թորոսյան Շ.**, նշվ. աշխ., էջ 112:

[2] **Թորոսյան Շ.,** նշվ. աշխ., էջ 113: **Bremond E.**, La Cilicie en 1919-1920, p. 16-17;

ներ, ճաշասեղաններ, եւ մեծարանքի ամէն ձեւի հիւրասիրութիւններ սիրաշահելու համար ֆրանսացի մեծ ու փոքր պաշտօնեաները»[1]:

Զինադադարից հետո թուրքերը կարողացան հասնել նրան, որ ֆրանս-բրիտանական իշխանությունները չզինաթափեցին թուրք բնակչությանը, չցրեցին թուրքական ժանդարմերիան, չձերբակալեցին հայերի նկատմամբ պատերազմի տարիներին հանցագործություններ գործածներին: Ֆրանսիացիները փորձում էին հնարավորիս սիրաշահել թուրքերին՝ մտածելով, որ կարող են նրանց հետ համագործակցել: Սակայն այդ ամենը թուրքերի կողմից դիտվեց թուլության նշան և նրանք օրեցօր ավելի ազատ և անկաշկանդ սկսեցին գործել ֆրանսիացիների և հայերի դեմ: Հայկական լեգեոնը և նախկին լեգեոնականներ վճռորոշ դեր կատարեցին թուրքական ուժերի դեմ կազմակերպված բոլոր ինքնապաշտպանությունների ժամանակ: Նրանց զինվորական պատրաստվածությունը, մարտական փորձը անուրանալի դեր խաղացին ինքնապաշտպանական մարտերի ժամանակ: Նրանց ջանքերով էր, որ հայ բնակչության ձեռքում հայտնվեց որոշակի քանակի զենք և զինամթերք:

1919 թ. հոկտեմբերի վերջին Հայկական լեգեոնի 2 վաշտեր մտան Մարաշ և փոխարինեցին հեռացող բրիտանական զորքերին: Շուտով քաղաք մտան ֆրանսիական 412-րդ գումարտակի որոշ զորամասեր, աֆրիկյան հեծյալների կես վաշտ, ոստիկանների 150 հոգանոց ջոկատ, որից 125-ը՝ թուրք: Դեկտեմբերի 30-ին քաղաք են հասնում լեգեոնի ևս 2 վաշտ[2]: Թուրքերի հակաֆրանսիական բացահայտ ելույթներին ֆրանսիացիները արագ չարձագանքեցին, որից նրանք ավելի ոգևորվեցին և պատրաստվեցին ապստամբության: Թուրքերը պահանջեցին, որ ֆրանսիացիները չմիջամտեն քաղաքի վարչական կառավարմանը, իսկ հայ լեգեոնականներին հեռացնեն[3]: Մարաշի ֆրանսիական կառավարիչը հունվարի 19-ին հայ լեգեոնականների 7-րդ և 8-րդ վաշտերը՝ շուրջ 500 հոգու, դուրս հանեց քաղաքից՝ նրանց ուղարկելով Իսլահիե՝ պարեն և ռազմամթերք բերելու պատրվակով:

[1] **Պօյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 191-192:

[2] **Պօյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 278:

[3] Տե՛ս **Նուբարյան մատենադարան,** ֆոնդ Occupation francaise de le Cilicie 1919-1922, թղթապանակ 4, թերթ 002092:

Դա ավելի ոգևորեց թուրքերին: Ապստամբության նախօրյակին Մարաշում մնացել էր մոտ 600 հայ լեգեոնական[1]: Հունվարի 21-ի Մարաշում թուրքերը բացահայտ ապստամբություն սկսեցին ֆրանսիացիների դեմ: Մարաշի կռիվները շարունակվեցին մինչև փետրվարի 11-ը: Հետաքրքիրն այն է, որ հայերն ամենուրեք աջակցում էին ֆրանսիացիներին, սակայն վերջիններս հրաժարվեցին զինել հայ բնակչությանը, օգնության չէին հասնում պաշարված խաղաղ հայ բնակչությանը, որի արդյունքում ֆրանսիական զորքերի աչքի առջև հազարավոր հայեր սպանվեցին: Միայն հայ լեգեոնականների շնորհիվ էր, որ բազմաթիվ վայրերում ինքնապաշտպանություններ կազմակերպվեցին և հազարավոր հայեր փրկվեցին: Ֆրանսիական օժանդակ ուժերի և Հայկական լեգեոնի նոր վաշտերի ժամանումով իրադրությունը Մարաշում փոխվեց հօգուտ ֆրանսիացիների և թուրքերը հաշտություն խնդրեցին[2]: Սակայն անհասկանալի պատճառներով, փետրվարի 11-ին ֆրանսիական զորքերը, առանց հայերին տեղյակ պահելու, լքեցին քաղաքը և գիշերով գաղտագողի փախուստի դիմեցին իրենց թվապես զիջող և անձնատվության պատրաստ հակառակորդից: Հայ լեգեոնականների պաշտպանության ներքո հայ բնակչության զգալի մասը հեռացավ քաղաքից: Սակայն հազարավոր խաղաղ բնակիչներ և մի քանի տասնյակ լեգեոնականներ, անտեղյակ մնալով ֆրանսիացիների գաղտնի նահանջի ծրագրին, մնացին քաղաքում և զոհվեցին: Ընդհանուր առմամբ՝ Մարաշի կռիվներում սրի քաշվեցին 12.000 հայեր[3], մոտ 8.000 հայեր աքսորվեցին քեմալական իշխանության կողմից: Մարաշի ինքնապաշտպանական մարտերում զոհվեցին շուրջ 150 հայ լեգեոնականներ[4]: Մարաշի աղետը ողբերգություն էր հայերի համար և խայտառակություն ու հեղինակազրկում ֆրանսիական պետության ու զինվորության համար:

---

[1] Տե՛ս **ՀԱԱ,** Ֆ. 200, ց. 1, գ. 546, թ. 38:

[2] **Նուբարյան մատենադարան**, ֆոնդ Occupation francaise de le Cilicie 1919-1922, թղթապանակ 4, թերթ 002095:

[3] Տե՛ս **ՀԱԱ,** Ֆ. 200, ց. 1, գ. 546, թ. 42:

[4] **Գալուստեան Գր.** (Կիլիկեցի), Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զէյթուն, Նիւ Եորք, 1934, էջ 822:

1920 թ. մարտ-հոկտեբեր ամիսներին հերոսական ինքնապաշտպանություն կազմակերպվեց նաև Հաճնում: Եղեռնից առաջ Հաճնի հայ բնակչությունը 30.000 էր, այլազգիներ գրեթե չկային[1]: Պատերազմից հետո քաղաք վերադարձան ցեղասպանությունը վերապրած 8.000 հայեր[2]: 1919 թ. փետրվարի 10-ին Ադանայում կազմավորված հայկական ոստիկանական 250 հոգանոց ջոկատի պաշտպանության տակ Հաճն մեկնեցին առաջին 300 հաճնցի ընտանիքները: 1919 թ. վերջին հաճնցիները ինքնապաշտպանության համար Սարգիս Ճեպեճյանի հրամանատարությամբ կազմավորեցին 600 հոգանոց զինուժ՝ 4 վաշտեր, 1 հեծյալ խումբ և պահեստային ջոկատ[3]: 1920 թ. փետրվարի 19-ին Հաճն հասավ Է. Բրեմոնի կողմից քաղաքապետ նշանակված Կարապետ Չալյանը, ով իր հետ բերել էր 1.200 հրացան և 125.000 փամփուշտ[4]: Մարտի 15-ից թուրքերը սկսեցին Հաճնի պաշարումը: Պետք է նշել, որ ֆրանսիական որևէ զինվոր կամ Հայկական լեգեոնի զորամաս Հաճն չի մտել: Սակայն ինքնապաշտպանության գործում կարևոր դեր կատարեցին նախկին լեգեոնականները: Ֆրանսիական իշխանությունները հրաժարվեցին զորքեր ուղարկել Հաճնի բնակչությանը պաշտպանելու համար: Հայերի համառ դիմումներից հետո Է. Բրեմոնը թույլատրեց կազմավորել կամավորական ջոկատներ և ուղարկել օգնության: Նախկին լեգեոնական լեյտենանտ Ջիմ Չանգալյանի գլխավորությամբ շուրջ 400 կամավորներ Ադանայից մեկնեցին Հաճնին օգնության: Սակայն Սսի ֆրանսիական զինվորական հրամանատարը թույլ չի տալիս շարունակել ճանապարհը: 100 հետևակայիններից և 60 հեծյալից կազմված մեկ այլ խումբ կրկին նախկին լեգեոնական լեյտնանանտ Վահան Փորթուգալյանի գլխավորությամբ 1920 թ. մայիսին Մսիսից շարժվեց Հաճն, սակայն Թումլու կալեի մոտ շրջապատման մեջ հայտնվեց և դժվարությամբ կարողացավ ճեղքել շրջապատման օղակը և վերադարձավ Մսիս[5]: Ֆրանսիան այդպես էլ որևէ

---

[1] **Սահակյան Ռ.**, Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921թթ., Երևան, 1970, էջ 166:

[2] **Bremond E.,** La Cilicie en 1919-1920, p. 11:

[3] **Թորոսյան Շ.,** նշվ. աշխ., էջ 178-181:

[4] **Պոյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 299:

[5] **Պոյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 300-304:

զինվոր չուղարկեց քաղաք: Գեներալ Ժ. Դյուֆոն գտնում էր, որ Ֆրանսիան բավարար ուժեր չունի Հաճնին օգնելու և իրենք որևէ պատասխանատվություն չեն կրում հայերի համար[1]:

Ադանայի ազգային միության ջանքերով և Է. Բրեմոնի թույլտվությամբ 400 կամավորներ հավաքագրվեցին Ախարճայում, որպեսզի օգնության գնային Հաճնին: Բոլոր ծախսերը հոգացել էին հայերը: Նրանք բավական լավ զինված էին, ունեին գնդացիրներ, պետք է տաներին 1.300 հրացաններ[2]: 1920 թ. սեպտեմբերի 22-ին, երբ կամավորական խումբը պատրաստվում էր Հաճն մեկնել, ֆրանսիական զորքերը շրջապատեցին Ախարճան, զինաթափեցին հայ կամավորներին և նրանց արտաքսեցին Կիլիկիայից[3]:

Միայնակ մնալով բազմաթիվ անգամներ գերակշռող ուժերի դեմ, առանց պարենի ու զինամթերքի բավարար պաշարի, արտաքին աշխարհից կտրված հաճնցիները 7 ամիս հերոսաբար դիմադրեցին քեմալականներին: Սակայն դա երկար շարունակվել չէր կարող: 1920 թ. հոկտեմբերի 15-ին Հաճնը գրավվեց թշնամու կողմից և ամբողջ բնակչությունը սրի քաշվեց: Միայն 400 հաճնցիներ, Արամ Կայծակի (Թերզյան) գլխավորությամբ, կարողացան ճեղքել պաշարման գիծը և Ադանա հասցնել քաղաքի անկման լուրը[4]: Մարաշի ու Հաճնի դեպքերը ցույց տվեցին Կիլիկիայի ֆրանսիական իշխանությունների նենգությունը և թուլությունը, հիասթափեցրին հայերին և ոգևորեցին քեմալականներին, որոնց աչքին ֆրանսիացիները թույլ և անկարող հակառակորդ էին դիտվում: Սիսը ֆրանսիացիները հանձնեցին քեմալականներին առանց կռվի՝ 1920 թ. մայիսի 30-ի զինադադարի պայմաններով: 1920 թ. հունիսի 1-ին քաղաքի 7.500 հայերը Հայկական լեգեոնի պաշտպանության ներքո հեռացան Ադանա[5]: Սսեցի հայ մարտիկների

---

[1] **Նուբարյան մատենադարան**, ֆոնդ Occupation francaise de le Cilicie 1919-1922, թղթապանակ 4, թերթ 002078: **Պօյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 315-316:

[2] **Պօյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 338-339:

[3] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 408, ց. 1, գ. 142, թ. 15-16: **Նուբարյան մատենադարան**, ֆոնդ Occupation francaise de le Cilicie 1919-1922, թղթապանակ 4, թերթ 002075:

[4] **Պօյաճեան Տ.**, նշվ. աշխ., էջ 318:

[5] Նույն տեղում, էջ 319:

թիվը հասնում էր 1.000-ի[1]: Այսպիսով, 1920 թ. ամռանը Կիլիկիայի լեռնային շրջաններն ամբողջության անցան քեմալականների ձեռքը:

Հերոսական էր Այնթապի հաջողված դիմադրությունը: Նախապատերազմյան շրջանում Այնթապ քաղաքի հայ բնակչության թիվը հասնում էր 40-42.000-ի: Աշխարհամարտի ավարտից հետո, երբ արհավիրքը վերապրածները վերադարձան հայրենի օջախներ, քաղաքն ուներ 20-22.000 հայ ազգաբնակչություն, որից 12.000-ը տեղացիներ էին, իսկ մնացածը գաղթականներ՝ գերազանցապես Սեբաստիայից[2]: Փաստորեն, բնիկ այնթապցիների երեք քառորդը զոհ էր գնացել Մեծ եղեռնին: 1918 թ. դեկտեմբերի 11-ին Այնթապ մտան անգլիական զորքերը: Միայն 1919 թ. նոյեմբերին անգլիացիներին փոխարինելու եկավ ֆրանսիական փոքրաթիվ ջոկատը՝ բաղկացած 200 հոգուց, որոնց մեծամասնությունը հայ լեգեոնականներ էին: Նոյեմբերի 11-ին անգլիական ուժերի հրամանատար մայոր Միլզը քաղաքը հանձնեց Հայկական լեգեոնի հրամանատար գնդապետ Ֆլի-Սենթ Մարիին[3]: Սակայն թուրքերի խարդավանքների արդյունքում ֆրանսիացիները քաղաքից հեռացրի հայ լեգեոնականներին և նրանց փոխարեն բերեցին ալժիրցիների, ովքեր համակրում էին թուրքերին: Դրանից ավելի ոգևորվելով թուրքերը բազմիցս հարձակվեցին ֆրանսիացիների վրա[4]:

Թուրքերը բացահայտ թշնամական գործողություններ սկսեցին 1920 թ. հունվարի 13-ին, երբ թուրքական զորքերը Արաբտար գյուղի մոտ հարձակվեցին Մարաշ գնացող ֆրանսիական 400 հետևակ և 50 հեծյալ զինվոր ունեցող ջոկատի վրա և գրեթե ամբողջությամբ ոչնչացրին այն, զավթելով 4 թնդանոթ և 6 գնդացիր[5]: Թուրքերը խոստացան քաղաքի անդորրությունը պահպանել միայն այն դեպքում, եթե ֆրանսիացիները կատարեն իրենց հետևյալ պահանջները՝ հայ լեգեոնականներին հեռացնեն Այնթապից, իրենց գործերին չմիջամտեն, Այնթապ նոր ուժեր չբերեն, թույլ տան երկու թուրքական վաշտ թողնել

[1] Նույն տեղում, էջ 335:

[2] **Կեսար Ա.,** Այնթապի գոյամարտը, Պոսթըն, 1945, էջ 34-35:

[3] Տե՛ս **ՀԱԱ**, Ֆ. 430, ց. 1, գ. 821, թ. 3:

[4] **Պոյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 320-323:

[5] **Գասպարյան Ռ.**, Հայկական կոտորածները Կիլիկիայում (XIX դարի 90-ական թթ.-1921 թ.), Եր., 2005, էջ 198

Այնթապում[1]: Քաղաքում մթնոլորտը հետզհետե թեժանում էր: Հայերը բազմիցս դիմեցին ֆրանսիական հրամանատարությանը, որպեսզի զենք տրամադրեն ինքնապաշտպանության համար, սակայն մերժում ստացան[2]: 1920 թ. մարտի 28-ին Այնթապ ժամանեց կապիտան Անդրեան իր 3.000-ոց զորախմբով: Նա ուներ նաև չորս տանկ[3]: Մինչև Այնթապ ժամանելը Անդրեայի զորաբաժինը 4 օր շարունակ Քիլիսի ճանապարհին կռիվներ էր մղում թուրքական զորքերի դեմ: Արդյունքում, թուրքերն ունեցան զգալի կորուստներ՝ սպանվեցին 100 և վիրավորվեցին 300 մարդ: Անդրեայի ներկայությունը հայ բնակչությանը մի փոքր հուսադրեց, սակայն ապարդյուն: Ապրիլի 1-ին Անդրեան շտապեց հեռանալ՝ իր հետ տանելով նաև հայ լեգեոնականներին, ովքեր իրենց այստեղ գալու օրվանից ի վեր փակված էին զորանոցում: Այնթապում մնաց փոքրաքանակ ֆրանսիական զորք Ֆլի-Սենթ Մարիի գլխավորությամբ: Նախահարձակ լինելու համար, թուրքերը կարծես հենց սրան էլ սպասում էին:

Ապրիլի 1-ին, երբ Անդրեան ֆրանսիական ուժերի մեծ մասով դուրս եկավ քաղաքից և շարժվեց Քիլիսի ուղղությամբ, թուրքերը անցան հարձակման[4]: Սկզբնական շրջանում ֆրանսիացիները չէին աջակցում հայերի ինքնապաշտպանությանը, սակայն, երբ թուրքերը հարձակման հիմնական թիրախ դարձրին ֆրանսիացիներին, այդ ժամանակ վերջիններս սկսեցին օգնություն խնդրել հայերից: Շուրջ մեկ տարի տևած կռիվների ընթացքում հայերը և ֆրանսիացիները հաջողությամբ դիմագրավեցին թուրքական զորքերի գրոհները, հակահարձակման անցնելով գրավեցին թուրքական մի շարք թաղամասեր: 1921 թ. փետրվարի 8-ին թուրքերը անձնատվության ենթարկվեցին: Փետրվարի 10-ին Այնթապի կառավարիչ փոխգնդապետ Անդրեան հատուկ շնորհակալություն հայտնեց Այնթապի հայկական ուժերի հրամանատար Ատուր Լևոնյանին և հայ մարտիկներին քաջության ու մարտունակության, ֆրանսիացիների կողքին կռվելու, հայկական թաղա-

---

[1] Տե՛ս **ՀԱԱ,** Ֆ. 430, ց. 1, գ. 821, թ. 4:

[2] Տե՛ս **Նուբարյան մատենադարան**, ֆոնդ Occupation francaise de le Cilicie 1919-1922, թղթապանակ 4, թերթ 002081:

[3] **Սարաֆեան Գ.,** Պատմութիւն Անթէպի Հայոց, Բ. հատոր, Լոս Անճէլըս, 1953, էջ 46:

[4] **Ցուշամատեան մեծ Եղեռ**նի, էջ 657:

մասի դիրքերը թշնամու առաջ անմատչելի պահելու համար[1]: Սակայն Անկարայի պայմանագրի համաձայն 1922 թ. հունվարի 6-ին Այնթապից հեռացավ վերջին ֆրանսիացի զինվորը: Այնթապում դեռ մնացել էին չգաղթած 3.500 հայեր, ովքեր ևս հետզհետե հեռացան[2]: Այնթապի հայերը լքեցին իրեն բնակավայր այլևս չվերադառնալու պայմանով: Այսպիսով, Այնթապի հայերը շնորհիվ իրենց միահամուռ և կազմակերպված դիմադրության, կարողացան խուսափել ջարդերից: Սակայն նրանց ևս վիճակված էր տեղի տալ քեմալական ազգայնամոլ քաղաքականությանը, որի հետևանքով տարագրությունից դեռ նոր վերադարձած հայերը կրկին լքեցին իրենց հարազատ բնակավայրերը: Լեգեոնի զորացրված սպա լեյտենանտ Ջոն Շիշմանյանը 1920 թ. հունիսին Է. Բրեմոնի առաջարկով կազմավորեց 1.600 կամավորներից կազմված զորամաս՝ Ադանա քաղաքի պաշտպանության համար: Ֆրանսիական կողմը չհատկացրեց զենք և զինամթերք, բոլոր ծախսերը թողնվեցին հայերի վրա: Այդ զորամասը հաջողությամբ ապահովեց քաղաքի անվտանգությունը քեմալականների հարձակումներից[3]:

1920 թ. հունիսին հայկական կամավորական զորամասերը ամբողջությամբ ազատագրեցին Ջիհան և Սիհուն գետերի միջագետքը՝ Յուրեյլիի շրջանը[4]: Դրանով ապահովվեց Ադանա քաղաքի մատակարարումը: Հայկական լեգեոնի ու լեգեոնականների մասնակցությամբ 1920 թ. ինքնապաշտպանական հաջող մարտեր կազմակերպվեցին Հարունիեում, Բաղչեում, Էքպեզում, Զեյթունում, Շարում, Հասանբեյլիում, Նաճարլիում, Օսմանիեում, Դյորթ Յոլում, Տարսոնում: Մերսինում 200 հայ կամավորներ մարզվել էին Դենիկինի բանակից եկած 2 հայ սպաների կողմից, ունեին հատուկ համազգեստ և բարձր կարգապահություն: Նրանք հաջողությամբ հետ մղեցին թուրքական բազմաթիվ գրոհները[5]: Հասանբեյլիի հայերը 300 հրացաններով մի քանի ամիս

[1] **Նուբարյան մատենադարան**, ֆոնդ Occupation francaise de le Cilicie 1919-1922, թղթապանակ 4, թերթ 002296-002297:

[2] **Պոյաճեան Տ.**, նշվ. աշխ., էջ 323:

[3] **Նուբարյան մատենադարան**, ֆոնդ Legion d'Orient-volontairs armenienne, թղթապանակ Legion d'Orient (Legion armenienne), թերթ 0059-0060:

[4] **Նուբարյան մատենադարան**, ֆոնդ Occupation francaise de le Cilicie 1919-1922, թղթապանակ 4, թերթ 002059:

[5] **Պոյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 326-330

Ամանոսի լեռներում կռվեցին թուրքական գերակշիռ ուժերի դեմ՝ ամբողջությամբ կտրված արտաքին աշխարհից: Ի վերջո, 1920 թ. հուլիսի 2-ին ճեղքեցին պաշարումը և հաջողությամբ հասան Դյորթ Յոլ[1]:

Տարսոնում հայերը հաջող հակահարձակումների միջոցով վերացրին պաշարումը, Դյորթ Յոլի հայերը ազատագրեցին շրջական գյուղերը, վերացրին թշնամու կրակակետերը և միայն ֆրանսիացիների ճնշման ներքո ավելի առաջ չշարժվեցին[2]: Գրեթե բոլոր վայրերում, ուր հայերը դիմեցին ինքնապաշտպանության և քիչ թե շատ աջակցություն ստացան ֆրանսիական բանակի կողմից, հաջողությամբ հետ մղեցին թուրքերի բոլոր գրոհները: Շատ դեպքերում ֆրանսիացիներն էին խոչընդոտում հայերին նախահարձակ լինելու կամ թշնամուն մինչև վերջ ջախջախելու ջանքերին: Փաստորեն՝ 1918 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Ադանայի նահանգն ամբողջությամբ ազատագրվեց Հայկական լեգեոնի ուժերով, նրա վերահսկողության տակ անցան Կիլիկիայի բոլոր ռազմավարական կետերի վերահսկողությունը: Նման պայմաններում, բնական է, որ Ֆրանսիան պետք է փորձեր հնարավորինս սիրաշահել հայերին: Այդ իրավիճակում հնարավոր կլիներ նաև հռչակել երկրամասի ինքնավարությունը Ֆրանսիայի հովանու ներքո և չհանդիպել որևէ խոչընդոտի: 1918 թ. դեկտեմբերին Հալեպում Հայ ազգային միության կազմակերպած երեկույթում Մ. Սայքսը հետևյալ խորհուրդը տվեց հայերին. «Եթէ դուք հայերդ…ձեր սեփական ուժերով Կիլիկիոյ գրաւումը, որպէս կատարուած իրողութիւն, դաշնակիցներուն առջեւ չի դնեք, մի սպասէք որ անոնք այդ երկիրը ձեզ պիտի թողուն»[3]:

Բրիտանացի գործիչը ավելի հստակ էր պատկերացնում իրավիճակը և նրա խորհրդին հետևելը կարող էր փոխել հետագա իրադարձությունների ընթացքը: Անշուշտ, բրիտանացիների նպատակը ամեն կերպ իրենց դաշնակից Ֆրանսիային թիկունքից հարվածելն էր, սակայն դրա իրագործումը հայկական շահերին համահունչ էր, ինչպես

---

[1] **Նուբարյան մատենադարան**, ֆոնդ Occupation francaise de le Cilicie 1919-1922, թղթապանակ 1, թերթ 0004-0006:

[2] Նույն տեղում, թղթապանակ 4, թերթ 002058:

[3] **Նաթանեան Մ.**, Նիւթեր ժամանակակից պատմութեան համար: Ինչ պատրուակով Կիլիկիան կրկին թուրքերուն տրուեցաւ, «Պայքար» նոր տարւոյ բացառիկ, Բոստոն, 1950, էջ 81:

նաև համապատասխանում էր ֆրանսիական իշխանությունների տված խոստումներին: Սակայն մինչև վերջնական հուսախաբություն ապրելը հայերը չհամարձակվեցին սեփական ուժի վրա հենված գործողությունների գնալ այն ժամանակ, երբ Կիլիկիայում գտնվող միակ զինուժը Հայկական լեգեոնն էր և սպասում էին, որ մեծ տերությունները իրենց փոխարեն լուծեն հայ ժողովրդին հուզող հարցերը: Ճիշտ է, 1920 թ. օգոստոսի 4-ին Ադանայում ի վերջո հռչակվեց Կիլիկիայի ինքնավարությունը Ֆրանսիայի հովանու ներքո[1], սակայն դա չափազանց ուշացած, ժամանակավրեպ և արկածախնդրական քայլ էր, քանի որ Հայկական լեգեոնն արդեն գրեթե լուծարված էր: Արդյունքում, հաջորդ օրն իսկ, ֆրանսիացիները ցրեցին Կիլիկիայի կառավարությանը, իսկ հայ-ֆրանսիական հարաբերություններն ավելի լարվեցին:

1918 թ. նոյեմբերին Բեյրութում Ժ. Պիկոն ֆրանսիական սպայակույտի հետ ճաշկերույթի ժամանակ լեյտենանտ Վ. Փորթուգալյանին խնդրեց հուշագիր կազմել նոր պայմաններում Արևելյան լեգեոնի վերակազմության մասին: Հայ սպան դեկտեմբերի 18-ին Ժ. Պիկոյին հանձնեց հուշագիր-տեղեկագիր, որով հիմնավորում էր Արևելյան լեգեոնը Հայկական լեգեոն վերանվանելու և այն հայկական բանակի կորիզը դարձնելու անհրաժեշտությունը: Տեղեկացնում էր, որ հայկական մամուլում միայն Հայկական լեգեոն անունն էր օգտագործվում: Առաջարկում էր զինծառայությունը դարձնել 2 տարի, քանի որ նախկինում ամբողջ պատերազմի ընթացքի համար էին ընդունում լեգեոն, բայց պատերազմն ավարտվել էր: Առաջարկում էր լեգեոնի հրամանատարական կազմը համալրել հայ սպաներով, իսկ ենթասպաների հաստիքները բացառապես հայերին տալ, քանի որ միայն հայ սպան կարող էր հասկանալ հայ զինվորի հոգեբանությունն ու մտածելակերպը և արդյունավետությամբ առաջնորդել նրան: Վ. Փորթուգալյանն անհրաժեշտ էր համարում Կիլիկիայում ստեղծել ռազմական ուսումնարան, իսկ փայլուն առաջադիմություն ունեցողներին ուղարկել Ֆրանսիայի ռազմական հաստատություններում կատարելագործվելու[2]: Փաստո-

[1] **Նուբարյան մատենադարան**, ֆոնդ Occupation francaise de le Cilicie 1919-1922, թղթապանակ 2:

[2] **Պօյաճեան Տ.**, նշվ. աշխ., էջ 174-177:

րեն, Վ. Փորթուգալյանն առաջարկում էր լեգեոնը ոչ միայն անվանապես հայացնել, այլ նաև սպայակազմով: Նա նախատեսում էր այն դարձնել ինքնավար Կիլիկիայի բանակի հիմքը, արդեն իսկ փորձում էր պայմաններ ապահովել գրագետ հայ սպայակազմ պատրաստելու ուղղությամբ:

Մուդրոսի զինադադարից հետո թե՛ լեգեոնի հայ սպաների, թե՛ Պ. Նուբարի կողմից դիմումներ եղան լեգեոնը վերանվանելու «Հայկական» և վերանայելու կանոնադրությունը: Հայաստանի և Սիրիայի բարձրագույն կոմիսար Ժ. Պիկոն ևս հավանություն տվեց Արևելյան լեգեոնը Հայկական և Սիրիական լեգեոնների բաժանելու գաղափարին: 1919 թ. հունվարի 18-ին Ֆրանսիայի ռազմական նախարարի հրամանով կազմավորվեց Հայկական լեգեոնը[1]: Ֆրանսիայի քաղաքականությունը Կիլիկիայում հասկանալու համար հետաքրքիր է հետևել երկրամասի կառավարիչներին տրված անվանումների փոփոխությանը: Սկզբում Ժ. Պիկոն նշանակվեց Հայաստանում և Սիրիայում Ֆրանսիայի բարձրագույն կոմիսար, իսկ հետագայում պաշտոնը վերանվանվեց Սիրիայում և Կիլիկիայում Ֆրանսիայի բարձրագույն կոմիսար, իսկ արդեն Հ.Գուրոն կրում էր Սիրիայում Ֆրանսիայի բարձրագույն կոմիսար տիտղոսը[2]: Այստեղ տեսնում ենք, որ Ֆրանսիան սկզբում հավակնություններ էր դրսևորում նաև ամբողջ Հայաստանի նկատմամբ, հետո միայն՝ Կիլիկիայի, իսկ 1920 թ. հրաժարվում է նաև Կիլիկիայից:

Պետք է նշել, որ ամբողջ Հայաստանի նկատմամբ Ֆրանսիայի հավակնություններին կտրականապես դեմ էր Բրիտանիան: 1918 թ. դեկտեմբերի 9-ին լորդ Քերզոնի գլխավորած Մեծ Բրիտանիայի Արևելյան կոմիտեի 42-րդ նիստը քննարկում է Ֆրանսիայի կողմից Հայաստանը գրավելու հարցը և կտրականապես ընդդիմանում է այդ գաղափարին: Որոշվում է Ֆրանսիայի առաջ պայման դնել վերցնելու Հայաստանի կամ Սիրիայի մանդատը, բայց ոչ երկուսինը միաժամ-

[1] **Գաբրամանուկեան Ա.,** նշվ. աշխ., էջ 83:

[2] **Նուբարյան մատենադարան**, ֆոնդ Occupation francaise de le Cilicie 1919-1922, թղթապանակ 1:

անակ[1]: 1918 թ. դեկտեմբերի 25-ին գնդապետ Է. Բրեմոնը նշանակվեց «Հայաստանի և Կիլիկիայի կառավարիչ»: Սակայն 1919 թ. հունվարի 19-ին նրա պաշտոնը վերանվանվեց «Գրավված թշնամի հողամասերի հյուսիսային գոտիի գլխավոր կառավարիչ»: Այդ շրջանում Կիլիկիան, Սիրիան, Լիբանանը և Պաղեստինը բաժանվել էին 4 օկուպացիոն գոտիների: Կիլիկիան՝ Ադանա կենտրոնով, հյուսիսային գոտին էր: Արևմտյան գոտու կենտրոնը Բեյրութն էր, կառավարիչը՝ Քոփեն, արևելյանի կենտրոնը Դամասկոսն էր, կառավարիչը՝ Ալի Ռիզա փաշան, որը թուրքերի նահանջի ժամանակ բրիտանացիների կողմն էր անցել, իսկ հարավային գոտու կենտրոնը Երուսաղեմն էր, կառավարիչը՝ բրիտանացի գեներալ Մոնին[2]: 1919 թ. հունվարի 12-ին Արևելյան լեգեոնի հայկական 4 գումարտակներում կար 4124 զինվոր, սիրիական գումարտակում՝ 698[3]:

Այսպիսով, Հայկական լեգեոնը պետք է վերահսկեր մի տարածք, ուր վարչական իշխանությունը թուրք պաշտոնյաների ձեռքում էր, նահանջող թուրքական բանակը 25.000 հրացան էր բաժանել մահմեդական բնակչությանը, բավական մեծաքանակ թուրքական ոստիկանություն էր պահպանվել: Ադանայի նահանգում պահպանվեց 3.000-ոց թուրքական ժանդարմերիան, որը կազմվել էր մարտական փորձ ունեցող զինվորներից: Հրամանատարն էր Կովկասյան ճակատում դիվիզիայի հրամանատար եղած Հաշիմ բեյը[4]: Թուրքական զինված ուժերի պահպանումը Կիլիկիայում հետագայում լուրջ խնդիրներ առաջացրեց ոչ միայն հայերի, այլ նաև ֆրանսիացիների համար:

Կիլիկիայում, Սիրիայում և Լիբանանում 1919 թ. սկզբներին կար ընդամենը 13 ֆրանսիական գումարտակ՝ յուրաքանչյուրը մոտ 1.000 զինվորներով, որոնցից 4-ը՝ հայկական, մեկը՝ սիրիական, 3 հեծելախումբ՝ 100-150 հեծյալներով[5]: Դա բավական աննշան ուժ էր տարածաշրջանում ամրապնդվելու համար: Կարծում ենք՝ նաև այս հանգա-

---

[1] **Huges M.,** Allenby and British Strategy in the Middle East, 1917-1919, London, 1999, p. 119:

[2] **Պոյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 187, 199:

[3] **Գարամանուկեան Ա.,** նշվ. աշխ., էջ 44:

[4] **Саакян Р.,** Франко-турецкие отнишения и Киликия, с. 84.

[5] **Աթանասեան Ա.,** նշվ. աշխ., էջ 23:

մանքով է պայմանավորված, որ ֆրանսիացիները հրաժարվեցին մեծացնել Հայկական լեգեոնը: Ինչպես տեսանք, արդեն իսկ 4 նոր գումարտակներ կազմավորելու համար հայեր էին կամավորագրվել: Փաստորեն, եթե հայկական գումարտակների թիվը դառնար 8, ապա ողջ Մերձավոր Արևելքում կմնար միայն 9 ոչ հայկական գումարտակ: Ֆրանսիան վախենում էր այդ հեռանկարից, մանավանդ, արդեն իսկ բարձրաձայնվում էր ԱՄՆ-ի հովանու ներքո միացյալ Հայաստան կազմավորելու հարցը: Մեծաքանակ հայկական բանակի առկայության դեպքում Ֆրանսիան չէր կարողանա խոչընդոտել դրան: Պետք է խոստովանել, որ ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի կողմից Հայաստանի և Կիլիկիայի մանդատի նկատմամբ առաջ քաշված պահանջը, սակայն այդ ուղղությամբ որևէ գործնական քայլ չանելը և հետագայում դրանից հրաժարվելը, հանգեցրեց հայ-ֆրանսիական հարաբերությունների սրմանը: Դա ի վերջո հանգեցրեց Հայկական հարցի ձախողմանը և Կիլիկիայի ողբերգությանը:

1919 թ. փետրվարին գնդապետ Է. Բրեմոնը Բեյրութում հայտարարեց, որ իրենց նպատակը Հայաստանը գրավելը կամ գաղութացնելը չէ, այլ այն կազմակերպելը և հայերին հանձնելը: Նա նշում էր, որ Ադանա հասնելուն պես թուրքերին հեռացնելու էր պաշտոններից և հայացնելու էր կառավարման համակարգը, իսկ արդեն գոյություն ունեցող հայկական 4 գումարտակներին ավելացնելու են 8 նոր գումարտակներ, որի արդյունքում Հայաստանն ունենալու էր 12 գումարտակներից կազմված զուտ հայկական բանակ[1]: Սակայն այդ խոստումներից ոչ մեկին վիճակված չէր իրականություն դառնալ: Պետք է նշել, որ Բրեմոնը իրականում հակված էր մեծացնելու հայկական զինուժի թվաքանակը, սակայն դա խոչընդոտների էր հանդիպում լեգեոնի հրամանատար Լ. Ռոմիոյի և այլ ֆրանսիացի սպաների կողմից, ովքեր Կիլիկիա մտնելուց հետո բավական սերտ կապեր էին հաստատել թուրքերի հետ[2]: Երկրամասն ազատագրելուց հետո նկատվեց հայ-ֆրանսիական շահերի բախում, որը կապված էր Կիլիկիայի ապագայի

[1] **Հայնոյ հերոսամարտի 90ամեակի գիտաժողովի նիւթեր եւ վաւերագրեր ու լուսանկարներ,** Կազմեց եւ խմբագրեց՝ դոկտ. Անդրանիկ Տագէսեանը, Պէյրութ, 2013, էջ 54:

[2] **Պօյաճեան Տ.**, նշվ. աշխ., էջ 222-223:

հետ: Հայերը հույս ունեին, որ Ֆրանսիան ինքնավարություն է շնորհելու Կիլիկիային, իսկ լեգեոնի զինվորների թիվը նախատեսվում էր հասցնել 20.000-ի[1]: Սակայն շուտով պարզ դարձավ, որ ֆրանսիացիները չեն պատրաստվում հայերին տված իրենց խոստումը կատարել: Հետզհետե փոխվեց Հայկական լեգեոնի նկատմամբ վերաբերմունքը: Ֆրանսիացիները շուտով համաձայնության եկան թուրքերի հետ, որպեսզի նրանց հանձնեն հայերի և անգլիացիների կողմից ազատագրված Կիլիկիան, ապա կազմակերպեցին լեգեոնի կազմալուծումը: Իրենց քայլերն արդարացնելու համար լեգեոնականների դեմ սկսվեցին բանսարկություններ, նրանց մեղադրում էին անկարգապահության ու դավաճանության մեջ:

1919 թ. հունվարի սկզբներին 7 հայ լեգեոնականներ, ովքեր դժգոհ էին Ֆրանսիայի վարած քաղաքականությունից ու հայ զինվորների նկատմամբ կիրառած խտրականությունից, հրաժարվեցին ծառայել և բարձրացան լեռները: Թուրք գյուղապետների խոսքերը լսելով՝ թե իբր լեգեոնականները կողոպտում են թուրքական գյուղերը և անպատվում թուրք կանանց, ֆրանսիական ջոկատը Ալեքսանդրետից հարավ գտնվող Հովուտ կոչվող վայրում պաշարում է նրանց: Ֆրանսիական հրամանատարությունը խոստացավ ներել լեգեոնականներին, եթե վերջիններս առանց դիմադրության անձնատուր լինեն: Սակայն նրանց հանձնվելուց հետո ֆրանսիացիները ստիպեցին լեգեոնականներին փորել իրենց գերեզմանները և ապա բոլորին գնդակահարեցին[2]: Այս դեպքին հաջորդեց Ալեքսանդրետի միջադեպը: Քաղաքի հրամանատարությունը հանձնված էր ալժիրցի մայորի, ով ընդգծված հակահայկական դիրքորոշում ուներ, իսկ ալժիրցի զինվորներն անընդհատ առիթ էին փնտրում վնասելու հայերին: Ընդհանուր առմամբ, մահմեդական ալժիրցիների համակրանքը թուրքերի կողմն էր և ցանկացած հնարավորության դեպքում նրանք աջակցում էին թուրքերին: Հետագայում, երբ քեմալական շարժումը ծավալվեց, ալժիրցիներից շատերը բացահայտորեն դասալքում և միանում էին Ֆրանսիայի

[1] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 422, ց. 1, գ. 675, թ. 13-14:

[2] **Թորոսյան Շ.**, նշվ. աշխ., էջ 116-117:

թշնամիներին[1]: Հետևաբար, շատ մեծ է հավանականությունը, որ այս միջադեպը նույնպես կազմակերպվել էր թուրքերի սադրանքով:

1919 թ. փետրվարի 16-ին մի խումբ հայ լեգեոնականներ Ալեքսանդրետի սրճարանում վեճի բռնվեցին ալժիրցի զինվորների հետ: Վերջիններս ուրախացող հայ լեգեոնականներից պահանջեցին դադարեցնել հայկական երգերը, փոխարենը արաբական երգեր լսել: Երբ լեգեոնականները հրաժարվեցին կատարել պահանջը, ալժիրցի զինվորները հարձակվեցին նվագողների վրա, ջարդեցին ջութակը, ապա փախուստի դիմեցին: Նրանք դարանակալեցին դրսում և երբ հայ զինվորները դուրս են գալիս սրճարանից, կրակում և վիրավորում են 2 լեգեոնականի: Դա առաջացնում է զինված բախում: Ալժիրցի զինվորների և լեգեոնականների միջև տեղի ունեցած վեճի ժամանակ սպանվեց 1, վիրավորվեց 3 հայ լեգեոնական: Միաժամանակ ալժիրցիներն ու թուրքերը կողոպտում են բազմաթիվ հայկական խանութներ ու տներ: Հաջորդ օրը ֆրանսիական հրամանատարությունը ձերբակալեց բոլոր հայ սպաներին ու ենթասպաներին, լեգեոնականներից պահանջեց զինաթափվել: Վերջիններից ստանալով բացասական պատասխան՝ ֆրանսիացիները սպառնացին ռմբակոծել լեգեոնականների զորակայանը: Ի վերջո, բրիտանացի գնդապետ Իսթվուդի միջնորդությամբ հայերը զենքը հանձնեցին: Միևնույն ժամանակ ֆրանսիացի մի սպա և ալժիրցի զինվորները քաղաքում գնդակահարում են հայ կառապաններին, սպանվում են 13, վիրավորվում 3-ը: Ալեքսանդրետի միջադեպը հետաքննող ռազմական ատյանը 1-15 տարվա բանտարկության դատապարտեց յոթ լեգեոնականների, իսկ 2 ալժիրցու՝ 1,5 տարվա: Դ գումարտակի 400 լեգեոնականներ դատապարտվեցին թիապարտության և աքսորվեցին, իսկ մնացած 400-ը բաժանվեց մյուս գումարտակների վրա[2]:

Այսպիսով, մի աննշան միջադեպի պատճառով 800 հոգուց կազմված չորրորդ գումարտակը ամբողջությամբ կազմալուծվեց և զորացրվեց: Ֆրանսիական հրամանատարությունը ոչ միայն չփորձեց փնտ-

[1] **Նուբարյան մատենադարան**, ֆոնդ Legion d'Orient-volontairs armenienne, թղթապանակ Legion d'Orient (Legion armenienne), թերթ 0061:

[2] **Պոյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 193-197:

րել մեղավորների, այլև գունազարդելով իրողությունը՝ աշխատեց հասարակական կարծիք ստեղծել Հայկական լեգեոնի և հայ լեգեոնականների անվստահելիության ու անկարգապահության մասին: Այս կերպ ֆրանսիական իշխանությունը փորձում էր արդարեցնել իրենց կողմից Դ գումարտակի զինարձակումը: Միաժամանակ հայ լեգեոնականների մատակարարումը չափազանց վատ էր, սնունդը չէր հերիքում: Այս ընդգծված հակահայ գործողությունները բնականաբար բացասաբար էին ազդում լեգեոնականների վրա, բարոյահոգեբանական ծանր մթնոլորտ էին ստեղծել: 1919 թ. գարնանը լեգեոնի զինվորների գրեթե կեսը ցանկանում էին թողնել ծառայությունը, իսկ Հալեպից, Պոլսից և այլ վայրերից ժամանած հազարավոր հայ երիտասարդներին ֆրանսիացիները մերժել էին զինվորագրել լեգեոնին[1]:

1919 թ. մարտի 26-ին Փարիզի ազգային համագումարի 26-րդ նիստում քննարկվեց Հայկական լեգեոնը ստեղծված ծանր վիճակից դուրս բերելու խնդիրը: Միհրան Տամատյանն առաջարկեց ավելի լուրջ ուշադրություն դարձնել Կիլիկիայի և Հայկական լեգեոնի խնդրին: Հակոբ Նևրուզը նշեց, որ լեգեոնը հայտնվել է թշվառ, լքված վիճակի մեջ, ֆրանսիական իշխանությունները լեգեոնականներին ստիպում էին նոր պայմանագրեր կնքել, սակայն նրանք սպասում էին Ազգային պատվիրակության հրահանգներին, որպեսզի պարզ լինի՝ հայկական թե՞ ֆրանսիական շահերին են ծառայելու: Հ. Նևրուզը անհրաժեշտ համարեց պահպանել Հայկական լեգեոնը և դարձնել հայկական բանակի կորիզը: Նույն ոգով արտահայտվեցին նաև Ա. Չոպանյանը, Ա. Խաչատուրյանը: Լեգեոնի հարցով զբաղվելու և համագումարին առաջարկներ ներկայացնելու համար ստեղծվեց Զինվորական հանձնախումբ[2]: Հաջորդ նիստում՝ մարտի 27-ին, Ա. Միքայելյանը ներկայացրեց Զինվորական հանձնախմբի տեղեկագիրը լեգեոնի մասին: Առաջարկվում էր բարելավել լեգեոներների վիճակը, լեգեոնի հետ կապված բոլոր հարցերը պետք է լուծվեին Ազգային պատվիրակության և ֆրանսիական կառավարության միջև կայանալիք բանակցությունների միջոցով, իսկ եթե համաձայնություն չկայացվեր, ապա Ազգային պատվիրակու-

[1] Նույն տեղում, էջ 225-226:

[2] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 430, ց. 1, գ. 27, թ. 41-46:

թյունը հանգանակելու էր 1 մլն ֆրանկի հիմնադրամ և սեփական միջոցներով պահեր Հայկական լեգեոնը: Այդ առաջարկն արժանացավ համագումարի հավանությանը[1]:

Հաշվի առնելով Ազգային համագումարի հանձնարարականը՝ Ազգային պատվիրակությունը ֆրանսիական կառավարությանն առաջարկեց հետաձգել Հայկական լեգեոնի զորացրումը մինչև հաշտության պայմանագրի ստորագրումը, բարձրացնել հայ զինվորների աշխատավարձը, բարելավել սնունդը, բծախնդիր լինել լեգեոնի սպաների ընտրության հարցում, աստիճանաբար հայ զինվորներին տալ սպայական կոչումներ, ուսումնասիրել Ալեքսանդրետի դեպքը և պատժել իրական մեղավորներին[2]: 1919 թ. մայիսի 31-ին Մ. Տամատյանը նշանակվեց Ամբողջական Հայաստանի պատվիրակության ներկայացուցիչ Կիլիկիայում և Սիրիայում[3]: Մ. Տամատյանը հունիսին ժամանեց Կիլիկիա, երբ լեգեոնի հայ զինվորների մի մասն արդեն զորացրվել էին: Դեռ նոր էր կազմալուծվել Դ գումարտակը, երբ Կիլիկիայի բրիտանական հրամանատարությունը դիմեց Արևելքում դաշնակցային զորքերի գլխավոր հրամանատար Է. Ալենբիին լեգեոնը կազմալուծելու հարցով: Ֆրանսիացի որոշ գործիչներ կարծես համաձայն էին այդ առաջարկի հետ: Այսպիսով՝ իրարից տարբեր պատճառներով և՛ բրիտանական և՛ ֆրանսիական իշխանությունները հակված էին վերացնելու հայկական զորամասը: Բրիտանացիների համար դա Կիլիկիայում ֆրանսիական դրոշի ներքո գտնվող միակ զորամասն էր, հետևաբար լեգեոնի լուծարումով ֆրանսիացիներն այդ երկրամասում ամրապնդվելու համար այլևս որևէ գործնական միջոց չէին ունենա: Ֆրանսիացիները, չհասկանալով այդ քայլերի հետևանքը, տուրք տալով թուրք-բրիտանական խարդավանքներին, վախենալով Կիլիկիայի նկատմամբ ԱՄՆ հավակնություններից, փորձում էին թուլացնել հայկական զինուժը: Սակայն բնականաբար այդ հարցին անհնար էր տալ շուտափույթ լուծում, մանավանդ որ դեռևս պետք էր Կիլիկիա տեղափոխել ֆրանսիական զինուժ, ուստի ֆրանսիական հրամանատարու-

[1] Տե՛ս նույն տեղում, գ. 28, թ. 1 – 9:

[2] **Պոյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 233-234:

[3] Նույն տեղում, էջ 236-237:

թյունը ձեռնամուխ եղավ Կիլիկիայում տեղաբաշխված լեգեոնի մնացած գումարտակների աստիճանական թուլացմանը: 1920 թ., երբ ֆրանսիական զորամասերը փոխարինեցին բրիտանականին, լեգեոնի այն ջոկատները, որոնց վրա էր դրված երկաթուղու անվտանգության ապահովումը Կիլիկիայի սահմաններում, հեռացվեցին իրենց դիրքերից: Նրանց փոխարինեցին ալժիրյան զորամասերը: Լեգեոնականներին հեռացրեցին Պոզանթի և Ենիճեի բոլոր կայաններից[1]:

Ֆրանս-բրիտանիական իշխանությունների կողմից անգամ քննարկվել է Հայկական լեգեոնը Մարոկկո տեղափոխելու հարցը[2]: Սակայն հաշվի առնելով 1916 թ. համաձայնագիրը, որով լեգեոնը մարտնչելու էր միայն Թուրքիայի դեմ՝ հայրենիքի ազատագրման համար, կամավորներին Մարոկկո տեղափոխելու հարցը մի կողմ դրվեց: Փաստորեն, և՛ Ֆրանսիան և՛ Անգլիան սկսում են շահագրգռվածություն դրսևորել լեգեոնը կազմալուծելու հարցում: Ֆրանսիայի և բրիտանական զինվորական իշխանությունների վարած քաղաքականության արդյունքում հայ մարտիկների շարքերում հուզումներ սկսվեցին: Նրանց հանդարտացնելու և հանգստացնելու նպատակով 1919 թ. հուլիսի 24-ին լեգեոնականների ուղղված նամակով հանդես եկավ Միհրան Տամատյանը, ով հորդորում էր լեգեոնականներին քաղաքականությամբ չզբաղվել, հնազանդ և հարգալից լինել ֆրանսիացի սպաների նկատմամբ[3]:

Դա որոշակի ազդեցություն ունեցավ հայ զինվորների վրա, որոնց զգալի մասը հրաժարվեց զորացրվելու մտքից: Լեգեոնականների վիճակը լրջորեն հուզեց նաև հայ սպաներին: Նրանց հուսալքությունը փարատելու նպատակով սպաները խորհրդակցություն գումարեցին և դիմեցին հայ մարտիկներին: Նրանք լեգեոնականներին համոզում էին, որ իրենց գործողություններում զուսպ լինեն և շարունակեն ենթարկվել ֆրանսիացիներին, քանի որ լեգեոնի պահպանման հարցը նախ և առաջ կարևոր է հենց կիլիկիահայերի պաշտպանության համար[4]: Սակայն հայ սպաների կոչն ու հորդորները, ֆրանսիական կառավարու-

[1] Նույն տեղում, էջ 203:

[2] **Գաբամանուկեան Ա.,** նշվ. աշխ., էջ 54:

[3] **Պօյաճեան Տ.**, նշվ. աշխ., էջ 243-246:

[4] **Թորոսյան Շ.,** նշվ. աշխ., էջ 124:

թյանն ուղղված խնդրագրերն ու հուշագրերը որևէ դրական արդյունք չտվեցին, Հայկական լեգեոնի քայքայման գործընթացը շարունակվեց: Արդեն 1919 թ. նոյեմբերի 26-ի ռազմական նախարարի հրահանգով թույլատրվում էր կազմալուծել Հայկական լեգեոնը, եթե կամավորների կողմից անհանդուրժելի արարքներ կատարվեին[1]: Սա համընկնում է այն շրջանին, երբ ֆրանսիական զորքերն արդեն սկսել էին Կիլիկիայում փոխարինել բրիտանականին: 1919 թ. դեկտեմբերի 2-ին գեներալ Ժուլիեն Դյուֆոն նշանակվեց Կիլիկիայի զինվորական ու քաղաքական կառավարիչ և հաստատվեց Ադանայում, իսկ Է. Բրեմոնը դրվեց նրա ենթակայության տակ, որպես վարչական մասի ղեկավար: Կիլիկիայի արևելյան շրջանների հրամանատարությունը հանձնվեց գեներալ Քերեթին, որի նստավայրն էր Այնթապը: Նրա քաղաքացիական վարչության հարցերով տեղակալ նշանակվեց գնդապետ Ֆլի-Սենթ Մարին: Ջարաբլուսի հրամանատար նշանակվեց գնդապետ Քափիթրելը, Ուրֆայինը՝ կապիտան Սաժուն, Մարաշինը և Ջեբել Բերեքեթինը՝ կապիտան Անդրեան[2]:

1919 թ. դեկտեմբերին, դաշնակից Մեծ Բրիտանիայից գաղտնի, Սիրիայի և Կիլիկիայի ֆրանսիական գերագույն կոմիսար Ժորժ Պիկոյի և Մուստաֆա Քեմալի միջև կայացան բանակցություններ, որով Ֆրանսիան պարտավորվում էր Թուրքիային վերադարձնել Կիլիկիան և երաշխավորում էր նրա անբաժանելիությունը[3]: Այդ քայլով հիմքեր էին դրվում թուրք-ֆրանսիական սիրախաղին, որի արդյունքում տուժեց Կիլիկիայի հայ բնակչությունը, ինչպես նաև մեծ հաշվով տանուլ տվեց Ֆրանսիան: Հայերի հանդեպ վերաբերմունքն ավելի վատացավ, երբ Ժ. Պիկոյին փոխարինեց գեներալ Հենրի Գուրոն՝ Սիրիայի և Կիլիկիայի ֆրանսիական բարձր կոմիսարի պաշտոնով: 1919 թ. դեկտեմբերի 17-ին Ֆրանսիայի վարչապետ և ռազմական նախարար Ժորժ Կլեմանսոյի հրամանով Արևելքի ֆրանսիական զորքերի հրամանատարին արգելեց Հայկական լեգեոնում երկու նոր գումարտակներ կազմավորելու գործընթացը և նույնիսկ առաջարկեց թողնել միայն եր-

[1] **Գաբամանուկեան Ա.,** նշվ. աշխ., էջ 52:

[2] **Պոյաճեան Տ.**, նշվ. աշխ., էջ 273:

[3] **Սահակյան Ռ.,** թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ., Եր., 1970, էջ 80:

կու հայկական գումարտակ, դրա փոխարեն մեծացնել սիրիականը և կազմել մեկ գումարտակ թուրքերից ու քրդերից[1]:

Ինչպես տեսնում ենք, ֆրանսիացիները չէին տիրապետում Մերձավոր Արևելքում տիրող իրավիճակին, ունեին սխալ պատկերացումներ տեղի ժողովուրդների մասին: Նրանք ամեն ինչ արեցին, որպեսզի իրենցից վանեն հայերին, ովքեր նվիրված էին Ֆրանսիային և պատրաստ էին ֆրանսիական բանակի կողքին հավատարմորեն մարտնչելու: Մինչդեռ ֆրանսիացիների բոլոր քայլերը թուրքերին իրենց կողմը գրավելու ուղղությամբ ձախողվեցին և հանգեցրին Ֆրանսիայի քաղաքականության ձախողմանը Կիլիկիայում Փաստորեն, 1919 թ. դեկտեմբերից սկսվեց լեգեոնի կազմալուծման գործընթացը, որը համընկնում է ֆրանսիական զորքերի Կիլիկիա մտնելու և Մ. Քեմալի հետ բանակցություններ սկսելու ժամանակաշրջանին: Ինչպես տեսնում ենք, Ֆրանսիան այլևս հայկական զինուժի կարիքը չուներ, ընդհակառակը, այն դիտվում էր խոչընդոտ երկրամասում ֆրանսիական քաղաքականության համար:

1920 թ. ապրիլի 22-ին Արևելքի բանակի ընդհանուր հրամանատար Հ. Գուրոն հեռագրեց Կիլիկիայի շրջանի հրամանատար Ժ. Դյուֆոյին՝ երկու հայկական գումարտակները վերածել մեկի: Իսկ մայիսի 1-ին Գուրոն հրահանգեց սկսել Հայկական լեգեոնի վերջին գումարտակի լուծարումը[2]: Զորացրումը հետաձգվեց միայն այն պատճառով, որ Հայկական զորամասը գտնվում էր Ջիհանում՝ շրջապատված և կտրված Ադանայից: Օգոստոսի 16-ին Կիլիկիայի հրամանատարը Հ. Գուրոյին առաջարկեց լեգեոնի լուծարման վերջնաժամկետ սահմանել սեպտեմբերի 1-ը[3]: Օգոստոսի 19-ին Հ. Գուրոյի, Ժ. Դյուֆոյի, Ֆլի-Սենթ Մարիի կողմից ուղերձ հղվեց Ջիհանում գտնվող լեգեոնականներին, ուր շնորհակալություն էին հայտնում տարիների անբասիր ծառայության համար և տեղեկացնում էին զինարձակման մասին: «Այնթապէն Մերսին, Եփրատէն Տաւրոս տարածուած հողամասերը փառաւորուեցան ձեր բազմաթիւ ռազմական մեծագործութիւններով: Սպաներ, են-

[1] **Գաբրամանուկեան Ա.,** նշվ. աշխ., էջ 85:

[2] Նույն տեղում, էջ 87:

[3] Նույն տեղում, էջ 88:

թասպաներ, տասնապետներ եւ լէգէոնականներ, Ձեզմէ բաժնուելուս նախօրեակին կը փութամ յայտնել իմ խոր երախտագիտութիւնս ձեր զմայլելի ծառայութիւններուն համար: Ձեր քաջութեան ու եռանդի անկորնչելի յիշատակը պիտի պահեմ»[1]: Սրանով հրաժեշտ էր տրվում 4 տարի Ֆրանսիայի դրոշը պատվով առաջ տարած Հայկական լեգեոնի մարտիկների: Այսպիսով՝ 1919 թ. սկզբին շուրջ 5.000 զինվորից և 4 գումարտակներից կազմված Հայկական լեգեոնը մեկ տարի անց ուներ 2 գումարտակ և 1.500 զինվոր, իսկ 1920 թ. ամռանը՝ 1 գումարտակ՝ 750 զինվոր:

Այսպիսով, Հայկական լեգեոնը աստիճանաբար կազմաքանդվեց Ֆրանսիայի կողմից և դրանով ի դերև ելան Կիլիկիայում հայկական ինքնավարություն ձեռք բերելու հույսերը: 1920 թ. սեպտեմբերի 4-ին նաև Է. Բրեմոնը հեռացվեց Կիլիկիայի կառավարչի պաշտոնից, ով քիչ թե շատ հայանպաստ դիրքորոշում ուներ: Նրան փոխարինեց մայոր Հասլերը[2]: Չնայած 1916 թ. նոյեմբերին Լ. Ռոմիոն Կահիրեում հայերին իր հավանությունը հայտնեց Լոնդոնի մեջ կայացած համաձայնությանը և եգիպտահայերին կարդաց վարչապետ Ա. Բրիանի նամակը, ուր վերջինս իր լիակատար համաձայնությունն էր հայտնում Պ. Նուբարի պայմաններին[3], իսկ Ժ. Պիկոն և Ժ. Գուն ամեն կերպ վստահեցնում էին Ազգային պատվիրակության նախագահին, որ Կիլիկիային ինքնավարություն էր տրվելու, սակայն գրավոր համաձայնագրի բացակայությունը հնարավորություն տվեց Ֆրանսիային հետագայում հետ կանգնել իր խոստումներից: Երբ 1921 թ. Ֆրանսիայի Ազգային ժողովում որոշ պատգամավորներ բողոքեցին Կիլիկիայի հայերին լքելու համար, որոնց ինքնավարություն էր խոստացվել Ֆրանսիայի կողմից, վարչապետ Արիստիդ Բրիանը հայտարարեց, որ «պաշտոնական գրությունների ու փաստաթղթերի մեջ հետք չկա այդպիսի մի համաձայնության»[4]:

---

[1] **Պօյաճեան Տ.,** նշվ. աշխ., էջ 374:

[2] Նույն տեղում, էջ 365-366:

[3] Յուշամատեան Մեծ Եղեռնի 1915-1965, էջ 964:

[4] **Աղայան Ծ.,** Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976, էջ 770:

Հակառակ այն բանի, որ Ֆրանսիան դրժեց իր խոստումները՝ Հայկական լեգեոնին վիճակված էր կարևոր դեր կատարել կիլիկիահայության ճակատագրում: Հայկական լեգեոնը հասավ իր գլխավոր նպատակին՝ Կիլիկիայի ազատագրմանը: Հայ զինվորն էր, որը թուրքերի դարավոր լծից ազատեց հայրենիքի այդ հատվածը: Ցավոք, ֆրանսիական կողմը հետագայում դրժեց նախկինում տրված խոստումները, և այդպես էլ Կիլիկիային ինքնավարություն չտվեց: Լեգեոնականները զգալի ներդրում ունեցան տարագիրներին հայրենիք փոխադրելու, հայ բնակչությանը զինելու գործում, ինչպես նաև քեմալականների դեմ մղված ինքնապաշտպանական մարտերում: Հայկական լեգեոնի գործունեությունը հայոց պատմության փառավոր էջերից է և հայկական զինուժի մարտական բարձր որակների ակնառու վկաներից:

ԳԼՈՒԽ 2.

ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՋԻՆՈՒԺԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ 1914-1917 ԹԹ.

պ.գ.թ., դոցենտ Ա. Մ. Եփրիկյան

2.1. ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՋԻՆՈՒԺԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1914-1916 թթ.)

Առաջին աշխարհամարտում Ռուսաստանի կողմից Կովկասյան ռազմաճակատում ծավալած ռազմական գործողությունների ակտիվ մասնակիցը դարձավ հայ կամավորական զինուժը: Կամավորական շարժումը սկիզբ առավ աշխարհամարտի հենց առաջին ամիսներից, որի հիմնական նպատակն էր ոչ թե օժանդակել ցարիզմի նվաճողական քաղաքականությանը՝ ասիական աշխարհամասում նվաճել Արևմտյան Հայաստանը, ամրապնդել իր դիրքերը Իրանում, այլ օգտագործել նրա ռազմական ուժը՝ Արևմտյան Հայաստանը ազատագրելու համար՝ իրականացնելով հայերի երկար սպասված բաղձանքը:

Կամավորական շարժման պատմության ուսումնասիրությունը հայության պատմության մեջ ամենակարևոր և արդիական խնդիրներից մեկն է: Կովկասյան ճակատում հայկական զորամիավորումների ստեղծման և այդ գործընթացի հետ կապված հարցերի լուսաբանմանը անդրադարձել են մի շարք պատմաբաններ[1]: Սակայն կան մեծա-

[1] Տե՛ս **Վրացեան Ս.**, «Հայաստանի Հանրապետություն», Բէյրութ, 1958, **Սասունի Կ.,** «Արևմտյան Հայաստանը Ռուսաստանի տիրապետության ներքո»,, Բոստոն, 1937, **Հայ ժողովրդի պատմություն,** հատոր 6, Եր., 1981, **Արզումանյան Մ.,** «Հայաստանը 1914-1917 թվականներին», Երևան, 1969, **Աղայան Ծ.,** «Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից», Եր., 1976, **Հարությունյան Ա.,** «Կովկասյան ճակատ», 1914-1918», Եր., 1971, **Նազարյան Ա.,** Հայկական զորամասերի կազմավորումը Կովկասյան ճակատում (1914-1918 թվականներին), Եր., 1999, **Կարապետյան Մ.,** Հակական կամավորական խմբերը և ազգային գումարտակները Կովկասյան ռազմաճակատում (1914-1917 թթ.), Եր., 1999, **Կարապետյան Մ.,** Հայերի մասնակցություն Առաջին աշխարհամարտին կովկասյան ճակատում և կամավորական շարժումը, «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», N 5, 2002, էջ 33-42, **«Հայկական կամավորների խմբերը և ազգային**

թիվ չուսումնասիրված արխիվային փաստաթղթեր, ինչպես նաև ժամանակակիցների հուշեր[1], որոնք գալիս են օգնելու ավելի ամբողջական դարձնելու կամավորական զինուժի ստեղծման և ծավալած հայրենավեր գործունեության պատմաքննությունը: Փաստենք, որ հայկական կամավորական ջոկատների ստեղծման օգտին և պաշտպանությամբ այդ օրերին ոգեշունչ հռետորաբանությամբ հանդես եկան բազմաթիվ հայ հասարակական գործիչներ, կուսակցական-քաղաքական ուժերի ներկայացուցիչներ, անվանի հայդուկապետեր, ինչպես նաև հայ նվիրյալներ, որոնք տարբեր ժամանակներում սուրը մի ձեռքին, խաչը մյուսին մարտնչել են հանուն սեփական հայրենիքի ազատագրության:

1915 թ. օգոստոսի 12-ին հայ նշանավոր հասարակական գործիչ, ականավոր հայդուկապետ Անդրանիկին Թիֆլիսում ընդունում է Կովկասի կառավարիչ Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի ռազմական գործերով տեղակալ գեներալ Ա. Միշլաևսկին և շուրջ երկու ժամ զրուցում ռազմական հարցերի շուրջ: Ի վերջո, որոշվեց ձևավորել հայկական զորաջոկատներ: Անդրանիկին հանձնարարվեց ձևավորել և գլխավորել առաջին հայկական կամավորական գունդը[2]: Սեպտեմբերի կեսին այն հաստատվեց կառավարության կողմից: Գերագույն հրամանատարը համաձայնվեց առաջարկի հետ, և նոր ջոկատների ստեղծումը իրողություն դարձավ, ինչպես նաև ձեռնարկվեցին մի շարք կազմակերպական միջոցառումներ ստեղծվող ջոկատների նյութատեխնիկական, ֆի-

---

գումարտակները Կովկասի ճակատում (1914-1917), Եր., 2011, **Ներսիսյան Ա.**, «Ռուբեն», Եր., 2007 և այլն:

[1] Զերծ մնալով բոլոր հչրապարակումները թվարկելուց, մենք նշում ենք, որ քննարկվող հարցը վերաբերում էր ***Ա. Խատիսյանի*** «Քաղաքապետի հուշեր», **Ռուբենի** «Հայ հեղափոխականի հուշեր», /հատոր 7/, ***Գ. Չալխուշյանի*** «Կարմիր գիրք», ինչպես նաև Անդրանիկի, Սեպուհի, Ա. Եկարյանի և այլ գործիչների հուշագրություններին:

[2] 1915-1916 թվականներին Կովկասյան ճակատիմարտերում ցուցաբերած անձնական արիության և հայկական գնդի հաջողությունների համար Սասունցի Անդրանիկը պարգևատրվեց Գեորգիևյան 4-րդ աստիճանի մեդալով, Գեորգիևյան 4-րդ և 3-րդ աստիճանի խաչերով, Սբ. Ստանիսլավի 2-րդ աստիճանի սրի և Սբ. Վլադիմիրի 4-րդ աստիճանի շքանշաններով: Գունդը Անդրանիկի գլխավորությամբ քաջաբար մասնակցեց Մուղանջուղի /Դիլման/ տակ մղված մարտին՝ 1915 թվականի ապրիլի 15-18-ին, որում Կովկասը փրկվեց թշնամու ներխուժումից: 1918 թվականի մայիսի 16-18-ին Վորոնցովկա ավանի մոտակայքում գեներալ-մայորի կոչման արժանացած Անդրանիկի դիվիզիան անպատմելի ջանքերով զսպեց Օսմանյան զորքերին և նրանց արբանյակներին:

նանսական խնդիրների լուծման գործում (դրանք վերստեղծվեցին մի քանի անգամ՝ փոխելով կազմը[1]: 1915-ի ապրիլին Վորոնցով-Դաշկովը հաստատեց հայկական զորաջոկատի օրինակելի կազմը, որն իր թիվը հաստատեց 995 մարդ կազմավ (ներառյալ 952 ստորին մարտական շարքերը): Հայկական կամավորական զինյալ խմբերի անձնակազմի մասին լիարժեք ամփոփ թվեր չկան: Ուսումնասիրություններում բերվող ցուցանիշների միջև կան անհամապատասխանություններ՝ նշվում են տարբեր թվեր: Այսպես, Հայոց ազգային բյուրոյի՝ 1914 թ. դեկտեմբերի 28–ի նիստում խնդիր դրվեց կամավորների թիվը հասցնել 6000 հոգու: Փոխարքա Վորոնցով-Դաշկովին 1915 թ. հոկտեմբերին ուղղված զեկուցագրում Մեսրոպ արքեպիսկոպոսը, Ս. Հարությունյանը և Ա. Խատիսյանը հայտնում էին, որ կազմակերպված է 6 խումբ՝ 5000 հոգանոց անձնակազմով[2]: 1914 թ. հոկտեմբերի դրությամբ կամավորական ջոկատներում հաշվվում էր 2482 մարտիկ, 600 մարտիկ գտնվում էին Ալեքսանդրապոլում և Իգդիրում[3]: Իսկ 1915 թ. ձմռանը կամավորականների թիվը հասավ՝ 7000-ի[4]: Հայ կամավոր մարտիկների ընդհանուր թիվը 1915 թ. վերջին- 1916 թ. սկզբին կազմում էր 10 հազար մարդ, որից մարտական գործողություններին ընդհանուր առմամբ մասնակցում էին 8-8,5 հազարը[5]:

Իսկ արդեն 1915 թ. ապրիլի 6-ի թիվ 225 հրամանով հայկական կամավորական ջոկատները և նրանց հիման վրա ձևավորված չորս կամավորական դրուժինաները լուծարվեցին, որոնց փոխարեն մայիսին պետք է ձևավորվեին հինգ նոր հայկական դրուժինաներ[6]: Նշենք, որ 1915 թվականի մայիսի վերջին դրուժինաների թիվը սահմանափակվեց՝ մնաց 7 դրուժինա: Յուրաքանչյուր դրուժինա կազմված էր 4 վաշտից և 1 հետախույզ խմբից՝ 50 գումարտակային և 73 հեծելազորային ձիերով: Բոլորը պետք է կրեին միասնական համազգեստ՝ կա-

---

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 57, ց. 5, գ. 104, թ. 1-2:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 288, ց. 1, գ. 3, թ. 7:

[3] Տե՛ս **Ներսիսյան, Մ. Գ.** , Հայկական հարցի և հայ կամավորների մասին (1912-1915 թթ.). «**Պատմաբանասիրական հանդես»,** N 2, 1991, էջ 208:

[4] Տե՛ս **Վրացեան Ս.,** Հին թղթեր նոր պատմութեան համար, Բէյրութ, 1962, էջ 133:

[5] Տե՛ս նույն տեղում, էջ 55:

[6] Տե՛ս **Российский государственный военно-исторический архив** (РГВИА), ф. 2003, оп. 2, д. 338, л. 75:

նաչ ուսադիրներով՝ համապատասխան դրուժինաների համարներով: Յուրաքանչյուր վաշտ կազմված էր 237 մարտիկից, իսկ դրուժինայի ընդհանուր անձնակազմը հավասար էր՝ ըստ հաստիքի այն պետք է կազմեր 1057 մարդ, որից՝ 71-ը՝ հեծելազորային[1]: Պետական գանձարանի հաշվին պահվող հայ կամավորների քանակությունն ըստ խմբերի սահմանվեց՝ առաջին ջոկատի համար 1200 հոգի, մնացածների համար՝ 400-ական[2]: Վերոհիշյալի մեջ մտնող յուրաքանչյուր կամավոր ստանալու էր 10 ռուբլի ամսական ռոճիկ, որի համար ռուսական զորամիավորումների պետերը 5000-ական ռուբլի կանխավճար ստացան[3]: Հայ կամավորական զինուժի կազմակերպման գործում անուրանալի է Թիֆլիսի Հայոց Ազգային բյուրոյի դերակատարումը, որը ստանձնեց մի շարք կարևոր լիազորություններ: Թիֆլիսում ձևավորված Հայոց ազգային բյուրոն իր ձեռքին կենտրոնացրեց կամավորական շարժման ղեկավարումն ու դրա կազմակերպման աշխատանքը: Կովկասյան շտաբի ռազմական ֆոնդից Կամավորական ջոկատներին սկզբից հատկացվեց 25000 ռ., ապա՝ 51000 ռ., որից 45000-ը տրվեց Ա. Խատիսյանին՝ Անդրանիկի գլխավորած առաջին ջոկատի համար 200 ձի գնելու համար[4]: 1915 թ. փետրվարին Թիֆլիսում հրավիրված ռուսահայերի Համազգային համագումարին Զինվորական շտաբի տրված հաշվետվությունից տեղեկանում ենք, որ Ազգային բյուրոն տվյալ պահի դրությամբ կամավորական շարժման համար հավաքված 620 հազար ռուբլուց ծախսել էր 520 հազարը, ընդ որում նախատեսվում էր նաև 2,5 մլն տարեկան նախահաշիվ կամավորական զինուժի համար[5]: Կամավորական զինուժի կազմակերպման գործում փոքր տեղ չէր հատկացվում նաև զանազան կամավոր հանգանակություններին: Ողջ հայությունը կամավորների օգտին հանգանակեց 1440000 ռ., որից 1,021 մլն ռ. տվեցին ռուսահայերը, 342 հազար՝ ամերիկահայերը, 55

[1] **Նազարյան Ա.,** Հայկական զորամասերի կազմավորումը Կովկասյան ճակատում, էջ 50:

[2] Տե՛ս **ՐԳՎԻԱ,** ֆ. 2100, օո. 6, д. 6, л. 2-5:

[3] Տե՛ս նույն տեղում, л. 86:

[4] Տե՛ս նույն տեղում:

[5] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 4033, ց. 2, գ. 829, թ. 5:

հազար՝ Եգիպտոսից, մնացածը՝ Եվրոպայից: Ցարական գանձարանը հատկացրեց 4 մլն ռուբլի[1] :

Զգալի էր նաև նաև ամերիկահայերի նյութական աջակցությունը կովկասյան կամավորական շարժմանը: Ընդհանուր առմամբ, ԱՄՆ-ի արևելյան տարածաշրջանում (ներառյալ՝ Մերձավոր Արևելքը) այդ ծրագրերի իրականացմանը հատկացրել էր 30 մլն դոլար[2]: Ամերիկահայությունը Կովկասին կամավորներ տրամադրելուց բացի, զգալի նյութական նպաստ է հատկացրել, ընդհանուր առմամբ՝ շուրջ 342.000 դոլար[3]: Ուշագրավ է նաև այն, որ 1915 թ. Ամերիկայից Թիֆլիս են գալիս մոտավորապես 350 կամավոր, որոնք Պանդուխտի գլխավորությամբ մեկնում են Կարս և սկսում զբաղվել զինավարժություններով: Երբ Հովհաննես Ջանփոլադյանի ղեկավարությամբ ստեղծվում է Հնչակյան 6–րդ գունդը, Պանդուխտն իր ջոկատի հետ միասին մտնում է այդ զորամիավորման մեջ: Այդ է վկայում Էջմիածնի կաթողիկոսարանի դիվանապետ Բագրատ եպիսկոպոս Վարդազարյանին ՍԴՀԿ Կովկասի և Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բ. Սյունիքի 1915 թ. մարտի 13–ի: Սյունիքը պահանջում էր կուսակցությանը տրամադրել հնչակյան կամավորների համար ուղարկված «Ամերիկայի ազգային պաշտպանության հանձնախմբի» 1500 դոլար գումարը. «Կարևոր եմ համարում յայտնել ձեզ, որ հնչակեան հազար կամաւորներից բաղկացած 6–րդ Հայկական կամաւորական տրուժինայի հրամանատարն է ռուս բանակի սպայ հայազգի Յովհաննէս Ջանփոլատեանը, որի օգնականն է Ամերիկայից եկած գործիչ Մ. Պանդուխտը, որոնք ճանչցուած եւ հաստատուած են ինչպէս ռուսական սպայակոյտի, նոյնպէս եւ կուսակցութեան կողմից»[4]: Չէին անտեսվում նաև կորուստները, որոնք աննշան չէին և դրանց համալրման հարցերը ևս բազմիցս դիտարկվել են. 1914 թ. սեպտեմբերից մինչև 1915 թ. հունվար հայկական կամավո-

[1] Տե՛ս **Նազարյան Ա.,** նշվ. աշխ., էջ 63:

[2] **Հայկ Վ.,** Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը, Նիւ Եորք, 1959, էջ 994: **Թէոդիկ,** Ամէնուն տարեցոյցը, ԺԶ տարի, Կ. Պոլիս, 1922, էջ 284:

[3] Տե՛ս **Համառօտ տեղեկագիր Հ. Կ. Ազգային Բիւրօի գործունէութեան**. 1915-1917 թթ., Թիֆլիս, ա.թ., էջ 7:

[4] Տե՛ս **РГВИА**, ф. 2003, оп. 2, д. 338, л. 75:

րական ջոկատները տվեցին՝ 156 սպանված և 743 վիրավոր, որը կազմում էր կռվողների 36 տոկոսը[1]:

Կամավորականները վատ չէին հանդերձավորված: Նրանք կրում էին պաշտպանական գույնի երկար բաճկոններ մեծ գրպաններով, լավ որակի տաբաթներ: Որոշակի վկայությամբ, այն «ամերիկյան էր»: Կամավորականները սպառազինված էին ռուսական հրացաններով և շատերը ունեին «Մաուզեր» մակնիշի երկար ատրճանակներ: Կրծքավանդակի և գոտու վրա գտնվող փամփշտակալի ամբողջ զրահը հայ մարտիկներին տալիս էր ազդեցիկ ռազմական տեսք: Գլխին կրում էին սև կովկասյան, գրեթե ամբողջությամբ բուխարայից կարված փափախներ, ինչը նրանց նմանեցնում էր կազակներին: Ջոկատներն ունեին հարյուր ձիավոր հետախույզներ, որոնց տրամադրության տակ էին շատ լավ, ուժեղ, այծյամների պես ճարպիկ, ղարաբաղյան նժույգներ՝ գերազանց ֆիզիկական վիճակում: Բոլորը կազակների թամբերով էին: Նրանց խիզախ առաջնորդները հայ ազգային քաղաքական գործիչներ էին: Վերջիններս հագնված և սպառազինված էին իրենց մարտիկների պես, բայց առանց հրացանների: Ոչ ոք ռազմական ուսադիր չէր կրում, սակայն նրանց կարգապահությունը և զինվորական շարժման ողջ էությունը կամավորական սկզբունքներից էր բխում, հիմնված էին խորին ազգային եռանդի վրա, որի հիմնանպատակն էր՝ Հայաստանի ազատագրումը թուրքերից[2]:

Հայ կամավորական զինուժի հարցերին անդրադառնալիս, պատմաբանները գրեթե շրջանցել էր այդ ջոկատներում տիրող կարգապահության, վարքագծային դրսևորման հարցերը: Այս առումով դիտարժան է Վանի նանահանգապետ Ա. Մանուկյանի հայտարարությունը՝ ուղղված Վանի հասարակությանը. «Խիստ կերպով հրահանգում եմ բոլոր կամավորներին. 1. Կարող են անհրաժեշտ գործով քաղաք գնալ միայն պարապմունքներից հետո ազատ ժամերին մինչև երեկոյան ժամը 5-ը, 2. Ամեն կամավոր պարտավոր է քաղաք կամ որևէ տեղ գնալու համար ունենա անպայման հրամանատարից վավերացրած վկայա-

[1] Տե՛ս **Ներսիսյան, Մ. Գ.** , Հայկական հարցի և հայ կամավորների մասին (1912-1915 թթ.). **«Պատմա-բանասիրական հանդես»,** N 2, 1991, էջ 210:

[2] Տե՛ս **Елисеев Ф. И.,** Казаки на Кавказском фронте, М., 2001, с. 85-86:

կան, որտեղ պետք է պարզ կերպով գրված լինի՝ ուր և ինչ գործով գնալ և մինչև որ ժամը, 3. Միանգամայն արգելվում է քաղաք գնացողներին կրել զենք, 4. Բոլոր կամավորները պարտավոր են կրել կամավորական հագուստ, 5. Արգելվում է կամավորներին հաճախել քաղաքի ակումբները, քաղաքային զբոսավայրերը, գիշերել հյուրանոցներում: Վերոհիշյալ կետերը ճշտությամբ կատարելու համար որոշվում է գիշերային պահակներ ունենալ քաղաքում: Յուրաքանչյուր ***կամավորի «սեպուհ»*** պատիվն է հանուն մեր գաղափարական գործի բարձր պահել մեր կամավորական խմբերի կոչումը հայ և հարևան օտար ժողովուրդների աչքերում: Եթե կգտնվի մեր կամավորների շարքում այնպիսի եզակի անհատներ, որոնք իրենց վարքով կարող են արատավորել այդ վեհ կոչումը, պետք է այդպիսիների հանդեպ կիրառել ամենավեհ միջոցները»[1]: Այնուհետև ասվում էր հետևյալը. «Ի նկատի ունենալով, որ մեր զինվորները իրենց մոտ եղած զենքը ի չարն են գործ դնում, ամենախիստ կերպով հրամայում եմ վաշտապետին և հեծելազորի գնդի հրամանատարին բոլոր զինվորներից վերցնել դաշույնները և սրերը և հանձնել ցուցակով Երևանի պահեստապետ պ. Արտաշին»[2]: Փորձ էր արվում լուրջ կարգ ու կանոն հաստատել կամավորական զինուժի տարբեր օղակներում: Նկատի ունենալով, որ բանակում կամավորներից ոմանք պարապում են թղթախաղով, սրանով խիստ արգելվում էր այդ արատավոր զբաղմունքը և նման դեպքերի կրկնությունը, հակառակ պարագայում զանցառուները ենթակա էին ամենախիստ պատասխանատվության: Ըստ այդ փաստաթղթի խնդիր դրվեց այն դնել օրինապաշտ հիմքերի վրա, ըստ որի հրամայվում էր «վաշտապետին և նրանց օգնականներին, որ խիստ պատվիրեն կամավորներին, որպեսի նրանք չվնասեն այգիների ծառերը, ցանկապատերը, այդպիսիները ենթարկվեն պատժի»[3]: Դիտարժան է այդ փաստաթղթի մեկ այլ մաս ևս. «Ամբողջ ժողովրդին բացարձակապես կարգելեմ զինվորներեն և հայ կամավորներեն որևէ ապրանք, կենդանի և այլ իրեղեններ գնել: Գնված ապրանքները գողոնի ըլլալուն համար, ուր որ տես-

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 1267, ց. 1, գ. 11, թ. 77:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 3:
[3] Տե՛ս նույն տեղում, թ. 73:

նուին գրավելով տէրերուն պիտի հարցնեուին, և գնողներն ալ ծանր պատիներու պիտի ենթարկուեին» [1]: Սակայն փաստերը ցույց են տալիս, որ այդուհանդերձ չհաջողվեց խուսափել այդ խիստ արատավոր երևույթներից և կամավորական զինուժի շարքերից արմատախիլ անել նմանօրինակ բացասական երևույթները:

Ըստ հայ մամուլում տպագրված տարբեր հոդվածների[2], կամավորական ջոկատների միայն սննդամթերքի և այլ մանր ծախսերի համար պահանջվում էր 60 հազար ռուբլի, որոնք չէին ներառում սպառազինման, հագուստի, ուղևարձի, ձիերի և այլ կարիքների համար անհրաժեշտ գումարները: Կամավորականներից շատերը չուներին տաք հագուստ, իսկ բժշկական օգնությունը գրեթե լիովին բացակայում էր[3]: Անշուշտ մեծ դեր էր խաղում փորձի բացակայությունը, քանի որ հայ հասարակությունը առաջին անգամ էր ռազմաճակատ ուղարկում կամավորականների այդքան մեծ խմբեր: Բոլորը, առանց բացառության, անկախ իրենց սեռից և հասարակական դասից, պետք է տրամադրեին այն, ինչ կարող են՝ դրանով իսկ ցույցաբերելով իրենց քաղաքացիական հասունությունը[4]: Բացասական դեր էր խաղում նաև կամավորական ջոկատների առաջնորդների միջև այդ օրերին առկա անառողջ մրցակցությունը, երբեմն իրեց զորաջոկատը ավելի բարձր դասելու եսամոլ պահվածքը և այլն: Իհարկե, կամավորականը որպես զինվոր «հավատում էր, որ հայոց երկնքում երջանկության նոր արևածագ է ելնում»[5]: Դա անշուշտ չէր վրիպում ռուս հրամանատարության կողմից, որը տեսնում և ոչ հազվադեպ գնահատում էր հայ կամավորականների անձնուրացությունը և խիզախությունը: Ռուս հրամանատարությունը մեծագույն բավարարվածություն է ցուցաբերում հայ կամավորականների գործողությունների հանդեպ. «կամավորականի առավել

[1] Տե՛ս նույն տեղում, ֆ. 242, ց. 1, գ. 39, թ. 16:

[2] Այդ մասին տեղեկատվություն կա «Մշակ», «Հորիզոն», «Կովկասյան խոսք» և այլ թերթերի մի շարք համարներում, դրանցից բոլորի թվարկումը աննպատակահարմար է:

[3] Տե՛ս **Варданян М.,** Деятельность Армянского Добровольческого полка, «Армения», Марсель, N 29, 1915:

[4] Տե՛ս նույն տեղում:

[5] Տե՛ս նույն տեղում, N 28, 1915:

զարմանալի ունակությունն է իր տոկունությունը... երբեկ այնպես չի պատահել, վոր կամավորականը հառաչի կամ բողոքի»[1]:

Այս առումով դիտարժան է և բնութագրական 6 և 7-րդ գումարտակների ընդհանուր հրամանատարի օգնական Հ. Մելքոնյանի խոսքերը՝ ուղղված հայ կամավորներին. «Երեք բան է հարկավոր թշնամուն հաղթելու համար. ճիշտ կատարումը՝ իշխանավորի հրամանները, արագություն շարժումների մեջ, խիզախ վերաբերմունք դեպի թշնամին: Կամավոր զինվոր, Ձեզ այստեղ կանչել է հայրենիքի պաշտպանության ազնիվ տենչը, դուք ձեր հանգիստը, ապահով կյանքը թողել ու եկել եք քրիստոնեության և հայության դարավոր երկու թշնամիների դեմ կռվելու: Կռվի ազնիվ լինելը գաղափարական լինելն է, որ ձեզ մեկը դեպի մյուսը կտանի և թշնամուն կսարսափեցնի: Ազնիվ լինելը գաղափարական լինելն է, իսկ հրացանը և փամփուշտը՝ անհարժեշտ: Նախ պետք է հրացանով մեր կյանքը պահպանենք, ապա հացով, ջրով: Սիրիր այդ հրացանը, որը հերոսական պատմություն ունի: Եղիր հայդուկի հոգով և հայդուկի նման սիրիր, փայփայիր, խնայիր հրացանը: Հայդուկի սիրով սիրիր քո հրացանը, որը մեզ համար ամբողջ ավանդույթներ է ստեղծել: *Թշնամին գիտի, որ ոչ մի կրակ և ոչ մի արգելք չի կարող կանգնեցնել ռուս զինվորի գրոհը, երբ նա ուռայով գրոհ է տալիս: Թշնամին համոզված է, որ մենք խիզախ ենք և քաջ, արդեն մենք թշնամու մոտ կունենանք մի բարեկամ, որը մեզ հետ կօգնի դժվար իրադրություններից ելնելու, միայն մեր թշնամու վախը մեզ հետ միացած հրաշքներ կգործի: Անխնա լինել դեպի զինված թշնամին, քնքուշ դեպի թշնամու երեխան և ասպետ դեպի նրա կինը: Հինվոր, դու քո զենքի պատիվը բարձր պիտի պահես, և քո ազնիվ զենքը չպետք է թափահարես արյան մեջ, որ նրան կարատավորեն: Սիրիր թշնամու ինչքը, բայց նրանից ոչինչ մի վերցրու*»[2]:

Կամավորները հավատում էին ռուսների հաղթանակին, սակայն նաև գիտեին, որ համաձայն հին, վաղեմի ավանդույթի, նահանջելուց առաջ Թուրքիան «կսկսի ոչնչացնել հայ հպատակներին նույնիսկ

[1] Տե՛ս նույն տեղում, N 29, 1915:
[2] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 1267, ց. 1, գ. 11, թ. 104:

առանց որևէ անհնազանդության ցուցաբերման իրենց կողմից»[1]: Հայ ղեկավար օղակները ունեին ռուս կառավարության պաշտոնական հավատարմագրեր (Վ. Դաշկովի կողմից, որը գրավոր տեսքով կրկնեց վարչապետ Ի. Գորեմիկինը) այն մասին, որ հաղթական պատերազմից հետո «Ռուսաստանը կիրականացնի 1913 թ. բարեփոխումների ծրագիրը»[2], որ «բոլորը հպարտանում էին կամավորականներով...»[3]: Նույնիսկ շատ հայ բոլշևիկեր, որոնք կամավորական շարժման վերաբերյալ բացասական դրսևորում էին ցուցաբերում, ինչը նրանց կուսակցական շահերի և գաղափարախոսության մեկնակետից հասկանալի է, այնուամենայնիվ միացան կամավորական ջոկատներին՝ ելնելով հայրենասիրական պոռթկումից: Այսպես, Ա. Միկոյանը գրել է. ***«Մենք՝ առավել ռազմատենչ աշակերտներս, դիտարկում էինք կա-մավորական ջոկատները իբրև հնարավորություն՝ մանսակցելու ազգային ազատագրական պայքարին»***[4]:

Անկախ հայկական ջոկատների բոլոր արժանիքներից, նրանց և ռուսական հրամանատարության միջև հարաբերությունները միշտ չէ, որ իդեալական են եղել: Եթե կանոնավոր զորամասերի կարիքները պահանջում էին զոհաբերել կամավորականների շահերը, ապա գեներալները դա անում էին առանց որևէ տատանումների: Այսպես, 1915 թ. Գերագույն հրամանատարության Շտաբը կարգադրում է. «Քանզի մեր տրամադրության տակ չկան զենքի պաշարներ, համարում ենք բացարձակապես անհրաժեշտ բռնագրավել տեղացիների ջոկատներից մեր եռագիծ հրացանները... ձևավորված տեղացիների ջոկատները կարելի է սպառազինել ինչպես Բերդանի ատրճանակներով, այնպես էլ թուրքական հրացաններով»[5]: Փոխարինումը, իհարկե, անհամարժեք էր: Շատ փաստեր կարելի է բերել ջոկատների հրամանատարների դժգոհությունների վերաբերյալ, որոնք ոչ միշտ էին հիմնավորված և իրավիճակի սթափ գնահատման արդյունք չէինք: Երբեմն դրանց

---

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛՛ս **Микоян А. И.,** Дорогой борьбы, М., 1971, с. 41:

[5] Տե՛ս **Չիրակոսյան Ջ.,** Արևմտյան Հայաստանը Առաջին աշխարհամարտի տարիներին, Եր., 1971, էջ 414:

պատճառն էր այն, որ գործելով ռուսական կանոնավոր բանակի շարքերում, ջոկատները չէին օգտվում կենտրոնացված մատակարարումից, և դա ևս խլրտումների առիթ էր դառնում: Այդ առումով ուշագրավ է Անդրանիկի զեկուցագիրը՝ ուղղված Կովկասյան բանակի հրամանատարին 1915 թ. սետեմբերի 26-ին, որում նա գրում էր. <<Ես ստացա ընդհամենը 15000 ռուբլի հունիս և հուլիս ամիսների համար, որոնցով մարեցինք պարտքերը: Ժամանակավոր փոխարինող Սիմոն Գրուզինյանը (Ս. Վրացյան –Ա. Ե.) ստացավ 15000 ռուբլի միայն մարդկանց և ձիերի սննդամթերքի համար օգոստոս և սեպտեմբեր ամիսների դիմաց, ինչը վերաբերվում է վիրավոր կամ մարտերում մահացած ձիերին Չեռնոզուբով, Նազարբեկով և Տրուխին գեներալների գլխավորած ջոկատներում, ապա ես ոչ մի բան չեմ ստացել»: Եվ, այնուհետև, դրան ավելացնում է. «Տեղեկացնում եմ Ձերդ Գերազանցությանը, որ առաջին հայկական ջոկատը չի կարող առաջ մղվել անկախ իր համայն ցանկությունից: Ամեն դեպքում, սրանք երկորդական նշանակության խնդիրներ էին, որն արդյունք էր հենց կամավորական զինուժի ներսում առկա անառողջ տարակարծությունների և երբեմն էլ՝ սեփական ես-ի անհարկի դրսևորման: Ամեն դեպքում, կամավորական զինուժի նպատակադրումների մեջ ինչ-որ մի վեհության և ազգային նպատակադրումներին նվիրում կար, որը օտարներն էլ են զգացել: ***«The Literary Digest»*** ամերիկյան թերթի լրագրող Մելվին Չեթերսը Անդրանիկ Օզանյանի կերպարին անդրադառնալով, ուղղակի գրում էր. «Նա հայկական Ռոբին Հուդն է, Գարիբալդին և Վաշինգտոնը՝ մարմնավորված մեկ մարդու մեջ: Նա գերազանց հայրենասեր է, ում մասին ամենուրեք կերտվել են բալլադներ»[1]:

Իրականում կամավորականների ջոկատները օգտագործվում էին ոչ թե համահավաք ձևով, այլ ցրված: Պատերազմի ընթացքում միայն մեկ անգամ՝ 1915 թ. ամռանը, բոլոր ջոկատները միավորվում են Վանա լճի հարավային ափերի մոտ՝ գեներալ-լեյտենանտ Տրուխինի ենթակայության ներքո: Մնացած ժամանակ նրանք ցրված էին ողջ Կովկասյան ճակատով մեկ: Հրամանատարությունը չդիմեց կամավորա-

[1] Տե՛ս **General Andranik the Armenian Washington**, «The Literary Digest», 1920, 17 January, p. 90-92: Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 1082, ց. 2, գ. 80, թ. 142:

կանների թվի ընդլայնմանը և նմանց համալրմանը մեկ զորամասի ներքո, հավանաբար վերևից հուշված քաղաքական պատճառներով:

Ընդհանրապես, Թուրքիայի հետ պատերազմում հայ կամավորական զինուժը ցույց տվեց մարտական բարձր արդյունավետություն և ապացուցեց ժամանակակից պատերազմ վարելու և ռազմական կարգապահությունը պահպանելու ունակություն: Արդյունքում, ռուսական հրամանատարությունը կամավոր հայկական ստորաբաժանումներին տվեց կանոնավոր առանձին գումարտակների կարգավիճակ, իսկ 1917-ի սկզբից կովկասյան բանակի կազմում առանձին գնդեր: Այսպիսով, հայկական կամավորական զինուժի մասնակցությունը ռազմական գործողություններին արժևորման տեսանկյունից ունի արդիական հնչեղություն. այն կարևոր ավանդ ներդրեց ռուսական զորքի մի շարք հաղթանակների գործում, և հայ ազգային ազատագրական պայքարի 1914-1916 թվականների կոնկրետ արտահայտությունն էր:

2.2. ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՋՈԿԱՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ

Առաջին աշխարհամարտը մեծ հեղաբեկումներ մտցրեց հայ ժողովրդի պատմական ճակատագրում: Ռուսաստանի կողմից Կովկասյան ռազմաճակատում ծավալած գործողությունների ակտիվ մասնակիցը դարձավ հայ կամավորական զինուժը, ինչը որոշակի առումով մի կողմից իր մեջ կամավորության պահն ուներ, իսկ մյուս կողմից՝ իրավիճակից բխող պարտադրվածություն: Առաջին աշխարհամարտում՝ Կովկասյան ճակատում հայկական կամավորական ջոկատները մարտնչելով տարբեր վայրերում՝ իրենց ավանդը ներդնելով ռուսական զորքի տարած հաղթանակների գործում՝ շահագրգիռ մասնակցություն ցուցաբերեցին Արևմտահայաստանի թուրքերից ազատագրման գործում, ինչը պատմաքաղաքական առումով այլընտրանք չուներ: Պատմագիտական ժառանգության, առանձին ուսումնասիրությունների քննությունը ակնհայտորեն փաստում է, որ Առաջին աշխարհամարտի հայկական կամավորական զինուժի մասնակցությունը ռազմական

գործողություններին արժևորման տեսանկյունից ունի արդիական հնչեղություն: Հայ քաղաքական ուժերի շահագրգիռ մասնակցությունը կամավորական զինուժի կազմակերպմանը թելադրված էր իրավիճակով, որում իր քաղաքական լուծումներն ունեցան նաև ցարական իշխանությունները, որոնք հայերին ոչ շատ հստակ երաշխիքներ տվեցին ապագա հայկական ինքնավարության ստեղծման առումով:

Առաջին աշխարհամարտում հայ կամավորների զինյալ զորաջոկատների ակտիվ ներգրավումը գրեթե բոլոր կարևոր ռազմական գործողություններին այնքան ակնառու էր, որ դրան անդրադարձել են ինչպես հայ քաղաքական-կուսակցական ուժերը և մտավորական խավը, այնպես էլ ռուսական բարձրագույն հրամանատարությունը, որում և դրվատանք կա, և ինչ-որ տեղ էլ կան թերագնահատման տարրեր: Այսպես, գեներալ Կալիտինը Ամենայն հայոց կաթողիկոսին ուղղված իր հեռագրում խոսելով 3-րդ կամավորական ջոկատի մասին, գրում է. «3-րդ ջոկատը հատկապես առանձնացավ նոյեմբերի 19-ին, երբ թուրքերը սկսեցին Սարիղամիշի ճակատամարտը, Ալագյազ գյուղի շրջակայքում ջոկատը ստիպված էր դիմադրել թշնամու հարձակմանը: Այդ լարված բախման ընթացքում, կամավորականները ունեցան մոտ 30 սպանված և 40 վիրավոր, սակայն չզիջեցին իրենց դիրքերը, մինչև որ օգնության հասան պահեստային զորքերը: Հակառակորդը խայտառակ կերպով ջախջախված էր: Ես մեծ դժվարությամբ և ցավով եմ բաժանվում ջոկատի հրամանատարի և իր կամավորականների հետ: Միաժամանակ ուրախ եմ, որ կարող եմ ողջ բանակի անունից շնորհակալություն հայտնել բոլոր կամավորականներին իրենց ինքնուրաց վարքի համար»[1]: Կովկասյան ճակատում ռուսական զորքերի բարձրագույն հրամանատարական կազմում ընդգրկված հայազգի գեներալ Թ. Նազարբեկյանը ևս անդրադառնալով կամավորական զինուժի գործողություններին, 1916 թ. օգոստոսի 17-ին գրում է 3-րդ կամավորական ջոկատի հրամանատարին, ով աչքի ընկավ Բիթլիսի համար մղված մարտերում, գրել է. «Բազմիցս վտանգելով ձեր կյանքը՝ դուք ցուցաբերեցիք խիզախություն և անձնական օրինակով ազդեցություն

[1] Տե՛ս **Корганян Г.,** Участие армян в первой мировой войны на Кавказском фронте, Париж, 1927, с. 8:

ունեցաք ձեր իսկ ենթակաների վրա: Բոլոր իրավիճակներում դուք կիրառեցիք ձեր եռանդը, ունակությունները, ջանքերը և ասպետական վերաբերմունքը գործի նկատմամբ հանուն հայրենասիրական ձեր զգացմունքի՝ զերծ մնալով անձնական հետաքրքրությունից[1]...»: Հայկական զինուժի մասնակցությունը Կովկասյան ճակատում տեղի ունեցած մարտերին չվրիպեց հայ քաղաքական դեմքերի ուշադրությունից, որոնք բազմիցս անդրադարձներ ունեցան այդ խնդրին: Ս. Վրացյանը իր հուշերում գրում է. «Գործող բանակի ռուս հրամանատարները գովեստով են խոսում նրանց մասին, գնահատում ու մեկ-մեկի ձեռքից խլում հայ գնդերը[2]»: Կովկասյան ճակատի լավագույն զորահրամանատարներից մեկը՝ Ֆ. Չեռնոբուզովը, առանձնացնելով մեծ հայդուկի՝ Անդրանիկի դերակատարումը թուրքական զորքերի հետ ռազմական առճակատումներին, ևս սկզբունքայնորեն և անաչառորեն կարևորում է վերջինիս հերոսական եռանդը ռազմական բախումներին. «Ես միշտ տեսել եմ Անդրանիկի մեջ եռանդուն հայրենասերի, Հայաստանի ազատության համար մարտիկի, ով անչափ սիրում է իր հայրենիքը: Ճանաչելով հայկական ջոկատների լիարժեք ինքնավարությունը՝ ես, իհարկե, երբեք չեմ միջամտել նրանց ներքին գործերին: Կարող եմ, այնուամենայնիվ, փաստել Անդրանիկի հոգատարությունը իր անձնակազմի հանդեպ, ում նա դիտում էր իբրև սեփական զավակների: Լինելով պահանջկոտ և խիստ, ինչը անհրաժեշտ էր նորաստեղծ ջոկատի բազմաբնավ ծառայողների առկայության պայմաններում, Անդրանիկը ինքն էր ծառայում իբրև քաջության և խիզախության օրինակ»[3]:

Կովկասյան ռազմական թատերաբեմի ակտիվ մասնակից և հրամանատար ռուս գեներալ Ա. Նիկոլաևը նույնպես կարևորելով հայ կամավորական ջոկատների խաղացած դերը ռազմական գործողություններին, նշել է, որ «ունենալով իր ենթակայության տակ երեք հայկական ջոկատ, ինքը կարող էր միայն նշել վերջիններիս «գովելի անդադար ծառայությունը իրենց ջոկատում»[4]: Առաջին աշխարհամարտի կարևոր ճակատամարտերից մեկի՝ Դիլմանի ճակատամարի ժամա-

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 20:

[2] **Վրացեան Ս**., Հին թղթեր նոր պատմութեան համար, էջ 182:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 1 ընդհ:

[4] Տե՛ս **Архив внешней политики России (АВПР)**, ф. Политархив, оп. 1, д. 3490, л. 47:

նակ՝ ապրիլի 18-ին՝ ժամը 5-ին, երբ գեներալ Նազարբեկովը հրամայում է հարձակման անցնել և գրավել Բարչիթլա գյուղը, դարձյալ բարձր գնահատման է արժանանում զորավար Անդրանիկի բացառիկ անձնուրացությունը. «Այդ խնդիրը Անդրանիկը փայլուն կատարեց: Կամավորական ջոկատները Անդրանիկի գլխավորությամբ, թուրքերի կրակոցների ներքո, եռանդով լի նետվեցին հակառակորդի ուղղությամբ՝ կռանալով մինչև գետինը, և գրեթե բոլորը, չգիտես ինչու, առանց փափախների: Թուրքերը չդիմացան նման ճնշմանը և լքեցին Բարչիթլա գյուղը... Որպես եզրափակում կարող եմ ասել, որ այդ խիզախ հարձակումը և Բարչիթլայի գրավումը շատ կարևոր նշանակություն ուներ Դիլմանի ճակատամարտի ընդհանուր հաջողության համար»[1]: Կամավորական ջոկատների մարտական հաջողությունները մեծ տպավորություն թողեցին նաև Ռուսաստանի և արտերկրի հայ հասարակության վրա: Կամավորներին նյութական և բարոյական աջակցություն ցուցաբերելու շարժումը ամենալայն ծավալներն ընդունեց, եղան քաջալերանքի և աջակցության բազմաթիվ խոսքեր: Հայ նշանավոր երգահան Ալ. Սպենդիարյանը այդ հիշարժան պատմապահին ստեղծում է իր *«Հայ մարտիկի երգը»* ձոնը, որը շատ արագ դառնում է բարեգործական համերգներում գրեթե մշտապես հնչող երգերից մեկը, որին զուգահեռաբար անցկացվում էին հանգանակություններ՝ հավաքված միջոցները կամավորական զորաջոկատներին համար՝ ի նպաստ կամավորների և հանուն Արևմտահայաստանի և հայության ազատագրման սրբազան գործի: Կար որոշակի նվիրումի մթնոլորտ:

Հայտնի է, որ ՀՅԴ կուսակցությունը միանշանակ վերաբերմունք չուներ ռուս-թուրքական պատերազմին հայերի մասնակցության հարցի առնչությամբ: Սկզբնական փուլում կուսակցության ներսում միասնական տեսակետ և հստակ ծրագիր չկար, և դա հասկանալի էր և ինչ-որ տեղ բխում էր իրավիճակի խճճվածությունից և բարդությունից: Այսպես, հայտնի գործիչներ Ա. Մանուկյանը, Ա. Վռամյանը դեմ էին կամավորական գնդերի պաշտոնապես կազմակերպմանը, գիտակցելով և ինչ-որ տեղ ոչ անհիմն տագնապելով, որ հայ կամավորական շարժու-

[1] Տե՛ս **Հայաստանի ազգային արխիվ** (այսուհետև՝ **ՀԱԱ**), ֆ. 370, ց. 1, գ. 77, թ. 12:

մը «Իթթիհատի» ձեռքին լինելու է գաղափարական-քաղաքական զենք՝ իրենց հայատյաց ծրագրերի իրականացումը արդարացնելու համար: Նրանք գաղտնի նամակներ և պատվիրակներ էին ուղարկում Ս. Էջմիածին և Թիֆլիս՝ Ամենայն Հայոց կաթողիկոսին և Ազգային բյուրոյի ներկայացուցիչներին, որպեսզի վերջ տան կամավորական շարժմանը, որպեսզի «վերապահ ու խոհեմ ընթացք բռնեն և չգրգռեն ոճրագործ իթթիհատական ոճրածարավ թուրք կառավարութեանը[1]»: Դրա հետ մեկտեղ դաշնակցականները հայերին կոչ էին անում չկորցնել իրենց ոգին. «Քանի դեռ կա գոնե մեկ հայ, գոյություն ունի հայկական հարցը», փորձելով իրենց ըմբռնման դիրքերից հանգստացնել ժողովրդին: Դաշնակցականները ռուսական հրամանա-տարությանը մեղադրում էին Վանում շրջանում ցուցաբերած պարտվողական դիրքորոշման և գործողությունների մեջ, որն առ այսօր դեռ չի լիովին պարզաբանվել, թե ինչքանով էին հիմնավոր այդ մեղադրանքները[2]: Նրանք պնդում էին, որ ձախողման պատճառները պետք է փնտրել Ռուսաստանի իրենց տեսանկյունից հայատյաց քաղաքականությունում, առանձին դեպքերում որոշ հրամանատարների և վարչական պաշտոնյաների հակահայ վարքագծում, կարծելով, որ նրանք ատում են հայերին՝ «որպեսզի ստեղծեն Հայաստանը առանց հայերի», արհեստականորեն կազմակերպելով Վանից հայերի վտարումը[3], բոլորովին անտեսելով թուրքական զինուժի հնարավորությունները և ռուսական զորքի ձախողման հնարավոր տարբերակները, որոնք տարբեր դարերում մղված պատերազմներում միշտ չէ որ հաջողակ են եղել և ի վիճակի են եղել հաղթել բոլոր ճակատամարտերում:

Այս դիտանկյունից էլ հաշվարկելով իրենց գնահատումները, Վանում կրած պարտությունից հետո հայկական ջոկատների հրամանատարներից շատերը, առաջին հերթին Անդրանիկը, իրենց մոտեցումներն էին առաջադրում, և «անգամ լրջորեն պնդում», որ ջոկատներն

[1] Տե՛ս **Գ.ծ.վարդ.Պալաքեան**, Հայ գողգոթան: Դրվագներ հայ մարտիրոսագրութենէն. Պեռլինէն դէպի Տէր-Զօր, 1914-1920, հ. Ա, Վիեննա, 1922, էջ 61:

[2] Տե՛ս մանրամասն **Վիրաբյան Վ. Հ.,** Տիգրան Դեվոյանցի հետախուզական գործունեությունը, Եր., ԵՊՀ հրատ., 2018, էջ 29-98:

[3] Տե՛ս **Российский государственный военно-исторический архив (РГВИА)**, ф. 2100, оп. 1, д. 577, л. 48:

այլևս չպետք է ենթարկվեն ռուսական բանակին, նրանք պետք է պարտիզանական պատերազմ մղեն կամ պետք է լուծարվեն, և դա այն պարագայում, երբ համահավաք կամավորականների ընդհանուր թվաքանակը չէր անցնում 10-12 հազարի սահմանագիծը և այն գործնականում ի վիճակի չէր խոշորածավալ ռազմական գործողություններին ակտիվ մասնակցություն ունենալ, իսկ պահեստազորային ռեսուրսներ գրեթե չկային, իսկ դա նշանակում էր ապավինել բախտի քմահաճույքին: Այդուհանդերձ, վերընշյալ նպատակով, այդ ջոկատների հրամանատարները՝ Անդրանիկը, Բաստուրմաճյանը (Արմեն Գարոն), Դրոն և այլք, Իգդիրում հանդիպում են անցկացնում, որտեղ ձայների մեծամասնությամբ որոշվում է կազմացրել ջոկատները և շարունակել աշխատանքները ավելի մեծ եռանդով[1]: Չնայած ռուսական հրամանատարության դեմ ուղղված մի շարք հայտարարությունների (օրինակ, իբր, հայկական ջոկատները հատուկ ուղարկվել են առաջնագծեր՝ ոչնչացնելու համար, կամ կապված Կովկասյան բանակի՝ Թուրքիայում հրամանատարության մեջ մուսուլմանական հրամանատարների օգտին), դրանից հեռու գործը չգնաց, առավել ևս որ նման պնդումները այնքան էլ հիմնավոր չէին և պաթետիկ-դեկլարատիվ բնույթ ունեին: Անդրանիկը, որը հակասական խառնվածք ուներ, այդուանդերձ կշռադատելով իրողությունները հայտարարում է, որ «անհրաժեշտ է կռվել ռուսների հետ միասին, քանի որ հակառակ դեպքում Ռուսաստանի կառավարությունը կձերբակալի բոլոր հայ ղեկավարներին և վրեժ կլուծի հայերից[2]»: Դա անհամեմատ ավելի խոհեմ մոտեցում էր:

Շատ փաստեր կարելի է բերել ջոկատների հրամանատարների դժգոհությունների վերաբերյալ, որոնք ոչ միշտ էին հիմնավորված և իրավիճակի սթափ գնահատման արդյունք չէին: Երբեմն դրանց պատճառն էր այն, որ գործելով ռուսական կանոնավոր բանակի շարքերում, ջոկատները չէին օգտվում կենտրոնացված մատակարարումից, և դա ևս խլրտումների առիթ էր դառնում:: Ամեն դեպքում, սրանք ամենաառաջնային նշանակության խնդիրներ չէին, որն արդյունք էր հենց կա-

[1] Տե՛ս **РГВИА**, ф. 2100, оп. 1, д. 577, л. 53:

[2] Տե՛ս նույն տեղում, л. 48:

մավորական զինուժի ներսում առկա անառողջ տարակարծությունների և երբեմն էլ՝ սեփական ***ես***-ի անհարկի դրսևորման:

Փաստը փաստ էր, որ ռուսական բարձրագույն հրամանատարությունը, որպես կանոն, բավականին դժկամորեն էր պարգևատրում կամավորականներին, արժևորում նրանց դերակատարումը ռազմական գործողություններին: Նույնիսկ գեներալ-լեյտենանտ Տրուխինը իր գրություններում բողոքում էր, որ իր «կողմից պարգևատրման ներկայացվածների մեծամասնությունը (Ա. Ա. - իպարգևատրման մասին) ապարդյուն էին, իսկ իմ ջոկատի փառավոր գործողությունները չարժանացան նույնիսկ չնչին խղճահարության կորպուսի հրամանատարի կողմից, որը գեթ մեկ անգամ չգովեց իմ ղեկավարած ջոկատի որևէ մի մասին, ինչն այդքան կարևոր է մարդկանց մեջ ուժի, եռանդի, մարտական ոգու և խիզախության պահպանման համար[1]»: Գերագնահատել այս պահը, կարծում ենք այնքան էլ տեղին չէ, քանզի բոլոր երկրների բանակներում էլ նմանատիպ երևույթները միշտ էլ գրեթե անհաղթարելի են եղել, և մյուս կողմից էլ, հասկանալի էր, որ ռուսական բանակի կազմում լինելով, կամավորական զինուժը չէր կարող այդ բացասական երևույթների դաշտից անմասն լինել:

Կովկասի փոխարքայի հատուկ բաժանմունքի պետ, Պիսարևսկին պնդում էր, որ, իբր, Անդրանիկը ցանկանում էր, որպեսզի հայկական ջոկատները անկախ լինեն ռուսական ռազմական հրամանատարներից և պարտիզանական պատերազմ վարեն թուրքերի և քրդերի դեմ՝ կանխելով հայերի ջարդը[2], ինչն անշուշտ, ռուսական բարձրագույն հրամանատարությունը սակայն չէր կարող թույլ տալ, առավել ևս, որ դա կարող էր վտանգել նրանց նկատմամբ հսկողությունը և աններդաշնակ վիճակ ստեղծեր ռուսական կանոնավոր բանակի և հայդուկատիպ հայկական զորաջոկատների փոխհամաձայնեցված գործողություններում, ինչպես նաև այլ բարդություններ կստեղծեր, առավել ևս որ հայդուկատիպ ջոկատները այնքան էլ չէին ձգտում տեղավորվել կանոնավոր բանակի կառուցվածքներում, ենթարկվածության և ան-

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 370, ց.1, գ. 76, թ. 9:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 48:

գամ մեկը մյուսի նկատմամբ: Իսկ Կամավորական ջոկատների հնարավորությունները ևս գերագնահատել պետք չի:

Հատկանշական է նաև 4-րդ կովկասյան կորպուսի հրամանատար, ծագումով հայ Պյոտր Ի. Օգանովսկու կարծիքը: Նա Թիֆլիս՝ Գլխավոր շտաբ ուղարկած իր գաղտնի 1914 թ. դեկտեմբերի 10-ի հեռագրում բազմանշանակ գնահատում է անում, որը հանգում էր հետևյալին. «Զգուշանալ հայերի դավաճանությունից պատերազմի ժամանակ խիստ անհրաժեշտ է: Իսկ մտահոգվելով պատերազմից հետո նրանց վարքագծի առնչությամբ՝ հարկավոր է խուսափել թիկունքում մնացած հայերին զինելուց, և, ընդհակառակը, զինել բոլոր զենք կրելու ընդունակ մարդկանց, խմբերի ձևով նրանց Թուրքիա ուղարկել այն հաշվով, որպեսզի նրանց արդեն զինված վիճակում դեպի հետ՝ Կովկաս, չթողնել: Եթե ներկա պահին հայերի տրամադրությունն ու միջոցները բավարար չափով չօգտագործվի, հետագայում չենք խուսափի լուրջ կշտամբումներից[1]: Կարծում ենք, այստեղ ևս այս գնահատականին անհրաժեշտ է մոտենալ որոշ վերապահումներով, քանզի հայկական կամավորական զինուժը կազմում էր ռուսական Կովկասյան մեծաքանակ զորքի մի փոքր մասը, և էապես չէր կարող ազդել իրադարձությունների մեծ արդյունքների վրա, իսկ միայն ոգևորությամբ նրանք հազիվ թե կարողանային արդյունավետորեն դիմագրավել միանգամայն մեծաքանակ թուրքական զորքին, ինչը ռուսների համար էլ հեշտերից չէր, և դա երևում է նախորդ բոլոր պատերազմների փորձերի քննությունից: Կամավորական զինուժն ուներ խնդրիրներ, այդ թվում ինչպես դրական, այնպես էլ ստվերոտ կողմեր, որոնք հասարակական-քաղաքական շրջաններում, ինչպես նաև առանձին կուսակցական-քաղաքական գործիչների մոտ իրարամերժ գնահատումների տեղիք են տվել:

Այստեղ տեղին է նաև հավելել կամավորական զորաջոկատներում տիրող կարգ ու կանոնին վերաբերող փաստերը, որոնք ավելի համոզիչ են դարձնում վերընշյալ տեսակետը, և ամբողջացնում արվող արժևորումները: Խոսելով կամավորական ջոկատներում տիրող կարգ ու կանոնի մասին՝ առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայաց-

[1] Տե՛ս **РГВИА**, ф. 2100, оп. 6, д. 6, л. 291:

նում Վանի նանահանգապետ Ա. Մանուկյանի հայտարարությունը՝ ուղղված Վանի հասարակությանը. «Ի գիտություն՝ Վանի հասարակությանը հայտարարեմ, որ հայկական Ա գունդի հրամանատար պ. Անդրանիկի կամավորներեն որևէ մեկը իր տուն ընդունողը կամ անունից զենք գնողները ամենածանր պատիժները պիտի ենթարկվեն: Քաղաքս եղող հայկական Ա. գունդի զինվորներուն կը յայտնեմ, որ մինչև վաղը՝ հունիսի 10-ին, քաղաքէս անմիջապէս պարտավոր եմ մեկնելու Ա. բանակը, հակառակ վարվողները ամենեն խիստ պատիժներու պիտի ենթարկվուին: Հաստատված ըլլալով, որ քանի մը կապալառուներ, օգտվելով տիրող անիշխանական վիճակնէն, մեկ կազակ կամ հայ կամավոր վերցուցած կը պտտին լքուած իսլամ գյուղերը և կը յուրացնեն հոն տեղ մնացած հացահատիկներ, որ այդպիսի ապրանքներ պիտի գրավեն և անսաստողները պիտի պատժվեն»[1]: Սա արդեն լուրջ փաստարկում է, որի հետ հաշվի չնստելը տեղին չի լինի:

Կամավորական շարժման վերաբերյալ բացասական դրսևորում էին ցուցաբերում նաև հայ մեծամասնականները, ինչը նրանց կուսակցական շահերի և գաղափարախոսության մեկնակետից հասկանալի է: Կամավորական շարժման ծավալման հենց սկզբից անլեգալ գործող հայ մեծամասնականները փորձում էին վարկաբեկել այն և նրա ղեկավարներին: Ուշագրավ է այն, որ 1915 թ. հոկտեմբերի 4-ին Բաքվում կայացած մեծամասնական խորհրդակցության ժամանակ նրանք քննադատության են արժանացնում հայ կամավորական շարժումը, և դեռ ավելին. Օսմանյան կայսրությունում իրագործված ցեղասպանության համար մեղադրվում են հայ ունևոր դասակարգը և ՀՅ Դաշնակցությունը, որտեղ խոսք չկար երիտթուրքերի մասին[2]: Այս բանը հիմնականում բացատրվում է այն հանգամանքով, որ նրանք այլ, ոչ ազգային բնույթ ունեցող մեկնակետ և տեսակետ ունեին ազգային հարցի վերաբերյալ, և ավելի շատ հակված էին տուրք տալ իրենց նեղ դասակարգային կուսակցական գործելակերպին:

Կամավորական խմբերի ստեղծմանը նպաստելով հանդերձ՝ ռուսական իշխանությունները, անհանգստացած հայերի կողմից ինքնա-

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 1267, ց. 1, գ.12, թ. 24-26:

[2] Տե՛ս **Շահումյան Ս.,** երկերի լիակատար ժողովածու (ԵԼԺ), հ. 3, Եր, 1978, էջ 26-29:

վարության հնարավոր պահանջից, հայ մարտիկներին անջատողական ու «ավտոնոմիստներ» անվանելով, ի վերջո խոչընդոտում են նրանց գործունեությանը: Կային նաև խիստ ծայրահեղական մոտեցումներ. այսպես, գերմանացի պատմաբան, պրոֆեսոր Յ. Բաբերովսկին գտնում էր, որ երբ ռուսական բանակը գրավեց Կարսը, Էրզրումը, Տրապիզոնը, հայկական «կամավորական ջոկատները» բազմաթիվ արյունալի հանցագործություններ կատարեցին Թուրքիայի բնակչության դեմ[1]: Պաշտոնական որոշ շրջաններ կեղծ լուրեր էին շրջանառում, իբր հայերը լավ չեն կռվում, վատ են վարվում թուրք ու քուրդ բնակչության հետ, թալանում են, չեն ենթարկվում, փախչում են և այլն: Հովի. Թումանյանը 1914 թ. նոյեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 15-ը ռազմաճակատ կատարած ուղևորության ընթացքում հանդիպում է սպա Սվիրինին: Ռուս զինվորների՝ թալանի և պատժից խուսափելու համար մեղքը հայերի վրա բարդելու մասին Թումանյանին պատմում է սպա Սվիրինը[2]: Բերվում է Արծափի օրինակը, որտեղ հրամայել էին «զինաթափ անել հայ թե քուրդ՝ ամենքին[3]»: Տեղեկացվում էր նաև գեներալ Դ. Աբացիևի թողտվությամբ ու հրահանգներով կատարված ռուսների թալանից ու իրենց պատճառած նեղությունների մասին, ինչպես նաև 250 խանութի կողոպտման և ավերման մասին ռուս կազակների կողմից[4]»: Փաստվում է մահմեդական ծագումով, և իբր թե ուղղափառ եկեղեցուն դավանող Աբացիևի մասին, որը հեգնանքով է խոսել հայ կամավորների մասին: Պոետը գրում է. «Աբացիևը հայ կամավորների մոտ հոխորտացել էր. եթե էդպես պետք է լինեք, լավն էն է, որ դուք չլինեք[5]»: Աբացիևը հայերին ոչ թե զինում, այլ զինաթափում էր: Նույնիսկ թշնամին գիտեր, որ հանձին այդ գեներալի՝ ինքը բարեկամ ունի հայերի դեմ[6]:

[1] Տե՛ս **РГВИА**, ф. 2100, оп. 1, д. 557, л. 55:

[2] Տե՛ս ***Թումանյան Հովհաննես***, Երկերի լիակատար ժողովածու (ԵԼԺ) 10 հատորով, հտ. 10, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ. 1999, էջ 385:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 357:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 371:

[5] Տե՛՛ս նույն տեղում, էջ 374:

[6] Տե՛ս նույն տեղում, էջ 381:

Ամբողջովին զրպատալից է Կամավորական ջոկատների մասին ադրբեջանցի պատմաբան Ջամիլ Հասանլու պնդումը, որ ստահոդ պնդման էր հանգել, թե իբր Կարսում հայ զինյալների կողմից իրականացված կոտորածը մեծ անհանգստություն է առաջացրել Ադրբեջանում, և հենց որ հայտնի է դարձել դաշնակցական գրոհայինների կողմից մուսուլմանների զանգվածային սպանությունների մասին, այդ թվում Կարսում գտնվող ադրբեջանցիների նկատմամբ, Ալի Մարդան-բեկ Թոփչիբաշևը, Բաքվից Աղաբալա Գուլիևը, ինչպես նաև Գյանջայի և Երևանի նահանգների ականավոր ներկայացուցիչները անմիջապես գնացել են Կարս՝ նպատակ հետապնդելով բացահայտել հանցագործությունների փաստերը, հրավիրել իշխող իշխանությունների ուշադրությունը «և խնդրել պաշտպանել մահմեդականներին հայերից, որոնք իբր ձգտել են արյունալի բախման»[1]: Այնուհետև մերկապարանոց ներկայացվում էր, թե մահմեդական պատվիրակությունը Ալի Մարդան-Բեկի գլխավորությամբ (Ալի Մարդան-բեկը հայտնի է եղել 1911-ի սկզբից ի վեր՝ որպես համաիսլամականների շրջանում ամենանշանավոր գործիչը[2]) իշխանություններին խնդրել է «Կարսի շրջանի հայերի ձեռքով զոհված թաթարների օգտին գումար հավաքելու թույլտվություն», որոնք հայտնվում են գեներալ Ա. Միշլաևսկու մոտ, որը նրանց լսելուց հետո թույլ է տալիս գումար հավաքել, «իսկ ամբարտավան հայերի դեմ խոստանում համապատասխան միջոցներ ձեռնարկել»[3]: Նմանատիպ ստահոդ ադրբեջանամետ մոտեցում է ցուցաբերում գեներալ Լ. Բոլոխվիտինովը, որն իր զեկույցում փաստազուրկ հայտարարություն էր արել, թե իբր երբ ռուսական զորքերը գրավեցին Վանի շրջանը, հայկական ջոկատները այստեղ քարը քարի վրա չեն թողել և ոչ ոքի չեն խնայել[4]:: Այս վերջին մերկապարանոց պնդումը ինքնին ժխտվում և մերժվում է ֆրանսիացի գիտնական Ժորժ դե Մալվիլի կողմից, որը իրավացիորեն կարծում էր, որ Թուրքիայի կառավարության

[1] Տե՛ս **Кавказкая глобализация**, «Армянские добровольцы на Кавказском фронте», том 8, выпуск 3-4, 2014:

[2] Տե՛ս **Государственный архив Российской Федерации** (ГАРФ), ф. 236, оп. 609, д. 48, л. 6:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս **РГВИА**, ф. 2100, оп. 1, д. 646, л. 7:

որոշման վերաբերյալ թեզը ոչ այլ ինչ է, քան «լեգենդ՝ հայերի բնաջնջման համար տխրահռչակ գաղտնի ծրագրի մասին՝ իրենց տեղը գրավելու համար», և «այն նույնքան անհիմն է, որքան պրիմիտիվ»[1]:

Ուշագրավ է նաև այն փաստը, որ երբեմն էլ քաղաքական նպատակներով հակահայ տրամադրությունները խրախուսելու և հայերին զսպելու նպատակով զանազան հորինվածքներ, կամ կիսատ-պռատ, զգացմունքային բնութի արտահայտություններ շահարկվում էին: Այդ շարքում է գտնվում Կովկասյան բանակի հետախուզական ծառայության ձեռքն ընկած Վանի հայկական ջոկատի կազմում կռված ոմն Արշակի մի անկապ և փաստազուրկ նամակ՝ ուղղված Ցյուրիխում (Շվեյցարիա) ապրող մի հայի, որտեղ ասվում է. «Վանը գրավվեց մայիսի 7-ին հայ կամավորների կողմից, զորքերը օգնության հասան: Այնտեղ մարզպետը Դաշնակցական Արամ (Մանուկյան) փաշան է (ինչպես ժողովուրդն է անվանում նրան): Ներկայումս մեր զորքերը շարժվում են Մուշի և Մանազկերտի ուղղություններով[2]»: Արշակն դժգոհում էր, որ «ազգի իրավիճակը դժվար է: Քաղաքացիական ծառայողների հայտնի խավերը թշնամաբար են տրամադրված հայերի նկատմամբ: Մամուլը ժամանակին ինքնավարության մասին չխոսեց, ինչը վատ տպավորություն թողեց հարևան ազգությունների և ռազմական շրջանակների վրա: Կամավորների հերոսությունը հրաշքների է հասնում, բայց Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարը ատում է հայերին, որի պատճառով էլ պաշտոնական փաստաթղթերի մեջ փոփոխություններ է մտցնում ի վնաս հայերի: Այս պատճառով հայերը բողոք են ներկայացնում փոխարքային: Մեր չափազանց պատրաստվածությունն այնքան վախեցրեց կառավարության շրջանակներին, որ ստիպված եղան կրճատել կամավորների թիվը: Նրանց տրվել են վատ զենքեր և ստիպել առաջնագծում կատարել ամենաբարդ առաջադրանքները»[3]: Ինքնին հասկանալի է, որ վերընշյալ պնդումներն իրենց ոչ մի տրամաբանություն չունեն:

---

[1] Տե՛ս **Де Малевил Дж**. Армянская трагедия 1915 года. Баку, 1990, с. 46:

[2] Տե՛ս **РГВИА**, ф. 2100, оп. 1, д. 557, л. 5:

[3] Նույն տեղում:

Եղել են նաև այլ ստահոգ փաստեր, թե իբր հայ «կամավորները» այն հույսով, որ ռուսական բանակի գրաված թուրքական հողերը կփոխանցվեն նրանց, անողոք վրեժխնդիր են եղել տեղի մուսուլմաններից: Այստեղ բացասական դեր է խաղում նաև 1915 թ. ապրիլի 5-ին իբր թե պատահաբար Կովկասի բանակի հրամանատարին ուղղված զեկուցագրի մեքենայագիր պատճենի մի օրինակ, որում նշվում էր, թե իբր «ցանկալի է բնակեցնել Ալաշկերտի, Դիադինի և Բայազետի՝ թուրքերի կողմից լքված հողատարածքները Կուբանի և Դոնի շրջաններից ներգաղթյալներով և ձևավորել կազակներից բաղկացած սահմանապահակ»: Այս փաստաթուղթը, որը ինչպես պարզվում է ռեալ իրողության վերլուծությունից, գործի չի վերածվում, սակայն հասցնում է հիասթափեցնել հայ քաղաքական առաջնորդներին: Եվ ինչպես լեգենդում, տեղեկացվում էր, որ իբր թե նամակը գաղտնի կորզվել է Ռոստովում բնակվող հայ փաստաբան Գրիգորի Չալխուշյանի կողմից և փոխանցվել Թիֆլիսի հայկական բյուրո: Այն ուղղված էր այս տարածաշրջանների ղեկավարներին՝ կատարելու բացատրական աշխատանք կազակների բնակչության շրջանում: Նամակում նշվում էր Դոնի և Կուբանի կազակների վերաբնակեցմանը խթանելու անհրաժեշտությունը Թուրքիայում գերեվարված տարածքներում. «անհապաղ պետք է ռուս բնակչությանը ծանոթացնել վերաբնակեցման հնարավորության հետ, հետագայում, թուրքերից ետ նվաճած տարածքներում»[1]: Կարծում ենք, որ այն ահագին մտքեր պղտորեց, սակայն ռուսական կառավարության կողմից ռազմավարություն այն այսպես էլ չդարձավ, իսկ փաստերի հետ հաշվի պետք է նստել:

1914-1916 թթ. Կամավորական շարժումը հայ ազգային ազատագրական պայքարի կոնկրետ արտահայտությունն էր: Այն նախատեսված մեծ չափերին չհասավ, ավելի գերակշիռ թիվ ունենալու դեպքում միգուցե պատմությունը այլ ընթացք կունենար Կովկասյան ռազմաճակատում: Որքան էլ տարբեր լինեն կամավորական շարժմանը տված գնահատականները, այն հայ ժողովրդի ազգային պայքարի դրսևորում էր իր բոլոր դրական և ստվերոտ կողմերով հանդերձ: Հայ կամա-

[1] Տե՛ս նույն տեղում, оп. 1, д. 646, л. 172:

վորական զինուժի ձևավորման և առաջին աշխարհամարտում ունեցած մասնակցության դասերը միանգամայն ուսանելի էին և արդի դիտարկումների տեսանկյունից արժեքավոր: Ազգային-ազատագրական պայքարի այս փորձը փոխանցվեց նորաստեղծ հայկական զինուժի նոր սերունդներին, իր շարունակությունը գտնելով ՀՀ 2-րդ՝ Խորհրդային Հայաստանի և Հայաստանի 3-րդ հանրապետության բանակաստեղծ տարեգրությունում, որն այսօր փորձում է լիարժեքորեն կայանալ և իր ծանրակշիռ լուման ներդնել հայկական պետության կայացման գործում, շարունակելով իր փառավոր նախնիների ավանդույթները:

3.3. 1917 Թ. ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍՐՈՒՄԸ ՆԱԽԻՋԵՎԱՆՈՒՄ: ՀԱՅԿԱԿԱՆ ՋԻՆՈՒԺՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՐՁԱՆՈՒՏՈՒՄ

1917 թ. Ռուսաստանյան հեղափոխությունները շրջադարձային դարձան հանդսացան աշխարհի բազմաթիվ ժողովուրդների համար: Այս իրադարձություններն իրենց շրջապտույտի մեջ առան նաև Հայկական մի երկրամաս ևս՝ Նախիջևանը: Նախիջևանահայության համար սկսվեց փորձությունների, սարսափի և մաքառումների նոր փուլ: 1917 թ. փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունից հետո, ինչպես ողջ Ռուսաստանում, այնպես էլ անդրկովկասյան երկրամասում առաջն քաշվեցին տեղական ինքնակառավարման, Ռուսական կայսրությունը ազգային սկզբունքով վարչատարածքային բաժանման ենթարկելու, կայսրությանը դաշնային կառուցվածք տալու ծրագրեր: Հայկական կողմն իր ներկայացրած բոլոր ծրագրերում Շարուր-Նախիջևանը դիտարկում էր, որպես հայկական վարչական միավոր, այնինչ մահմեդական (թաթարական) կողմն այդ տարածքները համա-

րում էր վիճելի[1], չխորշելով իր կողմից կազմակերպվող հրոսակների ծառայություններից:

Իրավիճակն ավելի բարդացավ հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, երբ ռուսական զորքերը հեռացան Կովկասյան ճակատից, իսկ թուրքական զորքերը սկսեցին ակնհայտ նախապատրաստություններ տեսնել Կովկասյան ճակատում հարձակման անցնելու համար, իրենց գործակալական ցանցով հեղեղելով Անդրկովկասի տարբեր շրջաններ: Այդ պայմաններում Անդրկովկասի մահմեդական գործիչների, ինչպես նաև մահմեդական, առավելապես կովկասյան թաթարների հակահայկական դիրքորոշումը հետզհետե ընդունեց ավելի ծայրահեղ դրսևորումներ: Նրանք ոգևորված էին պանթուրքիզմի ռասիստական ու ծավալապաշտական գաղափարախոսությամբ: 1917թ. հոկտեմբերին կովկասյան թաթարների «Մուսավաթ» կուսակցության հիմնադիր համագումարն ընդունեց մի ծրագիր, որն «արյան կանչ» էր՝ ուղղված բոլոր մահմեդականներին: Այն վերջիններիս կոչ էր անում միավորվել՝ պաշտպանելու մահմեդականների «ազգային ու մարդկային շահերը, նրան վերադարձնելու այն փառքը և կրոնը, որ նա քարոզում էր»[2]: Թուրքական գործակալները թափանցել էին նաև Նախիջևանի երկրամասի մահմեդականներով բնակեցված գյուղերը, հրահրելով տեղացիներին հակահայկական ելույթների: Մուսավաթականները, խաներն ու բեկերը նրանց հրահրումով ու ցուցումով սկսեցին կազմակերպել զինված ջոկատներ՝ պատեհ առիթի դեպքում հայերի նոր կոտորածներ կազմակերպելու մտադրությամբ: Նախիջևանի երկրամասի թաթարների ղեկավարն էր ցարական բանակի պաշտոնաթող գեներալ Ջաֆարկուլի խան Նախիջևանսկու որդին՝ գնդապետ Քերբալա խան Նախիջևանսկին, որն հայտնի էր իր հակահայկական դիրքորոշումով:

Պարսկական ռազմաճակատը լքած ռուսական զորամասերից Քերբալա խանը կանխիկ դրամով գնել էր հսկայական քանակի զենք-զինամթերք՝ 12 թնդանոթ, մեծ թվով արկեր, հրացաններ, փամփուշտներ, որոնք գաղտնի փոխադրել էր Նախիջևանի երկրամաս ու տեղա-

[1] Տե՛ս **Մելիքյան Վ.,** Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (1917 թ. մարտ-հոկտեմբեր), Եր., 1997, էջ 115-117:

[2] Տե՛ս **Ավետիսյան Հ..,** Հայկական հարցը 1918 թվականին, Եր., 1997, էջ 27:

բաշխել Յայջի, Նեհրամ գյուղերում և Նախիջևան քաղաքի թաթարական թաղամասում[1], դրանք հենակետ դարձնելով իրենց գործողությունների համար: Ստեղծված իրադրությամբ հայ ժողովրդին, այդ թվում Նախիջևանի հայ բնակչությանը, պարզապես պարտադրված էր ազգային նոր աղետից փրկվելու համար անհապաղ ստեղծել համապատասխան կառույցներ, այդ թվում սեփական զինուժ և պատրաստ լինել զինված դիմադրության: Այնինչ Նախիջևանում, որը նահանգային կենտրոնից՝ Երևանից ոչ մի ցուցում կամ հրահանգ չէր ստանում, 1917 թ. վերջերից տիրում էր կատարյալ անիշխանություն: Ճիշտ է, Նախիջևան քաղաքում ստեղծվել էր Հայոց Ազգային խորհուրդ, որի ղեկավար կազմի մեջ էին Կ. Աղայանը, Ն. Աստվածատրյանը, Լ. Մինասյանը, Մ. Մխիթարյանը, Մ. Թխոյանը, ինչպես նաև Ռազմական խորհուրդ, որի նախագահ էր ընտրվել գնդապետ Տեր-Սիմոնյանը, սակայն իրավիճակը մտահոգիչ էր: Մտահոգության պատճառն այն էր, որ Ազգային Խորհրդում հիմնականում տեղ էին զբաղեցրել խանութպաններ ու գինեվաճառներ՝ կամազուրկ, նախաձեռնողականությունից զուրկ, չափից ավելի զգուշավոր «գործիչներ», որոնց հիմնական մտահոգությունը տեղի մահմեդական ղեկավարների հետ ամեն գնով «լեզու» գտնելն էր: Դրան նպաստեց նաև Երևանի ոչ համոզիչ և ոչ վճռական ռազմավարությունը, ստեղծված սպասողական վիճակը:

Հայ բնակչության ինքնապաշտպանության հարցը գրեթե մատնված էր անուշադրության, ինչ էլ որ տեղի էր ունենում, կատարվում էր վերին աստիճանի անկազմակերպ, նույնիսկ անհանդուրժելի դանդաղ և քաոսային ձևով, որի հետևանքը, ինչպես կտեսնենք, շատ ծանր եղավ Նախիջևանի երկրամասի և նրա հայ բնակչության համար: Երևանում հրատարակվող ՀՅԴ տեղի կազմակերպության օրգան «Զանգ» թերթը Նախիջևանի Ազգային խորհրդի անդամների մասին գրում էր. «Գործերը գլխիվար են գնում, իսկ մի քանի թերուս քաղաքացիներ հասարակական մեծ գործչի հավակնություններով անընդհատ ժողովներում խոսում են անսիստեմ ու անկարգ՝ ցույց տալով, թե իրենք մեծ գործերի համար են ստեղծված, բայց գործնականում մեջտեղը ոչինչ չկա ու չի էլ լինի, քանի նոքա կարհամարհեն տեղացի հատու-

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 314, ց. 1, գ. 163, թ. 1 շրջ:

կենտ ինտելիգենտներին և իրենց գրպանները փակ կպահեն մանավանդ ասպիսի ծանր օրերում, երբ ժողովուրդները վայրկյանի արագությամբ արնաթաթախ գետին են գլորվում…»[1]: Խոսքը շատ դեպքերում գործի չէր վերածվում: Հարկ է ասել, որ այդ ժամանակաշրջանում՝ մինչև Անդրանիկի մուտքը Նախիջևան, երկրամասի հայության ղեկավարների մեջ առանձնանում էին երկուսը: Դրանցից առաջինը ցարական բանակի լեյտենանտ, անկուսակցական Երո (Անուշավան) Խաչատրյանն[2] էր, որը 1917 թ. վերջերին իբրև Անդրկովկասյան կոմիսարիատի լիազոր ներկայացուցիչ Թիֆլիսից գործուղվել էր Ջուղա՝ խնդիր ունենալով հավաքել և ամբարել ռուսական բանակի թողած զենքերն ու ռազմամթերքը: Այդ ժամանակվանից սկսած՝ նա մեծ հեղինակություն և հարգանք էր ձեռք բերել գավառի ողջ հայության մեջ, ամենից առաջ այն պատճառով, որ պահեստավորված զենքի զգալի մասն անվճար տրամադրել էր հայ բնակչությանը՝ ինքնապաշտպանության համար[3]: Մյուս նշանավոր գործիչը դաշնակցության Մեղրու, Գողթանի և Նախիջևանի շրջանների կազմակերպությունների ղեկավարներից ագուլիսցի Աշոտ Մելիք-Մուսյանն էր, որը ոչ պաշտոնապես ճանաչված էր նաև որպես Գողթանի հայության առաջնորդ[4]: Հայերի և կովկասյան թաթարների հարաբերությունները երկրամասում օրեցօր վատանում է: Ազատ երթևեկությունը գյուղերից քաղաք կամ քաղաքից գյուղեր վերացել էր, այն կատարվում էր միայն զինված խմբերով: թա-

[1] Տե՛ս **«Ջանգ»,** Երևան, 20 փետրվարի, 1918:

[2] Նախիջևանի համար մինչև վերջին հնարավորությունը պայքարած հայրենասեր այս գործչի մասին շատ քիչ բան է հայտնի: Արխիվային փաստաթղթերից տեղեկանում ենք, 1918 թ. սկզբին Ջուղայից Դարալագյազ ռազմական հանդերձանք տեղափոխելու մասին Երևանի Հայոց ազգային խորհրդի հանձնարարությունը չկատարելու պատճառաբանությամբ՝ 1918 թ. աշնանը Ե. Խարազյանը Երևանում ձերբակալվել է: Ցավոք, դեպքի մասին այլ մանրամասներ հայտնի չեն, ինչը թույլ կտար մեկնաբանել դեպքը: Նրա հայրենանվեր գործունեությունը Նախիջևանում թույլ է տալիս ասել, որ ամենայն հավանականությամբ դա թյուրիմացության հետևանք է եղել: Ինչևէ, 1919 թ. մայիսին նրան ներում են շնորհել, որից անմիջապես հետո նա անցել է զինվորական ծառայության ՀՀ բանակում: 1921 թ. հունվարին բոլշևիկների կողմից աքսորվել է Ռյազան, այնտեղից վերադառնալուց հետո զբաղվել է մանկավարժությամբ: 1938 թ. ձերբակալվել է և հարցաքննության ժամանակ իրեն դուրս է նետել ՆԳԺԿ շենքի երկրորդ հարկի պատուհանից ու զոհվել - Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 571, ց. 5. գ. 467:

[3] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 370, ց. 2, գ. 15, թ. 1:

[4] Նույն տեղում, գ. 32, թ. 2:

թարների զինված խմբերը պատուհաս էին դարձել ճանապարհ-վողների համար: Պարսկաստանից ռազմաճակատը լքած զինվորները գալիս էին, ով ինչով կարող էր, ռազմաճակատը լքող զինվորներով լեփ-լեցուն էին ոչ միայն գնացքների վագոնները, այլև վագոնների տանիքները: Ռազմաճա-կատը լքած զինվորների մի մասն էլ, եթե չէր կարողանում գնացք տեղափոխվել, գալիս էր ձիով, հետիոտն, մեկ կամ երկու օր հանգստանում էր Ջուղայում, Նախիջևանի զորանոցներում ու նորից շարունակում իր ճանապարհը:

Եթե հաջողվում էր պատահած կայարանում հայտնաբերել պահեստի շոգեքարշ և դատարկ վագոններ, զինվորները մահապատժի ենթարկելու սպառնալիքի տակ միացնել էին տալիս վագոնները, լցվում էին նրանց մեջ և նույն կարգով ստիպում որևէ մեքենավարի առաջ շարժել գնացքը: Նախիջևանի մեծ զորանոցները մերթ լցվում էին անկազմակերպ զինվորներով, մերթ՝ դատարկվում: Ջենք-զինամթերքի կողոպուտը սովորական երևույթ էր: Թաթարների զինված խմբերի սանձարձակությունները դարձել էին լուրջ սպառնալիք հայ բնակչության համար: Օգտվելով երկրամասում տիրող քաոսից, Քերբալա խանը զանազան բախտախնդիրներից կազմած իր ավազակային խմբերը ցրել էր գավառով մեկ՝ հրահանգելով կատարել ասպատակություններ, կողոպտել հայ գյուղացիությանը, սպանել ճանապարհներին հանդիպող հայերին, տիրել երիտասարդ հայուհիներին: Նախիջևանի թաթարներին ոգևորում էր Ռուսաստանի հեռացումը տարածաշրջանից և թուրքական բանակների ակտիվացումը: Թաթարների գլխավոր երազանքը գերմանա-թուրքական ուժերի հաղթանակն էր« որի արդյունքում թուրքերը կգրավեին Կովկասը և ռուսները վերջնականապես կվտարվեին տարածաշրջանից: Թուրք-թաթարական զինակցությունը մշտապես օրակարգի մեջ էր, որին նպաստեց նաև վրացիների կրավորական կեցվածքը:

1918 թվականի հունվարին թուրքական մի փոքրաթիվ զորամաս հասավ պարսկական Ջուլֆա և վերահսկողության տակ վերցրեց Արաքս գետի երկաթուղային կամուրջը: Թուրքերը կամրջի պարսկական կողմում հաստատել էին իրենց վերահսկողությունը, իսկ կամրջի ռուսական կողմի հսկողությունն անփոփոխ կատարում էր Ջուղայի հայկական վաշտը՝ Խաչատուր Հարությունյանի հրամանատարութ-

յամբ: Նախիջևանահայության մտահոգությունն ավելի էր մեծանում գավառը Ռուսաստանից վերջնականապես անջատելու Նախիջևանի մահմեդական Ազգային խորհրդի ծավալած եռանդուն գործունեության պատճառով: 1918 թ, փետրվարի 21-ին Նախիջևանի Հայոց Ազգային խորհուրդը նամակ էր ուղարկել Երևան, որով տեղյակ էր պահել, որ թուրքերը խորհրդին պաշտոնապես հայտնել են Նախիջևանի գավառն անկախ խանություն հայտարարելու իրենց մտադրության մասին[1]: Դրանից մի քանի օր հետո, մարտի 1-ին, Ազգային խորհուրդը հաղորդում էր Երևանի իշխանություններին, որ Նախիջևանի խանը հայերին առաջարկել է միացյալ պատգամավորություն ուղարկել պարսից շահի մոտ և խնդրել, որ նա իր իշխանության տակ առնի Նախիջևանի գավառը[2]: Երևանի սպասողական, ոչ նախաձեռնողական դիրքորոշումը հայտնի չափով ազդեց իրադրությունների վրա և խրախուսեց թաթարական անջատողականությունը, քանզի հայկական իշխանությունները իրենց հաշվարկները կառուցել էին դաշնակիցներից ակնկալվող աջակցության վրա:

Ահա այսպիսի իրավիճակում Նախիջևանի երկրամասի գյուղերում և քաղաքներում տարերայնորեն կազմակերպվեցին ինքնապաշտպանական կոմիտեներ, հաշվառման ենթակվեցին բնակչության մոտ գտնվող զենքերը, հատկապես ռուսական երեք գծանի «Մոսին» հրացանները, քայլեր ձեռնարկվեցին զինուժ ձևավորելու ուղղությամբ: Ահագնացող վտանգը երկրամասի յուրաքանչյուր հայ ընտանիքի թելադրում էր ինքնապաշտպանության նպատակով զենք ձեռք բերել, որը, սակայն, բավականին թանկ էր: Օրինակ, «Մոսին» հրացանը վաճառվում էր 2000 ռուբլով, փամփուշտի հատը՝ մեկ ռուբլի գնով: Որպեսզի զենք-զինամթերքի թանկության չափն ավելի պարզ լինի, նշենք, որ ցորենի փութը (16 կգ) այդ ժամանակ գնահատվում էր 20 ռուբլով:

Ինչևէ, մեծ ջանքերի գնով հայերին հաջողվեց ստեղծել որոշակի զինուժ՝ թշնամու ոտնձգություններին հակահարված հասցնելու համար: Նախիջևանի Հայոց Ազգային խորհրդի ենթակայության ներքո կազմվել էր երկու վաշտից բաղկացած մի զորամաս, որը ղեկավարում էր

[1] Տե՛ս **«Զանգ»,** Երևան, 2 մարտի, 1918:

[2] Տե՛ս նույն տեղում:

գնդապետ Տեր-Սիմոնյանը: Դրանից բացի, Ազգային խորհրդի ենթակայության տակ ստեղծվել էր նաև 70 հոգուց բաղկացած միլիցիա, որի ղեկավար էր նշանակվել բաշգառնեցի խմբապետ Ղազար Քոչարյանը: Հայոց ազգային խորհուրդ էր ստեղծվել նաև Ջուղայում, որի նախագահ էր ընտրվել հայրենասեր, բարեկիրթ և ուսյալ մի անձնավորություն՝ Վահան Խաչիկյանը: Ջուղայից ռուսական բանակի 7-րդ կորպուսի շտաբի հեռանալուց հետո տեղի Հայոց Ազգային խորհրդի ենթակայության ներքո ստեղծվեց մի զորամաս՝ բաղկացած 700 հետևակային և 300 հեծյալ զինվորներից: Զորամասի հրամանատարությունն ստանձնեց Երո Խարազյանը, որը նաև Ջուղայի ռազմական խորհրդի նախագահն էր: Ջուղայի հայկական զորամասի հիմնական ուժը պահակային գումարտակն էր, որի պետ էր նշանակվել լեյտենանտ Հայկ Հայրիկյանը: Գումարտակի կազմում էին Ջուղայի վաշտը՝ 100 զինվորով, հրամանատարը ջուղայեցի լեյտենանտ Խաչատուր Հարությունյանն էր, Աստապատի վաշտը՝ 70 զինվորով, հրամանատար՝ լեյտենանտ Գարեգին Կարապետյանը, Մեղրիի վաշտը՝ 70 զինվորով, որի հրամանատարն էր լեյտենանտ Ասատուր Մարտիրոսյանը: Ստեղծվեցին նաև Ղազանչիի, Բիստի և Փորոդաշտի ձիավոր հարյուրակները, որոնց հրամանատարը բիստեցի Օվի Բադալյանն էր: Կազմակերպվեց նաև պատժիչ ջոկատ 20 զինվորով, որի պետն էր Ջուղայի Հայոց Ազգային խորհրդի անդամ, իգդիրցի Անուշավան Ազատյանը, հրետանու կազմը՝ մեկ դաշտային և մեկ լեռնային թնդանոթներով և 25 հոգուց բաղկացած ջուղայեցիների սպասարկող անձնակազմով, որի հրամանատարն էր լեյտենանտ Համբարձում Շիկանյանը, նրա տեղակալը՝ Ստեփան Հովհաննիսյանը[1]. Որոշ ժամանակ անց գումարտակին միացան նաև ապրակունիսցի մի քանի տասնյակ զինյալներ: Գումարտակի մեջ ընդգրկվեցին նաև ոչ տեղացի մի քանի հայ տղաներ, որոնք Պարսկաստանից վերադառնալիս ճանապարհները փակ լինելու պատճառով մնացել էին Ջուղայում:

Պետք է ընդգծել, որ երբեմն հայկական կողմը ցուցաբերում էր ցանկալի նախաձեռնողականություն՝ իրավիճակին տեր դառնալու համար: Մասնավորապես հայկական կանոնավոր զորամասերը և

[1] Տե՛ս **Սիմոնյան Հր.,** Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, էջ 197-198:

Շխմահմուդ, Ալյաբաթ և Կուլիբեկիզայի գյուղերի զինված ջոկատները 1918 թ. հունվարին, ռուսական զորքի հեռանալուց անմիջապես հետո, իրենց հսկողության տակ վերցրին Նախիջևանի «մեծ» և «փոքր» զորանոցները: Այս «հանդգնությունը» կատաղեցրեց Քերբալա խանին, որը որոշել էր իր ջոկատներով ամրանալ զորանոցներում, սակայն ուշացել էր մեկ օրով: Այդ զորանոցներն ունեին չափազանց կարևոր դիրք: Նրանք գտնվում էին քաղաքի մոտակայքում, երկրամասի հանգուցային ուղիների վրա և իշխում էին ոչ միայն քաղաքի, այլ նաև շրջակա գյուղերի վրա: Ամիսներ շարունակ Նախիջևանում լարվող ազգամիջյան հարաբերություններն ի վերջո, 1918 թ. մարտի 1-ին վերաճեցին զինված առճակատման: Քերբալա խանը զինված ընդհարման առաջին տասնօրյակում հայերից պահանջում է անձնատուր լինել և հանձնել բոլոր զենքերը: Նա չի բավարարվում միայն քաղաքի հայերի զինաթափման պահանջով, այլև իր «վերջնագրերում» պահանջում է գավառի ամբողջ հայության զինաթափումը և զորանոցների հանձնումը իր ջոկատներին: Ծանր էր նաև փոքր զորանոցում գտնվող մարտիկների վիճակը, նրանք երեք կողմից շրջապատված էին և համառորեն պաշտպանվում էին: Միայն մութն ընկնելուց հետո էին կարողանում այստեղից կապ հաստատել մեծ զորանոցի հետ, իսկ քաղաքի հետ կապն առհասարակ կտրված էր: Համեմատաբար լավ էր դրությունը մեծ զորանոցում, այստեղ պաշտպանությունը լավ էր կազմակերպված, թիկունքը ապահովված էր, գյուղերի հետ կապը կայուն էր: Քերբալա խանի կողմից զինված հակամարտության առաջին օրերին մեծ զորանոցը գրավելու փորձերը ձախողվեցին, որից հետո գրավելու նոր փորձեր չեղան: Այս բախումներում իրենց խիզախությամբ ու սխրագործություններով աչքի ընկան դրանց ղեկավարներ Նեմկովը, Հայկ Գրիգորյանը, Գրիգոր Չրաղյանը, Նիկոլայ Գրիգորյանը, Մակար Չրաղյանը, Տիգրան Սահակյանը, Շամիլ Տեր-Հովհաննիսյանը, Ֆիլիպ Բաբայանը, Վանյա և Պետյա Կուզնեցովները, Լիպարիտ Պրոսյանը և շատ ուրիշներ: Քաջի մահով զոհվեցին Արտաշես Գասպարբեկյանը, Բեգլար Ավելյանը և ուրիշներ: Գրավելով այդ թաղամասերը՝ հայերը դուրս եկան օղակու-

մից, այժմ արդեն ազատ երթևեկություն էր կատարվում դեպի զորանոցներն ու այնուհետև Շխմահմուդ և հայկական մյուս գյուղերը[1]:

Զինված պայքարը շարունակվում էր, սակայն հայերի սպառազինության պաշարի, հատկապես փամփուշտների պակասը լուրջ մտահոգություն էր պատճառում հայ գործիչներին: Անհրաժեշտ էր օր առաջ կապ հաստատել Ջուղայի կայազորի պետ Ե. Խարազյանի հետ և նրանից օգնություն խնդրել, ինչը, սակայն, վերին աստիճանի դժվար գործ էր. բոլոր երթուղիները փակված էին« հայերի կապը Ջուղայի հետ ամիսներ ի վեր կտրված էր: Այդ բարդ գործը գլուխ բերելու պատասխանատվությունը ստանձնեցին գնացքի մեքենավար Վանյա Կուզնեցովը (Դարբինյան) և Տիգրան Սահակյանը: Նրանք ուղերթ ընտրեցին երկաթգիծը՝ նպատակ ունենալով միաժամանակ ստուգելու, թե՞ արդյոք այն սարքին վիճակում է: Նրանց ընկերացան Կարմիր վանքի դիրքապահներից երկու հոգի: Նրանք ցերեկները թաքնվում էին թունելներում, մութն ընկնելուն պես՝ շարունակում ճանապարհը: Երկու օրից բանագնացները հասան Ջուղա և Ե. Խարազյանին զեկուցեցին Նախիջևանի հայության վիճակի մասին: Նրանք պարզեցին նաև, որ միայն Նեհրամ կայարանի մոտակայքում երկաթգիծը վնասված է, և վերադարձի ճանապարհին արագորեն վերականգնեցին այն: Ե. Խարազյանը, լսելով բանագնացներին, Ջուղայի կայազորից ուղարկեց մեկ վաշտ, երկու թնդանոթ, ինչպես նաև արկեր, փամփուշտներ ու հրացաններ: Ամեն անգամ Նախիջևան սպառազինություն ուղարկելիս, նա, միաժամանակ, նամակներով խորհուրդ էր տալիս տեղի հայկական Ազգային խորհրդին վերջ տալ ազգամիջյան կռիվներին, սկսել հաշտության բանակցություններ: Նա մշտապես տեղյակ էր պահում նաև Կովկասյան ռազմաճակատում թուրքական զորաբանակի առաջխաղացման մասին, որի մասին տեղեկացվում էր ռադիոկայանի միջոցով[2]: Ե. Խարազյանը ստիպված էր իր ձեռքի տակ եղած ուժերի մեծ մասն իր տեղակալի՝ բիստեցի Օվի Բադալյանի ղեկավարությամբ օգնության ուղարկել հայկական գյուղերին: Շարժվելով նախ Արաքսի, ապա և Երնջակ (Ալինջա-չայ) գետի ուղղու-թյամբ ջոկա-

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 314, ց. 1, գ. 163, թ. 11:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 12:

տը սանձեց ու պատժեց մի քանի անհանգիստ թուրքական գյուղեր և մաքրեց ճանապարհը դեպի Գողթան, որը մեծապես վտանգված էր[1]:

Գավառի բախտը, այնուամենայնիվ, որոշվում էր Նախիջևան քաղաքում, որտեղ կռիվները շարունակվում էին: Իրադրությունը քաղաքում կտրուկ փոխվեց, երբ մարտի 20-ին Զնաբերդ գյուղից հայերին օգնության եկան 50-ի չափ մարտիկներ: Հայկական ուժերը դիմեցին վճռական հարձակման և պարտության մատնեցին թաթարներին, որոնք, թողնելով Խոշլու թաղը, ամրացան քաղաքի հարավային թաղում: Արյունալի ընդհարումները շարունակվեցին: Խիստ ծանր վիճակ էր ստեղծվել Երնջակ գավառակի և հատկապես նրա կենտրոն Ապրակունիս գյուղի համար: Հարձակման ենթարկվելով հարևան թուրքական գյուղերի կողմից, Ապրակունիսը կտրվել էր հայկական մյուս գյուղերից: Որոշակի անկազմակերպվածությունը իր դերն էր խաղում, ինչպես նաև կտրվածությունը Երևանից և հայկական այլ կենտրոններից: Շուտով Ջուղայի ջոկատը շարժվեց դեպի Ապրակունիս: Արազին թուրքական գյուղի զինյալները ճանապարհին դիմադրություն ցույց տվեցին, բայց երկար դիմադրել չկարողացան և փախուստի դիմեցին: Ջոկատն առանց բնակիչներին վնաս տալու անցավ գյուղի միջով և երեկոյան հասավ Ապրակունիս, որի վիճակը սպառնալից էր: Թողնելով գյուղի պաշարումը, թշնամին նահանջեց: Ապա նույն օրը Ջուղայի հայ մարտիկները գրավեցին Բանանյարը և Քռնան, որտեղ թուրքերը, խուճապով նահանջելով թողել էին մի լեռնային թնդանոթ: Մյուս օրը հայերը գրավեցին Ապրակունիսի պաշարմանը մասնակցած Սալթաղ, Խանաղա և մի քանի ուրիշ գյուղեր[2]: Համոզվելով, որ հայերին հաղթել չեն կարող և մարտերի շարունակման դեպքում իրենք ծանր կորուստներ կունենան և վերջնականապես կջախջախվեն, թուրքերը հաշտություն խնդրեցին: 1918 թ. ապրիլի 14-ին հայերի և թաթարների միջև ստորագրվեց հաշտության փաստաթուղթ: Կայացած հաշտության հիման վրա Մակուից եկած կռվող ուժերը հեռացան քաղաքից: Գավառը և քաղաքը կառավարելու համար երկու կողմից ընտրվեցին մեկական կոմիսարներ. հայերի կողմից կոմիսար ընտրվեց Խարազյանը, իսկ

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 314, ց. 1, գ. 163, թ. 12:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 370, ց. 2, գ. 45, թ. 5:

թուրքերի կողմից՝ Ռահիմ խանը: Երկու կոմիսարների ենթակայության ներքո ստեղծվեց երկու ժողովուրդների ներկայացուցչություններից կազմված խառը միլիցիա:

Ուշագրավ է, որ 1918 թ. հունվարի սկզբից մինչև ապրիլի կեսերը Նախիջևանի գավառը կտրված էր նահանգային կենտրոն Երևանից, ոչ մի ցուցում կամ օժանդակություն չէր ստացվում, գավառի ամբողջ հայ ազգաբնակչությունը մատնված էր ճակատագրի քմահաճույքին: Դրան նպաստում էր նաև ընդհանուր առմամբ 1918 թ. սկզբին Կովկասում ստեղծված համաքաղաքական բարդ և լարված իրավիճակը և Բրեստի պայմանագրով առաջացած վիճակը, որում նախաձեռնությունը հայտնի չափով առժամանակ անցել էր թուրք-թաթարական և գերմանական կողմին, որից չհապաղեցին օգտվել թե՛ թուրքերն ու կովկասյան թաթարները, և թե՛ վրացիները, որոնք օգտվեցին իրավիճակի ընձեռած բոլոր առավելությունները: 1918 թվականի ապրիլի 14-ին Ե. Խարազյանի նախաձեռնությամբ հայերի և թաթարների պատվիրակները հանդիպում ունեցան հայկական թաղամասում, ստորագրեցին կրակը դադարեցնելու պայմանագիր առանց որևէ ռազմական և այլ պարտավորությունների, չնայած այն հանգամանքին, որ այդ պահին հաջողությունը հայերի կողմն էր: Զինադադարից հետո աստիճանաբար կյանքը կարծես թե մտավ բնականոն հունի մեջ՝ բացվեցին խանութները, որոնք փակ էին գրեթե երկու ամիս, գյուղացիները լծվեցին հողագործական աշխատանքի և այլն: Սակայն ներքին լարվածությունը և տագնապը մնաց: Պետք է ասել, որ հայերն էլ քնած չէին: Մասնավորապես, Ե. Խարազյանը ձեռնամուխ եղավ զինվորական կանոնադրությանը համապատասխան տեղական մեկ միասնական գումարտակի կազմակերպմանը: Անջատ գործող ջոկատների ու խմբերի միավորումով կազմակերպվեց մեկ գումարտակ՝ բաղկացած չորս վաշտից, երկու հրետանային և գնդացրային ջոկատներից: Կազմակերպվեց նաև մեկ հեծյալ ջոկատ՝ Թովմաս Թարվերդյանի ղեկավարությամբ: Առաջին վաշտի հրամանատար նշանակվեց Հայկ Գրիգորյանը, երկրորդինը՝ Ալեքսանդր Կյուրեղյանը, որը լեռնային ճանապարհներով նոր էր ժամանել Նախիջևան, երրորդ վաշտինը՝ Զավեն Բադալյանը, չորրորդինը՝ Նիկոլայ Բադալյանը, որը ցարական բանակում ունեցել էր կրտսեր ենթասպայի աստիճան: Գնդացրային ջոկատի հրամանա-

տար նշանակվեց լեյտենանտ Կուզիկյանը, հրետանային ջոկատինը՝ աստապատցի մի լեյտենանտ, շտաբի պետ նշանակվեց Ի. Նեմկովը: Գումարտակի հրամանատար հաստատվեց փոխգնդապետ Տեր-Սիմոնյանը[1]: Գումարտակի զինավարժությունները տարվում էին զինվորական կանոնադրության համաձայն: Գումարտակը բաղկացած էր 750 մարտիկներից: Խարազյանի մյուս միջոցառումը եղավ դաշտային հեռախոսային կապի հաստատումը Նախիջեվան-Սիսիան խճուղու վրա գտնվող հայկական բոլոր գյուղերի և գումարտակի շտաբի միջև: Թեև Նախիջևանում թշնամին պարտադրված գնացել էր հաշտության, սակայն նախիջևանահայության դրությունը շարունակում էր մնալ բարդ, ավելին՝ նշմարվում էր իրադրության հետագա բարդացում: Դրա պատճառը ոչ այնքան իրադարձությունների զարգացումն էր Նախիջևանի ներսում, որքան Օսմանյան կայսրության կանոնավոր զորքերի առաջխաղացումը դեպի Անդրկովկասի խորքերը, և դրա անխուսափելի ուղեկից դարձած ագրեսիան այդ բնակչության նկատմամբ: ***Այսպիսով, 1917 թ.*** ընթացքում ազգամիջյան հարաբերությունները Նախիջևանի գավառում սրվեցին: Դրա հիմնական պատճառը ոչ միայն 1917 թ. փետրվարյան հեղափոխության արդյունքում Անդրկովկասում իշխանության եկած ուժերի՝ Անդրկովկասյան հատուկ կոմիտեի, այնուհետև նրան փոխարինած կոմիսարիատի և Սեյմի թույլ քաղաքականության հետևանքն էր, այլև թուրք գործակալների քայքայիչ-դավադիր գործունեությունը: Հայկական կողմին արագորեն ստեղծված կանոնավոր զինված ուժերի միջոցով հաջողվեց 1918 թ. գարնանը Նախիջևանում նախաձեռնությունը իր ձեռքը վերցնել, ազգամիջյան բախումների ժամանակ հաղթող դուրս գալ և, փաստորեն, թշնամուն հարկադրել հաշտություն խնդրել: Երևանը, որի հետ Շարուր-Նախիջևանը հույսեր էր կապում և օգնության խնդրանքով պատվիրակություն էր ուղարկել, այդ ամիսներին օրհասական կռիվներ էր մղում թուրք զավթիչների և թաթարական հակապետական ուժերի դեմ և չկարողացավ էական օգնություն ուղարկել, ինչն էլ կանխորոշիչ իրադարձությունների զարգացման տրամաբանական արդյունքները և ռազմաքաղաքական հետևանքները:

[1]Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 314, ց. 1, գ. 163, թ. 14:

Իրադարձությունների հետագա պատմաընթացքը ևս բնութագրվեց հայ-ադրբեջանական հարաբերություններում լարվածության եզրերի պահպանմամբ միջպետական ռազմաքաղաքական հարաբերություններում, ևտարածքային սահմանազատման, և մասնավորապես Նախիջևանի, Ղարաբաղ-Արցախի խնդրում, որում հայկական զինուժի կազմակերպման դժվարին հարցերն առաջնային նշանակություն ունեին՝ որոշելով շատ հարցերի ճակատագիրը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՋԻՆՈՒԺԸ 1918-1920 ԹԹ.

պ. գ. դ., պրոֆեսոր Վ. Հ. ՎԻՐԱԲՅԱՆ

ԳԼՈՒԽ 3.

ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾՆՈՒՆԴԻ ԵՎ ՋԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ

XX դարը հագեցած է ազգամիջյան բախումնալիցքերով: Դրանք հատկապես հաճախացան 1917 թ. ռուսական Փետրվարյան և մասնավորապես Հոկտեմբերյան հեղափոխությունների ժամանակահատվածում, երբ Ռուսաստանը հայտնվեց քաոսի հորձանուտում, որի արդյունքում անդրկովկասյան ժողովուրդները խմորված հակամարտության պայմաններում հայտնվեցին միանգամայն տարբեր և հակադիր բևեռներում: 1917 թ. հոկտեմբերյան հեղափոխությունը, որը դրսից Գերմանիայի կառավարության հավանությանն արժանացած Ա. Պարվուսի (Ի. Լ.Գելֆանդ) Ռուսաստանում հեղափոխության կազմակերպման՝ իշխանության տապալման նախագծով Վ. Լենինի, Լ. Տրոցկու միջոցով ներմուծվեց Ռուսաստան, սկիզբ դնելով պետությունների և քաղաքակրթությունների փլուզման նոր դարաշրջանին, նպատակ հետապնդելով Առաջին աշխարհամարտում ռազմապես հաղթած Ռուսաստանից խլել հաղթության դափնիները և ձեռքբերված առաջնային աշխարհաքաղաքական դիրքերը Եվրոպայում և Առաջավոր Ասիայում, վերադարձնել կամ նվազագույնի հասնել Գերմանիայի կորուստները, որի մեջ հնարավոր է՝ իրենց ներդրումն ունեին նաև Ռուսաստանյան կայսրության դաշնակիցներ Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան, որի պտուղներն մարդկության կողմից «վայելվեցին» ընդհուպ մինչև XXI դարի սկզբները և ցայսօր: Արդյունքում, Անդրկովկասը ևս հայտնվեց 1917 թ. Հոկտեմբերյան հեղաբեկման փլատակների դակ, որն ունեցավ անդառնալի ծանր հետևանքներ հայ ժողովրդի պատմական ճակա-

տագրում: Անդրկովկասը և Հայաստանը չընդունեցին բոլշևիկյան հեղաշրջումը, փոխարենը՝ կուլ գնացին երկրամասում անջատողական տրամադրություններին, որին նպաստեցին նաև հայ քաղաքական ուժերի անհաշտելի, խճճված, հաճախ անըմբռնելի քաղաքական մոտեցումները, որոնք առավելապես շահեկան էին դեպի Անդրկովկաս առաջխաղացող թուրքերի համար: Հայաստանի և հայ ժողովրդի վիճակը օրհասական դարձավ թուրքական զավթիչների նոր հարձակումով Կովկասյան ռազմաճակատում, որոնք 1918 թ. ապրիլին գրավեցին Բաթումը, Կարսը և շարժվեցին դեպի Անդրկովկասի կենտրոնական շրջանները: Թուրքական զորքերի առաջխաղացումը ուղեկցվում էր հայ խաղաղ բնակչության զանգվածային կոտորածներով:

Այդ ժամանակ Անդրկովկասի և Հայաստանի «փրկությունը», գուցե և խորհրդային կարգերի հաստատման մեջ էր, որն աստիճանաբար աշխարհաքաղաքական օրակարգի պարտադիր մասն էր դարձել, սակայն իրադարձությունների անկանխատեսելի շրջապտույտը այլ ուղղություններով գնաց և պարզ չէր, թե երբ այն մոսկովյան մեծամասնականների (բոլշևիկ) համար հրամայական ռազմավարություն կդառնար և կիրագործվեր, որին զուգահեռաբար մեկը մյուսի ետևից Անդրկովկասը լքեցին ինչպես գերմանա-թուրքական ռազմուժը, այնպես էլ դաշնակիցները: Պատմափաստերը վկայում են, թե ինչպիսի խառնաշփոթ էր իշխում հայ քաղաքական շրջանակներում, որում մասնավորապես առաջատար քաղաքական ուժերից մեկը՝ ՀՅ Դաշնակցությունը չէր կարողանում կողմնորոշվել, անցկացնել զինվորագրությունը և զորակոչերը՝ թույլ տալով խոշոր վրիպումներ և ձախողումներ՝ կայացնելով քաղաքական-ռազմական ժամանակավրեպ վճիռներ, և արդյունքում՝ հայկական ռազմաճակատի օրեցօր վատթարացող դրությունը: Դա ավելի էր սաստկանում «դաշնակից» վրաց մենշևիկների և ազգայնականների ազգայնամոլությամբ, որոնք օգտվելով իրենց իշխող դիրքերից, Կարսից և այլ ռազմապահեստներից սրբեցին-տարան ողջ ռազմամթերքը, փամփուշտները և զենքի ու զինամթերքի այլ տեսակները և դրանք ամբարեցին Թիֆլիսի իրենց պահեստներում՝ հայերին բաժին չհանելով, առավել ևս, որ հայ քաղաքական և ռազմական գործիչներն անհեռատեսորեն իրենց հասանելիք զենքն ու ռազմամթերքն ամբարեցին թիֆլիսյան հայ մեծահարուստ Արամյանցի և այլոց պա-

հեստներում, որոնք 1918 թ. դեկտեմբերյան վրաց-հայկական ռազմական առճակատման ժամանակ պարզապես կնքվեցին և արգելափակվեց հայկական ռազմական ու այլ ունեցվածքի տեղափոխումը Հայաստան: Առավել բացասական էր հայկական ճակատի հրամանատար հայատյաց գեներալ Ի. Զ. Օդիշելիձեի վարքը, որը հայտնի էր իր մութ և կասկածելի կապերով թուրքական իշխանությունների, և թուրքական բանակի հայատյաց հրամանատար Մեհմեդ Վեհիբ փաշայի հետ: Սեյմի հայկական անճարակ ներկայացուցիչներին ոչինչ չէր մնում անել, քան խուսափել Թուրքիայի հետ անխուսափելի բախումից, և ի դեմս Հովի. Քաջազնունու՝ հայտարարել Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրից բխող պահանջներն ընդունելու մասին և հաշտություն կնքել Թուրքիայի հետ: Դաշնակցական գործիչները գործնականում մեկուսացված դիրքերում էին: Այդ հանգամանքը դիպուկ է նկատել ՀՅԴ հայտնի գործիչ Ա. Ջամալյանը. «Թուրքիայի առաջարկը [Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու մասին - Վ. Վ.] լուրջ քաղաքական մտահոգութիւուն էր պատճառում հայ ժողովրդին, որը զգում էր թշնամու հետ առանձին յարաբերութիւնների մէջ մտնելու վտանգը: Սակայն Անդրկովկասեան Կոմիսարիատը որոշեց զինադադար կնքել [1917 թ. նոյեմբեր 21] եւ մենք [հեշտութեամբ] համակերպվեցինք նրան այն մտածումով, թէ անհրաժեշտ է հարեւան ժողովուրդների հետ ընթանալ»[1]:

Այդ իրավիճակում գեներալ Ի. Օդիշելիձեն Կարսը հանձնեց թուրքերին՝ առանց կարևորելու հայ գործընկերների կարծիքը, ինչի մասին Լեոն նշում է. «Կարսի գնով զինադարար կնքվեց, պատերազմական գործողությունները դադար առան, եւ կողմերի միջև նոր խաղաղարար բանակցություններ սկսվեցին Բաթումիում: Դրա համար խաղացվեց մի նոր քաղաքական կոմեդիա՝ Սեյմը հայտարարեց Անդրկովկասը անկախ հանրապետություն»[2], ինչն էլ հանգեցրեց անդրկովկասյան տան կամ համադաշնության անխուսափելի փլուզմանը: Իսկ 1918 թ. ապրիլի 9-ին (ն. տ. 22-ին) Թուրքիայի պահանջով Անդրկովկասը իրեն հռչակեց անկախ հանրապետություն, որը եղավ բեկումնային Անդր-

[1] Տե՛ս **Ջամալեան Ա.,** Հայ-վրացական կնճիռը, «Հայրենիք», Բոստոն, 1928, N 8, էջ 124:
[2] **Լեո, Անցյալից:** Հուշագրություն, Եր., 2009, էջ 363-364:

կովկասի ժողովուրդների քաղաքական կյանքում: Վրացիներից, հայերից և ադրբեջանցիներից կազմված այդ Դաշնակցային հանրապետությունը կենսունակ չգտնվեց, չնայած վրաց մենշևիկների առաջնորդ Ի. Ծերեթելին բազմիցս հայտարարել էր, թե երեք գլխավոր ազգերից ոչ մեկը չի կարող իրեն փրկել և ապահովել իր անվտանգ գոյությունը, եթե իր ողջ ուժերը չժողովի և չտրամադրի մյուսների փրկության համար: Անդրկովկասյան երեք ժողովուրդները մեկ պետականության մեջ չկարողացան իրար հետ համերաշխ լինել, քանզի իրապես ունեին իրարամերժ քաղաքական կողմնորոշումներ և տարածքային շահեր: «Թուրքահայաստանի մասին» դեկրետը գործնականում անուժ գտնվեց, իսկ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի պարտադրանքով բոլշևիկյան Ռուսաստանի կողմից Կարսի, Արդահանի և Բաթումիի մարզերի նվիրատվությամբ Թուրքիային: Հովի. Քաջազնունին վերհանելով այդ պատմապահի ողջ հակասականությունը, խճճվածությունը և քաղաքական-կուսակցական ուժերից յուրաքանչյուրի ակնկալիքների և հուսախաբությունների, վստահության և անվճռականության, հասունության և ոչ խելամիտ, անհեռատես քայլերի ողջ համայնապատկերը, հաստատագրեց, որ «*Ռուսաստանը (ոչ բոլշեւիկյանը, ոչ հակաբոլշեւիկյանը) այն ժամին չէր կարող հասնել օգնութեան, եթե նոյնիսկ կամենար: Ոչ միայն մենակ, այլ նաեւ թիկունքից մեծապէս վտանգուած, որովհետեւ պարզ էր, որ թուրքերի հետ միասին մեզ պիտի զարնէին նաեւ ազրբէյջանցիները (ո՞վ գիտէ, գուցէ եւ վրացիները՝ Ախալքալաքը, Լօռին ու Փամբակը ամբողջովին գրաւելու համար*»[1]:

Թուրքիան ոչ միայն պարզապես օգտվեց Բրեստ-Լիտովսկի պայմանագրով ընձեռված հնարավորություններից, այլև 1917-1918 թթ. գնաց ավելի հեռուն՝ գործնական և շահավետ համագործակցության բոլշևիկների հետ, ինչը նրան բոշևիկյան Ռուսաստանից ունեցած որոշակի կաշկանդվածության պայմաններում ռազմաքաղաքական ձեռնարկումների և ագրեսիվ քայլերի որոշակի ազատություն տվեց Անդրկովկասում, որի պայմաններում խրախուսվեցին վրացական անջատողականությունը և թաթարա-ադրբեջանական հակահայկական գործո-

[1] **Քաջազնունի Յովհ.,** Հ. Յ. Դաշնակցութիւնն անելիք չունի այլ եւս,, Վիեննա, 1923, էջ 27-28:

ղությունները, իսկ հայերը պարզապես հայտնվեցին ռազմաքաղաքական մեկուսացման պայմաններում, ինչի մասին անուղղակիորեն փաստում են նաև թուրք հեղինակները[1]:

Վրաստանի և Ադրբեջանի անկախացումը ստիպեց Հայաստանին գնալ դեպի անախության հռչակման, որը 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությամբ պարտադրված պատմաքաղաքական կտրուկ շրջադարձերի անկասելի ընթացքով պարտադրված աշխարհաքաղաքական ընթացքի արդյունք էր, որին հայ ազգային քաղաքական-կուսակցական շրջանները անպարաստ գտնվեցին՝ կախվածության մեջ գտնվելով աշխարհաքաղաքական տարբեր կողմնորոշումներից: Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից քաոսային աշխարհաքաղաքական իրավիճակ ստեղծեց երկրամասում, ինչը երկրամասի ժողովուրդների կենսական ազգային-քաղաքական շահերին և ազգային-քաղաքական առաջնահերթություններին անկանխանխատեսելի ընթացք տվեց: Դրա պատճառը ըստ Քաջազնունու, այն էր, որ «*…վրացիները տեսնում էին, որ մենք մի աւելորդ բեռ ենք նրանց համար, որ առանց մեզ նրանք աւելի հեշտ կը կարգաւորեն իրանց սեփական գործերը: Իսկ ազրբեյջանցիների միակ հոգսն էր այժմ՝ միանալ՝ օր առաջ թուրքերի հետ, անցնել նրանց հովանաւորութեան տակ ու «թուրք բանակի վրայ յենած»՝ մտնել Բաքու: Թուրքական բանակի յաղթանակից յետոյ Անդրկովկասեան Դաշնակցութիւնը այլ եւս պէտք չէր ազրբեյջանցիներին. Վրացիները աւելորդ էին, իսկ հայերը՝ թշնամի*»[2]: Անշուշտ, պետք է արձանագրել այն պատմաքաղաքական իրողությունը, որ 1917 թ. հոկտեմբերյան հեղաբեկիչ իրադարձությունները, և անկասկած՝ Ռուսաստանի փաստացի կտրվածությունը Անդրկովկասից, Անդրկովկասյան դաշնության փլուզումը հայ հասարակական-քաղաքական ուժերին կանգնեցրին նոր իրողությունների առաջ: Անգամ ՀՅ Դաշնակցությունը Ռուսաստանի նկատմամբ ունեցած քաղաքական ռազմավարությունում իրականացնում էր տարբերակված մոտեցում,

[1] Տե՛ս **Cem Oguz C.,** The relations between the Ottoman empire and bolshevik Russia (1917-1918): A thesis submitted to the department of international relations in partial fulfillment of the requirements for the degree of master of international relations Bilkent university institute of economics, administrative and social sciences, Ankara, august, 1998:

[2] **Քաջազնունի Յովհ.,** նշվ. աշխ., էջ 29:

լիներ դա բոլշևիկյան Ռուսաստանը, թե դենիկինյան-կոլչակյան Ռուսաստանը, դրանց ընդունելով այնքանով, ինչքանով չէին խոչընդոտի Հայաստանի անկախությանը և տարածքային ամբողջականացմանը, միաժամանակ անհրաժեշտ համարելով ռուս ժողովրդի ու Ռուսաստանի հետ բարյացակամ, բարեկամական հարաբերությունների պահպանման անհրաժեշտությունը: Ի տարբերություն հստակ հակաբոլշևիկյան և հակառուսական դիրքորոշում որդեգրած անդրկովկասյան քաղաքական ուժերի՝ վրաց մենշևիկների և մուսավաթականների, ՀՅ Դաշնակցությունը գործնականում մինչև վերջին պահը դեմ էր Անդրկովկասը Ռուսաստանից անջատելուն, դրա մեջ ուղղակիորեն տեսնելով մեծ վտանգ Արևելահայաստանի վրա ծվարած հայ ժողովրդի համար, որը 1918 թ. մայիսին շփոթահար կանգնեց հարկադիր և պարտադրված անկախության հռչակման փաստի առաջ[1], ինչը հստակ արտահայտել է Լեոն՝ ճակատագրով պարտադրված պատմաքաղաքական կողմնորոշման ընտրության հետ կապված. *«Ինչու՞ բաժանվեցինք, ինչու՞ ուրիշների կուսակցական հաշիվների ենթարկվեցինք և «խաղալիք դարձել թուրք փաշաների ձեռքին»*[2]:

Վրացիները իրենց քաղաքական հաշվարկներում նախընտրեցին կամ չեզոք դիրք գրավել կամ էլ պարզապես *«բարեկամ հայերին»* զոհել հանուն վեհապետական Վրաստանի քաղաքական շահերի և անվտանգության: Ի վերջո, 1918 թ. մայիսի 26-ին թուրքական վերջնագրի ներքո Անդրկովկասյան Սեյմը ցրվում է՝ թուրքական կողմին զիջելով Արդահանը, Կարսը, Բաթումին, Երևանի նահանգից՝ Սուրմալուի գավառը, գրեթե ողջ Նախիջևանի գավառը, Շարուր-Դարալագյազի, Երևանի, Էջմիածնի և Ալեքսանդրապոլի գավառների մեծ մասը, Թիֆլիսի նահանգից՝ Ախալքալաքի և Ախալցխայի գավառները[3]: Նույն օրը Վրացական Ազգային խորհուրդը Վրաստանը հայտարարում է անկախ, ընդ որում Չխենկելին դիմում է Օսմանյան պետությանը ու Էնվեր

[1] Տե՛ս **«Ցառաջ»,** Երևան, 2 հոկտեմբերի, 1919 թ.:

[2] **Լեո, Անցյալից,** էջ 367:

[3] Տե՛ս **Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.,** (Քաղաքական պատմություն), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., 2000, էջ 171:

փաշային և շնորհավորանք ստանում անկախության առթիվ[1]: Մայիսի 27-ին կազմակերպվում է Ադրբեջանի անկախ հանրապետությունը մուսավաթականների գլխավորությամբ, իսկ մայիսի 28-ին Թիֆլիսում Հայոց Ազգային խորհուրդը Հայաստանը ևս հայտարարում է անկախ: Կարելի է որոշակի վստահությամբ արձանագրել այն պատմաքաղաքական իրողությունը, որ վերջին հաշվով անկախության հռչակումը և Արևելյան Հայաստանի տարածքի վրա հայկական պետականության վերստեղծումը կախված էր ոչ այնքան կուսակցական-քաղաքական, հասարակական-մտավորական ուժերի գործադրած ռազմավարությունից, որքան աշխարհաքաղաքական ուժերի և պատմաքաղաքական զարգացումների նոր դասավորվածությունից: Այդ մասին ինքնատիպ դիտարկումի ենք հանդիպում նաև Ալ. Խատիսյանի մոտ. «***Ինչպե՞ս, չէ՞ որ մենք և դուք միասին պատերազմի մեջ ենք, ընդհանուր պատերազմի մեջ ենք, ինչպե՞ս կրնաք լքել մեզ, երբ մենք դեռ արյուն կը թափենք: Մի՞ թե ազնիվ բան է այս: Ազնիվ բան է այն, - սառը պատասխանել է Ն. Ժորդանիան, ինչ-որ օգտակար է ժողովրդին:...Մենք չենք կրնար խեղդվիլ ձեզի հետ միասին, դուք ալ պարտավոր եք համաձայնության լեզու մը գտնել թուրքերուն հետ: Ուրիշ ելք չունիք: Մեզ իրապես ուրիշ ելք չէր մնա, բայց եթէ մեր կողմէ ևս հայտարարել Հայաստանի անկախություն***»[2]:

Հայերի պարագայում, իհարկե, դա պատմաքաղաքական մի կարևորագույն իրադարձություն էր, որն էական շտկումներ մտցրեց հայ ժողովրդի պատմատարեգրությունում, ինչն էլ հարկադրեց Մեհմեդ Վեհիբ փաշային հաշտվել այդ անհերքելի իրողության հետ. դա 1918 թ. մայիսյան Սարդարապատյան հերոսամարտն էր, որը գոյատևման կռիվ էր թուրքերի դեմ: 1918 թ. մայիսի վերջին տասնօրյակում հայկական զինված ուժերը գերմարդկային ճիգերով կարողանում են կասեցնել թշնամու առաջխաղացումը դեպի Հայաստանի խորքերը: Հիրավի, անանց նշանակություն ունեցան Սարդարապատի, Բաշ-Ապա-

[1] Տե՛ս **Մախմուրյան Գ.,** Հայաստանի Հանրապետության անկախությունը Հայոց Ազգային խորհրդի արձանագրություններում, «Պատմաբանասիրական հանդես», 2014, N 1 (195), էջ 223:

[2] **Խատիսեան Ալ.,** Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բ տպագր., Բէյրութ, տպարան Համազգային, 1968, էջ 8:

րանի և Ղարաքիլիսայի ճակատամարտերը: Ուշագրավ է հերոսամարտի համաժողովրդական բնույթը: Այդ հերոսամարտերի խորհուրդը մեծ է: Դա արտահայտվեց նրանում, որ հայ ժողովուրդը ոչ միայն պաշտպանեց իր ֆիզիկական գոյությունը, ոչ միայն Հայկական Զինուժի վերստեղծման հիմքերը դրեց, այլև հարկադրեց հաշվի նստել իր հետ և ճանաչել իր անկախ ապրելու իրավունքը: ***Սարդարապատի հերոսամարտը կարելի է համարել հայության Հայրենական պատերազմը դարավոր ոսոխի դեմ, որը թերևս կարելի է համեմատել Արցախյան պատերազմի ու Շուշիի ազատագրման հետ***: Դրան հետևեց անկախացման հայտարարագիրը, որը գրվել էր Ն. Աղբալյանի Մ. Թումանյանի հեղինակությամբ մայիսի 30-ին, որով ազդարարվել է Հայոց Ազգային խորհրդի իրավունքների մասին հայկական գավառների նկատմամբ[1]. «Անդրկովկասյան քաղաքական ամբողջության լուծարումով և Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր դրության հանդեպ Հայոց ազգային խորհուրդն իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն: Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերում կազմել Հայոց ազգային կառավարություն՝ Ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարության բոլոր գործառույթները հայկական գավառների քաղաքական և վարչական ղեկը վարելու համար»[2]: Ս. Վրացյանը այդ կապակցությամբ բնորոշում է պատմական այդ պահի խորհուրդը. «անկախութեան յայտարարութիւնը, սակայն եղաւ մայիսի 30–ին, աւելի արտաքին ճնշումների տակ, քան Ազգային խորհրդի յոժար կամքովե, ավելացնելով, որ դա «իսկական առումով անկախության հռչակում չէր, բայց դեպքերի բերումով դարձավ այդպիսին»[3], ավելացնելով, որ այդպիսով «…Հայաստանի անկախութեան օրը իսկապէս պէտք է համարուէր մայիսի 30-ը: Հակառակ դրան, համարւում է մայիսի 28-ը»[4], այսինքն այն օրը, երբ Ազգային խորհուրդը

---

[1] **Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., էջ 18:**

[2] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 7:

[3] **Վրացյան Ս.,** Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 160-161:

[4] Պատմագետ ***Ռ. Հովհաննիսյանը*** ներկայացնելով այդ օրերի իրադարձությունները, մայիսի 28–ը նկարագրում է որպես մի օր, որի համար հատկանշական էր 1919 թ. հանդիսավոր տոնակատարությունը, իսկ համապատասխան անկախության կոչը թվագրվում է

վճռեց հաշտութեան պատւիրակութիւն ուղարկել Բաթումի»[1]: Այստեղից տպավորություն է ստեղծվում թուրքական պարտադրանքի որոշիչ լինելու հանգամանքի մասին, որը հակասության մեջ է մտնում Սարդարապատյան հաղթանակի պատմաքաղաքական արդյունքների և դասերի հետ, որն զգալով, դաշնակցական պատմագիրները վերագնահատումներ են կատարում՝ առաջնահերթությունը տալով Սարդարապատում հայոց միասնությամբ ձեռքբերված հաղթարշավի ռազմաքաղաքական արդյունքներին՝ կապված Հանրապետության անկախության հռչակման օրվա հետ, և ըստ այդմ որոշում *«Հայաստանի անկախության հռչակման ճշգրիտ թվական համարել մայիսի 28-ը վերջնականապես»*[2]: Կարելի է ասել, որ վեցդարյա ընդմիջումից հետո վերականգնվեց Հայոց անկախ պետականությունը, որով, փաստորեն, սկսվեց մի նոր ժամանակաշրջան հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ: Գնահատելով ՀՀ ստեղծման պատմափաստը, Լեոն նկատում է. «Տասը հազար քառակուսի վերստ էր այդ Հայաստանը՝ մեծ մասամբ լեռ ու անապատ՝ Սևանա լճի չորս կողմը, հայ ժողովրդի ոչ թե բնակության տեղ, այլ գերեզմանոց: Պետական սահմանն անցնում էր Երեւանի տակով, հայերի ձեռքին մնում էր միայն վեց վերստ երկարությամբ երկաթուղի: Էնվեր փաշան գտել էր, որ միայն այսպիսի չափ ունեցող»[3]: Հարկ է ասել, որ անկախության հռչակագրում Հայոց ազգային խորհուրդը խուսափեց հստակ սահմանների մասին նշելուց, միաժամանակ ակնարկելով իր հետագա պահանջատիրության մասին, ընդգծելով հայկական գավառների նկատմամբ իր իրավասության մասին՝ 1918 թ. հունիսի 4-ի Բաթումիի հաշտության պայմանագրում ընդգծելով «իրեն անկախ հռչակած Հայաստանի Հանրապետության» մասին[4]: Այսպիսով, պատմաքաղաքական հանգամանքների անողոք պարտադրվածությամբ հռչակվեց Հայաստանի Հանրապետությունը. *«Այսպես թե այնպես, Հայաստանի Հանրապետության ծագման օրը*

մայիսի 30–ով. տե՛ս **Hovannisian R. G.,** Armenia on the road to independence, 1918, Berkeley, Los Angelees, 1967, pp. 191, 305:

[1] Տե՛ս **Վրացեան Ս.,** Հայաստանի Հանրապետութիւն, Բէյրութ, 1958, էջ 131-132:

[2] Տե՛ս **ՀԱԱ, ֆ**. 199, ց. 1, գ. 118, մաս III, թ. 10:

[3] **Լեո, Անցյալից,** էջ 368-369:

[4] Տե՛ս **Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.** , էջ 36:

եղավ մայիսի 28–ը: Այդ օրը դարձավ նվիրական հայ ժողովրդի համար և մշակ ազգային տոնացույցի մեջ»[1]:

Այդուհանդերձ, այդ պայմաններում Հայոց ազգային խորհրդի անդամների մի մասը պարզապես չէր ցանկանում թողնել Թիֆլիսը և մեկնել գաղթականներով շրջափակված գավառական անհրապույր Երևան: Հայաստանի կառավարությունը ի դեմս Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի չէր ցանկանում հոժարակամ որոշում կայացնել Երևան տեղափոխվելու մասին, ինչը վրացական իշխանությունները անբարյացակամորեն ընդունեցին անթույլատրելի համարելով օրենսդիր և վարչական գործառույթներով օժտված որևէ այլ քաղաքական մարմնի գոյությունը, դա համարելով վրացական ժողովրդի ինք-նիշխան իրավունքների խախտում»[2], որը բազմիցս քննադատության է արժանացել ժամանակի մտավորականների և պատմաբանների, հասարակական գործիչների մի մասի կողմից: Ի վերջո, 1918 թ. հուլիսի 12-ի անարդյունավետ քննարկումներից հետո խիստ դժգոհ Հովի. Քաջազունին կտրուկ հայտարարում է վարչապետի պաշտոնից հրաժարվելու իր վճռի մասին, որից հետո միայն Հայոց ազգային խորհրդի անդամները սթափվում են և հուլիսի 13-ին որոշում, որ Հայոց Ազգային խորհուրդն անմիջապես տեղափոխվում է Երևան[3]: Եվ ի վերջո, անմիտ քաշքշուկներից հետո, վրացիների դժգոհ հայացքի ներքո, հուլիսի 17-ին Հայոց ազգային խորհրդի անդամները՝ Ավ. Սահակյանը, Ս. Տիգրանյանը, Ռ. Տեր-Մինասյանը, Ա. Բաբալյանը, Ստ. Մալխասյանը, Հ. Ազատյանը, Հովի. Քաջազունին, Արշ. Մխիթարյանը, Խ. Կարճիկյանը, Հովի. Հախվերդյանը գերմանացի և թուրք սպաների անմիջական ուղեկցությամբ Թիֆլիսից ուղևորվում են Երևան, և արդեն հուլիսի 19-ին Երևանում էին: 1918 թ. հուլիսի 24-ին պաշտոնապես հրապարակվում է ՀՀ անդրանիկ կառավարության կազմը. Վարչապետ՝ Հ. Քաջազունի, Արտաքին Գործերի նախարար՝ Ալ. Խատիսյան, Ներքին

---

[1] **Վրացյան Ս.,** Հայաստանի Հանրապետություն,, էջ 161-162:

[2] Տե՛ս **ՀԱԱ, ֆ**. 200, ց. 1, գ. 17, թ. 237-238:

[3] Տե՛ս **Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս)**. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու / հեղինակ՝ Հ. Կ. Սուքիասյան, Եր., 2009, էջ 10-11, 149-152:

Գործերի նախարար՝ Ա. Մանուկյան, ֆինանսների նախարար՝ Խ. Կարճիկյան, Զինվորական նախարար՝ գեներալ Հ. Հախվերդյան:

Այդ պատմապահի բնութագիրը երևում է Հովհ. Քաջազնունու «Հայաստանի Հանրապետություն» հուշագրից, որ 1919 թ. հոկտեմբերին ներկայացվել է ամերիկյան կառավարությանը, և քննարկվել Սենատի արտաքին հարաբերությունների կոմիտեի հայկական գործերի գծով ենթակոմիտեի նիստում. *«Հայաստանը մնացել էր մենակ, չորս կողմից շրջապատուած թշնամի կամ անբարեացակամ ուժերով, առանց որեւէ արտաքին նեցուկի եւ օգնութեան: Հաղորդակցութիւնը արտաքին աշխարհի հետ կտրուած էին միանգամայն, որովհետեւ միակ երկաթուղային գիծը բռնել էին թիւրքական զօրքերը, ապրանքների ներմուծումը դադարած էր, որովհետեւ կտրուած էին կապերը թէ՛ Ռուսաստանի, թէ՛ Պարսկաստանի եւ թէ՛ Եւրոպայի հետ, իսկ հարեւան երկրները՝ Վրաստան, Ազրբեյջան, եւ Թիւրքիա իրանք չունեին արտահանելու ապրանք: Ռուսական փիրապետութիւնից ժառանգած պետական մեքանիզմը քայքայուած էր միանգամայն, վարչական բոլոր օրգանները խանգարուած: Տիրում էր կատարեալ քաոս եւ անիշխանութիւն: Ամէն բան պետք էր վերսկսել սկզբից, աւերակների վրայ կառուցանել նոր պետական շէնք»*[1]:

Մյուս կողմից, իրադրության վրա ազդում էին դեպի Անդրկովկաս ձգվող անգլիացիները, ֆրանսիացիները, ԱՄՆ-ը, որոնք հարստանալով Առաջին աշխարհամարտում, մշակում էին համաշխարհային տիրապետության լայնածավալ պլաններ, որոնցում, ինչպես և այսօր կարևորագույն տեղ էր հատկացվում Անդրկովկասին, և մասնավորապես հենց Հայաստանին, ինչն արվում էր Հայաստանի նկատմամբ մանդատ ստանալու և «բարեկամի» քողածածկույթի տակ: Այս առումով շատ հատկանշական է ամերիկյան ազդեցիկ և արտահայտվել *«New York Times»* թերթը 1919 թ. հուլիսի 6-ի համարում. ***«Մենք պետք է շահագրգռված լինենք Հայաստանով, Բալկաններով՝ մեծ տերությունների սահմանների հարցում…Հայաստանը հանդիսանում է մեծ ճանա-պարհ, որ կապում է Եվրոպան Ասիայի հետ և գրավում է հրա-***

[1] **Քաջազնունի Յովհ.,** Հայաստանի Հանրապետութիւն, Եր., «Մ. Վարանդեան» հրատ., 1993, էջ 24-25:

մանատարական դիրք Սև և Միջերկրական ծովերի նկատմամբ: Եթե մենք ընդունենք Հայաստանի նկատմամբ մանդատը, Հայաստանը կդառնա ամերիկյան ֆորպոստը Արևելքում...Հայաստանի սահմաններից 500 մղոն ռադիուսով (շառավղով) ապրում է 100 միլիոն մարդ, որոնց հարկավոր է ենթարկել ամերիկյան գաղափարախոսությանը և քաղաքականությանը: Իսկ եթե մենք հրաժարվենք մանդատից, ապա Հայաստանը դուրս կգա անգլոսաքսոնական քաղաքակրթության ազդեցությունից և, այդպիսով, մենք կկորցնենք անգլոսաքսոնական քաղաքակրթության պրոպագանդայի հնարավորությունը Մերձավոր Արևելքի նկատմամբ»[1]:

Այդպիսի հուսահատական պայմաններում էլ ժողովուրդի մեծ ջանքերի գնով սկսում են ձևավորվել պետական իշխանության մարմինները՝ Հայաստանի կառավարությունը, խորհրդարանը, ՀՀ բանկային համակարգը և դատարանները, տեղական ինքնավարության մարմինները (զեմստվոները), պետական-տնտեսական կառույցներ, հայկական բանակը, դիվանագիտական կապերը, պետականության խորհրդանիշները, ինչպես նաև ցայսօր մասնագետների ուշադրությունից լիովին վրիպած ամեն մի պետականության կայացման տեսանկյունից անհրաժեշտ անվտանգության համակարգի մարմինները՝ ՀՀ Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի հետախուզական և հակահետախուզական բաժանմունքը՝ ՀՀ հետախուզական ծառայությունը, ՆԳՆ ուժային կառուցվածքները, միլիցիան և այլն: Հայաստանի Հանրապետությունը կազմակերպված պետություն էր ոչ միայն իշխանության կառույցների, այլև միջազգային իրավունքի տեսակետից: ՀՀ-ն ճանաչում էին աշխարհի 30-ից ավելի պետություններ: 1918 թ. հունիսի 15-ին սկսվում է ՀՀ ռազմական նախարարության կազմավորումը: Բանակի՝ պետական անվտանգության համակարգի այդ անքակտելի բաղկացուցիչ օղակի նկատմամբ կար համապարփակ ուշադրություն, անցնելով կայացման ոչ միանշանակ գործընթացներով: ՀՀ առաջին Զինվորական նախարար գեներալ Հովի. Հախվերդյանի վկայությամբ, 1918 թ. աշնան սկզբներին հայկական զինված ուժերում ծառայում էին

[1] Տե՛ս **Адамия В. И.,** Из истории английской интервенции в Грузии (1918-1921 гг.), Сухуми, 1961, с. 13-14:

շուրջ 18 հազար զինվոր ու սպա[1]: Ռազմական մի տեղեկագրի համաձայն, զինվորական ծառայության մեջ գտնվողների թիվը 1919 թ. գարնանը հասնում էր 16 հազարի[2], Հ. Քաջազնունու հուշագրի տվյալներով, որը ներկայացվել էր եվրոպական տերությունների ուշադրությանը, 1920 թ. հուլիսի վերջերին զորքերի ընդհանուր թիվը հասնում էր 18 հազար մարդու[3]: Իսկ արդեն ՀՀ զինվորական նախարարության Գլխավոր շտաբի 1919 թ. հունվարի 16-ի տվյալներով հայկական զորքում կային 295 ավագ ենթասպա, 1168 կրտսեր ենթասպա, 1201 եֆրեյտոր և 13214 զինվոր, ընդամենը՝ 15878 հոգի[4]: Այս պարագայում իրականությունը բացահայտելու համար անհրաժեշտ է համադրել մի շարք տվյալներ՝ պարզելու համար փաստացի վիճակի իրական պատկերը, լեգենդն ու ճշմարտությունը: Կ. Սասունու վկայմամբ 1920 թ. հայ-թուրքական պատերազմի նախօրյակին հայկական բանակի թվակազմը հասնում էր 35 հազար մարդու[5], այդ թվում Կարսի ճակատում սպայակույտի պետ Ալ. Վեքիլյանի պնդմամբ առավելագույն թիվը հասել է 16,5 հազարի[6], Ալ. Խատիսյանի տվյալներով, ՀՀ բանակը բոլոր 4 ուղղություններում՝ Կարս-Ալեքսանդրապոլի, Սուրմալուի, Նախիջևանի, Դիլիջան-Ղազախի ճակատներում 1920 թ. նոյեմբերի սկզբներին ուներ 16700 սվին, իսկ ընդհանուր առմամբ գործող բանակում կար շուրջ 25 հազար մարդ, ավելացրած դրան թիկունքի ծառայողների, բեռնակիրների, կառապանների, շտաբներում աշխատողների, առողջապահության հիմնարկների, սպասավորների 30 տոկոսը, որոնք զինվորական կառույցի մեջ էին հավառված, բանակի ամբողջ կազմում ընդգրկվածների թիվը հասնում էր ըստ Ալ. Խատիսյանի՝ 34 հազար մարդու, գումարած դրան ոչ կանոնավոր զորամասերում գտնվող զինյալների թիվը, որոնց թիվը հասնում էր 6 հազարի, ի վերջո ստացվում էր 40 հա-

---

[1] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 45, ց. 1, գ. 132, թ. 77:

[2] Տե՛ս **նույն տեղում,** ֆ. 275, ց. 5, գ. 79, թ. 47:

[3] Տե՛ս **նույն տեղում,** ֆ. 200, ց. 1, գ. 498, թ. 33:

[4] Տե՛ս **նույն տեղում,** ֆ. 199, ց. 1, գ. 35, թ. 17:

[5] **Սասունի Կ.,** Հայ-թուրքական պատերազմը, «Հայրենիք» (Բոստոն), 1926, թիվ 11-12, էջ 112:

[6] Տե՛ս **Արծրունի Վ.** Հայ-տաճկական պատերազմը, Հայ սպայութիւնը, Շատախ, Եր., 2002, էջ 20:

զարանոց բանակ[1]: Հայկական բանակի Գլխավոր շտաբին առընթեր 1919 թ. ապրիլին հիմնվեց Հետախուզական և հակահետախուզական բաժանմունքը, չնայած պետականորեն ազգային անվտանգության տեսանկյունից չափազանց կարևոր այդ գործի հիմքերը դրվել էին դեռևս 1918 թ. օգոստոսի 13-ին: Ս. Վրացյանը ևս գտնում է, որ թուրք-հայկական պատերազմի ժամանակահատվածում Հայկական բանակի ընդհանուր թիվը հասնում էր շուրջ 40 հազարի, որից 25-26 հազարը կանոնավոր բանակի զորամասեր էին, իսկ մոտ 10-12 հազարը՝ կամավոր աշխարհազորայիններ[2]:

Դա այն ժամանակաշրջանն էր, երբ բոլշևիզմը, որպես ռազմաքաղաքական ուժ Ռուսաստանում ամրապնդման գործընթաց էր ապրում, սակայն առաջին պահին ոչ ըմբռնելի, որի հետևանքով հայկական կուսակցական-քաղաքական և դիվանագիտական-ռազմաքաղաքական շրջանները ավելի շատ հենվում էին Պ. Վրանգելի, Ա. Կոլչակի, Ա. Դենիկինի և այլոց վրա՝ կորցնելով թանկարժեք ժամանակը և ռազմավարական հնարավորությունների օգտագործման բոլոր հույսերը՝ ապավինելով եվրոպական մեծ տերությունների վերացական հավաստիացումներին, բացարձակապես չփորձելով կռահել, թե իրադարձությունների ու դեպքերի մոտակա սրընթաց զարգացումները ինչպիսի աղետաբեր աշխարհաքաղաքական դրություն են ստեղծելու առաջին հերթին հենց Հայաստանի Հանրապետության համար: Շատերը չէին ցանկանում ըմբռնել, որ ժամանակավոր շահերը, ժամանակավոր հաշիվները հարկադրում էին պատմականորեն իրար թշնամի երկու պետություններին՝ Վ. Ի. Լենինի Ռուսաստանին և Մ. Քեմալի Թուրքիային «եղբայրական» ձեռք մեկնելու իրար և մի ճակատ կազմելու՝ ընդդեմ ընդհանուր թշնամու՝ «դրամատիրական» Եվրոպայի, ինչի նրբերանգները հետադարձ հայացքով ընդհանուր առմամբ ճիշտ է նկատել Ալ. Խատիսյանը. «*Միւս կողմէ, Քարիզի Վեհաժողովը չափազանց կ'ուշացնէր Թուրքիոյ խնդիրներով զբաղուիլը եւ քեմալականներուն ժամանակ տուաւ ուժեղանալու համար: Իսկ յետոյ, երբ Ռուսաստանը վերջացուց իր ներքին քաղաքացիական կռիւները, Դաշնակիցները վախցան*

[1] Տե՛ս **Խատիսեան Ալ.,** նշվ. աշխ., էջ 289-290:

[2] **Վրացեան Ս.,** Հայաստանի հանրապետութիւն,, էջ 477:

բարդութիւններէն եւ հեռացան՝ բախտի բերմունքին ձգելով նորակազմ հանրապետութիւնները»[1], որ ինքը «***եկած է այն անխախտ համոզման, որ Դաշնակիցները լքեցին Հայաստանը, որ Թուրքերը ափկէ լայնօրեն օգտուեցան, բայց Թուրքերու գլխաւոր ղինակիցները բոլշեւիկներն էին, որ ոյժ եւ հնարաւորութիւն տուին Թուրքերուն յարձակելու Հայաստանի վրայ: Ադ՝ անվիչելի փաստ է: Փաստ է նոյնպէս, որ իրար օգնելէ ետքը իրար մէջ բաժնեցին Հայաստանը: Եւ բոլշեւիկները ըրին այդ՝ ո՛ր թէ առանձին թշնամութենէն դէպի Հայաստանը, այլ դրդուած իրենց «համաշխարհային» քաղաքականութենէն, որուն համար անոնք պէտք կը զգային շահելու Թուրքերու բարեկամութիւնը՝ զոհաբերելով Հայաստանը: Եւ բոլշեւիկները Թուրքերուն տուին այն, ինչ որ անոնք կուզէին – Կարսը, Սուրմալուն, Արտահանը, մնացած մասը, ինչ-որ Թուրքերուն պէտք չէր, այսինքն՝ Հայերով բնակուած շրջանները, Ռուսերը առին***»[2]:

Եվրոպայի հակաթուրքական թղթային բնույթ կրող որոշումները Թուրքիային մղեցին դեպի բոլշևիկների հետ մերձեցման, թեկուզև իրենք՝ «Միլլիական» շարժման թուրք քաղաքական գործիչները, իհարկե, կնախընտրեին շփման ամուր եզրեր ունենալ ու լուրջ բարեկամություն անել Բրիտանական կայսրության հետ, քանզի նրանք թուրքի և ռուսի միջև երկարատև համաձայնությունը, լինի դա բոլշևիկ թե ոչ, միշտ էլ համարել են ոչ հարատև բնույթի քաղաքական քայլ, որն անհարիր էր նրանց ռազմավարական ձգտումներին: Այդուհանդերձ, թե բոլշևիկները և թե քեմալականները ստեղծված իրադրությունը գնահատեցին շատ իրատեսորեն, և արեցին անհրաժեշտ քաղաքական եզրակացություններ, որոնք բխում էին իրենց շահերի խորքային ըմբռնումից, ինչը գրեթե լիովին անտեսվեց հայկական կողմից: Երբեք էլ էական օգնություն դաշնակիցների կողմից չեղավ, միայն եղան սնամեջ հայտարարություններ ու խրախուսանքներ: Իսկ հարևանների հետ այնպես էլ, տարբեր պատճառներով, հնարավոր չեղավ լեզու գտնել:

Աշխարհաքաղաքական իրավիճակի սրընթաց փոփոխությունները և Հայաստանի նկատմամբ Անտանտյան դաշնակիցների վերաբեր-

[1] **Խատիսեան Ալ.,** նշվ. աշխ., էջ 193:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 293:

մունքի էական վերանայումը հանգեցրին ՀՀ ճակատագրական մեկուսացմանը, որի տրամաբանական ավարտը հանդիսացան 1920 թ. սեպտեմբերի 23-ին սկսված թուրք-հայկական պատերազմի աղետալի արդյունքները և Ալեքսանդրապոլի ամոթալի, ծանրագույն պայմանագիրը Հայաստանի Հանրապետության համար, որի հետևանքով բոլշևիկները, գրեթե նույն օրը կնքված Երևանի համաձայնագրից հետո առաջացած նոր իրավիճակում, ստացան ծանր ժառանգություն՝ շուրջ 10 հազար քառ. կմ. տարածք՝ մոտ 1 միլիոն բնակչությամբ, որի մի զգալի մասը՝ սովյալ գաղթականներ էին: Հայկական բանակի պարտությունը երկրում քաղաքական ճգնաժամ առաջ բերեց: Թուրքական մահաբեր սպառնալիքի պայմաններում ՀՀ կորցրեց իր անկախությունը և խորհրդայնացավ: 1920 թ. դեկ-տեմբերի 2-ը ճակատագրական օր է հայ ժողովրդի պատմության մեջ, քանզի այդ օրն է համարվում Առաջին Հանրապետության անկախության կորստի օրը՝ և միաժամանակ այդ նույն օրը ստորագրվեց Ալեքսանդրապոլի հաշտության պայմանագիրը, որով ՀՀ տարածքների նշանակալից մասը բռնակցվեց Թուրքիային:

Այնուամենայնիվ, հեփևությունը միանշանակ է. ստեղծված իրավիճակում Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումը այլընտրանք չուներ: Ավելին, Ռ. Հովհաննիսյանը գտնում է, որ հակառակ իրենց հաստատուն արևմտյան արևելումին, Դաշնակցությունը և հայկական կառավարությունը մնացին առանձին ու լքված Արևմուտքի կողմից, որը Արևմտյան Հայաստանը գծել էր թղթի վրա, երկիրը ուժասպառ եղավ, օժանդակություն չեղավ, և հավելյալ ուշացումը անհրաժեշտություն դարձրեց ոչ միայն բոլշևիկյան Ռուսաստանի և Թուրքիայի գործակցությունը, այլև առիթ տվեց թուրքերին Հայաստանը բնաջնջելու և ճնշող պայմաններ պարտադրելու[1]: Սակայն ակնհայտ է նաև, որ հենց այդ ժամանակաշրջանում անցում կատարվեց ***Հանրապետությունից Հանրապետություն***, և ողջամտությունը պահանջում է այդ փաստը տեսնել, այն դիտել որպես պատմական իրողություն, թեկուզև սոցիալիստական հեռանկարի առումով: Բոլշևիզմը 1920-ական

[1] **Հովհաննիսեան Ռ.,** Հայ Յեղափոխական Դաշնակցության դերը Հայաստանի Հանրապետության մեջ, «Դրօշակ», թիւ 19 (1402), 13 յունվարի, 1993, էջ 32-33:

թվականներին համաշխարհային իրականության ամենազորեղ քաղաքական հոսանքներից էր, և հաշվի չնստելը դրա հետ հավասարազոր էր ինքնակործանման, ինչը օբյեկտիվորեն չգնահատվեց հայ հասարակական-քաղաքական ազդեցիկ ուժերի մեծ մասի կողմից: Այլընտրանք չկար, և հայ ժողովուրդը ներքաշվեց համաշխարհային քաղաքականության՝ իր համար անսովոր և նոր ընթացքի մեջ, կանգնեց խորհրդայնացման անխուսափելի փաստի առաջ, և այդ հանգամանքը, իր բոլոր բացասական շերտանստվածքներով հանդերձ, այնուամենայնիվ որոշակի դեր կատարեց ազգապահպանման գործում, փրկեց բռնի ուծացումից ու ֆիզիկական ոչնչացման դեռևս առկա վտանգից:

Այն փակեց մի կարգի հեռանկարների խմբի ճանապարհը, և քողարկված վիճակում պահեց մի այլ որակի հնարավորությունների ու հեռանկարների համակարգը, որը պարզորոշվեց 1980-ական թվականների վերջին- 1990-ական թվականներին[1]**:** Իրավիճակի այդ սրընթաց գահավիժումները շատ դիպուկ են նկատել Կովկասի գծով անգլիացի հետազոտողներ Դ. Մ. Լանգը և Ք. Ջ. Ուոքերը. ***«1920 թ. ընթացքում աշխարհի իրավիճակը այնպիսի դրամատիկ փոփոխություններ կրեց, որ այլևս իմաստազրկվեցին դաշնակից տերությունների՝ Հայաստանին տված խոստումները... բուռն վիճաբանություններից հետո... դաշնակցական կառավարությունը որոշեց խաղաղ կերպով իշխանությունը հանձնել բոլշևիկներին և ինչպես առածն է ասում, նրանք գերադասեցին «կարմիր լինել, քան մեռած»***[2]**:** Այսպիսով, Հայաստանի՝ այսպես կոչված «սովետիզացիան» այլընտրանք չուներ և դա աշխարհաքաղաքական ստեղծված իրավիճակի ակնհայտ իրողությունն էր և տրամաբանական արդյունքը:

Այն դարձավ աշխարհաքաղաքական նոր իրողությունների արտացոլանքը, որն Անդրկովկասում նոր իրավիճակ ստեղծեց, ձևավորեց նոր քաղաքական քարտեզ, որի իրական ձևավորողները միմյանց հետ դաշնակցած քեմալական Թուրքիան էր և Խորհրդային Ռուսաստանը, որը Եվրոպայից մեկուսացման պայմաններում

---

[1] **Տե՛ս** Հայոց Քաղաքական պատմություն (դասախոսությունների համառոտագիր), Եր., 1995, էջ 143:

[2] **Լանգ Դ. Մ., Ուոքըր Ք. Ջ.,** Հայերը (Հայ ժողովրդի պատմություն/ խմբ.՝ Կ.Ս. Խուդավերդյան), Եր., 1992, էջ 32:

հարկադրված էին գնալ իրենց շահերից բխող քայլերի և ռազմավարության՝ փորձելով արդեն բոլշևիկյան զգեստավորմամբ վերակերտել նոր Ռուսական իմպերիան: Իսկ այդպիսի պայմաններում փոքրիկ Հայաստանի Հանրապետությունը 1920 թ. թուրք-հայկական պատերազմում լիովին ուժասպառված և ջախջախիչ պարտություն կրած զինուժով՝ բանակով ի զորու չէր դիմագրավելու ո՛չ քեմալական Թուրքիային, ո՛չ էլ Խորհրդային Ռուսաստանին: Իսկ այդ պայմաններում Հայաստանին ելք չմնաց, քան ընդունելու խորհրդայնացմամբ պարտադրված նոր աշխարհաքաղաքական կարգը:

ԳԼՈՒԽ 4.

ՀԱՅԿԱԿԱՆ ՋԻՆՈՒԺԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ 1918-1920 ԹԹ.

պ. գ. դ., պրոֆեսոր Վ. Հ. ՎԻՐԱԲՅԱՆ

Առաջին Հանրապետության բանակը ստեղծվել է աննկարագրելի ծանր սոցիալ-տնտեսական և աշխարհաքաղաքական պայմաններում: Հայաստանի անկախության հաստատման պահին հայկական զորքը կազմված էր առանձին Հայկական կորպուսից և կորպուսի իրավունքներ ունեցող Հատուկ ջոկատից: Ինչպես կորպուսը, այնպես էլ ջոկատը Անդրկովկասի փլուզմամբ դուրս եկան Կովկասյան բանակի հրամանատարության ենթակայությունից և դարձան ինքնուրույն միավորներ, ընդ որում կառավարության դեր կատարող Ազգային ժողովի համաձայնությամբ ղեկավարությունն անցավ կորպուսի հրամանատարին: 1918 թ. մայիսի 15-ին Ալեքսանդրապոլի վրա թուրքերի հարձակումից և Ղարաքիլիսայի ու Սարդարապատի մատույցներում մղված մի շարք ճակատամարտերից հետո Հայոց զինուժը մատակարարման առումով հայտնվեց ծանր վիճակում: Խնդիրն այն է, որ բոլոր պահեստները մնացին թուրքերի ձեռքին և Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսում, ուր հետագայում կապված 1918 թ. վրաց-հայկական դեկտեմբերյան պատերազմի հետ լուրջ բարդություններ առաջացան, և վրացիները կամայականորեն արգելափակեցին «եղբայրական» ժողովրդին հասանելիք զենք ու զինամթերքի առաքումը Թիֆլիսից Երևան, բռնագրավեցին Հայաստանին պատկանող ռազմական ունեցվածքը, միաժամանակ արգելվեց ամեն տեսակի պարենամթերքի և մանուֆակտուրայի դուսբերումը Վրաստանի սահմաններից: Իսկ եթե հաջողվում էլ էր նշված հարցերում ինչ-որ լուծումներ գտնել, առաջանում էին ֆինան-

սական դժվարություններ, քանզի դրամական միջոցները ևս հայտնվել էին վրացիների ձեռքում[1]:

ՀՀ ռազմական նախարարության կազմավորումը սկսվեց 1918 թ. հունիսի 15-ին՝ ռազմական նախարարի նշանակմամբ, որին կից դեռևս Թիֆլիսում ձևավորվեց վարչական կարևոր մի մարմին՝ գլխավոր շտաբն իր 3 բաժիններով՝ գրասենյակով, տեսչական բաժիններով, և շարային ու զորահավաքային բաժանմունքներով[2]: Զորքերի ղեկավարումը բոլոր առումներով թողնվել էր Առանձին հայկական կորպուսի ձեռքում, որի գլուխ կանգնած անձը օգտվում էր գերագույն հրամանատարի իրավասություններից և որը գործում էր իրենից կառավարություն ներկայացնող Ազգային խորհրդի համաձայնությամբ: Հայաստանի Հանրապետության կառավարության ժամանումով Երևան հուլիսի 20-ին սկսվեց նոր ռազմական կազմակերպության ստեղծումը՝ զորքերը վերակազմավորելով վեց գնդային զորամասերի՝ բրիգադային հրետանիով և ինժեներական վաշտով, իսկ զորքերի ղեկավարման ողջ գործառույթները կենտրոնացվեցին Գլխավոր շտաբում[3]: Միայն դրանից հետո առաջին քայլերն արեցին ռազմական գերատեսչության համապատասխան կառույցները: Օգոստոսի 15-ին զորքի վերակազմավորումն ավարտվել էր: Հայկական կորպուսի վերակազմավորումը և Առանձին հայկական դիվիզիայի ձևավորման գործընթացները տեղի ունեցան Թուրքիայի անմիջական հսկողության պայմաններում: Բաթումիի ծանր պայմանագրի ստորագրումից հետո, 1918 թ. օգոստոսին Երևան ժամանեց Հայաստանի Հանրապետությունում Թուրքիայի ռազմական և դիվանագիտական ներկայացուցիչ Ալի Մեհմեդ փաշան[4]:

ՀՀ ռազմական համակարգում ժամանակավորապես պահպանվեցին նախկին ռուսական բանակում տեղ գտած սպայական-դասային աստիճանները, զինվորական աստիճանակարգման իրավունքը վերապահված էր կառավարությանը: ՀՀ զինված ուժերում գործնականում պահպանվեցին ռուսական բանակի սպայական կոչումները և աստի-

1 Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 275, ց. 5, գ. 79, թ. 44-45:

2 Տե՛ս նույն տեղում:

3 Տե՛ս նույն տեղում, թ. 46:

4 Տե՛ս **Саркисян Е. К.,** Из истории туцкой интервенсии в Армении в 1918 г., Е., 1970, с. 163-167:

ճանները, ուսադիրները և պատվանշանները, միայն համազգեստի հարցում փոձոխություններ կատարվեցին: Բանակի համակարգում կարևորվեց գլխավոր վերահսկիչի, զինվորական դատարանի, ռազմադատախազական հսկողության սահմանման դերը, ռազմական նախարարության համակարգը որոշակի համակարգման ենթարկվեց՝ ստեղծվեցին համապատասխան վարչություններ՝ թիկունքի, համբարակային, ռազմատեխնիկական, ռազմաինժեներական, ռազմաբժշկական, ռազմասանիտարական, անասնաբուժական և այլն: 1919 թ. սկզբներից ՀՀ բանակը բաժանվեց 7 ռազմական զորախմբերի և զորաջոկատների, կանոնավոր զորքի հետևակային և հեծյալ գնդերի թվաքանակը հասավ 11-ի[1]: Ռամամիլիցիոն զորամասերը կատարում էին երկրապահի դեր:

Բանակի կազմում կային 33 գեներալ, ավելի քան 250 գնդապետ, 2000-ից մինչը 2500 ավելի սպա, այդ թվում շուրջ 400 ռուս զինվորական[2]:

ՀՀ անդրանիկ զինվորական նախարարը դարձավ տաղանդաշատ զորավար, գեներալ-լեյտենանտ Հովհաննես Բարսեղի Հախվերդյանը (6 հուլիսի, 1918 թ. -27 մարտի, 1919 թ.), որից հետո կարևորագույն այդ ռազմաքաղաքական կառույցը գլխավորեց Քրիստափոր Գերասիմի Արարատյանը (27 մարտի, 1919 թ. - 3 ապրիլի, 1920 թ.)[3], այնուհետև՝ Ռուբեն Կարապետի Տեր-Մինասյանը (3 ապրիլի, 1920 թ. - 23 նոյեմբերի, 1920 թ.), իսկ ՀՀ վերջին ռազմական նախարարը՝ հանրապետության հերոսական մայրամուտին, կամ ավելի ճիշտն ասած՝ բոլշևիկյան շրջադարձի պահին հանդիսացել է Դրոն՝ Դրաստամատ Մարտիրոսի Կանայանը (24 նոյեմբերի, 1920 թ. - 2 դեկտեմբերի, 1920 թ.)[4]: Ըստ էության, ինչպես բազմանշանակ նկատում է Ռ. Տեր-Մինասյանը, բանակի անկյունաքարերը դրվել են գեներալ Հ. Հախվերդյանի

1 Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 200, ց. 1, գ. 422, թ. 13:

2 Տե՛ս **Հայոց պատմություն**, հատոր IV, գիրք առաջին, նորագույն ժամանակաշրջան (1918-1945 թթ.), Եր., 2000, էջ 49-51:

3 Ք. Արարատյանի հրամանով իր օգնականներ են նշանակվում Հայկական դիվիզիայի հրամանատար գեներալ Մ. Սիլիկյանը և Երևանյան զորաջոկատի պետ Դրաստամատ Կանայանը (Դրո)՝ Զինվորական նախարարի պարտականությունների լիազորմամբ: Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 204, ց. 1, գ. 132, թ. 43:

4 Տե՛ս **«Ուրբաթ»** (շաբաթաթերթ), Ե., 25. 05. 1990, **ՀԱԱ,** ֆ. 199, ց. 1, գ. 27, թ. 128:

ջանքերով, որի օրոք «զինուորական բաժինների գլուխ կը գտնուէին մասնագէտ զօրավարներ, որոնք բազմամեայ փորառութիւն ունէին ռուսական ծառայութեան մէջ. Նրանցից ոմանք յայտնի էին նոյնիսկ ռուսական բանակում»[1], որոնք «անհասկանալի եւ անընդունելի կը գտնէր Երեւանեան կազմակերպական նոր ձեւը՝ կիսաժողովրդական, կիսազինուրական»[2]: Հենց այդ հանգամանքը նկատի ուներ Ռ. Տեր-Մինասյանը, երբ գրում է. «այստեղ պիտի մատնանշեմ այն իրողութիւնը, որ Հախվերդեանի նախարարութեամբ սկսւում է մի նոր շրջան հայ զինուորական կեանքի մեջ: Գլխաւոր լինում է- Զինուորականութիւնը դուրս է քաղաքականութիւնից...1919 նախարարական փոփոխութիւնը հիմնական փոփոխութիւն առաջ չբերեց զինուորական կազմակերպութեան մէջ: Պահպանուեց տառացի կերպով Հախվերդեանի կառուցած զինուորական կազմուածքը, եւ այդպէս էլ պիտի լինէր, քանի որ Արարատեանը...աւելի համեստ էր իր զինուորական պատրաստութեամբ եւ ստեղծագործական պատրաստութեամբ եւ միայն մի առաւելութիւն ունէր՝ հայերէն խոսել գիտէր: Արարատեանը նախարար լինելով, չունէր առանձին մի ծրագիր. Աստիճանով, պատրաստութեամբ եւ բնաւորութեամբ աւելի ցած էր քան իր սպայակոյտում նստած զօրավարները, ինչպէս Նազարբէկեան, Հախվերդեան, Սիլիկեան, Գամազով, Բիսենկո եւայլն, եւ նա շարունակում էր այն, ինչ սկսուած էր, անում էր այն, ինչ գլխաւորապէս Հախվերդեանը կը թելադրէր կամ կը ներշնչէր: Զօր. նախարարութիւնը աւելի շուտ քողարկուած Հախվերդեանի նախարարութիւնն էր. Արարատեանի դերը կը սահմանափակուէր Հախվերդեանի կողմից պատրաստուած զինուորական իշխանութեան թէզերը պաշտպանելով խորհրդարանում»[3]:

Ռազմական գերատեսչության ձևավորման և զարգացման ուղղությամբ քայլերը բացմաբնույթ էին և լավ հաշվարկված. 1918 թ. օգոստոսի 8-ին Նախարարների խորհուրդը լսելում է խորհրդի անդամների առաջարկը նրանցից հատուկ կոմիտեի կազմման մասին՝ կառավարության հետ համատեղ ռազմական գերատեսչության կողմից ռազ-

1 **Ռուբէն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները. Արտասահման, Սասուն եւ Հայաստանի Հանրապետութիւն, Է հատոր, Բ. Հրատ., Պէյրութ, 1979, էջ 332:

2 **Ռուբէն,** Հայ յեղափոխականի մը յիշատակները, էջ 331:

3 Տե՛ս նույն տեղում, էջ 331, 333:

ման քաղաքականության կարևորագույն հարցերի լուծման համար: Ընդունված բանաձևում որոշվեց խորհրդի անդամներից կազել երկու հանձնաժողով՝ օրենսդրական կարգով քննարկման ենթակա հարցերի, կարևորագույն ճանաչված ռազմական և արտաքին քաղաքական հարցերի[1]:

Զորքի վիճակը լավ է ներկայացված Ա. Ջամալյանի մոտ, որը Հայոց Ազգային խորհրդին, Հայաստանի խորհրդին ուղղված 1918 թ. օգոստոսի 8-ի (N 286) պաշտոնագրում փաստում է այդ մասին. «Ճիշտ՝ նրանց դեմ (Թուրքիայի- Վ. Վ.) կանգնած է մեր թե' թվով և թե' ներքին կազմակերպվածությամբ և դիսցիպլինայով համեմատաբար ուժեղ զորքը, սակայն վերջինս ռազմամթերքի սաստիկ պակաս է զգում և այդ պատճառով հետևապես երկար դիմանալ չի կարող:

Մեր հանրապետության վիճակը, թե՛ ռազմական, թե՛ տնտեսապես և թե՛ ֆինանսական տեսակետից խիստ անկայուն է»[2]:

Հայկական կորպուսի գոյության ընթացքում 20-32 տարեկան ողջ արական բնակչությունը գտնվում էր զինվորական ծառայության մեջ, որը հանրապետության հռչակմամբ այլ խնդիրների առաջ կանգնեց, և կառույցի վերկառուցումն անհրաժեշտաբար առաջին պլան մղեց զորացրման խնդիրը, զորքերում թողնելով զորակոչային տարիքից բարձր, 20-25 տարեկան սպաներին, թույլ տալով սեփական հայեցողությամբ թողնել ծառայությունը[3]:

1918 թ. հոկտեմբերի 14-ին Նախարարների խորհրդի նիստում Զինվորական նախարարը զեկուցում է, որ անհրաժեշտ է հայտարարել բանակի մասնակի զորացրման մասին, մինչև 25 տարեկան զինվորներին ազատ արձակելով, զորքերի շարքերում թողնել միայն հինգ տարիքային խումբ՝ 20-ից մինչև 25 տարեկաններին, ներկայացնելով մասնակի զորացրման և դասալքության դեմ պայքարի կանոնները, ինչը գործնականում բանակի առողջացման նպատակ էր հետապնդում և արժանացավ Նախարարների խորհրդի հավանությանը, երաշխավորելով այն դնել ՀՀ պառլամետի քննարկմանը[4], որը հաստատվում է ՀՀ

1 Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 201, ց. 1, գ. 495, թ. 3:
2 Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց. 5, գ. 37, թ. 18 հակ.:
3 Տե՛ս նույն տեղում, գ. 79, թ. 47:
4 Տե՛ս նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 13, թ. 52:

պառլամենտի կողմից 1919 թ. հունվարի 17-ին[1], և ի վերջո ձեռնարկված միջոցների արդյունքում ծառայության մեջ գտնվողների թիվը կրճատվեց մինչև 16 հազար[2]: Կապված հանգամանքներից, զորքերի կազմակերպումը ենթարկվեց որոշ փոփոխությունների, և այդ իմաստով մի շարք սահմանային շրջանների պահպանության համար տեղական կազմակերպված բնակչության միջոցով ստեղծվեցին ռազմամիլիցիոն զորամասեր Ղազախի և Դարալագյազի շրջաններում: Այդպիսի զորամասերի ստեղծման անհրաժեշտությունը բխում էր նաև քուրդ-թաթարական ավազակաբարո խմբերից պաշտպանվելու նպատակադրումներով, որն այդ ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության համար իրական վտանգ էր ներկայացնում: Ըստ այդմ Կարսի մարզում և Սուրմալուի շրջանում ստեղծվեցին նաև կամավորական գնդեր, որոնց համալրումը հենված էր ոչ զորակոչային տարիքի անձանց վրա, որոնք ոչ վաղուց արձակվել էին պահեստազոր: Այդ գնդերի հիման վրա ձևավորվեց 4-րդ բրիգադը, սակայն բոլոր կողմերից սպառնացող վտանգի ներքո հարկ եղավ կրկին զորակոչել և ծառայության կանչել 26-30 տարեկան, իսկ այնուհետև՝ 31-32 տարեկան պահեստազորայիններին: Արդյունքում, հայկական զորքերը կազմված էին 4 առանձին հետևակային բրիգադներից՝ 9 գնդերից, ռազմամիլիցիոն գնդից և 2 ռազմամիլիցիոն գումարտակներից, 2 գնդից բաղկացած հեծյալ բրիգադից, Առանձին հեծյալ դիվիզիոնից, 4 առանձին հրետանային 12 մարտկոցանոց դիվիզիոնից 3 առանձին մարտկոցներից, Կարսի բերդի հրետանուց, ինժեներային գումարտակից, ռադիոհեռագրային դիվիզիոնից, ավիաջոկատից, ավտոմասից, 2 զրահապատ գնացքներից, սահմանապահ բրիգադից և այլն: Բանակն ուներ 2 զրահապատ գնացք, որոնցից մեկը նշանավոր «Վարդան Զորավարն» էր (N 3)[3]: 1919 թ. հուլիսի 17-ին ՀՀ կառավարությունը լսելով Զինվորական նախարարի զեկուցումը «Ազատամարտ» զրահապատ գնացքը պատրաստելու համար շուրջ 278 հազար ռ. հատկացնելու մա-

1 Տե՛ս **ՀՀ պառլամենտի օրենքները**, Եր., 1998, էջ 40-41:
2 Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 275, ց. 5, գ. 79, թ. 47:
3 Տե՛ս նույն տեղում, ֆ. 204, ց. 1, գ. 132, թ. 356:

սին, որոշում է համաձայն 1919 թ. հունիսի 5-ի օրենքի Զինվորական նախարարության հաշվին բացել վարկ պահանջված գումարի չափով[1]:

Բանակաստեղծ գործընթացների առումով կարևոր էր կառավարության 1919 թ. հուլիսի 30-ի նիստը, որում լսվում է վարչապետի զեկուցումը երկրի պաշտպանությունը կազմակերպելու համար «Ապահովության կոմիտե» կազմելու մասին. Կառավարությունը հիմք ընդունելով 1919 թ. հունիսի 5-ի օրենքը, որոշում է ա/ կազմել «Ապահովության կոմիտե» 3 հոգուց, զինվորական և ներքին գործերի նախարարներից, վարչապետի պաշտոնակատարի նախագահությամբ, կոպտացիայի իրավունք տալով հանձնաժողովին մինչև 3 հոգի, բ/ լիազորել այդ կոմիտեին անհետաձգելի դեպքերում որոշումներ կայացնել՝ առանց Նախարարների խորհրդի, սակայն պարտավորեցնելով զեկուցել իր որոշումների մասին առաջին իսկ հերթական նիստին[2]:

Զորքի կարիքների բավարարման համար Համբարակապետության կողմից Ալեքսանդրապոլում կազմակերպվեց համազգեստի, ճտքակոշիկների, ջուլհակային, գումակային-մեխանիկական, Կարսում՝ ջոլհակային արհեստանոց, Խնամատարության նախարարության կողմից Զինվորական համբարակապետությանը հանձնվեցին Ալեքսանդրապոլի և Նոր Բայազետում գտնվող ջուլհակային ֆաբրիկաները, նպատակ ունենալով կազմակերպել զինվորական կոպերատիվ, որը պետք է զբաղվեր արտասահմանյան ապրանքների ներմուծմամբ, զորքի կարիքներին ի սպաս դնել Չլդըրի և այլ լճերի ձկնային պաշարները, որոնք թեև հետաքրքիր մտահղացումներ էին, սակայն գործնականում հնարավոր չեղավ կյանքի կոչել[3]:

1918 թ. նոյեմբերի 18-ին Նախարարների խորհուրդը լսում է Զինվորական նախարարի զինվորականներին հաջորդ տարում ապագա ընտրություններից, այդ թվում քաղաքային Դումայում ընտրություններից մեկուսացման մասին, որը ըստ էության բանակի ապաղաքակա-

1 Տե՛ս **Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ**, Եր., Հայ. Ազգ. Արխիվ, 2014, էջ 250-254:

2 Տե՛ս **Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ**, էջ 268-369:

3 Տե՛ս նույն տեղում, թ. 48:

նացմանն ուղղված քայլերից էր: Բնականաբար, ընդունված որոշման մեջ նախագծին հավանություն է տրվում[1]:

1919 թ. ապրիլի 24-ի (N 146) Ռազմական գերատեսչության գծով Զինվորական նախարար գեներալ-մայոր Քր. Արարատյանի հրամանագրի համաձայն նրա օգնականներ գեներալ Սիլիկյանը և Դրոն դրվում են զորքերի հրամանատարության տրամադրության տակ՝ նրանց հանձնարարելով զորքերի խմբերի հրամանատարությունը կորպուսների հրամանատարների իրավունքով՝ գեներալ Նազարբեկյանի հայեցողությամբ իրենց հաստիքային պարտականությունների իրագործման հետ միասին[2]:

Հայոց զորքի հետ կապված մտահոգիչ հարցեր շատ կային, որոնք շոշափվում են ՀՀ վարչապետ Հ. Օհանջանյանի կողմից 1919 թ. հուլիսի 21-ին Անդրկովկասում բրիտանական գլխավոր կոմիսար կապիտան Ջ. Գրեյսիի հետ ունեցած զրույցում: Օհանջանյանը Ջ. Գրեյսիին հավաստացրել էր, որ բոլշևիզմը Հայաստանում մեռած է, որ իրենք մտադիր են երկիրը պաշտպանել բոլշևիկներից և Ադրբեջանի ագրեսիայից, որ անընդհատ պատերազմի մեջ գտնվելու հետևանքով արտադրությունը վատ վիճակում է, որ հայ զինվորի դրությունը ճակատում շատ ծանր է, որ նրանք վատ են զինված, վատ են սնվում, վատ են հագնվում, ռոճիկներն էլ վճարվում են ոչ ժամանակին[3]:

1919 թ. հուլիսի 31-ին Զինվորական նախարարության կողմից հաստատվում է Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար, գնդապետ Մ. Զինկևիչի ստորագրությամբ ռազմամիլիցիոն գնդի հաստիքակազմը, որը բաղկացած էր երկու գումարտակներից, բեռնակիր, գնդացրային, կապի և հեծյալ հետախուզական հրամկազմերից: Սպաների թիվը հասնում էր խաղաղ ժամանակ 36-ի, պատերազմի ժամանակ 44-ի, բժիշկների թիվը՝ համապատասխանաբար 1-ի և 3-ի, զինվորներինը՝ 336-ի և 1710-ի, գնդի շարային և ոչ շարային զինվորների թիվը՝ 360-ի և 1846-ի, սպաներինը՝ 44-ի[4]:

1 Տե՛ս նույն տեղում, ֆ. 204, ց. 1, գ. 216, թ. 48:
2 Տե՛ս նույն տեղում, գ. 132, թ. 6:
3 Տե՛ս նույն տեղում, գ. 511, թ. 79-80:
4 Տե՛ս նույն տեղում, ֆ. 204, ց. 1, գ. 132, թ. 321-322:

Ըստ Ռ. Տեր-Մինասյանի, 1919 թ. Զինվորական նախարարության հաշվից օգտվում էին 18 հազարից մինչև 24 հազար հոգի, իսկ սվիններիի կամ թրերի թիվը կազմում էր 5 հազարից մինչև 9 հազար հոգի: Զորակոչված սպաների ու զինվորների հազիվ 40 %-ն էր, որ բանակում դառնում էր թնդանոթ կրակող, սուր կամ սվին բռնող[1]:

Բանակի ստեղծումը առաջնային էր, որի մասին փաստում է նաև Հ. Քաջազնունին. «ունէինք բանակ, որ լաւ զինւած էր անգլիական զէնքերով ու մաքուր հագնւած անգլիական հագուստներով, ունէինք բաւականաչափ ռազմապաշար, մեր ձեռին էր Ղարսի պէս կարեւոր բերդ»[2]: Տեղին է սակայն ասվածի կապակցությամբ նշել, որ վերընշվածից շատ բան իրականությանը չէր համապատասխանում, քանզի հակական զորքը թե՛ զենքի, հրացանի և թե՛ռազմամթերքի սուր պակասություններ ուներ:

Կարսի բերդային հրետանու ժամանակավոր հաստիքակազմի համաձայն 1919 թ. օգոստոսի 25-ի տվյալներով սպաների թիվը հասնում էր 35-ի, չինովնիկներինը՝ 8-ի, զինվորներինը՝ 965-ի, և այլն[3]:

1919 թ. սեպտեմբերի 6-ին խորհրդարանի կողմից ընդունված օրենքով Զինվորական նախարարության անունով նախահաշվից դուրս բացվեց 11,7 միլիոն ռուբլու վարկ Ամերիկայից հայկական զորքի համար երկարաճիտք կոշիկներ գնելու նպատակով[4], Զինվորական նախարարությանը բաց թողնվեց 12 միլիոն ռուբլի[5]: Իսկ արդեն 1919 թ. նոյեմբերի 11-ին կառավարությունը լսելով Զինվորական նախարարի զեկուցումը 1919 թ. օգոստոսի 29-ի օրենքով բացված 12 միլիոն վարկից կոշիկներ գնելու համար 6.927.400 ռ. բաց թողնելու մասին, հավանություն է տալիս և ներկայացնում պառլամենտ՝ պարտավորեցնելով կոշիկները անմիջապես վերցնել[6]: Մեծ Բրիտանիայից 600 ջորի, 150 սայլ և զինվորական հանդերձանք գնելու համար խոհրդարանի

---

1 Տե՛ս **Ռուբէն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, էջ 334-335:

2 **Քաջազնունի Յովհ.,** Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլ եւս, էջ 41:

3 Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 204, ց. 1, գ. 132, թ. 372:

4 Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 86, թ. 41: «ՀՀ օրենքների հավաքածու. 1919 թ.», էջ 4: «ՀՀ պառլամենտի օրենքները (1919-1920 թթ.)», Ե., 1998, Էջ 169:

5 Տե՛ս **«ՀՀ պառլամենտի օրենքները (1919-1920 թթ.)»**, էջ 168:

6 Տե՛ս **Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ**, էջ 336-337:

1919 թ. օգոստոսի 30-ի օրենքով կարճ ժամանակ անց ՀՀ բանակի պարենավորման և աշխատող ուժի սննդի հարցը լուծելու համար Ժինվորական նախարարությանը բաց թողնվեց 9,2 միլիոն ռուբլի[1]:

Սակայն հարցերը հեշտությամբ չէին լուծվում, քանզի հաղթահարել պարենային սովը Առաջին հանրապետության օրերին այդպես էլ չհաջողվեց, չլուծվեց նաև զորքի պարենային ապահովման հարցը, չնայած օրինակ Ա. Բաբայլանը առանց լուրջ հիմքերի հակառակն է պնդում. «Պարէնի եւ ռազմամթերքի տեսակէտից մեր զօրքը միանգամայն ապահովուած էր: Բանակը հագնուած էր շատ լաւ: Նոր ստացուած զգեստները արդէն բաժանուած էին զինուորներին: Քիչ գումարտակներում միայն զինուորների մի մասը դեռ կրում էր հին հագուստ, այն էլ լրացըուեց վերջին օրերում: Զինուած ռուսական եւ կանատական հրացաններով, մեր վաշտերը ապահովուած էին առատ փամփուշտների պաշարով: Մեր զինուորները ստանում էին սպիտակ հաց, միս, խտացրած կաթ, կակաո եւ կոնսերվներ: Հաստատ էր, որ մեր թնդանոթների թիւը գերազանց էր թշնամու թւից: Միայն գնդացիրների պակաս էր զգացւում: Երկաթուղու գիծ ունենալով եւ կապուած լինելով այդ եւ ուրիշ յարմար ճանապարհներով թիկունքի հետ, մենք ի վիճակի էինք ամէն օր նոր ուժեր, պարէն եւ ռազմամթերք հասցնել բանակին: Մի քանի անգամ ճակատ եղանք եւ ականատես էինք զօրքի բարձր տրամադրութեան: Զենք-զինամթերքի պակասը մասավորապես զգացվել է առաջին ազգամիջյան բախումներից մեկի՝ 1918 թ. վրաց-հայկական դեկտեմբերյան պատերազմի ժամանակ, երբ կոչ է արվում հանձնել ֆրանսիական «Լեբել» և թուրքական «Մաուզեր» տեսակի հրացան և ռուսական երեքգծանի հրացանի փամփոշտներ[2]:

Այդքան գերազանցութիւն ունենալով, մենք կարծում էինք, որ պիտի յաղթենք ու թշնամուն յետ շպրտենք մեր երկրից»[3]:

Սակայն իրողությունները այլ փաստերի մասին էին վկայում և ըստ այդմ ելնելով ծայրահեղ անհրաժշտությունից, Ա. Մանուկյանի պնդմամբ հրամայական խնդիր և առաջադրվում ժողովրդի զինա-

1 Տե՛ս **«ՀՀ պառլամենտի օրենքները (1919-1920 թթ.)»,** էջ 168:

2 Տե՛ս **«Զանգ»,** Երևան, 25 դեկտեմբերի, 1918:

3 **Բաբայեան Արտ.,** Կարսի անկումը, «Հայրենիք», Բոստոն, 1923, 13 հոկտեմբերի, էջ 56-57:

թափման հետ միաժամանակ ինչպես ստեղծել միլիցիայի ուժեղ կազմ, այնպես էլ զորքը անհամեմատ ավելի որակյալ զենք-զինամթերքով համալրելու խնդրի լուծման նպատակով բնակչությունից բռնագրավել առկա ձենքը, անօրինական զենք ուեցողներին և թաքցնողներին ենթարկել 3 ամվա բանտարկության կամ 3 հազար ռուբլի տուգանքի[1], և բացի այդ՝ զենք-զինամթերքը ՀՀ տարածքում բնակվող մահմեդականներին վաճառողները ևս ամենևին էլ չէին ազատվում քրեական պատասխանատվությունից:

Իսկ արդեն 1920 թ. սկզբին հայկական բանակի համբարակապետության վարչության կարիքների բավարարման համար հատկացվեց 85,4 միլիոն ռուբլու վարկ[2]: 1920 թ. ապրիլին Զինվորական նախարարության հաշվեհամարին փոխանցվելու մասին հոդված ընդունվեց, որով բաց թողնվեց 35,6 միլիոն ռուբլու վարկ[3]: 1920 թ. ապրիլին Նախարարների խորհրդի արտակարգ քաղաքական ծախսերի համար (օրենքն այդպես հիմնավորվեց) որոշվեց հատկացնել 40 միլիոն ռուբլու վարկ[4]:

Այդ ընթացքում ձևավորման գործընթացներ գնացին նաև զինվորական գերատեսչության մի շարք այլ կառույցներ կազմակերպելու ուղղությամբ: Տարբեր վարչությունների և զինվորական հաստատությունների ղեկավար պաշտոններում նշանակվեցին հայկական սպայակույտի բարձրաստիճան զինվորականները: Այսպես, Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի պետ նշանակվեց գեներալ-մայոր Ա. Դոլուխանովը (Դոլուխանյան), հրետանային վարչության պետ՝ գեներալ-մայոր Կ. Գամազովը, համբարակային վարչության պետ՝ գեներալ-մայոր Հ. Չումարովը, Զինվորական նախարարության ռազմատեխնիկական վարչության պետ՝ գեներալ-մայոր Շահբուդաղովը, իսկ ՀՀ զինվորական դատարանի նախագահ դարձավ գեներալ-մայոր Հ. Քիշմիշևը (Քիշմիշյանը), որը 1919 թ. հուլիսից պաշտոնաթող եղավ՝ դառնալով Թիֆլիսում Վրաստանի հանրապետության կառավարութ-

---

[1] Տե՛ս **Վիրաբյան Վ. Հ.** Հայաստանի Հանրապետության հետախուզությունը և բանակը, Եր., «Լուսակն» հրատ., 2009, էջ 198:

2 Տե՛ս «**ՀՀ օրենքների հավաքածու**. 1920 թ.», էջ 52-53:

3 Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 202, ց. 1, գ. 333, թ. 159:

4 Տե՛ս նույն տեղում, թ. 160:

յանը կից ՀՀ դիվանագիտական հավատարմատարին առընթեր զինվորական վարչության ղեկավար (ռազմական կցորդ), իսկ ՀՀ զինվորական դատարանի նախագահի պաշտոնում նրան փոխարինեց գեներալ-մայոր Վասիլի Միխայիլի Խորոմանսկին և այլն: 1919 թ. սեպտեմբերին գեներալ-մայոր Ա. Դոլուխանյանի փոխարեն ՀՀ զինվորական շտաբի պետ է նշանակվում Ա. Կ. Շնեուրը, որին հետագայում փոխարինում է գեներալ-մայոր Բ. Վ. Բաղդասարովը, օգոստոսի 30-ից ՀՀ Զինվորական նախարարության գլխավոր համբարակապետ է դառնում գեներալ-մայոր Ա. Բեյ-Մամիկոնյանը[1]: ՀՀ Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի տեսչական բաժնի պետը 1920 թ. փետրվարի 13-ի վիճակով գնդապետ Պյոտր Պյոտրի Աթաևն էր, գրասենյակի պետը՝ փոխգնդապետ Սերգեյ Ալեքսանդրի Արեշևը, Զորահավաքային բաժնի պետը՝ գնդապետ Վենյամին Մակարի Մակկավաևը, Հրետանային վարչության պետը Կոնստանտին Միխայիլի Գամազովը[2]:

Անվտանգության համակարգի ձևավորման և բանակաստեղծ գործընթացների ճանապարհին, անշուշտ, կարևոր քայլ էր 1919 թ. սկզբին ՀՀ Զինվորական նախարարությանն առընթեր Ռազմական խորհրդի ստեղծումը, որը կոլեգիալ ձևով պետք է քննարկեր ռազմական-բանակային շինարարության և մարտական գործողությունների սկզբունքային հարցերը՝ որոշումներ կայացներ դրանց վերաբերյալ: Ռազմական խորհրդի կազմի մեջ մտան Հայկական դիվիզիայի ավագ զորահրամանատարները և զինվորական վարչությունների պետերը, ռազմական խորհրդի անդամներ դարձան գեներալներ Մ. Սիլիկյանը, Բաղրամյանը, վարչությունների մի շարք պետեր և այլն: 1919 թ. մարտի 25-ին Ռազմական խորհրդի նախագահ նշանակվեց Հայկական կորպուսի նախկին հրամանատար գեներալ-լեյտենանտ Թ. Նազարբեկյանը, որի վրա ապրիլի 24-ի կառավարության հրամանագրով դրվեց նաև ՀՀ զորքերի գլխավոր հրամանատարի՝ հայկական բանակի սպարապետի պարտականությունը[3]: Զորքերի ղեկավարումը բոլոր

1 Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 204, ց. 1, գ. 40, թ. 43-44, 46, 59, **Կարապետյան Մ.,** Հայաստանի Հանրապետության բանակը (1918 -1920), Ե., 1999, էջ 30-31:

2 Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 200, ց. 1, գ. 519, թ. 4,

3 Տե՛ս նույն տեղում, էջ 31:

առումներով մնաց առանձին Հայկական կորպուսի հրամանատարի ձեռքին, որն ուներ գլխավոր հրամանատարի իրավունքներ: ՀՀ Ռազմական կազմակերպության ստեղծման ուղղությամբ հետագա աշխատանքները շարունակվեցին 1918 թ. հուլիսի 20-ից հետո՝ Հայաստանի Հանրապետության կառավարության Թիֆլիսից Երևան տեղափոխվելուց անմիջապես հետո:

Հայկական զորքի հրետանային մասը բաղկացած էր հրետանային բրիգադից, որի հրամանատարը մինչև 1919 թ. մարտը ապագա ՀՀ զինվորական նախարար գնդապետ Խ. Գ. Արարարատյանն էր, որի գլխավորած բրիգադը բաղկացած էր 3 դիվիզիոններից, որն իր մեջ ներառնում էր թեթև և լեռնային մարտկոցներ, առանձին հեծյալ լեռնային մարտկոցը, առանձին 2 հրանոթից բաղկացած հաուբիցային ծանր մարտկոցը և հայկական հրետանային վարժական անձնախումբը:

Ռազմական հարցերն առաջնային էին. 1919 թ. մարտի 20-ին կառավարությունում լսվում են Զինվորական նախարարության վերաբերյալ զեկուցումներ, որոնց հիման վրա որոշվում է օրինակ, ամուսնացածներին տալ կրկնակի նպաստ, թույլ տալ ժողովրդին հրացանները վաճառել ալյուրով, իսկ զինվորական նախարարին թույլ տալ հրացաններ ձեռք բերել դրամով՝ առաջին հերթին բավարարելով զորքի կարիքները, բաց թողնելով ամսական 16 հազար փութ ալյուր և 4 հազար փութ բրինձ կամ ձավար, սպաներին տալով ամառային համազգեստի համար 1000-ական ռուբլի և այլն[1]:

1919 թ. հուլիսի 1-ին ընդունվում է օրենք բնակիչների հաշվառման, զինվորացուների հաշվառման և զորակոչի մասին՝ 16-ից մինչև 43 տարիքի, ընդ որում ընդհանուր զորքերում ծառայելու ժամկետը սահմանվում էր 18 տարի, որից 3 տարին իրական ծառայության ժամկետն էր: Արտոնություն տրվում էր ընտանիքի միակ կերակրողին, ընդունվեց դասալքության դեմ պայքարի արդեն ընդունված օրինագիծը, բարձրագույն ուսումնական հաստատությունների սովորողները 20

1 Տե՛ս **Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ**, էջ 135-136:

տարին լրանալուն պես ենթակա էին զորակոչի: Որոշակի կարգ էր սահմանվում բանակը սպայական կազմով համալրման խնդրում[1]:

1920 թ. ապրիլի 16-ին (N 227/ա) ՀՀ զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանը զորակոչի վերաբերյալ զեկուցում է ունենում ՀՀ Նախարարների խորհրդում, նշելով, որ 1920 թ. հուլիսի 1-ի օրենքի համաձայն ըստ ընտանեկան դրության զինվորական ծառայությունից ազատվում էին ընտանիքի միակ կերակրողին: Սակայն Ռ. Տեր-Մինասյանը ընդգծելով, որ այդ օրենքի իրագործման ժամանակ ակնհայտ է դարձել, որ զինծառայողների մի խոշոր թիվ չի գնում զորքի շարքերը և, որ ըստ ձեռքի տակ ունեցած տեղեկությունների, այդ հողի վրա տեղի են ունենում զեղծարարություններ, առաջարկում է շտապ կերպով զորամասերի մարդկանց պակասը լրացնելու համար անհրաժեշտ համարել դադարեցնել մինչև 25 տարեկան հասակ ունեցող ընտանիքի միակ կերակրողների զինակոչից ազատելն իրագործել այն պայմանով, որ այդ անձանց ընտանիքներին խնամատարության նախարարության կարգադրությամբ պատշաճ ստուգումից հետո տրվի ամենամսյա նպաստ: Նա գտնում էր, որ բոլոր տարկետումները և ազատումները, որոնք չեն համապատասխանում այդ նախագծվող կանոններին, պետք է համարել ուժը կորցրած և այդ զինապարտներին, որոնք այդ պահին օգտվում էին տարկետումներից և ազատումներից, իսկույն կոչել զինվորական ծառայության: Ըստ այդմ նա առաջարկում էր իր կողմից ներկայացվող օրինագիծը համաձայն կառավարությանը ապրիլի 8-ին տրված զեկուցման, իբրև շտապողական անցկացնել օրենսդրական կերպով[2]: Իսկ Ռուբենի կողմից առաջարկված օրինագիծը, որի տակ ստորագրել էին նաև վարչապետ Ա. Խատիսյանը, ֆինանսների նախարարը, և այն ներկայացվել էր օրինավարչական հանձնաժողովին և զորաժողովի հատուկ հանձնաժողովին, Ներքին գործերի նախարարությանը, հետևյալ բովանդակությունն ուներ. «ընտանիքի միակ կերակրողներին զինակոչից ազատելու կանոնների փոփոխության մասին. Դադարեցնել զինվորական ծառայությունից ընտանիքի միակ կերակրողներին ազատումը մինչև 25 տարեկան հասակը, ներփակելով

1 Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 199, ց. 1, գ. 28, թ. 133:
2 Տե՛ս նույն տեղում, գ. 118ա, թ. 1, 3:

այդ տարիքին ևս, այդպիսիների ընտանիքների պատշաճ ստուգումից հետո խնամատարության մինիստրության կարգադրությամբ տալ ամենամսյա նպաստ հավասար պետական ծառայողների վերաբերյալ ընդունված ռոճիկի նվազագույն չափին, որի համար ամեն ամիս 6.000.000 ռուբլի վարկ բաց թողնել 3000 հոգու համար Խնամատարության մինիստրությանը վճարելու ամսական ամեն մեկին 2000 ռ. Բոլոր տարկետումները և ազատումները, որոնք չեն համապատասխանում այս կանոններին, համարել այժմ ոյժը կորցրած և ներկա ժամանակ դրանցող օգտվող զինապարտներին անհապաղ կոչել զինվորական ծառայության»[1]:

1920 թ. ապրիլի 20-ին կառավարությունը լսելով Զինվորական նախարարի նախագծի մասին ընտանիքի միակ կերակրողին զինակոչից ազատելու կանոնների մասին, որոշում է այն հաստատել և մտցնել պառլամենտ համապատասխան օրինագիծ՝ սկզբի համար խնդրելով վեց միլիոն ռուբլի վարկ՝ հաշվելով 2 հազար ռ 3 հազար հոգի զինվորագրվածների համար[2]:

1920 թ. հուլիսի 14-ին ՀՀ Ռազմական նախարաը զեկուցագրով դիմում է Ամերիկյան կոմիտեին՝ հայկական զորքը մինչև սեպտեմբերի 1-ը ապահովելու ալյուրով և մթերքներով, տագնապելով այն հանգամանքից, որ օգոստոսի 1-ից դադարել էր կաթի, շաքարի և այլնի մատակարարումը, ինչը զորքին դրել էր վատ վիճակի մեջ: Զինվորական նախարարը կարծում էր, որ ամերիկյան կոմիտեի կողմից զորքին մթերքներից և ալյուրից զրկելը նշանակում է վերջինիս պարենավորելու տեսակետից դնել ծանրագույն դրության մեջ, ըստ այդմ խնդրելով զորքին բաց թողնել մոտ 39000 փութ ալյուր: Փաստվում էր, որ եթե դրականորեն այդ հարցը չվճռվի և ամերիկացիների կողմից օգոստոս ամսին ալյուր չտրվի, անխուսափելիորեն սով կսկսվի, ուստի անհրաժեշտ էր համարում դիմել Ամերիկյան կոմիտեին՝ զորքի համար բաց թողնելու նաև շաքար, կակաո, թանձրացրած կաթ և օճառ: Ռազմական նախարարը գտնում էր, որ երկրի շահերի տեսանկյունից անհրաժեշտ կլիներ, որ երկրի այդպիսի կարիքներին բավարարություն տալը

1 Տե՛ս նույն տեղում, թ. 24:

2 Տե՛ս **Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ**, էջ 433:

կատարվի հաջորդական կարգով, առաջին հերթին բավարարելով որբերին, հիվանդանոցներին և բանտերին, երկրորդ հերթին՝ զորքին և ապա մյուս հիմնարկություններին: Ռազմական նախարարը խնդրում էր, որ եթե խորհուրդը համաձայն լինի ներկայացվող զեկուցմանը, շտապ կարգով պետք է դիմել Ամերիկյան կոմիտեի ներկայացուցիչ գնդապետ Տելֆորդին՝ ապահովելու հայկական զորքերը անհրաժեշտ մթերքներով և այլուրով մինչև սեպտեմբերի 1-ը[1]:

Հայկական զինվորականությունը, որն անցել էր 1918 թ. մայիսյան հերոսական ճակատամարտերի բովով և ձեռք բերել անհրաժեշտ մարտական փորձ, ու կուսակցական-քաղաքական որոշակի շրջաններ ձեռնամուխ եղան ռազմական մեքենայի ձևավորմանը, և այդ ճանապարհին կատարված ամեն մի քայլ բանակի հիմնախնդիրների տեսանկյունից էական էր: 1918 թ. սեպտեմբերի 9-ին Թ. Նազարբեկյանը հրապարակում է հրամանագիր Հայկական դիվիզիայի գծով, ըստ որի ազդարարվում էր Առանձին Հայկական կորպուսի լուծարման և փոխարենը Հայկական դիվիզիայի կազմավորման մասին, նշելով, որ կառավարության որոշման և կնքված հաշտության պայմանագրի համաձայն կորպուսը արձակվում է՝ գործելով շուրջ 10 ամիս, որից 5 ամիսը՝ մարտական գործողությունների ընթացքում: Հրամանագրում ընդգծում էր հետևյալը. «Ես հույս եմ տածում, որ մեր ունեցած անհաջողությունների դասերը անհետք չեն կորչի: Այս պահին իմ մարտական եղբայրակիցներ՝ հրաժեշտ տալով ձեզ, ես իմ սրբազան պարտքն եմ համարում խորին շնորհակալություն հայտնել կորպուսի բոլոր ծառայողներին՝ գեներալից մինչև շարքայինի, ով ազնվորեն այն ծանր օրերին կատարել է իր պարտքը»[2]: Հայկական դիվիզիայի շտաբը կազմված էր 19 սպայից և չինովնիկից, 209 զինվորից, որոնցից շտաբային ծառայողներ էին 38-ը[3]:

Բանակաստեղծ և պետական անվտանգության համակարգի ձևավորմանը նպատակաուղղված գործընթացներում իր արժանի ներդրումն ունեցավ ՀՀ կառավարությունը, որի գործունեության հիմքում, այլ հիմնախնդիրների հետ միասին, խոր արմատներ էին գցել նաև

1 Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 199, ց. 1, գ. 28, մաս II, թ. 75:
2 Տե՛ս նույն տեղում, ֆ. 204, ց. 1, գ. 42, թ. 73:
3 Տե՛ս նույն տեղում, գ. 132, թ. 37, 40:

պետական անվտանգության գլխավոր երաշխավոր և հիմք հանդիսացող ազգային զինուժի՝ կանոնավոր բանակի շինարարության ցավոտ խնդիրները, որոնք առաջնային նշանակություն ունեին Առաջին Հանրապետության ռազմաքաղաքական և պետական համակարգի՝ քիչ թե շատ լիարժեք կայացման տեսանկյունից: Հիմք ընդունելով ՀՀ նախարարների խորհրդի 1918 թ. օգոստոսի 10-ի որոշումը՝ Զինվորական նախարար Հ. Հախվերդյանը 1918 թ. օգոստոսի 13-ին մի շատ կարևոր հրամանագիր է ստորագրում զինվորական գերատեսչության գծով, որոնց նպատակը բանակի առողջացումն էր և նրա շարքերից վնասակար և ոչ օգտակար տարրերի վտարումը: Նա հանձնարարում էր ընդունել հետևյալ միջոցները. 1) զորամասերի պետերին՝ դիվիզիայի շտաբ ներկայացնել հիմնավորված կարծիք բոլոր այն սպաների և զինվորական աստիճանավորների վերաբերյալ, որոնց ծառայության մեջ թողնելը կճանաչվի վնասակար և անօգտակար, 2) Առանձին Հայկական դիվիզիայի պետի կարգադրությամբ դիվիզիայի շտաբին կից կազմավորել Որակավորման (Ատեստացիոն) հանձնաժողով՝ բաղկացած 7 հոգուց՝ դիվիզիայի զորամասերի ներկայացուցիչներից՝ նշված բնութագրումները դիտարկելու համար[1]: Ընդ որում հանձնաժողովը համակողմանիորեն պետք է վերհաներ այն զինվորականներին վերաբերող գործերը և դրանց կից բնութագություն-գնահատականները, որոնց վերաբերյալ կային զորամասերի հրամանատարների անհրաժեշտ հարցումները: Համապատասխանաբար հանձնաժողովը որակավորումով որակավորման ենթարկված անձանց բաժանում էր երեք կատեգորիաների. ա) անձինք, որոնց վարքագծում կան զինվորական օրենքների համաձայն պատժի ենթակա հանցագործության նախանշաններ, բ) ծառայության համար վնասակար և անօգուտ անձինք, գ) այնպիսիք, որոնց օգտակարությունը կամ ոչ օգտակարությունը ծառայության տեսանկյունից ոչ լիովին էր որոշակիացվել: Օբեր-սպաների նկատմամբ հանձնաժողովի որոշումները հաստատվում էին դիվիզիայի պետի, իսկ շտաբի սպաներինը՝ դիվիզիայի պետի կողմից, 3) հանձնաժողովի որոշման համաձայն առանձին կատեգորիաների վերաբերող անձինք հանձնվում էին զինվորական դատի. համապատասխա-

1 Տե՛ս նույն տեղում, ֆ. 204, ց. 1, գ. 215, թ. 2:

նաբար երկրորդ կատեգորիայի անձինք որպես բանակի շարքերին ոչ արժանի վտարվում էին ծառայությունից՝ զրկվելով բոլոր տեսակի լիկվիդացիոն նպաստներից և այդ մասին նշումներ էին կատարվում նրանց ծառայողական ցուցակներում, երրորդ կատեգորիայի անձանց հարցը հանձնաժողովի որոշմամբ տեղափոխվում էին փորձառության այլ զորամասեր՝ որոշակի ժամկետով, իսկ զորացրումը կատարվում էր ռազմական գերատեսչության գծով հրամանի համաձայն, 4) բացահայտ դասալիքներին կարգադրվում էր հանձնել դատի՝ թեկուզև հեռակա դատապարտման համար՝ անմիջապես զրկելով բոլոր տեսակի առավելություններից և շնորհներից, 5) բոլոր նրանց, ովքեր ենթարկվել էին պատժի՝ դատարանով, ինչպես նաև ոչ համապատասխանաբար հեռացվածների մասին զորամասերի պետերի միջոցով հրահանգվում էր հայտնել գավառական զինվորական պետերին և վարչական իշխանություններին ըստ հեռացվածների բնակության վայրերի[1]: Այդ աշխատանքներին ակտիվ մասնակցություն ունեցան նաև կազմակերպական ոչ միանշանակ գործընթացներ ապրող հայկական բանակի բարձրագույն սպայակույտի ներկայացուցիչները, նրա Գլխավոր շտաբը և կառավարական մարմինները:

Հայկական բանակի կազմակերպման, նրա սպայական կրտսեր և բարձրագույն հրամանատարական կազմի որակական հատկանիշների բարելավման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցավ նաև Հայկական դիվիզիայի սպաների որակավորման ստուգման՝ անվանականչի համար հանձնաժողովի ստեղծումը: Այսպես, Հայկական դիվիզիայի գծով 1918 թ. օգոստոսի 26-ի հրամանագրում (No 15) դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Մ. Սիլիկյանը հայտարարագրում էր այդ հանձնաժողովի անդամ-սպաների ցուցակի մասին՝ միաժամանակ հրամայելով բոլոր զորամասերի պետերին հանձնաժողովի անդամներին տրամադրել անհրաժեշտ ամեն կարգի բանավոր և գրավոր տեղեկություններ սպաների ծառայողական և բարոյական հատկությունների մասին, որոնց որակավորման փաստաթղթերը գտնվում էին հանձնաժողովի անդամների տրամադրության տակ: Հանձնաժողովի նախագահն էր Գլխավոր շտաբի գնդապետ Մ. Զինկևիչը, անդամակցում էին

1 Տե՛ս նույն տեղում:

գնդապետ Արարատյանը, փոխգնդապետ Գոդձիևը, կապիտան Նեստերովսկին, շտաբս-կապիտան Խաչատուրյանցը[1]: Եվ վերջապես, շուտով պատրաստվում է որակավորման մասին համապատասխան փաստաթուղթ: 1919 թ. հունվարի 17-ին ՀՀ պառլամենտը օրենք է ընդունում իսկական զինվորական ծառայության գործը կարգավորելու համար Հայաստանի Հանրապետության իրագործել ՀՀ բանակի կազմի մասնակի զորացրում[2]:

1919 թ. հուլիսի 9-ին Զինվորական նախարարության գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար Մ. Զինկևիչը ստորագրում է հրամանագիր Ռազմական նախարարության սպաների և պաշտոնյաների որակավորման մասին կանոնադրությունը՝ տալով դրանց ընդհանուր դրույթները[3]:

Բանակի՝ պետական անվտանգության համակարգի այդ անքակտելի բաղկացուցիչ օղակի նկատմամբ կար համապարփակ ուշադրություն, որը հստակ երևում է կառավարության և քաղաքական-կուսակցական ուժերի գործունեության վերլուծությունից: Հայկական զինուժը 1918-1920 թթ. ստեղծվում և ապրում էր կայացման ոչ միանշանակ գործընթացներ: ՀՀ առաջին Զինվորական նախարար գեներալ Հովի. Հախվերդյանի վկայությամբ, 1918 թ. աշնան սկզբներին հայկական զինված ուժերում ծառայում էին շուրջ 18 հազար զինվոր ու սպա[4]: Ռազմական մի տեղեկագրի համաձայն, զինվորական ծառայության մեջ գտնվողների թիվը 1919 թ. գարնանը հասնում էր 16 հազարի[5], Հ. Քաջազնունու հուշագրի տվյալներով, որը ներկայացվել էր եվրոպական տերությունների ուշադրությանը, 1920 թ. հուլիսի վերջերին զորքերի ընդհանուր թիվը հասնում էր 18 հազար մարդու: Այնտեղ նշվում էր զորքի թվակազմի որոշ բաղադրիչների, հագուստեղենի պակասության մասին[6]: Իսկ արդեն ՀՀ զինվորական նախարարության Գլխավոր շտաբի 1919 թ. հունվարի 16-ի տվյալներով հայկական զորքում

1 Տե՛ս նույն տեղում, ֆ. 204, ց. 1, գ. 32, թ. 1-2:
2 Տե՛ս **«Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները»,** էջ 40-41:
3 Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 204, ց. 1, գ. 132, թ. 77:
4 Տե՛ս նույն տեղում, ֆ. 45, ց. 1, գ. 132, թ. 77:
5 Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց. 5, գ. 79, թ. 47:
6 Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 498, թ. 33:

կային 295 ավագ ենթասպա, 1168 կրտսեր ենթասպա, 1201 եֆրեյտոր և 13214 զինվոր, ընդամենը՝ 15878 հոգի[1]: Այս պարագայում իրականությունը բացահայտելու համար անհրաժեշտ է համադրել մի շարք տվյալներ՝ պարզելու համար փաստացի վիճակի իրական պատկերը, լեգենդն ու ճշմարտությունը: Կ. Սասունու տվյալներով 1920 թ. հայ-թուրքական պատերազմի նախօրյակին հայկական բանակի թվակազմը հասնում էր 35 հազար մարդու[2], այդ թվում Կարսի ճակատում Կարսի ճակատի սպայակույտի պետ Ալ. Վեքիլյանի պնդմամբ առավելագույն թիվը հասել է 16,5 հազարի[3], Ալ. Խատիսյանի տվյալներով, ՀՀ բանակը բոլոր 4 ուղղություններում՝ Կարս-Ալեքսանդրապոլի, Սուրմալուի, Նախիջևանի, Դիլիջան-Ղազախի ճակատներում 1920 թ. նոյեմբերի սկզբներին ուներ 16700 սվին, որի մեջ չէին մտնում հեծելազորը, հրետանի և հատուկ նշանակության զորամասերը՝ սակրավորներ, կապավորներ և այլն, գումարած դրան Զանգեզուրում գտնվող 800 սվինը, Երևանում տեղակայված 10-րդ պահեստային գունդը և այլ զորատեսակներ ևս, այսինքն վերընշյալի հետ միասին՝ գործող բանակում կար շուրջ 25 հազար մարդ, ավելացրած դրան թիկունքի ծառայողների, բեռնակիրների, կառապանների, շտաբներում աշխատողների, առողջապահության հիմնարկների, սպասավորների 30 տոկոսը, որոնք զզինվորական կառույցի մեջ էին հավառված, բանակի ամբողջ կազմում ընդգրկվածների թիվը հասնում էր ըստ Ալ. Խատիսյանի՝ 34 հազար մարդու, և վերջապես գումարած դրան ոչ կանոնավոր զորամասերում գտնվող զինյալների թիվը, որոնց թիվը հասնում էր 6 հազարի, ի վերջո ստացվում էր 40 հազարանոց բանակ[4]: Հայկական բանակի Գլխավոր շտաբին առընթեր արդեն 1919 թ. ապրիլին հիմնվում է Հետախուզական և հակահետախուզական բաժանմունքը, չնայած պետականորեն ազգային անվտանգության տեսանկյունից չափազանց կարևոր այդ գործի հիմքերը դրվել էին դեռևս 1918 թ. օգոստոսին[5]:

---

1 Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 35, թ. 17:

2 **Սասունի Կ.,** Հայ-թուրքական պատերազմը, «Հայրենիք» (Բոստոն), 1926, թիվ 11-12, էջ 112:

3 Տե՛ս **Արծրունի Վ.,** Հայ-տաճկական պատերազմը, էջ 20:

4 Տե՛ս **Խատիսեան Ալ.**, նշվ. աշխ., էջ 289-290:

5 Տե՛ս մանրամասն **Վիրաբյան Վ. Հ.,** Հայաստանի Հանրապետության Պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը, Եր., ԵՊՀ հրատ., 2015:

Հայկական զորքի համալրումը իրականացվում էր բարդություններով, զորամասերից և ոչ մեկը այդպես էլ չկարողացավ համալրումը կատարել հաստիքով նախատեսված չափերով՝ ռեսուրսների անբավարության, և անշուշտ, անզսպելի դասալքության հետևանքով, որը չհաջողվեց անգամ հայկական բանակի ամեամարտունակ զորամասերից մեկին՝ Դրոյի գլխավորած Երևանյան զորաջոկատին, որը համարվում էր ամենամարտունակներից. Այն 1919 թ. մարտի 14-ի վիճակով համալրված էր 1/3 չափով, ինչի մասին կա վերջինիս վկայությունը. «Իմ ենթակայության տակ այժմ կա միայն 1345 սվին, 6 մարտունակ հրանոթ, 2 շարժական գնդացիր և 1 զրահագնացք, այն դեպքում, երբ նվազագույնը անհրաժեշտ է 4350 սվին, 3 հեծյալ էսկադրոն, 14 հրանոթ, 2 զրահագնացք և կարգի բերել բոլոր գնդացրային անձնակազմերը»[1]:

Իսկ այդ նույն ժամանակ, ԱՄՆ-ի ռազմական առաքելության ղեկավար, գեներալ Ջ. Հարբորդի վկայմամբ Մ. Քեմալ փաշան ուներ 35 հազար զինվոր, որոնք տեղաբաշխված էին Արևմտահայաստանի նահանգներում և Անատոլիայում[2], սակայն այդ թվի հետ չի համաձայնվում Հ. Գանգրունին, որի կարծիքով, թուրքերն ունեին 3-րդ, 13-րդ և 15-րդ զորաբաժինները՝ 50 հազար հետևակ, 2600 այրուձի, 306 հատ հին ձևի թնդանոթ, որից Կարսի ուղղությամբ կենտրոնացած էին Կարաբեքիրի ուժերը[3]: 1920 թ. ապրիլի 5-ի ՀՀ Գլխավոր շտաբի հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի ամփոփագիրը (N 14), որը կարևոր, թեկուզև տեղ-տեղ այսօրվա մոտեցումների տեսանկյունից վիճարկելի տեղեկատվություն է հաղորդում Թուրքիայում տեղի ունեցած իրադարձությունների ու դեպքերի մասին, սակայն դիտարժան փաստեր է պարունակում: Դրանում ասվում էր, որ թուրքական բանակի թիվը կազմում է 51.476 մարդ, իսկ Էրզրումում գտնվող 15-րդ կորպուսինը՝ 13.338 մարդ: Ամփոփագրում հայտնվում էր, որ 15-րդ - կորպուսի դիվիզիաներից 12-րդի շտաբը գտնվում է Խորասանում, 35-րդ գնդինը՝ Քեփրի-Քեյում, 36-րդ գնդինը՝ Զիվինում, Հասան-Կալայում

1 Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 199, ց. 1, գ. 35, թ. 146:

2 Տե՛ս **«Յառաջ»**, Երևան, 23 յունվարի, 1920 թ.:

3 Տե՛ս **Գանգրունի Հր.**, Հայաստան. 1920-1921 եւ միջազգային դիվանագիտութիւնը, 1-ին Հր., Պէյրութ, 1986, էջ 96:

գտնվում է հրետանային մարտկոց՝ 4 հրանոթներով: Գործակալական այդ տվյալների համաձայն, 15-րդ կորպուսը պատրաստվում էր գործողությունների հայկական սահմանի վրա՝ նպատակ հետապնդելով հայերին ետ շպրտել Կարսի նահանգից և վերականգնել այսպես կոչված Հարավարևմտյան մահմեդական հանրապետությունը, դրանով իսկ անմիջական կապ հաստատելով Ադրբեջանի հետ[1]:

Այլ կապակցությամբ Կ. Սասունին ուրիշ տվյալ է բերում, միաժամանակ իր կարծիքն արտահայտելով հայկական բանակի վերաբերյալ. «Հայաստանի Հանրապետութեան կազմութենէն տարի մը յետոյ՝ ընդհանուրի համար ընդունելի էր 40.000 զինուորի մասին խօսիլը: Հայկական բանակը մնաց բոլորի մտքին մէջ 40.000-նոց բանակ մը: Հայկական մեծախօսիկութիւնը «անպարտելի» տիտղոսն ալ տուաւ անոր. իսկ սահման չունեցող երեւակայութիւնը (որ ասիական յատկանիշ մըն է) երբեմն այդ բանակին օգնական կամաւորներ կը ղրկեր դեպի Կարս եւ թիւը այդ կամաւորներուն կը հասցնէր 60,000-ի, ու այդ մասին, մէկը միւսի բերանէն թռցնելով, արտասահմանի մամուլի մէջ շռնդալից լուրեր կը տըպուէին»[2]: Ժամանակակիցներից Գ.Չալխուշյանը գտնում է, որ բանակի թիվը թղթի վրա հասնում էր 27 հազարի, իսկ իրականում 10 հազարի[3] էլ չէր հասնում, Հ. Փաստրմաճեանը բանակի թվակազմը հասցնում էր ընդամենը 30 հազարի, որ հայ բանակէն հազիւ թէ 7000 հոգի կարողացան կեդրոնացնել Կարսի ճակատի վրայ՝ հոկտեմբերի 14-ի վճռական ճակատամարտի համար[4], իսկ արդեն 1920 թ. նոյեմբերի վերջերին Զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանի ներկայացրած մի տեղեկագրի համաձայն հայկական բանակի զինվորների և սպաների քանակը՝ օժանդակ կազմով հանդերձ հասնում էր 34 հազարի, իսկ խմբերի հետ միասին՝ 40 հազարի[5], որից միայն 60 տոկոսն էր մարտունակ, իսկ մնացած օժանդակ ծառայությունների՝ շտաբների, հավաքակայանների, պարետային վաշտերի, տեխնիկա-

1 Տե՛ս մանրամասն **Վիրաբյան Վ.**, Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգը, էջ 340-341, 510:

2 Տե՛ս **Սասունի Կ.,** նշվ. աշխ., էջ 104:

3 Տե՛ս **Չալխուշեան Գ.,** Ի՞նչ էր եւ ի՞նչ պիտի լինի մեր ուղին, Վիեննա, 1923, էջ 20:

4 Տե՛ս **Փաստրմաճեան Հ.,** Լեռնային պատերազմ, Փարիզ, հրատ. Հայ Կամաիորնեբու եւ մարտիկներու Միութեան, 1938, էջ 15-16:

5 Տե՛ս **Վրացյան Ս.,** Հայաստանի Հանրապետություն, էջ 514:

կան ստորաբաժանումների ծառայողներ էին [ընդհանուր թվաքանակի 30 տոկոսը] և Կամավորական խմբեր[1]:Տեղին է նշել, որ ՀՀ ԳԱ կողմից հրատարակված «Հայ ժողովրդի պատմության» բազմահատորյակի՝ 8 հատորյակի 7-րդ հատորում բերվում է տվյալ շուրջ 40 հազարանոց բանակի մասին, որն իբր թե եղել է 1920 թ.[2]: 11-րդ Կարմիր բանակի հետախուզական բաժնի պետ Կոզիխի և զինվորական կոմիսար Տարասկիխի ներկայացրած զեկուցագրում նշված է, որ 1920 թ. օգոստոսի 1-ի դրությամբ հայկական զինված ուժերում կար «ընդամենը 17445 սվին, 2075 թուր, 260 գնդացիր, 79 թեթև հրանոթ, 3 զրահագնացք, 3 զրահամեքենա, 3 տանկ», այդ թվում 11-րդ բանակի ռազմաճակատի դիմաց «3900 սվին, 625 թուր, 103 գնդացիր, 12 թեթև հրանոթ և 1 զրահագնացք»[3], իսկ այդ նույն ժամանակ, որոշակի հաշվարկների համաձայն Քյազիմ Կարաբեքիրի կողմից գլխավորված Թուրքիայի Արևելյան ռազմաճակատի զորքերի ընդհանուր անձնակազմում կար 50 հազարից ավելի մարդ[4], ինչն էլ 1920 թ. աշնանը՝ թուրք-հայկական պատերազմի նախօրեին կենտրոնացվեց Հայաստանի Հանրապետության սահմանների վրա, որի պայմաններում էլ թուրքական զորքը սեպտեմբերի 23-ի լույս 24-ի գիշերը ձեռնամուխ եղավ լայնածավալ ռազմական գործողությունների հայկական պետության դեմ:

Վերջապես մի քանի տվյալներ ևս հարկ է մեջ բերել, որից հետո կանցնենք եզրահանգումների: Հայաստանի պառլամենտի անդամ Հ. Տեր-Հակոբյանի տվյալներով Հայաստանի Հանրապետությանբանակի ընդհանուր թիվը 1920 թ. հոկտեմբերին հասնում էր 55 հազարի, սակայն նաև ավելացնելով, որ «անոնցմէ կռուող ուժն էր 31.000 սվին, և մնացյալը թիկունքին ուժեր էին», իսկ «32.000-էն 23.000 կը գտնվի Կարսի ճակատը», «պատերազմի սկսած ատեն ճակատի զօրքերը նվազ էին», *իսկ թուրքականինը*՝ նա գտնում էր, որ բաղկացած է 25 հազար հետևակից և 3 հազար հեծելազորից, որին ավելացնելով նույն-

1 **Ռուբէն,** նշվ. աշխ., հ. 7, էջ 234-236:

2 Տե՛ս **Հայ ժողովրդի պատմություն**, Ե., ԳԱԱ հրատ., 1967, հ. 7, էջ 52:

3 Տե՛ս **Զոհրաբյան Էդ.,** 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Եր., 1997, էջ 171:

4 Տե՛ս **Հայոց պատմություն**, հատոր IV, գիրք առաջին, էջ 254:

քան այլ ոժեր, գտնում էր, որ թուրքական զինվորության ընդհանուր թիվը հասնում էր 40-45 հազարի[1]:

Իսկ այժմ ըստ էության: Փաստերի համադիր խոր վերլուծությունը ցույց է տալիս, որ այս թվական տվյալների մի մասը, որ բերվում է ժամանակակիցների և ոչ ժամանակակիցների կողմից, անիրական է, կամ էլ լավագույն դեպքում ենթակա է քննական խոր և անաչառ վերլուծության, ինչն էլ հնարավորություն կտա պարզելու ճշմարտությունը հայկական բանակի, իրոք, մարտունակ թվակազմի մասին, ինչպես նաև նրա մարտական հնարավորությունների և ունեցած ներդրումի մասին հանրապետության անվտանգության համակարգի առջև ծառացած խնդիրների լուծման տեսանկյունից, ըմբռնելու այդ բանակի հաղթանակների և ցավալի պարտությունների պատճառները, ամփոփելու պատերազմական դասերը: Այս ուռճացված թվական տվյալները առավել ևս անընդունելի են, երբ ակնհայտ է դառնում, որ այդ ահռելի հայկական բանակը գրեթե առանց լուրջ դիմադրության պարտություն է կրել Հայաստանի Հանրապետության համար ճակատագրական նշանակություն ունեցած՝ 1920 թ. սեպտեմբերի 23-ին սկսված պատերազմում՝ իրեն գրեթե ոչնչով, կարծես թե, էապես չգերազանցող թուրքական բանակից, իսկ դա նսեմացնում է մեր ժողովրդի իրական արժանիքները, նրա հերոսական պատմությունը: 40-50 հազարանոց բանակի մասին պատկերացումը չափազանց վտանգավոր հայեցակետ է, քանզի այն լավ ծառայություն չի մատուցել մեզ ռազմահայրենասիրական, քաղաքական և աշխարհայացքային դաստիարակության հիմնախնդիրների տեսանկյունից: Այն, որ 1918-1920 թթ. գոյություն ունեցած հայկական բանակի ընդհանուր թվաքանակից մարտունակ էր իրապես ընդամենը 16-18 հազարը, դա մեկ անգամ ևս Ս. Վրացյանը հաստատում է ՀՅԴ Ամերիկայի Կենտրոնական Կոմիտեին 1919 թ. մայիսի 18-ին հասցեագրված նամակում, մասնավորապես ընդգծելով այն մասին, որ *«մոտ 16-17 հազարանոց բանակը կարգապահ է և քաջ»*: Այնուհետև նա ավելացնում է, որ *«աշխատել են ստեղծել նոր զորամասեր»*՝ հենց սա կարելի է տեղավորել 40-50 հազարանոց բանակի ստեղծման

1 **Տեր-Հակոբյան Հ.,** Հայաստանի վերջին աղետը, Կ. Պոլիս, 1921, էջ 88, 93:

երազանքի ու գոյություն ունեցած լինելու պատկերացումների անիրական շրջանակներում, եղածն ուռճացնել[1]:

Սակայն հարկ է նշել, որ շատ դեպքերում ՀՀ զորքի մասին պատկերացումները և մասնավորապես դաշնակիցներին ներկայացված տվյալները, հատկապես որակի հետ կապված, միակողմանի էին, առավել ևս դա կապվում էր դեպի Արևմտահայաստան սպասվող ընդարձակման հետ: Ինչպես պարզվում է Սան-Ռեմոյում 1920 թ. ապրիլի 23-ին Գերագույն խորհրդում հրավիրված հանդիպման ժամանակ Իտալիայի ներկայացուցիչ Նիտտին իր մտահոգությունը հայտնելով Հայաստան խնդրով, տեղեկացնում է, որ Մուստաֆա Քեմալը Էրզրումում շուրջ 14 հազար զորք է կենտրոնացրել, որ դաշնակից պետությունները անկարող են օգնական զորք ուղարկել Հայաստանին: Նիտտին ընդունելով, որ եթե Դաշնակից պետությունները տրամադիր լինեն տալ զենք, ռազմամթերք և սպաներ, հայ զորքը ընդունակ կլինե՞ր գրավել և պահել Էրզրումը, ինչպես և առհասարակ գրավել նոր սահմանները: Դրան ի պատասխան, ՀՀ պատվիրակության ղեկավար Ավ. Ահարոնյանը երևի թե ներկաների, որոնց թվում էին Լլոյդ Ջորջը, լորդ Քըրզընը, Միլերանը, Զինվորական հանձնաժողովի անդամները Մարշալ Ֆոշի գլխավորությամբ, վրա տպավորություն թողնելու և համոզելու համար բերում է հետևյալ կիսահիմնազուրկ փաստարկը. *«...պետք է ասել, որ Մուստաֆա Քեմալի բանակի և քանակը, և արժեքը շատ չափազանցված է թուրք գործակալների և նրանց համակիր օտարականների միջոցով: Մուստաֆա Քեմալ 14 հազար զորք չունի <այլ շատ պակաս> և այն էլ մեծ մասամբ անկանոն զորք, գյուղացիներ, շատերը բռնի զենքի տակ պահված, ամենքը վատ հագնված, վատ զինված, անվարժ: Կան և քյուրդ ձիավորներ 1200 հոգի, որոնք միայն թալանի համար են լինում: Մեր բանակի գլխավոր շտաբի տեղեկությունները, որոնք ճշգրիտ են, կասկած չեն թողնում»*[2]: Սա բացահայտ թյուր պատկերացում էր Ավ. Ահարոնյանի կողմից, առավել ևս համոզիչ չեն բերված փաստերը հայկական զորքի մասին. *«Գալով հայ հանրապետական բանակին, պետք է ասեմ, որ նրա թիվը երերում է 20-25 հազարի*

1 **Վրացեան Ս.,** Հին թղթեր նոր պատմութեան համար, Բէյրութ, 1962, էջ 88:

2 Տե՛ս **Ահարոնյան Ավ.,** Սարդարապատից մինչև Սևր ու Լոզան, Քաղաքական օրագիր. 1919-1927, Եր., ԵՊՀ հրատ., 2001, էջ 98:

մեջ, նայելով թե զենք ու ռազմամթերք որչափ կա: Դուք գիտեք, որ այդ զորքը պատերազմի սկզբից մինչև այսօր կռվում է Entente-ի թշնամիների դեմ՝ առանց սպանալու մեր Դաշնակիցներից ոչ մի փամփուշտ, ոչ մի հրացան և առհասարակ որևէ օգնություն, սակայն կռիվների մեջ վարժված այդ բանակը կարողանում է պաշտպանել մեր երկիրը բազմաթիվ թշնամիների դեմ: եվ ես վստահաբար կարող եմ հայտարարել, որ մենք հեշտությամբ, ինչպես հաստատում են մեր լավագույն զինվորական մասնագետները, 1-2 ամսում կարող ենք հասցնել մեր բանակը մինչև 40-50 հազարի, եթե մեզ տրվի համապատասխան քանակով զենք ու ռազմամթերք»[1]: Առանց որևիցե լուրջ հիմքերի և փաստարկման, Ահարոնյանը համառորեն պնդել է, թե «***Այդ վերականգնված ու մեծացրած բանակով, վստահաբար կարող եմ ասել, որ մենք պիտի կարողանանք մեր սեփական ուժերով գրավել և պահել և Էրզրումը, և մեր մյուս գավառները Թյուրքիայում: Դրա համար մեզ հարկավոր է, ինչպես ասացի, զենք ու ռազմամթերք, ավելացնեմ նաև՝ Դաշնակից պետությունների սպաներ և Գերագույն խորհրդի վարկն ու դրոշակը***»[2]: Սա իրոք Ահարոնյանի անտեղյակության և թյուրըմբռնման մասին է վկայում, առավել ևս հակառակ կարծիքի են եղել Գերագույն խորհրդի Զինվորական հանձնաժողովի անդամները և նրա նախագահ Մարշալ Ֆոշը, որի կարծիքը հերքում էր հայկական զորքի մասին Ահարոնյանի սնանկ փաստարկները, որոնք քաղաքական հիմք ունեին, բայց ոչ ռազմական[3], և հենվում էին այդ ժամանակ աշխարհում առաջնակարգ բրիտանական հետախուզության տվյալների վրա: Հետաքրքիրն այն է, որ նույնիսկ 1920 թ. կեսերին, երբ արդեն հայկական բանակի ձևավորման հարցերը պետք է լուծված լինեին, դեռևս անմխիթար վիճակ էր իշխում և շատ բան կախված էր անիրականի մոտ սպասելիքների հետ, հարցեր կային, որ հետաձգման ենթակա չէին: 1920 թ. մայիսի 10-ին Միացյալ պատվիրակության նիստի ժամանակ Պողոս Նուբար փաշայի մոտ կրկին արծարծվում են բանակի կազմակերպման և համալրման խնդիրները, սակայն որից բացահայտ երևում են շատ անորոշություններ: Նիստին ելույթ ունեցած գեներալ

1 Տե՛ս **Ահարոնյան Ավ.,** նշվ. աշխ.,, էջ 99:
2 Տե՛ս նույն տեղում, էջ 99:
3 Տե՛ս նույն տեղում, էջ 101:

Գաբրիել Ղորղանյանը հայտնելով հայկական զորքի քանակի և կարողության մասին, սպասելիքների առումով նշում է, որ կարող են, եթե ռազմամթերք ունենան, բանակի թիվը հասցնել 40 հազարի, ասելով, որ անգլիացիները ուղարկել են, հունական կառավարությունն էլ տաս հազար հրացան է ուղարկել, սակայն ինչպես հետո պարզվեց, բրիտանական զենքի մի զգալի մասը պարզապես պիտանի չէր[1], և մեծամասամբ ուղղակի խոտան էր: Սակայն այստեղ անըմբռնելին այն է, որ Առաջին հանրապետության ռազմաքաղաքական այրերը իրատեսորեն չգնահատելով իրադրությունը և սեփական հետախուզության հայթայթած տվյալների կարևորությունը, պնդում էին, առաջին հերթին նկատի ունենալով Ահարոնյանի արտահայտած վերոնշյալ կարծիքը Քեմալի և նրա ռազմուժի հնարավորությունների մասին, թյուր տեսակետ էին արտահայտվում, թե իբր ***«մեծ Դաշնակիցները հաճախ ինչ հիմարություններ անում են...առայժմ գոհ լինենք, որ մենք կարողացանք Քեմալի ուժերի լեգենդան ցրել»***[2]:

Մի բան վատ էր, որ հաշվարկները շատ դեպքերում կառուցված էին անտանտյան դաշնակիցներից ակնկալվող օգնության վրա, ինչը լավ է նկատել Ռ. Հովհաննիսյանը. «Եվ իրոք, անգլիացիներից, շոտլանդացիներից և հնդկական ահարկու գուրխա, ռաջպուտ ու փենջաբցի զինվորներից կազմված բրիտանական հետևակային զորաբաժինը Անդրկովկասի բոլոր հանրապետությունների համար միակ տեսանելի արտաքին օժանդակությունն էր հարավից թուրքերի նորոգված ոտնձգությունների և հյուսիսից ռուսների ներթափանցման դեմ»[3], որի հետագա աստիճանական դուրսբերման մասին հայտարարությունը Անդրկովկասից 1920 թ. օգոստոս-սեպտեմբերին ***«սոսկում սփռեց կովկասյան ամբողջ պարանոցով մեկ»***[4]:

1920 թ. առհասարակ հայ քաղաքական-ռազմական շրջաններում, ինչպես նաև դաշնակիցների վերին քաղաքական և ռազմական պաշտոնեության մեջ կիսատ-պռատ մտայնություն էր իշխում, թե ստեղծ-

1 Տե՛ս նույն տեղում, էջ 118:

2 Տե՛ս նույն տեղում, էջ 118-119:

3 Տե՛ս **Հովհաննիսյան Ռ.,** Հայաստանի Հանրապետություն, հատոր II, Վերսալից-Լնդոն, 1919-1920, Ե., 2014, էջ 23:

4 **Հովհաննիսյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 23:

վող և զարգացման միտումներ դրսևորող հայկական պետությունը չի կարող կենսունակ լինել առանց Արևմտահայաստանի և դեպի ծով համընդհանուր երաշխավորված ելքի: Սակայն նաև բացահայտ ակնհայտ էր, որ այդ հաշվարկը կառուցված էր բացառապես արտաքին օժանդակության, մասնավորապես ռազմական հենքի վրա, որը առկախ խնդիր էր: Պարզ էր նաև ներքուստ, որ դաշնակիցները գործնականում ձախողել էին Հայաստանի նկատմամբ խնամակալության կամ մանդատի ստանձնման հարցը, օդում էին թողել ռազմուժի միջոցով օգնության տարբերակը: Դաշնակիցները չցանկանալով անմիջական մասնակցություն ունենալ այդ հարցերում, ծանրության կենտրոնը տեղափոխեցին հայկական զինուժին զենք ու զինաթերքի տեղափոխման ոլորտը, թեկուզև այստեղ էլ բավարար հետևողականություն և սրտացավություն չցուցաբերեցին: Դա նշանակում էր հայկական պետության այրերին թողնել իրենց համար ճանապարհ բացելու և ազգերի համաշխարհային ընկերակցությունում տեղավորվելու դժվարին խնդիրը՝ բավարարվելով ոչ արդյունավետ և թղթային-դեկլարատիվ սնամեջ միջամտություններով: Ակնհայտ էր դառնում, որ Դաշնակիցները անգամ սևրյան՝ օգոստոսի նախընթաց ժամանակահատվածում բավարար վճռականությամբ չէին տրամադրված Գերմանիայի հետ մինչև վերջ հասցնելու վերսալյան գործընթացը, առավել ևս մինչև վերջ վճռական լինելու Թուրքիայի հետ, մասնավորապես նրա զինաթափման և հաշտության լիարժեք տարբերակի պարտադրման խնդրում: Հետևաբար, կարծես թե բրիտանացիները և նրանց պատերազմական գրասենյակը ծանրության կենտրոնը տեղափոխելով ՀՀ-ի զինված ուժերին զենքի ու զինամթերքի տեղափոխման դաշտ, այստեղ էլ անորոշ մոտեցումներ ունեին, առավել ևս դա շաղկապում էին Բաթումիից և Անդրկովկասից իրենց զորքերի դուրսբերման գործընթացների հետ: Հայկական բանակին նեցուկ լինելու բրիտանական մտադրությունը ամիսներ շարունակ քաշքշուկի առարկա էր դարձել Մեծ Բրիտանիայի Ռազմական նախարարության կաբինետներում, այն միտված էր ոչ թե հայկական պետության ամրապնդմանը, այլ ավելի շատ նպատակային էր Հարավային Կովկասը բոլշևիկյան Ռուսաստանից պատնեշելու առումով, չնայած այստեղ էլ տարօրինակ ելևեջումներ էին նկատվում: Դա կապված էր բրիտանական կաբինետի հեռահար ռազմավարության հետ՝

իբր թե Խորհրդային Ռուսաստանի հետ սկզբի համար նպատակահարմար առևտրա-տնտեսական շահերի ապահովման նկատառումներով կամ էլ Թուրքիայի պարագայում՝ նոր ռազմաքաղաքական զարգացումների դեպքում մերձավորարևելյան միջանցքում իրենց ռազմաքաղաքական շահերն ունենալու երկիմաստ մտադրությունների կենսապահովման այդ պահին արդեն նշմարվող և դեռևս անորոշ, սակայն արդեն ուրվագծվող նոր ռազմավարության հեռահար մեկնակետային դիրքերից: Ողջ 1919 թ. և 1920 թ. առաջին կեսը ՀՀ պատվիրակները կորցրեցին այն բանի վրա, որ դաշնակիցներին «համոզեն» պատշաճ վճռականություն ցուցաբերելու Մուդրոսով պայմանավորված՝ Թուրքիայի նկատմամբ սահմանափակումներում մինչև վերջ գնալու, սակայն նրանք որևիցե լուրջ միջոց չձեռնարկեցին Թուրքիային զրկելու զենք ու զինամթերքի այն հսկայական պաշարներից, որոնք նա ունեին, ինչպես նաև գործնականում չխոչընդոտեցին թուրքերին տիրանալու Ռուսական բանակի նահանջից հետո Էրզրումում մնացած ռազմամթերքի ու զենքի, հրետանու, հրազենի չափազանց հարուստ պահեստներին: Ավելին, թուրքերը օգտվելով դաշնակիցների անվճռականությունից, ոչ բավարար հետևողականությունից և հսկիչ գործառնությունների գրեթե բացակայությունից, նորաստեղծ հայկական պետության և զինուժի հիմքերը խարխլելու նպատակով, ի դեմս Ադրբեջանի և Վրաստանի իրենց համար Կովկասում հենարան ստեղծելու մտադրությունների իրականացման համար ուղարկում էին գործակալներ, լրտեսներ, զենք ու զինամթերք հակահայկական ուժերին տրամադրելու համար ընդդեմ հայկական պետության, ապստամբական-խռովարարական օջախներ ձևավորելով Հայաստանի տարբեր շրջաններում՝ դրան դրդելով հակառակվելու դաշնակից պետությունների ու Փարիզի հաշտության վեհաժողովի իրենց կարծիքով հայամետ վճիռներին: Վիճակն ավելի էր վատթարանում, քանզի Ադրբեջանն ու մասնավորապես Վրաստանը դարձել էին Ռուսական կայսրության փլուզումից հետո մնացած հարուստ ժառանգության՝ ռուսական կայսերական զինանոցների, ռազմամթերքի և այլ ունեցվածքի սեփականատերերը, որը նրանց չհագեցրեց և արդեն Սպիտակ բանակների ջախջախումից հետո վրացիներն ու ադրբեջանցիները հայերի դանդաղկոտության պայմաններում, ամենևին էլ չկորցրեցին իրենց

գլուխը և շատ ճարպկորեն տիրացան նաև նրանց զենքի, ռազմամթերքի հսկայական կուտակումներին: Եվ ինչքան էլ ժամանակ չվատնեց 1919 թ. գեներալ Գ. Ղորղանյանը բրիտանական ռազմական նախարարության կաբինետներում՝ ձգտելով ապահովել հայկական բանակի վերակազմակերպման և արդիականացման համար ռազմական աջակցություն գտնելու և զինվորական հրահանգիչներ հրավիրելու հարցերի լուծումը, զինված ուժերի կարիքներն ու հնարավորությունները շաղկապելով Արևմտահայաստանի ազատագրման և այնտեղ հայկական պետության հաստատման և աստիճանական կայացման հետ, այդուհանդերձ ակնկալվող մեծ արդյունքների չհասավ, և ընդամենը հավաստիացումներ ստացավ: Գ. Ղորղանյանը Բրիտանական պատերազմական օֆիսից որևէ հաստատ խոստում և պարտավորություն չստացավ[1], իսկ ռազմական նախարար Ու. Չերչիլի մոտ ոչ խանդավառ կանխատրամադրվածություն կար, թե ցանկացած զինամթերք ի վերջո միայն հայտնվելու է Կարմիր Բանակի և թուրք ազգայնականների ձեռքին, ինչն իր մեջ իմաստ ուներ, քանզի արդեն այդ պահին բրիտանական կաբինետը այլ ռազմավարություն էր որդեգրել՝ որոշելով պաշտպանական գիծը ետ քաշել մինչև երկաթուղային ուղեկալները Պաղեստինում, Միջագետքում և Բիրջանդում՝ հյուսիս-արևելյան Պարսկաստանում, իսկ նման պայմաններում Բաթումիում մեկուսացված բրիտանական կայազոր պահելը համարվում էր թանկ հաճույք և վտանգավոր, այն դեպքում, երբ Փենջաբի 89-րդ գնդի և Դուրհամի 2-րդ թեթև հետևակային գնդի տեղակայված երկու գումարտակները կարող էին քաղաքական աջակցություն ցույց տալ Հայաստանին և բաց պահել օգնության բեռների մատակարարման գիծը, սակայն ռազմական տեսանկյունից կայազորը մեծ պատասխանատվություն էր պահանջում: Դա բացատրվում էր Կարմիր բանակի առաջխաղացմամբ և խորհրդաթուրքական համատեղ արշավանքի սպառնալիքով, ինչը վտանգի կենթարկեր փոքրաքանակ բրիտանական զորքին և կստիպեր բրիտանական զորամասին անփառունակ ձևով լքել Բաթումին[2]: Սակայն միանգամայն այլ բան է պնդել, որ ինչպես նշվում է մի արխիվային փաս-

1 Տե՛ս **Հովհաննիսյան Ռ.,** Հայաստանի Հանրապետություն, հատոր III, Լոնդոնից Սևր, փետրվար-օգոստոս, Ե., 2015, էջ 398:

2 Տե՛ս նույն տեղում, էջ 399, 404:

տաթղթում, նորին մեծություն «բրիտանական կառավարությունը» ապահովել է հայկական բանակին՝ 40 հազարանոց զինվորության համար նախատեսված զենքով ու զինամթերքով, որ այն ժամանակվա գներով արժեր 1.200.000 ֆունտ ստեռլինգ[1], սակայն ինչպես դպուկ փաստել է Ալ. Խատիսյանը, ***«հայերը կը մեղադրէին Անգլիացիները այն բանի մէջ, թէ այդ զէնքը հասաւ շատ ուշ, թէ զէնքը այն տեսակէն չէր, որուն սովոր էին հայ զինուորները, եւ այդ մեղադրանքներն ու դժգոհութիւնը զուգադիպեցան 1920 թ. աշնան հայ-տաճկական պատերազմի աղետալի անյաջող ելքի հետ»***[2]: Այստեղ տեղին է ավելացնել, որ դա ամենևին էլ բրիտանացիների կողմից բարեգործական վերաբերմունքի դրսևորում չէր, կամ էլ ամենևին նպատակ չէր հետապնդում անշահախնդիր օգնություն ցուցաբերել «բարեկամ» հայկական պետությանը իր զինված ուժերի ստեղծման հարցում, և ավելի շատ հիշեցնում է Երրորդ Հանրապետության օրոք Դաշնային Ռուսաստանի կողմից ***«այսպես կոչված գույք պարտքի դիմաց»*** ստանալու գործընթացը, քան որևիցե այլ բան, առավել ևս այն չի կարելի որակել որպես օգնության դրսևորում:

1919 թ. դեկտեմբերի 27-ին (N 220/ c.o) ՀՀ վարչապետ Ալ. Խատիսյանը Անդրկովկասում Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ կապիտան Գրեյսիին ուղղված գրությունում նշելով, որ իրենք քաջալերված են դաշնակիցների վերաբերմունքից, Մեծ Բրիտանիայի կառավարությունը իրենց տալիս է ֆինանսական-նյութական և կազմակերպական աջակցություն, որն ահավասիկ պարզ է պարզ է, երբ Հայաստանի անկախությունը մոտ ապագայում կճանաչվի, ըստ այդմ փաստելով, որ իրենք հարկադրված կլինեն առաջին հերթին պաշտպանությանը հատկացված միջոցները կազմակերպել, այդ նպատակով անհրաժեշտ գտնելով՝ 1) ռադիոգրաֆ ղեկավարող և օգնական մասնագետներ, 2) օդային նավատորմ 3) բանակի «ամունիսիոն»-հանդերձավորման պատրաստող գործարանային խնդիրների լուծում, 4) բարձրաստիճան մի զինվորականի մի քանի օգնականներով բանակի ընդհանուր հրահանգիչների պաշտոնով, որ իր ձեռնհասության հետ, ծանոթ լինեն

1 Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 200, ց. 1, գ. 498, թ. 768, ֆ.199, ց. 1, գ. 146, թ. 96. **Խատիսեան Ալ.**, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, էջ 183:

2 **Խատիսեան Ալ.,** նշվ. աշխ., էջ 183:

հայոց երկրին ժողովրդին և նրա մշակույթին: Այդ դժվարությունները հաղթահարելու համար Ալ. Խատիսյանը ՀՀ կառավարության անունից Մեծ Բրիտանիայի կառավարությունից խնդրում էր մեկ միլիոն ֆունտ ստեռլինգի փոխառություն՝ մատչելի տոկոսադրույքով, հայտնելով որ մանրամասների մասին առանձին պայմանավորվածության կգան: Խատիսյանը վստահեցնում էր, որ հիշյալ փոխառության վերադարձումը իրենք կկատարեն մասնաբաժիններով, որ հնարավորություն ունենան վճարելու վերաբերյալ գալ երկրագործականի տարիքից սկսած՝ դրամով կամ երկրի հում բերքերով: Ալ. Խատիսյանը Կառավարության անունից շեշտադրում էր, որ այդ կարիքները անհետաձգելի են և իրենք հավատում են, որ Մեծ Բրիտանիայի կառավարությունը բարեհաճ վերաբեմունք կունենա այդ աջակցության հանդեպ՝ երկրի վերանորոգման համար, ընդգծելով, որ իրենք մի քանի ճյուղերում մասնագետների և փորձառու ղեկավարների կարիք են զգում[1]: 1920 թ. մայիսի 20-ին ՀՀ վարչապետ Հ. Օհանջանյանը Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանից խնդրում էր կոմանդոր Հարրի Լյուկի միջոցով հաղորդել Փարիզ՝ Ահարոնյանին, որ կառավարությունը լիազորում է իրեն և Պողոս Նուբարին Բրիտանական կառավարությանը Լոնդոնում տալ մինչև մեկ միլիոն ֆունտ ստեռլինգի պարտատոմս՝ 5 տոկոսով 12 ամսվա համար՝ Բրիտանական կառավարության կողմից Հայաստանի կառավարությանը վաճառված զենք ու հանդերձանքի դիմաց[2]:

1920 թ. գարնանը հայկական բանակը վերակազմավորելու և զինելու բրիտանական տարբերակը օրակարգային էր: Միաժամանակ Ավ. Ահարոնյանի և Պողոս Նուբարի կողմից հայկական բանակի համար խնդրահարույց զենք ու զինամթերքի հարցին հավելվեց զինվորական խորհրդանուների, հրահանգիչների և տեսուչների հրավիրման հարցը, որի մասին հուշագիրը ՀՀ ԱԳՆ-ի միջոցով փոխանցվեց դաշնակից տերությունների 1920 թ. մարտին Լոնդոնում հիավիրված խորհրդաժողովին, սակայն արժանացավ նրանց թերահավատ և խուսափողական պատասխանին, որին հաջորդեցին անհասկանալի քաշքշ-

1 Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 275, ց. 5, գ. 101, թ. 100-101:
2 Տե՛ս նույն տեղում, գ. 231, թ. 126-127:

շուկները հատկապես բրիտանական կաբինետում և մասնավորապես Բրիտանիայի Պատերազմական նախարարությունում: Ընդամենը ոչ պակաս քան 30-40 խորհրդականների հրավիրման ֆինանսավորման հարցերը մի կաբինետից մյուսն էին գնում, և չնայած Ջ. Մալքոլմը խնդրեց դրա համար տարեկան հատկացնել 100 հազար ֆունտ ստեռլինգ գումար վարկ հինգ տարով, Ավ. Ահարոնյանը և Պ. Նուբարը պատրաստակամություն հայտնեցին՝ տրամադրել պարտատոմսեր, ինչպես ամերիկյան ալյուրի տրամադրման պարագայում, սակայն գործը տրամագծորեն այլ ընթացք ստացավ: Այդ ընթացքում քննարկումները արհեստականորեն երկարաձգվեցին, վարկի գումարը հասցվեց 500 հազար ֆունտ ստեռլինգի, ինչը հնարավոր կդարձներ բրիտանական խորհրդականների աշխատանքը, սակայն եկավ ապրիլի վերջը, և ո՛չ գանձապետարանը, և ո՛չ էլ պատերազմական նախարարությունը չտեղաշարժվեցին անգամ դույզն իսկ, քանզի նրանց Հայաստանի Հանրապետություն ուղարկելը առանց իրենց աջակցության համարվեց վտանգալից զբաղմունք:

Իսկ ավել ուշ, մոտավորապես նույն ժամանակ Բրիտանիայի պատերազմական նախարարությունը ուղղակի մերժեց ՀՀ կառավարության խնդրանքը փոքր զենքերի համար փամփուշտի արտադրման գործարան հիմնելու մասին խնդրագիրը: Դա գալիս էր խորքից. դեռևս 1919 թ. օգոստոսի 28-ին Լոնդոն մեկնած Փարիզի խաղաղության վեհաժողովում ՀՀ պատվիրակության ռազմական խորհրդական, գեներալ Գ. Ղորղանյանը հանդիպումներ ունենալով բրիտանական ԱԳՆ-ի և Ռազմական նախարարության ներկայացուցիչների հետ, հայցում է ռազմական օգնություն և աջակցություն: Այդ նպատակով նա սեպտեմբերի 1-ին տեսակցում է գնդապետ Գիբբոնի հետ, և նրան ներկայացնում տեղեկանք ՀՀ ռազմական ուժերի մասին, հաջորդիվ այն հանձնելով նաև ռազմական նախարար Ու. Չերչիլին, որում տեղեկացվում էր, որ ՀՀ զինված ուժերի կազմում կա 17729 զինվոր, 824 սպա, 3 զրահագնացք՝ 1-ինը կոչվեց «Ազատամարտ», 2-րդը՝ «Սասուն», ինչպես նաև 4843 ձի[1]:

1 Տե՛ս **Գալոյան Գ.,** Հայաստանը և մեծ տերությունները, 1917-1923 թթ., Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999, էջ 172-173:

Դեռևս 1919 թ. նոյեմբերին Հ. Օհանջանյանը և գեներալ Գ. Ղորղանյանը Եվրոպայում Հայաստանի Հանրապետության խաղաղության պատվիրակության կազմում եղել էին Անգլիայի Լիդս քաղաքում, որպեսզի ուսումնասիրեն գործարան գնելու հնարավորությունը, որը կարող էր օրական արտադրել 12 հազար փամփուշտ, սակայն պարզվել էր, որ ծախսը մեծ է: 1920 թ. ապրիլի 7-ին գեներալ Գ. Ղորղանյանը կրկին բարձրացնում է փամփուշտի գործարանի գնման հարցը՝ Ավ. Ահարոնյանին հորդորելով այդ նպատակների համար հավաքած փողը հատկացնել գոնե օգտագործված սարքավորումներով մի ոչ մեծ գործարան գնելուն, որը կարող էր արտադրել օրական մինչև 50 հազար փամփուշտ, միաժամանակ թույլտվություն խնդրելով վերջինից բանակցությունները շարունակել Լիդսում՝ այնտեղի մի ընկերության հետ մի ավելի համեստ ձեռնարկում սկսելու համար: Հայաստանի կողմից փամփուշտի արտադրման գործարան ստեղծելու հարցը Ջեյմս Մալքոլմի կողմից դրվում է բրիտանական կառավարության քննարկմանը, որի մասին տեղեկանում ենք ապրիլի 27-ի հուշագրից: Մալքոլմը արտահայտվում է սեփական ռազմամթերք արտադրելու Հայաստանի Հանրապետության ցանկության օգտին, առաջարկելով դրա համար անհրաժեշտ սարքավորումներ Հայաստան փոխադրել նախատեսված զենքի հետ միասին: Բրիտանական պատերազմի նախարարությունը, որ զգուշանում էր Հայաստանին նույնիսկ մեկ բեռնաքանակ զենք տրամադրելուց, մերժում է Հայաստանի խնդրանքը: ***Մայիսի 12-ին գնդապետ Ու. Հ. Գիբբոնը Ջեյմս Մալքոլմին տեղեկացնում է, որ մանրագինին դիտարկումից հետո «Բանակային խորհուրդը նպատակահարմար չի գտնում այդ ձևով աջակցելը», գտնելով, որ «այդ սարքավորումների մատակարարումն անպայման չէ, որ բխում է Հայաստանի լավագույն շահերից երկարաժամկետ հեռանկարում», ինչի կապակցությամբ անգամ Բրիտանական ԱԳՆ-ի որոշ աշխատակիցներ հանգում են այն կարծիքին, թե դժվար այդ դեպքում կարելի լինի հայերին համոզել, որ բրիտանացիները ցանկանում են օգնել հայերին***[1]:

1 Տե՛ս **Հովհաննիսյան Ռ.,** Հայաստանի Հանրապետություն, հատոր III, էջ 413:

«Անկախության փոխառության» կապակցությամբ 1920 թ. հուլիսին Ալ. Խատիսյանը այցելում է բրիտանական ԱԳՆ, և կրկին դիմում ռազմական, ինչպես նաև ֆինանսական խորհրդականներ գործուղելու խնդրանքով, ՀՀ անունից չժխտելով դրամամիջոցների բացակայությունը և հավաստիացնելով վճարվելիք աշխատավարձի կամ փորձագետներին փոխհատուցելու խնդրում՝ վարկի կամ այլ ձևով: Բրիտանական բանակային խորհուրդը արձագանքում է, իսկ Քերզոնը ցանկալի է գտնում հետագա քայլերն այդ ուղղությամբ, և կարծես թե սառույցը հալվում էր: Նպատակահարմար է գտնվում, որ խորհրդատուներին գլխավորեր զորաբաժնի մի գեներալ, որը կցված կլիներ ՀՀ զինվորական նախարարությանը, որին կօգնեին երեք ավագ գնդապետ, որոնք պատասխանատու կլինեին հետևակի, հեծելազորի և հրետանավորների վարժեցման համար, կվերահսկեին հրետանին, մատակարարումն ու բժշկական ծառայությունը: Վերակազմավորման ենթարկված 40 հազարանոց բանակը պետք է բաղկացած լիներ 30 հազար հոգուց բաղկացած հետևակից, որոնք տեղաբաշխված կլինեին 3 զորաբաժիններում՝ յուրաքանչյուրը 3 զորախումբ (բրիգադ), որոնցից յուրաքանչյուրն էլ իր հերթին բաղկացած կլիներ 3 գումարտակից: 2 հազար հեծյալ պետք է բաժանվեին 5 գնդերի՝ յուրաքանչյուրում 400 սուսերավոր, իսկ հրետանային զորքը պետք է կազմված լիներ 3 հազար մարդուց, մյուս ծառայությունները՝ 5 հազար մարդուց: Մեկ տասնյակից ավելի բրիտանական սպաներ պետք է կցվեին հետևակին, 2 սպա՝ հեծելազորին, 3 սպա՝ հրետանուն և 5 սպա՝ այլ ծառայություններին: Ըստ այդ նախագծի, սպաները չէին սահմանափակվելու խորհրդատուի կարգավիճակով, այլև պետք է ունենային լայն գործադիր լիազորություն: Դրա հետ մեկտեղ սահմանվում էին աշխատանքային պայմանները՝ վարձատրությունը, գործուղումները, մաքսային տուրքերը և այլն[1]: ***Սակայն ի ի սկզբանե ամեն ինչ կանխորոշված էր, և օգոստոսի 26-ին Մեծ Բրիտանիայի ԱԳՆ-ն ընդամենը տեղեկացնում է Պատերազմի նախարարությանը բացասական վճռի մասին. «հաշվի առնելով Հայաստանի կառավարության և Ռուսաստանի խորհրդային իշխանությունների միջև ըստ լուրերի վերջերս կնքված խաղաղության պայ-***

1 Տե՛ս նույն տեղում, էջ 415:

մանները, Նորին գերազանցությունը համարում է, որ հայկական բանակ բրիտանական սպաներ գործուղելու մասին առաջարկն առ ժամանակ պետք է առկախվի»[1], չնայած խնդիր էր դրվում նաև հակառակը՝ հայ սպաների գործուղել արտասահման: Այս տեսանկյունից դիտարժան է կառավարության 1920 թ. մարտի 7-ի նիստը, որը Զինվորական նախարարի զեկուցման հիման վրա որոշում է 8 սպա գործուղել արտասահման՝ այդ նպատակով բացելով շուրջ 6 միլիոն ռ. վարկ[2]:

Ինչպես այդ մասին ուղղակիորեն վկայում է Ռ. Հովհաննիսյանը, Մեծ Բրիտանիայի ռազմական նախարարության կողմից 25000 հրացանների և 40.000 համազգեստի մատակարարումը պետք է կատարվեր միայն այն բանից հետո, եթե Ավ. Ահարոնյանը և Պողոս Նուբար փաշան ստորագրություն տային տեղափոխման ծախսերի համար և Անգլիական բանկի կողմից պահանջվող գանձապետական պարտամուրհակները որպես ավանդ դնելու, այսինքն՝ տալու անգլիացիներին[3]: Մայիսյան բոլշևիկյան խռովությունները վտանգեցին այդ գործարքի իրագործումը, և չնայած բրիտանական կաբինետում հնչած մի շարք արտահայտություններին՝ կապված երևանյան կառավարության ճակատագրի հետ, ի վերջո, ի տարբերություն օդանավերի հետ կապված բրիտանական բացասական մոտեցմանը, Օսբորնն անգամ հայտարարեց, թե Հայաստանին տրված բրիտանական խոստումները պետք է հարգվեն, եթե նույնիսկ Հայաստանը ընդունի կառավարման խորհրդային վարչաձև[4]:

Բանակի կայացման ճանապարհի հետաքրքիր քայլերից է վարչապետ Խատիսյանի 1920 թ. մարտի 8-ի (N 602) շրջաբերականը, կապված ռազմական գործավարության սկզբունքային կարգավորման հետ. «Ոչ ծածկագիր հեռագրերում երբեք չշոշափել պատերազմական գործողություններին կամ պետական պաշտպանության և ապահովության վերաբերող հարցեր»[5]: Այդուհանդերձ, նույնիսկ ռազմամթերքի,

---

1 Տե՛ս նույն տեղում, էջ 416:

2 Տե՛ս **Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ,** էջ 405-406:

3 Տե՛ս **Ованнисян Р. Г.,** Международные отношения Республики Армения 1918-1920 гг., Ер., 2007, с. 563:

4 Տե՛ս **Հովհաննիսյան Ռ.,** Հայաստանի Հանրապետություն, հատոր III, էջ 424:

5 Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 210, ց. 1, գ. 7, թ. 34:

զենք-զինամթերքի հագուստեղենի առաքումը բրիտանացիների կողմից «մաքուր» չկատարվեց, քանզի ինչպես ցույց տվեցին հետագա գործընթացները, Հայկական բանակին մատակարարվող հրացանների մի զգալի մասը ոչ պիտանի դուրս եկան, որին Հայաստանի Հանրապետության կառավարությունը 1920 թ. մայիսի 19-ին լսելով ԱԳ նախարարի զեկուցումը անգլիական աջակարկի մասին գնել մեկ միլիոն ֆունտ արժողությամբ զենքեր, հավանություն էր տվել և լիազորել հայկական պատվիրակությանը ստորագրել առաջարկած պայմանները[1]: Գանձապետարանի կողմից հատկացրեց շուկայական գնի 75 տոկոսի չափով զենքի և զինամթերքի համար՝ 5, տոկոս, ռազմամթերքի 50 տոկոս՝ օգտագործված հագուստի, 100 տոկոս՝ նոր հագուստի, 75 լծասարքերի և թամբերի համար, 829634 ֆունտ ստեռլինգ 9 շիլինգ և 3 պենս:

1920 թ. մայիսի 24-ին Մեծ Բրիտանիայի կառավարության հանձնարարությամբ Հ. Լյուկը ՀՀ կառավարության կողմից լիազորված Ավ. Ահարոնյանին և Պողոս Նուբար փաշային հանձնեց 1 միլիոն 60 հազար ֆունտ ստեռլինգ, ըստ այդմ հատկացված ռազմական վարկը տրամադրվել էր մեկ տարով՝ 5 տոկոսով, սակայն պայմանով, որ հատկացված վարկով զենքը պետք է գնվեր Մեծ Բրիտանիայի կառավարությունից[2]: Սակայն իրավիճակի յուրահատկությունը կայացավ նրանում, մենշևիկյան Վրաստանի կառավարությունը, օգտվելով պատեհ առիթից՝ ՀՀ կառավարությունից պահանջեց իր տարածքով առաքվելիք զենքի ու զինամթերքի 23 տոկոսը թողնել Վրաստանին, ինչը վավերացվեց երկու հարևան պետությունների միջև 1920 թ. մայիսի 26-ին կնքված համապատասխան պայմանագրով[3]:

Այդ գործընթացները միանշանակ չէին. 1920 թ. հունիսի 5-ին ԱՄՆ-ի դեսպան Դեյվիսը հույժ գաղտնի ծածկագիր հեռագիր է ուղարկում Վաշինգտոն, որում տեղեկացվում էր, որ բրիտանական կառավարությունը Հայաստանի բաց է թողել 1 միլիոն ֆունտ ստեռլինգի ռազմական վարկ, որի դիմաց գնվելու էր 25 հազար հրացան, 50 միլիոն փամփուշտ, 400 գնդացիր, 12 դաշտային հրանոթ, 32 լեռնային հրա-

1 Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 146, թ. 96:

2 Տե՛ս **Գալոյան Գ.,** Հայաստանը և մեծ տերությունները. 1917-1923, էջ 187:

3 Տե՛ս նույն տեղում:

նոթ, 40 հազար զինվորի համարնախատեսված ռազմական հանդերձանք, ավելացնելով Ֆրանսիան ևս մտադրություններ ունի Վրաստանի տարանցիկ ուղիներով ռուսական հրացաններ առաքել Հայաստանին[1]: Իսկ արդեն 1920 թ. հունիսի 10-ին ԱԳ նախարարությանը ուղարկված զեկուցագրում Լյուկը տեղեկացնում է ՀՀ կառավարությունից ստացած լրացուցիչ փաստաթղթի մասին՝ ի հաստատումն նախապես Ահարոնյանին և Պողոս Նուբար փաշային տված 1 միլիոն 60 հազար ֆունտ ստեռլինգի մասին՝ վճարելու Հայաստանին մատակարարվող զենքի համար: Եվ այսպիսով, գնված զենքի մի մասը 1920 թ. ամռանը ուղարկվեց Հայաստան, և սակայն ինչպես պարզվում է Մեծ Բրիտանիայի ռազմական նախարարության օգոստոսի 10-ի մի փաստաթղթից, ստացված զենքից 2500 հրացան թողնվում է Վրաստանին, իսկ սեպտեմբերի 10-ին Լյուկի հետ ունեցած հանդիպման ժամանակ Ալ. Խատիսյանը հայտարարություն է անում, թե ՀՀ կառավարությունը արդեն ստացել է ռազմական ամբողջ հանդերձանքը, ինչպես նաև տեղեկացվում է Ֆրանսիայից և Հունաստանից կատարված լրացուցիչ մատակարարման մասին[2]: 1920 թ. հուլիսի 26-ին մանրամասն հաշիվ-ապրանքագրերը Փարիզ ներկայացնելուց հետո, Պողոս Նուբարը և Ավ. Ահարոնյանը դեսպան լորդ Էդվարդ Դերբիին փոխանցեցին տասներեք պարտատոմս՝ 829634 ֆունտ ստեռլինգ 9 շիլինգ և 3 պենս արժողությամբ[3], որը ստորագրելուց հետո կարող էր օգտագործվել Հայաստանի Հանրապետության կառավարության հայեցողությամբ: Զինամթերքը բեռնաթափվեց Փոթիում, և վեց ամիս այնօրվանից հետո, երբ դաշնակից տերությունների Գերագույն խորհուրդը համաձայնվեց զենք ուղարկել Հայաստան, մատակարարումների առաջին բեռնաքանակը Չեզոք գոտում գնացքով հատեց Սանահինի սահմանային անցակետը և մտավ ՀՀ տարածք[4]:

Քաշքշուկներով Հայաստան մտած բրիտանական զենքը հիասթափություն առաջ բերեց, առավել ևս որ դրան նախորդեց բրիտանական սառնասիրտ բյուրոկրատությունը և անհոգի վերաբերմունքը

1 Տե՛ս նույն տեղում, էջ 188::
2 Տե՛ս նույն տեղում, էջ 187::
3 Տե՛ս **Հովհաննիսյան Ռ.,** Հայաստանի Հանրապետություն, հատոր III, էջ 427:
4 Տե՛ս նույն տեղում, էջ 429:

փոքր դաշնակցի նկատմամբ և փոխանցած զինամթերքի անորակությունը: Դա լավ է նկատել Ա. Բաբայյանը. «...երկու տարուայ աղաչանքներն ու դիմումները զուր անցան -որ կարողացանք ստանալ անգլիական կառավարութիւնից 40.000 զինուորի հագուստ ու ռազմամթերք...»[1]: Ցավալի է, որ անգամ թուրք-հայկական պատերազմ աղետալի օրերին վիճարկվում էր Անգլիայից ստացված զենք-զինամթերքի որակի հարցերը, երբ արդեն բանը բանից անցել էր: Այս առումով շատ բան կարելի է հասկանալ՝ անդրադառնալով ՀՀ ԱԳ նախարարին Ավ. Ահարոնյանի կողմից Փարիզից ուղարկված 1920 թ. նոյեմբերի 8-ի նամակին՝ Հայաստանի հարցը Ազգերի Լիգայի Ժնևում կայանալիք ընդհանուր ժողովում քննարկելու, զենք գնելու մասին. «***պ. Նախարար. Պարտքս եմ համարում պատասանել Ձեր սեպտեմբերի 27 թվակիր նամակի հետևյալ կետերին.***

1. Մեզ շատ զարմանք պատճառեց, մասնավորապես գեներալ Կօրկանեանին, ոևր Անգլիայից ստացված հրացանները դուք համարում եք անգործածական՝ ծանրության պատճառով: Սակայն զարմանալի է, որ Անգլիացիք ճիշտ այս սիստեմով են վարել ամբողջ պատերազմը: 2. Մեզ վշտացրեց, որ Ֆրանսիայից ստացած հրացանները այդպես քիչ են -1900 միայն, և այն էլ նորօգութեան կարօտ, բայց մարշալ Ֆօշի շտաբից մեզ հաղորդեցին, որ Բուլղարիայից ուղարկուած են դարձեալ մեծաքանակ հրացաններ մեզ համար փամփուշտներով հանդերձ: Միաժամանակ, այս օրերս մենք գնելու ենք 5000 հրացան Լեբել: Այս մասին մանրամասն կը գրե զինվորական նախարարին գեներալ Կօրկանեանը»[2]:

Հայկական բանակի համար փամփուշտների հայթայթման հարցը ամենադժվարիններից էր. դրա լուծման համար մոբլիզացվում էին զինվորական մարմինների, միլիցիայի և անշուշտ՝ կառավարության ջանքերը: Դեռ 1919 թ. սեպտեմբերի 19 (N 1008) Զինվորական նախարարության Հրետանային վարչության պետ գեներալ-մայոր Գամազովը Հայաստանի տարածքի միլիցիայի տեսուչին ուղղված գրությունում հայտնելով ռազմաճակատում «Լեբել» և «Մաուզեր» հրացանների սուր

1 **Բաբալեան Արտ.,** Հայաստանի անկախութեան պատմութիւնը եւ այլ յիշատակներ, Գլէնդել, <<Նավասարդ>> հրատ., 1997, էջ 182:

2 Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 200, ց. 2, գ. 158, թ. 1-2:

կարիքի մասին, որոնց համար կար մեծ քանակությամբ փամփուշտ և ընդհակառակը՝ եռագիծ փամփուշտների մեծ պակասություն, հրահանգում էր անհապաղ միլիցիայի տրամադրության տակ գտնվող այդ սիստեմի բոլոր հրացանները դնել իրեն վստահված վարչության տրամադրության տակ, որի փոխարեն բաց էին թողնվելու կամ «Բերդանկա» սիստեմի կամ էլ եռագիծ շվեյցարական հրացաններ, կամ մեկ այլ լուծում գտնելով: Գամազովը հայտնում էր, որ բոլոր հանձնված հրացանները շտապ իրենց կողմից ուղարկվելու են ռազմաճակատ, որտեղ դրանց կարիքը մեծ էր: Գամազովը զգուշացնում էր, որ ուշացման դեպքում հայկական զորքերը կարող են հայտնվել վտանգավոր վիճակում[1]:

Նման վիճակը խանգարում էր բանակաշինության դժվարին գործընթացներին[2]: Դրան ավելացրած այն հանգամանքը, որ իրականում հայկական բանակի ստորաբաժանումներից ոչ մեկը մարդկանց քանակական առումով համալրված չէր ըստ հաստիքով նախատեսվածի: Դրա հիմքում ընկած էին լուրջ պատճառներ, այդ թվում՝ Առաջին Հանրապետության օրոք այդպես էլ անհաղթահարելի մնացած դասալքության հիմնախնդիրը, և դա էլ հիմք է տալիս պնդելու, որ զորքի վերաբերյալ մի շարք տվյալներ պետք չէ լուրջ ընդունել, դրանք ուռճացված են և ավելորդ մեկնաբանությունների տեղիք են տալիս: Այդ օրերի արժանահիշատակ ժամանակակից Ս. Վրացյանը ավելի է մանրամասնում իր ասելիքը Հայկական բանակի ընդհանուր թվակազմի և որակական հատկանիշների վերաբերյալ: Այսպես, իր «Կեանքի ուղիներով» հուշաշարքում նա ընդգծում է, որ 1920 թ. սեպտեմբերի 23-ին սկսված թուրք-հայկական պատերազմի նախօրյակին Հայաստանի Հանրապետությունը ***«հազիւ 20 հազար կանոնաւոր զօրք ուներ՝ երկրի բոլոր սահմանները պաշտպանելու եւ ներքին կարգ ապահովելու համար: Այդ զօրքի մէկ մասը հին, փասը փարուց աւելի զէնքի տակ էր, յոգնած ու տկարացած, միւս մասը նորակոչիկներ էին, պատերազմի անվարժ, մի մասն էլ անկանոն զօրամասեր՝ խմբապետների***

1 Տե՛ս նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 73, թ. 24-25:

2 Տե՛ս **Ованнисян Р. Г.,** Международные отношения Республики, с. 566:

հրամանատարութեան տակ»[1]: Իսկ արդեն իր հիմնարար աշխատանքում՝ «Հայաստանի Հանրապետություն» գրքում ճշգրտելով տարբեր առիթներով բերված փաստական տվյալները, նշում է, որ թուրք-հայկական պատերազմի ժամանակահատվածում Հայկական բանակի ընդհանուր թիվը հասնում էր շուրջ 40 հազարի, որից 25-26 հազարը կանոնավոր բանակի զորամասեր էին, իսկ մոտ 10-12 հազարը՝ կամավոր աշխարհազորայիններ[2]: Ակնհայտ էր, որ ազգային բանակի ստեղծումը դժվարին գործ էր, և արդյունքներն էլ գոհացուցիչ չէին: Ստորև բերվող փաստաթուղթը ևս նպաստում է Հայկական բանակի թվաքանակի վերաբերյալ պատկերացումների ամբողջականացմանը և հնարավորություն է տալիս գալ ավելի ճիշտ եզրակացությունների բանակի և անվտանգության համակարգի ստեղծման ուղղությամբ ծավալված գործընթացների վերաբերյալ: Այն հնարավորություն էր տալիս նաև ըմբռնելու անվտանգության ամբողջական և քիչ թե շատ ավարտուն համակարգի ստեղծման դժվարությունները, որոնք մեղմ ասած, այնքան էլ գոհացուցիչ չէին: Ալ. Խատիսյանը 1919 թ. մարտի 14-ի Լեոյին ուղղված իր նամակներից մեկում, պատմելով նախօրյակին կայացած կառավարության նիստի մասին, որին մասնակցել են բանակի գլխավոր պաշտոնյաները (գեներալ Մ. Սիլիկյանը, գեներալ Չումարովը, երևանյան ջոկատի հրամանատար Դրոն և ուրիշներ, այնուամենայնիվ ընդգծում է բանակի անմխիթար վիճակի մասին: ***Նա գրում է, որ զինվորները սոված և գզգզված են, 4 ամսից ավել լողացած չեն, 50 տոկոսով հյուծված են տիֆից, վերածվել են կիսակմախքի, վազում են և ընկնում: Դրանց թիվը հասնում է 31-32 հազարի՝ ունենալով մոտ 900 սպա: Ահա այդպիսին էր Հայկական բանակի վիճակը: Զինվորները հագուստ չունեին: Գեներալ Մ. Սիլիկյանը այդ նիստին ելույթ ունենալով, շեշտում էր, որ ինքը մինչև ապրիլի 1-ը պետք է իր ձեռքի տակ ունենա 16 հազար զինվոր՝ հակառակ դեպքում՝ Հայաստանը ոչնչացված է:*** Այդ նպատակով էլ որոշվում է. 1) խնդրել անգլիացիներին իրենց ջոկատները դնել Քարվանսարայում, Ալեքսանդրապոլում, Իգդիրում և Քուլպում, թեկուզև փոքրաթիվ ջոկատներ, 2) խնդրել

1 **Վրացեան Ս.**, Կեանքի ուղիներով. դէպքեր, դէմքեր, ապրումներ, Հ. Ե., Պէյրութ, 1966, էջ 171:

2 **Վրացեան Ս.,** Հայաստանի հանրապետութիւն, էջ 477:

տալ հաց, հագուստ և զինվորական երկարաճիտ կոշիկներ Թիֆլիսից, 3) խնդրել Վրաստանին վերադարձնել իրենց Հայկական կորպուսի ունեցվածքը, 4) խնդրել գեներալ Վ. Հ. Բիչին այստեղ ուղարկել Հայաստանին անհրաժեշտ բոլոր բեռները (ցորեն, հաց, Թիֆլիսից ապրանքներ)[1]: Անգամ եթե որոշ թվեր ուռճացված են, սակայն շատ բան են ասում, առավել ևս որ այդ ամենը դիտարկվում էր անհամեմատ ավելի հարուստ թաթարական բնակավայրերի առկայության տեսանկյունից, որոնց զինված խմբերն ավելի կուշտ էին և Թուրքիայի հաշվին ավելի լավ զինված: Այս ամենին Խատիսյանը հավելում է գեներալ Սիլիկյանի կարծիքը:

Անշուշտ, անտեսել չի կարելի ֆրանսերեն լեզվով մի կարևոր փաստաթղթի նկատմամբ ևս, որի հեղինակը Փարիզում ՀՀ ազգային պատվիրակության քարտուղարի օգնական Ղազարյանն է: Այսպես, ըստ այդ տվյալների՝ հայկական բանակի ճակատային (այսինքն՝ ռազմաճակատային խնդիրներին պիտանի) զինվորների թիվը 1920 թ. հասնում էր 24.715 մարդու, սպաներինը՝ 1515-ի, վարչական սպաներինը՝ 309-ի, կամավորներինը՝ 4023 մարդու և այլն: Ընդհանուր առմամբ, ըստ այդ աղբյուրի, դարձյալ ընդհանուր հաշվարկի արդյունքներով ստացվում է այդ նույն 40 հազարից քիչ ավելի թիվը, որն իհարկե, պետք է դիտարկել ստորև բերվող եզրահանգումների շրջանակներում[2]: Մատնանշելով վերը բերված և այլևայլ փաստեր՝ հեղինակները մեծմասամբ չեն փորձում խորանալ իրերի իսկական էության մեջ, հաճախ կարծես անտեսելով, որ դրանք իրականությանը չհամապատասխանող անիրական և ուռճացված տվյալներ են: Հանրագումարի բերելով փաստական տարաբնույթ տվյալները Հայկական բանակի վերաբերյալ՝ կարելի է գալ հետևության, որ ինքնին հասկանալի պատճառներով 55 հազարանոց բանակի վերաբերյալ վկայությունը ժխտվում է, քանզի այն միանգամայն հիմնազուրկ է և ոչ մի քննադատության չի դիմանում, չնայած կան նույնիսկ այնպիսի վկայություններ, որ իբր թե 1920 թ. հայկական բանակի թիվը հասած է եղել անգամ 60 հազարի[3]:

---

1 Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 275, ց. 5, գ. 116, թ. 36:

2 Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 2, գ. 160, թ. 2:

3 **Կարապետյան Հ.,** Սևրի պայմանագիրը Հայոց ճակատագրում, Եր., 2004, էջ 27, Տե՛ս նաև **ՀԱԱ**, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 36-38:

Իսկ արդեն 40 հազարանոց բանակի մասին փաստարկումները կարելի է ընդունել լուրջ վերապահումներով, խորապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարբեր հեղինակներ Հայկական բանակի ընդհանուր թվակազմից գործող կանոնավոր բանակի ռազմաճակատային կարիքների համար պիտանի թվակազմը տեղավորում են 24-25 հազարի շրջանակներում, որից իրապես մարտունակ կարելի էր համարել միայն 16-18 հազարը, ինչի մասին էլ բազմանշանակ վկայում են ՀՀ բարձրագույն սպայակույտի և կառավարության ներկայացուցիչները: ***Վերջապես, մոտ 40 հազարանոց թվաքանակ կարող է սպացվել, եթե այդ 20-25 հազարին հավելենք 10-12 հազարից ավելի աշխարհազորայիններին և կամավորներին, որոնց մի մասի «թէեւ արտաքին կերպարանքը զինուորի կը նմանէր, բայց անիկա զինուոր չէր»***[1], - դիպուկ խոստովանել է Կ. Սասունին: Բերենք ևս մի փաստ. Ըստ Փարիզում ՀՀ պատվիրակության ռազմական խորհրդական գեներալ Գ. Ղորղանյանի կողմից ներկայացված հուշագրի, ՀՀ բանակը խաղաղ ժամանակի վիճակով 1919 թ. սեպտեմբերի 2-ի վիճակով ուներ 824 սպա, 246 ծառայող և այլն, 17368 շարքային զինվոր, 4843 ձի, սակայն վստահեցնում էր, որ բավական է ունենալ շուրջ 30 հազար մարդ, որպեսզի հանրապետության սահմանները պաշտպանվեն ներխուժումից, խնդրելով տալ անհրաժեշտ քանակի զենք ու ռազմամթերք[2]:

Այնպես որ, մի բան ակնհայտ է, որ 1918-1920 թթ., Առաջին Հանրապետության կառավարությունը, կառավարող քաղաքական կուսակցությունը և զինվորականությունը գուցե և ձգտում էին իրականացնել ընդհանուր երազանքը՝ ունենալ մեծ և մարտունակ ուժեղ բանակ, այն տեղավորելով շուրջ 40 հազարանոց և ավելի մեծաթիվ բանակի մասին պատկերացումների շրջանակներում, ընդ որում մշտապես նկատի ունենալով նաև այն կարևոր հանգամանքը, ***որ 1919 թ. տվյալներով 961,7 հազար բնակչություն ունեցող երկրի համար դա բավականին***

1 **Սասունի Ч.,** Հայ-թուրքական պատերազմը, «Հայրենիք» (Բոստոն), 1926, թիվ 11 (47), էջ 111:

2 Տե՛ս **Аветисян Г. А.,** Генерал Гавриил Григорьевич Корганов, **«Լրաբեր Հասարակական գիտությունների»,** 1997, N 1, էջ 161, 163-165:

դժվար իրագործելի խնդիր էր[1]: ***Եվ այդ առումով էլ Հայկական բանակի վերաբերյալ շատ թվեր պետք է մնային և մնացին թղթի վրա, և ստեղծված տնտեսա-քաղաքական ծանրագույն պայմաններում ստիպված էին հաշտվել այն մտքի հետ, որ այդ բանակից մարտունակ կարող էր համարվել ու լինել ընդամենը 16-18 հազարը՝ այն էլ լուրջ վերապահումներով:***

1919 թ. հուլիսի 9-ին Զինվորական նախարարի պաշտոնակատար Դրոյի կողմից ներկայացված զեկույցում նշելով զինված ուժերի ստեղման և կազմակերպական դժվարությունների մասին, ընդգծում է, որ հայ զինվորի վիճակը բավականին տխուր է՝ որպես օրինակ բերելով հագուստի և կոշիկի գրեթե իսպառ բացակայությունը, հացի և պարենամթերքի անժամանակ մատակարարումը, որ բանակի ստորաբաժանումները հատկապես բարձրլեռնային՝ Իգդիրի և Կարսի շրջաններում մշտապես գտնվելով երթերում և տեղաշարժերի մեջ՝ աստիճանաբար գնում են դեպի քայքայում, դասալքությունն էլ ուժեղանում է, որին զուգահեռաբար ավելանում էին հանցագործություն ծնող պատճառները և զինվորական հանցանքները՝ զենքի և պետական ունեցվածքի ապօրինի վաճառքի ձևով: Նշվում էր, որ միայն հուլիսին Իգդիրում հագուստի բացակայության պատճառով թոքաբորբի հիվանդությամբ լազարեթ են ընկել 20 զինվոր: Դրոյի վկայությամբ զինվորների կողմից դժգոհություններ են լսվել բանակից խուսափող այն քաղաքացիների հետ կապված, որոնք այս կամ այն պատրվակով տեղավորվել են քաղաքային տարբեր հաստատություններում և չեն ներկայանում զորակայաններ, որի հետ Դրոն իր համերաշխությունն է հայտնում, և առաջարկում՝ 1) զորամասերին և զինվորական հաստատություններին առաջին հերթին անհապաղ ապահովել զենքով, առաջին իսկ հնարավորության դեպքում ապահովել այլուրի բավարար քանակով՝ մինչև նոր բերքը, 2) դիմել պարենավորման նախարարությանը՝ սպիտակեղեն, հանդերձանք և կոշիկ խնդրելով զորքի համար, 3) հնարավոր միջոցներ ձեռնարկել անխնա պայքար մղելու դասալքության դեմ՝ զինակոչի ենթարկելով անխտիր բոլորին[2]:

---

1 Տե՛ս **Հայկական հարց**. Հանրագիտարան, Ե., «Հայկ. հանր. հրատ.», 1996, էջ 212:

2 **ՀԱԱ**, ֆ. 199, ց. 1, գ. 27, թ. 249-250:

Բանակի կազմակերպական խնդիրների լուծման ճանապարհին կարևոր քայլ էր զինվորական հավաքակայանների, զորակոչի գործերի ատյանի հիմնումը, որվ քիչ թե շատ կարգավորվեց զինապարտների հաշվառման և ցուցակագրման գործընթացը, որն իրագործվում էր Զինվորական և ՆԳ նախարարությունների համատեղ ջանքերով: 1919 թ. հուլիսի 25-ին կառավարության կողմից հաստատվում է զինաժողովի կամ զորակոչի կոմիսարի պաշտոնը: 1919 թ. հուլիսին Նախարարների խորհուրդը լսում է Ներքին գործերի նախարարի զեկուցումը Արշակ Ջամալյանին զինաժողովի կոմիսար նշանակելու մասին և այն հաստատում[1]: 1919 թ. դեկտեմբերի վերջի տվյալներով Հայաստանի Հանրապետությունում զինակոչից խուսափող նորակոչիկների ու զինապարտների, այսինքն՝ դասալիքների թիվը կազմում էր 17.665 մարդ, իսկ նման իրավիճակում ձեռնամուխ լինել բանակի և անվտանգության համակարգի ստորաբաժանումների՝ հետախուզական ծառայության, ՆԳՆ ուժային օղակների ձևավորմանը, նշանակում էր գնալ մեծ դժվարությունների, և երբեմն էլ պարզապես անհաղթահարելի բարդույթների և դժվարությունների ճանապարհով[2]: Դրա հետ կապված կա ՀՀ զորահավաքի արտակարգ կոմիսար Վ. Վալադյանի դեկտեմբերի 10-ի հրամանը, ըստ որի բոլոր այն 20-32 տարեկան տղամարդիկ, որոնք ցարդ չէին ներկայացել զինակոչային ատյաններ, զանցառուները, որոնք չէին ենթարկվի, ենթակա էին մինչև 6 ամիս բանտարկության և մինչև 10 հազար ռուբլի տուգանքի ու զինվորական դատի: Պատժի ենթակա էին նաև դասալիքներին պատսպարողները, նաև այն պետական և հասարակական կազմակերպությունները, որոնք ծառայության կվերցնեին 20-32 տարեկան զինապարտներին[3]:

Հայկական բանակում ծառայում էին ոչ միայն հայերը, այլ նաև մուսուլմանները, որոնց համար սակայն զինվորական ծառայությունը պարտադիր չէր: Այսպես, ըստ Կ. Հարությունյանի, Խնուսի մարզային

1 Տե՛ս նույն տեղում, ֆ. 202, ց. 1, գ. 105, թ. 1: 1919 թ. հուլիսի 25-ի կառավարության նիստի որոշմամբ ՆԳ նախարարի զեկուցման հիման վրա որոշում է ընդունվում Արշակ Ջամալյանին նշանակել զինաժողովի կոմիսար –Տե՛ս **Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ,** էջ 261-262, Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 199, ց. 1, գ. 43, թ. 169-170:

2 Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 29ա, թ. 348:

3 Տե՛ս նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 80, թ. 20:

զինկոմիսարիատի ենթակայության տակ գործել է Հայաստանի Հանրապետությունում ապրող եզդիներից կազմված մի գումարտակ, որը կազմավորվել էր կամավորական հիմունքներով և կռվուում էր հայերի կողքին, ինչպես նաև եզդիների գումարտակի հեծյալ հետախուզական մի խումբ գործում էր Իգդիրի զորաջոկատի կազմում: Ասորիները ևս անմասն չէին այդ գործընթացներից. 1920 թ. մայիսին Ղամարլու գյուղում տեղաբաշխված էր նաև Հայաստանի Հանրապետությունում ապրող ասորիների գումարտակը, որը մտնում էր Հայկական առանձին հետևակային բրիգադի 3-րդ գնդի մեջ[1]: Թիֆլիսում ՀՀ ներկայացուցչին ուղղված գեներալ Հ. Ա. Քիշմիշյանի 1920 թ. հուլիսի 24-ի գրությունից պարզվում է, որ ՀՀ զորքերի հրամանատարի կողմից 1919 թ. հուլիսի 19-ին միջնորդություն է հարուցվել ասորիներին ՀՀ զորքերի մեջ ներգրավելու համար[2]: Հիմք ընդունելով ՀՀ զինվորական հանձնաժողովի զեկուցումը, 1919 թ. դեկտեմբերի 19-ի Հայաստանի պառլամենտի նախագահության որոշումը խնդիր է դնում փոփոխման ենթարկել Հայաստանի քաղաքացիների զինակոչի ենթարկման օրենքները՝ զորակոչից ազատ լինելու իրավունք վերապահելով միայն փոստ-հեռագրական և երկաթուղային հիմնարկությունների բոլոր ծառայողներին և այն էլ չնչին բացառությամբ[3]:

Փաստորեն հայկական զինուժը 1918-1920 թթ. անցել է ձևավորման ու կայացման դժվարին ճանապարհ՝ փորձելով հաղթահարել մի քանի հիմնական խնդիր՝ սկսած սննդից մինչև զինամթերք և հանդերձանքից մինչև մարտական պատրաստականություն: Չնայած հայկական զինուժի թվաքանակի վերաբերյալ բազմաթիվ կարծիքներին, նրա մարտունակ զորամասերի թիվը չէր հասնում 20 հազարի: Մեծ էր դասալիքների թիվը, ուստի պետությունը ջանքեր էր թափում այն ևս արմատախիլ անելու համար:

Ի սկզբանե Հայաստանի Հանրապետությունը գտնվելով քաղաքական մեկուսացման և տնտեսական շրջափակման մեջ Անդրկովկասում, դատապարտված էր հայկական զինուժի ձևավորման խնդիրնե-

1 Տե՛ս **Հարությունյան Կ.,** Հայաստանի Հանրապետության բանակը 1918-1920 թվականներին, «Հայ զինվոր», թիվ 9 (23), հունիս, 1994:

2 Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 275, ց. 5, գ. 154, թ. 103:

3 Տե՛ս նույն տեղում, ֆ. 198, ց. 1, գ. 50, թ. 1;

րը վճռել մեծ դժվարություններ հաղթահարելով, մեծամասամբ իր հաշվարկները կառուցելով Անտանտի Դաշնակից տերություններից ակնկալվող աջակցության և օգնություն վրա, որը մասամբ իրականացավ, քանզի չահերն էին տարբեր և նպատակներն այլ:

Անհաղթահարելի պարենային սովը, կադրային ներուժի զգալի պակասը իրենց կնիքը թողեցին Հայաստանի Հանրապետությունում 1918-1920 թթ. ընթացած բանակաստեղծ գործընթացների վրա:

ԳԼՈՒԽ 5.

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ ԶԵՆՔ-ՋԻՆԱՄԹԵՐՔԻ ՀԱՅԹԱՅԹՈՒՄԸ 1918-1920 ԹԹ.

պ. գ. դ., պրոֆեսոր Վ. Հ. ՎԻՐԱԲՅԱՆ

1918-1920 թթ. ՀՀ կառավարությունը զգալի ջանքեր է գործադրել հայկական բանակի համար զենք-զինամթերքի, հրազենի հայթայթման, և առհասարակ սպառազինության ոլորտում ծառացած հիմնախնդիրները լուծելու և այդ կարևոր բնագավառում կուտակված դժվարությունները հաղթահարելու համար: Զգալի ջանքեր են գործադրվեցին չկայացած, անկազմակերպ կառույցները կանոնավոր, արհեստավարժ բանակի վերածելու ուղղությամբ, կազմավորելով համապատասխան կառույցները, ձեռք բերելով զենք ու հանդերձանք, զինվորական ճտքակոշիկներ և աերոպլաններ, հայթայթելով սննդեղեն, այդքան անհրաժեշտ պարեն, նավթ և այլն: Ինչպես վկայում է Հ. Տեր-Հակոբյանը «*1917-ին ռուսական քայքայման պահուն, Կովկասին բանակին թողած մեծաքանակ զենքերը, ռազմանիւթն ու հանդերձանքը, հայերէն առնելով յանձնեցին Վրաստանի ու Ադրպէճանի*»[1]: Ավելին, Ս. Վրացյանի հավաստմամբ՝ թողնվել էին բազմամիլիոն հարստություններ, ռազմամթերքի ու պարենի անհաշիվ պահեստներ»[2], նշել է Ս. Վրացյանը: Անդրանիկն էլ իր հուշերում նշել է, որ ***ռուսական բանակը Կովկասյան ռազմաճակատում թողել է մոտ 3000 հրանոթ, 8 հազար գնդացիր, 1 միլիարդ փամփուշտ, 1 միլիոն ռումբ և շրապնել, 100 000 հրացան և այլ ռազմամթերք, 100 հազար զինվորական համազգեստ, նույնքան մարդու հատկացված պարեն, Կարս բերդաքաղա-***

[1] **Տէր-Հակոբեան Յ.,** Հայաստանի վերջին աղետը: Քէմալական արշաւանքը, Կարսի եւ Ալէքսանդրաբօլի անկումները, հայ բանակին քայքայումը, յարձակման եւ քայքայման պատճառները պալշէվիքեան տիրապետութիւնը: Անտիպ փաստաթուղթեր դիւանագիտական գրեր եւ բազմաթիւ պատկերներ/, Կ. Պոլիս: տպ. Մ. Տէր Սահակեան, 1921, էջ 88:

[2] **Վրացյան Ս.,** Հայաստանի Հանրապետություն, էջ 57:

քում եղած հսկա ամբարները, մոտ 15-17 հազար ձի, անհամար կառքեր, բեռնատար և մարդատար մեքենաներ, հսկա հակերով կոշիկի կաշիներ և այլն, որոնց սակայն հայերը չկարողացան տեր կանգնել[1]: ՀՀ-ին իրավամբ պատկանող ռազմական և այլ ունեցվածքի մի զգալի մասը գտնվում էր Թիֆլիսում Մանթաշյանների, Արամյանցների և այլոց պահեստներում, և 1918 թ. պատերազմի հետևանքով Հայաստանի բանակի համար չափազանց անհրաժեշտ ռազմամթերքի, զենքի, հանդերձանքի և այլ կարևոր պիտույքների ու ապրանքների ձեռքբերումը արգելափակվեց և էապես դժվարացվեց դրանց տարանցումը Հայաստան: Թիֆլիսում Հայաստանի ռազմական ունեցվածքի տեղափոխումը ՀՀ առաջնահերթություններից էր, որը հաճախ շահարկվում էր Վրաստանի կողմից, և ինչպես դիպուկ է նկատել Ա. Ջամալյանը. «վրաց ղեկավարները, իրենց երկրի անկախութիւնը յայտարարելուց յետո վճռականապէս մերժում էին ճանաչել հարեւանների իրաւունքը այնտեղ մնացած ընդհանուր պետական գոյքերի վրա եւ չէ կարող նրանցից որևէ մաս զիջիլ Հայաստանին: *Նման մի դէպք էր հանդիսանում եւ հայկական կորպուսի կողմից Թիֆլիսում թողնուած սպացուածքի յափշտակութիւնը…Հայաստանը Վրաստանին տուրք պէտք է վճարէր եւ դեռ նա էլ վրաց ղեկավարների կողմից դիտւում էր իբրեւ զիջում, իբրեւ մեկը այն զիջումներից, որոնց փոխարէն Հայաստանը պէտք է հրաժարուէր Վրաստանին առաջադրուած իր հողային պահանջներից*»[2]:

Բանակի սպառազինման հարցը սակայն մշտապես օրակարգում էր: Ջորքը նոր հրացանների՝ հատկապես «Լեբել»յան սիստեմի, ինչպես նաև գնդացիրների, լեռնային հրանոթների և գլխավորապես փամփուշտների, զինվորական համազգեստի և այլ կարևոր ռազմական պիտույքների ներկրման կարիք էր զգում: 1919 թ. մարտի 31-ին կառավարության նիստում լսվում է Զինվորական նախարարի զեկուցումը ավագ սպաներին և աստիճանավորներին ամառային համազգեստի համար 1000-ական ռուբլի տալու և զորքի պարենավորման

[1] **Միհրանեան Ա.**, Ինչպէ՞ս պետք է գրավել Թրքահայաստանը /Զօր Անդրանիկի կարծիքը/, Կ. Պոլիս 1921, էջ 7-9, **Սիմոնյան Հր.**, Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Եր, 1991, էջ 295-296:

[2] **Ջամալյան Ա.,** Հայ-վրացական կնճիռը, Եր., 2011, էջ 108-109, 112,124:

մասին և որոշում կայացնում հավանություն տալ 1000 ռ. Սահմաններում զինվորական մասերում գտնված սպաներին և աստիճանավորներին զգեստի համար բաց թողնել մթերքներ՝ արժեքի կես չափով, ինչպես նաև հավանություն տալ Զինվորական նախարարի կողմից արված դիտողություններին՝ սահմանելով նպաստի առավելագույն քանակ 7000 ռ.՝ տարածելով օրենքը մինչև մայիսի 1-ը հեռացվածների վրա[1]:

Բանակը սկզբից ևեթ հիմնականում զինված է եղել ռուսական բանակի սպառազինությամբ: Շարքային զինվորի հիմնական զենքը հանդիսացել է ռուսական երեքգծանի 1891-1910 թթ. նմուշի *«Մոսին-Նագան»* երեքգծանի հրացանը, ինչպես նաև 1893 թ. նմուշի *«Լեբել»* հրացանը (հնացած), 1871 թ. նմուշի *«Բերդանկա»* հրացանը (հնացած) և 1907 թ. նմուշի *«Ռոսս»* հրացանները, սակայն հրացանների մի զգալի մասը մաշվածություն ուներ և շարքից դուրս էին եկել, զգացվում էր փամփուշտների զգալի պակասություն: Գերմանական, ֆրանսիական և այլ տեսակի հրացանները հայկական բանակում սահմանափակ քանակությամբ էին: Վերջիններիս օգտագործումը պահեստամասերի, անհրաժեշտ մակնիշի փամփուշտների բացակայության հետևանքով կապված էր մեծ դժվարությունների հետ:

Հայկական բանակը նաև գրեթե միշտ գնդացիրների պակաս է ունեցել, սակայն խնդիրը ոչ միայն դրանց քանակի մեջ էր, այլև փամփուշտների: Հայկական բանակում կիրառվում էին ռուսական 1905–1910 թթ. նմուշի *«Մաքսիմ»*-ներ, սահմանափակ քանակությամբ անգլիական 1910 թ. նմուշի *«Վիքքերս»*, ամերիկյան 1915 թ. նմուշի *«Լյուիս»* և 1914 թ. նմուշի *«Կոլտ Բրաունինգ Մ1895»* գնդացիրներ, դրանց համար տարատեսակ փամփուշտների հայթայթումը մեծ խնդիր էր[2]: 1918 թ. մարտի 31-ի տվյալներով՝ հայկական բանակային կորպուսի սպառազինության մեջ կար 170 գնդացիր և ընդամենը 36 հրանոթ[3]: Նույնիսկ 1919 թ. մարտի դրությամբ Դրոյի ենթակայության տակ եղած

---

[1] Տե՛ս **Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ**, էջ 143:

[2] Տե՛ս **Կարապետյան Մ. Լ.,** Հայկական կամավորական խմբերը և ազգային գումարտակները կովկասյան ռազմաճակատում, Եր., 1999, էջ 95:

[3] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 1267, ց. 2, գ. 88, թ. V.

ավելի քան 1400 հոգանոց զորախումբն ուներ ընդամենը 2 գնդացիր[1]: Հայկական բանակի սպայական և զինվորական կազմի որոշ մասը զինված էր ռուսական բանակի 1895 թ. նմուշի թմբուկավոր *«Նագան»* թմբկավոր ատրճանակներով: Սակայն բոլորի կողմից առանձնահատուկ սեր էր վայելում մեծ տարածում գտած 1896 թ. և 1908 թ. նմուշների *«Մաուզեր Կ-96»* ատրճանակը, կար նաև 1871 թ. նմուշի թմբուկավոր *«Սմիթ-Վեսսոն»* ատրճանակ: Նման զենքերով զինված զորաջոկատները հաջողությամբ էին գործում դիվերսիոն մարտական գործողությունների ժամանակ: Ինչպես տեսնում ենք, հայկական բանակը հիմնական հրաձգային զենքերի առումով զինված էր բազմազան տեսակներով, որը լրացուցիչ խնդիրներ էր ստեղծում:

Հայկական կորպուսի հրետանին կազմավորված էր 2 հրետանային բրիգադից, 4 առանձին դիվիզիոններից և առանձին լեռնային մարտկոցից՝ ընդհանուր առմամբ մոտ 100 հրանոթ, որոնցից սոսկ կեսն էր պահպանվել աշխարհամարտից հետո: Վրաստանի դեմ պատերազմում հայկական բանակը բռնագրավեց 17 հրանոթ, որից 2-ը՝ հաուբից, գնդացիրներ, հրացաններ, ձիեր և այլ գույք: Սա հնարավորություն տվեց ձևավորել 2 մարտկոց՝ թեթև և լեռնային: Բացի այդ՝ բանակը համալրվեց նաև երկու զրահագնացքով: Կարսում ևս թուրքական զորքերը թողել էին որոշ քանակությամբ կիսաթալանված, կամ կիսաոչնչացված հրետանային գույք՝ հրանոթներ, զինամթերք, վառոդ և այլն: 1919 թ. վերջին բանակի հրետանին ուներ 130-140 հրանոթ, որոնցից 63-ը (15 մարտկոց) տրված էր հրետանային բրիգադին: Կարսի բերդի հրետանին ուներ 64 հրանոթ և 2 զրահագնացք՝ 4 հրանոթով: Հատուկ նշենք, որ 1914-1916 թթ. Կարսի ամրոցում եղել է մոտ 90 հրանոթ, հաուբից և հրասանդ, 5 հրետանային գումարտակ (դիվիզիոն)[2]:

1918 թ. օգոստոսի 21-ին կառավարության նիստում լսվում է ՆԳ նախարարի կողմից ներկայացված զենքի ազգայնացման օրինագծի մասին՝ բացառությամբ սառը և որսորդական զենքերի: Ընդունված

[1] Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց.1, գ. 35, թ. 146:

[2] Տե՛ս **Корсун Н.,** Эрзерумская операция на Кавказском фронте Мировой войны в 1915-1916 гг., М., 1938, с. 5-40:

որոշման մեջ հավանություն է տրվում օրինագծին՝ այն պառլամենտ մտցնելու համար[1]:

1918 թ. նոյեմբերի 18-ին Նախարարների խորհուրդը լսում է Զինվորական նախարարի՝ զրահապատ գնացքը կառուցելու մասին զեկուցումը: Որոշվել է նաև զրահապատ գնացքի համար հատկացնել 100 հազար ռուբլի: Ըստ այդմ՝ կապիտան Սիրունյանին հանձնարարվում է կազմել զրահապատ գնացքի կառուցման նախագիծ և ապա այն հատկացնել ինժեներական վարչությանը, և վերջինիս զեկուցումից հետո հարցը նորից քննել Նախարարների խորհրդում[2]:

1919 թ. հունվարի 10-ին Նախարարների խորհուրդը լսում է Ալեքսանդրապոլի բերդի ռազմանյութերի անխնամ վիճակի մասին: Ըստ այդմ՝ որոշվում է Ալեքսանդրապոլի բերդի ռազմանյութերի պահպանության համար հանձնարարել Զինվորական նախարարին ձեռք առնել շտապողական միջոցներ այդ նյութերը որևէ պատահարներից զերծ պահելու համար[3]: 1919 թ. հունվարի 15-ին Նախարարների խորհուրդը լսում է Ալեքսանդրապոլի պայթյունի գործի Արտակարգ քննիչ հանձնաժողովի զեկուցումը՝ ենթադրյալ հանցավորների, պայթյունի առաջ բերած ավերումների և առհասարակ Ալեքսանդրապոլում և բերդում գտնված ռազմանյութերի անխնամ պահելու մասին: Ընդունված որոշման մեջ Զինվորական նախարարին հանձնարարվում է առանց հապաղելու արտակարգ միջոցներ ձեռնարկել Ալեքսանդրապոլ քաղաքում և բերդում գտնվող ռազմանյութերի պահպանման և պայթուցիկ նյութերը տեղավորելու ու անվնաս դարձնելու համար: Միաժամանակ որոշվում է պաշտոնից հեռացնել գնդապետ Կալաբանովսկուն, որին հանձնարարված է եղել ռազմանյութերի ստացումն ու տեղավորումը, և նրան շուտափույթ հնարավոր արագությամբ փոխարինել մի այլ համապատասխան պատրաստություն ունեցող սպայով[4]:

Այդ օրերին զենք-զինամթերքի, հրազենի և տարաբնույթ ռազմանյութերի հայթայթման գործի կազմակերպման նպատակադրումով

---

[1] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 201, ց. 1, գ. 96, թ. 90:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 6, թ. 10:

[3] Տե՛ս նույն տեղում, ֆ. 201, ց., գ. 100, թ. 6-7:

[4] Տե՛ս **Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ,**, էջ 93:

կարևորվում է նաև նաև ռազմաքաղաքական կապերի հաստատումը տարբեր պետական կազմավորումների և ուժերի հետ, որոնց միջոցով կարող էին մի շարք խնդիրներ՝ կապված զենքի ու զինամթերքի առաքման, ռազմական հնարավոր օժանդակության հետ՝ լուծում ստանալ: 1919 թ. հունվարի 25-ին Նախարարների խորհուրդը լսում է ԱԳ նախարարի առաջարկած օրինագիծը՝ ռուսական Կամավորական բանակում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություն հիմնելու վերաբերյալ[1]: 1919 թ. հունվարի 30-ին ՀՀ Նախարարների խորհուրդը կրկին լսում է ԱԳ նախարարի զեկուցումն ու օրինագիծը Կամավորական զորաբանակի և Կուբանի կառավարության մոտ ներկայացուցիչ նշանակելու մասին: Ընդունված որոշման մեջ առաջարկվում է նկատի ունենալ Նախարարների խորհրդի դիտողությունները և կազմել նոր օրինագիծ, որից հետո միայն այն ներկայացնել հաստատման Հայաստանի խորհրդին[2]:

1919 թ. մարտի 20-ին ՀՀ կառավարության նիստում լսվում է Զինվորական նախարարի զեկուցումը դաշնակից պետություններին դիմելու՝ 30 հազար հոգու համար սպիտակեղեն, կոշկեղեն և հագուստներ, 30 հազար «Լեբել» հրացան, 10 միլիոն փամփուշտ ստանալու համար կամ եղած «Լեբել»-ի փամփուշտները երեքգծանի փամփուշտներով փոխելու, ինչպես նաև ապրանքատար, մարդատար և սանիտարական ավտոմոբիլներ ատանալու համար և միջնորդություն հարուցում[3]:

ՀՀ կառավարության առաջին դիմումագրերից մեկը 1919 թ. ապրիլի 1-ին հասցեագրվում է Մեծ Բրիտանիայի ԱԳ նախարար Ա. Բալֆուրին, որում խնդրվում էր թուրք-թաթարական սպառնալիքից պաշտպանվելու նպատակով հայկական զինված ուժերին օգնել զենքով և ռազմական այլ հանդերձանքով, որին բրիտանական ռազմական խորհուրդը և կառավարությունը ապրիլի 9-ին արձագանքում են հորդորանման և վերապահումներով լի պատասխանով՝ խուսափելով վերջնական եզրահանգումից[4]:

---

[1] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 199, ց. 1, գ. 100, թ. 9:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 21:

[3] Տե՛ս **Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ**, էջ 137:

[4] Տե՛ս **Գալոյան Գ.**, Հայաստանը և մեծ տերությունները, էջ 171:

1919 թ. ապրիլի 3-ին (N 88) Նախարարների խորհրդում ունեցած ցեկույցում գեներալ-մայոր Ք. Արարատյանը տեղեկացնում էր, որ ստացված տեղեկությունների համաձայն Սուրմալուի և Ղամարլուի շրջանների բնակիչները, նյութական շատ ծանր դրության և մշտական սովահարության հետևանքով սկսել են ըստ անհրաժեշտության իրենց տրամադրության տակ եղած զենքը վաճառել, և այն էլ՝ գլխավորապես շրջակա գյուղերի թաթարներին: Զինվորական նախարարը նշված երևույթին վերջ տալու, զենքը ՀՀ տարածքում պահելու համար և դրանով իսկ սուղ պաշարները լրացնելու նպատակով, խիստ անհրաժեշտ էր համարում հնարավորինս մեծ քանակով զենք գնել՝ ի հաշիվ իսկույնևեթ գումար վարկավորել և փամփուշտների և հրացանների համար առավելագույն գներ նշանակել: Զինվորական նախարարը կարծում էր, որ նշված շրջաններում կարելի է մինչև 1000 հրացանի համար ձեռք բերել 100000 հատ եռագիծ փամփուշտ՝ նպատակահարմար գտնելով ամեն մի հրացանի համար սահմանել մինչև 500 ռուբլի և ամեն մի փամփուշտի համար՝ 50 կոպեկ: Ելնելով այդ հաշվարկից՝ առաջարկվում էր փորձել վարկավորել զենքի գնման և անհրաժեշտ տեղաշարժերի համար 6000.000 ռուբլի, որը պետք է իրականացվեր, ըստ ՀՀ Զինվորական նախարարի, երկու հանձնաժողովների միջոցով, որի կազմում պետք է ընդգրկվեին Ղամարլուի կամ Իգդիրի հասարակության ներկայացուցիչներ: Ընդսմին, Զինվորական նախարարը խնդիր էր հարուցում հաստատելու իր դիտարկումները և Զինվորական նախարարության կարիքների համար շտապ բաց թողնել 600.000 ռուբլի[1]:

1919 թ. ապրիլի 10-ին Նախարարների խորհրդի նիստում լսվում է Զինվորական նախարարի զեկուցումը 600 հազար ռուբլու հրացաններ և փամփուշտներ ձեռք բերելու անհրաժեշտության մասին, որին հավանություն է տրվում և թույլատրվում է այդ նպատակի համար ծախսել 1918 թ. ռազմական վարկերի մնացորդները[2]:

1919 թ. հունիսի 19-ին ռազմական աջակցության խնդրանքով ՀՀ կառավարությունը դիմումագիր է հղում Փարիզի խաղաղության վեհա-

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 199, ց. 1, գ. 100, թ. 21, գ. 27, թ. 155:

[2] Տե՛ս նույն տեղում, գ. 96, թ. 63:

ժողովին, սակայն այն անպատասխան է մնում, որին հաջորդում են նոր ճեպագրեր, և արդեն օգոստոսի 6-ին պաշտոնագիր է հղվում վեհաժողովի նախագահին և Լլոյդ Ջորջին՝ խնդրելով իրենց պաշտպանել թուրք-բոլշևիկյան ուժերից, և ընդգծելով, որ հայկական 30 հազարանոց զորքը ռազմական հանդերձանքի խիստ կարիք ունի, որոնք սակայն մնում են անպատասխան: Չբավարարվելով այդ ամենով, ևս մեկ նմանատիպ խնդրանքով հեռագիր է ուղարկվում Մեծ Բրիտանիայի ԱԳ նախարար լորդ Բալֆուրին, սակայն առանց էական արդյունքների[1]:

1919 թ. օգոստոսի 26-ին Թիֆլիսում ՀՀ ռազմական կցորդ գեներալ Հ. Քիշմիշյանին ուղարկված գրության մեջ գեներալ Գամազովը Զինվորական նախարարության հանձնարարությամբ խնդրում էր պրոուչիկ Անիևի միջոցով կապվել Կամավորական բանակի հետ՝ նրանցից ձեռք բերելու ավելի քան 5 միլիոն եռագիծ փամփուշտ՝ այն փոխանակելով շուրջ 2 միլիոն *«Լեբելի»* փամփուշտի հետ, ավելացնելով, որ ծանր իրավիճակից ելնելով՝ գոնե կարելի է այդ ամենը մաս-մաս ուղարկել, ինչպես նաև հրետանարկեր[2]:

Փարիզի խաղաղության վեհաժողովին ուղղված խնդրագրերը կրկնվում են սեպտեմբերի 20-ին, դեկտեմբերի 2-ին, 9-10-ին, որոնցում նշվում է հայկական բանակի վերակառուցման և այդ առումով ակնկալվող ռազմական աջակցության անհրաժեշտության մասին՝ Հայաստանին սպառնացող Ադրբեջանի և այլ վտանգներից պաշտպանվելու համար[3], որոնց ի պատասխան՝ Ադրբեջանը ևս համանման հեռագրահեղեղ է ուղղորդում Փարիզի խաղաղության վեհաժողովին:

1919 թ. աշնանը Սիբիրի ու Մանջուրիայի, և հատկապես Խարբինի փոքրիկ հայ համայնքները հայկական բանակին են նվիրաբերում 4 միլիոն ռուբլի[4]: Դոնի կազակների կառավարությունը Նովոչերկասկում հայերին ազատում է զինապարտության պահանջից՝ այն հիմունքով, որ նրանք այլազգի են և 1919 թ. աշնանը կրկին զորահավաք իրականացնում, բավարարելով Չալխուշյանի խնդրանքը, որ բոլոր այն հայ

[1] Տե՛ս **Գալոյան Գ.,** Հայաստանը և մեծ տերությունները, էջ 172:

[2] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 275, ց. 5, գ. 177, թ. 68:

[3] Տե՛ս **Գալոյան Գ.,** Հայաստանը և մեծ տերությունները, էջ 172:

[4] Տե՛ս **Հովհաննիսյան Ռ.,** Հայաստանի Հանրապետություն, հատոր III, էջ 560:

գաղթականները, որոնք կցանկանային կամավոր զինվորագրվել հայկական բանակին, ազատել զինապարտությունից և օգնել անարգել մեկնելու հայրենիք, ընդ որում Ռուսական Կարմիր Խաչի հայկական բաժանմունքին և Հայոց ազգային խորհուրդներին թույլատրվում է հանդերձավորել կամավորներին և օգնել նրանց իրականացնել Հայաստան մեկնումը[1], ակնկալելով նրանց անխոչընդոտ տարանցումը Վրաստանի տարածքով, որը միշտ չէ, որ առանց բարդությունների էր լուծվում:

1919 թ. սեպտեմբերի 13-ին Նախարարների խորհուրդը լսում է ֆինանսների նախարարի զեկուցումը Սեպուհի առաջարկի մասին ապրանքափոխանակությամբ զինվորների համար հագուստ գնելու մասին. Որոշվում է հանձնարարել Զինվորական նախարարին հրավիրելու այդ վաճառականներին՝ պայմաններ մշակելու համար, և նրանց աղի փոխարեն ուղարկել այլ ապրանքներ[2]:

1919 թ. հոկտեմբերի 1-ին (N 226) ՀՀ Զինվորական նախարարին ներկայացված զեկուցագրում Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության ռազմական ներկայացուցչի ժամանակավոր պաշտոնակատար պորուչիկ Եղիազարովը նշելով Կամավորական բանակից փոխարինաբար ստացած և լրիվ տեղ հասցված 3 միլիոն եռագիծ փամփուշտի մասին, միաժամանակ հիշեցնում էր, որ դրա դիմաց հայկական կառավարությունը պետք է Կամավորական բանակին տրամադրեր իր ձեռքի տակ ունեցած 6 միլիոն փամփուշտը, հիշեցնելով պայմանավորվածության լրիվ կատարման անհրաժեշտության մասին: Եղիազարովը նշելով Հայաստանի կողմից իր վրա վերցված պարտականությունների կատարման անհրաժեշտության և Կամավորական բանակի համար խոստացված փամփուշտները Վրաստանով անցկացնելու մասին, դրա հետ մեկտեղ տեղեկացնում էր, որ ամերիկացիները, իբր թե վրացիների հետ հարաբերությունները չփչացնելու ցանկությունից ելնելով, տվյալ պահին հակվածություն չեն դրսևորել և հայտնել են, որ չեն կարող աջակցել Հայաստանին՝ նշված բեռը անխոչընդոտ տեղ հասցնելուն, այդ իսկ պատճառով էլ գնդապետ Վ. Հասկելի տեղակալ

[1] Տե՛ս **Հովհաննիսյան Ռ.,** նշվ. աշխ., հատոր III, էջ 562:
[2] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 199, ց. 1, գ. 100, թ. 204:

գնդապետ Ռեյի խորհրդով Հայաստանի կառավարությանը առաջարկվել էր անհապաղ տեղեկացնել Ա. Դենիկինի Կամավորական բանակի հրամանատարությանը, որ այդ փամփուշտները պատրաստ են առաքման, սակայն իրենցից անկախ հանգամանքներով և տեխնիկական դժվարությունների հետևանքով տվյալ պահին չեն կարող բեռը տեղ հասցնել՝ խնդրելով այն համարել պարտք: Եղիազարովը այդ կապակցությամբ ընդգծել էր, որ Կամավորական բանակին իրազեկումը, անկասկած, թելադրված է Կամավորական բանակի հետ բարեկամական հարաբերությունները պահպանելու անհրաժեշտությամբ և, բացի այդ, վերջինիս կողմից խոստացված ևս 2 միլիոն եռագիծ փամփուշտի ստացման հնարավորությունները պահպանելու համար[1]:

Դրան զուգահեռ հաջող փորձ արվեց տեղում՝ Հայաստանում զենքի և զինամթերքի արտադրություն կազմակերպելու համար, որն անվտանգության համակարգի ձևավորման ապագայի քաղաքականության տեսանկյունից էական էր: Չբավարարվելով զենքի ու զինամթերքի, փամփուշտների ստացումով Անտանտի երկրներից, Վրաստանից, Ղրիմից, Հունաստանից և երկրներից, որը ոչ միշտ էր արդյունավետ, ՀՀ կառավարությունը և զինվորական իշխանությունները իրավամբ ձգտում էին Հայաստանում զենք-զինամթերքի արտադրություն կազմակերպել՝ սեփական կարիքները ինքնուրույն հոգալու համար: 1919 թ. սեպտեմբերի 12-ին Նախարարների խորհուրդը լսում է Զինվորական նախարար Քր. Արարատյանի զեկուցումը գնդակներ և փամփուշտներ պատրաստելու արհեստանոցի և ծառայողների պահպանության համար 6 միլիոն ռուբլի վարկ բացելու մասին ու որոշում հավանություն տալ և այն ներկայացնել ՀՀ պառլամենտին ի հաստատումն[2], որն էլ իր հերթին սեպտեմբերի 16-ին օրենք է ընդունում՝ հավանություն տալով այդ ձեռնարկի համար Զինվորական նախա-րարությանը վարկ տրամադրելու մասին[3]:

Իսկ արդեն 1919 թ. սեպտեմբերի 16-ին Նախարարների խորհուրդը լսում է Զինվորական նախարարի զեկուցումը Ալեքսանդրապոլի

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 275, ց. 5, գ. 197, թ. 16:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 100, թ. 203:

[3] Տե՛ս **Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները,**, էջ 173, **ՀԱԱ**, ֆ. 199, ց. 1, գ. 66, թ. 27:

հրանոթային արհեստանոցների կահավորման և կազմակերպման համար 2.172.500 ռուբլի վարկ բացելու մասին՝ հավանություն տալով և ներկայացնելով պառլամենտի հաստատմանը[1], քանի որ դրա կարիքը մեծ էր և Հայկական բանակի հրետանապարկը արդեն 1919 թ. վերջին բաղկացած էր 131 միավոր հրետանուց, ընդ որում կար 15 մարտկոց՝ ներառյալ ուսումնական հրամկազմը 63 հրետանով, իսկ Կարսի բերդապահ հրետանին և պահեստներն ունեին 64 միավոր, 4 միավոր էլ ունեին զրահապատ գնացքները[2], և արդեն հոկտեմբերի 7-ին ՀՀ պառլամենտը օրենք է ընդունում Ալեքսանդրապոլի զինագործական հրանոթային արհեստանոցների սարքավորման կահավորման և կազմակերպման համար Զինվորական նախարարությանը 2 միլիոն 172 հազար ռուբլի վարկ բացելու մասին[3]: Դրան հաջորդում է 1919 թ. նոյեմբերի 6-ի (N 13375) պաշտոնագիրը ֆինանսների նախարարության բյուջետային-գանձապետական բաժնի Երևանի գանձապետարանին՝ տրամադրելու հասանելիք գումարը[4], հիմք ընդունելով Զինվորական նախարար գեներալ-մայոր Ք. Արարատյանի կողմից ներկայացված գրությունը: Եվ այսպիսով, կառավարության ջանքերով Քանաքեռում կազմակերպվում է փամփուշտի 75 ուժանոց գործարան՝ զինագործական-գնդացրային արհեստանոց,[5] դրան զուգահեռաբար քայլեր են արվում փամփուշտի 35 ուժանոց գործարան կազմակերպելու Ալեքսանդրապոլում: 1920 թ. կեսին Քանաքեռի փամփուշտի 75 ուժանոց մեխանիկական գործարանում աշխատում էր 171, Քանաքեռի մեխանիկական արհեստանոցում՝ 224, Ալեքսանդրապոլի փամփուշտի 35 ուժանոց մեխանիկական գործարանում՝ 175 մարդ[6]: Այդ գործողությունների հետևանքով 1920 թ. մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 20-ը Քանաքեռի գործարանում պատրաստվում է 296.000 փամփուշտ, իսկ 1919 թ. վերջին ստեղծված՝ Ալեքսանդրապոլի ազգային փամփուշտի

---

[1] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 199, ց. 1, գ. 100, թ. 213:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց. 5, գ. 79, թ. 50:

[3] Տե՛ս **Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները**, էջ 178, **ՀԱԱ**, ֆ. 199, ց.1, գ. 66, թ. 49:

[4] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 202, ց. 1, գ. 303, մաս II, թ. 105, 107:

[5] Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց. 5, գ. 79, թ. 49 հակ.:

[6] Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 19, թ.183:

գործարանում՝ 492.000 փամփուշտ, ընդամենը՝ 798.000 փամփուշտ[1], ինչպես նաև կազմակերպվում է հրետանու նորոգման և ռադիոհեռագրի արհեստանոց և ռադիոդիվիզիոն ու ռադիոդիվիզիոնին կից դպրոց[2]: 1920 թ. ապրիլի 6-ին Նախարարների խորհուրդը լսելով Զինվորական նախարարի զեկուցումը փամփուշտների պատրաստման գործը հրետանային վարչությանը հանձնելու մասին, աչքի առաջ ունենալով, որ արտակարգ կոմիսար Ա. Ջամալյանը հրավիրվել էր որպես հաղորդակցության նախարար և այդ վերջին նախարարությունն ունի չափազանց կարևոր և ծանր պարտականություններ, սկզբունքորեն անհրաժեշտ է համարում ազատել Ա. Ջամալյանին փամփուշտներ պատրաստելու գործի արտակարգ կոմիսարի իրավունքներից և այդ իրավունքները, համաձայն նախարարների խորհրդի 1920 թ. փետրվարի 23-ի որոշման, վերապահել Զինվորական նախարարին՝ այդ գործի համար բացված վարկերը հանձնելու Զինվորական նախարարությանը[3]: 1920 թ. կեսերին Բաթումիից բերված շարժիչների և նոր տիպարի գործասեղանների շնորհիվ հնարավորինս ավելացան Քանաքեռի և Ալեքսանդրապոլի հրետանային արհեստանոցների և փամփուշտի գործարանների աշխատունակությունը և թողարկված արտադրանքի ծավալները[4]:

1920 թ. մարտի 3-ին Նախարարների խորհուրդը լսում է Զինվորական նախարարի զեկուցումը դեկտեմբեր ամսին հայ-վրացական ընդհանրումների ընթացքում Ալեքսանդրապոլի ժողովրդից գնած հրացանների և փամփուշտների ծախսերը ծածկելու համար 17.605 ռ. 45 կ. վարկ բանալու մասին, և դրա հիման վրա որոշում հաստատել այն և խնդրում վարկը բացելու համար դիմել Հայաստանի խորհրդին[5]: 1920 թ. մարտի 6-ին (N 1376) Խատիսյանը տեղեկացնում էր Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատար Լ. Եվանգուլյանին, որ Վրաստան է հասցվել 1 միլիոն 200 հազար հրացանային փամփուշտ, 3400 երեք դյույմանոց դաշտային նռնակ, 300 շրապնել: Ըստ այդմ

[1] Տե՛ս նույն տեղում, գ. 199, թ. 83:
[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց. 5, գ. 79, թ. 48, 50, 51 հակ.:
[3] Տե՛ս նույն տեղում ֆ. 199, ց. 1, գ. 148, թ. 56:
[4] Տե՛ս նույն տեղում, գ. 119, թ. 183:
[5] Տե՛ս նույն տեղում, գ. 100, թ. 35:

Խատիսյանը անհրաժեշտ էր համարում վրաց իշխանություններից շտապ թույլտվություն ստանալ Վրաստանի վրայով Հայաստան տեղափոխելու նշված բեռը[1]:

1920 թ. մարտի 20-ին Նախարարների խորհուրդը լսում է Զինվորական նախարարի զեկուցումը մի շարք հարցերի մասին, այդ թվում 1) սպաներին ամառային համազգեստի համար 1000-ական ռուբլի տալու առումով հարցը Դաշնակից պետություններին դիմել և այն մերժում, 2) առաջին հերթին բավարարել զորքի կարիքները, բաց թողնելով ամսական 16 հազար փութ ալյուր և 4000 փութ բրինձ կամ ձավար և որոշում այն բավարարել, 3) Դաշնակից պետություններին դիմելու 30 հազար հոգու համար սպիտակեղեն, կոշկեղեն և հագուստեղեն, ինչպես նաև 30.000 «Լեբել»-ի հրացան, «Լեբելի» 10 միլիոն փամփուշտ և եռագիծ հրացանների փամփուշտներ, և վերջապես ապրանքատար, մարդատար և սանիտարական ավտոմոբիլներ ստանալու համար, որի հիման վրա որոշվում է համապատասխան միջնորդություն հարուցել[2]:

1920 թ. ապրիլի 7-ին (N 0597) Թիֆլիսում ՀՀ ներկայացուցչին, գեներալ Քիշմիշյանին, խորհրդական Մ. Թումանյանին ուղղված հեռագրում Գլխավոր շտաբի պետ Բ. Բաղդասարյանը տեղեկացնում է կապիտան Անիևից ստացված հեռագրի մասին, որ Փոթի ուղարկված ռազմական բեռով բեռնված ռուսական «Կազակ» շոգենավը վրացիների կողմից զավթվել է: Տեղյակ էր պահվում, որ գեներալ Պորոխանսկին խնդրում է միջոցներ ձեռնարկել շոգենավի ազատագրման համար, պնդելով, որ հակառակ դեպքում կհրաժարվեն փամփուշտով օգնելու՝ ասելով, որ արդեն մի բեռ փամփուշտ Բաթումիում է, հաջորդը կտրվի Թեոդոսիայում: Նաև տեղեկացվում էր, որ Զինվորական նախարարը խնդրել է այդ մասին հայտնել ԱԳ նախարար Օհանջանյանին՝ բեռն ազատելու համար[3], որի մասին հուլիսի 9-ին Վրաստանում ՀՀ ներկայացուցչության տեղեկագրում նշվում է, թե վրացիները չեն ուզում ընդունել հայկական կողմի տարանցման իրավունքը, ինչպես

[1] Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց. 5, գ. 211, թ. 53:
[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 100, թ. 48:
[3] Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց. 5, գ. 154, թ. 66:

նաև զինվորական մթերքներ տեղափոխելը արտոնելու համար՝ ստիպված լինելով Բաթումիում վրացիներին զիջելու ՀՀ կառավարության կողմից գնված ռազմամթերքի մի մասը, միայն թե կարողանան Հայաստան փոխադրել եղածը[1]: 1919 թ. ապրիլի 17-ին Բաթումիի հյուպատոսությանն առընթեր Զինվորական գերատեսչության ներկայացուցիչ կապիտան Անիևը ՀՀ Զինվորական նախարարության Գլխավոր շտաբին ուղղված զեկուցագրում հայտնում էր, որ ամեն օր խնդրանքով իրեն են դիմում նախկին Կամավորական բանակի բոլոր զո-րատեսակների ռուս սպաները՝ աջակցելու Հայաստան մեկնելու ՝ հայկական զորքերի շարքերը մտնելու համար: Նաև ասվում էր, որ նրանց մեջ շատ կան ռազմական հոյակապ օդաչուներ, լավ հրետանավորներ, հեծելազորային կազակներ, շատերը համաձայն են նույնիսկ ծառայելու որպես շարքային զինվորներ: Սակայն ասվում էր, որ ինքը թե՛ Երևանից, ոթե՛ գեներալ Քիշմիշյանից հրահանգ չունենալու հետևանքով բոլորին մերժել է[2]: Ի պատասխան՝ Անիևը 1920 թ. մայիսի 8-ին գեներալ Քիշմիշյանից գրություն է ստանում, որում վերջինս տեղեկացնում էր, թե ինքը հարցի լուծման նպատակով բանակցում է ՀՀ Գլխավոր շտաբի հետ, իր ձեռքի տակ ունի Գլխավոր շտաբի Տեսչական բաժնի 1920 թ. ապրիլի 3-ի հրահանգը. Համաձայն Զինվորական նախարարի հրամանի՝ կարելի էր Հայաստանի զորքերում ծառայության ընդունել Հյուսիսային Կովկասից եկող սպաների, հայ զինվորների՝ պայմանով, որ նրանք կընդունվեն միայն շարային ծառայության՝ իրենց հետ ունենալով իսկական ծառայողական ցուցակները, որ զինվորական գերատեսչությունը չի երաշխավորում անպայման սպաներին ընդունել ծառայության, և այդ իսկ պատճառով ընդունման մասին հարցը կլուծվի ամեն անգամ նրանց Երևան ժամանելուն պես, վերապահում անելով, որ մինչև վերջնական զինվորական ծառայության անցնելը ոչ ոք ոչ մի դրամ չի ստանա[3]:

1920 թ. ապրիլի 20-ին (N 159) Թիֆլիսի դիվանագիտական ներկայացուցչին, ինչպես նաև անդրկովկասյան վեհաժողովի հայկական

[1] Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 607, թ. 2:
[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց. 5, գ.154, թ. 94:
[3] Տե՛ս նույն տեղում, թ. 78:

պատվիրակության նախագահին ուղղված պաշտոնագրում գեներալ-մայոր Հ. Քիշմիշյանը հայտնում էր, որ «Կազակ» նավը, որը Հայաստանին բերել էր փամփուշտներ և հրետանային ունեցվածք, մարտի 22-ին արգելափակվել է Փոթիում, ընդ որում վրաց կառավարության այդ քայլը ուղեկցվել է Զինվորական նախարարի հրամանով: Հաղորդվում էր, որ Բաթումիում Դենիկինի ներկայացուցիչ գեներալ Պորոխոնսկին, որի միջոցով ստացվել է բեռը, ձգտում է աջակցություն ցուցաբերել՝ ռազմական բեռը տեղ հասցնելու գործում: Քիշմիշյանը առաջարկում էր Ղրիմ ուղևորվող կապիտան Անիևին և Մինաս Մակարյանին ապահովել փամփուշտների ստացման համար անհրաժեշտ փաստաթղթերով՝ պնդելով, որ Վրաստանի կառավարությունը վերադարձնի Ռուսական նավագնացային ընկերության այդ նավը և դրա հետ մեկտեղ այն դրվի Ղրիմ գործուղվող կապիտան Անիևի և Մակարյանի տրամադրության տակ: Քիշմիշյանը խնդրում էր՝ եթե հնարավոր է, այդ հարցը դնել վեհաժողովում՝ ցույց տալով, որ Սաղաթելյանի կողմից պատվիրված և նախկինում Կամավորական բանակին պատկանող նշված նավը վարձակալվել է հայկական կառավարության կողմից[1]: 1920 թ. ապրիլի 21-ին (N 161) Բաթումիում Դաշնային հրամանատարությանն առընթեր Ռուսաստանի Հարավի Զինված ուժերի գլխավոր հրամանատարի ներկայացուցիչ գեներալ-մայոր Պորոխոնսկուն ուղղված դիմումագրում Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությանը կից Զինվորական վարչության ներկայացուցիչ, ռազմական կցորդ գեներալ Քիշմիշյանը հաղորդում էր, որ վրացական իշխանությունների կողմից «Կազակ» շոգենավի բռնազավթման մասին իրազեկվել է դիվանագիտական հավատարմատարին և անդրկովկասյան հանրապետությունների այդ օրերին հրավիրված վեհաժողովի հայկական պատվիրակության նախագահին խնդրանքով՝ այդ հարցի քննարկումը կատարել առաջնահերթորեն և խնդիր առաջադրել վրացական իշխանություններին՝ ազատագրել, և առանց անհապաղ Վրաստանի կառավարությունից պատասխան ստանալու դեպքում արդյունքների մասին տեղյակ պահել[2]:

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 87:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 88:

Հետաքրքիր է նշել, որ Համո Օհանջանյանի Ալ. Խատիսյանին գրված 1920 թ. ապրիլի 6-ից մինչև ապրիլի 22-ը ընկած ժամանակահատվածի մի շարք նամակներ լի են ՀՀ համար խիստ անհրաժեշտ զենք-զինամթերքի հայթայթման մտահոգությամբ, և մասնավորապես Բաթումից և Փոթիից դրանց Հայաստան տեղափոխման հետ կապված ֆինանսական դժվարություններով, որոնք դժվար էր ձեռք բերել, որը նույնիսկ չէր տրամադրում կարծես թե իրենց նկատմամբ բարեհաճ տրամադրված Կովկասյան բանկը, որին դեպի Հայաստան տրամադրելու նպատակով նրան 80 ռուբլով աղ էր տրամադրվում, որը նա վերավաճառում էր 380 ռուբլով. Ավելացրած դրան նաև այն հանգամանքը, որ ինչպես գրվում է Հ. Օհանջանյանի Ալ. Խատիսյանին հասցեագրված ապրիլի 6-ի նամակում, վրացիները իրենք ոչինչ չէին անում, սակայն հայերին պարտադրում էին կիսվել իրենց հետ, հակառակ դեպքում Փոթիից և այլ տեղերից բեռնափոխադրումներում ձգձգումներ էին առաջ բերում, իսկ ապրիլի 8-ի նամակում տեղեկացվում է Իտալիայի ներկայացուցիչ Մ. Գաբբայի և Ֆրանսիային ռազմական ներկայացուցիչ փոխգնդապետ Է. դը Կորբեյլի հետ տարվող բանակցությունների մասին հայկական բամբակը և կաշին փամփուշտների և «Լեբելի» հետ փոխանակելու համար, որին ի պատասխան Կորբեյլը խոստանում է, որ հնարավոր է Դենիկինին հասցեագրված Կոստանդնուպոլսյան և սալոնիկյան ռազմաբեռների հոսքերից տրամադրվի: Օհանջանյանը նաև գրել էր, թե Իտալիայի ռազմաքաղաքական ներկայացուցիչ գնդապետ Մ. Գաբբան հավաստիացրել է, թե իրենք Ադրբեջանին մերժել են, սակայն իրենց գործակալական տվյալներով հաստատվել է, որ այդպես չէ, քանզի Փոթիից Ադրբեջան է մտել 40-50 վագոն զինհանդերձանք և այլ ռազմական գույք, որոշ չափով նաև փամփուշտ, որոնք ադրբեջանցիները ստացել են իտալացիներից[1]: Հ. Օհանջանյանի Ալ. Խատիսյանին ուղղված 1920 թ. ապրիլի 14-ի նամակում հայտնվում էր, որ Վրաստանի հետ զենքի խնդրում գնացել են բանակցությունների, որին ներգրավվել են գեներալներ Կազբեգին և Հ. Քիշմիշյանին, նշելով, որ վրացիք պատրաստակամ են թույլատրել

[1] Տե՛ս **Համո Օհանջանյանի նամակները Ալեքսանդր Խատիսյանին, 6 ապրիլի-22 ապրիլի 1920 թ.,** «Բանբեր Հայաստանի Արխիվների», 1996, N 1, էջ 74:

միայն «Լեբել» հրացանների՝ 1000-1600 հատի, «Կոլտ» գնդացիրների փոխադրումը, որոնք նախատեսված են եռագիծ փամփուշտների համար, փոխարենը խնդրելով լեռնային թնդանոթների երեք դյույմանոց արկեր և հաուբիցային արկեր, «Լյուիս» գնդացիրներ, որին հայկական կողմը պատասխանում է, թե դրանք իրենց էլ են պետք[1]:

1920 թ. մայիսի 17-ին (N 810) Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչին ուղղված պաշտոնագրում ընդհանուր լիազոր Ե. Տերտերյանը հայտնում էր, որ վարչապետ Օհանջանյանին հաջողվել է Թիֆլիսում եղած ժամանակ որոշ պայմանով ստանալ Վրաստանի կառավարության համաձայնությունը ռազմամթերք գնելու և Վրաստանի տարածքով Հայաստան տեղափոխելու վերաբերյալ, որպիսի հանգամանքը արձանագրված է Վրաստանի Զինվորական նախարարության ապրիլի 17-ի թիվ 1563 տված վկայագրում: Տերտերյանը տեղեկացնում էր, որ այդ ձեռնարկության համար ինքը ֆինանսների նախարարության կարգադրությամբ Ռոստովի մի խումբ հայ ձեռնարկուների հետ միասին վարձել է մի նավ Ղրիմ ուղարկելու համար, և քանի որ հարկավոր է քարածուխ թե՛ նավի և թե՛ ռազմամթերքի հետ փոխանակելու համար, ըստ այդմ խնդրվում էր ամեն կերպ աջակցել Քրիստափոր Ենգեյանին, որ մեկնելու էր Թիֆլիս Զինվորական նախարարի անունով տրված հատուկ գրությամբ ձեռք բերելու 10-15 հազար փութ քարածուխ Փոթիում ստանալու իրավունքը, նկատի ունենալով, որ Բաթումիում քարածուխ հնարավոր չի ճարել, ուստի բոլոր հույսերը Փոթիի վրա են՝ միաժամանակ ընդգծելով, որ յուրաքանչյուր ավելորդ հապաղում ձգձգում է հին գնով գնումներ կատարելու հնարավորությունը, առաջացնում ամենօրյա մեծ ծախսեր, գտնելով, որ անհրաժեշտ համարելով հնարավորինս շտապ կարգավորել զենք-զինամթերքի առաքումը[2]:

1920 թ. հուլիսի 25-ի օտարերկրյա պետություններից ՀՀ կառավարության կողմից զենք ու ռազմամթերք ստանալու մասին ԱԳ նախարարության տեղեկագրում նշվում է հետևյալը. «Հարավային Ռուսաստանի զինված ուժերի հրամանատարությունը տրամադրել է մեզ

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 81-82:
[2] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 275, ց. 5, գ. 228, թ. 1:

3000000 փամփուշտ: Կառավարությունն այդ փամփուշտների կեսը զիջել է Վրաստանին, մնացածը (մեկ ու կես միլիոն) ամսոյ սկզբին ստացել է Երևանը: Վրաստանի Յունաց դիվանագիտական ներկայացուցիչը Թիֆլիսում հայտնել է Բեգզադյանին, որ Յունաստանի կառավարությունը պատրաստ է, ձրիաբար բաց թողնել Հայաստանին 10000 (տասը հազար) «Գրա» սիստեմի հրացան. 400 (չորս հարյուր) փամփուշտ ամեն մի հրացանի վրայ, պայմանով, որ մեր կառավարությունը համաձայնվի՝ ստանձնելով այդ զենքը Պիրեյով տեղափոխելու բոլոր ծախսերը:

Մեր կառավարությունը ընդունել է այդ առաջարկը և կարգադրել է Կոստանդնուպոլսի մեր դիվանագիտական ներկայացուցիչ Թախթաջյանին ստանալ այդ զենքը և ուղարկել Հայաստան: Հայ բանակի նվիրահավաք մարմինը Պոլսից ուղարկել է Հայաստանի բանակին 22 (քսան երկու) հակ և 2 (երկու) սնդուկ ճերմակեղեն և զինվորների համար անհրաժեշտ այլ իրեր»[1]:

Ռ. Հովհաննիսյանի տվյալներով, անգլիական «Հորնս» նավով, որը անցել էր Ջիբրալթար-Բոսֆոր-Սև ծով ուղեգծով, Հայաստանի համար ուղարկվել էր 440 «Վիքեր» տեսակի գնդացիր, 40 հազար գլխարկ, վերարկու, բաճկոն, տաբատ և երկարարաճիտ կոշիկներ, 80 հազար ֆլանելե վերնաշապիկ, շականագույն գուլպա, 1077 բժշկական ծրար և այլ ապրանքներ, այդ թվում հեռադիտակներ, կողմնացույցներ, աստղադիտակներ և այլն, որը Փոթի է հասնում հուլիսի սկզբին[2]:

Ռուսական սպիտակգվարդիական շարժման առաջնորդներ գեներալներ Ա. Դենիկինը և Պ. Վրանգելը տրամադրել էին երեքգծանի հրացանի 3 մլն փամփուշտ և հրետանային արկեր: Փոխադրման դիմաց տրամադրված զենքերի որոշ քանակություն Հայաստանը ստիպված էր թողնել Վրաստանին: Ինչպես երևում է, այդ հարկը երբեմն կազմում էր ավելի քան 27 տոկոս[3], որի մասին 1920 թ. հուլիսի 23-ին ՀՀ ԱԳՆ Տեղեկատու բաժնի դիրեկտոր Մ. Արզումանյանը տեղեկացնում է փախստական հայերի և ասորիների անգլիական կոմիտեի նա-

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 200, ց. 1, գ. 607, թ. 54, ֆ. 368, ց. 1, գ. 1, թ. 94:

[2] Տե՛ս **Հովհաննիսյան Ռ.,** Հայաստանի Հանրապետություն, հատոր III, էջ 426-427:

[3] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.,** նշվ. աշխ., հատ. III, էջ 172, **ՀԱԱ,** ֆ. 200, ց.1, գ. 498, թ. 768:

խագահ, պառլամենտի անդամ Սըր Անեուրին Վիլյամսին՝ ափսոսանք հայտնելով, որ Վրաստանը հարուցում է մի շարք դժվարություններ Անգլիայի կողմից տրամադրված շուրջ 40.000 հազար համար նախատեսված զենք ու ռազմամթերքի տեղափոխման առաջ[1]: Դեռ 1919 թ. Հայաստանի կառավարությունը դիմել էր ֆրանսիական կողմին՝ 10000 միավոր *«Լեբել»* հրացանների գնման համար, որը նրանք շատ թանկ էին վաճառում[2], ինչը պարզվեց 1920 թ. ամռանը, երբ ֆրանսիացիներն Հայաստանին առաջարկեցին գնել *«Լեբել»* հրացանների մեծ, հավանաբար այլ խմբաքանակ[3]: Այդ նույն տեղեկությունների համաձայն՝ կառավարությունը ցանկանում էր հավաքել ֆրանսիական այս հրացանները: Ներքին գործերի նախարարը դիմել էր բնակչությանը՝ որոշակի գումարի դիմաց այդ հրացանները հանձնելու խնդրանքով: Նման իրավիճակ էր գնդացիրների խնդրում: Հայկական բանակը գրեթե միշտ գնդացիրների պակաս ուներ, սակայն խնդիրը ոչ միայն դրանց քանակի մեջ էր, այլ նաև փամփուշտների:

Եվս մի օրինակ: 1920 թ. մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածում Մեծ Բրիտանիայից ստացվել և հայկական բանակին էր հատկացվել 29 հազար լրակազմ հագուստեղեն (վերարկուներ, բաճկոններ, գլխարկներ, կոշիկներ) և զինասարք (փամփշտակալներ, գոտիներ, ջրամաններ և այլն[4]), ինչպես նաև 25 հազար միավոր հրազեն[5]: Հայկական բանակին մատակարարվող հրացանների մի զգալի մասը ոչ պիտանի դուրս եկավ: Ռազմագետ-պատմաբան *Արծրուն Հովհաննիսյանը* վերը նշվածի կապակցությամբ ունի շատ նուրբ դիտարկում-ճշտում. հաճախ զենքերի անունները և այլ տեխնիկական մանրամասներ սխալ են նշվել: Ըստ Ա. Հովհաննիսյանի կանադական վերը նշված հրացանները հայկական գրականության մեջ երբեմն սխալմամբ անվանել են *«Բոշ»*: Ձեռքի գնդացիրները ամե-

[1] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 200, ց. 1, գ. 498, թ. 768:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 204, ց. 1, գ. 237, թ. 5:

[3] Տե՛ս **Զոհրաբյան Է. Ա.,** 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, էջ 133:

[4] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 199, ց. 1, գ. 142, թ. 186:

[5] Տե՛ս **Տեր-Հակոբյան Հ.**, նշված աշխատությունը, էջ 86:

րիկյան *«Լյուիս»* մոդելի էին[1]: Կանադական հրացանների մարտական հատկությունների մասին հայ զինվորականները համարել են ծանր, անհարմար և անպիտան, և իրականում դրանք խնդիրներ ունեին, որից կանադական զորքերը Առաջին աշխարհամարտի օրերին հրաժարվել էին, որոնք ձեռք էին բերվել ոչ թե գործարաններից, այլ նախկին ռազմաճակատներից, ուստի կարող էին անմխիթար վիճակում լինել[2]: Հենց 1920 թ. թուրք-հայկական պատերազմում հայկական զորքերի պարտությանը նպաստող պատճառներից մեկն էլ համարվում էր այն, որ Անտանտի դաշնակից պետությունները իրենց կրտսեր դաշնակցին աջակցեցին այնքանով-ինչքանով, շատ դեպքերում էլ ոչ ավելի լավ, քան Ադրբեջանի մուսավաթական և Վրաստանի մենշևիկյան զորքերին, հայկական բանակին մատակարարելով հնաոճ, գործածությունից վաղուց դուրս եկած զենքերով ու հնացած, մաշված զինվորական հանդերձանքով, որոնք մինչև 50 տոկոս զեղչով տրամադրվեցին հայկականկողմին: Այդ մասին է վկայում այդ օրերին՝ 1920 թ. հայկական բանակում ծառայության անցած Լլոյդ Ջորջի կոալիցիոն կառավարության նախարար Ստենլի Բոլդուինի որդի, փոխգնդապետ Օլիվեր Բոլդուինը, որը իր թողած հուշագրությունում գրել է, որ որքան անհնշան էր բրիտանական օգնությունը հայկական բանակին, որ Հայաստան ուղարկված հրացանները հին «Ռոս» սիստեմի էին, որոնք «առաջին իսկ հարվածից պայթում էին, ուղարկած զինվորական կոշիկները չափազանց փոքր էին հայ գյուղացու լայն ոտքերի համար, հետևաբար անպետք»[3], և բացի այդ, Սեպուհի պնդմամբ, զինվորներն ընդհանրապես անմարզ էին և նոր ստացված հրացանները գործածել չգիտեին. «Ես, որ այսքան տարվան կռվող մըն եմ, նորույն մըն էր այդ հրացանը ինծի համար»[4]: Այդ նույն է պնդում Ս. Վրացյանը, ասելով, որ

[1] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.,** Հայաստանի առաջին հանրապետության զինված ուժերի սպառազինությունը, Հայոց պատմության հարցեր: Գիտական հոդվածների ժողովածու, հ. 13, Եր., 2012, էջ 172:

[2] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.,** նշվ. աշխ., էջ 172:

[3] **Օլիվեր Պոլտուին**, Վեց բանտ և երկու յեղափոխություն, Ալեքսանդրիա, 1933, էջ 27:

[4] Տե՛ս «**Վերջին լուր»,** Կ. Պոլիս, 8 փետրվար, 1921 թ.:

հայկական զորքերի մի մասը շտապ կերպով զինված էր Անգլիայից նոր ստացված «Ռոս» հրացաններով, որոնց վարժ չէր[1]:

Հետաքրքիր դիտարկում ունի այդ հրացանների մասին նաև սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության օրգան ***«Երիտասարդ Հայաստան»***-ը. «*Վերջին պահուն անգլիացիների հասցրած կանատական զենքերն էլ փոխանակ օգնելու, մեր զինվորներին մեծապես վնասեցին նրանց: Ոչ միայն ամենավատ տեսակի, հնացած, շատերը անպետք զենքեր էին դրանք, այլև և համապատասխան չունեին*», որի հոդվածագիր Ս. Սնարյանը ասվածին ավելացնում է, որ նաև զենքի, թնդանոթների, գնդակացիրների և սավառնակների պակաս կար, ավելացրած դրան հաղորդակցության և հատկապես պարենի դժվարությունները[2]: Կարևոր է սակայն արձանագրել նաև այն փաստը, Մեծ Բրիտանիայից ձեռքբերված զենքի մի զգալի մասն այդպես էլ Հայաստան չհասավ, քանզի այն 1920 թ. վերջերին, երբ արդեն խորհրդային իշխանություն էր հաստատվել, դեռ ճանապարհին գտնվող զենքի այդ խոշոր խմբաքանակը ընկավ քեմալական զորքերի ձեռքը, ինչի մասին Մեծ Բրիտանիայի մի բարձրաստիճան պաշտոնյա՝ Մաք Դոնելը դեռ 1920 թ. փետրվարի 24-ի մի գրությունում փաստել է, որ Հայաստանին առաքված զենքը մեծացրեց թուրք ազգայնականների ռազմական պաշարները գրեթե 100 տոկոսով, որի համար գեներալ Ք. Կարաբեքիրը շնորհակալական հեռագիր է ուղարկել բրիտանական ռազմական իշխանություններին[3]: Բազմիցս տարբեր հեղինակներ և ռազմական մասնագետներ արձանագրել են, որ բնականաբար նման իրավիճակում Հայաստանի Հանրապետության զինված ուժերը չէին կարող արդյունավետորեն կազմակերպել երկրի պաշտպանությունը, որի կապակցությամբ Անդրկովկասում Բրիտանիայի ռազմաքաղաքական ներկայացուցիչ, փոխգնդապետ Կ. Ստոքսը փաստել էր, որ իրենք ձեռնպահ մնացին երեք հանրապետություններին զենք ու ռազմամթերք մատակարարելուց, ինչը նրանց հնարավորություն կտար դիմակայել տարբեր վտանգներին, այդ թվում և բոլշևիկյան վտանգին, սակայն

[1] **Վրացյան Ս.,** Հայաստանի Հանրապետություն, էջ 430-431:

[2] Տե՛ս **«Երիտասարդ Հայաստան»,** Ս-Դ հնչակյան կուսակցության օրգան, Չիկագո, 20 մայիսի, 1921, N 9:

[3] Տե՛ս **Գալոյան Գ.,** Հայաստանը և մեծ տերությունները, 1917-1923, էջ 188:

միաժամանակ կարևորելով իրենց տնտեսաքաղաքական շահերի ապահովումն անդրկովկասյան տարածաշրջանում[1]:

Չնայած այս դժվարություններին և հարուցվող խոչընդոտներին, զենք-զինամթերքի որոնումները մշտապես գտնվում էին ՀՀ ռազմաքաղաքական մարմինների ուշադրության կենտրոնում, ամեն մի հնարավորություն հաշվառվում էր: Ինչպես ակնհայտ է դառնում Պ. Վրանգելի բանակի ներկայացուցչի 1920 թ. հուլիսի 29-ի ՀՀ կառավարությանը ուղղված նամակից, Ռուսաստանի հարավի Զինված ուժերի կառավարիչների խորհուրդը որոշում էր կայացրել Հայաստանի կարիքների համար բաց թողնել 2 միլիոն փամփուշտ՝ խոստանալով առաջիկայում բարեհաջող տրանզիտի դեպքում ևս մեկ միլիոն առաքել, երբ ՀՀ կառավարությունից ծանուցագիր ստանան: Միաժամանակ Ռուսաստանի հարավի կառավարությունը հայտնել էր, որ կաշխատի զինամթերքով հնարավոր աջակցություն ցույց տալ Հայաստանին[2]:

Բաթումիի գլխավոր հյոպատոս Մ. Աթաբեկյանի կողմից Տ. Բեկզադյանին Թիֆլիս ուղարկված 1920 թ. սեպտեմբերի 3-ի գրությունից պարզվում է, որ հունական «Էլեֆտերիա» շոգենավը Կոստանդնուպոլսից ժամանել է Բաթումի, բերելով 477 կամավոր հայերի, 10 հազար հրացան, «Լեբելի» հրացանի համար 44 միլիոն փամփուշտ[3]:

Բաթումիի հայկական հյուպատոսության ապրանքային բաժնի վարիչ Գ. Մարտիրոսյանի կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 1920 թ. սեպտեմբերի 3-ի գրությունից պարզվում է, որ ՀՀ ֆինանսների նախարարության Բաթումիի գլխավոր լիազոր Ե. Տեր-Մինասյանին փաստմամբ, համաձայն կարգադրության, սեպտեմբերի 1-3-ին «Էլլեֆտերիա» նավից իջեցվել է 9993 հրացան, 4288 արկղ փամփուշտ յուրաքանչյուրի մեջ՝ 1000 հատ՝ ընդամենը 4.288.000 հատ, 239 պարկ պատրոնդաշ: Ստացված իրերը դարսվել են *«Կավկազ և Մերկուրի»* ընկերության պահեստում՝ Հունական միսիայի ան-

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Տե՛ս **Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում**. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1960, էջ 300, Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 199, ց. 1, գ. 35, թ. 146:

[3] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 275, ց. 5, գ. 211, թ. 212:

վան և մաքսատան հսկողության տակ[1]: Փոթիից հյուպատոս Թուրքյանը Տ. Բեկզադյանին ուղղված 1920 թ. սեպտեմբերի 5-ի (N 514) հեռագրում հայտնում էր, որ ժամանել է ֆրանսիական «Բորիս» նավը՝ բերելով փամփուշտներ և հրացաններ, Թիֆլիսից եկել են ֆրանսիական ներկայացուցիչները, որպեսզի սկսեն բեռնաթափումը: Թուրքյանը խնդրում էր կարգադրել, որ վրացական ճամփուղիները ընդունեն հայկական վագոնները՝ ուղևորվելով Ալեքսանդրապոլ, զգուշացնելով, որ հակառակ դեպքում բեռը կբեռնաթափվի և կարգելափակվի տեղում՝ սպսելով ճանապարհի բացմանը[2]:

1920 թ. սեպտեմբերի 16-ին (N 3771c) Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությանն առընթեր զինվորական գերատեսչության ղեկավար գեներալ Հ. Քիշմիշյանը Զինվորական նախարարին տեղեկացնում էր, որ վերջինիս՝ օգոստոսի 16-ի պաշտոնագրի (N 13495), Բաթումի հյուպատոսի և Թիֆլիսի դիվանագիտական հավատարմատարի հանձնարականների համաձայն՝ Փեշներովի, Կայալովի և գեներալ Օգուլյովի հետ համաձայնության են եկել Հայաստանի կարիքների համար «Ֆենիկս» շոգենավը նրանցից վարձակալելու մասին պայմանագիր կնքելու շուրջ, որի համար մայիսի 26-ին վարձակալվող գումարի հաշվին պոդպորուչիկ Ումիկյանի կողմից փոխանցվել է 3000 ֆունտ ստեռլինգ, որն ըստ կուրսի կազմում էր 3.330.000 ռուբլի: Սակայն այնուհետև Ումիկյանի մեկնումով, որի ձեռքին էր գտնվում ողջ անհրաժեշտ գումարը, և վարձակալման գումարի երկրորդ ամսվա լրանալու կապակցությամբ, Քիշմիշյանը հայտնում էր, որ ինքը նավի վարձակալների պահանջով Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանի մոտ դիմել է Բաթումիի գլխավոր հյուպատոսին խնդրանքով՝ Ումիկյանի վերադարձի դեպքում պահանջել անմիջապես վերադարձնել նավի վարձակալման համար նախատեսված 1 միլիոն ռուբլին: Այդպես էլ տեղի է ունենում, և ինչպես պարզվում է Բաթումիի հյուպատոսի հետ հուլիսի 1-ի գրագրությունից, պոդպորուչիկ Ումիկյանի կողմից վճարվում է պահանջվող 1 միլիոն ռուբլին, որի մասին փաստվում է հյուպատոս Մ. Աթաբեկյանի վերոնշյալ պաշտոնագրում:

[1] Տե՛ս նույն տեղում, ֆ. 368, ց. 1, գ.13, թ.18:
[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց. 5, գ. 211, թ. 213:

Միաժամանակ, ինչպես պարզվում է սեպտեմբերի 2-ի հեռագրից, Բաթումիում Գլխավոր հյուպատոսին խնդրվում էր դիմել պոդպորուչիկ Ումիկյանին ետ վերադարձնելու 200 թուրքական լիրան, որ տրվել էր «Ֆենիկսի» վարձատուներին, որից հետո հայտնվում էր վերջնական պայմանավորվածության և 1 միլիոն ռուբլու վճարման մասին, որի դիմաց պետք է տեղ հասցվեր 3 միլիոն փամփուշտ[1]:

Ակնհայտ է, որ 1918-1920 թթ. ՀՀ կառավարությունը, զինվորական այրերը, չնայած որոշ սայթաքումներին և դժվարություններին, որոշակի ջանքեր են գործադրել բանակաստեղծ գործընթացների արդյունավետության ապահովման տեսանկյունից միանգամայն կարևորվող զենք ու զինամթերքի հայթայթման խնդրում՝ հասնելով նշմարելի արդյունքների:

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 200, ց.1, գ. 508, թ.141:

ԳԼՈՒԽ 6.

ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1918-1920 ԹԹ.)

պ. գ. դ., պրոֆեսոր Վ. Հ. ՎԻՐԱԲՅԱՆ

1918-1920 թթ. հայկական բանակի կայացման դժվարությունները գլխավորապես պայմանավորված էին այն տնտեսաքաղաքական ծանրագույն պայմաններով, որոնցում գտնվում էր Հայաստանի Հանրապետությունը: Սակայն անգամ այդ դժվարին պայմաններում բանակաստեղծ գործընթացները և որոնումները համառորեն շարունակվում էին, և կառավարությունը որոշակի ուշադրություն էր դարձնում հանրապետության պետական անվտանգության համակարգի ձևավորմանը և կուտակված հիմնախնդիրների լուծմանը՝ այն դիտելով որպես կարևոր նախապայման հանրապետության պաշտպանունակության ամրապնդման, երկրի սահմաններն արտաքին վտանգից ապահովագրելու խնդրում: ՀՀ Զինվորական նախարարության գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար Մ. Զինկևիչի զինվորական գերատեսչության գծով 1919 թ. հունիսի 10-ի հրամանագրով հաստատվում է Հայկական սահմանապահ 1-ին բրիգադի հաստիքակազմը, ըստ որի, բացի բրիգադի հրամանատարից և նրա 3 օգնականներից, այն պետք է ունենար 3 բաժին և 6 ջոկատ՝ 6 շտաբային սպա, 42 օբեր-սպա, 3 բժիշկ, 1 անասնաբույժ, 1 գործակարգավար, 1136 զինվորներ, իսկ շարային ձիերի քանակը հասնում էր 294-ի, սայլակառքերինը՝ 590-ի: Նշված բրիգադի շտաբի պետն ուներ 3 օգնականներ. շտաբն ուներ 4 օբեր-սպա, 2 զինվորական աստիճանավորներ, 30 զինվոր, 7 հոգանոց կապի խումբ, 25 հոգուց բաղկացած պարետային ծառայություն, այսինքն՝ շտաբն ուներ 5 հոգանոց կազմ, իսկ բրիգադը՝ 148 զինվորներ՝ ներառյալ միացյալ գնդացրային հրամկազմը՝ 4 սպայով և 75 զինվորներով:

1919 թ. հունիսի 14-ին զինվորական նախարարի ժամանակավոր պաշտոնակատար Դրոն հրաման է արձակում հատուկ գումարտակ կազմավորելու մասին: Նա կարգադրում է Երևանյան ջոկատի հրամանատարին, որ որպես այդ զորամասի ձևավորման և կազմահամալրման հիմք նկատի ունենա Առանձին կամավորական հետևակային գումարտակի հաստիքակազմը՝ զորակոչային հասակի զինապարտներից նաև հեծյալ-հետախուզական հրամկազմից[1]]: 1919 թ. հունիսի 14-ին հաստատվում է նաև Հատուկ գումարտակին կից հեծյալ-հետախուզական հրամկազմի հաստիքակազմը, որը բաղկացած էր 2 սպայից և 53 զինվորից, այդ թվում կային՝ 5 բուժակ, ավագ և կրտսեր սպաներ և այլն[2]: Որոշակի քայլեր արվեցին Կարսի միջնաբերդի հրետանային հրամկազմը ուժեղացնելու ուղղությամբ (ինչը հետագայում արագ քարոզանդ արվեց անգլիացիների միջոցով- Վ.Վ.), որի ժամանակավոր հաստիքակազմը հաստատվեց 1919 թ. օգոստոսի 25-ին. փաստաթուղթը ստորագրել էր Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար կապիտան Ն. Շումովը: Ըստ դրա՝ Կարսի բերդի հրետանային գունդը և ղեկավար վարչությունն ուներ 35 սպա, 8 զինվորական աստիճանավորներ, 965 զինվոր, 22 ձի, 16 բեռնակիր անասուններ և այլն[3]:

1919 թ. օգոստոսի 31-ին զինվորական նախարար գեներալ-մայոր Ք. Արարատյանի կողմից հաստատվեց Հայկական սահմանապահ բրիգադի ուսումնական 7 հոգուց բաղկացած հրամկազմը[4]: 1919 թ. նոյեմբերի 16-ին զորքերի հրամանատարի Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար Հ. Հախվերդյանի հայտնի հրամանի համաձայն՝ հաստատվեց Առանձին հատուկ հետևակային գումարտակի հեծյալ հետախույզների հրամկազմը՝ բաղկացած 1 սպայից, 24 զինվորից ընդ որում՝ 1-ը շտաբային էր, և 25-ը շարային զինվորներ էի[5]:

1919 թ. դեկտեմբերի 19-ին Նախարարների խորհուրդը լսում է ֆինանսների նախարարի զեկուցումը սահմանապահ գումարտակ կազմակերպելու համար դրամական հատկացումներ կատարելու մա-

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 204, ց. 1, գ. 132, թ. 2 96-297:
[2] Նույն տեղում, թ. 132, 302:
[3] Նույն տեղում, թ. 372- 373:
[4] Նույն տեղում, թ. 344:
[5] Նույն տեղում, թ. 362:

սին հարցը: Հիմնահարցը կրկին քննարկվում է ՀՀ Նախարարների խորհրդի 1919 թ. դեկտեմբերի 25-ի նիստում: Ընդունված որոշմամբ հավանություն է տրվում սահմանապահ գումարտակ կազմակերպելու խնդրին, և հանձնարարվում է՝ ա) այն կազմակերպել զինվորականներից և զինվորակոչից ազատ կամավորների հաշվին, բ) ամեն մի զինվորին նշանակել ամսական 1000-ական ռուբլի ռոճիկ՝ նաև տրամադրելով հագուստ և ուտելիք, գ) զինվորներին գլխավոր նշանակել սկսած տասնապետից, այնուհետև՝ ջոկատապետ և այլ աստիճանավորներ՝ համապատասխան հավելումներով, ըստ այդմ՝ դ) զորակոչը կազմակերպել ՆԳ նախարարության աջակցությամբ, ե) զինվորական մասին իրավունք վերապահել այդ գումարտակին տալ թնդանոթներ, պատրաստել համապատասխան կարգի զինվորներ, զ) զինվորական մասին առաջարկել ծախսերը հոգալ իր տրամադրության տակ եղած զինվորական կարիքների համար նախատեսված 7 միլիոն ֆոնդի հաշվին, է) ռոճիկների համար ծախսերը հոգալ Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի 10 մլն ֆոնդից, ը) կազմակերպման համար նշանակել մեկ ամիս ժամանակ[1]:

1920 թ. փետրվարի 10-ին Նախարարների խորհուրդը, լսելով ՆԳ նախարարի զեկուցումը Կարսի նահանգի հայ-վրացական սահմանապահակ կազմակերպելու անհրաժեշտության մասին, որոշում է նախագիծն ուղարկել ֆինանսների նախարարին եզրակացության[2]: Կապված սահմանապահ զորամասերը կամավորականներով համալրման և զինվորացուների փոխարինման հետ՝ 1920 թ. ապրիլի 3-ին (No 741) զորքերի հրամանատար գեներալ-լեյտենանտ Նազարբեկյանը ՆԳ նախարարին ուղղված գրությունում խնդրում էր կարգադրել վարչակարգին տեղեկացնել բնակչությանը ցուցակագրման պայմանների կամավորների ընդունման տարիքային սահմանի վերաբերյալ: Ըստ դրա՝ նախկին թուրքահպատակների համար սահմանվում էր 25 տարեկանից բարձր տարիքը, այլ ազգությունների համար՝ 18 տարեկանը, ընդ որում գտնելով, որ բնակչությանը այդ մասին հայտարարություն անելիս անհրաժեշտ է խստորեն ղեկավարվել հավաքագրման պայմաննե-

[1] Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 100, թ. 270:
[2] Նույն տեղում, գ. 146, թ. 30:

րով: Միաժամանակ հայտնվում էր, որ այդ մասին առաջին հերթին պետք է իրազեկել Կարսի մարզին և Ալեքսանդրապոլի գավառին, քանի որ այնտեղ արդեն ձեռնամուխ էին եղել Սահմանապահ 2-րդ բրիգադի ձևավորմանը[1]: Զինվորական գերատեսչության գծով հրամանագրում 1920 թ. ապրիլի 10-ին (N 31) զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանը նշում է, որ ֆինանսների նախարարության հետ համաձայնությամբ զորքերի հրամանատարի շտաբի Սահմանապահ բաժանմունքը և սահմանային պահակազորի բոլոր զորքերը, կապված հատուկ ծառայության՝ սահմանային հսկողության դժվարացման հետ, վերցվել են զինվորական գերատեսչության ենթակայությունից և հանձնվել ֆինանսների նախարարության անմիջական ենթակայությանը՝ որպես սահմանային պահակազորի պաշտոնական հովանավոր: Այնուհետև նշվում էր, որ սահմանային հատուկ պահակազորի ծառայությունները ենթարկվելու են ֆինանսների նախարարին՝ ընդգծելով սակայն, որ մնացած բոլոր հարցերում սահմանային պահակազորը, ինչպես նշվել է նույն թվականի հունվարի 29-ի հրամանում (N 15)՝ պիտի ենթարկվեր ՀՀ Զինվորական նախարարությանը[2]:

1920 թ. ապրիլի 10-ին (No 2100) զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանը կառավարության նիստին ունեցած զեկուցման մեջ նշում է, որ Հայաստանի սահմաններից հաճախակի չորոշված ձևերով դուրս են բերվում հում նյութեր, թանկարժեք գույք և անասուններ: Ստեղծված իրադրությունում ապրանքների ապօրինի դուրս բերումը դադարեցնելու համար նախարարը պահանջում էր վրացական սահմանի վրա՝ Քուռ գետի հովտով դեպի Արդահան, մինչև միացումը, սահմանային 1-ին բրիգադի ուժերով ապահովել սահմանային գիծ, ինչը ՀՀ պետական անվտանգության ապահովման տեսանկյունից կարևոր քայլ էր: Ընդգծվում էր, որ ֆինանսների, ներքին գործերի և զինվորական նախարարները ամբողջովին զբաղված են այդ խնդրով: Կառավարությունը ջանքեր է գործադրում կարսյան 2-րդ սահմանապահ բրիգադի կազմակերպումն արագացնելու համար: Ռ. Տեր-Մինասյանը խնդիր էր դնում շուտափույթ քննել բրիգադի կազմակերպման և վար-

[1] Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 482, թ. 205:

[2] Նույն տեղում, գ. 98, թ. 122:

կավորման հարցը, դրական լուծում տալ բոլոր հարցերին, այդ թվում՝ ֆինանսների նախարարի կողմից հաստատել բրիգադի նախահաշիվը՝ պաշտոնյաների ամենամսյա վարձը և հեծելակազմը: Զինվորական նախարարը, նկատի ունենալով զինակոչի պիտանի հայ տղամարդկանց թվի պակասությունը, հնարավոր էր գտնում սահմանապահ պահակները լիաթիվ դարձնել զանազան ազգություններից՝ մահմեդականներից՝ քրդերից ու թուրքերից կամավորներով համալրելով, պայմանով, որ ամբողջ կազմի մեկ երրորդը լինելու են հայ զինվորները. հայ և ռուս կամավորների համար տարիքային սահման հաստատելով՝ 32, իսկ թուրքերի և քրդերի համար՝ 25 տարեկան, այդ թվում մնացած 18-ից բարձր տարիք ունեցողներին՝ 1000-ից մինչև 1400 ռ. Վարձատրությամբ[1]: Ընդհանուր առմամբ, ***կարսյան 2-րդ սահմանապահ բրիգադը***, ըստ հաստիքային տվյալների, պետք է ունենար 3 բաժին, 6 շտաբային սպա, 35 օբեր սպա, 5 բժիշկ, 146 ոչ շարային և 1087 շարային զինվորներ[2]: 1919 թ. ապրիլի 16-ին Նախարարների խորհուրդը լսում է զինվորական նախարարի զեկուցումը Կարսի շրջա-նում սահմանապահ բրիգադ կազմակերպելու մասին և որոշում ընդունում հավանություն տալ ու ներկայացնել պառլամենտ՝ ի հաստատումն[3]: Հետաքրքիր է համբարակապետության գծով գեներալ-մայոր Թ. Նազարբեկյանի 1920 թ. մայիսի 19-ի (N 3) հրամանը կարսյան 2-րդ սահմանապահ բրիգադի մասին, ըստ որի՝ կարգադրվում էր սահմանապահ բրիգադի հրամանատարի ժամանակավոր պաշտոնակատար գնդապետ Բախտամովին հրամանը ստանալու պահից իսկույնևեթ մեկնել Կարս և ձեռնամուխ լինել բրիգադի ձևավորմանը՝ ամեն ինչում ղեկավարվելով ռազմական գերատեսչության գաղտնի հրամանագրերով[4]:

1920 թ. մայիսի 19-ի Նախարարների խորհրդի կողմից 5.954.120 ռ. Լրացուցիչ վարկ է բացվում Կարսի շրջանում կազմակերպվելիք սահմանապահ բրիգադի համար, մակագրում են նախարարապետ Հ. Օհանջանյանը, գործերի կառավարիչ Խոջամիրյանը, ինչպես նաև ֆինանսների նախարարի կողմից հավանություն է տրվում, միաժամա-

[1] Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 118, մաս III, թ. 181, 191:

[2] Նույն տեղում, թ. 90:

[3] Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 489, թ. 98:

[4] Նույն տեղում, ֆ. 202, ց. 1, գ. 98, թ. 61:

նակ Զինվորական նախարարին առաջարկվում է ազգայնացնել բրիգադայի կազմը[1]:

Կարսի 2-րդ սահմանապահ բրիգադի գծով հրամանագրից պարզվում է, որ 1920 թ. ապրիլի 19-ին (N 3) գեներալ Թ. Նազարբեկյանը կամավորների ընդունման գործը հեշտացնելու համար Կարսի նահանգապետին և վարչակարգին համապատասխան հրահանգներ և կարգադրություններ է տվել՝ ավելացնելով նաև, որ սահմանային պահակազորի հաստատմամբ Արդահանում բացվելու է մաքսակետ, որին և անհրաժեշտ է հանձնել սահմանին առգրավված ամեն ինչ, որ հարկավոր է սահմանապահ ջոկատի ղեկավարության միջոցով զինվորական և ֆինանսների նախարարին անհապաղ տեղեկացնել սահմանագծին տեղ գտած բոլոր արտակարգ պատահարների և սահմանային հսկողության վիճակի մասին[2]: Իսկ արդեն 1919 թ. մայիսի 29-ին ֆինանսների նախարար Ա. Գյուլխանդանյանի սահմանային հսկողությունն իրականացնող զորքերին ուղղված հրամանագրում հայտնվում էր, որ իրենց ծառայության առումով սահմանապահ զորքերը պետական սահմանի պաշտպանության առումով ենթարկվում են իրեն՝ ֆինանսների նախարարին՝ իբրև սահմանային պահպանության հովանավորի իրավունքով, որի մասին հայտարարվում էր ի տեղեկություն[3]:

1919 թ. հուլիսի 16-ին (N 820) ՆԳ նախարարի պաշտոնակատարը Նախարարների խորհրդին ուղղված զեկուցագրում նշում է, որ Սուրմալուի, Երևանի, Դիլիջանի, Նոր Բայազետի, Նախիջևանի և Կարսի գավառներում սահմանապահ զորամասերի բացակայության հետևանքով միլիցիան է իրականացնում սահմանապահ ծառայություն՝ չնայած այն հանգամանքին, որ նշված գավառներում առկա էր միլիցիայի թվակազմի պակաս: ՆԳ պաշտոնակատարը նշում էր, որ, օրինակ, Սուրմալուի գավառը հաստիքով նախատեսված 145 հեծյալ միլիցիոների փոխարեն ունի 50-ը, Երևանի գավառը՝ 250-ի փոխարեն ընդամենը 110-ը, իսկ Դիլիջանի գավառը՝ 145-ի փոխարեն 70-ը, և դա այն պարագայում: Գործի շահերից ելնելով՝ ՆԳ պաշտոնակատարը

[1] Նույն տեղում, ֆ. 202, ց. 1, գ. 598, թ. 14, **Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ,** էջ 463:

[2] Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 98, թ. 61:

[3] Նույն տեղում թ. 124:

խնդրում էր ժամանակավորապես թույլ տալ միլիցիոներների ընդունելություն կազմակերպել ի հաշիվ զինակոչային տարիքի զինապարտների[1]:

Այս գործընթացներն ամբողջականորեն ներկայացնելու տեսանկյունից կարևոր է նշել նաև ՀՀ կառավարության որոշումը ***սահմանապահ գնդերի կազմակերպման մասին***, որի վերաբերյալ զինվորական նախարարը 1920 թ. հունիսի 14-ին զեկուցումով հանդես եկավ Նախարարների խորհրդի նիստում, ինչի հիման վրա արվեցին համապատասխան եզրակացություններ և տրվեցին անհրաժեշտ հանձնարարականներ[2], որոնք էլ կարևոր էին պետական անվտանգության համակարգի ձևավորման, այդ թվում ՀՀ պետական սահմանը թշնամական տարաբնույթ ոտնձգություններից պաշտպանելու: 1920 թ. հուլիսի 27-ի մի փաստաթղթից, որի հեղինակները ֆինանսների նախարար Ա. Էնֆիաջյանը և զինվորական նախարար Քր. Արարատյանն են, ակնհայտ է դառնում, որ իշխանություններն այդ ժամանակահատվածում ձեռնամուխ են եղել ***ՀՀ զորքերի հրամանատարին շտաբին կից Սահմանապահ բաժանմունքի ստեղծմանը*** (գնդապետ Սկրիպին - նստավայրը՝ Երևան) և Կարսի սահմանապահ բրիգադի ձևավորման հետագա գործընթացներին, որոնք բաղդատված էին ենթակա մասերի. Ղարաքիլիսայի 1-ին սահմանապահ բրիգադ (հրամանատար՝ գնդապետ Կորոլկով, նստավայրը՝ Ղարաքիլիսա): Ըստ նախատեսված պլանի՝ այն պետք է բաղկացած լիներ 3 բաժանմունքից (նստավայրերը՝ համապատասխանաբար Իջևանում, գ. Դսեղում, գ. Ջալալ-օղլիում), Կարսի 2-րդ սահմանապահ բրիգադ (հրամանատար՝ գեներալ-մայոր Խանկամալով, նստավայրը՝ Կարս)՝ իր 3 բաժանմունքներով (համապատասխանաբար՝ նստավայրերը՝ ք. Ալեքսանդրապոլ, ք. Արդահան, 3-րդի տեղը պետք է հետագայում ճշտվեր), Հատուկ սահմանապահ բաժանմունք (հրամանատար՝ շտաբս-կապիտան Հովհաննեսով). այս բոլոր ենթակառույցներով հանդերձ՝ սահմանապահ պահակազորը (ընդամենը կային 15 շտաբային սպաներ, 96 օբեր-սպաներ,

[1] Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 25, թ. 108:

[2] Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 491, թ. 167, **Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ**, էջ 487:

22 բժիշկներ և չինովնիկներ, 2889 կամավոր զինվորներ) կոչված էր ապահովելու պետական սահմանի անվտանգությունը, անխախտելիությունը արտաքին թշնամական ներթափանցումներից, արգելելու երկրից ապրանքների և տարբեր արժեքների մաքսանենգային արտահանումը Կաղզվան-Քուլպ գծով դեպի Դիլիջան տանող սահմանահատվածը, ապահովելու նաև Սարիղամիշ-Մեղրի-չայ սահմանագիծը, ինչպես նաև կտրուկ արգելափակելու Հայաստանից Վրաստան թանկարժեք գույքերի և անասունների արտահանումը[1]: 1920 թ. հունիսի 30-ին (N 89) Սահմանապահ բաժնի պետ Սկրիպինը, զեկույցով դիմելով ֆինանսների նախարարին, և նշելով, որ 1918 թ. վերջին առաջ է քաշվել պետական կարևորության հարց՝ պետական սահմանի պահպանության, երկրից արժեքավոր գույքի և հարստությունների՝ անասունների, կաթնամթերքի, աղի և հումքի, բամբակի, բրդի և այլնի մաքսանենգության արգելափակման մասին, դրա հիման վրա էլ հրամանագիր է ստորագրվում Ֆինանսների նախարարությանը կից ստեղծել սահմանապահ պահակազոր: Զեկույցում Սկրիպինի կողմից նշվում էր, որ ինքը դեռ 1919 թ. մայիսի 2-ին (N 1080/ 775) առաջարկ է ստացել նախկին ֆինանսների նախարար Ա. Էնֆիաջյանից՝ գլխավորելու սահմանային պահակազորը և ձեռնամուխ լինելու հաստիքակազմի համառոտ կազմմանը: Ընդ որում այդ ցուցումի համաձայն՝ Սկրիպինի կողմից 1919 թ. մայիսի կեսին (N 3159) ներկայացվում է զեկույց, որում մշակված էր Թուրքիայի և Պարսկաստանի հետ սահմանի փակման նախագիծը՝ Սարիղամիշից Մեղրի-չայ ձգվող գծով: Այնուհետև նշվում է, որ Նախիջևանում ծավալված իրադարձությունները, հայկական զորքերի նահանջը Բեյուք-Վեդիից այն կողմ և Օլթի-Քոլպ, հարց առաջադրեցին սահմանային պահակազոր դնել և միայն աշնանը նախկին ֆինանսների նախարար Արարատյանը կրկին հարկ համարեց սահմանապահակազոր դնել Չեզոք գոտուն համընթաց, ուր և տեղաբաշխվեց Կորոլկովի աննշան կազմով բրիգադը: Սահմանը դրանով հնարավորինս փակվեց՝ Աքսիբարայից մինչև Օքսուզ՝ Քոլագիրանի, Ջալալօղլու և Աղբաբայի շրջանում: Նշվում էր, որ Կարսից և Սարիղամիշից թուրքերի հեռացումից հետո Հայաստանում մնացել է մոտ մի քանի միլիո-

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 202, ց. 1, գ. 141, թ. 8, գ. 98, թ. 10-11 հակ, 61.:

նի ունեցվածք, որն անընդմեջ հափշտակվում էր և Արդահանով դուրս էր բերվում և Քուռ գետի տարանցումով տեղափոխվում Վրաստան, որի պատճառով երեք նախարարություններ՝ ֆինանսների, զինվորական և ՆԳՆ, համառ կերպով պահանջ դրեցին Վրաստանին սահմանակցող գծի ողջ երկայնքով հաստատել հատուկ զորքեր՝ սահմանապահ զորամաս: Հենց այդ պատճառով էլ 1920 թ. սկզբին որոշվեց ձեռնամուխ լինել Հատուկ սահմանապահ բաժանմունքի և Կարսի սահմանապահ պահակազորի ստեղծմանը:

Նշվում էր հարցի հատուկ դրվածքի մասին: Ընթացող գործընթացները մշտապես ուղղորդվում էր զինվորական և ֆինանսների նախարարության ցուցումներով. ըստ մտահղացման՝ սահմանային պահակազորը առանձնացվում էր որպես ինքնուրույն մարմին՝ Սահմանապահ բաժանմունքի միջոցով ենթարկվելով ՀՀ Զորքերի հրամանատարին, որի գլուխ նշանակվում է ինքը՝ Սկրիպինը. ըստ այդ ծրագրի՝ սկզբնապես Սահմանապահ զորքը գտնվում էր զինվորական գերատեսչության ենթակայության տակ՝ ղեկավարվելով սակայն ֆինանսների նախարարից եկող կարգադրություններով: Ծանոթանալով զինվորական գերատեսչության գաղտնի հրամանագրին (1920 թ., N 15)՝ ֆինանսների նախկին նախարար գեներալ Արարատյանն իր կողմից արձակված հրամանում նշել էր զինվորական նախարարին ուղարկված զորքերի հրամանատարի զեկույցի հետ (N 21) այդ հրամանի չհամաձայնեցվածության մասին՝ գտնելով, որ ծանոթանալուց հետո միայն այն կարող էր ներկայացվել ֆինանսների նախարարին: Ընդ որում նշվել էր, որ Սահմանապահ պահակազորը ֆինանսական առումով պետք է ենթարկվի ֆինանսների նախարարությանը՝ ղեկավարի իրավունքներով, իսկ համապատասխան հրամանագրի համաձայն՝ (N 31) որպես սահմանային պահակազոր ռազմական-մասնագիտական առումով ենթարկվի զինվորական գերատեսչությանը: ***Ըստ այդմ՝ սահմանապահ պահակազորն կազմված էր Կարսի սահմանապահ 1-ին բրիգադից (1135 հոգի, կամավորներ՝ 527-ը), 2-րդ սահմանապահ բրիգադից (1233 հոգի, կամավորներ՝ 80-ը), հատուկ սահմանապահ բաժանմունքից (ընդամենը ունենալով 15 շտաբի սպա, 96 օբեր-սպա, 22 բժիշկ և չինովնիկ, 2889 կամավորներ***: Հայտնվում էր, որ բոլոր սահմանապահ զորամասերը գտնվում են համալրումների և

կամավորների ներգրավման գործառույթներում, որոնց 1/3-ը, և մասնավորապես Կարսի հատուկ սահմանապահ բրիգադը համալրումները կատարվել են զինակոչի ենթակա անձանց հաշվին, որի արդյունքում Կարսի բրիգադում կամավորներ էին միայն 60-ը: Այդ զորամասերը կոչված էին իրականացնելու օպերատիվ խնդիրներ՝ Քոլպից ձգվելով մինչև Կաղզվան ընկած սահմանագիծը և դեպի հարավ, սակայն սակավաթվության հետևանքով Դիլիջանի շրջանում չի հաջողվում սահմանագծի պաշտպանությունը և հսկումը[1]:

1920 թ. հուլիսի 29-ին (N 2057) Ղարաքիլիսայան սահմանապահ 1-ին բրիգադի հրամանատար գնդապետ Կորոլկովի և բրիգադային համհարզ կոռնետ Քուրդովի կողմից զորքերի հրամանատարին ներկայացված զեկուցագրում նշվում էր, որ վերջին ժամանակներում հայկական զորքերի կողմից, Զանգիբասարի և Նախիջևանի ուղղությամբ ձեռնարկած հարձակման հետ կապված, կրկին հաճախացել են դասալքության դեպքերը՝ սկսած առանձին զինվորներից ընդհուպ մինչև ամբողջ խմբեր: Դիմումագիրների կողմից ընդգծվել էր, որ, չնայած գավառային կոմիսարներին և Ներքին գործերի նախարարության ուղղված իրենց բազմաթիվ բողոքագրերին, ոչ մի դասալիք ետ չի վերադարձվել Սահմանապահ բրիգադ: Ըստ ներկայացված տեղեկության՝ գավառային կոմիսարների և ՆԳՆ մարմինների թողտվության հետևանքով դասալիքները հանգիստ ապրել են իրենց տներում: Արդյունքում՝ փախել են նաև հայկական զորքերի կողմից թաթարներից ազատագրված գյուղերի բնակիչները, հերթապահները և օրապահները՝ պայմանավորվելով մյուս դասալիքների հետ, որովհետև մեղավորները չէին պատժվում: Հայտնվում էր, որ արդյունք չի տվել նաև ապրանքատար և մարդատար գնացքների զննումը, քանի որ մինչև գնացքի կայարան ժամանումը դասալիքները թռել են վագոններից՝ շրջանցելով կայարանները, որտեղ անցկացվում էր զննում: Սույն զեկուցագրի վրա ՀՀ զորքերի հրամանատար գեներալ Նազարբեկյանը բանաձև է ներկայացնում՝ կարգադրելով անհապաղ իրազեկել տեղական վարչա-

[1] Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 141, թ. 8-11:

կարգին ետ ուղարկելու դասալիքներին իրենց սահմանապահ զորամասերը[1]:

1920 թ. հուլիսի 29-ին (N 7156) ՆԳ նախարարի օգնականը ՀՀ ռազմական նախարարին տեղեկացնում էր, որ երկուստեք ձեռքբերված համաձայնությամբ կազմվել է Իջևանի գավառի 1000 հոգուց սահմանապահակի կազմակերպման նախագիծ և այն ուղարկվել է զորավար Սեպուհին՝ միաժամանակ հայտնելով, որ ծախքը հոգալու է ռազմական նախարարությունը, իսկ սահմանապահակի միլիցիոներներն օգտվելու են ՆԳ նախարարության արտոնություններից: ՆԳ պաշտոնակատարը հայտնում էր, որ քանի որ իրենց միջև համաձայնությունը բանավոր է եղել, ինքը նախահաշիվ չի ուղարկել Նախարարների խորհրդին: Հայտնվում էր, որ սակայն ինքը տեղեկություն է ստացել, որ ռազմական նախարարությունից բոլորովին տարբեր, քան իր ուղարկածն է եղել, վարձատրության մասին տարակուսանքներ են առաջացել: ՆԳ պաշտոնակատարը գտնում էր, որ դրանով սահմանապահակի կազմակերպման գործը դանդաղել է: Դիմումագրում խնդրվում էր տեղեկացնել, թե ռազմական նախարարությունն ի՞նչ կարգադրություններ է արել այդ առթիվ և ի՞նչ ծրագրեր ունի: Մեկ այլ գրության մեջ ՆԳ նախարարության տեսուչը հայտնում էր, որ սահմանապահ միլիցիայի կազմակերպման մասին դիմել են Սեպուհին, քանզի հարցի լուծումը վերապահված է զինվորական նախարարությանը[2]:

1920 թ. հուլիսի 31-ին (N 314) զինվորական և ֆինանսների նախարարությունների կողմից հաջորդ քայլն է կատարվում սահմանային պահակազորի հետ կապված հարցերի լուծման ուղղությամբ: Սահմանային հսկողության իրականացման նպատակով Կարս են գործուղվում Շաթիրյանը և սահմանապահ բաժանմունքի պետ, գնդապետ Սկրիպինը՝ հետաքննելու և պարզելու համար Կարսյան սահմանապահ 2-րդ բրիգադի հետագա կազմակերպման հետ կապված մի շարք հարցեր: Ըստ ընդունված վճիռների՝ խստիվ արգելվում էր կամայական սահմանանցումը, թանկարժեք գույքերի և անասունների անօրինական արտահանումը Հայաստանից Վրաստան: Արձանագրվել էր, որ այդ

[1] Նույն տեղում, գ. 98, թ. 81:

[2] Նույն տեղում, թ. 157:

պահին արդեն բրիգադի կազմակերպման նպատակով իրենց հաջողվել է հավաքել 120 կամավոր: Միաժամանակ տեղեկացվում էր գնդապետ Բախտամյանին բրիգադի ժամանակավոր հրամանատար նշանակելու մասին: Գրության մեջ տեղեկացվում էր նաև, որ բարեխիղճ աշխատանքի առնչությամբ շնորհակալություն է հայտնվել 11-րդ բաժանմունքի պետ փոխգնդապետ Անուֆրիևին, որի գլխավորությամբ հաջողվել է կասեցնել չորս մաքսանենգների սահմանախախտ քայլը և առգրավվել 4 միլիոն արժողությամբ մաքսանենգ ապրանք: Նշվում էր նաև թերացումների մասին. Օրինակ էր բերվում, որ Ղարաքիլիսայի սահմանային 1-ին բրիգադը քիչ բան է արել կամավորների հավաքագրման գործում, որի պատճառով բրիգադի Դիլիջանի բաժանմունքի հարցը հայտնվել է բարձիթողի վիճակում: Հույս էր հայտնվում, որ գնդապետ Կորոլկովը՝ որպես փորձված և հմուտ սպա՝ բոլոր միջոցները կձեռնարկի սահմանային հսկողության ուժեղացման ուղղությամբ, որպեսզի պետական սահմաններն անպաշտպան չմնան: Այդ փաստաթղթից պարզ էր դառնում նաև, որ սահմանային գործի կազմակերպման հարցում նախապես որոշված է եղել, որ սահմանային զորքերը բոլոր առումներով գտնվեն ռազմական գերատեսչության ենթակայության ներքո, սակայն անմիջականորեն ղեկավարվեն ֆինանսների նախարարից եկող կարգադրութուններով: Այդ մասին հետաքրքիր, սակայն հակասական դիտարկում ունի Կարսի նահանգապետ Ստ. Ղորղանյանը, որը 1920 թ. գրել է. *«Սահմանապահ զօրամասերը՝ ռուս շաբլօնով ի հարկէ, ենթարկուած էին երկու մինիստրութիւնների. Զօրաց՝ ըստ զինուորական կազմի, և ֆինանսների՝ ըստ միջոցների»*[1]: Նշվում էր, որ ֆինանսների նախկին նախարար Արարատյանը, ծանոթանալով ռազմական գերատեսչության N 5 գաղտնի հրամանագրին, մատնացույց է արել այն հանգամանքը, որ հրամանը չի համաձայնեցվել զորքերի հրամանատարի զեկույցի հետ, որ այդ մասին տեղեկացվել է զինվորական նախարարին: Այն ծանոթանալու համար ներկայացվել էր ֆինանսների նախարարին: Դրանում նշվել էր, որ սահմանապահ

[1] **Կարսի մարզը Հայաստանի Հանրապետուեան կազմում (1919 թ. ապրիլ -1920 թ. հոկտեմբեր).** Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանեանի յուշերը աշխատասիրութեամբ Վլ. Յարութիւնեանի, Եր., Հեղ. Հրատ., 2018, էջ 274:

պահակազորը գտնվում է ֆինանսների նախարարության հատուկ ենթակայության տակ՝ շեֆության իրավունքներով: Այնուհետև, նշվում էր N 31 հրամանի մասին, համաձայն որի՝ սահմանապահ պահակազորը վերցվել է Զինվորական նախարարության անմիջական ենթակայությունից: Ըստ ֆինանսների նախարար Ա. Էնֆիաջյանի և զինվորական նախարար Քր. Արարատյանի կողմից ներկայացված տեղեկության՝ սահմանային պահակազորի բաժանմունքը թվաքանակի տեսանկյունից կազմված էր 2 շտաբային սպաներից, 3 օբեր-սպաներից, իսկ Ղարաքիլիսյան 1-ին բրիգադը՝ 6 շտաբային սպաներից, 35 օբեր-սպաներից, 1135 կամավորներից, Կարսի սահմանապահ 2-րդ բրիգադը՝ 6 շտաբային սպաներից և 35 օբեր-սպաներից, 5 բժշկից, 1233 կամավորներից, իսկ հատուկ սահմանապահ ջոկատը՝ 1 շտաբային սպայից և 23 օբեր-սպաներից, 1 բժշկից, իսկ կամավորների թիվը հասնում էր 512-ի: Ամբողջությամբ վերցված՝ նախատեսվել էր արդյունքում ունենալ 15 շտաբային և 96 օբեր-սպաներ, 22 բժիշկ և չինովնիկ, 2889 կամավորներ՝ մարդ, 832 ձի: Որոշվեց նաև, որ Սահմանապահ բաժանմունքը կգտնվի Երևանում, 1-ին Ղարաքիլիսյան բրիգադի շտաբը՝ Ղարաքիլիսայում, շտաբ-բաժինները՝ Իջևանում, Դսեղում և Ջալալօղլիում, Կարսի սահմանապահ 2-րդ բրիգադը՝ Կարսում, 1-ին, 2-րդ բաժիններըը՝ համապատասխանաբար Ալեքսանդրապոլում, Արդահանում, 3-րդի տեղը այդ պահին դեռ պարզված չէր: Այս ամենը նախատեսված էր Կաղզվան-Քուլպ սահմանագծից մինչև մինչև Դիլիջան ձգվող հատվածի, ինչպես նաև Սարիղամիշ-Մեղրի-չայ պաշտպանության համար[1]:

Հայկական բանակի սահմանապահ զորքերը ենթարկվում էին Երևանում գտնվող Գլխավոր հրամանատարի շտաբին կից գործող հատուկ սահմանապահ բաժնին: Այս բոլորն անհամեմատ հաջող և նպատակային քայլեր էին երիտասարդ հանրապետության պետական անվտանգության համակարգի ձևավորման ճանապարհին, քիչ թե շատ կայուն նախահիմք հանդիսանալով երկրի պաշտպանունակության խնդիրների լուծման և պետական սահմանների անվտանգության ապահովման տեսանկյունից:

[1] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 202, ց. 1, գ. 98, թ. 10-11 հակ.:

Միաժամանակ, հետաքրքիր է նշել, որ թե՛ Ռուսաստանյան կայսրության տարիներին, թե՛ Առաջին, թե՛ Երկրորդ, և թե՛ Երրորդ Հանրապետությունների օրոք Հայաստանում, պատմական հայկական հողի վրա պետական սահմանի ողջ վերահսկողությունն իրականացվում էր գլխավորապես ազգությամբ ռուս սպաների, զինվորների և զինվորական աստիճանավորների միջոցով, ինչն իհարկե ուներ իր պատճառաբանվածությունը, քանզի հայկական պետությունը նոր էր ստեղծվել և չէր կարող միանգամից ունենալ ինչպես անհրաժեշտ պահանջարկվող կադրուժը, որի ուսուցման և պատրաստման համար երկար ու ձիգ տարիներ էին պետք, և անշուշտ փորձ: Վերջին հանգամանքը միակողմանի է ներկայացված Կարսի նահանգապետ Ստ. Ղորղանյանի մոտ, որը մեղադրում է հայ սպաներին հայերենի չիմացության մեջ, ինչպես նաև նրանում, որ դրանք գլխավորապես ռուսներ էին, կարծես թե սեփականը կար և պնդում, թե ռուսները չէին սիրում Հայոց երկիրը և առանց լուրջ հիմքի՝ պնդում հակառակը, անտեսելով կամ միակողմանի ներկայացնելով այն հանգամանքը, որ հենց այդ հատուկենտ հայ զինվորականները, որոնց վստահված էր պետական սահմանի վերահսկողությունը և ՀՀ համար անհրաժեշտ ապրանքների երկրի սահմաններից դուրսբերման կանխման պատասխանատվությունը, հանցագործի նման էին իրենց պահում և մաքսանենգ քրեական հանցանքներ գործում: Որպես օրինակ կարելի է նշել այնպիսի պաշտոնատար-զինվորական այրի անունը, ինչպես գեներալ Հովսեփյանը, որը պարզապես զբաղված էր անասնագողությամբ և այլ հակաօրինական գործողություններով՝ երկրից անարգել դուրս բերելով գողոնը՝ անասուններ, մորթի, կաշվեղեն, պարեն և այլն***. «Աւելի քան ուշագրաւ է, որ այդ սահմանապահ զօրամասերի թէ՛ բարձր և թէ՛ սփորին հրամանատար կազմը գրեթէ բոլորը ռուսներ էին և ռուսախօս հայ սպաներ: Գործի գլուխ կանգնած էր մի ռուս գնդապետ, փիպիկ ռուս: ...բոլորը նորան անվիճելի յիմար էին անուանում և հայատեաց: Նա միևնոյն ժամանակ՝ հայոց սպարապետի մոտ մարդկանցից էր: Վրաց սահմանի սահմանապահ զօրամասերի հրամանատարը դարձեալ մի ռուս գնդապետ էր: Շատ կարճ ժամանակում բացուեցին այդ գնդապետի մեծ դրամական զեղծումները, քննութիւնը պարզեց այդ բոլորը՝ բայց գործը

ընթացք չը ստացաւ, և գնդապետը շարունակեց հրամանատարել ...Երբ 20թուին Կարս եկաւ սահմանապահ զօրամասերի հրամանատար կազմը՝ ես հարկաւոր համարեցի դարձնել կառավարութեան ուշադրութիւնը, որ նա գերազանցօրէն կազմուած էր ռուսներից, և շատ փոքր թուով հայերից: Իսկ այդ վերջիններից ոչ ոք հայերէն չը գիտեր: Կարս ժամանած 20 սահմանապահ սպաներից 17 ռուսներ էին, երեքն էլ հայեր: Այդ երեքից մէկը գեներալ էր, Կարսի նահանգի սահմանապահ զօրամասերի հրամանատար, միւս երկուսը գնդապետի աստիճան ունէին, և համարւում էին գեներալի օգնականներ: Երեքն էլ հայերէն ոչ մի բառ չը գիտէին»[1]:

Տպավորություն է առաջանում, որ կայսերապաշտական խնդիրները թե՛ ռուսական ցարի, թե՛ բոլշևիկների օրոք, թե՛ Առաջին և թե՛ Երրորդ Եանրապետությունների ժամանակահատվածում նույնն էին, որ փոխվում էին միայն ռեժիմները, իսկ ռազմավարական նպատակադրումներն անփոփոխ էին, ռուսական զինվորին մնում էր ապահովել Ռուսաստանյան կայսրության ընդհանուր արգելապատնեշային օղակման անխախտելիությունը, այսինքն՝ ապահովել ընդհանուր պետական սահմանի ողջ երկայնքի անխախտելիությունը և անձեռնմխելիությունը: Բոլոր տեսակի փոփոխությունները, բարեփոխումները և կայսրության վերանորոգման ու նորացման ծրագրերը կանխորոշված էր իրականացնել Ռուսաստանյան կայսրության՝ ընդհանուր «արգելոցի շրջանակներում»:

Եվ այդուհանդերձ, սահմանապահ զորամասերի ստեղծումն Առաջին հանրապետությունում պետության առջև կանգնած կարևորագույն առաջնահերթություններից էր, որը թելադրված էր բանակաստեղծ գործընթացներով: Այն կոչված էր երաշխավորելու ՀՀ պետական սահմանի անձեռնմխելիությունը, պաշտպանվածությունը արտաքին ագրեսիայից և այդ համակարգը 1918-1920 թթ. որոշակի չափով կայացավ և իր դերը խաղաց:

Այն բավարար չափով չկայացավ, քանզի Հայաստանի Հանրապետության տնտեսաքաղաքական ծանրագույն վիճակը, սովը, շրջա-

[1] **Կարսի մարզը Հայաստանի Հանրապետութեան կազմում (1919 թ. ապրիլ -1920 թ. հոկտեմբեր).** Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանեանի յուշերը, էջ 274-275:

փակումը թույլ չտվեցին իրագործելու սահմանապահ զորամասերի առջև կանգնած առաջնահերթ խնդիրները, ինչին էապես խոչընդոտեց նաև աշխարհաքաղաքական միջավայրի մեկուսացվածությունը, հարևան պետությունների թշնամական վերաբերմունքը:

ԳԼՈՒԽ 7.

ՀԱՅԿԱԿԱՆ ՕԴՈՒԺԸ ԵՎ ՆԱՎԱՏՈՐՄԸ 1918-1920 ԹԹ.

պ. գ. դ., պրոֆեսոր Վ. Հ. ՎԻՐԱԲՅԱՆ

Հայկական օդուժի և օդաչուների մասին առաջին հիշատակումներին կարելի է հանդիպել 1918 թվականի սկզբից:

Հարկ է ընդգծել, որ դեռևս մինչև Առաջին հանրապետության հռչակումը, 1918 թ. հունվարի կեսերին Գանձակից ոչ հեռու, Շամխոր կայարանի մոտ տեղի ունեցած աղետալի իրադարձությունների օրերին, երբ Կովկասյան ռազմաճակատը աղետալի ձևով փլուզվում էր և ազերի բաշիբոզուկները օգտվելով պատեհ առիթից, զինաթափում և կոտորում էին գործնականում անպաշտպան, ռազմական գործողությունների դաշտից հեռացող ռուս զինվորներին, կողոպուտներ անում Թիֆլիսի կոմիսարիատի հանձնարարությամբ, դեպի Ելիզավետպոլ թռիչք է կատարում ազգությամբ հայ օդաչու, պորուչիկ Տեր-Մարտիրոսյանը: Ետդարձին նա զեկուցում է, որ Աղստաֆայում կանգնած են երեք ջարդուփշուր արված կառաշարեր, իսկ Շամխոր կայարանի մերձակայքում հրդեհներ են բռնկված, որի հետևանքով այրվել էին վագոնների կմախքները[1]:

Իսկ արդեն Առաջին Հանրապետության կայացման դժվարին տարիներին գործնական քայլեր արվեցին օդուժի՝ հայկական օդային տորմիղի և Սևանա լճի առագաստային նավատորմիղի կազմակերպման ուղղությամբ: Այդ ոլորտում դրանք առաջին քայլերն էին: Դա նախադեպը չունեցող իրադարձություն էր[2]:

---

[1] Տե՛ս **Հաջյան Միքայել**, Հարյուր Տարի Մոռացության Մատնված Ողբերգություն, «Ապառաժ» ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնական կայքէջ, 21.02.2018 թ.:. https:// aparaj. am/new/category/social/page/67/:

[2] Հարկ է նշել, որ հայկական օդուժին առաջին անդրադարձերից մեկը կատարվել է մեր կողմից, երբ դեռևս դրանք համացանցում չկային. Տե՛ս **Վիրաբյան Վ.**, Հայաստանի

ՀՀ անկախության հռչակումից հետո ռուսական Կովկասյան բանակի հրամանատարության կողմից հայկական կորպուսի տնօրինությանը հանձնված 2-րդ, այլ տվյալներով՝ 3-րդ ավիաջոկատը գործնականում դարձավ ՀՀ բանակի նորաստեղծ օդուժի հիմքը: Հայաստանի կառավարությունն գործնական և եռանդուն ջանքեր գործադրեց օդային նավատորմն իրական ռազմուժ դարձնելու համար: 1918 թ. օգոստոսի 13-ին ՀՀ Նախարարների խորհրդում զեկույցով հանդես է գալիս Զինվորական նախարար, գեներալ Հովհաննես Հախվերդյանը և խնդրում ֆինանսական միջոցներ տրամադրելու՝ օդագնացության, ռադիոհեռագրաթելի, հետախուզության և հակահետախուզության ծախսերի համար: ***Այսպիսով, ելնելով այդ կարևոր փաստից, հայկական բանակի ավիաջոկատի հիմնադրման օր պետք է համարել 1918 թ. օգոստոսի 13-ը, չնայած հանիրավի համացանցում[1] նշվում է օգոստոսի 15-ը, որը ճիշտ չէ, քանի որ օդուժի համար կազմակերպման առաջին քայլը և դրամական հատկացումները, ինչպես արդեն նշել ենք, պետական մակարդակով կատարվել են ոչ թե օգոստոսի 15-ին, այլ 13-ին[2]***:

Կարսում տեղակայված ՀՀ բանակի միակ ավիաջոկատի առաջին հրամանատարը պորուչիկ Վոհպովն էր, որին 1919 թ. սկզբներին հաջորդեց Արթուր Վասիլի Ղուլյան-Ռիլսկին (Գուլյան)[3], որի տեղակալն ըստ Վ. Կուշներյովի՝ փորձառու օդաչու Մ. Սունդուկյանն էր[4]: Հայկական օդուժում գերազանցապես ֆրանսիական «Սալմսոն», «Նյուպոր», «Մորան», *անգլիական «Սոպվիչ»* և այլ մակնիշի սավառնակներ էին, որոնք ոչ մետաղյա ծածկ ունեցող, ավելի ոչ ամուր կառուցվածքի ինք-

---

Հանրապետությունը 1918-1920 թթ. Կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները, Եր., ՀՊՀՀ հրատ., 1999, էջ 38: ***Նույնի***՝ Հայաստանի Հանրապետության հետախուզությունը և բանակը 1918-1920 թթ., էջ 84-86:

[1] **Հովհաննիսյան Արծրուն,** Հայաստանի Հանրապետության (1918-1920/21 թթ) օդուժը**. Տե՛ս** https:// www. aniarc.am›News:

[2] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 201, ց. 1, գ. 484, թ. 9:

[3] Տե՛ս **Հովհաննիսյան Արծ.,** Հայաստանի առաջին հանրապետության օդուժը, «Հայ զինվոր», 2018, N 17 (1264), 24.10.2018 –30.10.2018:

[4] Տե՛ս **Кушнерёв В. Вл.,** История становления отечественной военной авиации в Кавказском регионе в 1914–1930-егг. Специальность 07.00.02–Отечественная история Диссертация на соискание учёной степени канд. ист. наук. Краснодар, 2020, с. 109:

նաթիռներ էին, և որոնք այն ժամանակ ավելի մատչելի էին ձեռք բերելու համար, և բացի այդ, դրանք այն երկրներից էին ձեռք բերվում, որոնք ՀՀ դաշնակիցներն էին համարվում Առաջին աշխարհամարտի և հանրապետության տարիներին: Ի տարբերություն դրանց, գերմանական արտադրության *«Ալբատրոս», «Ֆոկկեր Բ 1, Ֆոկկեր Դ 3»* և այլ տեսակների սավառնակները գրեթե հնարավոր չէր հայթայթել, և ոչ միայն այն պատճառով, որ վերջիններս Թուրքիայի հետ դաշինքում էին, այլև ավելի թանկ էին և գործնականում անմատչելի. Գերմանիան առաջին երկիրն էր աշխարհում, որ սկսել է արտադրել առաջին մետաղյա ծածկ ունեցող ինքնաթիռները, որոնք ավելի բարձրորակ կառուցվածք ունեին և մարտական-թռիչքային անհամեմատ ավելի բարձր որակներ էին ապահովում[1]:

1918 թ. օգոստոսի 19-ին ՀՀ Նախարարների խորհրդում լսվում է Զինվորական նախարար գեներալ Հովի. Հախվերդյանի զեկույցը մասնավոր անձանցից օդագնացային մասերի բռնագրավման անհրաժեշտության մասին, որոնք ըստ նրա՝ բավարար չափով կային Դիլիջանի շրջանում, ինչն անտնտեսվարության և պետական գույքի նկատմամբ անբարեխիղճ վերաբերմունքի արդյունք էր: Ընդունված որոշմամբ Զինվորական նախարարին հանձնարարվում է ՆԳ նախարարության ներկայացուցչի մասնակցությամբ բռնագրավել Դիլիջանի շրջանի բնակիչների կողմից հափշտակված օդանավատորմային մասերը[2]: Այն իրագործելու համար էլ օդագնաց ջոկատի շտաբս-կապիտան Ամիրաղովի նախագահությամբ հանձնաժողով է կազմվում, որում ընդգրկվում են սպա-ավտոմոբիլիստ պրապորշիկ Վանյանցը և ՆԳ նախարարության ու Դիլիջանի Զեմստվային վարչության ներկայացուցիչները[3]:

1918 թ. սեպտեմբերի 7-ին (N 35) գեներալ Հովի. Հախվերդյանը հատուկ հրամանագրում, հիմք ունենալով Նախարարների խորհրդի կողմից իր զեկույցի հիման վրա դեռևս օգոստոսի 19-ին ընդունված

---

[1] Տե՛ս **Հովհաննիսյան Արծ.,** Ամենահայտնի ռազմական ինքնաթիռները: Ուսումնասիրություն, Եր., «Անտարես», 2005, էջ 8-22, **Советская военная энциклопедия**, т. 1, М., Военное изд-во МО СССР, 1990, с. 459-460:

[2] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 201, ց. 2, գ. 1, թ. 120, **Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ, 1918-1920 թթ.,** էջ 15:

[3] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 204, ց. 1, գ. 41, թ. 9, գ. 485, թ. 11:

որոշումը (N 3, 118), հայտնում էր, որ իրեն հանձնարարվել է Դիլիջանի շրջանում հօգուտ գանձարանի իրագործել սավառնակային մասերի բռնագրավում: Ըստ այդմ, Հախվերդյանը տեղեկացնում էր, որ ինքն արդեն համապատասխան հանձնարարական է տվել՝ հնարավորինս կարճ ժամկետում զեկուցել կատարված աշխատանքի արդյունքների մասին, կազմելով բռնագրավված առարկաների ցուցակագրում և հաշվառում[1]:

1918 թ. հոկտեմբերի 8-ին Հայկական դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Մ. Սիլիկյանը հատուկ հրամանագրում անդրադառնալով իրեն վստահված դիվիզիայի Գլխավոր շտաբի օպերատիվ բաժնի պետ, փոխգնդապետ Ալ. Կ. Շնեուրի[2] զեկույցին, տեղեկացնում է վերջինիս կողմից հոկտեմբերի 4-ին (N 70) հայկական օդագնաց ջոկատի ստուգման մասին և շնորհակալություն հայտնում: Սիլիկյանին ներկայացված զեկույցում Շնեուրը նշել էր, որ ինքն ստուգել է օդագնաց ջոկատը՝ վկայելով, որ աշխատանքները փայլուն են կատարվել, ամեն ինչ դասդասվել է և խնամքով, կանոնավորապես տեղավորվել: Փաստվում էր, որ երեք թռչող ապարատները սարքին են և հոկտեմբերի 12-ին պատրաստ կլինեն թռիչքների համար ըստ նշանակման: Հավելվում էր, որ 4-րդ «Վուազենը» կարելի է կարգի բերել, սակայն միայն դրանց մասերը Դիլիջանից տեղափոխելուց հետո. մտահոգություն էր հայտնվում, որ մեխանիկների բացակայության պատճառով աշխատանքները իրենք՝ սպաներն են կատարում, որպես հասարակ փականագործներ և հյուսներ, սակայն միանգամայն արհեստավարժ ձևով: Միաժամանակ Շնեուրը չափազանց կարևոր էր համարել ինքնաթիռների կայանման համար օդանավարանների (անգարների) կառուցումը՝ այն համոզմամբ, որ դրանք չիրագործելու դեպքում և թերանալու պարագայում այդ սարքերը ուժեղ քամուց կարող են ջարդուփշուր լինել: Շնեուրը

[1] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 202, ց. 1, գ. 13, թ. 17:

[2] ***Ալեքսանդր Կոնստանտինի Շնեուրը*** 1915 թ. երկամսյա դասընթաց է անցել Կիևի օդանավորդության դպրոցում՝ *ստանալով օդաչուի վկայական*, իսկ 1916-1917-ին ուսանել է Ս. Պետերբուրգի Նիկոլաևյան սպայակույտի ակադեմիայում: Տե՛ս այդ մասին **Шергалин Евг. Эд.,** Александр Константинович Шнеур (1884-1977) - Военный, энтомолог и герпетолог: «Астраханский Вестник Экологического Образования», 2016, № 1 (35), с. 127-128: Տե՛ս р. 36: Նյու-Յորքում ապրած տարիներին Կայալովը թղթակցություն է ունեցել Ալ. Շնեուրի հետ:

նաև տեղեկացրել էր, որ բանվորական ուժի սուր կարիք է զգացվում: Ավիաջոկատի դիտարկումից Ալ. Շնեուրը գոհ էր մնացել, սակայն առաջարկել էր ավիաջոկատին աջակցելու նպատակով ջոկատ գործուղել 10 զինվորի, սակայն ո՛չ դասալիքների[1]:

Իսկ արդեն զինվորական գերատեսչության գծով 1918 թ. նոյեմբերի 6-ի (N 40) հրամանագրում ռազմական նախարար Հովի. Հախվերդյանը զբաղեցրած պաշտոնում որպես Հայկական օդագնաց ջոկատի հրամանատար է հաստատում 1-ին Պոլտավյան կազակային գնդի Կուբանի կազակային զորքի հարյուրյակի նախկին հրամանատար, ռազմական օդաչու, ենթասեսաուլ Վլադիմիր Ստոյանկովսկուն[2]:

Իսկ կարդեն Նախարարների խորհրդին ներկայացված 1919 թ. փետրվարի 28-ի զեկույցում ՀՀ Զինվորական նախարար Հովի. Հախվերդյանը անդրադառնալով հայկական օդուժի վիճակին, կառավարությանը տեղեկացնում էր եղած օդանավագնացային սարքերի ոչ պիտանի լինելու և ընդամենը գործող մեկ օդանավի մասին, որ վիճակը կարելի է շտկել մի քանի ամսից հետո, երբ հնարավոր կլիներ երկու քարուքանդ եղած ինքնաթիռներից հավաքել ևս մեկը: Հախվերդյանը տեղեկացրել էր նաև, որ ավիաջոկատի կազմում այդ պահին եղել է 5 օդաչու, 1 դիտորդ-օդաչու, 1 մեխանիկ-հրահանգիչ, 3 շարժիչագործ, 6 շարժիչագործի օգնական, 2 վարորդ, վարորդի 2 օգնական, 10 վարպետ: Ելնելով այս ամենից՝ զինվորական նախարարը կառավարությանն առաջարկել էր կազմացրել ավիաջոկատը, իսկ մի շարք զինվորականների գործուղել Ֆրանսիա՝ օդագնացության գործը սովորելու և նոր սարքեր ձեռք բերելու համար. գեներալ Հախվերդյանը տեղեկացրել էր, որ ուսումնառությունը Ֆրանսիայում կտևի մոտ 1-2 տարի, որից հետո միայն անհրաժեշտ կլիներ ձեռքբերել օդուժի ժամանակակից սարքեր: Հովի. Հախվերդյանը զեկույցում նշել էր նաև, որ Հայաստանում Ֆրանսիայի ներկայացուցիչ միսիոներ, հնագետ, օդաչու, հետախույզ կապիտան, այնուհետև մայոր Անտուան Պուադեբարի[3] կարծի-

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 204, ց. 1, գ. 42, թ. 95:

[2] Տե՛ս նույն տեղում գ. 41, թ. 102:

[3] **Անտուան Մարի Ժոզեֆ Պուադեբար** (1878 -1955 թթ.) – հնագետ, պատմաբան, օդաչու, քարտեզագիր, միսիոներ, որը լավ հայերեն գիտեր. –Տե՛ս **Туманян М.,** Дипломатическая история Республики Армения. 1918-1920 гг., Ер., Нац. Архив Армении, 2012, с. 402:

քով նպատակահարմար է համարվել օդագնաց ջոկատը գլխավորապես օգտագործել պետական սահմանի պահպանության համար: Ելնելով այդ ամենից, վերընշյալ ծրագրերի իրագործման համար նպատակով Հախվերդյանը ՀՀ կառավարությունից խնդրել էր թույլատրել օդագնացություն սովորելու համար Ֆրանսիա գործուղել 5-ից 6 սպայի և 15-ից 18 զինվորի, ինչպես նաև գնել նոր ինքնաթիռներ և անհրաժեշտ սարքավորումներ[1]:

Ավելի ուշ ՀՀ զինված ուժերի ղեկավարությունը ձեռնամուխ եղավ հայկական օդուժի նոր ավիաջոկատի ձևավորմանը, որի նկատմամբ այդ օրերին որոշակի ռոմանտիկ հիացմունք կար:

Արդեն Կարսի ազատագրումից և Հայաստանի Հանրապետության տարածքային կազմում ընդգրկվելուց հետո՝ 1919 թ. մարտից եռանդով սկսվեց նոր ավիաջոկատի կազմավորումը: Կարգի բերվեցին թռիչքադաշտը, օդանավարաններն ու պահեստամասերը, ստեղծվեցին ինքնաթիռների նորոգման ու հավաքման արհեստանոցներ՝ ինքնաթիռների թռիչքի թույլատրման համար: Ձեռնարկված ջանքերի արդյունքում մինչև 1919 թ. դեկտեմբերի 1-ը հավաքվեց և դասդասվեց ըստ պահեստների ողջ օդանավորդական ունեցվածքը: Սարքավորվեցին և անհրաժեշտ գործիքակազմով համալրվեցին շարժիչային, դարբնոցային, փականագործական և ատաղձագործական արհեստանոցները, պայմաններ ստեղծվեցին օդանավերի շարժիչների հավաքման և թռիչքից առաջ փորձարկման համար[2]:

1919 թ. մարտի 1-ին Նախարարների խորհրդի նիստում լսվեց Զինվորական նախարարի զեկուցումը օդագնաց ջոկատի հաստիքները կրճատելու, ֆրանսիական հրահանգիչներ հրավիրելու և 20-25 զինվորականների օդագնացության արվեստը սովորեցնելու համար Ֆրանսիա գործուղելու մասին[3]: Նիստում հավանություն է տրվում Զին-

[1] Տե՛ս **Հովհաննիսյան Արծ.,** Հայաստանի Առաջին Հանրապետության օդուժը, «Հայ զինվոր», 2018, N 17 (1264) 24.10.2018 – 30.10.2018:

[2] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 275, ց. 5, գ. 79, թ. 52:

[3] 1919 թ. դեկտեմբերի 18-ին ՀՀ ԱԳ նախարարության Տեղեկատվական բաժնի պետ Ալխազովը, տեղեկացնելով գնդապետ Վ. Հասկելի հետ տեղի ունեցած խորհրդակցության մասին, հայտնել էր, որ ՀՀ կառավարությունը գեներալ Օ. Ուորդրոպի և կապիտան Ջ. Գրեյսիի միջոցով հարց է բարձրացրել բրիտանական կառավարության առաջ Հայաստան ուղարկելու ռազմական հրահանգիչների: Այդ կապակցությամբ խորհրդակցությանը հան-

վորական նախարարի առաջարկին, որին էլ հանձնարարում են վարել այդ առթիվ հարկավոր բանակցությունները[1]: Ըստ այդմ էլ ձեռնարկվել են գործնական միջոցներ այդ ժամանակի համար արդեն հրատապ դարձած հայկական օդուժի կազմակերպման ուղղությամբ:

1919 թ. մարտի 10-ին (N 60) Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությանն առընթեր Զինվորական վարչության ղեկավար, ասել է թե՝ ռազմական կցորդ, գեներալ Հ. Ա. Քիշմիշյանը Զինվորական նախարարին ներկայացրած գաղտնի զեկուցագրում հայտնում էր, որ ինքը դիվանագիտական հավատարմատար Լ. Եվանգուլյանի և պոդպորուչիկ Լևոն Ումիկյանի հետ միասին մեկնել է Բաթումի՝ ժամանող «Կազակ» նավով բերած փամփուշտները, արկերը, հրետանային արկերը ինչպես նաև բերված *ֆրանսիական* օդանավերն ընդունելու և դրանք Հայաստան տեղափոխելու համար: Հայտնվում էր, որ ժամանելով Բաթումի, իրենք ականջալուր են լինում անգլիական հրամանատարության հայտարարագրին, թե իբր իրենք իրավունք չունեն ինքնուրույնաբար թույլ տալ արտահանելու ինքնաթիռները, ինչպես նաև փամփուշտներն ու արկերը, ասելով, որ չցանկանալով այդ գործի խոչընդոտողի դերում լինել, իրենք հարցումով դիմել են Կ. Պոլիս՝ գեներալ Ջ. Միլնին: Գեներալ Քիշմիշյանը տեղեկացնում էր, որ անգլիական հրամանատարության նման վերաբերմունքի պայմաններում ինքն ու Լ. Եվանգուլյանը փոխհամաձայնեցված վճիռ են կայացրել՝ այդ բեռը ուղարկել Փոթի, սակայն կապված այն բանի հետ, որ շոգենավի անձնակազմը տրամադրված էր բոլշևիկաբար և սպառնացել էր բեռը ծովը նետել, իրենց կողմից վարձվել է երեք հոգուց բաղկացած հատուկ պահակազոր, որը երկու կազակների հետ պետք է պահպաներ և հսկեր բեռը մինչև Փոթի հասնելը՝ որպես ուղեկցող ունենալով Կամավորական բանակի մի սպայի և պոդպորուչիկ Ումիկյանին, որոնք պետք է զբաղվեին բեռի Հայաստան ուղարկելու գործով: Անդրադառնալով

դես եկած զնդապետ Վ. Հասկելը պատրաստակամություն էր հայտնել աջակցել այդ խնդրում, խոստանալով, որ խոչընդոտներ չեն լինի, և ՀՀ կառավարությունը կարող է համապատասխան հայտը ներկայացնել: Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 201, ց. 1, գ. 427, մաս I, թ. 28-28ա: Տե՛ս նաև **Վիրաբյան Վ.,** Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. Կառավարության ռազմաքաղաքական…, էջ 38:

[1] Տե՛՛ս **ՀԱԱ**, ֆ. 201, ց. 1, գ. 486, մաս I, թ. 62:

օդանավերի հարցին, գեներալ Հ. Քիշմիշյանը հայտնում էր, որ բրիտանական հրամանատարությունը դարձյալ խոչընդոտներ է հարուցում դրանք Հայաստան տեղափոխելու ճանապարհին, կրկին պնդելով, թե պետք է հատուկ դիմեն Մերձավոր Արևելքում ու Սև ծովի շրջանում գտնվող անգլիական զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ Ջ. Միլնին: Ասվում էր, որ հարցը հանգուցալուծելու նպատակով Եվանգուլյանի Ումիկյանի հետ միասին տարվող բանակցությունները ոչ մի արդյունքի չհանգեցրին, որից ելնելով խնդրում էին ՀՀ զինվորական նախարարի անմիջական և եռանդագին աջակցությունը այդ խնդրի լուծման համար[1]:

Անգլիական ռազմական իշխանությունները դեռ երկար ժամանակ են արգելքներ հարուցում Հայաստանի Հանրապետության կողմից արդեն գնված և Բաթումիում գտնվող ինքնաթիռները Հայաստան առաքելուն: 1920 թ. ապրիլին, երբ գաղութային նահանգապետ, իրավունքի դոկտոր, Անդրկովկասում բրիտանական գլխավոր կոմիսարի տեղակալ Հարրի Չարլզ Լյուկը Երևանում հանդիպում էր ունեցել Ալ. Խատիսյանի հետ, վերջինիս հետ զրույցի ժամանակ բողոքել էր, որ չի հասկանում, թե «ինչու Հայաստանի կողմից գնված ինքնաթիռները և որոշ քանակությամբ փամփուշտները Բաթումում վերջին երկու ամիսների ընթացքում զավթել են բրիտանական ռազմական»[2] իշխանությունները: Հ. Լյուկը Խատիսյանին խուսափողական պատասխան է տալիս, սակայն Մեծ Բրիտանիայի ռազմական նախարարության մի զեկուցագրից պարզվում է, որ անգլիական ռազմական փորձագետները «հնարավոր են համարել, որ այդ ինքնաթիռները կարող են ընկնել բոլշևիկների ձեռքը»[3]:

Հետաքրքիր է այս կապակցությամբ նաև ավելացնել, որ իր դժգոհությունն է արտահայտել բրիտանական համայնքների պալատի անդամ Սըր Վիլյամսը, գտնելով, որ հայերը իրենց կառավարությունից զենք են խնդրել պաշտպանական ուժերը կազմակերպելու համար, և

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 275, ց. 5, գ. 209, թ. 60-60 հակ.:
[2] Տե՛ս **Գալոյան Գ.**, Հայաստանը և մեծ տերությունները. էջ 186:
[3] Տե՛ս նույն տեղում:

սակայն այն չեն ստացել, որ գնել են ինքնաթիռներ և իրենց կառավարությունը կանգնեցրել է ինքնաթիռների առաքումը[1]:

Օդուժի կազմակերպումը մի շարք զինվորական այրերի, ինչպես նաև կառավարության անդամների համար դարձել էր հատուկ հետաքրքրության առարկա, որի նկատմամբ զգացվում էր որոշակի տրամադրվածություն, նվիրում և ռոմանտիկ ձգտում: Առանձին զորամասերին և հատուկ իրադարձություններին նվիրված ՀՀ բանակային տոների կողքին, նոր կազմակերպվող հայկական օդուժը ևս ուներ իր նվիրական տոնը. այդ մասին տեղեկանում ենք Զինվորական նախարար Քր. Արարատյանի 1919 թ. հուլիսի 22-ի հրամանագրից (N 269), ըստ որի՝ ***Հայաստանի Հանրապետության անկախության օրը՝ մայիսի 28-ը, համարվում էր ՀՀ ավիացիոն-օդագնաց ջոկատի տոնական օր***[2]:

1919 թ. սեպտեմբերի 2-ին ՀՀ ԱԳ նախարարին ուղղված զեկույցում ՀՀ Զինվորական նախարարության Ռազմատեխնիկական վարչության պետ, գեներալ-մայոր Շահզադյանը խնդրում էր կարգադրություն անել Ադրբեջանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության միջոցով Բաքվում ձեռք բերել 600-700 տեսակարար կշռով 300 փութ ավիացիոն բենզին, ինչպես նաև Ա և Բ տիպի *«Գարսիլ»* մակնիշի 50 փութ յուղ և 100 փութ կաստորի՝ գերչակի յուղ: Եվ ինչպես երևում է նույն օրվա Նախարարների խորհրդի գործերի կառավարչի կողմից արված մակագրությունից, Ռազմատեխնիկական վարչության տնտեսական բաժնին հաղորդվել էր, որ կազմվի ավիացիոն բենզինի հաշվարկելի քանակի մասին նախահաշիվ[3]: Սակայն կառավարություն ուղարկված Թիֆլիսում ՀՀ ռազմական կցորդ, գեներալ-մայոր Քիշմիշյանի 1920 թ. նոյեմբերի 16-ի օպերատիվ զեկույցից տեղեկանում ենք, որ մինչ այդ պահը դեռ ավիացիոն բենզին չէր ստացվել[4], ինչը խիստ անհրաժեշտություն էր օդուժի կազմակերպման համար:

1919 թ. սեպտեմբերի 15-ին Նախարարների խորհրդում լսվում է ՀՀ նախարարապետի զեկուցումը մեծահարուստ Ս. Միրզոյանի կողմից 350.000 ռուբլի նվիրատվության մասին՝ սավառնակ գնելու հա-

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 188-189:
[2] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 204, ց. 1, գ. 132, թ. 103:
[3] Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 29ա, թ. 85:
[4] Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 221, թ. 148:

մար: Որոշվում է զեկուցումն ընդունել ի գիտություն և կառավարության անունից շնորհակալություն հայտնել Ս. Միրզոյանին[1]:

1919 թ. սեպտեմբերի 29-ին Ալ. Խատիսյանը Զինվորական նախարարից խնդրում է գնդապետ Վ. Հասկելի առաջ միջնորդել օդանավ ձեռք բերելու համար[2]:

Ինչպես կարելի է դատել ՀՀ Զինվորական նախարար, գեներալ-մայոր Քր. Արարատյանի 1919 թ. հոկտեմբերի 10-ի գաղտնի (N 115) հավելվածից, իր կողմից հաստատվել է ռազմական օդանավերի տարբերանշանը կամ պատվանշանը[3]:

1919 թ. հոկտեմբերի 10-ին (N 0012) գնդապետ Ալ. Շեուրին ուղղված պաշտոնական նամակում Սևծովյան նավատորմի ծովակալության գծով նախկին պորուչիկ Հովհան Խան-Կոտուրսկին (նշանավոր Խան-Ղոթուրին կամ Արտեմի Նիկիտայի Հովհաննեսովը) հայտնում էր, որ ***օդային և լճային նավատորմի ստեղծման գաղափարը ծագել է դեռ հանրապետության ձևավորման առաջին օրերից***: Խան-Կոտուրսկին նշելով, որ թե՛ Շնեուրը և թե՛ անձամբ ինքը ուժերի ներածին չափով նպաստել են գործի ձեռնարկմանը, իրենց վիճակվել է դիմանալ շատ խեթ հայացքների և անվստահության, որ առաջին նախագծերը չոր վերաբերմունքի են հանդիպել, և սական իրենց երազանքը կյանքում միս ու արյուն ստացավ, իրագործելի դարձավ, ճիշտ է՝ օդային և առագաստանավային, ոչ մեծ, սակայն այնուհանդերձ ժողովրդի ապագա հզորության և երջանկության խորհրդանիշ հանդիսացող նավատորմիղի գաղափարը իրողություն դարձավ: Շնեուրը համոզվածություն էր հայտնում, որ երկուսով, և առավել ևս ինքը, որն իր աչքերով տեսել է հարազատ Սևծովյան նավատորմի կործանումը, և այժմ մտահղացել է երիտասարդ հանրապետության նավատորմի ծնունդը, որն անտարբեր չէ «Անդրեևյան *Դրոշի*»[4] նկատմամբ, կանգ չի առնի կես ճանապարհին և կշարունակի սկսած պատվաբեր գործը: Գնդապետ Ալ. Շնե-

[1] Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 100, թ. 205:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց. 5, գ. 175, թ. 70:

[3] Տե՛ս նույն տեղում, ֆ. 204, ց. 1, գ. 132, թ. 355:

[4] ***«Անդրեևյան Դրոշ» խաչը*** Ռուսաստանյան կայսրության Ռազմածովային ուժերի դրոշն էր 1965-1917 թթ.: Տե՛ս **Басов А. Н.,** История военно-морских флагов, М., АСТ, СПб, Полигон, 2004, с. 88-310:

ուրը դժգոհում և զարմանում էր, որ դեռ հնչում են ձայներ, որոնք պնդում են սկսված գործի և ձեռնարկումի պատրանքայնության մասին, սակայն այդուհանդերձ ինքը և Խան-Կոտուրսկին կոչ են անում Ռուսաստանի ռազմական գերատեսչության նմանօրինակ նման կառույցները ստեղծել Հայաստանում: Խան-Կոտուրսկին համոզմունք էր հայտնում, որ ժողովուրդն իրենց կաջակցի և օգնության կգա այդ գաղափարի իրագործման գործում: Նա նաև համոզված էր, որ ողջ ուժերը և համոզվածությունը կներդրվեն, որպեսզի «Նորին գերազանցության» Զինվորական նախարարը, զորքերի հրամանատար սպարապետ գեներալ-լեյտենանտ *Նազարբեկյանը* և գեներալ-մայոր Հախվերդյանը Հայաստանում օդային և լճային նավատորմի ստեղծման համար հանգանակվող զորաբերությունների և նվիրատվությունների հավաքման գործը տնորինող *«Հատուկ կոմիտեի»* գործունեությունը իրենց հովանավորության տակ կվերցնեն, որը իրագործելու համար նրանք կհասնեն Նախարարների խորհրդի թույլտվությանը և ամենայն աջակցությանը: Հ. Խան-Կոտուրսկին և Ալ. Շնեուրը վստահություն էին հայտնում, որ իրենց առջև է օդային և լճային նավատորմի կազմակերպման ընդհանուր և *պետականորեն կարևոր գործը*, որին վիճակված է վճռական դեր խաղալ պետական պաշտպանության գործում և ազգային մշակույթի առաջընթացում[1]:

1919 թ. հոկտեմբերի 14-ին (N 54) ՀՀ Զինվորական նախարար, Նորին գերազանցության գեներալ Հովի. Հախվերդյանին ուղղված պաշտոնագրում Գլխավոր շտաբի պետ, փոխգնդապետ Ալ. Շնեուրը կրկին անդրադառնում էր օդային և ծովային նավատորմի ստեղծման գաղափարին, գտնելով, որ այն պահանջում է ժողովրդական միջոցների ներգրավվում այդ գործին: Շնեուրը համոզված էր այդ նոր նախաձեռնության հաջողության մեջ, ըստ այդմ թախանձագին խնդրելով ծանոթանալ Ծովակալության գծով պորուչիկ Հովհան Խան-Կոտուրսկու պաշտոնագրին, իր կողմից նաև ավելացնելով գործի օգտին իր միջնորդությունը, որ պահանջում է այդ գործում ներգրավվել անձանց, որոնց համար թանկ է հայ ժողովրդի անունը և պատիվը. ակնկալվում է Զինվորական նախարարի շահագրգիռ մասնակցությունը, գեներալ

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 199, ց. 1, գ. 29ա, թ. 218:

Թ. Նազարբեկյանի և անձամբ Հ. Հախվերդյանի միջնորդական առաքելությունը՝ հանդես գալ կառավարությանը այդ գործում ներգրավման համազգային գործի օգտին[1]: Համաձայն կատարված մակագրության, գեներալ-մայոր ՀՀ երկրորդ Զինվորական նախարար գեներալ Ք. Արարատյանը հոկտեմբերի 16-ին իր համաձայնությունն էր տվել ներկայացնելու սույն խնդրի մասին ողջ գրագրությունը և հատուկ զեկույցը ՀՀ Նախարարների խորհրդի քննարկմանը, ըստ այդմ ձեռնարկը միանգամայն անհրաժեշտ և օգտակար համարելով[2]:

ՀՀ Զորքերի հրամանատարին ուղղված հոկտեմբերի 16-ի գրության մեջ, գեներալ Հախվերդյանը ներկայացնելով ստորև բերվող Խան-Կոտուրսկու պաշտոնական նամակը, անառարկելի էր համարում ձեռնարկված գործի կարևորությունը, այն համոզմամբ, որ *«Հատուկ կոմիտեի»* կողմից ինչպես կամավոր հանգանակությունների, այնպես էլ այլ լրացուցիչ միջոցներով օդային և ծովային նավատորմի ստեղծման նախագծի իրականացումը մեծապես կախված է կառավարության դիտարկումից[3]: Եվ այսպես, 1919 թ. հոկտեմբերի 16-ին (N 1978) ՀՀ Զինվորական նախարար Քր. Արարատյանին ուղղված գրությունում սպարապետը՝ գերագույն գլխավոր հրամանատար, գեներալ-լեյտենանտ Թ. Նազարբեկյանը ներկայացնելով օդային և լճային նավատորմի ստեղծման վերաբերյալ իր ձեռքում առկա գրագրությունը, այդ գործի կազմակերպումը միանգամայն օգտակար և անհրաժեշտ էր համարում[4]:

ՀՀ կառավարություն ներկայացված Զինվորական նախարար գեներալ-մայոր Ք. Արարատյանի և Գլխավոր շտաբի պաշտոնակատար, կապիտան Վ. Մուրադյանցի[5] 1919 թ. հոկտեմբերի 27-ի (N 00309/02170) պաշտոնագրում ի նկատի ունենալով, որ օդային և ծովային նավատորմը հզորագույն գործոն են հանդիսանում ռազմական

---

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 216:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 29ա, թ. 216:

[4] Տե՛ս նույն տեղում:

[5] Կապիտան **Վահագն Գալուստի Մուրադյանցը** 1919 թ. սեպտեմբերից սկսած մինչև 1920 թ. ապրիլը եղել է ՀՀ Զինվորական նախարարությանը կից Հետախուզական և հակահետախուզական բաժնի պետ:

գործում և պահանջում են մտքի մեծ լարվածություն և հսկայական միջոցներ, որոնց պետությունը չի տիրապետում, և այդ նպատակով տեղի է ունենում կամավոր հանգանակությունների հավաքում, ողջունել էր այդ նպատակը, ըստ այդմ էլ միջնորդելով, որ 1) թույլատրել ամենուր հանրապետությունում և արտասահմանում իրականացնել կամավոր հանգանակությունների և նվիրատվությունների հավաքում՝ Հայաստանի լճային և օդային նավատորմն ստեղծելու համար, 2) այդ նպատակով հավաքված գումարները և նվիրատվությունները տնօրինելու նպատակով Նախարարների խորհրդի որոշմամբ կարգադրվում էր հիմնել *«Հատուկ կոմիտե»* ի դեմս պատվավոր նախագահի և նախագահի օգնականի, 3) նախատեսվող հանձնաժողովը կազմել նախագահի ընտրության կազմում հանգանակություն կատարողների թվից, ինչպես նաև այն անձանցից, որոնք կարող են օգուտ տալ իրենց աշխատանքներով և գիտելիքներով, 4) գործի ընդհանուր կազմակերպումը և հավաքման հսկողության, պահպանման և նվիրատվությունների ու հանգանակված ծախսման միջոցների մշակումը հանձնարարելով նշված հանձնաժողովին, 5) կոմիտեին հնարավորություն տալով համաձայնության գալ նախատեսվող գերատեսչությունների հետ՝ ռազմական և այլ նպատակներով ձեռք բերվող նավերի օգտագործման համար, 6) այդ նպատակի իրագործման համար կոմիտեին առաջարկելով կազմել գործողությունների ծրագիր[1]:

1919 թ. հոկտեմբերի 30-ին Նախարարների խորհուրդը լսում է Զինվորական նախարարի զեկուցումը օդային և լճային նավատորմիղ ստեղծելու համար թե՛ հանրապետության սահմաններում և թե՛ սահմաններից դուրս ազատ նվիրատվություն կազմակերպելու մասին հարցը: Ընդունված բանաձևում որոշվում է հավանություն տալ և հանձնարարել Զինվորական նախարարին ներկայացնել կոմիտեի կազմն ի հաստատումն Նախարարների խորհրդի[2]:

Օդուժը համառորեն փորձում էր կայանալ, և այդ ուղղությամբ զգալի ջանքեր գործադրեցին մի շարք բարձրաստիճան զինվորական այրեր. 1919 թ. դեկտեմբերի 7-ին Փարիզից ՀՀ պատվիրակության

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 199, ց. 1, գ. 29, թ. 6 (215):

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 100, թ. 231, 237: գ. 96, թ. 91:

ռազմական խորհրդական, գեներալ-մայոր Գաբրիել Ղորղանյանը (Գաբրիել Կորգանով) ՀՀ Զինվորական նախարար Քր. Արարատյանին ուղղված գաղտնի նամակով տեղեկացնում էր, որ Փարիզում Հայկական բանակի համար գնվել են *«Սալմսոն 2Մ2»* մակնիշի 2 ինքնաթիռ՝ հետախուզման և ռմբանետման համար. դրանք բոլորովին նոր են և զարգացնում են 200 կմ/ժամ արագություն,[1] որանք Մարսելի և Բաթումիի վրայով շոգենավով, ապա վրացական երկաթուղով Հայաստան հասցվեցին կապիտան Արթուր Ղուլյան-Ռիլսկու միջոցով 1920 թ. հունիսի վերջերին:

Ըստ այդմ էլ հայկական օդուժը փորձում էր քայլ առ քայլ իրողություն դառնալ և սեփական ոտքերի վրա կանգնել: 1919 թ. վերջերին արդեն հավաքվել էին ֆրանսիական արտադրության *«Վուազեն Լ.Ա.Խ.»* տիպի 3 և *«Մորան»* տիպի 3 ինքնաթիռներ, սակայն երեսաճածկման համար պահանջվող նյութերի, և մասնավորապես կաշվի և այլնի բացակայության պատճառով, որոնք Հայաստանում չկային կամ էլ, օրինակ ՀՀ բանակի տարբեր կարիքների համար անհրաժեշտ կաշին ստիպողաբար արտահանվում էր ԱՄՆ[2]: Արդյունքում, երկու ինքնաթիռներից պատրաստ էին ընդամենը մեկական նմուշներ[3]: Պահեստամասեր ևս չկային, թռիչքներ հազվադեպ էին իրագործվում, իսկ բրեզենտե օդանավարանները, որոնցում պահվում էին ինքնաթիռները, քամուց քշվում էին՝ անպիտանի դառնալով[4]: Հետաքրքիր է, որ *«Վուազեն»* տիպի մեկ ինքնաթիռ մասնակցել է վրաց-հայկական պատերազմին, սակայն 1918 թ. դեկտեմբերի վերջին Ալեքսանդրապոլում վառոդի պահեստի պայթյունի հետևանքով ոչնչացել է: Այլ վկայությամբ, հակառակորդի վրա սավառնակային ջոկատի կողմից 30 անգամ ռումբեր են նետվել: Օդագնացային ջոկատը փաստացի դադարել է գոյություն ունենալ: Եվս մեկ ուշագրավ փաստ. 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ժամանակ վրացական կողմը օդուժի հետ կապված որոշ առաջարկներ է արել հայկական կողմին. Գեներալ Հ. Քիշմիշյանի

[1] Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 442, մաս I, թ. 42, 150:

[2] Տե՛ս **Վիրաբյան Վ.,** Հայաստանի Հանրապետության հետախուզությունը և բանակը, էջ 137-140, **ՀԱԱ,** ֆ. 275, ց. 5, գ. 79, թ. 5:

[3] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 275, ց. 5, գ. 79, թ. 5:

[4] Տե՛ս նույն տեղում, 51 հակ.:

կողմից Զինվորական նախարարին ուղղված 1920 թ. աշնան հեռագրից (N 400) պարզվում է, որ գեներալ Գ. Մազնիևը (Գեորգի Մազնիաշվիլին) առաջարկել է ոչ միայն հայ, այլև վրաց ռազմագերիներից կազմակերպել օդագնաց ջոկատ և ուղարկել Հայաստան, այլև տեղեկացրել, որ իրենց ծառայությունն են առաջարկել օդաչու եղբայրներ Խեչենաշվիլիները, հայկական օդագնացային ջոկատի նախկին հրամանատար Վոիպովը և նրա հետ մեխանիկ-օդանավորդ Լուկյանովը[1]: Զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանից ստացված 1920 թ. ծածկագրված ուղիղ հեռագրաթելով հաղորդված հոկտեմբերի 9-ի հեռագրից ակնհայտ է դառնում, որ հայկական հրամանատարությունը հակահարձակման նախապատրաստման համար մտադրություն է ունեցել իրականացնել զորային և օդուժային հետախուզություն[2]:

Ավելի ուշ օդուժի համալրման նպաակով Ֆրանսիայից գնվում են երկու *«Սալմսոն 2 Ա2»* ինքնաթիռներ, որոնք նախատեսված էին հետախուզական թռիչքների և ռմբահարումների համար, որի մասին գեներալ-մայոր Գ. Ղորղանյանը (Գաբրիել Կորգանովը) 1919 թ. դեկտեմբերի 17-ին Փարիզից հեռագրով տեղեկացրել է ՀՀ Զինվորական նախարար Քր. Արարատյանին: Այնտեղ մասնավորապես ասված է, որ ինքնաթիռները քանդված և համապատասխան արկղերում տեղադրված 1920 թ. հունվարին Մարսելի նավահանգստից կապիտան Ղուլյանի ուղեկցությամբ կուղարկվեն Բաթումի: Վերջինս առաջարկել էր ինքնաթիռները հավաքել և Բաթումիից թռիչքով հասցնել Հայաստան, սակայն որի հետ գեներալ Ղորղանյանը չի համաձայնվել և Քր. Արարատյանից խնդրել է համապատասխան միջոցներ ձեռնարկել, որպեսզի դրանք երկաթուղով անվտանգ և անվնաս հասցվեն Կարս: Գեներալ Գ. Ղորղանյանը խնդրել էր նաև ֆինանսական միջոցներ հատկացնել՝ արդեն գործող օդանավերի համար պահեստամասեր գնելու նպատակով, ինչպես նաև կապիտան Ղուլյանի առաջարկով ֆրանսիացի մասնագետների հետ հայկական բանակում ծառայելու նպա-

[1] Տե՛ս նույն տեղում, ֆ 275, ց. 5, գ. 154, թ. 225:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 232:

տակով պայմանագրեր կնքել, ինչպես նաև Հայաստան գործուղել մեկ օդաչու-հրահանգչի՝ խոստանալով մեծ գումար վճարել[1]:

1920 թ. հունվարի 27-ի (N 1170) զեկուցագրում, որն ուղղված էր Ժինվորական նախարար Քր. Արարատյանին, և որի մասին լսվել է նաև Նախարարների խորհրդում, գեներալ Մ. Մ. Սիլիկյանը հայտնում էր, որ ինժեներ Ստ. Ղորղանյանի տեխնիկական և առևտրական ընկերությունը առաջարկել է պատվերի օրից հաշված՝ երեք ամսվա ընթացքում *«Ալբատրոս», «Մերսեդես» և «Բենց»* մակնիշի շարժիչներով 12 սավառնակ Բաթումիում մաքսազերծ լինելու իրավունքով (ֆրանկո-պորտ) հանձնել Հայաստանի Հանրապետությանը: Հայտնվում էր, որ մեքենաներն ունեն բոլոր անհրաժեշտ մասերի հարկավոր պաշարը և յուրաքանչյուրն արժե 30 հազար մարկ անդրկովկասյան բոներով՝ համաձայն հունվարի 1-ի արտարժույթի՝ 250.000 ռ.: Նշելով ինքնաթիռների թռիչքային հնարավորությունների, հետախուզական և ռմբաձիգային ծառայության պիտանիության, ինչպես նաև գների համեմատական նվազության մասին՝ ցանկալի էր համարվում ձեռք բերել այդ այնքան անհրաժեշտ սավառնակները, կառավարության առաջ միջնորդություն հարուցելով նախահաշվից դուրս տրամադրել 3. 500.000 ռ. անդրկովկասյան բոներով, ավելացնելով, որ այդ գումարի մեջ մտնում են նաև Բաթումիից Երևան փոխադրման և դրա հետ կապված ծախսերը: Ըստ այդմ կազմվել էր համապատասխան նախագիծ՝ վարչապետ Ալ. Խատիսյանի, գեներալ Մ. Սիլիկյանի և ֆինանսների նախարար Ս. Արարատյանի ստորագրությամբ[2], այսինքն, ըստ էության այդ մտահղացմանը հավանություն էր տրվել:

Եվ այսպես, չնայած առկա դժվարություններին և աշխարհաքաղաքական բարդույթներին, հայկական օդուժն իր առաջին գործնական քայլերն էր անում: Ավելին, 1920 թ. փետրվարի 2-ին (N 2019) Նախարարների խորհրդի նիստում լսվում է արտասահմանում 12 սավառնակներ գնելու մասին հարցը և հավանության արժանանում, պարտավորեցնելով դրա համար հատկացնել 3.5 միլիոն ռուբլի՝ անդրկովկասյան

[1] Տե՛ս **Հովհաննիսյան Արծ.,** Հայաստանի առաջին հանրապետության օդուժը, «Հայ զինվոր», 2018, N 17 (1264) 24.10.2018 – 30.10.2018:

[2] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 199, ց. 1, գ. 118, թ. 21-23, 44-48, 50-57, ֆ. 199, ց. 1, գ. 119, թ. 186:

բոներով, հաշվի առնելով նաև այն հանգամանքները, որ պետք է ձեռք բերվեն նաև ջորիներ, սայլակառքեր և այլն[1]: Այդ մասին մենք տեղեկանում ենք նաև Հինվորական նախարար, գեներալ-մայոր Քր. Արարատյանի 1920 թ. փետրվարի 10-ի գրությունից (№ 2019)՝ ուղղված ֆինանսների նախարարության բյուջետագանձապետական բաժնին, որի հիմքում ընկած էր պառլամենտի 1919 թ. օգոստոսի 22-ի որոշումը: Կարճ ժամանակ անց, ի լրումն վերը նշված որոշման, հատկացումները հաստատվում են նաև պառլամենտի կողմից, սակայն նշված 3,5 միլիոն հատկացումը կատարելով կառավարության 12 միլիոնանոց ֆոնդի հաշվին, նկատի ունենալով այդ խնդրի իրականացման համար անհրաժեշտ բեռնակիր անասունները, սայլակառքերը և հանդերձանքը և այլն[2]:

1920 թ. փետրվարի 11-ին (N 833, 839)) ՀՀ դիվանագիտական հավատարմատար Լ. Եվանգուլյանին ուղղված գրության մեջ ԱԳ նախարարության գլխավոր քարտուղար Հ. Տեր-Հակոբյանը տեղեկացնում էր Փարիզում ՀՀ պատվիրակության ռազմական խորհրդական գեներալ Գ. Ղորղանյանի կողմից ստացված ճեպագրի մասին, ըստ որի իրենց կողմից ՀՀ բանակի կարիքների համար գնվել է *երկու օդանավ*, որոնք հունիսի կեսերին պետք է բարձվեին Բաթումի ուղևորվող շոգենավի վրա՝ հասցեագրելով Բաթումի ՀՀ հյուպատոսին՝ ՀՀ կառավարության համար: Տեր-Հակոբյանը խնդրում էր բանակցել Անդրկովկասում ամերիկյան և բրիտանական Գերագույն կոմիսարներ գնդապետ Վ. Հասկելի և Օլիվեր Ուորդրոպի հետ՝ ինքնաթիռների Վրաստանի երկաթուղագծերով անարգել տեղափոխելու համար. նա խնդրում էր ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ տարանցիկ պայմանագրի համաձայն[3]:

Իսկ այդ ժամանակ Կարսում արդեն օդանավակայան էր գործում:

Այդուհանդերձ, հայկական օդուժի կազմակերպման և հետագա զարգացման հարցերն այնքան էլ հարթ չէին ընթանում, առաջ էին գալիս բազմաթիվ խոչընդոտներ և բյուրոկրատական քաշքշուկներ,

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 199, ց. 1, գ. 146, մաս I, թ. 21, 23, **Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ**, էջ 392:

[2] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 202, ց. 1, գ. 303, մաս II, թ. 251-252:

[3] Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց. 5, գ. 5, թ. 102:

որոնք առանց այն էլ հեշտ չէր հաղթահարել, քանզի այն ամենևին էլ կախված չէր միայն հայկական իշխանությունների կամեցողությունից, այլ բրիտանական և ֆրանսիական ռազմաքաղաքական կառույցների տրամադրվածությունից, որոնք սակայն այդ խնդրում այնքան էլ պատրաստակամ չէին:

Առանձնապես վատ են դասավորվում հարաբերությունները բրիտանացիների հետ՝ կապված 1920 թ. փետրվարին սեփական միջոցներով երկու գրոհային և երկու հետախուզական ինքնաթիռներ գնելու շուրջ առաջացած քաշքշուկների և չկամեցողության հետ գործարք կնքելու ՀՀ հետ: Ի վերջո, միանգամայն անհարկի ձգձգումներից հետո Ֆրանսիայում գնված 12 օդանավերից առաջին երկուսը ուղարկվում են օդուժի կապիտան օդաչու Արթուր Վ. Ղուլյանի հետ, սակայն դրանք տեղ հասնելուն պես, ճանապարհին՝ Բաթումիում բռնագրավվում են Բաթումիի բրիտանացի նահանգապետ բրիգադային գեներալ Ուիլյամ Ջեյմս Նորման Կուկ-Կոլլիսի կողմից, որը հրաժարվում է դրանք հանձնել Հայաստանի կառավարությանը, ասելով որ ինքը սպասում է իր կառավարության հետագա հրահանգներին: Այնուհետև կեղծ պատճառաբանություն է բերվում, թե իբր Ֆրանսիայի զինվորական իշխանությունները հայտնել են, որ իրենք տեղեկացված չեն եղել այդպիսի գործարքի մասին, ուստի և Մեծ Բրիտանիայի ռազմական նախարարությունը, որին այնքան էլ դուր չէր եկել ֆրանսիացիների քիչ ավելի մեղմաբարո մոտեցումը, հաստատում է մերժողական բնույթի կարգադրության հարցում Կուկ-Կոլլիսի իրավացիությունը: Երկու օդանավերի բացթողման հարցը շաբաթներ է տևում, հայկական կառավարությունը բազմաթիվ դիմումագրեր է հղում Փարիզ, Լոնդոն, Բաթումի և այլուր՝ բրիտանական արգելափականքները վերացնելու, որի հետ համերաշխած Կովկասում ֆրանսիական զինվորական առաքելությունը ևս բողոքարկում է Կուկ-Կոլլիսի կողմից Հայաստանի համար նախատեսված օդանավերի բռնագրավման կապակցությամբ, սակայն ապարդյուն[1]:

ՀՀ ԱԳ նախարարին ուղղված 1920 թ. մարտի 3-ի (N 104) զեկուցագրում Վրաստանում ՀՀ դիվանագիտական հավատարմատար Լ. Եվանգուլյանը տեղեկացնում էր փետրվարի 29-ին վրաց Զինվորական

[1] Տե՛ս նույն տեղում, գ. 211, թ. 78-79:

նախարար Գ. Խ. Լորդկիպանիձեի հետ ունեցած տեսակցության մասին[1], որում կարևորվել էին՝ 1) անդրկովկասյան հանրապետությունների կազմավորումից հետո Վրաստանում մնացած հրետանային գույքի, 2) Սուխումիի շրջանի հայերի զինվորակոչության, 3) Վրաստանում գտնված հայերին ցուցակագրելու հարցերը: Եվանգուլյանը ԱԳ նախարարին հայտնում էր, որ պետք է փութացնել հրետանային գույքի հարցի լուծումը, ասելով, թե Լորդկիպանիձեն խոստացել է տեղեկացնել, թե ե՛րբ կարելի կլինի ՀՀ պատկանող մասը հանձնել հայերին, խոստանալով Բաթումիում սպասվելիք օդանավերը և փամփուշտները առանց հետաձգելու թույլ տալ անցկացնել Վրաստանի տարածքով[2]:

Իսկ այդ ընթացքում ՀՀ վարչապետի, ԱԳ նախարարի կողմից փորձ էր արվում հաղթահարել բրիտանական ռազմաքաղաքական ներկայացուցչության կողմից հայկական օդուժի ստեղծման ճանապարհին հարուցված կամածին խոչընդոտները: Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության խորհրդական Մ. Թումանյանին ուղղված ԱԳ նախարար Ալ. Խատիսյանի 1920 թ. մարտի 31-ի գրությունում (N 2035) հայտնվում էր, որ Բաթումիից հեռագիր է ստացվել այն մասին, որ Բաթումիի ռազմական նահանգապետ գեներալ Կուկ-Կոլլիսը կրկին իրենց մերժել է երկու օդանավերը Հայաստան տեղափոխելու թույլտվության հարցում: Բաթումիում գտնվող կապիտան Անիևը ԱԳ նախարարին զգուշացրել էր, որ անհրաժեշտ է անհապաղ քայլեր ձեռնարկել, քանզի օդանավերը բաց երկնքի տակ անձրևից փչանում են: Դրանից ելնելով, Ալ. Խատիսյանը Մ. Թումանյանից խնդրում էր այդ խնդրով շտապ դիմել Թիֆլիսում գտնվող ֆրանսիական և ամերիկյան ռամաքաղաքական ներկայացուցչություններին[3]:

1920 թ. ապրիլի 3-ին (N 100) Զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանին ներկայացված զեկույցում, գեներալ Քիշմիշյանը հայտնում էր, որ Կամավորական բանակից տեղ չեն հասել միանգամայն սարքին և նոր 4 օդանավ, որոնք ներկալվել են Վրաստանի իշխանությունների կողմից և գտնվում են նրանց օդանավարաններում[4]:

---

[1] Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց. 5, գ. 212, թ. 48-49, ֆ. 200, ց. 1, գ. 221, թ. 17-18:

[2] Տե՛ս **նույն տեղում**, ֆ. 275, ց. 5, գ. 212, թ. 48-48 հակ., ֆ. 200, ց. 1, գ. 221, թ. 17:

[3] Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց. 5, գ. 211, թ. 78-79:

[4] Տե՛ս նույն տեղում, գ. 209, թ. 108:

1920 թ. ապրիլի 6-ին Հ. Օհանջանյանը Ալ. Խատիսյանին ուղղված նամակում անդրադառնում է ինքնաթիռների հարցին և փաստում ֆրանսիական գեներալ Ֆրանցիս Դեպերեի կողմից ստանձնած միջնորդության մասին բրիտանացիներին, ավելացնելով, որ Օ. Ուորդրոպը վերջինիս պնդմամբ հեռագրել է Կուկ-Կոլլիսին, որը քիչ է մնացել համաձայնվի, սակայն վերջին պահին չգիտես-ինչու կրկին խոչընդոտել է Հայաստանին հասանելիք օդանավերի խնդրում[1]:

Այդուհանդերձ, այդ ընթացքում բրիտանացիները շարունակեցին իրենց անհիմն քաշքշուքները: 1920 թ. ապրիլի 14-ին (N 2315) ԱԳ նախարարի պաշտոնակատար Ալ. Խատիսյանը կրկին Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության խորհրդական Մ. Թումանյանին հասցեագրված հեռագրում խնդրում էր օդանավերի հարցով Անդրկովկասում Բրիտանիայի գերագույն կոմիսար Օ. Ուորդրոպից և Անդրկովկասում Ֆրանսիայի գերագույն կոմիսար Դամիեն-Ժոզեֆ դե Մարտելից պահանջել կատեգորիկ պատասխան, թե երբ են իրենք լուծելու օդանավերի, ինչպես նաև ռազմամթերքների Հայաստան տեղափոխելու հարցը, ինչը Ադրբեջանը և Վրաստանը արդեն ստացել էին՝ թեկուզև ոչ ուղիղ գծով[2]:

Այդ մասին Երևանում Ալ. Խատիսյանը 1920 թ. ապրիլին իր դժգոհությունն է հայտնում իրեն այցելած ծովակալ Ջոն Մայքլ դը Ռոբեքի շտաբի անդամ հրամանատար Հարրի Չ. Լյուկին[3]:

Հետագայում ևս բրիտանական քաղաքականությունն այս հարցում գրեթե փոփոխությունների չի ենթարկվում, վերջիններս շարունակում էին խոչընդոտել Հայաստանի Հանրապետության գնած ոչ միայն զենքն ու զինամթերքը, այլև ինքնաթիռները հասցեատիրոջը հասցնելուն. Այդ մասին է գրել բրիտանական լիբերալների օրգան *«Մանչեստեր Գարդիանը»* 1920 թ. հուլիսի 15-ի համարում. *«Վերջերս «Հայերի պաշտպանության բրիտանական կոմիտեն» մի հուշագրով դիմել է Արտաքին գործերի մինիստրություն, որում հայտնվում է ապշեցուցիչ փաստ. «Չնայած բոլոր հավաստիացումներին, զենքը, ինքնաթիռները*

---

[1] Տե՛ս **Համո Օհանջանյանի նամակները Ալեքսանդր Խատիսյանին, 6 ապրիլի-22 ապրիլի 1920 թ.,** «Բանբեր Հայաստանի Արխիվների», 1996, N 1, էջ 73:

[2] Տե՛ս նույն տեղում, Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 275, ց. 5, գ. 211, թ. 87-88:

[3] Տե՛ս **Հովհաննիսյան Ռ.,** Հայաստանի Հանրապետություն, հատոր III, էջ 416-417:

և այլն, որ գնել է Հայաստանի կառավարությունը, կանգնեցվել են Բաթումիում բրիտանական իշխանությունների կողմից: Այդ փաստը հրաշալիորեն պատկերում է մեր քաղաքականությունն Արևելքում…Մենք չգիտենք, թե մեր պետական մարդկանց որքան դուր է գալիս Հայաստանի ներկա քաղաքականությունը: Բայց նրանք պետք է, որ մտածեին այդ մասին, որ Հայաստանը գտնվում է Մուստաֆա Քեմալի և բոլշևիկների միջև»[1]:

1920 թ. տարբեր երկրներից ՀՀ էին ժամանում նաև օդագնացության ոլորտի տարբեր մասնագետներ: Հայաստանն Անգլիայից գնեց որոշ քանակությամբ ինքնաթիռներ, որոնք, սակայն, 1920 թ. սկզբից հայտնվելով Բաթումիում, Կուկ-Կոլլիսի կամայականության պատճառով պատճառով Հայաստան չտեղափոխվեցին: 1920 թ. մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 20-ը ավիաջոկատի մասնագետները վերանորոգել էին 6 սավառնակ, որանցից մի քանիսը պտուտակների անսարքության կամ բացակայության պատճառով թռիչքներ չէին կատարում: Օդուժի կայացման գործընթացները հարթ չէին ընթանում և հանդիպում էին բազմաթիվ խոչընդոտների: Դրան ավելացավ անպատեհ վթարը օդանավակայանում, որի զոհը դարձավ օդաչու Միհրան Խայեյանը[2] (կարող է լինել նաև Խայեյան): Առաջին հայ օդաչուներից էին նաև Ռուբեն Հակոբի Բաբայանը, Նիկոլայ Խորոզովը: Երկու ֆրանսիական ինքնաթիռներ Բաթումիից Հայաստան ուղարկվեցին 1920 թ. հունիսի 16-ին գնացքով՝ Ղուլյան-Ռիլսկու ուղեկցությամբ[3]:

Այդուհանդերձ, Հայաստանում որոշակի շրջաններում ռոմանտիկ հետաքրքրություն կար օդուժի նկատմամբ, և մի շարք հայրենասեր ուժեր շահագրգիռ մասնակցություն էին ցուցաբերում օդուժի ստեղծման գործում, որին փորձում էին իրենց լուման ներդնել արտերկրի հայերը, տարբեր ազգային-քաղաքական ուժեր: Տեղին է այդ կապակցությամբ նշել, որ Հայ Սահմանադիր Ռամկավար կուսակցության Եգիպտոսի շրջանային կենտրոնական խորհուրդը 1920 թ. ամռանը որոշում

---

[1] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 114, ց. 2, գ. 8, թ. 13:

[2] Տե՛ս **Մատթէոսեան Վ.**, Պուենոս Այրէսի Հայ ազգային միութիւնը (1918-1920), «Հայկազեան հայագիտական հանդէս», Պէյրութ, 1998, էջ 135:

[3] Տե՛ս **Հովհաննիսյան Արծ.,** Հայաստանի առաջին հանրապետության օդուժը, «Հայ զինվոր», 2018, N 17 (1264) 24.10.2018 – 30.10.2018:

է ստանձնել այդ գործը և Հայաստանի Հանրապետության համար գնել 50 մարտական օդանավ, որոնցից 10-ը նախատեսվել էր հատկացնել Կիլիկիայի ինքնապաշտպանության գործին, իսկ 40-ը՝ ՀՀ զինված ուժերին[1]: Դրա հետ մեկտեղ որոշվեց նախապատրաստել 50 օդաչու, ինչն իրենց վրա վերցրեցին Ամերիկայի և Իզմիրի կազմակերպությունները[2]: 1920 թ. օգոստոսին ինքնաթիռների խմբաքանակի գնումը Եգիպտոսի Բրիտանական ռազմական իշխանություններից արդեն ավարտվել էր, և մնում էր միայն դրանց փոխադրումը հայրենիք: Այդ ինքնաթիռները պետք է անվանվեին դրանց գնորդ նվիրատուների անուններով, իսկ ամբողջ խմբաքանակը՝ *«Հայ ռամկավարների օդային փորմիղ»*[3]: Մեծ Բրիտանիայի ռազմական նախարարությունը Ու. Չերչիլի գլխավորությամբ ընդհանուր առմամբ անհաղորդ մնաց ՀՀ կարիքների բավարարման խնդրում: Այդ անտարբեր վերաբերմունքը դրսևորվեց օդուժի հետ կապված մեկ այլ խնդրում, որը կապված էր Ալեքսանդրիայի մոտ գտնվող թագավորական օդային ուժերի մի քանի հարյուր հավելուրդային օդանավերի հետ: Այդ իրավիճակում Եգիպտոսի հայկական համայնքի հարուստ խավը, որի ներկայացուցիչները Հայ Սահմանադիր Ռամկավար կուսակցության և Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության գաղափարակիրներ էին և սերտորեն կապված էին Պողոս Նուբարի ու նրա գլխավոր Ազգային պատվիրակության հետ, ցանկանում է մի քանի օդանավ ձեռքբերել և նվիրաբերել Հայաստանին[4]: Հայկական կողմի բրիտանական սպասելիքները չարդարացան, բրիտանական Պատերազմական և Սպառազինությունների նախարարությունները հարուցում են անհաղթահարելի խոչընդոտներ, որոնք գործնականում արգելափակեցին բրիտանական օդանավերի ուղարկումը Հայաստանի Հանրապետություն: Վերջ ի վերջո, 1920 թ. օգոստոսին Կովկասում իրավիճակն այնպիսի կտրուկ փոփոխությունների ենթարկվեց, որ բրիտանական ԱԳ նախարարությու-

[1] Տե՛ս **«Ժողովրդի ձայն»** (Կ. Պոլիս), 1920 թ. , օգոստոսի 15:

[2] Տե՛ս **Ճիզմեճյան Մ. Գ.,** Պատմություն ամերիկահայ քաղաքական կուսակցությունը, 1890-1925, Ֆրեզնո, էջ 412:

[3] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 198, ց. 1, գ. 2, թ. 1:

[4] Տե՛ս **Հովհաննիսյան Ռ.,** Հայաստանի Հանրապետություն, հատոր III, էջ 419:

նը այլևս այդ հարցին անդրադառնալու ցանկություն անգամ չունեցավ, այդ օդանավերն էլ այլևս չհայտնվեցին հայկական երկնքում:

Հայկական հողի վրա օդուժի գործունեության մասին հետաքրքիր տեղեկություն է պարունակվում ՀՀ ՆԳ նախարարին ուղղված Կարսի նահանգապետ Ղորղանյանի 1920 թ. օգոստոսի 20-ի հեռագրում: Հայտնելով այն մասին, որ Օլթիի ուղղությամբ նկատվել է Թուրքիայի զինուժի աշխուժացում, որ իր խնդրանքով անգլիական օդանավը թռիչք է կատարել Կաղզվանի շրջան՝ մի քանի ռումբ գցելով Սուրմալուի սահմանին, որտեղ քրդերի կուտակում է նկատվել, ավելացնելով, որ սակայն ինքնաթիռը ետ է բերվել Թիֆլիս[1]: Եվ չնայած այս բոլոր դժվարություններին, հայկական օդուժը հասցրեց մասնակցել ռազմական գործողություններին, ինչի մասին կցկտուր տեղեկություններ կան. այսպես, 1920 թ. սեպտեմբերի 30-ով թվագրված մի արխիվային փաստաթուղթ փաստում է, որ թուրք-հայկական պատերազմի առաջին օրերին, երբ հայկական բանակի ոգին դեռ տեղում էր և չէր կորցրել իր մարտունակությունը, հայկական սավառնակները ռումբեր են նետել Սարիղամիշ քաղաքում գտնված տաճկական պահեստների վրա, ինչպես նաև Սուլուտաշ կայարանի մոտ գտնված թուրքական դիրքերի վրա, իսկ Կաղզվանի շրջանում հայկական սավառնակները ռումբեր են նետել Դոլբանյար գյուղի վրա, ուր նկատվել էր թշնամու սայլերի կուտակում[2]: Դատելով թուրք-հայկական պատերազմի ժամանակ՝ 1920 թ. հոկտեմբերի 14-ին հայկական կողմի ձեռնարկման անհաջող հակահարձակման մասին ամփոփագրից, հայկական օդանավերը Մերդենեկի ուղղությամբ մղված մարտերի ժամանակ Բեռնա գյուղի գրոհով գրավելու ժամանակ ճշգրիտ ռմբանետում են կատարել թշնամու գումակի վրա՝ խուճապ առաջ բերելով հաառակորդի թիկունքում[3]:

Հայկական օդուժի ստեղծման ոդիսականն այդ դժվար և սոված օրերին հիրավի արժանի է լուսաբանման՝ հայրենապատման ոգեղեն էջերի ամբողջացման և գալիք սերունդներին դրանց արժանիորեն ներկայացման տեսադաշտից: Ինչպես պարզվում է Կ. Պոլսում ՀՀ դի-

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 201, ց. 1, գ. 62, թ. 25:
[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 368, ց. 1, գ. 1, թ. 114-115:
[3] Տե՛ս **նույն տեղում,** ֆ. 200, ց. 1, գ. 607, թ. 132:

վանագիտական հանձնակատար Ֆ. Թախտաջյանին գրված գեներալ Գ. Ղորղանյանի 1920 թ. հոկտեմբերի 20-ի նամակից, Ֆրանսիայի կառավարությունը համաձայնվել էր ընդունել տասը հայ սպաների, և հատկապես օդաչուների Սեն Սիրի և Ֆոնտենբլոյի ռազմական ակադեմիաներում վերապատրաստման համար[1]: Ավելի ուշ Ֆրանսիայից ձեռքբերվեց երկու *«Սալմսոն 2 Ա2»* ինքնաթիռ, որոնք տվյալ ժամանակի համար թռիչքային մեծ արագություն ունեին (200 կմ/ժ) և նախատեսված էին հետախուզական թռիչքների, ըստ հարկի՝ նաև ռմբակոծումներ իրականացնելու համար[2]: Դրանք 1920 թ. թուրք-հայկական պատերազմում կատարել են շուրջ 30 ռմբանետում[3]:

Ընդհանուր առմամբ, հայկական ռազմական ինքնաթիռների քանակը հասել է 12-ի: Կարսի անփառունակ անկման օրերին ՀՀ ավիաջոկատում փաստորեն դեռ կար երկու ինքնաթիռ, որից միայն մեկը մինչև վերջ գործեց: Այդ մասին հանգամանալից անդրադարձ է ունեցել Կարսի օդանավային ջոկատի զինվոր, ապագա մեծ խորհրդային ավիակոնստրուկտոր *Արամ Ռաֆայելյանցը*, որի մասին հետաքրքիր դիտարկում ունի ռազմական փորձագետ, պատմաբան *Արծրուն Հովհաննիսյանը*: Ըստ նրա կողմից ներկայացված համապատասխան ռազմական բնույթի տեղեկանքի, հրասայլի թռիչքն ապահովող առաջին խորհրդային ճախրաթիռներից մեկի օդաչուն՝ Ա. Ռաֆայելյանցը հանդիսացել է խորհրդային առաջին ուղղահայաց թռիչք և վայրէջք կատարող օդային մեքենայի և մի շարք այլ կարևոր նախագծերի հեղինակը: Իր հերթին, ըստ Ա. Հովհաննիսյանի կողմից բերված ուշագրավ փաստերի, Ա. Ռաֆայելյանցը նշել է, որ 1920 թ. հոկտեմբերի 30-ին ժամը մոտավորապես 12-ին, Կարսի անխուսափելի անկման իրավիճակում, ավիաջոկատից օդ է բարձրացել միակ սարքին ինքնաթիռը, որի օդաչուների թվում են եղել կապիտան Ղուլյանը, մեխանիկ

---

[1] Տե՛ս **Հովհաննիսյան Ռ.,** Հայաստանի Հանրապետություն, հատոր III, էջ 416:

[2] Տե՛ս **Հովհաննիսյան Արծ.,** Հայաստանի առաջին հանրապետության զինված ուժերի սպառազինությունը, Հայոց պատմության հարցեր: Գիտական հոդվածների ժողովածու /Խմբ. խորհուրդ՝ Ա. Մելքոնյան, Ա. Խառատյան և ուրիշներ/, Եր.: Պատմ. ինստ., 2012, էջ 178:

[3] Տես **Հարությունյան Կլ. Ա.,** Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945 թթ., Եր., 2012. էջ 35:

Ռ. Բաբայանը և պորուչիկ Խորոզովը: Ըստ Ռաֆայելյանցի կողմից ներկայացված տեղեկանքի, այդ ինքնաթիռը օդ բարձրանալով նախ փորձել է իր գնդացրային կրակով օգնել հայկական զորամասերին, իսկ այնուհետև ուղևորվել դեպի Երևան: Ըստ Ռաֆայելյանցի հայտնած տեղեկության, մյուս օդանավը փորձել են տեղափոխել երկաթգծի կայարան և տանել Ալեքսանդրապոլ, սակայն այդ փորձն ձախողվել է: Ինչպես ցույց են տալիս փաստերը, Ֆրանսիայից բերված ինքնաթիռների հետ միասին հայկական ավիաջոկատը պիտի ունենար առնվազն 9-10 ինքնաթիռ, իսկ Ռաֆայելյանցը հայտնում է, որ հոկտեմբերի 30-ին Կարսի ճակատում եղել են երկու ինքնաթիռ՝ մեկը սարքին, մյուսը՝ անսարք: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ մինչև հոկտեմբերի 20-ը ինքնաթիռները վերանորոգման մեջ են եղել, նշանակում է, որ դրանք նաև ակտիվորեն կիրառվել են: Այն ժամանակ ՀՀ օդուժի առաջնահերթ մարտական խնդիրը համարվել է ռազմական հետախուզությունը, որի համար էլ, հավանաբար, գործնականում կիրառվել են ինքնաթիռները, և ըստ էության մոտ 30 ռմբանետմանը կարող էր բաժին հասնել մինչև երեք-չորս հետախուզական թռիչք: Կարելի է այս ամենից եզրահանգել, որ, ամենայն հավանականությամբ, օդանավերի որոշ քանակ եղել է նաև Ալեքսանդրապոլում, իսկ հոկտեմբերի 30-ի դրությամբ ռազմաճակատին մոտ են եղել ոչ բոլոր ինքնաթիռները, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Ալեքսանդրապոլում գործող օդանավակայան կար և գեներալ Մ. Սիլիկյանի շտաբն էլ այնտեղ էր: Հետաքրքիր է արձանագրել նաև այն փաստը, որ պատերազմական իրադրությունում ինքնաթիռներն օգտագործվել են նաև անհրաժեշտ կապի ապահովման համար[1]:

Այն, որ հայկական օդուժը փորձել էկայանալ, այլև եղել է 1920 թ. աշնան վերջնամասի՝ հոկտեմբերի 30-ի կարսյան իրադարձությունների հորձանուտում և այս առումով միանգամայն հետաքրքիր է Կարսի օդանավային ջոկատի զինվոր Արամ Ռաֆայելյանցի պատմածից մի դրվագ, երբ թուրքերին հաջողվում է գրավել Կարսի բերդի հայտնի ֆօրտերից մեկը՝ Ռադիևսկու ֆօրտը՝ հրետանային և գնդացրային

[1] Տե՛ս **Հովհաննիսյան Արծ..,** Հայաստանի առաջին հանրապետության օդուժը, «Հայ զինվոր», 2018, N 17 (1264) 24.10.2018 – 30.10.2018:

կրակ տեղալով հայկական հապճեպ նահանջող զորքերի վրա. *«Ժամը 12-ին Լազարևի ֆորտի մոտ նկատեցի թշնամու ճնշման տակ նահանջող մեր զորամասերի զորաշղթաները, որոնք շարժվում էին դեպի երկաթուղային կամուրջը: Այդ նույն ժամանակ օդանավակայանի պատուհանի մոտ պայթեց թշնամու արկը: Թշնամու հարձակվող զորամասյուների շարժումը ժամանակավորապես կանգնեցնելու նպատակով ավիացիոն ջոկատի հրամանատարը հրամայեց պայթեցնել կամուրջը: Զինվորները չհասցրեցին դա անել և տեսնելով, որ թուրքերը մոտենում են օդանավակայանին, մենք բաց թողեցինք մի մեքենա-ապարատ [ինքնաթիռ], որը հաջողությամբ թռավ կապիտան Ղուլյանի և պորուչիկ Խորոզովի հետ: Անսարք ապարատը փորձեցինք տանել կայարան, բայց քանի որ այն ևս գրավվել էր թուրքերի կողմից, սրիպված էինք ապարատը թողնել քաղաքում և մեր նահանջող զորամասերի հետևից շարժվել դեպի Միջնաբերդ ֆորտը: Օդ բարձրացած ապարատը գնդակոծում էր թշնամուն գդացրային կրակով, վերջինս պատասխանում էր համազարկերով»*[1]:

Խորհրդային իշխանությամբ հաստատմամբ հայ օդաչուների ճակատագիրը կտրուկ հեղաբեկումների ենթարկվեց, և դրանում խիստ բացասական դեր խաղաց Մոսկվայից արտակարգ լիազորություններով ՀՀ ժամանած Համառուսաստանյան Արտակարգ հանձնաժողովի ներկայացուցիչ Գ. Աթարբեկյանը, որը 1921 թ. հունվարի 20-ին կարգադրեց նախկին սպաներին ցուցակագրել՝ Հայաստանի տարածքում հավաքակետեր նշանակելով. Ըստ կազմված երրորդ ցուցակի, որը կազմված էր հունվարի 21-ին օդային նավատորմի պետի կողմից և ուղարկվել ՀԽՍՀ Հեղկոմին, հիմնականում տեղ էին գտել Առաջին հանրապետության օդուժի համակարգի սպաներն ու մասնագետները, այդ թվում ավիաջոկատի նախկին հրամանատար Արթուր Գուլյան-Ռիլսկին, շտաբի պետ Ռուբեն Հակոբի Բաբայանը, դիտորդ-օդաչուներ Միխայիլ Զահինչկովսկին, Նիկոլայ Նուրովը, նախկին օդաչու, իսկ արդեն տվյալ ժամանակ տնտեսական մասի պետ Նիկոլայ Իվանի Խորոզովը, գործավար Սեդրակ Տեր-Ստեփանյանը և ուրիշներ[2]:

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 79:

[2] Տե՛ս նույն տեղում, գ. 17, թ. 10-11:

Ինչպես տեսնում ենք, Հայաստանի առաջին հանրապետությունն ունեցավ իր առաջին օդաչուները՝ նախկին ռուսական բանակից մնացած Արթուր Գուլյան-Ռիլսկին, որը ավիաջոկատի հրամանատարն էր, շտաբի պետ Ռուբեն Հակոբի Բաբայանը, Միխայիլ Զաինչկովսկին, դիտորդ-օդաչու Նիկոլայ Նուրովը: Այսպիսով, 1920 թ. գարնանը արդեն ձևավորված ավիաջոկատի հաստիքակազմում էին նաև օդաչուներ Մ. Խայանը, Գ. Երվանդյանը, Պ. Վերժբիցկին, Յ. Սադովսկին, ինչպես նաև դիտորդ-օդաչուներ վրը հիշված Ն. Նուրովը, Վ. Աբովյանցը, Ն. Խորոզովը, շարժիչագործներ Ա. Ռաֆաելյանցը, Ռ. Բաբայանը, Ս. Եղիազարյանը, Ս. Զադոյանը, ինչպես նաև գլխավոր մեխանիկի օգնական Ս. Բաղդասարովը և ուրիշներ[1]:

Արթուր Գուլյանը Աթարբեկյանի կողմից 1921 թ. հունվարի 20–ի կարգադրությամբ հայտնվել էր հանիրավի ձերբակալվածների ցուցակում (N 3)[2]: 1922 թ. հոկտեմբերի 8-ի դրությամբ Արթուր Գուլյան-Ռիլսկին Հայկական հրաձգային դիվիզիայի ավիաէսկադրիլիայի հրամանատարն էր[3]:

Օդուժի կազմակեպմանը զուգահեռաբար կարևորվում էին լճային նավատորմի ստեղծման հարցերը: 1919 թ. մարտի 24-ին Ռազմական գերատեսչության գծով հրամանագրով հաստատվում է Սևանի (Գոկչայի) լճային նավատորմի հաստիքները. սպա՝ 6, նավաստի՝ 25, գնդացրորդներ՝ 12, բոցման՝ 1, մոտորիստ և վարորդ՝ 3, փականագործ՝ 2 հոգի և այլն[4]: 1919 թ. մայիսի 7-ին (N 0300) գեներալ-մայոր Արարատյանը և Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար Մ. Զինկևիչը ՆԳ նախարարին ուղված պաշտոնագրում հայտնում էին, որ իրենք Ելենովկա են գործուղել լեյտենանտ Նիկիֆորակիին և Տարանովսկուն՝ Սևանի լճային նավատորմիղի անհապաղ կազմակերպման համար: Սույն գրության մեջ խնդրվում էր անհապաղ կարգադրություն անել Նոր Բայազետի և Դիլիջանի գավառապետերին և կոմիսարներին

---

[1] Տե՛ս **Кушнерёв В. Вл.,** История становления отечественной военной авиации в Кавказском регионе в 1914–1930-егг. Специальность 07.00.02–Отечественная история Диссертация на соискание учёной степени канд. ист. наук. Краснодар, 2020, с. 109:

[2] Տե՛ս **«Հայ զինվոր»**, Երևան, հունիս, 1994, N 14 (28):

[3] Տե՛ս **ՀԱԱ**,, ֆ. 818, ց. 1, գ. 61, թ. 3:

[4] Տե՛ս նույն տեղում, ֆ. 204, ց. 1, գ. 132, թ. 317հակ.:

ամեն կերպ աջակցություն ցուցաբերելու լեյտենանտ Նիկիֆորակիին և Տարանովսկուն[1]:

Ինչպես արդեն նշել ենք, Սևանա *լճի նավատորմի ստեղծման հիմքը դրվել է 1919 թ. մայիսին*[2]: ՀՀ ֆինանսների նախարարության բյուջետային-գանձապետական բաժնին ուղղված Զինվորական նախարար Քր. Արարատյանի 1919 թ. սեպտեմբերի 15-ի (N 10146) գրությունից պարզվում է, որ համաձայն Նախարարների խորհրդի օգոստոսի 8-ի (N 136) օրագրային գրառման, իր տրամադրության տակ է դրվել Սևանա լճում հայկական նավատորմիղ ստեղծելու համար 100 հազար ռ. վարկ, նախարարի կարգադրագրի համաձայն այն Երևանյան գանձապետարանի միջոցով այն դնելով ՀՀ Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի տրամադրության տակ[3]: Ի լրացումն 1919 թ. սեպտեմբերի 15-ի (N 10146) գրության Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատարը սեպտեմբերի 22-ին (N 10146) ֆինանսների նախարարության գանձապետական բաժնին խնդրում էր կարգադրություն անել 100 հազար ռ. վարկ բաց թողնել Սևանա լճում նավատորմիղ ստեղծելու համար՝ հատուկ պարագրաֆի համաձայն[4]:

Դիտարժան է ՀՀ Զինվորական նախարար Քր. Արարատյանի 1919 թ. հոկտեմբերի 17-ի (N 413) հրամանագիրը, որում նշվում էր, ***որ սեպտեմբերի 12-ին ժամը 12-ին Սևանա լճում Ելենովկա գյուղի մոտ Սևանի վանքի վանահայր, ծայրագույն վարդապետ Արիստոտելի աղոթքից հետո տեղի է ունենում առաջին հայկական զինված առագաստանավի՝ «Աշոտ Երկաթ» ռազմաբեռնատար երկկայմ շարժիչավոր նավի ծով իջեցումը***, որն ուներ 1000 փութ բեռնատարողություն, մեկ հրանոթ, 2 գնդացիր և մեկ լուսարձակ[5]: Հանդիսավոր արարողությանը մասնակցել են Զինվորական նախարար Քր. Արարատյանը, Զինվորական նախարարի օգնական գեներալ Մ. Սիլիկյանը, զորքերի հրամանատարի Գլխավոր շտաբի պետ գեներալ-մայոր Հովի. Հախվերդյանը, Երևանյան զորաջոկատի հրամանատար Դրոն, Զին-

[1] Տե՛ս նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 60, թ. 27:
[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց. 5, գ. 79, թ. 52:
[3] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 202, ց. 1, գ. 303, մաս I, թ. 96:
[4] Տե՛ս նույն տեղում, թ. 98:
[5] Տե՛ս **Հայոց պատմություն,** հատոր IV, էջ 51:

վորական նախարարության Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար գնդապետ Ալ. Շնեուրը, Գլխավոր շտաբի բաժանմունքի պետի օգնական, Ծովակալության գծով պորուչիկ Խան-Կոտուրսկին, Սևանի լճային նավատորմիղի պետի պաշտոնակատար Նիկիֆորակին, նավի հրամանատար լեյտենանտ Տարանովսկին, նավի տնտեսության կառավարիչ պոդպորուչիկ Օլեյնիկովը, գարդեմարինի պաշտոնակատարը մեխանիկն էր, որը Նիկոլայ Ի-ի անվան կայսերական ծովային ուսումնարանի շրջանավարտ Սերգեյ Թումանյանն էր, պառլամենտի անդամ Ռ. Տեր-Մինասյանը, ՆԳ նախարարի օգնական Ս. Մանասյանը, Նոր Բայազետի քաղաքագլուխ Աֆրիկյանը[1]: Սևանի լճային նավատորմիղի հրամկազմը հետևյալ պատկերն ուներ. Բոցմանը Ավետիս Կարապետյանն էր, ավագ վարպետը՝ Գալուստ Նիկողոսովը, փականագործները՝ Արիստակես Ասլանովը, Դանիել Նիկողոսովը, ավագ նավաստիներ՝ Կուրշուտ Հովհաննեսովը, Սեմյոն Հովհաննեսովը, Մարգար Ղուկասովը, նավաստիներ՝ Հակոբ Բուռնազովը, Վիրաբ Ղուկասովը, Սարգիս Վարդանովը և ուրիշներ, գնդացրորդներ՝ Կարապետ Հակոբովը, Արամայիս Կուկոյանցը, Հովսեփ Սահակովը և այլք՝ ընդամենը 11 հոգի: Իսկ արդյունքում բոլորը միասին կազմում էին 44 հոգի՝ համաձայն Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար, գնդապետ Աթաևի կողմից ներկայացված ցուցակի[2]:

Նավատորմիղի առաջին քայլերի մասին խոսուն վկայություն կա նաև Ալ. Խատիսյանի մոտ. «Պետական շինարարութեան վերջին մշակութային գործը այդ շրջանին պէտք է համարել Սեւանայ լճի վրայ առաջին հայկական նաւը բաց թողնելը: Նաւի անունն էր «Աշոտ Երկաթ», որի տարողությունը 1000 փութ էր: Ես գացի այդ հանդէսին՝ բանակի բարձր պաշտոնեաներու եւ խորհրդարանի անդամներու հետ: Մեր նաւը կառուցուած էր Սեւանայ լճի ափին, անոր վրայ տեղաւորուած էր թնդանօթ մը եւ դրուած էր շոգեմեքենայ: Մենք յատկացուց էինք այդ նաւը ափերուն ծառայելու՝ ապրանքներ տեղափոխելու եւ ափերը պաշտպանելու համար: Նավի կայմի վրայ բարձրացաւ հայկական

[1] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 204, ց. 1, գ. 132, թ. 166-167: **Հարությունյան Կ.,** Հայաստանի Հանրապետության բանակը 1918-1920 թվականներին, «Հայ զինվոր», թիվ 9 (23), հունիս, 1994:

[2] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 204, ց. 1, գ. 132, թ. 167:

եռագույն դրօշակը...*Մեզ կը թուէր, թէ մենք հայ նաւատորմի նահապետի օծման հանդէսը կը կատարէինք: Արտասանուեցան* շատ ոգեւորիչ ճառեր, եւ ընդհանրապէս տրամադրութիւնը խիստ բարձր էր:

Երկրորդ նաւը, այն է, Բաթումէն բերուած շոգեշարժ նաւակը, կարճ ժամանակէն նոյնպէս բաց պիտի թողնուէր լճի վրայ»[1]: 1920 թ. սեպտեմբերին Շահթախթից Սևանա լիճ փոխադրվեց ռուսական նավատորմի *«Սեստրիցա Քսյուշա»* նավը, որը Հայաստան էր բերվել դեռևս Առաջին աշխարհամարտի տարիներին՝ Վանա լիճ փոխադրելու համար: Այն վերանվանվեց *«Գեղանուշ»*[2], որի փոխադրության համար ՀՀ կառավարությունը 1920 թ. հոկտեմբերի 26-ին որոշեց նախա-պես տրված 2 միլիոն ռուբ. Ավանսից զատ բացել նաև 360 հազար ռուբ. վարկ՝ Զինվորական նախարարությանը[3]:

Հետաքրքիր է նշել, որ Սևանա լճի նավատորմիղը 1920 թ. մայիսի 1-ից մինչև օգոստոսի 1-ը կատարել է 76 տարբեր ուղերթ՝ անցնելով 6448 վերստ [1 կմ=0,937 վերստ] տարածք, այդ ընթացքում փոխադրելով 342 մարդ և 12796 փութ բեռ, որից՝ 9298 համբարակային, 1396 փութ հրետանային և 2130 փութ այլ նախարարությունների: Այդ շրջանում նավատորմիղի պետը լեյտենանտ Տարանովսկին էր[4]:

Հայկական նավատորմի կայացման հետագա գործընթացների մասին է վկայում ՀՀ ռազմական նախարարության 1920 թ. սեպտեմբերի 30-ի զեկուցումը Նախարարների խորհրդին, որով հայտնվում էր, որ *«Սեստրիցա Քսյուշա»* նավը երևանից Ելենովկա տեղափոխելու համար փոխգլխապետ Ղազարյանի ներկայացրած նախահաշվի պահանջվում է 5.125.000 ռուբլի, որպեսզի գումարը խնդրվում էր բաց թողնել և դնել Ռազմաճարտարապետական վարչության պետի տրամադրության տակ[5]:

---

[1] Տե՛ս **Խատիսեան Ալ.,** Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, էջ 209:

[2] Տե՛ս **Հարությունյան Կ. Ա.**, նշվ. աշխ., էջ 35-36:

[3] Տե՛ս **Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ,** էջ 580:

[4] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 150, ց. 1, գ. 7, թ. 106-108:

[5] Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 190, թ. 118:

1918-1920 թթ. օդային և ջրային նավատորմի ստեղծման բնագավառում ՀՀ կառավարության, ռազմական այրերի և ազգային-քաղաքական ուժերի գործադրած ջանքերը ՀՀ-ում ընթացած բանակաստեղծ գործընթացների հիրավի անմոռաց էջերն են, հայկական պետականության կայացման գրավականը և ապագայի հույսը: Կարելի է գալ եզրահանգման, որ Առաջին Հանրապետության ժամանակ գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական դժվարագույն կացության, գրեթե մշտական շրջափակման, սովի և մաուզերիստական անարխիայի պայմաններում, այդուհանդերձ գտնվել են նվիրյալներ, որոնց համար եղել են կարևոր առաջնահերթություններ, որոնց շարքում կարևոր տեղ են զբաղեցրել հայկական օդուժի ստեղծման խնդիրները, որոնց ավանդույթները շարունակվեցին Երկրորդ և Երրորդ հանրապետությունների օրոք:

1918-1920 թթ. հայկական օդուժի հարցերը դեռ սպասում են իրենց հետազոտողներին, քանզի դրանք հայկական զինուժի փառավոր տարեգրության կարևոր էջերից են, որոնք կարող են զարդարել ամեն մի երկրի պատմություն, ուսանելի դառնալ հայ զինվորների, և առաջին հերթին օդաչուների նոր սերնդի համար:

Այս առումով Առաջին հանրապետությունը, նրա օդուժի կայացումը լուրջ փորձություն էին հայ ժողովրդի և հայկական պետության համար, որը դարերի ընդմիջումից հետո կրկին ձեռնամուխ եղավ իր նոր ապագայի կերտմանը:

ԳԼՈՒԽ 8.

ՌԱԶՄԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 1918-1920 ԹԹ.

պ. գ. դ., պրոֆեսոր Վ. Հ. ՎԻՐԱԲՅԱՆ

Առաջին հանրապետությունում բանակաստեղծ գործընթացներին զուգահեռաբար որոշակի քայլեր արվեցին Հայկական բանակի համար անհրաժեշտ և համապատասխան որակական հատկանիշներ ունեցող սպայական կազմ պատրաստելու և ուսուցանելու ուղղությամբ, որը կանոնավոր մարտական բանակի կազմակերպման տեսանկյունից էական հանգամանք է: Բոլոր թերություններով և բացթողումներով հանդերձ, տարաբնույթ փաստաթղթերից համադրական հետազոտությունից ակնհայտորեն երևում է, որ 1918-1920 թթ. ընթացել են լուրջ և ոչ միանշանակ բանակաշինական գործընթացներ, և այդ առումով թե՛ ՀՀ կառավարությունը, թե՛ պառլամենտը և՛ թե զինվորական իշխանությունները տվյալ բնագավառում ծավալել են բազմաբնույթ աշխատանքներ՝ դրանք նպատակամղելով բանակի կազմակերպմանը և նրա մեծացմանը, վերջինիս սպայական և այլ կադրերի պատրաստմանը: Բերենք ընդամենը մի փաստ. 1920 թ. նոյեմբերի 10-ին ռազմական գերատեսչության գծով հրամանագրում (N 138) Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար Աթաևը ի տեղեկություն հայտնում էր, որ Զինվորական նախարարի հրաման է արձակել Զինվորական նախարարության Երևանում գտնվող զորամասերին,, վարչություններին և հաստատություններին՝ Գլխավոր շտաբ ներկայացնել այն անձանց ցուցակները, որոնք կցանկանան գրվել որպես այդ ֆակուլտետի ունկնդիրներ՝ դրանք Հանրային կրթության նախարարություն ուղարկելու համար[1]:

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 204, ց. 1, գ. 132, թ. 273:

Երևանում կազմավրված հայկական համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետում 1920 թ. հունվարի 28-ին Նախարարների խորհուրդը լսում է Զինվորական նախարարի զեկուցումը ***«Գեներալնի շտաբի սպայական կուրսեր և նախապատրաստական ուսումնարան բանալու և այդ նպատակով 1.328.412 ռուբլու վարկ բաց անելու»*** մասին: Քննարկելով սույն ուշագրավ զեկուցումը, Նախարարների խորհուրդը որոշում է սկզբունքով ընդունել և առաջարկել զինվորական Գլխավոր շտաբին մտցնել ընդհանուր նախահաշվի մեջ[1]: Այս առումով հետաքրքրություն են ներկայացնում նաև այսպես կոչված Հայաստանի Փոքր խորհրդի բանակաշինության և առհասարակ ռազմական գործի, անվտանգության համակարգի ձևավորման խնդիրների հետ այս կամ այն կերպ առնչվող որոշումները: Այսպես, Հայաստանի Փոքր խորհուրդը 1920 թ. մայիսի 24-ի իր նիստում լսում է Զինվորական նախարարի զեկուցումը ***«Հատուկ բարձրագույն հանձնաժողով»*** կազմելու մասին: Ընդունված բանաձևում որոշվում է սկզբունքորեն համաձայնվել ներկայացված առաջարկի հետ, նշելով վերջինիս արժեքավորությունը, և ըստ այդմ ի նկատի ունենալով գործի կարևորությունը և լրջությունը, հարցը լուծելու համար այն մտցնել պառլամենտ[2]: 1920 թ. հունիսի 3-ի նիստում Հայաստանի Փոքր խորհուրդը լսում է ՀՀ ռազմական նախարարի զեկուցումը բարձրագույն շրջանի դասընթացների և սպայի նախապատրաստական դպրոցի նախահաշվին հատկացումների հաստատման մասին: Ընդունված որոշմամբ այն լիովին հաստատվում է[3]:

1920 թ. հուլիսի 10-ին Նախարարների խորհուրդը հաստատում է Զինվորական նախարարի ներկայացրած նախահաշիվը շտաբի դասընթացների սպայից նախապատրաստական դպրոցի մասին[4]:

1920 թ. սեպտեմբերի 6-ին ռազմական նախարարի կողմից ռազմական դպրոցի բացման նախագիծ է ներկայացվում և 16-ին ՀՀ Նախարարների խորհրդի նիստում քննարկվում է Զինվորական նախարարի զեկուցումը ռազմական դպրոցի կանոնագրի և նախահաշվի մա-

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 199, ց. 1, գ. 146, մաս I, թ. 19: ֆ. 202, ց. 1, գ. 107, մաս I, թ. 26 հակ.:

[2] Նույն տեղում, ֆ. 199, ց. 1,գ. 237, թ. 10:

[3] Նույն տեղում, թ. 26:

[4] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 201, ց. 1, գ. 492, մաս II, թ. 115: **«Հայ զինվոր»,** հունիս, 1994, N 9 (23):

սին: Ընդունված որոշմամբ հաստատվում է դպրոցի բյուջեն շուրջ 40 հազար ընդհանուր գումարի չափով և հանձնարարվում կրթական ծրագիրը համաձայնեցնել հանրային կրթության նախարարության հետ, որից հետո այն բերել Նախարարների խորհրդի քննությանը դնելու: Ըստ այդմ անձնարարվում է ներկայացնել ռազմական դպրոցի համառոտ կանոնադրությունը, հաստատությունը կառավարելու օրինագիծը և նախահաշիվը, հաստիքը, որոնք հաստատվում է, թույլատրել ռազմական դպրոցի հիմնումը Ալեքսանդրապոլում, ըստ այդմ հաստատել նախատեսված ծախսերը[1]:

1920 թ. սեպտեմբերին Ալեքսանդրապոլում սկսվեցին զինվորական գիմնազիայի, իսկ Կարսում՝ մեկամյա ուսուցմամբ զինվորական ուսումնարանի կազմակերպման աշխատանքները, և այդ նպատակադրման իրականացման համար ՀՀ կառավարության օգոստոսի 16-ի որոշմամբ (N 14209), գիմնազիայի 3 դասարանների կահավորման և մինչև 1921 թ. հունվարի 1-ի ծախսերի համար պետական գանձարանի սուղ միջոցներից հատկացվեց 24.495.380 ռուբլի՝ համաձայն Նախարարների խորհրդի սեպտեմբերի 18-ի որոշման, ուսումնարանի համար՝ 36.129.513 ռուբլի[2], իսկ գիմնազիայի վերանորոգումը անհրաժեշտորեն պետք է իրագործվեր բնակարանային վարչության հաշվին: Ըստ ՀՀ կառավարության կողմից նախատեսված ծրագրի, զինվորական գիմնազիայում, որում պետք է սովորեր 350 սան, ընդգրկվելու էին առավելապես զինծառայողների՝ հայկական բանակի սպաների, դասային աստիճանավորների, զինվորական բժիշկների, ինչպես նաև որբանոցների 10-12 տարեկան ծնողազուրկ երեխաները: Ուսումնական ծրագրի համաձայն, ուսումնական գործընթացը զինվորական գիմնազիայում տևելու էր 7 տարի՝ նպատակ հետապնդելով գիմնազիայի սաներին մտավորապես, բարոյապես և ֆիզիկապես նախապատրաստել զինվորական ուսումնարան ընդունվելու համար: Իսկ մեկամյա ժամկետով զինվորական ուսումնարանում պետք է պատրաստվեին անհրաժեշտ սպայական կադրեր հետևազորի, հրետանային զորքերի և

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 201, ց. 1, գ. 591, թ. 198 հակ.:

[2] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 199, ց. 1, գ. 190, թ. 8-9, ֆ. 199, ց. 1, գ. 118, թ. 206, **Կարապետյան Մ.,** Հայաստանի Հանրապետության բանակը (1918-1920), էջ 74:

հեծելազորի համար: Զինվորական ուսումնարանում սովորելու էին 17-28 տարեկան միջնակարգ կրթությամբ և զինվորական գիմնազիան հաջողությամբ ավարտած ընդամենը 145 յունկերներ, ընդ որում շրջանավարտները ավարտելու պահին ստանում էին պոդպորուչիկի սպայական աստիճան[1]: Կառավարությունը խորապես զգում էր այդ խնդրի իրագործման կարևորությունը Հայկական բանակի և անվտանգության համակարգի կայացման տեսանկյունից, ինչի մասին նշվում էր ՀՀ կառավարության 1920 թ. օգոստոսի 16-ի որոշման մեջ (N 14209). «Համակողմանի պատրաստականութիւն ունեցող սպայական կազմը ամենալաւ գրաւականն է բազմակողմանի ռազմական պատրաստութեան:

Ներկայ ժամանակ սպաների կադրը, այսինքն այնպիսի սպաների, որոնք սովորել են կադետական կորպուսներում եւ զինուորական դպրոցներում, Հայաստանում սաստիկ աննշան տոկոս է կազմում. Մնացած սպայութիւնը բաղկացած է նախկին վառատարների դպրոցների սաներից, այն է՝ այնպիսի մարդկանցից, որոնք ունեն շատ թեթեւ հասկացողութիւն Ռազմական գիտութեան մասին եւ յաճախ իրենց պատրաստակամութեամբ չեն համապատասխանում ժամանակակից բարդ Ռազմական գործին:

Մօտիկ ապագայում բանակը զգալու է Ռազմական պատրաստականութիւն ունեցող սպայական կազմի պակաս:

Հոգ տանելով բանակի մարտունակութիւնը, ինչպէս եւ ապագայ սպայութեան ընդհանուր եւ ռազմական գիտական պատրաստականութիւնը բարձրացնելու, անհրաժեշտ [են] գտնում շտապ կարգով բանալ Ռազմական գիմնազիոն և ռազմական դպրոց:

Հայաստանի ապագա սպայութիւնը եւ ընդհանուր ռազմական պատրաստակամութեամբ չը պէտք է ցածր լինի իւր հարեւանների, վրացիների եւ ադրբէյջանցիների սպայութիւնից»[2]:

1919 թ. դեկտեմբերի 30-ին Հայաստանի պառլամենտի կողմից օրենք է ընդունվում Հայաստանի ազատագրության կռվում զոհվածների զավակներին դպրոցական պիտույքներ մատակարարելու համար

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 199, ց. 1, գ. 190, թ. 8-9:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 303, մաս I, թ. 109, գ. 190, թ. 9:

վարկ բացելու մասին[1]: 1920 թ. հունվարի 5-ին ՀՀ պառլամենտի նախագահ Լ. Շանթի նախագահությամբ հաստատում է «Հայաստանի ազատագրության կռվում ու պաշտպանության և հայ ժողովրդի ինքնապաշտպանության համար զոհվածների զավակներին ձրի դասական պիտույքներ մատակարարելու մասին» օրենքը, ըստ որի պետության հաշվին ձրի պիտույքներ պետք է մատակարարվեին, ինչպես նաև հանրապետության դպրոցներում սովորող բոլոր այն չքավոր դպրոցականներին, որոնց ծնողները զոհվել էին Հայաստանի ազատագրության և պաշտպանության համար[2]:

ՀՀ բանակի կայացման տեսանկյունից կարևորվեց ոչ միայն ուսուցման կազմակերպման հարցը, այլև հայրենիքի առաջ մատուցած ծառայություններում աչքի ընկած զինվորների, սպայական-հրամանատարական կազմի բարոյական-քաղաքական խրախուսման համակարգ ձևավորումը, որը բխում էր ազգային ավանդույթներից: 1919 թ. մայիսի 26-ին ՀՀ պառլամենտի կողմից ընդունվում է օրենք ***«Հայրենիքին արած ծառայության համար»*** մակագրությամբ հայկական առաջին շքանշանի հրատարակելու համար 20 հազար ռուբլի վարկ բանալու մասին[3]: Այդ նույն օրը ՀՀ կառավարության կողմից որոշում է ընդունվում հայ ազատության հերոսների հիշատակին Հայաստանի մայրաքաղաքում հուշարձան կանգնեցնելու համար ֆոնդ հիմնել և 1919 թ. ապրիլի օրենքի համաձայն այդ ֆոնդին հատկացնել 125 հազաև ռ., ինչպես նաև համաձայն 1919 թ. ապրիլի 27-ի օրենքի, Հանրային կրթության առաջարկով վերջինիս բացել վարկ 285 հազար ռ. չափով՝ հայ ազատագրության վերջին էջը հրատարակելու մասին[4]: 1920 թ.-ի հունիսի 7-ին ՀՀ ռազմական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը, նախարարի տեղակալ Հովհաննես Հախվերդյանը ու ռազմական նախարարության Գլխավոր շտաբի պետ Բոգդան Բաղդասարյանը ներկայացրել են Համո Օհանջանյանի կառավարությանը ***«Վար-***

[1] Տե՛ս նույն տեղում, ֆ. 202, ց. 1, գ. 41, թ. 111:

[2] Տե՛ս նույն տեղում, գ. 303, մաս I, թ. 72:

[3] Տե՛ս **Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները,** էջ 86, **ՀԱԱ**, ֆ,. 199, ց. 1, գ. 65, թ. 63:

[4] Տե՛ս **Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ,** էջ 201-202:

դան Զորավար» ու ***«Տրդատ Մեծ»*** պարգևների սահմանման մասին առաջարկ: 1920 թ. հուլիսի 2–ին ՀՀ պառլամենտի կողմից օրենք է ընդունվում «Սուրբ Վարդան զորավար» շքանշանը՝ համաձայն կցված նկարագրության և օրինագծի[1], և նույն օրը Նախարարների խորհուրդը լսելով Զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանի զեկուցումը «Սուրբ Վարդան Զորավար» և «Մեծն Տրդատ» շքանշանների հաստատման մասին և այն հաստատում՝ ներկայացրած ձևով-կանոններով: Հուլիսի 2-ին Նախարարների խորհուրդը օրենք է հաստատում «Վարդան Զորավար» շքանշան հիմնադրելու մասին, իսկ «Մեծն Տրդատ» շքանշանի հաստատման մասին օրենք չի ընդունվում[2]: Շքանշանները պատրաստված էին նշանավոր նկարիչ Հակոբ Կոջոյանի նախագծով, իսկ մրցույթի հանձնաժողովի նախագահը ճարտարապետ ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանն էր: Շքանշանների էսքիզները չեն պահպանվել:

Կառավարությանը ներկայացված Ռ. Տեր-Մինասյանի զեկուցագրից պարզ է դառնում, որ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ աստիճանի «Սուրբ Վարդան զորավար» շքանշանով կարող էին պարգևատրվել անձնական խիզախություն ցուցաբերած սպաներն ու զինվորները, իսկ 5-րդ և 6-րդ աստիճանով՝զորամասերի, շտաբների հրամանատարներն ու պետերը՝ մարտական մուտ ղեկավարության համար: «Սուրբ Վարդան զորավար» շքանշանը համապատասխանում էր ռուսական Գեորգիևյան խաչին և այն շնորհվում էր ռուսական բանակում գոյություն ունեցող կանոնների համաձայն՝ մինչև սեփական կանոնադրության մշակումը: «Մեծն Տրդատ» շքանշանով պարգևատրվում էին սպաները՝ հատուկ ծառայությունների համար, որով կարող էին պարգևատրվել նաև քաղաքացիական անձինք՝ հատուկ ծառայությունների համար, ընդ որում բացի շքանշանից, պարգևատրված սպաներին հանձնվում էր նաև զենք, սովորաբար սուր[3]:

Իսկ արդեն 1920 թ. հոկտեմբերի 15-ին Գլխավոր շտաբի պետ, գնդապետ Բոգդան Բաղդասարյանի կողմից ՀՀ Արտգործնախարա-

[1] Տե՛ս **Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները**, էջ 357:
[2] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 199, ց. 1, գ. 146 ա, թ. 137: գ. 154, թ. 137-138:
[3] Տե՛ս նույն տեղում, գ. 154, թ. 139:

րին ուղարկած գրությունից պարզվում է, որ հայկական շքանշանները դեռևս պատրաստ չեն, սակայն դրանց փոխարեն թույլատրվում է շնորհել հատուկ ժետոններ՝ պետական զինանշանի պատկերով[1]: Հայկական բանակում որպես ռազմական հրահանգիչ ծառայող բրիտանացի սպա Օլիվեր Բոլդվինի հուշերից հայտնի է դառնում, որ նա պարգևատրվել է այդ շքանշաններից մեկով, սակայն թե որով՝ պարզ չի[2]: ***«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ»*** շքանշանը սահմանվել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի կողմից: Շքանշանի վրա նշված է 1911 թվականին: Ըստ «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանի շքանշանի սահմանման տարեթիվը հենց 1911 թվականն է, սակայն որևէ ակնարկ պարգևի մասին չկա մինչև 1919 թ. հոկտեմբերի 1-ը, երբ կաթողիկոսը շնորհում է այն Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի ռազմական ներկայացուցիչ կապիտան Անտուան Մարի Ժոզեֆ Պուադեբարին[3]: Նույն պարգևը շնորհվում է նաև Մեծ Բրիտանիայի Անդրկովկասում կոմիսարի հայաստանյան ներկայացուցիչ կապիտան Ջ. Ֆ. Գրեյսիին[4] 1920 թ. հունվարի 24-ին, որը ռազմական շրջաններում հայտնի էր հետախուզական գործունեությամբ: 1920 թ. մարտին Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանը մեկնում է Լոնդոն ու այցելության ընթացքում տեղի առաջնորդ Աբել վարդապետ Նազարյանի հետ միասին որոշում են շքանշանի կարգերը ու տեսակները՝ շնորհելով նրան երկու տեսակ ու երեք կարգ: Այդ ժամանակ Լոնդոնում էր գտնվում նաև Արշակ Ֆետվաճյանը, ով հնարավոր է մասնակցել է շքանշանի ձևավորման աշխատանքներին[5]: 1920 թ. հոկտեմբերի 14-ին շքանշանը շնորհվում է ամերիկաբնակ հայ դոկտեր

---

[1] Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 442, մաս II, թ. 557:

[2] Տե՛ս **Բոլդվին Օլիվեր**, Վեց բանտ և երկու հեղափոխություն, էջ 200:

[3] **Պուադեբար Անտուան** (1878 -1955 թթ.) –հնագետ, պատմաբան, օդաչու, քարտեզագիր, միսիոներ, որը լավ հայերեն գիտեր: Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի ռազմաքաղաքական ներկայացուցիչ, սպա: Տե՛ս **Տեր-Միհնասյան Անահիտ,** Անտուան Պուադեբարը և Հայաստանը, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2004, N 2 (104), էջ 79-105:

[4] Ջ. Ֆ. Գ. Գրեյսին լավ տիրապետում էր հայերենին, քրդերենին, վկայում է նաև Թիֆլիսում ՀՀ ներկայացուցչության խորհրդական Մ. Թումանյանը- Տե՛ս **Туманян М.**, Дипломатическая история Республики Армения. 1918-1920 гг., с. 209, **Հովհաննիսյան Ռ.**, Հայաստանի Հանրապետություն, Հատոր II, էջ 131:

[5] Տե՛ս **Հայաստանի պարգևները (1918-1939),** Երևան, «Կոլլաժ» ՍՊԸ, 2011:

Փառնակ Ադամյանին, 1921 թ. օգոստոսի 1-ին՝ Գալուստ Գյուլբենկյանին, օգոստոսի 7-ին՝ Գրիգոր քահանա Մանդակունիին ու Հանրապետական շաթիր Երվանդ Այվազյանին, սեպտեմբերի 9-ին՝ Զորավար Անդրանիկին ու 1919 թ. նրա ղեկավարած «Հայ կարոտյալների օգնության Մանչեսթերի հանձնաժողով»-ի 7 անդամների, Պողոս Նուբարին, Գաբրիել Նորատունկյանին: Շքանշանները պատրաստվել են Լոնդոնում տեղի առաջնորդի հսկողության ներքո ու տեղափոխվել են Հայաստան, հավանաբար 1921 թ. կեսերին՝ 33 հատ աշխարհական արծաթ, Գ աստիճան,19 հատ հոգևորական արծաթ, Գ աստիճան, 10 հատ աշխարհական ոսկի, Բ աստիճան, 19 հատ հոգևորական ոսկի, Բ աստիճան, 4 հատ աշխարհական ոսկի քարերով, Ա աստիճան, 5 հատ հոգևորական ոսկի քարերով, Ա աստիճան[1]:

Հայաստանի Հանրապետության մեջ մեծ տեղ էր հատկացվում հայրենասիրական դաստիարակությանը, և այդ կապակցությամբ առանձնակի կարևորվում էր նորաստեղծ ***«Բանակի» օրը, որը փոնվում էր դեկտեմբերի 19-21-ի հատվածում***[2]: Դիտարժան է Հայոց բանակին նվիրված տոնի մուտքը Առաջին հանրապետության տոնական համակարգ, որը լավ կլիներ ներկայիս գործընթացների պայմաններում ի ցույց դնել, առավել ևս, որ այն ուղղակիորեն նվիրված է ազգային բանակի ակունքներին[3]: Կային նաև առանձին տոներ՝ նվիրված առանձին զորամասերին և հատուկ իրադարձություններին, որոնց մասին տեղեկանում ենք Զինվորական նախարար Քր. Արարատյանի 1919 թ. հուլիսի 22 հրամանագրից (N 269). այսպես, 1-ին հայկական հետևակային գնդի համար տոնական էր համարվում մայիսի 28-ը, 5-6-րդ հետևակային գնդերինը ևս՝ Հայաստանի անկախության օրը՝ մայիսի 28-ը, ավիացիոն ջոկատինը՝ հուլիսի 15ը, այսինքն՝ սբ. Իլյայի օրը, իսկ 2-րդ բրիգադի պարետային վաշտի շտաբինը՝ հուլիսի 27-ը – Խանասորի մարտի օրը, Երևանի բանակային պահակազորային գումարտակինը՝ հուլիսի 27-ը՝ Վարդավառը. և վերջապես Կարսի պահակա-

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Տե՛ս **«Ժողովուրդ»**, Երևան, 19.XII,1919, էջ 3: 11.XII.1919, էջ 1:24.XII.1919, էջ 2:

[3] Տե՛ս **Մկրտչյան Ս. Ս.,** Հայաստանի Առաջին հանրապետության տոնական համակարգը, **«Լրաբեր Հասարակական գիտությունների»,** 1997, N 3 (596), 160-164:

զորային գումարտակինը՝ Խաղողօրհնության օրը, սբ Աստվածածինի տոնը[1]:

Այդ դժվարին տարիներին լուրջ ուշադրության առարկա եղավ զինվորների ռազմահայրենասիրական դաստիարակության գործը: Հայկական բանակի զորամասերում ինչպես մեր օրերում, առավել ևս այդ օրերին, երբ երկիրը տնտեսական-պարենային աննկարագրելի ճգնաժամի մեջ էր և հեշտ չէր գտնել կուտակված խնդիրների լուծումը, փորձառու և հայկական բանակի գործի նվիրյալների կողմից կարդացվում էին պարբերական դասախոսություններ գիտական և ռազմաքաղաքական հարցերի մասին: Զինվորների համար հրատարակվում էր «Ռազմիկ» շաբաթաթերթը գրական-քաղաքական և ռազմագիտական բովանդակությամբ, որի մասին առաջին քայլը կատարվել էր դեռ կառավարության 1919 թ. դեկտեմբերի 8-ի նիստում՝ հանձնարարելով նախահաշիվ կազմել և ներկայացնել պառլամենտ[2], իսկ արդեն հրատարակման կազմակերպման նպատակով ՀՀ Նախարարների խորհուրդը 1919 թ. դեկտեմբերի 29-ին որոշում ընդունեց Զինվորական նախարարությանը հատկացնել 35 հազար ռուբլի միանվագ և 41 հազար ռուբլի երեք ամսվա համար վարկ բացելու համար[3], սակայն թերթի հրատարակման գործն ընթացավ անհարկի ձգձգումներով, թղթի պակասության և անասելի թանկության պատճառով, և միայն օգոստոսի վերջերին թերթի հրատարակության հարցը 1920 թ. օգոստոսից հաջողվեց լուծել, և այն գործեց 1920 թ. սեպտեմբերից-դեկտեմբեր ընկած ամիսներին Երևանում՝ ունենալով 16 էջ ծավալ[4], չափազանց բարդ ռազմաքաղաքական իրավիճակում: Թերթի հենց 1-ին համարի խմբագրականում շեշտվել էր, որ նրա նպատակը բանակի առողջացմանը և ազգայնացմանը, այսինքն՝ հայացմանը, ռազմահայրենասիրական դաստիարակությանը, հայոց անկախ պետականության կայացմանը սատարելն է: Սակայն 1920 թ. սեպտեմբերի 23-ին սկսված աղետաբեր թուրք-հայկական պատերազմի սկսվելը 1-ին համարի լույս ընծայումից

---

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 204, ց. 1, գ. 132, թ. 103:

[2] Տե՛ս **Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ,** էջ 355-356:

[3] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 200, ց. 1, գ. 22, մաս I, թ. 269, 280:

[4] **Հայ պարբերական մամուլը 1794-1980 թթ.,** Եր., 1988, էջ 137:

հետո ձախողեց «Ռազմիկ» պաշտոնաթաթերթի աշխատանքները, և սեպտեմբերի 30-ին թերթի խմբագրությունը դիմեց հայ զինվորներին՝ թուրքական մահացու վտանգին դիմակայելու կոչով. «Հայ զինվորներ, հայրենիքը նորից վտանգի մեջ է: Թրքական զորքերը դահիճ փաշաների ղեկավարությամբ մտել են մեր երկրի ներսը և սպառնում են Հայաստանի Հանրապետությանը: Արիացե՛ք, հայ զինվորներ, սեղմ ու կուռ շղթաներով դիմեցեք դեպի ռազմաճակատ:...Հայ զինվո՛ր, եղիր քաջ ու հաղթող, Քեզ հետ ենք ամենք: Դեպի կռիվ, դեպի հաղթանակ»[1]: «Ռազմիկ» պաշտոնաթերթի նպատակն էր ծառահել ՀՀ բանակի մարտակրթական կարիքներին, նրա ռազմահայրենասիրական կոփմանը, անդրադարձել է նրանում տեղ գտած խնդիրներին, տեղեկություններ հաղորդել տարբեր տեղերում տեղ գտած ռազմական դեպքերին, նրա զինատեսակներին և այլն: «Ռազմիկ» պաշտոնաթերթի նոյեմբերի 22-ի համարում տպագրվեց հայ հետախույզ Տիգրան Դեվոյանցի պատմական ակնարկը հայկական կոտորածների մասին Թուրքիայում[2]:

«Ռազմիկ»-ից բացի 1920 թ. հոկտեմբերին Կարսում լույս տեսավ ռազմաճակատային «Դիրքերում» թերթը, որում զետեղվել են ռազմաքաղաքական տարաբնույթ նյութեր, տեղեկություններ Կարսի ճակատի ռազմական գործողությունների, Միջկւսակցական խորհրդի միացյալ կոչի և կուսակցությունների համախմբվածության խնդրին մասին: Լույս է տեսել ընդամենը 5 համար և ընդհատվել Կարսի անփառունակ անկման նախաշեմին՝ հոկտեմբերի 22-ին[3]:

«Ռազմիկ»-ը հրատարակվում էր Զինվորական նախարարության շտաբի տպարանում, որը գործում էր 1919 թ. սկսած և այստեղ էին տպագրվել նաև մի շարք զինվորական կանոնագրքեր, ինչպես օրինակ՝ «Հետևազորի հրամաններ»: Հրատարակչական իր գոծառույթներում Զինվորական նախարարությանն հրատարակմանն օժանդակեց նաև Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի տպարանը, որտեղ 1920 թ. հրապա-

---

[1] **Հակոբյան Ա.** Հայաստանի Հանրապետության պարբերական մամուլի պատմություն (1918-1920 թթ.), Եր., Հեղ. Հրատ., 2005, էջ 11:

[2] Տե՛ս **«Ժողովուրդ»**, Երևան, 24 նոյեմբերի, 1920, N 192:

[3] Տե՛ս **Հակոբյան Ա.** Հայաստանի Հանրապետության պարբերական մամուլի պատմություն, էջ 12-13:

րակվեց Գլխավոր շտաբի կազմած «Թեթև հրետազորի շարքի կանոնագիրքը», «Մարտկոցի վարժություն» [Հայ-ռուսերեն բառացուցակով] և այլն: Հայկական բանակի համար Զինվորական մարզանքի կանոնադրություն գիրքը, որը կազմվել էր Գ. Նժդեհի կողմից, տպագրվեց Երևանի «Լույս» տպարանում 1918 թվականին[1]: 1917-1918 թթ. Երևանում տպագրվել է առաջին հայկական հրացանաձիգ բրիգադի «Զինվոր» եռօրյա 4 էջանոց թերթը, որի միայն 14 համար է լույս տեսել: 1917-1918 թ. Ալեքսանդրապոլում լույս էր տեսնում նաև «Մարտիկ» հայ զինվորական շաբաթաթերթը՝ քաղաքի հայ զինկոմի հրատարակությամբ[2]: Հրատարակվել են զինվորական կյանքին առնչվող այլ թերթեր ևս. 1918 թ. Կարսում հրատարակվել է Հայ զինվորական միության կենտրոնական մարմնի համանուն շաբաթաթերթը, որի խմբագիրը Ն. Աղբալյանն էր: Լույս տեսան մի շարք հանրամատչելի հրատարակություններ, ինչպես նաև՝ զինվորական օրենսգրքեր: Նախարարությունում աշխատում էր մասնագետներից կազմված մի առանձին հանձնախումբ զինվորական-գիտական տերմինաբանությունը հայացնելու, զինվորական օրենքներ և զանազան գրքեր հրատարակելու համար: Հիմնադրվեց զինվորական գրադարան:

1920 թ. ապրիլի 3-ին (N 1923) Զինվորական նախարարին ուղղված պաշտոնագրում Նախարարների խորհրդի գործերի կառավարիչը տեղեկացնում էր Զինվորական նախարարության գրադարանի համար ուղարկվող հայերեն և այլալեզու գրքերի մասին, որոնց թվում էին 16 օրինակ ***«Военный сборник»***-ը, 2 օրինակ ***«Братская помощь»***-ը, Յունկերների ուսումնարանի համար՝ Բոբրովսկու գիրքը, Ի. Դուբրովսկու ***«История войн и владичества русских на Кавказе»***, Մոխոտինի ***«Справочная книжка для офицеров»***, և այլ գրքեր[3]:

Բանակաստեղծ քաղաքականությունում կառավարությունը ոչ միշտ էր ճիշտ լուծումներ գտնում, երբեմն էլ ուղղակի պակասում էր շրջահայացությունը և կոնկրետ իրավիճակների օբյեկտիվ վերլուծությունը, հետևաբար էլ որոշ դրական զարգացումների հետ մեկտեղ մի

[1] Տե՛ս **Հարությունյան Կլ.,** Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945 թվականներին, Եր., Զանգակ-97 հրատ., Էջ 54:

[2] Տե՛ս **Հարությունյան Կլ.,** նշվ. աշխ., Էջ 52:

[3] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 199, ց. 1, գ. 118, մաս II, թ. 151:

շարք երևույթների տրվում էին անսթափ և հապշտապ լուծումներ, ինչը որոշակիորեն վնասում էր հանրապետության անվտանգության համակարգի ձևավորմանը նպատակաուղղված կառավարության, պառլամենտի քաղաքականությանը, անտեղի խոչընդոտներ հարուցում պետականորեն, ազգային տեսանկյունից կարևոր այդ գործերի առաջ:

Այսպես, դեռ 1919 թ. գարնանը Ռուսաստանի հարավի ռազմաքաղաքական շրջաններում տեղեկատվություն էր տարածվել այն մասին, թե ՀՀ կառավարությունը փոխել է իր վերաբերմունքը Հայաստանում գտնվող ռուսների, և մասնավորապես պետական պաշտոնյաների և սպաների նկատմամբ, որն այդ պահին խիստ անցանկալի էր և կարող էր վատթարացնել Ռուսաստանի Հարավ-ՀՀ ռազմաքաղաքական հարաբերությունները, խնդիրներ ստեղծել ամենուր սփռված հայ գաղթականության առաջ և այլ հույժ կարևոր հարցերում. Իրադարձությունների նկատմամբ աչալուրջ և սթափ դատողություն ունեցող Վրաստանում ՀՀ Դիվանագիտական հավատարմատար Լ. Եվանգուլյանը այս առումով 1919 թ. մայիսի 30-ին ահազանգում է կառավարությանը և մասնավորապես ՀՀ ԱԳՆ-ին. *«Հայաստանի կառավարության վերաբերմունքը դեպի ռուսները ընդհանրապես և մասնավորապես դեպի ռուս պաշտոնյաները և սպաները, որոնք Հայաստանում պետական ծառայության մեջ են, զգալի չափով փոխվել է…*

Ռուս գյուղացիներին հաճությամբ չեն վերադարձնում իրենց տեղերը, ռուս սպաներին համարյա թե քշում են զորքից հաջող ազգայնացման դրոշի տակ, բոլոր քաղաքացիական հաստատություններում գտնվող ռուս պաշտոնյաներին փոխարինում են հայերով, որ նույնիսկ Երևանում կազմվել է մի ընկերություն, որի նպատակն է ազգայնացման ճանապարհով երկրում արմատախիլ անել ռուսական ոգին»[1]: Եվանգուլյանը զգուշացնում էր, որ ռուսների մասին այդ լուրերը չափազանցված հասնում են Դենիկինի գլխավորած Կամավորական բանակին, զգաստության կոչելով կառավարությանը, որպեսզի վերջինիս կողմից չանտեսվի այն կարևոր հանգամանքը, որ Կուբանի և Թերեքի երկրամասերում գտնվում են թուրքական սպանդից մազապուրծ հազարավոր հայ գաղթականներ, որ չի կարելի այս ամենև Կամավորա-

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 200, ց. 1, գ. 164, թ. 51-52, ֆ. 275, ց. 5, գ. 114, թ. 74-75:

կան բանակի դեպի հայերը ունեցած սրտագին վերաբերմունքը նկատի ունենալով, հարաբերությունները վերջինիս հետ վատթարացնել, որով այդ գաղթականների վիճակը կմոտենա վերջնական բնաջնջման, անհրաժեշտ գտնելով պահպանել բարեկամական հարաբերությունները թե՛ Հայաստանում բնակվող ռուսների հետ, և թե՛ նրանց միջոցով այն ***«Ռուսիա»***-ների հետ, որոնք ներկայումս գոյություն ունեն[1], ինչը սակայն հետո անտեսվեց ՀՀ իշխանությունների կողմից և ունեցավ անցանկալի հետևանքներ:

Անշուշտ, ռուսերենի հանգամանքը այդ պահին էապես չէր վնասում բանակի գործերին, անգամ եթե սպաների լեզուն, հրահանգները դեռևս հայերեն չէին, ինչին հիվանդագին մոտեցում ունեին ռազմաքաղաքական մի շարք այրեր. 1920 թ. մայիսի 6-ին (N 7166 -1439) կառավարություն է ուղարկվում Զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանի զեկուցագիրը, որն ուղղակի և աներկբա դնում էր բանակի համատարած հայացման խնդիր. «Ազգայնացման հարցը կյանքի մեջ անցկացնելը մեծապես կախված է զօրական կանոնագրքեր, ձեռնարկներ և զօրական տերմինների բառարան ունենալուց: Ներկայումս Գլխավոր շտաբին կից գործող կոմիսիան թարգմանել և ուղղագրել է 7 կանոնագրքեր, այժմս թարգմանում են վեց և դեռ մնում են թարգմանելու երեք կանոնագրքեր, գրագրության վերաերյալ կանոնադրությունը և վաշտերում տնտեսություն վարելու կանոնադրությունը:

Զօրական տերմինների բառարանը կազմվում է զուգահեռաբար կանոնադրությունների թարգմանելու հետ: Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ կանոնագրքերի տպագրությունն արդեն սկսված է և մեր շուկայում թղթի չափազանց թանկ լինելու պատճառով կանոնագրքերի տպագրությունը կարող է դանդաղել՝ միջնորդում եմ բաց թողնել երկու հազար օզմա գրելու թուղթ կամ հինգ հարյուր օզմա լրագրային /չափ/ փարմայի թուղթ»[2]:

Կարելի է ասել, այս կտրվածքով այնքան էլ տեղին չէր և ժամանակավրեպ էր կառավարության 1920 թ. մայիսի 30-ի ևս մի որոշում, որի հիմքում ընկած էր աշխատանքի նախարարի զեկույցը մի կողմից՝

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 199, ց. 1, գ. 118, մաս III, թ. 205:

պետական լեզուն չիմացող պաշտոնյաների լիկվիդացիայի մասին, մյուս կողմից՝ բոլոր նախարարություններում հայացումը իրագործելիս նախատեսում էր անհրաժեշտ նկատված մասնագետներին պահելու հարցը լուծելու համար նրանց թարգմաններ տալ, սակայն ավելի շուտ տեղ էր տրվում լիկվիդացիայի ենթարկված պաշտոնյաների խնդրին, որոնք նեղված այդ իրավիճակից արդեն ուզում էին և հարկադրված էին մեկնել Հայաստանից[1]: Ռազմական նախարար Ռ. Տեր-Մինասյանի 1920 թ. հունիսի 26-ի № 1073 շրջաբերական հրամանի հիման վրա, որը բխում էր ՀՀ խորհրդարանի 1919 թ. դեկտեմբերի 26-ի և Նախարարների խորհրդի 1920 թ. մայիսի 30-ի օրենքներից, ոչ ուշ, քան մինչև օգոստոսի 1-ը գործավարությունը և գրագրությունը բոլոր շտաբներում, ռազմական հիմնարկություններում և զորամասերում պետք է կատարվեր հայերեն լեզվով, բացի տնտեսական մասի հաշվետվությունից, ի բացառյալ հրետազորի սպաների, ռազմական դատարանի և զորքերի սանիտարական և տնտեսական հիմնարկությունների, որոնք ժամանակավորապես պետք է շարունակեին գործերը վարել ռուսաց լեզվով, քանի որ այդ բնագավառների զինծառայողների գերակշռող մասը ռուսներ էին: Այն հայ սպաները, ովքեր գործնականում չէին տիրապետում հայոց լեզվին, պետք է անպայման սովորեին հատուկ դասընթացներում[2]: Սույն որոշմանը կատարմանը շտապողական, իրադրությանն անհամապատասխան և չհասունացած մոտեցում ցուցաբերեցին նաև հայաստանյան իրականության մեջ գործող կուսակցությունները: Միաժամանակ, իրականությունը ցույց տվեց, որ դա այնքան էլ հեշտ չէր իրականացնել, ավելի ճիշտ՝ անհնարին էր և ոչ միայն այն պատճառով, որ հայերեն տառերով գրամեքենաներ չկային, այլև այն պատճառով, որ հնարավոր չէր ռուս պաշտոնյաներին այդքան կարճ ժամկետում և առկա պարերազմական իրավիճակում հապշտապ, առանց լուրջ նախապատրաստությունների փոխարինել հայերեն իմացող զինվորական մասնագետներով, չնայած այն հանգամանքին, որ ընդհանուր ձգտում, եռանդ դրսևորվեց և տուրք տրվեց կամային-

[1] Տե՛ս **Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ,** էջ 473:

[2] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 290, ց. 1, գ. 9, թ. 28:

պարտադրողական լուծումներին՝ ապավինելով իներցիային: Խորապես անտեսվեց և չհաշվառվեց նաև այն հանգամանքը, թե կարող էին արդյո՞ք հայկական բանակի թեկուզ հայ, սակայն ռուսալեզու սպաները մահմեդական թշնամական շրջափակման պայմաններում գտնվող Հայաստանի Հանրապետությունում այդքան հապճեպ լուծել հայերենին տիրապետելու խնդիրը, օրինակ, ասենք փայլուն զինվորական գեներալ Հովհաննես Հախվերդյանը, Սարդարապատի հերոս Ալ. Շնեուրը և շատ ուրիշներ: Եվ այդուհանդերձ, ազգայնացման գործի իրականացման համար Զինվորական շտաբին առընթեր ստեղծվեց գործող հանձնաժողով, որը ձեռնամուխ եղավ զանազան գրությունների, տերմինների հրամանների, մատյանների, բլանկների, կնիքների օրինակների հիման վրա հայացված տարբերակների ստեղծմանը: Գլխավոր շտաբի թարգմանիչ հանձնաժողովը զգալի աշխատանքներ ծավալեց և հայացրեց բազմաթիվ գրագրության ձևեր, հրամաններ, մատյանների օրինակներ, կանոնագրքեր և այլն: Հայերեն լեզվով կազմվեցին գործավարության և գրագրության կանոնադրություններ, ռուսերենից հայերեն թարգմանվեցին դրանց բոլոր անհրաժեշտ ձևերն ու օրինակները: Գլխավոր շտաբի թարգմանիչ հանձնաժողովը թարգմանել և հայացրել էր բազմաթիվ գրությունների ձևր և տերմիններ, իսկ զորական կանոնագրքերից հայերեն լեզվով տպագրվեցին հետևազորի կանոնները, հետևազորի խրամատներ շինելու հրահանգները, հրացանների և փամփուշտի համառոտ նկարագրությունը, կարգապահական կանոնագիրքը և այլն: Զգալի աշխատանք է տարվում մարտական ուսուցման հայացման գործում, թարգմանվում և հրատարակվում են հրետանազորի կանոնագրքեր, հրացանի, գնդացրի և զենքի այլ տեսակների հետ վարվեցողության ուղեցույց կանոնագրքեր, խրամատներ փորելու հրահանգներ, կարգապահության, կայազորային և ներքին ծառայության վերաբերյալ կանոնագրքեր, կազմվում է նաև ռազմական տերմինների բառարան, հետևազորի ուսուցման կանոնադրություն և այլն[1]:

Մինչև 1920 թ. հունիսի 1-ը հայկական զորքերում գտնվում էին օտարազգի և օտարալեզու 256 սպաներ և աստիճանավորներ, որոն-

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 199, ց. 1, գ. 119, թ. 189:

ցից 81-ը հուլիսի 1-ից հայացման առթիվ տրված № 1073 շրջաբերական հրամանի հիման վրա ազատ արձակվեցին Հայկական բանակում ծառայությունից[1]: Ավելին, ձգտելով թուլացնել Դենիկինի Կամավորական բանակի ազդեցությունը Հայաստանում ընթացող բանակաստեղծ գործընթացների վրա, և դրանով իսկ ունենալ հնարավորինս ռուսական սպաների գերակշռությունից զերծ բանակային սպայական կազմ, ինչը կարևոր էր ՀՀ պետական անվտանգության համակարգի կայացման տեսանկյունից, քանզի Հայկական բանակի սպաների կեսից ավելին ռուսներ էին[2], 1919 թ. հունիսի 4-ին Հայաստանի պառլամենտի նիստում Ալ. Խատիսյանը միանշանակ հայտարարեց, որ ՀՀ կառավարության որոշմամբ Կամավորական բանակի հետ առնչություն ունեցող կամ նրանց գաղափարախոսությունը կրող սպաները, պաշտոնյաները և զինվորներն ազատ են Ռուսաստանի հարավ գնալու, իսկ նրանք, ովքեր կմնան, պարտավոր են ճանաչել միմիայն ՀՀ իշխանության գերակայությունը[3], ***և դա այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետությունը այդ նույն Դենիկինից սպանում էր զենք-զինամթերք, պարենային աջակցություն և անկախ ՀՀ կառավարության կողմից ընտրված այդ ռազմավարությունից, հարց է առաջանում, արդյո՞ք պահը ճիշտ էր ընտրված, առավել ևս որ ՀՀ-ն գտնվում էր պարենային ճգնաժամի ճիրաններում***: Հարկ է սակայն նկատել մի կարևոր հանգամանքի մասին, որ հակառուսական, հակադենիկյան այդ դիրքորոշումը ավելի շատ բխում էր ՀՀ կառավարության վրա Դաշնակից երկրների կողմից նախընտրելի համարվող ռազմավարությունից, որում ռուսականի տեղ չկար, ինչը ևս էապես ազդեց ՀՀ կառավարության վարքագծի վրա, առավել ևս 1920 թ. առաջին կեսին, երբ ՀՀ ռազմաքաղաքական առաջնորդները գրեթե հիացած էին Անտանտի պետությունների հայասեր գործունեությամբ, և առանձնակի հույսե չէին կապում դեռևս քաղաքացիական կռիվների մեջ ընկղմված մեծամասնա-

[1] Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 119, թ. 190, գ. 142, թ. 18-190:

[2] Տե՛ս **Պետրոսյան Գ.,** Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920 թթ.), Եր., 2005, էջ 190:

[3] Տե՛ս նույն տեղում:

կան Ռուսաստանի և օր-օրի թուլացող Ա. Դենիկինի Կամավորական բանակի հետ:

Այդուհանդերձ, չնայած այս իրողությանը, Հայաստանի Հանրապետության կառավարության հանձնարարությամբ կազմվել էր հանձնաժողով Գ. Խատիսյանի գլխավորությամբ՝ հայացման օրինագիծ մշակելու համար[1]: Սակայն զորամասերը, իրապես չկարողացան ժամանակին հասցնել արձակվելիք սպաների և աստիճանավորների ցուցակը, և այդ տեսանկյունից, փորձելով խուսափել խառնաշփոթ առաջ բերած իրավիճակից, ռազմական գործողություններին չվնասելու համար՝ Զինվորական նախարարությունը ի վերջո քիչ սթափվեց և հնարավոր գտավ ժամանակավորապես կասեցնել այդ հրամանի կատարումը գործող զորամասերում՝ մինչև ներքին քաղաքացիական կռիվների և արտաքին այլևայլ պատերազմների վերջանալը: Դա բացատրվում էր նաև նրանով, որ հայազգի սպաների մեծագույն մասն ուներ ռուսական ռազմական կրթություն, և որոշ ժամանակամիջոց էր անհրաժեշտ նրանց հայացման համար, ինչն անհնարին էր դժնդակ և սովյալ 1918-1920 թթ. իրականության պայմաններում: Հրամանը համարվեց ժամանակավրեպ և ոչ տեղին, քանզի այն կործանարար նշանակություն կունենար առանց այն էլ դժվարին պայմաններում գտնվող Հայաստանի Հանրապետության, նրա ռազմաքաղաքական իրավիճակի և ընդհանրապես անվտանգության համակարգի ձևավորման ուղղությամբ ընթացող բանակաստեղծ գործընթացների համար, էական ազդեցություն թողնելով Հայկական բանակի մարտունակության և կադրային հիմնահարցերի վրա[2]:

Այդուհանդերձ, այս խարխափումներին և ակնհայտ սայթաքումներին զուգընթաց ամեն դեպքում այս տարիներին որոշ քայլեր արվեցին Հայկական բանակի համար անհրաժեշտ և համապատասխան որակական հատկանիշներ ունեցող սպայական կազմ պատրաստելու և ուսուցանելու ուղղությամբ, որը կանոնավոր մարտական բանակի կազմակերպման տեսանկյունից էական հանգամանք է՝ չանտեսելով հայ սպաների և զինվորների բարոյաքաղաքական խրախուսման հիմ-

[1] Տե՛ս **«Հայաստանի աշխատավոր»** (Երևան), 11 հունիսի, 1919, № 114:

[2] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 199, ց. 1, գ. 119, թ. 189-190:

նախնդիրները՝ հիմնելով շքանշաններ և խրախուսման այլ աստիճանակարգեր: Բոլոր թերություններով և բացթողումներով հանդերձ, տարաբնույթ փաստաթղթերից ակնհայտորեն երևում է, որ Հայաստանի Հանրապետությունում 1918-1920 թթ. ընթացել են նաև լուրջ բանակաշինական գործընթացներ, և այդ առումով թե՛ ՀՀ կառավարությունը, թե՛ պառլամենտը և՛ թե զինվորական իշխանությունները բանակաստեղծ այդ կարևոր բնագավառում ծավալել են բազմաբնույթ աշխատանքներ՝ դրանք նպատակամղելով բանակի կազմակերպմանը և նրա մեծացմանը, վերջինիս սպայական և այլ կադրերի պատրաստմանը: Ըստ էության այդ օրերի Հայկական բանակը բոլոր փորձերն անում էր կայանալու համար, ձգտելով դառնալ գործուն համակարգ՝ պատրաստելով անհրաժեշտ սպայական և այլ կադրեր:

ԳԼՈՒԽ 9.

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԻՆՈՒԺԻ ԵՎ 1918 Թ. ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ԵՎ ՍԿԶԲԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ, ՀՅԴ ԵՎ ԱՅԼ ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

պ. գ. դ., պրոֆեսոր Վ. Հ. ՎԻՐԱԲՅԱՆ

1918 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Հայաստանի Հանրապետության կողմից գործադրված բոլոր ջանքերը կարգավորելու հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները՝ դիվանագիտական-քաղաքական էական արդյունքներ չտվեցին, ռազմավարական քայլերը մտան փակուղի, և «եղբայրական» Վրաստանը էապես նպաստեց դրան, քանզի վերջինիս համար անընդունելի եղան վիճարկելի դարձած Լոռի-Ախալքալաքի հիմնահարցի լուծման բոլոր խաղաղ տարբերակները: Այսինքն՝ պատերազմը դարձավ վրացական իշխանությունների համար տարածքային վիճելի հարցերի լուծման միակ ընդունելի միջոցը: Այս հանգամանքն է ժամանակին դիպուկ է նկատել հայտնի գերմանացի ռազմագետ Կ. Ֆոն Կլաուզեվիցը. ***«Պատերազմը ոչ միայն քաղաքական ակտ է, այլև և քաղաքականության իսկական գործիք, քաղաքական հարաբերությունների շարունակություն, դրանց իրագործումը այլ միջոցներով»***[1], և որ բոլոր հանգամանքների պարագայում պատերազմը չպետք է դիտարկվի ոչ որպես ինչ-որ մի ինքնաբավ, ինքնուրույն բան, այլ որպես ***«քաղաքականության գործիք»***[2]: Ըստ այդմ կանխել պատերազմը՝ չհաջողվեց, վրաց պետական գործիչների և զորավարների կողմից տվյալ իրավիճակում ձեռնարկվող պատերազմը ըմբռնվեց որպես նախորդ քաղաքական փուլի շա-

[1] **Клаузевиц К.,** О войне, перевод с немецкого А. К. Рачинского, Москва, Государственное военное изд-во, 1934, с. 27:

[2] **Клаузевиц К.,** ук. соч., с. 30:

րունակություն և դրա հակառակվելու ձգտումները գործնականում զրոյացվեցին և այն դարձավ յուրահատուկ հայկական ***«Էլզաս-Լոթարինգիա»*** հայ ժողովրդի համար: Այն սկսվեց դեկտեմբերի 13-ին: Այդ մասին շատ դիպուկ է նկատում Հայաստանի Հանրապետության առաջին վարչապետ Հովի. Քաջազնունին. «Դեկտեմբերի սկզբներին ծագեց կարճատեւ հայ-վրացական պատերազմը:

Երբ թուրքական բանակ՝ Ալեքսանդրապօլի վրայից անցնելով՝ հասաւ Փամբակ ու գրաւեց Ղարաքիլիսան, վրացիները օգտուեցին հանգամանքից ու զօրքերը մտցրին Հայկական Լօռին: Պատրուակը այն էր, թե ուզում են կանգնեցնել թուրքերի առաջխաղացումը դէպի Թիֆլիս: Բայց թուրքերի հեռանալուց յետո էլ վրացիները չուզեցին դատարկել Լօռին, ընդհակառակը, եռանդօրեն աշխատում էին ամրացնել ու յաւերժացնել իրենց տիրապետութիւնը, իսկ տեղացիների դժգոհութեան արտահայտութիւնները խեղդում էին դաժանօրեն:

Լօռին-կռվածաղիկ էր Հայաստանի եւ Վրաստանի միջև, ամէնից ցաւոտը հայ-վրացական սահմանային վէճերի մեջ:

Մեզ վրա ճնշում գործ դնելու նպատակով, Վրաստանը փաստօրեն կտրել էր մեր հաղորդակցութիւնը դրսի աշխարհի հետ, փակել էր մեր սահմանները, նույնիսկ այն հացը, որ ուղարկում էր դրսից մեր սովամահ գաղթականութիւնը կերակրելու համար, այդ հացն էր հանդիպում Վրաստանում բազմազան արգելքների ու ուշանում էր, լրիւ չէր հասնում տեղը:

Վրաստանը գրաւել էր Լօռին, փակել երկաթուղին ու պաշարել մեզ, այն էր պատերազմի հիմնական պատճառը:

Իսկ անմիջական առիթը՝ Լոռուայ մի քանի հայ գիւղերի ապստամբութիւնն էր եւ Վրաց կառավարութեան գործադրած անհամապատասխան խիստ միջոցները, կարծես կառավարութիւնը առիթ էր որոնում (ու նույնիսկ ինքը ստեղծում) որպեսզի կոտորի ու ահաբեկի հայ ազգաբնակչութիւնը»[1]:

|Շատ ավելի արտահայտիչ և դիպուկ է Քաջազնունին կնոջը՝ Սաթենիկին գրված 1919 թ. հունվարի մի նամակում. «***Վրաստանը իր անվերջ լրբություններով մեզ ստիպոց պատերազմի դիմել, մի բան,***

[1] Տե՛ս **Քաջազնունի Ցովի.**, Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլ եւս, էջ 34-35:

որից ամեն կերպ աշխատում էին մենք խույս տալ…Մի կողմից, մենք չենք կարող ամեն տեղ զիջել, ամենքի առաջ խոնարհվել, համբերել ու ետ նահանջել, որովհետև դրանով մեծապես վտանգում էինք մեր պետության ապագան, մեր քաղաքական դրությունը, մեր ազատությունը –այն ամենը, որի համար այդքան ահռելի զոհեր ենք տվել, այդքան գերմարդկային ճիգեր ենք թափել, դարերով եւ սերունդներով ապրել ենք, մյուս կողմից ուժասպառ ենք եղել այն աստիճան որ ի վիճակի չենք շարունակել կռիվը, դիմադրել, դիմանալ, նոր զոհաբերություններ անել, ***իսկ արտաքին օգնությունը Ամերիկայի կամ Անգլիայի կողմից, որի վրա դրել ենք մեր ամբողջ հույսը, դանդաղում է, չի արտահայտում իրեն շոշափելի ձևով***։[1]»

Վրաց-հայկական պատերազմի տարեգիրներից մեկը՝ Ս. Վրացյանը այդ առումով ևս ունի հետաքրքիր դիտարկում. «Անմիտ էր այդ պատերազմը, խելացնոր, բայց անխուսափելի:…Վրացիները պատճառ դարձան այդ պատերազմին՝ գրաւելով հայկական հողերը, փակելով երկաթուղային արտասահմանից Հայաստան բերուող պարենի առջեւ, սովամահութեան մատնելով հայ ժողովուրդը: Հայերին ոչինչ չէր մնում անել, բայց եթէ զէնքի դիմել»[2]: Դրա հետ մեկտեղ նա մերժում է Քաջազնունու տեսակետը, որը վրաց-հայկական պատերազմի սանձազերծման գործում հավանական է համարում «ռուս սպաների պրովոկացիան», գտնելով, որ «այն օրերի հայ-վրացական յարաբերութիւնների մէջ առանց այն էլ այնքան շատ պայթուցիկ նիւթ էր հաւաքուած, որ ընդհանրում առաջ բերելու համար ամենեւին կարիք չկար «ռուս սպաների պրօվոկացիայի, …որ իրականութեան մէջ, ռուս սպաները ո՛չ մի դեր չեն էլ կատարել հայ-վրացական պատերազմի սկզբնաւորութեան խնդրում»[3]: «Հ.Յ. Դաշնակցությունը անելիք չունի այլևս» գրքի առթիվ նա ուղղակի գալիս է հետևյալ եզրահանգմանը, որ Վրաստանի բռնած դիրքն «անվիճելիօրէն դատապարտելի էր», սակայն միաժամա-

---

[1] **Քաջազնունի Յովհ.,** Ազգ եւ Հայրենիք. Գ.լրացված հրատարակություն, «Հայրենիք» մատենաշար, թիվ, Եր., «Հայրենիք» ակումբ, 2014, էջ 194:

[2] **Վրացեան Ս.**, Կեանքի ուղիներով. Դէպքեր. Դէմքեր. Ապրումներ. Հատոր Դ., Բէյրութ, տպ. «Մշակ», 1965, էջ 186:

[3] **Վրացեան Ս.**, Խարխափումներ «Հ.Յ.Դաշնակցությիւնը անելիք չունի այլեւս» գրքի առթիւ, Պոսթընն, «Հայրենիք» տպարան, 1924, էջ 56:

նակ խոստովանում. «Այո՛, հայ-վրացական պատերազմը չարիք էր, ավելին ասեմ, աղէտ էր, բայց նա, դժբախտաբար, անխուսափելի էր այն մթնոլորտում, որ վրաց շովէն կառավարութիւնն ու ղեկավար շրջաններն էին ստեղծել: Եւ եթէ հայերից էլ կային տարրեր, որոնք գրգռում եւ ուժեղացնում էին վրաց շօվինիզմը, յամենայն դէպս, Հայաստանի ղեկավարները չէին: Մասամբ այդ հարցում վատ դեր կատարեց Թիֆլիսի հայ բուրժուազիան եւ, ընդհանրապէս, Թիֆլիսի հայ մամուլը, որն իր անհաւասարակշիռ ու ջղագար արտայայտութիւններով իւղ էր լեցնում վրաց շօվինիստական խարոյկի վրա. Բայց սա էլ չափազանց աննշան երեւոյթ էր, որպէսզի նրան կարելի լինէր որեւէ վճռական ազդեցութիւն վերագրել հայ-վրացական պատերազմի ծագման հարցում»[1]:

Հայաստանի ներքին պարենային-տնտեսական դժվարություններն, սովն ու համաճարակը, թուրքական սպառնալիքը հերիք չէին, դրանց ավելացավ վրացական հեգեմոնիզմը, և ինչպես գրում է ***Իրազեկը, ՀՀ*** կառավարությունը «միաժամանակ հարկադրված էր զէնք վերցնելու հարևան Վրաստանի դէմ և պատերազմ մղելու, իր արդար իրաւունքները պաշտպանելու համար: Ռուսաստանը – ինչպէս հայտնի է –հսկայական հարստութիւ և պետական գոյք ունէր մթերած Անդրկովկասի պետական-վարչական կենտրոնում՝ Թիֆլիսում: Հասկանալի է, որ ռուսական իշխանութեան վերացումն Անդրկովկասում և ազգային երեք անկախութիւնների ստեղծումովը, այդ գոյքը դառնում էր սեփականութիւն Հայերի, Վրացիների և Ադրբէջանցիների: Սակայն վրացիները, իւրացնելով ամբողջ հարստութիւնը, ոչ ոքի ոչինչ չէին ուզում տալ:

Բացի դրանից, Վրաց կառավարութիւնը շարունակ արգելքներ ու դժուարութիւններ էր յարուցանում դրսից, գլխաւորապէս Ամերիկայից, Հայաստանի համար ստացուող ապրանքները տեղ հասցնելու գործում. Այդ ապրանքները ստացւում էին Բաթումում, որ վրացական նաւահանգիստ էր, և մինչեւ Հայաստան մտնելը պիտի անցնէին անպայմանորէն վրացական հողով և վրացական երկաթուղիով, եւ վրաց կա-

[1] **Վրացեան Ս.**, Խարխափումներ «Հ.Յ.Դաշնակցությիւնը անելիք չունի այլեւս» գրքի առթիւ, էջ 57-58:

ռավարութիւնը հազար ու մէկ դժուարութիւններ էր յարուցանում այդ ապրանքների ստացման ու փոխադրութեան հարցում, դրանով աւելի ծանրացնելով Հայաստանի կառավարութեան ու ժողովրդի վիճակը:

Իսկ որ ամենից գլխաւորն է՝ վրացիները, օգտուելով Հայաստանի ու հայ ժողովրդի օրհասական դրութիւնից, գրաւել էին Ախաքալաքի և Լոռիի գաւառները, որոնց ազգաբնակութեան ջախջախիչ մեծամասնութիւնը կազմում է հայութիւնը, այն ինչ այդ գաւառները ազգագրական, պատմական և բոլոր այլ տեսակէտներով միշտ էլ կազմել են Հայաստանի անբաժան մասը թէ՛ հեռաւոր և թէ՛ մօտիկ անցյալում»[1]:

Պատերազմի առաջին իսկ պահից Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանը, տեղ-տեղ ինքն իրեն հակասելով և գրգռիչ բանավեճի մեջ մտնելով Հովի. Քաջազնունու հետ, որն ինչ-որ տեղ կուսակցական ամբիցիաների հարց էր, կարծես թե ջուր է լցնում վրացիների ջրաղացին, պնդելով, թե «ինճքան էլ գրգռիչ լիներ վրաց կառավարության բռնած ընթացքը՝ Հայաստանի կառավարությունը չպետք է ենթարկվեր պրովոկացիայի»[2], որ «հայ-վրացական պատերազմի պատասխանատվությունը ընկնում է ամբողջովին Քաջազնունու կազմած կոալիցիոն կառավարության վրա և [ոչ] երբե՛ք Դաշնակցության վրա»[3], ինչը թյուրըմբռնողության արդյունք է, ավելացրած դրան նաև այն հանգամանքը, որ Ջամալյանը արհեստական և մտացածին անջրպետ է ստեղծում ՀՀ կառավարության և ՀՅ Դաշնակցության միջև, չնայած պարզից էլ պարզ էր, որ Առաջին Հանրապետության կառավարությունը գրեթե բացառապես բաղկացած էր դաշնակցականներից: Հակասական է և կիսատ-պռատ հիմնավորված Ջամալյանի մեկ այլ տեսակետ ևս, որը իրադրության և քաղաքական վիճակի ոչ ճիշտ ըմբռնման արդյունք է և հանգում է հետևյալին. «Այնպես որ, մեր առաջին կոալիցիոն կառավարությունն ի վիճակի էր թե՛ պատերազմով, թե՛ իրավախոհությամբ սեղանի վրա դնելու հայ-վրացական վեճերը, այստեղ անկասկած քիչ դեր չի կատարել նաև նրա [Քաջազ-

[1] **Իրազեկ**, Մօտիկ անցյալից, Բէյրութ, 1956, էջ 42:

[2] **Ջամալյան Ա.**, Հ. Քաջազնունին և Հ. Յ. Դաշնակցությունը, Եր., Հայկ. Ուսումնասիրությունների ԱՆԻ հիմնադրամ, 2016, էջ 80:

[3] Նույն տեղում, էջ 81:

նունու–Վ. Վ.] սեփական ապիկարությունը, նրա քաղաքական տհասությունը և պետական կյանքը վարելու անպատասխանատվությունը»[1]:

Քաջազնունու նկատմամբ իր մեղադրանքներն է ներկայացնում նաև Ա. Բաբալյանը. «Դեկտեմբեր 31-ին վերջ տրուեց պատերազմին՝ մեզ համար ոչ ձեռնտու պայմաններով:

Մեղաւոր էինք մենք և մասնաւորապես վարչապետ Յ. Քաջազնունին, որ իւրայատուկ կեցուածքով չուզեց պատերազմին ժողովրդական: բնոյթ տալ և չօգտագործեց մեր մաքսիմում կարողութիւնը:

Ժիշդ է, մեր ժողովուրդը սոսկալի վիճակի մէջ էր, բայց թէ Խորհուրդում, թէ՛ երկրում կառավարութիւնը ջանք չթափեց օգնական ուժեր ուղարկելու կռուող բանակին և մեծ <<խոհեմութիւն>> արեց լռութեան տալով մեր փայլուն յաղթանակները պատերազմի դաշտում:

Կարծես պատերազմի մէջ չէինք. Այնքան տարօրինակ վերաբերմունք հանդէս բերաւ Յ. Քաջազնունին:

Մենք նպատակ ունէինք գրաւել Լոռին մինճև Խրամ գետը, որը համարում էինք մեր սահմանը Վրաստանի հետ:

Բայց յոխորտացող թշնամուն վերջնականապէս պատժելու համար, ի վիճակի էինք գրավել Թիֆլիսը, եթէ կառավարութեան գլուխ անշարժ և վեհերոտ չլիներ»[2]:

Հայտնի պատմաբան Լեոն շատ հետաքրքիր և ինչ-որ տեղ վիճարկելի դիտարկում ունի հայ-վրացական պատերազմի սկզբի, բնույթի, հետևանքների և հնարավոր արդյունքների վերաբերյալ. «1918-ի վերջերին շատ սուր կերպարանք ընդունեց սահմանային վեճը հայերի եւ վրացիների միջեւ Լոռիում: Երկու կողմերն էլ մեղավոր էին. Վրացիները գուցե ավելի շատ, որովհետեւ ռազմատենչ նացիոնալիզմը նրանց մեջ չափազանց առաջ էր գնացել շնորհիվ այն հանգամանքի, որ նրանք ամենքից շատ ունեին ռազմամթերք եւ պատերազմական հանդերձանքներ, որ մնացել էին ռուսներից եւ մասամբ էլ ձեռք բերվել հեռացած գերմանացիներից: Սակայն վեճը շատ հեշտ կարելի էր լուծել բանակցություններով:

---

[1] Նույն տեղում:

[2] **Բաբալեան Արտ.,** Հայաստանի անկախութեան պատմութիւնը եւ այլ յիշատակներ, էջ 45:

Դրոն այդպես չուզեց: Պատերազմ.. չէր ուզում հենց ինքը՝ դաշնակցական կառավարությունը, որ արգելել էր Դրոյին անցնել սահմանը: Մի քանի օրվա ձգձգումներից հետո Դրոն, պատճառ բերելով, որ վրացական զորքերը բռնություններ են կատարում Լոռու մի քանի հայաբնակ գյուղերում, թույլտվություն խնդրեց պատերազմական գործողություններ սկսելու: Այդ թույլտվությունը նրան չտրվեց: Այն ժամանակ նա հեռագրեց՝ թեեւ չեք թույլատրում, բայց ես անցնում եմ սահմանը: Դաշնակցական կառավարությունն ի՞նչ կարող էր անել իր ամենակարող խմբապետին, եթե ոչ հնազանդվել նրան, իսկ Ժողովրդական կուսակցության անդամներն էլ համակերպվեցին այդ հնազանդությանը՝ իրենց ողորմելի պորտֆելները պահպանելու համար...»[1]:

Բավականին ինքնատիպ է նաև Լեոյի տեսակետը այդ պատերազմի հնարավոր կանխման վերաբերյալ դեռ խանձուրարում՝ պատերազմի բոցը մարելու նրանց գործադրած ջանքերի առումով. «Եվ այսպես պայթեց հայ-վրացական պատերազմը: Եթե երբեւիցե հայ պատմագրությունը պիտի հավաքի, դասավորի եւ արձանագրի այն բոլոր թշվառությունները, որոնք թափվեցին կովկասահայ ժողովրդի գլխին 1918-ի ապրիլից սկսած, ուսումնասիրողը շատ պիտի ապշի՝ տեսնելով այդ սարսափների ծովի վերջում այս ոճրագործությունը՝ մի պատերազմ, անհասկանալի, ամոթաբեր ու վայրենի բոլոր տեսակետներից, բայց հախուռն եւ սանձակտուր ֆիդայականությունից...***Անգլիական հրամանատարությունն, իհարկե, կարող էր հենց առաջին րոպեից կանգնել կռվողների մեջտեղը եւ թույլ չտալ, որ արյունահեղություն լինի: Բայց չարավ այս, որովհետեւ այսպիսի մի քայլ կհակասեր անգլիական ավանդական քաղաքականությանը***:...Իրար բզկտող կողմեր, եւ ինքը մեջտեղ՝ իբրեւ իրավարար եւ հաշտեցնող. Այս դերի մեջ էր նա առաջին անգամ իրեն ցույց տալիս՝ Անդրկովկասը իր զորքերով գրավելուց հետո»[2]:

Հայտնի է, որ կողմերի մոտ ցանկություն է եղել ստեղծել քննող հանձնաժողով՝ վիճարկելի հարցերի խաղաղ ճանապարհով լուծման համար: Սակայն պատմաբան Կ. Սարդարյանը մեջբերելով ՀՀ Զինվո-

[1] **Լեո**, Անցյալից: Հուշագրություն, էջ 382-383:

[2] Տե՛ս **Լեո,** նշվ. աշխ.,, էջ 383:

րական նախարար գեներալ Հ. Հախվերդյանի տեսակետն այն մասին, որ «Դրոն ստեղծել էր այնպիսի վիճակ, երբ հրանոթներն իրենք են կրակում», գործնականում հավանական է համարում այդ փաստի իրողությունը, միաժամանակ կարծելով, որ Դրոյի դեկտեմբերի 11-ի վերջնագիրը հանգեցրեց պատերազմի, ***սակայն միաժամանակ եզրահանգելով, որ Դրոն պարզապես լինելով սահմանագծում և տեսնելով պատերազմի անխուսափելիությունը, ջանում էր, որ Հայաստանի կառավարությունն այլևս չխուսափի հասունացած ու անխուսափելի ռազմական առճակատումից, որն ավելի թանկ էր նստում շրջափակված Հայաստանի վրա, որն այդպես էր հասկացել Սիմեոն Մդիվանին***[1] Դրոյի հետ Ալեքսանդրապոլում ունեցած զրույցից, որը Մդիվանուն նոր հանդիպման ժամանակ, արդեն Ղարաքիլիսայում, ներկայացրել էր նոր և լրացուցիչ պահանջներ, որոնք, ըստ Կ. Սարդարյանի մոտեցման, և որը համընկնում է վրաց պատվիրակի կազմած մոտեցման հետ, կարող էին և հավանաբար նպաստել էին իրավիճակի սրմանը՝ ընդհուպ մինչև ողբերգական ավարտ[2], այդ պահին առաջ բերելով հարցադրում, որ կարելի էր Դրոյին հակառակը համոզել և դրանով իսկ գուցե նաև խուսափել հայ-վրացական ռազմական առճակատումից: Եվ ավելին, Կ. Սարդարյանը բերելով նոր փաստեր, որ իբր թե Մդիվանին Ս. Տիգրանյանին տեղեկացնելով, որ Սանահին և Ալավերդի կայարաններում դեկտեմբերի 10-11-ին հայերը վրացական զորամասերի վրա կրակ են բացել, սակայն վրացական կողմը չի պատասխանել, դրանից էլ ելնելով ՀՀ Արտաքին գործերի նախարարին հայտնվել է, որպեսզի նա իմանա, որ Լոռում ապստամբության և ռազմական գործողությունների նախաձեռնողը Դրոն է: Այնուհետև ներկայացվում է այն վարկածը, թե այդ պնդումով հանդերձ իբր թե Մդիվանին փորձել է նաև պարզել, թե տարաձայնություններ եղե՞լ են արդյոք

---

[1] Տե՛ս **Վրացյան Ս.,** Հայաստանի Հանրապետություն, էջ 228-229: *Սիմոն Սիմեոն Մդիվանի* –Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Վրաստանում, որին անգամ սեփական հայրենիքում համարում էին ապաշնորհ և ամենաանարժան անձնավորությունը և դեսպանը, որ երբևէ Վրաստանն ուղարկել է հարևան պետություն՝ Փառնազ թագավորից ի վեր: Տե՛ս **Գերոնտի Քիքոչէ**, Ժամանակակցի գրառումներ, «Մնաթորի,» № 1, 1989:

[2] Տե՛ս **Սարդարյան Կ.**, Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921 թթ., Եր., «Նաիրի» հրատ., 2003, էջ 72-73:

ՀՀ կառավարության և Դրոյի բռնած կոշտ դիրքորոշման միջև, որ ըստ էության տարբերություն չկար Դրոյի դեկտեմբերի 11-ի վերջնագրի և ՀՀ կառավարության կողմից Վրաստանին ներկայացված դեկտեմբերի 9-ի նոտայի միջև,[1] կարծես թե այդ պահին Վրաստանը խաղարարի դեր էր ստանձնել՝ ձգտելով պատերազմը կանխել, իսկ Հայաստանն ընդհակառակը՝ ամեն կերպ նետվում էր պատերազմի թոհ ու բոհի մեջ: Ինքնին հասկանալի է, որ Վրաստանի դիվանագիտական հավատարմատարը պարզապես ճարպկորեն մանևրել էր, փորձելով շփոթ առաջ բերել հակառակորդի շարքերում, միաժամանակ ձգտելով հնարավորինս առավելագույն ջանքեր գործադրել՝ իրերի նման դասավորությունը պահպանելու և ձգձգելու տեղեկատվության, այդ պարագայում՝ շտապ հեռագրի տեղին և ժամանակին առաքումը, որը ձեռնտու էր Վրաստանին՝ Հայաստանին նոր մեղադրանքներ ներկայացնելու համար որպես պատերազմի հրձիգներ, ինչը և հետագայում արվեց:

Բավականին ամբողջական և ուշագրավ է Հայաստանի Սովետական Հանրագիտարանի համապատասխան հատորում զետեղված կարծիքը հայ-վրացական պատերազմի ծագման սկզբի և պատճառների մասին: «Այն հակասությունները, որոնք հանգեցրին Անդրկովկասյան Սեյմի վերացմանը, երեք ազգային հանրապետությունների ստեղծումից հետո ոչ միայն չթուլացան, այլև ավելի սրվեցին, վերաճեցին զինված ընդհարումների նրանց միջև: Դեռևս 1918-ի մայիսին, երբ թուրքական զորքերը մտել էին Անդրկովկաս, վրացական մենշևիկները, նրանց առաջխաղացումը դեպի Թիֆլիս կանխելու պատրվակով, իրենց զորքերը մտցրին Լոռի: 1918-ի վերջին, երբ թուրք զորքերը թողեցին Անդրկովկասի սահմանները, Վրաստանի մենշևիկյան կառավարությունը հրաժարվեց Լոռին վերադարձնել Հայաստանին: 1918-ի դեկտեմբերին Վրաստանի և Հայաստանի միջև Լոռու համար պատերազմական գործողություններ սկսվեցին: Ընդհարմանը միջամտեցին Անտանտի երկրները: Անգլիացիների առաջարկով Բորչալուի գավառից ստեղծվեց «չեզոք գոտի», որն ընդգրկում էր գրեթե ամբողջ Լո-

[1] Տե՛ս **Սարդարյան Կ.**, Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921 թթ., էջ 73:

ռին: Անգլիական զորքերը մտան «Չեզոք գոտի»: Այդպիսով, Հայաստանի Հանրապետությունից խլվեցին նրա հյուսիսային շրջանները»[1]:

Վրաց-հայկական պատերազմի սանձազերծման մեջ բոլշևիկյան պետական-քաղաքական, կուսակցական գործիչ Գ. Կ. Օրջոնիկիձեն մեղադրում է Մեծ Բրիտանիային. «Անդրկովկասի ռեսպուբլիկաների մեծ հովանավորը՝ Անգլիան և նրա գործակալները, իրենց տիրապետությունը հիմնելով *«բաժանիր և տիրիր»* սկզբունքի վրա, պատերազմ են հրահրում Վրաստանի և Հայաստանի միջև: Եթե Վրաստանի և Հայաստանի փոխհարաբերությունների ամբողջ պատմությունը երբեք պատերազմ չի տեսել այդ երկու եղբայրական ժողովուրդների միջև, ապա բավական եղավ, թույլ տվեք ասել, սոցիալիստների՝ մենշևիկների և դաշնակների՝ իշխանության գլուխ անցնելը և երկու եղբայրական ժողովուրդները մահացու կռիվ սկսեցին ինչ-որ մի պատառ հողի համար, թափելով հարյուրավոր բանվորների և գյուղացիների՝ հայերի և վրացիների արյունը ի հաճույս անգլիական վաճառականների և արդյունաբերողների, որոնք օգտվեցին դրանից, որպեսզի թե՛ մենշևիկյան և թե՛ դաշնակցական բանդիտներին քշեին վիճելի տերիտորիայից և հայտարարեին չեզոք գոտի, այսինքն գցեին իրենց ձեռքը, որը և նրանք արին: Հիմարացված դաշնակներն ու մենշևիկները բացատրություններ էին տալիս պառլամենտ-բալագանում՝ ոմանք Երևանում, մյուսները՝ ի դեմս Ժորդանիայի, Թիֆլիսում: Վրացական ռազմատենչ նացիոնալիստների այն հարցին, թե ինչու՞ պատերազմը դադարեց և ինչու՞ այն անհետևանք ավարտվեց, ալեհեր ծերունի Ն. Ժորդանիան, որը ծերության հասակում դարձել էր համաշխարհային իմպերիալիզմի սպասավորը, իր մարդակեր նացիոնալիստներին շփոթված պատասխանում էր, թե պատերազմը դադարեց, որովհետև ***«Անգլիայի միջամտության հետևանքով պատերազմը կորցրեց իր հեռանկարը...»***[2]: Ավելին, 1919 թ. փետրվարի 15-ին գեներալ Ջ. Ֆորոստյեր-Ուոքերի հետ ունեցած երկխոսության ժամանակ ինքն իրեն հակասելով, Նոյ Ժորդանիան բավականին իրատեսական բնութագիր է տալիս ան-

[1] Տե՛ս **Հայկական Սովետական Հանրագիտարան** *(ՀՍՀ).* «Սովետական Հայաստան», Եր., 1987, էջ 162:

[2] Տե՛ս **Օրջոնիկիձե Գ. Կ.**. Ընտիր հոդվածներ և ճառեր. 1918-1937, Եր., Հայպետհրատ, 1950, էջ 74-75:

գլիացիների գործունեությանը Անդրկովկասում, պնդելով, որ հենց դաշնակիցների ժամանումով իրավիճակը Անդրկովկասում կտրուկ փոխվեց. «Մենք անկախություն հռչակեցինք 1918 թ. մայիսի 26-ին և մինչև դաշնակիցների մեզ մոտ գալը (Անդրկովկաս-Վ. Վ.), զբաղված էինք բացառապես մեր նոր պետական կյանքի շինարարությամբ: Մենք ոչ ոքի հետ չենք պատարազմել և ոչ մի տեղ թշնամի չունեինք: Մեր բարեկեցության միակ վտանգը բոլշևիկներն էին, բայց մենք նրանց քշեցինք Սոչիից մյուս կողմը, և մեր պետությունը ազատվեց այդ վտանգից: Կրկնում եմ, բոլոր մեզ շրջապատողների հետ մենք ապրում էինք խաղաղության մեջ:

Դաշնակիցների գալուց հետո պատկերը խիստ կերպով փոխվեց. մենք ամբողջ ժամանակ պատերազմում ենք: Նախ՝ Հայաստանի դավադիր հարձակումը, յետոյ՝ կամավորականների առաջխաղացումը և, վերջապես՝ թուրք-թաթարական հորդաների ներխուժումը մեր երկիրը Արդահանի կողմից դեպի Ախալցխա: Ես առանձնապես հրավիրում եմ ձեր ուշադրությունը վերջին փաստի վրա: Վրաստանի կառավարությունը միշտ համարել է, որ Բաթումի և Արդահանի շրջանները գտնվում են բրիտանական զինվորական ուժերի անմիջական ազդեցության և կառավարության ներքո, և ես ենթադրում եմ, որ թուրք բանակի ասկյարներն ու սպաները կհեռացվեն այդ հողամասերից անգլիական հրամանատարության կարգադրությամբ:...Կարսի շրջանի վերաբերմամբ մենք ենթադրում էինք, և հիմք ունեինք դրա համար, որ նա օրինական հիմունքներով պիտի հանձնվի Հայաստանին: Մինչդեռ իմ հիշած տարածության վրա կազմվել է նոր ինքնակոչ մի պետություն, որը բաց կերպով հայտարարում է, որ ինքը գտնվում է Անգլիայի անմիջական հովանավորության տակ»[1]: Իսկ Եվգ. Գեգեչկորին անգամ իր պատրաստակամությունն է արտահայտել օգնել անգլիացիներին, միաժամանակ պնդելով, որ որ իրենց զորքերը մշտապես կառաջարկեն իրենց ծառայությունները, սակայն դրանք կարող են անբա-

[1] Տե՛ս **Борьян Б. А.,** «Армения, международная допломатия и СССР», часть II, М-Л., Гос. Изд-во, 1929, с. 22: **Жордания Н.,** Большевизм, Берлин, изд-во ЦК СДРП Грузии, 1919, с. 36: Տե՛ս նաև **Сеф С. Е.,** «Демократическое правительство» Грузии и английское командование, Тифлис, Заккнига, 1928, с. 27-28: **Վրացի մենշեւիկները եւ անգլիական զօրավարները.** Գրեց **Մասուրեան Ս.**, «Հայրենիք», Բոստոն, Յունուար, 1928, № 3 (63), էջ 149:

վարար լինել, քանզի Հայաստանի դեմ անհրաժեշտ է ունենալ ծանրակշիռ ռազմական ուժ[1]:

Առավել ամբողջական է փորձում դիտարկել հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունների խնդիրը Զուրաբ Ավալովը, որը գրում է հետևյալը. «Անտանտի ներկայացուցիչները չէին վճռում Հայաստանի և Վրաստանի միջև վիճելի հարցերը, այլ հետաձգում էին դրանց լուծումը, որոշելով, որ երկու պետությունների՝ Վրաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչները շուտով ուղարկվելու են Եվրոպա, որտեղ նրանց սահմանների վերաբերյալ հարցերը կվճռվեն մեծ տերությունների կողմից»[2]:

Պատերազմի ծագման և արժևորման առումով հետաքրքիր նկատառումների ենք հանդիպում վրաց հեղինակների հուշագրային բնույթի հրապարակումներում: 1918 թ. վրաց-հայկական պատերազմի ժամանակվա իրադարձությունների ժամանակակիցներից մեկի՝ Գերոնտի Քիքոչեի գրառումներում հանդիպում ենք հետևյալ մտքին. «Այդ ժամանակ Երևանի կառավարությունը հավաքում է իր զորքը, առանց պատերազմ հայտարարելու անցնում Վրաստանի սահմանները և կոտորում այնտեղ գտնվող վրացական զորախմբերը: Վրաստանի ղեկավարությունը և Հիմնադիր ժողովը այս լուրը ուշացումով իմացան: Տեղի ունեցավ հանդիսավոր նիստ՝ ամենահուզիչը Վրաստանի պառլամենտի կարճ պատմության ընթացքում: Մի չորս դաշնակցական բավականին անօգնական վիճակում էին գտնվում հարյուր քսան զայրացած վրացի երեսփոխանների առաջ:

-Այս ընդհարման ժամանակ դուք ու՞մ կողմն եք կանգնելու,- նրանց հարցրին ամբիոն բարձրացող հռետորները:

-Իհարկե՛ հայրենիքի, - պատասխանեցին դաշնակները:

-Ո՛ր հայրենիքի՝ Հայաստանի, թե՞ Վրաստանի:

Պարզամիտ այս հարցին հաջորդեց պերճախոսություն, որը և անչափ զայրացրեց փիլիսոփայորեն խորհող մի ֆեդերալիստի. Նա ձեռքը գցեց աթոռին, բայց պարզվեց, որ այն ամրացված է հատա-

[1] Տե՛ս **Борьян Б. А.,** «Армения, международная допломатия и СССР», часть II, с. 22: Տե՛ս նաև **«Правда»**, 16 июня 1920, № 138 (665):

[2] Տե՛ս **Авалов З.,** Независимость Грузии в международной политике, Париж, 1924, с. 209-212, 301-306:

կին»[1]: Պատերազմին իր ինքնատիպ անդրադարձն ունի ևս մեկ վրացի ժամանակակից՝ Ալեքսանդր Մուջիրին, որը դիպուկ ներկայացնում է հայ-վրացական առճակատման պահը, անշուշտ՝ որոշ վերապահումներով հանդերձ. այսպես, նա իր փաստարկումն է ներկայացնում. «1918 թ. դեկտեմբերի 9-ին Դաշնակցական Հայաստանը պատերազմ սկսեց Վրաստանի տարածքի այն մասի համար, որ նրանք վիճելի էին համարում: Դա շատ ցավալի պատերազմ էր երկու ամենամոտ, պատմականորեն միմյանց ուրախությունն ու ցավը կիսող հարևանների միջև»[2]:

Վրաց-հայկական պատերազմի ծագման, պատճառների բացահայտման և վրաց-հայկական ռազմաքաղաքական հարաբերությունների արժևորման հիմնախնդիրներում առավել ժխտողական և հակահայկական կեցվածք ունի վրաց պատմաբան Իվանե Ջավախաշվիլին. «Ճիշտ այդ ժամանակ՝ 1918 թ. Ստամբուլում տպագրվեց Հայաստանի (իբրև թե պատմական) ֆանտաստիկ մի քարտեզ, որտեղ Համայն Հայաստանի սահմանները ձգվում են Սև ծովից մինչև Կասպից ծով և... Միջերկրական ծովերը... Ըստ այդ քարտեզի՝ Հայաստանի կազմում են նաև Բաթումը, Ախալցխան, Մցխեթը, նույնիսկ Թիֆլիսը, մինչդեռ Վրաստանին հատկացված էր մի փոքրիկ, նեղ շերտ:

Հայկական Հանրապետությունը Թուրքահայաստանից բացի, որ կորցրեց ձեռքից, Երևանի նահանգից բացի, տիրություն էր անում նաև Ղարսի ամբողջ գավառին՝ Արդահան-Արդվինով հանդերձ: Բայց ոչ էլ դրանով բավարարվեց: ռազմական գաղտնի նախապատրաստությունից հետո, համաձայնվելով Անգլիայի օկուպացիոն բանակի ավագ գեներալ Ուոկերի (նկատի ունի գեներալ Ջ. Ֆորեստյեր-Ուոքերին –Վ. Վ.) 1918 թ. դեկտեմբերի սկզբին հայ դաշնակցական կառավարությունն իր զորքերը մտցրեց Վրաստան և միաժամանակ Արտաքին գործերի նախարարի անունից Վրաստանից վերջնագրի կարգով պահանջեց՝ հետ գնալ մինչև Քարթլիի սահմանը, քանի որ հայերը Քարթլի են համարում Գորիի գավառը, պարզ է, որ այս վերջնագրով նկատի էր առնվում նաև Թիֆլիսի դատարկումը, և այդպիսով, այդ պահանջը վերոհիշյալ երկու քարտեզներից շատ ավելի ֆանտաստիկ էր. Իբրև

[1] Տե՛ս **«Մնաթռքի»,** Թիֆլիս, 1989 թ., թիվ 1, էջ 14-15:

[2] Տե՛ս նույն տեղում, 1989 թ., թիվ 7, էջ 106-107:

թե պատմական քարտեզի սահմանները վերականգնել էին փորձում: Թուրքիայում պարտություն կրելուց հետո Վրաստանը զավթելու և սեփականելու հայ քաղաքագետների ախորժակը ոչ միայն չկորավ, այլ, ընդհակառակը, ավելի բացվեց. Այժմ էլ նրանք ուզում էին հին Հայաստանի իբրև թե պատմական սահմանների վերականգնումն իրականացնել Վրաստանի և վրաց ժողովրդի հաշվին»[1]:

Առավել ժխտողական և հակահակական դիրքերից են արտահայտվում վրաց հեղինակներ Մ. Վաչնաձեն, Վ. Գուրուլին, Մ. Բախտաձեն. «Վրաստանի Դեմոկրատական հանրապետության ամբողջականության վրա ոտնձգություններ կատարվեցին Հայկական հանրապետության կողմից, որը Վրաստանից պահանջում էր իրեն հանձնել բուն վրացական տարածքները ինչպես Հարավային Վրաստանում (Ջավախեթիում), այնպես էլ Քարթլիում (Թբիլիսի, Գորի), Աջարիայում {Բաթումի): Վրաստանի կառավարությունը հիմնավորապես մերժեց Հայաստանի ոտնձգությունները: 1918 թ. դեկտեմբերին հայկական զորքերը անցան Վրաստանի սահմանը և ներխուժեցին Բորչալուի գավառ: Հայաստանը պատերազմ սկսեց Վրաստանի դեմ: Վրաստանի բանակը և Ժողովրդական Գվարդիան պաշտպանվելով, ետ նահանջեց: Հայաստանը Վրաստանի կառավարությանը վերջնագրային ձևով պահանջ ներկայացրեց ներկայացրեց՝ ազատել Գորիի տարածքը՝ մինչև Թբիլիսի: Ի պատասխան դրան, վրացական կանոնավոր բանակը և Ժողովրդական Գվարդիան անցան հարձակման: Ծանր կորուստներ կրելով, ագրեսորը նահանջեց: Հայաստանի քաղաքական շրջաններում անգլոսերները զգալի ուժ էին ներկայացնում, որը համապատասխան գնահատման արժանացավ Անգլիայում, և նա իր հերթին Հայաստանին օգնեց խուսափել մեծ ռազմական և քաղաքական ջախջախումից: Անդրկովկասում Անգլիայի միջնորդ առաքելության կատարումից հետո 1918 թ. դեկտեմբերի վերջին ռազմական գործողությունները Հայաստանի և Վրաստանի միջև դադարեցին: Բուն վրացական տարածքը՝ Լոռու շրջանը հայտարարվեց Չեզոք գոտի: Մինչև հարցի

[1] Տե՛ս **Իվանե Ջավախիշվիլու արխիվից**, Հայ-վրաց գրական, պատմամշակութային հարցերը վրաց մամուլում (1988-1990), Նյութերի ժողովածու. Պրակ առաջին, կազմեց, առաջաբանը գրեց և վրացերենից թարգմանեց *Հրայր Բայրամյանը,* Եր., «Զանգակ–97», 2001, էջ 59-60:

վերջնական լուծումը Լոռու շրջանում պետք է տեղակայվեին վրացական և հայկական զորքերը»[1]: Իսկ ադ նույն ժամանակ ակտիվացել էին թուրքերը, որ «դեռ 1917 թ.. Հարավային Վրաստանում (Ախալցխայի և Ախալքալաքի գավառներում) սկսվել էր թուրքական գործակալական ցանցի գործունեութունը»[2]: Մ. Վաչնաձեն, Վ. Գուրուլին և Մ. Բախտաձեն գտնում են, որ Երևանը նկատի ուներ ստանալ Լոռին, Բորչալուն, Ջավախեթիան, Ջանգեզուրը, Ղարաբաղը, Լոռին, Նախիջևանը և Տաո-Կղարջեթը: Այդ իսկ պատճառով ՀՀ կառավարող ՀՅԴ-ն Հայաստանի Ազգային խորհրդի հետ ՎԴՀ-ում վարել են հակավրացական գործունեություն[3]: Այդ հետևանքներից մեկը հանդիսացավ ՀՀ չհայտարարված պատերազմը ընդդեմ ՎԴՀ-ի՝ Բորչալուն, Ջավախեթին և Լոռին գրավելու նպատակով, ընդհուպ մինչև Խրամ[4]:

Իսկ ահա թե ինչ է գրում պարսկական ծագման ԱՄՆ-ի Յելի համալսարանի պրոֆեսոր Ֆիրուզ Կազեմզադեն, «Դեռևս գերմանական զորքերի Վրաստանում գտնվելու ժամանակ [1918 թ. ամառ], Հայաստանի հետ սահմանի վրա հաճախակի տեղի էին ունենում բախումներ: 1918 թ. հոկտեմբերի 18-ին Վրաստանը Հայաստանին մեղադրանք ներկայացրեց Թիֆլիսի նահանգի տարածքի մի մասի զավթման մեջ»[5]: Դրանով իսկ, ըստ վրացական կողմի պնդման, Հայաստանի կառավարությունը խախտեց բարիդրացիական հարաբերությունները, որոնք հաստատվել էին դարերի ընթացքում: Այն խախտեց ինչպես հայ

[1] **Вачнадзе М., Гурули В., Бахтадзе М.**, История Грузии: С древнейший времён до наших дней, с. 694 Տե՛ս http://nukri.info http://nukri.info/modules. php?name= Cmods Download&req= viewdownload &cid=11&ord:

[2] Տե՛ս նուն տեղում:

[3] **Вачнадзе М. Гурули В., Бахтадзе М.**, История Грузии (с древнейших времён до наших дней): http://www.litmir.net: **Гусейнзаде Рауф Алишир оглу**, Кавказ и армяне, Баку, Печатный дом «Апострофф», 2014, с. 479:

[4] **Мархулия Г. Р.**, Армяно-грузинская конференция 1919 года и создание Лорийской нейтральной зоны, Тбилиси, 2005, с. 5:

[5] **Каземзаде Ф.**, Борьба за Закавказье (1917–1921), Институт стратегических исследований Кавказа, (Баку, Азербайджан), Серия «История Кавказа», Стокгольм, CA&CC Press ®, 2010, с. 169:

ժողովրդի, այնպես էլ վրաց ժողովուրդների պատմական ավանդույթները»[1]:

Ավելի հեռուն է գնում ադրբեջանցի հետազոտող Բ. Նաջաֆովը, գտնելով, որ «հայկական ազգայնականները այդ ժամանակ չսահմանափակվեցին ադրբեջանական հողերի զավթումով: Նրանք սանձազերծեցին պատերազմ Վրաստանի դեմ, առաջին աշխարհամարտում Անտանտի երկրների հաղթանակից հետո ձգտելով նրանից կտրել վիճարկելի Բորչալուի, ինչպես նաև Ախալցխայի և Ախալքալաքի շրջանները, դաշնակցականները, հավատալով դաշնակիցների, և մասնավորապես անգլիացիների ամեն տեսակի հավաստիացումներին, լրջորեն հավատացին, որ այժմ իրենց «ամեն ինչ կարելի է», որ պատմական իրադարձությունների շրջադարձն իրենց հնարավորություն է տալիս, որն առավելագույնս պետք է օգտագործել»[2]: Այնուհետև Բ. Նաջաֆովը ավելացնում է հետևյալը. «Հայ ազգայնականների այդ տրամադրությունները ակնառու արտահայտվել են Հայաստանի դաշնակցական կառավարության սանձազերծած Վրաստանի հետ պատերազմում: Մշտական արտագրոհները և հարձակումները Վրաստանի տարածքի վրա դաշնակցական ջոկատները իրագործում էին նույնիսկ Վրաստանի գերմանական օկուպացիայի ժամանակ: Այդ թշնամական գործողությունները էլ ավելի ակտիվացան գերմանական զորքերի հեռացումից հետո, ասվում է, որ 1918 թ. հեկտեմբերին նոտա էր ուղարկվել Երևան հայկական զորամասերի կողմից Թիֆլիսի նահանգի մի մասի անօրինական գրավման մասին:

Դրանից հետո հայերը, կրկին հրաժարվելով ցանկացած խաղաղ բանակցությունից, վրացական կողմին վերջնագիր ներկայացրեցին՝ պահանջելով անհապաղ զորքերը դուրս բերել Բորչալուից: Այդ շրջանում դաշնակցական ջոկատների հրամանատար գեներալ Դրոն (***արյունոտ Անդրանիկի հավատարիմ զինակիցը***) հայտարարեց, որ իր զորքերը չեն սպասելու վրացիների և կանցնեն հարձակման: Բացի

[1] **Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии**, Тифлис, 1919, с. 462-464: **Гусейнзаде Рауф Алишир оглу**, Кавказ и армяне, Баку, Печатный дом «Апострофф», 2014 , с. 479:

[2] **Наджафов Бахтияр**, Лицо врага. История армянского национализма в Закавказье в конце XIX - начале XX века. ч. II, Баку, Изд-во «Шарг-Гарб», 1994, с. 71:

այդ, դաշնակցական գործակալները այդ շրջանում կազմակերպեցին ազգայնականորեն տրամադրված հայկական բնակչության ելույթներ, որոնք իրենք այն կնքեցին որպես *«ապստամբություն»*: Դաշնակցական արկածախնդրության արդյունքում, Հայաստանի և Վրաստանի միջև հարաբերությունները երկարատև ժամանակով փչացան, որը, մասնավորապես խոչընդոտեց նրանց ուղղորդելու իրենց գործողությունները Փարիզյան խաղաղության կոնֆերանսում[1]»:

Հայկական ագրեսիայի մասին է խոսում Մ Բախտաձեն, նկատի ունենալով հայկական ագրեսիան ընդդեմ Վրաստանի 1918 թ. նոյեմբեր-դեկտեմբերին, ընդգծելով, որ այդպիսի մեթոդով է ձգտել վճռել հայկական կողմը տարածքային հարցերը Ադրբեջանի հետ[2]:

Պատերազմի սկզբի, շարժառիթների և կողմերի հետամտած նպատակների իրենց արժևորումն ունեն ամերիկյան հեղինակներ Թիմոթի Կ. Բլաուվելթը և Քրիստոֆեր Բերգլանդը, որոնք կարծում են, թե իբր Հայաստանի առաջին հանրապետությունը, որ գլխավորապես կազմված էր Երևանի նահանգապետությունից, պահանջներ ներկայացրեց Հարավային Կովկասի շրջանների նկատմամբ[3]: Վրաստանն իր հերթին աչք գցեց հայերի կողմից վերահսկվող մի շարք տարածքների նկատմամբ[4]: Այս տարածքային ձգտումների մրցակցությունը հարավկովկասյան հանրապետություններին ներքաշեց հակամարտության մեջ, և քանզի Օսմանյան զորքերը ետ քաշվեցին մինչև 1918 թ. սահմանագիծը, Վրաստանը և Հայաստանը ընկան Ջավախքի, Լոռու և Բորչալուի սահմանատարածքային պատերազմի մեջ: Այդ շրջանները նախկինում Թիֆլիսի նահանգապետության մի մասն էին, սակայն

[1] Տե՛ս **Наджафов Бахтияр**. ук. соч., с. 71-72: **Дикументы и материалы по внешней политике Закавказья и Грузии,** Тифлись, Типография Прав. Груз. Республ., 1919, N 229, с. 445:

[2] **Бахтадзе Михаил**, О Военном договоре 1919 года между Грузией и Азербайджаном, «Право и политология», 2010, № 7, с. 34-40: Տե՛ս www.elibrary.ar/docs/J URNAL /jin2010:

[3] **Timothy K. Blauvelt & Christofer Berglund,** Armenians in the Making of Modern Georgia Տե՛ս 22.05.final. Berglund: See discussions, stats, and author profiles for this publication at: Տե՛ս https://www.researchgate. net/ publication /303920623: eprints.iliauni. edu.ge/ 4587/ 1/22.05. final.Berglund.pdf:

[4] **Cornell Svante**, Small Nations and Great Powers: A Study of Ethno-political Conflict in the Caucasus, London: Routledge. 2001, p. 59: **Yilmaz Harun**, An Unexpected Peace: Azerbaijani-Georgian Relations 1918-20, «Revolutionary Russia», 22 (1), 2009, pp. 37-67:

երկար ժամանակաշրջանում բնակեցված էին հայերով: Բախման ընթացքում, վրաց հեղինակությունները առաջին իսկ պահից եկան այն մտքին, որ հայկական բնակչությունը պոտենցիալ թշնամի է: Դաշնակցական քաղաքական գործիչները ձերբակալվեցին, և կուսակցության հետ կապված թերթերը փակվեցին: Թիֆլիսի նահանգապետը բոլոր հայերին հայտարարեց պատերազմական թշնամի, շատ քաղաքացիներ ձերբակալվեցին և սեփականությունից զրկվեցին[1]: Թեև երկու հանրապետությունների միջև բախումը լուծվեց բրիտանական միջնորդությամբ 1919 թ. հունվարին, բանավեճերը շարժառիթ եղան ոչ վաղուցվա հաղթանակած դաշնակիցների համար ողջունելու երկու պետություններին, եթե ոչ ամբողջ Անդրկովկասյան տարածաշրջանը, որպես գլխացավանք ունենալու Փարիզի կոնֆերանսի ընթացքում»[2]:

Այս գուներ պատկերները ցույց են տալիս ողջ լարվածությունը հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերություններում, որն էլ հանգեցրեց երկու հարևան դրկից ժողովուրդների միջև անցանկալի և տնտեսաքաղաքական աղետալի հետևանքներով լի վրաց-հայկական կարճատև պատերազմին՝ Լոռու համար[3]:

Հայկական ամենահայտնի թերթերից մեկը Թիֆլիսում՝ «*Մշակ*»-ը ևս այդ օրերին իր էջերում անդրադարձավ Լոռու-Բորչալուի հիմնախնդրին և անաչառ գնահատականներ տալ կատարվող իրադարձություններին: «*Մշակ*»-ը այդ օրերին քարոզում էր բարեկամություն և փոխօգնություն երկու հարևան ազգերի միջև, մինչդեռ 1918 թ. սկսեցին պղտոր գործընթացներ էին ընթանում և Երևանի և Բայազետի շրջանների քարքարոտ մի չնչին հողամասում պատսպարված Հայաստանից վրաց իշխանությունները պահանջում էին հայկական Լոռին, Ալեքսանդրապոլի, Ղազախի շրջանների մի մասը, որոնք գերազանցապես բնակեցված էին հայերով, և Վրաստանը տենդագին ռազմա-

---

[1] **Hovannisian R. G.**,, The Republic of Armenia, Volume I: The Frst year, 1918-1919, Berkeley: University of California Press, 1971, p. 122.

[2] **Suny Ronald Grigor,** The Making of the Georgian Nation, Bloomington: Indiana University Press. 1994, p. 203:

[3] Տե՛ս նաև **Gharibyan Alik**, The Social-Economic and Political situation in Transcaucasus (1918-1921): Armenological Researches Institute of YSU: Տե՛ս www. karabakhcenter.com/.../ Alik%20Gharibyan%20-% 20 Social%20economic%20an:

կան նախապատրաստություններ էր տեսնում: «*Մշակ*»-ը այդ առթիվ ափսոսանքով գրում է, թե փոխանակ երկու քրիստոնյա եղբայրակից ազգերն իրար սատար կանգնեին, դեռ վրացական կողմը պահանջատիրական ձգտումներ էր առաջ քաշում, ինչն անպատասխան էր մնում վրաց մտավորականության կողմից, չնայած 1918 թ. «Հորիզոնը», «Աշխատավորը» և այլ թիֆլիսյան ազդեցիկ թերթեր ցավ էին արտահայտում վրացիների անհեռատես քաղաքականության առումով[1], փորձելով զսպել նրանց ռազմական բնույթի ակտիվացումը: Հետաքրքիր է սակայն այն հանգամանքը, որ «*Մշակ*»-ի գործիչների մի ազդեցիկ մասը առանձնապես ոգևորված չէին Դրոյի ռազմաքայլերով, կարծելով, որ ավելի նպատակահարմար է դիվանագիտական մակարդակով բանակցել վրաց իշխանությունների հետ՝ նոր փորձանքներից խուսափելու համար և ուղիներ որոնել հաշտվելու, մինչդեռ ի հակառակ դրան վրաց «*Սաքարթվելո*» ազդեցիկ լրագիրը ամբողջովին կլանվել էր հակահայկական քարոզչությամբ, վրաց կառավարությանը խորհուրդ տալով ավելի շրջահայաց լինել և հայկական բոլոր կազմակերպություններին վտարել Վրաստանի տարածքից: Այս առումով կապված 1918 թ. նոյեմբերի 10-ին կայանալիք անդրկովկասյան պետությունների կոնֆերանսի հետ «*Մշակ*»-ը իր մոտեցումը և արժևորումն է ներկայացնում. «այս շրջանում, երբ իշխում է միայն անասնական ախորժակը, որին հագուրդ տալու համար ներելի են ամեն տեսակ միջոցներ, մինչև իսկ ստորություն, խաբեություն, դավաճանություն և լրտեսություն, այսպիսի մթնոլորտում, որտեղ ամենից շատ տուժողը նորից խեղճ ու կրակ հայ ժողովուրդն է լինելու, հրավիրում են այդ կոնֆերենցիային մեր նահատակվող տարրերին լսելու քաղցր խոսքեր, *իսկ իրականում՝ խուզելու ու փուժելու*»: Շիրվանզադեն դրան ավելացրել էր, թե 40 տարվա տառապանքով հասունացած այդ հարցը միայն միջազգային կոնֆերանսի լուծման խնդիր է և անդրկովկասյան կոնֆերանսն իրավասու չէ նման հարց իր օրակարգում քննելու, այնինչ Լոռու Այգեհատ և Արդվի գյուղերում գտնվող վրացի զինվորները թալանում են ամեն ինչ: Իսկ եվրոպական մեծ երկրները աչք էին փակում կռվա-

[1] Տե՛ս **Ալոյան Լ. Ա.,** «Մշակ» լրագրի հրապարակախոսությունը 1905-1921 թթ., Եր., Ոսկան Երևանցի, 2003, էջ 56:

խնձոր դարձած Անդրկովկասի հարցերում: «*Մշակ*»-ի ներկայացուցիչները կարծում էին, որ ո՛չ վրացիները, ո՛չ էլ հայերը արտաքին օգնության սպասել չեն կարող և հենց այդ վիճակում բզկտում են իրար, փոխանակ համերաշխության քարոզին դիմելու, որ կարող էր այդ երկրները փրկել կործանումից[1]: Լրագրագետ Լ. Ալոյանը խորամուխ լինելով «*Մշակ*»-ի կողմից արծարծված հայ-վրացական հարաբերությունների թնջուկին, գրում է, որ «*Մշակ*»-*ը* անդրադառնալով վրացական սոցիալ-հեղափոխական «*Շրոմա*» թերթի 1918 թ. դեկտեմբերի 22-ի մի հոդվածին, ուր կոչ էր արվում արկածախնդրության մեջ չընկնել, ցավով նշում էր Սանահինի շրջանում և Բորչալուի գավառում տեղի ունեցող արյունալի բախումների մասին, որ ի հակառակ պատերազմը կանխելու հորդորներին, վրաց մամուլի օրգաններ «*Սաքարթվելո*»-ն, «*Էրթոբան*», «*Սախալի Սաքմեն*» կրակի վրա յուղ էին լցնում՝ կոչ անելով մինչև վերջ կռվել հայերի դեմ, հասնել վրաց պահանջատիրական ձգտումների իրականացմանը, դիմելով հակաօրինական քայլերի, այդ թվում ձերբակալելով հայերին, չխորշելով անգամ ձերբակալել «*Ժողովրդի ձայն*» թերթի աշխատակից Տիգրան Հախումյանին, կնքելով հայկական բոլոր կազմակերպությունները և թերթերի խմբագրատները, որից էլ օգտվում էին ադրբեջանցիները, Բորչալուի թուրք ազգաբնակչությանը ոտքի հանելով նացիոնալիստական տրամադրություններով համակված հայերի դեմ և այլ ծայրահեղությունների դիմելով: Հենց այս ամենը հիմք տվեց «*Մշակ*»-ին «նացիոնալիստական բոլշևիզմ» անվանել Վրաստանի կառավարության գործելակերպը, որ թե Ժորդանիայի «*բաժանի՛ր, որ տիրե՛ս*» սկզբունքը լավ հետևանքների չի հանգեցնի[2]:

«*Մշակ*»-ը «Դարձյալ գաճաճ իմպերիալիստների մասին» հոդվածում վրացական նկրտումների անհիմն լինելը ցուցադրում է վերջիններիս այն հայտարարագրով, թե Ջաջուռից բացի, նրանք վրաց-հայկական պատերազմի ժամանակահատվածում հավակնում էին նաև Կարսի մարզին և Արդահան-Օլթին, և անգամ Սոչիի շրջանին, և խեղաթյուրելով փաստերը, պնդում, թե հայերն ամենուրեք անցնում են Դենիկինի կողմը և կռվում վրացիների դեմ, այնինչ դա հայկական գյուղերի

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 56-57:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 58-59:

բնակչության կողմից ինքնապաշտպանական հակազդեցություն էր վրաց զորամասերի սանձարձակություններին: Բաքվում լույս տեսած «Հայ-վրացական զինված բախումը» գրքի առիթով «*Մշակ*»-ում տպագրվել է նաև Դավիթ Անանունի գրախոսականը, որում նա ընդգծում է այն փաստը, թե «*Հայաստանը սև եզն է, որ ընկել էր հրապարակում: Դանակները քաշել էին Թուրքիան և Ադրբեջանը: Իր գոտիկից դանակ հանեց նաև Վրաստանը: Դանակավորների դիմաց նորից ոտքի է կանգնում նրանց զոհը՝ արնաքամ Հայաստանը*»[1]:

Լոռու հիմնախնդիրներին իրենց քաղաքական մոտիվացիան և պարզաբանումներն ունեն նաև հայտնի բոլշևիկյան կուսակցական-քաղաքական գործիչները, որոնց տեսակետներում մերժելի կողմերի հետ մեկտեղ կան ռացիոնալ հատիկներ: Գ. Կ. Օրջոնիկիձեն ուղղակի արձանագրում է փաստը, ինչ-որ տեղ նաև մեղադրելով դաշնակներին և մենշևիկներին. «Եթե հայ-վրացական հարաբերությունների պատմությունը մինչև 1918 թիվը չգիտեր այդ ժողովուրդների զինված ընդհարումներ, ապա 1918 թվից, այսինքն՝ մենշևիկյան Վրաստանի և դաշնակցական Հայաստանի կազմակերպվելու մոմենտից սկսած այդ երկրները իսկական պատերազմ էին վարում»[2]:

Բավականին հետաքրքիր է հայտնի վրաց հասարակական գործիչ, «Էրթոբա»-յի խմբագիր Գրիգորի Իլ. Ուրատաձեի տեսակետը հայ-վրացական պատերազմի ծագման և այլ հարցերի վերաբերյալ «Հայ-վրացական պատերազմը գիտակից պրովակացիայի ձեռքի գործ էր: Այն ինչ-որ մեկին պետք էր, որպեսզի ապացուցեն, որ Կովկասում անկախ պետությունների գոյությունը անպատկերացնելի, անմիտ է: Այդ երկու մոտ հարևանների մեջ պատերազմը այդ հանրապետությունների անկախության հակառակորդների ձեռքին կարևոր շահաթուղթ էր: Երկու կողմերն էլ հասկացան, թե ինչքան կործանարար է այդ պատերազմը բոլոր առումներով, և ձգտում էին շուտափույթ վերջացնել այն»[3]: Ավելի ծայրահեղական մոտեցում ունի վրաց պատմաբան Գ. Մանդ-

[1] Տե՛ս «**Մշակ»,** Թիֆլիս, 1919 թ., N 58:

[2] Տե՛ս **Օրջոնիկիձե Գ. Կ.**, Ընտիր հոդվածներ և ճառեր. 1918-1937, էջ 61:

[3] Տե՛ս **Урагадзе Г.** А., Образование и консолидация Грузинской Демократической республики. Мюнехен, Исследования и материалы (Серия 1-я, выпуск 29). Институт по изучению СССР, 1956, с. 87-88:

ջգալաձեն. «Հենց այդ պատճառով էլ Հայաստանի ղեկավարները այդ իրադրությունը նպաստավոր համարեցին իրենց հավակնությունների բավարարման համար, և 1918 թ. դեկտեմբերի 7-ին, առանց պատերազմի հայտարարման, Հայաստանը ագրեսիա սկսեց Վրաստանի դեմ: Զինված հայկական զորաջոկատները գրավեցին Սանահինը և Ալավերդին, սկսեցին կողոպտել երկաթուղագիծը և այլ օբյեկտներ: Դրանից հետո Հայաստանի կառավարությունը վրացական իշխանություններին վերջնագիր ներկայացրեց՝ իրենց հանձնելու Ախալքալաքի և Բորչալուի գավառները: Վրացական կառավարության փորձերը խաղաղ բանակցություններ անցկացնել՝ դուրս եկան անարդյունք:

Վրաստանի կառավարությունը, չնայած և ուշացումով, սակայն միջոցներ ձեռնարկեց հայկական ագրեսիան ետ մղելու համար, հրաման արձակեց զորամասերին և հանրապետական Գվարդիային ազատագրել հայկական զորքերի կողմից ինքնակամ գրավված տարածքները: Դեկտեմբերի 19-ին սկսվեցին բախումները: Հայաստանի զորքերը ամենուրեք պարտություն կրեցին: Հայերը հատկապես ծանր պարտություն կրեցին Շուլավերի մոտի ճակատամարտում: Հայկական զորքերը սկսեցին նահանջը, որը վերածվեց փախուստի, Հայաստանը հայտնվեց ծայրահեղ վիճակում, և նրա սեփական տարածք ներխուժելու ճանապարհը բաց էր: Պատերազմի մեջ ներքաշվել էին ՀՀ բոլոր ուժերը, այն դեպքում, երբ Վրաստանի զինված ուժերի ռեզերվային մասերի նշանակալից մասը և՛ Արևմտյան, և՛ Արևելյան Վրաստանում դեռ նոր էր ներքաշվում դեպի ռազմաճակատ: Հենց այդ ժամանակ կոնֆլիկտին միջամտեցին Անդրկովկասում գտնվող անգլիական զորքերի հրամանատարությունը, որի օգնությունը բացահայտորեն փրկեց Հայաստանին ջախջախիչ վերջնական պարտությունից: Մի շարք բանակցություններց հետո և դեկտեմբերի 31-ի համաձայնությունից հետո ռազմական գործողությունները ռազմաճակատի ողջ գծով ընդհատվեցին և վրացական զորքերի առաջխաղացումը կանգնեցվեց»[1]:

Վրաց-հայկական պատերազմի ժամանակակից ևս Գերոնտի Քիքոչեն իր սեփական հայեցակետն ունի, որում ռացիոնալ մոտեցումներ

[1] Sե́u **Манджаладзе Г.**, Военный кинфликт между Грузией и Арменией в 1918 году// Dirçəliş XXI əsr».- 2008, № 120-121, c. 85-90. elibrary.az/docs/jurnal-08/148j.htm:

կան հարցին, և որոնք հանգում էր հետևյալին. «Հայաստանը Վրաստանի դեմ պատերազմն սկսեց Լոռու գավառի համար: Այդ գավառը հայերով էր բնակեցված, բայց անցյալում երկար ժամանակ եղել է Վրաստանի թագավորության սահմաններում: Հայաստանի և Վրաստանի բաժանման ժամանակ մնաց Վրաստանին, իբրև նախկին Թիֆլիսի նահանգի բաղկացուցիչ մաս»[1]: Ընդհանուր առմամբ, որոշ վերապահումներով հանդերձ, կարելի է համաձայնվել վերոնշյալ տեսակետով արտահայտված այս կամ այն նրբերանգի հետ, սակայն կան հարցադրումներ, որոնց հետ դժվար է համաձայնվել, քանի որ դրանք իրողությունը չեն արտացոլում և արտահայտում: Հարցը վերաբերում է պատերազմի պատճառներին և առիթներին և շարժառիթներին: Համակարծիք լինելով Հովի. Քաջազնունու վերն արտահայտված մտքերի հետ, միաժամանակ սակայն դժվար է համաձայնվել այն տեսակետի հետ, ըստ որի պատերազմի սկսման մեջ «որոշ դեր կատարել է նաեւ մեր բանակի մէջ գտնուող ռուս սպաների պրօվօկացիան», որովհետև անհավանական էր, որ այդ ռուս սպաները «գրգռում էին» հայկական զինվորական շրջանները Վրաստանի դեմ, ստեղծում էին թշնամական մթնոլորտ, որ «շատ նպաստաւոր էր ռազմական գործողութիւններ սկսելու համար»[2], քանզի դրանք հաստատող ուղղակի և հիմնավորված լուրջ փաստեր պարզապես չկան:

Ըստ էության քիչ ավելի ամբողջական և ավելի տրամաբանական է Հայ Ժողովրդի պատմության ակադեմիական հրատարակության 7-րդ հատորում արտահայտված տեսակետը (հաշվի առնելով նաև այն ժամանակաշրջանը, երբ այն գրվել է): Ընդհանուր առմամբ ճիշտ է բացահայտված սյուժեն, վեր հանված է այն աշխարհաքաղաքական իրավիճակը, որը հանգեցրեց այդ պատերազմին: Որպեսզի միտքն ավելի ամբողջական և լիարժեք ընկալվի, բառացի մեջբերում ենք հետևյալը. «Բորչալուի գավառի համար 1918 թվականի դեկտեմբերին եղբայրասպան պատերազմ է ծագում Հայաստանի և Վրաստանի միջև: Միջամտելով այդ պատերազմին, անգլիական իմպերիալիստներն առաջարկում են վիճելի շրջանը հայտարարել «չեզոք գոտի», որը կառավար-

[1] Տե՛ս **«Մնաթոքի»,** Թիֆլիս,,1989 թ., թիվ 7, էջ 106-107:

[2] Տե՛ս **Քաջազնունի Ցովի.**, նշվ. աշխ., էջ 34-35:

վելու էր անգլիական «նահանգապետի» կողմից: «Չեզոք գոտի» մտցվեցին անգլիական զորքեր...երկրամասը բաժանելով մանր մասերի, անգլիական իմպերիալիստներն այդ վայրերում հիմնում էին իրենց ժամանակավոր գեներալ-նահանգապետությունները (Կարսում, Բաթումում և այլ վայրերում) կամ ստեղծում «չեզոք գոտիներ»[1]:

Վրացական քաղաքական գործիչները, իշխանությունները իրենց սուբյեկտիվ կանխակալ կողմնորոշումն ունեին անգլիացիների խաղացած ոչ անկողմնակալ, սանձազերծիչ դերի վերաբերյալ հայ-վրացական ռազմաքաղաքական բախման խնդրում, որն իր արտացոլումը գտավ Վրաստանի պառլամենում տեղ գտած ելույթների մեջ, որոնք անմիջապես արձագանք գտան վրացական մամուլում և նույնիսկ պառլամենտում: Այսպես, վրաց-հայկական պատերազմի անմիջական ավարտից հետո, 1919 թ. հունվարի 3-ին ելույթ ունենալով Վրաստանի պառլամենտում, Եվգ. Գեգեչկորին պառլամենտի ուշադրությունը հրավիրեց «այն օրգանական կապի մեջ, որ կար Կովկասում դաշնակիցների հայտնվելու փաստի և պատերազմի հայտարարման փաստի միջև»: Անգլիացիներին վերագրվում էր սադրիչ դեր, որոնք դրդեցին Վրաստանին և Հայաստանի Հանրապետությանը բախման, նպատակ հետապնդելով, ըստ վրաց քաղաքական գործիչների՝ հաստատել իրենց գերիշխանությունը Կովկասում[2]:

Այս առումով դիտարժան է նաև այդ օրերին վրաց-հայկական հարաբերություններում առկա ռազմաքաղաքական լարվածության և դիվանագիտական-քաղաքական հակամարտության, դրանում Դաշնակիցների անմիջական մասնակցության մասին Վրաստանի զինված ուժերի նախկին հրամանատար, բախման օրերին Գլխավոր շտաբի պետի պաշտոնը ստածնած հայտնի ռազմական գործիչ, գեներալ Գ. Ի Կվինիտաձեի դիտարկումը. «Անտանտի զինվորական ներկայացուցիչները, ինչպես նաև գերմանացիները, ծուռ աչքով էին նայում դեպի Սահմանադիր ժողովի վրա ծավալվող Կարմիր դրոշը, ինչպես նաև դեպի Վրաստանի մարքսիստական կառավարությունը: Նրանց համա-

[1] Տե՛ս **Հայ ժողովրդի պատմություն**, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967, հ. VII, (1917-1941), էջ 63-64:

[2] Տե՛ս **Туманян М.**, Дипломатическая история Республики Армения, с. 103-104:

կրանքը հայերի կողմն էր: Բացի այդ, հայկական զորքերում կային շատ ռուս սպաներ: Մեր սպայությունը (վրացական- Վ. Վ.) հայկական զորքերն անվանում էին «7-րդ դենիկինյան կորպուս»: Իհարկե, հայերն ունեին ուրիշ այլ, ավելի խորքային պատճառներ հարձակվելու Վրաստանի վրա, առավել ևս, որ Հայաստանի կառավարության և Վրաստանի միջև ընթանում էին բանակցություններ: Գտնվելով պաշտոնաթողության մեջ, ես այդ բանակցություններից անտեղյակ էի:

Հայերը, հարձակվելով Վրաստանի վրա, չէին կարող հավակնել գրավելու Վրաստանը, անկասկած, նրանք դա գիտեին, և հազիվ թե նույնիսկ Դենիկինի և հնարավոր է, Անտանտի ներկայացուցիչների հրահրմամբ (ընդամենը երկու կապիտաններ, մեկ անգլիացի և երկու ֆրանսիացի) ռիսկ անեին պատերազմել Վրաստանի հետ:

1919 թ. վրացական կառավարությունը հրապարակեց «Վրաց-հայկական հարաբերությունների պատմությունից» գիրքը ռուսերեն լեզվով: Այդ գիրքը իմ ձեռքն ընկավ տարագրության մեջ, և նախապատրաստելով իմ հիշողությունները հրատարակման, 1955 թ. ես անհրաժեշտ գտա այդ գրքի հիման վրա մի քանի տող ավելացնել: Հայերի հետ բանակցությունները վարում էր Սոսիկո Մդիվանին, 1918 թ. անհաջող մի դիվանագետ Հայաստանում և այնուհետև Թուրքիայում 1921 թվականին, որը Բաթումին տվեց թուրքերին: Այդ գրքում գրվածից պարզվում է, որ մեր առաջնորդները 1917 թվականից հայերին խոստացել էին այն վրացական հողերը, որտեղ մեծամասնությունը հայեր էին, և դա, հավանաբար, վատ ըմբռնման և ազգերի ինքնորոշման ոչ ճիշտ կիրառման հետևանք էր: Բանը նրանում է, որ դարեր ի վեր Վրաստանը ապաստան է տվել Թուրքիայից փախած հայերին, ինչպես այժմ բոլոր երկրները ապաստան են տալիս Ռուսաստանից փախածներին: Իհարկե, մենք կարող էինք համաձայնվել Վրաստանից դուրս բերել հայերին դեպի նոր կազմավորվող հայրենիքը, սակայն ամենևին էլ չտալ տարածքը, որը միշտ հանդիսացել է վրացական պետության մասը: Ինչ վերաբերում է Վրաստանի կողմից պատերազմին պատրաստմանը, ապա այդպիսին բացարձակապես բոլորովին չի եղել, ո՛չ արտաքին քաղաքական, ո՛չ էլ ռազմական առումներով: Հայերը դա գիտեին և, արդեն պատրաստ լինելով պատերազմին, նրանք նախատեսում էին միանգամից գրավել իրենց կողմից հավակնվող տարածք-

ները և ճիշտ ենթադրում էին, որ Անտանտի ներկայացուցիչները կդադարեցնեն պատերազմը, հնարավոր է նաև՝ նույնիսկ այդ առումով ունեին նրանց համաձայնությունը:

Վրացիների արյունը հոսեց դեկտեմբերի 8-ից, իսկ զորահավաքը հայտարարվեց միայն դեկտեմբերի 18-ին, և դա այն ժամանակ, երբ մարտերն ընթանում էին մայրաքաղաքից 60-80 վերստի վրա: Ասեմ ավելին, դեկտեմբերի 12-ին հատուկ հանդիսավորությամբ տոնեցին Ժողովրդական Գվարդիայի կողմից զինանոցի գրավման օրը, որի ավելի մեծ հանդիավորության համար, ինչպես ես հետո իմացա Եկատերինֆելդից, ռազմական գործողությունների թատերաբեմից, Թիֆլիս կանչվեց Գվարդիայի հեծելակը» [1]:

Պետք է նկատել, որ ամենևին էլ նահանջ չկատարելով սահմանա-տարածքային խնդրում հակահայկական ռազմավարությունում, վրաց պատմաբանները, կապված հայ-վրացական պատերազմի բարդույթով առաջացած խնդիրների հետ, երբեմն արտահայտում են վարկածներ, որոնք որոշ վերապահումներով հանդերձ, այդուհանդերձ հետաքրքրություն են ներկայացնում. Այսպես, ոչ առանց հիմքի պնդելով, որ 1921 թ. հունվարին Բրիտանիան ուշացումով ճանաչելով Վրաստանի անկախությունը, ինչը գործնականում ուշացած քայլ էր, վրացական կողմը կարծում է, որ եթե Մեծ Բրիտանիան դեռ 1918-1919 թթ. ճանաչեր անդրկովկասյան երեք հանրապետությունների անկախությունը, ապա ամենայն հավանականությամբ, ռազմաքաղաքական զարգացումները Անդրկովկասում միանգամայն այլ որակական բովանդակություն կունենային, սակայն ինչը համապատասխանության մեջ չէր գտնվում բրիտանական կայսերական շահերի հետ և այդ տեսանկյունից մեռելածին էր ու անընդունելի էր բրիտանական ձգտումը սպիտակգվարդիական գեներալ Կոլչակի և նրա նմանների հետ եզրեր որոնելը, որոնց համար մերժելի էր անդրկովկասյան նորածին պետությունների դուրս գտնվելը նախկին ցարական կայսրության տիրույթների շրջանակներից:

---

[1] Տե՛ս **Квинитадзе Г. И.**, Воспоминания в годы независимости Грузии. 1917-1921, YMCA-PRESS 11, rue de la Montagne-Ste-Geneviève 75005, Paris, 1985, с. 57-58 (на рус. Языке):

Իսկ բրիտանացիների նման դիրքորոշումը, հավանաբար, բացատրվում է նրանով, որ մի կողմից աշխատելով չկորցնել իրենց աշխարհաքաղաքական հնարավորությունները Անդրկովկասում, ինչը գուցե և բավականաչափ ռեալ էր 1918 թ. վերջնամասում-1919 թվականի ընթացքում, ըստ էության անիրագործելի դարձավ 1920 թվականի վերջերին, երբ բոլշևիզմը դարձավ զորեղագույն իրողություն Ռուսաստանում, և ստեղծված իրավիճակում Բրիտանիան ելնելով հեռահար շահերից, ներքին խորքային գործարքի գնաց բոլշևիկյան Ռուսաստանի հետ, Անդրկովկասը հոժարակամ «նվիրաբերելով» վերջինիս, որի հետ մասամբ համամիտ են վրաց պատմաբանները: Հենց այդ հանգամանքն էլ գործնականում խոչընդոտեց Հարավային Կովկասի ժողովուրդների համախմբմանը: Բրիտանացիների պասսիվությունը անդրկովկասյան գործերում էլ ավելի խճճեց ռազմաքաղաքական իրավիճակը, զորացրեց ազգամիջյան բախումնային պայթունալիցքը, որի արդյունքում իրագործելի դարձավ աշխարհաքաղաքական նոր իրողությունը՝ բոլշևիկյան Ռուսաստանի կողմից Անդրկովկասի բռնազավթումը խորհրդայնացման տարբերակով, որի պարագայում մենշևիկյան Վրաստանն անգամ իր շուրջ 60 հազար զինվորներով և 20 հազար սպաներով (ըստ վրացական հեղինակների պնդման) անընդունակ գտնվեց դիմակայել Հյուսիսային Կովկասից ներխուժած Կարմիր բանակին: Պակաս հետաքրքիր չէ Թիֆլիսի «Աշխատավոր»-ի կողմից այդ օրերին արտահայտած մի տեսակետ ևս: Եվ ինչպես նշում <<Աշխատավոր>> թերթը, Վրաստանի ռազմական նախարարը հայտարարում է, որ ինքը Լոռու գյուղացիության շարժումը դիտարկում է որպես ապստամբություն և առանց հապաղման կճնշի, անտեսելով, որ գյուղացիները ընդամենը դիմել էին ինքնապաշտպանության, քանի որ վրացական զորքերի կողմից ենթարկվել էր բռնությունների և կողոպուտների, գտնելով, որ վրաց դեմոկրատիան պետք է ընդվզզի և բողոքի ընդդեմ գոլիցինյան ռեժիմի վերականգնման՝ պահանջելով կասեցնել ձերբակալությունները և վրաց կառավարության կողմից ձեռնարկված դաժան և կտրուկ միջոցները[1]:

[1] Տե՛ս **«Աշխատավոր»,** 31 հոկտեմբերի, 1919 թ. , N 170:, **ՀԱԱ**, ֆ. 275, ց. 5, գ. 93, թ. 24 հակ.-25:

Հարկ է նշել, որ այս պատերազմի սկսվելու օրվա հարցի հետ կապված նույնպես կան որոշ տարակարծություններ, որոնց մասին նույնպես արժե նշել: Վրաց-հայկական պատերազմի սկսվելու օրի հետ կապված տարբեր հեղինակներ տարբեր օրեր են նշում և միակարծիքություն այս տեսակետում չկա: Այդ օրերի ականատես, ՀՀ վերջին վարչապետ Ս. Վրացյանը որպես այդ պատերազմի սկիզբ դիտում է դեկտեմբերի 13-ը[1], վրացական կողմը՝ ըստ Կ. Սարդարյանի կողմից ներկայացված վարկածի՝ դեկտեմբերի 9-ին, որ դեկտեմբերի 13-ից վրացական զորքերը ստիպված են եղել պաշտպանվելու[2]: Իսկ ՀՀ Զինվորական նախարար գեներալ Հովի. Հախվերդյանը Վրաստանի և Հայաստանի միջև պատերազմական գործողությունների սկիզբը համարում է դեկտեմբերի 12–ից 13-ը, երբ «Ղարաքիլիսա-Լոռու զորաջոկատը Դրոյի գլխավորությամբ գրավեց Ուզունլար-Օձուն գյուղը, իսկ Ալեքսանդրապոլից դուրս եկած գումարտակը կոտրելով վրաց կայազորի դիմադրությունը, գրավեց Ախալքալաքը»[3], գտնելով, որ նախահարձակ կողմը եղել է Հայաստանը, որը ջուր է լցնում վրացիների ջրաղացին, և մեղմ ասած, գեներալ Հախվերդյանի թյուրըմբռնման արդյունք է, առավել ևս, որ նա գործնականում հեռու է եղել պատերազմական գործողությունների անմիջական թատերաբեմից, ընդ որում վիճարկելի է նաև Հախվերդյանի Ախալքալաքի գրավման հետ բերված փաստը, որի մասին հիմնավոր հիշատակումներ չկան, այլ կա ընդամենը վարկած, որ Դրոն հայկական զորուժի սակավաթվության պատճառով նախընտրել է առանց մարտի թողնել Ախալքալաքը: Չնայած պետք է նաև ասել, որ հենց նույն գեներալ Հովի. Հախվերդյանը այդ բոլորով հանդերձ իր մի կարևոր դիտարկման մեջ կարևորում է հենց Դրոյի դերակատարումը արդեն սկսվող պատերազմում. «...Գործողության պլանը կազմված էր ճիշտ, այսպես, զորամասերի հիմնական զանգվածը կենտրոնացվել էր գլխավոր՝ դեպի Թիֆլիս տանող ամենակարճ ճանապարհի ուղղությամբ, իսկ զորամասերի մյուս, փոքրաթիվ մասը երկրորդական՝ Ախալքալաքի ուղղությամբ: Երեք զորախմբերով

[1] Տե՛ս **Վրացյան Ս.,** Հայաստանի Հանրապետություն, էջ 227:
[2] Տե՛ս **Սարդարյան Կ.,** Նշվ. աշխ., էջ 77:
[3] Տե՛ս նույն տեղում. էջ 77:

հարձակվելը հնարավորություն է տվել դուրս գալ հակառակորդի թիկունքը, որը լեռնային պայմաններում մարտ վարելու համար շատ կարևոր հանգամանք է»[1], առավել ևս, որ ըստ Վ. Փափազյանի, հայկական փոքրաքանակ զորքերի հրամանատարը «կորովի, վճռական եւ հանդուգնի մէկն էր»[2], իսկ նրա գլխավորած «զօրագունդը պատերազմներու մէջ թրծուած ուժ մըն էր»[3]:

Ամեն դեպքում հասկանալի է, որ վրացական իշխանությունները առաջնային գիծ տեղափոխելով տարածքային սահմանազատման խնդիրը, հմտորեն շրջանցում էին Հայաստանի տնտեսաքաղաքական շրջափակման մեջ գտնվելու կարևոր հանգամանքը, ինչն ինքնին պատերազմական իրավիճակ էր Հայաստանի և Վրաստանի միջև, և որ ստեղծված դրությունում հայկական գերխնդիրը դարձավ Վրաստանի կողմից այդ շրջափակումը վերացնելը և արտաքին աշխարհի հետ հարաբերվելու հարցերի լուծումը, որը դանդաղ մահվան էր դատապարտել հայկական պետությանը՝ հաշվի չնստելով հայկական Լոռու բնակչության կամքի ազատ արտահայտման հետ: Հենց այդ հանգամանքն էլ դրդեց մեղավորներ փնտրող Վրաստանի կառավարությանը պատերազմի սկիզբ համարելու հայկական Ուզունլար գյուղի դեկտեմբերի 9-ի ապստամբությունը, որի դեպքում ՀՀ իշխանությունները չէին կարող անտարբեր դիտորդի դերում լինել, ինչը վրացական կողմը ներկայացնում է ծուռ հայելու մեջ: Մեր օրերի հետազոտող Հ. Գևորգյանը ևս նույն կարծիքին է[4], Աշ. Մելքոնյանը նշում է դեկտեմբերի կեսերը՝ ընդգծելով նաև, որ այդ պատերազմի «սանձազերծման գործում…իրենց ամենամեծ դերն ունեցան թուրքերը»[5], իսկ Մ. Կարապետյանը որպես այդ պատերազմի սկիզբ դիտում է դեկտեմբերի 11-ը, երբ Ալեքսանդրապոլից ուղարկված հայկական 4-րդ հետևակային գնդի առաջին գումարտակը շարժվեց Ախալքալաքի գավառ, և առատ ձյան

---

[1] Տե՛ս **ՀԱԱ**, Ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 8:

[2] Տե՛ս **Փափազեան Վ.**, Իմ յուշերը, հ. 2, Պէյրութ, 1953, էջ 496:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս **Գևորգյան Հ.**, Դրո, Եր.: Զանգակ 97, 1999, էջ 290:

[5] Տե՛ս **Մելքոնյան Ա.,** Ջավախք. Պատմության Ուրվագծեր. Երևան, ՀՀ ԳԱԱ«Գիտություն» հրատարակչ., 1999, էջ 33: Տե՛ս նաև **Մելքոնյան Ա.,** Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Եր.: «Զանգակ -97», 2003, էջ 301:

միջոցով շարժվելով դեպի քաղաք, ճանապարհին ընդհարում ունեցավ վրացական փոքրաթիվ կայազորի հետ, որը կարճատև մարտից հետո դիմեց նահանջի[1]:

«Великая Октябрьская Социалистическая революция» հանրագիտարանում նշվում է, որ ռազմական գործողությունները սկսվեցին դեկտեմբերի 9-ին, որն առաջ բերեց շովինիստական պայթյուն և՛ մենշևիկյան Վրաստանում, և՛ դաշնակցական Հայաստանում[2]:

Ադրբեջանցի Ռաուֆ Աֆշար օղլի Հուսեյնզադեն գտնում է, որ այն սկսվել է 1918 թ. դեկտեմբերի 9-ին, որից հետո շարունակվեցին ռազմական գործողությունները Լոռում և Բորչալույում[3]: Այսպիսով, ՎԴՀ-ը ետ մղեց ագրեսորին: ՀՀ-ն լիակատար պարտությունից փրկեց Մեծ Բրիտանիան, որն օգնեց Երևանին խուսափել մեծ ռազմական և քաղաքական ջախջախումից[4]: Քիչ այլ կերպ է հարցին մոտենում Ֆ. Կազեմզադեն. «Եթե չլիներ նրանց [հայերի] հավատը դաշնակիցների նկատմամբ, նրանք երբեք չէին հարձակվի Վրաստանի վրա: Նրանք համոզված էին, որ Անգլիան և Ֆրանսիան չեն խոչընդոտի...: Իր հիշողություններում գեներալ Դենիկինը, որը գլխավորում էր Սպիտակ շարժումը Ռուսաստանի հարավում, պնդում է, որ անգլիացիները հանդես էին գալիս Վրաստանի կողմում, քանի որ վրացիները իրենց հայտարարել էին, որ իբր Հայաստանը Վրաստանի դեմ չէ, այլ գտնվում է գեներալ Դենիկինի հետ դավադիր դաշինքում...Հայ-վրացական պատերազմը մեծ վնաս հասցրեց անդրկովկասյան հանրապետությունների անկախության գործին: Հայերի հետ վրացիների հին թշնամանքը բռնկվեց և հասավ նախկինում չտեսնված չափերի, անհնարին դարձնելով համատեղ հայ-վրացական գործողությունները Փարիզյան խաղաղության կոնֆերանսում»[5]: Սակայն ի մի բերելով վերն ասվածը, կարելի է գալ այն եզրահանգմանը, որ առավել նպատակահարմար

---

[1] Տե՛ս **Կարապետյան Ս.,** Հայաստանի Հանրապետության բանակը, էջ 87:

[2] Տե՛ս **Великая Октябрьская Социалистическая революция.** Энциклопедия. Издание третье, дополнение. Москва, «Советская энциклопедия», 1987, с. 45:

[3] **Гусейнзаде Рауф Алишир оглу**, Кавказ и армяне, Баку, Печатный дом «Апострофф», 2014 , с. 480:

[4] **Вачнадзе М**. и др. ук. соч.: Տե՛ս http://www.litmir.net:

[5] **Каземзаде Ф.,** Борьба за Закавказье, с. 175-177:

թվագրումը դեկտեմբերի 13-ն է, երբ սկսվեցին ռազմական բուռն և լուրջ գործողություններ Վրաստանի և Հայաստանի հանրապետությունների միջև: Վրաց-հայկական ռազմաճակատում գործող Հայկական զորքերի թվակազմի մեջ ներգրավվեցին 3-րդ բրիգադի 5-րդ և 6-րդ հայկական գնդերը՝ իրենց տրամադրված հրետանային դիվիզիոնով, որոնք տեղակայված էին Ղարաքիլիսայում և Դիլիջանում, 2-րդ հետևակային գունդը՝ 6-րդ հրետանային մարտկոցով, 4-րդ գունդը, որից մեկ գումարտակ արդեն ուղարկվել էր Ախալքալաք, գնդապետ Կորոլկովի հեծյալ գունդը, որը տեղաբաշխված էր Շահալի-Վորոնցովկա ուղղության վրա[1]:

Ս. Վրացյանը իր «Հայաստանի Հանրապետություն» գրքում բերում է այդ պատերազմին մասնակցած զորամիավորումների մասին բավականին ամբողջական տվյալներ. «Գործողություն սկսող զորամասի մեջ մտնում էին հետևյալ միավորները. աջ թևում՝ փոխգնդապետ Կորոլկովը 6-րդ գնդի 2-րդ վաշտով, 2 գնդացիրով, 3 հարյուրյակ ձիավորով և միլիցիոն գնդի 4 վաշտով: Կենտրոնում՝ փոխգնդապետ Նեստերովսկին 4-րդ գնդի 2 գումարտակով, 4 գնդացիրով, 7-րդ լեռնային մարտկոցը 2 թնդանոթով: Ձախ թևում՝ գնդապետ Տեր-Նիկողոսյանը 5-րդ գնդի 3 գումարտակով, 12 գնդացիրով, 4-րդ լեռնային մարտկոցը 3 թնդանոթով: Ընդհանուր պահեստ՝ հրամանատար գնդապետ Միրիմանյանը 4-րդ գնդի 3 վաշտով, 4-րդ գնդի ձիավոր հետախույզներով և 7-րդ լեռնային մարտկոցի 2 թնդանոթներով: Զորամասի ուժերի համագումար թիվն էր՝ 28 վաշտ, 26 գնդացիր, 7 լեռնային թնդանոթ, 4 հարյուրյակ ձիավորներ: Այս համեստ ուժերով սկսվեց հայ-վրացական պատերազմը»[2]: Ավելի ընդհանրացնող տվյալներ այդ պատերազմին մասնակցած հայկական բանակի թվակազմի մասին հանդիպում ենք ՀՀ զինվորական առաջին նախարար գեներալ Հախվերդյանի հուշագրությունում. «վաշտերը 100-200 անձնակազմ ունենալու պայմաններում զորամասերի անձնակազմի քանակը պետք է կազմեր 6000 սվին, 2000 աշխարհազորայիններ և 16-20 հրանոթ»[3]: Ի

[1] Տե՛ս **Կարապետյան Մ.,** Հայաստանի Հանրապետության բանակը, էջ 87-88:
[2] Տե՛ս **Վրացյան Ս.,** Հայաստանի Հանրապետություն, էջ 230:
[3] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 45, ց.1, գ. 32, թ. 8:

դեպ հարկ է ասել, որ Հայաստանի Հանրապետության ընդհանուր բանակի թիվն ըստ Հովի. Քաջազնունու կողմից 1919 թ. աշնանը ԱՄՆ-ի կառավարությանը ներկայացրած հուշագրի տվյալների ևս այնքան մեծ չէր, և հասնում էր 1919 թ. հուլիսի վերջերին 18 հազար հոգու[1], որից ինչպես արդեն տեսանք վերը, 6000 հոգի գտնվում էր հայ-վրացական ճակատում:

Սակայն հայկական բանակի զորամասերը անցնելով սարդարապատյան ճակատամարտաշարքի բովով (որի մասին հիշողությունները դեռևս բավականաչափ թարմ էին), բավականին թրծվել էին և մարտունակ էին, և դեռևս նրանցից հեռու էին քեմալա-բոլշևիկյան քայքայիչ քամիների հովերը, աշխարհաքաղաքական իրավիճակն էլ դեռևս այնքան սարսափելի չէր, ինչպես 1920 թվականի դեկտեմբերին, իսկ դաշնակիցներն էլ ահռելի խոստումներ էին տվել: Այնուհանդերձ, այդ փոքրաթիվ բանակի իրական հնարավորությունները բավականին համեստ էին, հատկապես զինվածության, և հանդերձավորման, ռազմամթերքի և սննդամթերքի առումով: Հայաստանի ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակը, բազմահազարանոց գաղթականությունը իր խնդիրներով հանդերձ իր ծանր կնիքն էր թողնում այդ ամենի վրա: Ավելացրած դրան, վրացական զորքերն ավելի լավ էին հագեցած տեխնիկապես նաև այն առումով, որ նրանց ուղեկցում էին 3 զրահագնացքներ, որոնք հզոր ուժ էին ներկայացնում: Հետագայում պարզվել է, որ Հայաստանի դեմ գործող վրաց զորքերի թիվը կազմել է 12 հազար սվին[2], այսինքն գրեթե 2 անգամ ավելի հայկական զորքերից: Դա շատ պատկերավոր է նկատել Ս. Վրացյանը. «Այստեղ կարող եմ ասել, որ Հայաստանը բոլորովին անպատրաստ էր նման պատերազմի համար, բայց ժողովուրդը և բանակը այնքան վրդովված էին վրացիների անիրավ վերաբերմունքից, որ կռվեցին արտակարգ քաջությամբ: Ընդհակառակն, վրացիները, որ ամեն տեսակետից գերազանց վիճակի մեջ էին, ունեին առատ ռազմամթերք, ուտելիք, հաղորդակցության միջոցներ, պատերազմի համար անհրաժեշտ մեքենայական սարքավո-

[1] Տե՛ս **Քաջազնունի Յովհ.,** Հայաստանի Հանրապետութուն, Եր., «Մ. Վարանդեան» հրատարակչութիին», 1993, էջ 17:

[2] Տե՛ս **«Կայծ»**, Երևան, 22 հուլիսի, 1919 թ., № 22:

րում, Գերմանիո աջակցությունը իրենց թիկունքում, զարմանալի կերպով ապիկար դուրս եկան»[1]:

Իսկ ահա հայ մեծագույն բանաստեղծ Հովհ. Թումանյանը Անդրանիկ Օզանյանին 1918 թ. դեկտեմբերի 14-ին ուղարկված նամակում պատերազմի այս պատճառների ու սկզբի մասին շատ պատկերավոր նկատում է. «Լոռեցիները վրաց զորքերի լրբությունից կատաղած հարձակվել են նրանց վրա, և առաջ է եկել կանոնավոր պատերազմ: Վրացիք նահանջել են մինչև Բորչալու՝ տալով բավական սպանվածներ և գերիներ: Զբաղված ենք էդ կռիվը վերջացնելու գործով»[2]: Եվ այսպես դեկտեմբերի 13-ին հայկական զորքերը ձեռնամուխ են լինում Լոռի-Փամբակը վրացական զորքերից մաքրելու Հայաստանի Հանրապետության կառավարության հրամանի կատարմանը: Հայկական զորքերի հարձակումը նախատեսված էր իրականացնել Վորոնցովկա-Պրիվոլնոյե-Սանահին-Օփրեվ]թ-Այրում ուղղությամբ:

Կռիվների առաջին օրվա արդյունքները գոհացուցիչ էին հայկական կողմի համար, չնայած զարհուրելի ցրտերին և այն հանգամանքին, որ մեր զինվորները տաք հագուստից զուրկ էին: Ուշագրավ է Ալ. Խատիսյանի այդ օրերի նկարագրությունը. «Հայերը համոզուած էին, որ իրենց գործը արդար է: Եւ, ընդհանրապէս, պետք է ըսել, որ պատերազմը ժողովրդական էր, հակառակ ցուրտին և սովին: Հոգեբանօրեն մեր ժողովուրդը կը մղուէր դէպի ազատ ելք, որ փակուած էր Վրաստանի կողմէ: Այնտեղէն էր, որ կը սպասէին հաց եւ յարաբերութիւն արտաքին աշխարհի հետ: Պատերազմը կը մղուէր շատ փոքրիկ ուժերով, կանոնաւոր կռուող զինուորներու թիւը 1000-էն աւելի չէր, բայց անոնց միացած էր Բորչալուի գաւառի ամբողջ հայութիւնը, որ կատաղօրեն կը կռուէր ձգտելով միանալ Հայաստանին»[3]: Կարծում ենք, որ որոշ հարցեր, այդուհանդերձ, որոշակի պարզաբանման կարիք են զգում: Կարծում ենք, որ դժվար է համերաշխվել Ռ. Հովհաննիսյանի տեսակետի

[1] Տե՛ս **Վրացեան Ս.**, Կեանքի ուղիներով. Ե. հատոր, Բէյրութ, տպարան «Համազգային», 1966, էջ 42:

[2] **Թումանյան Հովհ.**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 10, Եր.: ՀՀ ԳԱԱ, 1999 (նամակներ), էջ 299:

[3] Տե՛ս **Խատիսեան Ալ.**, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը., էջ 127-128:

հետ, երբ նա պնդում է հետևյալը, ինչը գործնականում հակասում է պատմաքննական խորքային եզրահանգումների տրամաբանությանը և կեղծ տպավորություն ստեղծում, որ հայկական ռազմաքաղաքական շրջանները խնամքով նախապատրաստվել էին վրացիների հետ ռազմական առճակատմանը: Եվ այսպես, վերջինիս պնդում բառացի հետևյալն է. «Ձեռք գցված հայկական փաստաթղթերը, որոնք հետագայում հրապարակվեցին վրացական կառավարության կողմից (*իսկական անգլոսաքսի հայկականացված մտածելակերպ և հայեցակետ է հիշեցնում* - Վ. Վ.), մատնանշում էին, որ Երևանը մանրամասն ծրագրեր էր նախապատրաստել մինչև Խրամ գետն ընկած հողերը գրավելու համար, և հայկական ռազմական գործողությունները կարծես հավաստում էին այս փաստաթղթերի իսկությունը»[1]:

ՀՀ Արտաքին Գործերի նախարարին ուղղված հեռագրում դեկտեմբերի 13-ի հեռագրում [N 5599] Վրաստանի Արտաքին Գործերի մինիստր Եվգ. Գեգեչկորին ի պատասխան հայկական կողմի հեռագրի (N 6913) ընդգծում էր Վրաստանի կառավարության դիրքորոշման մասին, ըստ որի անթույլատրելի էր համարվում որևիցե միջամտություն իրենց ներքին գործերի մեջ, որ դա վերաբերում է Ղարաքիլիսա-Լոռու զորամասի կողմից ՀՀ կառավարությանը ներկայացված զեկուցմանը, որում փաստեր են բերված եղել վրացական զորքերի անօրինականությունների մասին: Եվ հակառակը, վրաց նախարարը վերոհիշյալ հեռագրում, կեղծելով փաստերը, պնդում էր, թե նոյեմբերի 9-ից սկսած հայկական մի քանի զորամասի հայկական ծառայության շտաբի և օբեր-օֆիցերի հրամանատարությամբ կոտորվել է համարյա ամբողջ վրաց սահմանապահ զորախումբը, մնացածները գերի են վերցվել: Նշելով, որ արյունահեղությունը կանխելու նպատակով իրենք նոյեմբերի 14-ին Սանահին են ուղարկել պատվիրակություն, որի կազմի մեջ ներգրավված են եղել Հայոց Ազգային խորհրդի երեք անդամներ: Եվգ. Գեգեչկորին կեղծավորաբար հավաստիացնում էր, որ մինչ այդ իրենք զենքի չեն դիմել, և ըստ այդմ հանուն երկու եղբայրակից ժողովուրդների խաղաղ համակեցության առաջարկում էր «ձեռք առնել բոլոր մի-

[1] Տե՛ս **Հովհաննիսյան Ռ.**, Հայաստանի Հանրապետություն, հ. I, Առաջին Տարին, 1918-1919, Եր., «Տիգրան Մեծ», էջ 118:

ջոցները՝ դադարեցնելու համար արյունահեղությունն ու պատժելու այն անպատասխանատու անձերին, որոնք մեղավոր են այդ ցավալի դեպքերի համար»[1]:

Ի պատասխան, ՀՀ Արտաքին Գործերի նախարարը 1918 դեկտեմբերի 14-ի հեռագրում (913) ի պատասխան Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրի հեռագրի (N 5599) ընդգծում էր, որ դեռ դեկտեմբերի 10-ից հայկական կառավարությունն առաջարկել է անմիջապես վրացական զորքերը դուրս բերել Զաքաթալայի և Բորչալուի հայկական մասից, միակ նպատակը համարելով վրացական և հայկական զորամասերի միջև ընդհանրումը կանխելը, այնուհետև հիշեցնում վրացական կողմին, որ առաջարկություն անելը դեռ չի նշանակում միջամտություն Վրաստանի ներքին գործերին, ինչպես պնդել էր Վրաստանի Արտգործնախարարը իր նախորդ դիմումագրում, քանզի այդ տարածքը միշտ էլ կազմել է Հայաստանի անկապտելի մասը: Ըստ այդմ, վրացական կողմին առաջարկվում էր ձեռնպահ մնալ ագրեսիվ գործողություններից տեղական ազգաբնակչության նկատմամբ, որը չի ցանկանում Վրաստանի հետ միացումը, որին ի հակառակ այդ տարածքը իր համար հաստատապես ամրապնդելու համար վրացական իշխանությունները ձեռնարկեցին աւրշավանք խաղաղ ազգաբնակչության նկատմամբ՝ ընկերակցելով արյունալի և դաժան բռնություններին, ընդհուպ մինչև հրետանակոծության ենթարկելով հայկական գյուղերը, ավելացնելով, որ այդ ամենին հայկական կառավարությունը չի կարող անմասն մնալ: Վերջում կոչ էր արվում սեփական նախաձեռնությամբ զորքերը դուրս բերել, որի դեպքում միայն հայկական պատվիրակությունը կարող է հարաբերության մեջ մտնել, և վերականգնել խաղաղ համակեցությունը երկու ժողովուրդների միջև[2]:

Արտաքուստ, դատելով այս և մի շարք այլ փաստաթղթերի հպանցիկ դիտարկումից, թվում է, թե վրացական կողմը ձգտում էր ամեն կերպ հայ-վրացական կնճիռը համահարթել խաղաղ միջոցներով, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարությունն անհետևողականություն էր դրսևորում այս խնդրում, չնայած չի կարելի միանշանակ

[1] Տե՛ս **«Հորիզոն»**, Թիֆլիս, 17 դեկտեմբերի, 1918 թ., N 21:

[2] Տե՛ս նույն տեղում:

դատել այդ մասին: Այսպես, 1918 թ. դեկտեմբերի կեսերին տեղի ունեցած Թիֆլիսի քաղաքային Դումայի նիստը, որը լսեց քաղաքագլուխ Էլիավայի զեկուցումը հայ-վրացական միջադեպի մասին: Նիստում ելույթ ունեցած Վրաստանի Արտաքին Գործերի մինիստր Եվգ. Գեգեչկորին, անդրադառնալով երկու հանրապետությունների միջև փոխանակված նոտաներին, կեղծելով և աղճատելով փաստերը, ստահոդաբար պնդեց, թե իբր հայոց կառավարությունը միշտ խուսափել է կոնֆերանսից և այժմ ուզում է զենքի ուժով լուծել խնդիրը: Դումայի խմբակցությունների միջև սակայն կային որոշ տարակարծություններ, և դա արտահայտվում էր նրանում, որ վերջիններս պնդում էին, որ իրենք լավ ծանոթ չեն հայոց կառավարության տեսակետներին: Ի վերջո, մենշևիկների կողմից առաջարկվում է երկկողմանի մի բանաձև, որի առաջին մասում ցանկություն էր հայտնվում՝ վեճը լուծել խաղաղ ճանապարհով, իսկ երկրորդում՝ դրա իրագործման համար նախապայման էր դրվում՝ ***status quo ante bellum*** մինչև ռազմական գործողությունների սկսվելը, ասել է, որ ամեն մի կողմ զորքերը նախկին դիրքերը վերադարձնի: Եվ այսպիսով, քվեարկությամբ առաջին մասը ընդունվեց միաձայն, մեկ ձեռնպահով /Վեշապելի/, իսկ երկրորդ մասը՝ մերժվեց 40 ձայնով ընդդեմ 34-ի, և այս անգամ մենշևիկների բանաձևին դեմ ձայն տվեց սոցիալ-դեմոկրատական ընդդիմությունը[1]:

Սակայն այս ամենը ոչ մի արդյունքի չհանգեցրին, ռազմաղաքական առճակատումը Վրաստանի և Հայաստանի հանրապետությունների միջև աստիճանաբար դառնում էր անհերքելի իրողություն և ի վերջո վերաճեց պատերազմի, որը անցանկալի ծանր, հատկապես տնտեսաքաղաքական հետևանքներ ունեցավ Հայաստանի Հանրապետության համար, չնայած Հայկական Զինուժի տպավորիչ հաղթարշավին: Հենց այն հանգամանքից ելնելով, որ այդ ժամանակ արտաքին աշխարհի հետ կապող միակ կամուրջը Վրաստանն էր և նրա տարանցիկ ուղիները, հայաստանի Հանրապետության կառավարությունը հարկադրված գնաց ռազմաքաղաքական զիջումների Վրաստանի հետ, որպեսզի երկիրը փրկի անվերահաս սովից և փլուզումից, ինչն այդ պահին դարձավ արտաքինքաղաքական առաջնահերթություն:

[1] Տե՛ս **«Հորիզոն»**, Թիֆլիս, 18 դեկտեմբերի, 1918 թ., № 22:

ԳԼՈՒԽ 10.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՋԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ 1918-1920 ԹԹ.: ՊԱՏՄԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԵԶՐԵՐ

պ. գ. դ., պրոֆեսոր Վ. Հ. ՎԻՐԱԲՅԱՆ

Հոկտեմբերյան հեղաբեկումից անմիջապես հետո, Անդրկովկասում թուրքական ագրեսիայի ծավալման պայմաններում ընթացան քաղաքական ուժերի վերադասավորումներ, որոնք ուղեկցվեցին հայ խաղաղ բնակչությամբ նկատմամբ զարհուրելի բռնարարքներով և ջարդերով, որն արդյունք էր 1918 թ. մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկում Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի միջև ձեռքբերված համաձայնության, որով Ռուսաստանից խլվում էին Բաթումի, Կարսի և Արդահանի մարզերի նկատմամբ նախկինում ունեցած իրավունքները, ինչն ամենևին էլ չէր համաձայնեցվել Անդրկովկասյան կոմիսարիատի հետ, քանզի Սովետական Ռուսաստանը, Գերմանիան և Թուրքիան չէին ճանաչել նրա օրինականությունը: Արդյունքում, 1918 թ. մարտին Թուրքիայի հետ Անդրկովկասյան կոմիսարիատի բանակցությունները մեռելածին դուրս եկան, և ոչ մի արդյունք չտվեցին:

Ծանրագույն ռազմաքաղաքական իրադրությունում 1918 թ. ապրիլի 22-ին գումարվում է Անդրկովկասյան Սեյմը, որն ազդարարում է անկախ Անդրկովկասի Դեմոկրատական հանրապետության հռչակման մասին, որի գլուխ կարգվում է Ա. Չխենկելին: Անդրկովկասյան Սեյմը վերսկսում է բանակցությունները Թուրքիայի հետ, սակայն առաջին իսկ նիստում՝ Բաթումիում մայիսի 11-ին թուրքերը ներկայացնելով նոր և մասնավորապես հայերի համար միանգամայն անընդունելի պահանջներ, փակուղային իրավիճակ են ստեղծում, անդրկովկասյան միության հետագա գոյությունը զրկվում է իր հետագա հեռա-

նկարից: Վրացիների, հայերի և ադրբեջանցիների արտաքին քաղաքական շահերի անհամաձայնությունը արագացնում է Անդրկովկասյան ընդհանուր տան փլուզումը: Վրացիների պրոգերմանական, հայերի՝ պրոբրիտանական և առհասարակ արևմտամետ, ադրբեջանցիների՝ պրոթուրքական կողմնորոշումները և հովանավորությունները խաղում են իրենց չարաղետ դերը: Ստանալով գերմանական կառավարության երաշխիքները և հովանավորությունը Վրաստանի տարածքի ամբողջականության պահպանման մասին ու վերջինիս հետ կնքված գաղտնի համաձայնագրի հիման վրա Ազգային խորհուրդը 1918 թ. մայիսի 25-ին որոշում է ընդունում անկախ պետության՝ Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության հռչակման մասին, որին հետևում են ադրբեջանցիները և որոշակի հապաղումով՝ նաև հայերը: Բրիտանացի Մ. Ա. Հարոլդ Բաքսթոնը, որը ականատեսի աչքերով հետևել է վրացական պետականության կայացման գործընթացին, գրում է. «Այն առավելությունները, որին տիրապետում էր Վրաստանը, կայանում էին Սև ծովում նավահանգիստ ունենալու և աշխարհագրական միասնության մեջ, իսկ Ռուսաստանի փլուզումը նրա ձեռքերում թողեց հսկայական հարստություններ, վիթխարի պաշարներ և կազմակերպված մեխանիզմ: Անկախության հռչակմամբ նա փաստորեն դարձավ անկախ պետության անհրաժեշտ բոլոր հատկանիշների կրողը»[1]:

Կառավարության նախագահ է դառնում մենշևիկ Ն. Վ. Ռամիշվիլին (1918 թ. հունիսին նրան փոխարինում է Ն. Ժորդանիան), առաջին ռազմական նախարար՝ Գ. Գեորգաձեն, որին 1919 թ. մայիսին փոխարինում է Ն. Ռամիշվիլին, որը զգալի դեր է խաղում վրացական զինուժի ստեղծման գործում, այնուհետև վերջինիս 1920 թ. ապրիլին հաջորդում է Գ. Լորդկիպանիձեն, իսկ արդեն 1920 թ. դեկտեմբերին այդ կարևոր պաշտոնը ստանձնում է Պ. Չիչինաձեն[2]: Բարձրագույն օրենսդիր

[1]Տե՛ս **Безугольный А. Ю.,** Демократическая республика Грузия и ее вооруженные силы. 1918-1921 гг.: «Вопросы истории», 2009, ,№ 10, с. 87-101: Տե՛ս http:// istorja. ru/articles. html/caucasus/bezugolnyiy-a-yu-demokraticheskaya-respublika-gruziya-i-ee-vooruzhennyie-silyi - 1918-1921-gg-r377/:

[2] Տե՛ս **Каліберда Юрій**, 2015, Армія Грузиньской Демократично Республіки у 1918-1921, pp., «Воєнна історія», 2015, 1 (79), 1-21, Տե՛ս shron1. chtyvo. org.ua/.../ Armiia_ Hruzynskoi_ Demokratychnoi_Res..., ,հմմտ. նաև **Janelidze Otar**, The Democratic Republic of Georgia 1918-

մարմնի գործառնությունները դրվում են Վրաստանի Ազգային խորհրդի վրա, որին 1919 թ. մարտին հաջորդում է Սահմանադիր ժողովը, որի նախագահ է ընտրվում Ն. Չխեիձեն, որում գերակշռող քաղաքական ուժը 1917 թ. աշնան Սահմանադիր ժողովի ընտրություններում հաղթած մենշևիկներն էին, որոնք ստացել էին 640,2 հազար ձայն՝ իրենց ուղենիշ ընտրելով ռազմաշունչ ազգայնամոլությունը[1]:

Ռազմական ուժի վրա հենք անելը ներքին և արտաքին հարցերի լուծման գործում Վրաստանի մենշևիկյան կառավարության համար բնութագրիչ առաջնահերթություն դարձավ: Դրա վրա առավելապես ազդեց այն հանգամանքը, որ ի տարբերություն Ադրբեջանի և մասնավորապես Հայաստանի, Վրաստանն օգտվեց Թիֆլիսում կենտրոնացված նախկին Կովկասյան բանակի հարուստ զինապահեստներից, ինչն էլ կարևոր գործոն դարձավ Անդրկովկասում հեգեմոնիստական ծրագրերին առաջնություն տալու խնդրում, և մասնավորապես հայերի բացահայտ ճնշման համար: Իսկ այդ ռազմավարական ծրագրերի իրականացման ազգային հանրապետությունների առաջնահերթություններից մեկն էլ հենց դարձավ ազգային զինուժի ձևավորումը:

Առաջին քայլերն ազգային զինուժի, այդ թվում հայկական և վրացական բանակային կորպուսների կազմակերպման ուղղությամբ արվել էին դեռևս 1917 թ. նոյեմբերին, սակայն դրանք գործնականում ձախողվում են Կովկասյան բանակի քայքայմամբ: Կովկասյան բանակի հրամանատար Մ. Պրժևալսկու[2] հրամանագրի համաձայն անհրաժեշտ

1921, Tbilisi, Instytut Pamięci Narodowej 2018: Տե՛ս Pamięci Narodowej, https://www.academia.edu/42234413/The_Democratic_Republic_of_Georgia_1918-1921:

Уратадзе Г. И., Образование и консолидация Грузинской демократической республики, Мюнхен, Исследования и материалы (серия 1-я, выпуск 29). Институт по изучению СССР, 1956, с. 77-78:

[1] Տե՛ս **Безугольный А. Ю**., Демократическая республика Грузия и ее вооруженные силы. 1918-1921 гг., с. 87-101:

[2] **Պրժևալսկի Միխայիլ Ալեքսեյի** (5.11.1859 -13,12.1934, ցարական բանակի գեներալ (19.11.1916): Գլխավորել է Կաղզվանի զորաջոկատը: Սարիղամիշի գործողության ժամանակ ղեկավարել է քաղաքի պաշտպանությունը: 1917 թ. մայիսի 31-ից դարձել է Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատարը: Դեկտեմբերի 5(18)-ին Պրժևալսկին Թուրքիայի հետ կնքել է Երզնկայի զինադադարը: 1918 թ. վերջին Պրժևալսկին գեներալ Ա. Ի. Դենիկինի կողմից նշանակվում է Կովկասում Կամավորական զորքերի հրամանատար: 1919 թ. մեկնել է տարագրության. -**Залесский К. А.,** Кто был кто в первой мировой

էր ձևավորել 2 հրաձգային դիվիզիա, 2 լեռնային հրետանային և հեծյալ բրիգադներ, հրասանդային դիվիզիոն և պահեստազորի գունդ: Վրացական բանակային կորպուսի հրամանատար է նշանակվում գնդապետ Ահմետելին (Ահմետելաշվիլին), շտաբի պետ՝ կապիտան Ի. Գեդևանիշվիլին: 1918 թ. փետրվարի 25-ի վիճակով կորպուսի ղեկավարությունը, հետևակային և հեծյալ զորամասերն արդեն ձևավորված էին, ավելացրած առանձին գորիական վաշտը, հեծյալ հարյուրակը և զորահանգրվանային վաշտը[1]: Ըստ Յ. Կալիբերդայի, վրացական կորպուսն 1918 թ. ուներ 11281 հոգի, այդ թվում 924 սպա, 9476 հետևակ զինվոր, 641 հեծելակ[2]: Սակայն ինչպես հայկականի պարագայում, վրացական ազգային զորամասերի ձևավորման գործառույթներն ընթացան լուրջ խոչընդոտների և բյուրոկրատական քաշքշուկի ու միջոցների բացակայության պայմաններում[3]: Գ. Ի. Ուրուտաձեի կարծիքով, ազգային զորամասերի կազմավորման անհաջողությունները պայմանավորված էին նրանով, որ զորամասերը *«ուժեղ վարակված էին բոլշևիկյան թույնով»*[4]: Արդյունքում, բոլշևիկների ազդեցության տակ ընկած զորամասերը դժկամությամբ էին ենթարկվում Ազգային խորհուրդների կարգադրագրերին կամ չէին ենթարկվում: Ըստ այդմ Թիֆլիսի բանվորների պատգամավորների գործադիր կոմիտեն որոշում է ընդունում կազմացրել ազգային զորամասերը, թողնել, որ զինվորները տուն գնան, սակայն առանց զենքի: Երբ պարզվում է, որ զինվորների մի զգալի զանգված հակառակ է զինաթափմանը, այդ ժամանակ էլ որոշվում է նրանց ազատ արձակել, իսկ կորպուսի ղեկավարությունը

войне. Биографический энциклопедический словарь, М., Астрель. АСТ, 2003, с. 124, 464, 495-496, 527, 819, հմմտ. նաև **Ганин А. В.,** Короус офицеров Генерального штаба 1917-1922 гг., Справочные материалы, М., Русский путь, 2009, с. 316-317, 421, 487, 584, 733, 877:

[1] Տե՛ս **Дерябин А., Паласиос-Фернандес Р.**, Гражданская война в России. 1917-1922: Национальные армии, М., Астрель, 2000, с. 38:

[2] Տե՛ս **Каліберда Юрій**, Армія Грузиньской Демократично Республіки у 1918-1921:

[3] Տե՛ս **Безуголъный А. Ю.**, Демократическая республика Грузия и ее вооруженные силы. 1918-1921 гг., с. 87-101:

[4] Տե՛ս **Урутадзе Г. И.,** Образование и консолидация Грузинской демократической республики, с. 42:

կազմացրվում է 1918 թ. մայիսի 26-ին[1], այսինքն՝ Վրաստանի անկախության հռչակման օրը:

Ելնելով ստեղծված իրավիճակից, Վրաստանի Ազգային խորհուրդը վճռում է ինքը ձեռնամուխ լինել սեփական զինված ուժերի՝ Կարմիր Գվարդիայի ստեղծմանը: Այն ուներ ռազմականացված բնույթ, որը սակայն չէր բավարարում ազգային պաշտպանության պահանջներին, այն ավելի շուտ երկրի ներսում ոստիկանական-պատժիչ գործառնությունների համար էր: 1917 թ. վերջին ազգային-հայրենասիրական ալիքի վրա առաջացած Գվարդիան պատմական թատերաբեմից չի հեռանում և իր տեղը չի զիջում կանոնավոր զորամասերին, որը կրկնվում է նաև Հայաստանի Հանրապետությունում, որտեղ զորքի կազմակերպման ֆիդայական-ժողովրդական ոչ մեծ ենթարկվածություն ունեցող և կանոնավոր կառուցվածք չունեցող ձևը բախվեց զորքի կազմակերպման դարամակարդակ հրամայականին համապատասխան ընդունելի ձևի հետ, որի հետևանքով ՀՀ զինուժը լիարժեքորեն չկայացավ և տկար դուրս եկավ՝ չկարողանալով ապահովել պատշաճ մարտունակություն: Ընդհակառակը, ինչպես հայկական ֆիդայական զինուժը, այնպես էլ վրաց Ազգային Գվարդիան, որոնց զինվորները ամենաանկարգապահներն էին, անընդհատ ծաղկեցին և քանակապես աճեցին, նույնիսկ երբ կանոնավոր ազգային զորուժը կարծես թե քիչ թե շատ կայացել էր:

Բավականին արագ ձևավորումից հետո վրաց Կարմիր Գվարդիան վերանվանվեց Ժողովրդական Գվարդիա: Մենշևիկները վերանվանման անհրաժեշտությունը պատճառաբանեցին 1918 թ. հունիսի 4-ի վրաց-թուրքական հաշտության պայմանագրով, որի համաձայն թուրքերն իրավունք ունեին զինաթափել զինված բանդաները, ինչպես օրինակ թուրքերի կողմից *«բանդա»* անվանված Անդրանիկի զորաջոկատը, որի կազմացրման հետ ՀՀ կառավարությունն արագ *«համակերպվեց»*: Եվ որպեսզի Կարմիր Գվարդիան չընկներ «բանդա» անվանման տակ, Վրաստանի Սեյմը օրինականացրեց Գվարդիայի գոյությունը այլ

[1] Տե՛ս **Квинитадзе Г. И.**, Мои воспоминания в годы независимости Грузии,, с. 20:

անվան տակ, որը կհամապատասխաներ օրենքի տառին և ոգուն[1]: Գեներալ Գ. Կվինիտաձեն նկատել է, որ վերանվանումը կատարվեց ի շահ Թիֆլիս ժամանած գերմանացիների[2]: Կարմիր Գվարդիա անվանումը իրականում ուղղակիորեն զուգորդվեց Ռուսաստանի բոլշևիկյան զորաջոկատների հետ, որոնց հետ մենշևիկները չէին ցանկանում որևիցե ընդհանուր եզր ունենալ, այդ իսկ պատճառով էլ վերանվանումը անխուսափելի դարձավ[3]: Կանոնավոր ուժերից բացի, Վրաստանի քաղաքական ղեկավարությունը զուգահեռաբար զարգացրեց իրեն ենթակա պարտիզանական-անկանոն կազմակերպությունները, մասնավորապես, սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամներից կամ հետևորդներից հավաքված Ժողովրդական պահակազորը: Այդուհանդերձ, սկզբում Գվարդիան պետական մարմին չէր և հովանավորվում էր մասնավոր կերպով: 1918 թ. հուլիսի 2-ին ընդունված «Ժողովրդական Գվարդիայի» վերափոխման մասին օրենքով այն վերածվեց պետական զինվորական կազմակերպության, որը ֆինանսավորվում էր պետական բյուջեից: Օրենքը զգալիորեն ձևափոխեց նրա կառուցվածքը, բացի հետևակ զինվորներից, այն նաև ձեռք բերեց հրետանի, զրահապատ գնացքներ, ինժեներային խմբավորումներ և այլն: Ժողովրդական Գվարդիան համարվեց կամավորական կազմակերպություն և զինված զինվորները պարտավոր չէին մնալ զորանոցներում: Նրանք իրենց ժամանակի մեծ մասը անց էին կացնում տանը կամ աշխատավայրում, և միայն պատերազմի կամ մարտական դասընթացների ժամանակ հավաքվում: Գվարդիականները չէին վճարվում իրենց ծառայության համար, սակայն նրանց ընտանիքները պատերազմի ժամանակ որոշակի սոցիալական օգնություն էին ստանում: Աշխատավարձը տրամադրվում էր միայն հրամանատարական և մատակարարման

[1] **Жордания Н. Н.**, Моя жизнь, Стенфорд, The Hoover inst. on war, revolution and peace, 1968, с. 96:

[2] **Квинитадзе Г. И.**, Воспоминания в годы независимости Грузии, с. 53:

[3] Տե՛ս **Борьба за Закавказье (1917-1921**), Институт стратегических исследований Кавказа, (Баку, Азербайджан), Серия «История Кавказа», Стокгольм, CA&CC Press®, 1958, с. 354-355:

անձնակազմին: Գվարդիականների հրամանատարությունում որևիցե սպայական կոչում չկար[1]:

1918-1920 թթ. Վրաստանի կառավարությունը բազմիցս անդրադառնում է եվրոպական չափանիշներին համապատասխան կանոնավոր բանակի ստեղծման խնդրին, սակայն վրաց բանակը և Ժողովրդական գվարդիան գործեցին զուգահեռաբար, անկախ մեկը մյուսից և միայն պատերազմների ժամանակ էին միավորվել մեկ ընդհանուր հրամանատարության ներքո: Խաղաղ ժամանակ բանակի և Գվարդիայի գործողություններում կոնսենսուս էր իշխում՝ կառավարության միջնորդությամբ ռազմական նախարարության և Ժողովրդական Գվարդիայի Գլխավոր շտաբի միջև կայացված պայմանավորվածությամբ: Ինչպես ՀՀ զինուժում, որտեղ ֆիդայապետերի, անկանոն զորամասերի և կանոնավոր բանակի հրամանատարների միջև գոյություն ուներ խուլ հակամարտություն, այնպես էլ Վրաստանում Ժողովրդական Գվարդիայի և բանակային ստորաբաժանումների միջև առկա է եղել սուր բախումնային-հակամարտ իրավիճակ և ձգտում իշխելու մեկը մյուսի վրա, և առավելապես ոչ կանոնավոր, հայդուկատիպ զորաջոկատների կողմից, որոնք ամեն կերպ ձգտել են ոչ միայն չենթարկվել կանոնավոր ազգային բանակների հրամանատարությանը, այլև եսամոլաբար ձգտել իրենց կամքը պարտադրել, որից երկու հանրապետություններում էլ բանակաշինության գործն էապես տուժել է: Վրաց պատմաբան *Գեորգի Անչաբաձեն* գտնում է, որ հենց վրաց մենշևիկներն են կազմակերպել «Կարմիր Գվարդիան», որը 1917 թ. դեկտեմբերի 12-ին բռնագրավում է Թիֆլիսի զինապահեստը՝ զինաթափելով այնտեղի բոլշևիկյան գվարդիային[2], և որի անհետևողական քննադատությամբ է հանդես գալիս գեներալ Կվինիտաձեն անդրադառնալով 1917-1918 թթ. իրադարձություններին[3]:

Պատմական այդ պահին Վրաստանում գտնվող գերմանական ռազմական ներկայացուցիչները վրացիներին առաջարկում են իրենց աջակցությունը ազգային զինված ուժերի կազմակերպման գործում,

[1] Տե՛ս **Anchabadze G.**, Armed Forces of Georgian Democratic Republic in 1918–1921, «Latvijas Universitātes Žurnāls». Vēsture, N 5, p. 100-115», 2018, N 5, p. 104:

[2] **Anchabadze G.**, Armed Forces of Georgian Democratic Republic in 1918–1921, p. 103:

[3] Տե՛ս **Квинитадзе Г. И.**, Воспоминания в годы независимости Грузии, с. 46-47.

սակայն ոչ ադեկվատ վերաբերմունքի են արժանանում կառավարության կողմից[1]: Վրաստանի ղեկավարությունը զորքի՝ զինված միլիցիայով փոխարինելու Մարքսի թեզի հետևորդն էր և ավելի հակված էր շվեյցարական մոդելին[2]: Գերմանական ռազմական խորհրդականների ծրագրի համաձայն անհրաժեշտ էր ձևավորել երկու հրետանային և մեկ հեծելազորային ստորաբաժանումից բաղկացած կանոնավոր բանակ: Վրաց զինվորականների մեծամասնության աջակցությամբ գերմանական մոդելը որոշակի փոփոխություններով հանդերձ ընդունվում է[3]: Սակայն արագ էլ Կարմիր Գվարդիայի առնչությամբ կարծիքները բաժանվում են: Գերմանացիները թերահավատորեն վերաբերվելով հեղափոխությամբ ծնված այդ կառույցին, դեմ են արտահայտվում միլիցիատիպ զինված կազմավորումների ստեղծմանը, պնդելով, որ դրանք կխախտեն զինված ուժերի ամբողջականությունը, սակայն խորհրդարանական ռազմական հանձնաժողովը միաձայն քվեարկում է կուսակցական ռազմական միավորումների օգտին: Ի վերջո, կողմերը համաձայնվում են, որ Գվարդիան բացառապես կզբաղվի ներքին խնդիրներով, իսկ պատերազմի ժամանակ կլուծարվի և գվարդիականները կմիանան բանակին իրենց կամավոր զինվորագրվածներով: Այնուամենայնիվ, գերմանացիների մեկնելուց հետո ղեկավարությունը անտեսում է պայմանավորվածությունները և Գվարդիային իրավունք վերապահում մարտադաշտում հանդես գալու որպես առանձին միավոր[4], ինչպես դա կար Հայաստանի Հանրապետության պարագայում էր: Դրա պատճառը ակնհայտորեն ի վերուստ Ժողովրդական Գվարդիային վերապահված արտոնյալ վիճակն էր, ինչպես նաև գվարդիականների վերնախավի չչափավորված ձգտումը՝ ցանկացած գնով պահպանել անկախ կարգավիճակը, ինչպես և հայ հայդուկապետերի պարագայում: Իր հերթին, միանգամայն մեթաթիվ վրաց գեներալիտետը, որ արմատներով կառչած էր ռուսական բանակից, ինչպես դա կար հայկական իրականության պարագայում, արհամարանք էր զգում գվարդիականների ազգայնամոլական խաղարկումների նկատմամբ:

[1] **Anchabadze G.**, Armed Forces of Georgian Democratic Republic in 1918–1921, p. 103:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Տե՛ս նույն տեղում, p. 103:

Վրաց կադրային գեներալները, որոնք ռուսական ռազմական կրթօջախներում ուսանած մարդիկ էին, Ժողովրդական Գվարդիան անվանում էին *«ռազմական կազմակերպության անոմալիա»* և արտահայտվում էին կանոնավոր բանակի ստեղծման գործում ռազմագիտական դարամակարդակ չափանիշների կիրառման օգտին[1]:

1919-1920 թ. վերջին վրացական բանակը իրենից ներկայացնում էր քիչ թե շատ կազմավորված մարմին, այն համալրվում էր համընդհանուր զինապարտության հիման վրա, 20 տարին լրացած զինապարտների հաշվին, ընդ որում զինվորական ծառայությունը հետևակում 1,4 տարի էր, իսկ մնացած զորատեսակներում՝ 1,8 տարի, որը պատերազմի ժամանակ փոփոխվում էր, որի դեպքում զորակոչի էին ենթարկվում ինչպես ավելի կրտսեր տարիքի, այնպես էլ այլ տարիքային կազմի զինակոչիկները: Ըստ հետախուզության տվյալների, այդպիսի համակարգի և տղամարդ զինապարտ բնակչության թվաքանակի պայմաններում (525 հազար մարդ), վրացական կառավարությունը տեսականորեն կարող էր զորակոչել մոտ 160 հազար մարդու, սակայն նկատի ունենալով նախորդ զորակոչերի փորձը *(զանգվածային խուսափում զորակոչից և դասալքություն, ինչպես Հայաստանի Հանրապետությունում, որտեղ դասալքությունը 1919 թ. դեկտեմբերին զանգվածային չափերի էր հասել՝ կազմելով շուրջ 17.665 մարդ[2], և դա այն պարագայում, երբ ըստ Հովի. Քաջազնունու կողմից ԱՄՆ-ի Սենատին 1919 թ. նոյեմբերի 10-ին ներկայացված ՀՀ կառավարության հուշագրի՝ մահմեդականների թիվը [թաթար, թուրք, թուրքմեն, կարափափախ) կազմում էր 588.000 մարդ կամ ողջ բնակչության 27%-ը, որը 1917 թ. վիճակով կազմում էր 2.159 հազար հոգի, 1919 թ.՝ 961,7 հազար[3], որն արդյունք էր 1917-ից մինչև 1919 թ., այսինքն՝ 1917 թ. հեղափոխությունից մինչև 1918 թ. հունիսի 4-ի Բաթումիի պայմանագրից մինչև 1919 թ. սկզբի համեմատական կայունացման ժամանակաշրջանը տեղի ունեցած տեղաշարժերի[4])* համարվում էր, որ ընդհանուր զո-

[1] **Квинитадзе Г. И.**, Воспоминания в годы независимости Грузии, с. 7, 8, 62:

[2] Տե՛ս **ՀԱԱ**) ֆ. 199, ց. 1, գ. 29ա, թ. 348:

[3] Տե՛ս **Հայկական հարց. Հանրագիտարան**, էջ 212:

[4] **Քաջազնունի Ցովի.**, Հայաստանի Հանրապետութիւն, Երեւան, «Մ. Վարանդեան», 1993, էջ 11:

րահավաքը կարող էր տալ առավելագույնը 65-80 հազար մարդ[1], չնայած վրաց ղեկավարները դաշնակից պետություններին հավաստիացնում էին, որ իրենք կարող են մարտի դաշտ դուրս բերել անգամ 200 հազար մարդ[2]: Ռազմական պատմաբան Ա. Վ. Գանինը վկայակոչելով 1920-1921 թթ. Վրաստանում ՌԽՖՍՀ ռազմական-հետախուզական առաքելության ղեկավար, ռազմական կցորդ, Գլխավոր շտաբի փորձառու գեներալ-մայոր Պ. Պ. Սիտինի[3] կողմից բերված փաստերը, նշում է, որ վրացական բանակի 90 տոկոսը գերազանցապես կազմում էին վրացիները, 5 տոկոսը՝ վրացական հայերը, 2 տոկոսը՝ Վրաստանում ծնված ռուսները, այդ թվում մուսուլմանները[4]: Հետաքրքիր են Պ. Սիտինի կողմից վրացական բանակի կարողությունների գնահատման բնութագրական մի շարք կողմեր ևս. Ըստ նրա, «ռազմական արվեստի տեսանկյունից վրացական զինված ուժերը չեն կարող իրենցից ներկայացնել ուժեղ, հզոր, թեկուզև քանակով ոչ նշանակալից զորք: Ըստ վերջինիս այդ բանակի մարտունակության գործակիցը միանգամայն փոքր էր, բանակի հրամանատարական կազմը, թեկուզև և կազմված էր մեծ մարտական փորձով նախկին զինվորականներից, սակայն այդ սպաները չեն օգտվում հեղինակությունից զինվորների շրջանում:

---

[1] **Безугольный А. Ю.**, Демократическая республика Грузия и ее вооруженные силы. 1918-1921 гг., с. 87-101:

[2] Տե՛ս **Борьба за победу советской власти в Грузии**, 1958, с. 355:

[3] **Պավել Պավելի Սիտին** (18.07.1870–22.08.1938)- խորհրդային ղեկավարությանը հայտնի է որպես ՌԽՖՍՀ Հարավային ռազմաճակատի հրամանատար (այդ ժամանակ նա բախվում է ռազմաճակատի Ռազմահեղափոխական խորհրդի (ՌՀԽ) անդամ Ի. Վ. Ստալինի հետ): 1918 թ. վերջին Սիտինը փաստացի հեռացվում է ակտիվ աշխատանքից, զբաղեցնելով Հանրապետության Հեղափոխական ռազմական խորհրդի (ՀՀՌԽ) ռազմավարչական բաժնի կառավարչի երկրորդական պաշտոնը, սակայն 1920 թ. նրան նորից հիշում են և գործուղում պատասխանատու ռազմադիվանագիտական աշխատանքի: 1921 թ. վրաց-խորհրդային պատերազմի ժամանակ ձերբակալվում է, 1,5 ամիս արգելափակվում Քութաիսիի և Բաթումիի բանտերում, որի մասին ըստ Ա. Վ. Գանինի, իր կողմից նյութեր չեն հայտնաբերվել: Այդ մասին տեղեկացված է եղել նաև Կովկասյան ռազմաճակատի Ռազմահեղափոխական խորհրդի անդամ Ս. Օրջոնիկիձեն, բարձր գնահատական տալով Պ. Սիտինի հետախուզական գործունեությանը և մասնավորապես վրացական բանակի մասին նրա հաղորդած տեղեկատվությանը: Տե՛ս **Ганин А. В.**, Советская военная разведка в Грузии в 1920–1921 годах. Миссия Павла Сытина, Государственное управление. Электронный вестник, Выпуск № 43. Апрель, 2014 г., с. 207-208, 238:

[4] Տե՛ս **Ганин А. В.**, Советская военная разведка в Грузии в 1920–1921 годах, с. 207-208, 232:

Ժողովրդական Գվարդիայի հրամանատարական կազմն էլ մեծամասամբ ռազմական մասնագիտացման առումով անբավարար կրթվածություն ուներ: Ըստ Սիտինի, հրամանատարական կազմն ավելի շատ զբաղվում էր առևտրական գործերով, քան իր զինվորներին ռազմական գործի ուսուցմամբ... բանակը այդ պահին ապրում էր այն ռազմական մասնագետների հաշվին, որոնք նրան մնացել էին որպես ժառանգություն Կովկասյան ռազմաճակատի բանակից...հին բանակի կադրային սպաները, որոնք լայն կրթություն և գերազանց ռազմական –պատրաստություն ունեին, իրենց տեղը չգտան հայրենի բանակում կամ էլ նրանց հատկացվեցին միանգամայն «համեստ պաշտոններ»[1]: Քանի որ Վրաստանի հետ միասին ՌԽՖՍՀ ռազմաքաղաքական շրջաններին հետաքրքրքում էին նաև Հայաստանի Հանրապետության, նրա զինված ուժերի, Դաշնակիցների ռազմաքաղաքական ներկայացուցիչների մասին տեղեկությունները, գործակալական ցանցի հաստատումը և այլ կարևոր հանգամանքներ, ՌԽՖՍՀ Ռազմահեղափոխական խորհրդի կողմից 1920 թ. հունիսի 3-ին արտասահմանում ռազմական կցորդների ինստիտուտի, նրա գործելակարգի մասին հրահանգավորման հաստատումից հետո որպես ռազմական կցորդի օգնական Հայաստան է գործուղվում Ա. Ա. Բոբրիշչևը[2]:

Գ. Անչաբաձեն դրան ավելացնում է նաև վրաց-մահմեդական միացյալ զորամասերի կազմակերպման հարցը. «1919 թ. հունվարից մինչև ապրիլ վրացական զորքերը ստիպված էին դիմակայել մահմեդական վրաց անջատողականների զորամիավորումներին Ախալցխայում և Արդահանի շրջաններում: Ապստամբներին առաջնորդում էր քաղաքական ու ռազմական առաջնորդ և հողատեր Օսման Սերվեր Բեկ Աթաբեկովը, որը սերում էր մահմեդական դարձած վրաց ազնվականի ընտանիքից, և հանդիսանում էր անկախ *Հարավային-Կովկասյան հանրապետության* կողմնակից: Դա իշխանության քաղաքական որոշումն էր՝ ստեղծել վրաց-մահմեդական հեծելազորային գումարտակ («դիվիզիա»), որի արդյունքում մահմեդական և քրիստոնյա վրացիները միասին հանդես եկան Ախալցխայի ռազմարշավում: Ըստ առկա

[1] Տե՛ս **Ганин А. В.**, Советская военная разведка в Грузии в 1920–1921 годах, с. 229, 231:

[2] Տե՛ս **Ганин А. В.**, ук. соч., с. 208:

տվյալների՝ 1920 թ. սեպտեմբերին վրաց-մահմեդական միացյալ գումարտակը բաղկացած էր 2 հեծելազորային ու հետևակային էսկադրոններից և դասակից՝ 26 սպաներով ու 276 զինվորներով: Հրամանատարը գնդապետ Բախշի Բեկ Մաչաբելին էր, վրացի մահմեդական»[1]:

1919 թ. աշնանը կառավարության հավանությանն է արժանանում գնդապետ Ա. Զախարիաձեի բանակի մասին նախագիծը, ըստ որի բանակը պետք է բաղկացած լինի 4 հրաձգային բրիգադներից, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին՝ 4 հրետանային գումարտակներից («դիվիզիաներից») և լեռնային հրետանուց: Բացի այդ, կանոնավոր բանակը պետք է ունենար հրետանային բրիգադ, հեծելազորի գունդ, օդային գրոհային սավառնակախումբ, զրահապատ մեքենայացված միավոր, սահմանագունդ և մի քանի այլ զորամասեր ու օժանդակ ստորաբաժանումներ: Սահմանված էին վեց նշանակվող զորակոչումներ՝ լեյտենանտ, ավագ լեյտենանտ, կապիտան, մայոր, գնդապետ և գեներալ, որոնք այլևս չեն նշանակվելու որոշակի ժամկետով կամ ճակատամարտում ստացած արժանիքների համար, այլ փոխկապվելու էին սպայի գրաված դիրքի հետ, որի մասին փաստել է գեներալ Գ. Մազնիաշվիլին»[2]: Վրաց զորքի առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որ ի տարբերություն հայկական բանակի, այն ոչ միայն որակյալ սպայական կազմի պակաս չուներ, այլև ավելցուկ ուներ, պայմանավորված այն հանգամանքով, որ Թիֆլիսն այդ ժամանակ ոչ միայն ողջ Անդրկովկասի խոշորագույն մշակութային, քաղաքական-տնտեսական կենտրոնն էր, այլև ռուսական բանակի ծառայությունների և ռազմական վարչությունների, սպայական բարձրագույն հրամանատարական կազմի կենտրոնատեղին, և ուներ որոշակի ռազմական ավանդույթներ[3], որով ձեռք էր բերել էական առավելություններ իր հարևանների նկատմամբ: Դրանց մի մասն էլ ծառայության մտան Ադրբեջանի զորքերում[4], գործելով այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության

[1] Տե՛ս **Anchabadze G.**, Armed Forces of Georgian Democratic Republic in 1918–1921, p. 104:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 105:

[3] **Квинитадзе Г. И.**, Воспоминания в годы независимости Грузии, с. 16:

[4] Տե՛ս **Стеклов А.**, Армия мусаватского Азербайджана. Баку, Азгиз, 1927, с. 16; **«Борьба».** Тифлис, 1920, 10 июня:

դեմ, և մասնավորապես 1919 թ. վերջնամասում - 1920 թ. սկզբների Գ. Նժդեհի գլխավորած զորամասերի դեմ, որը կանխեց գեներալներ Սամեդ բեկ Սադիխ բեկ օղլի Մեհմանդարովի և Ալի աղա Իսմայիլ Աղա օղլի Շիխլինսկու ագրեսիան Սյունիք-Զանգեզուրի դեմ[1]: Այդուհանդերձ, ըստ Վրաստանում ՌԽՖՍՀ ռազմական կցորդ, գեներալ Պ. Սիտինի կարծիքի, ՀՀ բանակի «սպայական կազմը երիտասարդ էր, ռազմականապես քիչ գրագետ, չի կարողանում իրացնել առանձին մարտիկի ճիշտ պատրաստություն, չի հետաքրքրվում ռազմական արվեստով և ռազմական գործով: Գնդերի հրամանատարները ոչ բավականաչափ փորձառու էին և հետաքրքրվում էին ավելի շատ տնտեսությամբ և կլանված էին դրանով», միաժամանակ նշելով հայկական զորքերում իշխող ռուսոֆոբիական տրամադրությունների, բանակից ռուս սպաների արձակման և հայ զինվորների ոչ բարյացակամության մասին, չնայած ռուսական բանակի սպաների բարձր որակավորմանը և մարտական փորձին[2]:

Կրտսեր սպայական կազմի համար Թիֆլիսում գտնվող միակ ռազմաուսումնական կենտրոնը 4 բաժիններից՝ հետևակային, հրետանային, հեծելազորային և ինժեներական՝ երկամյա ռազմական դպրոցն էր, որի համանման կառույցը կար նաև Հայաստանում: Եթե Վրաստանում ռազմական մինիստրը նշանակվում էր կառավարության կողմից և այն քաղաքացիական անձ էր, ապա գլխավոր հրամանատարը անպայման պետք է լիներ արհեստավարժ: Գլխավոր շտաբի միջոցով իրականացվում էր զորքերի, այդ թվում ռազմատեղագրա-կան, հրետանային վարչության, ինժեներատեխնիկական և պետական սահմանային պահակազորի, վրացական նավատորմի ղեկավարումը[3], ինչն անհամեմատ ավելի ծանրակշիռ էր, քան Հայաստանում:

---

[1] Տե՛ս **Վիրաբյան Վ. Հ.,** ՀՀ հետախուզական ծառայության ներդրումը Զանգեզուրում Ադրբեջանի զինուժի դեմ տարած հաղթանակում (1919 թ. վերջ -1920 թ. սկիզբ): Հայաստանի առաջին Հանրապետության հետախուզական ծառայության գործունեության պատմաքաղաքական դասերը, «Պատմություն և հասարակագիտություն». Տարեգիրք (Գիտական հոդվածների ժողովածու), Հատոր 4, Երևան, 2018, էջ 7-24:

[2] Տե՛ս **Ганин А.В.**, Советская военная разведка в Грузии в 1920–1921 годах., с. 225:

[3] Տե՛ս **Безугольный А. Ю.**, Демократическая республика Грузия и ее вооруженные силы. 1918-1921 гг., с. 87-101:

Հայաստանում, որտեղ ՀՀ զինվորական նախարար Ռ. Տեր-Միհասյանի 1920 թ. հունիսի 26-ի № 1073 շրջաբերական հրամանի հիման վրա, որը բխում էր ՀՀ խորհրդարանի 1919 թ. դեկտեմբերի 26-ի և Նախարարների խորհրդի 1920 թ. մայիսի 30-ի օրենքներից, ոչ ուշ, քան մինչև օգոստոսի 1-ը գործավարությունը և գրագրությունը բոլոր շտաբներում և ստորաբաժանումներում, ռազմական հիմնարկություններում և զորամասերում պետք է կատարվեր հայերեն լեզվով[1], առանց այն էլ աղքատիկ կադրային ներուժին զգալի հարված հասցվեց, քանզի հայ զինվորականության հատկապես բարձրաստիճան խավը ոչ իր մեղքով չէին տիրապետում հայերենին, և դրանով իսկ դուրս մղվեց հայկական զորքի շարքերից, այդ թվում ռուսներ և այլազգիներ, ինչպես օրինակ Սարդարապատի հերոս փոխգնդապետ Ա. Կ. Շնեուրը, Ն. Շումովը և շատ ուրիշներ, ինչը վկայում էր կայացված վճռի ժամանակավրեպ լինելու մասին: Այս և այլ հանգամանքներ վնասեցին բանակաշինական գործընթացներին: Վրաստանի ռազմաքաղաքական գերատեսչությունը ևս համանման խնդիրներ ունեցավ կուսակցական-քաղաքական ղեկավարության հետ, որը զորքի նկատմամբ իրագործվող իր ոչ բանիմաց հսկողությամբ վնասեց բանակաշինական գործընթացներին, որից բազմիցս բողոքել էր գեներալ Գ. Կվինիտաձեն, դժգոհելով քաղաքացիական միջավայրից դուրս եկած ռազմական մինիստրների անկրթությունից և ռազմական գործում ոչ բանիմացությունից, հաճախ էլ տգիտությունից[2]:

Խաղաղ ժամանակ վրացական բանակի տակտիկական հիմնական միավորը 4 գումարտակից բաղկացած բրիգադն էր՝ թեթև հրետանային դիվիզիոնով: Խաղաղ ժամանակվա գումարտակը կազմված էր 5 վաշտից՝ 4 դասակներով. 40 սպայից, 617 զինվորից, 27 գերժամկետայիններից, ունենալով 41 ձի և 56 սայլակառք. գնդի կազմը ռազմական ժամանակ կազմում էր 2225 մարդ՝ 2 գնդացիրներով: Բոլոր հետևակային գումարտակների թիվը 1920 թ. վերջին հաշվվում էր 12 միավոր, որոնք կազմում էին 3 բրիգադ, որոնք իրենց շտաբներով գտնվում էին Քութայիսում, Թիֆլիսում և Գորիում: Բացի այդ, Վրաս-

[1] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 290, ց. 1, գ. 9, թ. 28:

[2] **Квинитадзе Г. И.**, Воспоминания в годы независимости Грузии, с. 8:

տանի ցամաքային ուժերը պետք է ունենային մեկ հեծելազորային բրիգադ (ռազմական ժամանակ՝ դիվիզիա), սակայն անհաղթահարելի դժվարությունների հետևանքով 1920 թ. վերջին հաջողվեց ծավալել միայն երկու հաստիքային հեծելազորային գունդ և մեկ վրացա-մուսուլմանական գունդ՝ ընդամենը 1500 սվին: Ռազմական մինիստրին էին ենթարկվում ինժեներական-սակրավորների վաշտերը, ռադիոհեռագրային զորամասերը, որոնք հագեցած էին գերմանական տեխնիկայով, և ավտոզրահատանկային զորաջոկատները (17 զրահամեքենա և 2 տանկ): Վրաց զորքն ուներ նաև ավիաջոկատ, որոնք համալրված էին Իտալիայի «Ասկալդե» նշանավոր գործարանից[1] բերված 20 նորագույն սավառնակներով, ինչպես նաև 6 զրահագնացքով [Վրաստանում 1920-1921 թթ. ՌԽՖՍՀ ռազմական միսիայի ղեկավար, գեներալ Պ. Սիտինի հայթայթած տվյալներով 1920 թ. հունիսի 28-ի վիճակով վրաց բանակն ուներ 4 զրհագնացք («Հանրապետական», «Բանվոր», «Մահ կամ հաղթանակ», «Աատության ամրոց» անվանումներով), 5 զրահամեքենա[2]], և 7 սահմանապահ գնդերով, որոնք, կախված կազմակերպումից՝ ունեին 386-ից 461 մարդ[3]:

Վրացական բանակի մատակարարումը հրազենով և ռազմամթերքով իրականացվում էր մի քանի աղբյուրների հաշվին: Առաջին հերթին Վրաստանն իր տրամադրության տակ ուներ նախկին ռուսական Կովկասյան բանակից մնացած զինապահեստները, երկրորդ՝ վրացական զորքի համար զենքի ու ռազմամթերքի հայթայթումը տեղի էր ունենում արտաքին աղբյուրներից կամ արտասահմանում գնումների հաշվին, երրորդ ուղին՝ դա սեփական արտադրության կազմակերպումն էր: Նախկին կովկասյան բանակի զինապահեստները, որոնցում զինապաշարները զգալի էին և գտնվում էին վրացական իշխանությունների տրամադրության տակ, Վրաստանի համար երաշխավորում էին զգալի առավելություններ, ինչից զրկված էին թե՛ Ադրբեջանը, և թե՛ Հայաստանի Հանրապետությունը, ինչն էլ ավելի բարդ բնույթ ստացավ 1918 թ. դեկտեմբերյան վրաց-հայկական պատերազմի ժա-

[1] Տե՛ս **Ганин А. В.**, Советская военная разведка в Грузии в 1920–1921 годах. Миссия Павла Сытина, с. 234:

[2] Տե՛ս **Ганин А. В.**, ук. соч., с. 226:

[3] Տե՛ս **Борьба за победу советской власти в Грузии**, 1958, с. 355:

մանակ, որի հարուցած դժվարությունները բավականին երկար ժամանակ չէր հաջողվում հաղթահարել: Այս առումով վրացիները նախընտրելի վիճակում էին հայտնվել, այն դեպքում, երբ ռուսական բանակի քայքայումից հետո մնացած ռազմական գույքը, ռազմամթերքն ու հրազենը հարևաններին և մասնավորապես հայերին անբավարար քանակով և զգալի ուշացումներով հասավ, այն էլ փոքր չափաբաժիններով: Միայն Թիֆլիսի զինանոցում պահվում էր մոտ 800 հրանոթ, որից 500-ը վերականգնման ենթակա չէր, սակայն օգտագործվում էր որպես պահեստամաս: Զինանոցի սարքավորումները թույլ էին տալիս ոչ միայն վերանորոգել, այլև և արտադրել հրազեն ու ռազմամթերք: Ոչ մեծ քանակով կային նաև հրացաններ, ամեն օր կարող էին պատրաստել 1000 արկ և 50000 հրացանի փամփուշտ:

Վրացական բանակի քիչ թե շատ լիարժեք կայացմանը խոչընդոտեց նաև հումքի և վառելիքի սուր պակասը, որը կախված էր Ադրբեջանից և վրաց-ադրբեջանական հարաբերությունների ընթացքից: Հենց այդ վայրիվերումներն էլ ազդեցին զրահային, ավիացիոն և ավտոմոբիլային զորատեսակների ծավալման վրա, ինչն առավել ցայտուն արտահայտվեց Հայաստանի Հանրապետության դեպքում, որը գրեթե ամբողջապես կախված էր Վրաստանի հաղորդակցության ուղիներից և ադրբեջանական նավթից, ավելացրած դրան Դաշնակիցների, և մասնավորապես Մեծ Բրիտանիայի թույլ շահագրգռվածությունը Հայկական բանակի զինման գործում, որոնց մի մասն էլ շորթվում էր վրացիների կողմից կես ճանապարհին: Սննդամթերքի տեսակների մեծ պակասություն ևս կար, ինչի պատճառով վրացական զինվորների սննդապաշարը միանգամայն աղքատիկ էր, նրանց տրվում էր ընդամենը երկու ֆունտ հաց, իսկ Հայաստանում վիճակը շատ ավելի անմխիթարական էր, զինվորների մի զգալի մասը պարզապես ցեխահացով էր կերակրվում, և դա այն պարագայում, երբ ինչպես վրաց գվարդիականների դեպքում, Հայաստանի Հանրապետությունում օրենքից դուրս գտնվող զանազան խմբապետերը և նրանց անսանձ խմբերը ոչ մի բանի պակասություն գրեթե չունեին և հասարակությանը զարհուրանք էին պատճառում պանդոկներում և տարբեր զվարճատեղերում իրենց կատաղի քեֆերով և Գյումրիի և Երևանի փողոցները թմբկահա-

րում իրենց կատաղի հրացանազարկերով, ահ ու սարսափի մեջ պահելով թուրքական սպանդից մազապուրծ հայ բնակչությանը:

Հետագա իրավիճակը 1919-1920 թթ. էական փոփոխությունների չենթարկվեց: Վրաստանը մասնակցություն ունեցավ գրեթե բոլոր տարածաշրջանային, մեծամասամբ սահմանային-տարածքային բախումներին, և որոնք մենշևիկյան կառավարության աշխարհաքաղաքական կոնցեպցիայով պարտադրված իրողություններ էին, որն ընտրել էր Վրաստանի պատմական տարածքի միավորման, հավաքման ուղին: Մենշևիկների կողմից պատմական տարածքի մեջ ներառնվեցին բոլոր այն հողերը, որոնք երբևիցե գտնվելիս են եղել վրացական թագավորությունների և իշխանությունների կամ Թիֆլիսի նահանգի կազմում: Վրացական կառավարությունը ցանկացած առիթ օգտագործում էր այսպես կոչված Հոկտեմբերյան հեղաշրջմամբ և դրան հաջորդած քաղաքացիական պատերազմով հանկարծակի փոփոխություններով առաջացած «*փիրազուրկ*» տարածքները գրավելու համար:

Առաջին բախումներից մեկը 1918 թ. դեկտեմբերի երկշաբաթյա պատերազմն էր երկու սահմանամերձ շրջանների՝ Ախալքալաքի և Բորչալուի (Հյուսիսային Լոռի) համար: Կովկասյան օրացույցի տվյալներով 1912 և 1913 թթ. Ախալքալաքում ապրում էր 76 446 հայ, 6578 վրացի, իսկ Բորչալույում՝ 63 148 հայ և 7533 վրացի[1]: Եվ չնայած դրան, Վրաստանը հավակնություններ ներկայացրեց այդ տարածքների նկատմամբ, դրանք համարելով բուն վրացական տարածքներ, հենվելով այն կեղծ դրույթի վրա, որ ցարական իշխանությունների օրոք դրանք եղել են Թիֆլիսի նահանգի կազմում: 1918 թ. ամռանից մինչև նոյեմբեր այդ երկու շրջաններն էլ օկուպացված էին Վրաստանի կողմից: Այդ տարածքներից Թուրքիայի հեռանալուց հետո դիվանագիտական և ռազմաքաղաքական բախումներն անխուսափելի դարձան, և գլխավորապես Վրաստանի բռնած կոշտ և անզիջում դիրքորոշման հետևանքով: Այս առումով վրացամետ է Գ. Անչաբաձեի դիտարկումը. «Առաջին դիմակայությունը նախաձեռնել էին հայ դաշնակցականները, որոնք համարում էին իրենց Անտանտի միակ դաշնակիցները Անդրկովկասում: Հետևաբար, դաշնակցականները հավատում էին, որ հաղ-

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 200, ց. 1, գ. 452, թ. 2, գ. 16, թ. 31:

թող ուժերը կպաշտպանեն իրենց տարածքային պահանջները: 1918 թ. դեկտեմբերին հայկական բանակը ներխուժեց Վրաստանի սահմանամերձ շրջաններ, Բորչալու, ինչպես նաև Ախալքալաք, *որի բնակչությունը հիմնականում հայեր էին*, մարտերը շարունակվեցին մինչև հունվարի սկիզբը, որը համընկնեց Անգլիայի զինվորական միավորների ժամանման հետ: Անգլիական գեներալ Ռայքրոֆտի բանակցությունների արդյունքում Բորչալուի մի մասը հայտարարվեց Չեզոք տարածք՝ անգլիացի սպայի ղեկավարության ներքո: Տարածաշրջանային հարցի վերջնական կարգավորումը, այնուամենայնիվ, հետաձգվեց՝ Փարիզի խաղաղության կոնֆերանսի շրջանակներում կարգավորելու սպասումով: Սակայն 1920 թ. աշնանը, երբ Հայաստանը կանգնած էր թուրքական օկուպացիայի սպառնալիքի առաջ, և անգլիական զորքերը արդեն հեռացել էին, Հայաստանի կառավարությունը վրացիներին առաջարկեց զբաղեցնել Չեզոք գոտին, ինչը և նրանք արեցին»[1]: Պատերազմն սկսվել է դեկտեմբերի 13-ին և ավարտվել 1918 թ. դեկտեմբերի 31-ին, որում Հայաստանին ուղեկցել է ռազմական հաջողությունը, վրացիները կրում են պարտություն պարտության ետևից, նահանջում մինչև Թիֆլիս, իսկ դասալքության հետևանքով, կրիտիկական պահին, գեներալ Գ. Կվինիտաձեի գնահատմամբ, ***ընդամենը «ռեզերվում մնացել էին երեք գեներալ և Սահմանադիր ժողովի մեկ անդամ»***[2]: Իր դերը խաղաց նաև այն, որ հայկական զորքի հարձակման գոտում (Բորչալուի և Թիֆլիսի նահանգի հարավային մաս) գերակշռում էր հայկական բնակչությունը, որը մարտերի ընթացքում պատրաստակամ զինվորագրվում է զորքին՝ գազազած վրաց զին-վորների սանձարձակություններից Լոռվա գյուղացիության նկատմամբ, ինչի կապակցությամբ նույնիսկ իրանական ծագման ադրբեջանամետ կովկասագետ Ֆ. Կազեմզադեն խոստավանում է. ***«Բորչալույում բռնկվեց ապստամբություն ընդդեմ վրացական ռազմակալման: Այն առաջացել էր ինչպես վրացիների անբավարար կառավարմամբ, այնպես էլ դաշնակների քարոզչությամբ»***[3]: Այդ իրավիճակում շատ հնարավոր է, որ

[1] **Anchabadze G.**, Armed Forces of Georgian Democratic Republic in 1918–1921, p. 105:

[2] **Квинитадзе Г. И.**, Воспоминания в годы независимости Грузии, с. 62:

[3] **Каземзаде Ф.**, Борьба за Закавказье, с. 172:

Վրաստանը ջախջախվեր, եթե բախմանը չմիջամտեին դաշնակիցները, որոնք կասեցնում են հայկական զորքերի հարձակողականը: Դաշնակիցների պարենային և այլ աջակցությունից, Վրաստանի հաղորդակցության ուղիներից մեծապես կախված Հայաստանը հարկադրված էր համաձայնվել դաշնակիցների միջնորդությանը, առավել ևս, որ ֆրանսիական բաժնետիրական ընկերությունները տնտեսական շահեր ունեին բախման անմիջապես կենտրոնատեղում՝ Լոռվա Չեզոք գոտում ի եմս այնտեղ առկա ոսկու, պղնձի և այլ պաշարների, և չէին ցանկանում ֆինանսատնտեսական կորուստներ ունենալ: Հայաստանին պարտադրվեցին իր համար ոչ ձեռնտու պայմաններ: Ախալքալաքը մնաց Վրաստանին, իսկ Բորչալուն հայտարարվեց Չեզոք գոտի, որին կտրականապես առարկեց Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանը:

Պատերազմից հետո Վրաստանն ամրապնդեց իր դիրքերը տարածաշրջանում, ձգտելով էլ ավելի զորեղացնել զորքը: 1920 թ. վիճակով Ժողովրդական Գվարդիան կազմակերպված էր տարածքային-միլիցիոն սկզբունքով: Մշտական զորամասերը համալրվում էին զինվորացուներով կամ կամավորներով, որոնց ծառայությունը մեկ տարի էր: Տեղերում կային Ժողովրդական Գվարդիայի մարզային և շրջանային շտաբներ, որոնց միջոցով կազմավորվում էին գումարտակներ և վաշտեր: Վրաստանը բաժանված էր 15 օկրուգների, որոնք զորահավաքի արդյունքում ձևավորում էին 23 գումարտակ: Գվարդիայի տրամադրության էին ինժեներային, ճանապարհային և ավտոմոբիլային վաշտեր[1]: Ժողովրդական Գվարդիայի բարձրագույն օրգանը Գլխավոր շտաբն էր՝ 21 հոգուց բաղկացած կոլեգիալ մարմինը, որն ընտրվում էր Ժողովրդական գվարդիայի համագումարում: Այդ ողջ ժամանակահատվածի ընթացքում Գլխավոր շտաբի անփոխարինելի նախագահը եղել է մոլի ազգայնական Վ. Ա. Ջուղելին, որը չնայած խիզախ մարդ էր, սակայն վրաց սպայության կողմից անցանկալի և անհանդուրժելի, ամբոխավար, ստրատեգիական առումով անպատրաստ անձնավո-րություն

[1] Տե՛ս **Безугольный А. Ю.**, Демократическая республика Грузия и ее вооруженные силы. 1918-1921 гг., с. 87-101:

էր[1], առաջնորդ, որը սակայն Վրաստանում բավականին ճանաչված էր: Գվարդիականների մարտական պատրաստվածության մակարդակը էապես զիջում էր բանակայինին: Խիստ ասած, Գվարդիայում կանոնավոր ռազմական ուսուցում չէր տարվում: Գվարդիականներին համախմբում էր նրանց պատկանելիությունը և նվիրվածությունը մենշևիկյան կուսակցությանը, որի համոզված կողմնակիցներն էին: Գվարդիականները կանոնավոր բանակի զինվորներից ավելի լավ էին ապահովված սննդով և հանդերձանքով, ինչպես համանման էլիտար առաջնորդներ ունեցող հայ ժողովրդական հայդուկախմբերը իրենց հայդուկապետերով կամ ինքնակոչ, ոչ մի կարգ ու կանոնի չենթարկվող խմբապետ-առաջնորդները Հայաստանի Հանրապետությունում[2]:

Վրացական և հայկական զինված ուժերի ընդհանուր թվաքանակի հարցը պատմագիտության մեջ իրարամերժ գնահատումների է արժանացել, կապված այն հանգամանքի հետ, որ երկու հանրապետությունների զորքը մշտապես գտնվել է զորահավաքի կամ զորացրման վիճակում և նրա թվաքանակը անընդհատ տատանվել է: Այսպես, որոշակի արխիվային տվյալների փաստմամբ, 1920 թ. հուլիսի կեսերին վրաց զորքը հաշվվում էր 10450 սվին, 2750 սուր, 36 հրանոթ, 137 գնդացիր, իսկ ժողովրդական գվարդիայի կազմում կար 3640, 24 հրանոթ, 63 գնդացիր: Վրաստանն ուներ 3 զրահագնացք և 5-10 զրահամեքենաներ[3]: Վրաստանում խորհրդային ռազմական միսիայի ղեկավար Պ. Սիտինի կողմից պատրաստած 1920 թ. հուլիսի 5-ի № 13 զեկուցագրի համաձայն, Մոսկվա տեղեկություններ են ներկայացվում[4] վրացական բանակի, ռազմական մինիստր Գ. Ս. Լորդկիպանիձեի

---

[1] Տե՛ս **Ганин А. В**., Советская военная разведка в Грузии в 1920–1921 годах, с. 233:

[2] Տե՛ս **Безугольный А. Ю.**, Демократическая республика Грузия и ее вооруженные силы. 1918-1921 гг., с. 87-101:

[3] Նույն տեղում:

[4] 1920-21 թթ. Պ. Պ. Սիտինի զեկույցները և գրագրությունը հասցեագրվել են Ռազմահեղափոխական Խորհրդի Դաշտային շտաբի պետ Պ. Պ. Լեբեդևին, ՌԽՖՍՀ ԱԳ Ժողովրդական կոմիսար Գ. Վ. Չիչերինին, Դաշտային շտաբի Գրանցման վարչության պետ Յ. Դ. Լենցմանին, և անշուշտ, Վրաստանում ՌԽՖՍՀ լիազար –ներկայացուցիչ Ս. Մ. Կիրովին, իսկ արդեն 1920 թ. սեպտեմբերից՝ Ա. Լ. Շեյնմանին, լիազոր-ներկայացուցչության խորհրդական Լ. Ն. Սթարկին և առաջին քարտուղար Օդոևսկուն, ընդհանուր առմամբ 1920 թ. հունիսի 22-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներկայացնելով 277 զեկույց, իկ 1921 թ.՝ 25-ը:: Տե՛ս **Ганин А. В**., Советская военная разведка в Грузии в 1920–1921 годах. с. 209:

գործողությունների մասին, նշելով, որ նրան ենթակա Ռազմական Խորհրդում ընդգրկված են վերջինիս օգնականներ գեներալներ Ա. Կ. Գեղևանովը և Ի. Զ. Օդիշելիձեն, ինչպես նաև Գլխավոր շտաբի գեներալներ Ա. Ս. Անդրոնիկովը, Ա. Մ. Բենաևը, Կ. Պ. Կուտատելաձեն, և ևս 3-ը, որոնց անձերը Սիտինի կողմից չէին պարզվել, սակայն փաստվել էր, որ նրանք Ազգային Գվարդիայի անդամներ են եղել: Ըստ Սիտինի, 1920 թ. հուլիսին Գլխավոր շտաբը գլխավորում էր գեներալ Ա. Կ. Զախարիաձեն իր կազմակերպական, օպերատիվ, հրետանային բաժանմունքներով, իսկ Ռազմական նախարարությանն առընթեր հետախուզական բաժանմունքը՝ գնդապետ Ի. Չեչելաշվիլին, Հակահետախուզական ծառայությունը՝ գնդապետ Տուլաևը, իսկ ընդհանրապես Վրաստանում հետախուզության վարումը գտնվում էր իշխան Բագրատիոն-Դավիդովի ենթակայության ներքո, զորահավաքային բաժանմունքը՝ գնդապետ Չիլյաևը, ռազմաճանապարհայինը՝ գնդապետ Մաչավարիանին, ինժեներատեխնիկական բաժինը՝ գնդապետ Գուրամովը, հրետանային բաժինը՝ գեներալ Կազբեկը, 1-ին բրիգադը՝ գեներալ Դ. Ա. Արտմելաձեն (օգնական՝ գեներալ Տ. Դ. Վաշակիձե), 2-րդը՝ գեներալ Ի. Կ. Գեղևանովը (օգնական՝ գեներալ Սումբատով), 3-րդը՝ գեներալ Ծուլուկիձեն, ինժեներային զորքերը՝ գեներալ Գ. Կ. Տակայշվիլին, հրետանային զինուժը՝ Կ. Պ. Կուտատելաձեն, սահմանապահ պահակազորը 3 մասի էր բաժանված՝ Մանգլիսի, Դարյալի և Սևծովյան [ընդամենը 3600 մարդ][1]: Ընդհանուր առմամբ, վրացական բանակում կային 1300-ից 1900 սպաներ, որից 500-ը ռուսական կովկասյան բանակի կադրային սպաներ էին՝ գերազանցապես վրացիներ, իսկ հատուկ և ինժեներային զորամասերում, տեխնիկական մասերում և գլխավորապես ավիացիայում և ավտոմոբիլային զինուժում մեծամասամբ ռուսներ, հայեր, լեհեր, գերմանացիներ էին[2]:

Այն, որ 1918-1920 թթ. գոյություն ունեցած հայկական բանակի ընդհանուր թվաքանակից մարտունակ էր իրապես ընդամենը 16-18 հազարը, դա մեկ անգամ ևս Ս. Վրացյանը հաստատում է ՀՅԴ Ամերի-

[1] Տե՛ս **Ганин А. В.**, Советская военная разведка в Грузии в 1920–1921 годах, с. 220, 226-228:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 232:

կայի Կենտրոնական Կոմիտեին 1919 թ. մայիսի 18-ին հասցեագրված նամակում, մասնավորապես ընդգծելով այն մասին, որ *«մոտ 16-17 հազարանոց բանակը կարգապահ է և քաջ»*, ավելացնելով, որ *«աշխատել են սրտեղծել նոր զորամասեր»*, ինչն էլ հենց կարելի է տեղավորել 40-50 հազարանոց բանակի գոյություն ունեցած լինելու պատկերացումների անիրական շրջանակներում, եղածն ուռճացնել[1]:

Վրաստանում ՌԽՖՍՀ ռազմական կցորդ, գեներալ Պ. Սիտինի տվյալներով, Վրաստանում 1920 թ. հուլիսի կանոնավոր բանակի թվակազմը հասնում էր 18-19 հազար մարդու, իսկ ժողովրդական Գվարդիայի հետ միասին՝ 35 հազարի, որը Ա. Գանինը քիչ չափազանցված է համարում[2], ինչը մեր ստորև բերված այլ տվյալներով ևս չի հաստատվում: 1920 թ. հոկտեմբերի վերջին Վրաստանի զինված ուժերի ընդհանուր թվաքանակը հասավ 38 գումարտակի, 10 էսկադրոնի (23 հազար սվին)՝ 543 գնդացրով, 83 թնդանոթով, 3 զրահագնացքով, 8 զրահամեքենայով և տանկով, 12 օդանավով[3]: Համեմատության համար նշենք, որ խորհրդային ռազմական հետախուզության տվյալներով, Ադրբեջանի զինված ուժերը 1920 թ. մայիսին ունեին շուրջ 15 հազար սվին և մինչև 5 հազար սուր, ինչպես նաև 2-3 օդանավ, 1 հիդրոպլան, 2-3 զրահագնացք և 2 զրահամեքենա, որոնք միավորված էին երեք հետևակային դիվիզիաներում և մեկ հեծելազորային կորպուսում[4]: Այդ նույն տվյալներով, ՀՀ զինված ուժերը 1920 թ. հոկտեմբերի վերջերին ունեին 40 գումարտակ, 15 էսկադրոն (9200 սվին և 1620 սուր) 208 գնդացիր, 65 հրետանի, 3 զրահագնացք և 10 օդանավ[5]:

1920 թ. քաղաքացիական պատերազմի ճակատներում իրադրությունը կտրուկ փոխվեց հօգուտ Խորհրդային Ռուսաստանի: «Մուսավաթը», ի տարբերություն հայ դաշնակցականների, ոչ միայն չընդդիմացավ, այլև հեռահար պլաններից ելնելով՝ ընդառաջ գնաց Ադրբեջանի անարյուն խորհրդայնացմանը: Անդրկովկաս մտած խորհրդային

---

[1] **Վրացեան U.**, Հին թղթեր նոր պատմութեան համար, էջ 88:

[2] Տե՛ս **Ганин А. В.,** Советская военная разведка в Грузии в 1920–1921 годах, с. 228:

[3] Տե՛ս **Российский государственный военный архив** (РГВА), ф. 195, оп. 3, д. 515, л. 1-10:

[4] Տե՛ս **РГВА**, ф. 195, оп. 3, д. 198, л. 15:

[5] Տե՛ս **РГВА**, ф. 109, оп. 2, д. 64, л. 2:

զորամասերը հաշվվում էին շուրջ 60 հազար մարդ[1]: Այդ իրավիճակում, 1920 թ. սեպտեմբերի 10-ի վիճակով, որը հաստատվում է խորհրդային ռազմական հետախուզության տվյալներով, Վրաստանը կանոնավոր բանակում՝ ներառյալ սահմանային կայազորը, ուներ 9700 սվին և 1000 սուր՝ 52 թնդանոթներով, սակրավորական գումարտակը, ռադիոհեռագրային վաշտը, իսկ Ժողովրդական Գվարդիան հաշվվում էր 15000 վին, 16000 սուր՝ 76 թնդանոթներով և գնդացրային գունդը 72 գնդացիրներով: Բանակն ուներ 4-5 զրահագնացք, 3 զրահամեքենա, 2 տանկ, 18 օդանավից բաղկացած օդուժ: Այդ հաշվարկների համաձայն, վրացական զինուժը 7-ից 10 օրվա ընթացքում կարող էր բանակի անձնակազմը հասցնել 50000-ի[2]: Իսկ մեկ այլ հետախուզական աղբյուրի համաձայն, հոկտեմբերի 25-ի վիճակով մենշևիկյան Վրաստանի զորքն ուներ 38 գումարտակ և 10 էսկադրոն՝ այսինքն՝ 23090 սվին և 1250 սուր, 543 գնդացիր, 83 թնդանոթ, 3 զրահագնացք, 6 զրահամեքենա, 2 տանկ և 12 ինքնաթիռ: Զորքի ընդհանուր թվաքանաքը հասնում էր 30000-ի: Վրաց զորքը Աղնախի և Փոյլիի ուղղություններում ուներ 3490 սվին, 100 սուր, 62 գնդացիր, 24 թնդանոթ և 2 զրահագնացք[3]: Իսկ մեկ այլ տվյալներով 1921 թ. փետրվարի 1-ի տվյալներով, Վրաստանի զինված ուժերը սահմանային գոտում հաշվվում էին 32800 սվին, 264 սուր՝ 521 գնդացիրներով, 56 թեթև և 18 ծանր թնդանոթներով[4]: Վրաստանում ՌԽՖՍՀ ռազմական կցորդ, գեներալ Պ. Սիտինը Մոսկվա ուղարկված գաղտնի տեղեկություններում հաղորդելով Վրաստանի նոր ռազմական նախապատրաստությունների և պլանների մասին, հայտնում էր, որ Վրաստանում ցանկանում են զենքի տակ դնել 150 հազար մարդ[5], ինչը ըստ վերջինիս եզրահանգման՝ չափազանցված էր, քանզի վրաց հեղինակների իսկ վկայությամբ, Վրաստանն այդպիսի ռեսուրսների չէր տիրապետում: Գ. Անչա-

[1] Տե՛ս **Директивы командования фронтов Красной армии**, Т. 4, М., Воениздат, 1978, с. 156-157:

[2] Տե՛ս **Кадишев А. Б.**, Интервенция и гражданская война в Закавказье, М., Военное изд-во Минобороны СССР, 1960, с. 363:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս նույն տեղում:

[5] Տե՛ս **Ганин А. В.,** Советская военная разведка в Грузии в 1920–1921 годах, с. 228:

բաձեն ևս գրում է. «Ինչպիսի՞ն էին Վրաստանի զինված ուժերը 1921 թվականի սկզբին. Զինված ուժերը բաղկացած էին երեք կառույցներից. 1) բանակից ու սահմանապահ զորամասից. 2) նավատորմից և 3) Ժողովրդական Գվարդիայից: Բանակը և նավատորմը գտնվում էին Պաշտպանության նախարարության իրավասության ներքո, իսկ Ժողովրդական Գվարդիան՝ Գլխավոր շտաբի հրամանատարության ներքո: Երկու մասնաճյուղերը միայն պատերազմի ժամանակ էին միասին հավաքվում»[1]: Վրաց զինվորական որոշ շրջանների կարծիքով, պահեստային ուժերի ներգրավվածությունը կարող էր զգալիորեն բարձրացնել ակտիվ բանակի քանակությունը: Հետևակային գնդերի պայմանագրային թիվը 2225 զինվոր և սպա էր, որոնցում պլանավորվում էր ունենալ 32 գնդացիր: Խաղաղության ժամանակ ընդհանուր կանոնավոր բանակն ուներ 7500 հետևակ զինվոր և ավելի քան 1500 հեծելականներ: Պատերազմի ժամանակ նրանց թիվը հասավ մինչև 27000-ի և հեծելազորինը՝ 3000-ից ավելի: Բանակի 90 տոկոսը բաղկացած էր վրացիներից, մնացած մասը՝ հայերից, ռուսներից, «թաթարներից»՝ նկատի ունենալով տեղական թուրքերին և անդրկովկասյան մահմեդականներին: 1921 թ. սկզբին վրացական ռազմածովային ուժերը բաղկացած էին մեկ նավատորմի կործանիչից, 4 փայտե մարտական ինքնաթիռներից, 4 ականակիր նավակներից և տարբեր գործառնություններ ունեցող 10 շոգենավերից[2]: Վրաստանի Հանրապետության զինված ուժերը այդ պահին ևս դեռևս զգալի առաջընթաց չէին ունեցել. Նրանք մի քանի ուսումնական հաստատություններ ունեին. 1) Թիֆլիսի զինվորական դպրոցները (2-ամյա դասընթաց)՝ բոլոր տեսակի զորատեսակների սպաների համար, ինչպես օրինակ 250-300 հոգանոց ենթասպաների դպրոց, 2) վարորդների դպրոց, 3) մեքենայաշինական դպրոց, և 4) Ժողովրդական Գվարդիայի դպրոց: Բացի այդ, 1921 թ. նախատեսվում էր ստեղծել Թիֆլիսի պոլիտեխնիկական դպրոցում ռազմահնժեներական բաժին՝ մի քանի ստորաբաժանումներով. ամրություններ, ավիացիա, հաղորդակցություն կամ ազդանշանային

[1] **Anchabadze G.**, Armed Forces of Georgian Democratic Republic in 1918–1921, p. 106-107:

[2] Նույն տեղում:

տեխնիկա: Երկրում բարձրագույն ռազմական դպրոցի համար ռեսուրսներ չկային, և նախատեսվում էր վրացի սպաներ ուղարկել ֆրանսիական ռազմական ակադեմիա[1], ինչպես դա Հայաստանի Հանրապետությունում էր, երբ որ սպայական, օդաչուական և այլ կադրեր պատրաստելու համար որոնվում էին բրիտանական, ֆրանսիական և ամերիկյան տարբերակներ, որոնք միշտ չէ, որ համապատասխան արձագանք էին ստանում Դաշնակիցների կողմից:

Գեներալ Գ. Կվինիտաձեն փաստում է այն մասին, որ պատերազմի ժամանակ Գվարդիան ապակառուցողական և բարոյալքող ազդեցություն ունեցավ բանակի վրա իր սանձարձակությամբ, մարտական բնագավառում կարգապահության և ինքնակառավարման վերահսկողության բացակայությամբ: Թիֆլիսի վրա գլխավոր հարձակումը իրականացվեց 11-րդ Կարմիր բանակի կողմից, որը բաղկացած էր 4 հրետանային եւ 2,5 հեծյալ ստորաբաժանումներից, առանց պահեստազորի[2]: Բոլշևիկյան Ռուսաստանի հետ բախման նախօրյակին՝ 1921 թ. սկզբին վրացական զինված ուժերը կազմել են 25 հազար հետևակ և հեծելազոր: Վրաց գեներալ Ի. Օդիշելիձեն, Սովետական ներխուժմանը սպասելով նույն տարվա գարնանը, անհրաժեշտ էր գտնում, որ բանակը համալրվի մինչև 60000 տղամարդկանցով (75000 ներառյալ օժանդակ ծառայությունները): Այնուամենայնիվ, Վրաստանը բավարար չափով չուներ ո՛չ զենք և զինամթերք, ո՛չ էլ հագուստ և այլ ռազմական ռեսուրսներ[3]: Խորհրդայնացման նախօրյակին Վրաստանի զինված ուժերի մասին իր փաստարկներն է բերում փորձառու գեներալ Գ. Կվինիտաձեն. «Իրապես, մեր զինված ուժերի կազմակերպմամբ մենք ունեինք 12 բանակային գումարտակ, որոնք զորահավաքի դեպքում ծավալվում էին 36 գումարտակի՝ այսինքն մոտ 21-22 հազար սվին. Գվարդիան ուներ 20-24 գումարտակ մոտ 10-12 սվինաուժով: Այսպիսով, մենք կարող էինք դուրս բերել ընդամենը 32-34 հազար

[1] **Anchabadze G.**, Armed Forces of Georgian Democratic Republic in 1918–1921, p. 107-108:

[2] Նույն տեղում, էջ 110:

[3] Նույն տեղում, էջ 109:

սվին: Դա հասարակ թվաբանություն էր և Ա. Ի. Հեկկերը[1] միանգամայն ճիշտ հավարկել էր, որ արևելյան սահմանի վրա այդ թվից մենք կարող էինք լավագույն դեպքում կենտրոնացնել միայն մեր ուժերի 2/3-ը, այսինքն՝ 22-23 հազարը, ինքը պահանջում էր 35 հազար սվին, այլ կերպ ասած նա դրանով հասնում էր ուժերի մեկուկեսանգամվա առավելության: Այդ ուժերի մեկ երրորդը, եթե ոչ ավելին, ամեն դեպքում կենտրոնացած էր մեր հյուսիսային սահմանի վրա: Մեր կազմակերպվածությունը թույլ չէր տալիս ռազմական գործողություններում ներգրավվել պահեստազորի մնացած ռեզերվը, այլ կերպ ասած, մենք մեր զինված ուժերի կազմակերպման հետևանքով, չէինք կարող օգտագործել դիմադրության ողջ ուժը, որը կարող էր ժողովուրդը ի ցույց դնել: ***Եվ այսպես, հարկ է ընդունել, որ պատերազմին համապատասխան նախապատրաստման պարագայում ուժերի հարաբերակցությունը «Փոքր Վրաստանի» և «Մեծ Ռուսաստանի» միջև հեռու էր համապատասխանելուց «Փոքր» և «Մեծ» հասկացություններին***»[2]:

1921 թ. հունվարի 26-ին Վրաստանի խորհրդայնացման հարցը քննարկվում է ՌԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոյի նիստում, որում ԱԳ ժողկոմատին հանձնարարվում է ճշգրիտ տեղեկություններ հավաքել Վրաստանի կողմից Խորհրդային Ռուսաստանի հետ պայմանագրի խախտումների մասին: Եվ այդպիսի փաստեր գտնվում են. վրացիների կողմից սպիտակգվարդիականներին օգնելու, զենքի մատակարարման փաստերը[3], Թիֆլիսում խորհրդային դիվանագիտական ներկայացուցչության աշխատակիցների իրավունքների ոտնահարումը և նույնիսկ ձերբակալությունները, Վրաստանի կողմից պարենով շարժակազմերի երթևեկի արգելափակումը Հայաստան[4], որը սովի ճիրաններում էր: Վրաստանի կողմից խորհրդա-վրացական պայմանագրի խախտում-

---

[1] **Հեկկեր Անաստոլի Իլյիչի** (25.08.1888-01.07.1937)- 1920 թ. մայիսի 7-ին Հանրապետության Ռազմահեղափոխական խորհրդի որոշմամբ մտցվել է Գլխավոր շտաբի մեջ, եղել է 11-րդ Կարմիր բանակի հրամանատար, գնդակահարվել է 1937 թ. -**Ганин А. В.**, Короус офицеров Генерального штаба 1917-1922 гг., с. 141, 194, 491):

[2] **Квинитадзе Г. И.**, Воспоминания в годы независимости Грузии, с. 355:

[3] Տե՛ս **Безугольный А. Ю.**, Демократическая республика Грузия и ее вооруженные силы. 1918-1921 гг., с. 87-101:

[4] Տե՛ս **Ганин А. В.,** Советская военная разведка в Грузии в 1920–1921 годах, с. 242:

ները ընդհանրացվեցին Վրաստանում ՌԽՖՍՀ լիազոր-ներկայացուցիչ Ս. Կիրովի կողմից ներկայացված հատուկ գրության մեջ[1]:

Եվ այսպես, կողմերն ունեին իրենց հաշվարկները և սպասելիքները, ինչի մասին կրկին հավաստում է Կվինիտաձեն. «Ես կարդացել եմ Հեկկերի զեկույցը, սակայն նրա մասին պատմություններից գիտեմ, որ, Հեկկերը Վրաստանի վրա հարձակվելու համար պահանջել է մոտ 35000 սվին: Եթե Մոսկովյան կառավարությունը կարողանար Ադրբեջանում կենտրոնացնել այդ ուժերը օգոստոսին, սեպտեմբերին կամ 1920 թ. հոկտեմբերին, նա մեր վրա կհարձակվեր ավելի վաղ, այլ ոչ թե հաջորդ տարվա փետրվարին: Սակայն բանը նրանում է, որ տրանսպորտի սղությունը և ընդհանրապես, բանակին դրանք հասցնելու միջոցների բացակայությունը խնդրահարույց վիճակ էին ստեղծել: Բացի այդ, այդ պատերազմը ցույց տվեց, որ Հեկկերի կողմից մատնանշված զորքերի թիվը հազիվ է հաջողվել կենտրոնացնել գործողությունների սկզբում, իսկ Խաշուրիի տակ բոլշևիկյան զորքերի մասնակցությունը, որոնք առանց կանգառի ժամանել էին ուղիղ Պետրովսկից, հաստատեց իմ այդ միտքը: Մոսկովյան կառավարության համար այդ պատերազմը ծայրամասային էր, կենսական կենտրոններից հեռու պատերազմ և մազից կախված՝ Ռոստով-Բալաջարի-Թիֆլիս մեկ երկաթուղաճյուղից»[2]: Փետրվարի 16-ին Կարմիր բանակի զորամասերը հատում են Վրաստանի սահմանը, որի համար հարմար առիթ է դառնում սահմանակից Բորչալուի գավառում *«բարձրացված»* հայ գյուղացիության ապստամբությունը[3]: Հայտարարվում է, որ Կարմիր բանակը հրավիրվել է, որպեսզի կանխի գենոցիդը Բորչալուի գավառի բնակչության նկատմամբ (թե՛ հայեր և թե՛ ռուսներ). 1921 թ. մարտի 8-ին Օրջոնիկիձեն բազմանշանակ հայտարարում է. ***«Պարզ էր, իհարկե, որ Կարմիր բանակը չէր կարող սառնասրտորեն նայել, թե ինչպես խորհրդային իշխանության համար ապստամբություն բարձրացրած գյուղացիներին մենշևիկները կարող են գնդակահարել, ծխացող գյուղերը՝ Վորոնցովկան և Պրիվոլնոյեն ազդանշան***

[1] Տե՛ս **Безугольный А. Ю.**, Демократическая республика Грузия и ее вооруженные силы. 1918-1921 гг., с. 87-101:

[2] **Квинитадзе Г. И.**, Воспоминания в годы независимости Грузии, с. 354:

[3] Տե՛ս նույն տեղում:

էին, որոնք Կարմիր բանակին օգնության էին կանչում»[1]: Փետրվարի 17-ին Կովկասյան ճակատի հրամանատար Վ. Մ. Գիտտիսի հրամանով Աբխազիայում հարձակման է անցնում 9-րդ Կուբանյան բանակը: Փետրվարի 18-ին Մ. Դ. Վելիկանովի գլխավորած զորախումբը գրավում է վրացական դիրքերը Կոջորի և Յաղուլջինյան բարձունքներում՝ ունենալով մասնակի հաջողություն: Սակայն շուտով 11-րդ բանակը ջախջախիչ հարված է հասցնում Մազնիևի զբաղեցրած դիրքերին, որն ուներ 2500 զինվոր, 5 մարտկոց, զրահագնացք և 2 զրահամեքենա, չնայած վրացիք փորձում են դիմել հակագրոհի:

Այս ամենը պարտադրում է գլխավոր հրամանատարին փոխարինել գեներալ Ի. Օդիշելիձեով, իսկ նախկինին մեղադրանք է ներկայացվում Հայաստանի հետ սահմանում զորքերի ոչ ճիշտ խմբավորման համար, որի հետևանքով պատերազմի առաջին իսկ օրերին վրացական զորուժի երեք քառորդ մասը՝ 4 բանակային, 13 Ժողովրդական Գվարդիայի գումարտակ կազմով պարտություն էր կրել[2]: Փետրվարի 24-ին արդեն մարտերը ծավալվում են Թիֆլիսի մատույցներում, որին հետևում է գեներալ Գ. Կվինիտաձեի հրամանը շուտափույթ նահանջի մասին: Փետրվարի 25-ին 11-րդ բանակի զորամասերը մտնում են Թիֆլիս[3]: Փետրվարի 18-ին հռչակվում է Վրաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը, որը գլխավորում է Հեղկոմը հետևյալ կազմով՝ Ա. Ա. Գեգեչկորի, Բ. Ե. Կվիրկելիյա, Ֆ. Ի. Մախարաձե, Ա. Մ. Նազարեթյան, Մ. Դ. Օրախելաշվիլի, Շ. Զ. Էլիավա: Դաշնակիցները հապշտապ լքում են Անդրկովկասը, այն ճանաչելով որպես բոլշևիկյան ազդեցության ոլորտ: Միաժամանակ Անտանտի Գերագույն խորհուրդը 1920 թ. հունվարի 16-ին բանաձև է ընդունում Ռուսաստանի նկատմամբ տնտեսական բլոկադան վերացնելու մասին, իսկ արդեն 1920 թ. նոյեմբերին սկսվում է խորհրդա-բրիտանական առևտրական պայմանագրի կետերի ակտիվ քննարկումը, որը մասին համաձայնագիրը ստորագրվում է Վրաստանի անկման օրերին՝ 1921

[1] Տե՛ս **Орджоникидзе Г. К.**, Статьи и речи. Т. 1, М. Государственное издательство политической литературы, 1956, с. 173:

[2] Տե՛ս **Квинитадзе Г. И.**, Воспоминания в годы независимости Грузии, с. 362:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 276:

թ. մարտի 16-ին[1]: Այսպիսով, անկախ Վրաստանի և Հայաստանի կառավարությունները իրենց գոյության 2,5-3 տարվա ընթացքում չունենալով իրենց հակառակորդներին համազոր ռեսուրսներ, այդպես էլ չկարողացան ստեղծել ո՛չ կայուն տնտեսություն, ո՛չ էլ մարտունակ բանակ, որի միջոցով ձգտում էին վճռել իրենց տարածքային հարցերը հարևանների հետ, որում առավել ագրեսիվ ձգտումներ դրսևորվել են Վրաստանի կողմից: Այս առումով դիտարժան է բրիտանական հեղինակ Ռիչարդ Բեհովերի եզրահանգումը, որը 1921 թ. արձանագրել է. «***Վրաստանի ազատ և անկախ սոցիալ-դեմոկրատական պետությունը ընդմիշտ իմ հիշողության մեջ կմնա որպես իմպերիալիստական փոքր ազգության դասական օրինակ, ինչպես արտաքին տարածքային նվաճումների, այնպես էլ երկրի ներսում բյուրոկրատական բռնապետության, ամեն չափ ու սահման անցնող շովինիզմի հարցում***»[2]:

[1] **Мустафа-Заде Р.**, Две республики. Азербайджано-российские отношения в 1918-1922 гг., М., Изд-во МИК, 2006, с. 128-129:

[2] **Беховер**, Деникинская Россия и Кавказ. 1919-1920, Лондон, с. 14: https ://h.ua/ story/ 129099/, https://www.diary.ru/~15061981/p211859012.htm?oam, 1921, 14: հմմտ. նաև **Ходжаа Р. В.,** Казаки-добровольцы в Отечественной войне народов Абхазии 1992-1993 гг., Сухум, «Алашарбага», 2009, 129 с.: https://www.proza.ru/2013/05/01/1286, https:// regnum.ru/ news /polit /2410615. html, 2009, с. 11, 24:

ԳԼՈՒԽ 11.

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ 1918-1920 ԹԹ.

պ. գ. դ., պրոֆեսոր Վ. Հ. ՎԻՐԱԲՅԱՆ

ՀՀ կառավարությունը, խորհրդարանը որոշակիորեն ձգտում էին ներդաշնակեցնել իրենց գործողությունները ռազմական շինարարության և անվտանգության համակարգի ձևավորմանը նպատակաուղղված գործողությունների բնագավառում՝ փորձելով օպերատիվ կերպով լուծել այդ բնագավառում կուտակված բազմաբնույթ հիմնախնդիրները, հասկանալով, որ ամեն մի լուրջ երկրի համար բանակը և Զինվորական նախարարությունը պետական անվտանգության համակարգի առաջնային կառույցներ են, ուժային լուրջ լծակներ, առանց որոնց հնարավոր չէ լուծել թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության որևիցե լուրջ հարց, այդ թվում՝ ունենալ արդյունավետ գործող պետական անվտանգության համակարգ: Այս առումով հետաքրքիր է Նախարարների խորհրդի 1918 թ. օգոստոսի 8-ի միացյալ նիստը Խորհրդարանի պատգամավորական խմբի հետ, որին ներկա էին պառլամենտի նախագահ Ս. Սահակյանը և պատգամավորներ Հ. Տեր-Հակոբյանը, Ա. Խոնդկարյանը, Հ. Ազատյանը, Մխիթարյանը, Ա. Խաչատուրյանը, ինչպես նաև Ֆինանսների, Զինվորական, Արդարադատության նախարարները: Միացյալ նիստում լսվում է «խորհրդի» (պառլամենտի) անդամների առաջարկը խորհրդի անդամներից հատուկ օրգանի ստեղծման մասին, որը կառավարության հետ համատեղ պետք է ընտրեր և լուծեր զինվորական գերատեսչության և արտաքին քաղաքականության, և առհասարակ ազգային-պետական անվտանգության համակարգի ստեղծմանը և գործունեության ապահովմանը վերաբե-

րող կարևորագույն հարցերը: Միացյալ նիստը որոշում է խորհրդի անդամներից, վերջիններիս ընտրությամբ, կազմել երկու հանձնաժողով՝ կառավարության հետ համատեղ զինվորական և արտաքին քաղաքականության, անվտանգության կարևորագույն հարցերը վճռելու համար: Ընդունված որոշման մեջ կարևորագույն հարցեր են ճանաչվում. 1) Հայաստանի խորհրդի կողմից օրենսդրական ճանապարհով քննարկման ենթակա հարցերը, 2) այն հարցերը, որոնք կարևորագույն կճանաչվեն Զինվորական և Արտաքին Գործերի նախարարությունների կողմից[1]: Թե՛ կառավարությունը, թե՛ պառլամենտը բազմիցս անդրադարձել են զինվորական, ռազմական բնույթի հարցերին, քանզի միշտ էլ ռազմական շինարարության հարցերը դիտվել են առաջնային՝ երկրի ապագայի և ազգային-պետական անվտանգության տեսանկյունից, որպես լուրջ կռվան երկրի ներքին և արտաքին լիարժեք քաղաքականության կենսագործման, ինչպես նաև անվտանգության ապահովման տեսանկյունից: Ալ. Խատիսյանի վկայությամբ, ՀՀ պետբյուջեի ծավալի շուրջ 75 %-ը ծախսվում էր բանակի և երկրի պաշտպանության նպատակների վրա[2]:

1918 թ. նոյեմբերի 20-ին զինվորական հանձնաժողովը ներկայացնում է օրինագիծ Հայաստանի ազատագրության պայքարում զոհված զինվորականների զավակներին ձրի դասական (ասել է թե՝ դպրոցական - Վ.Վ.) պիտույքներ մատակարարելու մասին[3], ինչի իրականացման համար 1919-1920 ուսումնական տարում վերոհիշյալ կարգախմբի դպրոցական երեխաներին պետության հաշվին անվճար գրենական պիտույք հատկացնելու նպատակով բացվում էր 100 հազար ռուբլու վարկ[4]: 1919 թ. փետրվարի 18-ին Նախարարների խորհուրդը լսում է Զինվորական նախարարի զեկուցումը և ներկայացված օրինագիծը հայ-վրացական պատերազմին և Շարուրի ընդհանրումների մասնակցած սպաներին, բժիշկներին, ատիճանավորներին և զինվորներին

[1] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 202, ց. 1, գ. 13 , թ. 4:

[2] Տե՛ս **«Ճակատամարտ» (**Կ.Պոլիս), 3 հուլիսի, 1920 թ., **Արծրունի Վ.**, Հայ-տաճկական պատերազմը, էջ 31, 34:

[3] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 202, ց. 1, գ. 41, թ. 82:

[4] Տե՛ս նույն տեղում, գ. 333, թ. 73: «ՀՀ օրենքների հավաքածու», 1920 թ.», էջ 7:

նպաստ տալու մասին՝ համաձայն Զինվորական նախարարի խնդրի[1]: 1919 թ. մայիսի 19-ին կառավարությունը լսում է Զինվորական նախարարի զեկուցումը սպաների, զինվորական բժիշկների աստիճանավորների ռոճիկները 50 տոկոսով ավելացնելու մասին և կայացնում վճիռ համաձայն 1919 թ. ապրիլի 27-ի օրենքի ռոճիկները ավելացնել 50 տոկոսով և հանձնարարել ֆինանսների նախարարությանը մայիս-դեկտեմբեր ամիսների համար 5 միլիոն ռ. լրացուցիչ վարկ բացել զինվորական նախարարության հաշվին[2]:

1919 թ. հուլիսի 8-ին Նախարարների խորհրդի նիստում լսվում է Զինվորական նախարարի զեկուցումը զինվորների ռոճիկը 33%-ով ավելացնելու մասին: Ընդունված որոշման մեջ ընդգծվում է, որ համաձայն 1919 թ. հունիսի 5-ի օրենքի՝ հուլիսի 1-ից սկսած պետք է ավելացնել զինվորների ռոճիկը 33 %-ով, և այդ նպատակով մինչև 1919 թ. վերջը Զինվորական նախարարության հաշվին պետք է բացել հաշիվ 1.896.840 ռ. չափով[3]: Իսկ 1919 թ. հոկտեմբերի 21-ին պառլամենտի զինվորական հանձնաժողովը տալիս է իր եզրակացությունը Շարուր-Նախիջևանի շրջանում հայկական զորքերի անհաջողությունների պատճառների վերաբերյալ և առաջարկում ընտրել այդ դեպքերը քննող հանձնաժողով[4]: Դեռ 1919 թ. դեկտեմբերի 29-ին Էջմիածնի և Սուրմալուի գավառները գնացած պառլամենտական հանձնաժողովի նախագահ Ս. Թորոսյանը մտահոգություն արտահայտելով զորքի անմխիթար վիճակի և հացի բացակայության, գավառային կենտրոնի զինապահեստի անտերության, զենքի և զինամթերքի ցուցակների բացակայության մասին, կառավարության ուշադրությունը բևեռում էր թույլ տրված կեղծիքների վրա, և դրանով իսկ հարց բարձրացնում պետականորեն կարևոր այդ գործի նկատմամբ վերահսկողության ուժեղացման, զենքի բաշխման նկատմամբ խիստ հաշվառում մտցնելու և գավառային կոմիսարիատների ղեկավարներին պատասխանատվու-

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 199, ց. 1, գ. 100, թ. 28:

[2] Տե՛ս **Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ**, էջ 192:

[3] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 199, ց. 1, գ. 96ա, թ. 7:

[4] Նույն տեղում, գ. 41, թ. 73:

թյան ենթարկելու համար[1]: Իսկ 1920 թ. ձմռանը Կարս գործուղված պառլամենտական հանձնաժողովը, ամփոփելով իր հունվար-փետրվար ամիսներին Կարսի մարզի վերաբերյալ կատարած դիտարկումների արդյունքները, հայկական բանակի վիճակի բարելավման առումով եկավ որոշակի եզրահանգումների, որոնք հանգում էին հետևյալին. 1) անհապաղ լուծել զինվորականների և շարքային զինվորների հագուստի հարցում եղած առկա թերությունները՝ լրացնելով անդրավարտիքների, սպիտակեղենի, ձեռնոցների հարցը, տալ նրանց վերմակներ, 2) զորքի շարքերը համալրել քաղաքաբնակ և ոչ մտավորական զինապարտներով՝ վերջ դնելով դասալքությանը, 3) օտարազգի քաղաքացիներին ևս մասնակից դարձնել երկրի պաշտպանության գործին, 4) բարելավել սպաների իրավական դրությունը: Հանձնարարական տալ նրանց պետական ջանքերով ձեռք բերելու հագուստի և կոշիկի կաշվեկտորներ, իսկ նրանց ընտանիքների համար՝ հաց և մթերքի ձեռքբերման պայմաններ ստեղծել, 5) գրքեր և լրագրեր հասցնել զորամասերին, 6) զարկ տալ գրագիտության տարածմանը և բավարարել զինվորների կուլտուրական պահանջները և այլն[2]: Այդ նույն թվականին Նոր Բայազետի և Դարալագյազի գավառները գնացած պառլամենտական հանձնաժողովը ի դեմս հանձնաժողովի անդամներ Ե. Սարգսյանի և Հ. Տեր-Հակոբյանի, կարևոր առաջարկներ էր արել Նոր Բայազետում գտնվող հայկական զորքի վիճակի բարելավման վերաբերյալ, մասնավորապես կարևորելով այն հանգամանքը, ըստ որի անհրաժեշտ է կանոնավորել այսպես կոչված զինվորական *«օբոզի»*՝ ասել է թե՝ գումակի հարցը, բնակչությանը ապահովագրելով զանազան անբարեխիղճ և շահամոլ զինվորականների կողմից ձեռնարկվող բռնագրավումների քաղաքականությունից և ըստ այդմ խստորեն պատժել հայկական զորքերի անունը վարկաբեկող զինվորականներին[3]: Իսկ Դիլիջան ուղարկված պառլամենտական հանձնաժողովը կարևորեց զորակոչի ենթակա դասալիքներին հավաքելու և զորակոչվածներին պետական հաստատություններից հեռացնելու հարցը[4]: Երկու տարբեր

[1] Նույն տեղում, ֆ. 198, ց. 1, գ. 2, թ. 49:
[2] Նույն տեղում, թ. 2:
[3] Նույն տեղում, ֆ. 198, ց. 1, գ. 2, թ. 8:
[4] Նույն տեղում, թ. 6-7:

հարցեր, սակայն երկուսի նկատմամբ էլ ուշադրության ձգտում, որը վկայում է, որ այդ ժամանակաշրջանում համենայն դեպս առկա է եղել որոշակի բանակաստեղծ նպատակադրում: Տեղի ունեցան բանակաշինարարական որոշակի գործընթացներ, բանակի կազմակերպման քայլեր և իրական թվեր՝ որոշակի բովանդակությամբ: Արդյունքում, բանակի և ազգային-պետական անվտանգության համակարգի կայացման իրական դրսևորումներ՝ իր բոլոր բարդություններով և սայթաքումներով հանդերձ:

Ակնհայտ է, որ բանակի ստեղծման գործը դժվարին էր, և մեր խնդիրն է պարզաբանել նաև Հայաստանի տարածքում գործող կուսակցությունների վերաբերմունքը այդ խնդրի նկատմամբ, ինչը և կարվի ստորև: Փաստաթղթերը ուղղակի վկայում են, որ այսպես թե այնպես Հայաստանում գործող կուսակցությունների մեծամասնությունը 1918-1920 թթ. կանգնած էր ազգային դիրքերում, աջակցում էր ազգային կանոնավոր բանակի ստեղծման գործին: Այսպես, անգամ սոցիալ-դեմոկրատ Հ. Ազատյանը Հայաստանի խորհրդի 1919 թ. հունվարի 17-ի նիստում հանդես է գալիս հաշմանդամ զինվորների ապահովության մասին օրինագծի քննարկման կապակցությամբ, անելով հիմնավոր առաջարկներ, որոնք հանգում էին թե՛ զինվորների և թե՛ սպաների համար ապահովագրության հավասար պայմանների ստեղծմանը[1]: Այս առումով հետաքրքրություն են ներկայացնում նաև Հայաստանի խորհրդի (պառլամենտի) հայ պատգամավորական խմբակցությունների 1919 թ. մարտի 16-ի և 19-ի խորհրդակցությունների նյութերը: Այսպես, Հայաստանի խորհրդի (պառլամենտի) 1919 թ. մարտի 16-ի նիստում *«Հայաստանի սահմաններին սպառնացող վտանգի և զորքի անկազմակերպ վիճակի մասին»* զեկուցումով հանդես է գալիս Նախարարների խորհրդի նախագահի (վարչապետի) պաշտոնակատար Ալ. Խատիսյանը, որին ունկնդրում են խմբակցության ներկայացուցիչները և իրենց կարծիքն արտահայտում երկրին, սահմաններին սպառնացող վտան-գի և հայկական զորքերի անկազմակերպվածության մասին: Նկատի ունենալով, որ Հայաստանի խորհրդի նիստերը կանոնավոր չեն գումարվում, մինչդեռ զորքը վերակազմելու և զորեղացնելու հա-

[1] Տե՛ս նույն տեղում, գ. 17, թ. 27, 77:

մար կառավարությունը դրամի անմիջական կարիք ուներ, խորհրդակցությունը որոշում է թույլ տալ կառավարությանը զորական նախահաշվի այլ պարագրաֆներից դրամ ծախսել, այն է. 1) զինվորների սնունդը լավացնել՝ սննդագրամը ավելացնելով, 2) զորային գործը կանոնավորելու համար անհրաժեշտ ձիեր և ջորիներ գնել, 3) զորային զանազան մասնագիտության աշխատանքների համար ռոճիկով մասնագետ-ծառայողներ պահել: Հարկ է ավելացնել, որ սույն առաջարկն անցնում է միաձայն, միաժամանակ որոշելով, որ հաջորդ խորհրդակցությունը կգումարվի մարտի 18-ին[1]: Խորհրդակցությունը, սակայն, մարտի 18-ին չի գումարվում, այլ մեկ օր ուշ՝ մարտի 19-ին, ուր վարչապետի պաշտոնակատար Ալ. Խատիսյանը, կրկին ելույթ ունենալով, հիմնավորում է նախորդ ժողովին արված զեկուցումը և առաջարկում կառավարությանը թույլ տալ՝ ա) ընդհանրապես զորային նախահաշվի մի պարագրաֆից մյուսի ծախսերը անել, բ) երկրի սահմաններն ապահովելու համար արտակարգ և համապատասխան միջոցներ ձեռնարկել, գ) կառավարության համար բանալ տասը միլիոն ռուբլու վարկ այդ նպատակներով ծախքեր անելու համար: Ավելին, այս նույն խորհրդակցությունում Ալ. Խատիսյանը առաջարկում է առկա բացառիկ հանգամանքներում Նախարարների խորհրդին տալ ավելի լայն իրավունքներ համապատասխան միջոցների դիմելու, վստահեցնելով, որ վերջինս այդ իրավունքներից կօգտվի միայն բացառիկ հանգամանքներում: Ժողովը, քննության առնելով կառավարության կողմից արված առաջարկությունը, ընդունում է Դաշնակցության խմբակցության կողմից ներկայացրած հետևյալ բանաձևը. «Երկրի պաշտպանության և զորքի վերակազմության գործը փութացնելու համար՝ ա) լիազօրել կառավարությանը արտակարգ միջոցներ ձեռք առնել, բ) թույլ տալ կառավարությանը օգտվել զինվորական նախահաշվի գումարներից՝ մի պարագրաֆից մյուսին անցնել, և գ) նոր վարկ բանալ տասն միլիոն ռուբլու (10 մլն ռուբլի) կառավարության անունով նույն նպատակի համար»: ՀՀ Դաշնակցության խմբակցության այս առաջարկի հետ համերաշխվում է Հայ Ժողովրդական կուսակցության խմբակցությունը, իսկ Սոցիալ-Դեմոկրատական խմբակցությունը, պատճառ բերելով խորհրդարանի

[1] Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 27, թ. 149, գ. 72, թ. 193-194:

շենքում փետրվարի 28-ին տեղի ունեցած միջադեպը, կապված տեղական ինքնավարությունների և նրա խորհրդի ընտրությունների նախագծի հետ, առանց լուրջ հիմնավորման հեռանում է ժողովից, որը կարելի է դիտել որպես սաբոտաժի նման մի բան, այն էլ երկրի համար կարևոր զինվորական խնդրում: Ի վերջո Սոցիալիստ-հեղափոխականների խմբակցությունը համաձայնվում է ՀՀԴ կողմից ներկայացրած բանաձևին՝ այն պայմանով, որ կամ Ավագների խորհուրդը, կամ Խորհրդից ընտրված մի նոր հանձնաժողով կհսկի և կվարի արտաքին քաղաքականությունը: Սակայն քանի որ սոցիալիստ-հեղափոխականների առաջարկը ևս չի ընդունվում, վերջինս ևս հեռանում է ժողովից[1]:

1919 թ. մարտի 31-ին ՀՀ Զինվորական նախարարին է ներկայացվում հանձնարարությունների գծով գեներալ Բեյ-Մամիկոնյանի կողմից Հայկական 3-րդ հետևակային գնդի Ղամարլույում, Դավալույում զորամասերում անցկացված ստուգումների մասին, որոնք բացահայտել են բավականին անմխիթար վիճակ՝ զինվորների սննդակարգի ահավոր վիճակ, հացի անորակություն, պակաս, երբեմն էլ բոլորովին անպիտանի, կացարանների անմաքրություն: Եզրակացության մեջ, որն հավանության էր արժանացել Զինվորական նախարար Արարատյանի կողմից, Բեյ-Մամիկոնյանի կողմից կարծիք էր հայտնվում, որ անհրաժեշտ հոգատարության դեպքում հնարավոր կլինի հնարավորինս բարելավել զորքերի կյանքի և կենցաղի պայմանները[2]: Հարկ է նաև ասել, որ ՀՀ պառլամենտը այդ տարիներին ուներ համապատասխան զինվորական հանձնաժողով, որն էլ հենց զբաղվում էր բանակաստեղծ գործընթացների կազմակերպմամբ, բանակի ու Զինվորական նախարարության համար ֆինանսական-դրամական միջոցների հայթայթման խնդիրներով: Այդ հանձնաժողովն ուներ ութ անդամ՝ Նիկողայոս Աղբալյանը, Սիմոն Վրացյանը, Արտաշես Բաբալյանը, Արշակ Ջամալյանը, Ռուբեն Տեր-Մինասյանը (նախագահ), Վարոս Բաբայանը, բժիշկ Հ. Տեր-Մելիքյանը (քարտուղար) և Աբրահամ Գյուլխանդանյանը[3]:

[1] Նույն տեղում, գ. 27, թ. 150, գ. 72, թ. 194:
[2] Նույն տեղում, ֆ. 204, ց. 1, գ. 132, թ. 44:
[3] Նույն տեղում, ֆ. 198, ց. 1, գ. 32, թ. 10, 12:

Կուսակցություններն իրենց յուրահատուկ մոտեցումն ունեին ռազմաքաղաքական հարցերին: Սակայն շատ հաճախ գործի մեջ իրատեսորեն խորանալու փոխարեն, նրանք նույնիսկ իրենց առողջ մտադրությունները հաճախ խճողում էին կուսակցական քննադատամոլությամբ՝ առանց լրջորեն խորամուխ լինելու կառավարության ու զինվորականության կողմից թույլ տրված բացթողումների, սայթաքումների և չարաշահումների, այլևայլ բացասական երևույթների իրական պատճառների վերհանման մեջ՝ հաշվի չառնելով թե՛ իշխող սովը կադրերի բնագավառում, թե՛ անձուկ աշխարհաքաղաքական միջավայրը, և թե՛ զանազան գործոններ՝ կապված Անտանտի գծով Հայաստանի դաշնակիցների կրավորական, երբեմն էլ ոչ բարեկամական դիրքորոշման հետ, որի պայմաններում արդյունավետորեն գործել և ստեղծել ուժեղ մարտունակ բանակ՝ դժվարագույն խնդիր էր: Եվ այնուամենայնիվ, իրական մտահոգություն Հայկական բանակի կայացման, դրանում իշխող անառողջ տրամադրությունների հաղթահարման առումով, կար: Օրինակ, 1919 թ. հոկտեմբերին Հայկական ռամկավարական և Ժողովրդական կուսակցությունների, ՌՍԴԲԿ (մենշևիկներ), անկախ սոցիալիստների Ալեքսանդրապոլի կազմակերպությունների, Շիրակի գյուղացիների միության վարչության մի ուղերձի նախագծում, ուղղված կառավարությանը, ասվում էր. «երկրի ինքնապաշտպանության գործը- ազգայինի ամենապատասխանատու գործը հանձնված է նույնպես կուսակցական, բայց անձեռնհաս անհատների, դուրս են ձգված արժանավորները, միմիայն այն պատճառով, որ գործում է կուսակցական խտրությունը: ***Նկատելի է, որ փոխանակ ուժեղացնելու կանոնավոր բանակների կազմությունը, ընդհակառակը՝ նորից կենդանանում է խմբապետական կազմերի անկարգ և քայքայող դրությունը***»[1]:

Բանակի, ռազմական քաղաքականության հարցերը կառավարող կուսակցության՝ ՀՀ Դաշնակցության ուշադրության կենտրոնում էին: ՀՅԴ 9-րդ ընդհանուր ժողովը զորքի մասին հատուկ որոշում կայացրեց: Զորքի մասին Դրոյի տված զեկուցման հիման վրա ընդունվեց համապատասխան որոշում Հայաստանի բոլոր քաղաքացիների պարտադիր երկամյա զինվորական ծառայության և կանոնավոր համաժո-

[1] Նույն տեղում, ֆ. 4033, ց. 7, գ. 2, թ. 1, ֆ. 404, ց. 1, գ. 36, թ.1:

ղովրդական բանակի կազմակերպման, բանակը բոլոր առումներով հայացնելու, հրամանատարական կազմի վերակազմության և սպայական կազմի վերապատրաստման, հին զինվորական ձևերից հրաժարման, ազգային յուրահատուկ ռազմական համազգեստի ու տարբերանշանների ընդունման, զորքը Հայրենիքին ծառայելու գաղափարի իրականացման և Հայոց պետության պաշտպանությանը և անվտանգությանը ծառայեցնելու հրամայականի մասին: Բանակի հայացման գործում կարևոր դեր ունեցան հատկապես թուրքական բանակից հարյուրի չափ հայ սպաների ժամանումը և ծառայության անցնելը: Մարտունակ և որակյալ բանակ ունենալը կուսակցությունը իրավացիորեն տեսնում էր՝ մի կողմից հզոր տնտեսության, մյուս կողմից՝ ռազմիկների բարոյական կայունության և հայրենիքին նվիրվածության մեջ[1]: Սակայն խոցելի էր այն հանգամանքը, որ ընդհանուր ժողովի կողմից ազդարարվում էր, որ մինչև միացյալ Հայաստանի ազատագրումը և Ազգերի լիգայի կողմից փոքր երկրների անձեռնմխելիության երաշխավորումը, զինապարտությունն իբրև անհրաժեշտ չարիք ընդունելով հանդերձ՝ ժողովը հանձնարարեց, որ զինվորական ծառայության ժամկետն աստիճանաբար նվազեցվի և հասցվի երկու տարվա՝ զորքն ի վերջո ժողովրդական միլիցիայի ու տեղական գվարդիայի վերածելու հեռանկարով, որը գրեթե կուրորեն պատճենահանում էր հարևան Վրաստանի իրեն չարդարացնող և պախարակելի փորձը:

Կարևոր է անդրադառնալ նաև Հայաստանի Հանրապետության տարածքում գործող և պառլամենտի անդամ հանդիսացող տարբեր քաղաքական կուսակցությունների պատերազմական-բանակային հարցերի նկատմամբ ունեցած վերաբերմունքի դրսևորման որոշ նրբերանգներին և մի շարք արտահայտություններին: Հատկանշական է, որ ոչ միշտ է իրական, սրտացավ և ըմբռնումով մոտեցում ցուցաբերվել այդ հարցերին: Օրինակ, չնայած այն հանգամանքին, որ հայ իրականության մեջ գոյություն ունեցող բոլոր կուսակցությունները այս կամ այն կերպ վճռորոշ պահերին սատարել են կառավարությանը, և իրենց

[1] Տե՛ս **Քաղիածներ Հ. Յ. Դ. 9-րդ Ընդհանուր Ժողովի որոշումներից**, Եր., «Ուրարդիա» հրատ., 1920, էջ 10-11, **Հակոբյան Ա.**, Հ. Յ. Դ. 9-րդ ժողովը, Եր., «Մ. Վարանդյան» հրատ., 1994, էջ 34, 35, Նույնի՝ **Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.)**, Եր., ՀՅԴ հրատ., 2005, էջ 154-155, 266-268:

մոտեցման այս կամ այն տարբերությամբ հանդերձ, կանգնած էին երկրի ու ազգային պաշտպանության, պետական անվտանգության համակարգի կազմակերպման դիրքերում՝ կողմնակից լինելով ամուր ու կարգապահ բանակի ստեղծման գաղափարին՝ որպես պետական անվտանգության ապահովման հիմնաքարի, սակայն երբեմն ունեցել են նաև ոչ լուրջ, ոչ լիարժեք մոտեցումներ երկրի պաշտպանության, ռազմական և ներքին շինարարության հարցերին: Հետաքրքիր է այդ առումով Հայաստանի խորհրդի 1919 թ. հունվարի 10-ի նիստի արձանագրությունը, ուր բանակի և ռազմական շինարարության, անվտանգության համակարգի այս կամ այն ստորաբաժանման ձևավորման հիմնախնդիրների նկատմամբ անսթափ մոտեցում է ցուցաբերվում սոցիալ-դեմոկրատական խմբակցության կողմից: Վերջինս բոլորովին հաշվի չառնելով այն կարևոր հանգամանքը, որ առհասարակ ռազմական նախարարությունները ունենում են իրենց կորպորատիվ, ծառայողական բնույթի ներքին գաղտնիքները՝ կապված երկրի անվտանգության հարցերի հետ, պահանջում էին հրապարակայնություն: Այդ պահանջը անհիմն էր: Որպեսզի պարզ դառնա վերոհիշյալ խմբավորման անհիմն մոտեցման ողջ հակասականությունը և որոշակի իմաստով նաև վնասակարությունը ազգային-պետական քաղաքականության ըմբռնման տեսանկյունից, ստորև մեջբերում ենք նրանց մոտեցումն ամբողջությամբ. «Նկատի ունենալով Զինվորական նախարարության վարած հետադիմական մեծածախս և կործանիչ քաղաքականությունը, նրա անտարբեր և հաճախ հանցավոր վերաբերմունքը դեպի զորքի նյութական և բարոյական պահանջները՝ մանավանդ մահվան պատիժը վերականգնելուն վերաբերող հակաօրինական կարգադրությունը, ինչպես և այդ նախարարության ամբողջ նախահաշվի գաղտնի հայտարարվելը, Սոցիալ-Դեմոկրատական խմբակցությունն առաջարկում է մերժել այդ նախահաշիվը»[1]: Սակայն սոցիալ-դեմոկրատական խմբակցության առաջարկը 3 ձայնից ավելի չի ստանում, և դա տրամաբանական էր, քանզի տվյալ իրադրությունում նմանատիպ որոշում ընդունելը նշանակում էր վնասել պետության պաշտպանունակությանը, Հայկական բանակի ձևավորման հիմնախնդիրների լուծմանը և

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 198, ց. 1, գ. 15, թ. 58:

վերջին հաշվով՝ անվտանգության համակարգի ձևավորմանը: Բացի այդ, այս դիրքորոշման միակողմանիությունը և կիսատ-պռատությունն արտահայտվում էր նրանում, որ կառավարությանը և, մասնավորապես, Զինվորական նախարարությանն արդարացիորեն քննադատելով ռազմական քաղաքականության բնագավառում թույլ տված զեղծարարությունների ու հափշտակումների, ինչպես նաև բանակի հիմնահարցերի նկատմամբ հանցագործ վերաբերմունքի համար, ընդդիմության ներկայացուցիչներն ընկնում էին մի ծայրահեղությունից մյուսի մեջ, զորքերում առկա բացթողումները փորձելով պայմանավորել միայն ՀՀ կառավարության քաղաքականությամբ և ոչ թե սոցիալ-տնտեսական ու աշխարհաքաղաքական բնույթի ավելի բարդ գործոններով, չփորձելով խորքային ավելի ճշգրիտ վերլուծություններ կատարել, որոնք հնարավորություն կտային առավել ամբողջական և համակողմանի եզրահանգումների գալ, և, ըստ էության, Հայաստանի համար շատ դժվարին 1918-1920 թթ. սոցիալ-տնտեսական և աշխարհաքաղաքական իրադրության պայմաններում սկզբունքային նշանակություն չէին տա կառավարության կողմից ռազմական քաղաքականության բնագավառում հրապարակայնության ապահովման ոչ առաջնային և ոչ հիմնավոր գաղափարին և այլ պահանջներին: Այդ իսկ պատճառով էլ բանակում առկա բացասական երևույթների առողջ քննադատությունն ուղեկցվում էր բանակի վերակառուցման ու բանակաշինության մասին ընդհանուր բնույթի վերացարկումներով, որոնց համար, ցանկության դեպքում, միշտ էլ հարմար փաստարկ կգտնվեր, եթե դրա անհրաժեշտությունը լիներ: Այդ են վկայում նույն սոցիալ-դեմոկրատական խմբակցության առաջադրած մի շարք տեսակետները ևս: Այդուհանդերձ, Հայաստանի գրեթե բոլոր քաղաքական կուսակցություններն էլ իրենց մոտեցման այս կամ այն տարբերությամբ հանդերձ, կանգնած էին երկրի ազգային պաշտպանության կազմակերպման դիրքերում, կողմնակից էին ամուր ու կարգապահ բանակի ստեղծման գաղափարին: Անգամ շատ քննադատված և շատերի կողմից երբեմն մերժված Ազգային խորհրդարանի Սոցիալ-Դեմոկրատական խմբակցությունն իր ծրագրային փաստաթղթերից մեկում շեշտադրում է հետևյալը. ***«Զինվորական ու երկրի պաշտպանության խնդիրներում բարձրասպիճան ու հասարակ զինվորականության շարքերից մեծաքանակ ավելորդ***

բերանների վկարումը, բանակի վերակազմություն ժողովրդի տնտեսական ու հասարակական ուժերի համեմատ և ժողովրդական ուժեղ միլիցիա քաղաքներում ու մանավանդ գյուղերում»[1]: Այս և այլ տարաբնույթ փաստերի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ ընդհանուր առմամբ, ընդդիմությանը հետաքրքրել են հայկական բանակի հիմնախնդիրները, և այդ տեսանկյունից նրա արտահայտած մտքերն ու տեսակետները, անշուշտ, արժանի են ուշադրության: Եվ առհասարակ, այդ ժամանակաշրջանում Հայաստանում գործող քաղաքական ուժերի մեծ մասը իր մոտեցման մեջ հաճախ արդարացիորեն դատապարտում էր այն սխալներն ու սայթաքումները, որոնք թույլ էին տրվում ռազմական շինարարության և անվտանգության համակարգի այս կամ այն օղակի կազմակերպման բնագավառում, մերկացվում էին զեղծարարություններն ու հանցագործությունները հայկական բանակի շինարարության բնագավառում, ինչպես նաև շահամոլ զինվորականության որոշ մասի անվայելուչ կեցվածքը բանակի հիմնախնդիրների նկատմամբ: Այնուամենայնիվ, չնայած սոցիալ-դեմոկրատական և այլ խմբակցությունների կողմից Զինվորական նախարարության և կառավարության հասցեին ուղղված սուր և անաչառ քննադատությունում կային ռացիոնալ հատիկներ, սակայն դա հիմք չէր, որ դրանք առհասարակ ժխտական մոտեցում որդեգրեին բանակաշինության ու անվտանգության համակարգի ձևավորման բնագավառում պետական տարբեր մարմինների ձեռնարկած ամեն մի քայլի նկատմամբ: ***Քաղաքական-կուսակցական այդ ուժերի մոտեցումներում արժեքավոր և օգտակար առաջարկությունների հետ մեկտեղ կային այնպիսիք, որոնք չէին տեղավորվում մեծաթիվ ուժեղ և կարգապահ բանակ ստեղծելու ծրագրային նպատակադրումների շրջանակներում:*** Դրանք հանգում էին նրան, որ Հայաստանը լինելով փոքր և ոչ մեծաքանակ բնակչությամբ երկիր, չպետք է ունենա մարտունակ ուժեղ բանակ ստեղծելու ռազմավարություն: Հետևաբար ՀՀ պետք է բավարարվի փոքրաքանակ զորքով՝ այդ տեսակետները քողարկելով որակի բարելավման մասին միակողմանի և սնամեջ ճամարտակումներով: Քաղաքական-կուսակցական այդ ուժերի մոտեցումներում արժեքավոր

[1] Նույն տեղում, ֆ. 404, ց. 1, գ. 1, թ. 6:

և օգտակար առաջարկությունների հետ մեկտեղ կային այնպիսիք, որոնք չէին տեղավորվում մեծաթիվ ուժեղ և կարգապահ բանակ ստեղծելու ծրագրային նպատակադրումների շրջանակներում՝ չցանկանալով և չկարողանալով ***«զանազանել պետությունը կուսակցական ընդհանուր ժողովից, հայրենիքը՝ սեփականատիրոջ ագարակից, քաղաքականությունը՝ խմբապետությունից: Ամեն մեկը տեսնում է, թե ինչպես փտում և ճահճանում է պետական օրգանիզմը, երբ ամեն ինչ, և՛ պատիվ և՛ ամոթ և՛ պարտականություն զոհ է բերվում կուսակցական մոլեգնության: Ինչպես կարող է մի կառավարություն գողեր հալածել, երբ իր մեջ էլ գողեր կան նստած»***[1]:

Այս ամենի հետ մեկտեղ, կուսակցական-քաղաքական ուժերի մեծ մասը ավելի իրատեսական էին, և ավելի խորն էին ըմբռնում ուժեղ, մարտունակ բանակ ունենալու կանորությունը, և ըստ այդմ էլ տարբեր առումներով արտահայտում էին իրենց վերաբերմունքը բանակաստեղծ գործընթացների նկատմամբ, որոնք սկզբունքորեն կարևոր էին անվտանգության համակարգի ձևավորման քաղաքականության տեսանկյունից: Այսպես, ՀՀ Զինվորական նախարար գեներալ-մայոր Ք. Արարատյանին հասցեագրված 1919 թ. սեպտեմբերի 18-ի նամակում Հայկական ժողովրդական կուսակցության 2-րդ համագումարի նախագահ Ս. Հարությունյանը ողջունելով հայկական բանակի բարձրագույն և կրտսեր սպայակազմին ու զինվորներին, ընդգծում էր հետևյալը. ***«Ժողովրդի համար սերտորեն համախմբված, ուժեղ, լավ զինված, հերոսության և ուժեղ կարգապահության մեջ իր ուժը կորզող բանակը հանդիսանում է նրա ֆիզիկական գոյության պահպանման և նրա բաղձալի նպատակներին հասնելու միակ միջոցը՝ տեսնելու Միացյալ, անկախ Հայաստանը, որում հայ ժողովուրդը կապրեր հանգիստ կուլտուրական կյանքով ինչպես իր հողի վրա, այնպես էլ իրենց կողք-կողքի ապրող այլ ազգությունների ողջ մնացյալ բնակչության հետ հաշտ և համերաշխ»***: Նամակի վերջնամասում Ս. Հարությունյանը համագումարի մասնակիցների պատրաստակամությունն

[1] Տե՛ս **«Մշակ»** (Թիֆլիս), 3 դեկտեմբերի, 1920, № 152:

էր արտահայտում՝ աջակցելու բանակի ղեկավարությանը իրենց նվիրական, պետականորեն կարևոր գործում[1]:

Վերն ասվածին հարկ է նաև ավելացնել, որ բանակի ստեղծման, կառավարության ռազմաքաղաքական արդյունավետ գործունեության վրա բացասաբար էր ազդում Հայաստանի անտանտյան դաշնակիցների կողմից հաճախակի դրսևորվող երկդիմի քաղաքականությունը, երբեմն նույնիսկ շատ վնասակար և աղետալի հետևանքներ ունեցող քայլերը, որոնց դեմ բողոքում էին Հայաստանի Հանրապետության տարածքում գործող գրեթե բոլոր կուսակցություններն անխտիր: Անգամ 1918 թ., երբ դեռ Հայաստանի Հանրապետության Անտանտի գծով դաշնակիցները կարծես թե չէին էլ «երազում» այլ բանի մասին, քան փլուզել Օսմանյան կայսրությունը, և հետևաբար շահագրգռված էին Ազատ, Անկախ, Միացյալ Հայաստանի ստեղծմամբ, և թվում է, թե հետամուտ էին իրենց ռազմավարական ծրագրերի իրագործումը մինչև վերջ հասցնելուն, անգամ այդ իրավիճակում նրանք անկեղծ չէին, և ձգտում էին քողածածկված եզրեր որոնել թուրքերի հետ, որպես պահեստային տարբերակ ունենալով վերջիններիս հետ հնարավոր հարաբերությունների պահպանման հնարավորությունը, ինչի մասին հետաքրքիր վկայակոչման ենք հանդիպում *Ս. Վրացյանի մոտ. «Յուլիսի սկիզբը (հավանաբար՝ 1918 թ.) անգլիացիք գրաւել էին Էրզրումը: Զինաթափ էին արել քաղաքը եւ սկսել էին դուրս տանել զէնքն ու ռազմամթերքը: Զէնքի արտահանութիւնը սկսուել էր յուլիսի վերջերին: Երբ դուրս եկավ առաջին գնացքը՝ բեռնաւորված մէկ միլիոն փամփուշտներով, 15 թնդանօթներով ու 500 հրացաններով, Էրզրումից ոչ հեռու՝ նրա վրա յարձակուեց մի մեծ զինուած խումբ Էրզրումի թուրք զինուորներից, զինաթափ արավ անգլիացի պահակներին եւ գնացքը դարձրեց յետ Էրզրում: Անգլիացիք ոչ մի միջոցի չդիմեցին զէնքերը եւ առնելու կամ խռովարար թուրք զինուորներին պատժելու համար: Դրանից առաջ, անգլիացիները սպրպեցին յետաձգել հայերի մուտքը Կարս եւ իրենք գրաւեցին Կարսի ռազմապահեստներում դիզուած ռազմամթերքը՝ թնդանօթներ, հրացաններ եւ փամփուշտ, եւ ուղարկեցին ռուս Կա-*

[1] Տե՛ս **ՀԱԱ**, Ֆ. 204, ց. 1, գ. 132, թ. 142:

մավորական բանակին»[1]: Անգլիացիների այս դիրքորոշումը, վերջին հաշվով, խիստ բացասաբար անդրադարձավ նաև 1920 թ. թուրք-հայկական պատերազմում Կարսի պաշտպանունակության գործը կազմակերպելու առումով և բարոյահոգեբանական ճնշող տպավորություն թողնելով զինվորականության վրա՝ նսեմացնելով նաև հայկական հետախուզության ջանքերը, այդ թվում թշնամու մասին ձեռքբերված տեղեկատվության արդյունավետ օգտագործման առումով:

Գլխավոր շտաբի 1919 թ. հունիսի 11-ի հետախուզական ամփոփագրում (N 3687/N F 0133) փոխգնդապետ Ա. Շնեուրի կողմից դարձյալ նշվում է անգլիացիների հակահայկական վարքագծի այդ փաստի մասին, լրացնելով վերն ասվածը. գործակալական տվյալների համաձայն անգլիացիները Էրզրումում իբր թե զինաթափել են 12 հազար ասկյարների՝ պահանջելով հանձնել Էրզրումում գտնվող, սակայն Կարսից դուրս բերված զինհանդերձանքը, ավելի քան 28 հազար հրացան և 4555 գնդացիր՝ թուրք սպա Հայդար բեյի ուղեկցությամբ Խորասան-Կարաուրգան ուղարկելու համար՝ իբր թե հայերին հանձնելու համար: Սակայն ճանապարհին՝ Խորասանից 18 վերստ հեռավորության վրա նրանք վնասելով երկաթուղագիծը, այսինքն՝ արհեստական վթար կազմակերպելով, գողանում են այդ զենք ու զինամթերքի կեսից ավելին[2] (հնարավոր է՝ հենց դա էլ ուզում էին անգլիացիները՝ քողածածկված եզրեր գտնելով թուրքերի հետ -Վ.Վ)[3]: Սակայն անգլիացիները բո-

---

[1] Տե՛ս **Վրացեան Ս.,** Կեանքի ուղիներով, հ. Ե, էջ 60:

[2] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 200, ց. 1, գ. 155, թ. 62, 67:

[3] Հնարավոր է, դա հենց այն փաստն է, որի մասին նշում է Ռ. Հովհաննիսյանը, ասելով, որ արտաքնապես համագործակցելով բրիտանական ավազ հրահանգիչ Ալֆրեդ Ռաուլինսոնի հետ, հենց Քյազիմ Կարաբեքիր փաշան է գաղտնի հրամայել իր մարդկանց քանդել երկաթուղագիծը, իսկ իր հրոսակախմբերին չհարձակվել զենքը դուրս բերողների վրա, և անարգել կողոպտել զինապահեստները: Հափշտակված զենքն ու զինամթերքը պետք է խնամքով թաքցվեին և գաղտնի պահեստավորվեին 50 հազարանոց թուրքական զինուժի համար, որը Ք. Կարաբեքիրը անհրաժեշտ էր համարում Հայաստանի Հանրապետության սահմանին կենտրոնացնելու և վերջինիս հավակնած՝ արևելյան վիլայեթների արդյունավետ պաշտպանության համար, հույս ունենալով, որ Դաշնակիցների խոստումները հայերին կմնան անպատասխան, և դրանում, իրոք, չսխալվեց. **Ռ. Գ. Հովհաննիսյան**, Հայաստանի Հանրապետություն: Հատոր I, էջ 468-469: Արևելքում, և մասնավորապես Թուրքիայում գործած, և հայ իրականության հետ բազմիցս առնչություններ ունեցած և Արևմտահայաստանին քաջածանոթ բրիտանական հայտնի հետախույզ-սպա **Ալֆրեդ Ռաուլինսոնի** մասին հետաքրքիր նյութերի և վկայությունների կարելի է հանդիպել

լորովին էլ մտադրություն չունեին ուժեղացնելու հայերին, և ազատ մանևրում էին, շահարկելով հայկական կողմի անտեղյակության կամ էլ պարզապես անճար վիճակի վրա, շահարկելով վերջինիս դյուրահավատությունը և կույր նվիրվածությունը Մեծ Բրիտանիային և Անտանտի մեծ շահերին, կամ էլ հուսալով, որ հայկական հետախուզությունն այդ ամենի մասին բոլորովին չի կարող տեղեկանալ, կամ էլ անուժ է նման խնդիրներ լուծելու, առավել ևս հակազդել, ինչը հարկ է ասել՝ հերքվում է վերը նշված և հայ հետախույզների կողմից հայթայթված կարևոր տեղեկատվությամբ, և հետևաբար իրենք կարող են անել այն ամենը, ինչը համապատասխանության մեջ կգտնվի Մեծ Բրիտանիայի մեծապետական շահերի հետ: ***Միանգամայն ճիշտ են նկատում այդ առումով Գ. Մախմուրյանը և Գ. Պետրոսյանը, նշելով, որ Լոնդոնում (արհեստավարժորեն և մշտապես) ապահովվում էին սեփական հասարակական շահերը և ՀՀ ցուցաբերվող օգնությունը բացահայտորեն փոխանակում էին միայն նրա կողմից դրսևորվելիք հակասովետիզմի հետ***[1]: Դաշնակիցները, և, հենց առաջին հերթին անգլիացիները իրենց դանդաղ, անհաստատ ու անվճռական գործունեությամբ նպաստեցին քեմալական շարժման ուժեղացմանը և բոլշևիկների հետ դաշինքի հաստատմանը: Այդ մասին է փաստում նաև Ալ. Խատիսյանը. «Դաշնակիցները, գլխաւորապես անգլիացիները, իրենց ժամանման սկզբի շրջանին, միանգամայն անկեղծօրէն կը ցանկանային ամրացնել եւ հաստատել նորակազմ հանրապետութիւններու անկախութիւնը: Բայց անոնք չափազանց դանդաղ կը լուծէին հասունացող հարցերը: Անոնց տրուած էր շատ թէ քիչ նախաձեռնութիւն եւ իրաւունք՝ ծագող հարցերը տեղւոյն վրա վճռելու համար: Այստեղէն առաջ կու գար որոշ անվստահութիւն անոնց ընդունակութեան վրայ՝ կեանքը կանոնաւորելու համար: Միւս կողմէ, Փարիզի Վեհաժողովը չափա-

---

հենց իր իսկ վերջինիս աշխատանքում՝ **A. Rawlinson**, C. M.G.,C.B.E, D.S.O. Late Lt.-Col. R. G.A. Commander R. N. V. R. Introduction by Admiral Sir Rency Scott, Adventures in the near East, 1918-1922, New York, Dodd, Mead and Company, 1924:

[1] Տե՛ս **Махмурян Г. Г.**, Политика Великобритании в Армении и Закавказье в 1918-1920 гг., Бремя белого человека, Ер., изд-во “Лусакн”, 2002, с. 170, 210, տե՛ս նաև **Պետրոսյան Գ.,** Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920 թթ.), էջ 122-125:

զանց կուշացնէր Թուրքիոյ խնդիրներով զբաղուիլը եւ քեմալական-ներու ժամանակ տուաւ ուժեղանալու համար: Իսկ հետոյ, երբ Ռուսաստանը վերջացուց իր ներքին քաղաքացիական կռիւները, Դաշնակիցները վախցան բարդութիւններէն եւ հեռացան՝ բախտի բերմունքին ձգելով նորակազմ հանրապետութիւնները»[1]:

Իսկ այդ ընթացքում բոլշևիկյան-թուրքական մերձեցումը գնալով խորանում էր, հանգեցնելով 1920 թ. օգոստոսի 24-ի պայմանագրին: Միաժամանակ 1919 թ. օգոստոսից սկսած բրիտանական պետության քաղաքական կուրսը անընդհատ վերախմբագրման էր ենթարկվում: Բրիտանական դիվանագետները և ռազմաքաղաքական ու հետախուզական շրջանները հետևողականորեն Հայաստանի Հանրապետության ետ պահելով բոլշևիկների հետ մերձեցումից, փորձում էին քեմալականների հետ խորքային եզրեր գտնել, և իբր թե իրադրությունը Անդրկովկասում չշիկացնելու նպատակադրումից ելնելով, և իբր թե հարևանների նախանձը առաջ չբերելու համար չէին թույլատրում Երևանի տրամադրության տակ թողնել դուրս բերվող զենքի ու զինամթերքի որոշ անհրաժեշտ մասը, ինչի կարիքը խիստ զգացվում էր: Ավելին, այդ տարիներին Անդրկովկասում գտնվող անգլիական ռազմաքաղաքական ծառայությունների գործունեության մասին վկայող արխիվային փաստաթղթերը թեկուզև անուղղակիորեն վկայում են *(չենք կասկածում, որ ապագայում կհայտնաբերվեն այդ գործունեության մասին ուղղակիորեն վկայող անժխտելի արխիվային և այլ վավերագրեր, որոնք քաղաքական նկատառումներով այսօր հրապարակ չեն հանվում, թաքցնելով անգլիացիների և Անտանտի գծով հայ ժողովրդի մյուս «ընկերների» բազմապլան մեքենայությունները Անդրկովկասում և տարածաշրջանի սահմաններից դուրս - Վ. Վ.)*, որ ***անգլիացիները Կովկասում և Հայաստանում իրենց բավականին վստահ են զգացել, իրենց պահելով ինչպես հայրենի Մեծ Բրիտանիայում, աջ ու ձախ հրամաններ տալով և հաճախ մի անգլիացի սպայի կարծիքն ավելի մեծ կշիռ ու նշանակություն է ունեցել, քան նույնիսկ ՀՀ որևիցե նախարարի, գեներալի, կամ էլ նույնիսկ վարչապետի***:

[1] **Խատիսեան Ալ.**, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, էջ 193:

Այդ հանգամանքը հնարավոր չէր լրիվ քողածածկված վիճակում պահել, ինչ-որ բաներ միշտ էլ դուրս էին սպրդում գաղտնիության շղարշից, և ակնհայտ դառնում կուսակցական-քաղաքական և զինվորական շրջաններին: Սոցիալիստ-հեղափոխական խմբակցության ներկայացուցիչ՝ պատգամավոր Վ. Մինախորյանը, ելույթ ունենալով Հայաստանի խորհրդի 1919 թ. հունվարի 25-ի նիստում, ընդգծում է, որ «ոչ միայն հարևաններն են ուզում մեզ ոչնչացնել, այլև նույնն է անում Անգլիան: Կարելի է ասել, որ մեր դժբախտությունների 99 տոկոսի պատասխանատվությունը դաշնակիցների վրա է ընկնում: Այսօր միակ գործնական քայլը մեր պառլամենտի կողմից պիտի լինի այն, որ մենք ցույց տանք, թե դաշնակիցների այդ բոլոր խաբե[բայ]ությունները մենք զգում և հասկանում ենք»[1]: Այդպիսի մի շատ ուշագրավ վկայություն էլ մենք հանդիպում ենք Թիֆլիսի հայկական դիվանագիտական ներկայացուցչին 1919 թ. սեպտեմբերի 1-ին Հայաստանի պառլամենտի քարտուղար Հ. Տեր-Հակոբյանի կողմից ուղարկված հաղորդագրությունում, ուր ասվում էր հետևյալը. «Փարիզի մեր պատվիրակության գրություններից պարզվում է, որ անգլիացիք Կովկասում իրենց ներկայության ամբողջ ընթացքում եղել են ոչ անկեղծ դեպի մեզ ու վարել սիստեմատիկաբար մուսուլմանական քաղաքականություն: Անգլիան ամեն տեղ, ինչպես և Կովկասում, վարում է քօղարկված մուսուլմանական քաղաքականություն»[2]:

Իրականում շատ բան ավելի մռայլ էր, ինչի մասին մենք վերը որոշ մանրամասներ արդեն ներկայացրել ենք: 1919 թ. ՀՀ Արտաքին Գործերի նախարարի ապրիլի 24-ի հեռագրից՝ ուղղված Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին, ակնհայտ իրողություն է դառնում այն հանգամանքը, թե ինչ վարքագիծ ունեին անգլիացիները, ինչ շահեր և նպատակադրումներ ունեին տարածաշրջանում և մասնավորապես՝ Հայաստանում, որը փորձում էր որպես պետություն կայանալ՝ գերմարդկային ճիգեր գործադրելով դուրս գալ տնտեսա-քաղաքական մեկուսացումից և սովի ճիրաններից: Այսպես, վերոհիշյալ փաստաթղթում նշվում էր, որ անգլիացիները շարունակում են Կարսից

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 198, ց. 1, գ. 15, թ. 89:

[2] Նույն տեղում, ֆ. 275, ց. 5, գ. 97, թ. 126:

դուրս բերել հրանոթները, արկերը, եռագիծ փամփուշտները: Արտաքին Գործերի նախարարը նշված հեռագրում վճռականորեն միջնորդում էր Անդրկովկասում Անտանտի երկրների զինված ուժերի հրամանատար, բրիտանացի գեներալ Վ. Թոմսոնի առաջ՝ դադարեցնելու այդ ապրանքների դուրսբերումը՝ խիստ կարիքի պատճառով, և մասնավորապես՝ արկերի: Արտաքին Գործերի նախարարը Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական հավատարմատարից խնդրում էր եռանդուն միջոցներ ձեռնարկել հայաստանյան ունեցվածքի դուրսբերման դեմ, միաժամանակ փութացնելով բանակի կարիքների համար հագուստի պարագաների ստացման հարցը[1]: Ավելին, մի այլ փաստաթղթում ավելի ընդգծված է ասվում այդ մասին: Դեռ 1919 թ. ապրիլի 30-ին Հայաստանի կառավարության նախագահ Ալ. Խատիսյանը Արևելքում անգլիական գլխավոր հրամանատար Ջ. Ֆ. Միլնի հետ զրույցի ժամանակ բողոքում է անգլիացիների կողմից Կարսից ռազմական ունեցվածքի, զենքի, հագուստների և այլնի դուրսբերման դեմ՝ պահանջելով դադարեցնել այն: Դրան Ջ. Միլնը շատ բազմիմաստ պատասխանում է, որ նախ 1) իբր թե «պատերազմն ավարտվել է, կարիք չկա ուժեղացնելու բանակը, որ 4 տարի պատերազմել են ոչ թե նրա համար, որ ուժեղացնեն բանակը... բավական է ունենալ ոչ թե զորքեր, այլ լավ ժանդարմերիա. 2) որ Կարսում ամեն ինչից շատ կա, հատկապես հագուստ, որ ոչ բոլոր ֆորտերն են այնտեղ նայվել, և եթե անգլիացիները այնտեղից դուրս են բերել հրետանին և փամփուշտները, ապա այն ուղարկված է գեներալ Դենիկինի բանակը, քանզի Դենիկինը կռվում է ընդդեմ բոլշևիկների, իսկ բոլշևիկներին անգլիացիները համարում են լուրջ թշնամիներ նաև Հայաստանի համար, իսկ մնացած 2 միլիոն փամփուշտն իբր թե լիովին կբավարարի Հայաստանի կարիքները[2], ինչն այդպես չէր և անգլիացիների այդ հակահայ քայլերի դեմ վճռականորեն բողոքեց Ալ. Խատիսյանը, սակայն անարդյունք: Հարկ է ասել, որ անգլիական գեներալի տեսակետը չէր բխում իրական աշխարհաքաղաքական դրության իրատեսական, ոչ հաշվենկատ և բոլոր գործոնների համակողմանի ու անկաշառ հաշվառումից և սթափ գնա-

[1] Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 211, մաս I, թ. 92:

[2] Նույն տեղում, ֆ. 275, ց. 5, գ. 101, թ. 48, գ. 114, թ. 196:

հատականից, որում գտնվում էր Հայաստանը այդ ժամանակ՝ շրջապատված թշնամիներով: Նա հաշվի չէր առնում, որ Հայաստանին իր առջև կանգնած խնդիրները լուծելու համար ոչ թե միայն լավ ոստիկանություն էր անհրաժեշտ ներքին խնդիրների լուծման համար, այլև գլխավորապես լավ զինված և հանդերձավորված բանակ, որը կարողանար հայ ժողովրդին տալ անվտանգության իրական երաշխիքներ: Եվ վերջապես, այս ամենից ակնհայտ էր դառնում, որ ամեն ինչ հարմարեցվում էր Մեծ Բրիտանիայի նեղ վեհապետական շահերին, իսկ դա արդեն կործանարար էր Հայաստանի Հանրապետության ազգային-պետական անվտանգության ապահովման տեսանկյունից: Եվ ավելին, արխիվային փաստաթղթերի և զանազան այլ վավերագրերի ուսումնասիրությունը ակնհայտորեն վկայում է, որ այդ բնագավառում իրավիճակը շատ ավելի լուրջ էր և խճճված, քան կարելի էր պարզապես առաջին հայացքից պատկերացնել: Բրիտանական ռազմական ներկայացուցչությունը Հայաստանում գործում էր շատ հաշվենկատ գործելակերպով, քողածածկելով և գաղտնագրելով իր կողմից ձեռնարկված ռազմաքաղաքական բնույթի բոլոր գործողությունները: Այս հակահայկական քաղաքականությունն ավելի որոշակիորեն և ավելի բացահայտ արտահայտվեց հետագայում ևս, և մասնավորապես նրանում, որ անգլիացիները, չնայած հայկական կողմի բողոքարկմանը և գեներալ Թ. Նազարբեկյանի կտրուկ դիրքորոշմանը, 1919 թ. կեսերին դեռ շարունակում էին զբաղվել Կարսից հրանոթների (ավելի քան 60 հատ), մեծ քանակությամբ արկերի, փամփուշտների, ավտոմոբիլային սարքավորման, բամբակի և այլ գույքի դուրս բերմամբ, և այն մուսավաթական Բաքու տեղափոխելով՝ գեներալ Բիչերախովի բանակն ամրապնդելու համար[1]: Բրիտանական զինվորական իշխանությունների կողմից Կարսից 60-ից ավելի հրանոթների և մեծ քանակությամբ արկերի ու փամփուշտների, ավտոմոբիլային սարքավորման, բամբակի և այլ գույքի դուրսբերման փաստը թողնում էր վատ տպավորություն նաև այն առումով, որ այն բացի Դենիկինից, հասցեագրված էր նաև,

[1] Տե՛ս այդ մասին **Махмурян Г. Г.**. Политика Великобритании в Армении и Закавказье в 1918-1920 гг., с. 64-65, **Կարապետյան Մ.,** Հայաստանի Հանրապետության բանակը 1918 - 1920 թթ., էջ 92-93, **Հովհաննիսյան Ռ. Գ.,** Հայաստանի Հանրապետություն, Հատոր I, Առաջին Տարին, 1918-1919, էջ 243-245**: «Հայ զինվոր»,** 1994, հունիս, N 10,(24):

գուցե և միայն ադրբեջանցիներին: Այդ հարցին անդրադառնում է նաև կապիտան Ա. Պուադեբարը, նշելով անգլիական զորակայանի կողմից Կարսում ռուսների զինանոցից թուրքերի կողմից զենքի առգրավվման մասին, և ՀՀ կառավարությանը հանձնելու փոխարեն 65 հրանոթ, վեց վագոն արկ և մի քանի միլիոն փամփուշտ է ուղարկվել Թիֆլիս, ինչի հետևանքով հայերը զրկվել են վերաբնակվող գաղթականներին պաշտպանելու համար խիստ անհրաժեշտ զենք ու զինամթերքից: Միաժամանակ Պուադեբարը գտել էր, որ բրիտանական հրամանատարությունը պետք է անհրաժեշտաբար հաշվի առներ թուրքական բանակի հրամանատար գեներալ Շեվքի փաշայի կողմից Կարսում անմիջապես զինադադարից հետո ստեղծած հակահայկական մահմեդական կազմակերպության ուժը,...թուրք գործակալների քարոզչությունը[1]:

ՀՀ կառավարության հետագա բողոքները շարունակվում են. Երևանում Նորին գերազանցության բրիտանական զինվորական ներկայացուցիչ գնդապետ Շ. Բոլդուինին ուղղված 1919 թ. օգոստոսի 11-ի (N 3155) պաշտոնագրում ՀՀ վարչապետը, ԱԳ նախարարը տեղեկացնելով, որ գեներալ Բիրամովը և Կարսի կառավարիչը տեղեկացրել են, որ բրիտանական բանակի կապիտան Էվեչելը և Դենիկինի բանակի երկու սպա Կարս են եկել՝ այնտեղից թնդանոթներ և ռազմամթերք տանելու համար, և դա այն դեպքում, երբ հայաստնյան կառավարությունը ստիպված է իր բանակը կազմավորել և իր սահմանները պաշտպանի քուրդ և թուրք հրոսակախմբերի հարձակումներից այն պահին, երբ Հայաստանը ռազմամթերք է ստանում Բրիտանական հրամանատարությունից, և այդ դեպքում Հայաստանից ռազմամթերի դուրս տանելը մի հարված կլինի հայ ժողովրդի ապահովության գործին: Պաշտոնագրում բրիտանական զինվորական ղեկավարությունից խնդրվում էր միջամտել թույլ չտալու զենքի արտահանմանը, դժգոհելով, որ բրիտանական ներկայացուցիչները թույլ չեն տալիս, որ Կարսի զինվորական իշխանությունները անհրաժեշտ զինվորական միջոցներ ձեռք առնեն և Կարսի բերդը պաշտպանության ընդունակ դարձնեն, որ բրի-

[1] Տե՛ս **Տեր-Մինասյան Ա.,** Անտուան Պուադեբարը եւ Հայաստանը, «Բանբեր Հայաստանի Արխիվների», 2004 թ., N° 2, էջ 90:

տանական հրամանատարությունը չի ընդդիմանա այն միջոցների դեմ, ընդհակառակը, նա կգտնի անհրաժեշտ միջոցները[1]:

Դրան հավելենք նաև այն, որ անգլիացիները բացի հանրապետության զինանոցները դատարկելուց՝ Բաթումիում արգելափակեցին 2 աերոպլանների Հայաստան տեղափոխման գործը, որոնք գնվել էին ՀՀ ղեկավարության կողմից Փարիզում, կեղծ պատճառաբանություն բերելով այն մասին, թե անհրաժեշտ է պարզել այդ ինքնաթիռների «ծագումնաբանությունը»[2]: Պետք է նաև ավելացնել, որ գեներալ Նազարբեկյանը՝ բողոքարկելով այդ գործողությունների դեմ, գտնում էր, որ բրիգադային գեներալ Վ. Հ. Բիչի (ռազմական հետախուզության պետ) կողմից իրականացվող այդ քայլերը լիովին անհասկանալի են, գումարած դրան նաև այն հանգամանքը, որ առանձին անձանց կողմից անգլիական գնացքներով Կարսից դուրս բերվող ունեցվածքը, հատկապես երկաթուղային գույքը, ընկնում էր Վրաստան՝ վերավաճառքի նպատակով: Այս կապակցությամբ նաև հարց էր բարձրացվում մայոր Չարլզի միջոցով շտապ խնդրել գեներալ Վ. Թոմսոնից արգելելու վերը նշված ապրանքների ապօրինի դուրս բերումը[3]: Սակայն մեկ այլ վարկածի համաձայն, ինչպես այդ մասին պնդում է Ռ. Հովհաննիսյանը, Վ. Թոմսոնին հաջորդող գեներալ Ջ. Ն. Կորիի[4] կողմից վրացական կառավարությանը տված բացատրության համաձայն Կարսի զինամթերքը նախատեսված էր ոչ թե Կամավորական բանակի համար, այլ իբր բոլշևիկների դեմ կռվող թուրքմենական ուժերի համար[5]: Այդ մասին Մ. Սիլիկյանի զեկուցագրի հիման վրա Թ. Նազարբեկյանը և շտաբի պետ, գեներալ-մայոր Հ. Հախվերդյանը 1919 թ. մայիսի 2-ին հայտնում են Զինվորական նախարար Ք. Արարատյանին. «Այդ բոլորը զորքի և ժողովրդի վրա թողնում են ճնշող տպավորություն, առավել

---

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 200, ց. 1, գ. 92, թ. 357ա:

[2] Տե՛ս **Махмурян Г. Г.,** Политика Великобритании в Армении и Закавказье в 1918-1920 гг., с. 211.

[3] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 275, ց. 5, գ. 158, թ. 4, ֆ. 200, ց. 1, գ. 92, թ. 251, գ. 299, թ. 4, 7:

[4] **Կորի Ջորջ Նորթոն** (1874 -1968 թթ.) - գեներալ-մայոր, 1919 թ. մայիսի 10-ից մինչև 1919 թ. սեպտեմբերի 6-ը հանդիսացել է 27-րդ դիվիզիայի և առհասարակ ողջ բրիտանական զորքերի հրամանատարը Անդրկովկասում՝ ընդհուպ միչև դրանց հեռացումը անդրկովկասյան տարածաշրջանից:

[5] Տե՛ս **Հովհաննիսյան Ռ. Գ.,** Հայաստանի Հանրապետություն: Հատոր I, էջ 244:

ևս, որ այդ գույքը ուղարկվում է Բաքու, որը կարող է ընկնել Ադրբեջանի կառավարության ձեռքը»[1]:

Գործին միջամտում է նաև ՀՀ Արտաքին Գործերի նախարարը: ՀՀ Արտաքին Գործերի նախարարը 1919 թ. ապրիլի 24-ին հեռագրով (№ 1327) դիմելով Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական հավատարմատարին, շեշտում էր, որ անգլիացիները շարունակում են Կարսից դուրս բերել արկերը, եռագիծ փամփուշտները և այլն: Միաժամանակ, ՀՀ Արտաքին Գործերի նախարարը խնդրում էր միջնորդել գեներալ Թոմսոնի առաջ՝ դադարեցնելու վերը նշվածի արտահանումը, պատճառաբանելով դրանց մեծ կարիքը, և հատկապես արկերի ու փամփուշտների անհրաժեշտությունը[2]: Մի շարք փաստաթղթերից էլ պարզ է դառնում, որ անգլիացիների նույնիսկ շարքային սպայական կազմը ոչ շատ հարգալից, երբեմն էլ պարզապես ոչ կոռեկտ վերաբերմունք էր դրսևորում Հայկական բանակի գլխավոր սպայակազմի և հրամանատարության նկատմամբ: Անգլիացիները ոչ միայն Կարսից, այլև Սարիղամիշից ու Ալեքսանդրապոլից դուրս էին բերում վերը նշվածը, ինչպես նաև երկաթուղային ունեցվածքը, դինամոմեքենաները, շոգեքարշերը, վագոնները և այլն: Սակայն չբավարարվելով այդքանով, նրանք դուրս բերեցին նաև № 3 զրահագնացքը, որը կանգնած էր Կարսում, ինչի մասին հաղորդում է գեներալ-մայոր Սիլիկյանը ՀՀ զորքերի գլխավոր հրամանատար Նազարբեկյանին 1919 թ. մայիսի 4-ի զեկուցագրում[3]: Նշված զեկուցագրում գեներալ-մայոր Մ. Սիլիկյանը ջերմորեն և եռանդուն բողոքում էր անգլիական հրամանատարության կողմից դրսևորվող նմանատիպ անբարյացակամ գործողությունների դեմ և գլխավոր հրամանատարից պահանջում էր միջնորդություն հարուցել նրանց կողմից տարված ողջ ունեցվածքը ետ բերելու մասին[4]: Գեներալ Նազարբեկյանը ստանալով զորքերի Ալեքսանդրապոլյան խմբի պետ Մ. Սիլիկյանի վերը նշված զեկուցագիրը, 1919 թ. մայիսի 5-ին համապատասխան գրությամբ (№ 0060 / 0228) դիմում է Զինվորական նախարարին, որում թախանձագին խնդրում էր միջնորդել ետ վե-

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 275, ց. 5, գ. 158, թ. 4:

[2] Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 92, թ. 208-209:

[3] Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 67 (77), թ. 20:

[4] Նույն տեղում:

րադարձնելու տարված զենքն ու զինամթերքը, մնացած ունեցվածքը և դադարեցնել դրանց դուրս բերումը առանց Հայաստանի Հանրապետության կառավարության թույլտվության[1]: Ի վերջո, Զինվորական նախարարն էլ վերոհիշյալ գրությունը իր հերթին ներկայացնում է վարչապետին, ակնկալելով հարկ եղած կարգադրությունը այդ մասին: Փաստաթղթի տակ ստորագրել էին Զինվորական նախարար գեներալ-մայոր Արարատյանը և Գլխավոր շտաբի պետի պարտականությունները կատարող և Հայաստանում հետախուզական գործի գլխավոր կազմակերպիչներից մեկը՝ գնդապետ Զինկևիչը (№ 00921): Բացի այդ, համապատասխան կարգադրություն է արվում սույն փաստաթղթի պատճենները ուղարկել Հայաստանի Հանրապետության Փարիզի պատվիրակությանը (6 մայիսի, 1919 թ., № 1553) և Կոստանդնուպոլսի ՀՀ Դիվանագիտական ներկայացուցչին[2]:

Այս իրողության հաստատումն ակնհայտորեն ցայտուն է երևում Հայաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Խան-Թեքինսկու՝ 1919 թ. մայիսի 10-ին կառավարության նախագահ Ֆ. Խան-Խոյսկուն հղած հեռագրից. «Պատրվակով, թե բոլշևիկները սպառնում են Բաքվին, խնդրեք անգլիացիներին Կարսից տեղափոխել Բաքու»[3]: Եվ շատ հավանական է, որ 1920 թ. սեպտեմբերի 23-ին սկսված թուրք-հայկական պատերազմի ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության կրած ծանր և աղետալի հետևանքներ ունեցած պարտության, և, մասնավորապես, Կարսի հոկտեմբերի 30-ի անփառունակ անկման գլխավոր պատճառներից մեկը անգլիացիների հակահայկական քայլերն են: Անգլիական գեներալ Ջ. Կորիի հետ Հայկական կառավարության 1919 թ. հունիսի 7-ի տեսակցության ժամանակ Ալ. Խատիսյանը պահանջում է կարգադրություն անել՝ դադարեցնելու Կարսից զինվորական ունեցվածքի ապօրինի դուրսբերումը, քանի որ այն ՀՀ սեփականություն էր: Այդ պատճառով էլ գեներալ Սիլիկյանը կասեցրել էր անգլիացիների գնացքի երթևեկությունը, որը գեներալ Թոմսոնը օգտագործեց որպես պատրվակ՝ արդարացնելու համար

[1] Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 67 (77), թ. 20, ֆ. 200, ց. 1, գ. 92, թ. 251:

[2] Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 92, թ. 251- 252:

[3] Նույն տեղում, գ. 299, թ. 7:

ռազմական ունեցվածքի դուրս բերումը Կարսի բերդակառույցից[1]: Այդ հիմնախնդրի լուծումը Հայաստանի Հանրապետության պաշտպանունակության ամրապնդման և առհասարակ ռազմական շինարարության տեսանկյունից ուներ կարևոր նշանակություն, և հենց այդ հանգամանքը նկատի ունեին ՀՀ վարչապետը և Արտաքին Գործերի նախարարը բրիտանական ռազմական ներկայացուցչին ուղղված 1920 թ. օգոստոսի 11-ի (№ 3155) ճեպագրում. «Այն մոմենտում, երբ Հանրապետության կառավարությունը ստիպված է իր բանակը կազմավորել, որպեսզի ճնշի մի կողմից թաթարական ապստամբությունը և մյուս կողմից իր սահմանները պաշտպանի քուրդ և թուրք հրոսակախմբերի հարձակումներից, այն մոմենտում, երբ Հայաստանը ռազմամթերք է ստանում բրիտանական հրամանատարությունից, Հայաստանից ռազմամթերքը դուրս տանելը մի հարված կլիներ հայ ժողովրդի ապահովության գործին»: Դասալքության կանխմանն էր նպատակամղված ռազմական նախարարի 1919 թ. օգոստոսի 11-ի զեկույցը Նախարարների խորհրդի նիստում՝ թույլտվություն ստանալու ռազմական դատարանի միջոցով տեղերում զանգվածային դասալքության զորամասի լքման և փախուստի կանխման համար կայացնել մահապատիժներ: Այն հիմնավորվում էր նրանով, որ եթե կտրուկ քայլերի չդիմեն, ապա կմնան առանց զորքի[2]: Բրիտանական ներկայացուցիչները թույլ չեն տալիս, որ Ղարսի հայկական զինվորական իշխանություններն անհրաժեշտ զինվորական միջոցներ ու քայլեր ձեռք առնեն և Ղարսի բերդը պաշտպանության ընդունակ դարձնեն»[3]:

Նմանատիպ գործողությունների համանման բովանդակություն էր նկատվում մեկ այլ անգլոսաքսոնական պետության քաղաքականությունում Հայաստանի Հանրապետության նկատմամբ: Համանման քաղաքական վարքագծի հեղինակները Ամերիկայի Միացյալ Նահանգներն էին, որ այդ տարիներին ոչ միայն զուտ արտաքին-քաղաքական հետաքրքրություններ էր հետապնդում, այլև ուներ որոշակի տնտեսական նկատառումներ և շահեր, այդ թվում՝ Հայաստանում և առհասա-

[1] Նույն տեղում, ֆ. 275, ց. 5, գ. 114, թ. 196:

[2] Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 9, թ. 123-124: **«Բանբեր Հայաստանի Արխիվների»**, 1977, № 11, էջ 96:

[3] Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 92, թ. 357ա:

րակ՝ տարածաշրջանում, որոնք արտահայտվում էին իրական քաղաքական և տնտեսական գործողություններում: Այսպես, մինչ հիմնական թեմային անդրադառնալը, հարկ է նշել, որ երկար ժամանակ պատմագիտական գրականության մեջ մեծամասամբ իշխել է այն մտայնությունը, թե իբր ԱՄՆ-ի կողմից ցուցաբերվել է պարենային զգալի օգնություն՝ ներկայացնելով որպես Հայաստանի Հանրապետությանը ցուցաբերվող անհրաժեշտ և անշահախնդիր օգնություն, մասնավորապես նշելով, թե 1919 թ. երկրորդ կեսից հետո, կարճ ժամանակամիջոցում, ծովով Բաթումի և այնտեղից էլ երկաթուղով Հայաստան հասցվեց 1,3 մլն. փութ (569 վագոն) ալյուր և 257 հազ. փութ ցորեն[1]: Այնինչ փաստերը նաև ցույց են տալիս, որ դա այնքան էլ այդպես չէ, կա շատ ավելի մեծ ճշմարտություն, ավելի արժանահիշատակ պատմական փաստ: *Դատելով Ռ. Հովհաննիսյանի կողմից շրջանառության մեջ դրված փաստերից, ամերիկյան ալյուրի դիմաց հայկական կողմը պարտավոր էր պարզապես ներկայացնել գանձապետական պարտամուրհակներ*[2]: ԱՄՆ-ը, ինչպես և ցանկացած իր իրական շահերն հարգող պետություն, հետամտում էր իր հետաքրքրությունները Անդրկովկասյան տարածաշրջանում և Հայաստանում, և դա էր միակ իրողությունը, ինչն ապացուցելու համար ստորև կբերվեն այլ փաստեր ևս:

Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական հավատարմատար Լ. Եվանգուլյանի՝ Հայաստանի Հանրապետության պարենավորման նախարարին[3]: 1919 թ. նոյեմբերի 11-ի հեռագրում (№ 3422) պարզորոշվում են որոշ կարևոր մանրամասներ, որոնք լույս են սփռում ԱՄՆ-ի հետամտած քաղաքականության վրա Հայաստանի Հանրապետության նկատմամբ: Այդ հեռագրում Լ. Եվանգուլյանը հայտնում էր, որ ամերիկյան հյուպատոսը խնդրում է թույլատրել դուրս բերել Երևանից 10

---

[1] Տե՛ս **Վրացյան Ս.,** Հայաստանի Հանրապետություն, էջ 255-256:

[2] Տե՛ս **Ованнисян Р.,** Международные отношения Республики Армения 1918-1920 гг., с. 551.

[3] 1918 թ. նոյեմբերի 4-ից մինչև 1919 թ. հուլիսը պարենավորման նախարարությունը կար և գործում էր որպես համակարգ, իսկ այնուհետև այն միացվեց հանրային խնամատարության նարարարությանը, որի նախարարը 1919 թ. հոկտեմբերի 31-ից մինչև 1920 թ. մայիսի 5-ը՝ Արտաշես Բաբալյանն էր, իսկ դրանից հետո ընկած ժամանակահատվածում՝ ընդհուպ մինչև 1920 թ. դեկտեմբերի 2-ը՝ Սարգիս Արարատյանը. -**«Ուրբաթ»** (Երևան), 25 մայիսի, 1990 թ.:

հազար և Ալեքսանդրապոլից՝ 30 հազար կաշվե մորթակտորներ՝ դրանք Ամերիկա ուղարկելու համար՝ պետական հաշվին «Ստուկեն» առևտրական գրասենյակի միջոցով: Գրության մեջ խնդրվում էր շտապ հայտնել արտահանության պայմանների մասին[1]: 1919 թ. նոյեմբերի 16-ի մի այլ գրությունից, որի հեղինակը ԱՄՆ-ի փոխհյուպատոսն էր Անդրկովկասում, ակնհայտ է դառնում, որ ոմն Նիկոլայ Սերգեևիչ Լավրով ամերիկյան հյուպատոսարանի կողմից գործուղվում է Ալեքսանդրապոլ՝ բռնագրավելու և ձերբազատումից ազատելու 36 հազար ոչխարի մորթակտոր, որոնք գտնվում էին ռուսական Տրանսպորտային ապահովագրական ընկերության ներկայացուցիչ Բոգդան Լազարի Հարությունյանի տրամադրության տակ, նրա կողմից դասդասված վիճակում: Այնուհետև տեղեկացվում էր, որ այդ մասին ամերիկյան հյուպատոսի կողմից Վրաստանում ՀՀ ներկայացուցիչ Մ. Թումանովին (իշխան Միքայել Թումանյան, որը նախորդեց Լ. Եվանգուլյանին դիվանագիտական հավատարմատարի պաշտոնում) դեռ նոյեմբերի 11-ին տեղեկացվել է, որ այդ ապրանքները գնվել են «Ստուկեն և ընկերություն» առևտրի տան կողմից՝ Ամերիկյան հյուպատոսարանի համար, և այդ ապրանքները պետք է ուղարկվեին Ամերիկա: Գրության վերջնամասում ամերիկյան հյուպատոսը ընդգծված պնդում էր, որ ինքը պաշտոնապես դեմ է ամեն տեսակի բռնագրավումներին, և խնդրում էր ձեռնարկել միջոցներ ամերիկյան հյուպատոսարանին պատկանող ապրանքների պահպանության համար[2]: Քաշքշուկները այսքանով չեն ավարտվում, և ԱՄՆ-ի հյուպատոսարանը շարունակում է պնդել Հայաստանի Հանրապետության բանակի համար շատ կարևոր նշանակություն ունեցող հումքի՝ ԱՄՆ արտահանելու անհրաժեշտության մասին, ինչի մասին մենք տեղեկանում ենք ՀՀ պարենավորման նախարարի մի գրությունից: Այսպես, 1919 թ. նոյեմբերի 26-ի հեռագրում (№ 7186)՝ ուղղված Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին, պարենավորման նախարարը տեղեկացնում էր, որ ինքը ուղարկում է Երևանում ամերիկյան ներկայացուցչին հասցեագրված իր նամակների պատճենները, միաժամանակ հաղորդում, որ

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 275, ց. 5, գ. 106, թ. 4:

[2] Նույն տեղում, թ. 19 -20:

մինչև «Ստուկեն և ընկերություն» առևտրի տան կողմից այդ 36 հազար ոչխարի մորթակտորների գնելը, դրանք վաճառված են եղել այլ անձի, ինչն ակնհայտ երևում է կցված փաստաթղթերից: Այնուհանդերձ, պարենավորման նախարարը իր այս հեռագրում, նշում էր, որ չնայած այդ հանգամանքներին, «Ստուկեն և ընկերություն» Առևտրական տունը աջակցության խնդրանքով դիմել են Թիֆլիսում ամերիկյան հյուպատոսարանին և նրանից ձեռք բերել վկայագիր այն մասին, որ այդ ապրանքները ձեռք են բերվել ամերիկյան հյուպատոսարանի կողմից, վերջինիս համար և հետևաբար, դրանք ենթակա են Ամերիկա արտահանման: Պարենավորման նախարարը վկայակոչելով առկա փաստաթղթաշարքը և հենվելով ՀՀ Նախարարների խորհրդի նոյեմբերի 7-ի որոշման վրա, համաձայն որի առկա ողջ կաշին, մորթիները և բուրդը բռնագրավվում են ՀՀ պարենավորման նախարարության կողմից՝ Հայկական բանակի կարիքների համար, տեղեկացնում էր Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին, որ պարենավորման նախարարությունը հնարավոր չի գտնում թույլատրել այդ 36 հազար կտոր ոչխարի մորթեղենի արտահանությունը Ամերիկա[1]: Ակնհայտ է, որ ռազմավարական արժեք ներկայացնող այս հումքի նկատմամբ հետաքրքրությունը չի մարում, ԱՄՆ-ի հյուպատոսարանը շարունակում է պնդել իր տեսակետի վրա, և դա այն դեպքում, երբ այդ կաշին ուներ լուրջ արժեք նաև Հայաստանի Հանրապետության Զինվորական նախարարության տարաբնույթ կարիքների համար, և կարող էր ծառայել վերջինիս պահանջների բավարարմանը, մասնավորապես օդագնացության և ավտոմոբիլային ոլորտներում՝ երեսապատման և այլ աշխատանքների համար: 1919 թ. նոյեմբերի 26-ի գրությունում (№ 7187)՝ ուղղված ՀՀ կառավարությանը կից ամերիկյան ներկայացուցչին, պարենավորման նախարարը անդրադառնում էր այդ չարաբաստիկ հարցին, և նշում, որ ամերիկյան հյուպատոսի կողմից իրեն ուղղված գրություններից եզրակացություն է արվել, որ վիճարկվող և «Ստուկեն և ընկերություն» առևտրական տանը պատկանող և ԱՄՆ արտահանության ենթակա 36 հազար կտոր ոչխարի մորթեղենը իրենց կողմից գնվել է առևտրական Միրզոյանից, որ այդ ապրանքը դեռ նոյեմբերի 4-

[1] Նույն տեղում, թ. 10-11:

ին է ձեռք բերել: Պարենավորման նախարարը, ի գիտություն ընդունելով վերոհիշյալը, տեղյակ էր պահում ամերիկյան հյուպատոսին, որ ՀՀ Նախարարների խորհրդի նոյեմբերի 7-ի որոշման հիման վրա հանրապետության տարածքում առկա ողջ այծի մորթին և ոչխարի մորթեղենը բռնագրավման միջոցով անցնում է հանրապետության ենթակայության տակ որպես նրա սեփականություն՝ նշված հումքի տերերի հետ ձեռքբերված համաձայնության հիման վրա հաստատագրված գներով: Գրության մեջ նաև նշվում էր, որ ապրանքները նախատեսված են բացառապես Հայաստանի Հանրապետության բանակի կարիքների համար: Գրության վերջնամասում պարենավորման նախարարը խնդրում էր այդ մասին տեղյակ պահել Թիֆլիսում գտնվող ամերիկյան հյուպատոսին[1]: Իսկ 1919 թ. դեկտեմբերի 6-ի գրությունում (№ 4076)՝ հասցեագրված ամերիկյան հյուպատոսին (Թիֆլիս), ՀՀ դիվանագիտական հավատարմատարը տեղեկացնում էր, որ որպես բանավոր հարցապնդման հետևանք ինքը ուղարկում է ի գիտություն մորթեղենի բռնագրավվման վերաբերյալ ողջ գրագրությունը[2]: Ամփոփելով, կարելի է գալ եզրահանգման, որ ոչ միայն անգլիացիները, այլև նրանց անգլոսաքսոնական մյուս եղբայրակիցները աշխատում էին նրանցից ետ չմնալ և ամենևին էլ Անդրկովկաս և Հայաստան չէին եկել Անտանտի գծով իրենց կրտսեր եղբայրակցին փրկելու, այլ կոնկրետ քաղաքական-տնտեսական շահերի իրականացման համար, ինչը չափազանց դիպուկ է նկատել Ալ. Խատիսյանը. ***«Հաշիւը բերաւ զանոնք մեզ մօտ..., որ Դաշնակիցները եկան Կովկաս ոչ թէ կովկասեան ժողովուրդներու սիրոյն համար»***[3], ոչ թե Հայաստանի Հանրապետության անվտանգության համակարգը ձևավորելու և այն իմաստավորող կառույցները ուժեղացնելու նպատակադրումով, ինչի ցայտուն արտահայտությունն են հանդիսանում վերը բերված փաստաթղթերը: Այս և այլ կարգի հակահայկական գործողությունների դեմ Հայաստանի խորհուրդը և նրա կուսակցական խմբավորումները բողոքեցին կառավարությանը, սակայն, էական արդյունքներ ձեռք բերել չհաջողվեց: Բնա-

[1] Նույն տեղում, թ. 12-13:

[2] Նույն տեղում, գ. 106, թ. 4:

[3] **Խատիսեան Ալ.,** նշվ. աշխ., էջ 193:

կանաբար, որոշ փաստաթղթերի մանրազնին ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ ստեղծված իրավիճակում Հայկական բանակի և ռազմական շինարարության հարցերը այս կամ այն առումով չէին կարող չհետաքրքրել Հայաստանի խորհրդի ընդդիմությանը: Հարկ է ընդգծել, որ նրանց արտահայտած մտքերը և տեսակետները բանակի, նրա գործունեության կազմակերպման ու ղեկավարման, պաշտպանական հիմնախնդիրների վերաբերյալ արժանի են ուշադրության:

Դեռ հայկական պետության կազմակերպման արշալույսին, երբ կենսական նշանակություն ունեին ազգային բանակի կազմակերպման հիմնախնդիրները, Հայաստանի խորհրդի 1918 թ. օգոստոսի 5-ի նիստում իրարամերժ տեսակետներ են հնչում բանակի կազմակերպման վերաբերյալ, որոնց սկզբունքային լուծումից էր էապես կախված երկրի ապագան: Ծավալված բանավեճի ընթացքում սոցիալ-դեմոկրատ պատգամավոր Հ. Ազատյանը առաջարկում էր հայկական զորքի կազմակերպման հիմքից վերացնել միլիցիայի փթած սկզբունքը: Անկուսակցական Ստ. Մամիկոնյանը պահանջում է ավելացնել մշտական զորքի թիվը[1]: Կառավարությունը, սակայն, չի համաձայնվում այդ երկու իրարամերժ տեսակետների հետ էլ, այլ ելնելով երկրի համար ստեղծված իրավիճակից, նպատակահարմար է գտնում ընդամենը գնալ ժամանակավոր կրճատումների, միաժամանակ պահպանելով մշտական զորքի հիմնական կորիզը: Այդուհանդերձ, քննարկումները հետագայում շարունակվում են՝ տեղիք տալով նոր տարակարծությունների: Այսպես, բանավիճելով Զինվորական նախարարության կողմից ներկայացված մասնակի զորացրման նախագծի շուրջ՝ կապված վրաց-հայկական պատերազմի ավարտի, երկրի վիճակի որոշակի կայունացման հետ, սոցիալ-դեմոկրատական խմբակցությունը 1919 թ. հունվարի 7-ի Հայաստանի խորհրդի նիստում «ուշագրավ տեսակետ» է *(որն անշուշտ, ամենևին էլ զերծ չէ միակողմանիությունից)* արտահայտում, որի համաձայն «շատ ավելի լավ է ունենալ 5-6 հազարանոց լավ հագնված ու լավ սնված զորք, քան 16 հազար քաղցած ու տկլոր խուժան»[2]: Սա, իհարկե, սոցիալ-դեմոկրատների կողմից ոչ լիովին հաշվարկված, ոչ ի-

[1] Տե՛ս «**ՎԷՄ» (**Փարիզ), Բ. տարի, 1934, թիւ 6, էջ 101-102:

[2] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 275, ց. 5, գ. 114, թ. 4, **«Կայծ»** (Երևան), թիվ 24, 30 հունվարի, 1919:

մաստուն մոտեցում էր հարցին, չնայած իր որոշ ռացիոնալ հատիկներին: Խորհրդում սոցիալ-դեմոկրատական տեսակետ ներկայացնողը ոչ անհայտ Հ. Ազատյանն էր: Նրանք ռազմական քաղաքականության վերը նշված հարցերի մասին դատում էին՝ անջրպետվելով այն ռեալ իրականությունից, որը գոյություն ուներ Հայաստանի Հանրապետության շուրջ: Միաժամանակ, նրանք անտեսում էին այն աշխարհաքաղաքական ռեալությունը և ռազմավարական հնարավորությունները, որոնցում գտնվում էր Հայաստանը այդ ժամանակ: Ավելին, նրանք, հիմք ընդունելով այն կեղծ ու փարիսեցիական պատճառաբանությունը, որ հայերը փոքր ու աղքատ ժողովուրդ են, և արտաքին զորեղ թշնամու հանգամանքը, պնդում էին, թե իբր իրենք չեն կարող 40-50 հազարանոց բանակ ունենալ՝ երկրի պաշտպանունակության, ազգային անվտանգության և ռազմական շինարարության դժվարին և բազմապլան խնդիրները լուծելու համար[1]: Հ. Ազատյանը գրում է. «Ժողովուրդը քաղցած է, զուրկ աշխատավոր ձեռքերից, իսկ նրա պառլամենտը հնարավոր է համարում ինչ-ինչ նպատակների համար 16 հազար մարդուց բաղկացած զորք պահել, ամսական նրա վրա մոտ յոթ միլիոն ռուբլի ծախսելով: Մեր զորքի քանակն ու նրա վրա արված ծախսերը Հայաստանի համար ոչ թե շռայլություն պետք է համարել, այլ ժողովրդի շահերի դեմ ուղղված մի անորակելի հանցանք»[2], ավելացնելով, որ միջոցները պետք է ծախսել պարենավորման վրա, այլ ոչ թե զորքի:

Սոցիալ-դեմոկրատները տվյալ դեպքում փոխարեն գործ անելու, ավելի շատ զբաղված էին պարզապես քննադատամոլությամբ կառավարող կուսակցության՝ ՀՀ Դաշնակցության հասցեին, որոնց իհարկե, կարելի էր խստորեն քննադատել, բայց ոչ մերկապարանոց քննադատությամբ զբաղվել, դրա փոխարեն լրջորեն և խորությամբ վեր հանել բոլոր ամոթալի երևույթները ռազմաքաղաքական շինարարության բնագավառում՝ զեղծարարության և կաշառակերության, զանգվածային դասալքության փաստերը Հայկական բանակում և այլն, ինչն, անշուշտ, որոշակի իմաստ ուներ: Եվ որպես արդյունք, սոցիալ-դեմոկ-

[1] Նույն տեղում:

[2] Տե՛ս **«Կայծ»,** Երևան, 22 հունիսի, 1919:

րատներն առաջարկում էին այս խնդրում շատ ավելի մի վատ բան, քան անում էր Դաշնակցական կուսակցությունը: ***Այսպես, նրանք գտնում էին, որ այժմ ևեթ հարկավոր է Հայաստանում մտցնել ժողովրդական միլիցիայի համակարգը, որն ի դեպ, վերցված էր դրսից և սկզբունքային առումով միանգամայն հիմնազուրկ գաղափար էր:*** Ավելին, սոցիալ-դեմոկրատական խմբակցության ներկայացուցիչները առանց լուրջ հիմնավորման և խորքային բնույթի հաշվարկներ կատարելու պնդում էին, որ զորքը պետք է լինի ժողովրդական միլիցիայի տեսքով, որ մոտ ապագայում իրենց որևիցե թշնամի չի սպառնում, ինչը ևս խիստ մոլորություն էր, իսկ առհասարակ պետական քաղաքականության տեսանկյունից՝ վնասակար և անհեռատես դիրքորոշում էր ռազմաքաղաքական շինարարության հարցերի և, մասնավորապես բանակաստեղծ և պետական անվտանգության համակարգի ձևավորման հարցերի համար անցանկալի հետևանքներով հղի[1]: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ ինչքան էլ ոչ օբյեկտիվ լինեին Հայաստանի Առաջին Հանրապետության ընդդիմության ներկայացուցիչները բանակի ու երկրի ինքնապաշտպանության կազմակերպական հարցերում, այնուամենայնիվ, պետք է որոշակի արդարացիության երանգներ տեսնել նրանց քննադատությունում: Սակայն ամեն ինչի մասին կարելի է դատել չափի զգացումով՝ տեսնելով իրականությունը: Առհասարակ կուսակցությունների վերաբերմունքը (թե՛ դրական և թե՛ բացասական առումներով) պատերազմի, ռազմական ծախսերի և այլնի նկատմամբ արժանի է ուշադրության: Այդ առումով հետաքրքրական է նաև Հայաստանի խորհրդի 1919 թ. հունվարի 10-ի նիստում կազմակերպված քննարկումը՝ կապված Զինվորական նախարարության նախահաշվի՝ 29 մլն. ռ. գումարի համար: Այս կապակցությամբ իր ելույթում սոցիալ-դեմոկրատ Հ. Ազատյանը պնդում է, որ նախարարությունը վարել է անպատասխանատու խմբակցությունների քաղաքականություն՝ բերելով փաստական տվյալներ այդ գումարի անպատակ և ոչ նպատակահարմար օգտագործման մասին: Այնուհետև պնդում է, որ կան բազմաթիվ բողոքներ զինվորներից, որոնք ամիս-

[1] Տե՛ս **«Կայծ»,** թիվ 24, 30 հունվարի, 1919:

ներով ոռճիկ չեն ստանում, վատ են կերակրվում և այլն[1]: Սակայն սոցիալ-դեմոկրատների և սոցիալիստ-հեղափոխականների խմբակցությունների առաջարկը չի անցնում, ձայների մեծամասնությամբ անցնում է Հայ Հեղափոխական Դաշնակցության բանաձևը:

Կուսակցությունները հայ ժողովրդի համար ճակատագրական պահերին զորավիգ են եղել հայրենիքին, պետությանը: 1920 թ. աշնանը թուրք-հայկական ճակատագրական պատերազմի ժամանակ Հայաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունը և մյուս կուսակցությունները միասին հանդես եկան հայրենիքի պաշտպանության և ոսոխին արժանի հակահարված տալու վճռականությամբ: Նրանք պատրաստակամություն հայտնեցին՝ աջակցելու կառավարությանը և ըստ կարելվույն օգնելու ռազմաճակատում կռվող մեր զորամասերին: ՀՍԴԲԿ ԿԿ-ն հրապարակեց առանձին կոչ՝ ուղղված հայ ժողովրդին՝ անարգ թշնամուն հակահարված տալու և հայրենիքը պաշտպանելու վերաբերյալ[2]: Հոկտեմբերի 26-ին Երևանում կայացած միջկուսակցական միտինգում կրակոտ ճառով հանդես եկավ Բ. Իշխանյանը՝ ընդգծելով երկրին սպառնացող վտանգն ու հայրենիքը պաշտպանելու անհրաժեշտությունը[3]: Հայրենիքի համար ծանր պահին բոլոր խմբակցությունները հայտարարեցին, որ տաճկական վտանգը իրենց էլ է նեղացնում: Ընդունվում է համակրանքի բանաձև կառավարության հասցեին, որը լիազորվում է իրականացնելու լիարժեք զորակոչ: Քաղաքական կուսակցություններին ընդհանուր առմամբ մտահոգել են ռազմական քաղաքականության, կանոնավոր բանակի կազմակերպման և ազգային-պետական անվտանգության ցավոտ հարցերը, որոնց նրանք երբեմն էլ վճռականությամբ պաշտպան են կանգնել՝ սատարելով ՀՀ կառավարությանը, չնայած դա դրությունը չփրկեց և այդ կապակցությամբ որպես հետգրություն նշենք ևս մի քանի հանգամանքի մասին. ՀՀ թվով երրորդ Զինվորական նախարարը՝ ***Ռ. Տեր-Մինասյանը, Հայկական բանակի թուլության գլխավոր պատճառներից մեկը համարում էր Հայկական բանակում իրար կողքի երկու***

[1] Նույն տեղում, թիվ 13, 18 դեկտեմբերի, 1918, թիվ 25, 1 փետրվարի, 1919:
[2] Տե՛ս **«Ցառաջ»,** Երևան, 3 հոկտեմբերի, 1920:
[3] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 198, ց. 1, գ. 74, թ. 2:

զինվորական համակարգերի՝ կանոնավոր բանակի կազմակերպման հին ռուսական և խմբապետական-ֆիդայական, կիսաժողովրդական-կիսազինվորական ձևի, անկանոն զորամասերի կազմակերպական համակարգերի առկայությունը, դրանց հակադրվածության հանգամանքը, բոլշևիկյան-մոսկովյան գործոնը և այլն[1]:

Հայ ռազմաքաղաքական միտքն էլ անընդունակ գտնվեց դարամակարդակի պահանջների իրականացման համար, որ ռուսական բանակում ծառայած և կրթված զինվորականության մի մասի ձգտումը՝ ռազմական գործը զինվորական գիտության հիման վրա կազմակերպել, իրականություն չդարձավ: ***Բանակում տեղ գտած բացասական երևույթների ընդերքային լուրջ պատճառների շարքում պետք է տեսնել նաև կանոնավոր բանակի և ոչ կանոնավոր ուժերի, կամավորական ու մասնագիտական խմբերի միջև հակադրվածության, և հրամանատարության անկարողության մեջ հաղթահարելու պետության մեջ պետություն դառնալու ձգտում ունեցող այդ ուժերի տրամադրվածությունները: Կանոնավոր բանակի և խմբապետական-հայդուկային համակարգերի անհամատեղելիությունը ևս կարևոր ազդակ հանդիսացավ դասալքության և բանակը քայքայող նմանակարգ բացասական երևույթների արմատավորման համար, ինչը հեշտ չէր արմատախիլ անել:*** Կապված 1920 թ. թուրք-հայկական պատերազմում հայկական զորքի կրած անփառունակ պարտության հետ, հայկական բանակի հիմնախնդիրներին բավականին հետաքրքիր է մոտենում սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության օրգան «Երիտասրդ Հայաստան»-ը Ս. Սնարյանի եզրակացությամբ. «***Հայ հանրապետության հաստատման առաջին իսկ տարուց, մեր զինվորը բարձր հրամանատարության և խմբապետների միջև մշտապես եղած են անհամաձայնություններ և աններդաշնակություն: Նորագույն ռազմագիտության պահանջները շարունակ հակասության մեջ են եղել մեր երկրում ֆեդայական կռվի սկզբունքների հետ: Անդրանիկի խնդիրը մի խոշոր մասով այդ հակասության արդյունքն է: Մեր խմբապետներից շատերը լինելով նախկին ֆե-***

[1] Տե՛ս **Ռուբէն**, Հայ Յեղափոխականի մը յիշատակները, հ. 7 (Է), Գ. հրատ., Թեհրան, 1982, էջ 326, 329-338:

տայիններ, հաճախ իրենց առջև դրված խնդիրներին նայել են ֆետայական, պարտիզանական կռվի ակնոցներով, մինչդեռ դրանք եղած են լայն հիմքի վրա կազմակերպված և նախապատրաստված պատերազմի խնդիրները: Ֆետայական մեթոդները, դրանք հեղափոխական նախկին ժամանակներում սքանչելի հետևանքներ են տվել, պիտի վրիպեին իրենց նպատակներից՝ նոր պայմանների տակ: Հեղափոխական ավանդությունների զորավոր ազդեցությունների ենթարկվելով, ֆետայական մեթոդները իրենց ուժգին արտահայտությունները պիտի ունենային նաև հայ-թուրքական պատերազմի ընթացքում... որ հրամանատարության և խմբապետների միջև եղած աններդաշնակությունները մեծապես ազդել են մեր զորքերի բարոյալքման և պարտության վրա»[1]:

Զինվորական գործի կազմակերպման առումով իրար կողքի երկու հակադիր համակարգերի գործունեության պայմաններում զանազան խմբերը, գործելով ՀՀ բանակին կից, չկարողացան և անգամ կամեցողություն չդրսևորեցին տարալուծվել բանակային կառույցների մեջ՝ կուլ գնալով ինքնագլուխ գործելու անկազմակերպ բնազդներին: Այդ հանգամանքը լավ է նկատել դաշնակցական ***«Ձանգը» 1918 թ. «խմբապետական սիստեմը, որ խոշոր ծավալ ստացավ մեզանում համաշխարհային պատերազմի հենց առաջին օրից, չնայած իր համեմատաբար լավ կազմակերպման, այնուամենայնիվ չտվեց բավարար հետևանք»***[2]: **Ռազմաքաղաքական հայտնի իրավիճակում հայդուկային ու խմբապետական համակարգը ռազմավարական հեռանկարների տեսանկյունից անօգտակար դարձավ, ինչպես դա պատահեց 1988 թ. իրադարձություններից հետո, երբ ոչ կանոնավոր, երկրապահ ռազմական կազմավորումները, որոնք, անկասկած հիշեցնում էին 1918 թ. անկանոն զորախմբերին, միայն որոշակի անհրաժեշտ բռնության կիրառման պայմաններում տարալուծվեցին վերստեղծվող Հայկական բանակի կանոնավոր զորամասերում:** Խմբապետականությունը 1918 թ. իրականության պայմաններում հա-

[1] Տե՛ս **«Երիտասրդ Հայաստան»** (Ս-ի հնչական կուսակցության կիսաշաբաթաթերթ), 27 մայիսի, 1921, N 12:

[2] Տե՛ս **«Ձանգ»** (Երևան), Հ. Յ. Դաշնակցութիւն. Հասարակական, քաղաքական և գրական թերթ, 31 հոկտեմբերի, 1918, N 66 (82):

կադրվածություն դրսևորեց հայկական զորքի կազմակերպման առողջ դարակազմիկ և դարամակարդակ բնազդներին: ***Ավելին, չնայած հայ կամավորներին հատուկ հայդուկային խիզախականությանը, անգամ նրանց լավագույն ներկայացուցիչները փաստորեն ընդդիմացան ու խոչընդոտեցին կանոնավոր բանակի կազմակերպման առկա գործընթացներին, և իրենց անսանձ ու կարգապահության չենթարկվելու անկազմակերպ բնազդի դրսևորումներով դարձան հայկական զորքերի ընդհանուր տկարացման, դասալքման պատճառ, որն էլ բնականաբար անընդունակ դարձավ ճակատելու թշնամու դեմ հատկապես Առաջին Հանրապետության մայրամուտին: Այդ և այլ պատճառներով, ռազմական ռեֆորմներն այդ բնագավառում կիսատ մնացին, և ըստ էության չլուծվեցին հիրավի արդիական և իրապես կանոնավոր բանակ ունենալու հիմնախնդիրները, կուլ գնալով որոշ փարիսեցիական ու անլուրջ պատկերացումների, և թե հայ ռազմաքաղաքական միտքն ու կարող ռազմաքաղաքական ուժերը պատրաստ չեղան պետական անվտանգության ապահովմանը նպատակուղղված այդ խնդրի լուծմանը, ոչ հիմնավոր պատճառաբանություններ բերելով, որ դրա համար անհրաժեշտ են երկար ու ձիգ տարիներ:***

Ցավոք սրտի, այդ և այլ մտայնությունները իշխող էին նաև հայկական զորահրամանատարության մի զգալի մասի մեջ և քաղաքական-կուսակցական որոշակի շրջանակներում, ինչն էլ էապես նպաստեց հայկական բանակի ոչ լիարժեք կայացմանը ու դարձավ նրա գլխավոր թուլություններից, ինչը նաև նշանակում էր չըմբռնել հայ ժողովրդի ռազմավարական նպատակադրումների էությունը: Ավելացնենք, որ հայկական բանակի տկարացմանը նպաստող կարևորագույն պատճառներից պետք է համարել Հայոց զորքի և ժողովրդի շարքերում կռվելու կորովի, ոգու, անհրաժեշտ կամքի և վճռականության պակասը, հոգեբանական պարտվողական ընդհանուր տրամադրվածությունը և այլն: Ի հավելումն վերոհիշյալին, կարելի է ավելացնել, որ Հայկական բանակի հիմնախնդիրների լուծման տեսանկյունից հայ ռազմաքաղաքական շրջաններին պակասում էր նաև կանխատեսելու և ծրագրելու ընդունակությունը, սկսած գործը մինչև վերջ հասցնելու նպատակասլացությունը և տրամաբանականությունը, և առաջադրված

խնդիրներին նորովի մոտենալու կարողականության բացակայությունը, որի հետևանքով էլ 1918-1920 թթ. իրականության պայմաններում կառչում էին զորքի կազմակերպման իր դարն ապրած խմբապետական-հայդուկային-ֆիդայական եղանակաոճից, ինչպես դա տեղի ունեցավ 1980-ական թթ. վերջերին - 1990-ական թթ. սկզբներին Արցախյան հերոսամարտի օրերին. դա որոշակի իմաստով հիշեցնում է նաև բոլշևիկյան այն իրականությունը, երբ Կարմիր բանակի որոշ բարձրաստիճան զինվորականներ, իրապես կանոնավոր բանակի հիմնախնդիրներով զբաղվելու փոխարեն, նենգափոխում էին ժամանակակից զորքի կազմակերպման սկզբունքները և սխալ ենթադրության եկան հեծելազորի կիրառման մասին ապագա պատերազմում, դառնալով Կարմիր Բանակի ողբերգություններից շատերի պատճառահիմքը:

Ընդհանուր առմամբ ակնհայտ է, որ որոշ հաջողված պահերի հետ, 1918-1920 թթ. հանրապետությունում եղան նաև ձախողումներ և ոչ հաշվարկված մոտեցումներ, որոնց խնդրում ոչ հաշվենկատ և ոչ հեռանկարային եղան նաև կուսակցական-քաղաքական ուժերը, որոնց հետևանքվ բանակաշինությունը ոչ միայն չշահեց, այլև էապես տուժեց: Ակնհայտ էր նաև, որ կուսակցական-քաղաքական ուժերի ռազմավարությունը բանակաշինության հիմնախնդիրներում հեռու մնաց դարամակարդակ մոտեցումներից, ուներ կաղապարացված բնույթ: Այս հարցում կարևոր դեր խաղաց նաև կառավարող ՀՅԴ կուսակցության եսակենտրոն քաղաքականությունը, որում մնացած քաղաքական ուժերն առանձնապես տեղ չունեին, ինչպես նաև ոչ բավարար վճռականությունը բանակը քայքայող երևույթների դեմ, չնայած կային նաև ՀՀ կառավարության գործառույթներից անկախ գործոններ՝ սովը, սովալլուկ գաղթականությունը, որոնք գրեթե մշտական շրջափակման պայմաններում գրեթե անհնարին էր հաղթահարել:

Կանոնավոր բանակի կայացման գործընթացները բախվեցին ֆիդայական-հայդուկային մտածելակերպի պատնեշին, և գործնականում ձախողեցին բազմաթիվ ծրագրերի իրագործումը, որոնց հետևանքով չհաջողվեց լիարժեքորեն իրագործել հայկական զինուժի ստեղծման ու զարգացման, արհեստավարժման դարամարդակ պահանջները:

ԳԼՈՒԽ 12.

ՊԱՅՔԱՐ ԵՐԿՐՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ԱՆԿԱՆՈՆ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ԴԵՄ

պ. գ. դ., պրոֆեսոր Վ. Հ. ՎԻՐԱԲՅԱՆ

Առաջին Հանրապետության տարիներին ՀՀ կառավարությունն ու պետությունը որոշակի ջանքեր են գործադրել սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակից բխող և այլ գործոններով պայմանավորված, զանազան անկանոն, օրենքի շրջանակներից դուրս գործող, խմբապետական տրամադրություններ ունեցող զինված խմբերի կողմից կատարվող հանցագործությունների դեմն առնելու, հաղթահարելու համար, որոնք կարևոր էին նաև բանակում կարգ ու կանոն հաստատելու, զինվորների բարոյական կերպարն անաղարտ պահելու, բանակաշինական ու պետական անվտանգության համակարգի ձևավորմանը նպատակաուղղված գործընթացների իրականացման ապահովման տեսանկյունից. 1918 թ. օգոստոսի 12-ին, ՀՀ Նախարարների խորհուրդն իր նիստում լսում է ՆԳ նախարարի առաջարկության մասին՝ զինվորական զորամասերի կողմից խաղաղ բնակչության, նրանց ունեցվածքի նկատմամբ գործադրված ապօրինությունների և քայքայիչ քայլերի դեմ պայքարելու միջոցառումների մասին[1]: ՆԳ նախարարությունը որոշակի ջանքեր էր գործադրում կարգ ու կանոնի, հասարակական անվտանգության տարրական նորմերի հաստատման ուղղությամբ, պետական, պաշտոնական և տնտեսական հանցագործությունների դեմ պայքարում, որին, որոշ վերապահումներով, աջակցում էին նաև քաղաքական կազմակերպությունները և կուսակցությունները: Հայ հասարակության և բանակի համար մեծ չարիք էին հանդիսանում այսպես կոչված ***«մաուզերիստական խմբերը»*** իրենց գործողություններով, որոնց սանձարձակություններն այնքան էին վրդովեցուցիչ, որ

[1] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 201, ց. 1, գ. 484, թ. 8:

կառավարական մակարդակով հաճախակի, տարբեր առիթներով անդրադառնում էին այդ հիմնախնդրին և փորձում արդյունավետ լուծումներ գտնել, որը ոչ միշտ էր հաջողվում, հաճախ էլ ձախողվում էր[1], քանզի պետական մարմինները ի զորու չէին լինում հաղթահարել այդ չարիքը, ինչին էապես նպաստում էր հանրապետության անմխիթար սոցիալ-տնտեսական վիճակը և անկասկած՝ անհաղթահարելի սովը, սոսկալի չափեր ընդունած հանցավորությունը:

Այս առումով շատ հատկանշական է նաև ՆԳ նախարարի 1918 թ. սեպտեմբերի 24-ի շրջաբերական հրահանգը՝ ուղղված բոլոր գավառական և գավառամասային կոմիսարներին. «Ամեն օր տեղեկություններ եմ ստանում սպանությունների, կողոպուտների, գողությունների մասին, այն էլ մեծ մասամբ Երևան-Էջմիածին-Աշտարակ-Աբարան, Երևան-Ախտա–Ելենովկա-Դիլիջան-Քարվանսարայ գլխավոր խճուղիների վրա: Այժմ, երբ միլիցիայի կազմը բոլոր գավառներում ուժեղացված է և միլիցիոներների վարձատրության չափը ավելացված՝ գավառային և գավառամասային կոմիսարների վրա պարտք է ծանրանում ամենախիստ կերպով հետևել, որպեսզի ամենակարճ ժամանակամիջոցում վերջ տրվի բոլոր տեսակի անկարգություններին, հանցագործություններին և անդորրություն հաստատվի երկրի մեջ: Այնուհետև գավառային իշխանության ներկայացուցիչները զգուշացնում էին, որ եթե ժամանակին միջոցներ ձեռք չառնեն ճնշելու հասարակությանը վնասող տարրերը և խափանելու ապագա դեպքերը, կարգազանցները կենթարկվեն պատասխանատվության՝ իբրև օրինազանցների»[2]:

Դատելով արխիվային բազմաբնույթ նյութերի վերլուծությունից, հանրապետության համար այդ զանազան զինված «խմբերը» իրոք պարզապես չարիք էին, որից բողոքում էին անգամ դատախազության և ՆԳ նախարարության աշխատակիցները: Երևանի օկրուգային դատարանի դատախազը 1918 թ. դեկտեմբերի 13-ին դիմելով Արդարադատության նախարարին պաշտոնական դիմումագրով, նշում էր, որ իրենք բազմաթիվ բողոքագրեր են ստանում զանազան դրուժինաների

[1] Տե՛ս **Hovannisian R. G.,** The republic of Armenia, vol. III, Berkeley, Los Angeles, London, Un. of California, 1996, p. 5-10:

[2] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 201, ց. 1, գ. 15, թ. 118: Տե՛ս նաև **«Կառավարության Լրաբեր»,** 27 սեպտեմբերի, 1918, № 8:

պետերի (խմբապետներ) և դրուժինաների հասցեով, վերջիններիս մեղադրելով իբր թե ջոկատների կարիքների համար կատարված, սակայն միանգամայն ինքնագլուխ և ավազակային բռնագրավումների մեջ, քաղաքացիներից խլելով ձիերը, անասնակերը, ուտելիքը և այլն, ինչպես նաև ձեռնարկելով այլ անպատասխանատու գործողություններ, որոնք իբր թե կապված էին զորամասերի իրավունքների, նրանց համար անհրաժեշտ պարենի, ֆուրաժի հայթայթման հետ: Ելնելով դրանից, Արդարադատության նախարարը դեկտեմբերի 24-ին դիմում է ՆԳ նախարարությանը խնդրանքով՝ հաղորդել, թե ինքն ունի՞ արդյոք իր տրամադրության տակ հաղորդագրության մեջ նշված զորամասերի, խմբապետների և նրանց զինվորների մասին տվյալներ, եթե՝ այո, ապա ինքը խնդրում է միջոցառումներ ձեռնարկել, որպեսզի կանխարգելվի նրանց կողմից որևիցե անօրինական գործողություն, բռնազավթում և նկատմամբ հարուցվի քրեական գործ[1]:

Ակնհայտ է դառնում, որ այսպես կոչված «խմբերն» այդ ժամանակ պարզապես չարիք էին պետության, բանակի և հասարակայնության համար, իսկ պայքար դրանց դեմ տարվում էր այնքանով, ինչքանով որ դա հաջողվում էր: Կուսակցությունները ևս շատ զգուշավոր ձևերով բողոքում էին ստեղծված իրավիճակից: Այդ մասին շեշտում է Հայ ժողովրդական կուսակցության պառլամենտական խմբակցության ներկայացուցիչ Երվ. Հարությունյանը 1919 թ. հունվարի 15-ի Նախարարների խորհրդի նիստում պարենավորման մասին հարցի շուրջ ծավալված բանավեճի ժամանակ. ***«միևնույն ժամանակ մենք պետք է ստեղծենք մեր ներքին կյանքում իրավակարգ, վերացնենք խմբերը, որոնք երկրի ներսում մի երրորդ իշխանություն են հաստատել»***[2]: Այդ միտքն է հաստատում նաև նիստում ելույթ ունեցած Ս. Վրացյանը. «լիազորները կատարյալ զեղծարարներ էին. ասում էին, որ դրանք բավականին ցորեն, բամբակ ին գնիլ, այնինչ ոչինչ չեն տեղափոխիլ մինչև հիմա Երևան. միջոցներից մեկը (պարենխնդրի լուծման՝ ընդգծումը մերն է -Վ. Վ.) ներքին շուկայի օգտագործումն է, բայց դժբախտաբար

[1]Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 201, ց. 1, գ. 504, թ. 4- 5:

[2] Նույն տեղում, ֆ. 198, ց. 1, գ. 15, թ. 92:

ներքին օրգանները այնպես չին կազմված, որպեսզի օգտագործին»[1] այդ հնարավորությունները:

Նախարարների խորհրդի 1919 թ. հունվարի 21-ի նիստում լսվում է ՆԳ նախարարի պաշտոնակատար Ալ. Խատիսյանի զեկուցումը Դարալագյազի, Երևանի, Էջմիածնի և Սուրմալուի գավառներում գոյություն ունեցող անկարգություններին, խմբերի սանձարձակություններին ու ստեղծված անարխիային վերջ տալու համար այդ գավառներում ուժեղացված դրություն և գեներալ-նահանգապետություն հաստատելու ու զանազան ոճիրների համար մահվան պատիժ մտցնելու մասին: Ներկայացված նախագծին հավանություն է տրվում[2], վերջնական որոշումը սակայն հետաձգելով մինչև հունվարի 22-ի նիստը[3]. ինչպես և որոշվել էր, Նախարարների խորհրդի նիստը կրկին անդրադառնում է այդ հարցին: Դրանում մասնավորապես ասվում էր, որ ի լրումն և ի ձևակերպումն հունվարի 21-ի նիստում արված առաջարկության, Ալ. Խատիսյանը նոր առաջարկություն է ներկայացնում, որում ասվում էր, որ Դարալագյազի, Երևանի, Էջմիածնի և Սուրմալուի գավառներից պետք է կազմվի մի զինվորական շրջան և շրջանի պետ նշանակվի, որին պետք է ենթարկվեն թե՛ տեղական զորքը, և թե՛ միլիցիան, որը իբրև զինվորական շրջանի պետ իր հերթին պիտի ենթարկվեր ՀՀ ՆԳ նախարարությանը, իսկ իբրև տեղական զորքերի հրամանատար՝ Հայկական դիվիզիայի պետին: Ընդունված որոշման մեջ Նախարարների խորհուրդն իր համաձայնությունն արտահայտելով այդ առաջարկի հետ, միաձայն հանձնարարում է ՆԳ նախարարի պաշտոնակատարին այդ առաջարկը ձևակերպել հատուկ կարգադրությամբ և ներկայացնել ՀՀ խորհրդին՝ ի հաստատումն:

Գավառամասերից ստացված հաղորդագրությունների հեղինակները ևս կարևորում էին միլիցիայի և օրինապահ մարմինների, ուժային կառույցների դերը նշված երևույթներն արմատախիլ անելու առումով. 1919 թ. մայիսի 27-ի դիմումագրում՝ ուղղված ՆԳ նախարարին, Կարսի նահանգապետը հիշեցնելով իր մայիսի 21-ի հեռագրի մասին,

[1] Նույն տեղում, թ. 43:

[2] Նույն տեղում, գ. 486, մաս I, թ. 20:

[3] Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 96, թ. 13, գ. 100 (43), թ. 15, ֆ. 201, ց. 1, գ. 486, մաս I, թ. 20:

տեղեկացնում էր վրացիների կողմից ողջ Արդահանի մարզը գրավելու մասին, այս անգամ ևս ասվածին հավելելով, որ վրացիները շարունակում են հույներին թունավորել քրդերի ու մահմեդականների դեմ, և ընդհանուր խառնաշփոթի պայմաններում շատերը զբաղված են կողոպուտով և բռնարարքների կիրառմամբ: *Եզրակացության մեջ շեշտելով, որ բնակչությունը այնքան ուժեղ է տեռորի ենթարկված զանազան խմբերի կողմից և վախեցած անզուսպ «խրախճանքներից», ցոփ գինարբուքներից, որ ուրախանում է անգամ իրենց ամեն մի միլիցիոների հայտնվելով, նրանում տեսնելով իր իրավունքների և հանգստության գլխավոր գրավականը*[1]: Հետաքրքիր դիտարկում է, որն արժանի է ուշադրության, մանավանդ վկայում է այն հանգամանքի օգտին, թե ի՞նչ արդյունքների կարելի է հասնել, եթե ճիշտ կազմակերպվի ներքին անվտանգության համակարգը, որում իրենց արժանի տեղը կգտնեին միլիցիան և ՆԳ մարմինները, զորքը և իրենց օրինապահ վերաբերմունքով հասարակության նկատմամբ վայելեին վերջինիս հարգանք, երբեմն էլ՝ աջակցությունը:

1919 թ. մայիսի 28-ին զինվորական գերատեսչության գծով հրամանագրում զորքերի հրամանատար գեներալ-մայոր Նազարբեկյանը նշելով այն մասին, որ ինք տեղեկություններ է ստանում սպաների կողմից ցուցաբերվող անկարգությունների, փոխադրամիջոցի համար չվճարելու մասին, որն ուղեկցվում է բռնությամբ բնակիչներից խլելով անասունները, դրա համար ոչ մի թույլտվություն չունենալով, սպեկուլյացիայով, ըստ այդմ այդ ամենը որակելով որպես սպայի պատվին ոչ վայել, որից ելնելով կոչ էր արվում զորամասերի պետերին ուշադրություն դարձնել սպայակազմի վրա, հիշեցնելով, որ զորամասի պետն է պատասխանատու այդ ամենի համար և կրում է բարյական պատասխանատվություն, և ըստ այդմ առաջարկում դատարանի միջոցով օրենքի խախտման համար մի մասին պատժել, կազմակերպել զորամասերի դատարաններ և քայլեր ձեռնարկել սպաների բարոյական նկարագիրը բարձրացնելու, որպեսզի ժողովուրդը նրանցով հպարտանա[2]:

[1] Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 547, մաս I, թ. 95:

[2] Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 21, թ. 66:

ՆԳ նախարարության հետաքրքրությունների ոլորտում էին երկրի ներքին կյանքին վերաբերող բոլոր հարցերը, որը փորձում էր խորամուխ լինել դրանց մեջ, գտնել լուծման հնարավոր ուղիները գաղթականներով և սովից հյուծված այդ երկրում, վերահսկել իրադրությանը: Բնականաբար, դրան էին նպատակաուղղված այն քայլերը, որոնք ՆԳՆ ձեռնարկում էր բնակչությունից զենքն ու զինամթերքը առգրավելու համար, ենթադրելով, որ դրանք էլ ավելի են սրում դրությունը, որ խառնաշփոթ և քրեածին իրավիճակը ձեռնտու էր զանազան ավազակաբարո խմբերին, որոնք հեշտությամբ էին ձեռք բերում հրազեն ու պատուհաս դառնում սեփական ազգաբնակչության գլխին[1]: Այդ նպատակով 1918 թ. օգոստոսի 21-ին Արամ Մանուկյանը կառավարության քննարկմանն է ներկայացնում մասնավոր զենք-զինամթերքի պետականացման վերաբերյալ օրինագիծ, որը հավանության արժանանալուց հետո ներկայացվում է ՀՀ պառլամենտի քննարկմանը[2]: Հիմնավորելով օրինագիծը, Ա. Մանուկյանը գտնում էր, որ եթե երկրում իր ժամանակին ժողովրդին զինելը անհրաժեշտություն էր և ուներ ինքնապաշտպանական նպատակներ, արդեն պետականության գոյության պայմաններում, երբ կանոնավոր զորք ունենալու խնդիրներ են լուծվում, անձի անձեռնմխելիությունը, ունեցվածքի և այլ իրավունքների պաշտպանությունը արդեն պետական իշխանության պարտականությունն է[3]: Սակայն երկրի ներքին, հետևաբար նաև պետական անվտանգության տեսանկյունից այս կարևոր մոտեցումը անհրաժեշտ համերաշխ ըմբռնումը չգտավ պառլամենտի օգոստոսի 27-ի նիստում, որտեղ մի շարք կուսակցությունների ներկայացուցիչներ Ա. Մանուկյանի ներկայացրած նախագիծը հոժարակամ չընդունեցին: Սոցիալ-դեմոկրատ մենշևիկ Թ. Ավդալբեկյանը չհամաձայնվելով ՆԳ նախարարի այն տեսակետի հետ, որ ազգաբնակչության զինվելը մեծապես նպաստում է անարխիայի տարածմանը, բերելով մի շարք երկրների օրի-

[1] Տե՛ս այս հարցի որոշ դիտարժան մանրամասների մասին **Սահակյան Ռ., Սարգսյան Ռ.,** Անօրինական զենքի և զինամթերքի շրջանառության հիմնախնդիրը Հայաստանի Հանրապետությունում (1918-1920թթ.), «Պատմաբանասիրական հանդես», 2019, N 2 (211), էջ 93-114:

[2] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 200, ց. 1, գ. 105, թ. 2:

[3] Տե՛ս **«Ձանգ»** (Երևան), 28 օգոստոսի, 1918, № 49:

նակները, կարծես թե լուրջ պատճառաբանություն էր բերում, որ անարխիային նպաստում է պետական իշխանության ապարատի թուլությունը և բացակայությունը, ինչը որոշակի առումով օբյեկտիվ իրողություն էր: Հետևաբար, ըստ վերջինիս կարևորվում էր ուժեղ դատաստանական գործի և միլիցիայի կազմակերպումը երկրում, այն ազատելով կաշառակերներից, և դրանից հետո նոր առաջարկվում էր ձեռնամուխ լինել զինաթափման խնդրին: ՀԺԿ ներկայացուցիչ Ս. Մալխասյանը ևս որպես անվտանգության պատվար է դիտում ուժեղ իշխանության ստեղծումը, որի դեպքում միայն կարելի էր ժողովրդին զինաթափել, գտնելով, լավագույն դեպքում, զինաթափումը պետք է սկսել սահմանային գավառամասերից, աստիճանաբար շարժվելով դեպի մայրաքաղաք, կարծելով, որ միայն այդ պարագայում կարելի է ակնկալել ժողովրդի վստահությունը: Պատասխան ելույթով հանդես է գալիս ՆԳ նախարարը, որը երկրում կարգ ու կանոնի, ամուր իշխանության ստեղծման խնդրի իրագործման համար պահանջում է աջակցել կառավարությանը, ինչին գլխավորապես հակադրվում են սոցիալ-դեմոկրատները ի դեմս նրանց առաջնորդ Հ. Ազատյանի, գտնելով, որ ազգաբնակչությունը չպետք է զինաթափվի և իր քաղաքացիական իրավունքները պետք է պաշտպանի զենքով, ինչը կեղծ հիմքեր ուներ: Հ. Ազատյանը քննադատության է ենթարկում Ա. Մանուկյանին և ՀՅ Դաշնակցությանը, ասելով, որ տարիներ շարունակ վերջինս զենքի է կոչել հայ ժողովրդին, սակայն այժմ այդ նպատակին հասնելուց հետո, կոչ է անում զինաթափել նրան: Հ. Ազատյանը պնդում էր, որ այդ խնդիրը իրապես կլուծվի միայն հաստատելով հեղափոխական օրենսդրություն, իրականացնելով բարեփոխումներ առողջապահության, աշխատանքի և հողի բնագավառներում՝ ապրանքների հավասար բաշխմամբ, ինչում, իհարկե, ռացիոնալ հատիկներ կային, սակայն այն ակնկալվող ընկալման չի արժանանում: Դաշնակցական խմբակցության անդամ Ս. Թորոսյանն էլ իր հերթին պատասխանում է, որ էսդեկները դառնալով զենք կրելու ջատագովներ, հանիրավի մոռացել են, որ իր ժամանակին դատապարտել են ՀՀ Դաշնակցությանը այդ ուղղությամբ գործադրած ջանքերի համար: Ս. Թորոսյանը եզրակացնելով, որ սուլթանների և ցարերի դեմ պայքարի ժամանակներն անվերադարձ անցել են, հետևաբար, անհրաժեշտություն չկա, որպեսզի բնակչությու-

նը զինվի, քանզի Հայաստանը անկախ պետականություն է, որն էլ կոչված է պաշտպանելու ՀՀ բարեկեցությունը, հետևաբար նաև՝ անվտանգությունը: Ի վերջո, 15 ձայնով ընդդեմ 7-ի օրինագիծն անցնում է[1]: 1918 թ. օգոստոսի 21 ին Նախարարների խորհրդի նիստը քննարկում է ՆԳ նախարարի կողմից առաջարկված օրենքի նախագիծը զենքի առգրավման մասին, բացառությամբ սառը և որսորդական զենքի, և հավանություն է տալիս այն պառլամենտ մտցնելու համար[2]: 1918 թ. օգոստոսի 29-ին Հայաստանի խորհրդարանն ընդունում է «Մասնավոր սեփականություն կազմող զենքերի և զինամթերքի պետականացման մասին» օրենք, որը նախատեսում էր պետականացնել մասնավոր հրազենն ու զինամթերքը, բացի որսորդականից ու անպահունակավոր տեսակներից: Զենքը կամովին չհանձնելու դեպքում այն առգրավվելու էր հարկադրաբար, իսկ օրինազանցները ՆԳ նախարարի որոշմամբ ենթարկվելու էին պատժի՝ մինչև 3000 ռ. տուգանքի: ՆԳ նախարարին էին վերապահվում զենք-զինամթերք հավաքագրող հանձնաժողովների կազմակերպման, մասնավոր անձանց ու կազմակերպությունների կողմից զենք-զինամթերք ձեռքբերելու, պահելու, դրանք կրելու արտոնություն տրամադրելու և այլ հարցերը: Վտանգված գյուղերի ինքնապաշտպանությանը չվնասելու նպատակով օրենքը թույլատրում էր գրավված զենքի մի մասը թողնել տեղում՝ հատուկ մարդկանց հսկողության և պահպանության ներքո[3]: Այս առումով հետաքրքիր է նաև ՀՀ Ներքին Գործերի նախարարի մեկ այլ հրահանգ, որն այս անգամ մասնավորացված էր և վերաբերում էր հանրապետության ամենալարված շրջաններից մեկի՝ Նոր Բայազետի գավառին: ՆԳ նախարարի 1918 թ. հոկտեմբերի 14-ի հրահանգում՝ ուղղված Տիգրան Բաղդասարյանին, ասվում էր հետևյալը. «1) Աջակցություն ցույց տալ Նոր Բայազետի գավառում զենքեր գրավող հանձնաժողովին գրավելու գավառում բոլոր զենքերը, ռազմամթերքը ըստ օրենքի, 2) բոլոր գյուղերից պահանջելու գանձարան մտցնել այս և անցյալ տարվա հարկերը և գանձարան չմտած կապալները, 3) հավաքել 20 տարեկանից մինչև 26

[1] Տե՛ս **«Հորիզոն»** (Թիֆլիս), 11 սեպտեմբերի, 1918, № 182:

[2] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 202, ց. 1, գ. 13, թ. 18:

[3] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 199, ց. 1, գ. 4, թ. 1, ֆ. 200, ց. 1, գ. 86, թ. 2-3**: Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները**, էջ 2-3:

տարեկան դասալիքներին և ցուցակներով ներկայացնել Նոր Բայազետի գարնիզոնի պետ, շտ. կապիտան Բուդումյանցին և հրահանգել Նոր Բայազետի գավառի միլիցիայի պետ, պրապ. Թառումյանցին նրանց տեղափոխելու Երևան, միլիցիոներների հսկողությամբ՝ Երևանի Զինվորական պետին [հանձնելու], 4) Հետապնդել, ձերբակալել բոլոր մարդասպաններին և քրեական հանցագործներին, ու հանձնել դատական իշխանությանը, 5) գործողություններ սկսել Նորադուզ գյուղից և վերջ դնել Նորադուզի ու Ղշլաղի կամայականություններին, որոնք հակառակ կառավարության հրահանգներին, ձուկ են որսում Քեավառի գետից և ծովից, վնասելով կապալառուներին, 6) Աշխատի[ել] բոլոր խնդիրները վերջացնել խաղաղ միջոցներով, որոնց սպառումից հետո միայն դիմել զենքի ուժի, վերջին դեպքում վարվել վերին աստիճանի կտրուկ կերպով, 7) Գյուղերը շրջել ամեն անգամ շրջանային կոմիսարների ուղեկցությամբ»[1]: Այդ նույն նպատակադրումով էլ 1919 թ. հուլիսի 24-ի նիստում ՀՀ Նախարարների խորհուրդը լսում է ՆԳՆ օրինագծի մասին ազգաբնակչությունից զենք ու զինամթերքի հարկադրական միջոցներով հավաքելու և զինային պարտադիր տուրք սահմանելու մասին: Որոշվում է համաձայն հունիսի 5-ի օրենքի՝ հաստատել ներկայացված օրինագիծը[2]:

ՆԳ նախարարության իրավասության մեջ մտնում էին տարաբնույթ հարցեր, որոնց լուծման համար վերջինս համագործակցում էր այլ նախարարությունների հետ, փորձելով համատեղ ուժերով կանխել անիշխանություն դրսևորող երևույթները երկրում, զինվորական և այլ բնույթի խժդժություններն ու հանցագործությունները: Նախարարների խորհրդի 1919 թ. հունվարի 15-ի նիստում լսվում է Արդարադատության նախարարի առաջարկը՝ զինված անպատասխանատու խմբերի ինքնագլուխ գործողություններին վերջ տալու մասին, հանձնարարելով ՆԳ և Զինվորական նախարարություններին համատեղ ծրագիր ներկայացնել ազգաբնակչությանը այդ խմբերի ինքնագլուխ գործողություններից ապահովելու և նրանց զսպելու համար[3]: Իսկ 1919 թ. փետրվարի

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 201, ց. 1, գ. 38, մաս I, թ. 484:

[2] Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 96ա, թ. 20, ֆ. 201, ց. 1, գ. 486, մաս II, թ. 284:

[3] Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 96, թ. 10, գ. 100 (43), թ. 11:

3-ի նիստում Նախարարների խորհուրդը լսելով ՆԳ Նախարարի զեկուցումը Դավալուի և Սուրմալուի շրջաններում գտնվող «խմբերը» զորամասերով փոխարինելու մասին հարցը, որն ընդունվում է որպես ի գիտություն, ասել է, թե կառավարությունը տալիս է իր համաձայնությունը[1]:

ՆԳՆ և միլիցիան բազմաթիվ բողոքագրեր էին ստանում զինվորականների կողմից կատարվող անօրինականությունների, երբեմն էլ պարզապես հանցագործ գործողությունների մասին: ՀՀ Տարածքի Վարչակազմի և միլիցիայի կոմիսարին հասցեագրված Ալեքսանդրապոլի գավառային կոմիսարի 1919 թ. մարտի 20-ի զեկուցագրում նշվում էր, որ գավառի գյուղացիների և փախստականների վիճակը սովից օրեցօր դառնում է ավելի ու ավելի հուսահատական, նշելով, որ գավառի բնակչությունը փախստականների հետ միասին կազմում է 160.000 շունչ, որից իրենց գոյությունը մինչև նոր բերքահավաքը կարող են պահպանել միայն 12.000-ը, իսկ մնացած 148.000-ը չունեն ո՛չ հաց, ո՛չ ցորեն, և մինչև նոր բերքը նրանց պահելու համար անհրաժեշտ է 888.000 փութ ցորեն, յուրաքանչյուր շնչին հաշվելով ամիսը՝ մեկ փութ, իսկ սերմացու 1.170.228 փութ, և այդ պայմաններում զորամասերի անօրինական գործողությունները, մթերքների և սայլակառքերի բռնագրավումները սրում են առանց այն էլ վատ վիճակը՝ հանգեցնելով տարբեր գյուղերի բնակիչների բողոքներին: Գավառական կոմիսարը առաջարկում էր գավառում ունենալ այնպիսի վարչակարգ, որն օգտվեր ինչպես հայերի, այնպես էլ մահմեդականների հարգանքից՝ վերջիններիս հետ մերձենալու համար[2]: Այդ առումով առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում Դիլիջանի գավառային կոմիսար Մ. Սարատիկյանի 1919 թ. մարտի 25-ի զեկույցը՝ ուղղված ՀՀ Տարածքի Վարչակազմի և միլիցիայի կոմիսարին, որը նաև ներքին քաղաքականության նրբությունների ըմբռնման տեսանկյունից արժանի է ուշադրության. զեկուցագրում Մ. Սարատիկյանը նկատում էր, որ տնտեսական առումով բնակչությունը գտնվում է հուսահատական վիճակում, հաց գավառի շուկաներում գրեթե չկա և ՀՀ մեծ մասը սնվում է Ղա-

[1] Նույն տեղում, գ. 100 (43), թ. 21:

[2] Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 135 , թ. 29:

զախի գավառի հաշվին և Դիլիջանի «տրակտով» (մեծ ուղի) բերվող հացով, որը Ղազախից ուղեկցվում է բարդություններով և զանազան խոչընդոտներով: Սարատիկյանը ընդգծում էր, որ տեղական բնակիչներին քիչ նեղություններ չեն տալիս նաև բախտի քմահաճույքին թողնված փախստականները, որոնք թափառում են գյուղերում և զբաղված են մուրացկանությամբ, հաճախ էլ տեղացիներից բռնաշորթելով վերջին կտոր հացը: Իսկ ամենակարևորը, դա այն էր, որ Մ. Սարատիկյանը կենտրոնական իշխանությունների ուշադրությունը բևեռում էր գավառի զորամասերի սպաներից շատերի կողմից դրսևորվող սպային ոչ վայել դիրքի ու կեցվածքի ու պահվածքի վրա, որոնք հաճախ գիշերները ավելորդ հրացանածգությամբ էին զբաղվում, ինչը տագնապ և վախ էր ներշնչում բնակչությանը, առավել ևս, որ դա այն իրավիճակում էր կատարվում, երբ փամփուշտը պարզապես ոսկու արժեք ուներ, և դա նորություն չէր, այդ թվում Սարատիկյաների և հայկական բանակի սպաների համար: Սարատիկյանը վերջին հանգամանքից եզրակացնում էր, որ վերջիններս գտնվելով այդ վիճակում, չեն մտածում իրենց զինվորների մասին, որի հետևանքով դասալքությունը վերջ չունի: Այնուհետև Սարատիկյանը ընդգծում էր, որ թաթարական Հին Ակսիբարա, Ակսիբարա, Բուղանիս-Այրում, Կուշչի-Այրում, Մազամլու, Ֆարախլի, Շինիխ-Այրում, Արաբաչիլար և Յարադուլլա բնակավայրերը՝ թվով մոտ 12 հազար շունչ բնակչությամբ, խոր կերպով մտնում են իրեն վստահված գավառի բնակելի կետերի մեջ և աշխարհագրական նկատառումներով դեռ չեն լիովին ընդգրկվել, այսինքն՝ ժամանակակից տերմինով ասած ինտեգրվել ՀՀ տարածքի մեջ՝ դեռևս գտնվելով Ադրբեջանի իշխանությունների ղեկավարության ազդեցության ներքո, երևույթ, որը բացասաբար էր անդրադառնում դրության վրա: Ըստ այդմ Սարատիկյանը ցանկալի էր համարում կենտրոնական իշխանությունների կողմից հարցի շուտափույթ լուծումը և ՀՀ օրինական իշխանության ամրապնդումը այդ տարածքում[1]:

ՆԳ նախարարությանը, զինվորական իշխանություններին չէր կարող չհետաքրքրել երկրի համար կարևոր նշանակություն ունեցող զանազան խմբերի, ոչ կանոնավոր զորամասերի հետագա ճակատա-

[1] Նույն տեղում, թ. 33:

գրի հարցը, որոնք ավելորդ լարվածության մեջ էին պահում երկիրը և ժողովրդին, քանզի այն ուներ ռազմավարական կարևորագույն նշանակություն: Հետևաբար, հարկավոր էր վերջ ի վերջո այդ տեսակի բոլոր զինուժերը, անկանոն զինված խմբերը տարալուծել կանոնավոր զորամասերի կազմում: Այս առումով ուշագրավ է Նախարարների խորհրդի 1919 թ. սեպտեմբերի 8-ի նիստը, որում լսվում է ՆԳ նախարարի զեկուցումը անկանոն զորամասերի մասին՝ հանձնարարելով ՆԳ և Զինվորական նախարարություններին մշակել անկանոն զորային միավորների կազմակերպվածության և այդ զորամասերը անհրաժեշտորեն պահելու նպատակահարմարության մասին կանոնադրություն[1]: Երկրի տարբեր շրջաններում տիրող անկայուն և քաոսային վիճակի, անարխիայի, անկանոն խմբերի ու զորամասերի կամայականությունների, դրանց դեմ ՆԳ, կառավարական այլ մարմինների պայքարի գործակցի «արդյունավետության» մասին է վկայում 1920 թ. վերջերի մի դիմումագիր՝ հասցեագրված ՀՀ պառլամենտի նախագահին և ՆԳ նախարարին, որում ՆԳ նախարարի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Մաքսապետյանը մասնավորապես ընդգծում էր. ***«Շրջելով Շամշադինի, Իջևանի, Բարանայի շրջանները, հաստատում ենք իշխանության բացարձակ բացակայությունը: Ժողովրդի անտերությունը, հայտնի թալանների, ծանոթ յանցագործների միջոցով, երկրի տնտեսական քայքայությունը, աշխատանքի կազմալուծումը. անցեալի դժբախտություններից ճողոպրած այս հարուստ երկիրը փրկելու և ժողովրդին իշխանության գոյությունը ճանաչել տալու համար պահանջում ենք անմիջապես բանակցություններ սկսել՝ ադմինիստրացիային ընդառաջ գնալ ժողովրդի արդարացի պահանջին՝ ապահովելով նրանց կյանքը և տնտեսությունը»***[2]:

Սակայն, դժբախտաբար հասարակությունն այդքան ներուժ չուներ ազդելու հակապետական, հանցավոր տարրերի վրա, և դրանք ծաղկում էին: Լավագույն սպառազինությամբ որոշակի խմբեր զբաղված էին ահաբեկչությամբ, դրամաշորթությամբ և պարզապես կողոպուտով: Հատկապես դժվարին իրավիճակ էր ստեղծված Կարսի նա-

[1] Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 100 (43), թ. 200:

[2] Նույն տեղում, ֆ. 198, ց. 1, գ. 31, թ. 6:

հանգում: ՀՀ ՆԳ նախարարի օգնական Ս. Թորոսյանը 1920 թ. հուլիսի 2-ի ՀՀ Նախարարների խորհրդին տված զեկույցում վկայակոչում է հենց այն փաստը, որ օգտվելով հանրապետության համար ստեղծված խառնակ իրավիճակից, «խմբերը» ահաբեկչությամբ են զբաղված նաև այլազգիների, մասնավորապես Կարսի նահանգի ռուսական գյուղերի նկատմամբ, որոնց ներկայացուցիչները հունիսի 29-ին բողոքագրով դիմել են ՆԳ նախարարի օգնականին: Շիրակի նահանգապետն այս կապակցությամբ ևս իր բուռն բողոքն էր արտահայտում զինված անձանց կամայական ելույթներից[1]: Այս կապակցությամբ նաև «Անիշխանությունը Կարսում» վերտառությամբ հոդված է տպագրվում սոցիալիստ-հեղափոխականների կողմից հրատարակվող «Սոցիալիստ-հեղափոխական» թերթում, որում անարգանքի սյունին են գամվում մաուզերիստական «խմբերը» իրենց ծավալած անարգալից գործողությունների համար և կառավարությունը տեղական վարչակազմին կոչ էր անում արմատախիլ անել այդ ավազակաորջերը[2]: Հարկ է ավելացնել, որ վերոնշյալ անձինք անդրադառնալով այս ցավալի փաստերին, չէին բավարարվում այդ մասին արձանագրելով, այլ երբեմն էլ փորձում էին ելք որոնել և դրանց դեմն առնելու միջոցներ ցույց տալ: Այսպես Ս. Թորոսյանը նշում է, որ միլիցիոներների մի մասը «խեղճ ու կրակ մարդիկ են, որոնք միայն զուր փող են ստանում, իսկ մյուս մասը՝ թալանի տենչով բռնված՝ մասնակից է թե՛ թալաններին և թե՛ գաղտնի ապստամբություններին»[3], նաև ընդգծում էր, որ «միլիցիան զինված է պատահական զենքերով, հաճախ չի ունենում փամփուշտ և այլն»: ՆԳ նախարարի օգնականը փորձում էր խորքային դիտարկումներ կատարել և նշել ստեղծված վիճակից դուրս գալու ուղիներ, ընդգծելով հետևյալը. «Ներքին Գործերի նախարարության ապարատի քայքայմանը նպաստում են այն հատուկ լիազորները, որոնք ցրված են զանազան տեղեր, և խառնվում են վարչական գործերին, բանտարկում են, արձակում և այլն»: Այնուհետև, Ս. Թորոսյանն անցնում էր կոնկրետ առաջարկների, որոնք հանգում էին հետևյալին. 1) Բոլոր միլիցիոներների ռոճիկը

[1] Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 287, թ. 4:

[2] Նույն տեղում, գ. 300, թ. 109 -110, **«Սոցիալիստ-հեղափոխական»**, 18. 09. 1919, №19; 29. 10. 1919, №30:

[3] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 201, ց. 1, գ. 287, թ. 5:

կրկնապատկել, 2) տալ ամսական մի փութ ալյուր, 3) բոլոր միլիցիոներներին տալ հագուստ, 4) միլիցիան զինել լավ հրացաններով և ապահովել անհրաժեշտ քանակությամբ փամփուշտով, 5) միլիցիան ազատել զինվորական պարտականություններից, 6) 25 տարին լրացած բոլոր տղամարդկանց միլիցիոներական ծառայությունը ճանաչել որպես զինվորական ծառայություն, 7) Դ դասարանը ավարտած ու միջնակարգ կրթություն ստացած միլիցիոներներին հատուկ վարձատրություն տալ՝ միլիցիայի ռոճիկի 1/2 չափով, 8) կրկնապատկել նահանգապետի ու վարչակարգի մյուս պաշտոնյաների ռոճիկը, 9) վերացնել բոլոր արտակարգ կոմիսարների, հատուկ լիազորների պաշտոնները, 10) ինքնավարությունների ադմինիստրացիայի ու միլիցիայի պաշտոնները հանձնել պետականորեն աշխատող մարդկանց՝ առանց կուսակցական խտրության, 11) երկրով մեկ սփռված զինված ուժերը ճանաչել հակապետական, զինաթափել, և նրանց դեմ կռիվ մղել զորքի ու միլիցիայի միջոցով, 12) զինվորական իշխանությանը պարտադրել պահանջված դեպքում օգնության հասնել ադմինիստրացիային, 13) դատավարության ձևականությունները փոփոխելով՝ պարտադրել նահանգային դատարաններին շտապ քննել պետական հանցավոր պաշտոնյաների գործերը, 14) զինվորական իշխանություններին արգելել Ներքին Գործերի նախարարության գործերին խառնվել, հատկապես արգելել սայլեր, կենդանիներ, խոտ և այլ նյութերի բռնագրավելը[1]: Սույն հետաքրքիր փաստաթղթի վրա կա ՆԳ նախարար Ռ. Տեր-Մինասյանի մակագրությունը՝ պատասխան առաջարկների ու տեսակետների հետաքրքիր փաթեթով՝ Ս. Թորոսյանի կողմից արված առաջարկների ամեն մի կետի վերաբերյալ ըստ հերթականության արված մակագրությամբ, որոնք հանգում էին հետևյալին. «1) Համաձայն եմ՝ բյուրոյի համաձայնությամբ, 2) համաձայն եմ՝ Խնամատարության մինիստրության միջոցով տալու պայմանով, 3) համաձայն եմ, 4) իսկ քաղաքներում՝ «Բերդան» և «Մոսին» -ով, իսկ շրջաններում՝ «Մոսին» հրացաններով[2], զինելով միլիցիան փամփուշտներով, 5) 32-ից բարձր պետք է արդեն ազատել, իսկ մնացածին՝ ազատել՝ կնշանակի քանդել զորքը, 6) եթե

[1] Նույն տեղում, թ. 5-6:

[2] 1891–1910 թթ. նմուշի «Մոսին» ռուսական հրացան:

նախատեսել 32-ից բարձր հասակ ունեցողներին ազատել զորքի շարքերից, անհրաժեշտ է դրանց պատասխանին չսպասել, մտցնել միլիցիայի շարքերը իբրև պարտադիր՝ միլիցիայի ռոճիկով, 7) համաձայն եմ, 8) համաձայն եմ՝ բյուրոյի համաձայնությամբ, 9) նորմալ վիճակում գտնվող շրջաններում համաձայն եմ, 10) այդ փորձը ճակատագրական նշանակություն կարող է ունենալ, ինչպես երևաց լուսավորության մինիստրության փորձից. պետք է ընդունել սկզբունք միմիայն այս կառավարությանը և հայրենիքին սատարող տարրերին, 11) զինված ժողովուրդն է ստեղծել այս երկիրը, և նա է իսկական պաշտպանը հայրենիքի, ավելին՝ քան միլիցիան, ուստի ժողովրդին պետք է զինել և նրան կազմակերպել, իսկ զորքին և միլիցիային հակադրել զինված ժողովուրդը՝ համարել անօրինական և կորստաբեր, 12) համաձայն եմ, բայց խոշոր դեպքերում և միայն ընդհանուր հրամանատարի թույլտվությամբ, բայց առհասարակ կարևոր է զորքը ներքին կյանքից պահել բոլորովին (հեռու), և նրա ուշադրությունը սևեռել դեպի արտաքին թշնամին, 13) համաձայն եմ, 14) համաձայն եմ, 15) զարգացնել ժողովրդական ինքնապաշտպանությունը և ժողովրդի մեջ քաղաքացիական պարտականությունների պարտաճանաչությունը, կազմակերպել քաղաքի և Դաշբուռունի նման գնդեր, նրանց տալով կոմիտեների, ոստիկանության ու զինվորական գործառնություններ, 16) մտցնել համաձայնական, կոմիտեական պարտականություններ»[1]:

Քննարկվող հիմնահարցի կապակցությամբ ուշագրավ են նաև Ռնդամալ (Ջրառատ) և Վերին-Ախտա գյուղերի բնակչության ներկայացուցիչների բողոքագրերը՝ ուղղված պառլամենտի սոցիալ-դեմոկրատական խմբակցությանը, որում դժգոհում էին կառավարության ներկայացուցիչների և զորամասերի, ինչպես նաև 400-ից ավելի գաղթականների կողմից իրենց ունեցվածքը թալանելու, գործադրված բռնությունների և այլ անկարգությունների վերաբերյալ, խնդրվում էր քննիչ հանձնաժողով ուղարկել[2]: Դարաչիչագի տեղամասի Ռնդամալ գյուղի կոմիսար Սարգիս Երամովը պառլամենտի սոցիալ-դեմոկրատական խմբավորմանը հասցեագրված դիմում-բողոքագրում, վրդովվելով

[1] Նույն տեղում, թ. 6 հակ.:

[2] Նույն տեղում, ֆ. 404, ց. 1, գ. 27, թ. 1-3:

խմբապետ Մեսրոպի և նրա 300 զինվորների ապօրինի գործողություններից, մեղադրելով, որ այդ ***վախկոտ խմբապետները դեռ երեկ փախչում էին Երզնկայից մինչև Երևան անամոթաբար փախչում էին պատերազմի դաշտից վախկոտ նապաստակի նման, շատ խիզախ դուրս եկան անպաշտպան գյուղացիների՝ իրենց սեփական հայրենակիցների նկատմամբ,*** մասնավորապես զինաթափման մասին օրենքի հրապարակումից հետո, առանց խտրականության իրենց հարվածների նշանակետ են ընտրել շատերին, մասնավորապես՝ քաղաքական հակառակորդներին: Այնուհետև դիպուկ նկատում էր. «***Ինչ էին անում այդ ենիչերիները այստեղ, նկարագրել հնարավոր չի, վերցնում էին հացը, ալյուրը, գարին, խոտը, պահանջում էին ոչխար, հավ, բռնություններ էին գործադրում***»[1]: Ս. Երամովը նաև ավելացնում էր հետևյալը. ***«այնտեղ ուղարկվեց հրեւտանի. ինչու՞ մի քանի հարյուր լիազորներ և նրանց ազգականները պետք է հարստանան մեր գյուղացիների հաշվին. այժմ սպուգման փոխարեն ուղարկում են մեզ մոտ մեսրոպների խմբերը. հասարակությունը վճռել է ընդունել մահմեդականություն և դառնալ Թուրքիայի հպատակներ (գոնե) գեթ փրկելու սեփական գոյությունը և կազմելով գյուղական որոշումը, լիազորել է ինձ խնդրանքով դիմել այստեղ գտնվող թուրքական ներկայացուցչին, սակայն հուրախություն ռնդամալցիների, իրադրությունը փոխվեց և իմ դիմումը Թուրքիային օգուտ չի տա, և քանի որ այլ ելք չկա, խնդրում եմ գյուղ գործուղել հատուկ հանձնաժողով և մանրազնին ուսումնասիրել գյուղացիների վիճակը, այնուհետև վարվել՝ ինչպես խիղճը կթելադրի***»[2]: ***Գյուղական կոմիսարը գրում էր, որ այն ինչ կատարվում էր Ռնդամալում, այն չի եղել և չէր էլ կարող անկասկած լինել ոչ միայն Ռոմանովների կամ Աբդուլ Համիդի, այլև Լենկ-Թեմուրի ժամանակ, որը չէր թույլատրում իր հորդաներին անել ինչ խելքներին փչի: Ամփոփելով իր միտքը, նա շեշտում էր, որ Մեսրոպը և նրա կողմնակիցները պարզապես հարստանում են գյուղացիների հաշվին, և եթե կառավարությունը վճռական միջոցների չդիմի, ապա «հասարակայնությունը վճռել է ընդու-***

[1] Նույն տեղում, ֆ. 198, ց. 1, գ. 17, թ. 6:

[2] Նույն տեղում, գ. 17, թ. 6:

նել մահմեդականություն և դառնալ Թուրքիայի հպատակներ, գոնե իրենց գոյությունը փրկելու համար, և լիազորել է դիմել թուրքական ներկայացուցչին»[1]:

Այդ նույն չարաբաստիկ Մեսրոպի անօրինականությունների մասին է տեղեկացնում գեներալ Սիլիկյանը Զինվորական նախարարին ուղարկված 1918 թ. օգոստոսի 31-ի զեկուցագրում, հայտնելով, որ Ներքին Ախտայից օգոստոսի 29-ին պատժիչ ջոկատ էր ուղարկվել Ալափարս գյուղը, որի բնակիչները հրաժարվել էին ենթարկվել խմբապետ Մեսրոպի հեծելակի կողմից իրենց պարտադրված կանոններին՝ հրացանաձգության մեջ մտնելով նրանց հետ, ընդ որում գյուղացիներից սպանվել է 2 հոգի և վիրավորվել մեկը, հրաժարվել են տալ հրահրիչներին և դասալիքներին, որի հետևանքով 10 հոգի ձերբակալվել են և տարվել Ն. Ախտայի բանտ[2]:

Բռնագրավումները առավել վատ անդրադարձ ունեցան այն շրջանների վրա, որոնք մահմեդական ուժեղ հարևանություն ունեին և ճանապարհների խաչմերուկի վրա էին, գումարած դրան գաղթականության և այլ խնդիրներ: 1918 թ. օգոստոսի 2-ի ՀՀ կառավարության պարենավորման բաժնի կառավարիչը ՆԳ և Զինվորական գործերի նախարարներին ուղղված բողոքագրում ընդգծում էր, որ զորամասերը ինքնակամ բռնագրավում են ցորենը գյուղական բնակավայրերում, և չնայած իրենց պահանջներին և բողոքներին, բռնագրավումները ոչ միայն չեն դադարել, այլև ընդունել են սպառնալից չափեր: Պարենային բաժնի կառավարիչը խնդրում էր կարգադրություններ անել բոլոր զորամասերին՝ դադարեցնելու բռնագրավումները, նշելով, որ հակառակ պարագայում պարենային բաժինը հարկադրված կլինի դադարեցնել հացի մատակարարումը զորամասերին, քանզի նաև իրենք այլևս ի վիճակի չեն լինի շարունակել իրենց աշխատանքը[3]: Կապված զինվորականների կողմից խաղաղ բնակչության նկատմամբ ինքնակամ գործողությունների, անկարգությունների և նրանց ունեցվածքի (անասնակեր, հավ, ուտելիք և այլն) բռնագրավումների, զանազան զորաջոկատ-

[1] Նույն տեղում, ֆ. 404, ց. 1, գ. 17, թ. 9-10:
[2] Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 102, թ. 33:
[3] Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 101, թ. 1:

ների կողմից ապօրինի գործողությունների հետ, ՀՀ ՆԳ նախարարը 1918 թ. օգոստոսի 17-ին ՀՀ Զինվորական նախարարին հասցեագրված դիմումագրում խնդրում էր վերջինից իրեն չմերժել անհապաղ կարգադրություններ անել ապագայում զորամասերի կողմից նման ինքնակամ գործողությունները, և խաղաղ բնակչության նկատմամբ բռնությունները դադարեցնելու ուղղությամբ և այդ մասին իրեն տեղյակ պահել: Պատասխան հեռագրում Զինվորական նախարարի անունից Գլխավոր շտաբի պետը հավաստիացնում էր, որ արդեն արվել են կարգադրություններ մեղավորներին պատասխանատվության ենթարկելու մասին, ինչպես նաև ձեռնարկվել են համապատասխան նախազգուշական միջոցառումներ[1]:

Հացի խնդիրը շատ կարևոր էր, և այդ հանգամանքից ելնելով կառավարությունը հայտարարեց դրա նկատմամբ մենաշնորհային իրավունքի մասին, որից ելնելով էլ խնդիր դրվեց կարգավորել այդ խնդրի զորամասերին վերաբերող խնդիրները՝ կանխելու համար արտառոց երևույթները բնակչության նկատմամբ, և մասնավորապես գյուղի: Գեներալ-մայոր Դոլուխանյանը (Դոլուխանովը) Հայկական դիվիզիայի գծով իր հրամանում (№ 23, ¢ 38) ելնելով ՀՀ կառավարության հացի նկատմամբ մենաշնորհային իրավունքից, հայտարարեց այն մասին, որ ոչ մի զորամաս իրավունք չունի ցորենի գնումներ կատարելու ՀՀ սահմաններում, սպառնալով, որ հակառակ դեպքում գնված ցորենը կբռնագրավվի[2]: Զինվորականները օգտագործելով իրենց դիրքը, հաճախ պարենային խնդիրները լուծում էին բռնարարքների միջոցով, և բնակչությունը ահռելի թվով բողոքներ էր հղում ՆԳ և Զինվորական նախարարությունների ղեկավար մարմիններին: Այդպիսի բողոքների հեղինակներ էին դառնում նաև իրենք՝ զինվորականները: Հետաքրքիր է այս առումով Հրետանային վարչության պետ գեներալ-մայոր Գամազովի 1918 թ. հոկտեմբերի 17-ի զեկուցագիրը՝ ուղղված Զինվորական նախարարին, որն էլ իր հերթին ուղարկել է ՆԳ նախարարին, որում ընդգծում էր, որ Բաշ-Ապարանում իր կողմից Հայկական հրետանային բրիգադի 4-րդ մարտկոցի զննման ժամանակ, այդ մարտկոցի հրամա-

[1] Նույն տեղում, գ. 15, թ. 90:

[2] Նույն տեղում, գ. 102, թ. 56-57:

նատար կապիտան Խոդանովսկին իրեն բողոքագիր է ներկայացրել բռնագրավումի գծով զորաջոկատի պետ ոմն Արսեն-աղայի հասցեին, որ վերջինս մարտկոցի տնտեսական գծով չինովնիկներին ստիպում է ընթացիկ օգտագործման և ձմռան համար որպես պահուստ գնել մթերքներ (կարտոֆիլ, կաղամբ), ինչպես նաև անասնակեր ձիերի համար և այլն: Այս կապակցությամբ ՆԳ նախարարը ընդգծում էր, որ ինքն այն ուղարկում է Զինվորական նախարարին բանաձևի համար՝ խնդրելով անել հարկ եղած կարգադրությունները, քանի որ Արսեն-աղայի գործողությունների վերաբերյալ առաջին անգամ չէ, որ ստացվում են բողոքներ բնակչության կողմից, որը բացահայտվել է գնդապետ Ալ. Պ. Բեյ-Մամիկոնյանի կողմից անցկացված հետաքննությամբ[1]: Այդ հանգամանքի հաշվառումից էլ ելնելով, ՀՀ ՆԳ նախարարը 1918 թ. հոկտեմբերի 31-ին անդրադառնալով իր գրագրությանը՝ ուղղված Հայաստանի զորքերի զինվորական շտաբի պետին, հաղորդում էր, որ համաձայն կառավարության ընդհանուր որոշման, բնակչությունից պարենամթերքների բռնագրավումը պետք է իրականացվի միայն համաձայն պարենային բաժնի կարգադրության, և առանձին զորամասերին այդպիսի իրավունք չի տրված, քանզի պարենով նրանք պետք է մատակարարվեն անմիջապես համբարակապետության կողմից: Իսկ ինչ վերաբերում է գրագրության մեջ հիշված Արսեն աղայի չարաշահումներին բռնագրավման խնդրում, ավելացնում էր ՆԳ նախարարը, եթե դրանք համապատասխանում են իրականությանը, ապա պետք է նրան ենթարկել օրինական պատասխանատվության դատարանի միջոցով կամ կարգապահական կարգով[2]:

Այդուհանդերձ, որոշ տեղերում վճռական քայլեր ձեռնարկվեցին զորամասերի կողմից բռնագրավումները կարգավորելու խնդրում: Գաղտնիք չէ, որ հայկական զորամասերի մեջ լավագույններից մեկը,

---

[1] Նույն տեղում, թ. 83: ՀՀ վարչապետ Ալ. Խատիսյանի և Զինվորական նախարար Հ. Հախվերդյանի 1919 թ. փետրվարի 18-ի հրամանով Զինվորական նախարարությանը կից հանձնարարությունների գծով գեներալի պաշտոնակատար ***Ալեքսանդր Բեյ-Մամիկոնյանը***, որը 1918 թ. ապրիլի 6-ին հաստատվել էր այդ պաշտոնում, մարտական ծառայությունների համար կրկին ամրագրվում էր նույ աստիճանակարգում, հիմք ընդունելով նաև Զինվորական գերատեսչության գծով 1917 թ. N 296 հրամանագիրը. Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 200, ց. 1, գ. 1, թ. 55ա-55բ:

[2] Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 102, թ. 82:

որի մասին նույնիսկ խորհրդային զորահրամանատարներն են ընդգծել, դա Դրոյի կողմից գլխավորվող զորաջոկատներն են եղել: Վերոհիշյալ խնդրում ևս այն բացառություն չկազմեց: Հետաքրքիր է այս առումով Դիլիջան-Ղարաքիլիսայի զինվորական օկրուգի պետ Դրոյի 1918 թ. նոյեմբերի 26-ի հրամանը. «Ի նկատի ունենալով Դիլիջանի և մասնավորապես Ղարաքիլիսայի գավառների գյուղական բնակչության ծանր տնտեսական դրությունը, մթերքների, անասունի և անասնակերի բռնագրավումի համակարգը կարգավորելու համար հրամայում եմ բոլոր զորամասերին միջոցներ ձեռնարկել, որպեսզի առանց գավառային և տեղամասային կոմիսարների թույլտվության և գյուղական կոմիսարների գիտության բնակչությունից ոչինչ չբռնագրավվի: Ռեկվիզիցիան պետք է իրականացվի զեմստվոյի կամ վարչակազմի և գյուղական հասարակության ներկայացուցչի ներկայությամբ: Փողերը պետք է վճարվեն տեղում՝ առանց հապաղման»[1]: Միաժամանակ Դրոն քաղաքացիական իշխանություններից խնդրում էր աջակցություն ցույց տալ զորամասերին իրենց վրա դրված պարտականությունների կատարման տեսանկյունից:

ՀՀ Տարածքի Վարչակազմի և միլիցիայի կոմիսարին ուղղված իր զեկուցագրում Էջմիածնի գավառային կոմիսարը 1919 թ. մարտի 13-ին գրում էր, որ գավառում բառիս ամենալայն իմաստով սով է, 3-րդ և 4-րդ տեղամասերի բնակիչները սնվում են լեշով և խոտով, պոկելով ցանքի կանաչը, գումարած դրան՝ տիֆի վարակը, որը մեծ զոհեր էր խլում, գտնելով, որ կարգ ու կանոն չկա, սպաները ինքնակամ վերցնում են բնակիչներից անասունը՝ առանց տեղական իշխանության թույլտվության[2]: 1919 թ. հոկտեմբերի 29-ին ՆԳ նախարարության վարչակազմի ու միլիցիայի բաժնի պետը շրջաբերական է հղում գավառային բոլոր կոմիսարներին. «Դեպքերի մասին բոլոր գավառային կոմիսարների զեկույցից երևում է, որ կողոպուտներն ու ավազակությունները գավառներում կրում են համաճարակային բնույթ: Դրա համար առաջարկում են կիրառել ամենավճռական միջոցները՝ գավառներում իրական հանգստություն և օրինական կարգ ու կանոնի հաս-

[1] Նույն տեղում, թ. 89:

[2] Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 135, թ. 15:

տատման, ինչպես նաև ձեռնարկել բոլոր միջոցները ավազակության և կողոպուտի մեջ մեղավոր անձանց ձերբակալման համար»[1]: Բազմաթիվ բողոքներ էին ստացվում, որոնցում դժգոհություններ էին արտահայտվում մասնավորապես գավառային իշխանությունների և միլիցիայի հասցեին: Այս առումով շատ բնութագրական է Քարվանսարայի զեմստվոյի վարչության նախագահի դիմումագիրը ՆԳ նախարարին, որում ասվում էր հետևյալը. «Ամեն օր գյուղացիները մեզ են դիմում բողոքներով՝ հասարակական անվտանգության նկատմամբ հսկողության բացարձակ բացակայության կապակցությամբ, բացահայտ կողոպուտների առիթով, որոնք կատարվում են այն խումբ անձանց միջոցով, որոնց ազգանունները գյուղացիներին լավ հայտնի են: Թալանը գավառում կրում է զանգվածային բնույթ, գյուղացիների ընկճվածությունը հասել է աներևակայելի չափերի: Կան անձինք, որոնք ունեին հինգ-վեց գլուխ եզ, իսկ հիմա չունեն ոչինչ: Թալանը մեր գավառում ընթանում է կազմակերպված: Այդ գործով զբաղված են մի քանի կազմակերպված մեծ խմբեր, որոնք թշնամություն են անում մեկը մյուսի դեմ և որոնցից յուրաքանչյուրը սարսափի մեջ է պահում գավառի բնակչությանը: Վստահություն չկա և իշխանությունների նկատմամբ: Իշխանությունները չեն պաշտպանում աշխատավոր գյուղացիության շահերը: Նրանք հովանավորում են թալանչիներին: Եվ սպանվելու սարսափը մարդկանց ստիպում է լռել: Գյուղացիները մեզ հարց են տալիս. ի՞նչ է մտածում այս կապակցությամբ կառավարությունը: Մտադի՞ր է արդյոք նա բացահայտ կերպով կանգնել աշխատավոր գյուղացու կողմը: Ասում են, հին ռեժիմի օրոք երեք դաշնակցական ահ ու սարսափի մեջ էին պահում և՛ գյուղական վարչակազմը, և՛ վնասակար տարրերին: Այժմ ողջ իշխանությունը ժողովրդի կողմից հանձնված է իրենց ձեռքը: Եվ մի՞թե նրա համար, որպեսզի նրանք հովանավորեն ավազակությունները: Այդ կարծիքը իր հիմքում իրական հող ունի: Չափազանց սառնորեն դիտելով իրերի վիճակը, մենք պետք է ընդունենք, որ դրությունը բացարձակորեն ծանր է»[2]:

[1] Նույն տեղում, գ. 299, թ. 30:

[2] Տե՛ս **Ավագյան Ռ.,** Հանցավորությունը Հայաստանի Առաջին Հանրապետությունում (1918-1920 թթ.), Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ, 1995, էջ 47-49: Տե՛ս **նույնի** Հանցավորությունը Հայաստանում, Եր., «Նոյյան տապան», 1997, էջ 24-25:

1918 թ. դեկտեմբերի 24-ին Բաքվում Դաշնային զորքերի հրամանատարը ՀՀ կառավարությանը ուղղված հեռագրում հայտնում էր, որ իրենց հայտնի տեղեկություններով 6-րդ բանակային գունդը, որի հրամանատարը գնդապետ Շաթիրյանն է, որը այդ պահին Ելիզավետպոլի նահանգի Միխայլովկա գյուղում էր, մշտապես ստիպում է գյուղի բնակիչներին ստիպողական կերպով գնդին տալ հաց և սննդամթերք ոչ համազոր և արդարացի գնով, գյուղացիներին չթողնելով սերմացվի համար անհրաժեշտ ցորենը: Հեռագրում ավում էր, որ այդ կապակցությամբ իրենք դիմել են գնդապետ Շաթիրյանին՝ պահանջով անհապաղ դադարեցնել այդ կազմակերպված կողոպուտները և զորքը մի կողմ տանել, որ ինքն իր կողմից պատասխանատվության է ենթարկվելու[1]:

Անշուշտ, հետաքրքիր է ասել, որ փորձեր արվում էին իմաստավորելու այդ ժամանակաշրջանի խնդիրները, ուրվագծվում էին քայլեր այդ դժվարություններից երկիրը դուրս բերելու համար: ՆԳ նախարարը ելույթ ունենալով Նախարարների խորհրդի 1919 թ. փետրվարի 11-ի նիստում, փորձելով վերհանել ներքին դժվարությունների իրական պատճառները և արմատները, հետևյալն է արձանագրում. «ներկա անկարգությունները ժամանակավոր բնույթ են կրում և անցողական են: Դրանք գլխավորապես պայմանավորվում են սովով: Բնակչության մի մասը հանգիստ կերպով մեռնում է, իսկ մյուս ավելի անհանգիստ մասը անկարգություն է անում: Վերջինս խոշոր չափերի է հասնում բնականաբար գաղթականների մոտ: Գլխավորապես սովով է պայմանավորվում նաև զինվորների անկարգությունը: Այստեղ ամենից առաջ պիտի հիշել զանազան խմբերին: Ես հրահանգիլ իմ դրանց ցրիլ»[2]: Իսկ ամենավատթար վիճակը ստեղծվել էր Զանգիբասարի շրջանում, որը պարզապես ավազակային խմբերի մրցատեղի էր, իսկ մարդկանց մոտ ամրապնդվել էր անպատժելիության զգացումը: Իսկ այդ ամենին Հայաստանի ՆԳ նախարարությունը ռեալ հակադրելու ոչինչ չուներ: Ինչպես վկայակոչում է ՆԳ նախարարի օգնականը, միլիցիոներների թիվը թղթի վրա հասնում էր 5000-ի, իսկ իրականում այդ թվի կեսն էլ չկար:

[1] Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 39, թ. 15:
[2] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 198, ց. 1, գ. 15, թ. 135:

Դա բացատրվում էր նրանով, որ պետության տկարության, ֆինանսական անկարողության հետևանքով շատերը պարզապես չէին էլ ցանկանում միլիցիոներ դառնալ, աշխատավարձը մինչև 1920 թ. ապրիլի 1-ը կազմում էր ընդամենը 2500 ռուբլի, իսկ դրանից հետո էլ՝ 5000 ռուբլի: Միլիցիոներն իրեն ապահով չէր զգում, իսկ առավել ակտիվները զբաղվում էին ալան-թալանով, աջակցում և հանցակից էին գողերին[1]: Բացի այն հանգամանքից, որ պետությունը ի վիճակի չէր լավ զինել և ֆինանսավորել միլիցիային, կար ՆԳՆ աշխատանքին խանգարող ևս մի կարևոր հանգամանք: ՆԳ նախարարության մարմինների աշխատանքին՝ երկրում կարգ ու կանոնի հաստատմանը, էականորեն խոչընդոտում էր նաև այն հատուկ լիազորների համակարգը, որոնք միջամտում էին իրենց չվերաբերող գործերի մեջ, զբաղվում էին մարդկանց բանտարկության և ազատ արձակման գործերի ընթացքին, ինչը բարոյալքում էր միլիցիայի համակարգը, վարկաբեկում միլիցիոների բարոյական դիմագիծը: Եվս մեկ գործոն զգալի չափով խոչընդոտում էր միլիցիայի բնականոն աշխատանքին. նշված ժամանակաշրջանում ՆԳ նախարարությունը հաճախ անհիմն կերպով կադրային համալրումներ էր ստանում՝ ելակետ ունենալով կուսակցական պատկանելությունը: Սա վտանգավոր և անհեռատես մոտեցում էր խնդրին: Հաջորդ պատճառը, որը խոչընդոտում էր երկրում ներքին կարգ ու կանոնի հաստատմանը, դա երկրով մեկ սփռված «խմբերի» առկայությունն էր, որոնք ոչ մի իշխանություն չէին ճանաչում և օգտվում էին ամենաթողությունից, իսկ դա վերջին հաշվով հայկական պետականության թուլության, անկամության կարևորագույն պատճառներից էր: Դա ցայտուն երևում է մասնավորապես Արդարադատության և ՆԳ նախարարությունների բազմաթիվ պաշտոնագրերից, որոնցում պահանջվում էր «միջոցներ ձեռք առնել նրանց կողմից ոչ օրինական գործողությունների չթույլատրության և դրանցից յուրաքանչյուրի դեպքում քրեական գործի հարուցման մասին», որոնք զբաղվում էին «ձիերի, ֆուրաժի և սննդեղենի անհարկի բռնագրավումներով»[2]:

[1] Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 287, թ. 5:

[2] Նույն տեղում, գ. 504, թ. 4-5:

Ե՛վ 1918, և՛ 1919, և՛ 1920 թթ. մշտապես օրակարգի մեջ էր գտնվում «խմբերի» կողմից դրսևորվող ինքնակամ, ավազակաբարո գործողությունների հիմնահարցը, որը հնարավորություն կտար ուղիներ որոնելու և արդյունավետ միջոցներ գտնելու՝ ստեղծված անարխիկ վիճակին վերջ դնելու, և զինվորականների կողմից դրսևորվող պաշտոնական չարաշահումների դեմն առնելու համար: ՆԳ նախարարությունը հաճախակի հանդես էր գալիս այդ կնճռոտ խնդրի կարգավորման և լուծման նախաձեռնողի դերում: 1920 թ. մարտի 22-ին Նախարարների խորհուրդը լսում է ՆԳ նախարարի զեկուցումը զինվորական մասերի պաշտոնյաների ապօրինի գործողությունների մասին և առաջարկը՝ նշանակել հատուկ հանձնաժողով այդ գործողությունները քննելու համար: Քննարկելով հարցը, Նախարարների խորհուրդը հավանություն է տալիս ներկայացված զեկուցագրին և հանձնարարում կազմել մի հանձնաժողով ՆԳ, Զինվորական և Արդարադատության նախարարությունների ներկայացուցիչներից՝ այդ բոլոր ապօրինի գործողությունները քննելու համար[1]: Այն, որ զանազան «մաուզերիստական խմբերը», անկանոն զինվորական մասերը իրենցից չարիք էին ներկայացնում և իրենց գոյությամբ իսկ խրախուսում էին բոլոր տեսակի անպատասխանատու, ավազակաբարո խմբերի սանձարձակ գործողությունները՝ նպաստելով այնպիսի արատավոր երևույթների տարածմանը, ինչպիսիք էին դասալքությունը, կաշառակերությունը, գողությունները և պաշտոնական ու քրեական բնույթի զանազան զանցանքներն և հանցագործությունները, անհաստատ վիճակի մեջ դնելով ռազմաքաղաքական առումով առանց այն էլ ծանր կացության մեջ գտնվող երկրի ներքաղաքական կյանքը: Իսկ նրանք, ովքեր կփորձեին կամ նույնիսկ կհամարձակվեին իրենց իսկ վստահված տեղամասերում կարգ ու կանոն հաստատել, հետևել օրինականության պահպանմանը, խմբերի կողմից դիմադրության էին հանդիպում, որոնք հաճախակի ավարտվում էին արյունալի բախումներով: Կարսի մարզում անիշխանության մասին է վկայում «Սոցիալիստ-հեղափոխական» թերթը 1919 թ. վերջերին այդ կապակցությամբ գրում էր, որ այն օրից, երբ Կարսի նահանգում զանազան խարդավանքների պատճառով վերացվեցին

[1] Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 146, թ. 49:

զինվորական դրությունը ու քաղաքացիական վարչակարգը, նահանգի տերն ու տնօրենը դարձան, այսպես կոչված «մաուզերիստները»՝ կենտրոնատեղի ընտրելով և ամրանալով «Սերբիա» հյուրանոցում, սկսեցին իրենց «արդյունավետ ու բովանդակալից գործունեությունը»[1]: Այնուհետև բառացիորեն ընդգծվում էր. ***«…այն ժամանակ, երբ որ մերկ ու սոված զորքը Կաղզվան-Կարաուրգան-Մերդենենկ-Արդահան ֆրոնտների սառը սարալանջերում գերմարդկային ճիգեր է թափում իր հայրենիքի պատվի ու պրեստիժի համար, նույն ժամանակ, նույն զօրքերից փախած ու հայ ժողովրդի արյամբ սնված այդ հերօսները Կարսում նստած՝ իրենց քեֆերով ականջ են խլացնում»***[2]: Քաղաքացիական իշխանությունները, այդ թվում և միլիցիան փորձում էին զսպել «մաուզերիստական» խմբերի կամայականությունները. այդ նույն քաղաքի կոմիսար Վարդանեսյանը «…հանուն արդարության և հայկական կառավարության պրեստիժի գործի անցավ ու իր կյանքը վտանգի ենթարկելով՝ բանտարկել տվեց նրանց մեծերից երկուսին»: Սակայն վերջինս չկարողացավ նպատակին հասնել՝ վերջնականապես պատժել այդ հանցագործ տարրերին, որոնք հակահարձակման են անցնում, և հոկտեմբերի 7-ին, քաղաքի Ալեքսանդրյան փողոցի ամենաբանուկ տեղում, օրը ցերեկով, բոլորի աչքի առաջ, ցինիկաբար, արհամարհելով օրինական իշխանություններին՝ ՆԳՆ-ին ու միլիցիային, օրը ցերեկով, հարյուրավոր հասարակության առաջ, «նամարդորեն»՝ մաուզերի 10 գնդակով սպանում են կոմիսար Վարդանեսյանին իր պարտքի «գիտակցության» դիրքերում: Սպանողներից ոչ մեկը չի բանտարկվում, այլ միայն նա, ով ստորագրել ու հաստատել էր սույն մահապատիժը[3]: Այս ամենը վկայում էր իշխանությունների և մասնավորապես պետական անվտանգության համակարգի ներքին թուլության, միլիցիայում ու ՆԳ մարմիններում իշխող տխրահռչակ բարքերի մասին, չնայած այս գործին, դատելով փաստերից, միջամտել է նաև ՆԳ նախարարը, և Կարսի նահանգապետը: Սակայն ապարդյուն: Ինչպես նշում էր Կարսի նահանգապետը, մարդկանց այդ հան-

[1] Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 300, թ. 109-110:
[2] Նույն տեղում, **«Սոցիալիստ-հեղափոխական»,** 29. 10. 1919, №30:
[3] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 201, ց. 1, գ. 300, թ. 110:

ցագործ մասը սպառազինված լինելով լավագույն զենքերով, նահանգը դարձրել էին սարսափելի ահաբեկման օբյեկտ, որի դեմ վատ զինված և հոգեբանորեն, բարոյապես և տնտեսապես թույլ միլիցիան և ՆԳՆ մարմինները պարզապես ոչինչ չէին կարող անել, և պատրաստ չէին հակազդելու այդ խմբերի քայքայիչ ու անպատախանատու գործողություններին: Ինչպես նշվում է արևմտահայ գաղթականության ներկայացուցիչների 1919 թ. ապրիլի 25-ի բողոքագրում՝ ուղղված պառլամենտի սոցիալ-դեմոկրատական խմբակցությանը, ***«ոստիկանությունը դժբախտաբար չի գտնվեր իր կոչման բարձրության վրա և շատ անգամ ինքն ևս նույն անարխիան սաստկացնելու դերին մեջ կը գտնվի»***[1]: Բողոքագրում արձանագրվում էր պետական ապարատի սանձարձակ կամայականությունների ու երկրում տիրող ոստիկանական ռեժիմի, մայրաքաղաքում տարածված գողությունների և ավազակությունների, անիշխանական վիճակի մասին: Նման իրավիճակից դժգոհում էին Հայաստանի բոլոր գավառամասերում: Կարսի քաղաքացիական նահանգապետը ՆԳ նախարարին ուղղված իր 1919 թ. սեպտեմբերի 23-ի դիմումագրում դժգոհում էր, որ գաղափարական և գործին նվիրված աշխատողներ չկան, ավելացնելով, որ բոլոր պատկերացումները պետականության և հայրենասիրության մասին պտտվում են նյութական բնույթի հասկացությունների և ստացվող ռոճիկի ու նյութականի, հարստանալու շուրջ, գումարած դրան՝ մարզային բանտը իր 102 կալանավորներով և 65 միլիցիոներներով: Իր այս գրության մեջ նահանգապետը ՆԳ նախարարությունից խնդրում էր այս ամենի վրա բևեռել Նախարարների խորհրդի ուշադրությունը[2]:

Ամենը չէ, սակայն, որ հաջողվում էր. շատ բան հաճախ ավելի վատ էր, և այդ անմխիթարական վիճակից ելքը անհնարին էր թվում. Դրությունն այդ օրերին հատկապես սրված էր մայրաքաղաքում՝ Երևանում, հանրային անդորրը վրդովված էր, օրինականությունը ոտնահարված, ոստիկանությունն էլ անգամ հուսահատ ճիգեր չէր կարողանում գործադրել, հաճախ էլ պարզապես չէր կարողանում ուղիներ որոնել խախտված օրինականությունը վերականգնելու համար, ինչը

[1] Նույն տեղում, ֆ. 404, ց. 1, գ. 18, թ. 1:

[2] Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 517, մաս III, թ. 265:

խորացնում էր ընդհանուր տագնապի զգացողությունը և անորոշությունը մտքերում և գաղափարներում, ինչի մասին չափազանց ցայտունորեն նկատում է «Աշխատանք» օրաթերթը 1919 թ. սկզբին. ***«Անոթիներն ու սովեալները չէ, որ կը խռովեն հանրային անդորրութիւնը: Դժբախտաբար անոնք, գառներու նման վիզներնին ծռած ճաղարանի ապակու փեղկերու առջև և կամ փուռին դիմաց՝ մահվան կսպասեն արտակարգ անդորրութեամբ: Չարիքը կուշտերէն, չափազանց շատ յղփացածներէն կուգայ, չարագործութիւնը արհեստի վերածող և գողութեան ու յափշտակութեան մոլուցքով բռնված ստահակներէն կուգա: Ու դժվար չէ բնավ կառավարութեան համար այսքան պզտիկ քաղաքի մէջ, ուր յուրաքանչյուր ժամին բոլոր բնակիչները քիթ-քթի կուգան, մեկ քանի օրվա ընթացքին կտրել բոլոր շայկաներու արմատը: Կառավարութիւնը պարտավոր է ընել այդ բանը, զսպել միլիցիոներական շահատակութիւնները, դատի ենթարկել պատասխանատու կոմիսարները և միլիցիապետերը, հեռացնել պարտազանցները և դիմել բոլոր միջոցներու հասարակաց կարգ ու կանոնին համար: Ամէն առաջ հանրային անդորութիւնն է հարկավոր»***[1]: Իսկը և իսկը այսօրվան ուղղված դիպուկ հարցադրումներ, որոնք էլ ավելի մեծ արժեք են հաղորդում ներկայացված դիտողություններին, ինչը կարևոր էր գործերի առկա վիճակը շտկելու, խոտորումները և սայթաքումները հաղթահարելու տեսանկյունից: Իսկ «Հայաստանի աշխատավոր» թերթը 1919 թ. հունիսի 26-ի խմբագրականում շարունակում է վերն ասվածը և հիմնավորում այդ կապակցությամբ մի արտակարգ քննիչ հանձնաժողովի և արտակարգ դատարանի հիմնման անհրաժեշտությունը, որոնք իրավունք և հնարավորություն ունենան արագ և արդար դատաստանով անդամահատել նեխած անդամները, հեռացնել և պատժել հասարակական ցեցերին և հանգստացնել հանրային խռովված խիղճը. ***«...երեկվայ կիսաքաղց գործակատարը կամ ուսուցիչը այսօր հարիւր հազարանոց փներ, գործարան և այգիներ է գնում, ձիեր ու կառքեր պահում, հանապազօրեայ հազարարժէք խրախճանքներ սարքում, իսկ ի՞նչ միջոցնե-***

[1] Տե՛ս **«Աշխատանք»** (Երևան), 26 ապրիլի, 1919, N 12: տե՛ս նաև **ՀԱԱ**, ֆ. 201, ց. 2, գ. 607, թ. 1:

րով, երբ նա առաջ ամսեկան 40-50 ռ. միայն սրտանալով իր չոր գլուխն անգամ պահել չէր կարողանում. որովհետև ոչ ոք չի պատժւում կամ երբեմն միայն ծու գողացողին կախում են, իսկ ծի գողացողին պատիւ ու դիրք տալիս-ուսրի հասարակութիւնն ու ժողովուրդը լքւում են, կորցնում ամէն հաւատ դէպի արդարութիւնն ու իրաւունքը, և այս յուսահատ անտարբերութեամբ քարշ տալիս իրենց գոյութիւնը, իսկ պաշտօնեան աւելի սանձարձակ դառնում և յայտարարում. «ի՞նչ պարլամենտ կամ կառաւարութիւն, այդ բոլորը ես եմ, ինչ ուզեմ՝ կանեմ»[1]:

Միլիցիայում, ՆԳ մարմիններում, բանակային զորամասերում իշխող իրավիճակի պատկերն ավելի ամբողջական դարձնելու համար, հարկ է ՆԳՆ և միլիցիայի, բանակի գործունեության պատմության ևս մի էջի անդրադառնալ. 1920 թ. փետրվարի 20-ին, ՀՀ խորհրդարանի նիստում լսվում է Վ. Մինախորյանի հարցապնդումը ՆԳ նախարարին՝ կապված Երևանում և Դիլիջանում ձերբակալված մի քանի բոլշևիկների հետ, որոնք մեղադրվում էին հակապետական և հակակառավարական գործերին մասնակցության, օրինականության, կարգ ու կանոնի խախտման մեջ, պահանջելով ազատել դրանց, պատճառաբանելով, որ նրանց մեղսակցությունը ապացուցող փաստեր չկան: Պատասխան ելույթում ՆԳ նախարարը հակառակն է պնդում, ասելով, որ իրենք ժամանակին բոլշևիկներին ապաստան են տվել, սակայն ոչ նրա համար, որ վերջիններս այլ գործողությունների դիմեն, որ դեռ հուլիս ամսին՝ Բոյուք-Վեդիի կռիվների ժամանակ նրանք տարածել են մի թռուցիկ, որով կոչ են արել չգնալ կռվի, իսկ այնուհետև՝ տեղի են ունեցել մի շարք դեպքեր Սարիղամիշ-Ալեքսանդրապոլ երկաթուղագծի վրա և Ալեքսանդրապոլում: ՆԳ նախարարը տեղեկացնում էր, որ վերջին ժամանակներում Հայաստան եկող մեծամասնականները գալիս են փողի մեծ տոպրակներով՝ քարոզչության նպատակով, ինչը պետք է դիտել որպես հանցանք, որի պայմաններում ՆԳ նախարարությունը հարկադրված է միջոցներ ձեռք առնել բոլոր նրանց դեմ, ովքեր ակտիվ քայլեր են անում պետության անվտանգության և կառավարության դեմ[2]: Հան-

[1] Տե՛ս **«Հայաստանի աշխատավոր»** (Երևան), 26 յունիսի, 1919, N 81:

[2] Տե՛ս «**Ցառաջ»**,, Երևան, 25 փետրվարի, 1920, № 41:

րապետության համար աղետալի ժամանակաշրջանում, երբ համարյա հայկական բանակը անձնատուր էր եղել թուրքերի առաջ, և կնքվել էր ամոթալի զինադադար, 1920 թ. նոյեմբերի 8-ին անգամ ՆԳ նախարարը Երևանի Արտակարգ դատարանին ուղղված գրության մեջ ընդգծում էր, որ քաղաքական բնույթ կրող մի շարք անձինք, և առաջին հերթին որոշ պաշտոնյաներ, թիկունքը քայքայելու համար ենթակա են Արտակարգ դատարանի, քանի որ Ալեքսանդրապոլի անկման ժամանակ լքել են իրենց պաշտոնները, հեռացել են քաղաքից: ՆԳ նախարարը ավելացնում էր, որ դրանք ձերբակալված են կառավարության կողմից և պետք է դատվեն: Գրության վերջնամասում ասվում էր, որպեսզի նրանք երկար ժամանակ չզրկվեն իրենց ազատությունից առանց դատաքննության, ինքը խնդրում է շտապ կարգով նշանակել դատարանի կողմից երկու քննիչ՝ նրանց հարցաքննելու համար[1]: Այս հանգամանքը ևս վկայում է, որ ՆԳ մարմինները ձգտում էին լուծել կուտակված հիմնախնդիրները, այդ թվում փորձելով նաև կանխարգելիչ քայլեր ձեռնարկել՝ բոլշևիկյան ազդեցությունից պաշտպանվելու համար, որը օրինականության, կարգ ու կանոնի, անվտանգության ապահովման տեսանկյունից կարևոր էր: Մեկ այլ ցայտուն օրինակ ևս: Երևանի շրջանային դատախազ Մալխազյանը իր զեկուցագրում՝ հասցեագրված Արդարադատության նախարարությանը, գրում էր, որ ոստիկանական աշխատանքը շատ թերի կողմեր ունի, որովհետև «միլիցիայի կազմը պատահական է, նրա պաշտոնատարները կանգնած չեն իրենց կոչման բարձրության վրա»[2] և գալիս արդարացի եզրակացության, որ «ոչ մի հիշատակություն կուսակցական գործունեության մասին չպետք է առիթ ծառայի, որ մարդասպանության (ոչ քաղաքական) և հափշտակության համար դատապարտվածն ազատվի պատժից»[3]: Դատախազը մի կարևոր նկատառում էլ է արտահայտում, կապված այն հանգամանքի հետ, որ որոշ բանտարկյալներ, շահարկելով բանակում ծառայելու հարցը, այն օգտագործում էին պատժից ազատվելու համար.***«Բանտում պատիժը կրելու փոխանակ՝ բանակի շարքերում***

[1] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 201, ց. 1, գ. 517, մաս III, գ. 122, թ. 1:

[2] Նույն տեղում, ֆ. 198, ց. 1, գ. 56, թ. 3-4:

[3] Նույն տեղում, թ. 4:

ծառայելու ցանկությունը, որ հաճախ հայտնում են պատժապարտները, չի կարող հարգվել, քանի որ զորաբանակը հասարակության տականքների փեղը չէ: Եվ քրեական գոր-ծերով դատապարտվածների ամեն մի դիմումը պարլամենտին՝ ներում խնդրելու համար ոչ միայն անցանկալի է, այլ ուղղակի՝ անթույլատրելի»[1]: Միանգամայն արդարացի գնահատական, որ զուրկ չէ հիմքերից և փաստարկվածությունից: Առաջին Հանրապետության միլիցիայի, ՆԳՆ, բանակային համակարգը ստեղծվում էր երկունքի ծանր ցավերով և կրում իր վրա ճակատագրի այն հնարավոր բոլոր հարվածները, որոնք պատմության զարգացման անկասելի և անողոք ներքին տրամաբանությամբ պարտադրվում էին նրան, սակայն այդպես էլ չկարողանալով արդյունավետորեն հակազդել այսպես կոչված «մաուզերիստական», ինչպես նաև անկանոն զորամասերի սանձարձակություններին, որոնք ձգտում պետության ներսում պետություն դառնալ, ինչը չհաջողվեց, սակայն հայկական պետությունը զգալի չափով տկարացավ:

[1] Նույն տեղում:

ԳԼՈՒԽ 13.

ԴԱՍԱԼՔՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ 1918-1920 ԹԹ.

պ. գ. դ., պրոֆեսոր Վ. Հ. ՎԻՐԱԲՅԱՆ

Ինչպես ցույց է տալիս համաշխարհային պատմության հարուստ փորձը, դասալքությունը մշտապես եղել է բանակները և զորքերը քայքայող, դրանք ներքուստ ջլատող և անդամալուծող բացասական երևույթներից, որոնց դեմ բոլոր դարերում մղվել է անզիջում, հետևողական պայքար, որն ուղեկցվել է փոփոխական հաջողություններով՝ համարվելով ամեն մի կայացած և կայացման ձգտող պետության ներքին քաղաքականության հիմնախնդիրներից, որը ազգային-պետական անվտանգության ապահովման տեսանկյունից մեծ կարևորություն է ներկայացրել: Դասալքությունը եղել է հին աշխարհի բոլոր բանակներում՝ հռոմեական և հունական կայսրությունների փառապանծ լեգեոններում, Ալեքսանդր Մակեդոնացու, Հուլիոս Կեսարի և Տիգրան Մեծի զորքերում, փառավոր ավանդույթներ ունեցող ռուսական և գերմանական բանակներում, ինչպես նաև թուրքական բանակում[1]. այն դիտվել է որպես զինվորին բարոյալքող և հուսալքող լուրջ գործոն, հանդիսանալով ռազմական պարտությունների գլխավոր դրդապատճառներից, որի դեմ փորձ է արվել անզիջում պայքար մղել Հայաստանի Առաջին Հանրապետության տարիներին, որն ուղեկցվել է որոշ հաջողություններով և ցավալի սայթաքումներով: Առ այսօր չափազանց քիչ է գրվել այն մա-

[1] Ինչ վերաբերում է Թուրքիային, ըստ թուրքական բանակի գնդապետ Մեհմեդ Էմինի կողմից «***Ակշամ***» թերթում (1922 թ. սեպտեմբեր) հրապարակված պաշտոնական տվյալների. 1914 թ. վիճակով, թուրքական բանակ է զորակոչվել 2850000 մարդ, որից 1565000 մարդ արդեն պատերազմի ավարտամասում՝ զինադադարի կնքման պահին դասալքվել էր թուրքական բանակի շարքերից, մի մասն էլ անհայտ կորել. - Տե՛ս **Мустафа Кемалъ,** Путъ новой Турции, 1919-1927. Первые шаги националъно-освободителъного движения, М., Госуд. Изд-во Литиздат Н. К. И. Д, 1929, с. XXXI.

սին, թե Հայաստանի Առաջին Հանրապետությունը, նրա կառավարությունը, միլիցիան[1] և Ներքին Գործերի նախարարությունը ու վերջինիս բաղկացուցիչ մասը կազմող անհրաժեշտ ուժային ստորաբաժանումները ի՞նչ գործունեություն են ծավալել այդ դժվարին տարիներին Հայկական բանակում տեղ գտած մի այնպիսի արատավոր և քայքայիչ նշանակություն ունեցող երևույթի դեմ, ինչպիսին հանդիսացել է դասալքությունը, ինչով է ավարտվել իշխանությունների պայքարը դասալքության դեմ, ի՞նչ ձեռքբերումներ են եղել, ինչպիսի դժվարությունների առաջ են կանգնել ՆԳՆ և նրա կարևորագույն ստորաբաժանումներից մեկը՝ միլիցիան, որտե՞ղ են սայթաքել և ինչու՞ չեն կարողացել հիմնավորապես լուծել այդ չարաբաստիկ հիմնախնդիրը, բանակը էապես կազդուրել այդ չարիքից:

Դասալքությունը եղել է Առաջին Հանրապետության բանակի ամենակնճռոտ խնդիրներից մեկը, որը քարուքանդ էր անում բոլոր բանակային ռազմաքաղաքական կառույցները, էապես անուժ դարձնում դրանք և էապես ազդում զինվորների մարտունակության վրա: Այդ չարաբաստիկ երևույթը և այն արմատախիլ անելու անհրաժեշտությունը հստակ ներկայացված է «Ժողովուրդ» թերթում տպագրված Ն. Իշխանյանցի «Դասալքումները զորքերում» հոդվածում. «Մեր հայոց գնդերը կարծես հյուրանոցներ լինեն. այնտեղ ամեն մի զինվոր մտնում է, երբ ցանկություն ունի, և հեռանում է նմանապես, երբ կամենում է: Հայ զինվորը չունի հրացան, կմտնի յուր ցանկացած գունդը, մի քանի օրից հետո նա չկա, փախել է հրացանով: Գուցե ասենք, թե դասալիքների ընկերները սոված են, բայց այդ կարծիքն էլ սխալ է, ***փախչում են նրանք, որոնք ամենից հարուստն են, որոնց շտեմարանը լիքն է հացով՝ երեկ մի վաշտից փախան 10 զինվոր իրենց փամփուշտներով Վարմազիար և շրջակա գյուղերից***: Եվ վերջապես, մի քանի օր առաջ Թիֆլիսից եկած սպաների մի մասը կռվի դաշտից են փախել, չէ որ

[1] Առաջացել է լատիներեն **Militia** բառից, որը նշանակում է «զորք». XV դարից սկսած այդպես է կոչվել աշխարհազորը Եվրոպայի մի շարք երկրներում, ինչը հավաքվում էր պատերազմի ժամանակ: Ռուսաստանում XIX դարի սկզբին այդպես էր անվանվում Զեմստվոյական (այսինքն՝ քաղաքային ինքնավարության) զորքը, որը ներկայացվում էր հեծյալ զորքի ձևով. Կովկասում և Անդրկասպյան մարզում այն կազմվում էր բնակչության կողմից.- Տե՛ս **Военный энциклопедический словарь**, М., Воен. изд-во, 1986, с. 443:

նրանք էլ են դասալիքներ: Ես զարմանում եմ, թե ինչպես բարձր իշխանությունը սուս ու փուս այդպիսի սպաների է ընդունում: Եվ երբ այժմյան խաղաղ ժամերին մեր հայ զինվորը չի ուզում սովորել, չի ուզում լսել, և փախչում է գնդերից, ապա ինչ պետք է անի քննության ժամանակ, այն է՝ կռվի դաշտում: Պատասխանը պարզ է»[1]: Հենց այդ հանգամանքներն էլ պայմանավորեցին Հանրապետության թե՛ քաղաքացիական, և թե՛ զինվորական իշխանությունների չթուլացող ուշադրությունը դասալքության խնդրի նկատմամբ, և ձեռնարկված բոլոր քայլերը և գործողությունները՝ բանակի շարքերից արմատախիլ անելու ուղղությամբ: Այս դժվարին խնդրի լուծման նպատակադրումով էլ այդ հակասություններով և բարդություններով լի ժամանակաշրջանում հաճախակի ՆԳ և Զինվորական նախարարությունները համագործակցում էին իրար հետ, քանի որ ունեին համատեղ լուծման ենթակա հարցեր ու խնդիրներ, և դրանք վճռելու համար օգտագործվում էին նաև ՀՀ ՆԳՆ մարմինների ու միլիցիայի առկա հնարավորությունները ևս:

Դասալքությունը Առաջին Հանրապետության չլուծված և ցավոտ խնդիրներից էր, գուցեև ամենադժվարիններից, որը պետությունն ի վիճակի չեղավ հաղթահարել, և այս հիմնախնդրում ՆԳ մարմինների գործադրած ջանքերը ևս անհրաժեշտ և ակնկալվող արդյունավետությունը չունեցան, և նաև այն պատճառով, որ միլիցիայի աշխատակիցներն իրենք ևս մեծմասամբ տեղերում՝ գավառամասերում հովանավորում էին դասալիքներին, վերջիններիս թաքցնում իշխանություններից՝ տեղիք տալով կաշառքների և անհաշիվ զեղծարարությունների, ինչին նպաստում էր նաև այն հանգամանքը, որ ընդհանուր առմամբ, բազմաթիվ գործոնների «շնորհիվ» *(հոգեբանական-մարդկային բնույթի, իշխող տնտեսական փլուզման և սովի, այդ թվում կադրային, զինվորական իշխանությունների, ՆԳ մարմինների և խմբապետականության միջև գոյություն ունեցող հակադրվածության, և բազմաթիվ այլ պատճառների հետևանքով)* **«զօրահաւաքի մարմինները եւ դասալքութեան դէմ կռուող վարչութիւնները թոյլ էին: Դասալքութիւնը արմատացած ախտ մըն էր, որ Հայաստանի Հանրապետութիւնը ժառան-**

[1] Տե՛ս **«Ժողովուրդ»** (Երևան), 15 նոյեմբերի, 1918, № 32:

գած էր ցարական Ռուսաստանէն»[1]: Այդ տարիներին, անշուշտ, որոշ զինվորական-քաղաքական գործիչների, միլիցիայի և ՆԳՆ մարմինների կողմից հուսահատ փորձեր արվեցին խորանալու դասալքության իրական պատճառների մեջ, չբավարարվելով միայն վարչահրամայական եղանակներով լուծել այդ չարաբաստիկ հարցը:

Դասալիքներն ամենուր էին, և ամեն մի գավառ յուրովի էր լուծում իր առջև ծառացած խնդիրները. 1918 թ. հունիսի 27-ին Վաղարշապատի շրջանի զինվորական ոստիկանապետ և պարետ պոդպորուչիկ Տեր-Սարգսյանը ռազմական դրության հայտարարմամբ ընդունում է պարտադիր որոշում Վաղարշապատի ամբողջ շրջանի ազգաբնակչության համար՝ կարգադրելով խստիվ պահանջել 1) որ մարդիկ, որոնք հրացաններ ունեին, և ոչ մի պաշտոնական իրավունք չունեին դրանք կրելու, պարտավորվեն մինչև հունիսի 30-ը ներկայացնել իրեն, 2) խստիվ արգելել անվերջ հրացանաձգությունը, դավաճանական համարել փամփուշ վատնելը, խոստանալով պատժել մեղավորներին և հանդես գալ նաև հայտարարությամբ, 3) արգելել ոգելից խմիչքներ վաճառելը, 4) արգելել զինվորական շորեր ծախելը և գնելը՝ շինել, շալվար, կոշիկ և այլն, գտնելով, որ թե՛ ծախողը և թե՛ գնողը կենթարկվեն հավասար պատժի, 5) արգելել ռազմական մթերքներ վաճառել և գնել՝ հրացան, ատրճանակ, փամփուշտ և այլն, 6) այն դավաճան ծնողները, որոնք կթաքցնեն իրենց դասալիք որդիներին, կենթարկվեն զինվորական դաշտային դատարանի վճռին, իսկ չկատարողները ենթարկվելու էին 3 ամսվա բանտարկության կամ 3 հազար ռուբլու չափով տուգանքի վարչական կարգով, իսկ սույն որոշումն ուժի մեջ էր մտնում հայտարարման պահից, 7) խստիվ արգելել սադրիչ լուրեր տարածելը[2]:

Նոր Բայազետի գավառային կոմիսար Ամիրխանյանի 1918 թ. հուլիսի 3-ի գրության մեջ արձանագրվում էր, որ որ ոմն Կազաո, իրեն Դալի Ղազար անունով մեկը և Նժդեհի ջոկատը Ղրբուլաղ գյուղում սանձարձակություններ են անում և կողոպտում են բնակչությանը, կողոպտում դաշտերը և «սարայները»: Նշվում էր նաև գեներալ Նազար-

[1] **Սասունի Կ.,** Հայ-թրքական պատերազմը, «Հայրենիք», 1926, № 5 (41), էջ 79:
[2] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 216 (214), ց. 3, գ. 43, թ. 1: ֆ. 404, ց. 1, գ. 131, թ. 1:

բեկյանի «կոնվոյի» սանձարկությունների և կորպուսի շտաբի գումակի պետ կապիտան Մարտիրոսովի ենթակաների մասին, որոնք փչացնում էին ցանքատարածությունները, ծեծ ու ջարդ անելով: Ամիրխանյանը խնդրում էր շտապ միջոցներ ձեռնարկել, գտնելով, որ հակառակ դեպքում բնակչությունը կկանգնի արհեստական սովի առաջ[1]:

Դասալքության դեմ պայքարի դիտանկյունից դիտարժան է Զինվորական նախարարին և Առանձին հայկական ուղղված Հայկական 2-րդ հրաձգային դիվիզիայի պետ գեներալ-մայոր Մ. Սիլիկյանի և նրա շտաբի պետ Վեքիլովի 1918 թ. օգոստոսի 2-ի (N 3950) զեկույցը: Դրանում հայտնվում էր, որ ամեն օր զորամասերի բոլոր պետերից ստացվում են զեկույցներ այն մասին, որ դասալքությունը ընդունել է համատարած և նույնիսկ աղետալի բնույթ. այսպես, հուլիսի 20-ից մինչև օգոստոսի սկիզբը 7–րդ գնդում դասալքել են 650 զինվորից 450–ը, իսկ 7–րդ գնդում ավելի քան 100 հոգի, այդ թվում հայկական բրիգադում ևս դասալքում են զանգվածային չափերով, որ դասալքությունը աճի միտում ունի: Դասալքության հիմնական պատճառները համարվում էին. 1) ինքնակամ զորամասը լքելու անպատժելիությունը և որևիցե ձևով նրանց զորամասերը ետ վերադարձնելու միջոցների բացակայությունը: 2) զինվորների թերսնումը, որը դրսևորվում էր միանգամայն անբավարար սննդաքանակում՝ ընդամենը ½-ից ¾ ֆունտ հաց և շատ սահմանափակ միս, միանգամայն անբարար քանակությամբ միրգ, և ձավար, թեյի և շաքարի բացակայությունը, 3) բերքահավաքի ժամանակը և բանվորական ուժերի բացակայությունը գյուղում[2]: Սիլիկյանի և Վեքիլյանի կողմից դասալքության չարիքի դեմ պայքարի համար առաջարկվում էին հետևյալ միջոցները. 1) անհրաժեշտ էր համարվում կառավարության հրամանը, որպեսզի զորակոչային տարիքի բոլոր անձիք շատ կարճ ժամանակամիջոցում՝ գոնե 3-օրյա ժամկետում ներկայանան գավառային և տեղամասային կոմիսարներին բոլոր փաստաթղթերով հանդերձ, որպեսզի զորքերում ծառայությունը կրելու ենթակա անձիք անհապաղ ուղարկվեին մոտագույն զորամասերի պետերի տրամադրության տակ և զորացրվեին օրենքի համաձայն՝

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 201, ց. 1, գ. 15, թ. 24:

[2] Տե՛ս նույն տեղում, գ. 500, թ. 132-133:

տալով նրանց հատուկ վկայականներ, 2) Հայաստանի ողջ տարածքը բաժանել տեղամասերի, յուրաքանչյուր տեղամասում նշանակելով մեկ սպայի և մի քանի զինվորներից բաղկացած հրամկազմ, որոնց մի մասը տեղերում հավաքել ավելի ավագ տարիքի մարդկանցից, քան զորակոչիկները, նրանց վրա դնելով զորակոչիկներին հավաքելու գործը, 3) բոլոր խուսափողներին հանձնել ռազմական դատարանին՝ նրանց նկատմամբ օրենքի համաձայն կիրառելով պատժի առավելագույն չափը, 4) ամենաեռանդուն միջոցները ձեռնարկել զինվորների սնունդը բարելավելու համար, հատուկ ուշադրություն դարձնելով ձավար տալու վրա՝ ոչ պակաս քան 1 ½ ֆունտ հաց, ողջ սննդամթերքը հավասարաչափ բաշխելով թիկունքի և առաջապահ զորամասերի միջև, 5) իսկույնևեթ բաց թողնել պարենամթերքի նախապատրաստման գումարները, կարճագույն ժամկետում համալրել զորամասերի խանութները, 6) ծառայության մեջ գտնվող բոլոր զինվորների ընտանիքներին տալ նպաստ, այն հատկապես անհրաժեշտ համարելով Թուրքիային անցած շրջանների զինվորների նկատմամբ: Այս միջոցների ձեռնարկումը Սիլիկյանի և Վեքիլովի կողմից միանգամայն կարևորվում էին, ընդորում ընդգծվում էր, որ դրանց չընդունելը կարող է հանգեցնել հայկական փոքրիկ բանակի լրիվ քայքայմանը և հետագա ձևավորվածության աշխատանքը կարող է ոչ մի արդյունքի չհանգեցնել, որն իր հերթին կարող է ունենալ միանգամայն տխուր հետևանքներ երիտասարդ հանրապետության գոյության համար[1]:

ՀՀ ՆԳ նախարար Ա. Մանուկյանին ուղղված 1918 թ. օգոստոսի 3-ի դիմումագրում (№ 3946) զորքերի Երևանյան ջոկատի պետ գեներալ-մայոր Մ. Սիլիկյանը փորձում է բացահայտել այդ չարաբաստիկ երևույթն առաջ բերող պատճառները, ընդգծելով, որ Երևանյան զորաջոկատի հաջող ղեկավարման համար, որում ուժեղ տարածում է գտել դասալքությունը, անհրաժեշտ է, որպեսզի իշխանությունները տեղերում օժանդակեն այդ չարիքի դեմ մղվող պայքարում: Մ. Սիլիկյանը նշում էր, որ ինքը հանդես է եկել միջնորդությամբ՝ Զինվորական նախարարության միջոցով տեղերում՝ ամեն մի տեղամասում ստեղծելու հրամկազմ սպայի գլխավորությամբ, սակայն առանց տեղամասային

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 201, ց. 1, գ. 500, թ. 133-133 հակ.:

տեսուչներին այդ գործի մեջ ներգրավելու: Առավել կարևորվում է նշված գրության վերջնամասը, որում Սիլիկյանն ընդգծում էր, որ դասալքությունը գլխավորապես զարգանում է թերսնվածության, կոշիկի և հագուստի բացակայության հետևանքով: Այդ իսկ պատճառով վերջինս ՆԳ նախարարից խնդրում էր միջոցներ ձեռնարկել պարենամթերքների պահեստները լրացնելու համար, դասավորելով նաև կոշիկի վերանորոգման կետերը և դերձականոցները, բռնագրավելով առկա ողջ կաշվի նյութերը, ինչպես Երևանում, այնպես էլ հանրապետության ողջ տարածքում: Վերջապես, Մ. Սիլիկյանը գտնում էր, որ դասալքության դեմ պայքարի խնդիրներին կարելի է ծառայեցնել նաև այն, որ զինվորական ծառայության մեջ գտնվող զինվորների ընտանիքներին տրամադրվի նպաստ[1]: Իսկ 1918 թ. օգոստոսի 12-ին Մ. Սիլիկյանը ստանում է ՀՀ զորքերի գլխավոր հրամանատար Թ. Նազարբեկյանի օգոստոսի 10-ի հրամանը, որում կապված դասալքության սպառնացող չափերի հետ, խստագույնս կարգադրվում էր այդ չարիքի դեմ պայքարելու և դասալիքներին կարճագույն ժամկետներում հավաքելու նպատակով եռանդուն սպաների հրամանատարությամբ ստեղծել հատուկ հրամկազմեր՝ ամենաեռանդուն կերպով իրականացնելով դասալիքների ձերբակալումը, համառ ջանքեր գործադրելով, որ վերջիններիս հետ լինեն իրենց ամրացված զենքերը կամ վատագույն դեպքում՝ դրանք հայտնաբերվեն, գտնելով, որ հակառակ դեպքում այդ պլանների ձախողումը կհանգեցնի հայոց զորքի քայքայմանը և կործանմանը, դրանում բանակը վերջնական փլուզումից փրկելու միակ հնարավոր միջոցը, շատ դեպքերում սպաների վարքագծի մեջ տեսնելով զանգվածային դասալքության պատճառները[2]:

1918 թ. օգոստոսի 24-ին Նախարարների խորհուրդը լսում է դասալքության դեմ պայքարի մասին հարցը, ընդունված բանաձևում որոշում կայացնում Զինվորական նախարարի հաշվին բաց թողնել 10 հազար ռ.՝ կառավարության 6 միլիոնանոց ֆոնդից՝ դասալքության դեմ պայքարի նպատակով[3]: Հայկական զորքում դասալքության, կարգա-

[1] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 201, ց. 1, գ. 84, թ. 17:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 204, ց. 1, գ. 43, թ. 27-28:

[3] Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 484, թ. 17, ֆ. 204, ց. 1, գ. 216, թ. 4:

պահության հարցերը առաջնային էին և դրանց դեմ որոշակի պայքար մղվում էր: 1918 թ. օգոստոսի 24-ի Հայկական դիվիզիայի գծով հրամանագրում արձանագրվում էր խաղաղ բնակիչների նկատմամբ գործադրվող սանձարձակությունների, ամեն օր ստացվող բողոքների և արձանագրությունների մասին: Փաստվում էր, որ ոչ միայն առանձին զինվորների, այլև կրտսեր սպաների և խմբապետների կողմից գլխավորվող ամբողջ խմբերի կողմից անօրինականությունների մասին, որոնք ինքնակամ բնակիչներից խլում էին հացը, անասունը և այլ իրերը, խլելով դրամը, թանկարժեք ապրանքները, տնային ունեցվածքը, իսկ նրանց կամքը կատարողներից հրաժարվողներին ծեծում, վիրավորում և նույնիսկ գնդակահարում: Հայկական դիվիզիայի հրամանատարը շեշտված ընդգծում էր, որ ինքը չի կարող թույլ տալ նման ամոթանք, երբ զորքերը, որոնք պետք է պաշտպանեն ժողովրդին թշնամիներից, իրենք են վերածվում ժողովրդի թշնամիների, դժբախտ բնակիչներն իրենք են փորձում փրկվել իրենց զորքերի սանձարձակություններից և անօրինական բռնարարքներից, ***որ այդ պատճառով բնակիչները պատրաստ են փախչել Թուրքիա և ընդունել թուրքահպատակություն և մուսուլմանական կրոն, միայն թե ազատվեն պատերազմի կողոպտիչներից***: Միաժամանակ նշվում էր, որ չնայած պահպանության և մեղավորներին դատարանով պատասխանատվության ենթարկելու մասին տրվող հրամաններին, կողոպուտները և սպանությունները զորքերի կողմից շարունակվում են: Հայկական դիվիզիայի հրամանատար գեներալ Սիլիկյանը ընդգծում էր, որ ինքը չի կարող թույլ տալ, որպեսզի զորամասերի հրամանատարների և կրտսեր պետերի կողմից իրական աջակցության դեպքում հնարավոր չլինի վերջ տալու սանձարձակություններին, որոնք այդ դեպքում կլինեին բացառություն, այլ և ընդհանուր համակեցությունը կդառնա կանոն: Դիվիզիայի հրամանատարը պահանջում էր ամեն տեսակի ինքնակամ բռնագրավումների, կողոպուտների և սանձարկությունների անհապաղ վերացում[1]:

Ներքին գործերի նախարարին ուղղված 1918 թ. սեպտեմբերի 1-ի (N 996) պաշտոնագրում Հայկական դիվիզիայի հրամանատար գենե-

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 204, ց. 1, գ. 42, թ. 44:

րալ Մ. Սիլիկյանը և շտաբի պետ գնդապետ Մ. Զինկևիչը, որոնք տեսչական նպատակով հաճախակի լինում էին զորամասերում, ՀՀ ՆԳ նախարարին հայտնում են, որ կապված այն բանի հետ, որ զինվորական պարտականություններ ունեցողների ծառայությունը նախարարություններում առաջ է բերում դասալքություն զորքերի շարքերում, որից էլ ելնելով իրենք դեմ են և համաձայն չեն այդպիսի անձանց տեղափոխությանը զորքերի շարքերից[1]: 1918 թ. հոկտեմբերի 4-ին կառավարության նիստում լսվում է Զինվորական նախարարի զեկուցումը այն մասին, որ Շահրիզ գյուղում հետախուզական հրամկազմի կողմից դասալիքներին հայտնաբերելու գործողության ժամանակ զինված դիմադրության են հանդիպել, որի արդյունքում 10 զինվորական սպանվել են, վիրավորվել և գերի ընկել, որից ելնելով զինվորական նախարարը խնդրում էր տեղում կազմել ռազմադաշտային դատարան՝ մեղավորներին դատի տալու համար. Կառավարությունը որոշում է ստեղծել ռազմադաշտային դատարան և իշխանություններին զինված դիմադրություն ցույց տված մեղավորներին ենթարկել դատի[2]: 1918 թ. հոկտեմբերի 7-ին ՀՀ ԱԳ նախարարին և Թիֆլիսում դիվանագիտական ներկայացուցչին ուղղված հեռագրում Ռազմական նախարարը հայտմում էր, որ Վրաստանում գտնվող զինակոչի ենթակա 1894/1895 թթ. ծնվածները պետք է տարվեն գեներալ Բաղրամյանի մոտ այլ զինվորների ու բեռների հետ միասին երևան տեղափոխելու համար, ասելով որ դրան ենթակա են նաև զորակոչային տարիքի բոլոր սովորողները, որից կարող էին ազատվել միայն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողները: Խնդրի իրագործման համար ակնկալվում էր նաև Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատարի աջակցությունը[3]:

Զորահավաքի և դասալքության խնդիրների լուծման հետ կապված կարելի է նշել Զինվորական նախարար Հովի. Հախվերդյանի 1918 թ. նոյեմբերի 21-ի դիմումագրի մասին՝ ուղղված Ա. Մանուկյանին, որում մասնավորապես ընդգծվում էր հետևյալը. «նկատի ունենալով, որ

[1] Տե՛ս նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 1, թ. 98:

[2] Տե՛ս **Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ**, էջ 33, **ՀԱԱ**, ֆ. 202, ց. 1, գ. 13, թ. 50:

[3] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 275, ց. 5, գ. 1, թ. 42, նձ:

շատ քաղաքացիներ խուսափում են զինվորական ծառայությունից, Հայաստանի խորհրդի Զինվորական հանձնաժողովը 1918 թ. նոյեմբերի 18-ին որոշել է. բոլոր կառավարական և հասարակական հիմնարկություններում, այդ թվում և միլիցիայում, անմիջապես ծառայությունից ազատ արձակել զորակոչային տարիքի բոլոր երիտասարդ մարդկանց, և առաջին հերթին 20-ից մինչև 25 տարեկան» [1]: Դրան հաջորդում է ՀՀ Զինվորական նախարարի մեկ այլ դիմումագիր. «Զինվորական իրադրությունը պահանջում է զորքերի համալրում մարդկանցով: Մինչդեռ կան դասալիքների զանգված ու ծառայությունից խուսափողներ, որոնք ազատ ապրում են քաղաքում և գավառներում: Նրանք, ովքեր նշված ժամանակում չեն ներկայանա հավաքակետեր՝ կձերբակալվեն Հատուկ զինվորական պետերի կողմից և կհանձնվեն դատարանին՝ պատերազմական դրության ժամանակի օրենքով»[2]:

Միլիցիան, ՆԳ ու Զինվորական նախարարությունները որոշակի դեր էին կատարում բանակի հետ կապված մի շարք խնդիրներ լուծելու, և դասալքության դեմ մղվող պայքարում: Դատելով արխիվային փաստաթղթերից և այդ ժամանակաշրջանի մամուլից, 1918-1920 թթ. այդ բնագավառում կուտակվել էին ահռելի խնդիրներ, քանզի հենց իրենք ՆԳ նախարարության համակարգի աշխատակիցները և միլիցիոներները, ինչպես նաև շահամոլ զինվորական պաշտոնյաները թույլ էին տալիս ամենամեծ ու զազրելի զեղծարարությունները, հաճախ էլ պարզապես չէին օժանդակում զինվորական իշխանություններին իրենց դժվարին աշխատանքում, որի արդյունքում Հայկական բանակն ուներ ռեկորդային թվով դասալիքներ: Իրապես գործող մարտունակ բանակում ընդգրկված էին այնքան թվով զինվորներ, ինչքան իրականում կազմում էր դասալիքների թիվը, չնայած որոշ իշխանավորների ջանքերին՝ փորձելու ստեղծել կայուն և օրինապաշտ երկիր՝ լուծելու նաև դասալքության և զինապարտության խնդիրը: Այդ մասին է վկայում ՀՀ ՆԳ նախարարի զեկուցումը Նախարարների խորհրդի 1918 թ. նոյեմբերի 22-ի նիստում դասալքության խնդրի հանգուցալուծման

[1] Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 83, թ. 8, ֆ. 201, ց. 1, գ. 86, թ. 55:

[2] Նույն տեղում, թ. 10:

խնդրում գավառային ու գյուղական կոմիսարների, ինչպես նաև գյուղական ավագանու պատասխանատվության բարձրացման մասին[1]:

Բանակի համալրման, և դասալքության դեմ պայքարը փոխկապակցված էին միմյանց հետ: 1918 թ. օգոստոսի 24-ին և նոյեմբերի 22-ին Նախարարների խորհուրդը լսում է Զինվորական նախարարի առաջարկի մասին զորաշարքերից ուսանողներին արձակելու իրավունքը իրեն վերապահել, միաժամանակ անդրադառնալով դասալքության դեմ պայքարի հարցին և խնդրում այդ նպատակով հատկացնել 10 հազար ռ. 6 միլիոնանոց ֆոնդից: Ընդունված որոշման մեջ արձանագրվում է հետևյալը. Ի նկատի ունենալով, որ ներկա հանգամանքների պատճառով անհնարին է բարձրագույն ուսման շարունակումը, և մյուս կողմից՝ մի շարք մտավորական անձանց զորաշարքերից հեռանալը բարոյական աննպաստ տպավորություն է գործել զինվորական մասսաների վրա, որոնք կարող են դրա մեջ տեսնել բարձր դասակարգերի համար մի արտոնություն՝ մերժել նախագիծը: Սակայն նույն նիստում ուսուցիչներին վերաբերող հարցի առումով դրական որոշում է ընդունվում. Ռազմական նախարարի առաջարկած նախագիծը՝ զինվորական ծառայությունից ազատել ուսուցիչներին, հավանության է արժանանում Նախարարների խորհրդի կողմից և առաջարկվում է այն փոխանցել Հայաստանի խորհրդի քննարկմանը[2]:

Պետությունը և իշխանությունները, առանձին զինվորական այրեր փորձում էին գործնականորեն լուծել կուտակված խնդիրները, բանակը դիտելով որպես կարևոր գործոն հայկական պետականության և անվտանգության համակարգի կայացման գործընթացներում, սուր կերպով դնելով նաև բանակային կառույցները քայքայող դասալքության խնդիրները: 1918 թ. դեկտեմբերի 3-ին Նախարարների խորհուրդը լսում է դատական նախարարի զեկուցումը դասալքության դեմ կռվելու համար գեներալ Մ. Սիլիկյանի առաջարկի մասին: Ընդունված որոշման մեջ արձանագրվում է, որ անկախ Սիլիկյանի առաջարկից, դատական նախարարին հանձնարարել Զինվորական նախարարի դա-

[1] Նույն տեղում, գ. 484, թ. 70:

[2] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 202, ց. 1, գ. 13, թ. 97: Տե՛ս **Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ**, էջ 17, 86:

սալքության դեմ կռվելու մասին կազմած նախագծի վերաբերյալ զեկուցում ներկայացնել, և արդեն դեկտեմբերի 9-ին կրկին լսվում է դատական նախարարի զեկուցումը դասալիքների դեմ կռվելու միջոցների մասին: Ընդունված որոշման մեջ որոշվում է ընդունել այն և հանձնարարել Զինվորական նախարարին համապատասխան օրինագիծ ներկայացնել[1]:

1918 թ. դեկտեմբերի 19-ի գրության մեջ Ա. Մանուկյանը դիմելով գավառային կոմիսարներին, ընդգծում էր, որ պատերազմական իրադրությունը պահանջում է զորքերի անհապաղ համալրում, այն դեպքում, երբ դասալիքները և ծառայությունից խուսափողները ազատ ապրում են գավառներում և քաղաքներում: Ելնելով դրանից, ՆԳ նախարարը հրահանգում էր բնակչությանը ամենալայն ձևերով տեղեկացնել, որ ամեն մի զինապարտ, որը ծառայության մեջ չի գտնվում զորքերում, պետք է ծառայողական փաստաթղթերով հանդերձ ներկայանա զորահավաքակայան, ներկայանա տվյալ «էտապի» պարետին՝ 20-ից 25 տարեկանները ներառյալ, դեկտեմբերի 23-ից ոչ ուշ, իսկ 26-ից 32 տարեկան տարիք ունեցողները՝ դեկտեմբերի 27-ից ոչ ուշ: Գրության վերջնամասում Ա. Մանուկյանը հստակ ընդգծում էր, որ նշված ժամկետներում չներկայացնողները կբռնվեն և կձերբակալվեն հատուկ զորաջոկատների կողմից և կտրվեն դատի՝ ռազմական ժամանակին համապատասխան[2]: Այսպես, գավառային կոմիսարներին, և մասնավորապես Նոր Բայազետի, Դարալագյազի, Էջմիածնի, Սուրմալուի, Երևանի, Ղարաքիլիսայի գավառային կոմիսարներին և ռազմական օկրուգների պետերին ուղղված 1918 թ. դեկտեմբերի վերջնամասի մի գրության մեջ Արամը ընդգծում էր, որ մինչև 25 տարեկան միլիցիայի ծառայողները ենթակա են զորակոչի, սակայն մինչև նրանց զորակոչային տարիքի այլ զինապարտներով փոխարինումը Զինվորական նախարարության կողմից նրանց տրվում է երկշաբաթյա տարկետում, առաջարկելով ամենուր կազմակերպել շուրջկալներ՝ համաձայն ՀՀ Զինվորական նախարարի 1918 թ. դեկտեմբերի 23-ի հրամանի, որպեսզի զորքերում ծառայությունից խուսափող այդ կարգի մարդկանց ու-

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 202, ց. 1, գ. 13, թ. 121, 127:

[2] Նույն տեղում, գ. 75, թ. 35:

ղեկցեն դեպի զորահավաքակայաններ[1]: Եվս մի ուշագրավ փաստաթուղթ վկայում է Ա. Մանուկյանի որպես պետաքաղաքական գործչի կողմից գործադրած ջանքերի մասին՝ նպատակաուղղված բանակի հզորացմանը, դասալքության դեմ մղվող անզիջում պայքարին՝ այն արմատախիլ անելու համար: 1918 թ. վերջի մի գրությամբ վերջինս ընդգծում էր նաև այլազգիների նկատմամբ զորակոչային պարտավորությունների տարածման մասին, մի քիչ այլ շեշտադրմամբ. այսպես, Ա. Մանուկյանը վերոնշյալ գրության մեջ ընդգծում էր, որ զորակոչի ենթակա են նաև հույները, ինչպես նաև մոլոկանները, վերջիններիս առաջարկելով ներգրավել բանակի թիկունքի սպասարկմանը[2]: Ինչ խոսք, դա էլ էր լուծում, պետական մտածողության հստակ դրսևորում: 1918 թ. դեկտեմբերի 24-ի հեռագրում՝ ուղղված բոլոր գավառական կոմիսարներին, Ա. Մանուկյանը մի շարք այլ պարզաբանումներ էր տալիս, ըստ որոնց զորակոչն իրականացվում է ՆԳ և Զինվորական նախարարությունների միջև գործողությունների լրիվ համաձայնության պայմաններում, զինակոչից ազատվում էին միմիայն հաղորդակցության-ռազմական նշանակություն ունեցող հաստատությունների ծառայողները՝ ՀՀ փոստային ծառայության և երկաթուղու աշխատակիցները, ինչպես նաև պետական ծառայության մեջ և կառավարության կազմում գտնվողները, միլիցիայի մինչև 25 տարեկան աշխատակիցները, հույները ենթակա էին զորակոչի ընդհանուր հիմունքների հիման վրա[3]: ՆԳ նախարարի սույն հեռագիրն ուղարկվել է բոլոր գավառամասերը. Ա. Մանուկյանի նշված հեռագրում ընդգծվում էր նաև, որ Զինվորական նախարարության միջոցով պարզաբանվել է, որ բոլոր օտարահպատակ հայերը ևս ենթակա են զորակոչի, և կոչ էր արվում ասվածն ընդունել ի տեղեկություն ղեկավարության համար[4]:

1918 թ. դեկտեմբերի 31-ին Նախարարների խորհուրդը կրկին դասալքության հարցին է անդրադառնում, լսելով Զինվորական նախարարի զեկուցումը դասալքության դեմ կռվելու մասին: Ընդունված որոշման մեջ առաջարկվում է ներկայացրած նախագիծը վերադարձնել, և

[1] Նույն տեղում, գ. 73, թ. 26, գ. 75, թ. 29:

[2] Նույն տեղում, թ. 73:

[3] Նույն տեղում, թ. 36-37:

[4] Նույն տեղում:

հանձնարարել Զինվորական նախարարին վերամշակել այն՝ ի նկատի ունենալով նիստում տեղի ունեցած մտքերի փոխանակությունը[1]: 1919 թ. հունվարի 16-ին Զինվորական գերատեսչության գծով հրամանագրում Գլխավոր շտաբի պետ գեներալ-մայոր Դոլուխանյանը իրազեկում էր այն մասին, որ Գլխավոր շտաբ հասած գրագրությունից պարզվել է, որ զորամասերի և վարչությունների պետերը, հակառակ Զինվորական նախարարի 1918 թ. դեկտեմբերի 23-ի հրամանագրի (N 198), խախտելով ընդունված կարգը, շարունակում են ծառայության ընդունել իրենց մոտ դասալիքների, որ դասալիքները պետք է անպայման ներկայանային համապատասխան զորահավաքական, որտեղից էլ պետք է նշանակում ստանային համապատասխան զորամասում: Դոլուխանյանը Զինվորական նախարարի հրամանագիրն իրագործելու համար պահանջում էր զինվորացուների ծառայության ընդունումը իրականացնել միայն համապատասխան զինվորական հրամանատարության միջոցով[2]:

ՀՀ Խնամատարության նախարարի կողմից ԱԳ նախարարին ուղարկված 1919 թ. հունվարի 31-ի գաղտնի գրությունից տեղեկանում ենք, որ Սուրմալուի գավառում և Ղամարլու գյուղում և Արաքս գետին հարող շրջաններում մուսուլմանները հայերին և եզդիներին վաճառել են ցորեն՝ բացառապես զենքի և փամփուշտների հետ փոխանակելու պայմանով, 2 փութ ցորենը հրացանի դիմաց: Հայտնվում էր, որ սովից մեռնելով, գյուղացիներն արդեն 600 հրացան են տվել թաթարներին: Թաթարներից տեղեկացվել է, որ իրենց հրահանգել են հայերի դեմ 2-3 ամիս դիմանալ, մինչև Փարիզյան կոնֆերանսը վճիռը սահմանների մասին, որը նրանց հուսադրել է, որ շրջանները, որոնցում նրանք կարող են ապրել առանց հայկական բնակչության, կճանաչվեն մուսուլմանների սեփականություն: Տեղեկացվում էր, որ քրդերի մեջ հայտնվել են գործակալ-հրահրիչներ և Քուլպի քրդերի մոտ հուզումներ են նկատվել, որը կազմակերպված բնույթ ունի և իրենից մի շղթա է ներկայացնում՝ Կարս-Քուլպի շրջան-Արալիխ-Շարուր-Նախիջևան գծով, ասե-

[1] Նույն տեղում, գ. 6, թ. 43:

[2] Նույն տեղում, ֆ. 204, ց. 1, գ. 132, թ. 135:

լով, թե դիրիժորի դեր են կատարում կենտրոնական խմբերը՝ խնդիր դնելով ևս մեկ ամիս դիմանալ՝ մինչև վճռի կայացումը[1]:

1919 թ. մարտի 5-ին (N 783) Հայաստանի տարածքի կոմիսարը Նոր Բայազետի գավառային կոմիսարին ուղղված գրության մեջ ահազանգում էր, որ ՆԳն մարմինների և զինվորական իշխանությունների տվյալներով դասալքությունը գավառում ահռելի չափերի է հասել, սակայն վարչակարգը անգործության է մատնվել: Ըստ այդմ խստագույնս հրահանգվում էր անձամբ գավառային հասարակական գյուղական կոմիսարների, միլիցիայի միջոցով բոլոր միջոցները ձեռնարկել դասալիքներին բռնելու և նրանց հանձնելու զինվորական իշխանություններին, ըստ տեղամասերի կազմելով և ուղարկելով դասալիքների մասին տվյալները, զգուշացնելով, որ մեղավորները կպատժվեն[2]:

1919 թ. մարտի 19-ին ՆԳ նախարարի պաշտոնակատար Ս. Մանասյանը, ելնելով մայրաքաղաքում դասալքությունն արմատախիլ անելու հրատապ անհրաժեշտությունից, համապատասխան գրությամբ (№ 1464)՝ ուղղված միլիցիայի տեսուչ, գնդապետ Ապրեսովին, կարգադրում է քաղաքային միլպետի, գավառային կոմիսարների և պարետի հետ համատեղ իր նախագահությամբ կազմել հանձնաժողով, որը պետք է միջոցներ ձեռնարկեր քաղաքում դասալքության դեմ պայքարելու, իսկ բոլոր մինչև 25 տարեկան զինվորացուները պետք է հանձնվեին զորքերի Երևանյան ջոկատի պետ Դրոյին[3]: Իսկ արդեն Նախարարների խորհրդի 1919 թ. մարտի 24-ի նիստում որոշում է ընդունվում Նոր Բայազետում գտնվող զորքերում կարգուկանոնը ամրապնդելու, մարտունակությունը և զորամասերի կողմից ձեռնարկվող գործողությունների արդյունավետությունը բարձրացնելու համար ժամանակավորապես հաստատել ռազմադաշտային դատարաններ՝ զորամասերը ինքնակամ լքող և փախչող զինվորականների նկատմամբ դատ ու դատաստան իրականացնելու համար, որոնց վերաբերյալ վճիռները մեկ օրվա ընթացքում պետք է հայտնվեին ՀՀ Զինվորական նախարարին՝ վերջնական եզրակացության համար[4]:

---

[1] Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 209, թ. 30-31:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 88, թ. 48:

[3] Նույն տեղում, գ. 85, թ. 20:

[4] Նույն տեղում, ֆ. 204, ց. 1, գ. 132, թ. 42 հակադարձ երեսը:

Նախարարների խորհրդին ուղղված 1919 թ. մարտի 24-ի գրությունում (N 3179) ՀՀ զինվորական նախարար Հախվերդյանը տեղեկացնում էր, որ որոշ նախարարություններ ծառայության են ընդունում իսկական ռազմական ծառայության սպաների, բժիշկների և չինովնիկների՝ նախապես չհարցնելով Զինվորական նախարարի և ղեկավարության համաձայնությունը, որի շնորհիվ տեղի են ունենում մեծ թյուրիմացություններ և ի դեմս դասալքության՝ քայքայվածություն մտցնում ռազմական գործում՝ կրկնակի ծառայություն և այլն: Նշվում էր, որ 3-րդ հրաձգային հետևակային գնդի շտաբս-կապիտան Շահումյանին, որը փախել էր Շարուրի ճակատից, փետրվարի 6-ից (N 24) առանց Ռազմական նախարարի գիտության ընդունել են քաղաքացիական ծառայության, այն ժամանակ, երբ նա համարվում էր ծառայության մեջ 3-րդ գնդում: Նկատի ունենալով, որ այդ նշանակումը կատարվել է առանց նախապես Զինվորական նախարարի համաձայնությունը ստանալու, որը ոչ մի գերատեսչությունում չի կարող համարվել նորմալ երևույթ, և մասնավորապես Ռազմական ոլորտում: Ըստ այդմ Զինվորական նախարարը գտնում էր, որ մինչև այդպիսի սպաներին վարչական պաշտոններում նշանակելը, պետք է ամեն մի առանձին դեպքում հարաբերվել Զինվորական նախարարության հետ և միայն դրանից հետո հրաման արձակել 1) ղեկավարության համաձայնությամբ և 2) զորացրման կամ էլ այդպիսի սպաների, բժիշկների և չինովնիկների գործուղման մասին՝ Զինվորական նախարարի հրամանի համաձայն: Բացի այդ, նախկին զինծառայողներին քաղաքացիական գերատեսչությունում աշխատանքի ընդունելիս, առաջարկվում էր հրամանագիր տալ, չհիշատակելով կոչումը կամ պաշտոնը, ծայրահեղ դեպքում նշելով որպես պահեստազորում գտնվելու կամ պրապորշչիկ լինելու հանգամանքի մասին, պոդպորուչիկ և այլն, իսկ գործուղված լինելու դեպքում՝ էլ՝ նշելով այդ մասին. Որպես օրինակ բերվում էր Խնամատարության նախարարության NN 38-39 հրամանները, որոնց համաձայն պրապորշիկ Արմենակ Թալանյանը նշանակվել էր Ղարաքիլիսայի, իսկ պորուչիկ Գ. Նալբանդյանը՝ Դիլիջանի շրջանի հսկիչ, այն ժամանակ, երբ այդ ծառայության ենթակա սպաների մասին հարկ էր հրամանում ցույց տալ որպես պահեստում գտնվող, քանի որ նրանք չեն համարվում զորքերում հաշվառված, և հաշվում են պահեստազորում:

Սույն գրության պատճենը ի տեղեկություն և որպես դրանով առաջնորդվելու ցուցում ուղարկվում է ՆԳՆ վարչություն, ՀՀ տարածքի և վարչակարգի կոմիսարին[1]:

Հենվելով ՆԳ նախարարի 1919 թ. մարտի 22-ի գրության վրա, մարտի 30-ին զինվորական գերատեսչության գծով հրամանագիր է ստորագրվում, ըստ որի դասալքության դեմ հաջող պայքար մղելու, դասալիքների գտնվելու տեղերը շուտ հայտնաբերելու համար Զինվորական նախարարը զորամասերի հրամանատարներին և վարչությունների ու հաստատությունների պետերին հրամայում էր ամեն մի գավառի գծով առանձին դասալիքների ցուցակները, նրանց գտնվելու տեղի մասին տեղեկատվությունը ներկայացնել ՆԳ նախարարության գրասենյակ, որոնք անհապաղ պետք է ուղարկվեին զինկոմիսարիատներ՝ անհապաղ միջոցներ ձեռնարկելու համար[2]:

Զինվորական գերատեսչության 1919 թ. մարտի 24-ի հրամանագրում հիմք ընդունելով նախարարների խորհրդի մարտի 22-ի որոշումը, ընդունված հրամանում նշվում էր, որ Նոր Բայազետի գավառում զորքերում կարգապահության ամրապնդման և զանգվածային դասալքության դեմ պայքարի ուժեղացման, այդ շրջանում գտնվող զորամասերի մարտունակության և գործողությունների արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ էր գտնվում գործող դատավարական գործընթացից հանել այն կարգը, որ խոչընդոտում է այդ շրջանում հաստատել ռազմական ժամանակից բխող ռազմադաշտային դատարաններ՝ ռազմական ծառայությունից փախչողների և պետերի հրամաններից հրաժարվողների, բացահայտ ապստամբության հրահրողների, ռազմական գործողություններից հրաժարվելու համար[3]:

Զորակոչի հարցերը հեշտ չէր լուծել և դա նաև այն պատճառով, որ երբեմն բարդություններ էին առաջանում անգամ «հեղինակավոր» մարդկանց, մասնավորապես նախկին ֆիդայապետերի կողմից: Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության խորհրդական Մ. Թումանյանին ուղղված 1919 թ. ապրիլի 19-ի գրությունում (N 1865) ՆԳ

[1] Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 279, թ. 16:
[2] Նույն տեղում, գ. 104, թ. 71:
[3] Նույն տեղում, ֆ. 204, ց. 1, գ. 132, թ. 42:

նախարար Ա. Գյուլխանդանյանը նշում էր, որ Թիֆլիս գործուղված 4-րդ բրիգադի հրամանատար Սեպուհի կողմից թիֆլիսահայության շրջանում զորահավաքը տեղի է ունենում հօգուտ 4-րդ բրիգադի: Մ. Թումանյանից խնդրվում էր, որ վերջինս նրանից ետ վերցվի նրան տրված փաստաթուղթը, որ իր կողմից հրահանգ կա առաջարկել Սեպուհին դադարեցնել զորահավաքը, խնդրելով այդ մասին անհապաղ իրազեկել իրեն[1]:

Հայկական բանակում տեղ գտած չարիքին՝ դասալքության վերացման հիմնախնդիրներին անդրադարձան նաև 1919 թ. մայիսի 11-ին հրավիրված միջգերատեսչական խորհրդակցության մասնակիցները ի դեմս Զինվորական նախարարի օգնական Դրոյի, Երևանի դատաստանական պալատի դատախազ Գ. Մելիքյանի, Դիլիջանի գավառի կոմիսար Մ. Սարատիկյանի, զորահավաքի գծով Գլխավոր վարչության քարտուղար Գ. Գավրիլովի և ուրիշների: Դրանում որոշվեց, որ բացի ռազմադաշտային դատարաններից, հարկավոր է միավորել ՆԳ և Զինվորական նախարարությունների ջանքերը, այդ նպատակով երկու գերատեսչությունների համաձայնությամբ նշանակելով հատուկ սպայի, նրան գործուղելով ՆԳ նախարարի տրամադրության տակ, վերջինիս ենթարկելով ինչպես միլիցիան, այնպես էլ պահեստային զորամասերը, անցկացնելով զինապարտների խստագույն հաշվառում՝ դրանց գրանցելով հատուկ մատյաններում[2]: Դասալքության հարցը օրակարգային էր, դրան անդրադառնում էին բոլոր գերատեսչությունները, հատկապես ուժային նախարարությունները և դրանց ղեկավարները. Հայաստանի զորքերի սպարապետ գեներալ-լեյտենանտ Թ. Նազարբեկյանը ՀՀ վարչապետին ուղղված 1919 թ. մայիսի 23-ի գրության մեջ նշում էր, որ չնայած ձեռնարկված միջոցներին, դասալքության դեմ պայքարը ցանկալի արդյունքների չի հանգեցրել, ընդհակառակը՝ զորամասերը զգալի չափով կազմալուծվել են և նոսրացած զորակազմը իրեն վստահված բանակը շատ ծանր վիճակի մեջ է դրել, առաջարկում էր ստեղծված ծանր վիճակից դուրս գալու և դասալքությունը հաղթահարելու համար կարճ ժամանակամիջոցում ընդունել

[1] Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց. 5, գ. 211, թ. 92, 94:

[2] Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 86, թ. 58-61, 87:

արտակարգ միջոցներ, այն է՝ 1) ընդունել դասալքությունը խստորեն պատժող օրենք, 2) թույլատրել զորքերում ռազմադաշտային դատարանների ստեղծումը և 3) օրենք ընդունել, որն արգելում է զինապարտներին քաղաքացիական ծառայության ընդունել: Նազարբեկյանը այդ ամենը համարում էր չափազանց կարևոր, գտնելով, որ հասարակությունը պետք է խորապես գիտակցի այդ հանգամանքը՝ ունենալու հայրենիքի ծառայության համար պատրաստ բանակ[1]:

1919 թ. մայիսի 30-ին Նախարարների խորհրդին ներկայացրած զեկույցում (N 0013/0770) զորքերի հրամանատար Նազարբեկյանը խնդիր էր առաջադրում՝ պետական մակարդակով անխնա պայքար մղել դասալքության դեմ՝ ինչպես ընդհուպ մինչև գնդակահարության իրագործումը ռազմադաշտային դատարանների միջոցով, կոմիսարների և դասալիքի ընտանիքի պատասխանատվության բարձրացմամբ, արգելելով նրանց մուտքը որևիցե հաստատություն, լրացուցիչ ծառայության տարի սահմանելով դասալիքների համար, միաժամանակ չափազանց կարևորելով զինվորներին հացով, լավ սննդով, հագուստով ապահովումը՝ տանելի զորանոցային պայմանների ստեղծմամբ, որոնք ևս նպաստում էին դասալքությանը, պնդելով ծառայության ժամկետի երկարացման վրա, ինչպես նաև զորակոչային ավագ տարիքի մարդկանց զորակոչման մասին, որի վրա կար ՀՀ Զինվորական նախարար գեներալ Քր. Արարատյանի մակագրությունը և իր կողմից այդ զեկույցի հասցեագրումը վարչապետին: Փաստաթղթի վրա կար նաև զորքերի Ալեքսանդրապոլի խմբավորման պետ գեներալ Մ. Սիլիկյանի մակագրությունը, որը կարևորել էր զորքերի բարոյական վիճակի և դասալքության դեմ պայքարի հարցը[2]:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև Նախարարների խորհրդի 1919 թ. հունիսի 25-ի նիստի որոշումը: Նիստում լսվում է Արդարադատության նախարարի զեկուցումը ՆԳ նախարարության՝ դասալքության դեմ կռվելու վերաբերյալ ներկայացրած օրինագծի մասին. որոշվում է համաձայն 1919 թ. հունիսի 5-ի կառավարության կողմից ընդունված օրենքի, հաստատել այդ օրինագիծը, հայտարարելով

[1] Նույն տեղում, գ. 86, թ. 55:

[2] Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 27, թ. 147:

մահվան պատժի վերաբերյալ 10-րդ կետի քննության մասին[1]: 1919 թ. հուլիսի 8-ին կառավարությունը կրկին քննում է դասալքության խնդիրը: Անդրադառնալով այդ խնդրին, Նախարարների խորհուրդն իր այս նիստում լսում է ՆԳ նախարարի պաշտոնակատար Ա. Մաքսապետյանի զեկուցումը դասալքության օրենքին մի քանի անհրաժեշտ լրացումներ անելու մասին: Նիստում որոշվում է 1919 թ. հունիսի 5-ի օրենքի համաձայն հաստատել լրացուցիչ հոդվածներ, ըստ դրանց՝ 1) մեկից ավելի անգամ դասալքության մեջ գտնվողները հանձնվում էին զինվորական դատի, 2) սույն օրենքը ամենուրեք ուժի մեջ էր մտնում լույս տեսնելուց 24 ժամ անց[2]: 1919 թ. հուլիսի 23-ին Նախարարների խորհուրդը դարձյալ իր հերթական նիստում քննարկում է չարաբաստիկ դասալքության խնդիրը՝ լսելով ՆԳ նախարարի պաշտոնակատար Ս. Մանասյանի կողմից մտցվող օրինագծի մասին՝ 26, 27 և 28 տարեկան քաղաքացիներին Երևանի, Էջմիածնի և Սուրմալուի գավառներում զորակոչի ենթարկելու մասին: Այս օրինագծի կապակցությամբ որոշվում է համաձայն 1919 թ. հունիսի 5-ի օրենքի՝ հաստատել ներկայացված օրինագիծը[3], որը հուլիսի 24-ին վերահաստատվում է Նախարարների խորհրդի կողմից[4] և լրացվում և մասնակի փոփոխման ենթարկվում համաձայն զորակոչի մասին Նախարարների խորհրդի հուլիսի 27-ի նիստի որոշման, ըստ որի զորակոչից ժամանակավորապես ազատվում էին փոստ-հեռագրատան և երկաթգծի հիմնարկությունների ծառայողները, միլիցիայի ծառայողները՝ բացի օրավարձու բանվորներից, միաժամանակ զորակոչը տարածվում էր նաև նախկին տաճկահպատակների վրա, զորքի շարքերից ետ էին կանչվում Երևանի, Էջմիածնի և Սուրմալուի գավառների 26, 27 և 28 տարեկան քաղաքացիները[5]:

1919 թ. հուլիսի 28-ին կառավարության նիստում լսելով Զինվորական նախարարի նախագծի մասին՝ 1912-1919 թթ. ավարտած 1-ին կարգի բժիշկների և փոխբժիշկների համար երկու տարի ծառայություն սահմանելու մասին, որոշվում է համաձայն 1919 թ. հունիսի 5-ի օրեն-

[1] Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 96, թ. 141:
[2] Նույն տեղում, գ. 96ա, թ. 7:
[3] Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 100 (43), թ. 167; գ. 96ա, թ. 28:
[4] Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 96ա, թ. 20:
[5] Նույն տեղում, ֆ. 207, ց. 1, գ. 14, թ. 43, 52:

քի, լիազորել Զինվորական նախարարին մինչև 40 տարեկան բժիշկների զորահավաք հայտարարել[1], իսկ արդեն կառավարության կողմից 1919 թ. օգոստոսի 18-ին ընդունված որոշմամբ պարզաբանվում է, որ մինչև 40 տարեկան բժիշկների և փոխբժիշկների զորակոչը տարածվում է նաև մինչև 40 տարեկան անասնաբույժների, ֆելդշերների և սանիտարների վրա, միաժամանակ նույն նիստով հանձնարարվում է Հայաստանի ամբողջ տարածքի վրա տարածել 26, 27 և 28 տարեկանների պահեստի զորակոչը[2], իսկ արդեն օգոստոսի 22-ի նիստում ՆԳ նախարարին հանձնարարվում է մինչև 32 տարեկան պահեստի զինվորներին զորահավաքի ենթարկելու մասին օրինագիծ կազմել՝ Հայաստանի խորհրդին ներկայացնելու համար, իսկ օգոստոսի 25-ի նիստով արտոնվում է մինչև 32 տարեկանների զորակոչը հանրապետության բոլոր շրջաններում հետզհետե իրագործելու վերաբերյալ[3]:

Դասալքության դեմ պայքարին էր նպատակաուղղված նորանշանակ Զորահավաքի և դասալքության դեմ կռվելու հատուկ կոմիսար, հետագայում հետախուզության հայտնի փորձառու սպա կապիտան Վահագն Գալուստի Մուրադյանցի կողմից հրապարակված 1919 թ. հուլիսի 31-ի ազդը, որով բոլոր թե՛ զորակոչից խուսափողները և թե՛ դասալիքներին հովանավորություն ցույց տվողները որպես դավաճաններ անվերջ տառապող Հայրենիքի պատվի և պարտականության հանդեպ իր կողմից ձեռք առնված միջոցներով պիտի բռնվեին և հանձնվեին զինվորական դատարանին՝ մահվան պատժի ենթարկելու համար[4]:

Անդրադառնալով դասալքության և զինապարտության խնդրին, ՆԳ նախարար Ա. Գյուլխանդանյանը 1919 թ. օգոստոսի 21-ին ՀՀ Նախարարների խորհրդին ներկայացրած զեկույցում (№ 2713/Вх 2606) անդրադառնում է Կարսի նահանգապետից ստացված օգոստոսի 10-ի զեկուցագրում (№ 3074) արծարծված հարցերին, որոնք վերաբերում

---

[1] Տե՛ս **Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ**, էջ 263-264, **ՀԱԱ,** ֆ. 199, ց. 1, գ. 43, թ. 264:

[2] Տե՛ս **Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ**, էջ 279-280:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 280-281:

[4] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 216 (214), ց. 3, գ. 63, թ. 110:

էին զորահավաքի խնդիրներին, վերջինիս դժգոհությանը, որ զորակոչը անհրաժեշտ արդյունքը չի տալիս, որ երիտասարդությունը, գրեթե բոլորը դրսում են և հետագայում զորակոչային տարիքը կարող է անբավարար լինել զորագնդերի շարքերը համալրելու համար: Այնուհետև նշվում էր, որ դրա հիման վրա համաձայնվելով 4-րդ բրիգադի պետ Սեպուհի հետ, ինքը ենթադրում է, որ զինակոչի կարելի է ենթարկել մինչև 32 տարեկաններին ևս: Լիովին համաձայնություն արտահայտելով Կարսի նահանգապետի զեկուցագրում բերված հետևությունների հետ և հաշվի առնելով նահանգում տվյալ պահին զորական ուժի իրական պահանջները բավարարելու անհնարինությունը, որպես հետևանք գլխավորապես հայկական բնակչության սակավաթվության, և այդ նահանգից թուրք-թաթարական հարձակումների ժամանակ էվակուացիայի ենթարկման և ետ չգալու, ՆԳ նախարարը Նախարարների խորհրդից խնդրում էր իրականացնել զինապարտների 29, 30, 31 և 32 տարեկանների զորակոչ: Արդյունքների մասին կարգադրություն արվեց հաղորդել զորահավաքի գծով գլխավոր վարչությանը՝ անհապաղ անհրաժեշտ կարգադրությունների համար[1]:

Նախարարապետ Հ. Օհանջանյանի 1920 թ. օգոստոսի 2-ի հրամանով տեղյակ էր պահվում կառավարության օգոստոսի 1-ի նիստի կողմից ընդունված որոշման մասին, որով վերացվում էին 20-ից մինչև 32 տարեկա տղամարդկանց բոլոր տարկետային արտոնությունները, ըստ որի 48 ժամ հետո՝ մինչև օգոստոսի 3-ը Երևանի զինվորական ատյան չներկայացող երիտասարդները համարվում էին դասալիքներ[2]:

Այս ողջ ընթացքում զորակոչի հետ կապված լուրջ, ոչ ստանդարտ իրավիճակ ստեղծվեց պարսկահպատակների հետ կապված: Զորահավաքի և պարսկահպատակների գործերը կարգավորելու ու դասալքության դեմ պայքարում անհարկի դիվանագիտական բարդություններից խուսափելու նպատակով 1920 թ. օգոստոսի 24-ին (№ 4910 – համապատասխան գրություն-շրջաբերական է ուղարկվում ինքնավարություններին՝ ի գիտություն): Արտաքին Գործերի նախարար Հ.

[1] Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 2, թ. 157:
[2] Նույն տեղում, ֆ. 207, ց. 1, գ. 14, թ. 203:

Օհանջանյանը հատուկ գրությամբ դիմում է ՀՀ Ներքին Գործերի նախարարին. «Զանազան թյուրիմացութիւնների առաջն առնելու և Պարսից Հիւպատոսի հետ անախորժութիւններ չունենալու համար նախարարութիւնը հետեւեալ համաձայնութեան եկավ Պարսից Հիւպատոսի հետ. 1. Բոլոր հայ պարսկահպատակները պարտաւոր են իրենց անցագրերը ներկայացնել Արտաքին Գործերի նախարարութեան - Վիզա անելու համար. 2. Այն դէպքում, երբ հաստատւի որ պարսկական անցագիր կրող անձը ոչ պարսկահպատակ է, Նախարարութիւնը անմիջապէս կը յայտնի Հիւպատոսին, որ կը ջնջէ իր տոմարներից այդպիսինի անունը. 3. Հիւպատոսարանը այս մտքով կը յայտարարէ հայ պարսկահպատակներին: Խնդրում եմ կարգադրել յայտնել այդ մասին Ձեզ ենթակայ համապատասխան յիմնարկութիւններին»[1]:

Դասալքություն կոչված չարիքի դեմը չկարողացան առնել, իսկ կյանքը ցույց էր տալիս և ապացուցեց, որ իրավացի էին գեներալ Ա. Դոլուխանյանի (Դոլուխանովի) նման մարդիկ, որոնք իշխանության բոլոր օղակներին, այդ թվում և ՀՀ ՆԳ մարմիններին ու միլիցիային կոչ էին անում պայքարել Հայկական բանակը արատավորող և ջլատող այդ ուժի դեմ, կամ էլ փորձում էին ինչ-որ մի ավելի լավ ելք որոնել, չէին երկնչում խոչընդոտների ու դժվարությունների առաջ, առավել ևս չէին հուսահատվում կարծես թե ոչինչ չխոստացող հայկական իրականությունից, և փորձում էին պայքարել այդ չարիքի դեմ:

Զինակոչության հարցում բնակչության որոշ խմբեր, պարսկահպատակներն և այլ շերտեր ունեին որոշ արտոնություններ, ինչն էլ խնդիրներ առաջ բերեց. Զինվորական վարչությանն ուղղված ՀՀ պաղամենտի ավաք քարտուղար Հ. Տեր-Հակոբյանի 1919 թ. օգոստոսի 15-ի գրությունից տեղեկանում ենք, որ ի պատասխան օգոստոսի 13-ի գրության (N 2460), վերջինիս տեղեկացնում էր, որ համաձայն 1915 թ. Զինվորական պարտականության մասին օրենքի, *Պաղամենտի անդամները ենթակա չեն զինակոչի*[2]*:* Եվ դա այն դեպքում, որ զորակոչի, բանակի և հանրապետության սահմանների, ավտանգության ապահովման խնդրում դժվարություններ կային. 1919 թ. օգոստոսի 31-

[1] Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 280, թ. 90:

[2] Նույն տեղում, ֆ. 204, ց. 1, գ. 51, թ. 144:

ին (N 105) ՆԳՆ Սուրմալուի գավառի կոմիսար Խ. Բաբայանը նշելով, որ Իգդիրի հիսուն հազարի չափ հայ ազգաբնակությունը սեղմված օղակի մեջ, համարյա պաշարողական դրության մեջ է՝ շրջապատված ամեն կարգի թշնամի տարրերով, ՆԳ Նախարարին հայտնում է, որ այդ հանգամանքը ազդում է մանավանդ զորամասի հոգեբանության վրա, խնդրում էր միջնորդել բանակը ուժեղացնել, ամրացնել Սուրմալուն[1]:

Հայկական բանակում տիրող բարքերին, և մասնավորապես դասալիքների և այլ հարցերը սուր կերպով են ներկայացված Սոցիալիստ-հեղափախականների կուսակցության Հայաստանի կոմիտեի օրգան «*Սոցիալիստ-հեղափոխական*»-ի 1919 թ. սեպտեմբերի 18-ի համարում զեռեղված Ա. Խոնդկարյանի «Սուրմալուի ողբերգությունը» հոդվածում. ***«Ոչ մի վայրում մեր զորամասերը ենթարկված չեն եղել այնպիսի դեմորալիզացիայի, ինչպես Սուրմալվում: Բազմաթիվ բռնություններ, ապօրինի գործողություններ, թալաններ ու հափշտակություններ կատարվել են զորքի կողմից հայ և թուրք ժողովրդի նկատմամբ, և այդ ամենը մնացել է անպատիժ: Դիսցիպլինան զորքի մեջ ընկել է վերջնականապես եւ դառել է բացարձակապես անռազմունակ:*** Մեր թերթը ժամանակին փորձել է ուշադրություն դարձնել այս ցավալի երևույթի վրա, բայց նրան սպառնացել են դատարանով ու անվայել գրված նամակներով: Եվ այդ արվել է այն ժամանակ, երբ ստեղծված ծանր դրության մասին տեղյակ են եղել զինվորական բարձր իշխանություններ, երբ նրանց տրամադրության տակ է եղել քննական մի ստվար հատոր, որ ավելի մռայլ գույներով է նկարագրում Սուրմալվի անցուդարձը և զորքերի քայքայված դրությունը»: Հարկ է ասել, որ Ա. Խոնդկարյանի այս հոդվածը առաջ է բերում ԱԳ, ՆԳ և Զինվորական նախարարությունների բարձրագույն ղեկավարության դժգոհությունը, իսկ ՆԳ նախարարը այն վիրավորական է համարում հայ զորքի և նրա հրամանատարների արժանապատվության համար, սպառնալով, որ եթե թերթում շարունակվեն տպագրվել զորքերի դրության, տեղավորման և տեղափոխության, զինամթերքի և զորքերի

[1] Նույն տեղում, ֆ. 199, ց. 2, գ. 607, թ. 3:

դրության մասին նմանատիպ տեղեկություններ, որոնք կարող են լինել վիրավորական հրամանատարության համար, թերթը կփակվի[1]:

Սակայն ավելի դժվար էր դասալիքների այն կատեգորիայի հետ գործ ունենալուց, որոնք «զինված էին» պարսկական և այլ անձնագրերով, և օրը ցերեկով ազատ շրջում էին Երևանում և այլ քաղաքներում: Դա մեծ չարիք էր, և բարոյալքող ազդեցություն էր թողնում ողջ հասարակության և բոլոր խավերի վրա: Դեռ 1919 թ. օգոստոսին ՀՀ Զորահավաքի և դասալքության դեմ պայքարի գծով հատուկ կոմիսարի պարտականությունները կատարող կապիտան Վ. Մուրադյանը[2], որը նաև ՀՀ Հետախուզական ծառայության լավագույն սպաներից էր, առիթ է ունենում գործ ունենալ արդեն բավականաչափ ասեկոսների ու աղմկոտ խոսակցությունների նյութ դարձած, այսպես կոչված, պարսկական անձնագրեր ունեցող անձանց հետ, որոնք այդ ճանապարհով ևս խուսափում էին զորակոչից և բարոյալքություն մտցնում առանց այն էլ շատ դժվարությունների ու խնդիրների առաջ կանգնած Հայկական բանակի շարքերում: Դասալքության դեմ պայքարի պատմության տեսանկյունից կարևորվում է Վ. Մուրադյանի 1919 թ. օգոստոսի 7-ի պաշտոնական դիմումագիրը՝ ուղղված Երևանի զորքերի պետին և պարսկահպատակ հայերի Հայրենակցական Միությանը, որում վերջինս ընդգծում էր ոչ պարսկահպատակ հայերի կողմից զորակոչից ազատվելու նպատակով ոչ օրինական ճանապարհով պարսկական անձնագրեր ձեռք բերելու փաստերի ու դեպքերի մասին: Այնուհետև Վ. Մուրադյանը նշում էր, որ իր աշխատանքի ապահովվածության և նման դասալիքներին բռնելու համար, և վերջապես այդ զորակոչերից իսկական պարսկահպատակներին ձերբազատելու և տրվող երաշխիքների արդյունավետության համար ինքը խնդրում է Հայրենակցական Միությունից իրենց եղբայրակիցներին լայնորեն տեղյակ պահել Հատուկ Կոմիտեի կամ Հանձնաժողովի ստեղծման մասին, որը պետք է զբաղվեր վերը նշված փաստաթղթերի (անձնագրերի) ստուգմամբ: Ընդ որում, Վ. Մուրադյանը գրության մեջ շեշտում էր, որ իսկական կհամար-

[1] Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 62, թ. 54-55, **«Սոցիալիստ-հեղափոխական»,** Երևան, հինգշաբթի, 18 սեպտեմբերի, 1919 թ.:

[2] Տե՛ս **Վիրաբյան Վ. Հ.,** Հայկական հետախուզությունը Առաջին Հանրապետության տարիներին (1918-1920 թթ.), էջ 64-67:

վեն այն անձնագրերը, որոնք կնշագրվեն Հայրենակցական Միության ղեկավարության և ստեղծվելիք հանձնաժողովի կողմից, իսկ այն անձինք, ովքեր կներկայացնեն առանց վերջիններիս կողմից նշումների փաստաթղթեր, իր կողմից կձերբակալվեն՝ որպես զինվորական պարտականություններից խուսափողներ[1]:

Սակայն բարդությունները այդ հարցում չեն վերանում, առաջանում են նորերը, և ընդ որում՝ այլ տեղերից, այլ անհարթություններ առաջ բերելով պարսկահպատակների և առհասարակ օտարահպատակների զորակոչի ենթարկման խնդրում: Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանի 1920 թ. սեպտեմբերի 22-ի (№ 4267) հեռագրում՝ ուղղված ՀՀ Արտաքին Գործերի նախարարին, կապված ՀՀ-ում անցկացվող օտարահպատակների զորակոչի հետ, խնդրվում էր հրահանգներ տալ, թե ինչպես վարվել այն իրավիճակներում, երբ որոշ քաղաքացիներ գտնվում են Վրաստանի տարածքում՝ իրենց համարելով այդ երկրի հպատակներ[2]: 1920 թ. հոկտեմբերի 8-ին (N 713) ՀՀ նախարարապետին ուղղված գրությունում Պարսից հյուպատոսը նշելով պարսկահպատակների անձնագրերի իսկությունը ստուգելու նպատակով ՀՀ ՆԳ նախարարության կողմից ստեղծված հանձնաժողովի և անձնագրերը խլելու, պարսկահպատակներին իսկույնևեթ զորք ուղարկելու և նրանց արգելափակելու փաստերի մասին, Պարսից հյուպատոսարանի անունից պահանջում էր անհապաղ կարգադրել, որ այդ նպատակով ստեղծված հանձնաժողովի աշխատանքներն անօրինական են, գտնելով, որ փաստաթղթերը կարող են ստուգվել միայն հյուպատոսարանի կողմից, փաստացի վիրավորական համարելով ՀՀ միլիցիայի և ՆԳ մարմինների կողմից դրանց իսկության ստուգման հանգամանքը, որը իրենց բանակցությունների խախտում էր, խնդրում էր խլված անձնագրերը ետ ուղարկել իրեն վստահված հյուպատոսարան՝ տերերին հանձնելու համար՝ ապագայում էլ ձեռնպահ մնալով նմանատիպ գործողություններից և ազատել զինվորական ծառայությունից բռնի զորակոչված բոլոր պարսկահպատակներին՝ այդ մասին իրազեկելով իրենց:

---

[1] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 201, ց. 1, գ. 96, թ. 28, 30:

[2] Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 330, թ. 38:

Ելնելով նման փաստերից, 1920 թ. հոկտեմբերի 9-ի մի փաստաթղթում հայտնվում էր ՆԳ նախարարության կողմից ստեղծված հանձնաժողովի գործունեության մասին, որը կզբաղվեր պարսկահպատակների զինվորական ծառայության խնդիրներով՝ ստուգելու համար փաստաթղթերը և դրանց համապատասխանությունը իսկականի հետ, թե ովքեր կարող են օրինական կարգով ազատվել զորակոչից, իսկ մինչ այդ պարսկական անձնագրեր ունեցողները ազատ էին համարվում զինակոչից՝ մինչև իսկության պարզումը[1]: Պարսկական կեղծ անձնագրերը իրենց «դերը» կատարում են, նպաստելով այդ չարաբաստիկ հարցի բարդացմանը: Սակայն իսկական չարիք էր, երբ դասալքությանը, կարելի է ասել, նպաստում էին նաև Հայկական միլիցիան, ՆԳ մարմինների աշխատակիցները, որոնց շնորհիվ էլ դասալքությունն ահռելի չափերի էր հասել և դարձել գրեթե անզսպելի:

1919 թ. հոկտեմբերի 1-ին (N 66) Հայաստանի Հանրապետության ՆԳ նախարարին ուղղված գրությունում Զորահավաքի հատուկ կոմիսար Վ. Վալադյանը նշում էր, որ բազմաթիվ զինվորագուներ, որոնք ռուսահպատակ են եղել, ձեռք են բերել պարսկական անձնագրեր՝ զինակոչից ազատվելու համար: Վալադյանը այս երևույթը նկատի ունենալով, անհրաժեշտ էր գտնում և իրեն իրավունք վերապահում ձերբակալելու այն պարսկահպատակ կոչվածներին, որոնց անձնագրերի ճշտությունը կասկածելի էր իր տեսանկյունից[2]: Ի պատասխան, 1919 թ. հոկտեմբերի 30-ին (N 915) Երևանի պարսկական հյուպատոսի պաշտոնակատար Նազարյանը Ալ. Խատիսյանին հղած պաշտոնագրում հայտնում է, որ Դասալքության դեմ պայքարի նոր հատուկ կոմիսարի նշանակումից հետ նա սկսել է հալածել Հայաստանի տարածքում ապրող պարսկահպատակ հայերին՝ նրանց մեղադրելով դասալքության մեջ: Ելնելով դրանից, հյուպատոսը գտնում էր, որ պարսկահպատակ հայերը որպես օտարերկրացիներ երբեք չեն կրել զինվորական պարտականություններ և որ նրանք, խիստ վրդովվելով կոմիսարի անօրինական գործողություններից, պահանջում են անհապաղ դադարե-

[1] Նույն տեղում, թ. 35:

[2] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 200, ց. 1, գ. 330, թ. 14:

ցնել պարսկահպատակների հալածանքները, խնդրելով անհապաղ համապատասխան կարգադրություններ անել[1]:

1919 թ. հոկտեմբերի 31-ին (N 4593) ՀՀ ԱԳ դիվանապետ Մադաթը Թիֆլիսում ՀՀ ներկայացուցչի հայտնում էր, որ ուղարկում է Երևանի Պարսից հյուպատոսի հոկտեմբերի 30-ի (N 917) գրությունը պարսկահպատակ հայերի դասալքության վերաբերյալ և գործ դրած խստությունների մասին[2]: Իսկ արդեն 1919 թ. նոյեմբերի 1-ին (N 61) Զորահավաքի հատուկ կոմիսար Վալադյանը ՀՀ ՆԳ նախարարից խնդրում էր կարգադրել, որ պատասխանատվության ենթարկվեն և պարզվի, արդյոք զինվորական ծառայության ենթակա այն պարսկահպատակները, որոնք, ինչպես նաև նրանց հայրը, ծնված լինելով ոչ Պարսկաստանում, ինչու՞ Հայաստանի տարածքում ներկայումս հողեր ունեն այս և այն գյուղում կամ քաղաքում[3]: Իսկ արդեն 1919 թ. նոյեմբերի 1-ին (N 62) Զորահավաքի հատուկ կոմիսար Վալադյանը ՀՀ ՆԳ նախարարին հայտնում էր, որ ի պատասխան Երևանի պարսկահայ հայրենակցական միության նախագահի հոկտեմբերի 30-ի նամակի, որում բողոք էր հայտնվել, թե զորահավաքի հատուկ կոմիսարը զորահավաքի է ենթարկում պարսկահպատակներին և տուգանում, այդ կապակցությամբ ինքը պատիվ ունի հաղորդելու, որ ինքը ձերբակալում է և տուգանքի ենթարկում չներկայացողներին, բերելով Համբարձում և Ավագ Մարգարյան եղբայրների օրինակը, որոնց զորք է ուղարկել՝ նրանց պարսկահպատակությունը համարելով հարցական, բերելով նաև այլ փաստեր, ավելացնելով, որ այդ մասին հաղորդել է պարսից հյուպատոսին և հայրենակցական միության նախագահին, պնդելով, որ ոչ մի ուրիշ պարսկահպատակ անօրինական զորք չի ուղարկվել[4]: Այս գործն ունեցավ շարունակություն: ՀՀ ԱԳ Նախարարին ուղղված 1919 թ. նոյեմբերի 4-ին (N 1955) գրությունում 4-րդ առանձին բրիգադի հրամանատար Սեպուհը հայտնում էր, որ իրեն վստահված բրիգադի մասերում գտնվում են բավականին թվով զինվորներ, որոնք ունեն պարսկահպատակության վկայագրեր, սակայն միաժամանակ ընդ-

[1] Տե՛ս նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 77, թ. 156:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 142:
[3] Տե՛ս նույն տեղում, գ. 403, թ. 15:
[4] Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 403, թ. 16:

գծում, որ ինքը հաստատ գիտի, որ դրանք կեղծ են և ձեռք են բերվել զանազան միջոցներով Հյուսիսային Կովկասում և Թիֆլիսում: Սեպուհը տեղեկացնում էր, որ տեղի պարսից հյուպատոսը պահանջում է դրանց ազատել զինվորական ծառայությունից, ասելով, որ իր մերժումը հիշյալ պատճառաբանությամբ չի ընդունվում, որ այդ մասին ԱԳ նախարարության կողմից կարգադրություն է եղել, որ պետք է ազատվեն, քանի որ վկայականներ են ցույց տվել: Սեպուհը խնդրում էր հրահանգներ տալ, թե այդուհետ ինչպես վարվել[1]: Այդուհանդերձ, տեղիք տալով դիվանագիտական ճնշումներին, 1919 թ. նոյեմբերի 6-ին (N 113) Զորահավաքի հատուկ կոմիսար Վ. Վալադյանը ՆԳ նախարարին ուղղված հեռագրում հայտնում է, որ պարսկահպատակ համարվող Ա. Մարտիրոսյանը, որն իր կարգադրությամբ ուղարկվել է Իգդիրի զորամաս, ազատ է արձակվել իր նոյեմբերի 5-ի կարգադրության համաձայն, իսկ Հ. Ավագյանը ամենևին էլ չի ուղարկվել որևէ զորամաս, իսկ Ավագ և Համբարձում Մարգարյանների գրավադրված 25 հազար ռ. ետ է տրված, որն անօրինական էր վերցված[2]:

Այդ ընթացքում Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատար պ. Լ. Եվանգուլյանը սկսել էր ստանալ զանազան գանգատներ ու բողոքագրեր, որոնք դիվանագիտական ուղիներով փոխանցվում էին Արտաքին Գործերի նախարարին, ինչպես նաև պարսկական հյուպատոսին, որոնցում հեղինակները փորձում էին պաշտպանվել կարծես թե իրենց նկատմամբ «անարդարացի» վարքագիծ որդեգրած զորահավաքային մարմիններից: Այսպես, դեռ 1919 թ. նոյեմբերի 6-ին Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատարի անունից ՀՀ ՆԳ նախարարության դիվանապետին է ուղարկվում մի հեռագիր (№ 4569). «Սրանց կից ուղարկվում է Ձեզ Վրաստանի մեր դիվանագիտական ներկայացուցիչ պ. Եվանգուլյանի № 212 հեռագրի պատճենը՝ պարսկահպատակ հայերի զինակոչի կանչելու մասին: Խնդրում ենք այս մասին զեկուցել պ. մինիստրին՝ ի տեղեկություն և ի կարգադրություն. դիվանապետ»[3]: Իսկ բուն գրության մեջ Թիֆլիսում Հայաստանի դիվա-

[1] Նույն տեղում, թ. 17:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 20, 152, 157:

[3] Նույն տեղում, , ֆ. 201, ց. 1, գ. 77, թ. 149:

նագիտական հավատարմատարը մինիստր-նախագահին հաղորդում էր հետևյալ ուշագրավ բովանդակությամբ հեռագիրը. «Երևանի պարսկական հյուպատոսի հաղորդումը. Զինվորական պարտականությունների գծով Կառավարական Հատուկ կոմիսարը չնայած բողոքներին, գրանցում է պարսկահպատակ հայերին, ձերբակալում և ենթարկում է տուգանքի չներկայացածներին: Գլխավոր հյուպատոսի միջնորդագրի համաձայն խնդրում եմ արտակարգ միջոցներ ձեռնարկել. Դիվանագիտական ներկայացուցիչ՝ Եվանգուլյան»[1]: Ըստ երևույթին, պարսկահպատակներին զինվորագրելու գործում թույլ էին տրվել որոշ սայթաքումներ ու սխալներ, վարկաբեկելով ճիշտ քաղաքական մոտեցումը տվյալ խնդրում, որից էլ օգտվել էին որոշ հայ քաղաքացիներ, օգտագործելով իրենց հնարավորությունները, դիմել էին պարսկական հյուպատոսին, վերջինս էլ դիմել էր Եվանգուլյանին, և նա էլ ձգտելով խուսափել դիվանագիտական սկանդալային իրավիճակների առաջացումից, դիմել էր կառավարությանը, ինչից էլ ելնելով հայկական կողմը փոքր-ինչ տեղի էր տվել, փորձելով լուծել խնդիրը և լարվածությունը վերացնել[2]: Դժբախտաբար, խնդիրը դրանով չի ավարտվում ու չի էլ հանգուցալուծվում, ունենալով ավելի խոր արմատներ՝ կապված լինելով շատ մութ մեքենայությունների հետ: Լ. Եվանգուլյանին հասցեագրված 1919 թ. նոյեմբերի 7-ի հեռագրում ՀՀ Արտաքին Գործերի նախարարության գլխավոր քարտուղարը արդեն ինքն էր խնդրում վերջինից պարսկական հյուպատոսից պարզել, թե ի՞նչ փաստաթղթերի հիման վրա են տրվում պարսկական անձնագրեր, քանզի իրենք ունեն պաշտոնական տեղեկություններ, որ շատ հայեր ներկայացնում են կեղծ պարսկական անձնագրեր՝ հայկական բանակում զինվորական ծառայությունից խուսափելու համար[3]:

---

[1] Նույն տեղում, գ. 77, թ. 150:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 403, թ. 22, 25, գ. 234, թ. 159, ՀՀ ՆԳ նախարարի օգնական Ս. Թորոսյանը մի ազդում (1920 թ.) հենց կոչ էր անում զորահավաքը իրականացողներին նրբանկատ լինել պարսկահպատակների նկատմամբ, նրանց նկատմամբ չարաշահումներ չթույլատրել, որպեսզի դրանից չվնասվեն և չխաթարվեն հայ-պարսկական հարաբերությունները.- Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 201, ց. 1, գ. 54, թ. 16:

[3] Նույն տեղում, ֆ. 275, ց. 5, գ. 178, թ. 111:

1919 թ. նոյեմբերի 11-ին (N 4751) ՀՀ Արտգործնախարարը դիմելով Նորին գերազանցության Պարսից հյուպատոսին, հայտնում էր, որ ի պատասխան վերջինիս կողմից ՀՀ նախարարապետին ուղարկված գրությունների՝ կապված զինվորական պարտականությունների մեջ ներգրավելու զորակոչային կոմիսար Վալադյանի կողմից ձեռնարկված քայլերի առթիվ մի շարք հայերի զորակոչման հետ, որոնք պարսկահպատակներ դուրս եկան, մտահոգություն էր արտահայտում ձեռնարկված արտակարգ միջոցների առումով մեզ բարեկամ Պարսկաստանի հպատակների շահերի պաշտպանության դիրքերից, Հայաստանի կառավարությունը հետաքննություն է անցկացնում այն հարցի մասին, թե ի՞նչ ձևով են Պարսկաստանի հայ հպատակները ենթարկվում զինվորական պարտականությունների կատարմանը: Ոչ միայն Զորակոչի կոմիսարի, այլև տարբեր զորամասերի հրամանատարների հաղորդումներից պարզվել է, որ զորակոչային տարիքի շատ անձիք զինվորակոչից ազատվելու նպատակով անհայտ ճանապարհով ձեռք են բերել պարսկական անձնագրեր և նրկայացել են որպես պարսկահպատակներ, ինչը այդպես չէր: Անկասկած, այդպիսի կեղծ անձնագրերով անձիք իրականում չլինելով Պարսկաստանի հպատակներ, հավասարապես խախտում են ինչպես Պարսկաստանի, այնպես էլ Հայաստանի շահերը: Այդ իսկ պատճառով էլ թե՛ Հայաստանի կառավարությունը, թե՛ Պարսկաստանի կառավարությունը ի դեմս Պարսից հյուպատոսի հավասարապես շահագրգռված են այդպիսի անձանց պատասխանատվության ենթարկելու հարցում: Ընդգծվում էր, որ ՀՀ կառավարությունը շահագրգիռ է Պարսկաստանի իրական քաղաքացիների շահերի պաշտպանությամբ, սակայն նաև մտահոգված է, որ դրանից չօգտվեին Պարսկաստանի հետ ոչ մի առնչություն չունեցող անձիք, որոնք իրենց պարսկահպատակ էին համարում միայն իրենց կեղծ անձնագրերի հիման վրա: Այդ հանգամանքները պարզելու նպատակով ՀՀ ԱԳ նախարարը պարսից հյուպատոսից խնդրում էր չմերժել հաղորդել, թե ինչ պահանջների պետք է բավարարեն պարսկահպատակների կողմից ստացված անձնագրերը, ի՞նչ փաստաթղթերի հիման վրա են տրվում պարսկական անձնագրերը[1]:

[1] Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 403, թ. 22:

Այս նույն մտքերն են շոշափվում նաև ՀՀ Արտաքին Գործերի նախարար Ս. Տիգրանյանի 1919 թ. նոյեմբերի 22-ի դիմումագրում՝ ուղղված ՆԳ նախարարին, որում վերջինս տեղեկացնում էր վերոնշյալ «պարսկական անձնագրերով զինված» դասալիքների մասին, ասելով, որ Զորահավաքի գծով հատուկ կոմիսար Վ. Վալադյանի և զորամասերի հրամանատարների հաղորդագրություններից իրեն հայտնի է դարձել, որ զորակոչային տարիք ունեցող շատ անձինք իրենց զինվորական ծառայողական պարտականություններից ազատելու նպատակով անհայտ ճանապարհով ձեռք են բերել կեղծ պարսկական անձնագրեր: Արտաքին Գործերի նախարարը ընդգծում էր, որ ինքը բանակցությունների մեջ է մտել Երևանում գտնվող պարսկական հյուպատոսի հետ այն անձանց զորակոչելու հարցի հետ կապված, ովքեր ունեին կեղծ պարսկական անձնագրեր՝ չլինելով պարսկահպատակներ: Արտաքին Գործերի նախարարը տեղեկացնում էր ՆԳ նախարարին, որ այդ բանակցությունների արդյունքով ընդունվել են ներքոհիշյալ որոշումները. 1) Պարսկական անձնագրեր ունեցող բոլոր անձանց, ովքեր կասկածվում են դրանք ոչ օրինական ճանապարհով ձեռք բերելու մեջ, անհրաժեշտ է ուղարկել պարոն պարսկական հյուպատոսի մոտ՝ հաղորդելով նրան բոլոր այն տվյալների և փաստաթղթերի մասին, որոնք կապացուցեն նրանց ՀՀ քաղաքացի լինելը: Պարսկական հյուպատոսարանում անցկացվելու է հետաքննություն նրանց պարսկահպատակ լինելու վերաբերյալ՝ արդյունքից կախված կլինի տվյալ զորակոչային տարիքի անձանց զորակոչից ազատելու հարցի հետագա վճռումը, 2) Պարսկական հյուպատոսը հանդես է գալիս հայտարարությամբ, համաձայն որի «բոլոր պարսկահպատակ հայերը 20 օրվա ընթացքում պետք է իրեն ներկայանան բոլոր փաստաթղթերով, ապացուցելու համար իրենց հպատակությունը և ստանալու հատուկ վկայական, որը կտրվի մանրազնին ստուգումից հետո: Այդպիսի վկայականները պարտադիր են ՀՀ իշխանությունների համար և դրանց կրողները ազատվում են զորահավաքից: Փաստաթղթի վերջնամասում արված է մակագրություն, որում ասվում էր, որ այդ տեղեկատվությունը ուղարկվում է ի գիտություն, նկատի ունենալով դրանց անհրաժեշտությունը հյուպատոսի

կողմից հարկ եղած կարգադրությունների տեսանկյունից ելնելով»[1]: 1919 թ. նոյեմբերի 19-ին (N 941) ՀՀ ԱԳ նախարարին ուղղված պատասխան հեռագրում Պարսից հյուպատոսի պաշտոնակատարը դիմում էր խնդրանքով զինվորակոչից ազատելու հետ կապված կալանված և զորամասեր ուղարկված պարսկահպատակ հայերի մասին, որոնք ունեն ստուգված անձնագրեր, խնդրելով հյուպատոսարան ուղեկցել այն անձանց, որոնց անձնագրերը ստուգված չեն եղել՝ նրանց հպատակությունը պարզելու: Պարսից հյուպատոսը խնդրում էր կարգադրել պարսից հյուպատոսարան ուղեկցել չստուգված և դասալքության դեմ պայքարի զորակոչի կոմիսարի կողմից առգրավված անձնագրեր ունեցող անձանց՝ նրանց հպատակությունը պարզելու նպատակով[2]:

Ամեն դեպքում, 1919 թ. նոյեմբերի վերջին ԱԳ նախարարությունը փորձում է քիչ կարգավորել օտարահպատակ պոտենցիալ զինակոչիկների, այդ թվում պարսկահպատակ հայերի հարցը, և ի պատասխան Եվանգուլյանի հարցումի գրեթե հրահանգում իրեն դիմող հայ երիտասարդներին: Ըստ այդմ անհրաժեշտ է գտնվում, որ այն երիտասարդները, որոնց տարիքը Հայաստանում արդեն կանչված է (20-32 տարեկան) անցագիր ստանալու, կարելի է տալ անցագրեր, որպեսզի նրանք վերադառնան Հայաստան: ԱԳ–ն իր դիվանի միջոցով հայտնում էր, որ ՆԳ նախարարի կարգադրությամբ թիֆլիսյան ներկայացուցչին տեղեկացվել է, որ եթե այդ հիշյալ երիտասարդները իրենց զգում են Հայաստանի հպատակներ, ուրեմն պետք է նրանց տալ անցագրեր և ուղարկել Հայաստան, որպեսզի զինվորագրվեն և կատարեն զինվորական պարտականությունները, կարծելով նաև, որ ՀՀ հպատակության մասին օրենքը մշակելիս պետք է սկզբունք մշակել, որպեսզի Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչին դիմող հայերը դիտվեն և համարվեն ՀՀ հպատակներ, որի առումով դեռ նոյեմբերի 12-ին (N 115) ԱԳ նախարարը դիմել էր Եվանգուլյանին[3]:

[1] Նույն տեղում, գ. 71, թ. 171, ֆ. 200, ց. 1, գ. 120, թ. 291, 294-295:
[2] Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 403, թ. 15:
[3] Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 77, թ. 168-170:

Խնդիրերն արագ չէին հանգուցալուծվում: 1919 թ դեկտեմբերի 13-ի (N 5419) մի գրություն, որը ԱԳ նախարարի կողմից ուղարկվել էր Զինվորական, ՆԳ և ֆինանսների նախարարներին, Պարսից հյուպատոսը բողոքում էր պարսկահպատակներից խլված, բռնագրաված ունեցվածքի և իրերի մասին, խնդրելով միջոցներ ձեռք առնել: Դրանցում խոսք էր գնում Զորահավաքի հատուկ կոմիսար Վալադյանի կողմից ձերբակալված պարսկահպատակների մասին, որոնց անձնագրերի իսկությունը կասկածելի էր համարվել: Նշվում էր, դա ստուգելու նպատակով ՀՀ ԱԳ նախարարը դիմել է պարսից հյուպատոսին, խնդրելով պարզել գործի հանգամանքները, համաձայնության գալով՝ սկզբունքորեն խնդիր դնել, թե ի՞նչ թույլատրելի հանգամանքների դեպքերում պետք է պարսկահպատակների, և առհասարակ օտարերկրացիների բռնագրավում իրականացվի, ի՞նչ ձևերով: Խնդրվում էր ֆինանսների նախարարի զեկույցի հիման վրա պարզել 1) թույլատրելի՞ է արդյոք օտարերկրացիների, և մասնավորապես պարսկահպատակների շարժական, ինչպես նաև անշարժ գույքի բռնագրավումը: Իսկ եթե թույլատրելի է, ապա 2) ի՞նչ դեպքերում և ի՞նչ օրինագծերի դեպքում, ո՞վ է իրագործում այդ ռեկվիզիցիան և ի՞նչ կարգով, 3) ի՞նչ միջոցներով պետք է պաշտպանված լինեն օտարահպատակների և մասնավորապես պարսկահպատակների շահերը: Հետևության մեջ ԱԳ նախարարը նշում էր, որ ներկայացված տեղեկությունները ընդհանուր բնույթի են և ունեն սկզբունքային նշանակություն, և անհրաժեշտ են այն կազուսների հանգուցալուծման համար, որոնց մեջ ընկնում է ԱԳ նախարարությունը ամեն օր՝ բախվելով դրանց հետ[1]:

1919 թ. փետրվարի 20-ին Նախարարների խորհրդի նիստում լսվում է Զինվորական նախարարի զեկուցումը իսկական զինվորացուների (20-ից մինչև 25 տարեկան) և զինապարտների (26-ից մինչև 48 տարեկան) ընդհանուր թիվը ստուգելու և նրանց կանոնավոր զինվորակոչի ենթարկելու համար ցուցակագրական մարմին կազմակերպելու և այդ մարմնի ծախսերի համար մոտ 100 հազար ռուբլու ավանս հատկացնելու մասին հարցը: Նախարարների խորհուրդը քննարկում է այդ հարցը, որոշում հետաձգել և քննության առնել ՆԳՆ զինվորական

[1] Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 234, թ. 159:

ատյանների վերաբերյալ ներկայացվելիք օրինագծի հետ միասին[1]: Այդ նույն նիստում Զինվորական նախարարը պարտավորեցնում է դասալքությանը վերջ դնելու համար դատաստանական կարգով պատասխանատվության ենթարկել մեղավորներին, ինչպես նաև շրջանների կոմիսարներին և գյուղական ավագներին դասալիքներին պատսպարելու, հովանավորելու և թողտվության համար վարչական կարգով պատասխանատվության ենթարկելու, ելնելով այն հանգամանքից, որ զինվորների փախուստները շարունակվում են, ինչպես նաև զինվորական ծառայության չներկայացողների թիվը, ինչը ժողովրդի համար սովորական բան էր դարձել: Սակայն անդրադառնալով դասալքության պատճառներին, Զինվորական նախարարը դրա գլխավոր պատճառը համարում էր ժողովրդի թշվառ վիճակը, գտնելով, որ դրա վերացմամբ կվերանան նաև դասալքություն ծնող երևույթները, կարծելով, որ ժամանակավոր միջոցներ պետք է ձեռնարկել զորքի անհրաժեշտ քանակի ապահովման համար, որ երկրի վիճակը թույլ չի տալիս հնարավոր դարձնել դասալիքներին պատասխանատվության կանչելը, որը լավ հասկանում են նաև իրենք՝ դասալիքները, որ գոնե անհրաժեշտ է դասալիքներին, նրանց թաքցնողներին դատական և վարչական կարգով պատասխանատվության ենթարկել, որը ըստ նախարարի, հնարավոր կդարձնի էապես կրճատել դասալիքների և նրանց հովանավորների թիվը, ըստ այդմ նախարարների խորհրդին ներկայացնելով դասալքության դեմ պայքարի ժամանակավոր նախագիծ, ընդգծելով, որ նախագիծը համաձայնեցվել է Արդարադատության նախարարի հետ[2]:

Դասալքությունը իսկական չարիք էր բանակի համար և ժանտախտի նման քայքայում էր այն, և դրանից վրդովված՝ ազնվաբարո զինվորականությունը փորձում էր այն արմատախիլ անել, անարգանքի սյունին գամելով այդ գործում միլիցիայի և ՆԳՆ մարմինների անբարո կեցվածքը, հաճախակի դրսևորվող հովանավորչության փաստերը: ՀՀ Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի պետին ուղղված իր 1919 թ. մարտի 4-ի զեկուցագրում (№ 1439) գեներալ-մայոր Արսենի Սերգեյի Դոլուխանյանը (Դոլուխանովը) բառացի ընդգծում էր հետևյա-

[1] Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 96, թ. 28:

[2] Նույն տեղում, ֆ. 404, ց. 1, գ. 81, թ. 1-7:

լը. «Գործուղման ժամանակ շրջագայելով Ղարաքիլիսա, Քոլագ[ի]երան և Ջալալ-Օղլի շրջանի գյուղերով, ես նկատեցի մեծ քանակությամբ դասալիք-զինվորներ, որոնք շրջում էին գյուղում: Դասալիք առողջ, ջահել տղային կարելի է տեսնել և գյուղի խանութում՝ մանր առևտրով զբաղվելիս: Ինձ մոտենում էին տեղի միլիցիայի հետ և խոսում, բոլորովին չամաչելով ու չվախենալով, որ իրենք հանցագործներ են, և իրենց կարող են ձերբակալել: Ողջ գյուղը, հազվադեպ բացառություններով, հագած է զինվորական հագուստ, հաճախ նույնիսկ ուսադիրներ: Ըստ երևույթին, տեղական վարչակազմը բոլորովին էլ չի պայքարում այդ չարիքի դեմ և մտադիր չէ ձերբակալել դասալիքներին ու պետական զգեստ գողացողներին՝ այն ժամանակ, երբ հայկական բանակի շարքերը նոսրանում են օր-օրի և նա քայլում է համարյա տկլոր»[1]: Ի պատասխան Դոլուխանյանի այս խիստ բնութագրականին, Ղարաքիլիսայի գավառային կոմիսար, պորուչիկ Անիևը 1919 թ. ապրիլի 16-ին Հայաստանի Տարածքի Վարչակազմի և միլիցիայի կոմիսարին ուղղված պատասխան զեկուցագրում (№ 1403), կապված Դոլուխանյանի զեկուցագրում պարունակված փաստերի հետ գյուղերում լի դասալիքների մասին, և այն մասին, որ նրանց տեղական վարչակազմը սոսկ մատների արանքով է նայում և ոչ մի միջոց չի ձեռնարկում արմատախիլ անելու այդ չարիքը, գտնում էր, որ վարչակազմի հասցեին Դոլուխանյանի վերոնշյալ մեղադրանքները ուռճացված են և մերկապարանոց: Անիևը փորձում էր արդարանալ, սակայն դա նրան չի հաջողվում, քանզի հակափաստարկները շատ թույլ էին: Եվ այսպես, Անիևը գրում էր, որ զորամասերի պետերի բոլոր պահանջները՝ բռնելու դասալիքներին, անմիջապես տեղական իշխանությունների կողմից կատարվել ու կատարվում են, ինչն, իհարկե, սուտ էր և իրականությանը բոլորովին չէր համապատասխանում, և այս առումով Դոլուխանյանը լիովին իրավացի էր: Անիևը գրում էր նաև, որ դասալքությունն ունի ավելի խոր արմատներ և այդ չարիքը միայն ռեպրեսիաներով արմատախիլ անել հնարավոր չէ, ինչում նա մասամբ իրավացի էր, գտնելով՝ որպեսզի զինվորը չփախչի, հարկավոր է նրա համար ստեղծել կյանքի

[1] Նույն տեղում, թ. 85:

ավելի տանելի պայմաններ զորանոցներում և այլն[1]: Հայաստանի Տարածքի Վարչակազմի և միլիցիայի կոմիսարի տվյալներով, միայն 1919 թ. հունվարի 1-ից մինչև մայիսի 1-ը բռնված և զինվորական զորամասերի տրամադրությանը հանձնված դասալիքների թիվը Սուրմալուի, Նոր Բայազետի, Էջմիածնի, Երևանի, Ալեքսանդրապոլի և Դիլիջանի գավառներում կազմեց 5867 մարդ[2], բավականին պատկառելի մի թիվ, որ Հայկական իրապես գոյություն ունեցող և գործող բանակի մարտունակ մասի գրեթե 1/4 մասն էր կազմում[3]: Դասալքության դեմ, անշուշտ, ձեռնարկվում էին քայլեր, սակայն առանց էական արդյունքների: Ընդունվեցին ժամանակավոր և այլ օրենքներ, հետագայում էլ ընդունված «Զորքերի շարքերը զորակոչի մասին» օրենքի համաձայն զորակոչային տարիքը 25-ից բարձրացվեց մինչև 28-ի[4]:

Բողոքում էին բոլոր գավառամասերից, դժգոհում էին դասալիքներից ու դասալիքների կողմից դրսևորվող անկարգությունների ու զանազան խժդժությունների դեմ: Աղետալի էր վիճակը Նոր Բայազետի գավառում, որտեղ միայն 1919 թ. մայիսի 1-ից մինչև հունիսի 15-ն ընկած ժամանակահատվածում միլիցիայի ու տեղամասային կոմիսարների ջանքերով ձերբակալվել էր 392 դասալիք[5]: Հենց այդ նկատի ուներ Հայաստանի Տարածքի կոմիսարը, երբ 1919 թ. մարտի 5-ին Նոր Բայազետի գավառային կոմիսարին ուղղված հեռագրում ընդգծում էր հետևյալը. «Ներքին Գործերի նախարարի և զինվորական իշխանությունների մոտ եղած տեղեկություններից երևում է, որ Ձեր գավառում դասալքությունը վիթխարի կերպով աճում է: Վարչակազմը այս հարցում անգործության է մատնվել: Կրկին խստագույնս հանձնարարում եմ տեղամասային գյուղական հասարակական, միլիցիայի կոմիսարներին՝ ձեռնարկել բոլոր միջոցները դասալիքներին ձերբակալելու համար՝ հանձնելով զինվորական իշխանությանը: Զգուշացնում եմ՝ այս կարգադրությունը չկատարող պաշտոնակատար անձինք կենթարկվեն

[1] Նույն տեղում, թ. 86:

[2] Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 88, թ. 135:

[3] Տե՛ս **Վիրաբյան Վ. Հ.,** Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. Կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները, էջ 36:

[4] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 201, ց. 1, գ. 280 , թ. 27:

[5] Նույն տեղում, գ. 293, մաս II , թ. 473-486:

խիստ պատժի»[1]: Այս խնդիրն այնքան խճճված ու ցավագին էր, որ այդ խնդրի լուծման համար հաճախ զինվորական և ՆԳ նախարարությունները համագործակցում էին իրար հետ, ինչի մասին ցայտուն վկայում է մշտական, չընդհատվող գրագրությունը այս երկու ուժային գերատեսչությունների միջև: ՆԳ նախարարին ուղղված 1919 թ. մարտի 10-ի գրությունում (№ 1544) Զինվորական նախարար գեներալ-մայոր Հախվերդյանը նշում է, որ ամեն օր ինքը քաղաքացիներից խնդրագրեր է ստանում ընտանիքի միակ կերակրողին զինվորական ծառայությունից ազատելու մասին, որոնց համաձայն ՀՀ պառլամենտի զինվորական հանձնաժողովի որոշման պարտավոր են զորացրել ծառայությունից, ստուգելով հեղինակների խնդրագրերի ճշտության իսկությունը: Մյուս կողմից, ընդգծում էր ՀՀ Զինվորական նախարարը, դասալքությունը չի կրճատվում, քանզի դասալիքներն ազատորեն ապրում են իրենց գյուղերում և քաղաքներում, և զորքերը համալրում չունենալով, «հալչում են», և ի վիճակի չեն կատարելու իրենց վրա դրված պարտականությունները: Զինվորական նախարարը ՆԳ նախարարին ուղղված դիմումագրում մեկ անգամ ևս համառորեն, վճռապես խնդրում էր ձեռնարկել շտապ և կատեգորիկ հրամաններ, գործողություններ՝ գավառային, տեղամասային, հասարակական և գյուղական կոմիսարներից պահանջելով հսկողություն սահմանել 20-ից 25 տարեկան տղամարդ բնակչության նկատմամբ, և անհապաղ բոլոր զինապարտներին քշել դեպի զորահավաքակայանները՝ զորքերի շարքերը համալրելու նպատակով, իրավացիորեն նկատելով, որ գյուղական և քաղաքային տեղամասային կոմիսարները չեն կարող չհմանալ իրենց համագյուղացիներին և համաքաղաքացիներին, ընդգծելով, որ դասալիքների և զինվորացուների նկատմամբ թողտվությունը և թաքցնելը նշված կոմիսարների կողմից հանդիսանում է հանցագործություն, ուստի ինքը խնդրում է այդ մասին իրեն անհապաղ տեղեկացնել[2]:

«Աշխատանք» թերթը դատապարտելով դասալքության երևույթը, գտնում էր, որ այն հենց կառավարության քթի տակ է և առաջինն հերթին այնտեղ պետք է արմատախիլ անել. ***«Այն պահուն, յերբ Հայաս-***

[1] Նույն տեղում, գ. 83, թ. 48:

[2] Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 88, թ. 91:

տանի սահմանները կընդլայնվեն հետզհետե, յեվ մեր առջեվ չբացվին միացյալ ձևով Անկախ Հայաստանի իրագործման դռները, մեր մայրաքաղաքը կը հանդիսանա դասալիքներու ապաստարան մը առանձնաշնորհյալ յեվ անձեռնմխելի դիրքին մը մեջ: Դասալքության բույնը Յերեվանն է, իր քաղքենի յեվ մտավորական դասով: Կառավարությունը պարտավոր է ամենակարճ ժամանակվա մեջ յեվ ամենակտրուկ միջոցներով քշել դեպի զինվորական շարքերը բոլոր զինվորացուները, առանց վորեվե խտրության»[1]:

1919 թ. մայիսի 2-ին (N 0143/0031) Զինվորական նախարարին ուղղված շտապ գաղտնի զեկուցագրում զորքերի հրամանատար գեներալ-մայոր Նազարբեկյանը հայտնում էր, որ գեներալ-մայոր Սիլիկյանի հաղորդման համաձայն Կարսի զորաջոկատում (1-ին և 4-րդ հետևակային գնդերը) կա ընդամենը 1300 հետևակ զինվոր և 50 հեծյալ, գտնելով, որ Սարիղամիշի նախատեսվող զբաղեցման հետ կապված ուժերի անբավարար քանակի պատճառով չեն կարող առանձնացնել զորամասեր, որոնք կշարժվեն Կաղզվան: Անհրաժեշտ էր գտնվում ուժեղացնել վարչական մարմինների աշխատանքը զորակոչիկների շրջանում և դասալիքներին բռնելով և ուժեղացված հրամկազմերի աջակցությամբ զորահավաքակայաններ նրանց հասցնելով, այնտեղից էլ զորամասեր, որոնք թույլ կարգապահության հետևանքով կրկին դասալքում էին և վերադառնում իրենց բնակության վայրերը: Եզրահանգվում էր, որ այդպիսի զորամասերի թույլ կազմի պատճառով ձեռնամուխ լինել առաջադրված խնդիրների իրագործմանը՝ անհնարին է: Համաձայն արված մակագրության, սույն եզրահանգումը Զինվորական նախարար գեներալ-մայոր Քր. Արարատյանի կողմից ուղարկվել է վարչապետի դիտարկմանը[2]:

1919 թ. մայիսի 6-ին (N 4777-0054/0199) ՀՀ Զինվորական նախարարին ուղղված գրությունում ՆԳ նախարարի պաշտոնակատարը նկատի առնելով, որ վարչակազմերի կողմից զինվորական հավաքակայաններ տարվա զինվորացուները շատ հաճախ շնորհիվ թույլ հսկողության դասալքում են այդ կետերից: Խնդրվում էր իրենց՝ զինվորա-

[1] Տե՛ս **«Աշխատանք»,** Երևան, 20 մայիսի, 1919, N 22:

[2] Տե՛ս **ՀԱԱ**,, ֆ. 201, ց. 1, գ. 86, թ. 53-54:

կան իշխանությունների կողմից միջոցներ ձեռնարկել այն բանի համար, որ զորահավաքականայաններ հասցված դասալիքները չփախչեն, այլ հարկ եղած ձևով հասցվեին իրենց զորամասերը, քանի որ վարչակազմերը չեն կարողանում կատարել դասալիքներին բռնելու և հավաքելու իրենց վրա դրված պարտականությունները[1]:

1919 թ. մայիսի 25-ին (01130/0692) Հայաստանի զորքերի հրամանատարը Զինվորական նախարարին ուղղված զեկուցագրում տեղեկացնելով Ալեքսանդրապոլի, Կարսի, Կաղզվանի, Սարիղամիշի, Ղարաքիլիսայի, Մերդենեկի, Կաղզվանի, Դիիջանի, Սևանա լճի հյուսիսային մասը և այլ վայրերը զբաղեցրած զորախմբերի մասին և նշելով, որ դրանցում ավելի հիմնավորապես ամրապնդվելու համար հնարավորություններն անբավարար են, քանզի առկա զորախմբերը չեն հասել իրենց սպասվող հաստիքակազմին՝ օպրատիվ գործողությունների լիարժեք իրականացման համար և նշված շրջանների դիտարկման և պահակազորային գործառույթների համար: Միանգամայն կարևորելով այդ հարցը հետագա խնդիրների և մասնավորապես պատմական սահմանագծերի զբաղեցման և քրդական բանդաների և թուրքական նախկին կանոնավոր զորամասերի կողմից զանազան էքսցեսներից պատնեշվելու համար ՀՀ զորքերի հրամանատարը հայտնում էր, որ անգլիացիների հեռանալուց հետո ինքը եկել է եզրահանգման, որ առկա ուժերն անբավարար են և ըստ այդմ ինքը թույլտվություն է խնդրում կազմակերպել լիրրավ գումարտակներ, ասելով, որ նախկին բանաձևով դա անհնարին է համարվել, սակայն ինքը կարծում է որ կա զինակոչի ենթակա բավարար քանակությամբ բնակչություն: Զորքերի հրամանատարի կարծիքով, իրենք բավարար չափով զինվոր չունեն միայն այն պատճառով, որ դասալքության դեմ պատշաճ պայքար չի մղվում, որ այն ուժեղանում է երկրի ծանր պայմաններին զուգընթաց, ինչպես նաև այն պատճառով, որ զինվորները թերսնված են, բորիկ են, փոխարինող չունեն, իսկ այդպիսի պայմաններում տեղական վարչակազմը բոլորովին չի պայքարում դասալքության դեմ՝ բանակին սպառնացող այդ լրջագույն չարիքի դեմ, և նույնիսկ թաքցնում է դասալիքներին, ըստ այդմ առաջարկելով, որ կառավարությունը վճռա-

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 52:

կան լինի, որ մինչը այժմ չի հաստատել դաշտային դատարաններ և մահապատիժ դասալքության համար, գտնելով, որ հենց դա է պահանջում ինքը կյանքը և Հայաստանի ապագան[1], որը դժվար է ասել ինչքանով էր հիմնավորված:

1919 թ. մայիսի 27-ին ՀՀ գավառային կոմիսարների համագումարի կողմից ընտրված դասալքության դեմ պայքարի միջոցառումների մշակման գծով հանձնաժողովը օրագրային որոշմամբ մայիսի 26-ին Զինվորական նախարարի օգնական Դրոյի նախագահությամբ և մասնակցությամբ Երևանի դատական պալատի դատախազի օգնական Գ. Մելիքովի, Դիլիջանի գավառային կոմիսար Գ. Սարատիկյանի և Արդարադատության նախարարության կողմից նշանակված ներկայացուցչի, Երևանի օկրուգային դատախազ Գ. Չերգեշտովի, ՆԳ նախարարության կողմից Զորակոչային հարցերով գլխավոր վարչության քարտուղար Գավրիլովի, լսում են ՆԳ նախարարության կողմից այդ հանձնաժողովի աշխատանքներին հրավիրված Զինվորական նախարարության Զորահավաքային և Ռազմավարչական բաժնի պետ, գնդապետ Գ. Մակկավաևի զեկուցումը դասալքության գործի մասին հարցի դրվածքի և արդեն ձեռնարկված միջոցների և այն քայլերի մասին, որոնք առանց հետաձգման պետք է ձեռնարկվեին: Դրանում նրա կողմից փորձ արվեց մանրազնին խորամուխ լինել դասալքություն առաջ բերող երևույթներում, որից ի վերջո հանգում են այն եզրահանգման դասալքություն առաջացնոց բոլոր պատճառների մեջ և մի բանում համաձայնվում, որ անգամ ամենաբարենպաստ իրավիճակում դա եղել է բնակիչների գրանցման բացակայությունը և զորակոչիկների հաշվառման վարումը: Ի վերջո նաև տրվում են հիմնավորումները և ձեռնարկվելիք միջոցները. 1) անհապաղ կազմել Հաշվառող մարմիններ, նրանց տալով դրա իրագործման համար անհրաժեշտ ամեն ինչ, 2) իսկույնևեթ պարտադիր կարգով մտցնել մշտական բնակության վայրից մեկնող բոլոր քաղաքացիներին՝ մինչև 43 տարեկաններին հաշվառող և գրանցող հաստատությունների կողմից անցագրեր՝ կապված նրանց զինվորական պարտականությունների հետ, 3) իսկույնևեթ բոլոր ՀՀ քաղաքների հյուրանոցների և մշտական բնակարանների

[1] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 199, ց. 1, գ. 27, թ. 147:

տնատերերին պարտավորեցնել պահել գրանցամատյաններ, դրանք ճիշտ վարել և կցել միլիցիայի համապատասխան տեղամասերին, 4) Զորակոչից խուսափող բոլոր զինվորացուներին բաժանել երկու կատեգորիաների՝ դասալիքների, որոնք զենքը ձեռքին փախել են և զինվորական ծառայությունից խուսափողների, որոնք հրաժարվել են ներկայանալ իրենց պարտականությունների կատարման համար, 5) Փախուստներից խուսափելու համար բոլոր բռնվածներին պարտադիր կարգով հսկողությամբ տեղափոխել՝ անվանացանկ կազմելով և գրավոր ստորագրություն վերցնելով, նշելով նաև, թե որ գյուղից կամ բնակավայրից է և գավառից, զինվորական պահակախմբի բացակայության դեպքում գործին ներգրավվելով միլիցիայի մարմիններին, 6) քանի որ իսկական զինվորական ծառայության մեջ գտնվում են 20–ից մինչև 25 տարիք ունեցող զինվորացուները և նրանց ծառայության ժամկետը որոշված չէ, ապա անհրաժեշտ գտնել իսկույնեթ օրենք ընդունել եռամյա ժամկետի սահմանման մասին և հայտարարել 20-25 տարեկանների ծառայության ժամանակարգը, որ տարիքից՝ ինչպե՞ս, 7) բարձրագույն ուսումնական հաստատությունների սովորողները 20 տարեկան դառնալուց հետո անմիջապես նույնպես ենթակա են իսկական զինվորական ծառայության զորակոչման, միջնակարգ ուսումնական հաստատությունների սովորողները նույնպես ենթակա են նման ձևով զորակոչի՝ վերջին կուրսի ավարտմամբ, ընդ որում երկու խմբերն էլ կրում են 9-ամսյա զինվորական ծառայություն, 8) Սպաների առումով Զինվորական նախարարին իրավունք էր վերապահվում ըստ պահանջմունքի պահեստազորից ընտրել պահանջվող քանակը, 9) Դասալքության մասին օրենքը փոփոխություններով հանդերձ հաստատել իրագործման, 10) այդ պահից անհապաղ միջնորդություն հարուցել Հայաստանի Հանրապետությունում մտցնելու ռազմադաշտային դատարաններ և մահապատիժ հետևյալ հանցագործության համար՝ Դասալքություն, զինված ապստամբություն, պետական ունեցվածքի հափշտակում, իրենց պարտականությունները կատարելիս միլիցիայի և զորքի աստիճանավորներին, բոլոր պաշտոնատար անձանց զինված դիմադրության ցուցաբերում, և եթե այն ուղեկցվում է սպանությամբ, սպանության նպատակով կատարված մահափորձով, ծանր վնասվածքների և վերքերի դեպքում, կանխամտածված սպանություն, կողո-

պուտ, հրդեհում, բռնաբարություն և դրամաշորթության սպառնալիքներ[1]:

1919 թ. հուլիսի 6-ին Նախարարների Խորհրդում լսվում է Զինվորական նախարար Քրիստափոր Արարատյանի զեկուցումը (№ 00152c), որում քննարկվում են ներքին քաղաքականության տեսանկյունից կարևոր մի շարք հարցեր, հենվելով ՆԳ նախարարից և զինվորական հրամանատարությունից ստացված հաղորդագրությունների վրա: Սույն զեկուցման մեջ առանձնահատուկ նշանակություն է տրվում Դիլիջան-Ղազախի շրջանում զինվորների դասալքության տարածմանը, որն ընդունել էր չափազանց մեծ չափեր, ընդ որում ընդունելով հասարակական կարգ ու կանոնին սպառնացող բնույթ: Զեկուցման մեջ ընդգծվում էր, որ դասալիքները հավաքվելով զանազան խմբավորումների, ավելի ճիշտ ավազակախմբերի մեջ, նախապատրաստում և իրականացնում են հարձակումներ քոչվոր թաթարների վրա, իսկ տեղական վարչակարգի միջամտությունը դեմ է առնում կազմակերպված զինված դիմադրության: Զինվորական նախարարը զեկուցագրում նաև նշում էր, որ Նոր Բայազետի գավառում Զողյան օպերացիայի իրականացման ընթացքում օրինականության ապահովման փորձի վրա հենվելով կարելի է ենթադրության գալ, որ Դիլիջան-Ղազախի շրջանում անհրաժեշտ է զինվորական դրություն հայտարարել, Դիլիջանյան զորաջոկատի պետին իրավունք վերապահելով հիմնելու ռազմադաշտային դատարաններ: Ք. Արարատյանի զեկուցման վրա հենվելով, Նախարարների խորհուրդը հունիսի 6-ին հանձնարարեց օրենք կազմել Դիլիջան-Ղազախի շրջանում զինվորական դրություն հայտարարելու մասին, որը հաստատվեց 1919 թ. հունիսի 6-ի նիստում, համաձայն ՀՀ խորհրդարանի 1919 թ. հունիսի 5-ի ընդունած օրենքի: Դրանում ընդգծվում էր հետևյալը. ա) 1919 թ. հունիսի 6-ից դասալիքների և քոչվորների միջև անախորժությունները կանխելու համար Դիլիջան-Ղազախի շրջանում հայտարարել զինվորական դրություն, և բ) վերապահել Դիլիջանի զորամասի պետին զինվորա-դաշտային դատարաններ հիմնե-

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 201, ց. 1, գ. 86, թ. 58-61:

լու իրավունքը[1]: Ավելին, ՆԳ նախարարի խաշտոնակատար Ս. Մանասյանը Դիլիջանից ՀՀ վարչապետին ուղղված 1919 թ. հուլիսի 8-ի հեռագրում նշում էր, որ դասալիքների հավաքն ավարտվել է, սակայն ընթացքում ձախողումներ են եղել, որոշ դասալիքներ փախել են, ինչը հարկադրել է ձերբակալել դասալիքների 15 առաջնորդների, խնդրելով թույլատրել դրանց դատի տալ[2]:

1919 թ. հուլիսի 1-ին Նախարարների խորհուրդը օրենք է ընդունում բնակչության գրանցման, զինապարտների հաշվառման և զորակոչի ենթարկելու մասին[3], որը նպատակաուղղված էր դառնալ լուրջ կռվան դասալքության դեմ ՀՀ կառավարության, տեղական վարչակազմի և զորահավաքային մարմինների ձեռքին: Դասալքությունը լուրջ խնդիր էր ողջ հանրապետության համար: Դասալիքների կենտրոնատեղի էր դարձել հանրապետության կարևորագույն քաղաքներից մեկը՝ Ալեքսանդրապոլը, և թվում էր, թե խնդիրները պարզապես անհաղթահարելի են: Այսպես, միայն 1919 թ. հունվարի 1-ից մինչև մարտի 23-ը բռնվել և Ալեքսանդրապոլի գավառային զինվորական պետի ու զանազան զորամասերի հրամանատարներին են հանձնվել 1358 դասալիք, սեպտեմբերի 5-ից մինչև հոկտեմբերի 10-ը՝ 198 դասալիք[4], ապրիլի 4-ից մինչև 30-ը՝ 1067 հոգի, որոնցից 635-ը եղել են դասալիք զինվորներ, իսկ մնացած 432-ը՝ ծառայության գծով չներկայացած զինապարտներ, ընդ որում դրամական տուգանքի են ենթարկվել 16-ը՝ 240 հազար ռ. գումարի չափով, որը գանձվել է դասալիքներից և զորակոչից խուսափողներից, իսկ տուգանվածների անունները հրապարակվել են առանձին թռուցիկներով՝ բնակչությանը ի գիտություն[5]: ՆԳ նախարարի օգնականը Ալեքսանդրապոլի գավառի զինվորական կոմիսարին ուղղված գրությունում կարևորում էր զորքերում չընդհատվող դասալքության դեմ միջոցառումներ մշակելու անհրաժեշտությունը, արձանագրելով, որ տեղական վարչակազմը բավարարվում է միայն

[1] Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 28, թ. 90-91, գ. 96, թ. 128, ֆ. 201, ց. 2, գ. 609, թ. 3, 4, 5 և այլն :

[2] Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 25, թ. 55:

[3] Նույն տեղում, թ. 133:

[4] Նույն տեղում,ֆֆ. 201, ց. 1, գ. 88, թ. 100, 260:

[5] Տե՛ս **«Ցտեսք»,** Երևան, 11 մայիսի, 1920, №96:

այդ խնդրի վերաբերյալ դատարկ գրագրությամբ, առաջարկելով համատեղ ջանքերով ձեռնամուխ լինել միջոցառումների և գործողությունների ծրագիր մշակելուն՝ դասալիքներին բռնելու և զորամասեր հասցնելու համար, հաճախակի կազմակերպելով և անցկացնելով շուրջկալներ[1]: 1919 թ. հուլիսի 29-ին Նախարարների խորհրդին է ներկայացվում Զինվորական նախարարի օրինագիծը մահվան պատիժ մտցնելու մասին և համաձայն 1919 թ. հունիսի 5–ի օրենքի հաստատումը օրինագծը[2]: 1919 թ. օգոստոսի 9-ին (N 9104) ՆԳ նախարարը Ղարաքիլիսայի կայարանի պետին հրահանգում էր դասալիքներին ձերբակալել և ոչ մի դեպքում բաց չթողնել, կարգադրելով ըստ այդմ օրինական աջակցություն ցուցաբերել պորուչիկ Մարտիրոսյանին և նրա օգնականներին[3]:

1919 թ. օգոստոսի 14-ին (N 9104 – հուլիսի 18-ին կրկնակի հարցում է արվել) Զինվորական նախարարի օգնական Դրոյին ուղղված պաշտոնագրում ՆԳ նախարարի պաշտոնակատարը տեղեկացնելով մայիսի 11-ին կայացած դասալքության դեմ պայքարի նպատակով հրավիրված միջգերատեսչական խորհրդակցության նիստի ժամանակ ընդունված որոշումների մասին, կարևորելով Դրոյի ներկայացուցչությամբ խորհրդակցության եզրահանգման մասին, նշում էր, որ բացի ռազմադաշտային դատարանների հիմնումից, անհրաժեշտ է միավորել ՆԳ և Զինվորական նախարարության ջանքերը, երկու գերատեսչությունների համաձայնությամբ, նշանակելով հատուկ սպայի և նրան գործուղել ՆԳ նախարարի տրամադրության տակ, որին անցնում էր ինչպես ողջ միլիցիան, այնպես էլ հերթապահ զորամասը: Նկատի ունենալով այդ հանգամանքը, ՆԳ նախարարի պաշտոնակատարը հայտնում էր, որ քաղաքային միլիցիան անցնում է ՆԳՆ տրամադրության տակ, այդ իսկ պատճառով խնդրվում էր իր տրամադրության տակ դնել սպայի, այդ մասին իրեն իրազեկելով[4]:

[1] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 201, ց. 1, գ. 85, թ. 23:
[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 202, ց. 1,, գ. 42, մաս II, թ. 25:
[3] Տե՛ս նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 86, թ. 116:
[4] Տե՛ս նույն տեղում, գ. 86, թ. 87:

1919 թ. սեպտեմբերի 26-ին ի դեմս Զինվորական նախարարի կրկին քննության է դնում դասալքության հարցը[1]: Զինվորական նախարարության զորահավաքային և ռազմավարչական բաժնի պետի կողմից Դասալքության դեմ պայքարի գլխավոր վարչությանը ուղղված 1919 թ. սեպտեմբերի 30-ի գրության մեջ (N 10898) նշվում էր միանգամայն անբավարար զորահավաքի մասին, անհրաժեշտ համարելով միջոցներ ձեռնարկել Չեզոք գոտում ապաստանած դասալիքների, այնպես էլ Ալեքսանդրապոլի գավառում ապրող թուրքահպատակների դեմ, որոնք հրաժարվում էին զորահավաքական ներկայանալ, ըստ այդմ խնդրելով Զորահավաքի գծով պետին անհապաղ միջոցներ ձեռնարկել, որի մասին ժամանակին տեղեկացնել բնակչությանը[2]:

1919 թ. հոկտեմբերի 31-ին Նախարարների խորհուրդը լսում է ՆԳ նախարարի զեկուցումը դասալիքների դեմ կռվելու մասին և ընդունված որոշման մեջ հանձնարարում ՆԳ և Զինվորական նախարարներին խնդրել պառլամենտի զինվորական հանձնաժողովին կազմակերպել մի հանձնաժողով, որը պիտի ուսումնասիրի զորքի դրությունը, նրա կարիքները և գործի բարելավելու միջոցները[3]:

Սակայն անդրադառնալով դասալքության կանխարգելման ուղղությամբ ՆԳ մարմինների, միլիցիայի և զինվորական իշխանությունների կողմից ձեռնարկված քայլերի պատմությանը, հարկ է առանձնահատուկ նշել, որ նույնիսկ այդ դժվարագույն օրերին Զինվորական և ՆԳ նախարարությունների վերին էշելոններում կային մարդիկ, որոնք ինչ-որ տեղ փորձում էին հեռուն նայել, և սկզբունքորեն դեմ էին ամեն ցանկացած եղանակով դասալքության դեմ պայքարել, կիրառելով նաև անթույլատրելի, հակաօրինական մեթոդներ, ինչպես նաև չէին խրախուսում ինքնակամ ձեռնարկած գործողությունները, այլ ձգտում էին ելնել որոշակի օրինականությունից, չվարկաբեկելով պետության գաղափարը: Այսպես, Զինվորական նախարար գեներալ-մայոր Ք. Արարատյանը 1919 թ. նոյեմբերի 21-ի հրամանագրում ընդգծում է իր կողմից բազմիցս նշված մի այնպիսի արատավոր երևույթի մասին, երբ մի

[1] Տե՛ս նույն տեղում ֆ. 202, ց. 1,, գ. 42, մաս II, թ. 77հակ.:
[2] Նույն տեղում, ֆ. 216 (214), ց. 1, գ. 63, թ. 36:
[3] Տե՛ս նույն տեղում, գ. 42, մաս II, թ. 97-97հակ.:

շարք սպաներ, չունենալով ղեկավարության կողմից տրված թույլտվություն, իրենց զորամասերը լրացնելու նպատակով ինքնակամ զբաղվել են դասալիքների որսով, որով իսկական խառնաշփոթ են մտցրել դասալքության դեմ պայքարի խնդրում: Հենց դա էր պատճառը, որ Ք. Արարատյանը նշված վիճակը համարելով անթույլատրելի երևույթ, իր հրամանագրում կատեգորիկ կերպով արգելում էր հայկական բանակի սպաներին ինքնակամ ու միանձնյա, առանց տեղական իշխանությունների ներկայացուցիչների, և առանց իր ղեկավարության կողմից տրված հատուկ վկայականի, որ տվյալ անձինք գործուղման էին մեկնում՝ դասալիքներ բռնելու, այդ նպատակով գյուղերում հետախուզությամբ զբաղվելու համար: Նախարարը զգուշացնում էր, որ հրամանագիրը խախտողները կենթարկվեն խիստ պատժի[1]: Պայքարը դասալքության դեմ շարունակվեց: ՆԳ և Զինվորական նախարարությունների համատեղ ջանքերով 1919 թ. սեպտեմբերի 17-ից մինչև հոկտեմբերի 5-ը՝ Երևանի գավառային զինվորական պետին ներկայացավ 1078 մարդ, որից 627-ը ընդգրկվեց գործող զորքի կազմում. նույն տվյալները սեպտեմբերի 17-ից մինչև հոկտեմբերի 19-ը կազմում են համապատասխանաբար 1340 և 801 մարդ, իսկ մինչև հոկտեմբերի 28-ը՝ Երևանի գավառային զինկոմիսարին ներկայացավ 1524 մարդ, որից 923-ին ուղեկցեցին գործող բանակ[2]:

1919 թ. հոկտեմբերի 31-ին Նախարարների խորհրդի նիստում լսվում է ՆԳ նախարարի հերթական զեկուցումը դասալիքների դեմ կռվելու միջոցառումների մասին: Որոշվում է հանձնարարել ՆԳ և Զինվորական նախարարություններին՝ խնդրանքով դիմելու ՀՀ պառլամենտի զինվորական հանձնաժողովին, որպեսզի վերջինս կազմակերպի մի այլ հանձնաժողով, որը պիտի ուսումնասիրեր զորքի դրությունը, նրա կարիքները և գործը բարելավելու միջոցները[3]: Հետաքրքրություն են ներկայացնում ՀՀ Զորահավաքի հարցով արտակարգ կոմիսար Վ. Վալադյանի ՆԳ նախարարին հասցեագրված 1919 թ. նոյեմբերի 9-ի զեկուցագրում պարունակվող տեղեկությունները զորահավաքի մասին.

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 201, ց. 1,, գ. 88, թ. 301:

[2] Նույն տեղում, գ. 75, թ. 97, 119, 122, 131:

[3] Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 96ա, թ. 93, ֆ. 201, ց. 1, գ. 486, մաս II, թ. 375:

դրանում նշվում էր, որ նոյեմբերի 11-ից մինչև 18-ն իր կարգադրությամբ զինվորապ[ի]ետարան (զորահավաքական - Վ. Վ.) է ուղարկվել 231 մարդ, բոլորն էլ զինապարտ: Դրանցից 227-ը բերվել էր բռնի կերպով և միայն 4-ը հոժարակամ ներկայացել են զորահավաքի գծով կոմիսարին: Սակայն ՆԳ նախարարին ուղղված այս զեկուցագրում Վալադյանը նաև ընդգծում էր մի կարևոր մանրամասնի մասին ևս, ըստ որի իր հավաքած մարդկանց մի խոշոր մասը տեղ չի հասնում, այսինքն, դեռ զորամասերը չմտած, շատերը փախչում էին զինվորապետարանից և հավաքման կայանից, որ առնվազն 40-50%-ը կարողացել են փախչել, ավելացնելով նաև, որ ինքը հնարավորություն չունի հսկելու զինվորապետարանի և հավաքման կայանի վարչությունների գործունեության վրա[1]: 1919 թ. նոյեմբերի 19-ին (N 11099) ՀՀ ԱԳ նախարարը դիմելով դրվել են զինվորական հրամանատարության տրամադրության տակ, որտեղից ինչ-ինչ ձևով դասալքել են, Զինվորական նախարարին, հայտնում է, որ Զորահավաքի գծով հատուկ կոմիսարը, իր նոյեմբերի 19-ի (N 215) զեկույցով տեղեկացրել է, որ իր կողմից բռնված զինվորական պարտականություններից խուսափողները, հավաքվածների մեծ մասը զորամաս չեն հասել և դրանց 50 %-ը դասալքել է հենց Զինվորական վարչությունից կամ էլ զորահավաքակայանից: Այսպիսով, ըստ ԱԳ նախարարի, Զորահավաքի գծով կոմիսարի աշխատանքը անցնում է միանգամայն զուր, որից ելնելով նա առաջարկում էր լուրջ ուշադրություն դարձնել նմանատիպ երևույթներին և այդուհետ իրեն իրազեկել տեղի ունեցող դեպքերի մասին[2]:

Ավելին, ինչպես ակնհայտ է դառնում Էջմիածնի և Սուրմալուի գավառները գործուղված պառլամենտական հանձնաժողովի նախագահ Սահակ Թորոսյանի կողմից Հայաստանի Հանրապետության խորհրդարանին ներկայացված նյութերի վերլուծությունից (1919 թ. դեկտեմբերի 29), առանձնապես մեծ դժգոհություններ էին կուտակվել դասալքության պատճառով, որի մեջ, ***ըստ այդ հանձնաժողովի տվյալների, գործնականում մեղավոր էր հենց գավառական իշխանությունը, որն ինքն էր իր գործողություններով նպաստում հայոց զորքը քայ-***

[1] Նույն տեղում, գ. 77, թ. 160:

[2] Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 77, թ. 154:

քայող այդ չարաղետ ժանտախտի տարածմանը՝ այսպես կոչված «խեղճերին» հավաքելով, իսկ ուժեղներին ազատելով նույնիսկ «օրինական» միջոցներով: Նույն վիճակն էր իշխում Աշտարակում. Պառլամենտական հանձնաժողովը այդ կապակցությամբ բերում էր մի երիտասարդ ձիավորի օրինակը, որն ըստ անօգնական վիճակում հայտնված քաղաքի միլիցիապետի վկայության, զինվորացու չէր, քանզի նա «ոմն Շահրյարցի Մուշեղն էր», որը ձեռքին ուներ Երևանի պարետից ձեռք բերած «վկայական», դա հնարավորություն էր տալիս ազատ ման գալ, և պարզապես խուսապել զինվորական պարտականությունների կատարումից[1], որն այնքան էլ հազվադեպ երևույթ չէր այդ օրերին: Զորակոչի դաշտում հայտնվեցին նաև ՀՀ տարածքում ապրող հույները: 1920 թ. փետրվարի 10-ին ՆԳ նախարարի զեկուցումը Հայաստանի Հանրապետության տարածքում ապրող հույների զորահավաքի ենթարկելու մասի, հաստատում է այն[2]: 1920 թ. ապրիլի 2-ին (N 1547) ՆԳ նախարարը զեմստվոների քաղաքական բաժնին շրջաբերական է ուղարկում, որում հայտնում էր, որ 1919 թ. հունիսի 25-ին հրապարակած պարտադիր որոշումների համաձայն բոլոր պետական և հասարակական հիմնարկություններին արգելվում է ծառայության ընդունել այն բոլոր անձանց, որոնք չեն ներկայացնի վկայական զինակոչի ենթարկված լինելու կամ զինակոչից ազատված լինելու մասին: ՆԳ նախարարը պահանջում էր խիստ ստուգման ենթարկել բոլոր ծառայողների վկայականները, զգուշացնելով, որ եթե հետո զանցառություններ պարզվեն, ապա ամբողջ պատասխանատվությունը ընկնելու է իրենց վրա[3]: 1920 թ. ապրիլի 6-ին կառավարությունը լսելով Հանրային կրթության և արվեստի նախարարի զեկուցումը Թիֆլիսի պոլիտեխնիկումի մի խումբ հայ ուսանողներին զինվորական ծառայությունից ազատելու մասին, հանձնարարում է այդ առթիվ համաձայնության գալ Զինվորական նախարարի հետ[4]:

---

[1] Նույն տեղում, գ. 607, թ. 14:

[2] Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 46, թ. 30:

[3] Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 29, թ. 29:

[4] Տե՛ս **Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ**, էջ 423-424:

1919 թ. մայիսի 27-ին (N 00123/0781) Զինվորական նախարարին ուղղված զեկուցագրում գեներալ-լեյտենանտ Նազարբեկյանը և Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար Ալ. Շնեուրը տեղեկացնում են Կարսից գեներալ Սիլիկյանից ստացված միջնորդագրի մասին, որում վերջինս առաջարկում էր միջնորդել կառավարական հրամանագիր արձակելու Ալեքսանդրապոլում և երկաթգծի վրա սպիրտային խմիչքների և հումքի վաճառքի արգելման մասին, որ լուրջ ռազմական գործողությունները նշված շրջաններում պահանջում են զորամասերի սթափ վիճակ, որ սպիրտային խմիչքների վաճառքը առաջ են բերում հաճախ միանգամայն անցանկալի երևույթներ, որոնք վնասում են գործին: Ըստ այդմ, սույն կարևոր գրության մեջ արծարծված տեսակետի հետ համերաշխվելով, Զինվորական նախարար Քր. Արարատյանը այն մայիսի 27-ին ուղարկում է ՆԳ նախարարի դիտարկմանը, որն էլ ողջ գրագրությամբ հանդերձ հունիսի 3-ին ներկայացնում է Նախարարների խորհրդի քննարկմանը[1]:

Դասլքության դեմ պայքարին որոշ դեպքերում փորձ էր արվում սուր ընթացք տալ. Այսպես, 1919 թ. դեկտեմբերի 21-ին Սեպուհին ուղղված գրությունում Զորահավաքի դեմ պայքարի վարչության պետ Վ. Վալադյանը փաստելով, որ զորահավաքականից 7-րդ գնդի համար ուղարկել է 139 մարդ, դժգոհում էր, որ դրանցից սակայն 25 հոգի արդեն կարողացել էին փախչել հենց կայարանից, համակարծիք էր Սեպուհի հետ, որը խնդրում էր միջնորդել և իր համար իրավունք ձեռք բերել գոնե երկու-երեք մարդ գնդակահարել տալու, որպեսզի գործն ավելի հաջող և ավելի արագ ընթանա[2]: Սակայն ինչպես պարզվում է Զինվորական գերատեսչության գծով 1920 թ. ապրիլի 12-ի հրամանագրից, գործերն այդ առումով այնքան էլ բարվոք չէին անգամ Սեպուհի գլխավորած 4-րդ հետևակային բրիգադայում: Տեղեկանալով, որ Սեպուհը շնորհակալություն է հայտնել 7-րդ հետևակային գնդի հրամանատարությանը, սպաներին և զինվորներին իրենց վերջին մարտական գործողությունների համար Ղամարլուի ճակատում մարտի 19-ից 29-ը ընկած ժամանակահատվածում, գլխավոր հրամանատարի կող-

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 199, ց. 1, գ. 27, թ. 230-231:

[2] Տե՛ս նույն տեղում, գ. 251, թ. 1:

մից հետաքննիչ ստուգումների, ստացված տեղեկությունների և զինվորական դատախազի եզրահանգման վրա արձանագրվել էր այլ փաստացի վիճակ. այդ փաստերը ցույց են տվել 7-րդ գնդի ապակազմակերպվածությունը այդ ժամանակ, իրենց դիրքերը զիջելու և ճակատից հապճեպ ետ քաշվելու, և վերջապես ճակատից մարտի 26-ին 2-րդ, 7-րդ գնդերի ինքնակամ լքելու մասին՝ լուրջ վտանգ ստեղծելով Ղամարլուի ճակատի համար, որն հաջողվել էր չեզոքացնել այլ՝ հեծյալ զորամասերի և Մարտիրոսի միլիցիոն զորախմբի ջանքերով, իսկ վերջնականապես բարոյալքված 7-րդ գնդին ստիպված են լինում ետ քաշել թիկունք՝ կարգի բերելու համար[1]:

1920 թ. ապրիլի 16-ին Նախարարների խորհուրդը լսում է Զինվորական նախարարի զեկուցումը 20-25 տարեկան ասորիներին զորակոչի ենթարկելու մասին, և հաստատում առաջարկված օրինագիծը[2]: 1920 թ. ՆԳ նախարարության ապրիլի 20-ի շրջաբերականում՝ ուղղված բոլոր գավառային կոմիսարներին, քաղաքային երկաթուղագծային պետերին, և մասնավորապես Կարսի նահանգապետին, կապված այն բանի հետ, որ որոշ վարչական ներկայացուցիչներ անհետևանք վերադարձնում են զինվորական մասերից ստացված գրություները, որոնցում պահանջվում էր ձերբակալել զորամասերից փախած զինվորներին, գտնել նրանց կողմից օտարված-վաճառված համազգեստները և զենքերը, ինչը դարձել է իսկական չարիք, կոչ էր արվում վերացնել նման երևույթները, ճշտորեն կատարել զորամասերից ստացված պահանջագրերը՝ ձերբակալված դասալիքներին անհապաղ հասցնել իրենց ծառայության վայրերը, գտնելով և առգրավելով զինվորական գույքը, զենքն ու զինամթերքը, հարկ եղած դեպքում նաև պատասխանատվության ենթարկելով զինվորացուների հարազատներին[3]:

1920 թ. ապրիլի 23-ին ՀՀ Գլխավոր շտաբի զորահավաքային բաժնի պետը հաշվետվությունում նշելով, որ զորահավաքից ազատվելու հետ կապված միակ արտոնությունը տրվել է ընտանիքի միակ կերակրողին, միաժամանակ ընդգծել էր, որ օրինագիծ է մտցվել պառ-

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 200, ց. 1, գ. 442, թ. 220:
[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 146, թ. 59:
[3] Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 26, թ. 150:

լամենտ նույնիսկ դա փոփոխելու և 25 տարեկան միակ կերակրողին զորակոչելու զորքերը, իսկ նրա ընտանքին տալ ամենամսյա նպաստ բարձրագույն պետական ծառայողների ստացվածքի չափով, որն իբր թելադրված է երկրի ժամանակակից վիճակով և մշտապես աճող դասալքության հետ կապված, ընդգծում է, որ հետաձգումը տրված է միայն Ալեքսանդրապոլի համալսարանի ուսանողներին և միջին ուսումնական հաստատությունների աշակերտներին՝ առաջիններին մինչև 27 տարեկանը, իսկ երկրորդներին՝ 22 տարեկանը, ինչպես նաև հեռախոսավարներին, երկաթգծի որակյալ աշխատողներին[1]:

Եվ չնայած ձեռնարկված միջոցառումներին, 1920 թ. կեսերին ևս դասալքությունը մնում էր և մնաց որպես Առաջին Հանրապետության ցավոտ ու դժվարագույն խնդիրներից մեկը, և դա այն պարագայում, երբ ոչ քչերը հաճախակի նաև օգտվելով ՀՀ միլիցիայի, Ներքին Գործերի նախարարության բազմաթիվ ոչ պատասխանատու, անբարեխիղճ աստիճանավորների ու պաշտոնյաների հովանավորչությունից, երբեմն էլ ընկերակցությունից, խուսափում էին բանակում իրենց պարտականությունները կատարելուց: 1920 թ.՝ կեսերին Բաթումիից ուղարկված հեռագրերից մեկում նշվում էր զինակոչային տարիքի հայ երիտասարդների մասին, որոնց թիվը հասնում էր շուրջ 2000 հոգու, վելացնելով, որ դասալիքները շատ են, իսկ հայկական հյուպատոսարանը անձնագրեր չի տալիս և այդ առիթով ահագին դժգոհություն է առաջացել, իսկ վրացիները գաղտնի զորակոչ են իրականացրել, անգամ պնդելով, թե ***ֆրանսիացիները հայ կամավորներ են ցուցակագրում՝ գաղութային զորքի համար՝ ասել է թե՝ գաղութային պատերազմների համար, տալով լավ ռոճիկ[2]:***

Դա էր այն հիմնական պատճառներից մեկը, որ Հայաստանի Հանրապետությունում դասալքության դեմ պայքարը 1918-1920 թթ. էական ու գործնական արդյունքներ չէին տալիս, իսկ թիվը պարզապես ահռելի էր մի փոքրիկ երկրի համար. այսպես, 1919 թ. դեկտեմբերի 22-ի վիճակով դասալիքների թիվն ամբողջ հանրապետությունում կազմում էր 17665 մարդ (այս բեռով էլ երկիրը թևակոխեց 1920 թվա-

[1] Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 427, մաս II, թ. 265:

[2] Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. ձձթ, թ. էև8:

կանը - Վ. Վ.), իսկ ըստ Հայաստանի գավառների պատկերն հետևյալն էր 1919 թ. դեկտեմբերի 22-ի վիճակով[1]:

Աղյուսակ 1

Գավառները	Ի՞նչ ժամանակամիջոցում	Դասալիքների թիվը
1. Երևանի գավառ	1 հունվարի-15 նոյեմբերի	3474
2. Էջմիածնի գավառ	1 հունվարի -15 նոյեմբերի	1265
3. Սուրմալուի գավառ	1 հունվարի - 15 դեկտեմբերի	729
4.Նոր Բայազետի գավառ	1 հունվարի - 1 դեկտեմբերի	2840
5. Դարալագյազի գավառ	1 հունվարի - 1 դեկտեմբերի	416
6.Ղարաքիլիսայի գավառ	1 հուլիսի - 15 նոյեմբերի	1399
7. Դիլիջանի գավառ	1 հունվարի - 15 նոյեմբերի	1208
8. Ալեքսանդրապոլի գավառ	1 հունվարի - 1 դեկտեմբերի	4516
9. Կարսի գավառ	1 հունվարի - 15 նոյեմբերի	1729
10.Կաղզվանի գավառ	1 հունվարի - 15 նոյեմբերի	24
11.Արդահանի գավառ	1 հունվարի - 15 նոյեմբերի	65
Ընդամենը	-	17665 մարդ

Սույն փաստաթուղթը զինակոչային պարտականությունների գծով Գլխավոր վարչության պետի կողմից ներկայացվել է Նախարարների խորհրդի նախագահին (№ 4304 գրություն), և դա այն դեպքում, երբ

[1] Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 29ա, թ. 348:

Հայկական բանակի իրական մարտունակ մասի թիվը, որի մասին վերն արդեն ասել ենք, իրականում չէր գերազանցում 16-18 հազարի սահմանագիծը: Անշուշտ, այստեղից հասկանալի է դառնում, որ վերը նշված գործոնները և երևույթները էապես նպաստել են դասալքության ու այլ բացասական երևույթների տարածմանը հայկական բանակի զորամասերում՝ հանդիսանալով 1920 թ. թուրք-հայկական աղետաբեր պատերազմում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի պարտության գլխավոր պատճառներից մեկը: Անդրադառնալով այդ հարցին, հայ հոգևոր գործիչ Գարեգին արք. Հովսեփյանը Հայաստանի Հանրապետության կրած ջախջախիչ պարտության գլխավոր պատճառը համարում էր Հայկական բանակի և ժողովրդի կռվելու կորովի, ոգու պակասը[1], ինչպես նաև անկարողությունը զսպելու ներքին թշնամուն, որ դասալքություն էր կոչվում, գտնելով, որ անխնա կռիվ պետք է հայտարարվի դասալքության դեմ, մահվան պատժի ենթարկվեն պարտականություններից խուսափողները, որ դասալիքը պետք է հասարակության կողմից գամվի անարգանքի սյունին[2], ինչի հետ լիովին համակարծիք է նաև Կ. Սասունին, ասելով, որ անհրաժեշտ կամքի և վճռականության պակասը նպաստել են հայկական զորքի կռվելու կորովի և մարտունակության անկմանը[3]: Վերջինս մի այլ կապակցությամբ ավելացնում է. ***«Հայաստանի հանրապետության զորքը կը կազմակերպվեր ռուսական մեծ բանակի սիստեմով, ուր արևմտահայ զինվորական ուժերը տեղ չունեին իրենց սանձարձակ բնավորութեան և զինվորական անկանոն անցեալին հետևանքով»***[4]:

ՀՀ Զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանը 1918-1920 թթ. Հայկական բանակի թուլության գլխավոր պատճառներից մեկը համարում էր դասալքություն և անկարգապահություն ծնող գործոնները, ինչ-

---

[1] Տե՛ս **Գ. արք. Յովսեփյան**, Կարսի անկումը 1920 թ., Օրագրություն, **«Բանբեր Հայաստանի Արխիվների»,** 1989, № 3, էջ 105-160: **Ոգուն չսպասվինելու արդիւնքը**. (Կարսի անկումը 1920 թ. հոկտեմբերի 30-ին. Գարեգին Արք. Յովսեփեանցի յուշագրութիւնը եւ փաստաթղթերը), Եր., 2002, էջ 31-32, 59-60, 78-79, 110-111, 119-120

[2] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 200, ց. 1, գ. 20, թ. 1-2:

[3] Տե՛ս **Սասունի Կ.,** Հայ-թուրքական պատերազմը// «Հայրենիք» (Բոստոն), 1926, թիվ 11, Սեպտեմբեր, էջ 116:

[4] Տե՛ս **Սասունի Կ.,** Մայիսյան խռովութիւնները և թաթարական ապստամբ շրջանները: Հայաստանը 1920-ին, Պէյրութ, տպ. «Համազգայինի», 1968, էջ 28:

պես զորամասերի մասնակցությունը Զանգիբասարի, Վեդիբասարի և այլ վայրերի՝ մահմեդական խռովարար բնակչությունից մաքրագործմանը նպատակաուղղված ռազմական գործողությունները, այնպես էլ Հայկական բանակում իրար կողքի երկու զինվորական համակարգերի՝ կանոնավոր բանակի կազմակերպման հին ռուսական և խմբապետական-ֆիդայական, անկանոն զորամասերի կազմակերպական համակարգերի առկայությունը, դրանց հակադրվածության հանգամանքը, բոլշևիկյան-մոսկովյան գործոնը և այլն[1]: Կարսի նահանգապետ Ստ. Ղորղանյանը իր մի գրության մեջ՝ ուղղված ՆԳ նախարարին, ընդգծում էր, որ օրինակ, Սարիղամիշի և Կարսի զորամասերում դասալքության խորացմանը մեծապես նպաստել է հայ զորքի մասնակցությունը իրենց հպատակ 36 գյուղերի ալան-թալանին, որն ըստ նահանգապետի ***«այնքան ռեկլամային էր, այնքան հմայիչ, որ այդ բոլոր դասալիքները փախչում էին դեպի Օլթի, գնում էին դեպի այն ավերյաց երկիրը, ուր մարդիկ հերոսաբար թալանում էին և հարստանում, և այդ կամավորական շարքերը լցրեցին բազմաթիվ անպատասխանատուները, որոնք մեր ազատ օրերում ընտելացել էին հնձելու առանց հնձելու»***[2], ինչն ամենևին հեռու չէ մերկապարանոց ճշմարտությունից, քանզի պատմության փորձն այդպիսի օրինակներ քիչ չունի, և այն չի կարելի անտեսել կամ սվաղել:

Յ. Իրազեկը (Հ. Տեր-Հակոբյան), Յովհ. Սահակյանը և Վահե Արծրունին դասալքություն ծնող պատճառների մեջ գլխավոր տեղ են հատկացնում բոլշևիկյան քարոզչությանը, ասելով, թե մեծամասնականները կարողացան պղտորել և քայքայել Հայկական բանակը, հատկապես ազդելով Հայոց զորքի անվարժ և շտապով հավաքված զինվորական զանգվածի վրա, հնարավորություն տալով, որ փախուստի «ասպարեզ տեսած» դասալիքները հանգիստ լքեն ռազմաճակատը և ուղևորվեն դեպի Թիֆլիս կամ իրենց գյուղերը, կամ էլ Պարսկաստան, ինչը հաստատվում է նաև դեպի Անդրկովկաս և Հայաստան առաջխաղացող XI Կարմիր բանակի հրամանատարության մի շարք

[1] Տե՛ս **Ռուբէն**, Հայ Յեղափոխականի մը յիշատակները, հ. 7 (Է), Գ. հրատ., էջ 326, 329-338:

[2] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 201, ց. 1, գ. 636, թ. 20:

հետախուզական և այլ բնույթի տեղեկագրերով[1]: Հենց այդ գործոններն էլ նպաստեցին դասալքության խորացմանը զորքերում, վերջին հաշվով հանգեցնելով Հայկական բանակի տկարացմանը: Այնուհանդերձ, դասալքության դեմ հետագա պայքար կար այդ տարիներին, սակայն ոչ ցանկալի արդյունքներով: Այդ երևույթների մասին դիպուկ են Տեր-Հակոբյանի խոսքերը. ***«Կառավարութիւնը նախապս փոխանակ զայն կազմակրպութեան մէջ իսկական կարգապահութիւն մը ստեղծել աշխատելու կամավորական խումբերու ուժ կատար՝ իբրեւ իրեն «վստահելի»ների: Այսպես կազմվեցավ շփացածներու դաս մը, որ պահ մը հանրային կյանքին սպառնալիքը դարձավ: Ասոնք եւ կոչվեցին մավզերիսփներ, որոնք, զէն ի ձեռքն իրենց կամքը կը պարտադրեին երբեմն Դաշնակցութեան պետերու դրդումով և յաճախ իրենց քմահաճոյքին եւ հաշիվներունև ցասման համար: Մավզերիսթներու ծայրահեղութիւնները այնքան անզսպելի դարձան, որ ժողովրդին զայրոթին...Յարձակման սկիզբը անոնցմէ բնավ մնացած չի; Բանակին այս թոյլ կազմին հետեւանքով դասալքութիւնը լայն ծավալ գտած էր, այնպէս որ, երբ աղետաբեր պատերազմը սկսավ, կառավարութիւնը ինքնզինքը գտավ խիստ միջոցներու հարկին առջև»***[2]:

1920 թ. մարտի 31-ին (N 1451) ՆԳ նախարարի օգնական Մանասյանը ՆԳՆ նախարարին ներկայացված պաշտոնագրում հայտնում է, որ չնայած դեռևս ուժի մեջ գտնվող Դասալքության դեմ պայքարի մասին 1919 թ. հունիսի 5-ի Օրենքին, մի շարք նախարարությունների շատ հաստատություններում օրենքին հակառակ, աշխատանքի են ընդունում 20-ից 32 տարեկան երիտասարդների ներառյալ, առանց պարզելու գավառային զինվորական պաշտոնատարությունների վկայականների հարցը: Հնարավոր թյուրիմացություններից խուսափելու համար Մանասյանի կողմից հարց էր բարձրացվում այդպիսի մարդկանց

[1] Տե՛ս **Իրազեկ Յ.,** Մօտիկ անցեալից, Պատմական Դէպքեր և ապրումներ, 1917-1922, Պատմական դէպքեր, ապրումներ, 1917-1922, Պէյրութ, Տպ. «Համազգայինի», 1956, էջ 66-68, 72, 80: **Սահակեան Յովհ.,** Երկու տարի Հայկական բանակին մէջ, Փարիզ, Հրատ. Հայ կամաւորներու եւ մարտիկներու Միութեան, 1937, էջ 130-131: **Արծրունի Վ.,** Հայ-տաճկական պատերազմը, էջ 10-11, 18-20, 30-34, 34-106, 122, 321 և այլն, **«Բանբեր Հայաստանի Արխիվների»,** 1983, N° 2, էջ 88-89, 103 և այլն:

[2] **Տէր-Հակոբեան Յ.,,** Հայաստանի վերջին աղետը, էջ 49:

աշխատանքի ընդունող պետերի վրա պատասխանատվություն դնել, միաժամանակ ՆԳ նախարարության բոլոր օղակներից պահանջելով խստագույնս ստուգել իրեն ենթակա բոլոր ենթագերատեսչական հաստատություններում փաստաթղթերը, այդ մասին իրազեկով Զորակոչի գործերով վարչությանը[1]:

Այս առումով հետաքրքիր է Ա. Գյուլխանդանյանի 1920 թ. ապրիլի 5-ի ***«Կառավարության Լրաբերում»*** հայտարարությունը, որում վերջինս փորձում էր ըմբռնել ու բացահայտել դասալքության խնդիրը և գտնել դրա լուծման հնարավոր ուղիները, գործնական տարբերակները, իր հայտարարության մեջ ընդգծելով. «Չնայած մեր բազմիցս արած կարգադրություններին և ձեռք առած միջոցներին, դասալքությունը ոչ միայն չի պակասում, այլ բազմանում է և այդ ոճրագործությունների պարտակման որջերը դժբախտաբար գլխավորապես ներկա պահին մնում են Երևանը և Ալեքսանդրապոլը»: Ի նկատի ունենալով այս ամենը, ՆԳ նախարարը առկա օրենքի 1-ին հոդվածի համաձայն, որը հաստատված էր Նախարարների խորհրդի կողմից դեռևս 1919 թ. հուլիսի 1-ին, պահանջում էր, որ ՀՀ բոլոր արու քաղաքացինեը՝ 16-ից մինչև 43 տարեկան, պետք է մշտապես իրենց մոտ ունենան իրենց շրջանի զինվորական ատյանից վերցված վկայականներ[2]: Այսքանով սակայն վերջինս չի բավարարվում, և հետագայում ևս անում է մի շարք այդպիսի հայտարարություններ, որոնք ինչ-որ տեղ հիշեցնում են հուսահատ ճիգեր՝ փրկելու դրությունը և «հաջողությամբ» լուծելու Հայկական բանակի զորահավաքային հիմնախնդիրները:

Դասալքության, Երևանի ինքնապաշտպանության և այլ կարևոր խնդիրների է անդրադառնում Ռ. Տեր-Մինասյանը ՀՀ զինվորական վարչություններին ուղղված 1920 թ. ապրիլի 14-ի հրամանում, Երևանի քաղաքապետ Շահխաթունուն նշանակելով Երևան քաղաքի և նրա շրջանի ինքնապաշտպանության պետ՝ իրավունք վերապահելով Երևանի քաղաքացիներից կազմակերպել գումարտակներ և քաղաքային միլիցիան ենթարկել ինքնապաշտպանության պետին, ակտիվացնել զորահավաքային մարմինների գործունեությունը և կռվել դասա-

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 201, ց. 1, գ. 29, թ. 13:

[2] Տե՛ս **«Կառավարության Լրաբեր»,** 1920, 5 ապրիլի, երկուշաբթի, № 9:

լքության դեմ՝ ցույց տալով ամենայն աջակցություն, իրավունք տալով վարչական կարգով բանտարկել դասալիք պահողներին 3 ամիս ժամանակով և տուգանելով 30 հազար ռուբլով[1]:

1920 թ. ապրիլի 17-ին ՆԳ նախարարը կրկին ***«Կառավարության Լրաբերում»*** հանդես է գալիս կարևոր հայտարարությամբ, որում նա ընդգծում էր, որ հակառակ դասալիքների դեմ Կառավարական 1919 թ. հունիսի 5-ի օրենքի 1-ին կետի, մի քանի նախարարությունների հիմնարկություններում ծառայում են զինակոչային հասակի անձինք, 20-ից մինչև 32 տարեկան, որոնք ընդունվել են աշխատանքի առանց համապատասխան գավառական զինվորական ատյաններից ստացված վկայականների, կամ թեպետև ունեն այդպիսիք, բայց դրանք տրված են այդ ատյաններից մինչև 1919 թ. հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար, և այլևս ոչ մի նշանակություն, այսինքն՝ իրավական ուժ չունեն, պահանջելով կարգ ու կանոն հաստատել այդ բնագավառում, ստուգել գործի նաև փաստաթղթային կողմը: Հայտարարության վերջնամասում ՆԳ նախարարը ընդգծում էր, որ խուսափելով բաժանմունքների պետերին պատասխանատվության ենթարկելուց, որոնք ծառայության են ընդունել մարդկանց, որոնք անհրաժեշտ փաստաթղթեր չունեն, այնուամենայնիվ ինքը հարկ է համարում նախարարությունների լիազորված մարդկանց միջոցով անհապաղ խստորեն պահանջել ստուգելու բոլոր կասկածելի ծառայողների փաստաթղթերը, որոնք հնարավոր է՝ ենթակա են զորակոչի[2]:

Կարծես թե որպես արձագանք, տեղերում որոշ տեղաշարժ նկատվեց, և ՆԳՆ մարմինները, միլիցիան փորձեցին դասալքության խնդիրը լուծել, օգտվելով նաև տեղական վարչակազմի աջակցությունից: Այսպես, 1920 թ. ապրիլի 25-ի իր զեկուցագրում՝ ուղղված ՀՀ զորքերի հրամանատարին, 1-ին Առանձին Հայկական հետևակային բրիգադի պետ գեներալ-մայոր Շելկովնիկյանը (Շելկովնիկովը) արդարացիորեն նշելով դասալիքների կողմից նկատվող պետական ունեցվածքի գողության ու վերավաճառքի մասին, միաժամանակ պահանջում էր անհապաղ անհետաձգելի միջոցառումներ ձեռնարկել տեղական վար-

[1] Տե՛ս **«Ցառաջ»,** Երևան, 27 ապրիլի, 1920 թ.:

[2] Նույն տեղում, 1920, 17 ապրիլի, № 10:

չակազմի հետ միասին, ոչ միայն դասալիքներին բռնել, այլև բռնագրավել նրանց ողջ ունեցվածքը[1]: 1920 թ. ապրիլի մի այլ հետաքրքիր գրության մեջ, որի հեղինակը Դիլիջանի գավառային կոմիսարն է, և որի վրա կա մակագրություն ռոտմիստր Զավրիևի անունով, խնդրվում է պարզել, թե գավառային կոմիսարը 1919 թ. հունվարի 1-ից մինչև 1920 թ. հունվարի 1-ը, և 1920 թ. հունվարի 1-ից մինչև նույն թվականի ապրիլի 1-ը ինչքան դասալիք է հասցրել զորահավաքակայանները. «Մեր գավառի ամենացավոտ հարցերից մեկը դասալքության հարցն է, որոնք զբաղվում են գողությամբ և թալանով: Օր չի անցնում, որ տեղից 6-րդ գունդը չուղարկենք դասալիքներ և չստանալով նոր ցուցակ, Լևոն բէգը տեղ է հասցրել 65 դասալիք: Որպեսզի դասալքության դեմ կարելի լինի կռվել, պետք է Դիլիջանի գավառի դասալիքներին ուժեղ պահակ[այ]ին հսկողության տակ քշել դեպի Սարիղամիշի կամ Իգդիրի զորամասը, որտեղից դժվարությամբ կարող են փախչել: Համաձայն մեր որոշման սահմանապահ և մեր պահեստի միլիցիայից նշանակել Ղալաչայում՝ 15 մարդ, Ջողազում՝ 15 մարդ, Դովեղում՝ 5, Բաղանիսում՝ 15 և Կոթի գյուղում՝ 15 մարդ»[2]: Հետաքրքիր է նաև գավառային կոմիսար Շահինյանի հեռագիրը, որը Քեշիշքենդից ուղարկվել էր Հայաստանի վարչակազմի և միլիցիայի բաժնի դիրեկտորի հասցեով: Դրանում ոչ առանց հիմքի նշելով, որ գավառում անցկացվող մսի, վառելիքի, անասնակերի բռնի հավաքները հանգեցրել են զինված բախումների, որի հետևանքով եղել են նաև սպանություններ, այդ թվում նաև գավառային կոմիսարների, գրության հեղինակը եզրակացնում էր, որ զինված ուժի կիրառումով հարցի լուծումը անօգուտ է, առաջարկելով այլ լուծում գտնել, նշելով, զինվորները բացահայտ լքում են դիրքերը, դասալքությունը հսկայական չափերի է, չարամիտ տարրերը պղտորում են ժողովրդին, անպատիժ քարոզչություն անելով, որի հետևանքով անարխիան օրեցօր աճում է[3]: Ակնհայտ է, թե ինչ դժվարությունների առաջ էին կանգնում տեղական իշխանավորները և միլիցիան՝ գործելով սովի ու տնտեսական քայքայվածության պայմաններում:

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 201, ց. 1, գ. 26, թ. 151:

[2] Նույն տեղում, գ. 26, թ. 43:

[3] Նույն տեղում, թ. 71:

1920 թ. այդ օրերին իրավիճակն ավելի դյուրին չէր նաև Շիրակի նահանգում, ինչի մասին տեղեկանում ենք Շիրակի նահանգապետի գրագրությունից նահանգի ներքաղաքական իրավիճակի, դասալքության լուծման հարցի մասին:

Դեռ 1920 թ. մայիսի 8-ին ՀՀ նախարարների խորհրդի կողմից հաստատվում է Հայաստանի Հանրապետությունում ապրող օտարահպատակների զինակոչության վերաբերյալ հարցը. 1) այն բոլոր օտարերկրացիները, որոնք գտնվում են պետական ծառայության մեջ, համարվում են Հայաստանի քաղաքացիներ, հետևապես նրանք պետք է ենթարկվեն զինակոչի իբրև Հայաստանի քաղաքացիներ, 2) այն բոլոր հպատակները, որոնք Ադրբեջանի, Վրաստանի և Հարավային Ռուսաստանի պետությունների ներկա պահին ապրում են Հայաստանի հանրապետության սահմաններում, համարվում են Հայաստանի քաղաքացիներ, հետևապես նոքա ևս ըստ ընդհանուր օրենքների պետք է ենթարկվեն զինակոչի, 3) այն բոլոր օտարահպատակ հայերը, այն է՝ Ֆրանսիայի, Անգլիայի և այլն, բացի Ադրբեջանի, Վրաստանի և Հարավային Ռուսաստանի պետությունների հպատակներից, որոնք կապացուցեն, որ եղել են օտարահպատակ առնվազն մեկ տարի առաջ և այս օրենքի հրապարակումը՝ ազատ են համարվում զինակոչից: Սույն օրենքի պատճենը ուղարկվում է ՆԳ նախարարություն ի գիտություն[1]: 1920 թ. մայիսի 11-ին Նախարարների խորհուրդը կրկին անդրադառնում է զորակոչի խնդրին, լսելով օտարահպատակ հայերին զինակոչի ենթարկելու համար պատրաստված օրինագծին մասին, ընդունում այն և հաստատում ներկայացված օրինագիծը[2]:

Դեռ 1920 թ. մայիսի 21-ին Շիրակի նահանգապետ Կ. Սասունին ՆԳ նախարարություն ուղարկված գրության մեջ հատուկ նշում է, որ դասալքության, այդ թվում նաև խռովարարների, թալանչիների, զանազան անպատասխանատու խմբերի դեմ կռվելու նպատակով ինքը ձեռնամուխ է եղել ռեզերվի միլիցիայի կազմակերպմանը՝ նահանգում իրական կարգ ու կանոն հաստատելու համար[3], ինչն առաջնային էր

[1] Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 491, թ. 81, 108, ֆ. 200, ց. 1, գ. 330, թ. 40:
[2] Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 191, թ. 141հակ.;
[3] Նույն տեղում, ֆ. 201, ց. 2, գ. 631, թ. 1 -2;

նաև դասալքությունն արմատախիլ անելու տեսանկյունից: 1920 թ. սեպտեմբերի 30-ին ՆԳ նախարար Ք. Արարատյանին և ռազմական նախարար Ռ. Տեր-Մինասյանին ուղղված հեռագրում (№ 3405) Կ. Սասունին նշում էր, որ անհրաժեշտ կարգ պաշտպանելու համար մոտ 100 հոգի մեկ ամիս առաջ պաշտոնից ազատ են արձակվել անհամապատասխան լինելու պատճառով, որ վերջին 3 օրվա ընթացքում հավաքել են մոտ 2000 դասալիք, ընդգծելով, որ ինքը հույս ունի մոտ օրերում ևս 2000 հոգի հավաքել, և նահանգային միլիցիայից 60 հոգի պահվում են Աղբաբայի շրջանում՝ դասալիքներ հավաքելու նպատակով, միաժամանակ առաջարկելով գավառային միլիցիոներների թիվը հասցնել 400 մարդու՝ ազգաբնակչության ներքին խաղաղությունը ապահովելու և առաջադրված խնդիրները լուծելու համար[1]: Չնայած կիրառված խստություններին, Կ. Սասունին, կարծում ենք, նպատակին չկարողացավ հասնել, թեկուզև Կարսի անկման նախօրյակին կարծես թե շատ խիստ մի հրաման արձակեց. «Կարգադրում եմ բոլոր գյուղական կոմիսարներին չորս օրվա ընթացքում գրավոր և իրենց ստորագրությամբ կազմել գյուղի բոլոր դասալիքների ցուցակը՝ յիշատակելով, թե [որմէ ու՞ր - որտե՞ղ] են գտնվում և ներկայացնել ինձ անձամբ: Այն բոլոր կոմիսարները, որոնք չեն կատարի իմ այս կարգադրությունը կամ կտան անճիշտ տեղեկություններ, կենթարկվեն, համաձայն Հայաստանի օրենքների, ամենախիստ պատժի՝ մինչև մահվան պատիժը»[2]: Դեռ 1920 թ. մայիսի 6-ին Նախարարների խորհուրդը զեկուցում է լսում մահվան պատիժը հաստատելու մասին և որոշում հաստատել մահվան պատիժը պետական դավաճանության և չարամիտ սպեկուլացիայի համար արտակարգ դատարանի միջոցով, գտնելով, որ արտակարգ դատարանի վճիռները կհաստատվեն զինվորական նախարարի կողմից, պարտավորեցնելով ամենքին հայտարարել պատժի հաստատված լինելու մասին[3]: Նույն նիստի կողմից լսվում է Զինվորական և ՆԳ նախարարների զեկուցումը արտակարգ դատարաններ հաստատելու մասին, որի հիման վրա որոշվում է սկզբունքորեն ընդունել այն և հանձ-

[1] Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 49, թ. 43, 79:
[2] Նույն տեղում, թ. 82:
[3] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 201, ց. 1, գ. 107, մաս II, թ. 87:

նարարել Արդարադատության նախարարին մինչև հաջորդ նիստը ներկայացնել օրինագիծ, իսկ մինչ այդ հայտարարել օրենքի հաստատված լինելու մասին[1]. Մայիսի 7-ին արդեն լսվում է Արդարադատության նախարարի զեկուցումը Արտակարգ դատարանի հատուկ օրինագծի մասին, որի մասին որոշվում է նկատի ունենալով դիտողությունները՝ վերստին խմբագրել և վերահաստատել մայիսի 6-ի Նախարարների խորհրդի որոշումը՝ ներկայացնելով Զինվորական նախարարին ի հաստատումն և հանձնել հրատարակության[2]:

Կառավարությունը այս ամենին զուգահեռ փորձում էր կարգավորել նաև Վրաստանի հետ վիճարկելի համարվող տարածքներում ապրող հայերի զորակոչային և դասալքության հարցերը. 1920 թ. հունիսի 5-ին Նախարարների խորհրդի նիստում լսում է ԱԳ նախարարի զեկուցումը Չեզոք զոնայում զորահավաք կատարելու համար Վրաստանի ձեռք առած միջոցների մասին: Ընդունված որոշման մեջ ԱԳ նախարարին հանձնարարվում է բողոքել այդ առթիվ, միաժամանակ Երևանում և Թիֆլիսում անգլիական հրամանատարությանը հայտնել, որ համաձայն կնքված դաշնագրի իրավունք չունեն զորահավաքին վերաբերող որևէ գործողություններ կատարել Չեզոք գոտում[3]:

1920 թ. հուլիսի 2-ին (N 4455) և հուլիսի 3-ին (N 4455) Կարսի քաղաքացիական նահանգապետ Ստ. Ղորղանյանը ՆԳ նախարարին ուղղված գրությունում հայտնելով գեներալ Փիրումյանի դասալիքներին վերաբերող հեռագրի մասին, որում հաղորդվում էր, որ ինքը մինչ այդ էլ շտապ և ամենախիստ միջոցների է դիմել այդ առթիվ, դժգոհելով գյուղական տանուտերերի կողմից դասալիքների նկատմամբ բռնած դիրքից, գտնելով նաև, որ դասալիքներին պետք է բռնել, որ նրանց նկատմամբ թույլ հսկողությունը նպաստում է դասալիքների կողմից զորամասերի լքմանը, երբ մի կողմից բռնում ես, իսկ մյուս կողմից՝ բաց թողնում, և ի վերջո եզրահանգում, որ եթե չդիմեն խիստ միջոցների, զորամասերը երևի թե նրանց ստվերը կդառնան[4]:

---

[1] Տե՛ս նույն տեղում, ֆ. 202, ց. 1, գ. 107, մաս II, թ. 83:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 85:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 202, ց. 1, գ. 105, թ. 1: **«Կառավարության Լրաբեր»**, Երևան, 5 հունիսի, 1920, N 1:

[4] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 201, ց. 2, գ. 626, թ. 5, ց. 1, գ. 50, թ. 9:

1920 թ. հուլիսի 14-ին (N 1643) Էջմիածնի գավառի համայնական վարչության նախագահը դիմելով ՀՀ ՆԳ նախարարին, հայտնում է, որ գավառում դասալիք զինակոչիկներին հավաքելու համար իրենք մինչ այդ ձեռք են արել աներևակայելի միջոցներ, ստիպված գործի դնել նույնիսկ ապօրինի միջոցներ, որոնց պատճառով կարող են դատապարտվել, ստիպված են եղել դասալիքներին ձեռք բերելու համար շատ հաճախ դիմել ծեծի, նման անթույլատրելի այլ միջոցների, բռնագրավել և նույնիսկ այրել դեզերն ու տները, և ընդգծում, որ իրենք համենայն դեպս միշտ էլ կարողացել են մեծ քանակությամբ *«դիզերփրներ»* հավաքել և ճամփել» գնդերը, ավելացնելով սակայն, որ դրանով հանդերձ նրանց թիվը երբեք չի պակասում, որովհետև գնդերում հնարավոր չի լինում նրանց պահել և իրենք միևնույն դասալիք զինվորներին ստիպված են փնտրել և գտնել 10-15 անգամ[1]: Նման բովանդակություն ուներ նաև Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար գնդապետ Բաղդասարյանի 1920 թ. հուլիսի 12-ի (N 10800) Էջմիածնի քաղաքային միլիցիայի պետին ուղղված պաշտոնագիրը, որով խնդիր էր դրվում գավառում իրենց գյուղերում ազատ ապրող և հետախուզման չենթարկվողներին որպես դասալիքների վճռական միջոցների ձեռնարկումով բռնել և զորակոչի ենթարկել[2]:

Կարմիր բանակի 20-րդ դիվիզիայի պետ Տիխոմիրովի վկայությամբ հայկական զորամասերում քայքայումը ուժեղացել է[3]: Իսկ արդեն գնդապետ Կորոլկովի կողմից զորքերի հրամանատարին ուղարկված 1920 թ. հուլիսի 29-ի զեկուցագրից պարզվում է, որ դասալքությունը հաճախացել էր՝ մասնավորապես Բեյուք-Վեդիի վրա հայկական զորքերի հարձայումից հետո, և առանձնապես շարուրցիների և նախիջևանցիների մեջ, որոնք անտեսելով ՆԳ և Զինվորական մարմինների արգելանքին, ամբողջ խմբերով դասալքում էին՝ վերադառնալով իրենց տները[4], որին նպասեց նաև թաթարական գյուղերի թալանին մասնակցելը:

---

[1] Տե՛ս նույն տեղում, ֆ. 201, ց. 2, գ. 626, թ. 6:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 216 (214), ց. 3, գ. 65, թ. 255:

[3] Տե՛ս **«Բանբեր Հայաստանի արխիվների»**, 1983, N 2, էջ 15, 79:

[4] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 201, ց. 1, գ. 98, թ. 81:

1920 թ. օգոստոսի 3-ին (N 993) ՆԳ նախարարին ուղղված գրության մեջ գեներալ Նազարբեկյանը և շտաբի պետ գնդապետ Վեքիլովը պահանջում էին ստիպել միլիցիային և վարչակազմին կտրուկ միջոցներ ձեռք առնել դասալիքներին զորամասերը վերադարձնելու համար[1]: 1920 թ. օգոստոսի 5-ին (N 7427) Կարսի նահանգապետին ուղղված հեռագրում նշում է դասալքության ուժեղացման մասին, որ տասն օրվա ընթացքում զորամասերից փախել են 140 մարդ, վարչակարգի ձեռնարկած միջոցները մնացել են անհետևանք, ըստ այդմ էլ կոչ անելով ձեռք առնել կտրուկ միջոցներ[2], չնայած ինքը՝ գեներալ Հովսեփյանը ամենևին էլ չէր փայլում մաքրակենցաղությամբ, և սահմանագոտում պարզապես գնդապետ Կադիմովի հետ միասին զբաղվում էր անասնագողությամբ և սովորական մաքսանենգությամբ, դեպի Վրաստան տեղափոխում ապօրինի ապրանքներ, որի մասին վրդովմունքով մատնանշում է նահանգապետ Ստ. Ղորղանյանը[3]:

Դասալքության հարուցած չարիքին է անդրադառնում «Ռազմիկ» զորական շաբաթաթերթը. «Փոքրիկ հանրապետութեան համար փոքրիկ բանակին մեջ դասալքությունը դարձած է որոշ չարիք...Եթե քաղաքական իշխանութիւնները բարեխղճութեամբ և հայրենասիրական մտորումներով տանեն իրենց պաշտօնը, դասալիքներ ու ներկայ համեմատութիւնը երբեք չենք տեսներ մեր իրականութեան մէջ: Եւ մեր բոլոր պաշտօնեաները յանցաւոր են՝ հռչակաւոր Ալեքսանդրապօլէն մինչեւ Երևան:..ցոյց կտամ և ուրիշ պատասխանատուներ- զորամասերը՝ իրենց հրամանատարական կազմերով և սպաներով ու համապատասխան երկրորդական դերակատարներով:

1920 թ. օգոստոսի 9-ին Նախարարների խորհուրդը թույլատրում է զորահրամանատարներին N 918 հոդվածի համաձայն զորքերի ռազմադաշտային վարչության կանոնադրությամբ կազմել զինվորական-դաշտային դատարաններ այն վայրերում, որոնք հայտարարված են պատերազմական դրության մեջ և այն գործադրել 1919 թ. հուլիսի 24-

[1] Տե՛ս նույն տեղում, գ. 26, թ. 238:

[2] Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 626, թ. 11:

[3] Տե՛ս **Բաբալեան Արտ.,** Հայաստանի անկախութեան պատմութիւնը եւ այլ յիշատակներ, էջ 184, Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 201, ց. 1, գ. 50, թ. 9-202:

ից[1], պնդելով, որ «Դասալքութեան դէմ կռվելը հեշտ է և անյետաձգելի: Միայն հարկավոր է կամք, յարատևութիւն և հայկական սրտացաւ զգացում, յօգուտ թանկագին հանրապետութեան և իր պանծալի Բանակի»[2]: 1920 թ. սեպտեմբերի 8-ին (N 3450/գ.20) ՆԳՄ Արարարյան փոխնահանգապետը Էջմիածնի գավառային ինքնավարության վարչությանը ուղղված պաշտոնագրում հայտնում էր Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի գրության մասին, որով տեղեկացվում էր, որ Էջմիածնի գավառային միլիցիան դասալիքներից կաշառք վերցնելով՝ նրանց ազատ է արձակում: Ըստ այդմ խնդրվում էր անմիջապես կատարել խիստ քննություն և եզրակացությունը ետ ուղարկել իրեն[3]:

1920 թ. սեպտեմբերի 30-ին օրենքով ամբողջ Հայաստանը հայտարարվում է զինվորական դրության մեջ, հիմք էր ընդունվում 1919 թ. հոկտեմբերի 24-ի դասալքության մասին օրենքը և ժամանակին կամ ինքնակամ զորամասերը չներկայացվածները համարվում էին դասալիքներ՝ ենթարկվելով մահապատժի զինվորական դաշտային դատարանի միջոցով, ինչպես նաև պատիժներ էր սահմանվում նրանց աշխատանքի ընդունողներին թաքցնողներին, գյուղական կոմիսարներին և միլիցիայի ծառայողներին, այդ կետը չկատարողները ենթարկվում էին ծառայությունից արձակման և բանտարկության 1-6 ամիս կամ տուգանքի մինչև 200 հազար ռուբլի, իսկ այն գյուղական կոմիսարները և միլիցիայի բոլոր ծառայողները, որոնց շրջանում կգնվեին դասալիքներ, կենթարկվեն ծառայությունից արձակման կամ 1-6 ամիս բանտարկության, իսկ եթե ապացուցվեր, որ նրանք տեղյակ են եղել իրենց շրջանի դասալիքների մասին, ենթարկվելու էին զինվորական-դաշտային դատարանի դատին[4]:

Դասալքությունը պատերազմի տարիներին գործնականում անվերահսկելի դարձավ, որի դեմն առնելու համար ՆԳ նախարար Ս. Արարատյանը 1920 թ. սեպտեմբերի 30-ին (N 8975) հերթից դուրս շրջաբերական է արձակում, և ի հետևումն Կարսի նահանգում զարգացող դեպքերի պարտավորեցնելով ամենավճռական միջոցներ ձեռք առնել

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 199, ց. 1, գ. 172, թ. 44:

[2] Տե՛ս **«Ռազմիկ»,** Զօրական շաբաթաթերթ, 9 օգոստոսի, 1920, N 13:

[3] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 214, ց. 1, գ. 43, թ. 821:

[4] Նույն տեղում, ֆ. 290, ց.1, գ. 36, թ. 3-4:

զանազան պատրվակներով թաքնվողներին հայտնաբերելու և հավաքելու, ինչպես նաև նոր զորահավաք սկսելու մինչև 35 տարեկանների շրջանում, նշելով, որ հենց նույն օրը կուղարկվի հրատարակված օրենքն այդ մասին: ՆԳ նախարարը դասալիքների մասին կառավարության հրամանը կատարելու համար հատուկ լիազորություններով ռազմաճակատ են մեկնում նախարարներ, ընդ որում Ս. Վրացյանը և Ա. Բաբալյանը՝ Կարս, իսկ Ջամալյանը և Ղազարյանը՝ Ալեքսանդրապոլ-Ղարաքիլիսա-Չեզոք գոտի, Աբր. Գյուլխանդանյանը՝ Դիլիջան, իսկ Զանգեզուր նախկին նահանգապետ Մելիք-Յոլչյանը՝ Բայազետ-Զանգեզուր[1]: 1920 թ. սեպտեմբերի 30-ին ՀՀ պառլամենտի կողմից ընդունվում է օրենք Հայաստանի ամբողջ տարածքը ռամական դրության մեջ հայտարարելու մասին, որի կապակցությամբ օրենքի ընդունման նախօրյակին Ռազմական նախարարը և նրա օգնական ընդհանուր շտաբի ավագ զորավար Հախվերդյանը միջնորդել էին, ելնելով նրանից, որ Հայաստանը քաղաքական տեսակետից ապրում է անհամեմատ ավելի ծանր օրեր, և դա հիմնավորելու համար վկայակոչում էին օգոստոսի 9-ի օրենքը[2]:

1920 թ. հոկտեմբերի 2-ին Նախարարների խորհուրդը ի լրացումն սեպտեմբերի 30-ի պարտադիր որոշման՝ լսում է ՆԳ նախարարի առաջարկները դասալքության դեմ կռվելու միջոցների մասին, որոնք հաստատվում են, լսելով նաև Զինվորական նախարարի ձևական առումով խստաշունչ, բայց ժամանակավրեպ զեկուցումը դասալիքների համար կախաղանով մահապատիժ գործադրելու մասին. ընդունված որոշման մեջ արտոնվեց դասալիքների մահապատիժը գործադրել կախաղանով, որը կարող էր լինել հրապարակային[3]:

Դասալիքների դեմ կռվելու փորձ էր Վաղարշապատ նահանգապետ Ամիրխանյանի 1920 թ. հոկտեմբերի 1-ի շրջաբերականը միլիցիապետերին Կարսում զարգացող դեպքերի հետևանքով ամենավճռական միջոցների ձեռք առնման մասին՝ անհապաղ դասալիքներին հավաքելու թաքստոցներից, զգուշացնելով, որ մինչև 35 տարեկան

[1] Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 98, թ. 106:
[2] Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 243, թ. 1
[3] Նույն տեղում, ֆ. 202, ց. 1, գ. 107, մաս III, թ. 54:

դասալիքները կենթարկվեն զինվորական դաշտային դատարանի՝ լիազորելով դատել մինչև իսկ մահվան պայմանով, իսկ եթե տեղական իշխանության ներկայացուցիչների մոտ նկատվեն այդ հարցում թուլության կամ զեղծումների դեպքեր, նրանք նույնպես կբանտարկվեն և կտան հարկ եղած պատասխանը զինվորական դաշտային դատարանի առաջ, ամբողջ պատասխանատվությունը դնելով միլիցիապետի վրա[1]:

1920 թ. հոկտեմբերի 2-ին (N 5839) ԱԳ նախարարը տեղեկացում էր Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանին, որպեսզի նա իրազեկի Վրաստանի ԱԳ նախարարին ի պատասխան Նո. 7484 հեռագրի սեպտեմբերի 1-ի հեռագրի, որ նախարարների խորհրդի կողմից վավերացված օտարահպատակների զինակոչի մասին օրենքը և նրա սահմանած կանոնները վերաբերում են միայն հայ օտարահպատակներին, հայտնելով սակայն, որ կառավարությունը նախատեսել է, որ Հայաստանի և Վրաստանի միջև հպատակության հարցի վերաբերյալ դեռ համաձայնություն չի կայացել, հայ վրացահպատակներին զինակոչի ենթարկելու հարցը ժամանակավորապես հետաձգվել է՝ մինչև հպատակության հարցում Վրաստանի հետ համաձայնության գալը և հպատակության օրենքի հրապարակումը[2]:

ՀՀ Զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանիև նրա օգնական՝ Ընդհանուր շտաբի ավագ զորավար Հախվերդյանի 1920 թ. հոկտեմբերի 6-ին (N 454) տեսչական բաժնի կողմից անցկացված ստուգումների հիման վրա տրված հրամանում հայտնվում էր, որ ամենուրեք կատարվող շուրջկալների միջոցով հավաքատեղիներն են ուղարկվում զանազան զորամասերի զինվորներ, մանավանդ Երևանի և Նոր Բայազետի շրջաններում գտնված զորամասերում՝ առանց փաստաթղթերի անհրաժեշտ ձևակերպումով: Հրամանում պարտադրվում էր բոլոր պարեկներին և նրանց պարտականությունները կատարող անձանց այդպիսի փաստերն անհապաղ հավաքել և ներկայացնել Գլխավոր շտաբ, իսկ նման զինվորներին ուղարկել իրենց զորամասերը՝ այդ մա-

[1] Նույն տեղում, ֆ. 216 (214), ց. 3, գ. 75, թ. 925;
[2] Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 330, թ. 41:

սին հաղորդելով պետերին[1]: Մի բան լիովին ակնհայտ է, որ ՀՀ-ում դասալքությունը առանձնակի վատ երանգներ ձեռք բերեց 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ժամանակ. 1920 թ. հոկտեմբերի 15-ին Գլխավոր շտաբի կապիտան Խնձորյանը անդրադառնում է գնդապետ Վեքիլյանի զեկույցին, որում փաստվում էր այն մասին, որ զորքերը տեղ-տեղ համալրվել են դասալիքներով՝ մասնավորապես Հարամ Վարդան-Աղբաբա գծի վրա գեներալ Հովսեփյանցի զբաղեցրած զորամասերում, առավել ևս որ ըստ այդ փաստերի, զինվորների մեծ մասը անծանոթ էին այսպես կոչված «Ռոշե»-ի հրացանին, որը ևս նպաստել է անկապ ետ քաշվելուն, որ անհրաժեշտ էր զինվորներին ժամանակ տալ ծանոթանալու անծանոթ զենքի հետ, ինչն անտեսվել էր[2]: 11-րդ կարմիր բանակի 1920 թ. հոկտեմբերի 15-ի օպերատիվ-հետախուզական տեղեկագրից տեղեկանում ենք՝ որ Հայաստանի մերձսահմանային գոտում տրամադրությունը շատ ճնշիչ է, որ հայտարարված զորահավաքը ընթանում է գնդակահարության սպառնալիքի ներքո, դասալիքները փախչում են Վրաստան և Պարսկաստան[3]:

Կարելի է ասել, որ հենց թուրք-հայկական պատերազմի այդ ճակատագրական օրերին, երբ հայ զորքը խուճապահար փախչում էր, դասալքությունը *(այս թեմային հարկավոր է դեռ առանձին և, մանրազնին և հնարավորինս անաչառ անդրադառնալ)* անհաղթահարելի խնդիր դարձավ, չնայած ՆԳ և զինվորական իշխանությունների կողմից գործադրված ջանքերին. արդյունք չտվեցին նաև Հատուկ ջոկատի *(չնայած վերջինս էլ առանձնապես չէր փայլում մաքրակենցաղությամբ, նրա գործունեության մեջ տեղ էին գտել կաշառակերության, անհետևողականության և այլ բացասական փաստեր)*, ՀՀ Դաշնակցության Կենտրոնական կոմիտեի տեղական մարմնի գործողությունները Թիֆլիսում և Վրաստանում կազմակերպելու հայ սպայության, և մասնավորապես դասալիքների զորահավաքը, հակված չլինելով բռնություն գործադրել այդ խնդրում, ինչի հետևանքով վրացական իշխանությունների թողտվության, փոխադարձ կաշառատու գործարքների պայման-

[1] Նույն տեղում, ֆ. 204, ց. 1, գ. 166, թ. 50:
[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 486, թ. 343:
[3] Տե՛ս **«Բանբեր Երևանի Համալսարանի»,** 1983, №2, էջ 28-29:

ներում զորակոչի ենթակա հայ սպաները նախընտրում էին կամ դառնալ վրացահպատակներ, ինչը ձեռնտու էր Վրաստանին, և որն արտաքուստ վկայում էր այդ խնդրում Հայաստանի իշխանությունների հետ համագործակցության պատրաստակամության մասին, ինչը տուրք էր ձևին, և պարսկահպատակներ, որոշ դեպքերում էլ՝ փախչել Կախեթիա և Բաթում, ինչը ցայտուն երևում է գեներալներ Մ. Սիլիկյանի և Հ. Քիշմիշյանի 1920 թ. նոյեմբեր ամսվա մի շարք զեկուցագրերից՝ ուղղված ՀՀ Զինվորական նախարարին[1]: Ավելին, գտնվեցին ոչ հիմնավոր, կեղծ պատճառաբանություններ, որոնք խոչընդոտեցին Վրաստանում հայ զինապարտների շրջանում ՀՀ համար չափազանց կարևոր զորակոչային խնդիրների իրագործմանը, ինչը բացասական քաղաքական, ռազմական և հոգեբանական ազդեցություն թողեց թուրք նվաճողի հետ անհավասար գոտեմարտում գտնվող Հայաստանի Հանրապետության վրա. այսպես, գեներալ-մայոր Հ. Քիշմիշյանի ՀՀ ռազմական նախարարին հասցեագրված 1920 թ. նոյեմբերի 3-ի զեկուցագրից ակնհայտ է դառնում հայ սպաներին և զինվորներին բռնի կարգով Հայաստան տեղափոխելու մի նուրբ հանգամանք. զեկուցագրում նշվում է, որ այդ կապակցությամբ Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատարի մոտ խորհրդակցություն է հրավիրվել, որին ներկա են եղել Ստ. Մամիկոնյանը, Ս. Խաչատրյանը, Կ. Գազազյանը, Ազգային խորհրդի անդամներ Ա. Թոփչյանը, Միանսարյանը և ուրիշներ. խորհրդակցությունը ամենավճռական կերպով բողոքում է հայ զինվորներին բռնի կերպով Հայաստան տեղափոխելու կապակցությամբ, կեղծ և ոչ լիովին պատճառաբանված հիմնավորում մեջտեղ բերում, թե իբր այդ միջոցառումը առաջ կբերի հայ աշխատունակ բնակչության բռնի վերաբնակեցում Թիֆլիսից և ողջ Վրաստանից, որն էլ իբր թե ցանկալի չէ, որ ավելի դեմոկրատական քայլ կլինի քրջերում գտնվող զինվորներին հագուստով և դրամով ապահովել, ավելին, կայուն երաշխիքներ տալ այն բանում, որ պատերազմի ավարտից հետո նրանք ազատվեն պարտադիր զինվորական ծառայությունից, որ հետո նրանք նորից իրավունք կունենան վերադառնալու Թիֆլիս, իսկ նրանց ընտանիքներին ապահովել վրացական իշխանու-

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 275, ց. 5, գ. 154, թ. 250, 259, 270, 286:

թյունների կողմից կիրառվելիք հնարավոր բռնարարքներից: Ասվածից կարելի է եզրակացության գալ այն մասին, որ անգամ Հայաստանի համար այդ դժվար օրերին, երբ անհրաժեշտ էր բռունցքվել և թշնամուն վճռական հակահարված տալ, *թիֆլիսյան «քաղաքագետները»*, բառիս բուն իմաստով վատ որակի դեմոկրատիա էին խաղում, ինչը կեղծ ազգասիրություն էր, չէր բխում ՀՀ ռազմաքաղաքական հետաքրքրություններից, ավելին, մեծապես նպաստում էր սպառնացող վտանգի ահագնացմանը, խրախուսում դասալքությունը: Չնայած Վրաստանի իշխանությունները ձևականորեն տվել էին իրենց համաձայնությունը՝ Հատուկ ջոկատի ջանքերով բռնի միջոցներով իրականացնել հայ զինվորների և սպաների տեղափոխումը «եղբայրական» Հայաստան[1], ամենևին էլ ոչ միայն արդյունավետ չեղավ, այլև գործնականում ձախողվեց: Կարելի է եզրակացնել, որ անգամ ՀՀ համար այդ դժվար օրերին, երբ անհրաժեշտ էր թշնամուն հակահարված տալ, թիֆլիսյան «քաղաքագետները կեղծ ազգասիրություն էին խաղում, որը չէր բխում ՀՀ ռազմաքաղաքական շահերից և խրախուսում էր դասալքությունը, ինչն էլ վերջին հաշվով նպաստեց ՀՀ ռազմաքաղաքական պարտությանը 1920 թ. թուրք-հայկական պատերազմում:

Անգամ հանրապետության մայրամուտի վերջին պահերին դասալքության հարցը շարունակում էր մնալ օրակարգում, որի մասին շատ բնութագրական է նոյեմբերի 5-ին գեներալ Սիլիկյանի կողմից զորքերի հրամանատարին ուղղված տագնապալից հեռագիրը, որը փաստացի վկայում էր ողջ ռազմաճակատի գծով ամբողջ զորաջոկատներով ինքնակամ զորքերի խուճապային լքման և իրենց հրամանատարների հրամանները չկատարելու, քայքայման և արագորեն ճակատի ապակազմակերպման մասին[2]:

Այս առումով Ալեքսանդրապոլում և այլուր սկսված անկարգությունների և խուճապի հետ զուգահեռաբար դասալքության բռնկումները բանակում անզսպելի դառան, սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների առանձին դեպքերը սկսեցին ընդունել խմբային-զանգվածային բնույթ,

[1] Նույն տեղում, թ. 259: Տե՛ս **Վիրաբյան Վ. Հ.,** Հայ վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները 1918-1921 թթ., Եր., ԵՊՀ հրատ., 2016, էջ 632, **ՀԱԱ,** ֆ. 200, ց. 1, գ. 440, թ. 259:

[2] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 201, ց. 1, գ. 602, թ. 88:

որոնք առանձնակի ուժով դրևորվեցին Ղզըլչախչախի կռիվների ժամանակ. Այսպես, 1920 թ. նոյեմբերի 5-ին գեներալ Մ. Սիլիկյանը գնդապետ Գրոսսից ստացած զեկուցագրի հիման վրա հայկական բանակի հրամանատար, գեներալ Թ. Նազարբեկյանին ուղարկած հեռագրում տեղեկացնում էր, որ «***զորամասերը ինքնակամորեն թողնում են ռազմաճակատը և զինվորները խմբերով դասալքում են զորամասերից և նույնիսկ չեն կատարում իրենց պետերի հրամանները: Ռազմաճակատի քայքայումը և կազմալուծումը, ըստ երևույթին, արագ թափ է ընդունում***»[1]: Նույն օրվա այդ փաստերը հաստատում է ռազմական նախարար Ռ. Տեր-Մինասյանը վարչապետ Հ. Օհանջանյանին Ալեքսանդրապոլից հղված հեռագրում, հայտնելով, որ հայկական զորքերը կռվել չեն ուզում, խաղաղություն են ուզում[2]:

1920 թ. նոյեմբերի 10-ին (N 9974) ՆԳ նախարարի օգնական Ղորղանյանը այդ ցայտնոտային օրերին միլիցիապետերին և նահանգապետներին ահազանգում էր, որ ազդեն և ներշնչեն ժողովրդին, որ նա իր մեջ գտնվող դասալիքներին զենքով և հանդերձանքով ուղարկի համապատասխան հավաքակայանները զորաջոկատների պետերի տրամադրության տակ[3]: Նմանատիպ կոչով է հանդես գալիս գեներալ Թ. Նազարբեկյանը ՆԳ նախարարին ուղղված 1920 թ. նոյեմբերի 10-ի (N 13118) դիմումագրում, կոչ անելով ազդել բնակչության վրա, որպեսզի իրենց միջից բացահայտեն դասալիքներին և ուղարկեն զորահավաքակայաններ, կազմելով նաև կամավորական ջոկատներ՝ սեփական զենքով և երեք-չորս օրվա հացի պաշարով[4]:

Իրավիճակն այնքան է սրվում, որ հարկադրված Նախարարների խորհուրդը 1920 թ. նոյեմբերի 11-ին լսելով Զինվորական նախարարի զեկուցումը ուսուցիչներին ռազմաճակատ ուղարկելու մասին, հավանություն տվեց՝ վերացնելով օչենքով ընդունված արտոնությունների հիման վրա ուսուցիչներին զինակոչից ազատելու մասին[5]:

---

[1] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 201, ց. 1, գ. 602, թ. 88:

[2] Տե՛ս նույն տեղում, գ. 602, թ. 89:

[3] Տե՛ս նույն տեղում, գ. 82, թ. 1:

[4] Տե՛ս նույն տեղում, թ. 3:

[5] Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 146ա, թ. 255, 257:

ՆԳ նախարարին ուղղված գեներալ Նազարբեկյանի 1920 թ. նոյեմբերի 12-ի հրահանգը կրկին վերաբերում է դասալիքներին, գտնելով, որ ժողովուրդն ինքը պետք է հայտնաբերի, հաշվառի նրանց և զենքով հանդերձ, 3-4 հացով ուղարկի ռազմաճակատ[1]: 1920 թ. նոյեմբերի 13-ին (N 3978) գեներալ Թ. Նազարբեկյանը և զորքերի հրամանատարի Գլխավոր շտաբի պետ Վլ. Պրիտոմանովը տեղեկացնելով, որ նախարարին ՆԳ քաղաքներում և գյուղերում թաքնվում են շատ դասալիքներ, որոնք զորամասերից փախել են զենքով և հանդերձանքով, կրկին խնդրում էր վերջինիս կարգադրում էր բռնել դասալիքներին և զենքով և հանդերձանքով ետ վերադարձնել հավաքակայաններըը[2]: Սակայն ապարդյուն. ՀՀ զորքերի հրամանատար գեներալ Թ. Նազարբեկյանի կողմից 1920 թ. նոյեմբերի 28-ին ՀՀ վարչապետին ուղղված հեռագրից տեղեկանում ենք, որ Իջևանում «1-ին, 2-րդ և 6- րդ ռազմամիլիցիոն վաշտերը թողել են դիրքերը և գնացել են տները», իսկ 3-րդ և 5-րդ վաշտերը անհայտ ուղղությամբ են գնացել, իսկ Բաղանիս գյուղում դասալիքները փորձել են բանտից ազատել իրենց դասալիք ընկերներին, փորձելով նույնիսկ ձերբակալել իրենց խոչընդոտող պորուչիկ Սախումյանին[3]: Եվ այդպիսի բազմաթիվ օրինակներ կարելի է բերել: Եվ այդ ամենը Հայաստանի և հայ ժողովրդի համար ճակատագրական օրերին: Կարծում ենք, ուշացած ռեակցիա էր, քանզի հոկտեմբերի 30-ին Կարսն անփառունակ ընկավ, և դրանում քիչ դեր չի խաղացել դասալքությունը, ՆԳ մարմինների, միլիցիայի անճարակությունը, փախչելու-փրկվելու հոգեբանությունը, ամենազոր վախը և սարսափը թուրքի հանդեպ, պաշտոնյաների և զինվորական գործիչների շահամոլությունը և մորթապաշտությունը, բոլշևիկյան գործոնի բարոյահոգեբանական լիցքը և այլն: Անտեղի չէ նշել ևս մեկ հանգամանքի մասին. մեր կարծիքով, հայկական բանակի շատ բարձրաստիճան սպաների մոտ գրեթե բացակայում էր ինքնասիրությունը, ինքնուրույնությունը կամ ավելի ճիշտ՝ ինքնավստահ կեցվածքը: Ինչպես արտաքին-քաղաքական խնդիրներում, այնպես էլ այս խնդրում շատ դեպ-

[1] Տե՛ս նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 81, թ. 3:
[2] Տե՛ս նույն տեղում, գ. 123, թ. 10:
[3] Տե՛ս «**Բանբեր Երևանի Համալսարանի»,** 1967, N°2, էջ 20-21:

քերում հայ սպաների և ըստ այդմ էլ հայ զինվորականության և զինվորների վճռականությունը կախվածության մեջ էր գտնվում այն հանգամանքից, թե իր կողքին կամ իր թիկունքում կա արդյո՞ք քաջարի բրիտանական կամ ֆրանսիական սպա թե՞ ոչ, որոնք որպես մեծ տերությունների ներկայացուցիչներ իրենց շատ վստահ էին զգում՝ աջ ու ձախ հրամաններ արձակելով: Հերիք էր, վերջին բրիտանական կամ ֆրանսիական սպան լքեր հայկական հողը *(իսկ դա 1920 թ. թուրք-հայկական պատերազմի նախօրյակին արդեն փաստ էր, կամ լավագույն դեպքում իրողություն էր),* որպեսզի խուճապային տրամադրությունները համակեին հայ զորքին և նախկինում անհամեմատ ավելի ինքնավստահ և վճռական եղած հայ զորքին, հայ սպային և զինվորականին համակեին խուճապն ու վախը, և ըստ այդմ դասալքության անզուսպ և քայքայիչ երևույթները գերեին հայկական բանակին, անճար դարձնեին թուրք ավազակաբարո զորքի առաջ, ինչին որպես արդյունք հետևեցին իրար հաջորդող պարտությունները ռազմաճակատում:

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետության տարիներին (1918-1920 թթ.) Հայկական բանակի շարքերում տեղ գտած զանգվածային, համատարած բնույթ կրող, ՀՀ ռազմուժը ներսից քայքայող դասալքության հիմնախնդրին, դրա հաղթահարման գործընթացներում պետության ու կառավարության, և մասնավորապես այդ խնդրի հանգուցալուծման առումով հայկական միլիցիայի ու առահասարակ ՆԳ նախարարության գործադրած ջանքերին և մարտավարությանը, և ըստ այդմ հանրագումարի բերելով արխիվային բազմաբնույթ նյութերը, այդ մասին ուղղակի և անուղղակի արժեքավոր վկայակոչումներ պարունակող հուշագրությունը, մասնավորապես ականատեսներ և այդ ժամանակաշրջանի պետաքաղաքական, ռազմական, կրոնական և հասարակական գործիչներ հանդիսացող Ս. Վրացյանի, Ռ. Տեր-Մինասյանի, Կ. Սասունու, Ա. Խատիսյանի, Հովի. Քաջազնունու, Գ.արք. Հովսեփյանի, Յովի. Սահակյանի, Յ. Իրազեկի և այլոց թողած արժեքավոր հուշերն ու տարաբնույթ աշխատանքները, խնդրո առարկայի վերաբերյալ կարելի է գալ մի շարք կարևոր եզրահանգումների. 1) Դասալքության առաջացման ու նրա տարածման գլխավոր գործոններից ամենակարևորները պետք է փնտրել հայտնի տարածաշրջանում Հայաստանի Հանրապետության ծանրագույն սոցիալ-տնտեսական կա-

ցությունում, որը նաև հետևանք էր ՀՀ աշխարհաքաղաքական մեկուսացված վիճակի: Արդյունքում էլ, 1919 թ. վիճակով 961 հազարից[1] քիչ ավելի բնակչություն ունեցող Հայաստանը 1918-1919 թթ. անցման ժամանակահատվածում, չկարողանալով լուծել սովի հետևանքով առաջացած հիմնախնդիրները՝ տվեց 180 հազարից ավելի մարդկային կորուստ, չհաղթահարելով բազմաբնույթ տարափոխիկ հիվանդություններով հագեցած իրավիճակի բարդույթները, ինչին զոհ գնաց ինքը՝ Ա. Մանուկյանը, ՀՀ փաստացի «դիկտատորը», իսկ դա չէր կարող չազդել հայկական պետականության տկարացման և Հայկական բանակի մարտունակության վրա և առաջ չբերեր զանգվածային դասալքության երևույթներ, 2) դասալքություն և այլևայլ բացասական երևույթներ առաջ բերած պատճառների մեջ ամենևին էլ երկրորդական դեր չի խաղացել նաև պետաքաղաքական ու ռազմական գործիչների, միլիցիայի, ՆԳ և Զինվորական նախարարությունների չինովնիկների ու աստիճանավորների զգալի մասի ապիկարությունը, շահամոլությունը, ստորաքարշությունը, ստրկամտությունը, կաշառվածությունը, և անշուշտ՝ կադրային մեծ անփորձությունն ու դրանց զգալի պակասը, 3) Հայաստանի կարևորագույն քաղաքներում՝ Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում և գավառային ծայրամասերում իշխանության քաղաքացիական և զինվորական մարմինների ու բաժինների միմյանց հետ աններդաշնակ, երբեմն էլ հավակնոտ, թշնամականի հասնող փոխհարաբերությունները նպաստեցին կարգապահության անկմանը բանակային զորամասերում և նպաստեցին դասալքության տարածմանը, 4) ***Հայկական բանակում դասալքության և այլ ոչ պատիվ բերող բացասական երևույթներին էապես նպաստեց հայկական կանոնավոր բանակի զորամասերի մասնակցությունը ՀՀ տարածքի որոշ հատվածները մահմեդական զանգվածներից մաքրման Զանգիբասարի, Վեդիբասարի, Զոդ-Բասարգեչարի և այլ գործողություններին, որին միանգամայն արդարացիորեն դեմ էին որոշ ռազմաքաղաքական գործիչներ, և հատկապես Դրոն, քանզի մասնակցելով այդ բնույթի ռազմական գործողություններին, հայ զինվորները և հրամանատարական կազմի մի մասը մասնակցեցին մահմեդաբնակ գյուղերի կո-***

[1] Տե՛ս **Հայկական Հարց,** Հանրագիտարան, էջ 212:

ղոպուտին, թալանին ու հարստահարություններին, ինչից հայկական բանակային զորամասերը էապես անբարոյականացան, կազմալուծվեցին և դարձան շահամոլ, որն էլ վերջին հաշվով միանգամայն «խրախուսեց» դասալքության արմատավորմանը, 5) Դասալքությանը նպաստող պատճառների և գործոնների մեջ պետք է տեսնել նաև 1920 թ. բոլշևիկյան մայիսյան ձախողված խռովությունը և ծավալած քարոզչությունը, որոնք որոշակի խթանիչ դեր կատարեցին, անշուշտ, այդ ամենին զուգընթաց՝ մոսկովյան բոլշևիկների ու Կարմիր բանակի ՀՀ սահմաններին մոտենալուն զուգահեռ քայքայման գործընթացները բանակում խորացան, դասալքությունը ծաղկեց և իր վատթարագույն դրսևորումները ունեցավ 1920 թ. թուրք-հայկական աղետալի պատերազմում, 6) Դասալքություն առաջ բերած երևույթների ու պատճառների մեջ նշելով բոլշևիկյան գործոնի մասին, հարկ է նաև ավելացնել, որ գոյություն ուներ արդեն զգալի չափով արմատավորված համոզմունք, որ հայ զորքը չի կռվի բոլշևիկյան, սակայն ըստ էության զգեստափոխված ռուսական Կարմիր զորքերի դեմ, որը պատմաքաղաքական խոր հիմքեր և պատճառաբանվածություն ուներ, և ըստ այդմ որոշակի շերտերով ամրագրվել էր հասարակական գիտակցության մեջ, որից էլ հմտորեն օգտվեց Ք. Կարաբեքիրը 1920 թ. թուրք-հայկական պատերազմում՝ իր զինվորներին զգեստավորելով Կարմիր բանակի կոմունարկաներով, ակնկալելով, որ հայ զինվորը չի կրակի նրանց վրա, ինչպես և տեղի ունեցավ, ինչն էլ մտնում է պատերազմի չգրված օրենքների մեջ, 7) Բանակում տեղ գտած բացասական երևույթների ընդերքային լուրջ պատճառների շարքում պետք է տեսնել նաև կանոնավոր բանակի և ոչ կանոնավոր ուժերի՝ կամավորական ու մաուզերիստական խմբերի միջև առկա խոր հակադրվածության, և հրամանատարության բացահայտ անկարողունակության՝ պետության մեջ պետություն դառալու ձգտում ունեցող ուժերի տրամադրվածությունները հաղթահարելու մեջ, 8) Կանոնավոր բանակի և խմբապետական-հայդուկային համակարգերի անհամատեղելիությունը ևս կարևոր ազդակ հանդիսացավ դասալքության և բանակը քայքայող նմանակարգ բացասական երևույթների արմատավորման համար: Զինվորական գործի կազմակերպման առումով իրար կողքի երկու հակադիր համակարգերի գործունեության պայմաններում զանազան

խմբերը գործելով ՀՀ բանակին կից՝ չկարողացան և անգամ կամեցողություն չդրսևորեցին տարալուծվել բանակային կառույցների մեջ՝ կուլ գնալով ինքնագլուխ գործելու անկազմակերպ բնազդներին, 9) Ինչպես այդ մասին կարելի է դատել ժամանակակիցների հուշերից ու զանազան աշխատություններից, դասալքությանը և հայկական բանակի տկարացմանը նպաստող կարևոր պատճառներից պետք է համարել Հայոց զորքի և ժողովրդի շարքերում կռվելու կորովի, ոգու, անհրաժեշտ կամքի և վճռականության պակասը, հոգեբանական պարտվողական ընդհանուր տրամադրվածությունը, ստրկամիտ ոգին, կամ ինչպես նկատել է ազգային գործիչ Ե. Իշխանյանը՝ ակնածանքը տաճկական-թուրքական ուժի նկատմամբ և ինքնվստահության բացակայությունը. ***«Շատերն էլ մեղադրում են կառավարութեանը, որ վերջինս ինքը զարկ է տալի դասալքութեանը: Կառավարական բոլոր հիմնարկութիւնները դարձրել է դասալիքների ապաստարան: Ինտելիգենցիան գլխովին դասալիք է, այդ բանը տեսնում է ժողովուրդն ու հետևում նոյն օրինակին»***[1]: Շատ բնութագրական են Հովի. Քաջազնունու խոսքերը. «Պատերազմը վերջացավ մեր կատարյալ պարտութիւնով: Մեր բանակը, որ կուշտ էր, լաւ զինւած ու լաւ հագնւած, չկռւեց. զօրքերը շարունակ նահանջում էին կամ դիրքերը լքում, զենքերը թափում ու ցրւում՝ գիւղերը:

Այս առումով միանգամայն դիպուկ է նկատել Ռ. Հովհաննիսյանը. ***«Զինվորական ծառայությունից խուսափումը, որ լայնորեն տարածված էր, մատնանշում էր երկրի աղետալի վիճակը: Հողագործ դասակարգը ուժասպառ էր եղել աշխատուժի հնգամյա պարպումից և մշտական զրկանքներից: Զորակոչն առավելապես ծանրանում էր աղքատների վրա, ովքեր չէին կարողանում զինվորական ծառայությունից ազատվել անփոխարինելի աշխատանքի պատրվակով և տեղական կոմիսարներին կաշառելու միջոցներ չունեին: Զինվորական գործերի նախարարությունը փորձեց զորահավաքը մեծացնել համընդհանուր զինովորական ծառայություն հաստատելու միջոցով՝ տասնութ տարեկան երիտասարդների կամ քսանամյա ուսա-***

[1] Տե՛ս **Իշխանեան Ե.**, Լեռնային Ղարաբաղ (1917- 1920), Եր., «Հայաստան», 1999, էջ 699, 700-701:

նողների համար եռամյա ակտիվ զինապարտությամբ և տասնհիմգ տարվա պահեստային ծառայությամբ: Աշխատանքի ընդունվելու և պետական օգնություն ստանալու համար տասնվեցից մինչև քառասուներեք տարեկան բոլոր տղամարդիկ պետք է անձը հավաստող փաստաթղթեր կրեին, որոնք ցույց կտային իրենց զինվորական կարգավիճակը: Դրան հաջորդած 1919 թվականի զորահավաքը սակայն ցույց տվեց, որ սոսկ կարգավորումներով հարցը չի լուծվի: Լիակատար հուսահատության մատնված՝ կառավարությունն ի վերջո արտոնեց մահապատժի վերականգնումը և ռազմական արագընթաց դատավարությունների նպատակով արտակարգ տրիբունալների ձևավորումը»[1]:

Հովի. Քաջազնունին ևս նկատել էր ՀՀ բանակը ջլատող և ոչնչացնող այդ կարևոր հանգամանքը. «Բանակը բարոյալքւած էր ներքին կռիւների շրջանում, անմիտ աւերումների ու անպատիժ թալանների շնորհիւ: Բարոյալքւած էր ու յոգնած: Խմբային ու խմբապետական սիստեմը, որ մասնաւորապէս խրախուսւել էր Բիւրօ-կառաւարութեան կողմից, քանդել էր զինվորական կազմի ամբողջութիւնը, միութիւնը: Բանակի դաստիարակութիւնը, ռազմական ոգին, կուռ կազմակերպութիւնն ու կարգապահութիւնը - ուրեմն եւ ընդդիմադրական ոյժը- թուլացած էին ծայր աստիճանի ու դա անակնկալ էր կառավարութեան համար. Կառավարութիւնը եւ ինքը զինւորական մինիստրը՝ չէին ճանաչում բանակը:

Ապա մի ճակատագրական սխալ արաւ կառավարութիւնը, զօրքերի թիւը աւելացնելու նպատակով, նոր ու նոր զինակոչներ էին անում ...հապճեպ ձգում ուսերին զինուորական վերարկուն, հրացանը ձեռը դնում ու անմիջապէս ճակատ ուարկում: Պատրաստի դեզերտէրներ էին սրանք, որ մի աւելորդ բարոյալքում ու կազմալուծում էին մտցնում զօրական շարքերի մէջ»[2]:

Դասալքությունը դժվարին ու խրթին խնդիր էր, և երբեմն դատելով փաստերից, տպավորություն է առաջանում, որ Առաջին Հանրա-

[1] Տե՛ս **Հովհաննիսյան Ռ. Գ.**, Հայաստանի Հանրապետություն. Հատոր II, էջ 10:

[2] **Քաջազնունի Յովի.,** Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլ եւս, Վիեննա, «Միխիթարեան» տպ., 1923, էջ 43:

պետությանը և նրա ղեկավարներին այդպես էլ չհաջողվեց արմատապես լուծել այդ խնդիրը, ինչքան էլ որ ՆԳ և Զինվորական նախարարությունները ջանքեր չգործադրեցին, որը կարևոր նշանակություն ուներ երկրի անվտանգության համակարգում Հայկական բանակի դիրքերի ամրակայման և պաշտպանական խնդիրներում նրա դերի բարձրացման տեսանկյունից:

ԳԼՈՒԽ 14.

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎԻ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ, 1919 Թ. ՎՐԱՑ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԵՎ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻՆ ՁԵՆՔ-ԶԻՆԱՄԹԵՐՔԻ ՀԱՅԹԱՅԹՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

պ. գ. դ., պրոֆեսոր Վ. Հ. ՎԻՐԱԲՅԱՆ

1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետություն-Ռուսաստան հարաբերությունները կրում էին անորոշ բնույթ: Իրավիճակը դիպուկ է բնորոշել Ռ. Տեր-Մինասյանը. «Գործնական կյանքի մէջ այս քաղաքականութիւնը խիստ դժվարութիւնների էր հանդիպելու: Նախ՝ որ Ռուսաստանի հետ խօսել եւ որի հետ բարեկամութիւնը ապահովել: Այդ ժամանակ կային երեք Ռուսաստան՝ Դենիկինի, Կոլչակի, Լենինի: Երեքն ալ համահաւասար ուժեղ, երեքն ալ նոյնքան հաւանականութիւններ ունէին, որ տերը պիտի դառնան ամբողջական Ռուսաստանի, բայց երեքն ալ միմեանց թշնամի: Այդպէս լինելով հանդերձ, մի բարեբախտ հանգամանք էր նկատուում, որ այդ երեք տեսակի Ռուսաստաններն էլ հակառակ չէին գոնէ Հայաստանի անկախութեան եւ քանի հեռու էին մեզնից, բարեկամական տրամադրութիւններ ցոյց կը տային: Այդ պատճառով էլ հարկ համարեցինք բանակցութիւններ վարել եւ բարեկամութիւններ ապահովել ոչ միայն ներկայի, այլ եւ ապագայի համար»[1]:

Կարելի է ասել, որ ակնհայտ իրողություն էր ՀՀ կառավարության՝ ռազմավարական առումով այդ պահից բխող մշտական ձգտումը բարեկամական հարաբերություններ ստեղծելու և ապահովելու ռազմաքաղաքական հարաբերությունների անհրաժեշտ եզրերը ռուսական բոլոր իշխանությունների հետ՝ լիներ դա բոլշևիկյան Ռուսաստան, թե՛

[1] **Ռուբեն**, Հայ հեղափոխականի մը յիշատակները, Է հատոր, Գ. հրատ,, Թեհրան, 1982, էջ 256:

«Սպիտակ կամ Սպիտակգվարդիական Ռուսաստան»: Բացի այդ՝ ՀՀ պատվիրակությունների մոսկովյան առաքելությունները, այդ թվում և Լ. Շանթի առաքելությունը իրենց նպատակին չհասան, գործնականում դրանք անարդյունավետ եղան, և հնարավոր ռազմաքաղաքական լուծումները գործնականում ձախողվեցին:

Հարկ է ասել, որ 1917-1918 թթ. տարածքային զիջումները Գերմանիային և Թուրքիային բոլշևիկյան կառավարության համար ունեին որոշակի նշանակություն և հետևանքներ՝ անորոշ բավարարում տալով կողմերին: Վ. Լենինը իր չարաղետ դերը խաղաց դրանում, սակայն իրավիճակը փոխվեց 1919-1920 թթ. սահմանագծին և դրանից հետո, երբ արդեն հաղթանակած բոլշևիզմին և աստիճանաբար երկրորդ պլան մղված Վ. Լենինին փոխարինելու եկավ Ի. Ստալինի անձը, որի առջև կարևորագույն պատմաքաղաքական խնդիր դրվեց՝ չեզոքացնել գերմանական լրտես Վ. Ի. Լենինի գլխավորությամբ իրագործված Հոկտեմբերյան ավերիչ հեղաշրջման ծանրագույն հետևանքները, որոնց արդյունքում ի չիք էին դարձել Առաջին համաշխարհային պատերազմում ռուսական հաղթարշավի պտուղները, այդ թվում Կովկասում և Առաջավոր Ասիայում, Ռուսաստանը ազգերի համաշխարհային հանրույթում վերածվել էր երկրորդական երկրի և վերականգնել ռուսական «Իմպերիան»՝ թեկուզ բոլշևիկյան զգեստավորմամբ՝ դյուրին խնդիր չէր, ինչը կարելի է ասել քիչ այլ բովանդակային առումով կրկնվեց Գորբաչովյան տխրահռչակ վերակառուցմամբ, որի արդյունքում գործնական իրողություն դարձավ արևմտյան տերությունների պատվերը՝ գերհզոր համարվող Խորհրդային Միության փլուզումը, որի փլատակների տակ հայտնվեց նաև Անդրկովկասն ու անկախացման ուղին բռնած Հայաստանի Երրորդ Հանրապետությունը, իսկ ռուսական իմպերիան ոչ միայն կազմալուծվեց ու մասնատվեց, այլև որոշակի թուլություն ապրեց, ինչը փորձում են նորոգել և նորից հավաքել Վլ. Պուտինն ու նրա զինակիցները. Իսկ Ռուսական պետության փլուզմանը միտված երրորդ փուլը ընթանում է ներկայումս, և Հայաստանի Երրորդ Հանրապետությունն էլ անմասն չէ այդ բարդ և խճողված գործընթացներից, և հանդիսանում է արդի համաշխարհային հոլովույթի մասնակիցը: Ինչևիցե, 1919-20 թթ. սահմանագծին ակնհայտ դարձավ, որ նոր բոլշևիկյան Ռուսաստան է ասպարեզ գալիս «իմպերիական»

հեռահար ծրագրերով: Արդեն 1920 թվականի աշնանը բոլշևիկյան Ռուսաստանը այլևս մտադրություններ չուներ հաշտվելու նախկինում թույլ տրված տարածքային կորուստների հետ և իր ռազմավարության առաջնահերթ խնդիրը համարելու էր նոր ռուսական՝ բոլշևիկյան զգեստավորմամբ կայսրության վերստեղծումը, որի մեջ որոշակի տեղ էր հատկացվում նաև Հայաստանին՝ նրա նկատմամբ ունենալիք վերաբերմունքին, չնայած Առաջին հանրապետության ռազմաքաղաքական առաջնորդները, ամենայն հավանականությամբ, դա չզգացին, չմբռնեցին և չգնահատեցին, իսկ արտաքին քաղաքականության ոլորտում պարզապես ձախողվեցին: Նրանք չարժևորեցին այդ խորքային գործընթացների իմաստը և այդքան մեծ կարևորություն չտվեցին բոլշևիկյան Մոսկվային իրենց ծրագրերում, քանզի բացարձակապես ակնհայտ էր պատմաքաղաքական այդ լրջագույն փուլում ՀՀ քաղաքական շրջանների արևմտյան՝ Սևրյան մտասևեռումը և ռազմաքաղաքական կողմնորոշումը:

Սակայն պարզից պարզ էր ևս մի կարևոր ռազմաքաղաքական հանգամանք: Դեռևս 1918 թվականին, երբ թուրքական զորքերը սանձազերծեցին ագրեսիա դեպի Անդրկովկաս, Ադրբեջանն անվերապահորեն թեքվեց դեպի թուրքերը, իսկ Վրաստանը որոշակի վերապահումներով հանդերձ, հակվեց դեպի ընդհանուր ճակատի ստեղծումը՝ ընդդեմ բոլշևիկյան Ռուսաստանի, և նրանք համատեղ ձգտեցին փոխշահավետ հարաբերությունների հաստատմանը Թուրքիայի հետ: Այլ էր իրավիճակը Հայաստանի պարագայում, քանզի հայ քաղաքական-ռազմական շրջաններում չկային ազդեցիկ ուժեր, որոնք ձգտեին բոլոր տեսակի հարաբերությունների գործնական սրմանը և վատթարացմանը Ռուսաստանի հետ՝ դա լիներ «Կարմիր» Ռուսաստան, թե՛ Սպիտակ Ռուսաստան», քանի որ Հայաստանը թուրքերի դիրքերի ուժեղացումը Անդրկովկասում դիտում էր ոչ միայն վտանգավոր, այլև՝ պարզապես մահացու իր գոյության համար[1]:

Միայն ազգամիջյան պատերազմները և գզվռտոցները չէին խոչընդոտում բնականոն զարգացմանը և իրավիճակի կայունացմանը

[1] Տե՛ս **Քաջազնունի Հովհ.,** Բաց նամակ Z–ին. Թուրքիա՞, թե՞ Ռուսաստան, Եր., 1990, էջ 15:

Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում: Վերջիններս 1918 թ. վերջին և ողջ 1919 թ. ընթացքում անցան Դենիկինի՝ այդ ժամանակ Ռուսաստանի գրեթե ողջ հարավը և Հյուսիսային Կովկասը գրաված Կամավորական բանակի կողմից զինված ներխուժման վտանգի դեմ միավորիչ գործողություններին: Դենիկինի զորքերը գրավեցին Կովկասի սևծովյան ափեզրը, մինչև իսկ Սոչին ներառյալ, և միայն դաշնակիցների՝ անգլիացիների միջամտությունը հարկադրեց կամավորականներին կանգնել Վրաստանի սահմանների մոտ, ինչով բրիտանացիները խոչընդոտում էին դենիկինյան ռազմավարության իրականացմանը, իսկ զենքով ու ռազմամթերքով աջակցում էին ընդդեմ Կարմիր Ռուսաստանի, դրանով իսկ հյուծում ռուսական երկիրը, քայքայում իրենց կողմից խրախուսվող քաղաքացիական և այլ կռիվներով՝ այն երկրորդական տերության վերածելու հեռահար նպատակադրումով: Իսկ Դենիկինի արշավանքի նպատակն էր վերականգնել Ռուսաստանյան կայսրության գերագույն իշխանությունը Անդրկովկասում, որի մասին Ա. Դենիկինը իր հուշերում գրել է. ***«Կովկասում պայքարի գլխավոր, կամ ավելի շատ միակ պատճառը եղել է միասնական Ռուսաստանի և նոր կովկասյան կազմավորումների լիակատար անկախության գաղափարների միջև բախումը: Ողջ մնացածը ընդամենը եղել է միայն խոշոր կամ մանր, նշանակալից կամ ոչ նշանակալից շարժառիթ»***[1]:

1918 թ. Ռուսաստանում ընթանում էին արյունահեղ քաղաքացիական կռիվներ, և իշխանության համար համառ պայքար՝ բոլշևիկների և սպիտակգվարդիականների միջև: Ստեղծված բարդ և խճճված իրավիճակում Հայաստանի Հանրապետության քաղաքական առաջնորդները հարկադրված էին հաշվի նստել թե՛ մեկի, և թե՛ մյուսի հետ՝ աշխատելով հասնել նրանց կողմից քաղաքական-դիվանագիտական ճանաչման, որոշակի հանգամանքներում ակնկալելով նաև նրանց կողմից ռազմաքաղաքական աջակցություն՝ մասնավորապես ի դեմս Սպիտակ Ռուսաստանի: 1918 թ. սեպտեմբերին գեներալ Ա. Դենիկինը փոխա-

[1] Տե՛ս **Деникин А.** Очерки российской смуты, т. IV. Берлин, 1924-1926, с. 139. **Наджафов Б.,** Лицо врага. История армянского национализма в Закавказье в конце XIX – начале XX века. ч. II, Баку, изд-во «Шарг-Гарб», 1994, с. 77:

րինեց գեներալ Մ. Ալեքսեևին՝ ստանձնելով Կամավորական բանակի ղեկավարությունը: Դառնալով Կամավորական բանակի հրամանատար, Ա. Դենիկինը ոչ միայն Դոնի և Կուբանի հացառատ երկրամասերի ողջ քաղաքացիական և ռազմաքաղաքական իշխանությունը կենտրոնացրեց իր ձեռքում, այլև իրականացրեց վերադասավորումներ հրամանատարության կազմում և փոփոխություններ մտցրեց զորքի ղեկավարման, ռազմավարական ծրագրերում: Ռուսաստանի Հարավի զինված ուժերի կենտրոնացումով Դենիկինը ձեռնամուխ եղավ վճռական քայլերի՝ միավորելով բոլոր հակախորհրդային ուժերին: Ա. Դենիկինի գլխավորած զորքերի հրամանատարությանն առընթեր ստեղծվեց մի կարևոր կառույց՝ *«Հատուկ խորհրդակցություն»*, որն ուներ քաղաքական-հետախուզիչ գործառնություններ և ի դեմս Հայաստանում ռազմաքաղաքական շրջաններում հայտնի գնդապետ Մ. Զինկևիչի և մի շարք այլ ռուս սպաների՝ Հայաստանի Հանրապետությունում ունեցավ իր ներկայացուցիչը և հենարանը, որն էլ հետագայում՝ 1920 թ. կեսերին դարձավ Հարավի զինված ուժերի՝ Կամավորական բանակի զինվորական-քաղաքական ներկայացուցիչը ՀՀ-ում, և բազմիցս աջակցեց հայկական կողմին զենքի ու զինամթերքի հայթայթման, ալյուրի և պարենի պաշարների առաքման հարցում, ինչպես նաև բացասաբար վերաբերվեց Ադրբեջանին տրամադրվող ռազմական աջակցության խնդրում:

Հայաստանի Հանրապետությունը Կամավորական բանակի կողմից դիտարկվում էր որպես բարեկամ կազմավորում, այն դեպքում, երբ Վրաստանը թշնամական կազմավորումների ցուցակում էր: Բացի այդ, Ա. Դենիկինը Վրաստանի հետ սահմանային-տարածքային հարցերում գտնվում էր պատերազմական իրավիճակում, և այդ վեճը առավել ցայտուն արտահայտվեց 1918 թ. վրաց-հայկական պատերազմի ժամանակահատվածում: Ոչ վաղ, քան 1918 թ., ինչպես փաստում է Ն. *Սամխարաձեն*, Վրաստանը բանակցություններ սկսեց Սպիտակ գեներալ Դենիկինի հետ՝ վերջինիս կողմից կազմված Կուբանի Հանրապետության և Վրաստանի սահմանները որոշելու համար: Կուբանի Հանրապետությունը պահանջում էր Սոչիի և Աբխազիայի շրջանը և նույնիսկ ռազմական գործողություններ էր ձեռնարկել Գագրան գրավելու համար, սակայն ետ վանվեց վրացական զորքերի կողմից, որոնք

հսկողություն էին սահմանել Սոչիի շրջանի վրա և կանգնեցրել էին Դենիկինին, սակայն վարվող բանակցությունները ձախողվեցին[1]: Այսպես թե այնպես Վրաստանը Ա.Դենիկինի Հարավի զինված ուժերի հետ գտնվում էր թշնամական հակադրության վիճակում:

Իրավիճակը լուրջ էր: Դենիկինի զորքերը գրավելով Հյուսիսային Կովկասը, կանգնած էին Ադրբեջանի և Վրաստանի սահմանագծին: Ըստ Մ. Բախտաձեի՝ Հայաստանի դիրքորոշումը ճիշտ չէր: Իհարկե, Դենիկինը ուղղակի չէր սպառնում Հայաստանին: Սակայն պետք չէր մեծ մարգարե լինել՝ կանխատեսելու Հայաստանի ճակատագիրը Վրաստանի և Ադրբեջանի հնարավոր զավթումից հետո[2]: Ի պատասխան Վրաստանի և Ադրբեջանի միացյալ ճակատի՝ Դենիկինը տնտեսական բլոկադա հայտարարեց այդ երկու երկրներին, ուստի իր 1919 թ. նոյեմբերի 19-ի № 171 հրամանում հայտարարագրում է. «Ես չեմ կարող թույլ տալ Վրաստանի և Ադրբեջանի ինքնակոչ կազմավորումներին, որոնք առաջացել են ի վնաս Ռուսաստանյան պետության շահերի, և հանդիսանում են բացահայտ թշնամական Ռուսաստանյան պետության բացահայտ թշնամի, ստանալ պարենամթերք բոլշևիկներից ազատագրված շրջաններից»[3]: Ֆ. Կազեմզադեն այդ առումով նշել է, որ Հայաստանի Հանրապետությունը հանդիսացել է Դենիկինի գործոն-սատելիտը Հարավային Կովկասում[4]: Իսկ արդեն Ադրբեջանի պառլամենտում ելույթ ունեցած Արտգործնախարար Մ. Յու. Ջաֆարովը ելույթում ասել էր. «Հայկական հանրապետության վերաբերմունքը ռազմական պաշտպանական կոնվենցիայի կնքման նկատմամբ քիչ այլ էր: Նրա կառավարությունը ենթադրում էր, որ մինչև այդ անկախությանը՝ ընդհանուր պաշտպանության հարցի լուծումը անհրաժեշտ է առաջին հերթին պարզել տարածքային վեճերը և հարցերը…Հայկա-

[1] Տե՛ս **Samkharadze N.,** Georgian State Border–Past and Present, Foreign policy & security programme, August, 2012, p. 6-7: Տե՛ս www.css.ge:

[2] Տե՛ս **Бахтадзе М.,** О военном договоре 1919 года между Грузией и Азербайджаном «Право и политология», 2010, № 7: Տե՛ս https://cyberleninka.ru/.../ azerbaydzhan-i-gruziya-v-period-stan: Տե՛ս www. elibrary. ar/docs/JURNAL/jin2010:

[3] **Деникин А.,** Очерки российской смуты, т. IV, Берлин, 1924-1926, с. 139:

[4] Տե՛ս **Каземзаде Ф.,** Борьба за Закавказье, с. 234-235:

կան պատգամավորների այդ վերաբերմունքը դրդեց Վրաստանին և Ադրբեջանին գնալ միմյանց հետ սեպարատ համաձայնության»[1]:

Իսկ Ադրբեջանը Ա. Դենիկինի տեսանկյունից համարվում էր կրոնաեկեղեցական միավոր[2], որի ճանաչման խնդրում բացասական դիրքորոշում էր իշխում: Ա. Դենիկինի Կամավորական բանակի հզորացման մեջ թե՛ Վրաստանը, և թե՛ Ադրբեջանը իրենց սպառնացող վտանգ էին տեսնում և դրանից ելնելով՝ քայլեր էին ձեռնարկում ընդդեմ Դենիկինի ստեղծելու ռազմաքաղաքական դաշինք, չնայած վերջիններիս հավաստիացրել են, որ իրենց գլխավոր թշնամին բոլշևիկյան Ռուսաստանն է: Իր հերթին, Հայաստանը Ռուսաստանի հարավի զինված ուժերի հետ պահպանում էր հնարավորինս բարյացակամ ռազմաքաղաքական հարաբերություններ: Ի տարբերություն Հայաստանի Հանրապետության հետ մշտապես տարածքային սահմանազատման հարցերում լարվածության մեջ գտնվող Ադրբեջանի և Վրաստանի՝ Ա. Դենիկինը ռազմական և պարենային-տնտեսական բնույթի աջակցություն էր ցուցաբերում Հայաստանի Հանրապետությանը: Ա. Դենիկինի գլխավորած հրամանատարությանն առընթեր ստեղծված «Հատուկ խորհրդակցությունը» ևս Հայաստան-Կամավորական բանակ հարաբերությունների կիզակետում էր: Բացի այդ, «Հատուկ խորհրդակցությանը» կից գործում էր ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Հովհաննես Սաղաթելյանը[3]:

Սակայն 1919 թ. հունիսի 16-ին Վրաստանի և Ադրբեջանի միջև ձևավորվեց ռազմաքաղաքական դաշինք, որի սուր նետերն անմիջականորեն ուղղված էին ընդդեմ Ա. Դենիկինի գլխավորած Կամավորական բանակի: Այն Ադրբեջանի կողմից Թիֆլիսում ստորագրվեց Զինվորական նախարար Ադմեդ բեկ Մեհմանդարովի, Արտգործնախարար Մ. Ջաֆարովի, Գլխավոր շտաբի պետ Ս. Սուլկևիչի կողմից, իսկ Վրաստանի մենշևիկյան Հանրապետության անունից այն ստորագրե-

---

[1] Տե՛ս **Гусейнзаде Р. А. Оглу**, Кавказ и армяне, Баку, Печатный дом «Апострофф», 2014, с. 380: Տե՛ս նաև АДР, Парламент–Азербайджанская Демократическая Республика. 1918-1920. Парламент: Стенографические отчёты, Баку, 1998, с. 484-485:

[2] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 275, ց. 5, գ. 12, թ. 16:

[3] Տե՛ս **Պետրոսյան Գ.,** Հայաստանի Հանրապետության և Ուկրանիայի դիվանագիտական հարաբերությունների պատմությունից. 1918-1920 թթ., Եր., 2002, էջ 67:

ցին գեներալներ Ռազմական խորհրդի անդամ Ի. Օդիշելիձեն, Զինվորական նախարարի օգնական Ա. Գեդևանովը (Գեդևանիշվիլին), ԱԳ նախարար Ե. Գեգեչկորին և Ներքին գործերի և Ռազմական նախարար Ն. Ռամիշվիլին:

Պայմանավորվող կողմերը պարտավորվում էին բոլոր զինված ուժերով և միջոցներով համատեղ հանդես գալ ընդդեմ ամեն տեսակի հարձակման, որը հիշատակված հանրապետություններից որևիցե մեկի անկախությանը կամ տարածքային անձեռնմխելիությանը սպառնում էր՝ վերապահում անելով, որ այն չի տարածվում սահմանավեճերի վրա, որոնք կարող էին ծագել անդրկովկասյան հանրապետությունների դեռևս չավարտված տարածքային սահմանազատման հետևանքով[1]: Այդ մասին *«Кавказское слово»*-ն արձագանքում է՝ հետևություն անելով, որ այն ուղղված չէր Հայաստանի դեմ, կարծելով՝ սահմանային բախումները, որ կարող են ծագել անդրկովկասյան հանրապետությունների դեռևս չավարտված տարածքային սահմանազատման հողի վրա, թույլ չեն տալիս Հայաստանին կասկածել ոչ բարյացակամության մեջ, և ի վերջո հայկական քաղաքական առաջնորդները, հասկանալով այդ մեկուսացվածության վնասակարությունը, լեռնականների հետ միասին կհարեն վրաց-ադրբեջանական դաշինքին[2]: Հայաստանն, անշուշտ, աննպատակահարմար գտնելով վրաց-ադրբեջանական դաշնագրին հարելը, այդ վիճակից լավագույն ելքը համարեց չեզոքությունը, որպեսզի աղետներից բզկտված հայոց երկիրը զերծ պահվի նոր արյունոտ բախումներից: Ինչպես հայտարարել էր Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատար Լ. Եվանգուլյանը 1919 թ. հուլիսի 5-ի Վրաստանի Արտգործնախարարին ուղղված իր պաշտոնագրում, «Վրաստանի հանրապետության և Կամավորական բանակի միջև նոր բախումների պայմաններում պահպանել ակտիվ չեզոքություն, որ Վրաստանի և Հայաստանի, այնպես էլ անդրովկասյան բոլոր քաղաքական կենցաղավարության և այլ անդրկովկասյան բոլոր պե-

[1] Տե՛ս **Бахтадзе М.,** О военном договоре 1919 года между Грузией и Азербайджаном «Право и политология», 2010, № 7, Տե՛ս https://cyberleninka.ru/.../azerbaydzhan-i-gruziya-v-period-stan. **ՀԱԱ**, ֆ. 275, ց. 5, գ. 112, թ. 24:

[2] Տե՛ս **«Кавказское слово»,** Тифлис, 21 июня, 1919 г., N 12,: **ՀԱԱ**, ֆ. 275, ց. 5, գ. 158, թ. 152-152 հակ.:

տությունների տարածքային շահերին վերաբերող հարցերը չլուծվեն զենքի ուժով, այլ համաեվրոպական վեհաժողովի»[1]:

Այս առումով բնութագրիչ է եղել 1919 թ. ապրիլ-մայիսին Թիֆլիսում ընթացած կոնֆերանսում Ն. Ռամիշվիլու ելութը, որում բացահայտվել են վրացական կողմի նպատակադրումները և ռազմաքաղաքական շարժառիթները. «Դենիկինը կհարձակվի, քանզի դեռ չի հասել Վրաստանի հետ համաձայնության: Ես պետք է հայտարարեմ, որ մենք մեր կողմից, որ պաշտպանության համար անհրաժեշտ նախապատրաստությունները արդեն կատարված են, քանի որ պարզ է, որ խոսքը գնում է ոչ միայն սահմանավեճերի մասին: Սոչիի ուղղությամբ գործողություններին զուգընթաց, Դենիկինը հարձակվել է լեռնականների վրա: Պարզ է՝ քանի որ Փարիզի կոնֆերանսում քնարկվում է *Ռուսական հարցը*, Դենիկինը ջանքեր է գործադրում Կովկասի և Անդրկովկասի զավթումով Փարիզի կոնֆերանսը կանգնեցնել կատարված փաստի առաջ:...Իմ կառավարությունը կարծում է, որ մենք պետք է ձգտենք պաշտպանել անկախությունը, այլապես մեր հետ կլինի նույնը, ինչ և Գորսկի /Լեռնականների/ հանրապետության հետ:... Մենք ենթադրում ենք, որ ստեղծված իրավիճակի պայմաններում պետք է զենքը ձեռքներիս պաշտպանենք մեր անկախությունը և հետևաբար, հավանություն տալով դեպի հյուսիսային սահմանները զորքերի առաջխաղացման իմաստով Ադրբեջանական կառավարության գործողություններին, հետագայում ևս մտադիր ենք բոլոր ուժերով աջակցել Ադրբեջանական կառավարությանը իր գործողություններում ընդդեմ Կամավորական բանակի: Մենք հույս ունենք, որ և Ադրբեջանը մեզ կաջակցի»[2]:

Տեղեկատու բյուրոյի պետ՝ Մելիք-Քարամյանը 1919 թ. հունիսի 29-ին ներկայացնում է այն տրամադրությունները, որ իշխում էին Թիֆլիսում. «Սույն հունիսի 22-ի նիստում Վրաստանի Սահմանադիր ժողովը վավերացրեց Վրաստանի և Ադրբեջանի միջև կնքված զինվորական

[1] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 275, ց. 5, գ. 158, թ. 152-152 հակ.:

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 299:

[2] Տե՛ս **Бахтадзе М.,** О военном договоре 1919 года между Грузией и Азербайджаном: «Право и политология», 2010, № 7: Տե՛ս https://cyberleninka.ru/.../azerbaydzhan-i-gruziya-v-period-stan.

դաշնակցությունը: Վրացական մամուլը իր կառավարության այդ քայլը համարում է խոշոր պատմական մի ակտ, որը ամուր հիմքերի վրա է դնում Վրաստանի գոյությունը և անկախությունը: Այդ առթիվ մենշևիկների օրգան *«Էրթօբա»*-ն, բացատրելով այդ դաշնակցության իմաստը, իմիջիայլոց ասում է. «Այն ոչ ոքի դեմ չէ ուղղված, ոչ ոքի համար երկյուղ չի ներկայացնում և ոչ ոքի քունը չի կարող խանգարել»: Հետո, խոսելով Հայաստանի մասին, ասում է. «Նա /Հայաստանը- Վ.Վ./ միշտ խույս էր տալիս և այսօր էլ խույս է տալիս իր հարևանների հետ որևէ համաձայնության գալուց, բայց վրաստանի և Ադրբեջանի միջև կնքված դաշնագրության մտքերից մեկն էլ այն է, որ դաշնակցական կուսակցության զզվելի հատկությունները միշտ էլ հաջողություն չեն գտնում, և Հայաստանի կառավարությունը ստիպված լինի կանգնելու պաշտպանողական քաղաքականության գծի վրա»: Այսպես ոչ ոքի դեմ չուղղված դաշնագրությունը ուղղված է միայն Հայաստանի դեմ և պետք է ստիպի նրա կառավարությանը հարելու այդ դաշնագրության»[1]:

Եվ դեռ ավելին: Այդ նույն գրության մեջ բերվում է վրաց ազգայնական մամուլի վերաբերմունքը. «Ազգայնական մամուլը ավելի պարզ է արտահայտվում զինակցության իսկական դրդապատճառների մասին. նա Վրաստանի բախտը կապում է նրա «բարեկամ մահմեդականների և համիսլամական շարժման հետ: Ահա թե ինչպես է պարզում դաշնագրության իսկական իմաստը ազգային դեմոկրատների *«Կլդէ»*-ն. «Մենք հաշվի ենք առնում այն կատաղի որոտը, որ լսվում է այսօր հեռավոր Ասիայից: Հնդկաստանը, Աֆղանստանը, Եգիպտոսն ու Պարսկաստանը կազդուրվում են, ամրապնդվում, կազմակերպվում և օգնություն խոստանում անարգված և Փարիզի կոնֆերանսի ձեռքով հաշմանդամ դարձած Թուրքիային», և քանի որ «Ասիան և մահմեդականները երկար դարերի ընթացքում պահպանել են Վրաստանի գոյությունը», ուստի և «Ռուսաստանի ստրկական լծից ազատված վրացիները հիշեցին իրենց բարեկամ մահմեդականներին, որոնք սպասում էին նրանց ձեռքը մեկնած»: Այսպես վրաց ազգայնական շրջանները Ադր-

[1] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 275, ց. 5, գ. 93, թ. 214:

բեջանի միջոցով համաիսլամական կողմնորոշում են հաստատում Վրաստանի համար:

Իհարկե, *«Գրուզիա»* և *«Սաքարթվելո»* թերթերում կառավարության ներքին թշնամիներին սանձելու հաճախակի կոչերը /այսինքն հայերին -Վ.Վ./ սովորական երևույթներ են»[1]:

Իսկ այդ իրավիճակում Վրաստանը և Ադրբեջանը բոլոր ջանքերը գործադրեցին, որպեսզի Հայաստանի Հանրապետությանը ևս ներքաշեն այդ գործընթացների դեմ, որն էլ ամենևին չէր բխում Հայաստանի ռազմաքաղաքական շահերից: Հայկական կողմն ընդդեմ Ռուսաստանի չէր կարող հանդես գալ, թեկուզև դա Սպիտակ Ռուսաստանն էր[2]: Այն քաղաքական առումով ոչ մի կերպ դրական չէր ընկալվում հայկական քաղաքական-կուսակցական շրջաններում: Պետք է նկատի առնել նաև այն կարևոր հանգամանքը, որ Ռուսաստանի հարավում ծվարել էին Եղեռնից մազապուրծ հազարավոր հայ գաղթականներ, որոնց աջակցության հարցին առանց Կամավորական բանակի հնարավոր չէր ընթացք տալ: Գտնվելով որոշակի բարյացակամ ռազմաքաղաքական հարաբերությունների մեջ Ռուսաստանի Հարավի զինված ուժերի և նրա ղեկավարության հետ՝ ՀՀ կառավարությունը ակնկալում էր լուծել մի շարք կարևոր խնդիրներ՝ ապահովել Դոնից և Կուբանից Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող հացահատիկային պաշարների, զենք ու զինամթերքի և այլ ապրանքների ներկրումը Հայաստան: Հետևաբար, ստեղծված իրավիճակում Հայաստանի Հանրապետությունը պարզապես չէր կարող հրաժարվել իր համար շահավետ քաղաքական, տնտեսական և ռազմական հարաբերություններից Ա. Դենիկինի Կամավորական բանակի հետ և կուրորեն միանալ վրաց-ադրբեջանական ռազմական դաշինքին, որը կհանգեցներ Կովկասյան տարածաշրջանում և նրա շուրջ Հայաստանի Հանրապետության աշխարհաքաղաքական անցանկալի և վտանգալից մեկուսացմանը և կունենար բացահայտ անկանխատեսելի, բացասական ռազ-

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Տե՛ս մանրամասն **Վիրաբյան Վ.,** Հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները 1918-1921 թթ., Եր., ԵՊՀ հրատ., 2016, էջ 557-571: **Կնյազյան Դ.,** Ադրբեջանական դեմոկրատական Հանրապետության կովկասյան քաղաքականությունը 1918-1920 թթ., Եր., Հեղ. Հրատ., 2008, էջ 109-110:

մաքաղաքական հետևանքներ, *առավել ևս որ բոլշևիկյան Ռուսաստանն էլ դեռ բավականաչափ հզոր չէր՝ ազդելու կովկասյան, և հատկապես հայաստանյան ռազմաքաղաքական իրողությունների վրա, քանզի դեռ իրապես հեռու էր և ինչ-որ տեղ դեռ թույլ՝ վճռապես ազդելու Կովկասում ընթացող իրադարձությունների վրա, որը պարզ դարձավ միայն 1920 թ. կեսերին և դրանից հետո, թե չէ ամենևին էլ չէր հրաժարվի դրանք իրագործելուց, ինչպես որ նա մշտապես փորձել է և ձգտել*: ***Ավելին, ՀՀ կառավարչապետ Հ. Օհանջանյանը այս կապակցությամբ այդ օրերին Թիֆլիսում աներկբա հայտարարություն արեց առ այն, որ եթե հարկ լինի ընտրություն կատարելու թուրքերի և Դենիկինի միջև, ապա, իհարկե կնախընտրեն վերջինիս***[1]:

Հարկ է սակայն ասել, որ Դենիկինի հետ դաշինքի կողմնակիցների և դեմ արտահայտվողների շարքում Անդրկովկասում այդուհանդերձ կարծիքների արտահայտման նրբերանգների տեսանկյունից տարակարծություններ կային: Այսպես, Թիֆլիսի *«Աշխատավոր»*-ը, ներկայացնելով *«Էրթոբա»*-ին, տալիս է վերջինիս տեսակետը ադրբեջանա-վրաց-հայկական պաշտպանական պայմանագրի կնքման հնարավոր շահավետ կողմերի մասին՝ գտնելով, որ առաջին հերթին անդրկովկասյան հանրապետությունների ողջ կուլտուրական-տնտեսական զարգացման երաշխիքը իրենց անկախության մեջ է, բացասաբար արտահայտվում Հայաստանի առանձնացման մասին՝ այն համարելով դավաճանություն անդրկովկասյան ընդհանուր տան շահերին, խորհուրդ տալով կառավարություններին ընդհանուր լեզու գտնել հարևան պետությունների հետ և համատեղ ուժերով հակազդել Դենիկինին: Ըստ վերոհիշյալ թերթի՝այդ ռազմական դաշինքը հանրապետությունների միջև համերաշխություն կստեղծի և կնպաստի երկրամասի տնտեսական ծաղկմանը[2], իսկ *«Грузия»* թերթի կարծիքով, հայերը երկար չեն մնա մի կողմի վրա՝ հասկանալով մեկուսացվածության կործանարարությունը, և անպայման կմտնեն կովկասյան ընտանիքի

[1] Տե՛ս **Ղուլյան Ց.,** Ռուսաստանի իշխանությունների դիրքորոշումը Հայաստանի Հանրապետության անկախության վերաբերյալ 1918-1920 թթ., **«Բանբեր Հայաստանի արխիվների»,** 2017, № 125, էջ 304:

[2] Տե՛ս «**Աշխատավոր»,** Թիֆլիս, 11 հունիսի, 1919 թ, N 11, **ՀԱԱ**, ֆ. 275, ց. 5, գ. 158, թ. 101:

մեջ[1], ավելին, ըստ Բաքվի *«Знамя труда»* թերթի, այդպիսի առանձնացումը և տարածքային սահմանազատման հարցի բարձրացումը սպառնացող վտանգի պայմաններում հայ ժողովրդի համար աղետալի ընթացք էր և ոչ տեղին[2]:

1919 թ. սեպտեմբերի 26-ին Թիֆլիսի ՀՀ ներկայացուցիչը ԱԳ նախարարին հայտնում էր, թե մի գեներալից տեղեկացել է, որ Ադրբեջանի Զինվորական նախարարի օգնական և զորքերի հրամանատար գեներալ Մեհմանդարովը Վրաստանի և Ադրբեջանի միջև կնքված պայմանագրի առիթով եկել է Թիֆլիս, և ասել, որ դժգոհ է Հայաստանի կառավարությունից, որն իր ճյուղավորումն ունի Ղարաբաղում, և աշխատում է այնտեղի ազգաբնակչությանը ապստամբեցնել Ադրբեջանի իշխանությունների դեմ, և եթե Հայաստանի կառավարությունը չդադարեցնի իր վնասակար գործունեությունը Ղարաբաղում, ինքն այնտեղ զորքեր կուղարկի[3]:

Դատելով իրադարձությունների զարգացման խորքային գործընթացներից՝ Խորհրդային Ռուսաստանն, անկախ իր վիճակից, ամենևին էլ չէր պատրաստվում մեկընդմիշտ Անդրկովկասը թողնել թե՛ թուրք-գերմանական, և թե՛ բրիտանա-ֆրանսիական տիրապետության ներքո: Դա ակնհայտորեն պարզորոշվեց 1920 թ. կեսերից հետո, երբ բոլշևիկյան Ռուսաստանը գահավիժելով Կովկասյան լեռներից, *իջավ Անդրկովկաս և ուղղակի սպասեց հարմար առիթի՝ այն կրկին վերանվաճելու, այդ թվում և վճռելու Հայաստանի նոր հեռանկարի հարցը, թեկուզև խորհրդային կարգերի հաստատման՝ այդ ժամանակվա արդեն աստիճանաբար իրողություն դարձող տարբերակով*: Իսկ դաշնակիցները 1920 թ. գարնանից սկսած, իրենց ծրագրերի մեջ անհետևողական էին և վճռական չէին նրանց մոտեցումները ինչպես բոլշևիկյան Ռուսաստանի, այնպես էլ մասնավորապես Ռուսաստանի հարավի իշխանությունների, ռազմաքաղաքական տարբեր կազմավորումների, և այդ թվում նախկինում ցարական Ռուսաստանի կազմի մեջ գտնվող

[1] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 275, ց. 5, գ. 237, թ. 39:
[2] Տե՛ս **«Знамя труда»,** Баку, 17 июня, 1919 г., N 118, **ՀԱԱ**, ֆ. 275, ց. 5, գ. 158, թ. 152:
[3] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 275, ց. 5, գ. 196, թ. 1:

և այժմ անկախ հանրապետությունների, ինչպես նաև Թուրքիայի մասնատման նկատմամբ վերաբերմունքի հարցում:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն այն դիրքորոշման էր, որ Ա. Դենիկինի գլխավորած Կամավորական բանակը Հայաստանի նկատմամբ առանձնահատուկ, եթե ոչ ընդգծված բարեկամական վերաբերմունք ունի: Այս հանգամանքը պայմանավորված էր նրանով, որ Դենիկինը ոչ միայն բազմիցս համակրալից արտահայտություններ էր թույլ տվել հայ ժողովրդի հասցեին, այլև նպաստել հայ սպաների, զենքի ու զինամթերքի տեղափոխմանը Հայաստանը, որոնց կարիքը շատ էր զգացվում: ՀՀ–Կամավորական բանակ ռազմաքաղաքական հարաբերությունները մասնավորապես 1918 թ. ընթացքում և վրաց-հայկական պատերազմի օրերին որոշ չափով նպաստեցին ՀՀ կայունացմանը: Այդպիսի վերաբերմունքը ցայտուն երևում է գեներալ Ա. Դենիկինի մի ուշագրավ հրամանի բովանդակությունից. «Նկատի ունենալով ադրբեջանական իշխանությունների թշնամական վերաբերմունքը դեպի ռուս բանակը և նկատի ունենալով ադրբեջանական զորքերի դավադիր հարձակումը Հայաստանի հողերի վրա, հրամայում եմ ադրբեջանական զորքերի մեջ գտնվող ռուսական ծառայության բոլոր սպաներին հեռանալ նրանց շարքերից»[1]:

1919 թ. մարտի 10-ին (N 60) գեներալ Հ. Քիշմիշյանը Զինվորական նախարարին ներկայացրած գաղտնի զեկուցագրում հայտնում էր, որ ինքը Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հանձնակատար Լ. Եվանգուլյանի և Ումիկյանի հետ միասին մեկնել է Բաթումի՝ «Կազակ» նավով բերված փամփուշտները, արկերը, հրետանային արկերը, ինչպես նաև բերված ֆրանսիական աերոպլանները ընդունելու և դրանք Հայաստան տեղափոխելու համար: Ասվում էր, որ ժամանելով Բաթումի՝ իրենք ականջալուր են լինում անգլիական հրամանատարության հայտարարագրին, թե իբր իրենք իրավունք չունեն ինքնուրույնաբար թույլ տալու արտահանել փամփուշտները և արկերը. չցանկանալով այդ գործի խոչընդոտողի դերում լինել՝ թույլտվություն ստանալու հարցումով դիմել են Կ. Պոլիս՝ գեներալ Ջ. Միլնին: Թիֆլիսում ՀՀ ռազմական կցորդ գեներալ Հ. Քիշմիշյանը տեղեկացնում էր, որ անգլիական հրա-

[1] **Վրացյան Ս.,** Հայաստանի Հանրապետություն, էջ 381:

մանատարության նման վերաբերմունքի պայմաններում ինքն ու Եվանգուլյանը փոխհամաձայնեցված վճիռ են կայացրել այդ բեռը ուղարկել Փոթի, սակայն, կապված այն բանի հետ, որ շոգենավի անձնակազմը տրամադրված էր բոլշևիկաբար և սպառնացել բեռը ծովը նետել, իրենց կողմից վարձվել է երեք հոգանոց հատուկ պահակազոր, որը երկու կազակների հետ պետք է պահպաներ և հսկեր բեռը մինչև Փոթի հասնելը՝ որպես ուղեկցող ունենալով Կամավորական բանակի մի սպայի և պոդպորուչիկ Ումիկյանին, որը պետք է զբաղվեր բեռը Հայաստան ուղարկելու գործով: Անդրադառնալով աերոպլանների [օդանավ- Վ.Վ.] հարցին՝ գեներալ Քիշմիշյանը հայտնում էր, որ անգլիական հրամանատարությունը դարձյալ խոչընդոտներ է հարուցել դրանք Հայաստան տեղափոխելու ճանապարհին՝ կրկին պնդելով, թե պետք է դիմեն գեներալ Միլնին: Ասվում էր, որ հարցը հանգուցալուծելու նպատակով Եվանգուլյանի և Ումիկյանի հետ միասին տարվող բանակցությունները ոչ մի արդյունքի չեն հանգեցնում, որից ելնելով՝ նրանք խնդրանքով դիմում են ՀՀ զինվորական նախարարի աջակցությանը[1]:

1920 թ. մարտի 24-ին (N 71) գեներալ Քիշմիշյանը ՀՀ Գլխավոր շտաբի պետին հայտնում էր, որ փամփուշտներով բեռը և արկերը Բաթումիի անգլիական հրամանատարության կարգադրագրով նույնիսկ չի թույլատրվել բեռնաթափել նավահանգստում, իսկ «Կազակ» շոգենավը ուղարկվել է ռեյդի Փոթի, որտեղից էլ բեռները պետք է բարձվեին վագոններում՝ Հայաստան ուղարկելու համար[2]: Արդեն 1920 թ. մարտի 29-ին (N 71) գեներալ Քիշմիշյանը Վրաստանի Ռազմական նախարարի օգնականին ուղղված պաշտոնագրում հայտնում է, որ համաձայն Ռազմական մինիստր Լորդկիպանիձեի և Եվանգուլյանի միջև տարած բանավոր բանակցությունների՝ ինքը պատիվ ունի խնդրելու չմերժել գրավոր կարգադրությունը, որպեսզի Վրաստանի կառավարության կողմից խոչընդոտներ չհարուցվեն Վրաստանով տարանցման դեպքում[3]:

---

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 275, ց. 5, գ. 209, թ. 60-60 հակ.:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 68:

[3] Տե՛ս նույն տեղում, թ. 82:

1920 թ. ապրիլի 3-ին (N 100) Զինվորական նախարարին ներկայացված զեկույցում գեներալ Քիշմիշյանը հայտնում էր, որ Կամավորական բանակից տեղ չեն հասել միանգամայն սարքին և նոր անգլիական արտադրության 1916 թ. «Սոպվիչ Տրիպլան»[1] 4 կործանիչ աերոպլանները, որոնք ներկալվել են Վրաստանի իշխանությունների կողմից և գտնվում են նրանց անգարներում[2]:

1920 թ. ապրիլի 5-ին (N 110) Զինվորական նախարարին ներկայացված զեկույցում գեներալ Քիշմիշյանը հայտնում էր Կամավորական բանակից ուղարկված «Կազակ» շոգենավով բերված 1.200000 փամփուշտի և հրետանային ունեցվածքի ստացման մասին, որը մարտի 5-ին Բաթումի էր հասել և խոչընդոտների հանդիպել անգլիացիների կողմից, որը հարթելու համար Քիշմիշյանը և Ումիկյանը մեկնում են Բաթումի՝ միջոցներ գտնելու դրանք Փոթի հասցնելու համար, ընդ որում ունենալով գեներալ Գեդևանովի հավաստիացումը, որ իր կողմից արված են անհրաժեշտ կարգադրությունները: Մինչ այդ Կամավորական բանակի ներկայացուցիչ գեներալ Պորոխոնսկին ընդառաջ է գնում՝ թույլատրելով Կազակ» շոգենավին ուղևորվել Փոթի՝ պայմանով, որ նավը կապահովվի ածխով, սակայն անգլիացիները չեն թույլատրում կանգառել նավահանգստում և նավարկման են ուղարկում: Սակայն դա էլ չի օգնում, քանզի չի հաջողվում անգլիացիներին համոզել, որոնք այս անգամ էլ պնդում են, որ առանց Վրաստանի կառավարության գրավոր համաձայնագրի չեն կարող բեռները բաց թողնել, որը լուծելու համար Ումիկյանը առանց տրտնջալու ուղևորվում է Թիֆլիս և թույլտվություն ստանալու համար տեսակցում Գեդևանովի հետ: Նավը Փոթի է հասնում մարտի 21-ին: Գործի ընթացքին խառնվում է և նոր թյուրիմացության նպաստում Ժողովրդական գվարդիան, որը հայտարարում է, որ առանց Ն. Ժորդանիայի և Վ. Ջուղելու թույլտվության բեռը բաց չի թողնվի Փոթիից: Ստեղծված իրավիճակում Ումիկյանը մեկնում է Թիֆլիս, և խորհրդական Թումանյանի հետ միասին բարեխոսման նպատակով գնում է տեսակցելու վրաց ԱԳ մինիստրի օգնա-

[1] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, Ամենահայտնի ռազմական ինքնաթիռները, Եր., «Անտարես», 2005, էջ 14:

[2] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 275, ց. 5, գ. 209, թ. 108:, էջ 2

կան Կարպիվածեի հետ, որը հայտնում է, որ չի կարելի տրանզիտով տեղափոխել ռազմական բեռներ, որ իրենք վետո են դրել նաև Ադրբեջանի բեռների վրա: Ումիկյանը վիճարկում է այդ հարցապնդումը՝ ասելով, թե Վրաստանը այդպես է վարվել Ադրբեջանի տրանզիտային բեռների առումով Յալամի կայարանում տեղի ունեցած ինչ-ինչ դեպքերի կապակցությամբ: Վրացական կողմը հայտնում է, որ իրենք Եվանգուլյանի կողմից Լորդկիպանիձեի հետ վարած բանակցության արդյունքում եկել են համաձայնության: Այդ ժամանակ Կարպիվածեն հայտարարում է, որ եթե հայկական կողմը Վրաստանին զիջի թեկուզև 50 հազար փամփուշտ, ապա այդ ժամանակ իրենք հնարավոր կգտնեն Ադրբեջանին ասել, որ բեռան մասը բռնագրավել են, որին հայկական կողմը կատեգորիկ մերժումով է պատասխանում: Սակայն երկու օր անց Կարպիվածեն տեղեկացնում է, որ բոլոր խոչընդոտները հաղթահարված են, և Ումիկյանը ընդունելության է արժանանում Վրաստանի կառավարության նախագահի կողմից, նրան հայտնելով հարուցվող խոչընդոտների մասին: Ժորդանիան մարտի 26-ին տալիս է իր համաձայնությունը և նրան հանձնում նամակ՝ Մինիստրների խորհրդի քարտուղար Ցիցաձեի ստորագրությամբ, որից հետո Ումիկյանը մեկնում է Փոթի: Սակայն իրադարձությունները կրկին անակընկալ ընթացք են ստանում, քանզի Ումիկյանը դեռ Փոթի չէր հասել, երբ մարտի 29-ին ստացվում է Ժորդանիայի հեռագիրը (N 1198)՝ բեռը անմիջապես Թիֆլիսի զինանոց տանել հրամանով: Հայկական պահակազորը հեռացվում է, Ումիկյանից խլում են 14 կողպեքների բանալիները: Ամեն ինչ նորից է սկսվում, Ումիկյանը տեսակցում է Կարպիվածեի հետ և ստանում նրա հավաստիացումը, թե այլևս խոչընդոտներ չկան և բեռը հայկական կողմը կարող է ստանալ Թիֆլիսից: Մարտի 29-ին գեներալ Հ. Քիշմիշյանը տեսակցում է Գեդևանովի հետ և կրկին բանակցում, որից հետո մարտի 31-ին գեներալ Գեդևանովը կարգադրություն է անում 10 հոգանոց զինված պահակազորին և մի սպայի՝ ուղեկցելու բեռը մինչև Սանահին, որը Հայաստան է հասնում ապրիլի 8-ին՝ չնայած Վրաստանի կողմից հարուցված անթիվ-անհաշիվ խոչընդոտներին[1]:

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 275, ց. 5, գ. 209, թ. 114-116:

1920 թ. հուլիսի 1-ին (N 3) գնդապետ Ռ. Մարտիրոսյանը ՀՀ Զինվորական նախարարության լիազորների անունից տեղեկացնում էր Զինվորական նախարարին, որ մայիսի 17-ին, հրամանի համաձայն, մեկնել են Ղրիմ՝ Սևաստոպոլ, որտեղ գտնվում էր ռուսական բանակի ներկայացուցչությունը, ինչպես նաև ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունը՝ փորձելով գնդապետ Տուրբինի հետ պարզել հրետանային վարչության հետ իրենց ունեցած հետաքրքրությունները, որի ժամանակ ռուսական կողմը խոստանում է աջակցել այն ամենում, ինչ հնարավոր կգտնվի: Չնայած Ղրիմում գտնվող ռուսական բանակի դժվարություններին՝ այդուհանդերձ գնդապետ Տուրբինը խոստանում է աջակցել՝ հայկական կարիքների համար բաց թողնել մեկ միլիոն փամփուշտ, ավելացնելով, որ մի քանի օր անց ինքը հնարավորություն կունենա տրամադրել ևս 2 միլիոն փամփուշտ[1]: Տեղեկացվում էր, որ հուլիսի 4-ին Սևաստոպոլ է հասել պորուչիկ Ումիկյանը, որը, ՀՀ վերոհիշյալ լիազորներից անկախ, Սաղաթելյանի հետ միասին նոր պահանջներով ներկայանում է գլխավոր հրամանատարի օգնական գեներալ Շատիլովին: Միմիայն հուլիսի 4-ին Ումիկյանը սեպարատ գործունեության հետևանքով լիազորների կողմից ենթարկվում է հարձակման, վերջիններիս համար հարկադրաբար բացահայտում է իր խաղաքարտերը, և հայտնում, որ ՀՀ կառավարության ներկայացուցիչները, հանձինս գեներալ Քիշմիշյանի և ուրիշների, վրաց զինվորական նախարարության հետ Ղրիմից եկած ռազմամթերքը կիսելու համաձայնության են եկել, և մինչ այդ որոշում են խոստացված 3 միլիոն փամփուշտը «Ֆենիքս» նավով տանել՝ սպասելով Փոթիից քարածխով բեռնված այդ նավին, ինչպես որ պայմանավորվածություն է եղել Բաթումիում Երվանդ Տեր-Մինասյանի հետ: Հայկական երկու ռազմական ներկայացուցչիչների իրարից զատ գործելը խնդրահարույց էր, սակայն երկու կողմն էլ շահագրգիռ էին տվյալ խնդրում և ցանկանում էին շուտափույթ այն լուծել՝ օգտվելով Վրաստանի ընձեռած տրանզիտից և ուղղակի հաղորդակցվել Հայաստանի հետ: Սակայն տեղեկացվում է, որ բանը դրանով չի ավարտվում, քանզի, ըստ գնդապետ Մարտիրոսյանի, իրենք Ղրիմում հանդիպում են ՀՀ Զինվորական նախարարու-

[1] Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց. 5, գ. 154, թ. 204, 207:

թյան ևս մեկ ներկայացուցչական խմբի՝ հանձինս կապիտան Անիևի և Մ. Մակարյանի, որոնք լիազորված էին Զինվորական նախարարի կողմից՝ Թիֆլիսում ՀՀ ներկայացուցչից չսպասելով արդեն Ղրիմում գտնվողների մասին տեղեկացմանը: Այնուամենայնիվ, բավարարվածություն էր արտահայտվում, որ Վրաստանի կառավարության հետ իրենց թիֆլիսյան ներկայացուցչության կողմից ձեռքբերված համաձայնության շնորհիվ հնարավոր եղավ գլուխ բերել 3 միլիոն փամփուշտի հարցը՝ այն հավասարաչափ բաժանելով Վրաստանի և Հայաստանի միջև, և ավելին՝ հաջողվեց որոշակի պայմաններով ստանալ ևս 1 փութ սնդիկ և 50 փութ ալյումին, վստահեցնելով, որ առաջիկայում հնարավոր կլինի ստանալ ևս մեկ միլիոն փամփուշտ, 5 միլիոն ցրված փամփուշտ, եթե այնուհետ դեպքերի ընթացքը բարեհաջող դասավորվեր հայկական ներկայացուցիչների համար: Ընդգծվում էր, որ այդ փամփուշտների ստանալու պարտականությունը դրվել է Ումիկյանի վրա, որը մնում էր Ղրիմում, որպեսզի ավարտի կիսատ գործերը: Բացի այդ, Տուրբինից խոստում են ստանում, որ մոտ ապագայում իրենց կուղարկվի նաև հազար գնդացիր, թնդանոթային ռումբեր, շրապնել և առհասարակ անհրաժեշտ այլ ռազմամթերքներ[1]: Հետաքրքիր է այս կարևոր գործի առնչությամբ հետագա ընթացքը: 1920 թ. հուլիսի 24-ին (N 1292) գործուղման է մեկնում ՀՀ Զինվորական նախարարի օգնականը՝ Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատարը՝ ստանալով գեներալ Հովի. Հախվերդյանի բանաձևումը, նշելով, որ գեներալ Քիշմիշյանի հաղորդմամբ պորուչիկ Ումիկյանը, ռազմական նախարարի հրամանի համաձայն, գործուղվել է Հարավային Ռուսաստան՝ ձեռք բերելու մեծ քանակությամբ փամփուշտ: Բաղդասարովը խնդիր էր դնում պարզելու, թե ինչ ընթացք է ստացել կապիտան Անիևի և Մանաս Մակարյանի գործուղումը, քանի որ անձամբ իրեն այդ մասին հայտնի չի եղել: Բաղդասարյանը հայտնում էր, թե ինքը միայն իմացել է, որ նրանք Թեոդոսիա են մեկնել, որպեսզի փրկեն և ետ բերեն արդեն գնված և Շկուրոյի կողմից տարված 500 հազար փամփուշտը: Արձանագրվում էր այն ասին, որ եթե այդ մասին գեներալ Քիշմիշյանին հայտնի է եղել մինչև Անիևին և Մակարյանին լրա-

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 204:

ցուցիչ հանձնարարություն տալը, ապա, իհարկե, նա պետք է պորուչիկ Ումիկյանին ցուցում տար ժամանել Ղրիմ, առաջին հերթին գտնել Անիևին և Մակարյանին ու գործել նրանց հետ լրիվ համագործակցության մեջ: Հարց էր դրվում, որ եթե գեներալ Քիշմիշյանին հայտնի է եղել Անիևին և Մակարյանին տրված նոր հանձնարարության մասին, ապա տեղ գտած թյուրիմացությունը նրա և Ումիկյանի բացթողումն էր: Սույնը և Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար Բ. Բաղդասարյանի կողմից Զինվորական նախարարի անունից պատճենները հուլիսի 24-ին հասցեագրվում են Գլխավոր հրետանային վարչությանը, խնդրանքով, որ իրեն իրազեկեն՝ ռազմական նախարարին զեկուցելու համար, որը և կատարվում է[1]: Սակայն խնդիրն այսքանով չի ավարտվում: Զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանը սույն գործի կապակցությամբ 1920 թ. հուլիսի 27-ին (Вх 1321) մակագրում է, որ ստուգվի՝ 1) ինչի՞ հիման վրա են իբր արդեն ուղարկված եղել Անիևն ու Մակարյանը, և նրանց զուգահեռ նոր հրահանգներով և նոր պայմաններով ուղարկվել Ումիկյանը, 2) ինչու՞ է գործի մեջ հակասություն և երկիշխանություն ստեղծվել, 3) ապա պահանջվում է այդ մասին հայտնել գեներալ Քիշմիշյանին[2]:

1919 թ. օգոստոսի 11-ին (N 8) Թիֆլիսում ՀՀ ներկայացուցչությանն առընթեր Զինվորական նախարարության ներկայացուցիչ, ռազմական կցորդ գեներալ Հ. Քիշմիշյանը Զինվորական նախարարին ուղարկված զեկուցագրում նշում է, որ հայկական զորքերը եռագիծ փամփուշտների սուր կարիք են զգում, ինքը և միսիայի խորհրդական Թումանյանը անհրաժեշտ խնդրանքով դիմել են անգլիական բարձրագույն հրամանատարությանը: Տեղեկացվում էր, որ ի պատասխան իրենց խնդրագրին, անգլիացիներից պատասխան են ստացել, թե իրենց տրամադրության տակ չունեն այդպիսի փամփուշտներ: Այդ ժամանակ, ինչպես հայտնում է Քիշմիշյանը, իրենք հարցում են արել, թե գուցե դրանցից Բաթումիում կան, որի շտաբի պետ գեներալ Կորին պատասխանել էր, թե տեղեկանքի համար պետք է դիմեն գնդապետ Բելյուին, որը, սակայն, ժխտում է դրանց առկայությունը՝ միաժամա-

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 206:

[2] Տե՛ս նույն տեղում:

նակ ակնարկելով, թե այդ փամփուշտներից կարելի է գտնել Թիֆլիսում: Ըստ այդմ՝ Քիշմիշյանը անգլիացիներից խնդրում է Երևան տեղափոխելու համար իրենց տրամադրել շարժակազմերը և համաձայնություն ստանում՝ բեռնելու երկու վագոն, որից ելնելով, Մակարյանը խոստանում է բեռնման համար հասցնել 30-40 հազար փամփուշտ: Քիշմիշյանը հայտնում է, որ իրենց հայտնի տեղեկություններով, Լոռու Չեզոք գոտում կան շատ մարտական պաշարներ, հատկապես Ուզունլար գյուղում[1]: Փամփուշտների հարցը սուր էր, որոնց կարիքը հայկական բանակը շատ էր զգում: Ինչպես պարզվում է Քիշմիշյանի 1919 թ. օգոստոսի 15-ի (N 128) զեկուցագրից, իրենք Կամավորական բանակի ներկայացուցիչ Դենից տեղեկացել են գեներալ Սաննիկովի հեռագրի մասին, որի համաձայն Գլխավոր շտաբը պատրաստ է մեր ներկայացուցչին տալ 1 միլիոն եռագիծ փամփուշտ, իսկ հայկական կողմը դրա դիմաց պետք է տար երկու միլիոն «Լեբել»ի փամփուշտ: Քիշմիշյանը հայտնում է, որ իրենք տվել են իրենց համաձայնությունը՝ միաժամանակ արտակարգ միջոցներ ձեռնարկելով առաջարկվող փամփուշտները անհապաղ Հայաստան հասցնել համար[2]:

Քիշմիշյանի՝ ՀՀ Զինվորական նախարարին ուղղված 1919 թ. օգոստոսի 16-ի (N 8) զեկուցագրում կրկին անդրադարձ է կատարվում Թիֆլիսում եռագիծ փամփուշտների ձեռքբերման վիճակին: Տեղեկացվում էր, որ խորհրդական Թումանյանից ԱԳ նախարարը անհերքելի հավաստիացումներ է ստացել, թե Թիֆլիսից կուղարկվեն բավարար քանակությամբ փամփուշտներ, սակայն հետո պարզվել է, որ փամփուշտների գնման հետ հանկարծակի դժվարություններ են առաջացել՝ պայմանավորված քաղաքացիական իշխանությունների կողմից ձերբակալվելու վտանգով, ինչպես նաև զենքի տերերի կողմից հարուցված չկամությամբ, որի մասին հաղորդվել էր անգլիական իշխանություններին, իսկ օգոստոսի 11-ին՝ նաև Վրաստանի կառավարությանը: Տեղեկացվում էր, որ ամեն դեպքում ջանքեր են գործադրվում անգլիական էշելոնը ուղարկելու համար, որոնվում են փամփուշտների գնման նոր աղբյուրներ՝ նշումով, որ այդ գործը դրված է միսիայի ռազմական

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 275, ց. 5, գ. 177, թ. 25:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 36:

վարչության ունեցվածքի կառավարիչ Մակարյանի վրա: Ասվում էր, որ երբ հավաքվող փամփուշտների քանակը հասնի 20-25 հազարի, դրանք Հայաստան կուղարկվեն Հայաստանում Ֆրանսիայի ռազմական ներկայացուցիչ Ա. Պուադեբարի վագոնով, հավելվում, որ այդ բեռի հետ ուղարկվելու է նաև պանորամա, հեռախոս և մի քանի տեղագրական քարտեզներ, որոնք Հայաստան են բերվելու անգլիական սպայի ուղեկցությամբ: Քիշմիշյանը հայտնում էր, որ ևս մեկ միլիոն փամփուշտ սպասվում է Կամավորական բանակից, սակայն մանրամասները պարզելու համար համապատասխան հրահանգներ են տրվել Բաթումիում գտնվող պորուչիկ Անիևին: Նշվում էր, որ ամեն դեպքում բոլոր ջանքերը գործադրվում են անգլիացիների միջոցով ապահավելու այդ ապրանքների տարանցումը[1]:

Գեներալ Քիշմիշյանը ՀՀ Զինվորական նախարարին ուղղված Քիշմիշյանի 1919 թ. օգոստոսի 16-ի (N 134) մեկ այլ զեկուցագրում նորից անդրադառնում է զենքի և զինամթերքի խնդիրներին՝ հայտնելով, որ օգոստոսի 14-ին ուղեկցող խմբով Թիֆլիս է ժամանել գնդապետ Զինկևիչը, Բարաթովի կից հանձնաժողովի վարիչ գեներալ-մայոր Վոսկրեսենսկին, գեներալ Ն. Բարաթովը: Պարզվում էր, որ ընդունվել է Բարաթովի կողմից, որի ժամանակ խոսք է եղել 1 միլիոն փամփուշտի տրամադրման մասին: Ըստ Քիշմիշյանի՝ գեներալ Բարաթովը խոստանում է աջակցել՝ առաջարկելով դիմել գնդապետ Դենին: Վերջինս էլ իր հերթին օգնելու խոստում է տալիս, ասելով, որ մեկ-երկու ամիս առաջ իրենք կապվել են Եկատերինադարի հետ՝ գնմանը նպաստելու կամ «Լեբելի» հետ փոխանակման խնդրանքով: Հետագայում վերջնականապես տեղեկացնում է, որ վերջին պահին անգլիացիները խոչընդոտել են ստեղծված հնարավորությունից օգտվել [2]:

Դրանք զուգակցվում էին զինակոչի հարցերի հետ. 1919 թ. նոյեմբերի 11-ին ԱԳ նախարար Խատիսյանը Եվանգուլյանին հայտնում էր, որ զինակոչի ընդհանուր սկզբունքը անհրաժեշտ է տարածել բոլորի վրա՝ թե՛ ՀՀ բոլոր քաղաքացիների և թե՛ ուրիշ երկրներում բնակվող զինապարտները պետք է ժամանեին Հայաստան և զինվորագրվեն:

[1] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 275, ց. 5, գ. 177, թ. 45-45 հակ.:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 47-48 հակ.:

Բայց քանի որ *«Հպատակության մասին»* օրենքը բացակայում էր, Եվանգուլյանին հրահանգում էր մի բան մտահղանալ՝ ելնելով տեղական պայմաններից [1]:

1919 թ. նոյեմբերի 11-ին Զինվորական և ԱԳ նախարարներին ուղղված պաշտոնագրում (N 300) գեներալ Քիշմիշյանը հայտնում էր, որ Ռուսաստանի Հարավի Զինված ուժերի գլխավոր հրամանատարը թույլատրել է զինծառայող հայերին լքել Կամավորական բանակի շարքերը և ուղևորվել հայրենիք՝ հետագա ծառայության համար[2], որի մասին տեղեկատվություն եղել էր և որը պարզելու համար դեռևս նոյեմբերի 9-ին գեներալ Քիշմիշյանը Դաշնային հրամանատարությանն առընթեր Ռուսաստանի հարավի Զինված ուժերի Գլխավոր հրամանատարությանն ուղղված գաղտնի ճեպագրում խնդրել էր չմերժել և իրեն ուղարկել Դենիկինի վերոհիշյալ հրամանագրի պատճենը կամ մի ձևով տեղեկացնել նման մտադրության իսկության մասին[3]: Եվ այսպես, իրողություն էր, որ Հայաստանի զորքերում ծառայելու պատրաստակամություն հայտնածների թիվը հասել է մի քանի հազարի, սակայն տեղում նրանց Հայաստան ուղարկման գործի կազմակերպման բացակայությունը և այլ հանգամանքներ, խոչընդոտում էին այն իրականություն դարձնելուն: Քիշմիշյանը նշում էր, որ անկախ դրանից, Թիֆլիսում իրենց դիվանագիտական ներկայացուցիչը՝ Եվանգուլյանը, ծանոթանալով Կուբանի կառավարությանը կից ՀՀ ներկայացուցիչ Սաղաթելյանի նամակին, իրեն տեղեկացրել է, որ գեներալ Դենիկինը համաձայն է նրանց՝ եռագիծ փամփուշտների անհրաժեշտ քանակով զինել՝ ասելով, որ բոլոր հիմքերը կան մտածելու, որ Վրաստանի կառավարությունը ոչ մի խոչընդոտ չի հարուցի իր տարածքով անցնելիս: Քիշմիշյանը այդպիսով կարծում էր, որ այդ հարցի կարգավորման համար հրամայական անրաժեշտություն կա Կամավորական բանակ գործուղելու հուսալի, բանիմաց և տակտիկապես ճկուն բարձրաստիճան սպայի՝ գնդապետից ոչ ցածր կամ գեներալի, և հայկական ներկայացուցիչ Սաղաթելյանի հետ համատեղ կազմակերպել զինվորների,

[1] Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց. 5, գ. 196, թ. 27:
[2] Տե՛ս նույն տեղում, գ. 197, թ. 251:
[3] Տե՛ս նույն տեղում, թ. 132:

սպաների և զենքի ուղարկումը Նովոռոսիյսկով, որն ավելի հարմար կլինի և Փոթիով, կամ էլ Բաթումիով Հայաստան[1]:

Իսկ ՀՀ փոխհարաբերությունները Դենիկինի հետ բազմանշանակ էին: ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության ռազմական կցորդ գեներալ-մայոր Հ. Ա. Քիշմիշյանը 1919 թ. նոյեմբերի 21-ի (N 310) զեկուցագրում տեղեկացնում է գեներալ Ա. Դենիկինի հոկտեմբերի 1-ի (N 1711) հրամանի մասին, ըստ որի թույլատրվում էր հայ զինվորականներին լքել Կամավորական բանակը և մեկնել հայրենիք՝ հետագա ծառայության համար, ընդ որում, ինչպես պարզվում է Հ. Սաղաթելյանի կողմից Եվանգուլյանին ուղղված նամակից, համաձայնություն էր տվել հայ զինծառայողներին տալ զենք՝ անհրաժեշտ քանակի փամփուշտով, և ընդ որում՝ հիմք կար եզրակացնելու, որ Վրաստանի կառավարությունը խոչընդոտներ չէր հարուցի իր տարածքով թույլատրելու անցկացնել այդ ամենը տարանցիկ ճանապարհով[2]: Եվ ինչպես պարզվում է, որոշակի հաշվարկի հիման վրա Դենիկինի մոտից տեղափոխվողների քանակը հասնում էր մոտ 2800 հոգու, որոնք ապահովված էին 3000 հրացանով և ավելի քան 8 միլիոն փամփուշտով[3]:

Դենիկինից ակնկալիքները անպատասխան չէին, որի մասին Ռուբենը փաստում է հետևյալը. ***«Աւելի շոշափելի օգուտ էր դենիկինյան շրջանից 3.000.000ի չափ Մոսին-հրացանի փամփուշտ սպասելը: Դա թէեւ մեծ թիւ չի երեւում, բայց մեզ հասաւ այն ժամանակ (1920ի Մայիսի վերջերին եւ յունիսին, երբ մեր պահեստներում ընդամէնը ունէինք 150.000 «Մոսին» մակնիշի հրացանի փամփուշտ, այսինքն ոչինչ՝ 10.000 հրացանի համար: Եթէ այդ ռազմամթերքը չհասնէր, իրոք Հայաստանը զինաթափ կարելի էր համարել այդ թուականներին. Այդ փամփուշտները փրկեցին մեզ եւ միջոց տուին հետագա կռիւները առաջ տանել:***

Այսպիսի բարեկամական յարաբերութիւնները կային Հայաստանի և դենիկինցիների միջեւ, եւ, ինչպէս տեսանք շոշափելի օգուտներ կը սպասար Հայաստանը այդ յարաբերութիւններից»[4]:

---

[1] Տե՛ս նույն տեղում, ֆ. 119, ց. 1, գ. 74, թ. 4-5:

[2] Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 275, ց. 5, գ. 197, թ. 151:

[3] Տե՛ս նույն տեղում, թ. 151 հակ.:

[4] Տե՛ս **Ռուբէն**, Հայ Յեղափոխականի մը յիշատակները, հ. 7 (Է), Գ. հրատ., էջ 261:

Արդյունքները կարող էին ավելին լինել, եթե չլիներ վրացիների եսասիրական ազգայնամոլությունը և հակադենիկինյան դիրքորոշումը, որի հաստատումը տեսնում ենք կրկին Ռուբէնի մոտ. «…Դենիկինի հետ յարաբերութիւնները համակրութիւն ունէր ժողովրդեան լայն խաւերի մէջ, ի մասնաւորի զինուորականաց մէջ…մենք կանխիկ սպասելիքներ ունէինք Դենիկինից՝ Հայաստանը ճանաչել տալ, ապահովել նրա իշխանութեան տակ գտնուող հայութիւնը, Հարավային Ռուսաստանից ստանալ մեզի համար կենսական հաց ու ռազմամթերք»[1]: Դենիկինի մոտ գտնվող ՀՀ ներկայացուցիչներ Սաղաթելյանի և այլոց միջոցով, ինչպես նաև Զինկևիչի ջանքերով և Դենիկինի կամեցողությամբ Հայաստան էին գալիս իբր մարտական ուժ կամ իբր գաղթական եւ այս թույլտութիւնը մեծ նշանակութիւն ունեցաւ… գալիս էին հազարաւոր ուժեր, յաճախ իրենց պարենաւորումով եւ զենքով, ուժեղացնելու Հայաստանը իրենց կարողութեամբ»[2]:

Անգամ վրացիները, թեկուզև անուղղակիորեն երբեմն կարծես թե ընդունում էին դա. 1920 թ. հոկտեմբերի հեռագրերից մեկում, ուղղված Վրաստանի ԱԳ նախարարին և վարչապետին, Երևանում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Մախարաձեն հայտնում էր, թե հայկական կառավարությունը իրեն տեղեկացրել է, որ Վրաստանը արգելափակել է Հայաստանի համար նախատեսված փամփուշտները Փոթիում, ավելացնելով, որ դրությունը Հայաստանում կրիտիկական է, թաթարները թուրքերի հետ միասին հարձակվում են Նախիջևանի և Իգդիրի կողմից, մարտեր են գնում, անհրաժեշտ է անհապաղ լուծել փամփուշտների փոխադրման հարցը, որ դրանք պետք են միայն ներքին ճակատի համար[3]: «Դժբախտաբար, Վրաստանը դժուարութիւններ էր յարուցանում յաճախ Սեւ Ծովի ափով կամ Դարեալի կիրճով եկող այդ բազմութիւններին. Յաճախ խլում գոյքերը, շաբաթներ այս կամ այն կէտում (Մցխէթ, Գորի եւ այլն) պահում եւ թշուառութեան մատնում, բայց այդ արդէն դուրս էր դենիկինեան բարեացակամութիւնից եւ կը վերաբերուէր վրացիների անբարեացակամութեան: Այսպէս

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս **ՀԱԱ,** ֆ. 200, ց. 1, գ. 386, թ. 118:

թէ այնպէս, Հայաստան մտաւ բաւականաչափ մարդ եւ աշխատող ձեռք:

Ճանապարհի վրայ նստած վրացիները ցանկութիւն ունէին բացարձակ չթույլատրել փոխադրութիւնները. Թէեւ նրանց վրայ կը ճնշէին Դաշնակիցների ներկայացուցիչ Հասկէլը եւ ուրիշներ, թեւ միւս կողմից դենիկինցիները ատամներ ցոյց կը տային...բայց Վրաստանը կարողացաւ այնքան դժուարութիւններ յարուցանել, որ փոխանակ միլիոնաւոր փութ հաց եւ այլ նիւթեր ստանալու, գուցէ 100.000-ի չհասաւ ուտելիքի մեր ստացածը (որից 30.000ից աւելին՝ սերմնացու, Հասկէլի միջոցով): Ստիպուած էր Հայաստանը, իրեն խոստուացած կամ գնած հացահատիկները հասցնելու համար, տալ վրացիներին ե՛ւ կաշառք, ե՛ւ տոկոս բերածից, երբեմն 50 հարիւրի չափ: Միւս կողմից, դենիկինցիները սկսեցին դանդաղեցնել իրենց օգնութիւնները, տեսնելով որ վրացիք բաժին են առնում ղրկածներից, իսկ այդ պարագան նրանց հաշուին չէր գար, քանի որ Վրաստանի հանդէպ էին տրամադրուած», գրում է Ռուբեն Տեր-Մինասյանը[1]:

Իրավիճակը և ՀՀ հետ ռազմաքաղաքական հարաբերությունները փոխվեցին 1920 թ. սկզբներին, երբ գեներալ Ա. Դենիկինի բանակը ջախջախիչ պարտություն կրեց Կարմիր բանակից, և արդեն օրակարգային դարձավ բոլշևիկյան զորքի կողմից Անդրկովկասի նվաճման խնդիրը, որն էլ իր հերթին օրակարգային խնդիր դարձրեց ՀՀ հարաբերությունների հարցը Խորհրդային Ռուսաստանի հետ: Մեծ Բրիտանիան էլ, իր համար առաջնահերթային համարելով Անդրկովկասի պատնեշումը բոլշևիկներից, անդրկովկասյան հանրապետություններին տրամադրեց բոլշևիկյան Ռուսաստանի դեմ՝ տալով ուտեստեղենի, զենքի ու զինամթերքի որոշակի պաշարներ, ինչպես նաև ռազմաքաղաքական աջակցության հերթական խոստումներ: Դրա նպատակն էր Կովկասը տարանջատել Ռուսաստանից՝ ամեն կերպ խոչընդոտելով բոլշևիկյան առաջխաղացմանը: Եվ միայն Դենիկինի պարտությունից հետո, որը պատահական չէր, հակաբոլշևիկյան պատվարի ստեղծման իրենց հեռահար ծրագրերից ելնելով՝ Անտանտի Դաշնակիցները 1920 թ. սկզբին դե-ֆակտո ճանաչեցին անդրկովկասյան հանրապետու-

[1] Տե՛ս **Ռուբէն,** նշվ. աշխ., էջ 260-261:

թյուններին: Դա իրատեսորեն գնահատեց Ալ. Խատիսյանը. «Նույնիսկ մեր անկախության ճանաչումը Փարիզի Գերագույն խորհրդի կողմից մեզ թվում է նրանց կողմից իբրև մի միջոց բոլշևիզմի դեմ կռվելու համար»[1]:

Ա. Դենիկինի պարտությունից հետո նոր իրողություններ իշխող դարձան և Հայաստանի Հանրապետության համար, անկախ իր ցանկությունից և ունեցած ու վարվող ռազմավարությունից, բոլշիկյան հեռանկարը դարձավ ակնհայտ, որը պարզորոշվեց Ադրբեջանի խորհրդայնացումից հետո՝ 1920 թ. գարնանը: Այն բանից հետո, երբ 1920 թ. օգոստոսին վերջին բրիտանական զինվորը հեռացավ Անդրկովկասից և Մեծ Բրիտանիան «ոչ պատահաբար իր տեղը զիջեց» բոլշևիկյան Ռուսաստանին, ակնհայտ դարձավ, որ Անդրկովկասի նոր տերը բոլշևիկյան Ռուսաստանն է:

Արդյունքում, անկախ Հայաստանի Հանրապետության կառավարական-քաղաքական շրջանների դեռևս շարունակվող արևմտամետ ձգտումներից և ռազմավարությունից, 1920 թ. աշնանը թուրք-հայկական պատերազմում ջախջախիչ պարտություն կրելուց և դեկտեմբերի 2-ի ՀՀ համար խիստ անցանկալի և ռազմաքաղաքական ծանրագույն հետևանքներ ունեցող պայմանագրի ստորագրումից հետո, բոլշևիկա-քեմալական մերձեցման և գործնականում ձախողված բոլշևիկա-հայկական բանակցությունների պայմաններում Հայաստանի Հանրապետությունը կանգնեց խորհրդայնացման անխուսափելության փաստի առաջ, որն իրագործվեց Երևանի համաձայնագրով:

Ինչպես նախկին ցարական, այնպես էլ բոլշևիկյան Ռուսաստանի, այդ թվում վերջինիս տարածքում ստեղծված ռուսական պետական կազմավորումների, այդ թվում Ա. Դենիկինի Կամավորական բանակի համար առաջնահերթայինը հեռահար ռազմավարության տեսանկյունից երկրի միասնության և ամբողջականության վերականգնման և պահպանման հարցն էր: Ըստ այդմ՝ նրանք հետևողական էին Անդրկովկասում վարվելիք քաղաքականության հարցում, ուստի ամեն ջանք

[1] Տե՛ս **Ղուլյան Ց.,** Ռուսաստանի իշխանությունների դիրքորոշումը Հայաստանի Հանրապետության անկախության վերաբերյալ 1918-1920 թթ., **«Բանբեր Հայաստանի արխիվների»,** 2017, № 125, էջ 310:

գործադրում էին Մեծ Բրիտանիային և Անտանտի մյուս տերություններին այդ տարածաշրջանից դուրս մղելու և վճռականորեն այնտեղ հաստատվելու համար: Դա ակնհայտորեն երևում է նաև նորօրյա Ռուսաստանի արտաքին քաղաքական ծրագրերից և ռազմաքաղաքական քայլերից:

ԱՄՓՈՓՈՒՄ
(ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ)

Առաջին աշխարհամարտի տարիներին գործող հայկական զորամիավորումներից էր Կիպրոսում Ֆրանսիայի կողմից կազմավորված, սակայն ֆրանսիական բանակի մաս չկազմող Հայկական (Արևելյան) լեգեոնը: Այն ստեղծվեց Ֆրանսիայի ներկայացուցիչ Ժորժ Պիկոյի և Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշայի միջև Լոնդոնում Մարկ Սայքսի ներկայությամբ կայացած համաձայնության արդյունքում: Այդ կամավորական բանակը ձևավորվեց, որպեսզի ազատագրեր Կիլիկիան, որին Ֆրանսիան խոստանում էր պատերազմից հետո ինքնավարություն շնորհել: Հայկական լեգեոնը կազմավորվել է 1916 թ., սակայն նրա կազմավորման շուրջ բանակցությունները սկսվել էին 1914 թ.-ից: Դա երկարատև գործընթաց էր, որը ի վերջո հանգեցրեց հայկական զորամասի ձևավորմանը: Հայերը կամավորագրվում էին լեգեոնին, որպեսզի թուրքական դաժան տիրապետությունից ազատագրեն հայրենիքը, ինչպես նաև ցանկանում էին վրեժ լուծել հայոց ցեղասպանության հետևանքով սպանված հարազատների և ազգակիցների համար: Զորախմբին կամավորագրվեցին հիմնականում մուսալեռցիներ, եգիպտահայեր, ամերիկահայեր, դաշնակիցների կողմից գերված թուրքական բանակի հայ զինվորներ:

Լեգեոնը 1918 թ. մասնակցեց Պաղեստինում թուրքական բանակի ջախջախմանը, Լիբանանի, Սիրիայի և Կիլիկիայի ազատագրմանը: Ադանայի նահանգի և Ալեքսանդրետի գավառի ազատագրումը իրականացվեց ամբողջությամբ Հայկական լեգեոնի ուժերով: 1919-1920 թթ. Հայկական լեգեոնը մասնակցեց Կիլիկիայի հայ բնակչության ինքնապաշտպանական մարտերին: 1919 թ. սկզբին Հայկական լեգեոնում կար 4 գումարտակ և շուրջ 5.000 զինվոր, նույնքան հայեր ևս ցանկանում էին զինվորագրվել լեգեոնին: Ֆրանսիան կարող էր լեգեոնի

թվաքանակը առանց դժվարության բարձրացնել 15.000-20.000-ի, որը բավարար կլիներ Կիլիկիան պաշտպանելու համար: Սակայն ի վերջո ֆրանսիացիները որոշեցին նվազեցնել հայ զինվորների թիվը: 1919 թ. գարնանը զորացրեցին գումարտակներից մեկը, 1919թ. վերջին որոշվեց թողնել 2 գումարտակ, 1920 թ. գարնանը լեգեոնում մնացել էր 1 գումարտակ, իսկ 1920 թ. օգոստոսին Հայկական լեգեոնը կազմալուծվեց: Հայկական այդ զորամիավորումը Ֆրանսիայի կողմից կազմավորվեց, երբ վերջինս Արևելքում բավարար ուժեր չուներ և ստիպված էր դիմել հայերի աջակցությանը: Սակայն պատերազմի ավարտից հետո Ֆրանսիան ոչ միայն Կիլիկիային չտվեց ինքնավարություն, ինչպես խոստացել էր, այլև 1921-1922 թթ. այն կրկին հանձնեց թուրքերին՝ պատճառ դառնալով տեղի հայության արտագաղթին:

Այնուամենանիվ, Հայկական լեգեոնի կազմավորումը և նրա գործունեությունը հայոց պատմության վառ էջերից են: Այն կարևոր դերակատարություն է ունեցել հայ գաղթականության հայրենի Կիլիկիա վերադառնալուն օժանդակելու, ապա պաշտպանելու գործում, ինչպես նաև հայերին Առաջին համաշխարհային պատերազմում Անտանտի դաշնակից ճանաչելու գործում:

Հայ հասարակության ճնշող մեծամասնությունն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին իր ողջ եռանդն, նյութական ու մարդկային ներուժը նվիրում է արևմտահայության ազատագրմանը: Առաջին աշխարհամարտում՝ Ռուսաստանի կողմից, Կովկասյան ռազմաճակատում ծավալած մարտական գործողությունների ակտիվ մասնակիցը դարձավ հայ կամավորական զինուժը: Կամավորական շարժման ստեղծման նախաձեռնությունը ստանձնել էր ռուսական կառավարությունը, հանձինս Կովկասի փոխարքայության, իսկ 1914 թ. սեպտեմբերից այն պաշտոնապես ընթանում է Թիֆլիսի Հայոց ազգային բյուրոյի անմիջական ղեկավարության ներքո:

Կամավորական շարժման նպատակն էր՝ մասնակցել արևմտահայության ազատագրությանը, պաշտպանել՝ արևելահայությանն թուրքական հարձակումներից: Այն իր էությամբ ժողովրդավարական էր. հայ ազգային ազատագրական պայքարի կոնկրետ արտահայտություն: Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը բազմիցս դրվատել է հայ կամավորներին, առանձնահատուկ ընդգծել նրանց

քաջությունն ու հերոսությունը: Սակայն կամավորական զինուժն ուներ խնդիրներ, այդ թվում ինչպես դրական, այնպես էլ ստվերոտ կողմեր, որոնք հասարակական-քաղաքական շրջաններում, ինչպես նաև առանձին կուսակցական-քաղաքական գործիչների մոտ իրարամերժ գնահատումների տեղիք են տվել: Ինչպիսին էլ լինեն այդ գնահատականները՝ իրողությունը մեկն է, որ ոչ մի թշնամի չի կարողացել մինչև վերջ ստրկացնել հայ ժողովրդին, ավելին հայը դիմակայել է թշնամու հզոր ռազմական ճնշմանը և անառիկ պահել իրենց գյուղերը, քաղաքները: Շարժումը հիմնականում ունեցավ իր դրական նշանակությունը, թերևս շատերի մոտ գերիշխում է այն տեսակետը, թե կամավորական խմբերի կազմակերպումը՝ երիտթուրքական կառավարության կողմից իրականացված հայերի ցեղասպանության պատճառներից մեկն է հանդիսանում, սակայն իրականում՝ այն լոկ առիթ էր հայերի բնաջնջման:

Հայ կամավորական զինուժը Թուրքիայի հետ պատերազմի ժամանակ ցույց տվեց մարտական բարձր արդյունավետություն և ապացուցեց ժամանակակից պատերազմ վարելու և ռազմական կարգապահությունը պահպանելու ունակություն, որի արդյունքներից էր այն, որ ռուսական հրամանատարությունը կամավոր հայկական ստորաբաժանումներին տվեց կանոնավոր առանձին գումարտակների կարգավիճակ, իսկ 1917-ի սկզբից կովկասյան բանակի կազմում առանձին գնդեր: Այդ նույն հայ մարտիկները հանդիսացան այն հիմնական ուժը, որը 1918թ. մայիսյան հերոսամարտերի ժամանակ կանգնեցրեց թուրքական բանակի առաջխաղացումը՝ հայությանը փրկելով բնաջնջումից:

Առաջին Հանրապետության բանակը ստեղծվել է սոցիալ-տնտեսական և աշխարհաքաղաքական ծանրագույն պայմաններում: Հայաստանի անկախության հաստատման պահին հայկական զորքը կազմված էր առանձին Հայկական կորպուսից և կորպուսի իրավունքներ ունեցող Հատուկ ջոկատից: Ռազմական նախարարության կազմավորումը սկսվեց 1918 թ. հունիսի 15-ին, որին կից դեռևս Թիֆլիսում ձևավորվեց Գլխավոր շտաբը: ՀՀ կառավարության ժամանումով Երևան հուլիսի 20-ին սկսվեց նոր ռազմական կազմակերպության ստեղծումը, զորքերը վերակազմավորվեցին վեց գնդային զորամասե-

րի՝ բրիգադային հրետանիով և ինժեներական վաշտով: Զորքերի ղեկավարման ողջ գործառույթները կենտրոնացվեցին Գլխավոր շտաբում: Օգոստոսի 15-ին զորքերի վերակազմավորումն ավարտվել էր:

ՀՀ անդրանիկ Զինվորական նախարարը դարձավ տաղանդաշատ զորավար գեներալ-լեյտենանտ Հ. Բ. Հախվերդյանը, որից հետո կարևորագույն այդ ռազմաքաղաքական կառույցը գլխավորեց Քր. Գ. Արարատյանը, այնուհետև՝ Ռ. Կ. Տեր-Մինասյանը, իսկ ՀՀ վերջին ռազմական նախարարը՝ բոլշևիկյան շրջադարձի պահին հանդիսացել է Դրոն՝ Դ. Մ. Կանայանը: Ըստ Ռ. Տեր-Մինասյանի, բանակի անկյունաքարերը դրվել են գեներալ Հովի. Հախվերդյանի ջանքերով, որի օրոք ***զինվորական բաժինների գլուխ գտնվում էին մասնագետ զորավարներ, որոնք բազմամյա փորձառություն ունեին ռուսական ծառայության մեջ, որոնցից ոմանք հայտնի էին նոյնիսկ ռուսական բանակում, որոնք անհասկանալի և անընդունելի էին համարում երևանյան կազմակերպական նոր ձևը՝ կիսաժողովրդական, կիսազինվորական***:

1918-1920 թթ. հայկական բանակը որոշակի չափով դեռ շարունակում էր մնալ կիսաֆիդայական տիպի բանակ՝ թե՛ իր ղեկավար կազմի, և թե՛ զինվորականության տեսանկյունից: Իսկ խմբապետական մտայնություն ունեցող զինվորական առաջնորդները, զորահրամանատարները ետ չկանգնեցին հայկական զորքի կազմակերպման խմբապետական սկզբունքներից և գաղափարներից, որոնք ունեին հեղափոխական-ապստամբական լիցք և ազգային ոգի, սակայն գործնականում անընդունակ գտնվեցին դարամակարդակ զինվորական կազմակերպության եղանակների կիրառմանը: Սակայն հայկական իրականության պայմաններում դժվար էր այդ անցումը կատարել, քանզի կանոնավոր բանակի պահանջներն ու ձևականությունները անընդունելի եղավ հայդուկապետների և կամավորական շրջանի «զորապետների» համար: 1918-1920 թթ. հայկական բանակը հիվանդ էր խմբապետականությամբ, իսկ զինվորական ու քաղաքական առաջնորդները բավարար վճռականություն չցուցաբերեցին իրոք դարամակարդակ խնդիրներ լուծելու: Առաջին Հանրապետությանը նախորդող ժամանակահատվածում, հայ ժողովրդի մեջ արթնացավ որոշակի ըմբոստ ոգի, հեղափոխական եռանդ, արդյունքում ստեղծվեցին առաջին զինա-

տար-ֆիդայական-ահաբեկչական բնույթի խմբեր, որոնք դարձան զինվորական կյանքի կազմակերպման նախատիպերը ինչպես 90-ական թվականներին, այնպես էլ 1918-1920 թթ., որոնք սակայն չկարողացան դառնալ իրական մարտունակ և կազմակերպված կանոնավոր բանակի թե՛ հիմքը, և թե՛ կորիզը:

Կառավարությունը զգալի ջանքեր գործադրեց այդ կարևոր բնագավառում, և աշխատում էր նմանվել հիրավի դարամակարդակ բանակի՝ կազմավորելով համապատասխան կառույցները, ձեռք բերելով զենք ու հանդերձանք, հայթայթելով սննդեղեն և այլն, որոնք Հ. Տեր-Հակոբյանի պատկերավոր արտահայտությամբ «1917 թ.-ին ռուսական քայքայման պահին, Կովկասյան բանակին թողած մեծաքանակ զենքերը, ռազմանյութն ու հանդերձանքը, հայերից առնելով հանձնեցին Վրաստանին ու Ադրբեջանին»:

Բանակի սպառազինման հարցը միշտ օրակարգում էր, բանակի զինվորությունը նոր հրացանների, առավելապես լեբելյան սիստեմի հրացանի և գնդացիրների, լեռնային հրանոթների, իսկ գլխավորապես փամփուշտների ներկրման կարիք էր զգում:

ՀՀ կառավարության սպասելիքները բանակի՝ որպես ՀՀ պետական անվտանգության համակարգի կարևորագույն բաղկացուցիչ օղակի կայացման առումով բոլորովին էլ անիրական չէին: Կառավարությունը, հայկական զինվորականությունը, պառլամենտը և կառավարող կուսակցությունը այլ առողջ ուժերի հետ համատեղ համառորեն ուղիներ էին որոնում՝ այդ բանակի կարիքները զենքի, զինամթերքի և հանդերձանքի առումով լուծելու, որպեսզի Հայկական բանակը՝ որպես պետական անվտանգության համակարգի կարևորագույն ստորաբաժանում և երկրի սահմանների պաշտպանվածության գլխավոր երաշխավոր, կայանար և դառնար գործուն, ուժեղ աշխատող մարմին:

Բանակը սկզբից ևեթ հիմնականում զինված է եղել ռուսական բանակի սպառազինությամբ:

Հայկական բանակի կայացման դժվարությունները, այդ թվում պետականորեն կարևոր ՀՀ սահմանի պահպանության կազմակերպման հիմնախնդիրները գլխավորապես պայմանավորված էին այն տնտեսաքաղաքական ծանրագույն պայմաններով, որոնցում գտնվում էր երկիրը: Սակայն անգամ այդ դժվարին պայմաններում բանակա-

ստեղծ գործընթացները և որոնումները համառորեն շարունակվում էին, և կառավարությունը որոշակի ուշադրություն էր դարձնում հանրապետության պետական անվտանգության համակարգի կարևոր բաղկացուցիչ հանդիսացող սահմանապահ զորամասերի ձևավորմանը և կուտակված հիմնախնդիրների լուծմանը՝ այն դիտելով որպես կարևոր նախապայման հանրապետության պաշտպանունակության ամրապնդման, երկրի սահմաններն արտաքին վտանգից ապահովագրելու խնդրում:

Առաջին հանրապետության (1918-1920 թթ.) հռչակման և կայացման դժվարին ու ոչ միանշանակ գործառույթներում ՀՀ կառավարության և զինվորական գործիչների կողմից որոշակի տեղ է հատկացվել այդ ժամանակ ողջ աշխարհում առաջին քայլերն անող հայկական օդուժի՝ ավիացիայի կազմակերպման ուղղությամբ՝ իր սուղ ֆինանսական միջոցներից հատկացումներ կատարելով: Հայաստանի անկախ պետականության ազդարարումից հետո ռուսական Կովկասյան բանակի հրամանատարության կողմից հայկական կորպուսի տնօրինությանն հանձնված 2-րդ, այլ տվյալներով՝ 3-րդ կովկասյան ավիաջոկատը դարձավ ՀՀ զինված ուժերի օդուժի հիմքը: 1918 թ. օգոստոսի 13-ին ՀՀ Նախարարների խորհրդում լսվել է Զինվորական նախարար, գեներալ Հ. Հախվերդյանի զեկուցումը իրեն միջոցներ բաց թողնելու՝ ծածկելու ավիացիայի, ռադիոհեռագրի հետախուզության և հակահետախուզության ծախսերը ծածկելու համար: ***Այսպիսով, հայկական բանակի ավիաջոկատի հիմնադրման օր պետք է համարել 1918 թ. օգոստոսի 13-ը,*** որի գործի նախաձնող, խանդավառված անձիք Հայաստանում կային: Օդագնաց ջոկատի առաջին հրամանատարն է եղել պորուչիկ Վոհպովը, որին 1919 թ. սկզբներին փոխարինել է հանրահայտ հայ օդաչու Արթուր Վասիլի Ղուլյան-Ռիլսկին (Գուլյանը):

Օդուժի կազմակեպմանը զուգահեռաբար կարևորվել է լճային նավատորմի ստեղծման հարցերը: Առաջին հայկական ռազմանավը «Աշոտ Երկաթ» առագաստանավն էր:

1918-1920 թթ. օդային և ջրային նավատորմի ստեղծման բնագավառում ՀՀ կառավարության, ռազմական այրերի և ազգային-քաղաքական ուժերի, կուսակցությունների գործադրած ջանքերն ու միջոցառումները, օդուժի և լճային նավատորմիղի օգտին կազմակերպված

հանգանակությունները ՀՀ-ում ընթացած բանակաստեղծ գործընթացների հիրավի անմոռաց էջերն են, հայկական պետականության կայացման գրավականը և ապագայի հույսը:

Բանակաստեղծ գործընթացներին զուգահեռաբար որոշակի քայլեր արվեցին Հայկական բանակի համար անհրաժեշտ և համապատասխան որակական հատկանիշներ ունեցող սպայական կազմ պատրաստելու և ուսուցանելու ուղղությամբ, որը կանոնավոր մարտական բանակի կազմակերպման տեսանկյունից էական հանգամանք է: Բոլոր թերություններով և բացթողումներով ու սայթաքումներով հանդերձ, տարաբնույթ փաստաթղթերից ակնհայտորեն երևում է, որ 1918-1920 թթ. ընթացել են լուրջ բանակաշինական գործընթացներ, և այդ առումով թե՛ ՀՀ կառավարությունը, թե՛ պառլամենտը և՛ թե զինվորական իշխանությունները տվյալ բնագավառում ծավալել են բազմաբնույթ աշխատանքներ՝ դրանք նպատակամղելով բանակի կազմակերպմանը և նրա մեծացմանը, վերջինիս սպայական և այլ կադրերի պատրաստմանը: Ըստ էության, այդ բանակը բոլոր փորձերն անում էր կայանալու համար, ձգտելով դառնալ գործուն համակարգ՝ պատրաստելով անհրաժեշտ սպայական և այլ կադրեր:

Ակնհայտ իրողություն էր ՀՀ կառավարության ձգտումը և ռազմավարական տեսանկյունից այդ պահից բխող մշտական ձգտումը բարեկամական հարաբերություններ ստեղծել և ապահովել ռազմաքաղաքական հարաբերությունների անհրաժեշտ եզրերը ռուսական բոլոր իշխանությունների հետ՝ լիներ դա բոլշևիկյան Ռուսաստան, թե «Սպիտակ կամ Սպիտակգվարդիական Ռուսաստան»: Բայց այդ, ՀՀ պատվիրակությունների մոսկովյան առաքելությունները, այդ թվում Լ. Շանթի առաքելությունը իրենց նպատակին չհասան, գործնականում դրանք անարդյունավետ եղան, և հնարավոր ռազմաքաղաքական հարաբերությունները գործնականում ձախողվեցին:

Առաջին հանրապետության ռազմաքաղաքական առաջնորդները ամենայն հավանականությամբ դա չզգացին, չըմբռնեցին և չգնահատեցին: Նրանք չարժևորեցին այդ խորքային գործընթացների իմաստը և այդքան մեծ կարևորություն չտվեցին բոլշևիկյան Մոսկվային իրենց ծրագրերում, քանզի բացարձակ ակնհայտ էր պատմաքաղաքական այդ լրջագույն փուլում ՀՀ քաղաքական շրջանների արևմտյան՝

Սևրյան մտասևեռումը և ռազմաքաղաքական կողմնորոշումը: Ա. Դենիկինի գլխավորած զորքերի հրամանատարությանն առընթեր ստեղծվեց մի կարևոր կառույց՝ «Հատուկ խորհրդակցություն», որն ուներ քաղաքական-հետախուզիչ գործառնություններ և ի դեմս Հայաստանում ռազմաքաղաքական շրջաններում հայտնի գնդապետ Մ. Զինկևիչի և մի շարք այլ ռուս սպաների՝ Հայաստանի Հանրապետությունում ունեցավ իր ներկայացուցիչը և հենարանը, որն էլ հետագայում՝ 1920 թ. կեսերին, դարձավ Հարավի զինված ուժերի՝ Կամավորական բանակի զինվորական-քաղաքական ներկայացուցիչը ՀՀ-ում, և բազմիցս աջակցեց հայկական կողմին զենքի ու զինամթերքի հայթայթման, ալյուրի և պարենի պաշարների առաքման, ինչպես նաև բացասաբար վերաբերվող Ադրբեջանին տրամադրվող ռազմական աջակցության խնդրում:

Իսկ Ադրբեջանը Ա. Դենիկինի տեսանկյունից համարվում էր կրոնաեկեղեցական միավոր, որի ճանաչման խնդրում բացասական դիրքորոշում էր իշխում: Ա. Դենիկինի Կամավորական բանակի հզորացման մեջ թե՛ Վրաստանը և թե՛ Ադրբեջանը իրենց սպառնացող վտանգ էին տեսնում, և դրանից ելնելով քայլեր էին ձեռնարկում ընդդեմ Դենիկինի՝ ստեղծելու ռազմաքաղաքական դաշինք, չնայած վերջիններիս հավաստիացրել են, որ իրենց գլխավոր թշնամին բոլշևիկյան Ռուսաստանն է: Իր հերթին, Հայաստանը Ռուսաստանի հարավի զինված ուժերի հետ պահպանում էր հնարավորինս բարյացակամ ռազմաքաղաքական հարաբերություններ: Ի տարբերություն Հայաստանի Հանրապետության հետ մշտապես տարածքային սահմանազատման հարցերում լարվածության մեջ գտնվող Ադրբեջանի և Վրաստանի՝ Ա. Դենիկինը ռազմական և պարենային-տնտեսական բնույթի աջակցություն էր ցուցաբերում Հայաստանի Հանրապետությանը: Ա. Դենիկինի գլխավորած հրամանատարությանն առընթեր ստեղծված «Հատուկ խորհրդակցությունը» ևս Հայաստան-Կամավորական բանակ հարաբերությունների կիզակետում էր: Բացի այդ, «Հատուկ խորհրդակցությանը» կից գործում էր ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Հովհաննես Սաղաթելյանը:

Սակայն 1919 թ. հունիսի 16-ին Վրաստանի և Ադրբեջանի միջև ձևավորվեց ռազմաքաղաքական դաշինք, որի սուր նետերն անմիջա-

կանորեն ուղղված էին ընդդեմ Ա. Դենիկինի գլխավորած Կամավորական բանակի: Այն Ադրբեջանի կողմից Թիֆլիսում ստորագրվեց Զինվորական նախարար Ադմեդ բեկ Մեհմանդարովի, Արտգործնախարար Մ. Ջաֆարովի, Գլխավոր շտաբի պետ Ս. Սուլկևիչի կողմից, իսկ Վրաստանի մենշևիկյան Հանրապետության անունից այն ստորագրեցին գեներալներ Ռազմական խորհրդի անդամ Ի. Օդիշելիձեն, Զինվորական նախարարի օգնական Ա. Գեդևանովը (Գեդևանիշվիլին), ԱԳ նախարար Ե. Գեգեչկորին և Ներքին գործերի և Ռազմական նախարար Ն. Ռամիշվիլին:

Ինչպես նախկին ցարական, այնպես էլ բոլշևիկյան Ռուսաստանի, այդ թվում Ռուսաստանի տարածքում ստեղծված ռուսական պետական կազմավորումների, այդ թվում Ա. Դենիկինի Կամավորական բանակի համար առաջնահերթայինը հեռահար ռազմավարության տեսանկյունից երկրի միասնության և ամբողջականության վերականգնման և պահպանման հարցն էր: Ըստ այդմ նրանք հետևողական էին Անդրկովկասում վարվելիք քաղաքականության խնդրում՝ ամեն ջանք գործադրելով Մեծ Բրիտանիային և Անտանտի մյուս տերություններին ոչ միայն դուրս մղելու այդ տարածաշրջանից, այլև շատ վճռական էին այնտեղ հաստատվելու մտադրության խնդրում, և դա ակնհայտորեն երևում է այսօրվա նորօրյա Ռուսաստանի արտաքին քաղաքական ծրագրերից և ռազմաքաղաքական քայլերից:

Հոդվածում վերհանվել է պատմաբանների, ժամանակակիցների, կուսակցական-քաղաքական գործիչների դիրքորոշումը և վերաբերմունքը 1918 թ. վրաց-հայկական պատերազմի շարժառիթների, պատճառների և սկզբի հիմնահարցի նկատմամբ: Մասնավորապես պարզորոշվել է, թե ե՞րբ կարելի է ընդունված համարել պատերազմի սկիզբը և օրը, դեկտեմբերի 9–ը թե՞ 13-ը: Հենվելով փաստերի համադիր համեմատական վերլության վրա, որպես փաստական հիմք ընդունվել է դեկտեմբերի 13-ը, երբ, սպառելով վիճարկելի Լոռի-Ախալքալաքի դարձած տարածքների խաղաղ հանգուցալուծման բոլոր հնարավորությունները և միջոցները, ՀՀ կառավարությունը թույլատրեց հայ զորահրամանատար Դրոյի գլխավորությամբ գործող հայկական զորամասերին անցնել հարձակման հայկական բնակավայրերի, և մասնավո-

րապես ապստամբած Ուզունլարի (Օձուն) և այլ գյուղերի բնակչությանը վրացական զորքերի հարձակումից պաշտպանելու նպատակով:

Առաջին քայլերն ազգային զինուժի, այդ թվում հայկական և վրացական բանակային կորպուսների կազմակերպման ուղղությամբ արվում են դեռևս 1917 թ. նոյեմբերին, սակայն դրանք գործնականում ձախողվում են Կովկասյան բանակի քայքայմամբ: 1918-1921 թթ. ինչպես հայկական բանակում, որտեղ ֆիդայապետերի, անկանոն զորամասերի և կանոնավոր բանակի հրամանատարների միջև գոյություն է ունեցել հակամարտություն, այնպես էլ Վրաստանում Վրաստանում ՌԽՖՍՀ ռազմական առաքելության ղեկավար, գեներալ Պ. Սիտինի կողմից հայթայթված հետախուզական փաստերի համաձայն՝ Ժողովրդական Գվարդիայի և բանակի միջև առկա է եղել սուր բախումնային-հակամարտ իրավիճակ, իսկ միլիցիոն-կամավորական պլանով գործող Գվարդիան դարձել էր պետություն պետության մեջ, և առավելապես ոչ կանոնավոր, հայդուկատիպ զորաջոկատները ամեն կերպ ձգտել են ոչ միայն չենթարկվել կանոնավոր ազգային բանակների հրամանատարությանը, այլև եսամոլաբար ձգտել իրենց կամքը պարտադրել, որից էլ խրախուսվել և ծաղկել է զանգվածային դասալքությունը, որից երկու հանրապետություններում էլ բանակաշինության գործն էապես տուժել է: Դրա պատճառը ակնհայտորեն ի վերուստ բանակի վերաբերմամբ Ժողովրդական գվարդիային վերապահված բացահայտ արտոնյալ վիճակն էր, վերջինիս ուղղված քաղաքական հրավերքը, ինչպես նաև գվարդիականների վերնախավի չչափավորված ձգտումը՝ ցանկացած գնով պահպանել իր անկախ կարգավիճակը, ինչպես և հայ հայդուկապետերի պարագայում: Իր հերթին, միանգամայն մեթոդիկ վրաց գեներալիտետը հակակրանք էր տածում գվարդիականների ազգայնամոլական խաղարկումների նկատմամբ: Վրաց կադրային գեներալները, որոնք դաստիարակվել էին ռուսական ոգով և ռուսական ռազմական կրթօջախներում, Ժողովրդական գվարդիան անվանում էին *«ռազմական կազմակերպության անոմալիա»* և արտահայտվում էին կանոնավոր բանակի ստեղծման գործում ռազմագիտական դարամակարդակ հրամայականի կիրառման օգտին:

Չափազանց անիրական աշխարհաքաղաքական պայմաններում հռչակվեց Հայաստանի Առաջին Հանրապետությունը: Պետականութ-

յան և այն խորհրդանշող կառույցների կերտումը ընթացավ տնտեսաքաղաքական ծանրագույն իրավիճակում: Պատմաքաղաքական զարգացման փորձը վկայում է, որ ամեն մի պետության անքակտելի բաղկացուցիչն են կազմում այդ պետության գոյության, նրա ազգային-պետական անվտանգության ու նրա կողմից տարաբնույթ գործառնությունների իրականացման ապահովման երաշխավորողների դերում հանդես եկող կենսականորեն անհրաժեշտ այն ռազմաքաղաքական կառույցները, որոնք պետության զարգացման ներքին տրամաբանությամբ պարտադրվում են տվյալ հասարակությանը: Այնտեղ, որտեղ կա պետություն ու քանի դեռ գոյություն ունի այդ կառույցը, կլինեն նաև հետախուզություն և հակահետախուզություն, միլիցիա (ոստիկանություն) և Ներքին Գործերի նախարարություն, բանակ և այլևայլ ուժային ստորաբաժանումներ: Բնականաբար էլ, Հայաստանի Առաջին Հանրապետության պետաքաղաքական գործընթացների հիմքում պետք է ընկած լիներին պետական անվտանգության համակարգի ձևավորման ու գործունեության կազմակերպման գործընթացները: Այդ գործընթացների հետևանքով ծնվեցին անվտանգության համակարգի այն անհրաժեշտ կառույցները, որոնք ձեռնամուխ եղան Հայաստանի Հանրապետության և նրա պետական անվտանգության ապահովմանը նպատակաուղղված զանազան ծրագրերի մշակմանը և համապատասխան գործողությունների ձեռնարկմանը, փորձելով հայ ժողովրդին որոշակի պատմական տարածքի վրա ապահովագրել այն բոլոր վտանգներից, որոնք սպառնում էին հարևան ոչ բարեկամ պետությունների կողմից և իրականացնել քայլեր, որոնք կհանգեցնեին Միացյալ, Անկախ Հայաստանի ստեղծման գաղափարների իրականացմանը, որն անհնարին կլիներ առանց համառ և տևական ձգտման՝ ունենալու պետական անվտանգության հուսալի ազգային-քաղաքական համակարգ:

Մենագրությունը բերում է այն եզրահանգման, ըստ որի հնարավոր չէր, որ Հայաստանի Առաջին Հանրապետությունը ձգտեր ունենալ այլևայլ ուժային-պաշտպանական և քաղաքական կառույցներ՝ բանակ, խորհրդարան և այլն, սակայն կարիք չզգար հատուկ ծառայություններ, Ներքին Գործերի նախարարության ուժային ստորաբաժանումներ, միլիցիայի, դրանով իսկ արմատապես հերքելով տարիներ շարու-

նակ իշխող այն թյուր պատկերացումները, թե իբր Առաջին Հանրապետությունը կազմակերպված պետություն չի եղել, որ այն կիսատ-պռատ, անլիարժեք պետություն է եղել, և առհասարակ այդ ժամանակաշրջանի պետականությունը նսեմացնող բոլոր այն տեսակետները, որոնց հիմքում ընկած են ձևակերպումներ, որոնք առհասարակ պետությունը պատկերացնում են առանց այդ կարևորագույն հաստատությունների: Մենագրությունը ցույց է տալիս, որ Առաջին Հանրապետության պարագայում հաստատվեց պատմաքաղաքական այն ճշմարտությունը, որ պետական անվտանգության համակարգի ձևավորման և գործունեության կազմակերպման անհրաժեշտությունը պարտադրվեց պետությանը զարգացման հատուկ օրենքների ներքին անկասելի տրամաբանությամբ: Հետևաբար, նոր ձևավորված Հայաստանի Առաջին Հանրապետության պետաքաղաքական և ռազմական համակարգի անբաժան մասերը դարձան ինչպես բանակը, այնպես էլ Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի Հետախուզական և հակահետախուզական բաժանմունքը կամ ասել է թե՝ հայկական հետախուզական և հակահետախուզական ծառայությունը, ՆԳՆ ուժային ստորաբաժանումները, միլիցիան և այլն, որոնք ձևավորելիս փորձ առհասարակ չկար, այլ կար ընդամենը ռուսական ցարական բանակի Արևմտահայաստանից ու Հարավային Կովկասից հեռացումից հետո մնացած սպայական կադրուժ, այդ բանակի բովով անցած և մարտական ուղիներում թրծված հայ զինվորականությունը, որը փորձում էր խարխափելով ու մաքառումների դժվարին ուղի հաղթահարելով՝ սեփական ոտքերի վրա կանգնել՝ պահպանելով վեհ հերոսականության ու ազգային արժանապատվության ոգին, հստակ նպատակադրում ունենալով՝ պաշտպանել ՀՀ ազգային-պետական անվտանգությունը նրա թշնամիներից և արտաքին ուժերի ոտնձգություններից, ինչպես նաև տարածաշրջանային կատակլիզմներից և նպաստել հանրապետության առաջ կանգնած ազգային-քաղաքական ծրագրերի իրականացմանը:

Գուցե և հնարավորություն կար ավելի մեծ գումարային հատկացումներ կատարելու, եթե, իհարկե, պետության մեջ ավելի մեծ չափի կազմակերպվածություն լիներ, և նրա քաղաքական-ռազմական առաջնորդները խորապես ըմբռնեին, որ ամեն մի պետության հիմքը նրա ուժային և հետախուզական կառույցներն են, այդ թվում նաև և՛ բանա-

կը, և՛ ՆԳՆ ուժային մարմինները, այլ ոչ թե իրենց ողջ հույսերն ու սպասելիքները պայմանավորվածության, որոշակի կախվածության մեջ պահեին Սևրյան ու Ազգերի Լիգայի երկրների ռազմաքաղաքական ծրագրերի հետ: Ավելին, քանզի 1920 թ. օգոստոսի 10-ից հետո ընկած ժամանակահատվածում, ընդհուպ մինչև նույն թվականի սեպտեմբերի 23-ին սկսված թուրք-հայկական պատերազմի աղետալի օրերը, իշխում էր Սևրով ծնված խանդավառության ոգին, այդպիսի իրավիճակում Հայաստանի Առաջին Հանրապետության քաղաքական-կուսակցական ղեկավարությունը և կառավարությունը չկարողացան ունենալ անհրաժեշտ հեռատեսությունը և շրջահայացությունը իրատեսորեն ու ճկունորեն կողմնորոշվելու, օր-օրի փոխվող աշխարհաքաղաքական իրադարձությունների քաոսային ընթացակարգում և ընդունել շրջահայաց, ոչ ժամանակավրեպ որոշումներ: Ամենևին փորձեր չարվեցիմ ըմբռնելու, որ տվյալ իրադրությունում ինչպես այլընտրանք չուներ քեմալա-խորհրդային մերձեցումը, այնպես էլ խորքային իմաստներով իր բացատրությունն ուներ վիլսոնյան բարեկամների հրաժարումն Անտանտի գծով իրենց եղբայրակցից, հետևաբար նաև 1920 թ. թուրք-հայկական պատերազմում Ազգերի Լիգայի երկրների կողմից ակնկալվող օգնության մերժումը, և վերջապես, միանգամայն ըմբռնելի է դառնում սեփական հետախուզական ծառայության կարծիքը իրատեսորեն հաշվի առնելու կարողունակության բացակայությունը, ուրեմն Հայաստանի Հանրապետությանը, նրա քաղաքական առաջնորդներին մնում էր գլորվել Սևրի բարձունքներից և ջարդուփշուր լինել, ինչը և տեղի ունեցավ:

Անշուշտ, չի կարելի շրջանցել և այնպիսի կարևոր գործոն, ինչպիսին մարդկային գործոնն է, որը Մովսես Խորենացու նշանավոր «Հայոց պատմության» հայտնի «Ողբ»-ի ժամանակներից հետո շատ քիչ էր որակական փոփոխության ենթարկվել, և ըստ էության նաև պետականամետ մտածողության բացակայության պայմաններում, հնարավորություն էր ձեռք բերել 1918-1920 թթ. իրականությամբ և սովի սցենարներով պայմանավորված դժվարին պայմաններում դրսևորելու նաև իր բոլոր բացասական հատկությունները, ինչպես նաև այն ամենը, որոնք մնացել էին մոնղոլ-թաթարական, չինգիսխանական և լենկթեմուրյան ժամանակներից որպես ժառանգություն: Կարելի է հանգել այն եզրա-

հանգման, որ խորշակաբեր ու աղետալիցք այդ ալիքներն անցել էին հայ ժողովրդի վրայով և մարդկանց գիտակցության մեջ արմատներ գցել, որը չէր մնացել միայն որպես հիշողություն, այլև սովորույթի, բնավորության գծերի ձևով արմատավորված երևույթ էր դարձել՝ իր բոլոր հետևանքներով հանդերձ:

Ամփոփելով, կարելի է եզրահանգել, որ Առաջին Հանրապետության բանակի ու առհասարակ պետական անվտանգության համակարգի ձևավորման նկատմամբ ՀՀ կառավարության ու կուսակցությունների դիրքորոշման փորձի ուսումնասիրությունը մեզ հուշում է, որ անկախ պետականության ներկա գործընթացների ուղին բռնած Երրորդ Հանրապետության համար պետք է նախընտրելի դառնան ուժեղ պետականության ատրիբուտները՝ անվտանգության մարմինների դերի ուժեղացումը պետության մեջ, որոնք նրա իրական առաջընթացի և միջազգային ասպարեզում նրա դերի բարձրացումը պայմանավորող կարևոր երաշխիքներից են: Դա ամենևին էլ հակասության մեջ չի գտնվում ներկայիս գլոբալիստական բնույթի փոփոխությունների հետ, երբ որ կեղծ փաստարկումներ են բերվում, որ պետք է ջարդել «Միասնական Եվրոպայի» կամ այլ նմանատիպ միասնական կառույցների մեջ չտեղավորվող ազգային անձուկ անջրպետները, հետևապես կարիք չկա ունենալու ուժեղ անվտանգության համակարգ, բանակ կա՛մ էլ Ներքին Գործերի նախարարություն, կա՛մ էլ ժամանակակից հզոր ազգային բանակ, դա փոքր պետությունների փոխարեն կարող են ունենալ մեծ տերությունները: Դա պատմաքաղաքական, պետականության զարգացման գործընթացների բուն էության, մեղմ ասած, կոպիտ աղավաղում է, նենգափոխում, որոնց նպատակն է՝ դիմացինին համոզել երկրորդական պետականություն լինելու գաղափարի հետ: Հետևապես, պետք է ուժեղացնել պետական անվտանգության մարմինների, բանակի, Ներքին Գործերի նախարարության և այլ կարևոր կառույցների դիրքերը հայկական պետականության ներկա գործընթացներում, այլ ոչ թե ճամարտակել ասենք նախագահի իշխանության սահմանափակման և Ազգային ժողովի լիազորությունների նկատելի ընդարձակման մասին, որը վերն ասված օրինակների հետ միասին, թույլ պետականության օրինակ է, ինչն անհարիր է հայ ժողովրդի իրական ազգային պատմաքաղաքական իղձերի ու ձգտումների հետ:

Առաջին Հանրապետության պետական անվտանգության համակարգի՝ հետախուզական և հակահետախուզական ծառայության, ՆԳՆ ուժային ստորաբաժանումների, միլիցիայի, ինչպես նաև հայկական ազգային բանակի որպես պետական անվտանգության ամբողջական համակարգի հիմնական օղակների գործունեության պատմաքննական վերլուծությունը ակնհայտորեն ցույց է տալիս, որ դրանք եղել են ոչ թե սոսկ պրիմիտիվ իմաստով հասկանալի սաղմնային վիճակում գտնվող կառույցներ, ինչպես դա երբեմն պարզունակ կերպով ընկալում են, այլ հանդիսացել են բարձր կազմակերպվածության և ռազմաքաղաքական համակարգում ուժեղ դիրքերի ձգտող անվտանգության համակարգի իրական, զարգացող և գործնական ստորաբաժանումներ: Դրանք, անշուշտ, այնքան էլ շատ բարձր պրոֆեսիոնալներ չէին, քանզի պակասում էր պետականության երկարատև գոյությամբ պայմանավորված և ըստ այդմ ձեռք բերվող դարավոր փորձի սակավությունը: Այդ ժամանակաշրջանում պատմական զանազան հանգամանքները, ռազմաքաղաքական գոյություն ունեցող իրադրությունը, իրադարձությունների ու դեպքերի գլխապտույտ արագությամբ ընթացող զարգացումները հնարավորություն չտվեցին այդ կարևորագույն ուժային կառույցներին քիչ թե շատ բնականոն, ավելի հարմարավետ ու տանելի պայմաններում ձևավորվելու և դրսևորվելու որպես իսկական ուժեղ պետականությանը հատուկ մարմիններ: ՀՀ կառավարության և խորհրդարանի, ՆԳՆ և ռազմական նախարարությունների կողմից ընդունված որոշումներն ու օրենքները որոշակի իմաստով քիչ թե շատ հաջող փորձեր ու ձգտումներ էին ավարտուն և լիարժեք դարձնելու այդ կարևոր պետական կառույցները, ժողովրդի մեջ մեծացնելու վստահությունը և արժանապատիվ հարգանքը անվտանգության մարմինների նկատմամբ: Ակներև է, որ կար պետականության փորձի, պետական մտածողության ու քաղաքական կուլտուրայի զգալի պակաս ինչպես պետական իշխանությունների, այնպես էլ հասարակության և կուսակցությունների տարբեր շերտերի կողմից: Այդուհանդերձ, Հայաստանի Առաջին Հանրապետության պետական անվտանգության մարմինները՝ բանակը, հետախուզական և հակահետախուզական ծառայությունը, ՆԳՆ ուժային ստորաբաժանումները, միլիցիան և այլ կառույցներ պետականությանը հատուկ դրսևորումներ էին, և բոլոր հիմքերը կան պնդելու, որ

դրանք որոշակի իմաստով կազմակերպված կառույցներ էին, այնքանով՝ ինչքանով, որ ընդհանուր առմամբ Հայաստանի 1918-1920 թվականների Հանրապետությունը հանդիսանում էր կազմակերպված պետականություն:

Ուսումնասիրության արդյունքներով եկել ենք այն եզրակացության, որ իր առանձին թերություններով ու անխուսափելի բացթողումներով հանդերձ, ՀՀ պետական անվտանգության համակարգը (բանակ, հետախուզություն և հակահետախուզություն, ՆԳՆ ուժային ստորաբաժանումներ, միլիցիա՝ ոստիկանություն) կայացած համակարգ էր՝ պետականությանը հատուկ անկապտելի բոլոր կարևոր հատկանիշներով: Սկզբնական փուլում, որն ընդգրկում է 1918 թ. անկախության հռչակումից մինչև 1919 թ. հունվարին Միացյալ, Ազատ և Անկախ Հայաստանի հռչակումը, այդ կառույցներն անցնում էին կազմակերպական-քաղաքական գործընթացների ամենաբարդագույն էտապը՝ սկսելով զրոյից, անհրաժեշտ փորձի կուտակման ցայտնոտային փուլ ապրելով և հերոսական ջանքերով ձգտելով ՀՀ ազգային-պետական անվտանգության այդ ստորաբաժանումներին հատուկ գործունեություն ծավալել արդեն 1919 թ. սկզբներին: 1919 թ. հունվարից հետո ընկած ժամանակահատվածում՝ մինչև 1920 թ. օգոստոսյան Սևրյան խանդավառության և սեպտեմբերի 23-ին սկսված Հայաստանի Առաջին Հանրապետության համար աղետալի թուրք-հայկական պատերազմը այդ ուժային կառույցներն ապրեցին որոշակի հույսերով, վարդագույն ծրագրեր մշակելով և փորձելով դրանք իրականացնել պրակտիկ կյանքում՝ ակնկալիքներով, անշուշտ, իրենց գործունեությունում ստանալու բարեկամ մեծ տերությունների թե՛ բարոյական, թե՛ ռազմաքաղաքական աջակցությունը, վերջապես՝ 1920 թ. վերջնամասը, որտեղ պետական անվտանգության այդ մարմիններին սպասում էին ոչ պատահական անհաջողություններ և փլուզումներ, այդ թվում պետականության խորհրդանիշ հանդիսացող բոլոր տեսակի կառույցների՝ թե՛ բանակի, թե՛ հետախուզական ծառայության, և թե ՆԳՆ ուժային ստորաբաժանումների: Ընդորում, հարկ է առանձնահատուկ նաև նշել, որ ՀՀ պետական անվտանգության համակարգի, և առանձին ստորաբաժանումների, հայկական բանակի փլուզման-լուծարման գլխավոր պատճառները պետք է որոնել առաջին հերթին աշխարհաքաղաքական արտաքին բնույթի

գործոնների մեջ, և վերջում արդեն՝ ներքին պայմաններում, որոնք ևս - կարևոր հանգամանքներ էին, սակայն վճռորոշ չէին: Հայկական բանակի, այդ թվում նաև Հայաստանի Առաջին Հանրապետության հետախուզական ծառայության պատմության հիմնախնդիրներին գիտնականները դեռ բազմիցս կանդրադառնան, քանզի կան հարցեր, որ դեռ իրենց լուսաբանմանն են սպասում, մի շարք մոտեցումներ էլ հետագա ճշգրտման և լրամշակումների կարիք են զգում, պահպանելով իրենց արդիական հնչեղությունը: Դա է ժամանակի հրամայականը, քանզի այսօրվա պետաքաղաքական գործընթացների տեսանկյունից կարևորվում են նաև այն հարցերը, որոնք առնչվում են հայկական բանակի նորացման և հզորացման հիմնախնդիրներին ներկայիս համաշխարհայնացման հարափոփոխ գործընթացների պայմաններում:

Հայաստանի Հանրապետության բանակը կարծես թե ապահովված էր տվյալ ժամանակաշրջանի չափանիշներով արդիական զինատեսակով, զենք ու զինամթերքով: Հայտնի է, որ այդ օրերին զենքն ու զինամթերքը Հայաստան էին ներկրվում Մեծ Բրիտանիայից, Հունաստանից և այլ երկրներից, ինչպես նաև Ռուսաստանի հարավում գործող այսպես կոչված Դենիկինի Կամավորական և այլ սպիտակգվարդիական զորավարների զինապահեստներից: Սեփականը Հայաստանի Հանրապետությունը հնարավորություն չունեցավ կազմակերպելու, ասենք ստեղծված իրավիճակում այնքան էլ դյուրին չէր նման ձեռնարկումներ ունենալ, առավել ևս գործելով թուրք-թաթարական և բոլշևիկյան շրջափակման պայմաններում, չնայած որոշ փոքր նախապատրաստություններ այդ բնագավառում իրականացվեցին: Եթե հաշվի առնենք նաև այն կարևոր հանգամանքը, որ, Մեծ Բրիտանիայից Հայաստան ներմուծված հրացանները գործնականում ոչ պիտանի դուրս եկան, ծանր էին, ինչից հայ զինվորները իրապես դժգոհում էին, մեծմասամբ էլ պարզապես խոտան էին, ապա կարելի է պատկերացնել բանակաշինության համապետական խնդրի առաջ պատմական այդ պահին ծառացած բարդությունները:

Հաջորդ խնդիրը կապված էր սպայակազմի հետ: Հայկական բանակի սպայական-հրամանատարական կազմը հիմնականում ռուսական ցարական բանակի ներկայացուցիչներ էին, որը ևս որոշակի առումով հոգեբանական կախվածության մեջ էր դնում Հայաստանին

ռուսական գործոնից: Եվ չնայած ՀՀ կառավարությունը փորձեց այդ հիմնախնդիրն էլ լուծել, բացելով ռազմական ուսումնարաններ և գիմնազիաներ, դրանք միշտ չէ, որ լիովին կենսագործվեցին կյանքում, շատ որոշումներ ուղղակի մնացին թղթի վրա կամ էլ դրանց լուծումները չգտնվեցին, մանավանդ, որ դրանք կենսագործելու համար անհրաժեշտ էր հաղթահարել ներքին դժվարությունները՝ ավազակաբարո զինված խմբերի, անկանոն տարբեր զորամասերի և զորախմբերի կողմից հարուցված քաոսը, անկազմակերպվածությունը, անիշխանությունը և անօրինականությունը, ինչպես նաև կուսակցական-քաղաքական մտածելակերպի անհարթությունները և կաղապարված գործելակերպի դրսևորումները զինվորական գործի, և մասնավորապես Հայկական բանակի կազմակերպման բնագավառում:

Առաջին Հանրապետության բանակի համար լուրջ փորձություն հանդիսացավ հայդուկապետական անկանոն խմբապետական մտածելակերպի և գործելակերպի բախումը և անհաշտ դիրքորոշումը կանոնավոր բանակի կազմակերպման գաղափարների, պետական գործելակերպի դրսևորումների հետ, ինչը գործնականում փոշիացրեց առկա ռազմուժը, խաթարեց բանակաշինության ռազմավարական մեծագույն արժեք ունեցող գործը: Տվյալ պատմական ժամանակաշրջանում առավել նախաձեռնող և անզիջում գտնվեցին հայդուկային-ֆիդայական մտածելակերպը որոշակի իմաստով հոգեբանական-բարոյական տեսանկյունից արդարացնող գործելակերպի կողմնակիցները: Բնականաբար, հենց նրանք էլ ահռելի փորձությունների և խնդիրների առջև կանգնեցրին 1918 թ. մայիսին ծնված Առաջին Հանրապետությանը: Դատելով 1918-1920 թթ. պատմական իրողությունների, և գլխավորապես Նախարարների խորհրդի արձանագրություններից, այդպես էլ ՀՀ կառավարությանը չհաջողվեց այդ ժամանակ հաղթահարել անկանոն զորամասերի, մաուզերիստական զանազան խմբերի, և, անշուշտ, հայկական զորքի կազմակերպման հայդուկային մտածելակերպով առաջացած դժվարությունները, թեկուզև կարծես թե ժամանակին ընդունվեցին տեղին և լուրջ որոշումներ, որոնք սակայն մեռելածին գտնվեցին:

Բնականաբար, ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակում Հայաստանի Առաջին Հանրապետության բանակը, չնայած հաջողու-

թյամբ դիմացավ 1918-1919 թվականների և 1920 թ. առաջին կեսի փորձություններին, անցնելով Սարդարապատյան հերոսական ճակատամարտաշարքի բովով, բախվելով 1918 թ. դեկտեմբերի երկշաբաթյա վրաց-հայկական պատերազմի ալիքներին, որին նոր կազմակերպվող Հայկական բանակը պատվով դիմացավ՝ նշանավոր զորավար Դրոյի գլխավորությամբ տանելով արժանի հաղթանակ, իսկ այնուհետև թուլանալով, հյուծվելով և բարոյալքվելով 1918-1919 թթ. ներքին կռիվներում՝ նպատակադրում ունենալով զսպել Հայաստանի կեսմիլիոնանոց մահմեդական զանգվածին, ինչպես նաև գործնականում կանոնավոր բանակի զորամասերին մասնակից դարձնելով մայիսյան բոլշևիկյան բռնկման, կամ ավելի ճիշտ տվյալ պահին հակապետական համարվող խռովության ճնշմանը, ինչի արդյունքում գործնականում Հայկական բանակը իրապես կորցրեց իր մարտունակությունը, և փաստորեն գրեթե լիովին անպատրաստ գտնվեց 1920 թ. աշնան սկզբին սկսված թուրք-հայկական աղետաբեր պատերազմին, այն գործնականում տանուլ տվեց, որպես արդյունք ունենալով Ալեքսանդրապոլի 1920 թ. դեկտեմբերի 2-ի հիրավի տխրահռչակ, ստորացուցիչ և չափազանց ծանր ռազմաքաղաքական հետևանքներով լի պայմանագիրը. դրան ավելացրած նաև այն հանգամանքը, որ թուրք-հայկական պատերազմում հայկական բանակի տկարացմանը ըստ էության նպաստեց նաև Հայաստանի Անտանտի գծով դաշնակիցների իրական դիրքորոշումը, որի արդյունքում հայ ժողովուրդը լքվեց դաշնակիցների կողմից, ինչն էլ իր հերթին խթանեց մեն-մենակ վիճակում հայտնված հայերի մոտ փախչելու-փրկվելու հոգեբանությունը, գոյություն ունեցող իրավիճակից բխող հուսահությունը ահագնացրեց, արթնացրեց և զորեղացրեց իրական վախը թուրք բարբարոսի առաջ, իսկ արդյունքում՝ հանգեցրեց Հայաստանի Առաջին Հանրապետության ռազմաքաղաքական տկարացմանը, իրապես մեկուսացմանը տարածաշրջանում և հուսահատ վախճանին, իսկ քաղաքական հեռանկարում՝ նաև խորհրդային իշխանության հաստատմանը:

ЗАКЛЮЧЕНИЕ
(РЕЗЮМЕ)

Одним из армянских воинских подразделений, действовавших во время Первой мировой войны, был Армянский (Восточный) легион, сформированный Францией на Кипре, но не являющийся частью французской армии. Он был сформирован в результате соглашения, достигнутого между представителем Франции Жоржем Пико и президентом Национальной делегации Армении Погосом Нубаром в присутствии Марка Сайкса в Лондоне. Армия добровольцев была сформирована, чтобы освободить Киликию, которую Франция обещала предоставить автономию после войны. Армянский легион был образован в 1916 году, но переговоры о его формировании начались в 1914 году. Это был длительный процесс, который в конечном итоге привел к формированию армянской воинской части. Армяне добровольно вызвались для легиона освободить родину от жестокого турецкого владычества, точно так же, как они хотели отомстить за родственников и друзей, которые были убиты во время Геноцида армян. Легион был вызван в основном армянами Мусалера, египетскими армянами, американскими армянами и армянскими солдатами турецкой армии, захваченными в плен союзниками.

В 1918 году Легион участвовал в разгроме турецкой армии в Палестине, освобождении Ливана, Сирии и Киликии. Освобождение провинции Адана и санджака Александретты полностью осуществлялось Армянским легионом. В 1919-1920 годах Армянский легион принимал участие в боях самообороны армянского населения Киликии. В начале 1919 года в Армянском легионе было 4 батальона, около 5000 солдат, столько же армян хотели поступить в легион. Франция мог без труда увеличить количество легионеров до 15–

20.000, которое было достаточно для защиты Киликии. Но в итоге французы решили сократить количество армянских солдат. Весной 1919 года один из батальонов был демобилизован. В конце 1919 года было решено оставить только 2 батальона. Весной 1920 года в Легионе остался один батальон. Армянский легион был расформирован в августе.

Армянская воинская часть была сформирована Францией, когда у последнего не было достаточно сил на востоке, и им пришлось обратиться за поддержкой к армянам. Однако после окончания войны Франция не только не дала Киликии автономию, как обещала, но и в 1921-1922 годах снова передал его туркам, вызвав эмиграцию местных армян.

Однако формирование Армянского легиона и его деятельность являются одной из ярких страниц армянской истории. Он сыграл важную роль поддерживая, а затем защищая возвращение армянских беженцев в их родную Киликию, а так же в признании армян союзником Антанты в Первой мировой войне.

Подавляющее большинство армянского общества посвящает весь свой энергетический, материальный и человеческий потенциал освобождению западных армян во время Первой мировой войны. Во время Первой мировой войны армянские добровольческие вооруженные силы стали активным участником военных операций, проводимых Россией на Кавказском фронте. Инициатива по созданию добровольческого движения была предпринята российским правительством от имени вице-руководство Кавказа, и с сентября 1914 года она официально находилась под непосредственным руководством Национального бюро Армении в Тбилиси.

Целью движения добровольцев было участие в освобождении западных армян и защита восточных армян от турецких нападений. Это было демократично по своей природе: конкретное выражение армянской национально-освободительной борьбы. Командование Кавказского фронта неоднократно хвалило армянских добровольцев, подчеркивая их мужество и героизм. Однако у добровольческих сил были проблемы, как позитивные, так и скрытые, что привело к противоречивым оценкам в общественных и политических кругах, а также в отдельных партийно-политических деятелях. Какими бы ни

были эти оценки, реальность такова: ни один враг не смог поработить армянский народ до конца, более того, армяне оказали сопротивление мощному военному давлению противника и сделали свои деревни и города непобедимыми.

Движение было в основном позитивным, и многие считают, что организация групп добровольцев является одной из причин Геноцида армян, совершенного правительством младотурок, но на самом деле это был лишь повод для истребления армян.

Во время войны с Турцией армянские добровольческие вооруженные силы показали высокую боевую эффективность, доказали способность вести современную войну и способность поддерживать военную дисциплину. Одним из результатов этого стало то, что российское командование присвоило добровольным армянским частям статус регулярных отдельных батальонов. А с начала 1917 года отдельные полки в кавказской армии, те же армянские истребители были основными силами, которые остановили продвижение турецкой армии во время героических сражений в мае 1918 года, спасая армян от уничтожения.

Армия Первой Республики была создана в сложных социально-экономических и геополитических условиях. В период становления независимости Армении армянская армия состояла из отдельного армянского корпуса и специального отряда с правами корпуса. Формирование Военного министерства началось 15 июня 1918 г., параллельно был сформирован Генеральный штаб в Тифлисе. С прибытием правительства Армении 20 июля было начато создание новой военной организации, войска были разбиты на шесть воинских частей с бригадной артиллерией и инженерной вахтой. Все функции по командованию войсками были сосредоточены в Главном штабе. 15 августа была завершена реорганизация войск. Первым Военным министром РА стал талантливый генерал-лейтенант О. Б. Ахвердян, после чего важнейшее военно-политическое устройство возглавил Хр. Г. Араратян, затем Р. К. Тер-Минасян и последний военный министр Республики Армения во времена большевистской революции был Дро - Д. М. Канаян. По словам Р. Тер-Минасяна краеугольные камни армии были заложены генералом Ов. Ахвердяном.

В 1918-1920 гг. армянская армия была поглощена идеей общинно-государственного строя, а военные и политические лидеры не проявили достаточной готовности для решения вековых задач. В период, предшествующий Первой Республике, в армянском народе проснулся определенный мятежный, революционный дух, в результате которого были созданы первые военно-фидаинские группировки, ставшие прототипами организации военной жизни как в 90-ые годы, так и в период с 1918-1920 гг., но которые, однако, не смогли стать ни основой, ни ядром для истинной боеспособной и организованной армии.

Правительство прилагало значительные усилия в этой немаловажной сфере и старалось уподобиться армии, формируя соответствующие структуры, приобретая оружие и обмундирование, добывая продовольствие и прочее. Согласно образному высказыванию А. Тер-Акопяна: «В 1917г. в период распада России, многочисенное оружие и обмундирование, оставленное Кавказской армии, было конфисковано и передано армянами Грузии и Азербайджану».

Вопрос вооружения армии всегда был на повестке дня, военные нуждались во ввозе ружей, винтовок лебелевской системы и пулеметов, пушек, а в особенности ядер. Ожидания правительства Армении в вопросе создания армии, как важнейшей составляющей системы государственной безопасности РА, не были нереальными. Правительство, армянские военные, парламент и правящая партия вместе с другими здравыми силами настойчиво искали пути для удовлетворения потребностей армии в оружии, боеприпасах и обмундировании, чтобы армянская армия состоялась как важнейшая единица системы государственной безопасности и главный гарант границ страны, как мощный рабочий орган.

Армия изначально была в основном на вооружении российской армии. Трудности формирования армянской армии, включая важные для государства вопросы защиты армянской границы, были в основном обусловлены теми тяжелыми экономическими и политическими условиями, в которых находилась страна. Но даже в этих сложных условиях процессы формирования армии настойчиво продолжались, и правительство уделяло особое внимание формированию пограничных подразделений системы государственной безопасности и реше-

нию накопившихся проблем, рассматривая это как важную предпосылку для укрепления обороноспособности республики и прикрытия границ страны от внешних угроз.

В сложных и недвусмысленных условиях провозглашения и формирования Первой республики (1918–1920 гг.) некоторыми правительственными и военными деятелями Армении было отведено особое место в организации первой в мире армянской авиации, с выделением скудных финансовых средств. После провозглашения независимой государственности Армении, командование русской кавказской армии поручило Армянскому корпусу руководство 2-й, а по другим данным 3-й кавказской эскадрильей, который стал основой ВВС РА. В 1918 г. 13 августа Совет министров РА заслушал доклад министра обороны о покрытии расходов на нужды авиации, радиотелеграфной разведки и контрразведки. ***Таким образом, датой создания Военно-воздушных сил Армении является 13 августа 1918 года.*** Первым командиром воздушного отряда был поручик Войпов, которого в начале 1919 г. заменил в последствии хорошо известный Артур Василий Гулян-Рильский (Гулян).

Одновременно с организацией воздушных сил была затронута проблема создания озерного флота. Первым армянским вооруженным судном был военный корабль "Ашот Эркат". 1918-1920 гг. усилия и деятельность правительства Армении, национальных политических сил и партий в создании военной авиации и флота, а также пожертвования, организованные для военно-воздушных сил и озерного флота, являются поистине незабываемыми страницами в вопросе процессов формирования армянской армии, залогом армянской государственности и надеждой на будущее.

Параллельно с созидательными процессами армянской армии были предприняты конкретные шаги для подготовки и организации учебы офицерского состава армянской армии с нужными качественными свойствами, что мыло существенным обстоятельстяом в деле создания регулярной армянской армии. Наряду с ошибками и пропусками, из анализа различных документов выясняется, что в 1918-1920 гг. происходили серьезные созидательные процессы в армянской армии, и с этой точки зрения и правительство РА, и парламент и военные власти в этой области производы различного свойства

работы, целенаправляя их на организацию и расширение армянской армии, на подготовку офицерских и иных кадров. По существу, эта армянская армия предприняла все попытки, чтобы состоять как армия, стремясь стать действующей системой, подготовляя нужные офицерские и другие армейские кадры.

Очевидным фактом было стремление правительства РА установить дружественные отношения и обеспечить необходимые условия военно-политических отношений со всеми российскими властями, будь то большевистская Россия или «Белая - Белогвардейская Россия». Однако в московских миссиях армянские делегации, в том числе и миссия Л. Шанта, не достигла своих целей. На практике она оказалась неэффективной, а возможные военно-политические отношения практически потерпели неудачу.

Военно-политические лидеры первой республики, вероятно, этого не чувствовали, не понимали и не ценили. Они не оценили смысл этих глубоких процессов и не придали большого значения большевистской Москве в своих программах, поскольку на данном серьезном историко-политическом этапе очевидной была западная, а именно севровская военно-политическая ориентация политических кругов РА. Под командованием войск во главе с А. Деникиным была создана важная структура - "Особый совет", которая проводила политико-разведывательные операции и, в лице М. Зинкевича, известного в военно-политических кругах, а также ряда других русских офицеров, он имел своего представителя и поддержку в Республике Армения, который впоследствии, в середине 1920-х годов стал представителем военно-политической Добровольческой Армии в РА, неоднократно поддерживая армянскую сторону в поставках оружия и боеприпасов, муки и продовольствия, а также в вопросе военной поддержки негативно настроенному Азербайджану.

Азербайджан, с точки зрения Деникина, считался религиозно-церковной единицей, в отношении признания которой царила отрицательная позиция. В вопросе укрепления Добровольческой армии А. Деникина и Грузия, и Азербайджан видели угрозу и, исходя из этого, предпринимали шаги по созданию военно-политического союза против Деникина, несмотря на их заверения в том, что большевистская Россия является их главным врагом. В свою очередь, Ар-

мения максимально старалась поддерживать дружественные военно-политические отношения с южными вооруженными силами России. В отличие от Азербайджана и Грузии, которые всегда были напряженных отношениях с Арменией касательно региональной геополитикой риентации и безопасности, Деникин оказывал военную и продовольственно-экономическую поддержку Республике Армения. "Особый совет", созданный под командованием А. Деникина, также был в эпицентре отношений между Арменией и Добровольческой армией. Кроме того, за "Особый совет" отвечал спецпредставитель Армении Ованес Сагателян.

Однако в 1919 году 16 июня между Грузией и Азербайджаном был образован военно-политический союз, острые стрелы которого были направлены против Добровольческой Армии под командованием А. Деникина. Он был подписан министром иностранных дел Азербайджанской Республики в Тифлисе министром обороны Азербайджана Адмеддом бек Мехмандаровым, министром иностранных дел М. Джафаровым, начальником Генштаба С. Сулкевичем и от имени грузинской меньшевистской республики его подписали генералы Военного совета И. Одышелидзе, помощник министра обороны А. Гедеванов (Гедеванишвили), министр иностранных дел Е. Гегечкорин и министр внутренних и военных дел Н. Рамишвили.

И для бывшей царской, и для большевистской России, включая российские государственные образования, созданные на ее территории, в том числе и Добровольческую Армию Деникина, приоритетным был вопрос восстановления и поддержания единства и целостности страны с точки зрения долгосрочной стратегии. Соответственно, они были последовательны не только в политике, проводимой в Закавказье, прилагая все усилия не только для того, чтобы вывести Великобританию и другие державы Антанты из региона, но и в намерении обосноваться там, и это отчетливо видно по внешнеполитическим программам и военно-политическим шагам нынешней России.

В данной момографии раскрывается позиция и отношения историков, очевидцев и партийно-политических деятелей к ключевым вопросам поводов, причин и начала грузино-армянской декабрьской войны 1918 года. Освещается не только вопрос относительно под-

стрекателя этой войны, а также полемика вокруга начала этпй войны: 9-го декабря, или 13 декабря: В основу принамается 13 декабря, когда исчерпав все варианты мирного урегулирования спорных вопросов Лори-Ахалкалаки, правительство Армении дал разрешение армянскому военначльнику Дро отдать приказ во главе армянских войск перейти в наступление с целью защиты армянского населения от нашествий грузинских войск, вошедших на территорию армянской Лори, в частности по поводу восставшего армянского села Узунлар [Одзун] и др.

Первые шаги к организации национальных вооруженных сил, в том числе армянского и грузинского армейских корпусов, были сделаны в 1917 году. Однако на практике они потерпели неудачу из-за распада Кавказской армии. В 1918-1921 гг. как в армянской армии, где имел место конфликт между командующими, нерегулярными воинскими частями и командующими регулярной армией, так и в Грузии, между Народной Гвардией и армией возникла острая военная ситуация, и в большинстве случаев нерегулярные отряды гайдукского типа старались не только не подчиняться командованию регулярных национальных армий, но и бесстыдно навязывать свою волю, что нанесло серьезный удар по армии.

Причиной этого, очевидно, была первостепенная привилегия Народной Гвардии над армией, политическое приглашение к ней, а также безусловное желание элиты гвардии сохранить свой независимый статус любой ценой, как в случае с Армянским командованием. В свою очередь, целый ряд грузинских генералов возмущался националистическими стремлениями гвардейцев. Грузинские военные генералы, обученные в русском духе и в российских военных училищах, называли Народную гвардию ***"аномалией военной организации"*** и выступали за использование военного императива военного уровня при создании регулярной армии.

В годы Первой Республики правительство, местные органы власти, милиция и все структуры Военного Министерства и внутренних дел сделали немало попыток, хотя и без ощутимых результатов, для выявления основных причин выкоренившихся в молодой армянской армии различных форм дезертирства, предложив некоторые меры для противостояния дезертирству и бесчинству различных

маузеристских и иных групп, нерегулярных войсковых частей. Однако они не смогли коренным образом решить проблемы дезертирства и призыва новых сил военнообязанных в ряды Армянской армии. Более того, борьба властей Армении, милиции и органов МВД против дезертирства не дала желаемых ощутимых результатов, она обескровила армейские структуры, отрицательно сказываясь на пытавшейся состояться системе государственной безопасности Республики Армения, как основы независимого государства, и, в конечном счете, особенно, пагубно сказывалось на военно-политических результатах турецко-армянской войны 1920 года, влияющих на Республику Армения и судьбы армянского народа, заключающуюся в кабальном для армянского народа Александропольском договоре 2 декабря.

В годы Первой Республики Военное Министерство, армянская милиция и органы внутренних дел, только состоявшиеся, предприняли немало усилий, хотя и не таких эффективных, для преодоления сопротивления беззаконных действий различных несанкционированных военных групп, так называемых “хумбов”, которые нагнетали социально-политическую напряженность в республике. Милиция и военные власти с ведома правительства предприняли ряд шагов в деле приостановления происков различных воинских командиров относительно реквизиции у населения продуктов питания, фуража и т. д., а также преступлений разбойничьих групп во всех уездах Республики Армения, их незаконных действий, грабежей против мирного населения, тем самым способствуя стабилизации обстановки в обществе и преодолению состояния безвластия в городах и селах РА, хотя эффективность от этих усилий была невелика.

Армянская армия, а также и органы милиции и вообще МВД, спецслужбы - разведка и контрразведка, - это те важнейшие структуры, без которых невозможно представить независимую государственность, самостоятельность и всеобъемлющую внешнюю политику вообще. Спецслужбы составляли неотъемлемую часть военно-политической и государственной системы национальной безопасности Первой Республики Армения. Тем самым объясняется, что Армения являлся состоявшимся государством. Из анализа исследованного материала становится ясно, что структуры армянской армии вынужде-

ны были пройти организационный процесс в условиях геополитического изолирования, преодолевая огромные финансово-экономические и кадрово-технические трудности и сложности, взамен "опираясь" на шаткую надежду помощи со стороны антантовских великих и могучих союзников в лице Великобритании, Франции, США, стоя перед синдромом азербайджано-грузинского и кемалотурецко-советского альянса.

Очевидно, что в 1918-1920 годы армянская армия, армейская разведка, спецслужбы вообще со всеми ее вспомогательными частями, милиция и вообще Министерство Внутренних Дел создавались в таких же сложных экономико-политических и социально-напряженных условиях, как и другие государственные структуры, плюс к этому–изолированное и запутанное геополитическое состояние вокруг Армении. Сложно было создавать армию и милицию, причем ту законопослушную, законопреданную и служившую народу армию, милицию и органы внутренних дел в такой стране, где было сотни тысяч голодных беженцев, темную и не лояльную в отношении Армении и ее властей почти полумиллионную магометанскую «лавину». Очевидно, что в условиях страшной экономической разрухи и неоднозначности процессов создания государственной системы безопасности сложно было найти нужные кадры, которые почти что не существовали, и те финансовые средства, которые очень важны для создания регулярной, дисциплинированной армии и государственным образом мыслящей милиции, и, вообще, органов внутренних дел. При этом во время этих процессов необходимо было преодолеть некоторые огосударственные силы, стремившиеся стоять во вне государства или стать государством в государстве, самостоятельной силой, и в частности, разбойничьи настроения так называемых «хумбов», для которых трудности Армении были не понимаемы, а сама страна была их собственной «отцовской вотчиной», где можно все делать, что в голову придет, вплоть до применения напоминающего мрачное средневековье инквизиционных методов пыток в отношении проявляющихся инокомыслие или не хотевших подчиняться им групп населения, или просто отдельных личностей. Запутанное внутреннее и тяжелое экономическое состояние страны, которое усугублялось действиями сил извне, еще более осложняло создание

этих нужных и очень важных государственных силовых структур, национально-государственной системы безопасности. Очевидно, что нельзя форсировать и такой фактор, как человеческий, который после времен знаменитого **«Вохба»** известной **«Истории Армении» М. Хоренаци** мало подвергался качественным изменениям и, по сути дела, в условиях отсутствия государства и государственного мышления и поведения, приобрел возможность в сложных условиях того времени и обусловленные сценариями голода и разрухи 1918-1920 гг. выражать также свои все негативные качества и все то, что остались нам в наследство с чингизхановских и ленктимуровских времен, поскольку эти несущие беду волны прошли над армянским народом и пустили корни в сознании людей, оставшись как слой памяти, как форма привычек, черты ставшие окрепнувшим явлением со всеми своими последствиями.

В результате различные армейские структуры и милиция, и все система Министерства Внутренних Дел в эти годы сделали попытку, но не смогли эффективно, с ощутимыми результатами противостоять своевольничеству и бесчинству различных маузеристских и иных групп, не смогли дать коренное решение проблемам дезертирства с точки зрения проблем, касающихся их компетенции относительно разрешения вопросов государственной безопасности.

Из существующих архивных и иных документов очевидно, с какими кадровыми сверхзадачами сталкивались армянская армия, органы внутренней и внешней безопасности Первой Республики Армения, чьи руководители были очень молодыми, неопытными, им было чему научиться. Отсюда совершенно закономерно, с какими трудностями сталкивались армянские армейские структуры, органы МВД, спецслужбы в сложной геополитической и запутанной военно-нополитической ситуации, находясь лицом к лицу с Турцией, имевшей большие кадровые, экономические, финансовые возможности и ресурсы, а также зримых и незримых сильных союзников. В результате имело место катастрофическое поражение Армении в турецко-армянской войне в сентябре-декабре 1920 года, в которой армянская армия, армянские спецслужбы не смогли *(да и не имели более или менее реальных возможностей)* противостоять турецким и иным, более сильным военным силам и спецслужбам, за спинами

которых чувствовалось грубое дыхание на самом деле не так уж и проармянских действий великих "союзников". Одновременно, необходимо отметить, что результаты деятельности армий и служб армянской разведки не всегда в действительности реально оценивались и учитывались руководящими политико-партийными правительственными кругами Армении, позиция которых была сориентирована в сторону Севрских стран, что оставило необратимое воздействие на все идущие в регионе геополитические процессы и на их результаты. Подытоживая вышесказанное, можно заключить, что Третья Армянская Республика имеет несравненно более весомые возможности (во всех аспектах, хотя и здесь есть свои нерешенные проблемы) в деле организации и выбора пути на самом высоком уровне работ армянской армии, органов внутренной безопасности, армянских спецслужб - разведки и контрразведки, опираясь при этом на поучительный опыт как Первой, а также Второй социалистической (советской) Республики.

SUMMARY
(INSTEAD OF EPILOGUE)

One of the Armenian military units operating during the First World War was the Armenian (Eastern) Legion, formed by France in Cyprus but not part of the French army. It was formed as a result of an agreement reached between the representative of France, Georges Picot, and the President of the Armenian National Delegation, Boghos Nubar, in the presence of Mark Sykes in London. The volunteer army was formed to liberate Cilicia, which France promised to grant autonomy after the war. The Armenian Legion was formed in 1916, but negotiations on its formation began in 1914. It was a long process that eventually led to the creation of the Armenian military unit. The Armenians volunteered for the legion to liberate the homeland from the brutal Turkish rule, just as they wanted revenge for the relatives and friends who were killed during the Armenian Genocide. Legion was volunteered mainly by Armenians of Musaler, Egyptian-Armenians, American-Armenians, and Armenian soldiers of the Turkish army captured by the Allies.

In 1918 Legion participated in the defeat of the Turkish army in Palestine, the liberation of Lebanon, Syria, and Cilicia. The liberation of the province of Adana and the sanjak of Alexandretta were carried out entirely by the Armenian Legion. In 1919-1920 the Armenian Legion took part in the self-defense battles of the Armenian population of Cilicia. At the beginning of 1919, there were four battalions in the Armenian Legion, about 5,000 soldiers, as many Armenians who wanted to enlist in the Legion. France could increase the number of legionnaires without difficulty to 15,000-20,000, which would be enough to protect Cilicia. But eventually, the French decided to reduce the number of Armenian soldiers. In the spring of 1919, one of the battalions was demobilized. It was decided to leave only two battalions in autumn 1919. In the spring of

1920, one battalion remained in the Legion. The Armenian Legion was disbanded in August, 1920.

The Armenian military unit was formed by France when the latter did not have enough forces in the East and had to turn to the Armenians for support. However, after the end of the war, France not only did not give autonomy to Cilicia as promised but in 1921-1922 again handed it over to the Turks, causing the emigration of local Armenians.

However, the Armenian Legion's formation and its activities are one of the glossy pages of Armenian history. He played an essential role in supporting and then protecting the return of Armenian refugees to their native Cilicia and recognizing the Armenians as an ally of the Entente in World War I.

The overwhelming majority of the Armenian society dedicates all its energy, material, and human potential to the liberation of the Western Armenians during the First World War. During the First World War, the Armenian volunteer armed forces became an active participant in the military operations carried out by Russia on the Caucasus front. The Russian government took the initiative to form a volunteer movement on behalf of the Caucasus Vice-Leadership. Since September 1914, it has been officially under the direct leadership of the Armenian National Bureau of Tbilisi.

The volunteer movement aimed to take part in the liberation of the Western Armenians and to protect the Eastern Armenians from the Turkish attacks. It was a democratic movement, a concrete expression of the Armenian national liberation struggle. The command of the Caucasus Front has repeatedly praised the Armenian volunteers and emphasized their courage and heroism. However, the volunteer forces had problems, including both positive and negative aspects, which gave rise to conflicting assessments in public and political circles and individual party-political figures. Whatever those assessments may be, the reality is that no enemy has been able to enslave the Armenian people to the end; moreover, the Armenian has resisted the enemy's powerful military pressure and kept their villages and cities invincible.

The movement was mainly positive, and many people think that the organization of volunteer groups is one of the reasons for the Armenian

Genocide committed by the Young Turk government. Still, in reality, it was only an occasion for the extermination of Armenians.

During the war with Turkey, the Armenian volunteer armed forces showed high combat efficiency and the ability to wage a modern war and the ability to maintain military discipline. One of the results was that the Russian command gave the volunteer Armenian units the status of separate regular battalions, and from the beginning of 1917, separate regiments within the Caucasian army. These same Armenian fighters were the main force that stopped the Turkish army's advance during the heroic battles of May 1918, saving the Armenians from annihilation.

The First Republic's army was created in the hard social-economic and geopolitical conditions. At the time of Armenia's independence, the Armenian army was composed of a separate Armenian Corps and a Special Squad with Corps Rights. The formation of the Military Ministry began in 1918. On 15 June, the General headquarter was formed in Tbilisi. By the arrival of the Armenian government, on July 20, the creation of a new military organization was launched, and the troops were reorganized to six military units, brigade artillery and engineering drums. All the command-line functions were concentrated in the General headquarter. The restructuring of the troops on August 15 was over.

The talented general lieutenant H. B. Hakhverdyan became the first RA Minister of Defense. The important military-political structure was later headed by C. Araratyan, then R. K. Ter-Minasyan, and the last military minister of the Republic of Armenia at the time of the Bolshevik Revolution was D. M. Kanayan (Dro). According to Ter-Minasyan, the cornerstones of the army were laid by General Hovhannes Hakhverdyan's efforts.

In 1918-20s in the Armenian army the power of the groups dominated, and the military and political leaders did not show enough decisiveness to solve the severe problems. During the period before the First Republic, the revolting spirit and the revolutionary woke up in the Armenian people and the result was the creation of the first armed fidyah groups, which became the prototype of military life in the 1990s and 1918-1920, but they failed to become a truly efficient and organized regular army.

The government made considerable efforts in this crucial area and worked as an army, forming appropriate structures, acquiring weapons and equipment, providing food, and so on. The government made considerable efforts in this important area and worked as an army, forming appropriate structures, acquiring weapons and equipment, providing food, and so on. According to Ter-Hakobyan's figurative expression, «During the 1917 Russian collapse, the massive arms and equipment left to the Caucasus army, Armenians handed over to Georgia and Azerbaijan».

The lack of the army's weapons was a daily issue; the army needed new rifles, mainly the Behemoth system rifle and machine guns, mountain guns, and particularly bullets.

The expectations of the Armenian government on the establishment of the army as the essential constituent of the RA state security system were realistic. The Armenian government, the Armenian military, the parliament, and the ruling party, together with other healthy forces, persistently sought ways to solve the needs of the army in weapons, ammunition and clothing, so that the Armenian Army, as the most important element of the state security system and the primary guarantor of the country's borders became a powerful working body.

The army was mostly armed with the exhaustion of the Russian army.

The difficulties in the formation of the Armenian army, including the state-important issues of the protection of the Armenian border, were mainly conditioned by the massive economic and political conditions the country was stuck in. But even in these difficult conditions, the armyforming processes persistently continued, and the government paid special attention to the formation of frontier troops of the state security system and to the solution of the accumulated problems, considering them to be an important prerequisite for strengthening the republic's defense capability and covering the country's borders from external threats.

In the most difficult and indefinite functions of the establishment of the first Armenian Republic (1918-1920) some military figures of the government of the Republic of Armenian gave a special place to Armenian Air Force in its first steps thus providing them by scarce

financial means. After the declaration of Independence of Armenia, the 3rd Caucasian squadron was handed to the leadership of Armenian corpus by the Russian Caucasian army command which later became the basis of Air Force of RA military forces. On 13 August 1918, the RA council of ministers listened to the speech of the military minister, in which it is said that he needed some means to cover the expenses of aviation, radiotelegraph reconnaissance and contra- reconnaissance.

So the date of establishment for the Armenian army aviation is August 13, 1918, and there were enthusiastic people in Armenia. The first commander of the aviation detachment was lieutenant Voipov, later, he was replaced by a well-known man called Arthur Vasili Ghulyan-Rilski (Gulyan).

Parallel to the organization of the Air Force, the next question was to create lake navigation. The first armed sailboat was the warship "Ashot Yerkat."

In the spheres of air and water fleet creation in 1918-1920 the efforts of partyies measurements National- political forces, donations organized in honor of Air Force and lake navigation, the processes of creating a national army of RA the guarantee of Armenian statehood and hope for the future were the unforgettable pages.

In parallel with the processes of creating of Armenian army, specific steps were taken to train and teach the officer with the necessary and relevant qualitative characteristics for the Armenian arm, which is an essential factor in organizing a regular combat army. With all the shortcomings and stumbles the various documents clearly show that in 1918-1920, there have been serious army-building processes, and in the meantime, the Armenian government, the parliament, and the military have been engaged in a variety of activities aimed at organizing the army and its enlargement, and the training of officers and other personnel. In essence, the army was making all the attempts to develop and fulfill and was trying to become a functioning system by preparing officers and other staff.

It was evident from the military point of view that the permanent government of the Republic of Armenia had to create a good relationship with all Russian authorities, both the Bolshevik Russia and "White guardian Russia." But the missions of the delegations from the RA to

Moscow, including L.Shant's mission, didn't reach their goals as they were inefficient and all the possible military-political relationships practically failed.

The military-political leaders of the First Republic probably could neither feel, nor understand and nor evaluate it. They didn't value the meaning of those deep processes and didn't give great importance to the Bolshevik Moscow in their programs. It was apparent the Sevryan intoxication and military-political orientation of the western regions of the Republic of Armenia in the most severe historical-political stage.

The principal structure named "Special consultation" was created parallel to the military troop's command led by A.Denikin, which had political-exploring operations. On behalf of colonel M.Zinkevich, and other Russian officers, who were famous in the military-political regions of Armenia. The Armenian Republic had its representative and support. Later in the first half of the 1920s, it became the military-political representative of the Southern volunteer army in the Republic of Armenia. For many times it supported Armenians to get armaments and weapons, flour and food products also military assistance in the problem of Azerbaijan which treatment was negative. In A. Denikin's opinion, Azerbaijan was considered to be a Religious-Christian unit, in recognition of which there was an unfavorable position. Both Georgia and Azerbaijan saw the threatening danger as A. Denikin's volunteer army was getting stronger.

Therefore, they undertook steps to create a political-military alliance against Denikin; the latter had assured them that their main enemy was the Bolshevik Russia. In its turn, Armenia kept a good military-political relationship with the southern military forces of Russia. In contrast to Georgia and Azerbaijan that always kept tension in the territorial questions connected with borderline limitations with RA, A Denikin provided Armenians with food, armament and economic supply. "Special consultation" with the leadership of A. Denikin was also in the focal point of Armenia- volunteer army relationships. Hovhannes Saghatelyan, who was a diplomatic representative of Armenian Republic, was operating attached to the "Special consultation" union.

But on June 16, 1919, Georgia and Azerbaijan created a military-political alliance, which was strongly directed against the volunteer army

led by A. Denikin. On behalf of Azerbaijan it was signed in Tbilisi by a military minister Admed Mehmandarov, Minister of foreign affairs M.Dgafarov, head of the chief headquarters S.Sulkevich, on behalf of the Menshevik republic of Georgia it was signed by several generals:member of the military council I. Odishelidze,assistant of military minister A.Gedevanov, minister of foreign affairs Ye. Gegechkori, and the military minister of internal affairs N. Ramishvili. The priority for the Russian state formations as well as A. Denikin' s volunteer army creation was a global question from the point of strategy for the country's unity, total restoration and preservation. They were discursive in the policy of Transcaucasia and made great efforts to remove Great Britain and Antant from that territory. They also had crucial intention to settle down there which was evident from the outer political and military-political steps of the new- day Russia.

The monography illustrates theposition and attitude of historians, eye-witnesses, party-political leaders over the problem of the motivec, reasons and beginning of Georgian-armenian war of december 1918.In article researched not only the problem of provokating the of this war, but also the debates about the beginning of Georgian-Armenian war of 1918,in 9 or 13 decenberof 1918. The 13 of decemberis taken as the beginning of war, when the well-known Armenian commander Drowas ordered by the government of the Republic of Armenia to leadthe Armenian troops who entered the Armenian Lori in the aid ofthe population of this territory, and particularly the Armenian villageUzunlar /Ozun/ against the aggression of Georgian troops.

The first steps towards the organization of the national armed forces, including the Armenian and Georgian army corps, were taken in 1917. However, in practice they failed due to the collapse of the Caucasian army. In 1918-1921, both in the Armenian army, where there was a conflict between the commanders, the irregular military units and the regular army commanders, as well as in Georgia there was a sharp conflict-of-war situation between the People's Guard and the army, and mostly irregular, Hayduk-type detachments did their best not only to disobey the command of the regular national armies, but also to shamelessly impose their wills, both of which suffered a major blow to the army.

The reason for this was evidently the overriding privilege of the People's Guard over the army, the political invitation to it, as well as the unqualified desire of the elite of the Guards to maintain their independent status at all costs, as in the case of the Armenian commanders. In its turn, quite a number of Georgian generals resented the nationalist drawings of the Guards. The Georgian military generals, trained in the Russian spirit and in Russian military schools, called the People's Guard "an anomaly of the military organization" and advocated the use of a military-level military imperative in the creation of a regular army.

Army were considered to be an inseparable part of the State security system of the First Republic of Armenia. Army structures are those principal structures without which it is impossible to imagine an independent nation condition, independence itself and complete external policy at all. Armenian Army appeared to be an integral part of military and political, State Security system of the First Republic of Armenia. And by means of that Armenia was also considered an organized country.

A vitally important role in the safeguard of the outer defense in the newly created government, during the development of diplomatic and military services in the First Republic of Armenia, had institutions of military sub-units, particularly military attaches of diplomatic representatives of R. A.

The Armenian army, military unit, sub-units, as well as the Intelligence and counter intelligence services kept their existence though all the difficulties characteristic of that time. On its way of passing difficult organizational-political development, special military services and other military sub-units changed into efficient bodies for the outer defense of the newly made and weak government. The activities of military organization were for the formation of security system in its outer defense and were directed to its intensive development. Unfortunately, in the beginning of 1920 the government of the republic decided to liquidate that system, because of the absence of urgent means, and with this improvidences ruined the base on what the government could rely on during the further rapid development of events.

Considering the above mentioned, it’s possible to draw concrete and certain conclusions. It’s evident, that throughout 1918-1920 the Armenian Army, Police and, generally the Ministry of Internal Affairs

[MIA], Special Facilities were being created in as difficult economic-politically and socially stressed conditions, as the Armenian army was-along with its all auxiliary parts and other state institutions, as well as the separate and complicated geographic-political situation round Armenia. It was difficult to form army structures, police, and especially legal and nation-serving police and organs of Internal Affairs in such a country, where there were hundreds of thousands poverty-stricken migrants, a dark mass of over a half a million Mahometans, who were disloyally disposed to Armenia and its authorities and so on. Apparantly it was difficult to find both the necessary staff which almost didn't exist, and financial means, which are very important factors to create disciplined regular army, active police and generally organs of Internal Affairs with state-trending functions in conditions of terribly destroyed economic and improper processes for forming organs of state authorities. By the way, during those processes it was necessary to surmount certain non-state forces and particularly the bandit disposals of so-called "groups" being located away from the state or having ambitions to become a state within a state and to be self-reliable for which Armenia's difficulties were incomprehensible, and the country was their "native-residance" where everything was possible to do, including the appliance of the inquisition methods of beating, reminding of the gloomy Middle Ages, in relation to population groups or simply separate individuals, having other thoughts or not being willing to obey their vulgar ambitions. The internal complicated, economic-political complex situation, which was also deepened by the other forces, made the creation of these necessary and important state institutions more complex. Certainly, we may not pass by such an important factor, as the human factor is, which had been changed a little in quality after the times of the famous "Grief" from the remarkable «Armenian history» by M. Khorenatsy, and in fact, had also gained an opportunity by the reality of 1918-1920 ss in absence of the state-trending looks, to express all its negative attributes in difficult conditions reasoned by the scenes of hunger, as well as everything that had remained as an inheritance from the Mongol-Tartarian, Chingiz-khanian and Lenktemourian times because those disastrous waves had passed away on the Armenian nation and drown roots into the consciousness of the people, which had remained not only as a

remembrance but it had also become a phenomenon featured in the form of customs and characters, with all of its consequences. Therefore, both the Armenian army structures, police and the whole system of the Ministry of Internal Affairs tried in those years, but they couldn't resist effectively the derangements and disorders of various "mouseristic" and other groups, give a rooted solution to the problems of army leaving concerning their authority on the point of performance as well.

The archive and other documents come to prove what difficulties the young and inexperienced Armenian Army, Intelligence Service of RA had to cope with in acquiring the required information to stop the intrigues plotted by the Armed Forces and Special services of enemies. It should also be mentioned that the activities of the Armenian Army, Armenian Intelligence Services were not always really evaluated and taken into account in the political, governmental and military circles of Armenia, who reposed their hopes on the Great Powers - on their Entente allies.

After the research, it becomes clear that the Armenian Army, organs of Internal Security, Special Facilities of the First Republic of Armenia had to pass through the reformation period in the condition of geo- and political isolation, overcoming tremendous financial, economic, staff and technical difficulties, instead of the passive hope for the assistance of such great and powerful federations of Ant-Anta as Great Britain, France, The USA, facing Azerbaijan, Georgian and Turkish Kemal-Soviet syndrome. According to the grand archival documentation and other sources, it is abvious, what kind of super problematic staff problems faced the younger and inexperienced Armenian Army, Investigation and contra-investigation Special Facilities of the First Republic of Armenia being too young itself and having a lot of things to learn. As a matter of fact, being in compound political and tangled military situation Armenian Army Units, Special Facilities faced Turkey which was more powerful, had an incomparable advanced staff, economic and financial possibilities and, in addition was supported by visible and invisible powerful allies. As a result, a complete defeat of Armenia in 1920 (September-December) in the Turkish-Armenian war, when Armenian Armed Forces, Special Facilities weren't able to oppose, more or less really, to Turkish Special Facilities, as behind them there was a rude breath of authority none-

promoted to the Armenian side. At the same time, it should be mentioned that the activity of Armenian Army, Investigation Facilities was not really appreciated and taken into consideration by the political party authorities of the Republic of Armenia, as their course was to the Sevr's countries and that position influenced on the geopolitical actions taking place in the region and their results.

Summarizing all above-mentioned we can come to conclusion that the Third Republic of Armenia has got already incomparably more capacities (in all the features, although there are also unsolved issues) to arrange and direct the workshop of Armenian Army units, Investigation and contra-investigation, special Facilities of Armenia putting into practice the historical and political experience of the First as well as the Second Socialist (Soviet) Republic.

ՀԱՎԵԼՎԱԾ

Ստորև ներկայացնում ենք արխիվային մի փաստաթուղթ հայկական բանակի մասին՝ ֆրանսերեն, որը կարող է որոշակի և պատկերացում տալ ՀՀ զինված ուժերի քիչ թե շատ իրական թվակազմի, նրա գործնականում մարտունակ թվի մասին:

RENSEIGNEMENTS GENERAUX SUR L'ARMEE ARMENIENNE[1]
(1920 թ. տվյալներով)

I. EFFECTIFS DE L'ARMEE ARMENIENNE EN TEMPS DE PAIX[2]
Iº Officiers[3] 1515
Officiers d'Administration[4] 309
Medecins[5] 97
Veterinaires[6] 17
Soldats du front[7] 24715
Soldats hors rangs[8] 4795
Volontaires[9] 4023
Ouvriers[10] 311
Chevaux[11] 7847
2. ***EFFECTIFS DES ETATS-MAJORS DE BRIGADES D'INFANTERIE EN TEMPS DE PAIX***[12]
Officiers 32
Officiers d'Administration 12

---

[1] Ընդհանուր տեղեկություններ ***Հայկական Բանակի*** վերաբերյալ:

[2] Հայկական բանակի թվակազմը /անձնակազմը/ խաղաղ ժամանակաշրջանի համար:

[3] Սպաներ:

[4] Վարչակազմի սպաներ:

[5] Բժիշկներ:

[6] Անասնաբույժներ:

[7] Ռազմաճակատային զինվորներ:

[8] Աստիճանակարգից դուրս զինվորներ:

[9] Կամավորականներ:

[10] Բանվորներ:

[11] Ձիեր:

[12] Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի հետևակային բրիգադների թվակազմը խաղաղ ժամանակաշրջանում:

Medecins 4
Veterinaires 4
Soldats du front 452
Soldats hors rangs 116
Chevaux 84

3. ***EFFECTIFS DE L'INFANTERIE EN TEMPS DE PAIX***[1]

Bataillons[2] 29
Officiers 666
Officiers d'Administration 57
Medecins 31
Soldats du front 15493
Soldats hors rangs 1359
Chevaux 2111

4. ***EFFECTIFS DE LA MILICE EN TEMPS DE PAIX***[3]

Bataillons 6
Officiers 115
Officiers d'Administration 15
Medecins 5
Soldats du front 1129
Soldats hors rangs 115
Chevaux 466

5. ***EFFECTIFS DE CAVALRIE EN TEMPS DE PAIX***[4]

Escadrons[5] 17
Officiers 88
Officiers d'Administration 10
Medecins 3
Veterinaires 2
Soldats du front 2344
Soldats hors rangs 268
Chevaux 2509

6. ***EFFECTIFS DE L'ARTILLERIN EN TEMPS DE PAIX***[1]

---

[1] Հետևակի արդյունավետությունը խաղաղ ժամանակ:
[2] Գումարտակներ:
[3] Միլիցիայի թվակազմը խաղաղ ժամանակաշրջանում:
[4] Հեծելազորի թվակազմը խաղաղ ժամանակաշրջանում:
[5] Էսկադրոններ:

Batteries[2] 16
Bataillons 2
Officiers . 139
Officiers d'Administration 25
Medecins 6
Veterinaires 5
Soldats du front 2751
Soldats hors rangs 388
Chevaux 1435

7. ***EFFECTIFS DES TR UPES SERVICE AUXILLAIRE EN TEMPS DE PAIX***[3]

Bataillons 3
Compagnies[4] 33
Sections[5] 12
Officiers 233
Officiers d'Administration 21
Medecins 13
Veterinaires 2
Soldats du front 4932
Soldats hors rangs 644
Chevaux 929

8. ***EFFECTIFS DES UNITES TECHNIQUES EN TEMPS DE PAIX***[6]

Ils comprennet des bataillon du genie, des sections d'aviation, des section de radiotelegraphie, et des trains blinds[7].

9. ***EFFECTIFS DES ETABLISSEMENTS DEPENDANT DU SERVICE DE L'ARTILLERIE DU MINISTRE DE LA GUERRE***[1]

---

[1] Հրետանու թվակազմը խաղաղ ժամանակաշրջանում:

[2] Մարտկոցներ:

[3] Զինվորական նախարարության օժանդակ ծառայության ջոկատների թվակազմը խաղաղ ժամանակաշրջանում:

[4] Կարգապահական գումարտակներ, տուգանային վաշտեր:

[5] Դասակներ:

[6] Տեխնիկական միավորումների արդյունավետությունը խաղաղ ժամանակամիջոցում:

[7] Տեղեկություններ-նկատառումներ ինժեներական գումարտակների, ավիացիոն դասակի, ռադիոհեռագրային դասակի, զրահազնացքների վերաբերյալ:

DI existe des entrepots de munitions de guerre a Alexandrapol, Erivan, Karaklis, Deilijian, Novo-Bayazet.

Des ateliers pour reparation des fusils et des mitrailleuses, et des ateiliers d'artillerie a Alexandrapol.

Des ateiliers pour fabrication de cartouches a Erivan et Alexandrapol[2].

10. ***EFFECTIFS DES ETABLISSEMENTS DEPENDANT DU SERVICE SANITAIRE DU MINISTERE DE LA GUERRE***[3]

IL existe des Hopitaux a.

Erivan

Alexandrapol

Kars

Sarikamich

Kamarlu

Igdir

Delijan

Djelal Ogli.

IL existe egalement des pharmacies militaires, trains sanitaires et asiles pour convalescents[4].

Ստորագրությունը՝ Փարիզում ՀՀ ազգային պատվիրակության քարտուղարի օգնական Մ. (Միսակ) Ղազարյան
ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 160, թ. 1-5: Պատճեն, մեքենագիր:

---

[1] Զինվորական նախարարության Հրետանային ծառայությանն առընթեր օժանդակ հաստատությունների արդյունավետությունը:

[2] Ռազմամթերքի պահեստների առկայությունը Ալեքսանդրապոլում, Երևանում, Ղարաքիլիսայում, Դիլիջանում, Նոր-Բայազետում: Հրացանների և գնդացիրների վերանորոգման, հրետանային արհեստանոցները Ալեքսանդրապոլում:

Փամփուշտների պատրաստման արհեստանոցները Երևանում և Ալեքսանդրապոլում:

[3] Զինվորական նախարարությանը կից սանիտարական ծառայությունների դեղատնային հաստատությունների արդյունավետությունը:

[4] Հոսպիտալների գոյությունը Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարիղամիշում, Ղամարլուում, Իգդիրում, Դիլիջանում: Ռազմական դեղատների, սանիտարական գնացքների և առողջացողների համար հաստատությունների գոյությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՑԱՆԿ

1. ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

1. ԳԱԹ, Ա. Չոպանյանի ֆոնդ:
2. ՀԱԱ, ֆ. 45, (Հայաստանի Ազգային արխիվ), (Նազարբեկով Ֆոմա Իվանի),:
3. ՀԱԱ, ֆ. 57 (Ամենայն Հայոց կաթողիկոսի դիվան):
4. ՀԱԱ, ֆ. 91 (ՀամԿ(բ)Կ Կենտկոմին կից կուսվերահսկողության հանձնաժողովի Հայաստանի գծով կուսկոլեգիա):
5. ՀԱԱ, ֆ. 113 (ՀՀ կառավարություն):
6. ՀԱԱ, ֆ. 114 (ՀԽՍՀ Արտաքին Գործերի ժողկոմատ):
7. ՀԱԱ, ֆ. 198 (ՀՀ Առաջին հանրապետության պառլամենտ):
8. ՀԱԱ, ֆ. 199 (Հայաստանի Առաջին Հանրապետության Նախարարների խորհուրդ):
9. ՀԱԱ, ֆ. 200 (Հայաստանի Առաջին Հանրապետության):
10. ՀԱԱ, ֆ. 201 (Հայաստանի Առաջին հանրապետության Ներքին Գործերի նախարարարություն):
11. ՀԱԱ, ֆ. 202 (ՀՀ ֆինանսների նախարարություն և առևտրաարդյունաբերական պալատ):
12. ՀԱԱ, ֆ. 204 (ՀՀ Զինվորական նախարարության Գլխավոր ռազմասանիտարական վարչություն):
13. ՀԱԱ, ֆ. 206 (ՀՀ Արդարադատության նախարարություն, Արտակարգ քննիչ հանձնաժողով և իրավաբանական ընկերություն):
14. ՀԱԱ, ֆ. 206 (Հայաստանի առաջին հանրապետության արդարադատության նախարարություն, արտակարգ քննիչ հանձնաժողով և իրավաբանական ընկերություն):
15. ՀԱԱ, ֆ. 207 (ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահություն):
16. ՀԱԱ, ֆ. 216 (214-Հայաստանի առաջին հանրապետության կառավարման հիմնարկներ Վաղարշապատի (էջմիածնի) գավառում և քաղաքում):
17. ՀԱԱ, ֆ. 222 (Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդ):
18. ՀԱԱ, ֆ. 275 (276, 278 -ՀՀ Թիֆլիսի, Բաքվի դիվանագիտական ներկայացուցչություններ):

19. ՀԱԱ, ֆ. 282 (Չոպանյան Արշակ):
20. ՀԱԱ, ֆ. 288 (Թիֆլիսի հայոց ազգային կենտրոնական բյուրո):
21. ՀԱԱ,ֆ. 290 (280 –ՀՀ զինվորական հիմնարկներ):
22. ՀԱԱ, ֆ. 314 (Անձնական ծագում ունցող վավերագրերի հավաքածու):
23. ՀԱԱ, ֆ. 368 (Բաթումիի հյուպատոսություն):
24. ՀԱԱ, ֆ. 370 (Օզանյան Անդրանիկ Թորոսի):
25. ՀԱԱ, ֆ. 402 (Փաստաթղթերի հավաքածու Հայ ազատագրական շարժումների վերաբերյալ):
26. ՀԱԱ, ֆ. 404 (Իվան Քրիստափորի Բաղրամյան – Խորհրդային Միության կրկնակի հերոս, մարշալ):
27. ՀԱԱ, ֆ. 408 (Փաստաթղթերի հավաքածու սոցիալ – դեմոկրատական հնչակյան կուսակցության և ամերիկահայ հասարակական քաղաքական գործիչ Ներսես Փիլիկյանի գործունեության վերաբերյալ):
28. ՀԱԱ, ֆ. 422 (Կենճյան Անդրանիկ Մինասի – հրապարակախոս« հասարակական – քաղաքական գործիչ):
29. ՀԱԱ, ֆ. 430 (Հայ ազգային պատվիրակություն):
30. ՀԱԱ, ֆ. 450 (Փաստաթղթերի հավաքածու Հայկական հարցի վերաբերյալ):
31. ՀԱԱ, ֆ. 453 (Պետրոսյան Ապահ – հասարակական -քաղաքական գործիչ):
32. ՀԱԱ, ֆ. 571 (ՀԽՍՀ դատախազություն):
33. ՀԱԱ, ֆ. 1021 (ՀՀ ԿԿ-ի կուսակցության պատմության ինստիտուտ-ԽՄԿԿ ԿԿ-ին առընթեր ՄԼԻ-ի հայկական մասնաճյուղ):
34. ՀԱԱ, ֆ.1082 (ԳԱԱ գինեգործության և խաղողագործության ինստիտուտ):
35. ՀԱԱ, ֆ. 1120 (Աղայան Ծատուր Պավելի – պատմական գիտությունների դոկտոր, ակադեմիկոս):
36. ՀԱԱ, ֆ. 1267 (Առաջին համաշխարհային պատերազմում գործող հայ կամավորական խմբերի և զինվորական ջոկատների մասին փաստաթղթերի հավաքածու):
37. ՀԱԱ, ֆ. 1457 (Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցություն):
38. ՀԱԱ, ֆ. 4033 (ՀԿԿ ԿԿ-ի կուսակցության պատմության ինստիտուտ – ԽՄԿԿ ԿԿ-ին առընթեր ՄԼԻ-ի հայկական մասնաճյուղ):

39. Հայաստանի Հանրապետության Կենտրոնական արխիվ (Բոստոն), թղթածրար, ՍՎ. 78/ 8: թիվ 9/9, պահ. 12, դ. 3: թիվ 17/ 17, պահ. 12, թիվ 25/2: թիվ 69ա/1ա, պահ.12, դ. 5:
40. Նուբարյան մատենադարան, ֆոնդ Occupation francaise de le Cilicie 1919-1922:
41. Государственный архив Российской Федерации (ГАРФ), ф. 236:
42. Российский государственный военно-исторический архив (РГВИА), ф. 2003:
43. Российский государственный военно-исторический архив (РГВИА), ф. 2003. 2100:
44. Российский государственный военный архив (РГВА), ф. 109, 195:
45. Архив внешней политики России (АВПР), ф. Политархив:

2. ԹԵՐԹԵՐ ԵՎ ԱՄՍԱԳՐԵՐ

1. «Աշխատավոր», Թիֆլիս, 1919:
2. «Աշխատանք» (Երևան), 26 ապրիլի, 1919:
3. «Զանգ», Երևան, 20 փետրվարի, 1918:
4. «Երիտասարդ Հայաստան» (Ս-դ հնչական կուսակցության կիսաշաբաթաթերթ), Չիկագո, 1918, 1921:
5. «Ժողովուրդ», Երևան, 1918-1919:
6. «Ժողովրդի ձայն» (Կ. Պոլիս), 1920 թ. , օգոստոսի 15:
7. «Կայծ» (Երևան), թիվ 24, 30 հունվարի, 1919:
8. «Կառավարության լրաբեր», 27 սեպտեմբերի, 1918, № 8, 1920:
9. «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», 1985:
10. «Հայաստանի աշխատավոր», Երևան, 1919:
11. «Հայ զինվոր», Երևան, հունիս, 1994:
12. «Հայրենիք» (Բոստոն), ամսագիր, 1943-1947:
13. «Հորիզոն», Թիֆլիս, 1914, 1917, 1918:
14. «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1919-1920:
15. «Մարտիկ», Փարիզ, 2004:
16. «Մշակ», Թիֆլիս, 1918-1920:
17. «Մնաթոբի», Թիֆլիս, 1989:

18. «Յառաջ», Երևան, 1918-1920:
19. «Ռազմիկ», Երևան, Զորական շաբաթաթերթ, 1920:
20. Սոցիալիստ-հեղափոխական», 1919:
21. Վերածնունդ», Փարիզ, 1918:
22. «ՎԷՄ», համահայկական հանդես, Երևան, 2014:
23. «Ուրբաթ», Երևան (շաբաթաթերթ), 1990:
24. «Армянский вестник, Москва, 1916:
25. «Борьба». Тифлис, 1920:
26. Знамя труда», Баку, 17 июня, 1919 :
27. «Кавказское слово» Тифлис, 1914, 1919:

3. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ահարոնյան Ավ., Սարդարապատից մինչև Սևր և Լոզան. Քաղաքական օրագիր. 1919-1927, Եր., ԵՊՀ հրատ., 2001:
2. Արծրունի Վ., Հայ-տաճկական պատերազմը, Հայ սպայութիւնը, Շատախ, Եր., «Մուղնի» հրատ.», 2002:
3. Բաբալեան Արտ., Հայաստանի անկախութեան պատմութիւնը եւ այլ յիշատակներ, Գլենդել, «Նավասարդ» հրատ., 1997:
4. Բաբալեան Արտ., Էջեր Հայաստանի անկախութեան պատմութիւնից, Գահիրէ, 1959:
5. Գ. արք. Յովսեփյան, Կարսի անկումը 1920 թ., Օրագրություն, «Բանբեր Հայաստանի Արխիվների», 1989, № 3, էջ 105-160:
6. Գիւլխանդանեան Աբր., Անդրկովկասի հանրապետութիւնները// «Հայրենիք», Բոստոն, 1967, N 3, էջ 9-17, N 4, էջ 70-83:
7. Թումանյան Հովհաննես, Երկերի լիակատար ժողովածու (ԵԼԺ) 10 հատորով, հտ. 10, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ. Եր., 1999:
8. Իվանե Ջավախիշվիլու արխիվից, Հայ-վրաց գրական, պատմամշակութային հարցերը վրաց մամուլում (1988-1990), Նյութերի ժողովածու. Պրակ առաջին, կազմեց, առաջաբանը գրեց և վրացերենից թարգմանեց *Հրայր Բայրամյանը,* Եր., «Զանգակ–97», 2001, էջ 59-60:

9. Իրազեկ Յ., Մօտիկ անցյալից. Պատմական դէպքեր. Ապրումներ, 1917-1922, Պէյրութ, տպ. Համազգայինի, 1956:
10. Իշխանեան Ե., Լեռնային Ղարաբաղ (1917-1920), Եր., «Հայաստան», 1999:
11. Լեո, Անցյալից: Հուշեր, թղթեր, դատումներ, Թիֆլիս, «Խորհրդային Կովկաս», 1925:
46. Լեո, Անցյալից: Հուշագրություն, Եր., 2009:
12. Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը. Բ տպագր., Բէյրութ, տպ. «Համազգայինի», 1968:
13. Կարսի մարզը Հայաստանի Հանրապետութեան կազմում (1919 ապրիլ - 1920 հոկտեմբեր),. Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանեանի յուշերը, աշխ. Վլ. Յարութիւնեանի, Եր., Հեղ. Հրատ., 2018:
14. Համո Օհանջանյանի նամակները Ալեքսանդր Խատիսյանին, 6 ապրիլի-22 ապրիլի 1920 թ., «Բանբեր Հայաստանի արխիվների», 1996, N 1, էջ 71-88:
15. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, խմբագիր Ջ. Կիրակոսյան, Երևան, 1972:
16. Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ: 1918-1920 թթ. /գլխ. խմբագիր և կազմող՝ Ա. Վիրաբյան, Եր., Հայ. ազգ. արխիվ, 2009:
17. Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ: 1918-1920 թթ. /գլխ. Խմբագիր և կազմող՝ Ա. Վիրաբյան, Եր., Հայ. ազգ. արխիվ, 2014:
18. Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.: (Քաղաքական պատմություն), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, (Կազմողներ՝ Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան (ղեկ.), Վ. Մելիքյան և ուրիշներ), Եր., ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000:
19. Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս). Փաստաթղթերի և նյութերի ժողովածու/ կազմող, առաջաբանի և ծանոթագր. հեղինակ՝ Հ. Կ. Սուքիասյան, երկրորդ լրացված և բարեփոխ. հրատ., Եր., Հայ. Ազգ. արխիվ, 2009:

20. Հայ-վրացական սահմանավեճը փաստաթղթերի լեզվով: Կազմեց Համո Կ. Սուքիասյանը, «ՎԷՄ», համահայկական հանդես, Դ (Ժ) տարի, 2012, թիվ 4 (40), հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 194-216:
21. Հարությունյան Մ., Հայ-վրացական հարաբերությունները 1918-1919 թվականներին (նամակներ, զեկուցագրեր), Եր., ՀՀ ԳԱԱ պատմ. Ին-տ, 2017:
22. Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1960, 643 էջ:
23. Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները, Եր., 1998:
24. «ՀՀ օրենքների հավաքածու. 1919 թ.»:
25. «ՀՀ օրենքների հավաքածու. 1920 թ.»:
26. «Նախիջևան-Շարուրը 1918-1921 թթ.», Փաստաթղթեր և նյութեր, «Բանբեր Հայաստանի Արխիվների». 1993. № 1-2, էջ 137-183:
47. Շահումյան Ս., երկերի լիակատար ժողովածու (ԵԼԺ), հ. 3, Եր, 1978:
48. Չալխուշեան Գ., Ի՞նչ էր եւ ի՞նչ պիտի լինի մեր ուղին, Վիեննա, 1923:
27. Ջամալեան Արշակ, Հայ-վրացական կնճիռ / Արշակ Ջամալեան: Առաջաբանը եւ ծանոթագր.՝ Խ. Ստեփանեանի: Խ. Աբովեանի անուան ՀՊՄՀ, Եր., «Միտք» վերլուծական կենտրոն, 2011:
28. Ջամալեան Արշակ, Հայ-վրացական կնճիռը, «Հայրենիք», (ամսագիր), Բոստոն, 1928, N 6, էջ 75-101, 1928, N 7, էջ 145-152, 1928, N 8, էջ 122-128, 1928, N 9, էջ 113-119, 1928, N 10, էջ 100-107, 1928, N 11, էջ 118-124, 1928, N 12, էջ 123-135: N 4, 1929, էջ 86-97, 1929, N 5, էջ 115-125, 1929, N 6, էջ 135- 157:
29. Ջամալյան Ա., Հ. Քաջազնունին և Հ. Յ. Դաշնակցությունը, Եր., Հայկ. Ուսումնասիրությունների ԱՆԻ հիմնադրամ, 2016:
30. Ոգուն չապավինելու արդիւնքը. (Կարսի անկումը 1920 թ.: հոկտեմբերի 30-ին: Գարեգին Արք. Յովսեփեանցի յուշագրութիւնը եւ փաստաթղթերը), Եր., 2002:
31. Ռուբէն, Հայ Յեղափոխականի մը յիշատակները. Է. Հատոր. Գ. Արտասահման, Սասուն եւ Հայաստանի Հանրապետութիւն, Հրատարակութիւն, Թեհրան, 1982:
32. Սահակեան Յովհ., Երկու տարի հայկական բանակին մեջ, Փարիզ, Հրատար. Հայ կամաւորներու եւ մարտիկներու Միութեան, 1937:

33. Սառիկյան Հ., Հիշողություններ. 1878-1924, Եր., Հայաստանի ազգային արխիվ, 2015:
34. Սասունի Կ., Արևմտյան Հայաստանը Ռուսաստանի տիրապետության ներքո, Բոստոն, 1937:
35. Սասունի Կ., Հայ-թրքական պատերազմը, Պէյրութ, տպ. Համազգայինի, 1969:
36. Սասունի Կ., Հայ-թրքական պատերազմը, «Հայրենիք», 1926, № 5 (41):
37. Սասունի Կ., Հայ-թուրքական պատերազմը// «Հայրենիք» (Բոստոն), 1926, թիվ 11, Սեպտեմբեր:
38. Սասունի Կ., Մայիսյան խռովութիւնները և թաթարական ապստամբ շրջանները: Հայաստանը 1920-ին, Պէյրութ, տպ. «Համազգայինի», 1968:
49. Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Բէյրութ, 1958:
39. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., «Հայաստան» հրատար., 1993:
40. Վրացեան Ս., Հին թղթեր նոր պատմութեան համար, Պէյրութ, տպ. «Մշակ», 1962:
41. Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, Դէպքեր. Դէմքեր. Ապրումներ. Դ հատոր, Պէյրութ, տպ. «Մշակ», 1965:
42. Վրացեան Ս., Կեանքի ուղիներով. Դէպքեր, Դէմքեր, Ապրումներ. Հատոր Ե, Պէյրութ, տպարան «Համազգային», 1966:
43. Վրացեան Ս., Խարխափումներ «Հ.Յ.Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս» գրքի առթիւ, Պոսթընն, «Հայրենիք» տպարան, 1924:
44. Վրացի մենշեւիկները եւ անգլիական զօրավարները. Գրեց Մասուրեան Ս., «Հայրենիք», Բոստոն, Յունուար, 1928, № 3 (63), էջ 149:
45. Տէր-Հակոբեան Յ., Հայաստանի վերջին աղետը: Քէմալական արշաւանքը, Կարսի եւ Ալէքսանդրաբօլի անկումները, հայ բանակին քայքայումը, յարձակման եւ քայքայման պատճառները պալշէվիքեան տիրապետութիւնը: Անտիպ փաստաթուղթեր դիւանագիտական գրեր եւ բազմաթիւ պատկերներ/, Կ. Պօլիս: տպ. Մ. Տէր Սահակեան, 1921:
46. Փաստրմաճեան Հ., Լեռնային պատերազմ, Փարիզ, հրատ. Հայ Կամաւորներու եւ մարտիկներու Միութեան, 1938:
47. Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. 2, Պէյրութ, 1953:
48. Քաղիաճներ Հ. Յ. Դ. 9-րդ Ընդհանուր Ժողովի որոշումներից, Եր., «Ուրարդիա» հրատ., 1920:

49. Քաջազնունի Հովհ., Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլ ևս. Վիեննա, Մխիթարեան տպարան, 1923:
50. Քաջազնունի Յովհ., Հայաստանի Հանրապետութիւն, Երեւան, «Մ. Վարանդեան» հրատարակչութիւն, 1993:
51. Քաջազնունի Յովհաննես, Յետ մահու: Պատմուածքներ, Յուշեր, յօդուածներ. Հրատար. համար պատր. Ս. Վրացեանը, Պէյրութ, հրատ. «Համազգային» ընկեր., տպ. «Մշակ», 1965:
52. Քաջազնունի Յովհ., Ազգ եւ Հայրենիք. Գ.լրացված հրատարակություն, «Հայրենիք» մատենաշար, թիվ, Եր., «Հայրենիք» ակումբ, 2014:
53. Օրջոնիկիձե Գ. Կ.. Ընտիր հոդվածներ և ճառեր. 1918-1937, Եր., Հայպետհրատ, 1950:
54. Авалов З. Д., Независимость Грузии в международной политике. 1918-1921 гг. Воспоминания. Очерки, Париж, Б. и, 1924:
55. Армения в документах Государственного департамента США 1917-1920 гг. /Сост. и пер. с англ. Г. Г. Махмурян. Ред. В. Казахецян.- изд. 2-е, доп.- Ер.: Ин-т истории НАН Армении; 2012:
56. Армяне в первой мировой войне (1914-1918 гг.): Нац. Архив Армении, Ин-т социальных и политических исследований Черноморско-Каспийского региона, Москва: Редакционно-издательский дом «Российский писатель», 2014:
57. Багиров Ю. А., Из истории советско-турецких отношений в 1918 -1920 гг.: По материалам Аз. ССР, Баку, Изд-во АН Аз. ССР, 1965:
58. Байков В., Воспоминания о революции в Закавказье. 1917-1920 гг. Архив Русской революции, изд. И. В. Гессеном, Т. 9, Москва, Политиздат, Терра, 1991, с. 91-195:
59. Борьба за Закавказье (1917-1921), Институт стратегических исследований Кавказа, (Баку, Азербайджан), Серия «История Кавказа», Стокгольм, CA&CC Press®, 1958:
60. Борьба за победу Советской власти в Грузии. Документы и материалы (1917-1921 гг.). Сост. С. Д. Беридзе, Тбилиси, Гос. изд-во «Сабчота Сакартвело», 1958:
61. Великая Октябрьская Социалистическая революция. Энциклопедия. Издание третье, дополнение. Москва, «Советская энциклопедия», 1987:

62. Германские оккупанты в Грузии в 1918 году. Сборник документов и материлов. Составил и подготовил к печати М. М. Габричидзе, Тбилиси, Госиздат Груз. ССР, 1942:
63. Деникин А. И., Очерки русской смуты. Вооруженные силы Юга России. Распад Российской империи. Октябрь 1918– январь 1919 (Воспоминания. Мемуары), М., 2002:
50. Деникин А. Очерки российской смуты, т. IV. Берлин, 1924-1926:
64. Деникин А. И., Очерки русской смуты: В 3-х книгах, кн. 3, М., 1992, Т. 4, 5, М., Айрис-Пресс, 2003:
65. Директивы командования фронтов Красной армии, Т. 4, М., Воениздат, 1978:
66. Дни господства меньшевиков в Грузии (документы и материалы), Сб. сост. Г. Девдариани, Тифлис, Госиздат Грузии, 1931, 573:
67. Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлись, Типография Прав. Груз. Республ., 1919:
68. Из истории иностранной интервенции в Армении в 1918 г. Документы и материалы, Ер., Изд-во ЕГУ, 1970:
69. Жордания Н. Н., За два года (с 1-го марта 1917 годапо 1-е марта 1919 года). Доклады и речи, Тифлис, Изд-во Груз. Прав-ва, 1919:
51. Жордания Н., Большевизм, Берлин, изд-во ЦК СДРП Грузии, 1919:
52. Жордания Н. Н., Моя жизнь, Стенфорд, The Hoover Inst. on War, Revolution and Peace, 1968:
70. Кемаль Мустафа, Путь новой Турции, т. I, 1919, М.: Гос. Изд-во «Литиздат» Н.К.И.Д., 1929:
71. Кемаль Мустафа, Путь новой Турции, т. II, 1919-1920, М.: Гос. Изд-во «Литиздат» Н.К.И.Д., 1932:
72. Кемаль Мустафа, Путь новой Турции, т. III, 1920-1921, М.: Гос. Изд-во «Литиздат» Н.К.И.Д., 1934:
73. Кемаль Ататюрк, Избранные речи и выступления, М., Изд-во ”Прогресс”, 1966:
74. Квинитадзе Г. И., Мои воспоминания в годы независимости Грузии. 1917-1921, YMCA-PRESS 11, rue de la Montagne-Ste-Geneviève 75005 Paris 1985 (на рус. языке):

75. Корганян Г., Участие армян в первой мировой войны на Кавказском фронте, Париж, 1927:
76. Нагорный Карабах в 1918-1923 гг., Сборник документов и материалов, Ер., Изд-во АН Армении, 1992:
77. Письма О. М. Качазнуни А. И. Хатисяну, Нанбер Айастани архивнери, 3 (93), 1991, с. 92-127:
78. Туманян М., Дипломатическая история Республики Армения. 1918-1920 гг., Ереван, Нац. Архив Армении, 2012:

4. ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա/ Հայերեն

1. Ազատյան Հ., Հայերը միջազգային դիվանագիտական խաչմերուկնե-րում, Եր., «Նուշիկյան ասոցիացիա» ՍՊԸ, 2009:
2. Աթանասեան Ա., Կիլիկիոյ մօտաւոր անցեալէն (Պատմական ակնարկ), Առաջաբան եւ նօթեր Մ. Ս. Դաւիթ-Բէկի, Փարիզ, 1937:
3. Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց, Գահիրէ, 1952:
4. Ալոյան Լ. Ա., «Մշակ» լրագրի հրապարակախոսությունը 1905-1921 թթ., Եր., Ոսկան Երևանցի, 2003:
5. Աղայան Ծ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976:
6. Ամեմեան Խ., Հայկական լէգէոնը, «Համազգային»-ի տարեգիրք, Պէյրութ, 1953:
7. Ամէմեան Լ., Եգիպտահայ տարեցոյց 1926, Բ տարի, Աղեքսանդրիա, 1925:
8. Ամէմեան Լ., Եգիպտահայ տարեցոյց 1925, Աղեքսանդրիա, 1924:
9. Ամէմեան Խ., Էջեր կամաւորի օրագրէս, Պէյրութ, 1967:
10. Ամուրեան Ա., Հայ Դատը: Հայ ժողովրդի ազատագրական ճիգերը, Թեհրան, 1977:
11. Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. 3 (1901-1918), Վենետիկ, 1926:

12. Առաջին աշխարհամարտը և հայ ժողովուրդը (պատմություն և արդիական խնդիրներ). 1-2 հոկտեմբերի, 2014 թ. Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ, 2015:
13. Ավագյան Ք., Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (Սկզբնավորումից մինչև 1924 թ.), Եր., 2000:
14. Ավագյան Ռ., Հանցավորությունը Հայաստանի Առաջին Հանրապետությունում (1918-1920 թթ.), Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ, 1995:
15. Ավագյան Ռ., Հանցավորությունը Հայաստանում, Եր., «Նոյյան տապան», 1997:
16. Ավետիսյան Հ., Հայկական Հարցը 1918 թվականին, Եր.: Բարձ. դպրոց, 1997:
17. Ավետիսյան Հ., Հայոց ազգային միասնության հաղթանակը. 1918 թ. մայիս, Եր., ՀՀ ԳԱԱ պատմ.ին-տ, 1998:
18. Աւետեան Մ., Հայ ազատագրական ազգային յիսնամեայ (1870-1920) յուշամատեան եւ Ջօր. Անդրանիկ: Վերլուծական հայեցողութեամբ եւ վաւերական տուեալներով, Փարիզ, 1954:
19. Ատանայի Հայոց պատմութիւն, Խմբագրեց՝ Բիւզանդ Եղիայեան, Անթիլիաս, 1970:
20. Ատանայի Հայոց պատմութիւն, Խմբագրեց՝ Բիւզանդ Եղիայեան, Անթիլիաս, Տպարան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1970:
21. Ատանայի Հայոց պատմութիւն, էջ 426: Գասպարյան Ռ., Հայկական լեգեոնը, էջ 8: Լազեան Գ., Հայաստան եւ Հայ Դատը (Վաւերագրեր), Գահիրէ, 1946:
22. Արարա: Նուիրուած Արարայի հինգերորդ տարեդարձին: Հրատարակութիւն Հայ լէգէոնական միութեան, Պոսթոն, 1923:
23. Արզումանյան Մ., Հայաստանը 1914-1917 թվականներին, Եր., 1969:
24. Արզումանյան Մ., Արհավիրքից վերածունդ, Երևան, 1973:
25. Բախչինյան Ա., Հայազգի գործիչներ, Եր., 2002:
26. Բորեան Բ. Յար., Հայաստան. միջազգային դիվանագիտութիինը եի ԽՍՀՄ-ը, հ. 1, Եր., ՎՄՎ-Պրինտ, 2018:
27. Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Եր. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999:
28. Գալուստեան Գր. (Կիլիկեցի), Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զէյթուն, Նիւ Եորք, 1934:

29. Գանգրունի Հր., Հայաստան. 1920-1921 եւ միջազգային դիվանագիտութիւնը, Պէյրութ, 1986:
30. Գասպարյան Ե., Ֆրանսիան և Մեծ եղեռնը (1915-1918 թթ.), Եր., 2000:
31. Գասպարյան Ռ., Հայկական կոտորածները Կիլիկիայում (XIX դարի 90-ական թթ.-1921 թ.), Եր., 2005:
32. Գարամանուկեան Ա., Հայկական Լեգէոնը պատմական, իրաւական ու քաղաքական հարցերու լոյսին տակ եւ վաւերագրեր, «Հայկազեան հայագիտական հանդէս», հ. Ե, Պէյրութ, 1974:
33. Գ.ծ.վարդ.Պալաքեան, Հայ գողգոթան։ Դրվագներ հայ մարտիրոսագրութենէն. Պեռլինէն դէպի Տէր-Զօր, 1914-1920, հ. Ա, Վիեննա, 1922:
34. Գուշակեան Թորգոմ պատրիարք, Ամբողջ երկեր, հ. Զ, Հնդկահայք: Տպաւորութիւններ եւ տեղեկութիւններ, Երուսաղեմ, 1941:
35. Գևորգյան Հ., Դրո, Եր., Հեղ. հրատ., 2014:
36. Դալլաքյան Կ., Արշակ Չոպանյան, Եր., 1987:
37. Դիւցազնական Ուրֆան եւ իր հայորդիները, Աշխատասիրեց՝ Արամ Սահակեան, Անթիլիաս, 2014:
38. Եափուճեան Ա., Հայ ժողովուրդին անկախութեան պայքարը Կիլիկիոյ մէջ 1919-1921 թթ., Գահիրէ, 1977:
39. Եսայան Ա., Հայաստանի միջազգային-իրավական դրությունը. 1920-1922 թթ., Եր., «Միտք» հրատ., 1967:
40. Թաթարեան Մ., Կամաւորի մը յուշերը, Անթիլիաս, 1960:
41. Թէոդիկ, Ամէնուն տարեցոյցը, ԺԶ տարի, Կ. Պոլիս, 1922:
42. Թեքեյան Շառլ-Տիրան, Մուսա լեռան հայերի փրկությունը: Հիշողության էջեր, Եր., 2002:
43. Թորոսյան Շ. Ա., Ծովային ելքի հիմնահարցը Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունում 1919-1920 թվականներին, Եր., ԵՊՀ հրատ., 2017:
44. Թորոսյան Շ., Կիլիկիայի հայերի ազգային-ազատագրական շարժումները 1919-1920, Եր., 1987:
45. Թորոսյան Ս., Դարդանելից մինչև Պաղեստին, Թարգմանեց անգլերեն բնագրից Լիլիթ Թութխալյանը, Եր., 2012:
46. Իսկէնտէրեան Յ., Սուէտիոյ ապստամբութիւնը, Գահիրէ, 1915:

47. Լանգ Դեյվիդ Մարշալ, Ուոքըր Քրիստոֆեր Ջեյմս, Հայերը (Հայ ժողովրդի պատմություն), Խմբ. Կ. Մ. Խուդավերդյանի, Երևան, Հայկ. հանր. գլխ. խմբ., 1992:
48. Խաչատրյան Ա., Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, Եր., Հայ. Ազգային արխիվ, 2010:
49. Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թվականներին, Եր., ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007:
50. Խուրշուդյան Լ., Հայաստանի բաժանումը 1920 թ., Երկրորդ հրատ., Եր., ԵՊՀ հրատ., 2002:
51. Ջոհրաբյան Է., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերություններըը, Եր., «Ոսկան Երևանցի», 1997:
52. Ջոհրաբյան Է. Ա., Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները» (1918 թ. դեկտեմբեր – 1920 թ. ապրիլ), Եր., 2002:
53. Կամաւորը (Արարայի յաղթանակի 10-րդ տարեդարձի առթիւ), հրատարակութիւն Գահիրէի Հայ Լէգէոնական Միութեան, Գահիրէ, 1928:
54. Կարապետյան Հ., Սևրի պայմանագիրը Հայոց ճակատագրում, Եր., 2004:
55. Կարապետյան Մ., Հայաստանի Հանրապետության բանակը (1918-1920 թթ), Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1996:
56. Կարապետյան Մ., Հայկական կամավորական խմբերը և ազգային գումարտակները Կովկասյան ռազմաճակատում (1914-1917 թթ.), Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999:
57. Կարապետյան Մ. Ս., Հայաստանը 1912-1920 թվականներին. Ուսումնական ձեռնարկ բուհերի համար, Եր., «Զանգակ-97» հրատ., 2003:
58. Կարապետյան Ս., 1920 թ. հայ-թուրքական պատերազմը և Սովետական Ռուսաստանը, Եր., «Հայաստան» հրատ., 1965:
59. Կէնճեան Ա., Հալածականի յուշեր 1914-1918, Պէյրութ, 1964:
60. Կէօքճեան Վ., Հայկական Կիլիկիոյ ազատագրական պայքարը (Յուշեր եւ նօթեր), Պոսթըն, 1979:
61. Կնյազյաախմուր քաղաքականությունը 1918-1920 թթ., Եր., Հեղ. Հրատ., 2008:
62. Կեսար Ա., Այնթապի գոյամարտը, Պոսթըն, 1945:
63. Կիրակոսյան Ջ., Արևմտյան Հայաստանը Առաջին աշխարհամարտի տարիներին, Եր., 1971:

64. Հակոբյան Ա, Հ. Յ. Դ. 9-րդ ժողովը, Եր., «Մ. Վարանդյան» հրատ., 1994:
65. Հակոբյան Ա. Հայաստանի Հանրապետության պարբերական մամուլի պատմություն (1918-1920 թթ.), Եր., Հեղ. Հրատ., 2005:
66. Հակոբյան Ա, Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), Եր., ՀՅԴ հրատ., 2005:
67. Հակոբյան Ար., Հայաստանի Հանրապետություն (1918-1920 թթ.), Եր., «Հայաստան» հրատ., 1992-35 էջ, Եր., 2018:
68. Հաճնոյ հերոսամարտի 90ամեակի գիտաժողովի նիւթեր եւ վաւերագրեր ու լուսանկարներ, Կազմեց եւ խմբագրեց՝ դոկտ. Անդրանիկ Տագէսեանը, Պէյրութ, 2013:
69. Համառօտ տեղեկագիր Հ. Կ. Ազգային Բիւրօի գործունէութեան. 1915-1917 թթ., Թիֆլիս, ա.թ.:
70. Հայ պարբերական մամուլը 1794-1980 թթ., Եր., 1988:
71. Հայաստանի պարգևները (1918-1939), Երևան, «Կոլաժ» ՍՊԸ, 2011:
72. Հայկական Հարց. Հանրագիտարան, Եր., Հայկ. Հանր. գլխ. Խմբագր., 1996:
73. Հայկական Սովետական Հանրագիտարան (ՀՍՀ). «Սովետական Հայաստան», Եր., 1987:
74. Հայ ժողովրդի պատմություն, հ. VII, (1917-1941), Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967:
75. Հայ ժողովրդի պատմություն, հատոր 6, Եր., 1981:
76. Հայկ Վ., Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը, Նիւ Եորք, 1959:
77. Հայոց պատմություն. Հատոր IV, Գիրք առաջին (նորագույն ժամանակաշրջան.1918-1945 թթ.), Եր., ԳԱԱ Պատմ. ինստ-տ, 2012:
78. Հայկական համառոտ հանրագիտարան, հ. 4, Երևան, 2003:
79. Հայկական կամավորների խմբերը և ազգային գումարտակները Կովկասի ճակատում (1914-1917), Եր., 2011:
80. Հայրունի Ա., Հայկական խնդիրը Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ 1918 թվականին, Եր., ԵՊՀ, 2013:
81. Հարությունյան Ա. Հ., Առաջին համաշխարհային պատերազմի ռազմադիվանագիտական պատմությունից, Եր., «Հայաստան» հրատ., 1983:
82. Հարությունյան Ա. Հ., Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները, Եր., Հայկ. ԽՍՀ ԳԱ հրատ., 1984:

83. Հարությունյան Կլ. Ա., Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945 թթ., Եր., «Զանգակ – 97» հրատ., 2002:
84. Հատիկյան Հ., Արևմտահայությունն Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների թիրախում 1878-1923 թթ., Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2016:
85. Հովակիմյան Բ., Հայոց ծածկանունների բառարան, Երևան, 2005:
86. Հովհաննիսյան Արծ., Ամենահայտնի ռազմական ինքնաթիռները: Ուսումնասիրություն, Եր., «Անտարես», 2005:
87. Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն: Հատոր I. Առաջին Տարին, 1918-1919, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2005:
88. Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն: Հատոր II. Վերսալից-Լոնդոն, 1919-1920, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2014:
89. Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն: Հատոր III. Լոնդոնից Սևր, փետրվար-օգոստոս, 1920, ՀՀ ԳԱԱ, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2015:
90. Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն: Հատոր IV. Սալի և մանգաղի միջև. Մասնատում և խորհրդայնացում, ՀՀ ԳԱԱ, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2016:
91. Ղուլյան Յ., Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների պատմությունից. 1918-1920 թթ., Եր., «Եգեա» հրատ., 2009:
92. Ճիզմեճեան Մ., Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց 1890-1925, Ֆրէզնօ, 1930:
93. Մելիքյան Վ., Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (1917 թ. մարտ-հոկտեմբեր), Եր/, 1997:
94. Մելիքյան Վ., Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում: Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը և հայ իրականությունը (1917 թ. նոյեմբեր -1918 թ. փետրվար), Եր., ՀՀ ԳԱԱ պատմ. ին-տ, 2010:
95. Մելիքյան Վ. Մ., Պայքար Բաքվի համար (1917 թ.- 1918 թ. ապրիլ), Եր.: ԵՊՀ հրատ., 2018:
96. Մելքոնյան Ա., Ջավախքը XIX դարումն XX դարի առաջին քառորդին, Եր., «Զանգակ-97» հրատ., 2003:
97. Մելքոնյան Է., Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության պատմություն, Երևան, 2005:

98. Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), Աշխատասիրությամբ Արթուր Պեյլերյանի, առաջաբանը՝ Ժան-Բատիստ Դյուրոզելի, ֆրանսերենից թարգմ. Վարուժան Պողոսյանը, հ. I, Երևան, 2005:
99. Միհրանեան Ա., Ինչպե՞ս պետք է գրավել Թրքահայաստանը /Զօր Անդրանիկի կարծիքը/, Կ. Պոլիս 1921:
100. Մուրատեան Գ., Հայրենիքին ուխտաւորները վրեժին ճամբուն վրայ, Կ. Պոլիս, 1920:
101. Յարութիւնեան Ա. Յ., Կովկասեան ռազմաճակատը 1914-1917 թւերին, Թեհրան, տպ. «Ալիք», 1977:
102. Յուշամատեան Մուսա լերան, Խմբագրեցին Մարտիրոս Գուշագճեան եւ Պօղոս Մատուռեան, Պէյրութ, 1970:
103. Նազարյան Ա., Հայկական զորամասերի կազմավորումը Կովկասյան ճակատում (1914-1918 թվականներ), Եր., «Զանգակ-97» հրատ., 1999:
104. Նազարյան Ա., Հայ կամավորական շարժումը 1914-1916 թվականներին և Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, Եր., «Հայ Դատ» հիմնադրամ, 2011:
105. Նաթանեան Մ., Նիւթեր ժամանակակից պատմութեան համար: Ինչ պատրուակով Կիլիկիան կրկին թուրքերուն տրուեցաւ, «Պայքար» նոր տարւոյ բացառիկ, Բոստոն, 1950:
106. Նասիպեան Ագապի, Բրիտանիա եւ Հայկական հարցը. 1915-1923, Բէյրութ, Հրատ. Հ. Բ. Ը. Միութեան Վահրամ Ապտալեան մշակութային հիմնադրամի, 1994:
107. Ներսիսյան Ա., «Ռուբեն», Եր., 2007:
108. Ներսիսեան Ա., Մովսէս Տէր Գալուստեան, Երևան, 2015:
109. Չոպանյան Ա., Նամականի, Երևան, 1980:
110. Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան 1887-1962, Խմբագիր՝ Ա. Կիտուր, հ. Ա, Պէյրութ, 1962:
111. Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան 1887-1963, խմբ. Ա. Կիտուր, հ. Բ, Պէյրութ, 1963:
112. Պարթեւեան Ս., Արարա: Հայկական լէգէոնը, Իզմիր, 1919:
113. Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության առնչությունները Ռուսաստանի Հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918 թ., հունիս-նոյեմբեր), Եր., ԵՊՀ հրատ., 2004, 2006:

114. Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918-1920 թթ.), Եր., ԵՊՀ հրատ., 2011:
115. Պետրոսյան Գ., Անդրկովկասը դիվանագիտական հորձանուտում. Հայոց անկախ պետականության կերտումը (1917 թ. փետրվար -1918 թ. հունիս), Եր., ԵՊՀ հրատ., 2018:
116. Պետրոսյան Վլ., Հայաստան. 1918 թվական, Եր., Հեղ. Հրատ., 2013:
117. Պօղոսեան Յ., Հաճընի ընդհանուր պատմութիւնը եւ շրջակայ Գօզանտաղի հայ գիւղերը, Լօս Անճէլըս, 1942:
118. Պօղոսեան Ս., Թրքահայ սպայի մը օրագիրը, 1916-1919, հ. Բ, Փարիզ, 1947:
119. Պողոսյան, Ս. Ա., Հայոց ցեղասպանությունը: (Պատճառները, ընթացքը, հետևանքները) / Ս. Պողոսյան, Երևան: Զանգակ -97, 2005:
120. Պրեմօն Է., Կիլիկիա 1919-1921 Շրջանին, թրգ.՝ Տիգրան Պօյաճեան, Պոստոն, 1921:
121. Պօյաճեան Տ., Հայկական լէգէոնը: Պատմական Յուշագրութիւն, Ուօթրթաուն, 1965:
122. Ռոստոմ: Նամականի (Մահուան ութսունամեակին առթիւ), Պէյրութ, 1999:
123. Սալըի Մ., Ալեակներ եւ խլեակներ: Հայ վրանաքաղաքի տարեգիրքը, Աղեքսանդրիա, 1919:
124. Սահակյան Ռ., Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ., Երևան, 1970:
125. Սահակեան Յովհ., Երկու տարի հայկական բանակին մէջ, Փարիզ, Հրատ. Հայ կամաւորներու եւ մարտիկներու Միութեան, 1937:
126. Սահակյան Ռ., թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ., Երևան, 1970:
127. Սահակյան Ռ., «Արևմտյան Հայաստանի ռազմաքաղաքական և վարչատնտեսական իրավիճակը (1914 թ. հուլիս –1917 թ. փետրվար, Եր., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2015:
128. Սարաֆեան Գ., Պատմութիւն Անթէպի Հայոց, հ. Ա, Լոս Անճէլըս, 1953, էջ 1071-1072:
129. Սարաֆեան Գ., Պատմութիւն Անթէպի Հայոց, Բ. հատոր, Լոս Անճէլըս, 1953:

130. Սարգսյան Ե. Ղ., Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում. 1914-1918, Եր., «Հայաստան» հրատ., 1964:
131. Սարդարյան Կ., Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921 թթ., Եր., «Նաիրի» հրատ., 2003:
132. Սարդարյան Կ., Հայաստանը համաշխարհային հեղափոխության արևելյան խաչմերուկում (Ինչպե՞ս կործանվեց Հայաստանի Հանրապետությունը), Եր., «Նաիրի» հրատ., 2007:
133. Սաֆրաստյան Ռ. Ա., Մուսթաֆա Քեմալ. Պայքար Հայաստանի Հանրապետության դեմ (1919-1921 թթ.)/ Ռ. Ա. Սաֆրաստյան; ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստ-տ, Եր.: «Տիր» հրատ., 2019:
134. Սիմոնյան Հր. Ռ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Եր., «Հայաստան», 1991:
135. Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Գ, Եր., 1990:
136. Վիրաբյան Վ., Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. ՀՀ կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները (Հայոց Քաղաքական պատմության էջերից), Եր., «ՀՊՃՀ» հրատ.,1999:
137. Վիրաբյան Վ., Հայկական հետախուզությունը Առաջին Հանրապետության տարիներին (1918 -1920 թթ.), Եր., «Ասողիկ» հրատ., 2003:
138. Վիրաբյան Վ. Հ., 1918 թ. վրաց-հայկական պատերազմը, ՀՀ կատավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները, Եր., «Ասողիկ» հրատ., 2013:
139. Վիրաբյան Վ. Հ., Հայաստանը Անդրկովկասյան հանրապետությունների 1920 թ. ապրիլյան վեհաժողովում, Եր., «Ասողիկ» հրատ., 2004:
140. Վիրաբյան Վ., Հայաստանի Հանրապետության Պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը 1918-1920 թթ., Եր., «Լուսակն» հրատ., 2006:
141. Վիրաբյան Վ., Հետախուզությունը և բանակը 1918-1920 թթ, Եր., «Լուսակն» հրատ., 2009:
142. Վիրաբյան Վ., Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.: Ուսումնական ձեռնարկ բուհերի համար, Եր., ԵՊՀ հրատ., 2011:
143. Վիրաբյան Վ., Հայաստանի Հանրապետության Պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը 1918-1920 թթ. (Հետախուզություն, բանակ և ՆԳՆ), Եր., ԵՊՀ հրատ., 2015:

144. Վիրաբյան Վ., Հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները 1918-1921 թթ., Եր., ԵՊՀ հրատ., 2016:
145. Վիրաբյան Վ., Տիգրան Դևոյանցի հետախուզական գործունեությունը 1914-1918 թթ., Եր., ԵՊՀ հրատ., 2018:
146. Վկայարան հայկական ցեղասպանութեան, Պատրաստեց Յ. Իսկահատեան, հ. Ե, Պէյրութ, 2013:
147. Տամատեան Մ., Իմ յուշերէս, Պէյրութ, 1985:
148. Քառյան Ս., Հայաստանի Առաջին Հանրապետության պատմության պատմագրություն, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2003:
149. Քառյան Ս., Հայաստանի միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը. Ուսումնական ձեռնարկ, Եր., ՀՀ ԳԱԱ պատմ.-ն ինստ-տ, 2005:
150. Քիւրքճեան Վ., Հայկական Կիլիկիա, Նիւ Եորք, 1919:

բ/ռուսերեն

1. АДР, Парламент–Азербайджанская Демократическая Республика. 1918-1920. Парламент: Стенографические отчёты, Баку, 1998:
2. Андерсен Э., Эгге Г., Армяно-Грузинская война 1918 г. и Армяно-Грузинский территориальный вопрос в XX в.: Armeno-Georgian War of 1918 and Armeno-Georgian Territorial Issue in the 20th Century (на англ. и рус. яз.)//http://www.conflicts.rem33. com/images/ Georgia/ Armeno-Georgian-War18-R.html:iberiana.wordpress.com/ Armenia-georgia/ armeno-georgian-war-1918-20/. բեռնման օրը՝ 10.10.2019, 28.12.2020 թ.:
3. Арутюнян А., Кавказский фронт. 1914-1917, Ер., изд-во «Айастан», 1971:
4. Басов А. Н., История военно-морских флагов, М., АСТ, СПб, Полигон, 2004:
5. Бахтадзе Михаил, О Военном договоре 1919 года между Грузией и Азербайджаном, «Право и политология», 2010, № 7, с. 34-40: Տե՛ս www. elibrary. ar/docs/J URNAL /jin2010:
6. Беховер, 1921, Деникинская Россия и Кавказ. 1919-1920, Лондон, с. 14: - https://h.ua/story/129099/, https://www.diary.ru/~15061981/ p 211859012. htm?oam, բեռնման օրը՝ 05.10.2019:
7. Борьян Б., Армения, международная дипломатия и СССР, ч. II, М.-Л., Гос. изд-во, 1929:

8. Вадачкория Ш. И., Вопросы грузино-армянских взаимоотношений в политической мысли Грузии (1918-1920), Тбилиси, 1999:
9. Вачнадзе М., Гурули В., История Грузии (XIX-XX века), Тбилиси, 2004:
10. Вачнадзе М., Гурули В., Бахтадзе М., История Грузии: С древнейший времён до наших дней, с. 694 Sե́u http://nukri.info http://nukri.info/ modules. php?name= Cmods Download&req= viewdownload &cid=11&ord:
11. Великая Октябрьская Социалистическая революция. Издание Третье, дополненное. Энцилопедия, Москва, Изд-во «Советская Энциклопедия», 1987:
12. Военный энциклопедический словарь, М., Воен. изд-во, 1986:
13. Гамбашидзе Г. Л., Агресивная политика Англии и США в отношении Грузии и Закавказья (1919), Тбилиси, Госиздат, 1964:
14. Ганин А. В., Корпус офицеров Генерального штаба в годы гражданкой войны 1917-1921 гг.: Справочные материалы, Москва, «Русский путь», 2009:
15. Гогитидзе М., Грузинский генералитет (1699-1921 гг.). Биографический справочник НАН Украины. Инс-т археографии и источниковедения им. М. Грушевского, Укр. Центр биографической некрополистики. Сост. М. Гогитидзе, отв. ред. Иван Дивный, Киев, 2001:
16. Готлиб В., Тайная дипломатия во время Первой войны, Москва, 1960:
17. Гусейнзаде Рауф Алишир оглу, Кавказ и армяне, Баку, Печатный дом "Апострофф", 2014:
18. Де Малевил Дж. Армянская трагедия 1915 года. Баку, 1990:
19. Деникин А. И., Очерки русской смуты/Предисл. Н. Ф. Бугая, М.: Мысль, 1991:
20. Дерябин А., Паласиос-Фернандес Р., Гражданская война в России. 1917-1922: Национальные армии, М., Астрель, 2000:
21. Дерябин А., Палаиос-Фернандес П., Гражданская война в России. 1917-1922. Национальные армии, Военно-историческая серия «Солдат», М., АСТ, 2000:
22. Елисеев Ф. И., Казаки на Кавказском фронте, М., 2001:
23. Зайончковский А., Мировая война 1914-1918 гг., т. I, М., «Госвоениздат», 1938:

24. Зайончковский А., Мировая война 1914-1918 гг., т. I, М., «Госвоениздат», 1938:
25. Залесский А. К., Кто был кто в Первой мировой войне. Биографический энциклопедический словарь, М., изд-во «Астрель», 2003:
26. Ибрагимов Д., Генерал Али Ага Шихлинский, Баку, Азер, гос. изд-во, 1975:
27. Кавказкая глобализация, «Армянские добровольцы на Кавказском фронте», том 8, выпуск 3-4, 2014:
28. Кадишев А. Б., Интервенция и гражданская война в Закавказье. Москва, Военное изд-во МО СССР, 1960:
29. Каземзаде Ф., Борьба за Закавказье (1917–1921), Институт стратегических исследований Кавказа, Серия «История Кавказа», Стокгольм, CA&CC Press®, 2010:
30. Каліберда Юрій, Армія Грузиньской Демократично Респубіки у 1918-1921 рр., «Воєнна історія», 2015, 1 (79), 1-21, Տե՛ս shron1. chtyvo. org.ua/.../ Armiia_ Hruzynskoi_ Demokratychnoi_Res..., բեռնման օրը՝ 05.10.2019:
31. Клаузевиц К., О войне, перевод с немецкого А. К. Рачинского, Москва, Государственное военное изд-во, 1934:
32. Корсун Н., Эрзерумская операция на Кавказском фронте Мировой войны в 1915-1916 гг., М., 1938:
33. Корсун Н. Г., Первая мировая война на Кавказском фронте. Оперативно-стратегический очерк, М., Военное изд-во Мин-ва Вооруж. Сил Союза ССР, 1944:
34. Кушнерёв В. Вл., История становления отечественной военной авиации в Кавказском регионе в 1914–1930-егг. Специальность 07.00.02–Отечественная история Диссертация на соискание учёной степени канд. ист. наук. Краснодар, 2020:
35. Лудшувейт Е. Ф., Турция в годы Первой мировой войны. Военно-политический очерк, М., 1966:
36. Мартиросян Д. Г., Российско-турецкий фронт Первой мировой войны, Автореферат на соиск. кандид. ист. наук, Саратов, 2006:
37. Маршалы, генералы и адмиралы армянского происхождения в Санкт-Петербурге. Биографический справочник, составил Армен Меружанян, Санкт-Петербург, изд-во «Роза ветров», 2013:

38. Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918-1920 годах (с сокращениями), Тбилиси, Тбил. Гос. Ун-т им. И. Джавахишвили, 2007:
39. Масловский Е. В., Мировая война на Кавказском фронте в 1914-1917 гг.: Стратегический очерк, Париж, изд-во « Возрождение», 1933:
40. Махмурян Г., Политика Великобритании в Армении и Закавказье в 1918-1920 гг.: Бремя белого человека, Ер., изд-во "Лусакн", 2002:
41. Махмурян Г., Армения и политика США 1917-1923 гг./Ред. А. В. Гамбарян, ер., Инс-т истории НАН армении, 2018:
42. Ментешашвили А. И., Октябьрская революция и национально-освободительное движение в Грузии, 1917-1921, Тбилиси, изд-во «Ганатлеба», 1987:
43. Микоян А. И., Дорогой борьбы, М., 1971:
44. Мустафа-Заде Р.,Две республики. Азербайджано-российские отношения в 1918-1922 гг., М., Изд-во МИК, 2006:
45. Муханов В. М. Кавказ в переломную эпоху (1917–1921 гг.), М.: Модест Колеров, 2019:
46. Наджафов Бахтияр, Лицо врага. История армянского национализма в Закавказье в конце XIX – начале XX века. ч. II, Баку, Шарг-Гарб, 1994:
47. Ованнисян Р. Г., Международные отношения Республики Армения, 1918-1920 гг./ Институт истории НАН Армении, Ер., Изд-во «Тигран Мец», 2007:
48. Орджоникидзе Г. К., Статьи и речи. Т. 1, М. Государственное издательство политической литературы, 1956:
49. Пипия Г. В., Политика Германии в Закавказье в 1918 г. (Сборник документов), Тбилиси, Изд-во «Сабчота Сакартвело», 1971:
50. Раевский А., Английская интервенция и мусаватское правительство: Из истории интервенции и контрреволюции в Закавказье, Баку, Гостипография «Красный восток», 1927:
51. Раевский А., Мусаватское правительство на Версальской конференции, Берлин, 1930:
52. Саакян Р., Франко-турецкие отнишения и Киликия в 1918-1923 гг., Ер., 1986:
53. Сеф С. Е., Революция 1917 года в Закавказье. Документы и материалы. Тифлис, Заккнига, 1927:

54. Сеф С. Е., ”Демократическое правительство” Грузии и английское командование, Тифлис, “Заккнига”, 1928:
55. Советская военная энциклопедия, т. 1, М., Военное изд-во МО СССР, 1990:
56. Стеклов А., Армия мусаватского Азербайджана. Баку, Азгиз, 1927:
57. Уратадзе Г. А., Образование и консолидация Грузинской Демократической республики. Мюнхен, Исследования и материалы (серия 1-я, выпуск 29). Институт по изучению СССР, 1956:
58. Шихлинский А., Мои воспоминания, Баку, Азернешр, 1984:
59. Чохели А. И., Политика Франции в отношении Грузии в 1917-1921 годах, Тбилиси, «Мецниереба», 1980:
60. Ходжаа Р.В., Казаки-добровольцы в Отечественной войне народов Абхазии 1992-1993 гг., Сухум, «Алашарбага», 2009: https://www.proza.ru / 2013/ 05/01/1286, https://regnum.ru/news/polit /2410615. html, բեռնման օրը՝ 05.10.2019:

գ/ անգլերեն

1. Andersen Andrew, Partskhaladze George, Armeno-Georgian War of 1918 and Armeno-Georgian Territorial Issue in the 20th Century, 2015: https:// www. academia.edu/42234413/The Democratic Republic of Georgia 1918-1921: http://www.conflicts.rem33.com/images/Georgia/...:
2. Armenian-Georgian Relations: Challenges and Opportunities for the Bilateral Cooperation, Yerevan: Political Science Association of Armenia, 2014, pp. 7-11:
3. Bremond E., La Cilicie en 1919-1920 (Extrait de la Revues des Etudes armeniennes-1921), Paris, 1921:
4. Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915-1918. Documents, Edited and translated by Vatche Ghazarian, Waltham, 1996:
5. Frederick Maurice, The Armistices of 1918, Oxford University Press, 1943,
6. Fromkin D., A Peace to End All Peace: The Fall of the Ottoman Empire and the Creation of the Modern Middle East, New York, 2009,
7. Fulton L.Bruce, France and the End of the Ottoman Empire, The Great Powers and the end of the Ottoman Empire, edited by Marian Kent, London, 2005:

8. Cem Oguz C., The relations between the Ottoman empire and bolshevik Russia (1917-1918): A thesis submitted to the department of international relations in partial fulfillment of the requirements for the degree of master of international relations Bilkent university institute of economics, administrative and social sciences, Ankara, august, 1998:
9. Gharibyan Alik, The Social-Economic and Political situation in Transcaucasus (1918-1921): Armenological Researches Institute of YSU: Sti u www. karabakhcenter.com/.../ Alik%20Gharibyan%20-% 20 Social%20economic% 20an:
10. Cornell Svante, Small Nations and Great Powers: A Study of Ethno-political Conflict in the Caucasus, London: Routledge. 2001, p. 59:
11. Cutlack F., The Australian Flying Corps in the western and eastern theatres of war 1914-1918, Sydney, 1941:
12. Gullett H. S., The Australian Imperial Force in Sinai and Palestine, 1914-1918 (10th edition), Sydney, 1941:
13. Hovannisian R. G., Armenia on the road to independence, 1918, Berkeley, Los Angelees, 1967:
14. Hovannisian R. G,, The Republic of Armenia, Volume I: The Frst year, 1918-1919, Berkeley: University of California Press, 1971:
15. Hovhannisian R. G., Armenia on the road independence 1918, Los angeles, 1967:
16. Hovannisian R. G., The Republic of Armenia, vol. II, From Versailles to London, 1919-1920, Berkeley. Los Angeles, 1982:
17. Hovannisian R. G., The republic of Armenia, vol. III, Berkeley, Los Angeles, London, Un. of California, 1996:
18. Huges M., Allenby and British Strategy in the Middle East, 1917-1919, London, 1999:
19. Janelidze Otar, The Democratic Republic of Georgia 1918-1921, Process Of Rebuilding Of Statehood: Tbilisi, Instytut Pamięci Narodowej 2018: Sti u Pamięci Narodowej, https://www. academia.edu/42234413/The_ Democratic Republic of Georgia 1918-1921:
20. Kacharava Andro, Daushvili Alexander, The Democratic Republic of Georgia: Struggle for Independence 1918-1921, Tbilisi, 2012: https://www.

academia.edu/39848669/ The_Democratic_Republic _of_Georgia _Struggle for_Independence_1918-1921:
21. Kayaloff Jacques, The Battle of Sardarabad, The Hague and Paris, 1973:
22. Kazemzadeh Firuz, The Struggle for Transcaucasia (1917-1921), New York: Oxford University Press, 1951:
23. Kopisto Lauri, The British Intervention in South Russia 1918-1920, Helsinki, Unigrafia, 2011:
24. Memorandum on The Armenian Question. Presented by the Armenian National Delegation. Paris. 1918.
25. Mustafa Nazim, Azərbaycan Xalq Cümhuriyyəti işığında (1918-1920), Bakı, «ULU», 2018:
26. Papers Relating to the Foreign Relations of the United States. The Paris Peace Conference 1919, Volume VII, United States Government Printing Office, Washington, 1946:
27. Rawlinson A., C. M.G.,C.B.E, D.S.O. Late Lt.-Col. R. G.A. Commander R. N. V. R. Introduction by Admiral Sir Rency Scott, Adventures in the near East, 1918-1922, New York, Dodd, Mead and Company, 1924:
28. Safarov Rafig (National Archive Department of the Republic of Azerbaijan Chief Advisor, Documentation and Usage Department), Mammad Khan Birinski (1879-1938), one of the statesmen and prominent diplomats of the Azerbaijan Democratic Republic.Sև́u http://www. milliarxiv. gov.az/az/ memmed-xan-tekinski-1:
29. Stein H., A War Minister and his work. Reminiscences of 1914-1918, London, 1980:
30. Suny R. G., The making of the Georgian Nation. Bloomington and Indianapolis, Indian University Press, 1998:
31. Timothy K. Blauvelt & Christofer Berglund, Armenians in the Making of Modern Georgia Sև́u 22.05.final. Berglund: See discussions, stats, and author profiles for this publication at: Sև́u https://www.researchgate. net/ publication/303920623: eprints.iliauni. edu.ge/ 4587/ 1/22.05. final.Berglund. pdf:
32. Varnava A., French and British Post-War imperial agendas and forging an Armenian Homeland after the Genocide: The formation of the Legion

D'Orient in October 1916, December 2014, The *Historical Journal*, vol. 57, p. 1005:
33. Yilmaz Harun, An Unexpected Peace: Azerbaijani-Georgian Relations 1918-20, «Revolutionary Russia», 22 (1), 2009, pp. 37-67:

5. ՀՈԴՎԱԾՆԵՐ

ա/ հայերեն

1. Բասմաջեան Կ., Ինչու համար Կիլիկիան կ'ուզենք, «Վերածնունդ», Փարիզ, 1919, թիւ 6-7:
2. Գասպարյան Ռ., Հայկական լեգեոնը (1916-1920 թթ.), «Հայկական բանակ», 1996, թիվ 1, էջ 8:
3. Գերոնտի Քիքոչէ, Ժամանակակցի գրառումներ, «Մնաթոբի,» № 1, 1989:
4. Զոհրաբյան Է., Հայաստանի Հանրապետության ադրբեջանաբնակ ապստամբ շրջանների հնազանդեցումը 1920 թ. հունիս-հուլիսին, «Բանբեր Երևանի Համալսարանի, 2006, № 1 (118), էջ 11-12, 16-17:
5. Կարապետյան Մ., Հայերի մասնակցություն Առաջին աշխարհամարտին կովկասյան ճակատում և կամավորական *շարժումը*, «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», N 5, 2002, էջ 33-42:
6. Հաջյան Միքայել, Հարյուր Տարի Մոռացության Մատնված Ողբերգություն, «Ապառաժ» ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնական կայքէջ, 21.02.2018 թ.:. https:// aparaj. am/new/ category /social/page/67/:
7. Հարությունյան Ա. Ա., ՀՅ Դաշնակցության 1918-1920 թթ. պատմության վավերագրերը, «ՎԷմ», համահայկական հանդես, 2014, Զ (ԺԲ} տարի, թիվ 1 (45), հունվար-մարտ, ՎԷՄ, 2014, թիվ 1[45], 2 46[], 3 [47], 4 [48]:
8. Հարությունյան Կլ., Հայաստանի Հանրապետության բանակը 1918-1920 թվականներին, «Հայ զինվոր», թիվ 9 (23), հունիս, 1994:
9. Հովհաննիսյան Արծ., Հայաստանի առաջին հանրապետության զինված ուժերի սպառազինությունը, Հայոց պատմության հարցեր: Գիտական հոդվածների ժողովածու, հ. 13, Եր., 2012, էջ 170-183:
10. Հովհաննիսյան Արծրուն, Հայաստանի Հանրապետության (1918-1920 /21 թթ) օդուժը. Տե՛սhttps:// www. aniarc.am›News:

11. Հովհաննիսյան Արծ., Հայաստանի առաջին հանրապետության օդուժը, «Հայ զինվոր», 2018, N 17 (1264), 24.10.2018 –30.10.2018:
12. Հովհաննիսյան Ռ., Հայ Յեղափոխական Դաշնակցության դերը Հայաստանի Հանրապետության մեջ, «Դրօշակ», թիւ 19 (1402), 13 յունվարի, 1993, էջ 32-33:
13. Ղուլյան Յ., Ռուսաստանի իշխանությունների դիրքորոշումը Հայաստանի Հանրապետության անկախության վերաբերյալ 1918-1920 թթ., «Բանբեր Հայաստանի արխիվների», 2017, № 125, էջ 299-312:
14. Մատթէոսեան Վ., Պուենոս Այրէսի Հայ ազգային միութիւնը (1918-1920), «Հայկազեան հայագիտական հանդէս», Պէյրութ, 1998, հ. 18, էջ 135:
15. Մախմուրյան Գ., Հայաստանի Հանրապետության անկախությունը Հայոց Ազգային խորհրդի արձանագրություններում, «Պատմաբանասիրական հանդես», 2014, N 1 (195), էջ 214-235:
16. Մախմուրյան Գ., Հայաստանն ու Անդրանիկը ԱՄՆ-ի 1917 թ. արևելյան քաղաքականության մեջ և Հայոց Ազգային խորհուրդը, «Լրաբեր Հասարակական գիտությունների», 2014, N 3 (323), էջ 323-343:
17. Մկրտչյան Ս. Ս., Հայաստանի Առաջին հանրապետության տոնական համակարգը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1997, N 3 (596), 160-164:
18. Ներսիսյան, Մ. Գ., Հայկական հարցի և հայ կամավորների մասին (1912-1915 թթ.), «Պատմա-բանասիրական հանդես», N 2, 1991, էջ 205-215:
19. Պեյլերյան Ա., Ֆրանսա և Հայկական հարցը Առաջին համաշխարհայինի տարիներուն (1914-1918),1914-1918), «Պատմա-Բանասիրական հանդես», 1990, թիվ 2, էջ 38:
20. Պողոսյան Ս. Ա., Միացյալ Հայաստանի խնդիրը 1917-1918 թթ., Պատմություն և հասարակագիտություն տարեգիրք (Գիտական հոդվածների ժողովածու), թիվ 2, Երևան, 2016, էջ 8-23:
21. Պողոսյան Ս. Ա., Հայկական զինուժի դերը Պաղեստինյան ռազմաճակատում 1918 թ., Էջմիածին, 2015, թիվ 7, էջ 102-117:
22. Պողոսյան Ս. Ա., Մուդրոսի զինադադարը և Հայկական հարցը, Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Լրատու: Գիտական հոդվածների պարբերական ժողովածու, Երևան, 2016, էջ 176-182:

23. Սահակյան Ռ., Սարգսյան Ռ., Անօրինական զենքի և զինամթերքի շրջանառության հիմնախնդիրը Հայաստանի Հանրապետությունում (1918-1920 թթ.), «Պատմաբանասիրական հանդես», 2019, N 2 (211), էջ 93-114:
24. Սաֆրաստյան Ռ. Ա., Թուրք-հայկական պատերազմի շրջանի թուրքական վավերագրեր (1920թ. նոյեմբեր): Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ (XXV), Եր., Զանգակ-97, 2006, էջ 412-443:
25. Մելեւկիոյ հայ հերոսապետը. Պետրոս Տէօվլէթեան, «Արմէնիա», Մարսել, 1915, հոկտեմբեր 6, թիւ 10:
26. Վիրաբյան Վ., Հայաստանի Հանրապետության հետախուզական և հակահետախուզական ծառայությունը փաստաթղթերում (1918-1920 թթ.), «Բանբեր Հայաստանի արխիվների», 2004, № 2, էջ 30 -36:
27. Վիրաբյան Վ., ՀՀ հետախուզական ծառայության ներդրումը Զանգեզուրում Ադրբեջանի զինուժի դեմ տարած հաղթանակում (1919 թ. վերջ – 1920 թ. սկիզբ): «Ազգ, պետություն, հայրենիք» պետականության գաղափարը Երրորդ միջազգային գիտաժողովի (Երևան 04. 05. 2016) նյութերի ժողովածու, Եր., «Արման Ասմանգուլյան» ԱՋ, 2018, էջ 13-23:
28. Վիրաբյան Վ., Հայաստանի Առաջին Հանրապետության անվտանգության համակարգը և հետախուզական ծառայության կազմակերպումը (1918 -1920 թթ.), «Բանբեր Երևանի համալսարանի», 2005, № 1, էջ 181-187:
29. Վիրաբյան Վ., Հայաստանի Առաջին Հանրապետության հետախուզական ծառայության գործունեության պատմությունից, «Պատմաբանասիրական հանդես», 2005, № 3, էջ 36-49:
30. Վիրաբյան Վ., Հայաստանի Առաջին Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումը, «Հայկական բանակ», 2006, № 1, էջ 83-90:
31. Վիրաբյան Վ., Անդրադարձ հայկական հետախուզական ծառայության գործունեությանը (1918-1920 թթ.), «Նորք», 2006, № 2, էջ 153-159:
32. Վիրաբյան Վ., Էջեր Տիգրան Դևոյանցի հետախուզական գործունեությունից, «Հայկական բանակ», 2007, № 1 (51), էջ 82-88:
33. Վիրաբյան Վ., Հայկական հետախուզական խմբի գործունեությունը Կ. Պոլսում Տիգրան Դևոյանցի գլխավորությամբ 1919 թ. երկրորդ կեսին –

1920 թ. սկզբին, Տարեգիրք Բ, Պատմագիտական հանդես, Եր., ԵՊՀ հրատ., 2010, էջ 134-150:
34. Վիրաբյան Վ., Տիգրան Դևոյանցի հետախուզական գործունեության շուրջ, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2011, № 1-2, էջ 320-336:
35. Վիրաբյան Վ., Հայկական հետախուզության փաստաթղթերը Թուրքիայում ռազմաքաղաքական իրադարձությունների մասին (1919 թ. օգոստոս-նոյեմբեր, ռուս.), «Պատմաբանասիրական հանդես», 2011, № 1, էջ 309-322:
36. Վիրաբյան Վ., Կ.Պոլսում հայկական հետախուզական խմբի ղեկավար Տիգրան Դևոյանցի զեկուցագրերը Թուրքիայում և Հայաստանի Հանրապետության շուրջ տեղի ունեցած ռազմաքաղաքական իրադարձությունների մասին, «Պատմություն և մշակույթ. Հայագիտական հանդես» (Գիտական հոդվածների ժողովածու), հ. Գ., Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 17-47:
37. Վիրաբյան Վ., Հետախուզական ծառայության կազմակերպումը և գործունեությունը ՀՀ-ում, «Լրաբեր Հասարակական գիտությունների», 2015, № 2, էջ 241-256:
38. Վիրաբյան Վ., Նոր մոտեցումներ Հայաստանի պատմության և մշակույթի ուսումնասիրման և դասավանդման ոլորտում. II. ՀՊՄՀ Հայոց պատմության ամբիոնի ամենամյա գիտաժողով. Հոդվածների ժողովածու, Եր., Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, 2017, էջ 3-21:
39. Վիրաբյան Վ., Հայաստանի առաջին Հանրապետության հետախուզական ծառայության գործունեության պատմաքաղաքական դասերը, Պատմություն և հասարակագիտություն. Տարեգիրք (Գիտական հոդվածների ժողովածու), Հատոր 4, Երևան, 2018, էջ 7-26:
40. Վիրաբյան Վ., Թուրքական հատուկ ծառայությունների հետախուզական և սադրիչ-դավադրական գործունեությունը Հայաստանում 1920-1922 թթ.: Վեմ համահայկական հանդես, 2018, ապրիլ-հունիս, թիվ 2 (62), 165-177:
41. Վիրաբյան Վ., Հայաստանի Հանրապետության անվտանգության համակարգը 1918-1920 թթ.: Հայագիտության հարցեր, 2018, 2 (14), 44-56:
42. Վիրաբյան Վ., Սահմանապահ զորամասերի ստեղծման հիմնախնդիրը Առաջին հանրապետությունում (1918-1920 թթ), Մեսրոպ Մաշտոց Հա-

մալսարանի Լրատու. Գիտական հոդվածների պարբերական ժողովածու. Եր., Լիմուշ հրատ., 2019, N 1 (21), 81-91:
43. Վիրաբյան Վ., Ռազմական ուսուցման կազմակերպումը և հայկական բանակի հայացման գործընթացը 1918-1920 թթ.: Հայկական զինուժը առաջին աշխարհամարտի տարիներին, Եր., 219, էջ 45-67:
44. Տեր-Մինասյան Անահիտ, Անտուան Պուադեբարը և Հայաստանը, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2004, N 2 (104), էջ 79-105:

բ/ռուսերեն

45. Аветисян Г. А., Генерал Гавриил Григорьевич Корганян. Вестник общественных наук, 1997, N 1, стр. 155-158:
46. Бахтадзе Михаил, О военном договоре 1919 года между Грузией и Азербайджаном «Право и политология», 2010, № 7, с. 34-40. Տե՛ս https: // cyberleninka.ru/.../azerbaydzhan-i-gruziya-v-period-stan.Տե՛ս www. elibrary. ar/docs/JURNAL/jin2010. բեռնման օրը՝ 10.10.2019, 28.12.2020 թ.:
47. Безугольный А. Ю., 2009, Демократическая республика Грузия и ее вооруженные силы. 1918-1921 гг.: «Вопросы истории», № 10, с. 87-101: http:// istorja. ru/articles. html/ caucasus/bezugolnyiy-a-yu-demokraticheskaya-respublika-gruziya-i-ee-vooruzhennyie-silyi-1918-1921-gg-r377/, բեռնման օրը՝ 02.10.2019, ներբեռնման օրը՝ 02.100.2019:
48. Варданян М., Деятельность Армянского Добровольческого полка, «Армения», Марсель, N 29, 1915:
49. Вирабян В. Г., Армяне Юга России: История, культура, общее будущее. Материалы III международной конференцции, под ред. Е. Э.Кириллова, Ростов- на Дону, Изд-во ЮНЦ РАН, 2018, 81-87:
50. Вирабян В. Г., Военно-политические отношение Республики Армении с добровольческой армией А. Деникина: Paradigms of knowledge, The Founders The science publishing center «Sociosphere-CZ», Academia Rerum Civilium – University of Political and Social Sciences ISSN 2336-2642 MK ČR E 22424, № 2, 2019, p. 51-56:
51. Ганин А. В., Советская военная разведка в Грузии в 1920–1921 годах. Миссия Павла Сытина, Государственное управление. Электронный вестник, Выпуск № 43. Апрель, 2014 г., с. 207-251:
52. Гасымов Заур, Азербайджан и Грузия в период становления (1918-1921 гг.): Военное строительство и сотрудничество в вонной сфере, «Кавказ и

глобализация», 2007, том 1 (2), p. 113-121, https://cyberleninka.ru/.../azerbaydzhan-i-gruziya-v-period-stan... բեռնման օրը՝ 10.10.2019, 28.12. 2020 թ.:
53. Манджгаладзе Г., Военный кинфликт между Грузией и Арменией в 1918 году// Dirçəliş XXI əsr».- 2008, № 120-121, с. 85-90. elibrary.az/docs/jurnal-08/148j.htm:
54. Михайлов В. В., Отношения Республики Армении и руководства вооруженных сил Юга России в 1918-начале 1919 года. Вестник Северного (Арктического) федерального университета им. М. В. Ломоносова. Серия «Гуманитарные и социальные науки», N 4, 2015, с. 27-35:
55. Шергалин Евг. Эд., Александр Константинович Шнеур (1884-1977) – Военный, энтомолог и герпетолог: «Астраханский Вестник Экологического Образования», 2016, № 1 (35), с. 127-134:

գ/անգլերեն

1. Anchabadze G., 2018, Armed Forces of Georgian Democratic Republic in 1918–1921, «Latvijas Universitātes Žurnāls». Vēsture, N 5, p. 100-115:
2. General Andranik the Armenian Washington, «The Literary Digest», 1920, 17 January, p. 90-92:
3. Jones Stephen F., Georgian-Armenian Relations in 1918-20 and 1991-94: A Comparison, «Armenian review». vol. 46. no 1-4 (181-184), pp. 57-77:
4. Mamatsashvili Gocha, Georgian-Armenian relations in 1918-1920 and Georgia's Constituent Assembly /bulletin of the Georgian National academy of sciences, vol. 6, N 1, 2012, pp. 158-162:
5. Samkharadze N., Georgian State Border–Past and Present, Foreign policy & security programme, August, 2012, p. 6-7: Տե՛ս www.css.ge:
6. Virabyan V. H., From the history of devastating-conspirational turkish-azerbaijani activities in the republic of Armenia (1918-1922): Internauka. org.: «Интернаука»: научный журнал, № 8 (42). Февраль 2017 г. – М., Изд. «Интернаука», 2018:ISBN 2542-0348, pp. 37-39:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 5
(պ.գ.դ., պրոֆեսոր Վ. Հ. Վիրաբյան)

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԻՆՈՒԺԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ
(պ. գ.դ., պրոֆեսոր Ս. Ա. Պողոսյան)

ԳԼՈՒԽ 1.

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԵՈՆԸ 14

ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԶԻՆՈՒԺԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ 1914-1917 ԹԹ.
(պ.գ.թեկնածու, դոցենտ Ա. Մ. Եփրիկյան)

ԳԼՈՒԽ 2.

2.1. ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԶՈՐԱՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ 205
2.2. ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԶԻՆՈՒԺԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1914-1916 թթ.) 216
2.3. 1917 Թ. ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍՐՈՒՄԸ ՆԱԽԻՋևԱՆՈՒՄ: ՀԱՅԿԱԿԱՆ ՋԻՆՈՒԺՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՐՁԱՆՈՒՏՈՒՄ 229

ՀԱՅԿԱԿԱՆ ՋԻՆՈՒԺԸ 1918-1920 ԹԹ.

(պ.գ.դ., պրոֆեսոր Վ. Հ. Վիրաբյան)

ԳԼՈՒԽ 3.
պ.գ.դ., պրոֆեսոր Վ. Հ. Վիրաբյան

ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾՆՈՒՆԴԻ ԵՎ ՋԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ 242

ԳԼՈՒԽ 4.
պ.գ.դ., պրոֆեսոր Վ. Հ. Վիրաբյան

ՀԱՅԿԱԿԱՆ ՋԻՆՈՒԺԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ 1918-1920 ԹԹ 260

ԳԼՈՒԽ 5.
պ.գ.դ., պրոֆեսոր Վ. Հ. Վիրաբյան

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ ՁԵՆՔ-ՋԻՆԱՄԹԵՐՔԻ ՀԱՅԹԱՅԹՈՒՄԸ 1918-1920 ԹԹ. 307

ԳԼՈՒԽ 6.
պ.գ.դ., պրոֆեսոր Վ. Հ. Վիրաբյան

ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ՋՈՐԱՄԱՍԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1918-1920 ԹԹ.) 331

ԳԼՈՒԽ 7.
պ.գ.դ., պրոֆեսոր Վ. Հ. Վիրաբյան

ՀԱՅԿԱԿԱՆ ՕԴՈՒԺԸ ԵՎ ՆԱՎԱՏՈՐՄԸ 1918-1920 ԹԹ. 347

ԳԼՈՒԽ 8.
պ.գ.դ., պրոֆեսոր Վ. Հ. Վիրաբյան

ՌԱԶՄԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ
ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ
1918-1920 ԹԹ. 378

ԳԼՈՒԽ 9.
պ.գ.դ., պրոֆեսոր Վ. Հ. Վիրաբյան

ՀԱՅԿԱԿԱՆ ՋԻՆՈՒԺԻ ԵՎ 1918 Թ.
ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ
ԵՎ ՍԿԶԲԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ,
ՀՅԴ ԵՎ ԱՅԼ ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ
ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ 396

ԳԼՈՒԽ 10.
պ.գ.դ., պրոֆեսոր Վ. Հ. Վիրաբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՋԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ
1918-1920 ԹԹ.: ՊԱՏՄԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ
ՄԻ ՇԱՐՔ ԵԶՐԵՐ 432

ԳԼՈՒԽ 11.
պ.գ.դ., պրոֆեսոր Վ. Հ. Վիրաբյան

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ
1918-1920 ԹԹ. 461

ԳԼՈՒԽ 12.
պ.գ.դ., պրոֆեսոր Վ. Հ. Վիրաբյան

ՊԱՅՔԱՐ ԵՐԿՐՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ԱՆԿԱՆՈՆ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ԴԵՄ..... 498

ԳԼՈՒԽ 13.
պ.գ.դ., պրոֆեսոր Վ. Հ. Վիրաբյան

ԴԱՍԱԼՔՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ 1918-1920 ԹԹ. 528

ԳԼՈՒԽ 14.
պ.գ.դ., պրոֆեսոր Վ. Հ. Վիրաբյան

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎԻ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ,
1919 Թ. ՎՐԱՑ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ
ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԵՎ ՀՀ ԶԻՆՎԱԾ
ՈՒԺԵՐԻՆ ԶԵՆՔ-ԶԻՆԱՄԹԵՐՔԻ ՀԱՅԹԱՅԹՄԱՆ
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ 606

ԱՍՓՈՓՈՒՄ (ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ) 634
ЗАКЛЮЧЕНИЕ (РЕЗЮМЕ) 653
SUMMARY (INSTEAD OF EPILOGUE) 665

ՀԱՎԵԼՎԱԾ 676
պ.գ.դ., պրոֆեսոր Վ. Հ. Վիրաբյան

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՑԱՆԿ 680

ՎԱՆԻԿ ՀՐԱՆՏԻ ՎԻՐԱԲՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՊՈՂՈՍՅԱՆ
ԱՐՄԻՆԵ ՄԵԼՍԻԿԻ ԵՓՐԻԿՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԻՆՈՒԺԸ 1914–1920 ԹԹ.

VANIK HRANT VIRABYAN
SAMVEL ANDRANIK POGOSYAN
ARMINE MELS EPRIKYAN

THE ARMENIAN ARMED FORCES DURING 1914-1920

ВАНИК ГРАНТОВИЧ ВИРАБЯН
САМВЕЛ АНДРАНИКОВИЧ ПОГОСЯН
АРМИНЕ МЕЛСОВНА ЕПРИКЯН

АРМЯНСКИЕ ВОРУЖЕННЫЕ СИЛЫ В 1914-1920 ГГ.

Համակարգչային շարվածքը և ձևավորումը՝ *Վ. Հ. Վիրաբյանի*

«ԳԵՎՈՐԳ - ՀՐԱՅՐ» ՍՊԸ



Հրատարակչություն
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝ (011) - 52.79.74, 055-52-79-74
Էլ. փոստ lusakn@rambler.ru

Издательство “Лусакн”
Ереван, ул. Григор Лусаворича 6.
Тел: (011) - 52.79.74, 055-52-79-74